Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԳԻՐՔ

III

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2009

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 504

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Մենք շնորհակալ ենք **Գալուստ Կյուլպենկյան** հիմնարկության հայկական բաժանմունքի ղեկավար, հայոց գիտության և մշակույթի նվիրյալ դոկտոր **ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՆ**՝ մեր խնդրանքը հարգելու և աշխատության սույն հատորի տպագրության ծախսերը հանձնառելու համար

Սիմոնյան Հ.
Ս 504 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ
Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 1128 էջ:

Գրքում հանգամանորեն լուսաբանված են 1907 թ. հուլիս – 1908 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում հայկական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1147-0

© Սիմոնյան Հ., 2009 թ.
© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔՈՒՄ

Զնայած գլխով անցնող փոթորիկներին, հայ ժողովուրդը շարունակում էր ապրել հազարամյակների իր կենսատարածքում՝ Արևմտահայաստանում, Կովկասյան Հայաստանում և Պարսկահայքում, մաքառել մի դեպքում կյանքի (Թուրքիա), մյուս դեպքում՝ երկրի առաջադիմության և հասարակական հարաբերությունների վերափոխման (Ռուսաստան), երրորդ դեպքում՝ քաղաքական գործոն դառնալու համար (Պարսկաստան):

Եթե Ռուսաստանում հեղափոխական ուժերը պարտություն էին կրել, ապա նրա կովկասյան տիրույթին սահմանակից երկու երկրներում՝ Պարսկաստանում և Թուրքիայում վիճակն այլ էր: Պարսկաստանում սկսված դեմոկրատական հեղափոխությունն աստիճանաբար թափ էր առնում, իսկ Թուրքիան թևակոխել էր նախահեղափոխական շրջան:

Այդ զարգացումները, բնականաբար, տարբեր ազդեցություններ էին ունենում իր պատմական հայրենիքի կենսատարածքում ապրող հայ ժողովրդի երեք հատվածների՝ կովկասահայության, թուրքահայության և պարսկահայության կյանքի վրա:

ԿՈՎԿԱՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1905–1907 թթ. հեղափոխության օրերին ցարիզմն ստացել էր ուժգին հարված: Հազիվ դուրս պրծնելով հեղափոխության հրդեհի միջից՝ նա կարողացավ օրհասական հանդգնությամբ շարունակել գոյության կռիվը:

1907 թ. կեսերին Ռուսաստանում երևան էին եկել չարագուշակ նշաններ, սպառնական լուրերի ազդեցության տակ նորից հուզվում էր հասարակությունը: Մութ տարրերը զենքի էին կանչում իրենց համախոհներին, համախմբում ու կազմակերպում իրենց ուժերը և դրանք ուղղում ազատության կարոտ ժողովրդական զանգվածների դեմ:

Մոտ ապագան չղարշված էր անորոշության մշուշով լի անակնկալներով. մի կողմից՝ հանելուկային զորաշարժեր սևհարյուրյակայինների բանակում, մյուս կողմից՝ չարագուշակ չչուկներ բարձր շրջաններից: Հետադիմությունն անթաքույց հարձակողական դիրք էր ընդունում և պատրաստվում էր դիմել հանդուգն քայլերի: Դրանք ապացույց էին, որ հետադիմությունը, դավեր լարելով, չուտով ոտքի էր կանգնելու:

Ցարական կառավարության կողմից առանց լուրջ պատճառաբանության Առաջին («կադետական») պետական դումայի ցրումը անհանգստություն էր առաջ բերել երկրի հատկապես ազատական գործիչների շրջանում, որոնք վախ ունեին թե նույն

---

* *1906 թ. ապրիլի 27-ին բացված Առաջին պետական դումայի ամենամեծ խմբակցությունը ներկայացնում էր կադետական կուսակցությունը (179 պատգամավոր): Օկտյաբրիստները և աջերը լիակատար ձախողում էին կրել. առաջինները դումայում ունեին 14 տեղ, աջերը՝ 8 տեղ: Մի մեծ խումբ էին կազմում գյուղացիության ներկայացուցիչ տրուդովիկները՝ 94 պատգամավոր: Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ) պատգամավորների թիվը 18 էր, որոնցից 5-ը՝ Կովկասից: Անկուսակցական էր 92 պատգամավոր: Մյուս կուսակցություններից և խմբերից յուրաքանչյուրն ուներ մի քանի պատգամավորական տեղ (տե՛ս* **“История КПСС”**, *том II, Политиздат, Москва, 1966, с. 201):*

բանը կարող էր տեղի ունենալ նաև Երկրորդ («սոցիալ-դեմոկրատական») դումայի* հետ:

Սակայն ազատականների մեծ մասը, այդ թվում՝ իշխանական բարձր շրջաններում եղողներն, այնուամենայնիվ, հույս ունեին, թե կառավարությունը չի գնա այնպիսի մի օրհասական քայլի, ինչպիսին Երկրորդ պետական դումայի ցրումն է: Նրանք

---

* Երկրորդ պետական դումայի ընտրությունները տեղի էին ունեցել հեղափոխության անկման պայմաններում: 1907 թ. փետրվարի 20-ին բացված դումայում ներկայացված էր 518 պատգամավոր: Օրենսդրական այդ մարմնում քաղաքական ուժերը ներկայացված էին հետևյալ թվերով. տրուդովիկներն ունեին 104 տեղ, կադետները կորցրել էին 80 տեղ և ունեին միայն 99 մանդատ, սոցիալ-դեմոկրատ պատգամավորների թիվը 54 էր, որոնցից մենշևիկներ՝ 33, բոլշևիկներ (որոնք առաջին անգամ էին դումա մտել)՝ 13 + 3 համակիրներ (դումայի հետագա աշխատանքների ընթացքում 54 սոցիալ-դեմոկրատներին միացել էին 11 հոգի խորհրդակցական ձայնով, և խմբակցության պատգամավորների թիվը հասել էր 65-ի. տե՛ս *"История КПСС"*, том II, с. 211), էսեռներն ունեին 37 տեղ: Որոշ չափով ուժեղացել էին աջ թևերը՝ օկտյաբրիստները և սահմանադրականները, որոնք ստացել էին 54 տեղ: Երկրորդ պետական դումայի նախագահ էր ընտրվել կադետ Ֆ. Ա. Գոլովինը: Դումայի ընտրություններին համեմատաբար աշխույժ էր մասնակցել Անդրկովկասի հայությունը: Այստեղ հատկապես անգիջում պայքար էր ծավալվել սոցիալ-դեմոկրատների և Դաշնակցության միջև: Դաշնակցականները հաղթանակ էին տարել Զանգեզուրի, Շուշիի, Ղազախի, Բորչալուի, Ախալքալաքի, Կաղզվանի, Գանձակի, Սուրմալուի, Էջմիածնի, Նոր Բայազետի ու Ալեքսանդրապոլի գավառներում և Երևան, Ալեքսանդրապոլ, Գորիս, Կաղզվան, Ախալքալաք ու Ախալցխա քաղաքներում (տե՛ս **«Դրօշակ»** (Ժնև), № 2 (168), փետրվար, 1906, էջ 30): Երկրորդ դումայում ընտրված հայ պատգամավորների թիվը Անդրկովկասից 5-ն էր, որոնցից 3-ը՝ Ստեփան Տեր-Ավետիքյանը (ընտրված Գանձակի նահանգից), Հովհաննես Սաղաթելյանը և Սիրական Տիգրանյանը (ընտրված Երևանի նահանգից) դաշնակցականներ էին, չորրորդը՝ Արշակ Զուրաբյանը (ընտրված Թիֆլիս քաղաքից) սոցիալ-դեմոկրատ էր (մենշևիկ), իսկ հինգերորդը՝ Հովսեփ Աթաբեկյանը ընտրվել էր Կարսի մարզից՝ Ժողովրդական ազատության կուսակցության (կադետ) ցուցակով: Նրանցից բացի՝ Ռոստովից և Նոր Նախիջևանից ընտրվել էր տաղանդավոր իրավագետ, փայլուն հռետոր, 28-ամյա Մովսես Աճեմյանը (Աճեմով): Վերջինիս օգտին պատվիրակների ընտրողական ժողովում քվեարկել էր ոչ միայն իր կուսակցության (կադետ) խմբակցությունը (43 ձայն), այլև քվեարկել էին էսդեկները: Ժողովի 81 պատվիրակից նրան ձայն էր տվել 54-ը (տե՛ս **«Մշակ»** (Թիֆլիս), № 33, 13 փետրվար 1907 թ.):

համոզված էին, որ բարձրագույն իշխանությունն ընդունակ կլինի դումայի մեծամասնությանը գրավել իր կողմը և, այդպիսով, միաժամանակ զսպել թե՛ հեղափոխական տարրերին և թե՛ խուսափել անտեղի ու վաղաժամ հակամարտություններից:

Բայց այդպես մտածողների հույսերը չարդարացան: Ցարիզմը չէր կարող հանդուրժել Երկրորդ դումայում բյուրոկրատիայի դեմ հնչած ցասկոտ ելույթները, այնտեղ առաջ քաշվող սպառնալից պահանջները:

Բյուրոկրատիան միայնակ չէր. նրան դաշնակցում էին շատերը, որոնց թվում, նախ և առաջ, հետադիմական ազնվականությունը և քաղաքային խոշոր բուրժուազիան: Դրանք այլ կերպ վարվել չէին կարող. չէ՞ որ դուման չուտով զբաղվելու էր տեղական-զեմստվային ու քաղաքային ինքնավարության հարցերով: Այդ երկու դասերը լավ գիտեին, որ չուտով ստիպված են լինելու թողնել ասպարեզը և իրենց տեղը զիջել բնակչության ահագին մեծամասնության ներկայացուցիչներին:

Ցարիզմը, որքան էլ համեմատաբար թույլ էր իր ներքին կազմակերպվածությամբ, ճարակած կենտրոնախույս ու հակամարտ ուժերով, որքան էլ տկար էր իր ֆինանսներով, մտավոր ու հոգեկան կարողություններով, այնուամենայնիվ, դեռ սպառնալից ջախջախիչ ուժ էր «ներքին թշնամու»՝ հեղափոխության դեմ: Բոնապետությունն զգաց, որ դեռ արյուն կա իր երակներում, որ դեռ ունի իր հավատարիմ թիկունքը և վստահելի հենարանը՝ սվինների անտառը:

ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՑՐՈՒՄԸ

1907 թ. հունիսի 3-ի վաղ առավոտյան Երկրորդ պետական դումայի պատգամավորները գալով նիստի, Տավրիկյան պալատի դարպասների վրա փակցված տեսան հրամանագիր, որ դուման արձակված է, և չուտով կլինի Երրորդ պետական դումայի ընտրությունների հրամանագիր:

Երկրորդ պետական դումայի արձակումն անսպասելի էր ոչ միայն հասարակ ժողովրդի, այլև շատ ու շատ բարձր դիրք ունե-

ցող պաշտոնյաների համար: Երբ պետական դումայի նախագահ Գոլովինը այդ նույն օրը գալիս է աշխատանքի, Տավրիկյան պալատի դիմաց հավաքված թղթակիցներից մեկը նրան հարցնում է, թե ի՞նչ կարծիք ունի դումայի արձակման մասին: Հետևում է այս պատասխանը. «Ի՞նչ դումայի արձակման մասին եք դուք հարցնում»:

Հունիսերեքյան հեղաշրջումից հետո Ռուսաստանն աստիճանաբար թևակոխեց արյունոտ հետադիմության շրջանը: Երկրի պատմության մեջ սկսվեց ողբերգական ժամանակներից մեկը, որը կապվեց Ստոլիպինի անվան հետ:

Սարատովի նահանգապետ Պյոտր Արկադևիչ Ստոլիպինը 1906 թ. ապրիլին նշանակվել էր Ռուսաստանի ներքին գործերի նախարար, իսկ նույն թվի հուլիսին՝ նախարարների խորհրդի նախագահ: Նահանգապետ եղած ժամանակ նա տխուր հռչակ էր ձեռք բերել՝ որպես դաժան պետական գործիչ: Լինելով ինքնակալության ամենանվիրյալ պաշտպաններից մեկը՝ նա արյան մեջ խեղդել էր նահանգում ծագած գյուղացիական շարժումը:

Իր գործելաոճը Ստոլիպինը կիրառեց նաև ներքին գործերի նախարարի և վարչապետի պաշտոններում, իսկ հունիսերեքյան հեղաշրջումից հետո դաժանության մեջ գերազանցեց ինքն իրեն: Լինելով հետադիմության մարտնչող պահապան՝ նա իր շուրջը համախմբեց երկրի ամենախավարամոլ գործիչներին՝ Պուրիշկևիչից, Բոբրինսկուց, Մարկով 2-րդից, Շուլգինից մինչև նախկին նարոդովոլեց ռենեգատ Լև Տիխոմիրովը: «Ռուսաստանը գտել է իր մարդուն, այդ մարդը Ստոլիպինն է, նա կոչված է փրկելու կայսրությունը»,- համոզված էին ինքնակալության բոլոր անձնվեր պաշտպանները: Սրանց միահամուռ աջակցությամբ՝ Ստոլիպինը չուրջ հինգ տարի (1906 թ. գարնանից մինչև 1911 թ. սեպտեմբեր) Ռուսական կայսրության միահեծան դիկտատորն էր:

Հզոր կամքի տեր, պերճախոս ու հնարամիտ այդ մարդու գլխավորած կառավարությունը, կալվածատերերն ու կապիտալիստները, սևհարյուրյակային հետադիմությունը կատաղի հարձակման անցան հեղափոխությանը մասնակցած ժողովրդական զանգվածների դեմ: Սովորական դարձան չուրջկալները, ձերբա-

կալություններն ու գնդակահարությունները, որոնք արդարացվում էին երկրի անվտանգությունն ու ապահովությունը պաշտպանելու պատճառաբանությամբ: Դիմելով պետական դումայի ձախակողմյան պատգամավորներին՝ Ստոլիպինն ասել էր. «Դուք ուզում եք մեծ փլուզումներ, բայց մենք ուզում ենք մեծ Ռուսաստան»: Մի ուրիշ առիթով, երբ դումայի պատգամավորներն օրինակներ բերելով ցույց էին տալիս, որ գյուղացիությունը չարունակում է դժգոհ մնալ իշխանություններից ու իր ծանր կյանքից, Ստոլիպինը հանդես գալով, ասել էր. «Ձեք վախեցնի: Դժգոհողները թող նեղանան իրենք իրենցից, եթե զրկվեն ունեցած այդ կյանքից ևս»: Կախաղանները, որոնց պետական դումայի անդամներից մեկն անվանել էր «ստոլիպինյան փողկապներ», գործում էին անխափան:

Ստոլիպինյան բռնությունների և սարսափի ուժով հաշվեհարդարի ենթարկվեցին հեղափոխական կազմակերպությունները, խորտակվեցին նրանց մեծ մասի ռազմունակ շարքերը:

Հետադիմության գլխավոր նպատակն էր չուռ տալ պատմության անիվը և վերականգնել անսահման բռնապետության հին ռեժիմը:

Այդ նպատակին հասնելու համար իշխանությունները մոլեգնորեն սկսեցին տրորել այն բոլոր սկզբունքները, որոնք ցարն ինքն էր հռչակել: Դա ամենից առաջ վերաբերում էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստին:

Վերսկսվեցին նաև սևհարյուրյակային ջարդերը: Դուման նոր էր ցրվել, երբ Օդեսայում սկսվեց հրեաների նոր ջարդ, որի իրականացնողներից մեկը՝ գեներալ Գլագոլևը բարձրաձայն հայտարարում էր. «Ջարդերի պատասխանատվությունն ընկնում է հրեաների վրա, և ռուս հայրենասերները պատժում են նրանց հեղափոխական ոգին»:

Պարզ էր, որ ցարիզմը որքան ամրապնդեր իր դիրքերը, այնքան ավելի ծանր ու անողորմ պիտի դառնային նրա հարվածները, մանավանդ կայսրության այն տարածքներում, որոնք հեղափոխական պայքարի հնոցներ էին:

Արյունալի հաշվեհարդարը մեծ ծավալներ ընդունեց Ֆինլանդիայում, որին ցարը խոստացել էր սահմանադրություն,

բայց հեղափոխության պարտությունից հետո հետ էր առել իր խոսքը: Սանձարձակված տեռորը քայլում էր Լեհաստանով մեկ, որտեղ մեծ ու փոքր նախճիրները փոխարինում էին մեկը մյուսին: Նույն վիճակն էր Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, ուր ռուս մարդկանց բանտային լկումներն ու գնդակահարությունները գերազանցում էին հրեաների, ֆիններ, լեհերի տանջանքները:

Գրեթե նույն ժամանակ, երբ Օդեսայում տեղի էին ունենում հրեաների ջարդերը, «ռուս հայրենասերներն» Անդրկովկասում նոր արյունահեղություն սարքեցին:

Կազակները Գանձակում հարձակվում են երկու անմեղ հայ երիտասարդների վրա, որոնք չհամակերպվելով բռնվելու մտքի հետ, պաշտպանվում են զենքով: Հրաձգության ժամանակ սպանվում է կազակներից մեկը, որի թաղումը կատարվում է շքեղ ու հանդիսավոր: Թաղման արարողությունը վերածվում է հակահայկական ցույցի: Երբ թափորն անցնում էր քաղաքի հայոց թաղերով, հանկարծ կազակներն սկսում են հրացանային կրակ տեղալ անցնող-դարձող հայերի վրա: Սպանվում է երկու հայ: Լինում են բազմաթիվ վիրավորներ: Ամբողջ Գանձակը սուզվում է սարսափի մեջ: Երկյուղ կրելով վատթարագույնից՝ հայերից շատերը փախչում են ապահով տեղեր:

Իշխանությունները քիչ ջանքեր չեն գործադրում հայերին թուրքերի դեմ հանելու, բայց այս անգամ չեն հասնում իրենց նպատակին:

Ալ. Խատիսյանը հետագայում պատմում էր. «Զօրավարները, բանակներու գլուխ անցած, կ'այրէին գիւղերը եւ կը գնդակահարէին կասկածելիները կամ կ'աքսորէին Սիբիրի խորքերը:

Յաճախ ես կ'ըսէի փոխարքային, որ այս միջոցները երբեք չեն կարող բարելաւել Կովկասի կեանքը: Ան կը համաձայնէր ինձ հետ, սակայն ընդհանուր ռուսական քաղաքականութիւնը սրի եւ հրի քաղաքականութիւն էր միայն: Թիֆլիսի նահանգապետը կ'ըսէր, որ իրենք ունին բաւական քանակութեամբ սուիններ՝ ճնշելու համար յեղափոխական ոեւէ շարժում»[1]:

---

[1] ***«Հայրենիք»*** *(Բոստոն), № 8 (116), Հունիս, 1932, էջ 124-125:*

Վիթխարի կայսրությունը տնքում էր համատարած անիշխանության և զինվորականության կրնկի տակ: «Իշխանությունը,- գրում էր Խատիսյանը,- մեկ նպատակ կը հետապնդէր, այն է՝ խլել ժողովուրդէն այն ամէնը, ինչ որ ան ձեռք էր բերած 1905 թուի յեղափոխութեան շնորհիւ»[1]:

Եթե Ռուսաստանում հեղափոխական ուժերը ժամանակավոր պարտություն էին կրել, ապա նրա կովկասյան տիրույթին սահմանակից երկու երկրներում՝ Պարսկաստանում և Թուրքիայում վիճակն այլ էր: Պարսկաստանում սկսված դեմոկրատական հեղափոխությունն աստիճանաբար թափ էր առնում, իսկ Թուրքիան թևակոխել էր նախահեղափոխական շրջան:

Այդ զարգացումները, բնականաբար, խոր ազդեցություն էին ունենում իր պատմական հայրենիքի կենսատարածքում ապրող հայ ժողովրդի երեք հատվածների վրա:

Ստոլիպինյան հետադիմությունն միաժամանակ ահեղ փորձություն էր Ռուսական կայսրության քաղաքական բոլոր ուժերի համար: Թե դրանցից ո՞րը կդիմանար հետադիմության հարվածներին և հանդես կբերեր գոյատևելու տոկունություն — այդ հարցի պատասխանը պիտի տար ժամանակը:

Իշխանությունների զանգվածային ճնշմանը չատերը չդիմացան և խուճապահար նահանջեցին, ուրիշներն ուղղակի քայքայվեցին, երրորդները համակերպվեցին հունիսերեքյան հեղաշրջմանը և պատսպարվեցին հետադիմության թևերի տակ:

Իրենց որդեգրած գաղափարներին և պայքարի նպատակներին հավատարիմ մնացին հեղափոխական կուսակցությունները, թեև հենց նրանք էին հետադիմության հարվածների հիմնական թիրախը: Նրանց մեծ մասը կարողացավ պահպանել իր կազմակերպական կառույցը, կանոնավոր նահանջել և անցնել խոր ընդհատակ, միաժամանակ հմտորեն օգտագործել հեղափոխական աշխատանքի օրինական հնարավորությունները:

---

[1] ***«Հայրենիք»****, № 8 (116), Հունիս, 1932, էջ 124:*

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՀՈՒՆԻՍԵՐԵՔՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ցարիզմն իրավացիորեն իր ամենահեղափոխական ու անզիջում հակառակորդը համարում էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կառույցը և հատկապես նրա առավել արմատական թևը՝ բոլշևիզմը: Ուստի պատահական չէր, որ ստոլիպինյան հետադիմության ամենից ուժգին հարվածները կրում էր հենց այդ կուսակցությունը: Իշխանություններին հաջողվեց կայսրության տարբեր մասերում՝ կենտրոնական Ռուսաստանում, Ուկրաինայում, Լեհաստանում, նաև՝ Անդրկովկասում ջախջախել նրա մի շարք խոշոր կազմակերպություններ:

Բայց այդ անելանելի թվացող իրականության խորքում անգամ առաջ էր տարվում քարոզչության և կազմակերպման գործը, որ մի օր կրկին շարժման մեջ էր դնելու մարդկային զանգվածները:

Հունիսերեքյան հեղաշրջմամբ 1905-1907 թթ. ռուսաստանյան հեղափոխությունը պարտվել էր: Բայց դա ժամանակավոր պարտություն էր, քանզի երկրի առջև կանգնած արմատական հարցերը չէին ստացել իրենց լուծումը և մնում էին օրակարգում: Առաջվա պես Ռուսաստանի բնակչության ահագին մեծամասնության վրա ծանրացած էր քաղաքական և տնտեսական լուծը, դժգոհ էին այն ազգությունները, որոնք դարձել էին բացառիկ օրենքների անիրավության զոհեր, դժգոհ էր ժամանակավոր պարտություն կրած պրոլետարիատը, դժգոհ էին գյուղացիական վիթխարի զանգվածները, որոնց փոքր-ինչ կրավորական դիրքը քաջալերել էր համառուսական հետադիմությանը:

Բոլշևիկյան կուսակցությունը ծանրագույն պայմաններում կարողացավ, առանց խուճապի, կազմակերպված նահանջել և անցնել ընդհատակ: Հարկավոր էր պահպանել տեղական կազմակերպությունների ու կոմիտեների կազմվածքը, կուսակցության կառույցները, ընդհատակում շարունակել հեղափոխական քարոզչությունը, զանգվածներին հավատ ներշնչել առաջիկայում հեղափոխության անխուսափելի վերելքի նկատմամբ: Այդ նպատակով՝ կուսակցության անդամները գնում էին պարտու-

թյուն կրած աշխատավոր զանգվածների մոտ, նրանց ներշնչում հույս ու հավատ, կոչ անում՝ չմատնվել խուճապի, բացատրում, որ պարտությունը ժամանակավոր է, որ եթե հեղափոխության դրած հարցերը մնացել են չլուծված, անպայման գալու են նոր, է՛լ ավելի հուժկու պայքարի օրեր:

Ստեղծված նոր իրադրության մեջ այդ դժվարին աշխատանքների կազմակերպումը կուսակցությունը դրել էր բոլշևիկ խոշոր գործիչների վրա, որոնք հաջողությամբ էին կատարում իրենց դերը:

«Իզուր չէ,- գրել է Վլադիմիր Լենինը,- որ մեզ կոչել են կարծրաքարեր: Սոցիալ-դեմոկրատները կազմել են մի պրոլետարական կուսակցություն, որը չի հուսահատվի առաջին ռազմական գրոհի անհաջողությունից, գլուխը չի կորցնի, ավանտյուրաներով (արկածախնդրություններով:- Հ. Ս.) չի տարվի: Այդ կուսակցությունը գնում է դեպի սոցիալիզմ, առանց կապելու իրեն և իր ճակատագիրը բուրժուական հեղափոխությունների այս կամ այն ժամանակաշրջանի վախճանի հետ: Հենց այդ պատճառով էլ այդ կուսակցությունն ազատ է նաև բուրժուական հեղափոխությունների թույլ կողմերից: Եվ այդ պրոլետարական կուսակցությունը գնում է դեպի հաղթանակ»[1]:

ՌՍԴԲԿ V համագումարից հետո, 1907 թ. կեսերին, Բաքու եկավ Ստեփան Շահումյանը:

Շահումյանի ժամանումը Բաքու ջերմորեն և մեծ հույսերով դիմավորեցին քաղաքի բոլշևիկները[2]: Նա եկել էր Բաքու՝ մշտական բնակության և մշտական հեղափոխական աշխատանքի, եկել էր հետադիմության ծավալուն հարձակման պայմաններում արգելք հանդիսանալու տեղի բոլշևիկյան կազմակերպության քայքայմանը, գործադրելու բոլոր հնարավոր միջոցները՝ համախմբելու զինակիցների ուժերը:

Ստ. Շահումյանի առաջին գործերից մեկն եղավ բոլշևիկյան մամուլի հաջորդականության ապահովումը: Նրա ջանքերով ու

---

[1] **Վլադիմիր Ի. Լենին**, ԵԼԺ (55 հատորով), հատ. 13, Երևան, 1977, էջ 574:
[2] **Տե՛ս Н. Н. Колесникова**, *По дорогам подполья. Баку, 1973, с. 60.*

խմբագրությամբ 1907 թ. հունիսի 20-ից Բալախանիում սկսեց հրատարակվել բոլշևիկյան "Бакинский пролетарий" («Բակինսկի պրոլետարի») չարտոնված (անլեգալ) թերթը: Դրան հաջորդեց Բաքվի նավթարդյունաբերող բանվորների միության արտոնված օրգան "Гудок" («Գուդոկ») չաբաթաթերթը, իսկ վերջինիս անմիջական հաջորդն եղավ "Бакинский рабочий" («Բակինսկի ռաբոչի») լրագիրը: Թերթի բարձր մակարդակն ապահովվում էր նրա խմբագրակազմի միջոցով, որը գլխավորում էր Ստ. Շահումյանը:

Ընդհատակում չարունակվում էր պայքարը բոլշևիկների ու մենշևիկների միջև: 1907 թ. հուլիսին «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրել էր Շահումյանի՝ «Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությունները» հոդվածը՝ ուղղված մենշևիկների դեմ, որոնք պայքարում էին ցարական վարչական մարմիններում տեղեր գրավելու համար[1]: Մենշևիկները նույն մարտավարությունն օգտագործում էին նաև Բաքվում, գտնելով, որ ստեղծված պայմաններում սոցիալ-դեմոկրատները պետք է հաշտության եզրեր գտնեն տեղի բուրժուազիայի հետ և նրա միջոցով փորձեն մեղմել իշխանությունների պատժիչ գործողությունները:

Բոլշևիկները մտածել անգամ չէին ուզում բուրժուազիայի հետ որևէ համաձայնություն կայացնելու մասին՝ դա համարելով դավաճանություն բանվոր դասակարգի գործին:

1907 թ. հոկտեմբերի 25-ի գիշերը Կոստանդին Խատիսյանի գործարանի արտադրամասերից մեկում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության գաղտնի կոնֆերանսը: Կազմակերպության առաջիկա անելիքների մասին զեկուցումով հանդես եկավ Ստ. Շահումյանը: Զեկուցողը չեշտում էր, որ բոլշևիկները որևէ հաջողություն չեն կարող ակնկալել առանց վճռական պայքար մղելու մենշևիկների դեմ: Նույն պահանջով հանդես եկան մյուս ելույթ ունեցողները[2]:

---

[1] **Ստեփան Շահումյան,** ԵԼԺ, հատ. 2, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 33:

[2] Տե՛ս **Մակիչ Վ. Արզումանյան**, Ստեփան Շահումյան, «Հայաստան» հրատ., Երևան, 1978, էջ 161:

Կոնֆերանսը հավանություն տվեց զեկուցման դրույթներին (թեզիսներին) և ընտրեց ՌՍԴԲԿ Բաքվի բոլշևիկյան կոմիտե, որի մեջ մտան Ստեփան Շահումյանը, Պրոկոֆի Ջափարիձեն (Այյոշա), Սպանդար Սպանդարյանը, Իոսիֆ Ստալինը, Նադեժդա Կոլեսնիկովան և ուրիշներ: Պրակտիկ աշխատանքի համար՝ Բաքվի կոմիտեն կազմեց Գործադիր բյուրո, որն անմիջականորեն գլխավորում էր Ստ. Շահումյանը: ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օրգան ճանաչվեց «Բակինսկի պրոլետարի» թերթը:

Կոնֆերանսից հետո Բաքվի բոլշևիկներն ընդհատակում բուռն գործունեություն ծավալեցին մենշևիկների դեմ: Արդյունքում, 1907-ի վերջերին, քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության չուրջ 2500 անդամների 2/3-ը գնում էր բոլշևիկների հետևից:

Բաքվի՝ փոքրամասնության մեջ մնացած մենշևիկները գումարեցին առանձին կոնֆերանս և ընտրեցին իրենց ղեկավար մարմինը: Դա բոլշևիկներից լիովին անջատվելու քայլ էր, որն ավելի էր խորացնում ՌՍԴԲԿ քաղաքային կազմակերպության պառակտումը:

Մենշևիկների դեմ մղվող անհաշտ պայքարում Բաքվի բոլշևիկյան կոմիտեն, փաստորեն, կատարում էր կուսակցական համակովկասյան կենտրոնի դեր: Դա նշանակում էր, որ 1907 թ. վերջերից Ստ. Շահումյանը, ըստ էության, ոչ միայն Բաքվի բոլշևիկների, այլև Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ճանաչված ղեկավարն էր:

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի անդամ Ն. Կոլեսնիկովան Շահումյանին բնութագրել է որպես «կիրթ, բարձր կուլտուրայի տեր, տեսականորեն անչափ պատրաստված մարդ», որն «ամենասերտ կապերով կապված էր բանվորական լայն զանգվածների հետ», և զուր չէ, որ «բոլոր ընկերները սիրում էին և խորապես գնահատում նրան»[1]: Տարբեր ազգերի տասնյակ հազարավոր բանվորներ տեսնում և գնահատում էին նրա անխոնջ գործունեությունը, համեստությունը, մարքսիստ հրապարակախո-

---

[1] ***Н. Н. Колесникова**, По дорогам подполья, с. 69-70.*

սի, խոշոր տեսաբանի ու հռետորի փայլուն տաղանդը:

Ցարական պահնորդական բաժանմունքը կրնկակոխ հետևում էր Շահումյանի գործունեությանը: Նրա վրա նշանակված գաղտնի գործակալներն անընդհատ տեղեկություններ էին հաղորդում, առիթներ էին որոնում նրան ձերբակալելու: Բայց Շահումյանը գործում էր զգույշ, տիրապետում էր գաղտնի գործունեության (կոնսպիրացիա) կանոններին և ամեն անգամ կարողանում էր խճճել ոստիկանության ծրագրերը:

Հետադիմության դաժան հարվածները հասան նաև Հայաստանի բոլշևիկներին: Նրանց մի ստվար մասը ձերբակալվեց, մյուսները հեռացան իրենց բնակավայրերից, երրորդներն անցան ընդհատակ՝ ուժերը պահպանելու և նոր պայքարի նախապատրաստվելու համար:

Առանց այն էլ ֆինանսական մեծ դժվարություններ կրող բոլշևիկյան կուսակցությունը, այդ թվում՝ նրա կովկասյան հատվածը, հունիսերեքյան հեղաշրջումից հետո հայտնվեց է՛լ ավելի ծանր դրության մեջ:

Երկար մտորումներից հետո, բոլշևիկ գործիչների մի մասի մեջ միտք հղացավ ժամանակավորապես մի կողմ դնել սոցիալ-դեմոկրատիայի՝ «հեղափոխական գործը պետք է կատարել միայն ու միայն մաքուր ձեռքերով» սկզբունքը, և հետևելով Դաշնակցության օրինակին, կատարել ոչ թե անհատներին, այլ պետությանը պատկանող դրամական արժեքների մեկ-երկու բռնի սեփականազրկում (էքսպրոպրիացիա):

Բայց երկու սեփականազրկում չկատարվեց: Կատարվեց մեկը, որի մտահղացողը և իրականացնողն եղավ բոլշևիկ Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյան): Նշանավոր հեղափոխականը, որպես կանոն, գործում էր միայնակ, հանդես էր գալիս միանգամայն ինքնուրույն, սեփական նախաձեռնությամբ, անում էր այն, ինչ պահանջում էր իր կուսակցության շահը:

Կամոն որոշեց Թիֆլիսում սեփականազրկում կատարել այն պահին, երբ Ռուսաստանի կենտրոնական բանկից Թիֆլիսի նրա մասնաճյուղի համար կստացվեր մեծաքանակ դրամ: Այդ նպատակով նա կատարեց նախապատրաստական լուրջ աշխատանք, իր շուրջը համախմբեց մի քանի նվիրյալ ընկերների և

նշանակված օրը գործի անցավ: Դա 1907 թ. հունիսի 13-ն էր:

Գործողությունը կատարվեց ստացված դրամը Թիֆլիսի երկաթուղային կայարանից կառքով բանկ փոխադրելիս, Երևանյան հրապարակում: Ջոկատի հարձակում կառքի վրա, ռումբերի պայթյուն ու թանձր ծուխ, իրարանցում և խուճապ: Օգտվելով խառնակ վիճակից՝ Կամոն ցատկում է կառքի վրա, վերցնում 250 հազար ռուբլի պարունակող պայուսակը և անհետանում:

Իշխանությունները ոտքի հանեցին քաղաքի ոստիկանությանը, ժանդարմերիային, ողջ լրտեսական ցանցը, բայց դրամը բռնագրավողներին հայտնաբերել չհաջողվեց:

Դեպքի մասին ցարի կառավարությունը հայտնեց Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների համապատասխան մարմիններին, որպեսզի նրանք ևս միջոցներ ձեռնարկեն հանցավորներին հայտնաբերելու համար:

Ջնայած սկսած հալածանքներին, բոլշևիկները շարունակում էին զանգվածներին պայքարի հանել ինքնակալության դեմ:

1907 թ. երկրորդ կեսին դեռ շարունակվում էին ռուսական հետնապահային (արիերգարդային) առճակատումները, որոնց անմասնակից չմնաց նաև Հայաստանի բանվորությունը: 1907 թ. հուլիսի սկզբին գործադուլ սկսվեց Երևանի տպարաններում: Սեպտեմբերի 17-ին Կարսում տեղի ունեցավ զանգվածային ելույթ պարենային դժվարությունների հողի վրա: Նոյեմբեր-դեկտեմբերին հուզումներ եղան Ալավերդու և Ղափանի պղնձահանքերի բանվորների շրջանում:

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ՍԴԲՀԿ-Ի ԴԵՄ

Հունիսերեքյան հեղաշրջումից հետո հալածանքներից ու հետապնդումներից զերծ չմնաց նաև Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ): Դա ցույց է տալիս, որ ճիշտ չէր խորհրդահայ պատմական գրականության մեջ տեղ գտած այն պնդումը, թե այդ կազմակերպությունը ցարիզմի գործակալի դեր է կատարել հայկական բանվորական շարժման մեջ:

Հալածանքներ սկսվեցին ՍԴԲՀԿ ղեկավար գործիչների և, առաջին հերթին, կազմակերպության ղեկավար Բախչի Իշխանյանի նկատմամբ:

Ներքին գործերի նախարարության մամուլի դեպարտամենտի Թիֆլիսի բաժանմունքի ղեկավարին հղած նամակում քաղաքի գրքի առևտրի տեսուչը հայտնում էր, որ Բ. Իշխանյանի «Ազգային առաջադիմությունը և դասակարգային շահերը» 1200 տպաքանակով լույս տեսած գրքույկը գրախանութներից բռնագրավված է[1]: Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազից ստացված մի զեկուցագրում նշված էր, որ Բաքվում Բ. Իշխանյանի վարձակալած բնակարանում կատարած խուզարկության ժամանակ առգրավվել է հայերեն, ռուսերեն, գերմաներեն մեծաքանակ արգելված գրականություն: Հաղորդվում էր նաև, որ Իշխանյանի հեղինակած գրքերը հակակառավարական ուղղվածություն ունեն, շատ վնասակար են, ուստի պետք է ոչնչացվեն, իսկ հեղինակը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության[2]:

Հավաքված փաստերի քննությամբ Թիֆլիսի զինվորական դատախազությունը դատարան ներկայացրեց մեղադրական ակտ՝ Բ. Իշխանյանին դատելու համար: Ամբաստանյալը մեղադրվում էր հակակառավարական գործունեության համար և քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով ենթակա էր հինգ տարվա ազատազրկման: Բայց, չնորհիվ իր մտերիմների ազդու միջամտության և փաստաբանի զորավոր պաշտպանության, Բ. Իշխանյանը դատապարտվեց երկու և կես տարվա բանտարկության:

Եթե Բախչի Իշխանյանին հաջողվեց պահանջվածից նվազ ժամկետով «փրկվել», ապա կազմակերպության ղեկավար ու շարքային գործիչներից շատերը ձերբակալվեցին և նետվեցին բանտ, փակվեցին կուսակցության մամուլի բոլոր օրգանները:

Ընդհատակի դժվարին պայմաններում 1907 թ. սեպտեմբերի

---

[1] *ՀԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 109, թ. 2:*

[2] *Նույն տեղում:*

սկզբին տեղի ունեցավ ՍԴԲՀԿ I համագումարը: Քննության էին դրված մի շարք հարցեր՝ կենտկոմի հաշվետվությունը, կազմակերպության նոր ծրագրի ու նոր կանոնադրության նախագծերը, վերաբերմունքը պետական դումայի, ՌՍԴԲԿ-ի, Անդրկովկասի քաղաքական կուսակցությունների նկատմամբ և այլն:

Համագումարն ընդունեց նոր ծրագիր, որի համաձայն՝ կազմակերպության նպատակը հայ իրականության մեջ սոցիալիզմի կառուցումն էր:

Քննարկելով դումայական մարտավարության (տակտիկայի) հարցը՝ համագումարը որոշում ընդունեց փոխել Առաջին և Երկրորդ պետական դումաների նախընտրական շրջանում կիրառած բոյկոտի մարտավարությունը և աշխույժ մասնակցություն ունենալ Երրորդ պետական դումայի ընտրություններին:

ՌՍԴԲԿ-ի հետ հարաբերությունների հարցի մասին ընդունված բանաձևով համագումարը հաստատում էր, որ ՍԴԲՀԿ-ն մնում է նախկին դիրքորոշման վրա, այն է՝ հայ պրոլետարիատի միջավայրում աշխատելու է որպես սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն, լինելու է ինքնավար ու անկախ, գործելու է իր համագումարների ընդունած որոշումների և կենտկոմի հրահանգների (դիրեկտիվների) սահմաններում:

Այնուհանդերձ, համագումարը հանձնարարում է ՍԴԲՀԿ ղեկավարությանը՝ բանակցությունների մեջ մտնել ՌՍԴԲԿ կենտկոմի հետ, փորձել վերացնելու երկու կողմերի միավորման իրականացմանը խանգարող խոչընդոտները:

ՀՆՉԱԿՅԱՆ ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՅՐԸՆԹԱՑԸ

Եթե 1907 թ. առաջին կեսը՝ Կովկասում հնչակյան կուսակցության հեղինակության աճի բարձունքն էր, ապա նույն թվականի երկրորդ կեսը եղավ նրա աստիճանական թուլացման սկիզբը:

Հնչակյան կուսակցության ներսում վաղուց սկսած անջատման ու քայքայման գործընթացը 1907 թ. կեսերին նոր թափ

առավ, որի հետևանքով նա արագորեն կորցնում էր ժողովրդականությունը, նրա ուժերն անկասելիորեն գնում էին դեպի անկում: Դա ուներ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատճառներ:

***Ներքին** պատճառների թվում առաջինը ներկուսակցական երկպառակություններն էին, որոնք ստացել էին չարունակական հիվանդության բնույթ:*

***Արտաքին** պատճառների թվում առաջին տեղը բռնում էին իշխանությունների բռնարարքները: Հետադիմության ամրապնդմանը զուգընթաց ուժեղանում էին կուսակցության հետապնդումն ու հալածանքը: Բազմաթիվ հնչակյաններ, որոնք քիչ թե շատ կասկածվում էին կուսակցական գործունեության մեջ, ձերբակալվեցին և նետվեցին բանտեր կամ վարչական կարգով աքսորվեցին երկրամասից: Շատ նշանավոր կուսակցական գործիչներ ստիպված էին թողնել երկիրը և ապաստան գտնել սպիտակ ահաբեկչությունից (տեռորից) հեռու վայրերում: Փակվում էին կուսակցությանը պատկանող տպագիր օրգանները, ցրվում էին խմբագրությունները, կնքվում էին տպարանները, բռնագրավվում էր գույքը, խմբագիրները նետվում էին բանտեր կամ աքսորվում: Զանգվածների մեջ հնչակյան քարոզչությունը հասցվել էր նվազագույնի, քանի որ անհնարին էին դարձել ոչ միայն մարդաշատ հանրահավաքները, այլ նույնիսկ կուսակցական խմբերի սովորական ժողովները:*

Սակայն հնչակյան կուսակցության թուլացման գլխավոր պատճառը պետք է փնտրել նրա ներսում: Ռուսական հեղափոխության պարտությունը հնչակյան շարքերում առաջ բերեց տարընթացության ուժգին ալիքներ և կուսակցությունն սկսեց երերալ: Նրանից սկսեցին հեռանալ պատեհապաշտ տարրերը, որոնք որևէ գաղափարական կապ չունեին նրա ծրագրի ու մարտավարության հետ, բայց դարձել էին կուսակցականներ՝ այդ քաղաքական ուժի հովանավորությունն ստանալու համար: Հնչակից դուրս եկան ոչ միայն մեծ թվով շարքայիններ, այլև նրա ղեկավար կազմի անդամներից ոմանք:

Հնչակից հեռացածները և նրան համակրող հասարակական շերտերի չափավոր տարրերը գտնում էին, որ քաղաքական

դավադրությունների ժամանակներն անդառնալիորեն անցել են, հետևապես Կովկասում վարվելիք քաղաքականության նոր ընթացքը պահանջում էր աշխատանքի միանգամայն նոր եղանակներ: Ելնելով դրանից, նրանք իրենց գործունեությունը գերադասում էին վարել ընդհանրապես ամեն մի քաղաքական կազմակերպությունից հեռու:

Ստոլիպինյան հետադիմության հարվածները, բոլշևիկներից հետո, իրենց անողոքությամբ տեղացին անթիվ-անհամար հանցանքների մեջ մեղադրվող Դաշնակցության վրա:

Դեռևս 1906 թ. աշնանը Կովկասում կազմվել էր մի նոր սևհարյուրյակ՝ «Կենտրոնական զինվորական մարմին» անունով, որի նպատակն էր կռվել ՀՅ դաշնակցության դեմ: «Մարմինը» հրատարակել էր մի շրջաբերական, որում չարաղրել էր իր նպատակները: Ահա՛ թե ինչ էր ասված այնտեղ.

«Ռուսական պետութեան մէջ անտանելի են սեպարատիստները (անջատականները:- Հ. Ս.), որովհետեւ նրանք պետութիւնը տանում են դէպի թուլացում ու անկում: ՀՅ դաշնակցութիւնն իր գործունէութեան սկզբից ի վեր իրեն ցոյց է տուել իբրեւ այդպիսին, եւ այդ պատճառով նրան պէտք է հիմքից կործանել: Ոչ մի խորամանկութիւն չի կարող ստիպել մեզ այլ կերպ մտածելու Դաշնակցութեան մասին, որը սեպարատիստների կուսակցութիւն է, եւ հէնց դրա համար պէտք է ոչնչացուի»: Հայտնելով այդ մասին՝ «Կենտրոնական զինվորական մարմինն» իր բոլոր ճյուղերին առաջարկում էր՝ նախադրած նպատակին հասնելու համար անմիջապես անողոք կռիվ սկսել Դաշնակցության դեմ՝ կանգ չառնելով որևէ միջոցի առջև: «Դիմադրութեան, վրէժի եւ առհասարակ որեւէ հակազդեցության դէպքում, որ ձեռք կ'առնեն կուսակցութիւնը կամ նրան համակրող ազգաբնակչութիւնն ու առանձին անհատներ, բացարձակ կռիւ սկսել նրանց դէմ, բռնանալ եւ նոյնիսկ ոչնչացնել, հաշուի չառնելով ո՛չ նրանց թիւը եւ ո՛չ էլ հասարակական կարծիքը»[1]:

---

[1] ***«Դրօշակ»**, № 11 (177) նոյեմբեր, 1906, էջ 175:*

«Կենտրոնական զինվորական մարմնի» չարադրած այդ շրջաբերականը տարածել էր ինքը՝ ոստիկանությունը:

Սևհարյուրյակայինների այդ և նման սպառնալիքներն ազդեցություն չէին գործում Դաշնակցության վրա, որի թվակազմը հասել էր շուրջ 160 հազարի*:

Թեև Դաշնակցությունն ստեղծվել էր հայ ժողովրդի արևմտյան հատվածը թուրքական բռնակալությունից ազատագրելու նպատակամղումով, բայց նա չէր կարողացել իր մեջ ձուլել թուրքահայ գիտակից տարրերի մեծամասնությանը և նրան առնել իր խորունկ ներգործության տակ: Դրան հակառակ, կուսակցությունը ռուսահայության մեջ ձեռք էր բերել հսկայական հեղինակություն և դարձել ոչ միայն քաղաքական, այլև մարտական խոշոր ուժ: Նա հենց Կովկասում հասավ իր լավագույն իրագործումներին, այնտեղ ունեցավ իր կուսակցական անբաղդատելի հաջողությունները, այնտեղ տարավ իր հաղթանակները: ՀՅԴ-ն տիրացավ համարյա ամբողջ կովկասահայ մտավորականությանը և ընդհանրապես կովկասահայ մտքին: Այլ խոսքով՝ Կովկասի հայ իրականության մեջ նա դրության տերն էր: Իսկ կովկասահայ երիտասարդ ու նորահաս մտավորականությունը, հատկապես հայ ուսուցչությունը, որն իր աչքը բացել էր 19-20-րդ դարերի սահմանագծում, Դաշնակցության մեջ էր տեսել հանրային գործունեության անդիմադրելի փորձություններին դիմակայելու հնարավորությունը:

Տարածվելով ռուսահայ հասարակության բոլոր խավերում ու անկյուններում, Դաշնակցությունը բռնել էր կովկասահայ

---

* Համեմատության համար նշենք, որ ազատական-միապետական (լիբերալ-մոնարխիստական) կուսակցությունների ձախ թևում գտնվող ռուսաստանյան կադետական կուսակցությունը 1906 թ. հունվարի տվյալներով ուներ 100 հազար անդամ, որոնց թիվը հետագա երկու տարիներին գնալով նվազեց և 1908-ի սկզբներին իջավ 25-30 հազարի (տե՛ս **Е. Д. Черменский,** *Буржуазия и царизм в революции 1905-1907 гг., Москва-Ленинград, 1939, с. 373*): Ռուսաստանյան մյուս խոշոր քաղաքական կազմակերպության՝ օկտյաբրիստների կուսակցության («Հոկտեմբերի 17-ի միություն») անդամների թիվը 1907 թ. կազմում էր 10,1 հազար (նույն տեղում, էջ 194):

հանրային կյանքի բոլոր ճամփաներն ու քառուղիները և, այդ-պիսով դա կաղապարել իր ուզած ձևով, նրան փոխանցել իր տեսությունները, ընդհանուր աշխարհայացքը, քաղաքական ձգտումները, համակրանքներն ու ատելությունները:

Թեև կազմակերպության ամուր կարգապահության դեմ հաճախ հանդես էին գալիս առանձին ըմբոստ տարրեր, բայց նրանք կուսակցության մեջ սովորաբար գտնվում էին երկրորդական-երրորդական դիրքերի վրա, ուստի չէին կարողանում որևէ եղանակ ստեղծել նրա շարքերում:

Սակայն վիճակն սկսեց փոխվել հունիսերեքյան հեղաշրջումից հետո: Եթե 1907 թ. առաջին կեսը ՀՅ դաշնակցության կազմի և հեղինակության աճի բարձունքն էր, ապա նույն թվականի երկրորդ կեսը նրա աստիճանական թուլացման սկիզբն եղավ: Դա տեղի էր ունենում չնայած կուսակցության ներքին ամուր կազմվածքին, շարքերի ուժեղ կարգապահությանը, կազմակերպության անդամների բացարձակ մեծամասնության նվիրվածությանը ՀՅԴ դավանած գաղափարներին:

Դաշնակցության սկսած վայրընթացը պայմանավորված էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մի շարք պատճառներով:

Ներքին պատճառների թվում առանձնանում են երկուսը:

Առաջին, հայկական հասարակության մեջ գործող պատկառելի քաղաքական ուժերի և հոսանքների մեծ մասը (պահպանողականներ, ազատականներ՝ «Մշակի» գլխավորությամբ, հնչակյաններ, բոլշևիկներ ու մենշևիկներ և այլք) տարիներ շարունակ պայքար էին մղել Դաշնակցության դեմ և նրան բնութագրել ամենաբացասական որակումներով: Այդ կազմակերպության մասին նրանց արտահայտած կարծիքները, բնականաբար, աննկատ չէին մնացել ցարական պահնորդական բաժանմունքի սուր աչքից:

Երկրորդ, ռուսական հեղափոխության տարիներին, հայկական հասարակության ամենահզոր քաղաքական ուժի՝ Դաշնակցության շարքերը խուժել էին տասնյակ հազարավոր մարդիկ՝ տարված նրա հմայքով, այդ թվում՝ քաղաքային և գյուղական մանր առևտրականներ, հոգևորականներ, զանազան քաղքենիներ: Դրանցից շատերը գաղափար իսկ չունեին կուսակցու-

թյան ծրագրային նպատակների, իրենց հասարակական պարտականությունների մասին, պատրաստ չէին ինքնազոհության, արժեքների իրենց ըմբռնումով չատ հեռու էին իրավ դաշնակցականի բարոյականից: Ուստի, երբ 1907 թ. ամռանից ստոլիպինյան հետադիմությունն իր առաջին հարվածները տեղաց Դաշնակցության վրա, կուսակցության մեջ հախուռն մտած այդ չերտը լքեց նրա չարքերը և ապահովության համար մտավ ստվերի տակ:

Դաշնակցության դեմ սանձազերծած ահաբեկչությունը խոր ազդեցություն գործեց հայկական հասարակական զանազան խավերի հետ կազմակերպության ունեցած փոխհարաբերությունների վրա: Իշխանություններից եկող հակազդեցությանը զուգահեռ Դաշնակցության դեմ հակազդեցություն էր աճում այդ հասարակության ներսում: Դա վերաբերում էր ամենից առաջ բնակչության այսպես կոչված «խելամիտ» և «բարեմիտ» խավերին՝ հենց այն խավերին, որոնք ոչ այնքան վաղուց չողոքորթում էին և ամեն կերպ սատարում նրան ու նույնիսկ համարում, որ իրենք ինչ-որ չափով պատկանում են այդ կուսակցությանը: Կովկասյան թաթարներից եկող վտանգն արդեն անցել էր, և Դաշնակցության պաշտպանության կարիքն այդ խավերն այլևս չունեին: Մյուս կողմից, կառավարության եռանդուն արշավը և վարչական ահաբեկչության բոլոր տեսակների լայն կիրառումը սարսափի մեջ գցեցին «խելամիտներին», և նրանք խրտնեցին կուսակցությունից: Եվ ոչ միայն խրտնեցին, այլև հրաժարվեցին նրա հետ ամեն տեսակ համերաշխությունից, միատեղ գործելու ցանկությունից, ավելին՝ իրենց հայտարարեցին անհաշտ թշնամի նրան՝ ոչ միայն ներկայումս, այլև իբր, այդպիսին են եղել նույնիսկ անցյալում: Եվ որքան ավելի դաժան էին դառնում կառավարական բռնարարքները, այնքան նրանք բարձրաձայն էին հռչակում իրենց թշնամությունը հեղափոխությանը և իրենց կատարյալ հավատարմությունը կամ համերաշխությունը իշխանություններին:

Պետք է, սակայն, վերապահություն անել, որ այդ արագ կերպարանափոխության մեջ, բացի կենդանական վախից, դեր էին խաղում նաև այլ դրդապատճառներ: Այն ժամանակից, երբ

Դաշնակցությունը երևան հանեց իր սոցիալիստական բնույթը և փորձեց սոցիալիստական գաղափարները ծրագրից փոխադրել իր գործնական (պրակտիկ) աշխատանքի մեջ, այդ ժամանակից, բնականաբար, նա արդեն չէր կարող հույս կապել ո՛չ բուրժուազիայի, ո՛չ հոգևորականության, ո՛չ ազատական մտավորականության համակրանքի հետ:

Քարոզչություն անելով փողատերերի դեմ, կազմակերպելով բանվորական գործադուլներ և արհեստակցական միություններ, այդ հարուստներին ներկայացնելով երկպառակություններ առաջացնող և նույնիսկ պարզապես անիրագործելի տնտեսական պահանջներ, համառորեն ձեռք բերելով նրանցից զգալի զիջումներ՝ կուսակցությունն ակնհայտորեն չէր կարող իր դեմ չլարել ամբողջ բուրժուազիային:

Նույնը նաև գյուղում: Քարոզչություն անելով հողի համայնացման գաղափարի օգտին, պայքարելով հողատերերի շահագործման դեմ, նվազագույնի հասցնելով վարձավճարը և բնահարկը, սանձահարելով գյուղական կուլակների ու բեկերի կամայականությունները և այդ պայքարում երբեմն խախտելով նույնիսկ արդարության սահմանները՝ կուսակցությունը, բնականաբար, պետք է ձեռք բերեր ոխերիմ թշնամիներ ի դեմս կալվածատերերի և առանձին տնտեսապես հարուստ, գյուղացիների:

Մոտավորապես նույն բանը տեղի ունեցավ հոգևորականության հետ: Էջմիածնի ժողովի (1906 թ.) որոշումները հիմք ընդունելով և պահանջելով, որ հոգևորականությունը ժողովրդական կրթության և ազգային գույքի տնօրինումը հանձնի ժողովրդի ներկայացուցիչներին, Դաշնակցությունը դրանով իսկ ոչ միայն կրճատեց հոգևորականության իրավունքները, այլև որոշ իմաստով չոչափեց նաև նրա անմիջական շահերը:

Ազատական մտավորականությունն, իր հերթին, չէր կարողանում հաշտվել այն գերիշխող դրության հետ, որ Դաշնակցությունը գրավում էր հայության մեջ. հասարակական-ազգային գործերի ղեկավարությունը խլվել էր իր ձեռքից և կարճ ժամանակում դարձել կուսակցության բացառիկ մենաշնորհը: ՀՅԴ-ն կարողանում էր ամեն տեղ և ամենուրեք թելադրել իր

հրահանգները՝ իր մեծ հեղինակությամբ ճնշելով մյուս հասարակական հոսանքներին, գլխավորապես ազատական մտավորականությանը, որն սկսել էր անորոշ անցումների փորձեր կատարել դեպի կղերականություն և ազգայնամոլություն:

Նույնիսկ մի կողմ թողած ընդհանուր սոցիալ-քաղաքական գաղափարների տարբերությունը և վախը կառավարական հալածանքներից, նշված հանգամանքներն անխուսափելիորեն պետք է հանգեցնեին բոլոր իշխանություն ունեցողների կամ բնակչության՝ իշխանության ձգտող խավերի օտարմանը Դաշնակցությունից: Ինչ խոսք, այդ ավել կամ պակաս հույժ անձնական և չահամոլական դրդապատճառները ամենակարող Դաշնակցության դեմ չէին կարող բացահայտորեն առաջ քաշվել մեկ-երկու տարի առաջ: Բայց հիմա վիճակը գլխիվայր փոխվել էր. և՛ բուրժուազիան, և՛ հողատերերը, և՛ հոգևորականությունն ու աջ մտավորականությունը, բոլորը միաձայն և բավական բարձր խոսում էին ազգային չահերին ու իր սեփական գաղափարական պատգամներին Դաշնակցության դավաճանության մասին:

Հանդես գալով Դաշնակցության սոցիալիստական միտումների դեմ, բուրժուազիան (առևտրա-արդյունաբերական և հողատիրական) վկայակոչում ու բողոքարկում էր ոչ թե դասակարգային, այլ համընդհանուր ազգային չահերը... Նա ասում էր, որ այն բացառիկ ծանր դրության համար, որում գտնվում էր հայ ազգը, մեծապես մեղավոր է Դաշնակցությունը, որն ազգի ներսում հրահրել է դասակարգային հակամարտություն և սատարել դրան՝ նպաստելով հասարակական օրգանիզմի համընդհանուր քայքայմանը:

Պաշտպանելով իր արտոնյալ դիրքը հասարակական-ազգային պարտականությունների հարցերում՝ հոգևորականությունը մշտապես չեշտում էր, որ գոյություն ունեցող վարչակարգի պայմաններում այն փոքրիկ ազգային-մշակութային ինքնավարությունը, որ դեռևս վայելում են հայերը, անքակտելիորեն կապված է եկեղեցու հետ, ուստի հոգևորականության դերի ու իշխանության նսեմացման դեպքում հայերը կզրկվեն նաև այդ ինքնավարության վերջին մնացորդներից:

Այ մտավորականությունը նույնպես արձագանքելով վերը նշված խավերի հայտարարություններին՝ բողոքում էր ընդհանուր-ռուսական հեղափոխական շարժման հարցում կուսակցության միջամտության դեմ, հայ ժողովրդին կոչ անում պահպանելու նախկին հավատարմությունը ցարական կարգերին:

Ահա՛ այդպես, Դաշնակցության դեմ կազմավորվեց համերաշխ, թեկուզև իր կազմով մի քիչ տարօրինակ ու անհեթեթ ազատական-կղերական-բուրժուական ազգային համախմբում: Թե որքանո՞վ էր անկեղծ այդ համախմբման մեջ մտնող ուժերի բողոքը Դաշնակցության դեմ, ի՞նչ չափով էին նրանք իսկապես ելնում ազգային շահերից և ի՞նչ չափով՝ իրենց շահադիտական, դասակարգային կամ խմբակային նկրտումներից, այդ ժամանակ դժվար էր որոշել: Անշուշտ, բողոքավորների մեջ կային գաղափարական մարդիկ, որոնք անկեղծորեն համոզված էին, որ Դաշնակցության բռնած ուղղությունը վտանգավոր է ազգի համար, բայց բողոքողների մեծ մասը ազգային շահերի դրոշով գիտակցաբար բողոքարկում էր բոլոր այն անձնական շարժառիթները, որոնց մասին խոսք եղավ վերը:

Նշված հասարակական խավերը, որոնք հեղափոխական պայքարի մեջ ներկայացված էին լոկ պատահականորեն և կարճ ժամանակով, էականորեն ազդում էին կուսակցության վիճակի վրա: Բայց վերջինիս համար շատ ավելի վտանգավոր էր այն հակազդեցությունը, որը ծագեց հենց ժողովրդական զանգվածներում, այն զանգվածներում, որոնց համար աշխատում էր ՀՅԴ-ն և իր բախտորոշ վճիռները կայացնելիս հենվում էր հենց նրանց վրա: Անգիտակից, անկայուն և իրական գաղափարականությունից զուրկ այդ զանգվածները ևս չդիմացան հեղափոխությանը հասցված հարվածներին և արագորեն տապալվեցին ամրապնդվող կառավարության գրոհներից: Բուռն ոգևորությունը և չափազանց մեծ հույսերն արագորեն փոխվեցին նույնքան չափազանց մեծ հիասթափության: Միայն քաղաքային պրոլետարիատը կարողացավ պահպանել հեղափոխության ժամանակ իր նվաճածից ինչ-որ բան, բայց այդ ինչ-որ բանը շատ հեռու էր նրանից, որ նրան խոստացել էին կամ ձեռք էր բերել ինքը՝ իր պայքարով:

Դարերով հալածված գյուղացին նույնպես որոշ չափով թեթևացրել էր իր անպաշտպան վիճակը, բայց այդ աննշան թեթևացումը բոլորովին չէր համապատասխանում հողի համայնացման և ընդհանրապես հողային ստրկությունից ազատվելու մասին Դաշնակցության գծած վիթխարի հեռանկարներին: Հեղափոխությունը չէր տվել այն, ինչ նրանից սպասում էին և ինչ խոստացել էր կուսակցությունը: Այստեղից էլ հեղափոխական կուսակցությունների, այդ թվում նաև, իհարկե, Դաշնակցության ժողովրդականության անկումը: Վերջին բարոյական հարվածը Դաշնակցությանը տվել էին նրա իսկ լուծարած խմբերի մնացորդները, որոնք Անդրկովկասում Թուրք-հայկական ընդհարումներից հետո քայքայված գյուղացիական միջավայրում իրենց վայրագություններով, բաշիբոզուկային արարքներով կատաղեցնում էին բնակչությանը:

Ի լրումն այս ամենի, սկսվեց պառակտում հենց կուսակցության ներսում: Ինչպես ընթերցողը տեղեկացված է աշխատության նախորդ շարադրանքից, այդ պառակտումը դրսևորվել էր երկու ծայրահեղ և հակադիր ուղղություններով՝ զուտ ազգայնական և կիսասոցիալիստական, այլ կերպ՝ Թուրքա-հայկական և ռուսա-հայկական: ՀՅԴ-ի՝ ռուսական Անդրկովկասը ներառնելու միջոցով իր գործունեության շրջանի լայնացումը, ինչպես նաև կազմակերպության ծրագրի նոր խմբագրությունը՝ ընդգծված սոցիալիստական ընույթով, տագնապ առաջացրին Թուրքահայերի և նրանց այն խմբերի շարքերում, որոնք չունեին այլ գաղափարներ, բացի Թուրքահայաստանի քաղաքական ազատագրումից: Այդ թևը վախենում էր, որ Անդրկովկասում աշխատելը կշեղի կուսակցական ուժերին և Թուրքահայկական հարցը կթողնի առանց անհրաժեշտ պաշտպանության, որ սոցիալիզմի քարոզչությամբ և դասակարգային հակամարտության առաջացումով վերջնականապես կթաղվեն ազատագրական պայքարի նպատակները:

Արտաքին պատճառների թվում առաջին տեղը պատկանում է կառավարական հալածանքներին: Այս առումով՝ Դաշնակցությունն արժանացել էր առհասարակ ռուսաստանյան հեղափոխական բոլոր կուսակցությունների ճակատագրին: Երկրորդ,

իշխանությունների աչքում այդ կուսակցությունը ներկայանում էր նաև որպես քաղաքական վրեժխնդրությամբ առաջնորդվող ահաբեկչական կազմակերպություն: Նման մեղադրանքի համար նրանք նոր ապացույց էին համարում գեներալ Մաքսուդ Ալիխանով-Ավարսկու սպանությունը 1907 թ. ամռանը:

Նախիջևանահայության կոտորածների օրերին թուրք մարդասպաններին բացահայտորեն խրախուսած գեներալ Ալիխանով-Ավարսկին տեղափոխվել էր Վրաստան, որտեղ իրեն հանձնված պատժիչ արշավախմբերով անլուր գազանություններ էր կատարել ապստամբ Գուրիայում՝ հողին հավասարեցնելով տասնյակ գյուղեր և կոտորելով դրանց բնակիչներին:

Վրաց հեղափոխականները նրան սպանելու մի քանի փորձեր էին արել, որոնք վերջացել էին անհաջողությամբ:

Ալիխանով-Ավարսկին Քութայիսի գեներալ-նահանգապետն էր, երբ եկավ Ալեքսանդրապոլ: ՀՅ դաշնակցության Ոսկանապատի (Բաքվի) կենտրոնական կոմիտեն որոշում ընդունեց մահվան ենթարկել նրան և առաջադրանքի կատարումը հանձնարարեց Մարտիրոս Զարուխչյանին ու Դրաստամատ Կանայանին (Դրո):

1907 թ. հուլիսի 2-ի երեկոյան Ալեքսանդրապոլում տեղակայված կաբարդինյան գնդի ակումբում ներկայացում էր տրվում, որին ներկա էր նաև Ալիխանով-Ավարսկին՝ կադետական դպրոցի սան 16-ամյա իր որդու հետ:

Ներկայացումը վերջանալուց հետո, կեսգիշերն անց, ժամը մոտ 2:30-ին, գեն. Ալիխանովը, դուրս գալով ակումբից, որդու հետ բարձրանում է կառք և ուղևորվում տուն: Նրանց հետ կառք են բարձրանում նաև 20-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Գլեբովի կինը և դուստրը[1]:

Բեյբուտովսկայա փողոցով անցնելիս, առաջին քաղաքամասի ոստիկանատնից քիչ հեռու, Մարտիրոսը մոտենում է սլացող կառքին և նետում երկու ռումբ: Սոսկալի պայթյունից սպանվում են գեներալ Ալիխանով-Ավարսկին, գեներալ Գլեբովի կինը, կա-

---

[1] *Տե՛ս* ***«Խարիսխ»*** *(Թիֆլիս), № 4, 5 հուլիսի 1907 թ.:*

բարդինյան գնդի զինվոր Գրիգորի Զեսլովը և կառապանը: Թեթև վիրավորվում են Ալիխանովի որդին և գեներալ Գլեբովի դուստրը[1]:

Անմիջապես վրա է հասնում ոստիկանությունը, բայց, ընդհանուր խուճապի մեջ, վրիժառուներն անհետանում են: Շատ չանցած, զորքը չրջապատում է քաղաքը:

Կատարվում են խուզարկություններ, ձերբակալվում է 25 մարդ, որոնք չուտով ազատ են արձակվում՝ փաստեր ու վկաներ չլինելու պատճառով[2]:

Գեներալ Ալիխանով-Ավարսկու սպանությունը Դաշնակցության վերջին ահաբեկչական խոշոր գործողությունն էր ցարական պաշտոնյաների նկատմամբ: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ կուսակցության ուժերն սկսել էին արագորեն նվազել և նա ամսե-ամիս կորցնում էր իր ժողովրդականությունն Անդրկովկասում:

1905-1907 թթ. ազատագրական չարժման տարիներին կուսակցությունը մի կողմ էր դրել գաղտնի գործունեության ամեն տեսակի ձևերը և գործում էր բացեիբաց, ի տես բոլորի: Հեղափոխական ժամանակաշրջանն ավարտվելուց հետո նա ստիպված էր կրկին ընդհատակ անցնել: Բայց դա արդեն դժվար էր իրականացնել, քանի որ կայսրության մեջ նրան արդեն լավ էին ճանաչում:

Զնայած այդ ամենին, հունիսերեքյան հեղաշրջումից հետո Դաշնակցությունն առաջվա պես մի ամբողջ տարի շարունակում էր մնալ Կովկասի ամենաուժեղ քաղաքական կազմակերպությունը, քանի որ նրա չարքերում մնացել էին նրա նպատակների նվիրյալները: «Ինչ ասել կ'ուզէ, որ կուսակցական եռանդուն եւ հաւատարիմ տարրը միշտ չարքերուն հետ էր վտանգի ամենադժուար րոպէին անգամ»[3],- վերհիշել է Ալ. Խատիսյանը: Հենց այդ նվիրյալների վրա իջան ստոլիպինյան ռեակցիայի ծանր հարվածները:

---

[1] **«Խարիսխ»**, № 4, 5 հուլիսի 1907 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **«Հայրենիք»**, № 9 (117), հուլիս, 1932, էջ 96:

Դաշնակցության չարունակվող գործունեությունը և նույնիսկ նրա գոյությունը չատ էր մտահոգում Ստոլիպինին: Միքայել Վարանդյանի վկայությամբ՝ նա այդ կազմակերպությունն առանձնացնում էր կայսրության մյուս այլազան հեղափոխական կուսակցություններից, դա համարելով ամենավտանգավորը՝ «իր եզակի դիմագծով ու լայնարձակ ճիւղերով – Կովկաս, Թուրքիա, Պարսկաստան, եւ մանաւանդ իր զինուած ու կարգապահ վաչտերով, ինքնապաչտպան կուիներով եւ յանդուգն ահաբեկումներով»[1]:

Էրջորեն զբաղվելով Դաշնակցության խնդրով՝ Ստոլիպինը երկրորդական համարեց վրացական և այլ կուսակցությունների ու խմբերի գոյությունը, նույնիսկ մոռացավ նրանց մասնակցությունը կովկասյան 1905-1907 թթ. դեպքերին: Օրեր չարունակ նա ուսումնասիրում էր ներքին գործերի նախարարության ներկայացրած տեղեկանքները, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Թուրքիայում հայկական ըմբոստացումների հետ կապված վավերագրերը: «Կովկասեան չարժում եւ Դաշնակցութիւն գրեթէ նոյնանիշ դարձեր էին անոր աչքին»,- նկատում էր Միքայել Վարանդյանը[2]:

Եվ սկսվեց Դաշնակցության մինչ այդ չտեսնված հալածանքը:

Բազմաթիվ մարդիկ, որոնք քիչ թե չատ կասկածվում էին կուսակցական գործունեությանն առնչվելու մեջ, կալանվեցին, բանտարկվեցին կամ վարչական կարգով արտաքսվեցին երկրամասից: Աչքի ընկնող կուսակցական չատ գործիչներ ստիպված հեռանում էին Կովկասից և ապաստան փնտրում հեռուներում: Մեկը մյուսի հետևից փակվում էին դաշնակցական թերթերը, կնքվում էին նրանց խմբագրությունները, բռնագրավվում էին տպարանները կամ տպատառերը, իսկ խմբագիրները բանտարկվում էին կամ վարչական կարգով աքսորվում: Չատ թուլացավ զանգվածների շրջանում տարվող քարոզչությունը, քա-

---

[1] **Միքայել Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., Թեհրան, 1981, էջ 325:

[2] Նույն տեղում:

նի որ անհնարին էին դարձել ոչ միայն բազմամարդ հանրահավաքները, այլև նույնիսկ կուսակցական խմբերի սովորական ժողովները: Զափազանց անկայուն գտնվեցին Դաշնակցության արհեստակցական միությունները, որոնք չդիմացան հետադիմության առաջին իսկ ճնշմանը: Դրանց մեծամասնությունն ընդհանրապես փակվեց, իսկ պահպանված փոքր մասն այլևս չէր դրսևորում ո՛չ եռանդ, ո՛չ կենսունակություն:

Դաշնակցության դեմ սկսած իրենց արշավն ըստ ամենայնի արդարացնելու համար իշխանությունները չէին խորշում նորանոր սադրանքներից: Դրանցից մեկն այն ամբաստանությունն էր, թե կուսակցությունը ձեռնարկել է Անդրկովկասում առաջ բերել թուրք-հայկական նոր ընդհարումներ:

Բայց դեպքերը ցույց տվեցին, որ ոչ թե Դաշնակցությունը, այլ հենց իշխանություններն են մտադիր երկու ժողովուրդների միջև նոր արյունալի փոթորիկ առաջ բերել: Անցյալից կարծես նորից հառնում էր փոխադարձ թշնամության ատելի ու անիծված ուրվականը:

ՀՅ դաշնակցության Գանձակի կոմիտեի որոշման համաձայն՝ հայ վրիժառուները 1907 թ. օգոստոսի 15-ին քաղաքից ոչ հեռու գտնվող Ելենենդորֆ գերմանական գաղութում, իր տան մոտ, սպանում են հայատյաց ու մատնիչ գերմանացի Գուրին: Գանձակից եկած հինգ ոստիկանները և կազակները, հետապնդելով վրիժառուներին, փորձում են ձերբակալել նրանց, բայց վերջիններս խույս են տալիս և ազատվում[1]*:*

Վերադառնալով քաղաք, ոստիկաններն ու կազակները փորձում են ձերբակալել առաջին հանդիպած երկու հայերի, բայց սրանք, հանելով ատրճանակները և կրակելով, պաշտպանվում են: Փոխհրաձգության ժամանակ վիրավորվում է երկու կազակ, որոնցից մեկը, ծանր վերք ստացած լինելով, հետևյալ օրը մահանում է:

Բանը սակայն դրանով չի վերջանում: Սպանված կազակին օգոստոսի 17-ին թաղում են չքեղ սգահանդեսով: Դիակին ուղեկցում էր կազակների, հետևակայինների, սպաների, «խ-

---

[1] *Տե՛ս* ***«Դրօշակ»,*** *№ 8 (185), օգոստոս, 1907, էջ 105-106:*

կական ռուս մարդկանց» մի հսկա բազմություն: Բազմաթիվ պսակների առջևում տանում էին այն պսակը, որի ժապավենի վրա գրված էր՝ «Սպանվել է դավաճան հայերի ձեռքով»[1]:

Որպես պատասխան, իշխանությունները ձեռնարկեցին Գանձակ քաղաքում Թուրք-հայկական նոր ընդհարման կազմակերպումը:

Օգոստոսի 18-ի երեկոյան կազակ սպան, առանց որևէ առիթի, հայերի թաղում գնդակ է արձակում մի թուրք կառապանի վրա, նպատակ ունենալով մեղքը բարդել հայերի վրա և բորբոքել թուրքերի զայրույթը նրանց դեմ: Բայց մտադրությունը ձախողվում է: Թուրքը, թեթև վիրավոր, կարողանում է փախչել իրենց թաղը և հայտնել, թե ով է եղել իր վրա կրակողը:

Երկու օր հետո, օգոստոսի 20-ին, կազակները դիմում են նոր սադրանքի. հայերի թաղով անցնելիս՝ նրանք երկու-երեք գնդակ են արձակում մի թուրք մրգավաճառի վրա և սպանում նրան: Հայերը, խմբվելով դիակի շուրջ, բարձրաձայն մեղադրանք են հղում հեռվում կանգնած կազակներին: Վերջիններս, մոտենալով, նրանց վրա կրակ են բացում, սպանում և վիրավորում 16 հոգու: Դրանով չբավարարվելով, կազակները խուժում են հայերի տներն ու խանութները և կողոպտում ամեն արժեքավորը: Հայերը փախչում են թուրքական թաղը:

Գանձակի այդ դեպքերի մասին Թիֆլիսի հայատյաց մամուլը և հատկապես "Кавказ" («Կավկազ») թերթը տպագրում են մի շարք հոդվածներ, որոնցում խեղաթյուրված են ներկայացնում ամեն ինչ, կատարվածի ամբողջ մեղքը բարդում Դաշնակցության վրա: Այդ հոդվածների մի մասը հանգրվանում է Պետերբուրգի հետադիմական պարբերականների, այդ թվում հայատյաց "Новое Время" («Նովոյե Վրեմյա») թերթի էջերում:

1905-1906 թթ. ռուսական կառավարությունը հեշտությամբ էր հաջողում Անդրկովկասում ջարդեր սարքել՝ օգտագործելով թուրք ղանգվածների տգիտությունը: Բայց, ահա՛ այժմ, թուրքերը որոշ հասունություն էին ձեռք բերել և կարողանում էին

---

[1] ***«Դրոշակ»,*** *№ 9 (186), սեպտեմբեր, 1907, էջ 132:*

իրենց բարեկամներին զանազանել թշնամիներից: Հայերի մոտ արդեն հույս էր արթնացել, որ չարագործ կառավարության ձեռքին հարևան թուրքերն այլևս կույր գործիք չեն դառնալու, և համոզված էին, որ դա կառավարության վերջին փորձն է իրար դեմ հանելու երկու հարևան ժողովուրդներին:

Գանձակի դեպքերի առթիվ Դաշնակցության Կովկասյան մարտական մարմինը 1907 թ. օգոստոսին հանդես եկավ մի շրջաբերականով, ուր ասված էր, որ հայ և թուրք հարևանները պետք է փայփայեն բարեկամությունը ու համոզված լինեն, որ համայն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորների հուժկու հարվածների տակ միապետությունը՝ այդ բոլոր չարիքների պատճառը, վաղ թե ուշ պիտի կործանվի:

Դաշնակցությունը երկու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման կողմ լինելու նորանոր փաստեր էր տալիս:

1907 թ. օգոստոսի վերջերին Ղարաբաղի Շոշ գյուղացի Ավագը, անձնական վրեժխնդրությունից դրդված, կազմակերպում է հարևան թուրքական գյուղի սեիդ Մահմեդի սպանությունը: Զնայած դեպքի մեջ կային մեղմացուցիչ հանգամանքներ, բայց ՀՅ դաշնակցության Ապառաժի (Արցախի) կենտրոնական կոմիտեն մահվան է դատապարտում Ավագին, որը և իրագործվում է անհապաղ: Դրան հաջորդում է կենտրոնական կոմիտեի կոչը՝ ուղղված Ղարաբաղի հայ և թուրք աշխատավորներին: Կոչում ասված էր.

«ՀՅ դաշնակցութեան Ապառաժի կոմիտէն հայ եւ թուրք հասարակութեանը հրաւիրում է զգաստ ու խոհեմ մնալ, բացառել անհատական սպանութիւնները, վախի սպառնալիքով չթանձրացնել մթնոլորտը, չլարել եղբայրական յարաբերութիւնները, հեռու մնալ գրգռող գործողութիւններից: Յիշել եւ հաւատալ, որ այդօրինակ ամէն մի քայլ Դաշնակցութեան կողմից անխնայ ենթարկուելու է ամենախիստ պատժի:

Եւ թող ըմբռնեն ամէնքը մի անգամ ընդ միշտ, որ ՀՅ դաշնակցութիւնը, չահագրգռուած թուրք եւ հայ աշխատաւորութեան մերձեցման գաղափարով, արթուն կերպով հսկում է բոլոր պրովոկատորական (սադրիչ) մութ ոյժերի վրայ եւ իր պատ-

ժի սուրն է պատրաստել դիմաւորելու համար Թուրք ու հայ աշխատաւորութեան թշնամիներին»[1]:

1907 թ. ամռանը Բաքվի բնակչությունը նորից ալեկոծված էր ու ահաբեկ՝ քաղաքում թափառող բազմաթիվ ավազակային խմբերի հարձակումներից, կողոպուտից, սպանություններից: Ինքնապաշտպանության նախկին զինվորներից շատերը, պրոֆեսիոնալ ավազակների գլխավորությամբ և ձեռք-ձեռքի տված տեղական ոստիկանության հետ, կողոպտում էին խանութպանին ու արհեստավորին, ամենաթշվառ բանվորին անգամ, իրենց կողոպտիչ ձեռքը բարձրացնում նույնիսկ կանանց ու երեխաների վրա:

Ավազակությունն անբարո վարք էր մտցրել նաև կազմակերպված բանվորության շրջանում. բանվորներից շատերը սև ու չարքաշ աշխատանքից գերադասում էին հեշտ կողոպուտը:

Նույնիսկ 1905-1906 թթ. Թուրք-հայկական ընդհարումների օրերին Բաքուն չէր տեսել ավազակախմբերի այդպիսի լայնածավալ ոճիրներ:

Օգտագործելով այն փաստը, որ բազմազգ ավազակախմբերի մեջ կային նաև ոչ քիչ թվով նախկին դաշնակցական մարտիկներ, իսկ նրանցից ոմանք նույնիսկ խմբերի ղեկավարներ էին, իշխանությունները Դաշնակցությանը ամբաստանում էին, որ իբր նա է կազմակերպել ավազակախմբերը՝ նրանց կողոպուտներով հոգալու համար իր կարիքները:

Այդ հերթական սադրանքին, իհարկե, ոչ քիչ հավատացողներ եղան, բայց Դաշնակցությունն անպատասխան չթողեց զրպարտությունները: Ոչ միայն մամուլով, այլև որոշակի գործերով նա ցույց տվեց, որ ամբաստանությունն անհիմն է, և որ կուսակցությունը ոչ միայն որևէ առնչություն չունի կողոպտիչների հետ, այլև ինքը հնարավոր բոլոր միջոցներով պայքարելու է դրանց դեմ՝ վերականգնելու հասարակական կարգը: 1907 թ. օգոստոսի 8-ին ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն հանդես եկավ պաշտոնական ազդարարությամբ, որտեղ ասվում էր, որ

---

[1] **«Դրօշակ»,** № 8 (185), օգոստոս, 1907, էջ 119:

հեղափոխական կուսակցությունների պարտքը միայն գոյություն ունեցող վարչակարգի (ռեժիմի) դեմ կռվելը չէ, այլ նաև պայքարելը դրանից առաջացած չարիքների դեմ, որոնք բարոյապես և ֆիզիկապես քայքայում են տառապած ու քանդված ժողովրդին:

Եվ, իսկապես, ինքնապաշտպանության՝ արդեն կողոպտիչ դարձած նախկին մարտիկներին մի քանի անգամ զգուշացնելուց հետո, Դաշնակցությունը ձերբակալեց նրանցից առավել աչքի ընկնողներին: Այնուհետև, կոմիտեն, մնացյալ մարտիկներին, որոնք գիտակցաբար թե անգիտակցաբար հետևում էին ավազակներին, հայտարարում էր, որ այսուհետև նման քայլեր կատարելու դեպքում ենթարկվելու են ամենախիստ պատիժների: Միաժամանակ, կոմիտեն քաղաքի բոլոր դաշնակցականներին պատվիրում էր լինել աչալուրջ, թույլ չտալ, որ որևէ հայ ենթարկվի բոպեական հրապույրի և դիմի քրեական հանցանքների: Վերջում, մնացած հեղափոխական կուսակցություններին նույնպես կոչ էր հղվում նույն վերաբերմունքն ունենալու իրենց չարքերի նկատմամբ:

Այդ նույն ժամանակ ցարական իշխանությունները գնալով ուժեղացնում էին պայքարը Դաշնակցության դեմ: Ոստիկանությունը Կովկասի տարբեր վայրերում ձերբակալեց տասնյակ դաշնակցականների ու նետեց բանտերը: Դա Դաշնակցության հետագա լայնածավալ հալածանքների նախերգանքն էր:

Ձերբակալվածների մի մասը, իբրև պետական հանցավոր, մեղադրվում էր 1903 թ. հունիսի 6-ի՝ հայոց եկեղեցական կալվածքների գրավման ցարական կառավարության հաստատած օրենքին չենթարկվելու և հակակառավարական ելույթներին մասնակցելու համար, այն դեպքում, երբ ինքը՝ ցարը, 1905 թ. օգոստոսի 1-ին հրովարտակով չեղյալ էր հայտարարել այդ օրենքը և Հայ եկեղեցուն վերադարձրել նրա կալվածքները:

Հակաօրինական արարքների հանցապարտ հեղինակների պիտակավորմամբ բանտեր նետվածներից շատերը մեղադրվում էին թուրք-հայկական ընդհարումների առիթով զենք կրելու համար, այն դեպքում, երբ այդ կռիվների ժամանակ իշխանությունները զենք ու զինամթերք էին տվել նախ կովկասյան

Թուրքերին, որից հետո Կովկասի ոստիկանապետ Ցիսը զենք էր տվել հայերին՝ Թիֆլիսը պաշտպանելու համար:

Մեղադրյալների մի ուրիշ մասը հալածանքների էր ենթարկվում իբրև հեղափոխականների՝ 1906 թ. Էջմիածնում տեղի ունեցած հայոց կենտրոնական ժողովին մասնակցելու կամ նրա որոշումները կատարելու համար, այն դեպքում, երբ այդ ժողովը տեղի էր ունեցել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի թույլտվությամբ և ոստիկանության գիտությամբ:

Ձերբակալվածներից շատերը որակվում էին վտանգավոր ահաբեկիչներ և քաղաքական քարոզչության հեղինակներ, որոնք կատարել են ՀՅԴ ղեկավարության այս կամ այն հանձնարարությունը: Իշխանությունները կարծես մոռացել էին, որ 1908-ի սկզբին կառավարությունը Կովկաս ուղարկած իր ներկայացուցիչների միջոցով բանակցությունների մեջ էր մտել ՀՅԴ ղեկավարության հետ՝ պարզելու համար, թե կուսակցությունն ի՞նչ դիրք կբռնի այդ ժամանակ սպասվող ռուս-թուրքական պատերազմի դեպքում:

Եվ այդպես շարունակ:

Բանտ նետված դաշնակցականներից ոմանց 1908 թ. առաջին կեսին հաջողվել էր փախչել: Այսպես, Համազասպ Սրվանձտյանը, որը բանտարկվել էր և ուղարկվել Իրկուտսկի մոտ գտնվող Ժիգալովկա ավանի խիստ ռեժիմի գաղութ, կարողացել էր փախչել և անցնել արտասահման:

Հյուսիսային Կովկասում բանտարկվում է դաշնակցական Խեչոն, որի մոտ եղել էին մի քանի կարևոր թղթեր: Նա փոխադրվում է Եկատերինոդարի բանտը, և նրան քննելու գործը հանձնվում է կարևոր գործերի քննիչներից մեկին: Բանտարկյալին ծանր պատիժ էր սպասվում: Իմանալով այդ մասին՝ ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն և զինվորական մարմինը մի շարք խորհրդակցություններից հետո որոշում են կազմակերպել նրա փախուստը: Այդ գործը հանձնարարվում է Եկատերինոդարի շրջանին լավ ծանոթ Մկրտիչ Աղամալյանին (Սարհատ):

Տեղի դաշնակցականների և բանտի պահապան մի հայ զինվորի աջակցությամբ Մ. Աղամալյանը կարողանում է Խեչոյին ազատել բանտից և հասցնել Բաքու: Շուտով Խեչոն և Աղամալ-

յանն անցնում են Պարսկաստան և մասնակցում այնտեղ ծավալվող հեղափոխությանը[1]:

ԱՆՋԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ

Աշխատության երկրորդ գրքում հանգամանալից խոսք է եղել Դաշնակցության շարքերում 1905-1906 թթ. առաջացած անջատական շարժումների մասին:

Ինչպես ցույց ենք տվել, 1906 թ. գարնանը Դաշնակցության շարքերում Լևոն Աթաբեկյանի գլխավորությամբ սկիզբ էր առել «Երիտասարդ սոցիալիստների» մի հոսանք:

Հրապարակի վրա եղած հարցերը չարունակում էին հուզել անջատականների շարքերը: Հեղափոխությունն այլևս տեղի տալու վրա էր, նա մղում էր հետնապահային վերջին մարտերը: Հետադիմության մութ դեմքը հեռվից հեռու տեսանելի էր նաև Կովկասում: Միաժամանակ, հրապարակը լցվել էր սոցիալիստական գրականությամբ, որը երիտասարդությունը կլանում էր չտեսնված ագահությամբ:

Հեղափոխության պարտությունը հուսալքություն էր առաջացրել անջատականների շարքերում: «Երիտասարդ դաշնակցականները» հոգեկան խոր ճգնաժամ էին ապրում և տեսաբանական փնտրտուքների մեջ էին: Նրանք խորամուխ էին լինում թարգմանական և ինքնուրույն բրոշյուրային հեղափոխական-սոցիալիստական գրականության մեջ՝ իրենց հուզող հարցերի պատասխանները գտնելու համար: Այդ բազմազան հարցերը (մատերիալիզմ, իդեալիզմ, մոնիզմ, դուալիզմ, հողային հարց, բանվորական հարց, սինդիկալիզմ և այլն), որոնք հուզում էին անջատականների մտքերը, նրանց ավելի ու ավելի մղում էին դեպի ձախ[2]:

---

[1] Տե՛ս **Աբրահամ Գիւլխանդանեան**, Հայ-թաթարական ընդհարումները, Փարիզ, 1933, հատ. Ա, էջ 65:

[2] Տե՛ս **«Վէմ»** (Փարիզ), № 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 104:

Դաշնակցությունից անջատված այս խմբի անդամները մեծ չափով տարված լինելով ապազգային տրամադրություններով ու մղումներով, ինչպես հունիսերեքյան հեղաշրջումից առաջ, այնպես էլ հետո չէին ընդունում համազգային դատի գոյությունը, գտնելով, որ ազգայինն իր էությամբ ու բնույթով հակասում է սոցիալիզմի սկզբունքներին: Ճիշտ է, նրանց շարքերում կային մարդիկ, որոնք ավելի դրական հայացք ունեին ազգության և ազգայինի նկատմամբ, բայց այդպիսիների համար, այնուամենայնիվ, որոշիչ գործոնը դասակարգն էր, մինչդեռ ազգությունն ու ազգայինը երկրորդական, ստորադաս դեր ունեին:

Դաշնակցության համեմատ միանգամայն տարբեր մոտեցումներ հանդես բերելով ազգային հարցում՝ անջատականներն իրենց այդ տարակարծությունը ներկայացնում էին որպես սոցիալիզմի հարցի շուրջ ՀՅԴ-ի հետ ունեցած հիմնական հակառակություն: Իրականում, ինչպես նկատել է Արտաշես Զիլինգարյանը, «Նրանց ոգին ու մղումները ռուսական էին: Հէնց դա էր պատճառը, որ նրանք իրենց շատ աւելի հարազատ կապ էին զգում ռուսների, քան Թուրքահայերի հետ»[1]:

Անջատման կողմնակիցներից շատերը (Արտաշես Աբեղյան, Գրիգոր Միրզոյան-Սյունի և ուրիշներ), 1907 Թ. մայիս-հունիս ամիսներից սկսած, հետ կանգնեցին իրենց որդեգրած նոր ուղուց և աստիճանաբար վերադարձան Դաշնակցության դրոշի տակ[2]:

ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովը (1907 Թ. փետրվար-մայիս) քննության առնելով երիտդաշնակցականների հարցը, կուսակցությունից նրանց անջատումը համարել էր դրական երևույթ՝ Դաշնակցության շարքերի հետագա զտման ու ամրապնդման տեսակետից: Համագումարի այդ դիրքորոշմանը հավանություն էին տվել կուսակցական զանգվածները:

Բաքվում տեղի ունեցած բազմամարդ մի հավաքույթի ժամանակ դիմելով անջատականների ղեկավար Լ. Աթաբեկյանին, Հարություն Շահրիկյանն ասել էր.

---

[1] **«Ցառաջ»** (Երևան), № 136, 30 հունիսի 1920 Թ.:

[2] Տե՛ս **«ՎԷՄ»**, № 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 104:

«Բոլոր այն քննադատութիւններն ու պակասութիւնները, որոնց մասին խօսք եղաւ այստեղ մեր կուսակցութեան մասին, կարող են եւ ճիշտ լինել: Ամէն մի կուսակցութիւն ունի իր թերութիւնները: Մենք էլ, ի հարկէ, ունենք մերը: ... Դուք, յարգելի՛ պարոն, հաւատ չունէք, որ մեր այդ թերութիւնները ժամանակի ընթացքում կարող են չտկուել: Է՜, ուրեմն, էլ ի՞նչ էք ուզում: Սպառնում էք հեռանա՞լ կուսակցութեան շարքերից: Շատ լաւ: Բայց ո՞վ է բռնում ձեր ձեռքը: Գուցէ կարծում էք, թէ առաջի՞ոնն էք, որ պիտի հեռանաք եւ վերջի՞նը, որ պիտի ետ գաք...»[1]:

Այդ ուղղությամբ ազդանշան տվեց նաև Մոսկվայի դաշնակցական ուսանողությունը՝ ընդունելով մի բանաձև, որով սխալ էր համարում անջատման իր նախկին որոշումը: Բանաձևն ազդարարում էր.

«Մենք՝ Մոսկուայի անջատողական դաշնակցական ուսանողներս, կոչ ենք անում մեր բոլոր բաժանողական եւ անջատական ընկերներին, որոնք կանգնած են սոցիալ-յեղափոխական տեսակէտի վրայ՝ միանալ մեր որոշմանն ու նորից համախմբուել կուսակցութեան չուրջը՝ յանուն աշխատաւորութեան նուիրական շահերի»[2]:

Մոսկվայի ուսանողներին հետևեցին անջատականների ուրիշ խմբեր Բաքվում, Թիֆլիսում, Շուշիում և այլուր:

Այս տարընթացության մեջ՝ երիտդաշնակցական անջատականներն սպասում էին իրենց կազմակերպության համագումարի հրավիրմանը Բաքվում, որը պետք է վճռեր, թե այսուհետ ո՛րն է լինելու իրենց դերը:

Համագումարի նախօրյակին Բաքվում տեղի ունեցան անջատականների մի շարք ժողովներ: Դրանց մասնակիցների ճնչող մասը կողմնակից էր կազմակերպությունը կոչել «Սոց.-հեղափոխական կուսակցության հայ կազմակերպություն»[3], իսկ փոքրամասնությունը, որի մեջ էր նաև Լ. Աթաբեկյանը, առա-

---

[1] **«Հայրենիք»**, № 11 (274), նոյեմբեր, 1948, էջ 63:

[2] **«Խարիսխ»**, № 17, 22 հուլիսի 1907 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 3, 4 հուլիսի 1907 թ.:

ջարկում էր պարզապես ձուլվել ռուսաստանյան սոցիալիստ-հեղափոխական (էս-էռ) կուսակցության մեջ և աշխատել հավաքաբար: Վեճերը սուր բնույթ ստացան, և այդպես էլ միասնական տեսակետ չձևավորվեց[1]:

Անջատականների ղեկավարները լավ իմանալով, որ իրենց գաղափարակիցների մի մասը դրսևորել է նորից Դաշնակցության շարքերում գործելու տրամադրություն, ձեռք առան բոլոր միջոցները, որպեսզի դրանց ներկայացուցիչները հնարավորինս քիչ մանդատներ ձեռք բերեն հրավիրվելիք համագումարին մասնակցելու համար, որպեսզի այնտեղ ապահովեն իրենց համախոհների մեծամասնությունը:

Ղեկավարների այս վարմունքը խոր դժգոհություն առաջ բերեց կազմակերպության շարքերում, որն արձագանք գտավ նաև Բաքվում 1907 թ. հունիսի 14-ին իր աշխատանքներն սկսած համագումարում: Պատգամավորներից մի քանիսն այստեղ իրենց առաջին իսկ ելույթներում խիստ քննադատության տակ առան ղեկավարության գործելակերպը: Քննադատությամբ հանդես եկողների թվում էր երիտդաշնակցական շարժումը սկզբնավորած Արսեն Ամիրյանը, որը ելույթից հետո հեռացավ համագումարից[2]:

Մռավյանի հեռանալուց հետո համագումարում տեղի ունեցավ երկրորդ պառակտումը. հեռացան մի քանի անջատականներ ևս, որոնք կողմնակից էին դաշնային (ֆեդերալ) սկզբունքներով Դաշնակցության շարքերում մնալուն:

Ի վերջո, համագումարում մնացին միայն «ուղղափառ անջատականները», որոնք ձեռնամուխ եղան քննարկելու այն հարցը, թե Դաշնակցությունից դուրս գալուց հետո ո՞ւր պիտի հանգրվանեն իրենց շարքերը:

Վերջապես խարիսխը գտնվեց. երկրորդ քննարկումից հետո համագումարը ձայների մեծամասնությամբ ընդունեց հետևյալ որոշումը.

---

[1] Տե՛ս **«Վէմ»**, № 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 104:

[2] Տե՛ս **«Խարիսխ»**, № 17, 22 հուլիսի 1907 թ.:

«1. Վերանում է երիտասարդ դաշնակցականների անկախ գոյութիւնը, 2. Կազմակերպութիւնը մտնում է սոց.-յեղ. կուսակցութեան մէջ՝ իբրեւ այդ կուսակցութեան հայ կազմակերպութիւն, հետեւեալ հիմունքներով. ա) Սոց.-յեղ. կուսակցութեան հայ կազմակերպութիւնը կատարեալ անկախութեամբ վարում է կազմակերպման եւ պրոպագանդայի գործը հայ ժողովրդի մէջ, կուսակցութեան ընդհանուր մարմինների կողքին ունենալով հայկական հետեւեալ մարմինները՝ շրջանային ժողովներ եւ շրջանային կոլեկտիւներ, որոնք իրենց գործողութիւնները համաձայնեցնում են կուսակցութեան բարձր հիմնարկութիւնների հետ, բ) Հայ բանուորութեան մէջ բանաւոր եւ գրաւոր պրոպագանդայի գործը աւելի յաջող տանելու համար հայ կազմակերպութիւնը սոց.-յեղ. կուսակցութեան բարձրագոյն մարմիններում ունենում է իր ներկայացուցիչներին՝ կազմակերպուած անդամների թուի համեմատ»[1]:

Երիտդաշնակցականների համագումարի ընդունած որոշումը ամենից առաջ ողջունեց սոցիալիստ-հեղափոխականների Բաքվի կազմակերպությունը, որի հայերեն հրատարակած հատուկ ազդում ասված էր.

«Սոց.-յեղ. կուսակցութեան Բաքւի կազմակերպութիւնը յայտարարում է ի գիտութիւն բանուորների, որ նախկին «Երիտասարդ դաշնակցականների» կազմակերպութիւնը (ԵԴԿ) միացել է մեր կուսակցութեանը՝ իբրեւ սոց.-յեղ. հայ կազմակերպութիւն: Այդ պատմական ակտի համար իբրեւ փաստաթուղթ է ծառայում այն դեկլարացիան, որը մօտ ժամանակներս լոյս կտեսնի ՍՀԿ կենտրոնական կոմիտէի հրատարակութեամբ»[2]:

Էսէռական կուսակցության անդրկովկասյան ոչ բոլոր մարմիններն էին ողջունել Երիտասարդ դաշնակցականների կազմակերպությունը ինքնավար սկզբունքով կուսակցության մեջ ընդգրկելու որոշումը: Դրանցից էր նաև կուսակցության անդրկովկասյան շրջանային կոմիտեն, որի պաշտոնական օրգանում

---

[1] **«Խարիսխ»,** № 3, 4 հուլիսի 1907 թ.:

[2] Նույն տեղում:

(*“Известия Закавказского Областного комитета”*) տպագրված հոդվածում ասված էր.

«Սոց-հեղ. կուսակցությանն ընդունելի է միմիայն լիակատար և անպայման միացումը. բոլոր այն կազմակերպչական ձևերը, ինչպես օրինակ դաշնության և լիակատար միացման միջև մի որևէ այլ ձև, միայն կխանգարեն սոց.-հեղ. գործունեությանը Կովկասում»[1]:

Դաշնակցությունից հեռացած երիտդաշնակցականներին այլ բան չէր մնում անելու, քան խախտել իրենց համագումարի որոշումը և սոց.-հեղափոխական կուսակցության մեջ մտնել ոչ թե դաշնային սկզբունքով, այն է՝ ոչ թե մտնել որպես ինքնավար կազմակերպություն՝ ունենալով այնտեղ հայկական թև իր գործադիր մարմնով, այլ՝ լիակատար ձուլվել դրա մեջ: Երիտդաշնակցական կազմակերպության բոլոր անդամները, Լ. Ախաբեկյանի գլխավորությամբ, ընդհանուր հիմունքներով համալրեցին ռուսաստանյան սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության շարքերը:

Ուղղափառ դաշնակցական-երիտասարդ դաշնակցական-անջատական՝ ահա՛ այն ուղին, որով անցնելով, երիտսոցիալիստները, ի վերջո, խարիսխ նետեցին սոց.-հեղափոխական կուսակցության մեջ: Այսպիսով, երիտդաշնակցականների կազմակերպությունը, որպես ինքնուրույն ուժ, 1907 թ. հուլիսին դադարեց գոյություն ունենալուց:

Բայց նոր միջավայրում էլ՝ սոց.-հեղափոխական կուսակցության շարքերում, «երիտասարդ սոցիալիստները» բավական ժամանակ մնացին երերուն և սպասողական կացության մեջ, քանի որ կուսակցության բարձրագույն մարմինը հապաղում էր տալ իր վերջնական վճիռը: Այդ պայմաններում՝ երիտդաշնակցականների մի մասն արդեն հաշտվել էր սոց.-հեղ. կուսակցության մեջ ձուլվելու իրողության հետ, իսկ մյուս մասը դեռ փայփայում էր այնտեղ ինքնավար վիճակ ունենալու հույսը:

Ի վերջո, սոցիալիստ-հեղափոխական (Էս-Էռ) կուսակցության կենտրոնը 1907 թ. օգոստոսին ընդունեց իր անդրկովկաս-

---

[1] **“Известия Закавказского Областного комитета”** (Тифлис), № 1, 1907, с. 12.

յան շրջանային կոմիտեի առաջարկը՝ երիտդաշնակցականների կազմակերպությունը կուսակցության մեջ ձուլելու մասին[1]:

«Հայ քաղաքական մտքի դեգերումները» հայտնի աշխատության մեջ Արտաշես Ջիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան) գրում էր, որ էսէռական կուսակցության հետ երիտդաշնակցականների միացումը «իրապէս եղաւ ինքնաչէզոքացման համազօր քայլ մը: ... Բնական է, որ այլեւս անոնք չէին կարող նշանակալի դեր մը կատարել հայ քաղաքական կեանքին մէջ»[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Յառաջ»****, № 136, 30 հունիսի 1920 թ.:*

[2] ***«Հայրենիք»****, № 1, նոյեմբեր, 1922, էջ 57: Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության շարքերում գտնվող մի շարք նախկին առաջատարներ (Արմենակ Տեր-Սարգսյան, Գևորգ Մելիք-Շահնազարյան, Վասակ Խոսրոռունի և Վահան Մինախորյան), ինչպես նաև այդ կուսակցության շատ անդամներ 1908 թ. ամռանը ձերբակալվեցին սոց.-հեղ. կուսակցության Անդրկովկասյան շրջանային ժողովի ժամանակ: 1910 թ. մայիսին զրկվելով բոլոր իրավունքներից՝ նրանք դատապարտվեցին ցմահ աքսորի՝ Սիբիր: Շատ չանցած, բանտ նետվեց «Անի» թերթի պատասխանատու խմբագիր Գրիգոր Բազազ-Աղաջանյանը և թերթը փակվեց: Դրսում մնացած նախկին անջատականներն սկսեցին հրատարակել «Շեփոր» թերթը, որին երբեմն աշխատակցում էին նաև բանտերում գտնվող էսէռ անջատականներից ոմանք: Շատ չանցած, ճակատագրի քմահաճ կամքով, «Դաշնակցության գործով» ձերբակալվեց Դաշնակցությունից հեռացած Լ. Աթաբեկյանը: Էսէռ անջատականների դրսում մնացած ընկերները ցրվեցին և հոսանքը դադարեցրեց իր գոյությունը: Համաշխարհային պատերազմի և ռուսական երկրորդ (փետրվարյան) հեղափոխության տարիներին անջատական շարժումը կենդանության թույլ և կարճատև նշաններ ցույց տվեց՝ «Սոց.-հեղ. կուսակցության հայ կազմակերպություն» անվան տակ: 1917-1918 թթ. Բաքվում սպանվեցին Լևոն Աթաբեկյանը, Հայկ, Խորեն, Ստեփան Ստեփանյանները, Գրիգոր Բազազ-Աղաջանյանը, Թիֆլիսում մահացավ Արտաշես Ալիխանյանը, սպանվեց Ստեփանոս Նազարյանը: Հայաստանի առաջին հանրապետության օրով Երևանում էին նախկին անջատականներ՝ գործակատար Աբրահամը (Շեֆ), կոոպերատոր Հովհաննես Լազարյանը (Թյունի), ահաբեկիչ Տիգրան Տեր-Սահակյանը (Զարմայր): Սրանցից առաջինը մութ ուժերի ձեռքով սպանվեց Վեդի-Բասարի շրջանում, երկրորդը՝ 1921 թ. փետրվարյան ապստամբության օրերին՝ Ղամարլուի ճակատում, երրորդը՝ խորհրդային իշխանության օրոք Երևանում՝ ինչ-որ մի ոճրագործի ձեռքից զոհը ազատելու ժամանակ: Մի քանի նախկին անջատականներ խորհրդային տարիներին աքսորվեցին Սիբիր: Ընդհանրապես անջատականներին վիճակվեց նույն բախտն ու ճակատագիրը, ինչ որ իր օրերի դաշնակցական մտավորականության մեծ մասին (տե՛ս* ***«Վէմ»****, № 2, նոյեմբեր-դեկտեմբեր, 1933, էջ 106-107):*

* * *

Անցնելով ընդհատակ, հեղափոխական կուսակցությունները, սակայն, չէին դադարեցրել իրենց կազմակերպչական և քարոզչական աշխատանքները: «Անսովոր աչքերու համար յեղափոխութիւնը վերջացած էր արդէն: Բայց ներքնայարկերու մէջ կը պատրաստուէին յեղափոխական նոր շարժումներ,- իր հուշերում նշել է Ալ. Խատիսյանը:- Հալածուած իշխանութենէ՝ անոնք առաջին հերթին ջանացին լեցնել ձերբակալուած եւ աքսորուած անդամներու տեղը: Կուսակցութիւններու առաջին քայլն եղաւ կարգի բերել ներքին մեքենան, կապ հաստատել կեդրոնի եւ ծայրագաւառներու միջեւ, այսինքն՝ լծուիլ զուտ ներքին աշխատանքներու»[1]:

Վերահաստատման համար՝ ընդհատակում գտնվող հեղափոխական ուժերն ընտրել էին երկու ճանապարհ. 1) Արհեստակցական միությունների ստեղծում, 2) Ժողովրդական համալսարանների և մեծահասակների համար բացված դպրոցների քողի տակ դասախոսությունների կազմակերպում:

ՄԻՀՐԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Դաշնակցության շարքերում առաջացած մյուս հոսանքը՝ միհրանական շարժումը, շատ ավելի վտանգավոր էր կուսակցության համար, քան անջատական շարժումը: Միհրանականությունը Դաշնակցության դեմ պայքար էր սկսել աջից: Եթե անջատականների կազմում հիմնականում գաղափարական մարդիկ էին, ապա միհրանական շարքերում, քիչ բացառություններով, զենքի մարդիկ: Այս շարժումը նաև բազմամարդ էր՝ անջատական շարժման համեմատ:

Բաբերդցի հերոս խմբապետ Միհրան Քեչիչյանի նախաձեռնած շարժումը, ինչպես ցույց է տրված աշխատության նախորդ գլուխներում, ձախողվել էր, չնայած սկզբի օրերին իր հետևում

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 9 (117), հուլիս, 1932, էջ 96:*

ուներ հազարավոր համակիրներ: Շարժման հաշվեհարդարը, փաստորեն, կատարվել էր նախքան ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի ընդունած՝ միհրանականությանը խարազանելու և դատապարտելու որոշումը:

Դեռ ժողովից շուրջ մեկ տարի առաջ կուսակցության շարքերում տրամադրություն էր առաջացել ահաբեկչության միջոցով ասպարեզից վերացնել Միհրանին ու նրա առավել եռանդուն զինակիցներին և շարժումը խեղդել իր զարգացման առաջին փուլում:

Կուսակցության ղեկավարության մեջ այդ տրամադրությունների արտահայտիչներն էին Եղիշե Թոփչյանը, Հարություն Շահրիկյանը, բժ. Հակոբ Զավրյանը, Արամ Մանուկյանը և ուրիշներ: Բայց ղեկավար շրջաններում գերիշխողը, այնուամենայնիվ, այն տեսակետն էր, որ պետք է հնարավորինս խուսափել արյուն թափելուց, ձգտել կուսակցական շարքերի առջև երևան հանել Միհրանի և նրա համախոհների նպատակների վնասակարությունը ու այդ միջոցով նրանց ոտքի տակից խլել հողը և քայքայել շարքերը: Այս տեսակետի պաշտպանները, ոչ առանց հիմքի, գտնում էին, որ Միհրանի և նրա ընկերների դեմ զենք գործածելու դեպքում նրանք կհերոսանան բանից անտեղյակ զանգվածի առջև: Իրոք, եթե հնարավոր լիներ թուրքահայ հայտնի և առավել աչքի ընկնող դեմքերին դուրս բերել այդ շարժման դեմ, ապա, միգուցե, շարժումը կարելի կլիներ խեղդել սաղմի մեջ: Այդ բանը, սակայն, տեղի չունեցավ: Ճիշտ է, Միհրանի հետևից գնացող մարտիկների մի մասը, 1906 թ. կեսերից սկսած, հեռացավ խմբապետից և վերադարձավ Դաշնակցության շարքերը, բայց զգալի թվով զինվորներ՝ շուրջ 3 հազար մարդ, նույնիսկ մինչև ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովը շարունակում էր հավատարմորեն հետևել իրենց ղեկավարին:

Այս պայմաններում՝ ընդհանուր ժողովը, բացի միհրանականության էությունը բնորոշող բացահայտ ընդունած և հրապարակած որոշումից, ընդունել էր նաև լրացուցիչ, բայց չհրապարակած որոշում՝ Միհրանին կուսակցական ահաբեկչության ենթարկել՝ խնդիրը հանձնելով Դաշնակցության Կովկասյան ահաբեկիչ մարմնին:

1907 թ. մայիսի վերջերից սկսած, ընդամենը չարաթների ընթացքում, միհրանական շարժումը գնաց դեպի քայքայում:

Ըստ Դաշնակցության պաշտոնական տեսակետի, շարժման արագ ձախողմանը մեծապես նպաստել էր նաև այն պարագան, որ Միհրանը, իր մոլեգնության մեջ, իբր, դարձել էր Ռուսաստանի գաղտնի ոստիկանության գործակալ, որպեսզի կուսակցության վերին մարմինների դեմ մղվող պայքարում ստանա իշխանությունների գործուն աջակցությունը: Դաշնակցության պաշտոնական ամբաստանության համաձայն՝ հենց այդ դավաճանական գործակցության հետևանքով է, որ Միհրանից արագորեն երես դարձրին 2000-ից ավելի համախոհներ, որոնք համոզված էին, թե նա անկեղծորեն էր ստանձնել թուրքահայերի դատի պաշտպանությունը:

Միհրանական շարժումը հոգեվարք էր ապրում: Մնացել էր Միհրանը իր մի քանի հարյուր կողմնակիցների հետ՝ դաշնակցական ահաբեկիչներից հետապնդված ու մահվան մշտական սպառնալիքի տակ:

Եկավ մի պահ, երբ Դաշնակցության հին հայդուկապետի համար Թիֆլիսը նույնպես դարձավ շատ վտանգավոր: Նա արդեն տեղեկացել էր, որ քաղաքում գտնվող Նիկոլ Դումանը Բաքվից, Երևանից, Կարսից, Նախիջևանից, Ախալցխայից, Ալեքսանդրապոլից և ուրիշ քաղաքներից կանչել է Դաշնակցության ղեկավարությանը նվիրված մի քանի մարտիկների՝ իրականացնելու համար իր և զինակիցներից ոմանց ահաբեկումը: Դումանի խորհրդով՝ Թիֆլիս կանչվեց նաև թուրքահայ խմբապետ կոփեցի Մուշեղը, որին և հանձնարարվեց գործողության իրականացման պատասխանատվությունը: Հեռատես Դումանը չէր ուզում, որ Միհրանը պատուհասվի կովկասահայ որևէ մարտիկի ձեռքով, քանի որ մթնոլորտը շատ էր թունավորված, և դա կարող էր կրքերը է՛լ ավելի գրգռել ու թուրքահայ և կովկասահայ մարտիկների ընդհարումներ առաջ բերել:

1907 թ. մայիսի կեսերին դաշնակցական ահաբեկիչները Թիֆլիսում սպանեցին Միհրանի մի քանի զինակիցների: Այդտեղ մահափորձ կատարվեց նաև Միհրանի վրա, որը սակայն, մնաց կենդանի, և, չուտով, իրեն գորավիգ մի խումբ ընկերների հետ,

Թողնելով Թիֆլիսը, անցավ Հյուսիսային Կովկասի հանքային ջրերի շրջանի Պյատիգորսկ քաղաքը, հույս ունենալով, որ այնտեղ կարող է ավելի ապահով լինել: Բայց ահաբեկման վճիռը մնում էր ի զորու: Ուր էլ որ նա գնար, վերջիվերջո, պետք է խփվեր: Անշուշտ, դյուրին գործ չէր նրան ահաբեկելը: Հրի ու կրակների միջով անցած մարտիկ էր Միհրանը: Խիզախ էր, ճարպիկ, վտանգավոր տեղերից դուրս գալու հնարներն իմացող:

Թիֆլիսից Պյատիգորսկ է մեկնում Նիկոլ Դումանի՝ տարբեր տեղերից կանչած մարտիկների մի խումբ՝ գլխավորությամբ Խանասորի արշավանքի մասնակից աստրախանցի Համբարձում Աղաջանյանի, որը վերցրել էր «Կարապետ Ավագյան» կեղծ անունը և ընկերների շրջանում հայտնի էր Կարո անունով: Խմբի մյուս անդամներն էին Սենիկ (Սենեքերիմ) Աղաջանյանը (կարսեցի), Գարեգին Հարությունյանը (նախիջևանցի), Հայկ Բախչինյանը (ախալցխացի), Ասլան Գրիգորյանը (զանգեզուրցի), Մարտիրոս Գևորգյանը, օրիորդ Անահիտ Փարսադանյանը (շուշեցի), Արմենակ Սիլվիյանը (պոլսեցի, որը, սակայն, իր գիտակցական կյանքն անցկացրել էր Կովկասում և Ռուսաստանում):

Խմբի Պյատիգորսկ հասնելուն պես Միհրանը խույս է տալիս դեպի Արմավիր: Կարոն և իր մարդիկ հետևում են նրան: Արմավիրի փողոցներից մեկում 1907 թ. հունիսի 1-ին Միհրանը ենթարկվում է նոր ահաբեկման: Այս երկրորդ մահափորձից էլ նա դուրս է գալիս ողջ, թեև վիրավորվում է ոտքից: Գործողության ժամանակ սպանվում են Միհրանի երկու զինակիցները՝ կոփեցի Խեչոն և ոմն Վարդապետյան: Նույն օրը, հունիսի 1-ին, Թիֆլիսում ահաբեկվում է դաղախեցի Վասիլ անունով միհրանականը*:

Այդ գործողություններից հետո ՀՅԴ Կովկասյան ահաբեկիչ մարմինը տպագրեց և տարածեց մի ազդ, ուր նշված էին կատարվածի պատճառները: «Այս ամէնը յայտնելով ի գիտութիւն,- ասված էր ազդում,- ահաբեկիչ մարմինը կը փութայ յայտարա-

* Մեզ չհաջողվեց պարզել Վարդապետյանի և Վասիլի ինքնությունը և այլ մանրամասներ:

րել, որ խստիւ արգելուած է համակրանքի որեւէ ցոյց ընդունել դատապարտեալներու յուղարկաւորութեան առթիւ. միմիայն ծխատէր քահանան կ՚արտօնուի եկեղեցական արարողութիւն կատարելու»:

Անթացուպով քայլող վիրաւոր Միհրանը 1907 թ. օգոստոսին Արմաւիրից անցնում է Յալթա քաղաքը, ուր ապրում էին իր այրի քոյրը՝ տիկ. Նազարյանը և սրա որդին՝ Գասպարը: Կարոյի խումբը հետևում է Միհրանին և հասնում Յալթա: Իմանալով այդ մասին, Միհրանը ապաստանում է քաղաքից ոչ հեռու Դերբեքեոյ գյուղում՝ Գաբրիել Վարդերեսյան կեղծ անունով: Կարոն և տղաները գնում են այդտեղ, բայց նրանց չի հաջողվում կատարել իրենց խնդիրը, քանզի փորձված հին խմբապետը իր զգուշությամբ ի դերև է հանում խմբի ծրագիրը:

Միաժամանակ, պարագաները դասավորվում են չատ անցանկալի կերպով. Կարոյի և նրա ընկերների կամքից բոլորովին անկախ, օգոստոսի 17-ին սպանվում է Միհրանի քրոջ որդին՝ Գասպար Նազարյանը:

Այդ սպանության մեղադրանքով ձերբակալվում է ահաբեկիչների ողջ խումբը, ուրիշ չորս հայ ևս, մի ռուս երիտասարդ՝ Պյոտր Բոդրովը, երկու ռուս աղջիկ՝ Նինա Շիչլովան և Մարիա Դորուժինսկայան: Ձերբակալությունը կատարվել էր Յալթայի պարետ վրացի Դումբաձեի հրահանգով: Իր վերադասին վերջինս հեռագրել էր. «Կովկասից այստեղ են եկել մի քանի հայ ահաբեկիչներ՝ մեր շրջանում ահաբեկումներ կատարելու համար: Մեզ յաջողուել է բոլորին ձերբակալել: Կատարվում է հետաքննություն»[1]:

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 6 (352), Հունիս, 1955, էջ 2:*

ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԳՈՒՄԸ

Էջմիածնի 1906 թ. օգոստոսին տապալված կենտրոնական ժողովի թողած աննպաստ տպավորությունը մեղմելու և ժողովրդի մոտ Հայ եկեղեցու ընկած վարկը վերականգնելու համար, ինչպես նաև հեղափոխության պարտության պահը հարմար նկատելով, հայ կղերը 1907 թ. ամռանն ու աշնանը բուռն գործունեություն ծավալեցին ռուսահայ եկեղեցական ժողով հրավիրելու համար:

Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսը հիվանդ էր և միաբանության անդամներին ընդառաջ գնալու որևէ ցանկություն հանդես չէր բերում: Դեռ թարմ էր մեկ տարի առաջ տեղի ունեցած Էջմիածնի կենտրոնական («ազգային») ժողովի ցրման դառը հիշողությունը, դեռ չէր մոռացվել հայկական մամուլի փոթորկալից ամբաստանությունների տարափը Էջմիածնի վրա:

Բայց միաբանները չարունակում էին սղոցել ծերունի կաթողիկոսի ականջը: Թեև Խրիմյանը միանգամայն անտարբեր էր բարձրացված հարցի նկատմամբ, բայց նրա կամքից անկախ, միաբանությունն արդեն ձեռնարկել էր ժողովի հրավիրման նախապատրաստությունը: Ավելին, Էջմիածնի մի խումբ կղերականներ նույնիսկ կազմել էին համապատասխան կոնդակ, որն ստորագրելու համար պետք է ներկայացվեր Խրիմյանին:

Էջմիածնի կղերի մտադրությունը գաղտնի մնալ չէր կարող, և լուրն անցավ մամուլի էջերը:

Եթե 1906 թ. Էջմիածնի կենտրոնական ժողովի հրավիրմանը դեմ էին արտահայտվել հայ սոցիալ-դեմոկրատները և ազատականները, իսկ Դաշնակցությունը եկեղեցու և պահպանողականների հետ դրա նախաձեռնողներից մեկն էր եղել, ապա այժմ հայ հասարակության քաղաքական բոլոր կազմակերպությունները և հոսանքները, բացառությամբ մամուլի պահպանողական օրգանների և եկեղեցու, վճռականապես հանդես եկան Էջմիածնի ծրագրած ժողովի հրավիրման դեմ:

Հայ կադետական նշանավոր գործիչներից Սամսոն Հարությունյանն այդ առթիվ գրում էր.

«Մեր կրօնաւորները տենչում են ժողովի, եւ որովհետեւ

փառքի գլուխներին յատուկ է մեծ բաների մասին մտածել, ուստի եւ վերածնութեան հովերով տարուած՝ նրանք հայ իրականութեան բոլոր նշանաւոր խնդիրները կարգաւորելու համար միտք ունեն գումարել «Ռուսահայոց եկեղեցական համագումար»:

Այն բոլոր գործերը, որ ուզում են կարգադրել մեր արտօնեալները, ժողովրդի գործերն են, եւ դրանց տէրն ու տնօրէնը ժողովուրդն է: Ժողո՞վ էք ուզում, բայց անցեալ տարուայ կենտրոնական ժողովը ժողով չէ՞ր: Ինչպէ՞ս կարող էք տանել դուք այդ անունը, դա ձեր քունն է կտրել. ինչե՞ր չարիք դուք այդ ժողովը փակել տալու, այն չկայացնելու համար»[1]:

Այնուհետեւ, անդրադառնալով այն հարցին, թե ինչո՛ւ կղերը չահագրգռուած է հրավիրել ռուսահայ եկեղեցական նոր ժողով, Ս. Հարութիւնեանը շարունակում է.

«Դուք տենչում էք առանց ժողովրդի մասնակցութեան նրա գործերը կարգաւորել ձեր դասակարգային չահերի տեսակէտից եւ ձեր տիրապետութիւնն ամրապնդելու դիտումներով: Գեղեցիկ: Աշխատեցէ՛ք, բայց կեանքն իրենը կանի: Դա հոգեվարքի վերջին արտայայտութիւնն է: Մի բան միայն ի նկատի ունեցէ՛ք, որ հոգեւորականութեան, նրա քարոզողների, կրօնի եւ բարոյականութեան, նրա հիմնարկութիւնների վարկի ընկնելը, նրանց նուաստանալն ու արհամարհանքի մատնուելը աշխարհիկ ոգու բարձրանալու նշանն է: Սարսափելի է աշխարհիկ ոգին, նա ձեր տիրապետութեան թէզերը խզել է արդէն. այդ ոգին ժողովրդի զարթնող գիտակցութեան տարերային հոսանքն է, որ քանդում է ու կը քանդի ձեր փայփայած բոլոր անուրջները»[2]:

Հայկական մամուլի խստագոյն քննադատությունը չկանգնեցրեց Էջմիածնի վանքի միաբաններին, որոնք շարունակում էին նախապատրաստել ռուսահայոց եկեղեցական ժողովի հրավիրումը:

Խրիմյան կաթողիկոսի առողջական վատթար վիճակն անորոշ ժամանակով հետաձգեց ծրագրված գործը:

---

[1] ***«Կովկասի առաւօտ»*** *(Թիֆլիս), № 14, 5 սեպտեմբերի 1907 թ.:*

[2] *Նույն տեղում:*

* * *

Մաղաքիա արք. Օրմանյանը հետևյալ բնորոշումն է տվել Մկրտիչ Խրիմյանի անձին. «Բարձրահասակ անձն, վեհ դէմքով եւ առողջ կազմով անձն մըն էր Խրիմեան. բնութեամբ զուարթ, պարագայից յարմարող, ո՛չ ձախորդութեամբ ընկճուող եւ ո՛չ յաջողութեամբ ճոխացող, արտաքնայարդար ձեւերէ հեռու, փառքի երեւոյթները անարգող, միշտ ժպտուն եւ կատակախօս, հմտութեամբ ազգային շրջանակի մէջ հարուստ, տոսպական աւիւնով երգիչ մը, որ մինչեւ վերջի ատեններ խօսող մը եւ գրող մը մնաց իմաստալից գիւտերով եւ գրաւիչ ոճով»[1]:

1907 թ. աշնան սկզբներին Խրիմյանի առողջական վիճակը կտրուկ վատթարացավ: Նա այլևս դուրս չէր գալիս վեհարանից, խուսափում էր հյուրեր ընդունելուց: Բայց Թուրքահայոց տառապանքների մասին տագնապաբեր լուրերը մինչև կյանքի վերջալույսը շարունակում էին հուզել վշտակիր ծերունուն:

Կաթողիկոսի առողջական վիճակի վատթարացումը համընկել էր Հաագայում (Լա-Հեյ) խաղաղության միջազգային նոր համաժողով հրավիրելու ռուսական կառավարության առաջարկին: Խրիմյանն շտապ կազմել և Հաագա էր ուղարկել մի պատվիրակություն՝ Թուրքահայոց հարցն այնտեղ բարձրացնելու համար:

Մտահոգ իր ազգի անորոշ ճակատագրով, Խրիմյանը կյանքի վերջի մեկ ու կես ամսում նամակ-դիմումներ հղեց Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ին, Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ VII-ին և Պարսկաստանի Մահմեդ Ալի շահին: Առաջին երկու նամակ-դիմումները նա պատվիրեց պատրաստել սեպտեմբերի 9-ին և ստորագրեց սեպտեմբերի 16-ին, որոնք նույն օրն էլ առաքվեցին: Դիմումներում նկարագրված էին Թուրքահայ ժողովրդի շարունակվող անլուր սարսափները, որոնց վերջին ժամանակներում ավելացել էր ավերիչ սովը:

Երկու դիմումները մոտավորապես նույն բովանդակությունն

---

[1] ***Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001, էջ 5755:*

ունեին՝ տարբերվելով միայն մի քանի մանրամասների մեջ:

Նիկոլայ կայսրին գրած նամակում Ամենայն հայոց կաթողիկոսը հայտնում էր իր ազգի երախտագիտական զգացմունքները ռուսական կառավարությանը, որ «Թուրքական հայերի բախտի նկատմամբ միշտ ցուցաբերել է հոգատարություն»[1]: Ապա, որպես դրա հակադրություն, նա վկայակոչում էր Թուրքահայության նկատմամբ օսմանյան կառավարության վարած զանգվածային ջարդերի ու կոտորածների տմարդի քաղաքականությունը[2]: Կաթողիկոսը դժգոհում էր Թուրք բարբարոսների գործողությունների հանդեպ եվրոպական պետությունների անտարբեր վերաբերմունքից, որոնք հայերին տված իրենց սին խոստումների քաղաքականությամբ, ըստ էության, Թուրք ազգայնամոլներին խրախուսում էին իրականացնելու նորանոր ոճրագործություններ[3]:

«Որպես գիշատիչներով լեցուն անապատ քշված ոչխարի հյուծված հոտ,- գրում էր Խրիմյանը,- Թուրքիայի հայկական մարզերի քրիստոնյա բնակչությունը իրեն պատեպատ է տալիս, բայց ողբերգական վիճակից դուրս գալու մի ելք չի գտնում»[4]:

Այնուհետև կաթողիկոսն անդրադառնում էր Հայկական հարցի անցյալի համառոտ պատմությանը, նշում այն անհուն դժբախտությունները, որոնք բաժին են ընկել Թուրքահայությանը, միաժամանակ ռուս տիրակալից խնդրում էր աջակից լինել հալածական ժողովրդին: «Ներկայումս,- գրում էր նա,- երբ չնորհիվ Ձերդ մեծության բարձր նախաձեռնության, արդեն երկրորդ անգամ հրավիրվում է միջազգային խաղաղության համագումար Հաագայում, դեպի ո՞ւմ պետք է ուղղեմ ես իմ հուսալից հայացքը, եթե ոչ դեպի խաղաղության գաղափարը պետությունների միջև իրագործելու Մեծ Նախաձեռնողը, դեպի արևելյան քրիստոնյաներին հովանավորող մեծ պետությունը»[5]:

---

[1] *Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» (Երևան), № 1-2, 1993, էջ 166-167:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 167:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

Դրանից մի քանի տարի առաջ հանդես գալով Պետերբուրգի գաղութային քաղաքականության դեմ, որը հայերի նկատմամբ հատկապես ցայտուն արտահայտվել էր 1903 թվականին՝ Կովկասի փոխարքա իշխան Գրիգորի Գոլիցինի ջանքերով իրականացված Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման օրերին, Խրիմյանը, սակայն, կյանքի վերջին շրջանում եկել էր այն հաստատ համոզման, որ հայ ժողովրդի ազգային գոյատևման երաշխավորը կարող է լինել միայն ու միայն Մեծ Ռուսաստանը:

Կաթողիկոսը Պետերբուրգից ստացավ հետևյալ պատասխանը՝ ստորագրված արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Պետրովիչ Իզվոլսկու կողմից.

«Ս.-Պետերբուրգ, 5 հոկտեմբերի

Ձերդ Սրբութիւն.

Ի պատասխան սոյն թուականի սեպտեմբերի 16-ի Ձեր գրութեան, իմ պարտքս եմ համարում Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ Կայսերական կառավարութիւնը վերաբերում է անչեղ ուշադրութեամբ դէպի հայ ազգաբնակչութեան դրութիւնն Օսմանեան կայսրութեան սահմաններում:

Հենց այդ սկզբունքներով ղեկավարուելով, ռուսաց կառավարութիւնը ձեռնարկում է իրենից կախուած բոլոր միջոցները՝ հայերի օրինական իրաւունքների եւ շահերի պաշտպանութեան համար Թուրքիայում եւ այդ ուղղութեամբ նա միշտ հրահանգներ է տուել թէ՛ կայսերական դեսպանատանը Կ. Պոլսում եւ թէ՛ տեղերում իր հիւպատոսներին:

Յանձնելով ինձ Ձեր աղօթքներին, խնդրում եմ ընդունել հաւաստիքս ամենախորին յարգանաց եւ կատարեալ հաւատարմութեան, որով պատիւ ունեմ լինել

Ձերդ սրբութեան ամենախոնարհ ծառայ:

(Ստորագրութիւն)»[1]*:*

---

[1] ***«Նոր ալիք»*** *(Թիֆլիս), № 5, 6 նոյեմբերի 1907 թ.:*

Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսը վախճանումից քիչ առաջ վերջին ջանքերն էր գործադրում Թուրքահայաստանի տառապյալ հայերի նյութական վիճակն ինչ-որ չափով թեթևացնելու համար: Այդ նպատակով 1907 թ. հոկտեմբերի կեսերին նա դիմում է Կովկասի փոխարքա, գեներալ-ադյուտանտ կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովին և խնդրում հանգանակիչ մասնաժողովին արտոնել ռուսահայերի շրջանում կազմակերպելու հանգանակություն՝ աղետյալ թուրքահայերի համար: Կաթողիկոսն ավելորդ չէր համարում փոխարքային տեղեկացնելու, որ Կովկասի նախկին փոխարքա Գոլիցինը ոչ միայն արգելել էր ռուսահայերի շրջանում սկսված հանգանակության շարունակումը, այլև բռնագրավել էր արդեն հավաքված գումարները:

*Վորոնցով-Դաշկովը սիրով ընդառաջ է գնում Խրիմյանի խնդրանքին, և 1907 թ. հոկտեմբերի 17 թվակիր (№ 22311) գրությամբ նրան հայտնում է, որ ներքին ու արտաքին գործերի նախարարների հավանությամբ արտոնում է հանգանակություն կատարել և հաստատում է վեհափառ հայրապետի առաջարկած հանգանակիչ մասնաժողովի կազմը**:

Փոխարքայի համաձայնությունից հետո հանգանակիչ հանձնաժողովն իր գործունեությունն սկսեց ռուսահայության բոլոր խավերին ուղղած կոչով: «Զզլանալ նպաստ բերել Թուրքական Հայաստանի բազմակերպ աղէտներից տառապող եւ կարօտութեան վերջին ծայր հասած հայ ժողովրդին... Ստացուած նուիրատուութիւնների եւ Թուրքական Հայաստան ուղարկուած դրամական նպաստների մասին պարբերաբար հաշիւ կը

---

* *Հանգանակիչ մասնաժողովն ընտրվել և կաթողիկոսի կոնդակով հաստատվել էր 1907 թ. մայիսին: Նրա անդամներն էին Համբարձում Առաքելյանը, Ավետիք Արասխանյանը, իշխանուհի Սոֆիա Արղությանը, Գաբրիել Կաֆյանը, Տիգրան Զավենը (Զուգասդյան), տիկ. Հայկանուշ Մարտիրոսյանը, Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, Սամսոն Հարությունյանը, Առաքել Սարուխանյանը, բժ. Կարապետ Ստեփանյանը, Քրիստափոր Վերմիշյանը և Ալեքսանդր Քալանթարը: Մասնաժողովն ընտրել էր իր դիվանը հետևյալ կազմով. Ալ. Մելիք-Ազարյան (նախագահ), Ս. Հարությունյան (փոխնախագահ), Ա. Սարուխանյան (գանձապահ), Հ. Առաքելյան (քարտուղար):*

ներկայացուի հասարակութեան՝ լրագրութեան միջոցով»[1],- ասված էր կոչում:

Պարսից Մահմեդ Ալի շահին գրած նամակին կանդրադառնանք իր տեղում, բայց նշենք, որ Խրիմյանն իր վերջին կոնդակը, իր վերջին խոսքն ուղղեց հայկական հեղափոխական կազմակերպություններին: Այնտեղ մասնավորապես ասված էր.

«Գերեզմանին դուռը հասած ծերունի Հայրիկն է, որ իր ալեզարդ գլուխն ու արտասուաթոր մարած աչքերը կը դարձնէ – վերջին անգամ – դէպի հեռաւոր հորիզոնները, եւ հաշտութեան, համերաշխութեան ու եղբայրութեան աղեխարշ յորդոր մը կ'ուղղէ մեր կուսակցութիւններուն»[2]:

1907 թ. հոկտեմբերի 29-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 9-ին), առավոտյան ժամը 9-ին, 87 տարեկանում վախճանվեց Ամենայն հայոց հայրապետ Մկրտիչ Ա Խրիմյանը՝ կաթողիկոսական պաշտոնը 14 տարի վարելուց հետո: Նա որևէ հիվանդություն չուներ, ուղղակի ծերության հետ կապված թուլության հետևանքով հանգավ անսպասելիորեն:*

Հայրապետի վախճանման հաջորդ օրը, համաձայն «Պոլոժենիե»-ի ("Положение") XI հատորի Ա մասի 1148-րդ հոդվածի, Մայր աթոռի սինոդի ավագագույն անդամ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը կարգվեց կաթողիկոսական տեղապահ:

Դեռ 1885-ին, իր ծննդավայրից հեռանալուց առաջ, Վանի եկեղեցիներում տված հրաժեշտի իր քարոզներով Մկրտիչ Խրիմյանը հետևյալ կտակն էր թողել վասպուրականցիներին.

«Հայոց ժողովո՛ւրդ, թէ ձեր Հայրիկը կը սիրէք, իր միակ իղձը կատարեցէ՛ք: Որ տեղն որ մեռնիմ, իմ մարմինս, իմ ոսկորներս Վարագ փոխադրեցէ՛ք եւ հոն թաղեցէ՛ք, ուր թաղուած է արդէն իմ սիրտս: Գլուխս Վարագայ լերան ստորոտը կրնայ հանգիստ գտնել: Այս թող լինի իմ վերջին կտակը ձեզի: Ժողո-

---

[1] **Համբարձում Երամեան**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 37:

[2] **«Ազգ»** (Պոսթոն), № 40, 18 հունվարի 1908 թ.:

* Մկրտիչ Խրիմյանը Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվել 1892 թ. մայիսին, կաթողիկոս օծվել ավելի քան 15 ամիս ետք՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին:

վուրդ հայո՛ց, չի մոռնաք ձեր Հայրիկը բերել Վարագ ու Թաղել Սենեքերիմ Թագաւորի կշտին»:

Սակայն Խրիմյանի կտակը չկատարվեց: Կյանքի վերջին մեկ ու կես տասնամյակը նա անցկացրել էր կովկասահայության մեջ և հարազատացել նրան: Բացի այդ, սովորության համաձայն, Ամենայն հայոց վախճանյալ կաթողիկոսները Թաղվում էին ս. Էջմիածնում:

Նոյեմբերի 6-ին (19-ին) Խրիմյանի դին հանձնվեց հողին: Հուղարկավորությանը ներկա էին Էջմիածնի միաբանության անդամները, փոխարքայի ներկայացուցիչներ Հակկելը և Լազարևը, վրաց ազնվականության պատվիրակները, Երևանի գեներալ-նահանգապետ կոմս Տիզենհաուզենը, օտար պետությունների ներկայացուցիչներ, Էջմիածին ժամանած այլ բարձրաստիճան պետական, հասարակական, զինվորական գործիչներ, նշանավոր հայ մտավորականներ[1]: Դրսից Էջմիածին ժամանած պաշտոնական ներկայացուցիչների թիվը հասնում էր չուրջ 170-ի, իսկ հյուրերի հետ միասին՝ 300-ի[2]: Ստացվել էին անթիվ-անհամար ցավակցական հեռագրեր[3]:

Թաղման արարողության ժամանակ դամբանականներ ասացին հուղարկավորության արարողության նախագահող Մեսրոպ արք. Սմբատյանը և տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը: Հաջորդեցին պաշտոնական և ոչ պաշտոնական դեմքերի բազմաթիվ ելույթներ:

Մկրտիչ Ա Խրիմյանը թաղվեց Մայր տաճարի մուտքի դռան աջ կողմում, Ներսես Ե Աշտարակեցու գերեզմանի կողքին:

Կաթողիկոսի թաղման օրը՝ նոյեմբերի 6-ին Խրիմյանի հոգեհանգիստը կատարվեց Պոլսի Գում-Գափուի ս. Աստվածածին մայր եկեղեցում: Պատարագիչն էր պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանը[4]: Ներկա էին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի,

---

[1] Տե՛ս **«Արարատ»** (ս. Էջմիածին), № 10-11, հոկտեմբեր-նոյեմբեր, 1907, յաւելուած, էջ ԺԴ:

[2] **Երուանդ Տէր-Մկրտիչեան,** Գանձեր Վասպուրականի, հատ. Ա, Պոսթոն, 1966, էջ 205:

[3] Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, էջ 5755:

[4] Տե՛ս նույն տեղում:

Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, Հոլանդիայի, Բելգիայի Կ. Պոլսում հավատարմագրված դեսպանների, բուլ-գարների էկզարքի, հունաց և ասորաց պատրիարքների, պա-պական նվիրակի, հայ կաթոլիկների և ավետարանականների ներկայացուցիչները, հայ և օտարազգի խուռներամ բազմու-թյուն:

Նոյեմբերի 12-ին, Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու բակում, մոտ 10.000-ի հասնող բազմության ներկայությամբ վիրահայոց թեմական առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը մատուցեց պատարագ և կատարեց հոգեհանգստի կարգ[1]: Հոգեհանգստին ներկա էին փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովն ու նրա տիկինը՝ կոմսուհի Ելիզավետա Վորոնցովա-Դաշկովան, փոխար-քայի երկու օգնականները՝ Միցկևիչը և Շատիլովը, դիվանատան կառավարիչ Պետերսոնը, փոխարքայի խորհրդի անդամները, պարսից հյուպատոսը, Թիֆլիսի նահանգապետը, բարձրաստի-ճան այլ պաշտոնյաներ, այդ թվում՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, ազնվականության պարագլուխը, հայկական, ռուսական, վրացական մամուլի ներկայացուցիչներ և այլոք[2]:

Հոգեհանգիստ կատարվեց նաև Թիֆլիսի մահմեդականների մզկիթում, որին ներկա եղան պարսից հյուպատոսը, բազմաթիվ թուրք, հայ և օտարազգի կարևոր անձինք: Ճառեր արտասանե-ցին ղազի Ախունդը, Մուհամմեդզադեն և ուրիշ կրթյալ մուսուլ-մաններ՝ դրվատելով Ամենայն հայոց կաթողիկոսի բարեմաս-նությունները:

Նոյեմբերի 14-ին Վանում տեղի ունեցած սգո պատարագը մատուցել էր Վանի առաջնորդ Ներսես եպս. Խապայանը: Սգա-հանդես կատարեցին նաև քաղաքի հայ ավետարանականները:

Կաթողիկոսի թաղումից հետո Մայր աթոռի միաբանու-թյունը և դրսից եկած պաշտոնական հյուրերը հավաքվում են վեհարան՝ ժողովի, ուր առաջարկվում է Խրիմյան Հայրիկի անունով կազմել մի հիմնադրամ՝ թանգարան կամ դպրոց հիմ-նելու համար: Սկսվում է հանգանակություն, այդ թվում՝ ար-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 146, 1 նոյեմբերի 1907 թ.:

[2] Նույն տեղում, № 158, 15 նոյեմբերի 1907 թ.:

տասահմանյան հայ գաղութներում: Այսպես, նոյեմբերի 22-ին հանգանակություն է կազմակերպվում Նյու Յորքի հայ գաղութում՝ ամերիկահայոց առաջնորդ Հովսեփ արք. Սարաջյանի գլխավորությամբ: Հանգանակված գումարը՝ «Հայրիկեան հիմնադրամ» անվան տակ, որոշվում է տրամադրել Վարագա ժառանգավորաց վարժարանին: Ձեռնարկին արձագանքում են ամերիկահայ ուրիշ գաղութներ և հավաքված գումարով նախատեսվում է Վասպուրականում հիմնել երկրագործական դպրոց*:

Խրիմյանը կյանքից հեռացավ՝ թողնելով հարուստ կենսագրություն՝ լուսավորիչ ու մանկավարժ, փայլուն հռետոր ու փիլիսոփա, արձակագիր ու բանաստեղծ, հասարակական ու կրոնական խոշոր գործիչ, մեծ հայրենասեր ու մեծ քաղաքացի:

Մկրտիչ Խրիմյանը հեղինակել է մեծ ու փոքր գրական գործեր, որոնց զգալի մասն սկզբնապես լույս է տեսել «Արծուի Վասպուրականի» և «Արծուիկ Տարօնոյ» թերթերում: Դրանցից «Հրաւիրակ Արարատեան» և «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» ստեղծագործությունները տպագրվել են գրաբար, 1850 և 1851 թվականներին: Սրանց հաջորդել են ժողովրդին հասկանալի

---

* Ամերիկահայ գաղութներում (բացի Նյու Յորքի գաղութից) հանգանակված 6000 դոլարը Չիկագոյի դրամատան մեջ մնալով՝ տոկոսների հավելումով 1933 թ. հասնում է 10.000 դոլարի: Նկատելով, որ Երևանի նորաբաց գյուղատնտեսական ինստիտուտը զուրկ է լաբորատորիաներից և գործնական աշխատանքների այլ հարմարություններից, հանգանակված գումարի պահպանության ու ծախսման կենտրոնական հանձնախումբը դիմում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ գյուղատնտեսական ինստիտուտի համար Երևանում կառուցելու մի հարմարավետ շենք: Հանձնախմբին ուղարկած պատասխան նամակով կառավարությունը տեղյակ է պահում, որ որոշված է գյուղատնտեսական ինստիտուտի համար հանրապետության մայրաքաղաքում կառուցել մի խոշոր շենք՝ 30.000 դոլար արժողությամբ, և որ ինքը՝ կառավարությունը հանձն է առնում հոգալ ծախքի կեսը, պայմանով, որ «Հայրիկեան հիմնադրամը», իր հերթին, տրամադրի մնացած 15.000 դոլարը: Կենտրոնական հանձնախումբը տալիս է իր համաձայնությունը ու Երևան է փոխանցում 5.000 դոլար, մնացած 10.000-ը հաջորդաբար ուղարկելու խոստումով (տե՛ս **Երուանդ Տէր-Մկրտիչեան,** Գանձեր Վասպուրականի, հատ. Ա, էջ 207):

լեզվով գրած 10 երկերը՝ «Մարգարիտ արքայութեան երկնից» (1866), «Յիսուսի վերջին չարաթը եւ խաչի ճառ» (1876), «Ժամանակ եւ խորհուրդ իւր» (1876), «Վան-Գոյժ» (1877), «Հայ-Գոյժ» (1877), «Դրախտի ընտանիք» (1878), «Պապիկ եւ Թոռնիկ» (1894), «Թագաւորաց ժողով» (1900), «Վերջալոյսի ձայներ» (1901), «Ողբացող Խորենացին» (1902): «Բարենորոգմանց ծրագիրներ» աշխատությունը լույս է տեսել հեղինակի վախճանումից հետո՝ 1909-ին: 1929 թ. լույս տեսան Խրիմյանի ամբողջական երկերը: Հեղինակի երկասիրությունները հայկական տաղաչափությամբ քերթվածներ են, կրոնաշունչ գրվածքներ, ընտանեկան խրատներ, ամուսիններին և մայրերին ուղղված հորդորներ, կրթական դասեր և այլն:

Իհարկե, վերը նշված գրվածքները չեն կարող հավակնել դասվելու գեղարվեստական բարձր արժանիքներ ունեցող ստեղծագործությունների շարքին: Օրմանյանի խոսքերով՝ Խրիմյանը «մեծ գործեր արտադրած չէ, ... ետեւէն մեծ հետք մը թողած չէ»[1]: Դա, մեծ մասամբ բացատրվում էր այն բանով, որ նա դպրոց չէր հաճախել, չուներ նույնիսկ տարրական կրթություն, իր ողջ գիտելիքները ձեռք էր բերել ինքնակրթությամբ: Բայց Խրիմյանի մտքի արգասիքն, այնուամենայնիվ, ժամանակին մեծ դեր է կատարել: Նրա գրվածքներն իրենց պարզությամբ ու մատչելիությամբ ժողովրդական լայն զանգվածների մեջ քարոզել ու սերմանել են հայրենասիրություն, ազգասիրություն, հայրենապաշտություն, սեր ու ազնվություն, ապագայի նկատմամբ հավատ ու պայքարի կորով, հատկանիշներ, որոնք դարձել էին պատվիրաններ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դարաշրջանի անձնվեր մարտիկների համար:

«Ամէն անգամ, երբ խօսք է լինում Խրիմեանի մասին, երբ թերթում եմ նրա այս կամ այն գրուածքը եւ կամ ծանօթանում նրա կեանքի այս կամ այն շրջանի հետ,- գրել է Երվանդ Ֆրանգյանը,- միշտ իմ աչքի առաջ պատկերանում է հայ իմաստասէրի կերպարանքը – նման յոյն իմաստասէրի, մի Սոկրատի,

---

[1] ***Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, էջ 5755:*

մի Պլատոնի: Եւ թւում է, թէ հայ աշխարհում, մեր կեանքի եւ գրականութեան մէջ, չկայ մէկ ուրիշը, որին այդ որոշիչը – իմաստասէր – այնքան յատկանշական լինէր, որքան Խրիմեանին»[1]:

* * *

Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի վախճանումից հետո հայկական մամուլը ամիսներ շարունակ լուսաբանում էր հանգուցյալ վեհափառ հայրապետի անցած ուղին, հայ հասարակական միտքը վերլուծում ու գնահատում էր նրա խաղացած դերը հայոց պատմության մեջ: Գնահատականները հակասական էին:

«Դրօշակը» կաթողիկոսի մահախոսականում գրում էր. «Խրիմեանի մահով բարոյական մեծ փոթորկալից ոյժ մըն է որ կ'անհետանայ հայ ազգէն. անոր մէջ տիրող գիծը բողոքողի ըմբոստ ոգին է, որ սոսկումը ունի ստրկութեան եւ իմացականութիւնը ազատութեան: Իր կրօնական ու գրական գործունէութիւնը փառաբանումն է ժողովուրդին, անոր օգուտն ու բարօրութիւնը...»[2]: Ապա՝ «Հայրիկի կեանքը անմահօրէն կապուած է մեր ազգին նոր պատմութեան հետ, որուն տուաւ կեանք եւ հոգի եւ ստեղծեց հոսանքը որ կը դիմէր դէպի ապագան: Իր լեցուն կենսագրութիւնը գրել, ըսել է հայ ժողովրդի ժամանակակից պատմութիւնը գրել. ոչ մէկ դէմք այդքան չքեղ եւ այդքան լայն ժողովրդական համակրանքի չէ արժանացած մեր մէջ. ի զուր չէր որ հայ ժողովուրդը երախտագիտօրէն անոր տուաւ «Հայրիկ» համեստ անունը, որ ցեղի մը զգացումը կը խորհրդանշէ»[3]:

Անդրադառնալով Խրիմյան Հայրիկ երևույթին՝ Ավ. Իսահակյանը գրել է. «... Հայ ժողովուրդն է՛լ չի մոռանայ նրան: Քա-

---

[1] **Երուանդ Ֆրանգեան**, Հայ միտքը. Երկրորդ գիրք, Խրիմեան Հայրիկ, Գահիրէ, 1925, էջ 3:

[2] **«Դրօշակ»,** № 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 162:

[3] Նույն տեղում, էջ 164:

նի հնանայ, այնքան աւելի կը պայծառանայ նրա յիշատակը: Նա դարերի միջից պիտի նայէ հայ ժողովուրդին եւ պիտի խօսէ նրա հետ հարազատ լեզուով, նրա նուիրական իղձերից եւ անմահ նպատակներից: Ժողովուրդը նրան չի մոռանայ երբեք, որովհետեւ նրա սրտից էր եկել եւ դէպի նրա սիրտն էր գնում»[1]:

Հնչակյանները ևս Խրիմյանին ընութագրում էին որպես հայ ժողովրդի պատմության մեջ բացառիկ դեր խաղացած եղակի անհատականություններից մեկը, որն իր հմայիչ կերպարի մեջ մարմնավորել է մի ողջ ժողովրդի ազգային իղձերն ու ապագայի հույսերը:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ հեղափոխականներն այդպես անվերապահ ամենաբարձր գնահատական էին տալիս հոգևոր դասի կարկառուն ներկայացուցիչներից մեկին: Բայց տարօրինակ բան չկա, եթե նկատի առնենք, որ ինքը՝ Խրիմյանը կանգնած է եղել հայկական հեղափոխության ակունքներում: Կ. Պոլսի երբեմնի երկու պատրիարքներ և Էջմիածնի երկու կաթողիկոսներ Խրիմյանն ու Իզմիրլյանը, որին Պոլսում առաջինը նախորդել էր երկրորդին, իսկ Էջմիածնում երկրորդը 1908 թ. հաջորդեց առաջինին, բացառություն էին միչտ հնազանդություն քարոզող և հեղափոխություններն անընդունելի համարող Հայոց եկեղեցու կյանքում: Խրիմյանը համակիր էր Դաշնակցությանը, իսկ Իզմիրլյանը՝ Հնչակյաններին, և նրանք իրենց քաղաքական համակրանքն արտահայտում էին հրապարակայնորեն:

Բայց Մկրտիչ Խրիմյանին տրված դրական, հիացական գնահատականների կողքին հնչում էին նաև հակառակ կարծիքներ:

Կաթողիկոսի թաղմանը գնացած և Թիֆլիս վերադարձած անձինք չափազանց դժգոհ էին այն ամենից, ինչ տեսել էին Էջմիածնում:

«Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը գրում էր. «Էջմիածնից վերադարձած պատգամաւորները չատ աննպաստ

---

[1] ***«Խրիմեան Հայրիկ»*** *(Մահուան 50-րդ տարելիցին առթիւ), կազմեց Անդրանիկ Լ. Փոլատեան, Նիւ Եորք, 1957, էջ 43:*

տպաւորութիւնների տակ են հեռացել այնտեղից: Էջմիածինը նրանց առաջ ներկայացել է իբրեւ մի աւերակ, իբրեւ սնանկացած մի հիմնարկութիւն: Ճեմարանը՝ անապահով վիճակի մէջ, վանքական սնդուկը՝ դատարկ, վարչական գործերը՝ քայքայուած դրութեան մէջ, ընդհանուր տրամադրութիւնը՝ տարտամ եւ լքեալ – ահա՛ տպաւորութիւնը»[1]:

Խրիմյանին հատկապես քննադատում էին ազատական և անկախ մամուլի օրգանները:

Դեռ կաթողիկոսի հուղարկավորությունից առաջ, նոյեմբերի 2-ին, «Մշակը» նշում էր, որ մինչև Պոլսի Հայոց պատրիարք ընտրվելը (1869), Խրիմյանը ձեռք էր բերել համահայկական հռչակ, որը տարեցտարի աճում էր: Այդ շրջանում նա, անչուշտ, ազգի դրոշակակիրն էր, նրա առաջին ղեկավարը, և նրա վրա էին բևեռված հայ ժողովրդի բոլոր խավերի մեծագույն հույսերը:

Բայց պատրիարքությունն ստանձնելուց սկսվեց այն սխալների շարքը, որ գործեցին թե՛ ինքը և թե՛ նրա ուխտյալ բարեկամները:

Թերթը գրում էր, թե քանի որ Խրիմյանն իր էությամբ կոչված չէր վարչական գործունեության համար, ուստի պատրիարքության տարիները փառք չավելացրին նրա անվանը: Նա ստիպված եղավ թողնել պատրիարքական աթոռը 1873 թ. և նորից մտավ ժողովրդական զանգվածների մեջ, հաղորդակից եղավ բոլոր խավերին, արձագանքիչը եղավ հայ ժողովրդի ցավերի և արտահայտիչը նրա իղձերի, շարունակեց ծավալել բուռն գրական գործունեություն, կրկին փայլեց իբրև քարոզիչ, իբրև գաղափարական ղեկավար[2]:

Իր կոչմանը ծառայելու համար Խրիմյանին պետք չէին բարձր դիրք և պատրիարքական իշխանություն, նշում էր Ալ. Քալանթարը: Նրան անհրաժեշտ էր «ազատ մթնոլորտ՝ նուիրուելու այն գործին, որը նրան սիրելի էր եւ որի համար նրա տաղանդը կարող էր գործել ուժեղ եւ ազատ»[3]:

---

[1] **«Մշակ»,** № 158, 15 նոյեմբերի 1907 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 147, 2 նոյեմբերի 1907 թ.:

[3] Նույն տեղում:

Եվ շատ բնական ու հասկանալի էր, որ երբ 1892 թ. առաջացավ Էջմիածնի կաթողիկոսական գահին արժանավորագույն եկեղեցականի բարձրացնելու հարցը, բոլորի հայացքն ուղղվեց դեպի Խրիմյանը, որին վաղուց ժողովուրդը մկրտել էր «Հայերի Հայրիկ» պատվանունով: Նա ընտրվեց կաթողիկոս և, ինչպես նշել ենք էջատակում, սկսեց Էջմիածնում գործել 1893 թ. սեպտեմբերի 26-ից[1]:*

Ամենքը համոզված էին, գրում է «Մշակը», որ Խրիմյանի կաթողիկոսության օրոք Հայոց եկեղեցու բարենորոգության մի նոր շրջան կբացվի: Բայց հույսերը չիրականացան[2]: Խրիմյանն, անշուշտ, շարունակում էր մնալ փայլուն քարոզիչ, տաղանդավոր գրուցակից, ժողովրդագետ ու բանաստեղծ, բայց եկեղեցու կառավարման տարիներին, ժամանակակիցներից շատերի վկայությամբ, այնպես էլ չյուրացրեց վարչական գործունեության հիմունքները:

Այդ հանգամանքը ճիշտ է նկատել Երվանդ Ֆրանգյանը, գրելով. «Խրիմեանը բարոյականի մի մեծ դէմք էր, թերեւս եզակի հայ աշխարհում, պարզ եւ բիւրեղ, պարզութեան եւ ճշմարտութեան քուրմ: Նա վարչական մարդ չէր եւ ոչ էլ դիւանագէտ: Այս տեսակէտից նա ճիշտ բնորոշեց իրեն Բերլինի վեհաժողովում: Եւ նրա կաթողիկոսութիւնը պիտի համարել մի թիւրիմացութիւն, մի վրիպում նրա կեանքում: Դրա մեջ չէր եւ այդտեղ չպէտք է որոնել նրա մեծութիւնը, նրա հմայքը: Ընդհակառակը, կաթողիկոսանալով՝ նա մի յայտնի չափով նուաստացաւ որպէս բարոյական հեղինակութիւն...»[3]:

---

* *Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Ա Պարթևին հայ ժողովուրդն արժանացրել էր «Լուսավորիչ Հայոց», Մեծն Ներսես Ա Պարթև Հայրապետին՝ «Հայր Հայրենյաց» պատվանվանը, Ներսես Ե Աշտարակեցին հորջորջված էր «Պաշտպան Հայրենյաց», Մկրտիչ Ա Խրիմյանը՝ «Հայոց Հայրիկ»: Այս վերջին պատվական անվան մեջ ամփոփված էին մի կողմից հայերի պատկառանքը, մյուս կողմից՝ նրանց քնքուշ, փաղաքշական զգացմունքները պաշտելի մարդու նկատմամբ:*

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 147, 2 նոյեմբերի 1907 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 144, 30 հոկտեմբերի 1907 թ.:*

[3] ***Երուանդ Ֆրանգեան,*** *Հայ միտքը. Երկրորդ գիրք, Խրիմեան Հայրիկ, էջ 6:*

Իհարկե, չեչտում էր «Մշակը», Էջմիածնի քայքայված վիճակը, ենթակայական (սուբյեկտիվ) գործոնից բացի, բացատրվում էր նաև առարկայական (օբյեկտիվ) պատճառներով: «Խրիմեանի կաթողիկոսութեան օրօք մեծագոյն աղէտներ թափուեցին հայ ազգի գլխին, որոնց ծանրութեան տակ նա ընկճուեց ծայր աստիճան»[1]: Տեսնելով այդ աղետները՝ կաթողիկոսն անկարող եղավ որևէ էական դարման անելու դրանց դիմաց:

Արշակ Զոպանյանն ընդհանուր առմամբ բարձր գնահատելով հայ իրականության մեջ Խրիմյանի խաղացած դերը, միաժամանակ նրա գործունեության կաթողիկոսական շրջանը համարում էր «խիստ պակասաւոր»[2]: «Երբ կը բաղդատենք զինքը Գէորգ կաթողիկոսին հետ (նկատի ուներ Գևորգ Դ Քերեստեջյան Ամենայն հայոց հայրապետին:- Հ. Ս.), տարօրինապէս կը փոքրանայ Խրիմեան,- գրում էր նա:- ... Նոյն իսկ Մակարը (Մակար Ա Թեղուտցի Ամենայն հայոց կաթողիկոս:- Հ. Ս.), թէեւ չհասնի Գէորգի մեծութեանը, մեզի թողած է յիշատակ մը լուրջ ու խելացի կաթողիկոսի, հեռատես, խոհեմ ու կորովի պետ, հոգեւին կապուած Հայ Եկեղեցւոյ շահերուն, հայրական գորովով լեցուն դէպի վանքն ու միաբաններն ու ամբողջ ազգը, ծանրգլուխ ու ազնիւ մարդ: Խրիմեան եղած է հայրապետ մը ինքնամոլ, անկարգապահ եւ քայքայիչ: Արդէն ի ծնէ կարգի ու կանոնի ճկիլ չգիտցող մարդ, «ազգին չփացած զաւակն» ըլլալու հանգամանքը իր այդ թերութիւնը աւելի չեչտած է եւ զինքը մղած՝ իր անհպելի կուռքի գիտակցութեանը մէջ՝ ինքզինքը Միաբանութենէն, Լուսաւորչայ գահէն, իր նախորդներէն, իր ազգէն զերազանց էակ մը նկատելով՝ խելքին փչածն ընելու»[3]:

Զոպանյանը մեկ առ մեկ վերլուծում էր Խրիմյան կաթողիկոսի «գործած աւերները» Էջմիածնի վանքում և ընդհանրապես Հայ եկեղեցում, միաբանությունում, Գևորգյան ճեմարանում, Էջմիածնի կաթողիկոսության օրգան «Արարատ» հանդեսում և այլն: Նա ցավով էր նշում Խրիմյանի՝ նշանավոր մտավորական

---

[1] ***«Մշակ»,*** *№ 144, 30 հոկտեմբերի 1907 թ.:*

[2] ***«Անահիտ»*** *(Փարիզ), № 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 2:*

[3] *Նույն տեղում:*

եկեղեցականների տեսական հայածանքի փաստերը, հատկապես հանճարեղ Կոմիտաս վարդապետին ճնշելը, «Արարատ» հանդեսի խմբագիր, գերմանական համալսարաններում կրթություն ստացած տաղանդաշատ հայագետ-գիտնական Գարեգին վրդ. Հովսեփյանցին հետապնդելն ու աշխատանքից ազատելը և այլն[1]*:*

Էջմիածնի անմխիթար վիճակի մասին բազմաթիվ նկարագրություններ կան արխիվներում: Մատենադարանում պահպանվող մի փաստաթղթի հեղինակները որոշակի անուններով ցույց էին տալիս, թե հայ եկեղեցականները Էջմիածնի միաբանությունում և ռուսահայ թեմերում ինչպիսի ֆինանսական և այլ կարգի զեղծումներ էին անում: Օրինակ էր բերվում, որ Բեսարաբիայի թեմի կալվածքների կառավարիչ Համազասպ վրդ. Համազասպյանը կալվածքների արդյունքներից գողացել է 30.000 ռուբլի, բայց երբ բացահայտվել էր գողությունը և այդ մասին իմաց էին տվել Խրիմյան կաթողիկոսին, նա ասել էր. «Էհ, ըշտը, մեր վարդապետին պէտք չէ տալ օտարին՝ պատժելու»: Այդ գողության գործը մանրամասն արձանագրվել էր և նախապատրաստվել էր հանցագործին պատժելու համար, բայց կաթողիկոսը նրան անպատիժ էր թողել, ավելին, ուղարկել էր Թիֆլիս, ուր միանգամից վարում էր երեք պաշտոն՝ կալվածքների կառավարիչ, ս. Սարգիս վանքի վանահայր և կոնսիստորիայի անդամ[2]*:*

Վիճակը նույնքան բարձիթողի էր Էջմիածնի վանքում, ուր ամենուրեք անտարբերություն էր: Կաշառակերության ու գողության ախտերը այստեղ նույնպես ընդգրել էին և տարածվել վանքի բարձրաստիճան հոգևորականների շրջանում:

Ուրիշ անգամ, նշված է փաստաթղթում, երբ Երեմիա եպիսկոպոսը ճանապարհին բռնում է Սարգիս եպիսկոպոսի գողացած երկու փութ յուղը և դիմում է Խրիմյանին, նրան պատասխանատվության կանչելու համար, կաթողիկոսը պատասխանում է. «Հա՜, ըշտը, ան գողցաւ որ ուտէ, դուն ալ բռնեցիր. դե՛հ, տա՛ր դուն ալ կե՛ր»[3]*:*

---

[1] ***«Անահիտ»***, *№ 1-2, ապրիլ-մայիս, 1909, էջ 2:*

[2] *Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237գ, վավ. 281, թ. 1:*

[3] *Նույն տեղում, թ. 3:*

Կաշառակերության ու գողության ախտերը լայնածավալ բնադրել էին և տարածվել նույնիսկ վանքի ամենացածր աշխատողների շրջանում: Սրանք կաշառքով ծախում էին սրբազան ու նվիրական պաշտոններ: Փաստաթղթի հեղինակները շարունակում էին. «Օրինակ՝ Մուքուրիկ Թաթոսը, այգեպան Պողոսը, խոհարար Թորոսը միաբանուած, տիրացուներից առնում էին հարիւրաւոր ռուբլիներ եւ նրանց ձեռնադրել տալիս: Վանքի տնտեսավար Սիմոնիկը, դայֆէՀի Վահան-Կորիւն վարդապետը անարժան քահանաներին ջրի երես հանելու փոխարէն արժանացնում են պարգեւների: Իսկ միաբան վարդապետերի անիրաւ վարմունքի չահատակութիւնն արդէն չափից անցել է»[1]:

Զորս էջանոց այդ փաստաթղթում կան ուրիշ տխուր օրինակներ ևս, որոնք ցույց էին տալիս Հայ եկեղեցու իրական վիճակը Ռուսաստանի տարածքում:

«Հայոց եկեղեցու անմխիթար վիճակն այլևս հանդուրժել չի կարելի», Ատրպատականի թեմի առաջնորդ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանին գրած նամակում բողոքում էր Հարություն ավագ քահանա Պոպովյանը: Նա ցավով նշում էր, որ ինչպես ճեմարանի, այնպես էլ ամբողջության մեջ էջմիածնի վարկն ընկած է ժողովրդի աչքում[2]:

Ի տարբերություն հայ ազատական հոսանքների, հատկապես «Մշակ»ականների և ռուսահայ սահմանադրական դեմոկրատների, հայկական ազգային հեղափոխական կուսակցությունները, նրանց մամուլի օրգանները ժխտում էին Մկրտիչ Ա Խրիմյանի վարչական գործերին ուղղված քննադատությունները, գտնելով, որ էջմիածնի անմխիթար վիճակի համար պատասխանատուն ողջ ռուսահայությունն է:

Զնայած վարչական գործունեության մեջ ունեցած խիստ թերացումներին, այնուամենայնիվ, Մկրտիչ Խրիմյանը մնում է հայոց նորագույն շրջանի պատմության խոշորագույն դեմքերից մեկը, ով իր ողջ ուժերն անմնացորդ նվիրաբերեց հայ ժողովրդի ազգային ազատագրության գործին:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237գ, վավ. 281, թ. 1:

[2] Նույն տեղում, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100, վավ. 168:

ԵՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀՐԱՎԻՐՈՒՄԸ

Ինչպես նշել ենք, ցարական կառավարությունը, առանց լուրջ պատճառաբանության, իրար հետևից արձակել էր երկու պետական դումաները՝ Առաջին («կադետական») դուման և Երկրորդ («սոցիալ-դեմոկրատական») դուման: Հատկապես Երկրորդ պետական դումայում բյուրոկրատիայի դեմ հնչած ցասկոտ հարձակումները և առաջ քաշված սպառնալից պահանջները խլացրել էին ցարի ականջները և ցցվել նրա երևակայության մեջ: Դա բազմամիլիոն ժողովրդի միահամուռ ապտակն էր միապետի երեսին:

Երկրորդ Պետական դուման ցրելու Նիկոլայ II-ի հունիսերեքյան հրամանագիրն (մանիֆեստը) ազդարարում էր, թե 1905 թ. հոկտեմբերի 17-ի հրամանագիրը մնում է ուժի մեջ, և միայն փոխվում է ընտրությունների կարգը: Իրականում, ընտրական նոր օրենքով, այդ հրամանագրից բան չէր մնում: Դա բացահայտ ազգայնամոլական (շովինիստական) ուղղություն ուներ: Ցարի հրամանագիրն ազդարարում էր. «Ռուսական պետության ամրապնդման համար ստեղծված պետական դուման պետք է ռուսական լինի իր ոգով: Տերության կազմի մեջ մտնող այլ ազգությունները պետք է իրենց կարիքների ներկայացուցչությունն ունենան պետական դումայում, բայց նրանք չպետք է լինեն և չեն լինի նրանց թվում, որոնց հնարավորություն է տրված լինելու զուտ ռուսական հարցերի տնօրինողներ: Իսկ պետության այն ծայրամասերում, որտեղ բնակչությունը բավականաչափ քաղաքական զարգացման չի հասել, պետք է պետական դումայի ընտրությունները դադարեցնել ժամանակավորապես»:

Երկրորդ պետական դուման ցրելուց հետո ցարական կառավարությունը ընտրական նոր օրենք հրատարակեց: Ինչպես Երկրորդ պետական դումայի արձակումը, այնպես էլ Երրորդ դումայի ընտրական նոր օրենքի ստեղծումը կապված էին Պյոտր Արկադևիչ Ստոլիպինի անվան հետ: Այդ նոր օրենքով՝ դումայի պատգամավորների թիվը 524-ից իջեցվեց 442-ի, ընդլայնվեցին կալվածատերերի և բուրժուազիայի իրավունքները, մեծապես

սահմանափակվեցին ազգային ծայրամասերի բնակիչների՝ նոր դումա պատգամավորներ ուղարկելու հնարավորությունները: Օրինակ՝ Լեհաստանի պատգամավորների թիվը կրճատվեց 2.5 անգամից ավելի (Երկրորդ դումայում ունեցած 37-ի փոխարեն Երրորդ դումայում այնտեղից պետք է ընտրվեր ընդամենը 14 պատգամավոր): Է՛լ ավելի՝ մոտ 3 անգամ կրճատվեց Կովկասի պատգամավորների թիվը (29-ի փոխարեն 10 պատգամավոր): Միջին Ասիան բոլորովին զրկվեց պատգամավորներ ունենալու իրավունքից, մինչդեռ Երկրորդ դումայում այնտեղից ընտրվել էր 21 պատգամավոր[1]:

Ընտրական նոր օրենքի հիման վրա 1907 թ. աշնանը տեղի ունենալիք Երրորդ պետական դումայի ընտրությունների համար Անդրկովկասում կազմվեց 6 ընտրական օկրուգ: Ըստ որում՝ խստիվ որոշված էր, թե ո՛ր օկրուգում ո՛ր ազգությունից է պատգամավոր ընտրվելու:

Նախընտրական պայքարը հենց սկզբից սուր բնույթ կրեց: Հատկապես Անդրկովկասում դա տեղի էր ունենում ահաբեկման ու բռնությունների պայմաններում: Այստեղ բնակչության լայն զանգվածներն անտարբեր էին ընտրապայքարի նկատմամբ: Ժողովրդի մեծ մասը, հատկապես գյուղացիական զանգվածները, չգիտեին, թե ինչ բան է պետական դուման: Ալ. Խատիսյանը վկայում էր. «Երբ 1908 թ. Ցալկիի շրջանի (ոչ հեռու Թիֆլիսէն) մէկուն մէջ հարցուցի գիւղացիներուն, թէ ի՞նչ է Պետական դումա (պարլամենտ), անոնք պատասխանեցին, որ Պետական դումա կը նշանակէ ոստիկանապետերու ժողով: Խեղճ գիւղացիի աչքին բարձր իշխանութեան հասկացողութիւնը ոստիկանապետէն այն կողմը չէր անցներ»[2]: Ահա՛ այս պայմաններում է, որ քաղաքական ուժերը դիմում էին հնարավոր բոլոր միջոցներին՝ իրենց առաջադրած թեկնածուներին դումա ուղարկելու համար:

Ընտրական օրենքի համաձայն, Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգները, միասին վերցրած, առաջադրելու էին 2

---

[1] Տե՛ս **Ф. И. Самойлов**, *По следам минувшего, ОГИЗ – Госполитиздат, Москва, 1948, с. 161.*

[2] ***«Հայրենիք»***, *№ 8 (116), Հունիս, 1932, էջ 131:*

պատգամավոր, որոնցից մեկը՝ հայ: Այդ նահանգներից ընտրված 25 ընտրող-պատվիրակները (выборщики) պետք է հավաքվեին Ելիզավետպոլում և այնտեղ ընտրեին դումայի պատգամավորներին:

Բաքվի բոլշևիկների կոմիտեի հանձնարարությամբ՝ Ստ. Շահումյանը ղեկավարում էր դումայի նախընտրական արշավը նշված երեք նահանգների հայ բանվորների ընդհանուր ընտրախավում (կուրիայում):

Հատկապես անհաշտ մրցակցություն էր ծավալվել Բաքվում: Քաղաքի բանվորական շրջաններում ընտրապայքարն ավարտվեց բոլշևիկների կատարյալ հաղթանակով: Ընտրված բոլոր չորս պատվիրակները (Բոկով, Տրոնով, Մորդովցև, Արկերյան) բոլշևիկներ էին: Նրանց հետ Ելիզավետպոլ մեկնեցին Ստեփան Շահումյանը և Ասքանազ Մռավյանը: Հոկտեմբերի 13-ին Ելիզավետպոլում տեղի ունեցավ պատվիրակների նախընտրական խորհրդակցություն, որտեղ տարբեր խմբավորումներ հանդես եկան իրենց ծրագրերով: Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ դումայի պատգամավորների ընտրությունը: Երևանի նահանգից ընտրված պատվիրակներ Համբարձում Առաքելյանը և Սիմոն Զավարյանը անհրաժեշտ ձայներ չստացան: Վերջում՝ հայերից մնացին երկու հոգի՝ բոլշևիկ բանվոր, գետաշենցի Արշակ Արկերյանը և երդվյալ հավատարմատար, դաշնակցական Հովհաննես Սաղաթելյանը, որը պատգամավոր էր եղել Երկրորդ պետական դումայում: Հայ պատվիրակների մեծ մասը, այդ թվում բոլոր կադետ պատվիրակները, իրենց ձայնը տվեցին Հ. Սաղաթելյանին, և նա երկրորդ անգամ ընտրվեց պետական դումայի պատգամավոր:

Արշակ Արկերյանին ձայն չտվողները պատճառաբանել էին, որ «նա անգրագետ է»: «Մշակ» թերթի Գանձակի թղթակիցը ևս Արկերյանի չընտրվելը թերթի 1907 թ. № 132-ում բացատրել էր նույն պատճառով: Ստ. Շահումյանը հոկտեմբերի 16-ին «Մշակի» խմբագրությանը գրում է նամակ, որը տպագրվում է № 134-ում: «Արշակ Արկերյանը համալսարանական դիպլոմ չունի,- նշում էր նա,- այդ պարզ է, իհարկե, բայց նա ոչ միայն շատ լավ «գրագետ» է, այլև Բաքվի 50 հազար բանվորության

լավագույն ներկայացուցիչներից մեկն է»: Կադետները Արկերյանին ձայն չտվեցին, որովհետև նա «սոցիալ-դեմոկրատ է և այն էլ «բոլշևիկ» սոցիալ-դեմոկրատ: ... Այստեղ է ահա՛ գաղտնիքը, պարոննե՛ր, և հարկավոր է քաջություն ունենալ խոստովանելու այդ»[1]:

Արկերյանին ձայն չտվողների պատճառաբանության մեջ տրամաբանություն կար. նա, իսկապես, չուներ պատգամավորի համար անհրաժեշտ կրթություն ու գիտելիքներ, որպեսզի կարողանար դումայի ամբիոնից հանդես գալ և պաշտպանել իր դասակարգի շահերը[*]*: Այսպիսով, ամբողջ Անդրկովկասից պաշտոնական հայկական պատգամավոր էր ընտրվել միայն մի հոգի՝ դաշնակցական Հովհաննես Սաղաթելյանը*[**]*: Նրանցից բացի, Երրորդ պետական դումայում ընտրվել էին նաև ուրիշ*

---

[1] ***Ստեփան Շահումյան,*** *ԵԼԺ, հատ. 2, էջ 19-20: Տարիներ անց, 1912 թ. Բաքվի Բայիլովի բանտում գտնված ժամանակ Ստ. Շահումյանը Ելիզավետպոլում 1907 թ. հոկտեմբերի 13-ին հավաքված ընտրող-պատվիրակների ժողովի մասին գրել է հուշ-հոդված (տե՛ս* ***Ստեփան Շահումյան,*** *ԵԼԺ, հատ. 2, էջ 240-259)՝ ըստ երևույթին նախատեսելով տպագրել մարքսիստական «Նոր խոսք» հանդեսում, որը չի իրականացվել 1912-ի հունվարին հանդեսի հրատարակման դադարեցման պատճառով: Հոդվածը մեզ է հասել ձեռագիր վիճակում և առաջին անգամ տպագրվել է 1953 թ. (տե՛ս* ***Ստեփան Շահումյան,*** *Հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 177-179):*

[*] *Առաջ անցնելով նկատենք, որ օսմանյան հեղափոխությունից հետո 1908 թ. թուրքական խորհրդարանում ընտրված դաշնակցական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանը թերուս լինելով ու նաև չիմանալով թուրքերեն, պատգամավոր եղած հինգ տարիների ընթացքում անգամ մեկ ելույթ չունեցավ խորհրդարանի ամբիոնից:*

[**] *Ինչ վերաբերում է դումայի պատգամավոր վերընտրված Սաղաթելյանին, որն ուներ բարձր կրթություն և գերազանց տիրապետում էր ռուսերենին, նա երրորդ գումարման պետական դումայի ամենաեռանդուն անդամներից էր: Իր ելույթներով նա դումային էր փոխանցում ռուսահայության հոգսերը, արժանի հակահարված էր տալիս այնպիսի հակահայ սևհարյուրյակային պատգամավորների, ինչպիսիք էին Պուրիշկևիչը, Մարկով 2-րդը, Տիմոշկինը, Լադոմիրսկին, Զամիսլովսկին և ուրիշներ:*

երեք հայեր՝ խոշոր հողատեր ու վաճառական Անտոն Կայետանովիչ Դեմոնովիչը (Քիշինյովի նահանգից), երդվյալ հավատարմատար Մովսես Աճեմյանը, որը Դոնի Ռոստովից և Նոր Նախիջևանից երկրորդ անգամ էր ընտրվել դումայի պատգամավոր և Ղրիմի ազնվականների պարագլուխներից Մելքոն Մուրզաևը: Այս երեք պատգամավորներից միայն Աճեմյանն էր, որ որոշ չափով հետաքրքրվել էր հայերի խնդիրներով, իսկ մյուս երկուսը որևէ առնչություն չեն ունեցել հայության հետ:

Երրորդ պետական դուման բացվեց 1907 թ. նոյեմբերի 1-ին: Նա արտացոլում էր դասակարգային ուժերի հարաբերակցությունը երկրում:

Իր կազմով՝ Երրորդ պետական դուման սևհարյուրյակային-կադետական էր: Զհաչված աննչան թիվ կազմող անկուսակցականներին՝ դումայի անդամ 442 պատգամավորներին ըստ կուսակցական կազմի կարելի է բաժանել 4 քաղաքական խմբի. 1) Աջերի կամ սևհարյուրյակայինների խումբ (171 պատգամավոր, որոնք ներկայացնում էին պատգամավորների ընդհանուր թվի 40 տոկոսը), 2) Հոկտեմբերականներ (123 պատգամավոր՝ 25,1 տոկոս), 3) Կադետներ և նրանց մոտ խմբեր (101 պատգամավոր՝ 23 տոկոս), 4) Ձախ խումբ, որը միավորում էր տրուդովիկներին և ծայրահեղ ձախերին՝ սոցիալ-դեմոկրատներին, ընդ որում՝ տրուդովիկներն ունեին 13 տեղ, սոցիալ-դեմոկրատները՝ 18 տեղ, որոնցից 4-ը՝ բոլշևիկներ ու նրանց հարող ուրիշ 4 պատգամավոր, մնացած 10-ը՝ մենշևիկներ (ձախ խմբում ընդամենը 31 պատգամավոր՝ 7 տոկոս):

Երրորդ դումայի նախագահ էր ընտրվել հոկտեմբերական Նիկոլայ Ալեքսանդրովիչ Խոմյակովը, որին 1910 թ. մարտին փոխարինեց Ալեքսանդր Իվանովիչ Գուչկովը:

Ի տարբերություն Առաջին և Երկրորդ դումաների, Երրորդ դուման եղավ կայուն և դիմացկուն: Եթե Առաջին դուման գոյություն ունեցավ միայն 72, Երկրորդը՝ 103 օր, ապա Երրորդը մնաց սահմանված հինգ տարվա ընթացքում (1907 թ. նոյեմբերի 1-ից 1912 թ. հունիսի 9-ը):

Զնայած դրան, Երրորդ պետական դուման, նախորդ երկու դումաների պես, ի զորու չէր վճռական դերակատարություն ու-

նենալու Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում, քանի որ, առաջվա պես, երկրի կառավարման բոլոր լծակները կենտրոնացված էին գործադիր իշխանության ձեռքում:

Անդրադառնալով ընդհանրապես ռուսական դումաների աշխատանքի բովանդակությանը՝ հայտնի տնտեսագետ Ռուբեն Բերբերյանը նրանց գործունեությանը տվել է հետևյալ գնահատականը.

«Ռուսաստանում ե՛ւ կար ե՛ւ չկար պարլամենտ: Արտաքուստ եւ ձեւականօրէն՝ նա կար: Գոյութիւն ունէին ընտրողական օրէնքներ (յաջորդաբար կրճատուած) եւ կուսակցական ներկայացուցիչները ընտրւում էին որպէս պարլամենտի անդամներ: Պարլամենտական նիստերը, անշուշտ, տեղի էին ունենում: Բանակոիւներն ու հարցապնդումները (ուղղուած կառավարութեան դէմ) կատարւում էին: Նոյնպէս ուսումնասիրւում կամ կրճատւում էր կառավարութեան ներկայացրած բիւտճէն: Յաճախ Դումայի անդամները «յոյժ անգուրգուրալից» խօսքեր էին չպրտում ու մտքեր արտայայտում նախարարների երեսներին:

Բայց ըստ էութեան՝ ռուսաց դումա-պարլամենտը եւրոպական կամ սահմանադրական մտքով պարլամենտ չէր: Ամէն անգամ, երբ ռուս դուման ձայների մեծամասնութեամբ պահանջում էր «պատասխանատու կառավարութիւն» կամ դումայի հաճութեամբ նշանակուած նախարարներ՝ խկոյն ցարը լուծում էր դուման ու այդպէս 3-4 անգամ խափանուեց ռուս դուման»[1]*:*

Անդրկովկասից ընտրված միակ հայ պատգամավոր Հովհ. Սաղաթելյանը 1907-1908 թթ. Դումայում հանդես է եկել ընդամենը երկու անգամ, բայց հետագա տարիներին իրեն շատ ակտիվ է դրսևորել, բազմաթիվ անգամ բարձրացնելով Անդրկովկասի ժողովուրդներին, հատկապես կովկասահայությանը, հուզող տարաբնույթ հարցեր:

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 6 (210), ապրիլ, 1940, էջ 62:*

ՀԱԿԱՀԱՅ ՀԻՍՏԵՐԻԱՅԻ ՍԱՆՁԱՁԵՐԾՈՒՄԸ: ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԴԵՄ՝ «ՀԱՅԱՍԻՐՈՒԹՅԱՆ» ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Կայսրության բազմազգ ժողովուրդը 1908 թվականն էր թևակոխում մտատանջ ու ապագայի նկատմամբ տագնապով լի: Եվ դրա համար նա ուներ բոլոր հիմքերը, քանզի գնալով անտանելի էր դառնում քաղաքական մթնոլորտը: Ամեն օր երկրի տարբեր տեղերից լուրեր էին հասնում ստոլիպինյան հետադիմության նորանոր բազմաքանակ զոհերի, բանտային տառապանքների և աքսորականների տանջանքների մասին: Կովկասը բացառություն չէր:

Սևհարյուրյակայինները և ամեն տեսակի աջերը վաղուց էին ատամ կճրտացնում կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովի վրա: Դեռևս Կովկասում փոխարքա նշանակվելու տարում՝ 1905 թ. նոյեմբերի 7-ին, Նիկոլայ II-ին գրած իր առաջին նամակում Վորոնցով-Դաշկովը չէր քաշվել նրան մի քանի թելադրություններ անելու և համոզելու, որ ամուր կանգնի իր տված հոկտեմբերյան մանիֆեստի սկզբունքների վրա, հատկապես հաստատ երաշխավորը լինի պետական դումայի կանոնավոր գործունեության: Նա դրանով էր պայմանավորում նաև Կովկասի խաղաղացման համար իր ձեռնարկած ջանքերի հաջողությունը:

Հատկանշական է, որ Կովկասի փոխարքան այդ առաջարկությունները Նիկոլայ II-ին անում էր այն ժամանակ, երբ մանիֆեստի հրատարակությունից անմիջապես հետո ինքնակալի շրջապատում առաջ էր եկել մի ուժեղ հոսանք, որը պահանջում էր վերացնել հոկտեմբերյան մանիֆեստով խոստացած բարենորոգումները և ամենից առաջ լուծարել պետական դուման:

Ինչպես և սպասելի էր, Վորոնցով-Դաշկովի բռնած ընթացքը թե՛ Կովկասում և թե՛ մանավանդ Ռուսաստանում նրա դեմ հանեցին Պետերբուրգի ծայրահեղ աջակողմյան խմբակցություններին, որոնք սկսեցին խուլ պայքար մղել Կովկասի փոխարքայի դեմ: Եվ ահա՛ այն տարրերը, որոնք ժխտում էին պետական դումայի անհրաժեշտությունը, նույն այդ դումայի ամբիոնը գործածում էին Կովկասի փոխարքայի հետ իրենց

հաշիվները մաքրելու համար:

Այն բանից հետո, երբ Ստոլիպինն սկսեց գլխավորել նախարարների խորհուրդը, միաժամանակ պահպանելով ներքին գործերի նախարարի պաշտոնը, լիովին ազատ արձակեց ձեռքերը և ձեռնարկում էր բոլոր միջոցները ցարի աչքում փոխարքային վարկաբեկելու ու նրան պաշտոնաթող անելու համար:

Փոխարքայի դեմ պաշտոնապես գործում էին հենց կովկասյան վարչությունում աշխատող՝ Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի գործակալներ Սոլովյովը և Այլֆտոնը, որոնք փոխարքայի մասին առատ նյութեր էին մատակարարում իրենց վերադասին, որն, իր հերթին, դրանց վերլուծելով ու ամփոփելով, զեկուցում էր Ստոլիպինին:*

Ի. Վորոնցով-Դաշկովի դեմ հարուցված հիմնական մեղադրանքներից մեկը, եթե ոչ հիմնականը, նրան վերագրված «հայասիրությունն» էր, որ նա, իբր, մեծ թուլություն ունի հայերի, հատկապես դաշնակցություն կուսակցության նկատմամբ, որի անդամներն էլ «հենց հանգստության խռովիչներն են Կովկասում»:

Կովկասի փոխարքայի «հայասիրության» մասին ոստիկանական դեպարտամենտի չինովնիկները Ստոլիպինին ներկայացվելիք իրենց գրություններում Վորոնցով-Դաշկովի և նրա կնոջ վրա բարդում էին նաև անհաշիվ անձնական մեղադրանքներ: Թիֆլիսի քաղքենի շրջաններում և Պետերբուրգի սալոններում հնարովի վարկաբեկիչ պատմություններ էին շրջում հայ առանձին գործիչների ու մեծահարուստների նկատմամբ կոմսուհի Ելիզավետա Անդրեևնա Վորոնցովա-Դաշկովայի չափից ավելի բարեհաճ վերաբերմունքի մասին:

Ռուսահայությունը միանգամայն անտեղյակ էր, որ Պետերբուրգի կառավարական շրջաններում խմորվում է մի հատուկ դիվային ծրագիր, որով նախատեսվում է վերադառնալ «Կով-

---

* *Ցարական Ռուսաստանում ոստիկանական դեպարտամենտ էր կոչվում ներքին գործոց նախարարության այն բաժինը, որ պաշտոն ուներ հսկելու հանրային անդորրության վրա և արմատախիլ անելու հեղափոխական ու քաղաքական շարժումները:*

կասի ամենահեղափոխական տարրին»՝ հայությանը պատուհասելու գոլիցինյան քաղաքականությանը: Դրա ոգեշնչողը անձամբ Պյոտր Ստոլիպինն էր:

Գործն սկսվեց կառավարության պատվերով 1908 թ. հունվար-փետրվարից ռուսական հետադիմական-սևհարյուրյակային մամուլի սանձազերծած հակահայկական վայնասունով:

Հետադիմական մամուլի հակահայկական արշավին տոն էր տալիս դեպի հայերն իր ավանդական թշնամությամբ հայտնի՝ Պետերբուրգի "Новое Время" («Նովոյե Վրեմյա») խավարամիտ թերթը՝ տխրահռչակ Լեոնիդ Մենշիկովի խմբագրությամբ:

Ռուսական հասարակության մեջ հակահայկական տրամադրություններ բորբոքելու համար Մենշիկովը «Կովկասն այրվում է» հոդվածում գրում էր, որ փոխարքա Վորոնցով-Դաշկովի չպատճառաբանված մեծասրտության պատճառով «Ռուսաստանի կայսրի թագից ընկնում է ամենաթանկագին ալմաստներից մեկը», և որ դրա գլխավոր մեղավորները հայերն են: «Կովկասում փաստօրէն տիրութիւն են անում նրանք, այնտեղ լաւ ու վատ եղանակները ստեղծում են Թամամչեաները, Արամեանցները, Լազարեանները եւ միւս հայ միլիոնատէրերը»[1]:

Մենշիկովը պնդում էր, որ ինչպես հրեաների, այնպես էլ հայերի մեջ ամենավտանգավորները մտավորականներն են, որոնք մտնելով իրենց համար խորթ ազգերի շարքերը, սերմանում են խռովություններ՝ բանը հասցնելով արյունահեղության: «Գաղտնիք չէ, որ Կովկասի, ինչպես եւ ծայրագաւառների վարչակազմն իր խոշոր մասով վարակուած է կաշառակերութեամբ: Քանի որ կովկասեան բոլոր ազգերի մէջ հայերն ամէնից աւելի հարստութիւն ունեն, ուստի փողի ոյժով նրանց յաջողւում է վարչակազմի մի մասը գրաւել իրենց կողմը՝ նրանց մասնակից դարձնելով մուսուլման ազգաբնակչութեան դէմ մղուող քաղաքական կռուին: Յենուելով իշխանութեան տեղական մարմինների նկատմամբ ունեցած իրենց ազդեցութեան վրայ, հայերը շարունակում են չափազանց յանդուգն մնալ»[2]:

---

[1] *"Новое Время"-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Մշակ»**, № 74, 3 ապրիլի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

Շարունակելով իր ողբերը, գանգատներն ու գրգռումները՝ թերթը մի ուրիշ համարում այնպիսի չափազանցված գույներով էր նկարագրում հայ և վրացի հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը, որ Կովկասին անծանոթ միամիտ ընթերցողը կարող էր հավատալ, թե դրանք վտանգ են սպառնում ամբողջ ռուսաց հզոր կայսրությանը: Ըստ որում՝ նրա էջերում գիտակցաբար թաքցվում էր այն հանգամանքը, որ Կովկասի բնակչության ճնշող մեծամասնությունն առնչություն չուներ հեղափոխական կազմակերպությունների գործունեության հետ[1]:

"Новое Время"-ն անընդհատ հայտարարում էր, թե Կովկասում, հատկապես Թիֆլիսում կատարվող չարագործությունները (բոնագրավումներ, ռուս մարդկանց սպանություններ և այլն) հայերի և վրացիների ձեռքի գործն են, որոնց հեղափոխական կազմակերպությունները գործում են սերտ համերաշխությամբ ու համաձայնությամբ:

Այն հաստատումը, թե հայ ու վրացի ազգային հեղափոխականները Կովկասում համատեղ պայքար են մղում ռուսական շահերի և ընդհանրապես Ռուսաստանի դեմ, և որ այդ պայքարում նրանք միավորում են իրենց ջանքերը, որպեսզի Կովկասից ռուսներին վանելուց հետո ստեղծեն իրենց անկախ պետությունները, բնավ չէր համապատասխանում իրականությանը:

Ճիշտ է, որ Վրաստանի ազգային-հեղափոխական կուսակցությունները և ընդհանրապես վրաց ազգի վերնախավերն երազում էին անջատվել Ռուսաստանից և վերականգնել ավելի քան մեկ դար առաջ կորցրած իրենց ազգային պետականությունը: Նույնիսկ վրացի սոցիալ-դեմոկրատները՝ Նոյ Ժորդանիան, Ակակի Չխենկելին, Եվգենի Գեգեչկորին, Նիկոլայ Չխեիձեն, Պրոկոֆի Ջափարիձեն (Ալյոշա, ապագա բոլշևիկ) և ուրիշներ, Վրաստանի համար պահանջում էին ինքնավարություն, որը մի հանգրվան էր լինելու անկախության ճանապարհին:

Ինչ վերաբերում էր ռուսահայությանը, ապա նրա մեջ ընդհանրապես բացակայում էին հակառուսական տրամադրությունները. նրա ազգային-քաղաքական կուսակցություններից

---

[1] Տե՛ս **"Новое Время"** (С.-Петербург), 29 мая 1908 г.

որևէ մեկը միտք անգամ չուներ Ռուսաստանից անջատվելու և վերականգնելու ավելի քան կես հազարամյակ առաջ կորցրած պետական անկախությունը: Նման խնդիր չուներ նաև ռուսահայերից որևէ մեկը՝ լիներ նա մեծահարուստ, թե աղքատ, միապետական, թե բոլշևիկ: Ռուսահայության և նրա ազգային-հեղափոխական քաղաքական կազմակերպությունների կոիվը ցարական ինքնակալության դեմ էր՝ գոլիցինների հակահայկական տմարդի քաղաքականության դեմ: Նրանք երազում էին առանց ազգային խտրականության և առանց բռնությունների Ռուսաստան, որտեղ կարող էին լիովին ծավալել իրենց ստեղծագործական ուժերը:

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր հող չկար հայ և վրաց ազգային-հեղափոխական կազմակերպությունների քաղաքական գործակցության համար: Իրողությունն այն էր, որ հայերն իրենց բարեկամ էին համարում Ռուսաստանը, իսկ մշտական վտանգ տեսնում էին Օսմանյան կայսրությունը:

Միքայել Վարանդյանը պատմում է, որ Լոնդոնում Մեծ Բրիտանիայի Աշխատավորական կուսակցության առաջնորդ Ռամզեյ Մակդոնալդի հետ իր զրույցի ժամանակ երբ խոսք էր եղել հայերի և վրացիների հարաբերությունների մասին, նա նշանակալից չեչտով ասել էր. "Two neighbours without a common enemy" (ընդհանուր թշնամի չունեցող երկու դրացիներ): Այդ մի քանի բառով բրիտանացին բնորոշել էր հայ-վրացական հարաբերությունների բարդ, կնճռոտ, ողբերգական վիճակը, մեկ նախադասության մեջ խտացրել մի ամբողջ դժբախտություն:

Վարանդյանը շարունակում է. «Արդարեւ, վրացիներու աչքին, տարաբախտաբար, Թուրքը թշնամի չէ, մինչ անհաշտ թշնամի կը դիտուի Ռուսաստանը: Իսկ հայոց համար երդուեալ, դարաւոր ոսոխ մըն է Թուրքիան, մինչ Ռուսաստանը չի ներկայանար անոնց աչքին որպէս մահացու թշնամի մը, քանի որ ռուսական կարգերու տակ հայ ազգը ընդհանրապէս ունեցեր է գէթ ֆիզիքական ապահովութիւն (յարաբերաբար...), իսկ ատենօք՝ նաեւ յառաջդիմութեան ու բարօրութեան որոշ երաշխիքներ»[1]:

---

[1] ***«Հայրենիք»**, № 1 (85), նոյեմբեր, 1929, էջ 94:*

Հայատյաց Մենչիկովը ներբող էր կարդում Թուրքական կառավարությանը և Աբդուլ Համիդին: Հայերին կոտորելու սուլթանական քաղաքականությունը նա համարում էր ուղղամիտ, որպես պատասխան նրանց հակաթուրքական գործողություններին: «Կարելի է խորապես ափսոսալ Հայաստանում կատարված գազանությունների համար,- գրում էր նա,- բայց հիշելով իրենց՝ հայերի, ասիական բնավորությունը, նրանց ռումբերն ու սադրանքները, մարդ կորցնում է իրեն, երբ կամենում է գնահատել երկու կողմերի վարմունքը: Թուրքերի վարչությունը հաճախ ծախու է և հանցավոր, մյուս կողմից անվիճելի է, որ փարթամացած հայերը լիրբ են ու անխիղճ: Հայերի ապստամբությունները ճնշելով ու նրանց արդարացիորեն ճնշելով՝ Թուրքական կառավարությունը նոր բան չի հնարել, այլ միայն քաջություն է ունեցել գործադրելու հին եղանակները, որոնք համանման դեպքերում գործադրվում են ջրհեղեղից ի վեր: Հայկական ահաբեկչությանը սուլթանը պատասխանել է թուրքական ահաբեկչությամբ՝ արագորեն ճզմելով ըմբոստությունները»[1]:

Թերթի մի ուրիշ համարում (№ 11583) Մենչիկովն ափսոսանքով նշում էր, որ կովկասյան թուրքերը 1905-1906 թթ. փորձեցին մի քիչ պատժել հայերին, բայց, ցավոք, դա չհաջողվեց, որի պատճառով վերջիններս ավելի լկտի դարձան:

Ռուսաստանի համար Կովկասում «ծայր առած դժբախտությունների գլխավոր պատճառը» "Новое Время"-ն այս հոդվածում նույնպես տեսնում էր փոխարքա Վորոնցով-Դաշկովի անձի մեջ՝ նրան համարելով երերուն ու կամազուրկ, հայերի ձեռքի գործիք: Թերթը գրում էր.

«Եթե կոմս Վորոնցով-Դաշկովը լիներ մասնավոր անձ, այն ժամանակ ոչ ոքի համար հետաքրքիր չէր լինի, թե ինչ է մտածում այդ ազատամիտ պարոնը: Իբրև մասնավոր անձ նա կարող էր հայերին բաշխել իր բոլոր հսկայական հարստությունները, որ դիզել են իր նախնիք: Նա կարող էր ավազակների համար գրել սահմանադրություն կամ խաղաղության ավետարան՝ Թուրքերին պարտավորեցնելով ամեն անգամ հայերին հանդի-

---

[1] ***"Новое Время"**, 29 мая 1908 г.*

պելիս ողջագուրվել նրանց հետ: Ի մեծ ափսոսանք և ի մեծ թշվառություն Ռուսաստանի, կոմս Վորոնցով-Դաշկովը մասնավոր անձ չէ, այլ՝ վեհապետի փոխանորդը, Ռուսաստանի ներկայացուցիչը Կովկասում: Նրան են վստահել ռուս ժողովրդի վեհապետական իրավունքները ապստամբ երկրում: Հզոր կայսրության ներկայացուցիչը պետք է իրենով ներկայացնի ուժ, հաղթություն, հրաման, օրենք և ոչ ավելի մեծահոգություն, քան թույլ է տալիս լիակատար հպատակությունը: Կոմս Վորոնցով-Դաշկովը մասամբ ազատամտությունից, մասամբ բարեսրտությունից և զառամությունից ըստ էության հանդիսանում է ոչ թե Ռուսաստանի, այլ տեղական բնիկների փոխարքա...»[1]:

Անդրադառնալով այդ հոդվածին՝ «Մշակը» գրում էր, թե նրա հեղինակն ըստ էության հանդես է գալիս որպես դատավոր կովկասցիների գլխին: «Թող Աստուած ազատէ մեզ այնպիսի դատաւորներից, ինչպիսին Մենշիկովն է»[2]:

"Новое Время" թերթի նախորդ համարներից մեկում նույն Մենշիկովը «Կովկասը փուլ է գալիս» վերտառությամբ իր հոդվածում արդեն սկսել էր արշավանքը Կովկասի փոխարքայի դեմ՝ փորձելով ապացուցել, թե նրա կործանարար դյուրահավատության և բարձիթողության հետևանքով է, որ այժմ մեծապես զորեղ է հայերի՝ այդ «քրիստոնյա հրեաների» ազդեցությունը Կովկասում՝ ի վնաս մուսուլման ազգաբնակչության[3]:

Վորոնցով-Դաշկովի հակառակորդների՝ նրան ներկայացրած մեղադրանքներից էր նաև այն, որ նա, իբր, պաշտպանություն տակ է առել փոխարքայության այն պաշտոնյաներին, որոնք այս կամ այն չափով վարակված լինելով հեղափոխության մանրէներով, քանդում են պետության հիմքերը (օրինակ՝ 1905 թվականից Քութայիսի նահանգապետ Ստարոսելսկին)*,

---

[1] **"Новое Время"**, 29 мая 1908 г.

[2] **«Մշակ»**, № 150, 12 հուլիսի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 66, 23 մարտի 1908 թ.:

* Ստարոսելսկու մասին տե՛ս **"Стенографический отчет о заседаниях второй сессии 3-й Государственной думы"**, С.-Петербург, типография газеты "Россия", 1909, с. 1444-1446.

մյուս կողմից հետապնդում և պաշտոնազուրկ է անում գահին հավատարմորեն ծառայող անձանց: Վերջիններից նրանք մատնացույց էին անում Թիֆլիսի նահանգապետ Լոզինա-Լոզինսկուն, որին փոխարքան, իբր, հալածում է և արգելքներ հարուցում նրա աշխատանքներում:

1905 թ. հոկտեմբերից Թուրք-հայկական ընդհարումների ամենածանր շրջանում Երևանի նահանգի ժամանակավոր գեներալ-նահանգապետ էր նշանակվել գեներալ Յացկևիչը, որն այդ պաշտոնում փոխարքայի հետ սերտ համագործակցությամբ աշխատել էր ամբողջ երեք տարի, լավ տպավորություն էր թողել տեղի բնակչության վրա, բայց ընտանեկան հանգամանքների պատճառով մի շարք գրավոր դիմումներ էր ներկայացրել փոխարքային և խնդրել իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից: Վորոնցով-Դաշկովն ամեն անգամ մերժել էր Յացկևիչի խնդրանքը, որովհետև գոհ էր, որ նա եռանդուն աշխատանք է ծավալել իրեն վստահված նահանգում: Յացկևիչն, ստիպված, իր դիմումներն ուղղակի հղել էր Պետերբուրգ: Ի վերջո՝ ներքին գործերի նախարարությունը տվել էր իր համաձայնությունը, և Պ. Ի. Ստոլիպինի հրամանով նա ազատվել էր պաշտոնից ու աշխատանքի անցել մայրաքաղաքում: Երևանի գեներալ-նահանգապետ էր նշանակվել գեներալ Ռժևսկին: Բայց ահա "Новое Время"-ն Յացկևիչին ներկայացնում էր որպես «իսկական հայրենասեր», որն իբր հենց այդ պատճառով զոհ է գնացել փոխարքայի խարդավանքներին:

Հայերով «զբաղվում էին» նաև ռուսական մամուլի մյուս հետադիմական-սևհարյուրյակային պարբերականները:

Աշխատելով հետ չմնալ "Новое Время"-ից՝ հակահայ կատաղի քարոզչություն էր մղում "Земщина" («Զեմշչինա») թերթը, որի խմբագիր Օկսանինը առիթը բաց չէր թողնում զրպարտելու հայի անուն կրող ամեն մեկին՝ լիներ նա արդյունաբերող, թե վաճառական, պետական ծառայող, թե քաղաքական գործիչ, նույնիսկ եթե լիներ ազատ զբաղմունքի տեր անհատ: Կովկասի փոխարքան մշտական հարձակումների էր ենթարկվում նաև այս թերթի էջերում:

Բացահայտ հակահայկական քարոզչություն էր մղում Կով-

կասի փոխարքայության "Кавказ" («Կավկազ») թերթը: Զնայած թերթի նկատմամբ փոխարքայի մի քանի անգամ արտահայտած դժգոհությանը, խմբագրությունը հետևողականորեն շարունակում էր հետևել թերթի նախկին տխրահռչակ խմբագիր Վելիչկոյի քաղաքական գծին:

Առավել հետադիմական և առավել հակահայ ընթացքի մեջ էր "Голос Кавказа" («Գոլոս Կավկազա») թերթը: Բանը հասել էր նրան, որ երբ փոխարքայությունից թերթի խմբագրությանը խորհուրդ էին տվել իզուր չբորբոքել ազգային արժանապատվության զգացմունքները հայերի մեջ, վերջինս որոշել էր դադարեցնել թերթի հրատարակումը՝ պատճառաբանելով, թե «անհնար է հարմարվել բոպեին»[1], այսինքն՝ անհնար է համաձայնեցնել իր համոզմունքները փոխարքայի պահանջի հետ: 1908 թ. հունիսի սկզբներից "Голос Кавказа"-ի հրատարակումը դադարեցվեց, որը տևեց ընդամենը մեկ ամիս: Հուլիսի սկզբներից նա սկսեց վերահրատարակվել:

Այդ բոլոր զրպարտությունների հիման վրա ծայրահեղ հետադիմականները Ստոլիպինի կառավարությանը հորդորում էին օր առաջ վերջ դնել Ռուսաստանի և ռուս ժողովրդի համար «աղետաբեր», պետության համար վտանգավոր «վորոնցով-դաշկովյան ռեժիմին», որի գլխավոր երկու սյուներն են ինքը՝ փոխարքան, մյուսը՝ նրա ծայրահեղ հայասեր տիկինը՝ կոմսուհի Ելիզավետա Վորոնցովա-Դաշկովան:

Ռուսական սևհարյուրյակային հակահայկական թերթերում տպագրված հոդվածները ներկայացնելով որպես ռուս ժողովրդի հասարարական կարծիք, Ստոլիպինը և նրա կառավարությունը վճռական հարձակման անցան փոխարքա կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովի և նրան ենթակա կովկասյան վարչակազմի դեմ:

Նշենք, որ Վորոնցով-Դաշկովի և Ստոլիպինի անձնական հարաբերությունների ներհակությունը սկիզբ էր առել 1906 թ., երբ վերջինս նշանակվել էր ներքին գործերի նախարար: Պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո Ստոլիպինը Վորոնցով-Դաշկովից պահանջել էր Կովկասում ծագած յուրաքանչյուր

---

[1] ***"Голос Кавказа"*** *(Тифлис)*, *25 июня 1908 г.*

դժգոհություն, հակացարական ամեն մի ըմբոստություն ճնշել անխնա կերպով՝ գործադրելով ամենադաժան միջոցները: Զհամաձայնելով նրա հետ, փոխարքան չեչտադրել էր, որ ինքը գերադասում է ծագած ազգամիջյան, սոցիալական և այլ խնդիրները լուծել բացառապես դիվանագիտական միջոցներով, փոխադարձ հասկացողությամբ ու փոխըմբռնմամբ, իհարկե, երբ դա հնարավոր է լինում:

Հետադիմական մամուլի հարձակումների և Ստոլիպինի նյութած սադրանքների պայմաններում 1908 թ. հուլիսի վերջերին Վորոնցով-Դաշկովը մեկնեց Պետերբուրգ՝ կենտրոնական կառավարությունում քննարկելու Կովկասում անհետաձգելի բարենորոգումներ մտցնելու՝ իր ցուցումներով մշակված ծրագիրը:

Կովկասը կառավարելու անցած երեք տարիները հեշտ չէին եղել փոխարքայի համար: Թեև Թուրք-հայկական ընդհարումներն արդեն անցյալում էին, բայց երկու ժողովուրդների մոտ դեռ մնացել էին թշնամանքի նստվածքները: Մյուս կողմից, ռուսական հեղափոխության՝ Կովկասին զարնված հուժկու ալիքները թեև ժամանակավորապես նահանջել էին, բայց առօրյա կյանքը շարունակում էր խուլ փոթորկվել ներքին հակասություններից:

Ահա՛ այս պայմաններում էր փոխարքան կայսրության բարձրագույն օրենսդիր ու գործադիր մարմինների քննարկմանը ներկայացնում Կովկասը վերջնականապես խաղաղացնելու ծրագիրը: Վերջինս նախատեսում էր այնտեղի բազմացեղ ազգություններին հնարավորություն տալ զարգացնելու իրենց լեզուն, գրականությունը, դպրոցները և այդ ամենի շնորհիվ երկիրն ամուր կապել Ռուսաստանի հետ:

Բայց հեշտ չէր ծրագիրը կյանքի կոչելը: Վորոնցով-Դաշկովի՝ կառավարության բարձր օղակներում գտնվող բազմաթիվ թշնամիները, որոնք մշտապես խոչընդոտներ էին հարուցում նրա ճանապարհին, այժմ ամեն ինչ անում էին տապալելու փոխարքայի նոր նախաձեռնությունը: Ավելին, Վորոնցով-Դաշկովի հակառակորդները պահը հարմար գտան ճնշում գործադրելու կենտրոնական կառավարության վրա՝ նրան պաշտոնից հեռացնելու համար:

Ռուսական հետադիմական, ազգայնամոլական խավերը չէին ընդունում փոխարքայի «ազատականությունը» և գտնում էին, որ Կովկասը, իբրև նվաճված քաղաքակիրթ երկիր, պետք է կառավարվի միայն երկաթե ձեռքով:

Կովկասում, հատկապես կովկասահայության մեջ մեծ երկյուղ կար, որ փոխարքայի դեմ սկսված արշավանքը հաջողություն կունենա և նրա նախատեսած բարենորոգումների ծրագիրը կտապալվի:

Բայց գործն այլ ընթացք ստացավ: Կառավարական բարձր շրջաններում կոմսն ուներ ոչ միայն շատ հակառակորդներ, այլև շատ բարեկամներ, որոնց աջակցությամբ նրա ծրագիրը հիմնական գծերով ընդունվեց, ինչը սևհարյուրյակային ուժերի վրեժխնդրության և նոր հարձակումների առիթ հանդիսացավ:

Հայության նկատմամբ Ստոլիպինի և ռուսական սևհարյուրյակային հետադիմության թշնամական վերաբերմունքի ակնբախ արտահայտություններից էր ոստիկանական դեպարտամենտի՝ 1908 թ. օգոստոսի 17-ի թվով Ստոլիպինին ներկայացրած գաղտնի գրությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1929 թ., "Красный архив" («Կրասնիյ արխիվ») փաստաթղթերի ժողովածուի 4 (35)-րդ հատորում:*

Ոստիկանական դեպարտամենտի գրությունը չոչափում էր երեք հարց, որոնք վերաբերում էին Դաղստանին, Կովկասի ընդ-

---

* *Խորհրդային իշխանության վաղ շրջանի հրատարակչական գործունեության մեջ առանձնակի և ուշագրավ տեղ է գրավում ցարական կառավարության արխիվներից հանված գաղտնի վավերագրերի տպագրումը առանձին գրքերով: Այդ մատենաշարով հրապարակ հանելով ցարիզմի գաղտնի վավերագրերը՝ խորհրդային իշխանությունը նպատակ ուներ մերկացնել նրա ներքին հակաժողովրդական և արտաքին հարձակողական քաղաքականությունը: Ձեռնարկումը ժամանակին մեծ դժգոհություն առաջ բերեց ռուս վտարանդիների շրջանում: Մատենաշարի գրքերում տպագրված վավերագրերից ու փաստաթղթերից չուրջ երկու տասնյակը վերաբերում են հայերին և հայկական քաղաքական կազմակերպություններին: Ինչպես խորհրդահայ, այնպես էլ սփյուռքի պատմաբաններին դրանք հնարավորություն են տվել ծանոթանալու հայերի հանդեպ ցարական կառավարության վարած քաղաքականության գաղտնի ծալքերին՝ մանավանդ ցարիզմի գոյության վերջին շրջանում:*

հանուր կացությանը և ՀՅ դաշնակցությանը:

Դաղստանի հարցը քննության էր առնված թաթարների (ադրբեջանցիների) հետ համատեղ, այն էլ մի քանի տողով: Կովկասի փոխարքան չափազանց շատ է երես տվել տեղացիներին, կարդում ենք գաղտնի գրության մեջ: Դաղստանի ազգաբնակչության մեջ տիրող տրամադրությունների նկատմամբ հարկավոր է հաշվի առնել այն պարագան, որ չնայած խաղաղ ժամանակում այդ ազգաբնակչության ցույց տված հլու հնազանդությանը, Թուրքիայի հետ պատերազմ ծագելու դեպքում այնտեղ անպատճառ տեղի կունենան անկարգություններ: Դրանք կսկսվեն Զեչնիայում (Թերեքի շրջան) և կտարածվեն Անդի ու Ավարսկ գավառամասերում և եթե անմիջապես չճնշվեն, ապա կտարածվեն նաև այլ վայրերում ու մեծ գլխացավանք կպատճառեն[1]:

Միայն այսքանը Դաղստանի մասին: Նույնքան հակիրճ էր թաթարներին տրված գնահատականը. «Հայերին հակառակորդ թաթարներին նույնպես օտար չեն համիսլամության կամ, ավելի ճիշտ, համաթաթարականության գաղափարները: Նրանք ձգտում են միություն առաջացնել մահմեդական զանազան մանր ցեղերի մեջ՝ ընդհանրական կրոնի և թաթարական ընդհանուր լեզվի միջոցով: Այդ գործընթացը Կովկասում իրագործվում է դանդաղ, բայց կանոնավոր կերպով, զանազան կրթական և բարեգործական ընկերություններ բացելով, թաթարական հատուկ դպրոցներ հիմնելով և թաթարական մամուլ ստեղծելով»[2]:

Անցնելով վրացիներին՝ ցարական քաղաքական ոստիկանությունը նրանց դիտարկում էր Կովկասի ընդհանուր կացության համաչարաղրանքում: Փաստաթղթի հեղինակները խուսափում էին խոսել վրացիների շրջանում գործող հեղափոխական կազմակերպությունների մասին, բացառությամբ վրաց սոցիալ-դեմոկրատների, այն էլ այնքան մեղմ, որ թվում էր, թե նրանց մասին գրողը վրացի է[3]:

---

[1] *Տե՛ս "Красный архив", т. 4 (35), Москва-Ленинград, 1929, с. 148.*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 148–149:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 143:*

Վրաստանի սահմաններում տեղի ունեցած շարժումներին նվիրված երկու էջում ամենախիստ ձևակերպումը հետևյալն էր. «Եթե Գորիի գավառում ծագի մի իսկական ապստամբություն, այնտեղ գտնվող զորավար Բաուերը ստիպված կլինի ինքն իրեն հայտարարել գեներալ-նահանգապետ և ճնշել ապստամբությունը»[1]:

Ցարական ժանդարմների նկարագրած իրերի դրությունը Վրաստանում բոլորովին անհամապատասխան էր իրականությանը, եթե նկատի ունենանք, որ 1905-1907 թթ. հեղափոխության ընթացքում վրաց սոցիալ-դեմոկրատական և սոցիալ-ֆեդերալիստական կուսակցությունները, որոնք հարկադրված չէին եղել մտնել ազգամիջյան կռիվների մեջ, իրենց շրջաններում կարողացել էին բորբոքել համեմատաբար մեծ ծավալի հակակառավարական հեղափոխական շարժումներ:

Թաթարների և վրացիների մասին ոստիկանական դեպարտամենտի արտահայտած այդքան մեղմ վերաբերմունքի պատճառն անչուշտ մեկն էր. ավելի չեչտել հայերի հեղափոխականությունն ու ըմբոստությունը, միաժամանակ արդարացնել այն հալածանքները, որ արդեն այդ ժամանակ ծրագրվում էին ՀՅ դաշնակցության դեմ:

Ինչ վերաբերում էր գաղտնի գրության մեջ հայերին ու Դաշնակցությանը տրված գնահատականներին, ապա դրանք ծայրից ծայր շատ բացասական էին և ծավալով կազմում էին փաստաթղթի ավելի քան երկու երրորդը:

Հայերի հանդեպ Ստոլիպինն ուներ նույն վերաբերմունքը, ինչպիսին ուներ քաղաքական ոստիկանության կենտրոնը, որովհետև նա այս դեպարտամենտից և նրա գործակալներից էր ստանում տեղեկություններ Կովկասի գործերի, մասնավորապես հայերի հեղափոխական շարժումների մասին: Փոխարքայությունը և Վորոնցով-Դաշկովը չէին կարող վստահելի տեղեկատու աղբյուր լինել կառավարության նախագահի համար, որովհետև նրանք, ինչպես ասվեց, Պետերբուրգի աչքում վար-

[1] Տե՛ս *"Красный архив"*, т. 4 (35), 1929, с. 143.

կաբեկված էին որպես հայասերներ:

Դեպարտամենտի տեղեկությունների համաձայն, «Կովկասի ամենահակապետական և ամենավնասակար տարրը հայությունն է»: Ըստ այդ տեղեկությունների՝ Կովկասում 1905-1907 թթ. տեղի ունեցած երկու խոշոր դեպքերի՝ հայ-թաթարական ընդհարումների և հակակառավարական հեղափոխական բռնկումների հիմնական գործող դերակատարները եղել են հայերը և նրանց դաշնակցություն կուսակցությունը, որոնց նկատմամբ փոխարքա Վորոնցով-Դաշկովը ցուցաբերել ու ցուցաբերում է աջակցություն ու հանցագործ հովանավորություն: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ «թաթարները ջարդվեցին, իսկ նրանց գյուղերը հողին հավասարվեցին», քանի որ հայերը շատ լավ զինված էին Դաշնակցության շնորհիվ: Վերջինիս գլխավորությամբ՝ «հայ ավազակախմբերը կռվում էին ոչ միայն մուսուլմանների, այլև ռուսների դեմ՝ հանուն մեծ և ինքնավար Հայաստանի»: Նրանց ազգային նպատակն է «մաքրել խառը բնակչություն ունեցող հողամասերը թաթարներից և ստեղծել միատարր ազգային երկրամաս Կովկասում»[1]:

Կրկին ու կրկին այպանելով փոխարքային և նրա վարչակազմը, ոստիկանական դեպարտամենտը չեշտում էր, թե նրանք զիջող վերաբերմունք են ունեցել հայկական դավերի նկատմամբ: Ցավալին այն է, ասված էր գրության մեջ, որ թե՛ փոխարքան և թե՛ վարչական մարմինները չեն գիտակցում, որ իրենց գործունեությունն ապիկար է[2]:

Այնուհետև ոստիկանական դեպարտամենտը ամենայն մանրամասնությամբ Ստոլիպինին էր ներկայացնում Դաշնակցության կառուցվածքի և դրա պահպանման վերաբերյալ տվյալներ:

Նշելով, որ «Կովկասի մամուլն ամբողջովին հայերի ձեռքին է», գրության մեջ այնուհետև անդրադարձ էր արվում Դաշնակցության «Փոթորիկ» կազմակերպության գործողություններին:*

---

[1] *Տե՛ս "Красный архив", т. 4 (35), 1929, с. 145.*

[2] *Նույն տեղում, էջ 145, 149:*

* *Գրության բնագրում գրված է «Поторик», որն, անշուշտ, Քրիստափոր Միքայելյանի ստեղծած «Փոթորիկն» է:*

Ընդ որում չեշտվում էր, որ կուսակցությունը որոշում ունի մահափորձի ենթարկել երեք վեհապետերի՝ Օսմանյան կայսրության սուլթանին, Պարսկաստանի շահին և Ռուսաստանի ցարին: Փաստաթղթում բերված են բազմաթիվ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս ոստիկանական դեպարտամենտի քաջատեղյակ լինելը Դաշնակցության ողջ ներքին կյանքին: Նշված էր, որ կուսակցությունն ունի թնդանոթներով, ռումբերով, այրուձիով և հետևակայիններով 100 000-ի հասնող բանակ՝ 10 միլիոն ռուբլի** բյուջեով: «Կուսակցության դրամական միջոցները,- հաղորդում էր դեպարտամենտը Ստոլիպինին,- հայթայթվում են անդամավճարներից, կամովին նվիրատվություններից և բռնագրավումներից: 1907 թ. Դաշնակցությունն ուներ մոտ 165 հազար անդամ, որոնք ընդհանուր առմամբ [տարեկան] գանձարկղ են մտցնում մոտ մեկ միլիոն ռուբլի: Բացի այդ, հայտնի է, որ հայազգի Մանթաշևը կուսակցությանը նվիրել է մեկ միլիոն ռուբլի»[1]:*

Այնուհետև դեպարտամենտը Ստոլիպինին հաղորդում էր, որ Դաշնակցությունը, հետապնդելով Հայաստանի անկախության հաստատումը, իբր, իր զինվորներին արդեն հրահանգ է տվել ներխուժել Թուրքիա: «Գոյություն ունի նաև Կարսը և Էրզրումը գրավելու ծրագիր, որի համար կուսակցությունը հնարավորություն ունի կենտրոնացնելու 60 հազարանոց մի բանակ»[2]:

1908 թ. օգոստոսի 17-ին ոստիկանական դեպարտամենտի գրած պաշտոնական զեկուցագիրը ստանալուց ու կարդալուց հետո Ստոլիպինն անմիջապես հրահանգում է սկսել Դաշնակցությանը հաշվեհարդարի ենթարկելու նախապատրաստու-

---

** Բնագրում այս բառը ռուսերեն այբուբենի տառերով գրված է՝ «զինվորներ»:*

*** Այստեղ "Красный архив"-ի խմբագրությունը դրել է հետևյալ ծանոթագրությունը՝ «[Դաշնակցության] զինված ուժերի թվի և նրա վրա ծախսած գումարի մասին հաղորդած տեղեկությունները ակնհայտորեն չափազանցված են»:*

[1] Տե՛ս "Красный архив", т. 4 (35), 1929, с. 149-150.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 145, 149:

թյունները՝ խեղդելու համար ազգային-հեղափոխական շարժումը կովկասահայերի մեջ:

Հակառակ հայատյաց գործիչների քարոզչության, ռուս նշանավոր շատ պաշտոնյաներ, մտավորականներ, լրագրողներ անում էին հնարավորը շղթայազերծված հետադիմության պայմաններում չեզոքացնելու համար հայերի մասին շրջվող քարանձավային, քարացած տեսակետները:

Այդ գործիչներից էր հենց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը: Զնայած ընդամենը երեք տարի էր, որ նա պաշտոնավարում էր Կովկասում, բայց այդ կարճ ժամանակամիջոցում, մանավանդ իշխան Գրիգորի Գոլիցինի դժնդակ, վայրագ ու բռնակալ ռեժիմից հետո, նա կարողացել էր գրավել երկրամասի ժողովուրդների համակրանքը՝ իր մեղմ ու համբերատար բնավորությամբ, բարենորոգչական գործերով:

Հայկական կյանքի համար կոմս Իլարիոն Վորոնցով-Դաշկովի փոխարքայությունը նշանավոր եղավ հատկապես այն բանով, որ նա վերադարձրեց Հայ եկեղեցու կալվածքները, վերաբացեց հայ դպրոցներն իրենց նախկին ծրագրով ու հոգաբարձական իրավունքներով: Կոմսը շատ անգամ էր ընդունել հայկական պատգամավորություններ և լսել նրանց զեկուցումները դանազան ընթացիկ կարիքների մասին:

Ուստի պատահական չէր, որ հայկական պահպանողական և ազատական քաղաքական շրջանակները և հատկապես մամուլը գործուն մասնակցություն ունեցան Կովկասի փոխարքայի սպայական ծառայության 50-ամյա հոբելյանական հանդիսություններին, որոնք տեղի ունեցան Թիֆլիսում 1908 թ. մարտի վերջերին[1]:

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Վորոնցով-Դաշկովին սևհարյուրյակայինների ներկայացրած որոշ մեղադրանքներ համապատասխանում էին իրականությանը, և դրանք նրան պատիվ էին բերում:

Ալեքսանդր Խատիսյանը, որ, լինելով Թիֆլիսի քաղաքա-

---

[1] Российский государственный исторический архив (РГИА), ф. 919, оп. 2, д. 8, л. 66.

գլուխ, անմիջական չփումների մեջ էր փոխարքայի հետ, իր հուշերում բարձր է գնահատել նրա մարդկային որակները:

Փոխարքան ճանաչում էր հեղափոխական շատ գործիչների և գիտեր, որ անօգուտ է նրանց խոստումներին առանձին ուշադրություն դարձնել: Նա գիտեր և մեկ ուրիշ բան, որ անհնար է ուժի գործադրումով արմատախիլ անել հեղափոխական շարժումը: Հենց այդ պատճառով էր նա հաճախ դիմում զիջումների, դատարանների ոչ բոլոր վճիռներն էր համարում արդարացի և պահանջում էր վերաքննել հանցապարտ շատ հեղափոխականների գործերը, հաճախ էր կանխում նրանց մահապատիժները:

Խատիսյանը վերհիշում էր, որ վրաց սոցիալ-դեմոկրատների ղեկավարներից, Աստրախանի նահանգ աքսորված Նոյ Ռամիշվիլին, այնտեղից հեռագրով իրեն խնդրել էր միջամտել փոխարքայի մոտ, որ նա թույլ տա մեկ շաբաթով Թիֆլիս գալ և տեսակցել իր հիվանդ դստերը, խոստանալով այդ ընթացքում չզբաղվել հեղափոխական գործունեությամբ: Խատիսյանը լինում է փոխարքայի մոտ և խնդրում ընդառաջել աքսորականին, մանավանդ, որ նա աղնիվ խոսք է տվել Թիֆլիսում չհանդիպել որևէ հեղափոխականի: Թույլատրելով Ռամիշվիլու Թիֆլիս գալը՝ Վորոնցով-Դաշկովը, դիմելով Խատիսյանին, ասում է. «Ինչ վերաբերում է Ռամիշվիլու աղնիվ խօսքին, այդ միեւնոյնն է, թէ տիֆի մանրէն խօսք տայ, թէ եթէ ինքը ընկնի մարդու մարմնի մէջ, չի վարակելու նրան»[1]:

Շարունակելով՝ Խատիսյանը բերում էր ուրիշ օրինակներ ևս: Նա գրել է. «Փոխարքան կ'ուզէր տեղեակ ըլլալ անցուդարձին: Կան մարդիկ, որ շատ լաւ կը խօսին, Փոխարքան լաւ կը լսէր, դիմացինին հնարաւորութիւն կու տար խօսելու: Ան ինձ կը խնդրէր իրեն մօտ տանիլ յեղափոխական գործիչները: Ես իրեն մօտ տարի գլխաւոր կուսակցութիւններու աչքի խյնող քանի մը անդամներ: Երկար զրուցեցինք Փոխարքայի հետ: Եւ ոչ մէկ վատ հետեւանք չունեցան այդ այցելութիւնները այցելուներու համար:

---

[1] **«Հայրենիք»**, № 9 (117), Հուլիս, 1932, էջ 99:

Շատ անգամներ ստիպուած եմ եղեր Փոխարքայի մօտ երթալու եւ խնդրելու բանտարկեալներու եւ աքսորեալներու ծանր վիճակը թեթեւցնելու մասին: Անոնց կիները եւ մայրերը գրեթէ ամէն օր ինձ մօտ կու գային նման խնդիրներով: Այսպէս, բարեխօսած եմ Ստեփան Շահումեանի համար, Ռամիշվիլիի համար, որ վերջերս սպաննուեցաւ Փարիզի մէջ, Ծերեթելիի, Ջափարիձէի, Էլիավայի, Պետրոսեանի (Կամո:- Հ. Ս.) ու բազմաթիւ դաշնակցականներու եւ սոցիալ-դեմոկրատներու համար»[1]:

Վորոնցով-Դաշկովին անհանգստացնում էր ոչ միայն իր, այլև հատկապես հայության դեմ ռուսական հետադիմական ուժերի սանձազերծած արշավը: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ ինքն ամեն գնով ցանկանում էր կառչած մնալ փոխարքայական աթոռին, այլ որովհետև սկսած լայնածավալ սադրանքներն ուղղակի հարվածում էին Կովկասի անվտանգությանը: Նա գտնում էր, որ Թուրքիայի կողմից Կովկասին սպառնացող վտանգի դեպքում երկրամասի ժողովուրդներից առաջինը հենց հայերն են կանգնելու ռուսական բանակի կողքին՝ թշնամու դեմ:

Պատահական չէր, որ Թուրքիայի հետ ռազմական ընդհարման հեռանկարով անհանգստացած, փոխարքան բացատրություններ և զգուշացումներ էր հղում Պետերբուրգ՝ արտաքին և ներքին ործերի ու ռազմական նախարարներին, նաև Նիկոլայ II-ին:

"Новое Время"-ին և հետադիմական մյուս թերթերին հակահարված էին տալիս ռուսական առաջադիմական մամուլի օրգանները և պաշտպանում Վորոնցով-Դաշկովի աշխատառը, նրա հավասարակշռված վերաբերմունքը Կովկասի ժողովուրդների նկատմամբ:

"Биржевые Ведомости" («Բիրժևիե Վեդոմոստի») թերթն իր երկու համարներում տպագրել էր Վ. Օպոչինինի «Կովկասյան ակնարկներ» վերնագրով հոդվածը: Հեղինակն իր ակնարկներն արդարացիորեն սկսում էր այն փաստից, որ ռուսները չունեն կովկասագիտության բնագավառի լուրջ ուսումնասիրություն-

---

[1] ***«Հայրենիք»**, № 9 (117), հուլիս, 1932, էջ 99:*

ներ, ավելին, Կովկասի մասին ռուսական հասարակությունը նույնիսկ չունի ճիշտ տեղեկություններ: Նա ցույց էր տալիս, որ սովորաբար ռուս գրողները և լրագրողները, օրինակ՝ Մենչիկովը, թե՛ Կովկասի և թե՛ այդտեղ կատարվող դեպքերի մասին իրենց տեղեկությունները քաղում են կովկասյան ռեժիմի այս կամ այն զոհերից, զանազան պաշտոնաթող կամ պաշտոնից արձակված չինովնիկներից, որոնք, վերադառնալով Պետերբուրգ, իրենց աչառու և կանխակալ տեղեկություններով ոգևորում են Մենչիկովի պես գրողներին: Մինչդեռ իմանալու համար, թե իսկապես ի՞նչ է կատարվում Կովկասում, ինչո՞ւ է հուզվում նա և ի՞նչ են ցանկանում նրա բնակիչները՝ պետք էր ամենից առաջ դիմել նրա անցյալին, քննել ռուսական քաղաքականության փոփոխականությունը, և այն ժամանակ միայն խնդիրը կլուծվեր[1]*:*

Ապա Վ. Օպոչինինն ասում էր, որ Կովկասը նվաճելիս Ռուսաստանն ամբողջ ժամանակ հենվել է տեղի քրիստոնյա բնակչության վրա: Հանձինս հայերի ու վրացիների՝ նա գտել էր ամենաջերմեռանդ աջակիցների: Հայերն ու վրացիները ռուս զինվորների հետ արյունով են գրել կովկասյան պատերազմների պատմությունը: Հոդվածագիրն այնուհետև հանդիմանում էր նրանց, ովքեր տգետ լինելով՝ տրտունջ էին հայտնում, թե ռուսական կառավարությունը կոպիտ սխալ է թույլ տվել՝ հայերին թույլատրելով մտնել կայսրության սահմաններից ներս և ապրել հայաբնակ, նոր նվաճված հողերի վրա: «Բայց այն, ինչ չի հասկանում պ-ն Մենչիկովը,- գրում էր Օպոչինինը,- շատ լավ հասկանում էր կոմս Պասկևիչը, երբ Թուրքմենչայի դաշնագրի 15-րդ հոդվածով պայմանավորեց հայ ընտանիքների ազատ գաղթը Պարսկաստանից, որովհետև ձեռք բերած երկիրը պետք էր լցնել հավատարիմ և անձնվեր ժողովրդով, որի վրա կարելի լիներ հաստատ հենվել մուսուլմանների դեմ մղած կռիվներում»[2]*:*

---

[1] *"**Биржевые Ведомости**" (С.-Петербург), 28 июня 1908 г.*

[2] **Նույն տեղում:**

ՆԻԿՈԼԱՅ II-ԻՆ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԳՐԱԾ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԴԵՄ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդային "Красный архив" («Կրասնի արխիվ») հրատարակության 26-րդ գրքում զետեղվել են Անդրկովկասի դեմ ուղղված Թուրքական վտանգի մասին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի 1908 թ. ձմռանը գրած երկու նամակները Նիկոլայ II ցարին: Դրանցում բարձրացված են Կովկասի ներքին և մանավանդ արտաքին ապահովությանն առնչվող մի շարք հարցեր:*

Այդ հարցերի թվում մեզ համար հատկապես հետաքրքրություն են ներկայացնում Ռուսաստանի վրա 1908 թ. գարնանը Թուրքիայի հնարավոր հարձակման մասին փոխարքայի դատողությունները: Նա ցարին գրում էր, որ եթե կենտրոնական իշխանություններն անհրաժեշտ զինվորական պատրաստություններ չտեսնեն, ապա անխուսափելի են ծանր հետևանքներն ամենից առաջ Անդրկովկասի համար:

Իսկ վտանգն իրական էր, քանզի անզեն աչքով էլ նկատելի էին այն պատրաստությունները, որոնք Թուրք զինվորականությունը տեսնում էր Անդրկովկասին սահմանակից տարածքներում:

Ռուսաստանի արտգործնախարարությունը Պետերբուրգի օսմանյան դեսպանից պահանջել էր բացատրություն տալ տեղի ունեցող ռազմական պատրաստությունների մասին: Այդ առթիվ «Երկրի ձայնը» թերթը գրում էր.

---

* *Նշված երկու նամակների բնագրերը պահպանվում են Ռուսաստանի պատմության պետական արխիվում (РГИА), ուստի մենք նպատակահարմար գտանք դրանք ներկայացնել ոչ թե ըստ "Красный архив"-ի, այլ ըստ նշված արխիվի համապատասխան ֆոնդի:*

Մեզ հայտնի են սույն խնդրի վերաբերյալ Կովկասի փոխարքայի՝ ցարին գրած չորս նամակներ, որոնցից երկուսը՝ 1908 թ. սկզբներին, երրորդը՝ 1911 և չորրորդը՝ 1912 թվին: Վերջին երկու նամակներին կանդրադառնանք աշխատության հետագա շարադրանքում:

«Պետերբուրգի թիւրք դեսպանը, ռուս կառավարութեան ներկայացուցած զեկուցագրի մը մէջ Թիւրքիայի զինուորական պատրաստութիւնները կը բացատրէր ու կ՚արդարացնէր սահմանակից անհանգիստ քիւրդ ազգաբնակութիւնը զսպուած պահելու անհրաժեշտութեամբ:

Հիմա ալ երգին եղանակը կը փոխեն: Ինչպէս կ՚երեւնայ, թիւրք բռնապետութիւնը ամբողջ զօրաբանակներ չարժուն վիճակի մէջ կը դնէ, մեծաքանակ ռազմամթերքներ եւ զէնքեր կ՚ամբարէ պատրաստ ըլլալու համար ... հայ յեղափոխականներու դէմ:

Այսպէս այս անգամ ալ երգը կու գայ Բերլինի թիւրք դեսպանէն: "A. F. Press"-ի (Ֆրանսիական լրատվական գործակալություն:- Հ. Ս.) Բերլինի թղթակցին նայելով՝ Բերլինի դեսպանը վճռականապէս հերքեր է Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւններուն չչուկները եւ առանց հակասութեան մէջ իյնալու վախին, աւելցուցեր է, որ Բ. Դուռը զէնքի կանչեր է, այո՛, քանի մը զօրաբանակներ, բայց կռուելու համար ... հայ յեղափոխական չարժման դէմ:

Ո՛վ զօրեղ հաւատք ունի, թո՛ղ հաւատայ»[1]:

Վորոնցով-Դաշկովը ոչ միայն երկրի ներքին, այլև արտաքին քաղաքականության խնդիրներում հանդես էր գալիս իբրև մի չափավոր, զգույշ ու հեռատես գործիչ, միաժամանակ մեծ անհանգստություն էր ապրում, երբ երկրի համար արտաքին վտանգն իրական կերպարանք էր առնում: Այդ դեպքում նա տագնապ էր բարձրացնում և Պետերբուրգի բարձր իշխանություններից համառորեն պահանջում արագ ու արդյունավետ միջոցներ ձեռնարկել:

Խնդրո առարկայի վերաբերյալ փոխարքայի՝ ցարին հղած նամակներից առաջինը գրված է 1908 թ. հունվարի 5-ին, Թիֆլիսում:

Վորոնցով-Դաշկովը նախապես նշում էր. «Ես խորապես գիտակցում եմ, որ ընդհանրապես Ռուսաստանի և մասնավո-

---

[1] ***«Երկրի ձայնը»*** *(Թիֆլիս), № 7, 2 մարտի 1908 թ.:*

բապես Կովկասի ներկա կացության տեսակետից առանձնապես անցանկալի է արտաքին մի որևէ բարդություն, բայց ... Թուրքերի պատերազմական արտակարգ պատրաստություններն ստիպում են երկյուղ տածել, որ մենք կարող ենք հանկարծակիի բերվել անսպասելի իրադարձություններից և այն՝ մանավանդ Թուրքիայի կողմից»[1]: Փոխարքան բերում էր Թուրքիայի ռազմական պատրաստություններից մի քանի օրինակներ. Կովկասին սահմանակից նրանց արևելյան նահանգներում ռազմական պատրաստություններն սկսվել են 1907 թ. գարնանից, բայց հատկապես լայն ծավալ են ստացել աշնանը: Այդ տարվա սեպտեմբերին համալրվել է Սեբաստիայի զորաբաժինը, ուժեղացվել է Էրզրումի բերդապահ զորքը, դեկտեմբերին զորակոչի են ենթարկվել Էրզրումի և Վանի պահեստի բրիգադներն ու համիդիե գնդերը: Դաշտային թնդանոթներն արագորեն կարգի են բերվում և համալրվում են ձիերով, համարյա ամեն օր Էրզրումի բերդը լցվում է հրանոթներով ու արկերով: Կովկասի սահմանագլխին տեղակայված 6 զորամասերը համալրվել են 36 արագաձիգ հրանոթներով և մեծ տեսակի 19 հազար «Մաուզեր» տիպի հրացաններով: Վերջապես, այս տարվա հունվարի 1-ին հրաման է եղել զորակոչի ենթարկել Սեբաստիայի, Սամսոնի, Էրզրումի ու Վանի բրիգադների պահեստի գումարտակները և այլն: «Զինվորական այդ պատրաստությունները ո՛չ ըստ իրենց բնույթի և ո՛չ էլ ըստ ծավալի չեն կարող համարվել Թուրքիայի համար սովորական մի բան»[2]:

Նամակագիրն երկյուղում էր, որ տվյալ պահին Թուրքիան կարող է ուժերի գերակշռություն ստանալ և մեծ դժվարություններ պատճառել ռուսներին:

Իսկ ո՞րն է Թուրքերի եռանդագին նախապատրաստությունների նպատակը: Վորոնցով-Դաշկովը համոզված էր, որ այդ ամենը միտված է Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելուն: Օգտվելով այն բանից, որ ռուս-ճապոնական պատերազմում կրած դառը պարտությունից հետո Ռուսաստանը դեռ լիովին

---

[1] *РГИА, ф. 919, оп. 7, д. 8, л. 91.*

[2] *Նույն տեղում:*

ուշքի չի եկել, Թուրքերը մտադիր են պատերազմ սանձազերծելով՝ «վերադարձնել այն շրջանները, որ մենք գրավել ենք 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ»[1], ապա խուժել Անդրկովկաս:

Նկարագրելով Կովկասի սահմանների հարևանությամբ իրենց զինված ուժերը հզորացնելուն ուղղված Թուրքերի ձեռնարկումները, Վորոնցով-Դաշկովը, միաժամանակ, մռայլ գույներով էր ներկայացնում ռուսական կովկասյան բանակի ուժը: Նա գրում էր. «... Մինչ Թուրքերը շատ եռանդուն միջոցների են դիմում իրենց ուժն ավելացնելու համար, մեր կողմից, ըստ երևույթին, բան չի արվում այդ ուղղությամբ, և մեր զորքերի ռազմական պատրաստության գործում կան պակասներ, որոնք գոյություն ունեին տասնյակ տարիներ առաջ: Թուրքիայի հարձակողական շարժման դեպքում, մենք կովկասյան ռազմաճակատում հանդես կգանք ավելի պակաս պատրաստված, քան էինք Հեռավոր Արևելքում»[2]:

Փոխարքան այնուհետև ինքնակալին պարզում է այն դժվարությունները, որոնք ի հայտ կգան Թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու դեպքում: «Մեր հակառակորդն ունենալու է ուժերի հսկայական գերակշռություն, և անգամ այն դեպքում, եթե կովկասյան բանակը կարողանա ժամանակին զորակոչի ենթարկվել, մանավանդ որ մեր զորքերի մի կարևոր մասը կարիք կլինի թողնել թիկունքում՝ կարգ ու հանգստություն պահպանելու համար ազգաբնակության, մանավանդ մահմեդական ազգաբնակության մեջ, ինչպես և պահպանելու երկաթուղին, հսկողական ծառայություններ վարելու և այլն, չի կարելի երբեք ենթադրել, որ պատերազմի հայտարարությամբ՝ շրջանի զորքերի թիվն արագ կերպով կաճի. երկաթուղիների փոխադրական անբավարար վիճակը թույլ չի տա օգտվել դրանցով խոշոր քանակությամբ զորամասեր տանելու դեպի սահմանամերձ վայրերը, մանավանդ եթե նկատի առնենք պահեստի զինվորների այն հսկայական թիվը, որ կարիք կլինի

---

[1] *РГИА, ф. 919, оп. 7, д. 8, л. 91.*

[2] *Նույն տեղում, թ. 101:*

փոխադրել ոչ միայն մեր չրջանից, այլև Ռուսաստանի ներքին նահանգներից: Բացի այդ, կա նաև ապրանքների փոխադրության հարցը: Համենայնդեպս, պատերազմ հայտարարելու օրից սկսած՝ մինչև ամիս ու կես և երկու ամիս՝ կովկասյան զորքերը պետք է ապավինեն միայն իրենց սեփական ուժերին»[1]:

Շարունակության մեջ Վորոնցով-Դաշկովը բարձրացնում է կովկասյան բանակի սպառազինության պակասը լրացնելու, հետևակային զորամասերի մարտունակությունը բարձրացնելու, բերդերի դրության, կապի ու փոխադրումների արդիականացման և ռազմատեխնիկական այլ հարցեր:

Ամփոփելով իր առաջարկությունները՝ փոխարքան նամակը վերջացնում է այսպես. «Ուստի չափազանց անհրաժեշտ է այժմ ուժեղացնել Կովկասը ներքին Ռուսաստանի զորքերով, արագացնել թնդանոթային մասերի զինավառությունը, լրացնել պահեստները և բարձրացնել բերդերի պաշտպանողական հատկությունը: Միայն այդ պայմաններում մեզ համար վտանգ չեն ներկայացնի Թուրքիայի պատրաստությունները, և, անխուսափելի անհրաժեշտության դեպքում, կովկասյան զորքերը պատվով կպաշտպանեն Ռուսաստանի արժանապատվությունը և իրենց հին ավանդույթները»[2]:

Ամենայն հավանականությամբ՝ Կովկասի փոխարքայի այս տագնապահարույց նամակը ճնշող տպավորություն է գործում Նիկոլայ II-ի վրա, ուստի պատահական չէ, որ նույն 1908 թ. հունվարին Ռուսաստանի կառավարությունը դիմում է Բարձր Դռանը՝ փորձելով պարզել, թե Թուրքիայի արևելյան նահանգներում ինչո՞ւ են ռազմական պատրաստություններ տեսնվում: Թուրքական կառավարությունն անմիջապես պատասխանում է Պետերբուրգի հարցմանը և հղում խաղաղասիրական հավաստիացումներ:

Ռուսական կառավարությունը և գլխավոր շտաբը բազմիցս քննարկում են Բարձր Դռան պատասխանը և ընդունում հանգստացուցիչ որոշումներ: Պետական անվտանգության

---

[1] *РГИА, ф. 919, оп. 7, д. 8, л. 104.*

[2] *Նույն տեղում, թ. 109:*

խորհրդի՝ 1908 թ. հունվարի 28-ին ընդունած որոշման մեջ ասվում էր, որ բանակը պատրաստ չէ պատերազմի, ուստի ամեն ինչ պիտի անել խուսափելու համար Թուրքիայի հետ ռազմական ընդհարումից: Ինչպես Պետական անվտանգության խորհուրդը, նույնպես և կառավարությունն անհետևանք են թողնում Կովկասի փոխարքայի՝ սթափության կոչող դիմումը ցարին:

Տեղեկանալով կառավարության բռնած «խաղաղասիրական» դիրքի մասին՝ Վորոնցով-Դաշկովը 1908 թ. փետրվարի 28-ին իր երկրորդ նամակն է գրում Նիկոլայ II-ին, որում կրկին քննության է առնում հավանական պատերազմի հետ կապված հարցերը, դարձյալ ու դարձյալ պնդում կովկասյան բանակի արագ վերակառուցման, դա նորանոր զորամասերով համալրելու և այդ նպատակով, առանց ուշացնելու, անհրաժեշտ միջոցներ հատկացնելու վրա[1]: «... Պարտք եմ համարում դիմելու Ձերդ Կայսերական Մեծության, խնդրելով Ձեզնից հրամայել, որ կովկասյան բանակին տրվի այն, ինչ որ նրան անհրաժեշտ է, որպեսզի նա կարողանա օգտակար կերպով արյուն թափել իր ցարի և հայրենիքի համար»[2]:

Փոխարքան ավելի քան համոզված էր, որ «չնայած Թուրքիայի հավաստիացումներին իր՝ դեպի Ռուսաստանը տածած բարեկամության մասին, նրա զորակոչը շարունակվում է, և որևէ այլ բացատրություն չի կարելի տալ դրան, քան այն, որ թուրքերը կռվի են պատրաստվում մեր դեմ: Բայց հազիվ թե Թուրքիան որոշի պատերազմ սկսել՝ առանց մի երկրորդ ուժեղ պետության իրական օգնության վրա հավատացած լինելու»[3],- իր նամակում չեշտում էր Կովկասի փոխարքան, միաժամանակ նշում, որ Թուրքիային այդպիսի օգնություն կարող են ցույց տալ Գերմանիան և Ճապոնիան, ուստի դիվանագիտական լայն գործունեություն պետք է ծավալել Թուրքիային նրանց աջակցությունից զրկելու համար: «Ի դերև հանել Թուրքիայի՝ դաշնակից

---

[1] *РГИА, ф. 919, оп. 7, д. 8, л. 110.*

[2] *Նույն տեղում, թ. 112:*

[3] *Նույն տեղում, թ. 114:*

ունենալու հույսերը՝ դա մեր դիվանագիտության գործն է»[1]:

Բայց նույնիսկ այդ դեպքում, նշում էր Վորոնցով-Դաշկովը, հավանական է, որ Թուրքիան՝ «վերջնականապես ավարտած իր զորակոչը և սպառազեն կանգնած մեր սահմանների մոտ, ծախսած լինելով արդեն հսկայական միլիոններ և տեղյակ մեր կովկասյան բանակի վիճակին, այնուամենայնիվ, կխիզախի հարձակվել մեզ վրա, հույս ունենալով վերադարձնել իր կորցրած հողերը»[2]: Ըստ որում՝ փոխարքան համոզված էր, որ, պատերազմ ծագելու դեպքում Թուրքերն Անդրկովկասում առաջ են բերելու համիսլամական ապստամբություն՝ ամբողջ երկրամասն Օսմանյան կայսրությանը միացնելու համար: Ընդհանուր զորակոչի ժամանակ անխուսափելիորեն տեղի ունեցող մտքերի հուզման և անպայմանորեն գոյություն ունեցող մոլեռանդության պայմաններում չի կարելի ուշադրություն չդարձնել հարցի նաև այս հոգեբանական կողմի վրա»[3]:*

Ահա՛ այսպիսին էր Վորոնցով-Դաշկովի՝ 1908 թ. ձմռանը Նիկոլայ II-ին գրած երկու նամակների բովանդակությունը: Որ այդ նամակները որոշակի ազդեցություն են ունեցել ցարի վրա և պատճառ դարձել համապատասխան եզրակացությունների, երևում է թեկուզ այն բանից, որ նա 1908 թ. փետրվարի վերջերին գլխավոր շտաբի պետ գեներալ Պոլիցինին թույլատրել էր առանց կառավարության և ռազմական նախարարի գիտության զորակոչի ենթարկել Եվրոպական Ռուսաստանում տեղակայված մի քանի զորախմբեր ու դրանք կենտրոնացնել Կովկասի սահմաններում: Շտաբի պետը ցարից ստացել էր նաև կարգադ-

---

[1] *РГИА, ф. 919, оп. 7, д. 8, л. 114.*

[2] ***“Красный архив”**, т. 7 (26), 1928.*

[*] *Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն ռուս բթամիտ բյուրոկրատների, որոնց առավել տհաս ներկայացուցիչներից մեկը իշխան Գոլիցինն էր իր բացահայտ թուրքասիրությամբ, Վորոնցով-Դաշկովը ճիշտ էր ըմբռնել կովկասյան թուրքերի նշանակությունը օսմանյան վտանգի կապակցությամբ: Նա կասկած չուներ, որ Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում սրանք ամեն տեսակ օգնություն են ցուցաբերելու իրենց օսմանցի եղբայրներին և համատեղ ուժերով փորձելու են ռուսներից «մաքրել» Անդրկովկասը:*

[3] ***“Красный архив”**, т. 7 (26), 1928.*

րություն՝ եթե Թուրքիան ուժեղացնի իր զորքերի համախմբումը Անդրկովկասի սահմանամերձ շրջաններում, ապա պատրաստ լինել նրա դեմ սկսելու ռազմական գործողություններ:

Նիկոլայ II-ի այդ կտրուկ կարգադրությունից հետո ռուսական կառավարությունն սկսեց տեղից շարժվել: Պետերբուրգն իր հայացքն ուղղեց Անդրկովկասի հայության և հատկապես ՀՅ դաշնակցության կողմը՝ որպես հակաթուրքական պատերազմի նշանակալի պահեստի:

Լեոն գրում էր. «Թեև ռուս կառավարությունը մի կողմից աշխատանք էր տանում Դաշնակցությունը ոչնչացնելու համար, բայց մյուս կողմից կովկասյան բանակի շտաբը մտածում էր պատերազմի դեպքում օգտվել դաշնակցական զինվորությունից՝ առաջապահ-հետախուզական ծառայության համար»[1]:

Ստոլիպինյան ռեակցիան այդ ժամանակ իր վճռական հարվածները դեռ չէր ուղղել ՀՅ դաշնակցության դեմ՝ նրան վերջնականապես ջախջախելու մտադրությամբ: Այդ փորձը նա անելու էր 1908 թ. վերջից: Ավելին, ռուս-թուրքական հարաբերությունների սրման պայմաններում ռուսական իշխանությունները փորձեր էին անում ՀՅԴ-ի հետ համագործակցության եզրեր գտնելու:

1908 թ. մարտի սկզբներին Կովկասում լուր էր տարածվել, թե շուտով պատերազմ է սկսվելու մի կողմից Ռուսաստանի ու Բուլղարիայի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև: Ասում էին, թե մշակված ռազմական ծրագրի համաձայն՝ Բուլղարիան պետք է Թուրքիայի վրա հարձակվեր Մակեդոնիայի կողմից, իսկ ռուսական զորքերը Կովկասից առաջանալու էին՝ խնդիր ունենալով գրավել Էրզրումի վիլայեթը: Պետերբուրգի կառավարությունը մեծաքանակ ռազմամթերք էր ուղարկում կովկասյան սահմանգլուխ և ընտիր զորամասեր կենտրոնացնում Կարս քաղաքի շրջանում[2]:

Պետերբուրգն ուզում էր իմանալ, թե այդ կարևոր պահին

---

[1] **Լեո**, Անցյալից. հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 224:

[2] **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, Պոսթըն, 1911, էջ 81:

Կովկասի հայությունն ի՞նչ դիրք կբռնի, եթե չուտով ռուս-թուրքական պատերազմ բռնկվի: Լինելով երկրամասի երեք խոշոր ազգերից մեկը՝ նա կարող էր մեծ ազդեցություն ունենալ պատերազմի ընթացքի վրա: Այդ նպատակով, արտաքին գործերի նախարարության առաջարկով, Պետերբուրգի զինվորական գլխավոր շտաբը մարտի կեսերին զինվորական և քաղաքացիական անձանցից կազմած հատուկ պատվիրակություն ուղարկեց Անդրկովկաս, որին հանձնարարված էր այդ հարցով ամենից առաջ հարաբերության մեջ մտնել ՀՅ դաշնակցության ղեկավար մարմինների հետ՝ պարզելու համար կուսակցության վերաբերմունքն առաջիկա ռազմական հնարավոր բախման նկատմամբ[1]:

Պետերբուրգից եկած պատվիրակությունը սիրալիր դիմումներ արեց ՀՅ դաշնակցության ղեկավարությանը, չմոռանալով արտահայտել իր չոայլ համակրանքը հայ ժողովրդի և Դաշնակցության հանդեպ:

Դաշնակցությունը տվեց իր պաշտոնական պատասխանը՝ առաջիկա պատերազմում կուսակցության բռնելիք դիրքը կախված կլինի այն բանից, թե ռուսական կառավարությունն ինչպե՞ս է պատկերացնում թուրքահայերի քաղաքական հարցի լուծումը[2]:

Սակայն Ռուսաստանի և Թուրքիայի միջև զինված ընդհարումն այդ թվականին տեղի չունեցավ: Դա հետաձգվեց մի քանի տարով:

Մեծ համակրանք ունենալով Վորոնցով-Դաշկովի նկատմամբ՝ Նիկոլայ II-ը միաժամանակ անառարկելի վստահություն էր տածում փոխարքայի անձնական հակառակորդ Ստոլիպինի հանդեպ, բարձր գնահատում գահը պաշտպանելու վերջինիս կամքն ու վճռականությունը: Ուստի կասկած չի կարող լինել, որ նա վարչապետին ծանոթացրել էր Կովկասի փոխարքայի՝ իրեն ուղղված նշված երկու նամակներին:

Բանն այն էր, որ Ստոլիպինը Կովկասին սպառնացող վտան-

---

[1] **Է. Ակնունի**, Բողոքի ձայն, էջ 81:

[2] Նույն տեղում:

գը տվյալ դեպքում տեսնում էր ոչ թե դրսից՝ Թուրքիայից, այլ ներսից՝ «ներքին թշնամուց»: Իսկ Կովկասում գահի ներքին թշնամիներից ամենագլխավորը, ինչպես նշեցինք, նա համարում էր կովկասահայությանը և հատկապես ՀՅ դաշնակցությանը, որոնց նկատմամբ ունեցած բացահայտ ատելությունը նա կրկին դրսևորել էր 1907 թ. ապրիլի 11-ի թվով Վորոնցով-Դաշկովին գրած նամակում:

ՊՅՈՏՐ ՍՏՈԼԻՊԻՆԻ ԵՎ ԻԼԱՐԻՈՆ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կովկասի մասին միատեսակ կարծիք չկար կառավարական շրջաններում, ավելին, Ստոլիպինի կառավարության և Կովկասի փոխարքայության կառավարչության միջև մեծ անհամաձայնություններ կային երկրամասի վիճակի գնահատման, այնտեղ կիրառվող քաղաքականության մի քանի սկզբունքային հարցերում:

Այդ անհամաձայնությունը մասնավորապես իր արտահայտությունն էր գտել 1908 թ. Պյոտր Ստոլիպինի և Իլարիոն Վորոնցով-Դաշկովի միջև պաշտոնական գաղտնի գրագրության մեջ, որն առաջին անգամ տպագրվել է "Красный архив"-ում*:

Կովկասյան ծայրամասում ցարական կառավարության վարած քաղաքականության մասին վարչապետ ու ներքին գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպինի և Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի նամակագրությունն սկզբունքային բանավեճի բնույթ էր կրում:

---

* Նշված գրագրությունը ժամանակին (30-ական թվականների սկզբին) տպագրվել է նաև սփյուռքահայ մամուլում («Հայրենիք» ամսագիր, «Յուսաբեր» և այլ լրագրեր): Այդ արձագանքներին վերաբերող նյութերի մի մասը պահպանվում է Մատենադարանում (տե՛ս Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 40, վավ. 65[1346]):

Գրագրության նախաձեռնողն եղել էր Ստոլիպինը, որը 1908 թ. ապրիլի 11-ին գրել էր առաջին նամակը[1], ուր հայտնել էր իր մտահոգությունները «երկրամասում տիրող անբարեհույս քաղաքական մթնոլորտի» կապակցությամբ:

Նամակը գրելու ժամանակ Ստոլիպինը անսահման ազդեցություն ուներ երկրում, կարելի է ասել՝ Ռուսաստանի իշխող դասակարգերի իսկական կուռքն էր, քանզի անվերապահորեն նրան էր վերագրված հեղափոխությունը ճնշողի և երկրում «կարգ ու կանոն» հաստատողի փառքը: Նրա հեղինակությունն ու ազդեցությունը զգացվում են նաև Վորոնցով-Դաշկովին հղած ապրիլի 11-ի նամակից, որը գրված է բավականին խիստ ու կտրուկ, խրոխտ ու մի քիչ էլ ամբարտավան ոճով, թեև արտաքուստ պահպանված է պահանջվող պատշաճությունը: Դա երևում է թեկուզ այն բանից, որ նամակում կառավարության նախագահը ոչ մի անգամ չի գործածում «փոխարքա» (наместник) բառը՝ դա փոխարինելով «Կովկասի տեղական իշխանություն» բառակապակցությամբ:

Արդեն առիթ ենք ունեցել ասելու, որ համեմատած իր նախորդի՝ իշխան Գոլիցինի և նույնիսկ հետնորդի՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովի հետ, Վորոնցով-Դաշկովը կողմնակից էր համեմատաբար զիջող գործելակերպի, իհարկե, ինքնակալության կողմից թույլատրելիության սահմաններում: Միանգամայն իրավացի էր «Հայրենիք» ամսագրի հոդվածագիրը, նշելով, որ «նրա օրով հաստատուած մեղմ ռեժիմը ոչ մի համեմատութեան մէջ չի կարելի դնել իշխան Գոլիցինի անմիտ ու յիմարական հալածանքների ու բռնութիւնների հետ, որոնց տակ հեծում էին Կովկասի ժողովուրդները»[2]:

Այժմ նույնպես, 1908-ին, Վորոնցով-Դաշկովը մնացել էր նույն բարեկիրթ անձնավորությունը: Նրան առաջվա պես ուժ

---

[1] Տե՛ս **"Красный архив"**, т. 3 (34), 1929, с. 187-227.

[2] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (79), մայիս, 1929, էջ 31:

էին տալիս ոչ միայն անձնական մտերմությունը Նիկոլայ II-ի հետ, այլև Կովկասում նրա հեղինակությունը: Ցարը նախկինի նման բարձր էր գնահատում և բազմակողմանի աջակցում փոխարքային:

Ստոլիպինի նամակի հիմնական տրամաբանությունն այն էր, որ Կովկասում Վորոնցով-Դաշկովի վարած քաղաքականությունը չափից ավելի մեղմ է, ուստի և նրա համար հրամայական անհրաժեշտություն է իր օրինակին հետևելը:

Իսկապե՞ս մեղմ էր այդ քաղաքականությունը, ինչպես կարծում էր Ստոլիպինը: Իհարկե, Կովկասի նկատմամբ կենտրոնական կառավարությունը չէր կարողանում այնպիսի լայնածավալ ճնշումներ կատարել և զանգվածային արյունալի հաշվեհարդարներ տեսնել, ինչպես Ռուսաստանի ներքին նահանգներում: Բայց թե՛ Ստոլիպինը և թե՛ Վորոնցով-Դաշկովը հավասարապես ընդունում էին հեղափոխական շարժումների դեմ պայքարելու և այդ պայքարի ընթացքում ամենախիստ միջոցներ գործադրելու անհրաժեշտությունը: Երկուսն էլ միապետության բոլորանվեր պաշտպաններ էին, ցարի անձնուրաց հավատարիմներ: Ստոլիպինի այնքան փայփայած ռազմադաշտային դատարանները նույնքան մոլեգնորեն գործում էին Կովկասում: Ամբողջ տարբերությունը Պետերբուրգի և Թիֆլիսի միջև այն էր, որ փոխարքան խստագույն միջոցների հետ մեկտեղ գտնում էր, որ հավատարիմ տարրերի նկատմամբ պետք է մի քիչ ավելի զգույշ լինել և խստություններին այնքան էլ հախուռն թափ չհաղորդել[1]:

Դա, ինչպես ասացինք, թելադրված էր նրա համեմատաբար ազատական գաղափարներով և դաստիարակությամբ:

Ստոլիպինի՝ Կովկասի փոխարքային ուղղված ապրիլի 11-ի նամակում արտահայտված հիմնական մտահոգությունը ՀՅ դաշնակցությունն էր: Նա գրում էր, թե Կովկասում վերջին երկու տարիներին մեծ ծավալներ են ընդունել ոճրագործությունները, որ միայն 1907 թ. այնտեղ տեղի է ունեցել ահաբեկ-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 5 (89), մարտ, 1930, էջ 82:

չական 3060 դեպք, որի հետևանքով սպանվել է 1239 և վիրավորվել 1253 մարդ: Ահաբեկման դեպքերից 1731-ը տեղի են ունեցել կողոպուտի նպատակով[1]:

Այնուհետև Ստոլիպինն անցնում է 1905-1907 թթ. Կովկասում տեղի ունեցած հեղափոխական շարժմանը, որը, նրա ասելով, սկսվել էր Երևանի նահանգից, իսկ այնտեղից արագորեն անցել էր Բաքու, Թիֆլիսի և Գանձակի նահանգները, վերջապես նաև՝ Հյուսիսային Կովկաս: Վերջինիս դեպքում շարժման կենտրոն նա համարում էր Արմավիր քաղաքը, որը հիմնականում բնակեցված էր հայերով: Բանն այնտեղ էր հասել, շարունակում էր Ստոլիպինը, որ Արմավիրի հայերը տեղի ռուս ոստիկաններին իբր հեռացրել էին պաշտոններից և նրանց փոխարինել իրենց ազգության մարդկանցով, ընդսմին ոստիկանապետը նույնպես նշանակվել էր հայ[2]:

Այլ խոսքով, ըստ ռուսական կառավարության նախագահի, ամբողջ Կովկասում տեղի ունեցած հակապետական խռովությունների գլխավոր մեղավորը եղել են հայերը և այդպիսին էլ մնում են այժմ: Կովկասի այլազգիներից ամենից առաջ անհրաժեշտ է պայքար մղել հայերի դեմ – ահա՛ Ստոլիպինի հիմնական պահանջը, որ նա ներկայացնում էր Վորոնցով-Դաշկովին, որին փաստորեն մեղադրում էր հայերի և Դաշնակցության նկատմամբ աչառու լինելու մեջ:

Ստոլիպինի 1908 թ. ապրիլի 11-ի նամակին Վորոնցով-Դաշկովը պատասխանում է մեծ ուշացումով՝ նույն տարվա հուլիսի 23-ին:

Պատասխան նամակում փոխարքան տեղի էր տալիս Ստոլիպինի շատ տեսակետների ու առաջարկությունների առաջ: Եվ դա ուներ իր պատճառները՝ նա գտնվում էր իր անվան շուրջը պտտվող սաղրիչ զրույցների ամենօրյա ճնշման տակ, ենթակա էր քաղաքական հակառակորդների չդադարող հարձակումներին:

---

[1] Տե՛ս *"Красный архив"*, т. 3 (22), 1927, с. 181.

[2] Նույն տեղում, էջ 188-202:

Կովկասի փոխարքան, ի պատիվ իրեն, մերժում էր Ստոլիպինի հարուցած մեղադրանքների զգալի մասը: Նամակի հենց սկզբից երևում են նրա կտրուկ անհամաձայնությունները կառավարության նախագահի հարուցած մի չարք անարդարացի մեղադրանքների նկատմամբ: Նամակի առաջին տողերից իսկ երևում է, որ փոխարքան վիրավորված է Ստոլիպինի նամակի ոճից, և հասկացնել է տալիս, որ դա է եղել պատճառը, որ ինքը մոտ երեք և կես ամիս հետո է պատասխանել նրան:

Ահա՛ այդ հետաքրքիր նամակի սկիզբը.

«Ողորմած Տեր Պյոտր Արկադևիչ.

Ի պատասխան Ձերդ Բարձր Գերազանցության այս տարվա ապրիլի 11-ի № 64885 նամակի պարտք եմ համարում հայտնելու, որ այդ նամակում մեջբերված տվյալները, որ ներքին գործերի նախարարությունը ձեռք է բերել կովկասյան ծայրամասի քաղաքական կացության, այնտեղ աճող հանցագործության և տեղական իշխանությունների՝ այդ հանցագործությունները զսպելու և կանխելու համար ցույց տված գործունեության մասին, զուրկ են մեծ մասամբ պատշաճ լավատեղյակությունից երկրում տիրող իրերի իսկական կացության նկատմամբ, որի պատճառով ծագել են և մյուս սխալները – տեղական պաշտոնական անձնավորությունների գործունեության անճիշտ բնութագրումը, մասնակի դեպքերի սխալ լուսաբանությունը և միանգամայն անհիմն ամբաստանությունը, թե ոստիկանական իշխանությունը անգործունյա է գտնվել: Նամակի մեջ բերված մասնակի դեպքերը հիշատակված են առանց պատճառական կապակցության մեջ դնելու նախորդ իրադարձությունների, երկրում տիրող պայմանների և միջավայրի հետ, որի մեջ իր գործունեությունն է կատարում կովկասյան վարչությունը: Ես վստահ եմ, որ եթե նույն ձևով նկարագրվեր մեր զույգ մայրաքաղաքների, Կովկասի մեծության համապատասխան ներքին Ռուսաստանի որևէ մի շրջանի, էլ չեմ ասում Մերձբալթյան և Մերձվիսլայան նահանգների վարչական մարմինների գործունեությունը և այն էլ Ձերդ Բարձր Գերազանցության նամակում հիշատակված ժամանակաշրջանի նկատմամբ (նկատի ունի 1903-1907 թթ. ժամանակաշրջանը:- Հ. Ս.), ապա անկասկած է,

որ պատկերն ավելի պակաս չէր լինի, չնայած որ ներքին նահանգներում ռուսական վարչության գործունեությունը դրված է, թե՛ նյութական և թե՛ անձնակազմի տեսակետով, շատ ավելի լավ պայմանների մեջ, քան Կովկասում»[1]:

Վորոնցով-Դաշկովը վարչապետի ուշադրությունը հրավիրում է նաև այն հանգամանքի վրա, որ Ռուսաստանի ներքին, արևմտյան և հյուսիսարևմտյան նահանգների ազգաբնակչության համեմատ՝ կովկասցիներն իրենց մշակութային վիճակով և իրավահայեցողության զարգացման մակարդակով գտնվում են ավելի ցածր աստիճանի վրա, որը և պայմանավորում է այստեղ ոճրագործությունների համեմատաբար բարձր տոկոսը[*]:

Պակաս կարևոր չէ, գրում էր նա, որ Ռուսաստանի նշված նահանգների համեմատ Կովկասի տեղագրական պայմանները շատ տարբեր են. այստեղ բացակա է կանոնավոր հաղորդակցությունը բնակավայրերի միջև, որը նույնպես լուրջ խոչընդոտներ է ստեղծում հասարակական կարգը պահպանելու տեսակետից[2]:

Փոխարքան կարևոր էր համարում ըմբռնել, որ կովկասցիները դյուրազգաց են ու զգացմունքային, երևույթներին հակազդում են անմիջապես և կրքոտ:

---

[1] ***"Красный архив"**, т. 3 (22), 1927, с. 202-203.*

[*] *Հակադարձելով ռուս այն գործիչների տեսակետին, թե կովկասցիների չրջանում հանցագործությունների բարձր տոկոսի պատճառը նրանց քաղաքակրթական ցածր մակարդակն է, Ալ. Խատիսյանը մի առիթով գրում էր. «Երկու ժողովուրդներ, վրացիներն ու հայերը, կարողացան կարճ ժամանակի մէջ հետեւիլ եւրոպական ազգերու օրինակին: Կասկած չունիմ որ, եթէ մենք ալ պետական ազատ պայմաններու մէջ լինէինք, այսօր պիտի դասուէինք քաղաքակիրթ ազգերու շարքին: Որքան որ ես կը ճանչնամ Կովկասի մեր երկու ժողովուրդները, ծանօթ եմ անոնց պատմութեան, ականատես եղած եմ անոնց տանջանքին, թշուառութեան եւ ուրախութեան, վստահօրէն պիտի պնդեմ, որ անոնց բացասական բոլոր գիծերը կու գան օտար պետութիւններու բռնութենէն: Երբ վերանայ այդ բռնութիւնը եւ մեր երկու ժողովուրդները իրենց ճակատագրին տէր դառնան, շատ բացասական գիծեր պիտի վերանան մեր մէջէն» (տե՛ս **«Հայրենիք»**, № 9 (117), հուլիս, 1932, էջ 97–98):*

[2] *Տե՛ս **"Красный архив"**, т. 3 (22), 1927, с. 203.*

Կովկասում կատարվող դեպքերը գնահատելիս պետք է լրջորեն հաշվի առնվեն նշված բոլոր գործոններն ու առանձնահատկությունները,- գրում էր Վորոնցով-Դաշկովը:

Անցնելով Կովկասում տեղի ունեցած ահաբեկչական դեպքերի վիճակագրությանը, որ Ստոլիպինը բերել էր իր նամակում, փոխարքան դա համարում էր շատ չափազանցված: Ստոլիպինի նշած 3060 ահաբեկչության փոխարեն, որ, իբր, 1907 թ. ընթացքում կատարվել է Կովկասում, նա նշում էր միայն 698 դեպք, որոնց հետևանքով սպանվել էին 183 պաշտոնյաներ և 212 մասնավոր անհատներ, վիրավորվել 90 պաշտոնյաներ և 213 անհատներ[1]:

Այնուհետև Վորոնցով-Դաշկովն իր նամակում անցնում է Ստոլիպինի չոչափած բուն խնդրին՝ Դաշնակցության հարցին, որին նվիրված է 15 էջ չարադրանքից 10 էջը: Դա հասկանալի է, որովհետև փոխարքան լավ էր ըմբռնել, որ Ստոլիպինի բուն մտահոգությունը հենց այդ կուսակցությունն է: Նա սկզբունքորեն չէր հերքում ՀՅ դաշնակցության մասին Ստոլիպինի տեսակետները, գտնում էր, որ, այո՛, հայերի մեջ պետք է արմատախիլ անել հեղափոխական շարժումը, բայց ոչ թե այն նույն եղանակներով, որ կիրառվում են Ռուսաստանի ներքին նահանգներում, այլ այդ մեթոդները միավորելով դիվանագիտական մոտեցումներին՝ հաշվի առնելով Կովկասի առանձնահատկությունները:

Փոխարքան վճռականապես մերժում էր Ստոլիպինի այն մեղադրանքը, թե Դաշնակցությունն ունի բազմահազարանոց բանակ, որի առջև վախից ընկրկում է կովկասյան վարչությունը, ուստի նրան զինաթափելու համար որևէ միջոց չի ձեռնարկում:

Իր տեսակետը հիմնավորելու և իրերի դրությունը պարզաբանելու համար Վորոնցով-Դաշկովը չոչափում է Դաշնակցության վերաբերյալ մի քանի ընդհանուր հարցեր: Անդրադառնալով Հայ եկեղեցու կալվածքները պետականացնելու՝ 1903 թ. հունիսի 12-ին հրապարակված ցարական օրենքից

---

[1] ***"Красный архив"**, т. 3 (22), 1927, с. 203-204.*

հետո Դաշնակցության գործունեությանը, ապա 1905–1906 թթ. Անդրկովկասում թուրք–հայկական ընդհարումներում նրա խաղացած դերին, փոխարքան նշում էր, որ 1903–1905 թթ. «Դաշնակցության ազդեցությունը հայ ազգաբնակչության վրա իրոք որ շատ մեծ է եղել», «Դաշնակցության լրությունը սահմաններ չուներ, և նրա իշխանությունը հասել էր իր գագաթնակետին: Այդ ժամանակ կազմակերպությունը միաձուլել էր, բառի բուն իմաստով, բովանդակ հայ ազգաբնակչությանը, կազմակերպել կատարյալ զինյալ ուժ, ստեղծել շատ խոշոր հիմնական դրամագլուխ: Հենց այդ ժամանակ էլ, ռուսական հեղափոխության ազդեցության տակ, դաշնակցականները միտք հղացան կանգնել կովկասյան ամբողջ հեղափոխական շարժման գլուխ, միացնել բոլոր ազգությունների հեղափոխական կուսակցությունները և նրանց բոլորին թելադրել իրենց նպատակները»[1]:

Բայց այժմ դրությունն արմատապես փոխված է, շեշտում էր փոխարքան: Դաշնակցության մասին կառավարության նախագահի ունեցած տեղեկությունները վերաբերում են նրա գործունեության 1903–1905 թթ. շրջանին և չեն համապատասխանում այսօրվա՝ 1908 թ. իրողություններին: Դաշնակցությունն արդեն կորցրել է վաղեմի ազդեցությունը հայկական զանգվածների վրա, որի հիմնական պատճառներից մեկը կուսակցության ներսում հակոտնյա խմբավորումների առաջացումն է 1906 թ. սկսած և նրանց միջև տեղի ունեցած անզիջում պայքարը[*]: *Ըստ Վորոնցով–Դաշկովի՝ այդ պայքարի հետևանքով ներկայումս Դաշնակցությունն այնքան է թուլացել, որ այժմ նրա մասին կարելի է խոսել միայն որպես երկրորդական կազմակերպության, որպես առանց զինվորների գեներալների մի խմբի: Դրանից հետևում է, գրում էր փոխարքան, որ մոտ ապա-*

---

[1] ***«Красный архив»**, т. 3 (22), 1927, с. 206.*

[*] *Փոխարքան նկատի ուներ 1906–ից Դաշնակցության ներսում «երիտասարդ դաշնակցականների» և «անջատական» շարժումների առաջացումն ու դրանց սկսած պայքարը կուսակցության ղեկավարության վարած քաղաքականության դեմ, որին հանգամանորեն անդրադարձել ենք սույն աշխատության նախորդ էջերում:*

գայում կարելի կլինի խոսել պատմության բեմից Դաշնակցության հեռանալու մասին[1]:

Դաշնակցության մասին իր ասելիքը Վորոնցով-Դաշկովը վերջացնում է այս խոսքերով. «Ձերդ Բարձր Գերազանցության նամակի եզրակացությունը, թե այդ կուսակցության գործունեությունը մշտապես աճում է տեղական իշխանությունների անգործունեության հետևանքով, թե Դաշնակցությունը նյութական ապահովություն է ձեռք բերել չնորհիվ հայ ազգաբնակչության վրա իր ունեցած և օրեցօր զորացող ու ամրապնդվող ազդեցության, որն իր հերթին մի սպառնալիք է պետական կարգի և հասարակական ապահովության համար – չի համապատասխանում իրերի իսկական դրությանը»[2]:

ՅԱՎԱԼԻ ԶՈՀԵՐ

Պատժիչ արշավախմբերը գործում էին անդադար: Մարդկային կյանքը Ռուսաստանում երբևէ այնքան անարժեք չէր եղել, ինչպես հիմա:

Ահա՛ բազում օրինակներից մեկը:

Նախորդ էջերում խոսք եղավ, որ խմբապետ Միհրանին ահաբեկելու համար Նիկոլ Դումանի կազմած խմբի ղեկավար Համբարձում Աղաջանյանը (Կարո) և անդամներ Սենիկ Աղաջանյանը, Գարեգին Հարությունյանը, Հայկ Բախչինյանը, Ասլան Գրիգորյանը, Մարտիրոս Գևորգյանը, օրիորդ Անահիտ Փարսադանյանը և Արմենակ Սիլվիյանը 1907 թ. աշնանը Յալթայի մոտերքում ձերբակալվել էին Միհրանի քրոջ որդուն սպանելու մեղադրանքով: Նույն գործով բանտարկվել էին ուրիշ չորս հայ ևս, մի ռուս երիտասարդ և երկու ռուս աղջիկ:

Ձերբակալվածներին տեղափոխում են Սևաստոպոլի բանտը: Գործը հանձնվում է զինվորական դատարանին: Դատավոր

---

[1] Տե՛ս *“Красный архив”*, т. 3 (22), 1927, с. 210 -211.

[2] Նույն տեղում:

է նշանակվում Վարշավայի զինվորական դատարանի նախագահը: Ձերբակալությունից ինն ամիս հետո, 1908 թ. մայիսի 19-ին և 20-ին, Սևաստոպոլում տեղի է ունենում դատը: Դատարանը քաղաքական բնույթ է հաղորդում գործին:

Յոթ հայ ամբաստանյալներից Մարտիրոս Գևորգյանը (Սարգսյան) դատավարության ընթացքում խոստովանել էր, թե ինքն է եղել Գասպար Նազարյանին սպանողը՝ հայտարարելով. «Ես նրա հետ սուր վիճաբանություն ունեցա Մասանդրյան գրոսայգում, և գրգռված ու սաստիկ զայրացած վիճակում՝ ատրճանակս հանեցի և կրակեցի երկու անգամ»:

Դատախազը հաշվի չառնելով այդ խոստովանությունը՝ ասել էր. «Մարտիրոս Սարգսեանը խոստովանեց, որ միակ յանցաւորն ինքն է, բայց ես հաստատ համոզուած եմ, որ յանցանքը գործել են բոլոր միւսներն էլ հաւաքաբար»[1]: Դատավորները ևս անուշադիր թողեցին խոստովանությունը: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ սկսված ստոլիպինյան համատարած ահաբեկչության պայմաններում՝ մի քանի հայի կյանքը որևէ արժեք չուներ:

Ընդունվում է դատավճիռ, որով կախաղանի միջոցով մահվան են դատապարտվում Կարոն (Համբարձում Աղաջանյան, 31 տարեկան), Մարտիրոս Գևորգյանը (Սարգսյան, 28 տարեկան) և Գարեգին Հարությունյանը (Կարապետ Ունանյան, 24 տարեկան): Հայկ Բախչինյանի պատիժն էր՝ ցմահ տաժանակիր աշխատանք և բանտ, Ասլան Գրիգորյանինը (Հովհաննիսյան) և Սենիկ (Սենեքերիմ) Աղաջանյանինը՝ ցմահ բանտ, Արմենակ Սիլվիյանը դատապարտվում է 18 տարվա տաժանակիր աշխատանքի, օր. Անահիտ Փարսադանյանը հեռացվում է Ղրիմի չրջանից և խիստ հսկողության տակ ուղարկվում իր ծննդավայր Շուշի[2]: Նրանց հետ ձերբակալված ռուս Պյոտր Բոդրովը և ուրիշ չորս հայերից երեքը նմանապես դատապարտվում են կախաղանի, բայց վերջին պահին, երբ Կարոյի, Մարտիրոսի և Գարեգինի հետ միաժամանակ կախաղան բարձրացնելու համար նրանք պիտի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (395), հունվար, 1959, էջ 10:

[2] Նույն տեղում, էջ 8:

հանվեին մահապարտի խուցերից, հայտնվում է բանտապետը և հաղորդում, որ այդ չորսի մահավճիռը փոխվել է ցմահ տաժանակիր աշխատանքի: Տաժանակրության են դատապարտվում նաև չորրորդ հայը՝ 15,5 տարով և երկու ռուս աղջիկները՝ Նինա Շիշլովան ու Մարիա Դոբուժինսկայան՝ առաջինը 20, երկրորդը՝ 18 տարով[1]:

Կախաղան հանվելուց 15 օր առաջ, հունիսի 9-ի թվով, Կարոն նամակ է գրում ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի ղեկավարներից Հարություն Շահրիկյանի (Նիթրա) և Լևոն Թադևոսյանի (Պապաչա, Զոփուոյան) անունով: Նամակի բովանդակությունը ցույց է տալիս, թե ինչպիսի հզոր, անկոտրում կամք է ունեցել հեղափոխականը[2]: Կախաղան հանվելուց րոպեներ առաջ Կարոն մահապարտի իր խցից գրում է երկրորդ և վերջին նամակը, գրում է ռուսերեն, որպեսզի բովանդակությունը հասկանալի լինի բանտապահին: Այդ կարճ երկտողում, որը հավանաբար դարձյալ ուղղված է եղել Նիթրային և Պապաչային, կարդում ենք.

«Սիրելի՛ք, գրում եմ ձեզ վերջին հրաժեշտի ողջույնս եւ խնդրում եմ յայտնել նոյնը բոլոր ինձ յիշողներին եւ խնդրում եմ չմոռանալ ինձ: Ես հանգիստ եմ, գնում եմ դէպի մահ, թէեւ ինձ չեմ համարում այդ մահուան արժանի: Եթէ կարող էք, մի՛ մոռացէք Լիդային»[3]:*

1908 թ. հունիսի 24-ի լույս 25-ի գիշերը Համբարձումը, Մարտիրոսը և Կարապետը կախաղան հանվեցին Սևաստոպոլի բանտի բակում, մյուսները քշվեցին Օրյոլի բանտ և Սիբիր:

Կախաղան հանվող դաշնակցական երիտասարդները մահը դիմավորեցին առանց խուճապի: Հանգիստ էր հատկապես Համբարձումը (Կարոն), որը, սակայն, ինչպես ցույց են տալիս նրա վերջին երկտողի «ինձ չեմ համարում այդ մահվան արժանի» խոսքերը, պարզ վկայությունն են այն բանի, որ ինքն իրեն

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (395), հունվար, 1959, էջ 9:

[2] Նույն տեղում, էջ 17-18:

* Հավանաբար՝ սիրած աղջիկը:

[3] **«Հայրենիք»**, № 1 (395), հունվար, 1959, էջ 18:

*անարժան էր գտել **նման** մահվան: Վրիժառուն կուզեր, որ իր մեռնելու տեղը լիներ բաց կռվում, բայց ոչ կախաղանի վրա, որն այնքան ստորացուցիչ էր և այնքան անարգական հեղափոխականի համար:*

Դատարանի տված պատիժները չէին համապատասխանում դատվածների մեղքին: Մեկ սպանվածի դիմաց երեք կախաղան հանվածներ և վեց հոգի՝ ցմահ բանտեր նետված ու աքսորավայրեր տաժանակրության քշված: Պարզ էր, որ այդ անողոք պատիժները բխում էին ստոլիպինյան քաղաքականության ընդհանուր տրամաբանությունից և նպատակ ունեին սարսափ տարածել հայ հեղափոխականների շրջանում:

Ռուսական սև մամուլը չարախնդաց ու ողջունեց «հայ ավազակներին» տրված խստագույն պատիժները: Ավելին, նա առիթը բաց չթողեց հերթական անգամ մեղադրելու Կովկասի փոխարքային, որ նա, իբր, փորձ է կատարել միջամտելու դատարանի գործերին և մեղմելու մահավճիռները:

ԹՈՒՐՔԻԱՆ ՄԵԾ ԴԵՊՔԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ: ԹՈՒՐՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

1907 թ. երկրորդ կեսը և 1908 թ. առաջին ամիսները կարելի է համարել մի կողմից Թուրքիայի հակասուլթանական ուժերի համախմբման, մյուս կողմից՝ հայերի նկատմամբ բռնաճնշումների հետագա սաստկացման ժամանակաշրջան:

Սուլթանական կառավարողների բռունցքը ծանրացած էր նաև կայսրության ոչ թուրք մյուս ժողովուրդների կյանքի վրա, թեև հայությունն երկրում ամենահալածվածն էր, ամենադժբախտը:

Այդ ժամանակահատվածում հայ գործիչներն ու եվրոպացի հայասերները չարունակում էին իրենց բազմաբնույթ ջանքերը՝ Հայկական հարցը կամ թշվառ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցը եվրոպական կառավարությունների ուշադրության ոլորտում պահելու համար:

Դժբախտաբար, բոլոր այդ ջանքերը, մարդասիրական ձգտումներն առաջվա պես ապարդյուն էին անցնում: Հայաստանի դրությունը օրեցօր ավելի էր վատթարանում: Եվրոպացի հայասերների ամեն մի կոչ, հօգուտ հայերի ամեն միջամտություն, թուրքական վայրագ վարչակարգը խարազանող Ժորեսի, Պրեսանսեի և այլոց ամեն մի ճառ իրենց հակազդեցությունն էին ունենում Հայաստանում և թուրքական իշխանությունների նորանոր ոճիրներ առաջ բերում:

ՈՒԺԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՏԵՎԱԿԱՆ ՋԱՆՔԵՐ

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորումից անցել էր չուրջ քառորդ դար, և այդ ամբողջ ժամանակաշրջանում հայկական քաղաքական ուժերը քիչ եռանդ չէին գործադրել հարաբերությունների մեջ մտնելու Օսմանյան կայսրության հակասուլթանական ընդդիմադիր տարրերի հետ և համատեղ հանդես գալու երկրի բարենորոգման համար:

Դեռ 1891 թ., երբ Դաշնակցությունը նոր էր հիմնադրվել և դեռևս չուներ իր տպագիր օրգանը, հրատարակել ու տարածել էր իր քաղաքական պայքարին նվիրված մի թռուցիկ, ուր կային այսպիսի տողեր. «Կռիւը սկսուած է՝ կռիւ ազատութեան, կռիւ գոյութեան համար: Մի կողմից դարերով տանջուած ժողովուրդը, միւս կողմից ոտից ց՛գլուխ ապականուած, քայքայուած թուրք կառավարութիւնը»[1]:

Ակնհայտ է, որ այստեղ «դարերով տանջված ժողովուրդ» բառակապակցության տակ կազմակերպությունը նկատի ուներ ոչ միայն հայ, այլև կայսրության ժողովրդին:

ՀՅ դաշնակցության առաջին ընդհանուր ժողովում (1892 թ.) ընդունված ծրագրում տեղ էր գտել հետևյալ դրույթը.

«Տարբեր ազգութիւնների եւ դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առջեւ

---

[1] **«Դրօշակ»,** № 11 (177), նոյեմբեր, 1906, էջ 161:

Դաշնակցութիւնը՝ ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար (քաղաքական եւ տնտեսական ազատութեան Թուրքաց Հայաստանի մէջ) կազմակերպում է յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան դէմ անընդհատ եւ զօրեղ կռուի հետ՝ կռիւ պիտի մղեն նաեւ այն ընդհանուր պայմանների դէմ, որոնցից նեղւում են թէ՛ հայ եւ թէ՛ օտար տարրերը՝ ասորի, թուրք, քուրդ, եզդի եւ այլն»[1]:

Նույնիսկ հայկական տանջագրության և հուսախաբությունների ամենաղառն պահերին ու ամենավշտալի բոպեներին հայ հեղափոխականները չէին կորցնում իրենց հավատը ստրուկ ժողովուրդների միաբան գործակցության նկատմամբ: Հնչակյան և դաշնակցություն կուսակցությունները պարբերաբար դիմումներ էին հղում հարևան ժողովուրդների քաղաքական խմբերին և գործիչներին՝ միասին ծրագրելու և միասին գործելու: Կուսակցությունները, հատկապես Հնչակը, ազգայնամոլ չէին. դրանց ղեկավարներից որևէ մեկի մտքով չէր անցնում այն ցնորքը, թե կարելի է ստեղծել Մեծ Հայաստան՝ Միջերկրականի ափերից մինչև Դոնի Ռոստով – ինչպես կարծում էին Գոլիցինը և նրա համախոհները – կամ Թուրքերին քշել հայկական վեց վիլայեթներից, իսկ կովկասյան Թուրքերին՝ Անդրկովկասից – ինչպես տարածում էին Պոլսի և Բաքվի համիսլամականները: Հայ քաղաքական ուժերն այդ չրջանում չէին մտածում ստեղծել զուտ հայկական պետական միավոր, ուր հայը բաժանված, մեկուսացված լիներ Թուրքից ու քրդից: Նրանք փորձում էին հարևան ժողովուրդներին հաղորդակից անել իրենց տեսակետներին. մենք հայ ենք, բայց մեր ազգային հատկանիշները և քաղաքական ձգտումները չպետք է պարտադրենք ոչ ոքի, մենք հետևողականորեն կողմնակից ենք բոլոր ազգերի ազատության և թշնամի ենք բոլոր նրանց, ովքեր բռնաղատում են ուրիշ ազգերի իրավունքները, բոլոր ճնշված ազգերը մեր եղբայրներն են, լինեն նրանք հայ, եզդի, ասորի, հրեա, քուրդ թե արաբ, ամեն մի ազգի ազատությունը բռնակալության կործանման ազդակ է:

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 11 (177), նոյեմբեր, 1906, էջ 161:*

1880-ական թվականներից մինչև 20-րդ դարի սկիզբը հայերի կատարած նման կարգի ազդարարությունների արձագանքները հազվադեպ բացառություններ էին: Ռուբեն Տեր-Մինասյանի վկայակոչած առանձին փաստերը չէին փոխում ընդհանուր պատկերը: «...Մեր առաջին մարտական խմբի ղեկավարը դարձաւ ուտիացի Կուկունեանը, իսկ անոր իբրեւ զինուոր՝ ուրմիացի հրեայ մը, որուն անունը մոռցած եմ»[1]:

Կայսրության բոլոր ազգերը տանջվում ու կեղեքվում էին միասին, միասին էին կիսում կյանքի դառնությունները, բայց սուլթանական վարչակարգի դեմ հանդես էին գալիս միմյանցից լիովին բաժան, հետապնդում էին տարբեր նպատակներ և շահեր: Այլ խոսքով՝ նրանք իրար հետ հաչտ էին տանջվելիս և իրար հետ ոչ հաչտ՝ պայքարելիս:

Թուրքերի, քրդերի, ալբանացիների, հույների, արաբ դրուզների, արաբ ալևիների, ասորիների հետ գործակցելու հնչակյանների և դաշնակցականների բոլոր փորձերն ըստ էության անարդյունք վերջացան: Շուրջ երկու տասնամյակի ընթացքում թուրքական բռնապետության՝ հայերի նկատմամբ իրականացրած արյունալի հաշվեհարդարների հանդեպ նրանք մնում էին անտարբեր ու անշարժ, ավելին՝ նրանց մի մասը մնում էր թշնամի հայ և մակեդոնացի հեղափոխականներին, որոնք ձգտում էին բռնապետության վերացմանը և Թուրքիայի ներքին կյանքի բարեփոխմանը:

Երկրի բարեկարգման ու վերաշինության շահերը պահանջում էին հարստահարվող տարրերի միջև կամուրջներ գցել միասնաբար:

Դարասկզբից՝ վիճակը կարծես փոխվում էր: Կարծես հասունացել էր այն պահը, երբ միատեղ տանջվողները միատեղ էլ պիտի գործեին: Դարերի ստրկությունից հետո աստիճանաբար գլուխ էին բարձրացնում ասորիները, Եմենը մնում էր ապստամբ, գնալով ավելի ու ավելի մեծ ծավալներ էր ընդունում Պոնտոսի հույների անհնազանդությունը:

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 10 (297), հոկտեմբեր, 1950, էջ 49:*

Անդրադառնալով ստեղծված նոր պայմաններում ընդդիմադիր տարրերի հետ համագործակցելու ուղղությամբ Դաշնակցության անելիքներին, «Դրօշակը» գրում էր.

«Այժմ մենք – առանց մի վայրկեան անգամ մեր դատը մի կողմ դնելու – ամէն կերպ կաջակցենք Տաճկաստանում տեղի ունեցող այս կամ այն շարժումներին, ամէն կերպ հրաւէր կկարդանք բոլոր ճնշուած ազգութիւններին՝ պայքարի ելնել համիդեան անարգ ռեժիմի դէմ, հնարաւորութիւնը ներկայանալուն պէս յեղափոխական դաշն կկապենք բոլոր անձնուէր ու անկեղծ կուսակցութիւնների հետ եւ առհասարակ կանենք այն, ինչ ուրիշը գուցէ չաներ մեր անագորեան պայմաններում: ... Երբ վրայ կհասնի ցանկալի րոպէն, մենք՝ հայերս, առաջինը կլինենք, որ ամէն ինչ մոռացած՝ կկանգնենք օսմանեան յեղափոխութեան գլուխ ու կերթանք մեռնելու առաջին շարքերում, ... քանզի տաճկական ռեժիմի անկումը գուցէ ոչ ոքի այնքան ցանկալի չէ, որքան հայերիս»[1]*:*

Հակասուլթանական ուժերի համախմբման և նրանց միջև համերաշխություն ստեղծելու՝ դեմոկրատական և սոցիալիստական սկզբունքներ որդեգրած հնչակյանների և դաշնակցականների ազդարարություններին հետևում էին որոշակի ջանքեր:

ՀՅ դաշնակցությունը հաջողել էր քիչ թե շատ գործակցություն սկսել Մակեդոնիայի հեղափոխականների մի մասի հետ՝ Բորիս Սարաֆովի գլխավորությամբ: Եվրոպական Թուրքիայում համատեղ գործելու համար նրանց կնքած դաշինքը 1900 թ. նվիրագործվեց Էդիրնե քաղաքի մոտերքում, ուր հայ և ***մակեդոնացի*** *երիտասարդները զինված բախում ունեցան Թուրքական կանոնավոր զորամասի հետ: Երկուստեք զոհեր եղան, բայց խիզախ հայորդիները և մակեդոնացի երիտասարդներն ստիպված տեղի տվեցին բազմաքանակ Թուրքական զորքի առջև: Գերի ընկած և կռվից հետո ձերբակալված հայ և մակեդոնացի երիտասարդներն իրենց կյանքը վերջացրին կախաղանի վրա:*

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 4 (182), ապրիլ, 1907, էջ 62:*

Հայերի համար համեմատաբար հեշտ էր լեզու գտնել Արևմտահայաստանում բնակվող ***ասորիների*** *հետ:*

Հզոր Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի կործանումից (մ. թ. ա. 612 թ.) հետո ասորիները կորցրին իրենց պետականությունը, բայց տարբեր կայսրությունների կազմում կարողացան պահպանել լեզուն, գիրը, ազգային մշակույթը, ինքնությունը: Ասորիների բնակության հիմնական կենսատարածքը շարունակում էր մնալ վաղնջական Ասորեստանի բուն ծավալը՝ ժամանակակից Սիրիան և Իրաքը: Հետագա դարերում ասորիները սփռվել են Մերձավոր Արևելքի երկրներով մեկ՝ Թուրքիա, Իրան, Լիբանան և այլուր: Նրանց հոծ խմբեր բնակություն էին հաստատել նաև Արևմտահայաստանում՝ գլխավորապես ապրելով Վասպուրականի հարավարևելյան շրջաններում՝ Դիար-Տխուբ և Ջուլամերիկ գավառներում:

Վահան Փափազյանը գրում էր.

«Բուռ մը քրիստոնեայ լեռնային ժողովուրդ՝ կռուող եւ ազատատենչ, որ շրջապատուած էր կիսավայրենի նստակեաց եւ թափառական քիւրտերով: Կիսանկախ էին գրեթէ անոնք. անմատչելի լեռներուն ծերպերուն թառած այդ ժողովուրդի մէջ մեծ երկիւղով կ'երթային թուրք ոստիկաններն ու հարկահաւաքը: Մար Շիմոն էր իրենց հոգեւոր եւ քաղաքական պետը, բայց ունէին նաեւ «մելիքներ»՝ ազնուական-աւատապետներ, որոնք Մար Շիմոնի քաղաքական խորհրդատուներն էին»[1]*:*

Վասպուրականի դաշնակցական ղեկավարները մեծ հավատ ունեին, որ հեռու չէ այն օրը, երբ ասորիների հետ հնարավոր կլինի ստեղծել ամուր դաշինք և միավորել նրանց ուժերը հայկական հեղափոխական շարժման հետ: Թերևս բացառություն էին Լեռնապարի Իշխանը և նրա կողմնակիցները (Տիգրանը և ուրիշներ), որոնք գտնում էին, որ, իհարկե, ասորիները հայության բնական դաշնակիցներն են, բայց փաստ է նաև, որ պատմական առանձնահատկությունների բերումով նրանք իրենց բնակության կենսատարածքից դուրս քիչ հետաքրքրություններ են դրսևորում, և քանի որ օգտվում են «հարաբերական ազատու-

---

[1] ***Վահան Փափազեան,*** *Իմ յուշերը, հատ. Ա, Պոսթոն, 1950, էջ 294:*

թյունից», ուստի չահագրգռված են միայն իրենց լեռնավայրերի ամրության ու անվտանգության խնդիրներով:

Վասպուրականի նշված լեռնային գավառներից դուրս ասորիների հոծ բազմություն կար նաև Պարսկաստանի Ուրմիայի շրջանում, ուր, չնորհիվ ֆրանսիացի և ամերիկացի միսիոներների, ավելի քաղաքակիրթ էին, տնտեսական տեսակետից՝ ավելի բարվոք: Դա չէր խանգարում, որ նրանք հոգեպես սերտորեն կապված լինեին Թուրքիայի իրենց ազգակիցների հետ:

Ուրմիայի ասորիների հետ հայերի կապերը նշանակալի անցյալ ունեին, որոնց հիմքերը Դաշնակցությունը դրել էր դեռ 90-ական թվականներին, մասնավորապես Հոնան Դավթյանի, Հովսեփ Արղությանի, Նիկոլ Դումանի ջանքերով: Տեղի ասորի մտավորական և ղեկավար տարրերի հետ սրտագին հարաբերություններ էին հաստատել նաև հնչակյան գործիչները:

Որպես քրիստոնյա փոքրամասնություն, ասորիներն Օսմանյան կայսրության մեջ դարեր շարունակ ենթարկվել են թուրքերի և քրդերի բիրտ հալածանքներին և ճնշման: 1843 թվականին Բեղիրխանի ապստամբության ժամանակ քրդերը Հաքյարիի շրջանում ասպատակեցին ասորական գյուղերը, բնաջնջելով հազարավոր խաղաղ բնակիչների[1]: Հետագա տասնամյակներին ասորիներն ենթարկվում էին թուրքական իշխանությունների և քրդական ավազակների մշտական հարստահարումներին: Բայց ճշմարտությունը պահանջում է ասել, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ասորիները թուրքերի կողմից չեն ենթարկվել զանգվածային կոտորածների, ինչպես, ասենք՝ հույները, բուլղարները, հայերը, Լեռնալիբանանի մարոնիթները:

Ասորիներն Արևմտյան Հայաստանում նստակյաց կյանք էին վարում, զբաղվում իրենց համար ավանդական դարձած հողագործությամբ և այգեգործությամբ, ինչպես նաև առևտրով և արհեստներով[2]: Նրանք դարեր շարունակ սերտ շփումների մեջ

---

[1] Տե՛ս **К. П. Матвеев (Бар Батай), И. И. Мар-Юханна**, *Ассирийский вопрос во время и после Первой мировой войны, Москва, 1968, с. 22.*

[2] Տե՛ս **“Известия штаба Кавказского военного округа”,** *№ 3-4, Тифлис, 1904, с. 55,* **“Известия Кавказского отдела Императорского русского географического общества”,** *т. VI, № 1-3, Тифлис, 1881, с. 48-49.*

են եղել իրենց հարևան հայերի հետ, իսկ 19-րդ դարի կեսերից նրանց միջև հաստատվել էին բարեկամական սերտ հարաբերություններ: Քիչ չէին այն ասորիները, որոնք անկեղծորեն խոր ցավ էին ապրում ի տես հայերի զանգվածային ջարդերի ու անլուր հալածանքների: Առաջավոր Ասիայի խորքերում գտնվող քրիստոնյա այդ երկու բախտակից ժողովուրդները, ազգային-ազատագրական ոգորումների բերումով, միմյանց ձեռք էին մեկնում: Տասնյակ ասորի երիտասարդներ, մտնելով հայկական զինված խմբերի շարքերը, համատեղ կռվում էին Թուրք և քուրդ հարստահարիչների դեմ: Հայոց պատմության էջերում մնացել են հայադավան ասորիներ Շերոյի (իսկական անունով՝ Մարկոս) և նրա անբաժան զինակից Զարթոյի անունները, որոնք 90-ական թվականներին հայտնի ավազակներ էին, բայց մտնելով Դաշնակցության շարքերը, դարձել էին կարգապահ զինվորներ: Ավելի ուշ, հայկական զինված խմբերի շարքերում քաջագործություններով աչքի ընկան Գրեն, Սահակը և ուրիշ ասորիներ:

Հայերի պես՝ ասորիները դաշինք էին փնտրում քրդերի հետ: Ասորի բժիշկ Աբրահամը, որը հարել էր ՀՅ դաշնակցությանը և, այդ կուսակցության օրինակով, նմանատիպ կուսակցություն էր ուզում ստեղծել ասորիների մեջ, այսպիսի խորհրդածություններ էր անում հայ-ասորի-քուրդ հնարավոր դաշինքի մասին, որի ջերմ կողմնակիցն էր ինքը: Ճնշված ազգերի փրկությունը նրանց եղբայրությունն է, ասում էր նա, որն արդեն իրագործված է ասորիների և հայերի միջև: Դժվար չէ եզդիներին նույնպես բերել այդ դաշինքի մեջ, եթե նկատի ունենանք, որ դեպի Վան տանող ճանապարհի երկու կողմերում ընկած եզդի գյուղերի բնակիչները հաստատել են ամուր բարեկամություն հայկական հեղափոխական կուսակցությունների հետ: Ինչ վերաբերում է թաթար թուրքերին*, որոնք թե՛ որակ են և թե՛ մանավանդ՝ թիվ, բարբարոսաբար չիա լինելով՝ նույնպես կարող են նկատվել մեր (հայերի և ասորիների:- Հ. Ս.) բնական դաշնակիցներ, քանի որ նրանք դեմ են սուննիների պետությանը՝ Թուրքիային: Մեր անլուծելի դժվարին խնդիրը սուննի քրդերն են, որոնք

* Նկատի ունի Ատրպատականի թուրքերին:

բռնել են լեռներն ու ճանապարհները և մեզ բաժանում են երկրի մեր զանգվածներից: «Եթէ մեզ յաջողուի նրանց բաժանել Թուրքիայից եւ նրանց քաշել մեր կողմը, դա հաւասարազօր կլինէր Թուրքիայի վրայ մեր յաղթութեանը: Իսկ եթէ նրանք չարունակեն թշնամի մնալ մեզ, ապա դա համազօր կլինէր մեր ձախողութեանը»: Հետևապես, մեր առաջնահերթ անելիքը սուննի քրդերի հետ համերաշխություն հաստատելն է[1]:

Թե որքան էին սերտացել հայերի հետ ասորիների կապերը, ցույց է տալիս այն փաստը, որ վերջիններիս հոգևոր առաջնորդ Մար Շիմոնը Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող չրջանում երկու անգամ, Մատթեոս Բ Իզմիրլյան և Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսների օրոք, եկավ էջմիածին և ասորի ժողովրդի անունից նրանց փոխանցեց իր հոտի հավատարմության հավաստիացումները հայ-ասորական բարեկամությանը: Ավելին, Մար Շիմոնն իր որդեգիր զավակին ուղարկեց Գևորգյան ճեմարան՝ սովորելու[2]:

Ասորիները մչտական կապի մեջ էին Կովկասում հաստատված իրենց ազգակիցների հետ, որոնք աստիճանաբար հաղորդակից էին դառնում Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձություններին, և այդ ամենը հող էր ստեղծում կովկասահայության հետ նրանց սերտ չփումների համար:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Պարսկաստանի ասորիները ռուսական բանակին գործուն աջակցություն էին ցույց տվել՝ մատակարարելով պարենամթերք և անասնակեր, ինչպես նաև իրենց լավ ծանոթ տեղանքում հանդես էին եկել որպես հետախույզներ և ուղեցույցներ: Այդ ծառայությունների համար, Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո, ռուսական իշխանությունների թույլտվությամբ, հարյուր ասորի ընտանիք 1829 թ. Պարսկաստանից տեղափոխվեց Արևելյան Հայաստան[3] և բնակու-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 10 (297), հոկտեմբեր, 1950, էջ 52:*

[2] ***Տե՛ս նույն տեղում, էջ 49:***

[3] ***Տե՛ս Π. Эйвазов,*** *Некоторые сведения о селе Койлассар и об айсорах. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. IV, отд. I, Тифлис, 1884, с. 286.*

թյուն հաստատեց Ներքին Ղույլասար (այժմ՝ Դմիտրով), Վերին Դվին, Գյոլ, Արզնի և Փոքր Շահրիար գյուղերում[1]: Հայաստանում և Անդրկովկասի այլ շրջաններում բնակություն հաստատած ասորիների համար հանգիստ ապրելու և խաղաղ աշխատանքով զբաղվելու հնարավորություն ստեղծվեց: Բայց ցարական կարգերի պայմաններում նրանք, ինչպես և ուրիշ արտատարածքային (էքստերիտորիալ) ազգային փոքրամասնությունները մեծ դժվարություններ էին կրում մայրենի լեզվով կրթություն ստանալու և իրենց ազգային մշակույթը պահպանելու տեսակետից: Տասնամյակներ հետո միայն, Հայաստանի ասորիների երեխաների համար մեկ երկամյա դպրոց բացվեց Ներքին Ղույլասար գյուղում: Զնայած դրան, 20-րդ դարի սկզբներին ասորիների նորանոր հոծ խմբեր, Թուրքիայից և Պարսկաստանից հեռանալով, հանգրվան էին գտնում ռուսական իշխանությունների հովանու տակ: "Кавказ" («Կավկազ») թերթը «Ասորիները» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Ամեն տարի հազարավոր ասորիներ Ռուսաստան են գալիս աշխատանք փնտրելու: Անդրկովկասի զարգացումը և Թիֆլիս, Բաթում ու Բաքու քաղաքների աճը որակյալ և ոչ որակյալ բանվորների պահանջարկ ստեղծեցին, և ասորի հյուսները, որմնադիրներն ու օրավարձու բանվորները շահավետ վաստակ գտան»[2]:

Առաջին համաշխարհային պատերազմը ճակատագրական եղավ ինչպես արևմտահայության, այնպես էլ ասորիների համար, որոնք, օգտվելով պատերազմի պատեհությունից, հույս ունեին ազատություն ձեռք բերելու Օսմանյան կայսրության փլուզման հետևանքով: Կայսրությունը փլուզվեց, բայց թե՛ հայերը և թե՛ ասորիները սպասված ազատությունը չստացան, ավելին, մնացին կործանվող կայսրության փլատակների տակ: Թուրքերը և քրդերը գաղանային դատաստան տեսան ինչպես հայերի, այնպես էլ ասորիների նկատմամբ: Պատերազմի տա-

---

[1] **Տե՛ս С. П. Зеленский**, *Племенной состав, различия и происхождение государственных крестьян. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. II, Тифлис, 1887, с. 16.*

[2] ***"Кавказ"*** *(Тифлис)***,** *1903, № 241.*

րիներին ասորիների զգալի մասը կոտորվեց Թուրքերի և քրդերի ձեռքով, հարյուր հազարավորներ ցրվեցին աշխարհով մեկ (Պարսկաստան, Հնդկաստան, արաբական երկրներ, Եվրոպա և այլուր)՝ կազմելով էթնոսի արտատարածքային հատվածներ:

Պատերազմի և հետագա մեկ-երկու տարիները Հայ-ասորական բարեկամության բազում նոր օրինակներ տվեցին: Այսպես, Անդրանիկի կամավորական գնդում ընդգրկված էր ասորիներից կազմված բազմամարդ մի վաշտ, որի մարտիկները, գնդի հրամանատարի վկայությամբ, կռվում էին առյուծի պես: Մի այլ օրինակ. 1920 թ. աշնանը մուսուլմանական ավազակախմբերից Գողթնի Մեսրոպավան, Ալահի և Բիստ հայկական գյուղերի պաշտպանության ղեկավարներից էր ասորի Քոչոևը, որը և ընկավ Թշնամու գնդակից:*

Հայության հետ վաղուց ի վեր ամենասերտ շփումների և բարեկամական կապերի մեջ էին հատկապես ***եզդիները****: Նրանք ապրում էին Իրաքում, Թուրքիայում և, չնչին թվով, Անդրկովկասում, դավանում են համաձույլ (սինկրետիկ) կրոն, որը պարունակում է հեթանոսության, հնդարիական հին հավատալիքների, հուդայականության, նեստորական բնույթի քրիստոնեության և իսլամի տարրեր: Լեզուն քրդերենն է:*

Եզդիների հոծ բազմություն էր տեղավորված Տիգրանակերտի մոտերքը և Սինջար լեռան շրջանում: Նրանք ջերմ հարաբերությունների մեջ էին հայերի հետ:

---

* *Խորհրդային տարիներին Հայաստանի ասորիներն աշխուժորեն ընդգրկված էին հանրապետության բուռն զարգացման գործընթացի մեջ, ազգային խտրականության խպառ բացակայության պայմաններում ունեին իրենց դպրոցները, մշակութային օջախները, պարախմբերն ու երգչախմբերը, զարկ էին տալիս ազգային մշակույթին, և այդ բոլոր նախաձեռնություններում, բոլոր իրագործումներում ստանում էին Խորհրդային Հայաստանի կառավարության ջերմ աջակցությունը: Այդ ավանդույթը փոխանցվել է Հայաստանի երրորդ հանրապետությանը: Այսօր ասորիները, ինչպես և հանրապետության մյուս ազգային փոքրամասնությունները, բոլոր հնարավորություններն ունեն պահպանելու և զարգացնելու սեփական ազգային մշակույթը, եղբայրական հայ ժողովրդի հետ եռանդուն մասնակցություն ունենալու Հայաստանի Հանրապետության առաջադիմության գործին:*

Եզդիների մի աշիրեթը (ընդամենը երկու գյուղ) բնակվում էր Վասպուրականում՝ միշտ բարեկամ լինելով հայերին և շատ պարագաներում գործակցելով նրանց հետ: Ավելին, եզդիներն իրենց բախտը կապել էին հայերին և կողք-կողքի կռվում էին Թուրքական կառավարության կամ քրդական աշիրեթների դեմ: Եզդիական աշիրեթներից մեկի երիտասարդ առաջնորդ Ջահանգիր աղան միշտ մնաց հայերի հետ: Նա էր, որ իր քաջերով հետագայում հերոսաբար կռվեց Սարդարապատի ճակատամարտում, Հայաստանի անկախության օրերին (1918-1920 թթ.) ամեն կերպ սատարում էր հանրապետության ամրապնդմանը, նա էր, որ մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց հայ-եզդիական եղբայրությանը:

Ի տարբերություն Վասպուրականի եզդիների փոքրաթիվ լինելուն, նրանց մի ստվար հատված ապրում էր Տարոնում, ուր հայերն եռանդուն աշխատանք էին տանում բարիդրացիական լայն կապեր հաստատելու նրանց հետ: Եվ նրանք հաճույքով էին սեղմում հայերի մեկնած բարեկամական ձեռքը: Տարոնի եզդիները, ինչպես Ռուբեն Տեր-Մինասյանն էր ասում, «իրոք շատ հայերից ավելի թունդ դաշնակցականներ էին»:

1907 թ. Սինջարի եզդիները Էջմիածին էին ուղարկել իրենց ղեկավարներից մեկին՝ Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսից խնդրելու ուսուցիչներ ուղարկել իրենց գյուղերը՝ երեխաներին հայկական կրթություն տալու և հայությանն ավելի սերտ հարելու համար:

Եզդիների ընդհանուր առաջնորդի որդին 1908 թ. գալիս է Կ. Պոլիս, ապա անցնում Կովկաս և այցելում Էջմիածին, ուր մոտիկից ծանոթանում է հայ եկեղեցական կյանքին: Այստեղից մեկնելով Տիգրանակերտ, քաղաքի եզդիներին կոչ է անում ընդունել հայոց հավատը՝ «նրա պարզության և ազատ ոգու համար»: Եզդիների տեղի ղեկավարության խնդրանքով՝ Տիգրանակերտի հայոց առաջնորդ Զավեն ծ. վարդապետ Տեր-Եղիայանը մի քանի քահանաների հանձնարարում է նվիրվել քաղաքի եզդի երիտասարդության կրոնական-հոգևոր կրթությանն ու դաստիարակությանը: Զավեն ծ. վարդապետը համարում էր, որ եզդիների ցանկությունը պետք է լրջորեն հաշվի առնել, առաջ

տանել սկսած ձեռնարկը, նրանց մեջ արթնացնել գիտակցությունը և միավորել հայ տարրի հետ: Նա գտնում էր, որ եզդիների հակումը դեպի Հայ եկեղեցին ձեռնտու է երկու կողմերին, և եթե հաջողվի նրանց բերել հայերի կողմը, ստեղծել հայ-եզդիական է՛լ ավելի սերտ համերաշխություն, ապա դա շատ շահեկան կլինի զանազան տարրերով շրջապատված թե՛ եզդիների, թե՛ Տիգրանակերտի հայության համար:

Տեղական իշխանությունը եզդիների այդ շարժման մեջ վտանգ տեսնելով, քննության ենթարկեց հայ քահանաներին, արգելեց նրանց քարոզներն ու սկսած կրթական գործը[1]:

Հայ քաղաքական գործիչները հարաբերություններ հաստատելու փորձեր էին անում հակասուլթանական պայքարի մեջ մտած **արաբ** գործիչների, հատկապես Եվրոպա տարագրված նշանավոր մտավորականների հետ: Սրանցից մեկն էր սիրիացի քրիստոնյա արաբ, Երուսաղեմի երբեմնի կառավարչի փոխանորդ, Փարիզում հաստատված Նեջիբ բեյ Ազուրին: Նա այստեղ հրատարակում էր «ալ-Իստիգլալ ալ-արաբի» («Արաբական անկախություն») անունով հանդեսը, որի էջերում մերկացնում էր օսմանյան բռնակալական կարգերը, միաժամանակ ուժգին քննադատում Թուրք «հեղափոխականների» բարենորոգչական կիսատ-պռատ հայացքները և գործունեությունը: Հակառակ դրան, Ազուրին, մեծ հայասեր լինելով, իր պարբերականի էջերում հանդես էր գալիս հայ ժողովրդի ազատագրական շարժման ջերմ պաշտպանությամբ, քարոզում արաբ և հայ ժողովուրդների եղբայրության գաղափարը: 1905 թ. Փարիզում նա լույս էր ընծայել *"Réveil de le Nation Arabe"* («Արաբ ազգի զարթոնքը») վերնագրով գիրքը, ուր նշել էր, որ չկա մի փաստ, թե Հայաստանը հայերինը չէ: Անկարող լինելով նրա դեմ հրապարակային գաղափարական պայքարում հաջողության հասնել, երիտթուրք իթթիհադականները մի քանի անգամ փորձ էին արել նրան բռունցքներով «պատժել», բայց ամեն անգամ անհաջողության էին մատնվել:

Հայ գյուղացիները կենցաղային մակարդակով հարաբերու-

---

[1] Տե՛ս **«Արարատ»** (ս. Էջմիածին), № 6, Հունիս, 1910, էջ 513-514:

թյունների մեջ էին մտնում իրենց հարևանությամբ բնակություն հաստատած կովկասյան մուհաջիրների՝ **չերքեզների** հետ: Դրան նպաստում էր այն հանգամանքը, որ քրդերը պարբերաբար հարձակումների ու կողոպուտների էին ենթարկում ոչ միայն հայկական, այլև երբեմն նաև չերքեզաբնակ դարձած գյուղերը:

Հայերի համար խնդրահարույց էր **քրդությունը**:

ՀԱՅ – ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՊԱՐԴՅՈՒՆ ՃԻԳԵՐ

Հայկական հեղափոխության համար չափազանց կարևոր էր քրդերի հետ համերաշխության եզրեր գտնելը:

Քուրդը, լեռների այդ ըմբոստ զավակը, առաջադիմության ու զարգացման ճանապարհին ամենաաննչան քայլ անգամ չէր անում: Գլորվում էին տարիներն ու դարերը, ստեղծվում էին կյանքի նոր պայմաններ, ծնվում էին նոր գաղափարներ, մարդ արարածը փոխվում էր, ավելի քաղաքակրթվում, բայց քուրդը մնում էր միշտ ըմբոստ, միաժամանակ՝ հետադեմ ու անշարժ:

Հայ-քրդական հարաբերություններն անցել են տարբեր փուլերով՝ 1. Քրդական ցեղերի՝ հայոց հայրենիք ներթափանցելուց մինչև 19-րդ դարի 20-ական թվականները, 2. Այս ժամանակաշրջանից մինչև նույն դարի 80-ական թվականները, 3. Այդ ժամանակից մինչև 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը, 4. Սահմանադրական տարիները՝ մինչև 1915 թ. հայոց Մեծ եղեռնը, 5. Քրդերի կատարած դերը Հայոց ցեղասպանության մեջ՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Առաջին փուլն ընդգրկում է այն ժամանակաշրջանը, երբ քրդական թափառական (նոմադ, քոչար) ցեղերը, որոնք շարունակում էին ապրել հովվական և խաշնարածական կյանքով, հաջորդաբար թափանցելով Հայաստան, հաստատվեցին այնտեղ[1]: Առաջին մեծ թափանցումը տեղի ունեցավ 16-րդ դարի

[1] Տե՛ս **Ա. Նորեան,** Դրուագներ ՀՅ դաշնակցութեան գործունէութիւնից, Ա տասնամեակ, Բոստոն, 1917, էջ 16:

սկզբներին, երբ Թուրք սուլթան Սելիմ Ա-ի հրավերով Մոլլա Իդրիսի բազմահազարանոց աշիրեթը իր պատմական հայրենիքից՝ հյուսիսարևմտյան Պարսկաստանից տեղափոխվեց Օսմանյան կայսրության նորանվաճ հայկական տարածքները: Այդ աշիրեթին հետևեցին տասնյակ ուրիշները: Նրանք դանդաղորեն լեռներից դաշտ էին իջնում և ծավալվում հայկական նահանգներում: Այստեղ քուրդը հանդիպում էր նստակյաց, խաղաղ ու անզեն հային, որը նրան որևէ դիմադրություն ցույց չէր տալիս: Ուստի նա հեշտությամբ գրավում էր հայի հողերը, անասունները, գույքը: Հայը դառնում էր քրդի կամքին ենթակա իրավազուրկ[1]: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ հայը գութանի մարդ էր, քուրդը՝ սրի: Մինչև 19-րդ դարի սկիզբը քրդերն արդեն զգալի ներկայություն ունեին Հայաստանի հարավային ու կենտրոնական նահանգներում և գավառներում՝ Տիգրանակերտում, Բաղեշում, Ոստանում, Դերսիմում, Բալուում, Բերկրիում, Խոշաբում, Մուշում, Սասունում, Խիզանում, Զարսանջակում և այլուր:

Աշնանը և ձմռանը քրդերն իրենց բուն հայրենիքում էին՝ Հյուսիսային Միջագետքում, Դիարբեքիրի շրջաններում, Հաքյարիում: Այդ ամիսներին շատ աշիրեթներ մնում էին նաև Հայաստանի հարավային փեշերին: Գարնանամուտին նրանք իրենց հոտերով հարթավայրերից բարձրանում էին Սասունի, Մշո, Բյուրակնյան լեռների և Հայկական բարձրավանդակի այլ փարթամ ու գեղեցիկ արոտավայրերը: Մի վայրում կարճատև մնալուց հետո խաշնարածները, գարնան կեսերից մինչև աշնան կեսերը փոխադրվում էին մի սարից մյուսը, մի հովտից մյուսը:

Թափառական կենցաղը քրդերին մշտապես պահում էր շարժման մեջ: Նրանք ահագին խմբերով երբեմն տեղափոխվում էին Պարսկաստանից Թուրքիա կամ հակառակը: Անգամ անկարելի էր սահմանել, թե Հայաստանի հարավարևելյան կողմերում շրջող քրդական ցեղերը Թուրքահպատա՞կ են, թե՞ պարսկահպատակ: Ե՛վ այս էին, և՛ այն, բայց շատ հաճախ՝ ո՛չ այս, ո՛չ այն: Նրանք միշտ իշխանությունների աչքից հեռու էին, միշտ կիսանկախ:

---

[1] Տե՛ս **Գառնիկ Գիւզալեան,** Խրիմեան Հայրիկ. գաղափարների աշխարհը, Պէյրութ, 1954, էջ 6:

Թափառաշրջիկ ցեղերը մեծ մասով իրենց ապրուստը հոգում էին ավարառության ու կողոպուտի միջոցով: Ցեղի կամ ցեղախմբի անդամներն ունեին ավազակային, անիշխանական բարքեր, կողոպուտն ու գողությունը նրանց ապրուստի հայթայթման հիմնական միջոցներն էին: Ոճիր կատարելը հանցանք չէր համարվում, սովորական բաներ էին ճամփորդի կամ գյուղի վրա հարձակվելը: Առօրեական բաներ էին նաև միմյանց վրա հարձակվելը, արյունալի ընդհարումները: Քանի որ ամեն մի ցեղ ձգտում էր որքան կարելի է շատ ավար ձեռք գցել, ընդլայնել կողոպուտի համար «ազդեցության ոլորտները», այստեղից էլ նրանց միջև առաջ էին գալիս թշնամանք ու ատելություն: Կռիվների ընթացքում կատարված սպանությունները պատճառ էին դառնում հակառակորդ ցեղի նկատմամբ նոր վրեժխնդրության:

Նման պայմաններում ավելորդ էր խոսել ցեղերի միջև հոգեկան ներքին կապի ու բարոյական միության, ազգային հավաքական մտածողության, միասնական քրդական մշակույթի, առավել ևս՝ քրդական ազգային միասնական քաղաքականության մասին: Այդ էր պատճառը, որ հայերն ստիպված էին հարաբերությունների մեջ մտնել իրարից անջատ ցեղերի հետ՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու շահերը:

Աստիճանաբար հաստատվելով հայկական նահանգներում, քրդերը ժամանակի ընթացքում բնիկ հայ բնակչությանը դուրս մղեցին իրենց բնակության վայրերից կամ ենթարկեցին ձուլման: Դա էր պատճառը, որ Հայաստանում ձևավորվեցին քրդական նոր ցեղեր, որոնք հայկական ծագում ունեին: Երկրի հարավարևելյան մասերում անզեն և իրավազուրկ դարձած հայը զինված քրդի դեմ այլևս անկարող էր պահել ազգային դիմագիծը: Նա կրոնափոխ էր լինում և քրդանում, որպեսզի պահպանի ֆիզիկական գոյությունը: Այդ ընթացքը շատ տեղերում գնալով ընդհանրական երևույթ էր դառնում:*

---

* *Չնայած դրան, բավական էր մի փոքր փոփոխություն, որպեսզի քրդացած հայերից շատերը, նրանք, ովքեր հոգում դեռ պահում էին ոչ միայն հայ լինելու հիշողությունը, այլև զգացումը, առաջին պատեհությամբ իրենց հայտարարում էին հայ ազգի անդամներ:*

Արդեն 18-րդ դարի վերջերին ուրիշի հողերի վրա նստած քրդական աշիրեթներն* այնքան էին ամրապնդվել, որ նրանցից ամեն մեկը դարձել էր «պետություն պետության մեջ»: Դիպուկ է ասված. «Թուրքը երկրի իրաւական տէրն էր, քիւրտը՝ իրական տէրը, հայը՝ հայրենիք ունեցողը եւ իրաւազուրկը»[1]:

Ընդունելով դրան, 16-18-րդ դարերը, այնուամենայնիվ, կարելի է համարել հայերի և քրդերի հարաբերական «խաղաղ համակեցության» ժամանակներ: Նույնիսկ Հայաստանի որոշ լեռնային մասերի խառը բնակչություն ունեցող բնակավայրերում քրդերի ու հայերի միջև աշխատանքի բաժանում էր կատարված. առաջինները կատարում էին զինվորի ու գյուղապահի դեր և գյուղը պաշտպանում արտաքին հարձակումներից, իսկ հայերը զբաղվում էին վար ու ցանքով, առևտրով ու արհեստներով: Այն ժամանակներում այս երկու այլակրոն ժողովուրդների համերաշխ կեցության ականատեսները չէին կարող անգամ մտքով անցկացնել, թե պիտի գա մի օր, երբ նրանք իրար կբզկտեն և կսպառնան միմյանց բնաջինջ անել:

Երկրորդ փուլը, որն ընդգրկում է 19-րդ դարի 20-80-ական թվականները, բնութագրվում է որպես երկու ժողովուրդների հարաբերությունների աստիճանական լարման ժամանակաշրջան: Դրա հիմնական պատճառն էին Թուրքահայաստանի մի շարք գավառներում հայերի նկատմամբ քուրդ էթնոսի ձեռք բերած թվական գերակշռությունը և դրանից բխող հետևանքները, այն է՝ քուրդ ցեղապետերի, աղաների, բեկերի կողմից հայկական գյուղերի սեփականացումը և հայ գյուղացիների ճորտացումը: Այս պայմաններում սովորական էին դարձել քուրդ վերնախավի՝ իրենց ենթակա հայերի անողոք շահագործումը, դեռ իրենցը չհամարվող հայկական գյուղերից ոչխարների հոտեր և նախիր քշել-տանելը, հայ աղջիկների ու հարսների առևանգումները և այլն: Փաստորեն, քրդացած գավառների հայերին շահագործում ու հարստահարում էին ոչ թե թուրքերը, այլ՝ քրդերը:

---

* Արդեն այդ ժամանակ աշիրեթը համայնք էր, որը բաղկացած էր միմյանց հետ ազգակցական կապերի մեջ գտնվող մի քանի գյուղերից: Աշիրեթի պետը փոքր տոհմական իշխան էր հանդիսանում (տե՛ս **“Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилаетах”**, Тифлис, 1908, с. 53):

[1] **Գառնիկ Գիւզալեան**, Խրիմեան Հայրիկ. գաղափարների աշխարհը, էջ 6:

«Եւ իսկապէս, եթէ հարցնելու լինեինք մեզ՝ թէ ումի՞ց է հայ ժողովուրդը – գոնէ 19-րդ դարի քսանական թուականներից օրէ օր, ամսէ ամիս, տարէց տարի աւելի տուժել, այնչափ տուժել, որչափ նա չէ տուժել անմիջապէս ոչ մի ուրիշ ազգութիւնից, դժուար թէ գտնուի մէկը, որ չպատասխանէ՝ **քրդից**»,- իր հոդվածում Կարո Սասունին մեջբերել է հայ-քրդական հարաբերութիւնների մասին «Դրօշակ»-ում 1901 թ. լոյս տեսած Քրիստափոր Միքայելյանի հոդվածաշարքի առաջին հրապարակումից (№ 4 (115), Հունիս, 1901, էջ 1)[1]:

Քուրդը պատուհաս էր հայի գլխին և դրա գլխավոր պատճառը վերջինս համարում էր քրդի հետամնացությունը: Բայց այդ հետամնացությունը քրդի բնական ունակությունների պակասի հետևանք չէր: Եթե պայմանները թույլ տային, նա հեշտությամբ դուրս կգար տգիտությունից ու խավարից*: Ուղղակի ժամանակի վազքի մեջ նա չէր հաջողել հաղթահարել ավանդական պահպանողականությունը և յուրացնել նորը:

Ճշմարիտ է սակայն, որ քրդերը ցեղային հակառակորդ չեն հայերին, ընդհակառակը, նրանցից շատերը գիտեին, որ իրենք իսլամացած հայեր են և ավելի սեր ունեին վերջիններիս, քան թուրքերի նկատմամբ: Բայց բանն այն է, որ, ինչպես իրավացիորեն նշել է պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, «Հայերս չենք կրցած քաղաքակրթութեան ճամբուն մէջ մեզի հետ քալեցնել քիւրտերը եւ անոնց հետ հասկացողութեան լեզու մը գտնել»[2]:

---

[1] **«Հայրենիք»**, № 10 (94), օգոստոս, 1930, էջ 46-47:

* Դրա ցայտուն ապացույցներից մեկը Խորհրդային Հայաստանի քուրդ բնակչության տնտեսական և կրթամշակութային անօրինակ վերելքն էր: Ընդամենը երկու-երեք տասնամյակի ընթացքում այստեղ ստեղծվեց քուրդ ընտիր մտավորականություն՝ իր պատմաբաններով, լեզվաբաններով, բանահավաքներով, մանկավարժներով ու դասախոսներով: Հայտնի գրող ու գիտնական Ջասրմե Ջալիլի, անվանի գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հաջիե Ջնդիի, պատմաբան, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ Շաքրո Մհոյանի (Շաքրոյե Մհո) և քուրդ մտավորականության ուրիշ նշանավոր ներկայացուցիչների արժեքավոր գիտական և գեղարվեստական ստեղծագործությունները հայտնի են Հայաստանի սահմաններից դուրս:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 2:

Հայ կրոնական ու մշակութային առանձին գործիչներ համոզված էին, որ քուրդ ժողովրդի մտավոր զարգացմանն ընծայված յուրաքանչյուր նպաստ ոչ միայն պիտի ծառայեր նրա մեջ ուսում և լուսավորություն տարածելուն, այլև խթան պիտի լիներ նպաստելու երկու ցեղակից ու բնակակից էթնոսների միջև համերաշխության ստեղծմանը:

Դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներից սկսած՝ առանձին հայ գործիչներ ձեռնարկել էին քրդերի մեջ լուսավորություն տարածելու գործին: Դրանց թվում առաջնակարգ պիտի համարել Դիարբեքիրի և Քուրդիստանի առաջնորդ Մկրտիչ եպս. Տիգրանյանին: Նրա ծրագիրն էր՝ քրդախոս հայերին, նաև քրդերին դնել քաղաքակրթության ճանապարհի վրա՝ հայկական տառերով նրանց կարդալ-գրել սովորեցնելով[1]: Նա համոզված էր, որ սուլթանական հրովարտակներով կամ ճնշման միջոցներով անհնար է վերջ դնել քրդերի հարստահարիչ բարքերին: Միակ ելքը, ասում էր նա, քաղաքակրթության ընթացքից դուրս մնացած ժողովրդի գիտակցության բարձրացումն է: Նախ պետք է նրան լուսավորել, մնացածն ինքնին ընթացքի մեջ կընկնի:

Այդ նպատակով Տիգրանյանն իր թեմում ձեռնարկեց հայ և քուրդ աշակերտներով խառը դպրոցների բացմանը, բայց հանդիպեց մեծ դժվարությունների և, առաջին հերթին, ուսուցիչների պակասի: Ուստի, իր ստեղծած դպրոցների հարատևումն ապահովելու համար, նա մեկնեց Կ. Պոլիս՝ այնտեղ հավաքագրելու հայրենասեր գրագետ մարդկանց: 1860 թ. մայրաքաղաքում նա կազմակերպում է մի ընկերություն՝ «Բարեկարգութիւն արեւելեան» անվան տակ, որի անդամներ դարձան պոլսահայ նշանավոր անձինք, այդ թվում՝ «Մեղու» հանդեսի խմբագիր Հարություն Սվաճյանը[2]: Մի քանի ուսուցիչների հետ Տիգրանյանը վերադառնում է իր թեմը և շարունակում լուսավորչական գործը:

1861 թ. Մկրտիչ եպս. Տիգրանյանը հրատարակում է «Այբբենարան քրտերէն եւ հայերէն – Ալիֆիպէ քուրմանջի վէ արամենի» անունով, որը նաև պարունակում էր բառարան, թվա-

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 2:

[2] Նույն տեղում, թ. 3:

համար, հայոց պատմության դրվագներ, «Հայաստան աշխարհ» երգի շարադրանքը:

Նույն նպատակով Տիգրանյանը 1866-ին հրատարակում է երկրորդ ընթերցարանը, որի կազմին հայերեն և քրդերեն գրված էր վերնագիրը՝ «Լապտեր լուսատու յօրինեալ ի Տէր Մկրտիչ վարդ. Տիգրանեան յառաջնորդէ Քուրտիսթանի ի լոյս ընծայեցաւ» - «Զըրայէ՝ ըռօնի, հաթ չէ գըրին ժը Մկրտիչ Տիգրանէ Մըթռան Մուրախասէ Քիւրտիսթան, պասմա պու»[1]:

Բայց սկսված գործը վիժեց, քանի որ Տիգրանյանն անհրաժեշտ օգնություն չստացավ ո՛չ հայկական և ո՛չ էլ քրդական շրջաններից: Ավելին, ինչպես նշում է Արշակ Ալբոյաջյանը, «անիկա փոխանակ քաջալերութիւն գտնելու, հալածուեցաւ, ինչպէս սովորաբար կը պատահի ամէն հայու որ օգտակար բայց յանդուգն գաղափար մը կը յղանայ»[2]: Միակ արդյունքն այն եղավ, որ թուրքական իշխանություններն ամեն ջանք գործադրեցին, որպեսզի քրդերը որևէ կերպ հայկական դաստիարակություն չստանան և այս երկու տարրերը որքան հնարավոր է իրարից հեռու մնան: Միաժամանակ, կառավարությունը մերժում էր պետական միջոցներով քրդերի կրթության և դաստիարակության գործը կազմակերպելու՝ քուրդ ցեղապետերի բոլոր խնդրանքները[3]:

Դրանից հետո երկար ժամանակ հայերին չհետաքրքրեց այդ կարևոր գործը: Ավելին, թուրքական կառավարության դեմ քրդական ցեղերի ըմբոստության ժամանակ հայերը շատ հաճախ օգնում էին թուրքական զսպիչ զինվորական ուժերին: Այդպես եղավ նաև սուլթան Մահմուդի օրոք, 1836-1837 թթ. քրդերի հայտնի ապստամբության ժամանակ: Այդպես վարվելով, հայերն իրենց դեմ գրգռում էին քրդերին:

Թերևս բացառություն էր, որ Մկրտիչ Խրիմյանը Մուշի առաջնորդության սկզբից մինչև վերջը ուղղակի, իսկ նրանից հետո՝ անուղղակի կերպով միշտ Բարձր Դռանը թելադրում էր

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 3:

[2] Նույն տեղում, թ. 2:

[3] Նույն տեղում, թ. 3:

քրդերի մեջ ուսում տարածելու միտքը: Կառավարությունից ամեն անգամ պատասխան էր ստացվում, թե առաջարկն արժանի է ուշադրության, բայց այնպես էլ որևէ միջոց չէր ձեռնարկվում:

Հետագա տարիներին քրդերի կողմից հայերի հարստահարումն այնպիսի ծավալներ ընդունեց, որ Թուրքական իշխանություններին հնարավորություն տրվեց նույնիսկ հանդես գալ քրդերին այպանող և հայերին «պաշտպանող» հայտարարություններով: Պատահական չէ, որ Թուրքիան կարողացավ հասնել այն բանին, որ Բեռլինի 1878 թ. կոնգրեսի պայմանագրի 61-րդ հոդվածում, որպես հայերին հարստահարողներ, ի ցույց տրվեցին միայն քրդերն ու չերքեզները, իսկ Թուրքերի մասին որևէ հիշատակություն չեղավ: Հոդվածը ձևակերպված է այսպես.

«Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:

Այդպիսով, կառավարությանը հաջողվեց Եվրոպայից ենթադրվող հարվածի ուղղությունը թեքել հիմնականում քրդերի վրա, միաժամանակ վերջիններիս զսպելու համար իրական միջոցներ չձեռնարկելով:

***Երրորդ** փուլը ներառում էր 1880-ական թթ. - 1900 թթ. ժամանակաշրջանը: Պատմական այս հատվածը հայոց համար արդուլհամիդյան զուլումի տարիներն էին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորման և արյունալի իրադարձությունների տարիները: Պայքարն ընթանում էր ծանրագույն պայմաններում:*

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և 61-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսի պայմանագրի մեջ մտնելուց հետո սուլթան Աբդուլ Համիդ II-ի ուղեղում ծագել էր հայությանը կոտորելու միտքը: Առիթը պատերազմի օրերին Թուրքահայաս-

տան մտած ռուսական զորքերին հայերի խանդավառ դիմավորումն էր: Վրեժխնդրությանն իրական կերպարանք տալու նպատակով, Աբդուլ Համիդը հանդես եկավ քրդերի հովանավորի դերում: Նա քուրդ աղաներին ու բեկերին պատվիրեց կոտորել հայերին, անարգել տիրել նրանց ունեցվածքին, գործադրել ամեն բռնություն գյավուրներին Հայաստանից դուրս մղելու համար:

Սուլթանի պատվերն ստանալուց հետո քուրդ երևելիները Վանում հավաքվեցին ժողովի: Եղան բուռն վեճեր: Ժողովականների մեծ մասը պատրաստակամություն հայտնեց հետևել Աբդուլ Համիդի հրահանգին: Եղան նաև տատանվողներ: Ավելին՝ քրդերի մեծ շեյխ Ուբայդուլլահը, հեռատես մի մարդ, իր ելույթով փոխեց ներկաների տրամադրությունը:

Ըստ Վարանդյանի վերապատմածի՝ Ուբայդուլլահն ասել է, թե Թուրքիայում հայերը և քրդերը հարևաններ են դարձել շատ վաղուց: Նա զգուշացրել է, որ եթե քրդերը հայերին այսօր կոտորեն, թուրքերը վաղը կկոտորեն քրդերին: Նա հույս է հայտնել, թե ժողովին ներկա քուրդ երևելիները սա կհասկանան ու կհրաժարվեն հայերին ջարդելու մտադրությունից:

Շեյխի ելույթը մեծ տպավորություն է գործում ժողովի մասնակիցների վրա, որոնք ցրվում են՝ հավանություն չտալով սուլթանի հրահանգին:

Բայց այդ անհաջողությունը չկանգնեցրեց Աբդուլ Համիդին: Բռնապետական վարչակարգը ջանքերն ուղղեց քրդերի զինմանը: Գործի դրվեց նաև կաչառքի ամենազոր մեքենան և քուրդ վերնախավը վերջնականապես ճչտեց իր քաղաքական կողմնորոշումը: Քրդերի բացարձակ մեծամասնությունը նետվեց օսմանյան ոճրագործ կառավարության գիրկը, կանգնեց թուրք ջարդարարների կողքին:

«Կառավարութիւնը,- գրում էր Վահան Փափազյանը,- հիմնովին ուսումնասիրած էր իր երկրի թիւով մեծ այս ազգաբնակչութեան (քրդության:- Հ. Ս.) հասարակական կազմը եւ հոգեբանութիւնը: ... Ըմբոստները կը պատժէր խստագոյն հալածանքով, երկպառակութիւն կը ցանէր անոնց մէջ՝ հանելով իրար դէմ, եւ կամ նիւթապէս կը սիրաչահէր ա՛յն ցեղապետնե-

ը, որոնք դիւրութեամբ կը գայթակղուէին կամ հաշիւ կ'ունենային մաքրելու այլ ցեղապետներու հետ...»[1]: Միանգամայն բնական է, որ Բարձր Դուռը «չատ դիւրութեամբ կը կառավարէր այս կիսավայրենի ցեղերը»[2]՝ կողոպտելու և սպանելու նրանց եռանդն ուղղելով հայերի դեմ:

Հայությունը քուրդ վերնախավի համար դարձավ թշնամի տարր՝ արժանի կոտորվելու: Ավելին, հայերին պատուհասելիս, քրդերը չատ հաճախ թուրքերի համեմատ դրսևորում էին ավելի մեծ եռանդ ու պատրաստակամություն: Թուրքական կառավարության դրդմամբ՝ նրանք խժդժությունների թատերաբեմ դարձրին Հայաստանի շրջանների մեծ մասը՝ Դիարբեքիրը, Վասպուրականը, Տարոնը, Բասենը, Ալաշկերտը:

Քրդերի լայնատարած ասպատակությունները համընկան թուրքական վարչակարգի դեմ սկզբնավորվող հայկական շարժմանը: Դեռ խանձարուրում՝ շարժումը դեմ առավ քրդական հակազդեցությանը: Առաջին ըմբոստ հայ երիտասարդները հենց քուրդ հարստահարիչներից էին պաշտպանում իրենց ժողովրդի իրավունքները:

Հայերի նկատմամբ իրենց գազանություններով 80-ական թվականների վերջերից հայտնի դարձան Մշո դաշտի Զուխուրի շրջանին տիրող Միրզա բեկը, սրա ոճրագործ տնից սերված Մուսա բեկը և նրա եղբայրը՝ Ջաղո բեկը, Խնուսի շրջանից՝ Թաջէդդին բեկը, Զիլանի և Դուղարիի շեյխերը, տասնյակ ու հարյուրավոր ուրիշ հարստահարիչներ:

Քուրդ ավատապետերի և աղաների՝ հայերի վրա դրած ապօրինի ծանր տուրքերի, աղջիկների ու հարսների առևանգումների, կողոպուտների և սպանությունների, լայնածավալ այլ բռնությունների դեմ ոտքի ելած հեղափոխականներն իրենց առաջին մարտական մկրտությունն ստացել են ավազակաբարո դրացիների դեմ կռիվներում, որոնք ծավալվել էին Սասունի Պերմ, Մշո դաշտի Ղզըլաղաջ և Հերկերտ, Խնուսի շրջանի Ղա-

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Ա, Պոսթրն, 1950, էջ 288:*

[2] *Նույն տեղում:*

բաչորան և Կովնտուկ, Մանազկերտի և Բուլանուխի շրջանների Խարաբալար, Կոզակ, Շիրվանշեխ հայկական գյուղերում կամ դրանց մերձակայքում:

Քրդերի դեմ մղած այդ կռիվներում է, որ հայության ընդերքից սերվեցին բազում հերոս մարտիկներ. Արաբոն իր ընկերներով՝ Սասունում և Տարոնում, Հունոն՝ Ալաշկերտում, Ազրիպպասյանը և Գոլոչյանը՝ Վասպուրականում և Մանազկերտում, Արմենակ Ղազարյանը (Հրայր Դժոխք)՝ Մշո դաշտում, Միհրան Տամատյանը, Շենիկի Գրգոն, Գևորգ Զավուշը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ)՝ Սասունում և ուրիշներ:

Հայերի աճող դիմադրությունը սուլթան Աբդուլ Համիդ II-ի ուղեղում ծնունդ տվեց մի նոր դիվային մտքի՝ քրդերից ստեղծել հատուկ ռազմական ուժ՝ հայկական շարժումը բնում խեղդելու համար:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից սուլթան Աբդուլ Համիդի առած դասերից մեկը ռուսական կազակական զորամասերի ընդօրինակումն էր: Այդ զորամասերը պատերազմի ընթացքում, հատկապես կովկասյան ճակատում, թուրքական բանակին հասցրել էին հատու հարվածներ: Ռուս կազակները վարժ հեծյալներ էին, որոնք հայտնվում էին հատկապես այնտեղ, ուր կարիք էր զգացվում կենտրոնացնելու ուժերը՝ հարձակման համար:

Սուլթան Աբդուլ Համիդի հանձնարարությամբ Հայաստանում ստեղծվեցին բացառապես քրդերից կազմված հեծելագնդեր՝ ռուսական կազակական գնդերի նմանությամբ, որոնք ստացան ***համիդիե*** *անվանումը: Այդ գնդերի մեջ մտնող քրդերի համակրանքը շահելու համար կառավարությունը նրանց բաժանում էր զենք ու համազգեստ, տալիս էր զինվորական աստիճաններ և զանազան ուրիշ առանձնաշնորհումներ: Համիդիե զորախմբերի կազմումը հետապնդում էր ոչ միայն տնտեսական ու զինվորական նպատակ, այն է՝ ազատվել Հայաստանում բազմաքանակ զորքեր պահելու հարկադրանքից, այլև քաղաքական նպատակ՝ անմիջական սպառնալիքի տակ պահել հայությանը, դյուրացնել քրդերի ավարառությունները: Եվ որպեսզի հեծելագնդերն անողոք լինեն գյավուրների նկատմամբ, Աբ-*

դուլ Համիդը քրդերի մեջ տարածել տվեց այն սուտը, թե հայերը, ստանալով ռուսական կառավարության համաձայնությունը, որոշել են քրդերին համատարած ջարդի ենթարկել:

Արդարև, համիդիե գնդերը «ավազակների գնդեր» էին, բայց որովհետև սուլթանի անունն էր կցված նրանց, դրա համար որևէ մեկը չէր կարող բողոքով հանդես գալ: Նույնիսկ այն թուրք կուսակալները, որոնք համարձակվում էին Կ. Պոլսի կառավարությանը տեղեկագրել, թե համիդիե քրդերը մեծամեծ վնասներ են հասցնում իրենց կառավարած վիլայեթների բնակչությանը, որպես պատասխան ստանում էին խիստ հանդիմանություններ[1]:

Թուրք-քրդական միացյալ ուժերը 1894-ին դաժանորեն ճնշեցին Սասնո հայության հերոսական ապստամբությունը և սարքեցին ահռելի կոտորած, որը ցնցեց հայ ժողովրդին և ազդեցիկ արձագանք ունեցավ օտար պետություններում:

1895-1896 թթ. տեղի ունեցան նոր, է՛լ ավելի լայնածավալ կոտորածներ: «Այս ջարդերու նախաձեռնութիւնն ու կիրարկումը Թուրքերուն կը պատկանի,- գրել է Կարո Սասունին,- բայց քիւրտ ցեղը (բացի աննչան բացառութիւններէ) հոգուով ու մարմնով նետուեցաւ այդ բարբարոս գործին մէջ, ու պէտք է ըսել, որ հայկական նահանգներու ամբողջ կոտորածը իրականացաւ քիւրտերու ձեռքով: Այն վայրերը, որ կրցան դիմադրել՝ ազատուեցան, իսկ մնացած վայրերը իրենց արիւնը քամեցին եւ զոհ տուին 300.000 մարդ, բացի անոնցմէ որ կորսուեցան անօթութեան, հիւանդութեան եւ կրօնափոխութեան հետեւանքով: Քիւրտ ժողովուրդը դարձաւ ոէաքսիոներ (հետադիմական:- Հ. Ս.) տարր մը, թաթխուեցաւ թաթարական արիւնարբու բարքերուն մէջ, կորսնցուց հետզհետէ իր հպարտութիւնն ու վեհանձնութիւնը ու հանդիսացաւ հայութեան համար ամէնէն անհաւատարիմ ժողովուրդը»[2]:

Հարկ է նշել, որ այնուամենայնիվ, այդ օրհասական օրերին գտնվեցին, ճիշտ է՝ ոչ մեծ թվով, քուրդ մտավորականներ և

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 29:

[2] **«Հայրենիք»**, № 7 (91), մայիս, 1930, էջ 128:

փոքրիկ խմբակներ, որոնք բողոքի ձայն բարձրացրին իրենց ցեղի խելագար ընթացքի դեմ: Կոտորածներից հետո եկած 5-6 տարիներին նրանք բողոքում էին ցեղակիցների կատարած ոճիրների դեմ, միաժամանակ կանխատեսելով, որ քրդերի ձեռքով հայերի հետ հաշիվ մաքրելուց հետո, ոչ հեռու գալիքում, Թուրքերը ձեռնարկելու են քուրդ ժողովրդի իրավունքների և մարդկային արժանապատվության բռնադատմանը:

1898 թվականից սկսած, արտասահման անցած մի խումբ քուրդ մտավորականներ իրենց հոդվածներով դատապարտելով ցեղակիցների արարքները, միաժամանակ նրանց կոչ էին անում այլևս երբեք ձեռքերը չլվանալ հայերի արյունով:

Այդպիսի կոչ-հոդվածներից առաջինը՝ «Կոչ քիւրտերուն» վերնագրով և «Ս.» ստորագրությամբ, տպագրվել ու տարածվել էր քրդերի շրջանում: «Դրօշակը» թարգմանաբար դա լույս էր ընծայել 1898 թ. № 6-ում:

Կոչի մեջ քուրդ մտավորականը ցավ էր հայտնում ազգակիցների հետամնացության ու տգիտության համար: «Էյ քիւրտեր, գիտութեան դար է այս դարը, լեռներուն մէջ տգիտութեան ժամանակն անցած է: Այսօր բոլոր ազգերը դպրոցներուն մէջ կը սովրին. ուսման չնորհիւ է որ իրենց իրաւունքն ու ազատութիւնը բռնաւորներուն ձեռքէն կը խլեն: Տգէտ մնացած ազգերը գերի կ՚ըլլան: Ահաւասիկ դուք ալ տգէտ մնացած ըլլալնուդ՝ տիրող կառավարութեան գերին եղած էք»: Այդ տգիտության պատճառը կառավարությունն է, որը բռնանում է «ձեր կամքի վրայ» և չահագործում անխղճաբար: Քուրդ մտավորականն ցեղակիցներին կոչ էր անում. «Ապստամբեցէ՛ք և բռնաւորները սպաննեցէ՛ք»:

Ապա, անդրադառնալով հայերի նկատմամբ քրդերի անմարդկային վերաբերմունքի փաստին, կոչի հեղինակը շարունակում էր. «Սուլթան Համիտ ոչ խալ[ի]ֆա է եւ ոչ ալ փատիշահ, այլ՝ մարդասպան: Այդ մարդասպանը ձեզի կ՚ըսէ՝ հայերը սպաննեցէ՛ք. դուք ինչո՞ւ չէք ըսեր թէ չենք կարող մեր դրացին սպաննել ... Եթէ դուք ալ հայերուն հետ ոտքի կայնիք, ... բոլոր ժողովուրդները այդ ստրկութենէն կ՚ազատին: ... Թուրք կառավարութիւնը մեր կեանքի եւ ունեցուածքի թշնամին է: ... Դուք

հայերուն հետ միասին եղէ՛ք: Հայերը ձեր բարեկամներն են, դուք երկու հազար տարի է որ միասին ապրած էք...»[1]:

Արտասահմանում ստեղծված քուրդ հայրենասերների մի փոքր խմբակի անդամներից մեկը 1899-ին իր հայրենակիցներին ուղղել էր մի խրատական բաց նամակ, ուր ասված էր.

«Հայրենակիցնե՛ր, դուք ալ կը համաձայնիք կարծեմ, որ չատ հազուագիւտ է տեսնել քիւրտի մը ձայնը՝ միացած հայկական բողոքին ... Հայկական կոտորածները ծագած ատեն քաղաքակիրթ աշխարհի բոլոր լրագիրները գրեցին, թէ քիւրտերը իրենց դրացի հայերը կը սպաննեն: Այս անպատուութիւնը ամբողջովին ծանրացաւ քիւրտերուն վրայ...»[2]: Քուրդ մտավորականն այնուհետև գովեստի խոսքեր էր ուղղում Խիզանի, Բոհթանի, Ջեզիրեի, Սինջարի աշիրեթներին, որոնք մասնակցություն չէին ունեցել հայերի ջարդերին: «Այս տեսակ փաստերը ինծի կը դրդեն ցանկանալ,- նշում էր նա,- որ հայերը ձեռք-ձեռքի տուած ըլլան այս անխառն ու մաքուր մնացած քիւրտերուն հետ»[3]:

Նկատենք, որ մինչև 1900 թվականը հայ-քրդական համերաշխության քարոզներով հանդես եկող քուրդ մտավորականները սովորաբար իրենց հոդվածների ու կոչերի տակ չէին դնում իրենց իսկական անուն-ազգանունը, այլ հանդես էին գալիս «Մի քուրդ», «Երիտասարդ քուրդ» կամ անվան սկզբնատառը նշող ստորագրություններով:

Այդ սովորույթն առաջինը խախտեց հոչակավոր Բեդիրխան բեկի որդի Աբդուլ Ռահման բեկը, որը 1898 թ. գալով Ժնև, այնտեղ հիմնել էր «Քուրդիստան» անունով ըմբոստ թերթը: Իր պարբերականի էջերում նա խարազանում էր սուլթանի վարչակարգը, թուրք և քուրդ ժողովուրդներին հորդորում հայերի հետ ապրել հաշտ ու խաղաղ, միասնաբար պատրաստվել ապստամբության և տապալել Աբդուլ Համիդին: Թերթն արծարծում էր նաև Թուրքիայի ապագա պետական կառուցվածքի հարցերը,

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 6 (86), Հունիս, 1898, էջ 51:*

[2] *Նույն տեղում, № 1 (102), Հունվար, 1900, էջ 5-6:*

[3] *Նույն տեղում, էջ 6:*

քարոզում ինքնավարության ու դաշնության սկզբունքները: Ժնևում գտնված առաջին տարիներին Աբդուլ Ռահման բեկը համագործակցում էր ՀՅ դաշնակցության Արևմտյան բյուրոյի հետ:*

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում քրդերին ուղղված կոչ-հոդվածը, որի տակ դրված է «Բեդիրխան բեկի որդի Աբդուլ Ռահման» ստորագրությունը և կնքված է սեփական կնիքով: Գրությունից «Դրօշակը» թարգմանաբար տպագրել էր հատվածներ, որոնք ժամանակին մեծ հետաքրքրություն էին առաջացրել հայ ընթերցողների շրջանում: Բերում ենք «Քուրդիստանի» խմբագրի մտքերից մի քանիսը:

«Քիւրտե՛ր ... Մի՞թէ թոյլ կու տայ ձեր ծանօթ վեհանձնութիւնը ու քաջութիւնը, որ սպաննէք ... անմեղ հայերու կիներն ու երեխաները: Մեզի կը վայելէ՞ այսքան խաբուիլ փատիշահի մը չար դիտաւորութիւններէն, որ ձեր արարքներուն համար աշխարհին առջեւ ձեզ վայրենի կը ներկայացնէ:

... Անպաշտպան հայեր սպաննելով չէ՞ որ դուք կը քանդէք ձեր հայրենիքը եւ ձեր տուն-տեղը: Ձեզ աւերի եւ աւարի մղող վալիներ, միթէսարիֆներ եւ գայմագամներ ձեր ձեռքը բան ձգեցի՞ն արդեօք, եւ մանաւանդ ինչ որ ունէիք առնելէն զատ՝ չէ՞ որ ձեր պատիւն ալ առին»:

Անդրադառնալով քրդերի և հայերի նախկին բարի դրացիությանը, Աբդուլ Ռահմանը գրում էր.

«Այսքան բնական եւ հինաւուրց յարաբերութիւնները Ապտիւլ Համիտի ջարդարարութեամբ ոտնակոխ ընելով, հայերը ջարդելնիդ, այս եւ հանդերձեալ աշխարհի մէջ մեծ պատասխանատուութեան տակ կը ձգէ ձեզ: Դուք ալ անպատիժ չպիտի մնաք»:

Հոդվածի հեղինակը կարծում էր, որ դեռ հնարավոր է վերականգնել հայերի հետ քրդերի բարեկամությունը.

«Քիւրտե՛ր, ա՛լ հերիք է այսքան աղէտ[ի] եւ ձախորդու-

---

* *Շատ չանցած «Քուրդիստանը» փոխադրվեց Կահիրե (Եգիպտոս), ուր և շարունակում էր լույս տեսնել քրդերեն (տե՛ս* ***"Тюркологический сборник, 1973"****, изд. "Наука", Москва, 1975, с. 164):*

թեան պատճառ եղող անփութութիւնը եւ թշուառամտութիւնը: Ձեր նախահայրերու պատիւն ու համբաւը նամարդութեան հողովը ծածկեցիք: Չի ձանձրացա՞ք դեռ ձեր վրայ իշխող պաշտօնեաներուն ձեռքը յափշտակութեան, մարդասպանութեան եւ աւազակութեան գործիք ըլլալէ... Աշխատեցէ՛ք ձեր հին ազատութիւնը ձեռք բերելու եւ ձեր անցեալ երջանկութիւնը ետ դարձնելու»[1]:

Աբդուլ Ռահման բեկի՝ քրդերին ուղղված հոդված-կոչը թարգմանաբար տպագրելով, «Դրօշակը» 1901 թ. հունիսի և հուլիսի համարներում Քրիստափոր Միքայելյանի հեղինակած, «Հայ-քրդական յարաբերութիւններ» ընդհանուր վերնագրով խմբագրական երկու հոդվածներով անդրադարձավ հայ-քրդական համերաշխության խնդրին և պարզեց Դաշնակցության դիրքորոշումը և տեսակետներն այդ հարցում:

Նշելով, որ քուրդ-հայկական հակառակությունները արդյունք են մի շարք պատճառների, Քր. Միքայելյանը դրանցից առանձնացնում էր հետևյալները.

1. Քրդերը նախնական մակարդակի վրա գտնվող ժողովուրդ են և այսօր էլ ապրում են ցեղային վաղնջական ժամանակների կիսաթափառական կենցաղով: Ցեղապետերի, բեկերի, աղաների, ինչպես նաև քուրդ ներքնախավերի ապրուստի հիմնական միջոցներից մեկը, եթե ոչ գլխավորը, կողոպուտն է, որը սովորաբար ուղեկցվում է սպանություններով: Իրենց այդ արարքների համար նրանք ոչ միայն չեն զղջում, այլև կողոպուտը և սպանությունները, «իբրեւ ցեղի եւ անհատի բարեկեցութեան նպաստաւոր միջոցներ, նոյնիսկ առաքինութիւն են համարւում եւ գովաբանւում, փառաբանւում, երգւում են իբրեւ կտրիճի վայել յատկութիւններ»[2*]:

---

[1] **«Դրօշակ»,** № 4 (115), Հունիս, 1901, էջ 68: «Երիտասարդ քրդի» հակասուլթանական մոլեգնությունը, տարաբախտաբար, երկար չտևեց: Շուտով նա ընկավ երիտթուրք պարագլուխների ազդեցության տակ, մերվեց նրանց հետ և փոխեց իր գաղափարները:

[2] **«Դրօշակ»,** № 4 (115), Հունիս, 1901, էջ 66:

[*] Կուսակցության առաջնորդն այս եզրակացության էր հանգել «Դրօշակի» խմբագիր եղած ժամանակ Թուրքահայաստանից ստացված հարյուրավոր

Այսպիսի ապրելակերպը միանգամայն խորթ է հայերի հասարակական ըմբռնումներին, աշխարհընկալմանը, նիստ ու կացին, պատմական ավանդույթներին:

2. Հայերի դեմ քրդերի հակառակությունը մեծապես խթանում է թուրքական կառավարությունը, որը նրանց անկախության ձգտումները չեղում է դրացի հայերի ուղղությամբ՝ նրանց ներկայացնելով որպես քրդերի սոցիալական ծանր վիճակի մեղավորներ:

---

*նամակների ու թղթակցությունների, այնտեղի կենտրոնական կոմիտեների՝ ՀՅԴ ղեկավարությանն ուղարկած զեկուցագրերի ու տեղեկագրերի բազմակողմանի վերլուծության միջոցով: Քրիստափոր Միքայելյանի կարծիքին համահունչ էին նրա մահից առաջ և հետո կազմված կուսակցական բազմաթիվ փաստաթղթերում հայտնված տեսակետները: Այսպես, 1906 թ. նոյեմբերի 1-ի թվով, Ռուբեն Տեր-Մինասյանի և Գեղամ Տեր-Կարապետյանի ստորագրությամբ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի՝ ՀՅԴ առաջիկա չորրորդ ընդհանուր ժողովին ուղարկած տեղեկագիրը, անդրադառնալով հայ-քրդական համերաշխության խնդրին, հայտնում էր. «Քրդերի ... մէջ կայ մի փոքր խաւ՝ «ռայա» դասը, որը համարեայ նոյն չափի դժուարութիւնների է բախւում ցեղական, դարիլացեղաբանական կապակցուածութեան պատճառով: Քուրդը իրեն հաշւում է մի ցեղի, մի աշիրէթի մասնիկը, նա շարժւում է այնպէս, ինչպէս իր ցեղը, իսկ ցեղը պէտք է շարժուի այնպէս, ինչպէս հրամայեց ցեղապետը: Այնպէս որ այդ դասի մէջ տգիտութեան ընտանեկան աւանդութիւնների պատճառով անհատական դատողութիւնը, ինքնուրոյն շարժումը պակասում է ցածր դասակարգի մէջ: Թէեւ իրենք զգում են մեր պահանջների իրաւացի լինելը եւ իրենց անտանելի դրութիւնը, բայց դեռ շատ եւ երկար ժամանակ է հարկաւոր փչրելու նախ նրանց սնոտի հայեացքները, ցոյց տալու ճշմարտութիւնը եւ նրանց վարժեցնելը զոհաբերութիւնների, որ պահանջում է յեղափոխութիւնը» (**«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Դ, Պէյրութ, առանց թվականի նշումի, էջ 68): Հիրավի, քրդերի մեջ ավազակային դրությունը բնական վիճակ էր: Մանկության և պատանեկության տարիներին զուրկ լինելով մտավոր և բարոյական կրթություն ու դաստիարակություն ստանալու հնարավորությունից և դրա փոխարեն բազմաթիվ վատ օրինակներ տեսնելով, առնական տարիքին հասնող երիտասարդների համար զենքով ու փամփուշտներով զարդարվելը և ավազակության ելնելը փառք ու պատիվ էին: Նրանց համար ամենամեծ հպարտությունը մարդ սպանելու հանդգնությունն էր: Ավազակությունը քրդի կյանքի կերպն էր: Բացառություն էին կազմում միայն խեղճերը, տկարներն ու հաշմանդամները (տե՛ս **Ատոմ,** Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910, էջ 11):*

3. Քրդերի դավանած իսլամը այն աստիճան չի կաշկանդում անհատի գործողությունները, ինչպես քրիստոնեությունը, որն աստիճանակարգային հսկա սանդուղքի վրա դարերի ընթացքում հավատացյալների համար մշակել է հույժ կանոնակարգված ապրելակերպ: Այդ է պատճառը, որ քրդերն իրենց գործողություններում ավելի անկաշկանդ են, ինքնակամ ու քմահաճ, և իրենց չահատակությունները դիտում են որպես իսլամական կրոնի համար ընդունելի արարքներ:

Քր. Միքայելյանի կարծիքով՝ այս երեք գլխավոր գործոններն են, որ հատկապես դժվարացնում կամ անհնարին են դարձնում քուրդ-հայկական համերաշխությունը:

Դաշնակցության առաջնորդի նշած այս երեք պատճառներին մենք կավելացնեինք երկուսը.

1. Քրդի և հայի փոխհարաբերությունները Թուրքահայաստանի զգալի մասում խարսխված էին տնտեսական յուրօրինակ դրության վրա, որը պայմանավորված էր ավատապետի և ճորտի հարաբերություններով: Քուրդ վերնախավը նվաճումներով տեր էր դարձել հարյուրավոր հայկական գյուղերի, որոնց բնակիչները ընկել էին ճորտական կախման մեջ: Միայն Վասպուրականում 19-րդ դարի վերջին հաշվվում էր բարբառներով, սովորություններով, մինչև անգամ կրոնով իրարից զանազանվող, միմյանցից տարբեր 120 ցեղ՝ բոլորն էլ նստած հայերի հողերի վրա[1]: Ազգայինի և դասակարգայինի այդ հարակցությունը պարարտ հող էր ստեղծում հայ-քրդական հակառակությունների համար, 2. Թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարն սկսվել էր այն ժամանակ, երբ նույն բռնակալության դեմ քրդերի ապստամբությունները 80-ական թվականներին արդեն դադարել էին և հայերի դեմ թուրք-քրդական միացյալ ճակատ էր ստեղծվել:

Իր մատնանշած երեք կարևոր գործոնները Քր. Միքայելյանը համարում էր հաստատուն, որոնք տևականորեն ի դերև են

---

[1] *Տե՛ս* ***Յակոբ Շահպազեան****, Քիւրտօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 123:*

անելու քուրդ-հայկական համերաշխություն ստեղծելու ուղղությամբ հայկական քաղաքական ուժերի բոլոր ճիգերը: Մինչդեռ ժամանակը չի սպասում, գրում էր նա: «Հայկական հարցի բնաւորութիւնը, մեր ժողովրդի արդի կացութիւնը, կռուի չրջանին յատուկ մեր լարուած տրամադրութիւնը, ընթացիկ կեանքի անյետաձգելի պահանջները՝ մեզ թոյլ չեն տալիս հեռաւոր ապագայի վրայ հիմնել ժամանակակից մեր հոգսերը եւ գործնական ծրագիրները»[1]: Նշելով, որ հայերն ի վիճակի չեն ազդելու քուրդ-հայկական հակառակութիւնները պայմանավորող նշված երեք պատճառների վրա, Միքայելյանը գտնում էր, որ «Այժմէական կարեւորութիւն ունեցող միակ խնդիրը ուրեմն կը մնայ այն՝ թէ չէ՞ կարելի արդեօք, գոնէ յայտնի չափով, մեղմացնել այդ հիմնական արգելքների վնասաբեր բնաւորութիւնը, կամ՝ ուրիշ խօսքով՝ չէ՞ կարելի արդեօք նոյնիսկ այժմեան հանգամանքներում գտնել քրդական կեանքում ուրիշ այնպիսի գործօններ, որոնք կարող են, եթէ ոչ օրէցօր զարգացնել քիւրդ-հայկական համերաշխութիւնը ընդհանրապէս, գոնէ տալ մեզ որեւէ հող մասնակի, տեղական, երբեմն վաղանցիկ, երբեմն փոքր ի չատէ տեւողական, երբեմն աննչան, երբեմն լայն յարաբերութիւններ մշակելու համար»[2]:

Իսկ քրդերի ո՞ր չերտերի կամ անձերի հետ է հնարավոր երկխոսություն սկսել և խոսել համերաշխության մասին: Մինչ այդ, քրդերի հետ համագործակցություն ստեղծելու նպատակով հայկական քաղաքական ուժերը գործադրում էին երեք միջոցներ՝ դրամի ուժը, վախ ներշնչելը և հակասուլթանական քարոզչությունը: Ըստ որում՝ աշխատանքները տարվում էին քուրդ տարբեր խավերին պատկանող անձերի հետ: Բայց, ահա այժմ, Քր. Միքայելյանը գտնում էր, որ պետք է աշխատել միայն ու միայն ցեղապետերի ու կրոնապետերի հետ: Քանի որ քուրդը անառարկելիորեն հնազանդ է իր իշխանավորին, նրա անվիճելի կամքին, ուստի եթե հաջողվի միայն համոզել ցեղապետին,

---

[1] ***Քրիստափոր Միքայէլեան***, *Յեղափոխականի մտքերը, Ժնեւ, 1906, էջ 118:*

[2] *Նույն տեղում, էջ 119:*

նշանակում է համոզել նրա ամբողջ ցեղին: Ուստի, գրում էր Քր. Միքայելյանը, «մենք կարծում ենք, որ կայ որոշ հող, որի վրայ կարող են մշակուել եթէ ոչ մշտական, գոնէ ժամանակաւոր, եթէ ոչ լայն ծաւալով, գոնէ* ***մասնաւոր համաձայնութիւններ*** *այս կամ այն քիւրդ պետերի հետ»*[1]*: Այո՛, միայն ժամանակավոր համաձայնություններ և ոչ ավելին: Տևական համաձայնություններ քրդերի հետ կարելի է ձեռք բերել միայն ու միայն ուժի դիրքերից բանակցություններ վարելու դեպքում, եզրահանգում էր Քր. Միքայելյանը**: Ահա թե ինչո՛ւ հայերը պետք է ջանան միայն*

---

* *Քրդական ամեն աշիրեթի յուրաքանչյուր անդամ պարտավոր էր անառարկելիորեն ենթարկվել իր աշիրեթապետին, կուրորեն հնազանդվել նրա հրամաններին՝ իրավացի թե անօրեն: Աշիրեթի անդամը մինչև ծերություն ու մահ պետի հպատակ զինվորն էր: Եթե տվյալ ցեղի աշիրեթապետը կռվի էր բռնվում մի ուրիշ աշիրեթի առաջնորդի հետ, նրա հրամանով՝ իր աշիրեթի բոլոր արու անդամները մի կողմ էին ձգում տուն, տեղ, աշխատանք, և, զենքերն առած, միանում էին աշիրեթապետին: Վերջինս ապահովում էր սնունդն ու ռազմամթերքը: Եթե հպատակը կռվում սպանվում էր, նրա ընտանիքին որևէ վարձատրություն չէր տրվում: Աշիրեթապետը իր ենթակաների բացարձակ միապետն էր: Նա ուներ սեփական հողեր ու կալվածքներ, կողոպուտի ամենամեծ բաժինը պատկանում էր նրան: Աշիրեթի անդամները իրենց պետին տալիս էին որոշ տուրք՝ յուղ, ոչխար, ցորեն, դրամ և այլն, որպեսզի սա հոգար իր ծախսերը, կռվի համար պաշար ու ռազմամթերք ամբարեր (տե՛ս* ***Ցակոր Շահպազեան****, Քիւրտօ-Հայ պատմութիւն, էջ 141):*

[1] ***Քրիստափոր Միքայէլեան,*** *Յեղափոխականի մտքերը, էջ 122:*

** *Քր. Միքայելյանի առաջ քաշած մարտավարական այս դրույթը ժամանակին տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել հենց դաշնակցական տեսաբանների ու գործիչների միջավայրում: Շատերը գտնում էին, որ բեկերի հետ համագործակցությունը, խարսխված չլինելով ամուր հիմքերի վրա, չի կարող երկարատև լինել: Հին հեղափոխական, երևելի դաշնակցական գործիչ Մատթեոսը, շատ տարիներ անց, իր հուշերում գրում էր, որ հայերի թափած ջանքերը համարյա միշտ ավարտվում էին անհաջողությամբ, քանի որ դրանք սահմանափակ ու ժամանակավոր բնույթ ունեին: «Իսկ Դաշնակցութեան կողմից սկսուած յարաբերութիւնները քրդերու հետ ի հարկէ որ սխալ հիմքերու վրայ էին դրուած, քանի որ փոխանակ բուն իսկական աշխատաւոր դասին ձեռք մեկնելու, համերաշխութեան դաշն կապելու, ընդհակառակը, ձեռք էր մեկնում քիւրդ աղային, բէյին եւ այլն, որով եւ միշտ անյաջողութեամբ են պսակուել թափուած ջանքերը...» (****«Հայրենիք»,*** *№ 6 (30), ապրիլ, 1925, էջ 141-142):*

ուժին կարևորություն տալու գիտակցությունը ներշնչել նրանց: Հայերը չունեն ուրիշ միջոց, քան իրենց սեփական ուժերը հարըստացնելու և կենդանի օրինակներով ապացուցելու, որ ընդունակ են պաշտպանելու իրենց և նույնիսկ իրենց հարևանների շահերը: «Կ'ունենա՞նք այդ ուժը,- գրում էր Միքայելյանը,- կ'ունենանք եւ քիւրդ դաշնակիցներ»: Հակառակ դեպքում հայերը քրդերի համար մնալու են «իբրեւ հարստահարութիւնների եւ թալանի առարկայ, քան իբրեւ զինակիցներ ընդհանուր թշնամիների դէմ»[1]:

Քրդերի հետ փոխհարաբերվելու Քր. Միքայելյանի արտահայտած մտքերն ուղեցույց եղան Թուրքահայաստանում գործող դաշնակցական կազմակերպությունների համար, որոնք ավելի մեծ եռանդով շարունակեցին քրդերի հետ համերաշխության գետին պատրաստել և այդ նպատակով չեչտադրեցին ցեղապետերի և աշիրեթապետերի հետ շփումներն աշխուժացնելու փորձերը:

19-րդ դարի վերջին երկու-երեք տասնամյակներին առանձին հայ ազատամիտ տարրեր որոշ փորձեր արեցին մոտենալու քրդերին և լուսավորչական աշխատանքներ տանելու նրանց շրջանում: Նման փորձերն ավելի կազմակերպված և հետևողական բնույթ ստացան 70-ական թվականներին, բայց գործադրված բոլոր ջանքերն ամուլ մնացին: 80-ական թթ. հայ գործիչները նորանոր ջանքեր գործադրեցին հայ-քրդական երկխոսություն գլուխ բերելու համար: Դրանց թվում հատկապես տևական աշխատանքներ տարան Ներսես եպս. Խարախանյանը, Շմավոնը, Դերսիմի Քեռին, Կայծակ Առաքելը, Ավոն և ուրիշներ, որոնց եռանդը, սակայն, չէր հատուցվում[2]:

Թուրքական սահմանադրությանը նախորդող շրջանում ազգային-հեղափոխական երեք կուսակցությունները՝ արմենականները, Հնչակը և Դաշնակցությունը տարիներ ի վեր մեծ ճիգեր թափեցին, որպեսզի հայ-քրդական թշնամությունը մեղմեն ու քուրդ բարեկամներ ձեռք բերեն: Գործի հաջողության հույսը

---

[1] ***Քրիստափոր Միքայէլեան**, Յեղափոխականի մտքերը, էջ 123:*

[2] *Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 287:*

նրանք կապում էին այն բանի հետ, որ կողք-կողքի ապրող երկու ժողովուրդներն իրենց սովորություններով ու կենցաղով շատ նման են և այդ հանգամանքը կարող է նպաստավոր լինել համագործակցության և թուրքական բռնակալության դեմ համատեղ պայքարի համար: Հայ գործիչներն ամեն ինչ անում էին քրդերին հասկացնելու, որ հայության ազատագրական կռիվն ուղղված է ոչ թե քուրդ ժողովրդի, այլ աբդուլհամիդյան վարչակազմի և թուրք բռնակալների ձեռքին խաղալիք դարձած քուրդ վերնախավի դեմ:

Քրդերին համերաշխության կոչ անելով, հայերը կես-աշուղական երգով նրանց հորդորում էին.

«Է՛ջ, քիւրդ ի դաշտ
Ընդ մեզ լե՛ր հաշտ,
Ծովու հովու,
Ոսկւոյ բովու
Ե՛կ մերձեցիր.
Այժմեան քո վարք
Մեր նախահարց
Մահուան վերն էր»:

Նոր դարասկզբին և հատկապես Սասունի երկրորդ ապստամբության նախօրյակին և ընթացքում հայ-քրդական համերաշխություն ստեղծելու համար մեծ աշխատանքներ էին տանում Հրայր Դժոխքը, ս. Կարապետի վանահայր և ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի անդամ Վարդան վարդապետը, Գևորգ Զավուշը: Այդ ուղղությամբ կարևոր դեր էր կատարել 1907 թ. մայիսի 27-ին Սուլուխի կռվում Գևորգ Զավուշի հետ նահատակված կարսեցի Յակոն: Գործունյա, ճարպիկ, մանավանդ սքանչելի պատմող Յակոն մեծ համարում ուներ քրդերի շրջանում: Ահա թե ինչո՛ւ նրա կորուստը շատ զգալի էր հայ-քրդական հարաբերությունների տեսակետից[1]:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 10 (404), հոկտեմբեր, 1959, էջ 51:

Դերսիմի շրջանում եռանդուն գործունեություն էր ծավալել Ռուբեն Շիչմանյանը (Դերսիմի Քեռի)՝ իր ընկերների հետ: Այստեղ տարվող աշխատանքներն այնքան արդյունավետ եղան, որ զգալի թվով քրդեր բարեկամական կապեր հաստատեցին հայ հեղափոխականների հետ, հայերի նկատմամբ տոգորվեցին բարեկամական անկեղծ զգացումներով*: Քրդերի հետ տարվող աշխատանքներն արդյունավետ էին Վասպուրականում, որի շնորհիվ քրդական մի քանի ցեղեր բարեկամաբար տրամադրվեցին հայերի հանդեպ: Աշխատության նախորդ էջերում արդեն խոսվել է այն մասին, թե քուրդ ուղեկցորդները (վալադները) և չալակավորները ինչպիսի կարևոր գործ էին կատարում. Կովկասից ստացած զենքերը նրանք Պարսկաստանի վրայով տեղափոխում էին Վան և հանձնում Դաշնակցության տեղի կազմակերպությանը:

Դաշնակցության Արևելյան բյուրոն շատ կարևոր համարելով Վանի նահանգի արևելյան սահմանի վրա գտնվող Հաքյարիի քրդերի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելը, ՀՅԴ Վրեժի (Թավրիզի:- Հ. Ս.) կենտրոնական կոմիտեին հանձնարարում է՝ Ատրպատականի կուսակցական գործիչներից մեկին ուղարկել Շամստինանի (Շամզդինան, Շեմտինան) շրջան՝ այնտեղի ազդեցիկ տեր Մեհմեդ Սըդըխի** հետ հանդիպելու և կապեր հաստատելու համար: Կենտրոնական կոմիտեն 1903 թ. աշնանը Շամստինան է ուղարկում հայտնի կուսակցական գործիչ Մալխասին:

Հասնելով Շամստինան, Մալխասը տեսակցում է շեյխի հետ և Դաշնակցության կենտրոնի անունից բանակցում նրա հետ:

Դաշնակցության բանագնացը հենց սկզբից շեյխին ասում

---

* Պատահական չէ, որ Դերսիմի քրդերը 1915 թ. եղեռնի օրերին իրենց մոտ ապաստան տվեցին և ստույգ մահից փրկեցին զգալի թվով հայերի:

** Շամստինանի շեյխ Մեհմեդ Սըդըխը շեյխ Ուբայդուլլահի կրտսեր որդին էր: Նախորդ էջերում խոսվեց Ուբայդուլլահի մասին, որը 80-ական թվականներին դատապարտում էր քրդերի հակահայկական գործողությունները: Հոր տեղը բռնած Սըդըխն ուներ մոտ 10.000 զինյալ և կառավարությունից համարյա անկախ էր:

է, որ եթե այս նախնական բանակցությունները հաջող ավարտ ունենան, ապա իր կուսակցության կենտրոնական մարմնի ներկայացուցիչը կգա Շամստինան և կկնքի վերջնական համաձայնություն:

Բանակցության ընթացքում Մալխասը չեյխ Սըդըխին պարզում է Դաշնակցության տեսակետները քուրդ-հայկական հարաբերությունները կարգավորելու և եթե հնարավոր է՝ համերաշխություն հաստատելու վերաբերյալ: Նա նշում է, որ հայերը քրդերին համարում են նույն հողի հարազատ եղբայրներ: «Ըսի, որ մեր չարժումը չի ձգտիր միայն հայ ժողովուրդի դրութիւնը բարելաւելու, այլ բոլոր անոնց, որոնք կ'ապրին այդ հողամասի վրայ: Դժբախտաբար, համիտեան բռնակալութիւնը, չահագործելով քիւրտերու տգիտութիւնը՝ միջոց է դարձուցեր զանոնք կռուեցնելու մեզի հետ»[1]:

Այնուհետև Մալխասը ցեղապետին բացատրում է, որ հայերի կռիվների մեծ մասը, անկախ իրենց կամքից, հարկադրաբար ուղղվում է նաև վարչակարգի պաշտպան քրդերի դեմ, որոնց նկատմամբ, սակայն, թշնամություն չունեն:

Զրույցի ընթացքում հայ բանագնացը ՀՅԴ անունից չեյխին առաջարկում է, որ նա՝ ա) ապահովի Դաշնակցության սուրհանդակների և ապրանքատար չալակավորների անվտանգ անցումը մինչև Խոշաբի շրջան կամ, ավելի ճիշտ՝ Վերին Հայոց ձոր, բ) իր բարոյական հեղինակությամբ օգնի, որպեսզի Դաշնակցության և սահմանամերձ աշիրեթապետերի միջև ձեռք բերվեն որոշ համաձայնություններ:

Իր հերթին, չեյխ Սըդըխը տեսակետներ է պարզում քուրդ-հայկական հարաբերությունների վիճակի և դրանց հնարավոր բարելավման մասին: Նա նշում է, որ հայերը, լինելով քրիստոնյա, որոշ չափով գտնվում են Եվրոպայի պաշտպանության ներքո, իսկ քրդերը որևէ պաշտպան չունեն: Ցավոք, ասում է չեյխը, մեծ տերությունները հավատացած են, որ հայերին վրա հասած դժբախտությունների գլխավոր պատճառը քրդերն են, և քրդի՝ որպես մեղավորի, անունը տեղ է գտել նույնիսկ միջազգային

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 10 (94), օգոստոս, 1930, էջ 49:*

պաշտոնական փաստաթղթերում: Նույնպիսի մեղադրանք քրդերին ներկայացնում են նախ և առաջ հայերը: «Ձեզ սիրելու մասնաւոր պատճառ մը չունինք. բայց գիտենք, որ այս հողին վրան դուք այնչափ հին էք, որչափ մենք եւ որ նորեկը Թուրքն է, որու հանդէպ երկուքս սիրալիր տրամադրութիւն մը ունենալու պատճառ [մը] չունինք: Մեր հողամասը ընդարձակ է, լայն ու լայն, կը բաւէ մեր երկուքին ալ: Սկսելով Բաշգալայէն ու Նորտուզէն մինչեւ Մուսուլ մերն է. վերն ալ՝ ձերը: Ահա՛ այս բանի մասին է, որ պէտք է մտածենք մենք: Եթէ դուք մեզի աջակցիք, մենք ալ պատճառ մը չունինք ձեզ[ի] հակառակելու՝ ձեր ծրագիրներու իրագործմանը համար»[1]:

Ընդունելով Դաշնակցության՝ Մալխասի միջոցով արած առաջարկները, շեյխը ներկայացնում է հանդիպակաց պահանջներ, որոնց կատարումից հետո միայն հետևելու էին իր հետագա քայլերը: Այդ պահանջները նա ձևակերպում է հետևյալ կետերի մեջ. Ա) Իր (շեյխի) ծախսերով Դաշնակցությունը Շամստինանում պետք է ստեղծի փամփուշտի գործարան, որից ինքն էլ (Դաշնակցությունը) կարող է օգտվել, Բ) Դաշնակցությունը պարտավորվում է իր ներկայացուցիչների միջոցով նպաստել, որպեսզի Շամստինանում աճեցրած ծխախոտը արտահանվի Եգիպտոս ու Եվրոպա, Գ) Քուրդիստանի՝ իր գծած սահմանների նկատմամբ Դաշնակցությունը չպիտի որևէ առարկություն ունենա, Դ) Դաշնակցությունը հանձն է առնում ձեռք բերել եվրոպական քրիստոնյա պետությունների օժանդակությունը՝ հօգուտ Քուրդիստանի:

Ինչպես տեսնում ենք, թուրքական վարչակարգի նկատմամբ քուրդ ցեղապետի վերաբերմունքն ավելի արմատական էր, քան Դաշնակցությանը: Եթե Դաշնակցության կոիվն ուղղված էր արդուլհամիդյան կարգերի դեմ և չէր հավակնում անկախության պահանջ առաջադրելու, ապա շեյխ Սըդըխը քուրդ ժողովրդի թշնամի էր համարում ոչ միայն գոյություն ունեցող թուրքական վարչակարգը, այլև ընդհանրապես թուրքական պետությունը: Դաշնակցությունը կողմ էր համաօսմանյան

---

[1] ***Մալխաս,*** *Ապրումներ, «Հայրենիք», № 2 (50), դեկտեմբեր, 1926, էջ 135:*

հեղափոխության միջոցով արդուլհամիդյան զուլումից կայսրության բոլոր ժողովուրդների ազատագրության՝ երկրի տարածքային ամբողջականության պահպանմամբ հանդերձ, իսկ քուրդ ցեղապետը հետամուտ էր Քուրդիստանի քաղաքական անկախությանը և նույնիսկ գծել էր նրա սահմանները:

Շեյխ Մեհմեդ Սըդըխի հետ Մալխասի հանդիպումը գործնական արդյունք չունեցավ, թեև քուրդ բարձր դասակարգի հետ երկխոսության դռները չփակվեցին:

ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի կազմած փաստաթղթերից մեկում նշվում էր, որ քուրդ բարձր դասակարգը, չնայած տնտեսական հրամայողական պայմանների բացակայությանը, զանազան հանգամանքներից դրդված, հարում է հայ հեղափոխությանը: «Դրանցից ոմանք կալուածատէրերն են, որոնք օգտւում են հայկական գիւղերից եւ վախենալով՝ յարում յեղափոխութեանը: Այդպիսի բարեկամներ ունենք Դուրանի շատ գիւղերում, որոնք հայ խղճուկ գիւղացիների խարխուլ խրճիթների արանքում կանգնեցրած ունեն իրենց գեղեցիկ քէօշկերը (ապարանքները:- Հ. Ս.)»: Փաստաթուղթը դրանց շարքին էր դասում նաև քուրդ հալածված գյուղապետերին, որոնց տնտեսականը թեև լավ էր, բայց հնուց սովոր լինելով ազատության, այժմ կառավարությունից ենթարկվում էին ճնշումների: «Դրանք կիսաանկախ բէգերն ու ցեղապետերն են, որոնք առատ ոսկիների մէջ նոյնիսկ նեղ են զգում կառավարական ցանցի մէջ: Այդ դրամի մարդիկ մեզ աւելի դիւրամատչելի են եւ կարելի է յուսալ»[1]:

Վասպուրականում, որտեղ հայերը համեմատաբար մեծ ուժ ունեին, քրդերն իրենք էին մոտենում հայերին: «Քիւրտը զօրեղին կողմն է միշտ եւ անոր կողմն է, որ անհատական շահ կ'ապահովէ իրեն[2],- գրում էր Վահան Փափազյանը: ... Քիւրտերու մեծագոյն մասը կը փնտռէր մեզ միայն այն ատեն, երբ լսէր ֆէտայիի հրացանի ձայնը, մեր պատժիչ արշաւախումբերու հարուածը կրէր կամ տեսնէր թուրք խուժանին կամ զօրքին

---

[1] ***«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,*** *հատ. Դ, էջ 68:*

[2] ***Վահան Փափազեան,*** *Իմ յուշերը, հատ. Ա, էջ 287:*

փախուստը: Հակառակ պարագային՝ մեզ հալածող ոյժերու յառաջապահը կը դառնար...»[1]*:*

Վասպուրականի քուրդ ցեղապետերից շատերը հանդիպումներ էին խնդրում դաշնակցական պատվիրակների հետ: Կուսակցությունն ընդառաջում էր և իր գործիչների միջոցով մնայուն կապ պահում: Այդ նահանգում 1905–1906 թթ. հայերի հետ բարեկամություն փնտրող քրդական ցեղախմբերից էին բակուրցի, հասանանցի, եղնանցի, միրանցի, դուդարցի, ալանցի աշիրեթները:

Քրդերի հետ տարվող աշխատանքները հաջող էին ընթանում նաև Տարոնի աշխարհում: Այստեղ Դաշնակցության և հայ ֆիդայիների հանդեպ բարեկամական վերաբերմունք ունեին մի շարք քուրդ բեկեր: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ՝ Խութա քուրդ ցեղապետ Ղասըմ բեկը, ջիբրանցի Դավրիշը և Կոկեն, ալմանցի Ֆաթհին, ռոչկանցի Ռըզկոն, հասանանցի Մեհմեդ Դալտին, խորժմկցի Զեյնալ բեկը, Տարոնի դաշտից ուրիշ աղաներ, բեկեր, աշիրեթապետեր կատարում էին ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտրոնական կոմիտեի հանձնարարությունները:

Պարսկա-տաճկական սահմանի վրա էին բնակվում հայդարանցի, իսկ ավելի հյուսիս՝ ջելալցի քուրդ ցեղախմբերը: Ալական լեռան լանջին էր հիմնավորված հայդարանցի ցեղապետ Կոփ Մահմեդը՝ Աբաղայի շրջանի տերը, որի աջակցությամբ սուրհանդակային և փոխադրական ճանապարհները ս. Թադեի վանքից դեպի Վասպուրական դարձել էին ապահով: Հայերի հետ բարեկամական կապեր էր պահում Թուրք-պարսկական սահմանի մի ուրիշ հատվածում ընկած բավական ընդարձակ տարածքի տեր, հայդարանցի ցեղապետ Մուստաֆա բեկը: Ս. Թադեի վանք-զինակայանի վանահայր Գևորգ ծ. վրդ. Նալբանդյանը (Ընծայր) ուներ՝ տարբեր խավերից քուրդ բարեկամներ, որոնք համարյա ամեն շաբաթ գալիս էին վանք և տեղեկություններ հաղորդում անցած-դարձածի մասին: Հայերի համար ապահով էր Բայազետից ոչ հեռու Թափա գյուղի և Ծաղկանց

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Ա, էջ 288:*

լեռների վրայով անցնող ճանապարհը: Այս շրջաններում բնակվում էին հայդարանցի մի քանի ցեղեր, որոնցից մեկի գլխավորը Ալի բեկն էր, որն իրեն շատ մոտ էր համարում հայությանը և բոլոր գործերում աջակցում էր Դաշնակցությանը: Հայերի հանդեպ նկատելիորեն դեպի լավն էր փոխվել նաև Ատրպատականի քրդական վերնախավի վերաբերմունքը: Այստեղ հայտնի դեմք էր աշիրեթապետ Շաքիր փաշան, որը նախկինում բազմիցս շատ նեղություններ էր պատճառել տեղի հայությանը: Դաշնակցության բյուրոյի հանձնարարությամբ՝ Վահան Փափազյանը (Կոմս) տեսակցել էր նրա հետ, բացատրել հայերի նպատակները, նրան համոզել, որ երկու ժողովուրդների ազատագրական ձգտումները հիմնականում համընկնում են, ուստի բանականությունը թելադրում է, որ նրանք ձգտեն համագործակցության: Կոմսի և Շաքիրի հանդիպումը շրջադարձային եղավ և հայերի հետ վերջինիս հարաբերությունները գնալով սերտացան: Նույն շրջանում էր բնակվում Խանասորի դաշտում հայերից պատիժ կրած մազրիկ ցեղի գլխավորը՝ Շարաֆ բեկը, որն ավելի ուշ աշխատեց բարեկամ դառնալ Դաշնակցության հետ:

Այդ ամենի հետևանքով նշված վայրերում որոշ չափով թեթևացել էր հայ գյուղացիների վիճակը: Վասպուրականի զանազան շրջաններ արդեն համարյա զերծ էին քրդական հարստահարումներից ու հարձակումներից: Տարոնի մի շարք գյուղերում, ինչպես նաև պարսկա-տաճկական սահմանի երկայնքով ընկած հայկական շատ բնակավայրերում փաստորեն դադարել էր քրդերի գերիշխանությունը:

Ռուբեն Տեր-Մինասյանի վկայությամբ՝ հայերի բարեկամներ էին Տարոնում հաստատված Զեյնալ աղայի գլխավորած դմլիկ ցեղի քրդերը: Սրանք անկեղծ զգացմունքներ էին տածում հարևան հայ գյուղացիների նկատմամբ, վերջիններիս ընտանիքների ցանկալի հյուրերն էին:

Քուրդ վերնախավից սերած հաղվագյուտ մտավորականների մեջ էլ թեև արթնացել էին թուրքական բռնակալությունից ազատագրվելու պահանջ և հայերի հետ համերաշխություն հաստատելու ոգի, բայց և այնպես, քրդական իրականության հանգամանքների պատճառով, նրանք ի վիճակի չէին իրենց

մտածումները փոխանցելու ժողովրդական լայն զանգվածներին: Քուրդ կրթվածներից շատ քչերն էին համակրում հայերին և գործակցում նրանց հետ: Սակայն 1907 թ. կեսերից ավելի հաճախակի դարձան քուրդ առանձին մտավորականների հետ շփումները: Դրանց որոշ չափով նպաստում էր 1908 թ. սկզբներից Կ. Պոլսում քրդերեն լույս տեսնող, համեմատաբար ազատական «Քուրդ» թերթը[1]:

Այս պայմաններում հայերը վերհիշեցին քրդերի մեջ լուսավորություն տարածելու ուղղությամբ անցյալում իրենց թափած ջանքերը և կրկին ձեռնարկեցին այդ գործին:

Արշակ Ալպոյաճյանի վկայությամբ՝ Խնուսցի Հրաչյան 1908 թ. պատրաստել էր հայատառ քրդերեն «Այբբենարան»[2]: Այդ դասագիրքը, ինչպես Կարնո «Յառաջ» թերթն էր հաղորդում, լույս պիտի տեսներ իր տպարանից: Այդ առթիվ «Յառաջը» գրում էր, թե այդ գործը «հետաքրքրական աշխատութիւն մըն է, որուն բովանդակութիւնը վերցուած է զուտ քրտական կեանքէ: Ուրախանալի է որ այս եւ ապագային լոյս տեսնելիք նման գիրքեր պիտի աջակցին մեր դրացի քուրտ ժողովրդեան մէջ ուսումն ու կրթութիւնը տարածելու եւ քաղաքակրթութեան ճամբուն մէջ դնելու զանոնք»[3]:

Մեզ հայտնի չէ, թե այս «Այբբենարանը» և նրա հաջորդ պրակները լույս տեսա՞ն, թե՞ ոչ:

Հայերի հանդեպ դրական տրամադրություններ էին աստիճանաբար առաջանում նաև քուրդ ռայաների մոտ, այն էլ՝ ավելի հաճախ և ավելի անկեղծ: Դա հող ստեղծեց, որպեսզի մի քանի տեղերում Դաշնակցությունն իր պաշտպանության տակ առնի իրենց արյունարբու աշիրեթապետերից հալածված քրդերին՝ նրանց կապելով հայկական հեղափոխության հետ:

Իհարկե, հայերի հետ բարեկամացող քրդերը հաճախ դա անում էին իրենց շահի համար: Նրանց ակնկալիքներից գլխավորը հայերից զենք ու զինամթերք ձեռք բերելն էր, թեև վերջին-

---

[1] Տե՛ս *“Тюркологический сборник, 1973”*, с. 174.

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[2], թ. 4:

[3] Նույն տեղում, վավ. 94, թ. 2:

ներս իրենք մեծապես զգում էին դրանց կարիքը:

Որքան էլ խիստ լինի հայոց պատմության դատաստանը քրդերին, բայց անիրավություն գործած կլինենք, եթե ցույց չտանք նաև նրանց գովեստի արժանի հատկանիշները:

Այսպես, զազարի ցեղը բուռն ձգտում ուներ դեպի երկրագործությունը և ուսումը, նրա մեջ կային գրագետ կրոնականներ, կային նաև իրավագետներ: Քրդերը նաև հնարագետ էին: Արաբ պատմագիր ալ-Մասուդին գրելով քրդական երաժշտության մասին, նշում էր, որ խաչնարած քրդերը մի յուրատեսակ փող էին հնարել, որի նվագով շատ արագ հավաքում էին իրենց ցրված ոչխարները, իսկ Իբն Բաթթութա ճանապարհորդը, որ եղել էր Պարսից ծոցի բոլոր եզերքներում, հավաստում էր, թե այնտեղի քրդերը քաղցր բնավորություն ունեն, մարդասեր և հյուրասեր են[1]:

Հայ պատմական գրականության մեջ և ժամանակակիցների հուշագրություններում կան մեծ թվով վկայություններ, որ քուրդն ընդհանրապես հիանում է հերոսական գործերով, նույնիսկ եթե քաջություն գործողն իր թշնամին է: Նա բարձր էր գնահատում զենքին ապավինած հայորդիների քաջությունն ու ասպետականությունը, մեծ ակնածանք տածում հայ հեղափոխականների նկատմամբ:

Ռուբեն Տեր-Մինասյանը, որ երկար տարիներ չփվել էր քրդերի հետ, մոտիկից ուսումնասիրել նրանց սովորույթները, կենցաղը, բնավորությունը, մեզ է փոխանցել հետաքրքրական պատմություններ, վկայություններ, խոհեր: «Քիւրտը,- գրել է նա,- ոչ միայն սիրահար է արկածներու, կռուի, թալանի, այլեւ սիրահար է երգի: Ան իր ընթացիկ կեանքը, աշխատանքը, սէրը եւ ատելութիւնը անպայման կ'երգէ. իսկ եթէ տեսնէ կռիւ մը, մահ մը, հերոսական դէպք մը, անպայման կը յօրինէ եղանակ մը, երգ մը՝ յաւերժացնելու համար այդ, անմահացնելու համար թէ՛ իր եւ թէ՛ հակառակորդին հերոսութիւնը. քիւրտը դիւցազնավէպեր ստեղծող է: Ան շարունակ չփման մէջ էր հայ յեղափո-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 2:*

խութեան հետ, յաճախ ընդհարում կ'ունենար մեր ֆէտայիներուն հետ եւ այդ ընդհարումներու ատեն ընդհանրապէս զոհեր կ'ունենար: Այդ զոհերը անմահացնելու, իր վիշտը արտայայտելու համար՝ երգեր կը յօրինէր: Այդ երգերուն մէջ թէեւ կ'անիծէր ֆէտայիները, բայց անոնց արժանիքները կը դրուատէր, կը դիւցազնացնէր, որպէսզի իր մեռելները ինկած լինէին դիւցազուններէ»[1]:

Ռուբենը վկայում է, որ կան հարուրաւոր քրդական երգեր, որոնցում ատելություն չկա հայ ֆիդայիների նկատմամբ, ընդհակառակը՝ վերջիններս ներկայացվում են որպես քաջ ու ազնիվ տղամարդիկ, անձնազոհ վրիժառուներ: «Այս ժողովրդական երգերը (որոնք եթէ հաւաքուին, մեծ հարստութիւն պիտի կազմեն) բերնէ բերան, աչիրէթէ աչիրէթ, մարդէ մարդ կ'երգուէին, կը յղկուէին, կը զարդարուէին եւ իբր մի դիւցազնավէպ կը հասնէին Դիարբէքիրի նահանգի քրտախօս շրջանները, մինչեւ հայ քրտախօսները, մինչեւ հեռաւոր Վերան-Շէհէրի աւատական իշխաններու վրաններուն տակը»[2]: Այդ քուրդ իշխաններն ասում էին, որ եթե ֆիդայիները գյավուր չլինեին, արժանի էին լինելու մեր թոռունները: Իսկ նրանցից մեկը՝ Իբրահիմ փաշան, ավելացնում էր. «Գյավուր լինեն թե ֆլահ, բայց նրանք իգիթ են, մեզ հարազատ են, մեր արյունակիցն են»: Ռուբենը վերհիշում է, որ այդ փաշան հաճախ էր Ալադինա Միսաքին կանչում, նստեցնում իր դիմացը և պատվիրում երգել Խարսի, Սուլուխի, Տալվորիկի, Շենիկի երգերը: «Այս քիւրտ, թուրք եւ հայ լեզուներով երգերը, որոնց հեղինակներուն մեծ մասը քիւրտերն էին, կը չոյէին Դիարբէքիրի նահանգի հայութեան եւ այլ քրիստոնեայ տարրերու ինքնասիրութիւնը, իսկ իսլամ քիւրտերուն մէջ կը հասունցնէին գործակցութեան, եղբայրութեան զգացմունքները, որովհետեւ ֆէտայիները այդ երգերով միայն թուրքին թշնամի եւ արդարութեան համար կռուողներ կը դառնային, ինչ որ հա-*

---

[1] ***«Հայրենիք»**, № 3 (290), մարտ, 1950, էջ 45:*

[2] *Նույն տեղում:*

* *«Ֆլահ», «Ֆելլա», «Ֆելլահ» – մշակ, երկրագործ, հայ քրիստոնյա, խաղաղ աշխատանքի մարդ:*

մապատասխան էր նաեւ իրենց՝ քիւրտերու ներքին ձգտումներուն»[1]:

Քիչ չէին գովերգութիւնները, որ քրդերը հյուսել էին հայ քաջամարտիկ հայդուկներից մեկի կամ մյուսի մասին: Հատկապես տարածված էին Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Սեբաստացի Մուրադին, Գևորգ Զավուշին, Անդրանիկին նվիրված քրդական երգերը: Քրդական դյուցազներգության մեջ ֆիդայապետերը հանդես էին գալիս առնական կերպարների մեջ:

Ժողովրդական այդ երգերից մեկում Սերոբի մասին ասվում էր.

Մենք Ըռզայի հետ գնացինք Ներրովթայ* սար.
Մենք այնտեղ տեսանք քաֆրը** Սերոբ փաշան
Իր կնոջ ու ջանֆիտաներու հետ:

Ասոնք հետի ընկել էին ձոր ու դաշտ.
Ոչ ձիեր ունէին եւ ոչ մի բան.
Երբ Սերոբ փաշան մեզ տեսաւ,
Մաւզեր հրացանը իր ձեռքն առաւ.
Ջանֆիտաներն իր աջ ու ձախը բռնեցին.
Մենք մէկ ալ տեսանք որ Ալիէ Կասօն, Ալիէ Մահմուտը
Իրենց ձիերէն վար գլորուեցան:

Սերոբ փաշան կանչեց, Ըռզա՛, Ըռզա՛.
Մեզ թո՛ղ, գնա՛ քո գործին.
Եթէ դու մեզ չը թողնես,
Քո բոլոր մարդիկներին կը խեղդենք:
...
Մենք տեսանք որ չանորդին
Մեզ հետ կատակ չընէր.
Մեզ ոչ ձի մնաց ու ոչ բան մը.
Մենք թողինք գնացինք մեր գործին:

---

[1] «Հայրենիք», № 3 (290), մարտ, 1950, էջ 45:

* Նեմրութ:

** Անհավատ:

Քաֆրը է այն մարդը
Որ ուզենայ Սերոբ փաշան սպանել.
Կրօն ալ ունի նա, հաւատ ալ.
Այդպիսի տղայ մեր մէջ իսկի չը կայ.
Ափսոս որ նա «ֆըլահ» է[1]:

Ոչ բոլոր ժողովուրդներն են քրդերի նման ունակ ըստ արժանվույն գնահատելու և գովերգելու հակառակորդի քաջությունը, անկեղծ հարգանք տածելու նրա անձնազոհության նկատմամբ, հյուսելու դյուցազներգություններ:

Ավելին, հայ ազատամարտի տարբեր դրվագները գովերգող՝ հայերի ստեղծած չատ երգեր թափանցում էին աշիրեթներից ներս և երգվում քուրդ թե՛ հասարակ ժողովրդի և թե՛ վերնախավի կողմից:

Հայ ֆիդայիներին քրդերի արած գովքը պատահական չէր: Թուրքերի կամ քրդերի հետ զինված ընդհարումների թունդ պահերին անգամ ֆիդայիները չէին մոռանում իրենց տված երդումը, որ ձեռք չեն տալու կանանց ու երեխաներին: Խանասորի արշավանքից հետո հայ զինյալների չուրթերին մի երգ հայտնվեց, որն անմիջապես դարձավ աշիրեթներում ամենատարածված երգերից մեկը: Երգի տողերում գթության կոչ էր արվում հայերին կեղեքող ու ջարդող քուրդ տղամարդկանց, կանանց ու երեխաների նկատմամբ.

– Եամա՜ն, Աստուա՜ծ, ֆետան եկաւ, ո՞ւր փախչինք,–
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրտուհին,
– Մի՛ վախենար, հանգիստ կեցի՛ր, բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆետան:

1907 թ. աշնան սկզբից արձանագրվեցին թուրքերի դեմ քրդերի ու հայերի համատեղ հանդես գալու մի քանի դեպքեր:

Հոկտեմբերի 29-ին թուրքական մի զորամաս՝ 400 հետևակ, 100 հեծյալ և 60 ոստիկան երեք թնդանոթով շրջապատում են Տարոնի քուրդ և հայ խառը բնակչությամբ Խվներ գյուղը, որը պատկանում էր Ղասրմ բեկին, իսկ գյուղի հայերը նրա ղոլամներն էին:

---

[1] *Յակոբ Շահպազեան, Քիւրտо-Հայ պատմութիւն, էջ 169:*

Թուրք հրամանատարը Ղասըմ բեկից պահանջում է վերցնել բնակչությունը և հեռանալ գյուղից: Մերժում ստանալով, նա թնդանոթային կրակի տակ է առնում Խվները, որից հետո սկսվում է կատաղի կռիվ: Հայ և քուրդ երիտասարդները մի քանի ժամ չարունակ դիմադրում են թուրքական զորքին, ապա բեկի գլխավորությամբ թողնում են գյուղը և բարձրանում մոտակա սարը: Զորքը մտնում է Խվներ և դաժան դատաստան տեսնում քրդերի ու հայերի հետ. սպանվում է երկու չեյխ, որոնք կրոնական դրոշակով գնացել էին դիմավորելու զորքին, մի մոլլա, 10 ուրիշ քրդեր, 7 հայ, որոնցից մեկը՝ կին: Գյուղը կողոպտելուց հետո, զինվորները նրան կրակի են մատնում: «Խվների արիւնահեղ կռիւը,- գրում էր «Դրօշակը»,- նշանակութիւն ունեցող դրուագ մըն է թուրք եւ քիւրդ յարաբերութիւններու մէջ. քիւրդերը թէեւ սպանութեան կոյր գործիք [են], սակայն սկսած են քիչ մը հասկնալ կարծես եւ պոստել յօնքերնին թէ հայերէն յետոյ կարգը իրենց կու գայ»[1]:

Անդրանիկը համակարծիք չէր «Դրօշակի» լավատեսությանը: Թուրքերի դեմ քրդերի դիպվածային ոտնձգությունները և հայերին մոտենալու նրանց դեպքից-դեպք արած հավաստիացումները և երկչոտ քայլերը նա պատահական պոռթկումներ էր համարում: «Ի հարկէ,- ասում էր նա,- լաւ է, որ քրդերը մեզ հետ գործեն, բայց այդ չեն անի»[2]: Անդրանիկը դեմ չէր, որպեսզի քայլեր արվեն հայերի նկատմամբ քրդերի թշնամանքը մեղմելու համար, բայց երբեք վստահություն չուներ նրանց վրա որպես բարեկամների և հույս էլ չուներ, որ նման բաղձանքը երբևիցե կարող է իրականանալ: Նա նշում էր, որ «կարգ մը քիւրտ աշիրէթներու հայերու նկատմամբ ցոյց տուած մերձեցման ժեստերը արդիւնք են վախի ազդեցութեան, թէ հայերը կը կտրեն իրենց ճամբաները»[3]:

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 1 (189), Հունվար, 1908, էջ 10:*

[2] ***«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,*** *հատ. Գ, Պէյրութ, առանց թվականի նշումի, էջ 115:*

[3] ***Անդրանիկ Զելեպեան,*** *Զօրավար Անդրանիկ եւ հայ յեղափոխական շարժումը, Երեւան, 1990, էջ 233:*

ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի 13-րդ նիստում (1907 թ. մարտի 1), երբ քննարկվում էր քրդերի հետ հարաբերությունները բարելավելու հարցը, Անդրանիկն իր ելույթում ասում էր. «Եթէ կառավարութիւնը փոքր-ինչ սանձահարի քրդերին, նրանց տրամադրութիւնը դէպի մեզ անպայման կբարելաւուի, որովհետեւ կրօնական հակառակութիւնը ինքնըստինքեան կարեւոր գործօն չէ մեր յարաբերութիւնների մէջ. քրդերը շատ էլ կրօնամոլ մահմեդական չեն եւ շատ բան էլ չեն հասկանում այդ կրօնից»: Ապա՝ «Երբ նրանք կարող են ազատ թալանել, առեւանգել, սպանել՝ ինչո՞ւ պէտք է միանան իրենց գոհերի հետ»[1]:

Անդրանիկի կանխատեսումներն անվրեպ էին: Բավական էր միայն մի դեպք, որ ջուրը նետվեին կատարված աշխատանքները և սկսված գործընթացը հետ չրջվեր դեպի քրդերի նկատմամբ հայերի ունեցած անվստահության նախորդ ժամանակների մակարդակը: Դեպքը կապված էր Միրզա բեկի դավադիր տան ժառանգ, Մուսա բեկի եղբայր, վերը նշված Ղասըմ բեկի հետ:

Երբ Գևորգ Չավուշի սարսափը տարածված էր Տարոնի աշիրեթներում, նրա ազդեցությունից վախենալով, Ղասըմ բեկը մոտեցել էր ֆիդայիներին և, գոնե առերես, դարձել նրանց բարեկամը: Հայդուկային խմբերի հետ նա քանիցս շրջագայել էր, նաև մասնակցել իշխանությունների դեմ նրանց կռիվներին: Հայերի հետ Ղասըմն այնքան էր մերձեցել, որ անդամագրվել էր Դաշնակցությանը և նույնիսկ դարձել ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կոմիտեներից մեկի անդամ: Հետևելով Ղասըմի օրինակին, նրա զինվորներից ոմանք նույնպես, ինչպես, օրինակ՝ Հրսեն, Մըստոն, Հասանոն մտնելով հայ ֆիդայական խմբերի մեջ, քաջաբար կռվում էին նրանց կողքին:

Տարոնից ՀՅԴ վերադաս մարմնին ուղարկված մի փաստաթղթում կարդում ենք. «Մեր այժմեան բարեկամներից աչքի է ընկնում Խութայ քուրդ ցեղապետ Ղասըմ բէկը, որ շատ ծառայութիւններ է անում, բայց թէ վերջը ինչո՞վ կվերջանայ, չենք կարող երաշխաւորել...»[2]:

---

[1] **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Գ, էջ 31:

[2] Նույն տեղում, հատ. Դ, էջ 68:

Հալածվելով կառավարական ուժերից, Ղասըմ բեկն ապաստանել էր Մոդրգանի լեռներում: Իշխանությունները, նրան բռնել չկարողանալով, որոշեցին դիմել իրենց լավ հայտնի միջոցի: Նրանք մարդ ուղարկեցին Ղասըմի մոտ և խոստացան նեռում չնորհել, եթե նա կարողանար վերացնել ֆիդայիների ղեկավարներին: Քանի որ Գևորգ Զավուշն արդեն սպանված էր և վերացել էր նրա սարսափը, Ղասըմ բեկը հակվում է դավադրության կողմը և ծրագրում իր անելիքը: Նա ֆիդայիների մոտ է ուղարկում երկու հայի՝ Մշո դաշտի Ավազուտ գյուղացի Մալխասին ու Ղարս գյուղի տերտերին և նրանց միջոցով ապսպրում է, որպեսզի բոլոր ֆիդայիները անցնեն Զուխուրի շրջան, միանան իրեն և միասին, Մոդրգանի ու ավելի հարավի աշիրեթների գլուխն անցած՝ համատեղ կռիվներ սկսեն կառավարական ուժերի դեմ:

Երկու հայի միջոցով ստացված առաջարկի շուրջ ՀՅ դաշնակցության Տարոնի շրջանի ղեկավարության և ֆիդայիների միջև վեճ է ծագում: Մեծամասնությունը դեմ է արտահայտվում Ղասըմի արած առաջարկին, երկյուղելով, որ դրա հետևում կարող է լինել դավադիր նպատակ: Բայց վանեցի երիտասարդ ֆիդայի Զավենը, որը, տարված լինելով ձախ սոցիալիստական գաղափարներով, ջերմ ջատագով էր տարբեր ազգերի համերաշխության, պնդում է ընդունել ստացված առաջարկը: Նրան կողմ են արտահայտվում խմբի չուխուրցի ֆիդայիները: Վերջապես, երկար վեճերից հետո, ընդունվում է միջին որոշում: Զուխուրցի ֆիդայիները, որոնց միանում են ոչ չուխուրցի դաշնակցականներ Սայդոն և Ջնդոն, ինչպես նաև քուրդ ֆիդայիներ Հասանոն և Հրսեն, գնում են Ղասըմ բեկի մոտ, իսկ մյուս ֆիդայիները մնում են Մշո դաշտում և Սասունում:

Երբ խումբը հասնում է Զուխուր, նրան դիմավորում է Ղասըմ բեկը: Բոլորը միասին իջևանում են Արդոնք հայ գյուղում և հյուրընկալվում գյուղացիներից մեկի տանը: Միասին սեղան են նստում, ըմբոշխնում ընտիր գինին: Ուշ երեկոյան հայ տղաները իրենց «ընկեր» Հասանոյի հետ պառկում են քնելու: Ղասըմի հանձնարարությամբ՝ Հասանոն գիշերը հավաքում է գինով-

ցած հայորդիների դենքերը, հետո ներս է կանչում Հրսեին և Ղասրմի մի քանի դոլամների, որոնք հապշտապ «գործի» են անցնում՝ սպանում քնած Զավենին, Սայդոյին ու Ջնդոյին: Հայ-քրդական համերաշխություն հաստատելու համար Զուխուր եկած երիտասարդ հայորդիների փայփայած իղձը թաթախվում է իրենց իսկ արյան մեջ:

1907 թ. օգոստոսին տեղի ունեցած Փեթարի կռիվը, որի մասին խոսք է եղել աշխատության նախորդ գրքում, հայ ֆիդայիների վերջին կռիվն էր՝ դարձյալ քրդերի դեմ: Այստեղ՝ Զուխուրում հայ մարտիկներին չվիճակվեց դենք գործածել: Նրանք նահատակվեցին՝ նույնիսկ չդգալով իրենց մահը:

Թուրքական իշխանությունները բարձր գնահատեցին կատարված «քաջագործությունը», ներում չնորհեցին Ղասրմին, որից հետո սա նոր եռանդով բազում ոճիրներ կատարեց հայերի դեմ:

Զուխուրի դեպքը կանգնեցրեց հայ-քրդական հարաբերությունների հնարավոր զարգացումը: Թեև Տարոնի քրդերից ոմանք դատապարտեցին Ղասրմի տմարդի արարքը, բայց հայության մեջ գնալով է՛լ ավելի խորացավ այն համոզումը, որ տվյալ ժամանակում քրդերի հետ բարեկամություն հաստատելու ճիգը պարապ զբաղմունք է:

Դեպքից հետո Դաշնակցությունն սկսեց ավելի սթափ մոտենալ խնդրին և մեծ կասկածանքով ընդունել այս կամ այն աշիրեթապետի բարեկամական հավաստիացումները: Կուսակցությունը համոզվել էր, որ ձեռնարկված քայլերը և ստացված արդյունքները չատ հեռու են միմյանցից և հայ-քրդական ոչ բարեկամական հարաբերությունները տեսանելի հեռանկարում հազիվ թե հանգուցալուծում ստանան:

Նույնիսկ Զուխուրի դեպքից հետո վերակազմյալ հնչակյանները քրդերին մոտենալու մեկ-երկու փորձ կատարեցին: Նրանց «Ազգ» թերթը գրում էր. «Հայաստանի մէջ մեր կացութիւնը ու ճակատագիրը տարբեր պիտի ըլլար այսօր, եթէ սկիզբէն աշխատուած ըլլար հայ-քրդական համերաշխութեան համար: Թէեւ ուշ ըլլայ, բայց նորէն, ամէ՛ն հնարաւոր միջոցներով, պէ՛տք է ճգնիլ, պէ՛տք է յամառիլ միջացեղային ատելութիւններն ու թիւրիմացութիւնները տակաւ մեղմացնելու եւ հուսկ

ուրեմն բառնալու Թուրքիոյ ժողովրդային զանգուածներուն մէջէն»[1]:

Նույնպիսի մի քանի անհաջող փորձ արեց նաև հին Հնչակը:

Ինչպես վերակազմյալ Հնչակյանների, այնպես էլ հին Հնչակի ջանքերն այս անգամ նույնպես ապարդյուն անցան[2]:

Այսպիսով, հակառակ հայերի թափած հսկայական ջանքերի, անհնարին եղավ համերաշխություն հաստատել երկու ժողովուրդների միջև: «Քիչ բան չահեցինք համերաշխութեան երկար տարիների մեր քարոզներով. հազիւ կարողացանք զինուորագրել մեր դրօշակի տակ մի քանի տաճիկ ու քիւրդ ընկերներ...»,- գրում էր «Դրօշակ»ը[3]: Չնայած բոլոր փորձերին, հայ հեղափոխականներին չհաջողվեց հակաթուրքական պայքարի հայ-քրդական ընդհանուր ճակատ ստեղծել: Քրդությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ազատագրության ճանապարհի գլխավոր խոչընդոտը: Օսմանյան ռազմա-ավատապետական բռնակալությունը կարողացավ իր կողմը գրավել քրդական ցեղերի մեծ մասը: Թուրք-քրդական համագործակցությանը նպաստում էր նրանց կրոնակից լինելը: Թուրքական իշխանությունները առավելագույն հետևողականությամբ էին օգտագործում կրոնական անհանդուրժողականությունը և մոլեռանդությունը՝ խորացնելու համար այն վիհը, որ նրանք բացել էին քրդերի և հայերի միջև: Քրդերն ու հայերը թշնամական ճամբարների բաժանվեցին: Քրդերը միշտ մնացին արդուլհամիդյան ռեժիմի պաշտպանության դիրքերում, մնացին սուլթանի ձեռքին կույր գործիք՝ պատուհասելու դրացի հայությանը[4]:

Իրականում՝ քրդերը հայերին թշնամի լինելու լուրջ պատճառներ չունեին, կարող էին հայոց հողի վրա հայոց հետ ապրել հաշտ ու խաղաղ, բայց գերադասեցին հակառակն անել: Եկվորը Հայաստանի շատ մասերում արդեն իրեն տեր էր համարում, իսկ

---

[1] **«Ազգ»**, № 62, 4 հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Երիտասարդ Հայաստան»** (Նիւ Եորք), 28 հունվարի 1966 թ.:

[3] **«Դրօշակ»**, № 8 (205), օգոստոս, 1909, էջ 97:

[4] Տե՛ս **"Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилаетах"**, Тифлис, 1908, с. 55.

բնիկ ժողովուրդը ճակատագրով դատապարտված էր ապրելու անհանգիստ դրացու հետ և մաքառելու գոյության համար:

Չնայած բոլոր արհավիրքներին, հայերն իրենց հայրենիքում 20-րդ դարասկզբին մեծամասնություն էին կազմում քրդերի համեմատ: Վերջիններիս հիմնական զանգվածը շարունակում էր մնալ Քուրդիստանում, մի մեծ հատված կար Պարսկաստանում: Նրանք թափանցել էին նաև Օսմանյան կայսրության ուրիշ մի քանի շրջաններ ևս՝ Սիրիա, Կիլիկիա, Տավրոսի լեռներից արևմուտք և այլ վայրեր: Քրդերի ընդհանուր թիվը մոտավորապես 2,3 միլիոն էր, այսինքն՝ ավելի պակաս, քան միայն Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թիվը: Ռուս նշանավոր պատմաբան Նիկոլայ Գոլոբորոդկոն 1907 թ. գրում էր. «Կիսավայրենի քուրդ ժողովուրդը բաժանված է բազմաթիվ մանր ցեղերի, որոնք ցրված են ընդարձակ՝ 150.000 քառ. կիլոմետր տարածքի վրա: Նրանց թիվը ճշտված չէ, ենթադրվում է, որ Թուրքիայում նրանք 1-1,5 միլիոն են, իսկ Պարսկաստանում՝ մոտ 800 հազար»[1]: Մի այլ աղբյուրում՝ նույն ժամանակ Թուրքիայում քրդերի թիվը նշված է 1 միլիոն[2]:

Չնայած հայերը թվաքանակով ավելի էին, բայց քրդերի ձեռքին էր զենքը, այն էլ՝ կառավարության տված: Իշխանություններն առաջվա պես կանգնած էին քրդերի մեջքին, իսկ բազմաքանակ համիդիեները անարգել շարունակում էին ասպատակությունները հայկական նահանգներում:

Կահիրեում հրատարակվող "Le Jounal du Caire" (**«Լը ժուռնալ դյու Քեռ»**) հանդեսում 1907 թ. հոկտեմբերին տպագրած հոդվածում կոմս դը Կլանիկը գտնում էր, որ «Թուրքիայում ներկա տագնապալից դրության ամենացայտուն ապացույցը իշխանությունների աջակցությամբ հայ ժողովրդի նկատմամբ քրդերի իրականացրած զանգվածային ոճիրներն են»[3]: Նա նշում էր, որ

---

[1] **Տե՛ս Н. Н. Голобородько**, Турция, изд. 2-ое, исправленное и дополненное, Москва, 1912, с. 14.

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 4:

[3] Կոմս դը Կլանիկի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Երկրի ձայնը»** պարբերականի 1907 թ. հոկտեմբերի 28-ի (№ 22) համարում, էջ 10:

քուրդ թոռունը զինվոր չէ և չի ենթարկվում ոչ մի օրենքի, բայց նա երկրագործ էլ չէ և չի վճարում ոչ մի հարկ, չունի որևէ կալվածագիր և օրենքով սահմանված հողակտորներ, բայց նրան են պատկանում ամենալավ արոտավայրերն ու հողակտորները: Քուրդի համար չկա ո՛չ ոստիկան, ո՛չ զինվոր, ո՛չ պետական պաշտոնյա: Նա երկրագործ հայի ձեռքով հնձում է նույն հայի ցանածը, կողոպտում նրա վաստակը և հասույթի համապատասխան չափով կաշառում պետական պաշտոնյաներին: Իսկ պետությունն այդ ամենին նայում է մատների արանքով, քանի որ իր օգտին է ծառայեցնում քրդական ցեղերի զինական ուժը[1]:

Անդրանիկն ու իր համախոհները գտնում էին, որ չնայած այդ ամենին, հայը կարող է քրդական արհավիրքի առաջն առնել, եթե կազմակերպվի և զինվի ինչպես հարկն է: Նա համարում էր, որ քրդերի զինական ուժի մասին պատկերացումները չափազանցված են, և փոքրաթիվ, բայց լավ զինված կանոնավոր հայկական զորքը, եթե այդպիսին հաջողվի ստեղծել, կարող է հեշտությամբ ճնշել անհանգիստ հարևանի վայրագությունները:

Հայ-քրդական հարաբերությունների ***հինգերորդ փուլն*** *ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիները, երբ քրդությունը, չնչին բացառություններով, մեղսակից եղավ Հայոց ցեղասպանությանը, իր ձեռքերը թաթախեց հարյուր հազարավոր հայ և ասորի անմեղ մարդկանց արյան մեջ: Հայոց հազարամյակների հայրենիքը խլվեց իր տիրոջից, իսկ եղեռնագործությունից փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ:*

Երիտթուրքերի ծրագրած և թուրքերի ու քրդերի ձեռքով իրականացրած հայոց ցեղասպանությունը մարդկության նորագույն պատմության ամենանողկալի հանցագործություններից մեկն է, որը հարյուրամյակների խոր ակոս է փորել հայ ժողովրդի հոգում:

---

[1] *Կոմս դը Կլանիկի հոդվածի թարգմանությունը տե՛ս* ***«Երկրի ձայնը»*** *պարբերականի 1907 թ. հոկտեմբերի 28-ի (№ 22) համարում, էջ 10:*

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ ԹՈՒՐՔ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՏԱՐՐԵՐԻ ՀԵՏ

Վերջապես չարժվել էր սկսել նաև հակասուլթանական տրամադրություններով համակված թուրք տարրը, այսինքն՝ թուրքերի այն մասը, որը գտնվում էր «ազատական» «երիտասարդ թուրքերի» գաղափարական ազդեցության տակ:

19-րդ դարի 30-ական թվականներին թուրքական գրականության մեջ առաջ էին եկել քաղաքագիտական թեմաներով ստեղծագործող մի խումբ գրողներ, որոնց ընդհանուր միտումների արտահայտիչն եղավ Ռեշիդը: Սրանք իրենց անվանում էին եվրոպական առաջադեմ գաղափարների նվիրյալներ, և, որդեգրելով «երիտասարդ թուրքեր» անունը, հանդես էին գալիս որպես բարենորոգիչներ՝ քննադատելով պահպանողական «ծեր թուրքերին»:

Կանգնելով «օրինական հողի» վրա, «երիտասարդ թուրքերն» իրենց հրապարակային, հասարակական գործունեության գլխավոր նպատակը համարեցին խարխլված կայսրության վերածնությունը, հին Թուրքիայի վերափոխումը նոր, «երիտասարդ Թուրքիայի»:

«Նոր Թուրքիա» ասելով երիտթուրքերը բնավ չէին հասկանում կայսրության բազմազգ ժողովուրդների համար իրավահավասար մի դրության առաջքերում: Այդ անվան տակ նրանք նկատի ունեին հետևյալը՝ Թուրքիայի ողջ տարածքում ընդհանուր ապահովություն, ազատության և օրինական հավասարության սկզբունքի կիրառում երկրի ազգային և կրոնական համայնքների, օսմանյան բոլոր հպատակների նկատմամբ, մուսուլմանների և քրիստոնյաների միջև եղած տարբերությունների ջնջում, զինվորական բոլոր աստիճանների հասնելու, քաղաքացիական որևէ պաշտոն զբաղեցնելու հնարավորություն սուլթանի բոլոր հպատակների համար՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից: Այդ բոլորը չատ կարճ ժամանակում կյանքում իրականացնելու շնորհիվ պիտի անհետանային օսմանյան երկրում բնակվող ցեղերի միջև գոյություն ունեցող դարավոր երկպառակությունների պատճառները և վերանային

կրոնական խտրականությունից առաջացած անհավասարությունները: Դրա հետևանքով՝ Թուրք էթնոսի հիման վրա ստեղծվելու էր օսմանյան ներդաշնակ ամբողջությունը[1], այդ ամբողջության մեջ ձուլվելու և չքանալու էին կայսրության բոլոր ազգերն ու ցեղերը: Սա էր երիտթուրքերի առաջ քաշած գաղափարների և գործունեության գլխավոր նպատակը:

Երիտթուրքերի գլխում ծագած այս բոլոր մտքերը խմորվել էին որպես անհող պատրանքներ և այդպիսիք մնացին այդ պատրանքների ազդեցության տակ առաջացած երիտթուրքական շարժման գոյության ամբողջ ժամանակաշրջանում:

Հետագա տասնամյակներին, իրենք իրենց Ռեշիդի աշակերտներ համարող Ֆուադը, Ալին, Ջեմալը իրենց քաղաքագիտական գրվածքներով աշխատեցին ոչ միայն տարբեր կողմերով զարգացնել ուսուցչի գաղափարները, այլև ջանացին ստեղծել համախոհների այնպիսի մի շրջանակ, որն ի վիճակի լիներ իր ձեռքն առնելու պետական գործերը և երիտթուրքական գաղափարներին տալու ոգի ու մարմին: Ավելին, երկիրը սահմանադրությամբ օժտելու համար նրանց միջավայրում խմորվեց մի շարժում, որը գլխավորեց Թուրք նշանավոր պետական գործիչ, հրեական ծագում ունեցող Միդհատ փաշան:

Թուրքերի սահմանափակ միջուկը ձգտում էր, արևմտյան ազդեցության ներքո, ազատվել շրջապատող կաչկանդումներից: Երկրում գործելու պայմաններ այլևս չգտնելով, «Երիտասարդ Թուրքիայի» գաղափարին հավատարիմ մնացած մի շարք գործիչներ, թողնելով կայսրության սահմանները, ապաստանեցին Եվրոպայում, հատկապես՝ Փարիզում: Այստեղ էին հաստատվել Ահմեդ Ռիզա բեյը, պատմաբան Մուրադ բեյը և ուրիշներ: Եվրոպայում և այլուր նրանք ստեղծեցին քաղաքական խմբեր, հրատարակեցին թերթեր, որոնք ուղղություն էին տալիս շարժման մեջ ընդգրկված խմբերի գործունեությանը, ինչպես նաև իրենց էջերում արծարծում էին գաղափարական այլազան հարցեր:

---

[1] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիլյան,** *Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 9-11:*

Փարիզում Ահմեդ Ռիզան փորձեց վերահրատարակել նախկինում այնտեղ լույս տեսած, ապա փակված «Իթթիհադ» («Միություն») թերթը, բայց, ի վերջո, նպատակահարմար գտավ հրապարակ բերել նոր պարբերական: 1895 թ. վերջերին նա Փարիզում սկսեց հրատարակել «Մեշվերեթ» (“Meshveret”– խորհուրդ, քննարկում) թերթը՝ թուրքերեն և ֆրանսերեն տարբերակներով՝ իբրև «Երիտասարդ Թուրքիայի» օրգան[1]: Կազմակերպությունը մի թերթ էլ սկսեց լույս ընծայել Եգիպտոսում, թուրքերեն՝ «Շուրա-ի ումմեթ» («Ազգային խորհուրդ») անունով[2]: «Մեշվերեթի» էջերում մշակվում և վերջնական տեսքի էին բերվում երիտթուրքական շարժման՝ Ահմեդ Ռիզայի գլխավորած ծայրահեղ աջ թևի քաղաքական գաղափարները, որոնք իրենց արտացոլումը գտան «Մեշվերեթ» թերթի 1897 թ. օգոստոսի 15-ի համարում տպագրված «Երիտասարդ Թուրքիայի ծրագրի» մեջ[3]:

Ի վերջո ձևավորում ստացավ երիտթուրքերի քաղաքական կազմակերպությունը՝ «Իթթիհադ վե թերաքքը ջեմիյեթի» («Միություն և առաջադիմություն կոմիտե») անունով:

Շարունակելով իրենց նախորդների՝ Ռեշիդի, Ֆուադի, Ջեմալի, Ալիի, Միդհատի գործը, երիտթուրքերը, սակայն, չկարողացան շատ բան ավելացնել նրանց գաղափարական ժառանգության վրա: Ինչպես «ծերերը», «երիտասարդները» նույնպես պաշտպան էին կանգնել թուրք հոգևորականությանը, որի բացարձակ ազդեցության տակ էր գտնվում թուրքերի կյանքը՝ իր բոլոր արտահայտություններով ու դրսևորումներով: Նրանք ուժի մեջ էին թողնում մուսուլման կղերի դասակարգային իրավունքներն ու արտոնությունները, անգամ չէին մտածում ամենաթույլ իսկ քննադատական խոսք ասել նրանց հասցեին՝ երկյուղելով դրանով իսկ ստվեր նետել իսլամի վրա, նսեմացնել

---

[1] *Տե՛ս* ***М. Кочар****, Армяно-турецкое общественно-политические отношения и Армянский вопрос, Ереван, 1988, с. 73-74.*

[2] *Տե՛ս* ***«Երկրի ձայնը»****, № 20, 14 հոկտեմբերի 1907 թ.:*

[3] *Տե՛ս* ***А. Ф. Миллер****, Краткая история Турции, ОГИЗ – Госполитиздат, Москва, 1948, с. 117,* ***Ю. А. Петросян****, Младотурецкое движение, “Наука”, Москва, 1971, с. 180.*

սուլթան-խալիֆի կերպարը: Կալվածատեր-ավատապետ, ազնվական-աղայական վամպիր դասակարգի մոլեռանդ աջակիցներ լինելով, երիտթուրքերը բացահայտ արհամարհանք էին տածում թուրք (չխոսելով արդեն այլազգի) գյուղացիության, արհեստավորության և փոքրաթիվ բանվորության նկատմամբ: Եվ պատահական չէ, որ նրանք խորթ մնացին նույնիսկ թուրք ժողովրդին, քանզի երկար ժամանակ չէին կարողանում ձևավորվել որպես քաղաքական կուսակցություն՝ բառիս ընդունված իմաստով, չունեցան իրենց ճյուղավորումները երկրի ամեն կողմում, խուսափեցին բուն ժողովրդի մեջ մտնելուց և նրան կազմակերպելուց[1]:

Թերևս միակ գաղափարը, որ երիտթուրքերը մուծեցին իրենց նախորդների թողած ժառանգության մեջ, իր գլխավոր գծերով ուղղված էր մի նպատակի՝ ջանալ որոշակիացնել այդ ժառանգությունը և նոր իրողությունների պայմաններում դա հարմարեցնել թուրքական ազգայնականության (նացիոնալիզմի) աճած պահանջներին:

Արտասահմանում ապաստանած երիտթուրքերն իրենց համարում էին հեղափոխականներ, բայց հեղափոխական բան չկար նրանց մոտ: Նրանց շարժումը, որն այն ժամանակ Թուրքերի մեջ գործող միակ ընդդիմադիր քաղաքական հոսանքն էր, դեռ չափազանց թույլ էր, նրանում անհաճո քաոս կար և նա կարոտ էր հեղափոխական տարրական դասերի ու բարոյական կատարելագործման: Նրանք, առավելագույնը, դիմումներ էին հղում Կ. Պոլսի և ուրիշ երկրներում գտնվող թուրք բարձրաստիճան պետական այրերին և կրոնավորներին, հիշատակագրեր էին ուղղում նույնիսկ սուլթան Աբդուլ Համիդին՝ խնդրելով վերահաստատել սահմանադրությունը և նրա միջոցով վերջ տալ եվրոպական պետությունների միջամտությանը Օսմանյան կայսրության ներքին գործերին, ջնջել այն բոլոր առանձնաշնորհումները (կապիտուլյացիաները) և մասնավոր իրավունքները, որոնք դարերի ընթացքում երկիրը դարձրել են եվրոպացիների

---

[1] Տե՛ս **Լեւոն Զորմիսեան**, Համայնապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հատ. Բ, Պէյրութ, 1962, էջ 487:

սեփականությունը և այդ միջոցով վերականգնել կայսրության անցյալի փառքը: Ահմեդ Ռիզան միայն 1889–1894 թթ. այդպիսի յոթ դիմում էր հղել Աբդուլ Համիդին[1]:

Բայց Աբդուլ Համիդը անգամ չէր մտածում որևէ երիտթուրքի որևէ պատասխան տալու մասին: Սուլթանը չէր հավատում իր «հիվանդ երկրի» անցյալի փառքի վերականգնման հնարավորությանը և միայն մտածում էր կայսրության գոյության պահպանման մասին, որին հենց նպաստում էր եվրոպացիների առանձնաշնորհումների կարգը: Նա քաջ գիտակցում էր, որ Թուրքիայում եվրոպացիների կատարած ձեռնարկները և նրանց ներդրած դրամագլուխներն են եղել պատճառ, որ կայսրությունը չարունակվել է գոյություն ունենալ: Եվրոպական պետությունների տնտեսական ու քաղաքական հակադիր շահերը, այդ շահերի վրա ծավալված կատաղի մրցակցությունը թուրքական դիվանագիտությանը միշտ հնարավորություն են տվել խուսանավելու մրցակիցների միջև և երկարաձգելու պետության հոգեվարքը: Ավելին, պետության համար վնասակար համարելով երիտթուրքերի անլուրջ տեսակետը, Աբդուլ Համիդը նրանց դեմ հալածանքներ սկսեց:

Իրենց հերթին, երիտթուրքերը քննադատության տակ առան Աբդուլ Համիդի միանձնյա կառավարման «եղանակը»՝ նրան համարելով կայսրության մեջ չդադարող ներքին խռովությունների, պաշտոնյաների՝ չափ չճանաչող դեղծումների և, ընդհանրապես, երկրի աննորմալ կացության գլխավոր պատասխանատուն: «Երիտասարդների» մեջ առաջ եկավ սուլթանի գահընկեցության գաղափարը: Այս անգամ նրանք այլևս չէին ընդգծում կապիտուլյացիաների դեմ պայքարի անհրաժեշտությունը, ավելին, եվրոպական կառավարություններին խնդրում էին խորհրդարանը վերահաստատելու համար հավաքական ճնշում գործադրել Աբդուլ Համիդի վրա:

Երիտթուրքերը չէին ուզում սուլթանական կարգերի տապալումը, այլ մտածում էին դրանք «եվրոպականացնելու» մասին: Նրանք իրենց համարում էին Օգյուստ Կոնտի բնաչրջական

---

[1] Տե՛ս **Ю. А. Петросян**, *Младотурецкое движение*, с. 169.

(Էվոլյուցիոն) զարգացման տեսաբանական հայացքների հետևորդներ և Օսմանյան կայսրությունում սպասվելիք փոփոխությունները մտածում էին մտցնել բնաչրջական զարգացման հուն՝ միշտ նկատի առնելով թուրք տարրի գերակա շահերը: Հենց այդ պատճառով նրանք վնասակար էին համարում հեղափոխական շարժումների միջոցով սուլթանին տապալելը, նման շարժումները դիտելով որպես պատրվակներ՝ արտաքին միջամտությունների համար: Ինչպես «ծերունի թուրքերը», երիտթուրքերը նույնպես վճռականապես մերժում էին հայկական, մակեդոնական, կրետական, արաբական, ալբանական շարժումները և դրանց ուղղություն տվող կուսակցությունների գործունեությունը՝ դրանք դիտելով որպես դեպի պետության անդամահատություն տանող չարիքներ:

19-րդ դարի 90-ական թվականների ավարտին վերջնականապես բյուրեղացել էին երիտթուրքերի գաղափարական սկզբունքները և քաղաքական պահանջները: Դրանք էին 1) Սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահընկեցություն, 2) Օսմանյան հարստության (դինաստիայի), սուլթանական կարգերի և խալիֆայության պահպանում, 3) Թուրքիայի ներքին գործերին օտար պետությունների որևէ միջամտության կանխում, 4) Վճռական մերժում հատկապես Հայկական և Մակեդոնական հարցերի, պայքար կայսրության տարածքում տեղի ունեցող բոլոր ազգային շարժումների դեմ՝ հանուն օսմանյան հայրենիքի ամբողջականության, 5) Պաշտպան կանգնել կայսրության ներկա հասարակական, կրոնական ու տնտեսական բոլոր հաստատություններին՝ իրենց ամբողջության մեջ, 6) Երկրի ներսում պաշտպանել և իրականացնել օսմանականության գաղափարը, ընդհանրապես թուրքական ազգայնականությունը՝ իր բոլոր ստորոգելիներով. առաջնային համարել քաղաքական բացարձակ կենտրոնացումը, վճռականապես ճնշել ապակենտրոնացման ամեն տեսակի փորձերը, որտեղից էլ դրանք գան, 7) Վերահաստատել Միդհատի սահմանադրությունը և առաջնորդվել նրանով՝ նրա մեջ տեսնելով շարժման մերձավոր և հեռավոր բոլոր նպատակների իրականացումը, 8) Արտաքին քաղաքականության ոլորտում՝ հետևողականորեն պաշտպանել ալժիրցիներին, թունիս-

ցիներին, մարոկկոցիներին, Բուլղարիայի, Կրետեի, Կովկասի, Անդրկասպյան երկրների և Հնդկաստանի իսլամներին, նրանց գործոն կերպով աջակցել տիրող կառավարությունների դեմ մղվող իրենց պայքարում: Ամբողջ իսլամական աշխարհը համարել մի ընտանիքի զավակ և նրա հույսերի առանցքը դարձնել օսմանյան պետությունը, այդ հիմունքով ջանալ սերտ հարաբերություններ մշակել իսլամական անկախ ու կիսանկախ պետությունների հետ, 9) Եվրոպական ժողովուրդներին ծանոթացնել իսլամական քաղաքակրթությանը, իսլամի բարեմասնություններին, առավելություններին[1]:

Ինչպես տեսնում ենք, երիտթուրքերի ընդհանրական ծրագիրը հին գաղափարների մի ժամանակավրեպ հավաքածու էր՝ բոլորովին հակառակ նոր ժամանակների քաղաքական միտումներին և քաղաքակրթության պահանջներին: Շատ կողմերով դա, ըստ էության, նույնանում էր թուրքիզմի գաղափարախոսությանը, որ կյանք էր առնում թե՛ երիտթուրքական շարժման ընդերքում և թե՛ նրանից դուրս՝ թուրք մտավորականության զանազան շերտերում:

Ակնհայտ է, որ կյանքում երիտթուրքերի ծավալուն ծրագրի գործադրումը անհնարին էր խարխուլ ու մասնատման վտանգի առջև կանգնած այնպիսի մի երկրում, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր:

Իրենց հղացած գաղափարները երիտթուրքերը չէին կարող իրականացնել ամենից առաջ այն պատճառով, որ անհնար էր կայսրության ազգային իմաստով շատ տարասեռ էթնիկական մասերի ձուլումից օրենքի ուժով ստեղծել ընդհանրական գիտակցությամբ օժտված համաձուլվածք:

Իր բիրտ ուժից բխող իրավունքին կոթնած օսմանցի թուրքը կայսրության օտարասեռ ժողովուրդներին դարեր չարունակ կարողացել էր զենքի ուժով պահել հնազանդության մեջ, միաժամանակ զանազան արգելքներ ստեղծել, որպեսզի նրանց միջև տևական հաստատուն կապ չգոյանա: Միակ թույլատրելի կապը

---

[1] *Տե՛ս* ***Ստեփան Սապահ-Գիլեան,*** *Երիտասարդ Թուրքիա, էջ 19-20:*

իշխող բռնապետության վարչական դրությունից բխող այն սահմանափակ ազգամիջյան հարաբերություններն էին, որոնք ոչ թե նպաստում էին այլացեղ ժողովուրդների փոխադարձ մոտեցմանը և համերաշխ գործակցության ստեղծմանը, այլ, ընդհակառակը, միմյանցից հեռանալուն, իրար վանելուն և անջատմանը: Այս պայմաններում՝ Թուրքական պետության բնակչության այլացեղ բաղադրիչները, բնականաբար, պետք է ձգտեին ինքնուրույն կյանքի: Այդ ձգտումն է, որ բռնապետությանը խանգարել է դրանց տարրալուծել Թուրքական զանգվածի մեջ և ստեղծել մեկ էթնիկական ամբողջություն:

Մշակութային և իմացական անհամեմատ ցածր աստիճանի վրա գտնվող Թուրք տարրը չէր կարող իր մեջ տարրալուծել ավելի զորեղ մշակույթներ ունեցող հային, հույնին, բուլղարին, արաբին...

Ասիական ամենաբարբարոս պետության՝ Օսմանյան Թուրքիայի մեջ հայ ժողովուրդը կամավոր չէր մտել. նրան հարկադրել էին՝ հակառակ նրա կամքի, և նա երբեք չէր համակերպվել իր վիճակին: Բարոյականության օրենքներով՝ նրա իրավունքն էր՝ մնա՞լ, թե՞ չմնալ բռնապետության կազմում: Բայց քանի որ բարոյականությունը միշտ ընկրկում է բիրտ ուժի առջև և քանի որ Թուրքերի աստվածը հենց այդ ուժն է, ուստի հայը, դարեր շարունակ ապրելով օսմանյան գեհենում, այնուամենայնիվ, կարողացել էր ոչ միայն պահպանել իր ֆիզիկական գոյությունը, այլև՝ ազգային նկարագիրը: Եվ դա՝ իր բարձր ու հարուստ մշակույթի շնորհիվ: Այդ մշակույթը նրան օժտել է ներքին անկոտրում կամքով և մշտանորոգ ուժերով, հայ մարդուն կերտել որպես հզոր անհատականություն՝ անխորտակելի ինքնուրույնությամբ: Նույնիսկ ամենահուսահատ և ընկճված հայի հոգում խլրտում է ինքնավար ապրելու տենդը:

Լինելով չեչտված անհատականություն, հայն ունի զորեղ պատմական «ես», որը դարեր շարունակ թրծվել է ազգային մշակույթի մշտնջենավառ քուրայում: Թուրքական բռնակալության կործանիչ ձեռքի տակ տոչորվող հայ ազգին այդ անշեջ քուրան մշտապես ներարկում է համբերություն, կամք, տոկունություն՝ շարունակելու մնալ որպես ինքնուրույն ամբողջու-

թյուն: Միաժամանակ, ցեղի վաղնջական ձայնը նրան անդադար հուշում է, որ միայն քաղաքական ինքնուրույն գործոն լինելու պարագայում ինքը կարող է հարատևել և արժանի տեղ ունենալ մարդկություն կոչվող մեծ ընտանիքում:

Ջուլում կամ ոչնչացում – ա՛յս էր այն երկընտրանքը, որ իր ծրագրում առաջ էր քաշել Ահմեդ Ռիզայի քաղաքական կազմակերպությունը: Այդ կուսակցության համար ուրիշ ընտրանք չկար: Բայց խկապե՞ս չկար որևէ այլընտրանք: Մի՞թե այլազգիների ձուլումը կամ ոչնչացումն էր Թուրքական պետության փրկության միակ ելքը: Արդյո՞ք նրանց ինքնավարական ձգտումները հակառակ էին երկրի ամրապնդման և առաջադիմության ընթացքին: Եվ մի՞թե այն աստիճան ներհակ էին Թուրքերի և ոչ Թուրքերի շահերը, որ առաջիններն ստիպված լինեին ոչնչացնելու վերջիններիս մարդկայնորեն ապրելու ձգտումները: Կարելի՞ է ենթադրել, թե չկար ավելի բանական ու խելամիտ գաղափարների վրա խարսխված մի ուղի, որը կարողանար դիմագրավել երկրի ներքին գործերին արտաքին ուժերի միջամտությանը, խուսափել նրանց հնարավոր հարվածներից, կայսրությունը հեռու պահել մասնատման վտանգից, նրան առաջնորդեր դեպի քաղաքական ներքին անդորրություն և աստիճանական բարգավաճում:

Իհարկե՝ կար, գոյություն ուներ այդ ուղին, կային միջոցներ, և այն էլ՝ չափազանց արդյունավետ և ապահով: Դրանցից առաջինը ոչ միայն Թուրք, այլև ոչ Թուրք ժողովուրդների համար կյանքի և գույքի ապահովության տարրական պայմանների ստեղծումն էր, նրանց ներքին կյանքը կանոնավորող ազգային հաստատությունների ստեղծումը, ազգային մշակույթի անարգել զարգացման առջև արհեստական խոչընդոտներ չստեղծելը, օրենքի առջև օսմանյան բոլոր քաղաքացիների հավասար լինելը: Բայց, ցավոք, այդ բոլոր խնդիրները դուրս էին երիտԹուրքերի քաղաքական ծրագրերից: Նրանք մինչև վերջ այնպես էլ չըմբռնեցին, որ կայսրության այլազգի ժողովուրդները ոչ Թե ձգտում են բաժանվել ու անջատվել Թուրքերից, Թուրքական պետությունից, այլ՝ օսմանյան բռնապետությունից:

ԵրիտԹուրքական շարժումը միատարր չէր: Տարբեր երկրնե-

ում գործող երիտթուրքական կազմակերպություններին միավորում էր լոկ հիմնական նպատակը՝ Աբդուլ Համիդի բռնապետական վարչակարգի տապալումը, 1876 թ. միդհատյան սահմանադրության վերահաստատումը և խորհրդարանի գումարումը: Մնացած հարցերում նրանք տարբեր մոտեցումներ էին հանդես բերում:

Այդ տեսակետից բնորոշ էին այն հակասությունները, որոնք 20-րդ դարի սկզբին դրսևորվել էին Ահմեդ Ռիզայի և երիտթուրքական շարժման մյուս նշանավոր դեմքի՝ իշխան Մեհմեդ Սաբահէդդինի միջև:

Սաբահէդդինը որդին էր սահմանադրական շարժման կարևոր դեմքերից մեկի՝ թուրք խոշոր պետական գործիչ դամադ (փեսա) Մահմուդ փաշայի, որը Աբդուլ Համիդի քրոջ ամուսինն էր: Դամադ Մահմուդ փաշան սահմանադրությունը վերականգնելու խնդրանքով բազմիցս դիմել էր սուլթանին, բայց ամեն անգամ մերժում էր ստացել: Ի վերջո, գժտվելով սուլթանի հետ, 1899 թ. դեկտեմբերին նա Մեհմեդ Սաբահէդդին և Ահմեդ Լութֆուլլահ իր երկու որդիներով ֆրանսիական նավով գաղտնի փախչում է Ֆրանսիա և հաստատվում Փարիզում: Այստեղ հայրն ու երկու որդիները աչխուժորեն ընդգրկվում են երիտթուրքական շարժման մեջ և շատ չուտով դառնում թուրքական տարագրության նշանավոր գործիչներ:

Հատկապես եռանդուն գործունեություն ծավալած Մեհմեդ Սաբահէդդինի շուրջ համախմբվում են Եվրոպայում գտնվող երիտթուրք չափավոր տարրերը:

Մեհմեդ և Ահմեդ եղբայրները 1901 թ. հրատարակում են հռչակագիր, ուր շարադրում են իրենց քաղաքական հայացքները՝ Օսմանյան կայսրության ժողովուրդներին կոչ անելով՝ համախմբվել և համատեղ պայքար մղել աբդուլհամիդյան բռնապետական վարչակարգը տապալելու համար[1]:

Թուրք հեղափոխականների ընդունած որոշումներն ու հայտարարությունները հայ քաղաքական գործիչների մի մասի մոտ

---

[1] ***Տե՛ս Ю. А. Петросян**, Младотурецкое движение, с. 201.*

պատրանք էր ստեղծել, թե աստիճանաբար բարենպաստ հող է ստեղծվում Թուրքերի և հայերի միջև բարեկամություն հաստատելու համար: Եվ դա նրանց մղում էր որոշակի գործողություններին:

Օրինակ՝ Վասպուրականում փորձում էր Թուրքերի հետ կապեր հաստատել Արամ Մանուկյանը: Նա չփվում էր Թուրք երևելիների, առևտրականների, պաշտոնյաների, հատկապես՝ պարզ գյուղացիների հետ: Կոմսը (Վահան Փափազյան) վկայում է, որ նա «իր ատրբեջանական «քէոռ-թոփալ» թաթարերէնով չէր քաշուեր մտնելու նաեւ Թուրք պաշտօնական եւ անպաշտօն շրջանակներուն մէջ: Իր անկաշկանդ ու պարզ կեցուածքով սկսեր էր ժողովրդականութիւն ձեռք բերել Թուրքերու եւ մեր ժողովուրդի մէջ, ընտանի էր բոլորին եւ հաճոյակատար, երբ իրեն դիմէին»[1]: «Քիւրտն ու Թուրքը, եթէ անիրաւուած էին ու ճնշուած, նոյնքան անվերապահօրէն կրնային Արամին մօտենալ, որքան հայ գիւղացին կամ իր մօտիկ բարեկամը»[2],- հաստատում էր ականատեսներից մի ուրիշը:

Թուրք հաղվագյուտ ընդդիմադիրներին մերձեցնելու համար ջանքեր էին գործադրում նաև Դուրան-Բարձրավանդակի գործիչները: Այդ նպատակով, օրինակ, Գևորգ Զավուշն անցել էր Խնուս, Ավրանա Արամը նույն նպատակով մեկնել էր Բուլանուխ, Ռուբենը գնացել էր Մուշ և գաղտնի տեսակցություններ ունեցել ոստիկանապետ Մեհմեդ էֆենդիի և Մուշում Թուրքական զորքերի հրամանատար Քեոսե բինբաշիի (հազարապետ) հետ:

Հատկապես ջերմ էր անցել Մեհմեդ էֆենդիի հետ Ռուբենի հանդիպումը: Սա հայ էր, Տարոնի Բուլանուխ գյուղից: Երիտասարդության տարիներին եղել էր ուսուցիչ և մտել հայ հեղափոխականների շարքերը: Իշխանության կողմից ենթարկվել էր հալածանքների և բանտարկվել: Անկարող լինելով դիմանալու բանտային տանջալից հարցաքննություններին ու չարչարանքներին, մահվան վտանգից ազատվելու համար կրոնափոխ էր եղել, իսլամացել: Արդեն որպես Թուրք, աստիճանաբար ար-

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, Պէյրութ, 1952, էջ 20-21:*

[2] **«Արամը»,** *Թեհրան, 1969, էջ 454:*

ժանացել էր իշխանությունների վստահությանը և նույնիսկ պաշտոն ստացել ոստիկանության մեջ: Տարիների ընթացքում հետզհետե առաջադիմելով, հասել էր ոստիկանապետի բարձր աստիճանին: Բայց Մեհմեդը հոգու խորքում մնացել էր հայ և ձեռքից եկած օգնությունն էր հասցնում հայ հեղափոխականներին՝ մասնավորապես Տարոնում, ուր և կապ էր հաստատել Ռուբենի հետ:*

Թուրքերի հետ հայ գործիչների հարաբերությունները դիպվածային բնույթ ունեին և երկու կողմերի՝ միմյանց նկատմամբ անվստահության դրոշմն էին կրում: Երբ ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովում (Վիեննա, 1907 թ.) Եղիշե Թոփչյանը համոզված ասում էր, թե Դաշնակցությունն ամեն կերպ պետք է աջակցի Թուրք ընդդիմադիր և դժգոհ տարրերին, նրանց գիտակցության բերի և գրգռի կառավարության դեմ, Անդրանիկը հակադարձում էր նրան՝ ասելով.

«Այստեղ ցանկութիւն է յայտնւում որ մենք աշխատենք [գիտակցութեան] բերել Թուրքերին: Գեղեցի՛կ, բայց մենք դեռ չենք կարողացել մեր իսկ հայերի գիտակցութիւնը զարթնեցնել, կարող կլինե՞նք արդեօք, Թուրքերի մէջ յաջողութիւն ունենալ: Ձենք կարող. զուր է կարծում Թոփճեանը, թէ Թուրքերը կմիանան մեզ՝ կառավարութեան դէմ ընդհանուր ուժերով կռուելու համար. զուր է, որովհետեւ ինքը Թոփճեանն է ասում, թէ Թուրքի մէջ ատելութիւնը դէպի քրիստոնեաները՝ դեռ զօրեղ է եւ կարող է ամէն րոպէ պայթել...»[1]:

---

* *Մեհմեդ էֆենդու մասին Ռուբեն Տեր-Մինասյանը բավական տեղեկություններ է տալիս իր հուշերում: Նրա մասին կա նաև մի հոդված «Հայրենիք» ամսագրի 1956-ի հուլիս և օգոստոս ամիսների համարներում:*

[1] ***«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,*** *հատ. Գ, էջ 115:*

ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Այլացեղ տարրերի, առանձնապես երիտասարդ Թուրքերի հետ գործակցության հնարավորությանը չարունակում էին հետամուտ լինել Հնչակը և Դաշնակցությունը: Հայկական հեղափոխության համար այդ բախտորոշ խնդիրը պարբերաբար արծարծվում էր «Հնչակի» և «Դրօշակի» էջերում:

Թուրք ընդդիմադիրների հետ գործակցելու Հնչակի և Դաշնակցության՝ նախկինում կատարած փորձերն անցել էին ապարդյուն: Երիտթուրքերից չատ քչերն էին գաղափարական գործչի հատկանիշներ երևան բերում: Անդունդ էր բաժանում հայկական ազգային կուսակցությունների և երիտթուրքերի մարտավարության (տակտիկայի), խառնվածքի ու աշխարհայացքի միջև: Վերջիններիս հայամերժ նեղ ազգայնամոլությունը հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ճանապարհի հիմնական խոչընդոտն էր: Երիտթուրքերը երբեք չընդունեցին հայ ժողովրդի ուրույն դատը՝ սրբագործված հարյուր հազարավոր զոհերի արյունով և դիվանագիտական փաստաթղթերով: Այս մուսուլման «ըմբոստների» չարքերում չկար ո՛չ բարի կամեցողություն, ո՛չ գաղափարական ոգևորություն և ո՛չ էլ, առհասարակ, կովելու ցանկություն:

Ավելին, իրենց հայտարարելով հեղափոխականներ, երիտթուրքերը, գաղտնի թե բացահայտ, հանդես էին գալիս հեղափոխականների դեմ, նրանց հարվածում էին, երբ ներկայանում էր հարմար պահը:

Հիմնականում ֆրանսերեն հրատարակած իրենց գրքույկներում և հոդվածներում՝ դիմելով եվրոպացիներին, նրանք հայտարարում էին, թե հայ հեղափոխականները, ըստ էության, ավազակներ են, ոճրագործներ, որոնց հիմնական նպատակը Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում մուսուլմաններին կոտորելը և միատարր հայկական պետություն ստեղծելն է: Երիտթուրք պարագլուխ Ահմեդ Ռիզա բեյը Եվրոպայի առջև հայ հեղափոխականներին ի ցույց էր դնում որպես ռուսական կառավարության վարձկանների:

Չնայած դրան, հենց երիտթուրք պարագլուխներից մեկի՝ իշխան Մեհմեդ Սաբահէդդինի, նրա հոր և եղբոր նախաձեռնությամբ նախատեսվեց հրավիրել օսմանյան ընդդիմադիր տարրերի համաժողով՝ քննարկելու համար ընդհանուր գործակցություն գլուխ բերելու խնդիրը:

Համաժողովի հրավիրումը նախապատրաստելու համար ստեղծվեց նախաձեռնող խումբ, որի մեջ էին իշխան Սաբահէդդինը, նրա մերձավոր գաղափարակից, խոշոր պաշտոնյա եղած, ապա տարագրված Իսմայիլ Քեմալը, Միդհատ փաշայի որդի Ալի Հեյդար Միդհատը, նախկին նշանավոր պաշտոնյա, տարագիր Իսմայիլ Հակկը բեյը: Խմբում հայերին ներկայացնում էր Սիսլյանը (Ավետիս Ահարոնյան), հույներին՝ Ֆրադուիսը և Մուսիրիս Գիդիսը[1]:

Օսմանյան ընդդիմադիր տարրերի առաջին համաժողովը տեղի ունեցավ 1902 թ. փետրվարի 4-9-ը, Փարիզում, Սաբահէդդինի տանը: Ներկայացված էին երիտթուրքական շարժման երկու թևերը՝ իշխան Սաբահէդդինի և Ահմեդ Ռիզայի գլխավորությամբ: Համաժողովին մասնակցում էր 60-70 մարդ (մի այլ վկայությամբ՝ 47)[2]: Նրանց թվում էին՝ թուրքեր, հայեր, հույներ, արաբներ, ալբանացիներ, չերքեզներ, քրդեր, հրեաներ: Թուրք մասնակիցների թվում էին, բացի Ահմեդ Ռիզայից և իշխաններ Սաբահէդդինից ու Լութֆուլլահից, երիտթուրքական տարագրության այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Իսմայիլ Քեմալը, Խոջա Կադրին, Խալիլ Ղանեմը, Ալի Հեյդար Միդհատը, Իբրահիմ Թեմոն, Նազիմը, Ալի Ֆախրին և ուրիշներ:

Համաժողովին հրավիրվել էին նաև հայ քաղաքական երեք կուսակցությունները՝ Հնչակը, Դաշնակցությունը և Վերակազմյալ Հնչակյանը: Վերջին երկու կուսակցությունները համաժողովին ներկայացան երեքական պատգամավորներով: Դաշնակցությունը ներկայացնողների թվում էին Ավետիս Ահարոնյանը (Սիսլյան), Վահան Փափազյանը[3]: Չնայած կրկնակի հրավերնե-

---

[1] Տե՛ս **Ю. А. Петросян,** *Младотурецкое движение, с. 205.*

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **«ՎԷՄ»,** *№ 1, հունվար-փետրվար, 1934, էջ 122:*

րին, հնչակյանները, առաջնորդվելով իրենց կուսակցության երրորդ ընդհանուր պատգամավորական ժողովի որոշումով, մերժեցին մասնակցել ձեռնարկին:

Քանի որ երիտթուրքական թևերից մեկը՝ Սաբահէդդինի խումբը, դեռ չէր ձևավորվել որպես հստակ ծրագիր ունեցող քաղաքական կազմակերպություն, ուստի նրա պատվիրակներից ոմանք չունեին քաղաքական պարզ հայացքներ, ինչպիսիք ունեին Ահմեդ Ռիզայի կազմակերպությունը ներկայացնող պատգամավորները: Այդ իրողությունը վկայակոչելով, Ստեփան Սապահ-Գյուլյանը նշել է. «Համագումար կազմակերպելու նախաձեռնութիւն ստանձնողները իրենք որոշեալ կողմ, կուսակցութիւն չէին ներկայացնում. նրանք անհատներ էին եւ բերում էին լոկ իրենց ազդեցութիւնը, տիտղոսը, ազնուապետական ծագումը: Զունենալով բիւրեղացած գաղափարաբանութիւն, նրանք նոր կազմակերպութիւն ստեղծելու ճիգ էլ չէին անում...»[1]:

Համաժողովի նախագահ ընտրվեց իշխան Մեհմեդ Սաբահէդդինը, փոխնախագահներ ընտրվեցին հույն Մուսիրիս Գիդիսը[*] և հայ Սիսլյանը: Բացի այդ, հաշվի առնելով միդհատյան սահմանադրությունը կյանքի կոչելու ուղղությամբ դամադ Մահմուդ փաշայի թափած բազմամյա ջանքերը, պատգամավորները նրան համաժողովի պատվավոր նախագահ ընտրեցին[2]:

Նախաձեռնող խմբի հանձնարարությամբ՝ համաժողովը բացեց ավագագույն պատգամավոր, բանաստեղծ Հուսեյն Սիրետ բեյը, ապա հանդես եկավ Սաբահէդդինը:

Երիտթուրք և հայ պատգամավորների միջև անլուծելի խնդիրներ ծագեցին համաժողովի աշխատանքի առաջին իսկ պահերից: «Հայ երկու կուսակցութիւնների ներկայացուցիչները,- գրել է Ստ. Սապահ-Գյուլյանը,- չյապաղեցան, առաջին

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ տպագրութիւն, Պէյրութ, 1974, էջ 195-196:*

[*] *Ժամանակին «Դրօշակը» սխալմամբ գրել է թե հույների կողմից փոխնախագահ է ընտրվել Սատասին (տե՛ս **«Դրօշակ»**, № 2 (122), փետրվար, 1902, էջ 24):*

[2] ***Տե՛ս Ю. А. Петросян**, Младотурецкое движение, с. 205.*

նիստին իսկ, իրենց կատարեալ յուսախաբութիւնն ունենալու. եւ անձամբ, փորձով տեսնելու, լսելու, չօշափելու այն՝ ինչ որ շատ երկար տարիներ առաջ, մեր կուսակցական (Հնչակյան:- Հ. Ս.) գրականութիւնը ասել, գրել, բացատրել էր»[1]:

Երբ քննարկման դրվեց ժողովի պաշտոնական գործածության լեզվի հարցը և ընթերցվեց մանդատային հանձնախմբի զեկույցը, հայ պատվիրակները, բողոքելով, պահանջեցին պաշտոնական համարել բոլոր ելույթ ունեցողների ազգային լեզուները: Նրանք նաև խոր դժգոհություն հայտնեցին, որ համաժողովին մասնակցելու հրավերներ չէին ուղարկվել մակեդոնացի հեղափոխականներին:

Հայկական կողմի պահանջները մասամբ բավարարելուց հետո, Սաբահէդդինը ներկայացրեց համաժողովում քննարկվելիք՝ իր կուսակցության հավանությունն ստացած հետևյալ հարցերը.

1) Բացառել արդուլհամիդյան վարչակարգի հետ որևէ գործակցություն, 2) Օսմանյան կայսրությունը բարեփոխել և ստեղծել այնտեղի բոլոր ազգերի սերտ միություն, նրանց մասնակից դարձնել երկրի կառավարմանը, օրենքի առջև հավասարեցնել բոլորի իրավունքներն ու պարտականությունները, նրանց մեջ խթանել օսմանյան ընդհանուր հայրենիքին նվիրվածության ու հավատարմության զգացումը, 3) Պահպանել կայսրության ամբողջականությունն ու անբաժանելիությունը, երկրի ներսում հաստատել օրինականություն, կարգ ու կանոն, գործածության մեջ դնել 1876 թ. միդհատյան սահմանադրությունը, որը հռչակել էր օրենքի առջև բոլոր ազգերի իրավահավասարություն, 4) Ուժի մեջ թողնել Թուրքիայի հետ կնքած միջազգային համաձայնագրերը, այդ թվում՝ Բեռլինի 1878 թ. կոնգրեսի ընդունած դաշնագրի կետերը և դրանք տարածել կայսրության բոլոր նահանգների վրա անխտիր:

Սաբահէդդինի ներածական ելույթից հետո լուրջ քննադատությամբ հանդես եկան հայ պատվիրակները: Հայերը համա-

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, էջ 197:*

կարծիք էին նրա առաջարկած կետերից միայն առաջինի հետ, իսկ մյուսները իրենց համար անընդունելի համարեցին: Նրանք հատկապես վճռականորեն մերժեցին չորրորդ կետը, լավ հասկանալով, որ, առաջ քաշելով 61-րդ հոդվածը կայսրության մյուս բոլոր ազգերի վրա տարածելու գաղափարը, երիտթուրքերը, դրանով իսկ, ոչ միայն նպատակ ունեին հոդվածը զրկել բովանդակությունից, այլև առաջ բերել համաժողովի մյուս ոչ թուրք պատգամավորների անբարեհաճ ու թշնամական վերաբերմունքը հայ պատգամավորների և Հայկական դատի նկատմամբ:

Չնայած այդ վտանգին, հայերը դեմ արտահայտվեցին 61-րդ հոդվածը ապագայի անորոշ խոստումների լաբիրինթոսում տարրալուծելու տեսակետին: Նրանք երիտթուրքերին ասում էին, որ Հայկական հարցի լուծման երեք տարբերակ կա. 1) Զենքի, ապստամբությունների միջոցով ազատագրության ձեռքբերում Հայաստանի համար, 2) Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավում, 3) Հայաստանում բարենորոգումների անցկացում: Հայերը վերջինն են ուզում: Նրանք երիտթուրքերին հիշեցնում էին, որ Բեռլինում ընդունված փաստաթղթի՝ Հայկական հարցին վերաբերող հիշյալ հոդվածը խմբագրվել էր միմիայն Հայաստանում տիրող անտանելի վիճակը փոքր ինչ բարվոքելու համար, ուստի Օսմանյան կայսրության ուրիշ նահանգների վրա դա տարածելն անօգուտ զբաղմունք կլինի: Աչքի առաջ ունենալով հայկական նահանգների ցեղային և այլ կարգի տեղական պայմանները, մեծ տերությունների ընդունած հիշյալ հոդվածը ձևակերպվել էր՝ նկատի ունենալով միայն հայերի օրհասական դրությունը:

Ի պատասխան հայ պատգամավորների վճռական առարկություններին, իշխան Սաբահէդդինն առաջարկեց փոխզիջումային տարբերակ, այն է՝ երիտթուրքերը կընդունեն և գործողության մեջ կդնեն 61-րդ հոդվածը, եթե հայերը այսուհետ 1) այլևս չդիմեն եվրոպական պետություններին, նրանց չստիպեն միջամտել թուրքական պետության ներքին գործերին, 2) այլևս հրաժարվեն սուլթանական կարգերի դեմ զինված պայքարից, որը կարող է բազմազգ երկրի քայքայմանը տանել:

Հայ պատգամավորները հայտնվել էին մի պաղ, անհյուրըն-

կալ մթնոլորտում: Օսմանցի տարրերից նրանք չտեսան բարեկամության ու անկողմնակալության գեթ մի փոքր վերաբերմունք: Թուրքական գրգռիչ ազգայնամոլությունն այնտեղ դրսևորվում էր ամեն առիթով: Հատկապես անտանելի էր պահվածքը Ահմեդ Ռիզայի, որը չէր թաքցնում իր թշնամանքը ոչ միայն Հայ դատի, այլև հայ ժողովրդի նկատմամբ: Տարիներ անց, ինքը՝ Ռիզան խոստովանել է. «... Մեր առաջին (1902 թ.:- Հ. Ս.) կոնգրէսի մէջ պրն. Ահարոնեանն ասաց, որ հայերը ամէն թուրքի հետ կարող են համաձայնել, բայց պրն. Ահմէտ Ռիզա, քեզ հետ՝ երբեք»: Ճակատիս ասաց. «Քանի որ դու կաս, հայերի եւ թուրքերի միջեւ ոչ մի հասկացողութիւն կարող է լինել. հայ կուսակցութիւնների եւ թուրք կուսակցութիւնների միջեւ ոչ մէկ համաձայնութիւն կարող է տեղի ունենալ...»[1]:

Երիտթուրքերը Դաշնակցությունից պահանջում էին հրաժարվել ոչ միայն Հայ դատից, այլև հայ անունից, այն է՝ միանգամ ընդմիշտ կոչվել օսմանցի: Նրանք առաջնորդվում էին այն թեզով, թե բոլորն էլ օտտոմաններ են՝ թուրք, հայ, հրեա, բուլղար, հույն... «Եթէ ուզում ենք բարեկամաբար ապրել, պէտք է որ մի կողմ թողնենք ազգութեանց անհեթեթ պահանջները»[2]:

Ընդունելով փոխզիջման գալու առաջարկը, հայ պատվիրակությունը ավելորդ համարեց իր հետագա մասնակցությունը հարցերի քննարկմանը և հեռացավ համաժողովից:

Այդ քայլը երիտթուրքերը փորձեցին առավելագույնս գործածել հակահայկական քարոզչության մեջ՝ իրենց թերթերի էջերում հայտարարելով, թե հայկական կոմիտեները դեմ են երկրում սահմանադրական կարգերի հաստատմանը:

Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի առաջին համագումարը չլուծեց իր առջև դրված խնդիրները: Մի կողմից՝ նրա բազմազգ կազմը և դրանից բխող հակասությունները, մյուս կողմից՝ երիտթուրքերի շարքերում եղած լուրջ տարաձայնություններն ստեղծել էին ծանր մթնոլորտ, որը և կանխորոշեց

---

[1] **Ստեփան Սապահ-Գիւլեան,** Պատասխանատուները, Բ հրատ., էջ 201:

[2] Նույն տեղում, էջ 196:

համագումարի անհաջող ավարտը: Խոր տարաձայնությունների մթնոլորտում ընթացող համաժողովը, ըստ էության, վիժեց թուրքերի մեղքով:

Համաժողովի մասնակիցների, այդ թվում երիտթուրք պատվիրակների շարքերի պառակտումը պատճառ դարձավ, որ արդեն ձևավորված և Ահմեդ Ռիզայի գլխավորած «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունից բացի երիտթուրքերն ունենան նրան հակոտնյա երկրորդ կուսակցությունը՝ իշխան Սաբահէդդինի գլխավորած «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերությունը»*:

«Միություն և առաջադիմություն» կազմակերպության նշանավոր գործիչներն էին, բացի Ահմեդ Ռիզայից, Սամիփաշազադե Սեզայի բեյը, հայտնի պատմաբան Ահմեդ Սաիբը, Սաիդ Մահիրը, Նազիմը և Բեհաէդդին Շաքիրը, որոնք իշխանության կենտրոնացման ջերմ կողմնակիցներ էին և երկրի ներքին գործերին օտար միջամտությունների անզիջում հակառակորդներ:

Համաժողովից հետո «Միություն և առաջադիմություն» կազմակերպության «Մեշվերեթ» պաշտոնաթերթի կողքին, դարձյալ Փարիզում, հանդես եկավ մի նոր պաշտոնական օրգան՝ «Շուրա-ի ումմեթ» («Ազգային խորհուրդ») թերթը: Երկու թերթերն էլ գաղտնի տարածվում էին կայսրության մեջ:

Համաժողովի ավարտից ընդամենը մի քանի օր անց՝ 1902 թ. փետրվարի կեսերին ստեղծված «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» հիմնադիրները եղան, բացի Մեհմեդ Սաբահէդդինից (նախագահ), Ահմեդ Ֆազիլը (գլխավոր քարտուղար), Իսմայիլ Քեմալը, դոկտ. Ռիֆաթը, դոկտ. Նիհադ Ռեշադը, դոկտ. Սաբրին, գնդապետ Զեքին, բանաստեղծ Հուսեյն Թոսունը, Միլասլի Մուրադը: Շատ չանցած սկսեց լույս տեսնել «Ընկերության» պաշտոնաթերթը՝ «Թերաքքը»: Աստիճանաբար ստեղծվեցին «Ընկերության» մի շարք բաժանմունքներ ինչպես բուն Օսմանյան կայսրության մեջ (Իզ-

* Գրականության մեջ օգտագործված է նաև «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման լիգա» անվանումը:

միր, Կարին, Տրապիզոն, Դամասկոս), այնպես էլ կայսրության սահմաններում անվանապես գտնվող Եգիպտոսում (Կահիրե):

Երիտթուրքական շարժման երկու թևերը ներկայացնող՝ Ահմեդ Ռիզայի ծայրահեղ ազգայնական «Միություն և առաջադիմություն» կազմակերպության և Մեհմեդ Սաբահէդդինի ազատական-բուրժուական «Ընկերության» կենտրոնը Փարիզն էր. այստեղ էին լույս տեսնում նրանց պաշտոնաթերթերը, քաղաքական բովանդակություն ունեցող գրքույկները, հակաբդուլհամիդյան կոչերը:

Արդեն 1902 թ. կեսերից մի շարք կարևոր հարցերում դրսևորվեցին սկզբունքային տարաձայնություններ Ահմեդ Ռիզա բեյի և իշխան Սաբահէդդինի միջև, որոնք հիմնականում բխում էին Օսմանյան կայսրության ապագա պետական վարչաձևի նրանց պատկերացումներից:

Ահմեդ Ռիզայի և նրա գաղափարակիցների իդեալը սահմանադրական միապետությունն էր՝ հույժ կենտրոնացված կառավարման համակարգով: Այս պահանջի օգտին հանդես եկավ արտասահմանյան երիտթուրքական խմբերի մեծ մասը: Տվյալ տեսակետը շատ համակիրներ ունեցավ նաև կայսրության տարբեր վայրերում տեղակայված զինվորական մասերում: Դրանցից մեկը «Օսմանյան ազատություն» գաղտնի կոմիտեն էր, որը, լիովին հավանություն տալով Ահմեդ Ռիզայի տեսակետներին, կազմակերպչորեն միացավ «Միություն և առաջադիմություն» կազմակերպությանը:

Քաղաքական կազմակերպության հետ զինվորական կազմակերպության միավորումը առաջադրել էր երկու ղեկավար կենտրոն ունենալու պահանջը: Արդեն վերը խոսվել է այն մասին, որ «Միություն և առաջադիմություն» կազմակերպության Փարիզի ղեկավարության մի մասը տեղափոխվել և հաստատվել էր Սալոնիկում, որպեսզի հնարավոր լիներ ավելի մոտիկից ղեկավարել կայսրության տարածքում գործող բջիջների աշխատանքը: Փարիզում մնացած մյուս մասն առաջվա պես հանդիսանում էր կազմակերպության գաղափարական կենտրոնը՝ տոն տալով նրա ողջ գործունեությանը:

Իշխան Սաբահէդդինի կազմակերպությունը սուլթանի

նկատմամբ ավելի արմատական ընդդիմություն էր և աչխուժորեն հանդես էր գալիս «Միություն և առաջադիմություն» կազմակերպության՝ սուլթանիզմի նկատմամբ չափից ավելի մեղմ վերաբերմունքի դեմ:

Օսմանյան պետության՝ Եվրոպայում և այլուր խկական բարեկամները նրա ապագան տեսնում էին որպես ինքնավար երկրներից բաղկացած մի մեծ դաշնություն, որի մեջ, բացի բուն Թուրքիայից, մտնելու էին բալկանյան ապագա ինքնավարությունները: Այդ բանին էին ձգտում նաև հայերը: Միայն այդպիսի դաշնային պետությունն ի վիճակի կլիներ դիմակայելու Թուրքիայում եվրոպական տերությունների չահատակություններին և նվաճողական տենչանքներին:

Իչխան Սաբահէդդինն ու նրա կողմնակիցները գնալով ավելի ու ավելի հակվում էին օսմանյան դաչնության գաղափարին, ավելի հաճախ քննադատում այն երևույթները, որոնք, որպես խոչընդոտներ, ընկած էին դեպի այդ նպատակը տանող ճանապարհին: Նրանք հանդես էին գալիս ապակենտրոնացյալ վարչական համակարգի օգտին՝ Օսմանյան կայսրության ամբողջականության պարտադիր պահպանման պայմաններում: Ապակենտրոնացումն ենթադրում էր տեղական իչխանություններին տալ լայն լիազորություններ և այդ համաչարադրանքում էլ լուծված համարել ազգային հարցը:

Փարիզի առաջին համաժողովից հետո եկած չորս-հինգ տարիներն երիտթուրքերի համար անհետևանք չանցան: Թուրքիայում նչանակալից փոփոխություններ էին կատարվել: Ռուսաստանի և Պարսկաստանի ազատագրական չարժումները մի կողմից, մյուս կողմից Կաստեմունիում, Տրապիզոնում և, մանավանդ, Կարինում Թուրք բնակչության քաղաքական խռովահույզ ցույցերն ու արյունահեղ անցքերը կենդանություն և եռանդ էին ներչնչել Եվրոպայում նստած երիտթուրք պարագլուխներին և ծույլ գաղափարախոսներին: Իրենց մամուլում արվող «խաղաղ առաջընթացի» քարոզները, կյանքի երկաթե տրամաբանությամբ, նրանք աստիճանաբար փոխարինեցին երբեմն-երբեմն կատարվող մարտական կոչերով: Եվրոպական քաղաքակրթական արժեքներն աստիճանաբար կենարար ար-

յուն էին ներարկում (թեև փոքր չափաբաժիններով) նաև մուսուլմանական ազատականների մի մասի երակներում: Երիտթուրքերի բովանդակ աշխարհայեցությունն աստիճանաբար թեքվում էր դեպի ձախ՝ ձգտելով ըստ կարելվույն ներդաշնակվել իրականության պահանջների հետ: Ավելին, երկար դեգերումներից հետո, նրանք հեղափոխությունն իրենց համար նշանաբան դարձրին: Երկրի տարբեր տեղերում բորբոքված տրամադրությունները նրանց ստիպեցին շարժման ջերմ փաստաբան դառնալ: Թուղթն առաջվա պես այլևս անզոր էր ոմբակոծելու սուլթանական Բաստիլը: Հարկավոր էին որոշակի գործեր: Հարկավոր էին բռնի միջոցներ, և նրանք սկսեցին ներբողել դրանք: Ահմեդ Ռիզան դարձավ յակոբին: Բայց հատկապես կարևոր էր, որ երիտթուրքերի մի մասի մոտ գնալով հասունանում էր կայսրության մյուս ազգերի հեղափոխականների հետ միասնաբար գործելու տրամադրությունը:

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ ԴԱՇՆԱԿՑԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՅԱԼ ՄԵՐԺՈՒՄԸ ՀՆՋԱԿՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1906 թ. սկզբներից երիտթուրքերն ավելի հաճախ էին հայկական հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչներին հանդիպելու ցանկություն հայտնում: Նրանք համագործակցության նոր ուղիներ էին փնտրում ոչ միայն Դաշնակցության հետ, որը ոչ պակաս (եթե չասենք ավելի) պատրաստակամ էր գործակցության ճանապարհին նոր, ավելի արմատական քայլեր կատարելու, այլև հնչակյանների հետ, որոնք որևէ հավատ չունեին նրանց նկատմամբ և չեչտը շարունակում էին դնել հայկական քաղաքական բոլոր ուժերի դաշինքի ստեղծման անհրաժեշտության վրա:

Հայկական հեղափոխական կազմակերպությունների հետ համագործակցելու երիտթուրքերի ձգտումը տվյալ ժամանակաշրջանում թելադրված էր մի շարք պատճառներով, որոնց թվում պակաս կարևոր չէր այն, որ կայսրության հատկապես արևելյան նահանգներում ստեղծված երիտթուրքական նորաստեղծ

բջիջներն ի վիճակի չէին այն դերակատարությունն ունենալու, ինչ կարող էին վաղուց ձևավորված և իշխանությունների դեմ պայքարի մեծ փորձ ունեցող հայկական քաղաքական ուժերի կառույցները՝ իրենց հեղափոխական գործունեությամբ ու փորձառությամբ, անդամների թվով, ժողովրդականությամբ ու Եվրոպայի առաջադիմական շրջաններում վայելած համակրանքով[1]: Բացահայտ թե քողարկված հակակրանք տածելով հայկական քաղաքական ուժերի հանդեպ, երիտթուրքերն ստիպված էին ընդունել նրանց այդ ակնհայտ առավելությունը, սովորել նրանցից և համակերպվել հայկական գործոնի հետ:

Արդեն նախընթաց ավելի քան մեկ ու կես տասնամյակում երիտթուրքական շարժման ղեկավարները բազմիցս համոզվել էին, որ համեմատաբար հեշտ է լեզու գտնել ՀՅ դաշնակցության, քան ՍԴ Հնչակյան կուսակցության հետ: Այդ ժամանակաշրջանում Հնչակյան և երիտթուրք ղեկավարների միջև մի քանի անգամ տեղի էին ունեցել հանդիպումներ, որոնք անարդյունք էին վերջացել[2]: Հնչակյանները կոչտ ու անզիջում վերաբերմունք ունեին հատկապես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ու նրա հիմնադիր Ահմեդ Ռիզայի նկատմամբ, քանի որ դաշնակցականներից շատ ավելի վաղ էին հարաբերվել նրանց հետ և շատ ավելի լավ էին ըմբռնել նրանց բուն էությունը*:

---

[1] Տե՛ս **Լևոն Զորմիսեան**, Համայնապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հատ. Բ, էջ 487:

[2] Տե՛ս **M. Кочар**, Армяно-турецкое общественно-политические отношения и Армянский вопрос, с. 78-87.

* Երիտթուրք-Հնչակ փոխհարաբերությունները բացահայտող գրվածքների թվում առանձնանում է Ստ. Սապահ-Գյուլյանի «Պատասխանատուները» արժեքավոր գիրքը, որ հեղինակվել է 1915 թ. օգոստոսին, Կահիրեում և լույս է տեսել 1916-ին, Հելիոպոլսում (Եգիպտոս): Գրվածքը նախապես, որպես հոդվածաշար տպագրվել է «Պալքանեան մամուլ», մասամբ էլ «Ինքնավար Հայաստան» պարբերականներում: Լինելով Հնչակյան կուսակցության խոշոր ղեկավարներից մեկը, Սապահ-Գյուլյանը երիտթուրք պարագլուխների հետ բազմաթիվ հանդիպումների արդյունքում նրանց մասին կազմել էր խորապես գիտակցված շատ բացասական կարծիք, որը բազմաթիվ հիմնավոր փաստերով արտացոլված է աշխատության մեջ: Գիրքը վերահրատարակվել է 1974-ին, Բեյրութում:

*Ստ. Սապահ-Գյուլյանը, որ անձնապես չատ լավ գիտեր Ահմեդ Ռիզային, քանզի 90-ական թվականների սկզբներից բազմիցս հանդիպել էր նրան, տվել է երիտթուրք պարագլխի հետևյալ բնութագրությունը. «Ահմէդ Ռիզան իր ընկերային յարաբերութիւնների մէջ՝ **թուրք** էր, բառիս ժողովրդական հասկացողութեամբ – բոնազբօսիկ ժպիտ, դանդաղկոտ շարժ ու ձեւեր, յամառ, ոխակալ, մեղմութեան տակ՝ կոպիտ, սրտի խորքից ատող եւրոպական քաղաքակրթութեան, հիացող՝ մահմեդական, թուրքական մեծութեան: ... Մոլեռանդ էր վերին աստիճան, բայց դա արգելք չէր, որ նոյն հետայն չաւելցնէր, նայելով մանաւանդ իրեն շրջապատողներին, որ իր մայրը աւստրիացի քրիստոնեայ էր»[1]:*

Ահմեդ Ռիզայի գլխավորած «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից Բեհահէդդին Շաքիրը, իր կուսակցության ղեկավար մարմնի հանձնարարությամբ, 1906 թ. հուլիսին մի քանի անգամ այցելում է Փարիզի հնչակյան կենտրոն: Այցելությունների նպատակն էր պարզել, թե արդյոք հնարավո՞ր է կայացնել մի համաձայնություն՝ երկու կուսակցությունների ուժերը համատեղելու և սուլթան Աբդուլ Համիդի դեմ միասնաբար հանդես գալու համար: «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ղեկավարությունը, փաստորեն, ձգտում էր հնչակյանների հետ քաղաքական դաշինք կնքել:

Շաքիրի առաջարկն անսպասելի չէր: Նախորդ բոլոր տարիներին ՍԴ հնչակյան կուսակցությունը միշտ հանդես էր եկել արմատական ընդդիմության դիրքերից, մերժել էր որևէ զիջում թուրք քաղաքական ուժերին, եթե սրանք պարզ ու հստակ չեն հայտարարել Հայկական հարցի (61-րդ հոդվածի և մայիսյան բարենորոգումների) կենսագործմանն ուղղված իրենց պատրաստակամության մասին:

ՍԴՀԿ կենտրոնական վարչության անդամների հանդիպումները Շաքիրի հետ դժվարին ընթացք ունեցան: Հնչակի ղեկավարները նրան մշտապես հոռետեսորեն հիշեցնում էին, որ երկու կուսակցությունների միջև նախկինում նույնպես եղել են չփում-

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 144:*

ներ, երկուստեք փորձեր են արվել մի որևէ համաձայնություն կայացնելու, բայց դրանք վերջացել են անարդյունք, որի գլխավոր պատճառը եղել է կողմերի դավանած գաղափարների անհամատեղելիությունը: Շեշտվում էր, որ հատկապես անհնար է գործակցել Ահմեդ Ռիզայի և Նազըմի հետ՝ նրանց անզիջում դիրքի և անընդունելի գաղափարների համար: Բայց Շաքիրը հասկացնել էր տալիս, որ այդ երկուսն ամեն բան չեն իրենց կուսակցության մեջ և որ իրենց հետ են շատ մեծ թվով «երիտասարդներ», որոնք միանգամայն այլ կերպ են մտածում[1]: Այս անգամ ամեն ինչ տարբեր կլինի, հավաստիացնում էր նա:

Որևէ հավատ չտածելով Շաքիրի խոստումների նկատմամբ, Հնչակյան ղեկավարությունը, այնուամենայնիվ, որոշեց ընդառաջ գնալ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ցանկությանը: Նա Շաքիրին տեղեկացրեց, որ ինքը համաձայն է պաշտոնական բանակցություններ սկսելու Թուրքական կոմիտեի ղեկավարների հետ՝ պարզելու որոշ հարցերի չուրջ համաձայնություն կայացնելու հնարավորությունը:

Հնչակյան ղեկավարության հետ ունեցած զրույցների մասին Շաքիրը պարբերաբար հաղորդումներ էր անում իրենց կոմիտեի նիստերում, որտեղ և որոշվեց շարունակել երկխոսությունը Հնչակի հետ՝ ավելի բարձր մակարդակով:

Շատ չանցած, կանխապես նշանակված օրը, Փարիզում տեղի ունեցավ երկու կուսակցությունների ղեկավարների պաշտոնական հանդիպումը: Հնչակի կողմից եկել էին Ստեփան Սապահ-Գյուլյանը և կուսակցության ականավոր գործիչ, Տրիպոլիի բանտից փախած և ժամանակավորապես Փարիզում հաստատված Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ), «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից՝ Ահմեդ Ռիզան, Նազըմը և Շաքիրը:

Զրույցն սկսվեց նրանով, որ Ահմեդ Ռիզան հայ պատվիրակներին հիշեցրեց օսմանյան ընդդիմադիր կազմակերպությունների Փարիզի առաջին համագումարում (1902 թ.) Ավետիս Ահարոնյանի՝ իրեն ուղղած՝ «Հայերը ամեն Թուրքի հետ կարող են

---

[1] **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 200:

համաձայնել, բայց պրն Ահմետ Ռիզա, քեզ հետ՝ երբեք» խոսքերը, ապա և հավելեց. «Այդ կարծիքը փաստացիօրէն հերքելու համար՝ ես էլ, իմ ընկերներովս, որոշել եմ ամէն գնով՝ իմ ճանաչած հակառակորդներիս հետ համաձայնութեան գալու: Այնպէս որ, ես մոռացել եմ ամէն անցեալ եւ այստեղ եկած եմ ձեզ հետ համաձայնութիւն կնքելու հաստատ համոզումով: ... Միատեղ գործենք որոշեալ արդիւնքը ձեռք բերելու համար, քանի որ քաղաքական հորիզոնը երթալով աւելի մռայլ է դառնում»[1]: Ստ. Սապահ-Գյուլյանը նշել է, որ նա գործածում էր չափազանց ողոքիչ մի լեզու, անդադար կոչ էր անում Մեծն Մուրադի մարդասիրական, հայրենասիրական զգացումներին՝ միջին ճանապարհ գտնել, համաձայնություն առաջ բերել և մոռացնել տալ անցյալի այն «դառնություններն ու թյուրիմացությունները», որ տեղի էին ունեցել Հնչակի ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության միջև[2]:

Բանակցող կողմերի միջև հենց սկզբից լարվածություն ստեղծեց Ահմեդ Ռիզայի առաջ քաշած հարցը: Թուրքական կոմիտեի ղեկավարն առաջարկեց նախ քննարկել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման և դրսից սպառնացող վտանգներին համատեղ դիմագրավելու հարցը: «Տակաւին ամէն բան կորած չէ,- մի քանի անգամ ասում էր նա,- դեռ կարող ենք մեր պետութիւնը անկումից ազատել: Արաբներից աւելի՝ այս գործի մէջ մեզ կարող են օգնել մեր հայ հայրենակիցները: Միայն հարկաւոր է որ հասկացողութեան գանք եւ մեր փոխադարձ շահերը լաւ հասկանանք»[3]:

Երիտթուրք պարագլխի հարցադրումը հանդիպեց հնչակյան ներկայացուցիչների վճռական մերժմանը, քանի որ տվյալ առաջարկի ընդունումը կնշանակեր կամավոր հրաժարում Հայկական հարցից, ասել է թե՝ 61-րդ հոդվածի երաշխավոր եվրոպական տերությունների՝ հայերին ցույց տրվելիք հնարավոր աջակցությունից: Նրանք ասում էին, որ ոչ միայն Բեռլինի, այլև Սան-

---

[1] **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 201:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 202-203:

Ստեփանոյի, Կիպրոսի դաշնադրություններով ու մայիսի 11-ի (1895 թ.) փաստաթղթով Հայկական խնդիրը միջազգայնացվել է և դադարել միայն Թուրքիայի ներքին խնդիրը լինելուց:

Տրամագծորեն հակառակ տեսակետների բախումը կանխորոշեց հանդիպման վախճանը:

Ընդամենը դրան, երկու կողմերի չփումների դուռը բաց էր մնում: Որոշ ժամանակ անց տեղի ունեցավ Հնչակ-երիտթուրք երկրորդ հանդիպումը: Քանի որ այդ ժամանակներում Հնչակի փարիզյան կենտրոնավայրը գտնվում էր Աբդուլ Համիդի և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի լրտեսական ցանցերի մշտական հսկողության տակ, ուստի, Հնչակյանների առաջարկով, տեսակցություն-վիճաբանությունը շարունակվեց Փարիզի «Կաֆե Լիլա» սրճարանի առանձնասենյակներից մեկում:

Երկրորդ հանդիպման համար, երկու կողմերի համաձայնությամբ, որոշվեց հետևյալ ընդհանուր օրակարգը. 1) Հայկական դատ և համապետական ուղղություն, 2) Ինքնավար Հայաստան և Թուրքիա, 3) Դեմոկրատական սահմանադրություն և «Միդհատյան սահմանադրություն», 4) Հայկական խնդիր և արտաքին միջամտություն, 5) Սոցիալիզմ և ազգայնականություն, 6) Ազգություն և օսմանականություն (օտտոմանիզմ), 7) Կազմակերպություն, քարոզչություն և հեղափոխական գործունեություն, 8) Միջկուսակցական մարմիններ և միջկուսակցական հարաբերություններ, 9) Ձեռքբերած համաձայնությունների ո՞ր մասերը պետք է հրապարակել[1]:

Այս անգամ էլ տարաձայնություններ ծագեցին առաջին հարցի քննարկման ընթացքում: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներկայացուցիչները չեչտեցին, որ կայսրության բոլոր ժողովուրդների դատերը սերտորեն կապված են իրար հետ և չեն կարող լուծվել տարբեր ժամանակներում, մեկը մյուսից զատ, հետևապես, դրանց լուծումը հնարավոր է միայն երկրի տարածքային ամբողջականության պահպանման պայմաններում և համապետական բարենորոգումներ անցկացնելու արդյունքում:

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 203-204:*

Հնչակյան պատվիրակները հայտնեցին իրենց վճռական անհամաձայնությունը երիտթուրքերի տեսակետին: Իրողություն է, ասում էին նրանք, որ 1815 թ. Վիեննայի կոնգրեսից ի վեր մեջտեղ է եկել ընդհանուր Թուրքիայի բարեկարգության թեզը, բայց դա ոչ միայն որևէ արդյունք չի տվել, այլև ծառայել է որպես պատրվակ ***մասնավոր խնդիրների*** *լուծմանը խոչընդոտ լինելու: Նրանք գտնում էին, որ ազատության ճանապարհին հարյուր հազարավոր զոհեր տված հայ ազգի դատը մյուս ազգերի դատերից առանձին լուծում է պահանջում: Շեշտադրվեց նաև, որ կայսրության բազմաթիվ ժողովուրդներից միայն առավել տառապյալ երկու ժողովուրդների՝ հայերի ու մակեդոնացիների ազգային դատերն են առաջին հերթին ենթակա լուծման նաև այն պատճառով, որ դրանք արտացոլված են միջազգային պայմանագրերում և գտնվում են եվրոպական տերությունների սևեռուն հսկողության ներքո:*

Երիտթուրքերը ցանկություն հայտնեցին իմանալու, թե Հայ դատի լուծման ճանապարհին հնչակյաններն ինչպիսի՞ միջոցների գործադրումն են գերադասելի համարում: Վերջիններս պատասխանեցին, որ իրենց կուսակցությունը, ինչպես նախկինում, հետայսու նույնպես պայքարը շարունակելու է թե՛ խաղաղ և թե՛ զինյալ միջոցներով, մինչև որ ***Հայաստանն ստանա ինքնավար տարածքի կարգավիճակ՝ Թուրքական պետության կազմում:*** *Հայ պատվիրակները չեշտեցին, որ իրենք ինքնավարություն են պահանջում ոչ թե հայերի, այլ Հայաստանի համար, որտեղ բնակվող բոլոր մարդիկ օրենքի առջև լինելու են հավասար՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից: Նման անխտրական մոտեցումը, շեշտում էին նրանք, բխում է ոչ միայն նրանից, որ իրենք սոցիալիստներ են, այլև հայ ժողովրդի ազգային խառնվածքից, նրա լայնախոհությունից:*

Հայ ազգին քաղաքական ինքնավարություն տալը պատմության հրամայականն է, ասում էին հնչակյան ներկայացուցիչները: Հայաստանի ինքնավարությունն իր ժողովրդագրական սահմաններում մնում է որպես պատմության և մարդկային քաղաքակրթության մնայուն պահանջ:

Երիտթուրք պատվիրակները կարծիք հայտնեցին, որ Հա-

յաստանին ինքնավարություն տալուց հետո նույնը պահանջելու են կայսրության մյուս բոլոր ոչ թուրք ժողովուրդները, իսկ դա պետության կործանման սկիզբ կնշանակեր:

Ի պատասխան, հնչակյան ներկայացուցիչներն ասում էին, որ հայերին ինքնավարություն տալու դեպքում հնարավոր է, որ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու պայմանով նույնը պահանջեն նաև կայսրության մեջ բռնափակված ուրիշ ազգեր և որ իրենք դրանում արատավոր բան չեն տեսնում: Զէ՞ որ մինչև Թուրքերի Անատոլիա և Բալկաններ թափանցելը այդ տարածքների շատ ազգություններ ունեցել են իրենց պետական կազմավորումները: Ոչ թուրք ազգերին ներքին ինքնավարություն տալով, թուրքական պետությունը ոչ թե չի թուլանա, այլ, ընդհակառակը, կմեղմվեն կայսրությունը ծվատող ազգամիջյան հակասությունները և դրանով իսկ կամրապնդվի երկրի ներքին կայունությունը: Ինչ վերաբերում է երիտթուրքերի մյուս հարցադրմանը, թե Հայաստանում հայերը փոքրամասնություն են, հնչակյանները պատասխանեցին, որ, իրոք, նրանց թիվը մեծապես նվազել էր, բայց դրա մեղքն ամբողջովին ընկնում է թուրքական բռնապետության վրա, որը բռնի կրոնափոխության միջոցով հայերի մեծ զանգվածներ օտարել է իրենց մայր ժողովրդից, իսկ հարյուր հազարավոր հայեր ստիպված են եղել փախուստ տալ զուլումի երկիր դարձած իրենց հազարամյակների հայրենիքից: Չնայած բոլոր արհավիրքներին, հայերը Հայաստանում, այնուամենայնիվ, հարաբերական մեծամասնություն են կազմում:

Այդ առնչությամբ երիտթուրքերը հետաքրքրվեցին, թե ինքնավարություն ստացած հայերը, իրենց դիրքերն ամրապնդելուց հետո, արդյո՞ք չեն փորձի այնտեղից դուրս մղել մուսուլմաններին՝ դրանով իսկ անլուծելի խնդիրներ ստեղծելով կառավարության համար: Քանի որ «Հայաստան» անվանումով տարածքի վրա ապրողների մեծամասնութիւնը մուսուլմաններ են, ասում էին նրանք, ուստի նա այժմ լոկ «աշխարհագրական հասկացություն» է: «Այդ դեպքում ի՞նչ նպատակի կարող է ծառայել ինքնավարութիւնը»[1],- հարցնում էր Նազիմը:

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիլեան***, *Պատասխանատուները, Բ հրատ., էջ 207:*

Հնչակյանների առաջ քաշած Հայաստանի ինքնավարության հարցի քննությունը տեղի էր ունենում հույժ լարված մթնոլորտում: Հատկապես մի հրատապ ներքին դայրույթ էին ապրում Նազըմը և Ահմեդ Ռիզան: Վերջինս ցանկացավ իմանալ, թե հնչակյանների կարծիքով, ո՞ր տարածքները պետք է ներառնվեն ինքնավար Հայաստանի սահմանների մեջ և խնդրեց դրանք ցույց տալ քարտեզի վրա: Միաժամանակ, նա ուզում էր բացատրություն ստանալ ոչ միայն ինքնավարության ձևի և կիրառության մասին, այլև՝ թե այդ ինքնավարությունն ի՞նչ կապ և հարաբերություն պիտի ունենա օսմանյան պետության հետ:

Հաջորդ նիստին հնչակյան պատվիրակները ներկայացրին Հայաստանի պատմական քարտեզը՝ Կիպերտի քարտեզի հետ և ցույց տվին, թե նրա ո՛ր մասերն են գտնվում Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի տիրապետության տակ: «Երիտասարդները» ոչ միայն տխրեցան,- հետագայում վերհիշել է Սապահ-Գյուլյանը,- այլև չչմուեցան. հազիւ թուքերնին կուլ էին տալիս. մեր բացատրութիւնները լսելիս՝ հոգւոյ ներքին պատերազմը, խռովքը, որոշ կերպով արտացոլացեր էր իրենց չառագունած դէմքերի վրայ»[1]: Նրանց աղմկալից դժգոհությունն առաջ բերեց հատկապես այն, որ քարտեզում ներառնվել էր նաև Կիլիկիան: Երիտթուրքերն ասացին, թե որևէ թուրք որևէ ժամանակ չի համաձայնի, որպեսզի Կիլիկիան մտնի ինքնավար Հայաստանի կազմի մեջ, քանի որ այդ դեպքում Միջագետքը, Արաբիան, Սիրիան փաստորեն կանջատվեն օսմանյան մայր պետությունից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե հնչակյաններն ինչպե՞ս են պատկերացնում ինքնավար Հայաստանի կառավարման համակարգը, պատասխանը հետևյալն էր. ***ինքնավար Հայաստանը լինելու է Օսմանյան կայսրության անբաժանելի մասը՝*** *օժտված եվրոպական պետությունների հովանավորությամբ, առաջնորդվելու է կայսրությունում ստեղծվելիք դեմոկրատական սահմանադրությամբ: Ինքնավարությունն ունենալու է խորհրդարա-*

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան****, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 208:*

նական կառավարում՝ օժտված ընտրովի խորհրդարանով. գործադիր իշխանությունը լինելու է ինքնավարության կառավարությունը, որը կազմավորվելու է խորհրդարանում, իսկ վարչապետը նշանակվելու է եվրոպական տերությունների և Կ. Պոլսի փոխհամաձայնությամբ: Վարչապետը և կառավարությունը հաշվետու են լինելու խորհրդարանի առջև: Ինքնավարության մեջ մտնող նահանգներն ունենալու են իրենց տեղական ղեկավար մարմինները, որոնք օժտված են լինելու ամենալայն իրավունքներով և ինքնակառավարման գործառույթներով: Թուրքերենի հետ հայերենը լինելու է պետական լեզու ինքնավարության ողջ տարածքում. հասարակական կարգի պահպանման համար ստեղծվելու է ժողովրդական ոստիկանություն և այլն[1]*:*

Ի վերջո, երկար վիճաբանություններից հետո, երիտթուրք պարագլուխները հայտարարեցին, թե հարցի քննարկման արդյունքում իրենց համար ընդունելի է հետևյալ ձևակերպումը. «Կիլիկիայի համար բարեկարգություններ՝ տեղական պայմաններին համեմատ, իսկ Հայաստանի համար՝ ինքնավարություն՝ ոչ անջատողականության հիմունքով»[2]*:*

Անդրադառնալով հնչակյանների արած ակնարկին, թե ինքնավար Հայաստանն առաջնորդվելու է Թուրքիայում ստեղծվելիք լայն դեմոկրատական սահմանադրությամբ, որն ի զորու լիներ ընդհանուր կայսրության հրատապ պահանջներին բավարարություն տալ, երիտթուրքերը կամեցան իմանալ, թե ինչո՞վ դեմոկրատական չէ միդհատյան սահմանադրությունը, այն սահմանադրությունը, որ սուլթան Աբդուլ Համիդի տապալումից հետո իրենք մտադիր են վերահաստատել որպես երկրի հիմնական օրենք: Հնչակյան պատվիրակները տվեցին հետևյալ բացատրությունը. միդհատյան սահմանադրությունը անփոփոխ է թողնում երկրի բացարձակ միապետական կարգը, պահպանում է իսլամի գերիշխանությունը մյուս կրոնների նկատմամբ և սուլ-

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիլեան****, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 207-209:*

[2] *Նույն տեղում, էջ 209:*

թանի աստվածապետական անկապտելի իրավունքը, չի վերացնում ազգային բիրտ խտրականությունն ու անհավասարությունը և այլն: Միդհատյան սահմանադրությունն անփոփոխ թողնելու դեպքում, անհնարին կլինի երկիրը դուրս բերել խոր ճգնաժամից: Անհրաժեշտ է ունենալ նոր, դեմոկրատական սահմանադրություն, ուր ամրագրված լինի ազգերի և կրոնների հավասարությունը և որը բոլոր ազգերին հնարավորություն կտա եռանդուն մասնակցություն բերել Օսմանյան կայսրության համապետական խնդիրների լուծմանը:

Միդհատյան սահմանադրության մասին երիտթուրքերը պարզ ու հստակ արտահայտվեցին տրամագծորեն հակառակ դիրքերից: Նրանք ասում էին, որ դա համապատասխանում է կայսրության բոլոր ժողովուրդների, իհարկե, առաջին հերթին, թուրք ժողովրդի շահերին: Քանի որ թուրքերն արդեն ծանոթ են երկրի այդ հիմնական օրենքին, ուստի դա վերահաստատվելու դեպքում մյուս ազգերը նույնպես, ծանոթանալով դրա բովանդակությանը, կհամոզվեն, որ սահմանադրությունն խնայապես բխում է նաև իրենց ցանկություններից: Ըստ Նազրմի, տարիների ընթացքում միդհատյան սահմանադրությունը կարելի կլինի բարեփոխել ու մոտեցնել եվրոպական երկրների սահմանադրություններին: Իսկ եթե միդհատյանը մի կողմ դրվի և ընդունվի եվրոպական տիպի մի սահմանադրություն, ապա ընդհանուր և հավասար ընտրությունների անցկացման դեպքում քաղաքական իշխանությունը կայսրության մեջ անխուսափելիորեն կխլվի թուրք ժողովրդից և կտրվի այլազգիներին, մի բան, որի հետ թուրքերը երբեք չեն համաձայնի[1]*:*

Սահմանադրության խնդրի քննարկման արդյունքում որևէ համաձայնություն չկայացվեց, քանի որ բանակցող կողմերից յուրաքանչյուրն ամուր մնում էր իր տեսակետներին:

Այսուհետև կողմերն անցան թուրքերի համար ամենացավոտ՝ Հայկական խնդրի առնչությամբ ***արտաքին միջամտության հարցի*** *քննարկմանը: Երիտթուրքերը վերահաստատեցին,*

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիլյան****, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 210:*

որ իրենք ընդունում են Հայկական հարցի գոյությունը և պաշտպանելու են դա: Հենց այդ պատճառով, ասում էին նրանք, մենք, ինչպես մինչ այժմ, այսուհետև նույնպես կտրականապես մերժելու ենք օտար, արտաքին որևէ միջամտություն Հայկական խնդրին, դա դիտելու ենք որպես Թուրքիայի ներքին կյանքին, օսմանյան պետության վեհապետական իրավունքներին հակասող կոպիտ միջամտություն:

Հնչակյանները չհամաձայնեցին երիտթուրքերի բացատրությանը, ասելով, որ Հայկական հարցը դիվանագիտական սեղաններին է դրվել կայսրության ուրիշ ազգերի դատերից բոլորովին անկախ և նրա լուծման համար արտաքին միջամտությունն եղել է և կլինի անխուսափելի[1]:

Ի պատասխան, երիտթուրքերը կրկին կտրականապես հայտնեցին իրենց անհամաձայնությունը հնչակյաններին և հարցը առկախ մնաց:

*Օրակարգի մյուս հարցը վերաբերում էր **սոցիալիզմի և ազգայնականության փոխհարաբերություններին:***

Հնչակյան կուսակցության ներկայացուցիչները ցանկացան իմանալ, թե երիտթուրքերը պատրա՞ստ են ընդունելու դասակարգային պայքարի գաղափարը և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը: Նրանք չեչտում էին, որ ինքնորոշման սկզբունքը կյանքում իրականացնելու դեպքում հնարավոր կլինի չեզոքացնել Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգերի անջատողական ձգտումները, իսկ հեղափոխական պայքարի ընտրությունը հնարավորություն կտա հեղաշրջել Թուրքիայի քաղաքական, տնտեսական և հասարակական հարաբերությունները և հիմնադիր (սահմանադիր) ժողովի միջոցով ամեն ինչ դնել նոր հիմքերի վրա[2]:

Երիտթուրքերը հնչակյան ներկայացուցիչներին պատասխանեցին, որ իրենք պատրաստ չեն զբաղվելու նշված խնդիրներով, քանի որ նախ՝ սոցիալիզմի մասին «իրենք չատ բան չգի-

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 210-211:*

[2] *Տե՛ս Նույն տեղում, էջ 211:*

տեն», ապա՝ «չեն համաձայնի թուրք ժողովրդին քարոզելու, քանի որ նա պատրաստ չէ այդպիսի գաղափարներ ընդունել»[1]: Նրանց կարծիքով, եթե սահմանադիր ժողով հրավիրվի և նրա միջոցով կառավարություն կազմվի, ապա պետությունը կվերածվի անդեմ մի կազմավորման, որը հազիվ կհիշեցնի Օսմանյան կայսրությունը: Թուրքերի մոտ ընդունված էր ասել. «Մենք վեց հարյուր տարվա ազգ ենք. մեր պապերը մի քանի հարյուր վրան չալակած եկան այս երկիրը և լայնածավալ մի պետություն ստեղծեցին: Հիմի ի՞նչ է, չե՞նք կարող պահպանել այն, ինչ ժառանգություն ենք ստացել մեր նախորդներից»: Երիտթուրքերն ավելորդ չհամարեցին հնչակյաններին հիշեցնել, որ իրենք հետևողականորեն առաջնորդվում են ազգայնական դրոշով և հայերն իզուր են հույս կապում միջազգայնականության անորոշ հեռանկարի հետ Թուրքիայում: «Ազգայնական չլինել չենք կարող,- ասում էր Նազիմը:- Մեր եւ մեր կուսակցութեան գոյութիւնը, նրա գործունէութիւնը դրանով է պայմանաւորուած. ազգայնականութեան մէջ է, որ մենք տեսնում ենք մեր յարատեւութեան առաջին գրաւականը»[2]:

Այնուհետև, հանդիպման մասնակիցները քննության առան օրակարգի հաջորդ հարցը, որը վերաբերում էր **ազգության և օսմանականության** փոխհարաբերությանը:

Երիտթուրքերը չարադրեցին հարցի սեփական ըմբռնումը: Նրանք նշում էին, որ իրենց նպատակն է Օսմանյան կայսրությունը վերակազմել այնպիսի հիմունքներով, որ նրա մեջ մտնող զանազան այլացեղ, այլակրոն տարրերը ժամանակի ընթացքում կազմեն մի ընդհանուր ընդարձակածավալ զանգված, մի ներդաշնակ մարմին՝ օսմանյան ազգ: Նրանց ուղեղում նույն միտքն էր պտտվում. կատարել տարբեր ազգերի ու կրոնների համահարթեցում՝ «կամավորության» սկզբունքով, իսկ եթե դա չհաջողվի՝ օտար համայնքներին ենթարկել ամբողջական բռնի կրոնափոխության կամ ամբողջական կոտորածների: Նրանք

---

[1] **Ստեփան Սապահ-Գիլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 211:

[2] Նույն տեղում:

լիահույս էին, որ Թուրքերի հին երակների մեջ նոր արյուն հոսեցնելով, իրենց առաջարկած միջոցներով կարճ ժամանակամիջոցում կկարողանան կասեցնել օսմանյան պետության անկումը[1]:

Նման պայմաններում հնչակյանները գտան, որ միանգամայն անօգուտ է վիճաբանություն ծավալել, քանի որ ընդդիմախոսներն անդրդվելի են: «Երիտասարդները ասացին,- գրել է Սապահ-Գյուլյանը,- որ օսմանականությունը իրենց հիմնական գաղափարներից մէկն է, հետեւապէս, որեւէ գնով չեն կարող տեղի տալ»[2]:

Եզրափակիչ նիստում, անդրադառնալով օրակարգի վերջին երկու կետերին, որոնք վերաբերում էին քարոզչությանը, միջկուսակցական հարաբերություններին և միջկուսակցական մարմինների ստեղծման նպատակահարմարությանը, կողմերը փոխադարձ հասկացողություն դարձյալ հանդես չբերեցին: Հնչակյանները երիտթուրքերին առաջարկեցին իրենց կուսակցական մարմինների միջոցով քարոզչություն սկսել ինքնավար Հայաստանի մասին արդեն ձեռք բերված համաձայնության շուրջ, ինչպես նաև ստեղծել միջկուսակցական մարմին՝ ընդունված որոշումների իրականացմանը նպաստելու համար: Սակայն, ինչպես հնչակյանների համարյա բոլոր առաջարկների (բացառությամբ մեկ-երկուսի), այնպես էլ այս առաջարկի նկատմամբ երիտթուրքերը բացասական դիրք բռնեցին: Նրանք հասկացնել էին տալիս, որ իրենք որևէ շահ չունեն ինքնավար Հայաստանի գաղափարի քարոզչության մեջ և ավելորդ են համարում այդ մասին շարունակել խոսակցությունը:

Պարզ դարձավ, որ երիտթուրք պարագլուխները, դրանով իսկ, հրաժարվում են նախորդ նիստում արված հայտարարությունից, թե ընդունում են Հայկական խնդրի գոյությունը:

Երիտթուրքերի կոչտ կեցվածքին նույնքան կոչտ հայտարարություն արեց Ստ. Սապահ-Գյուլյանը, ասելով. «Ոչ մի հայ, ոչ

---

[1] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան,** Երիտասարդ Թուրքիա, էջ 9-11:

[2] **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 212:

մի հայ կուսակցութիւն չի կարող համաձայնել ո՛չ ձեր սնուցած գաղափարների, ո՛չ էլ ձեր գործելակերպի ու վարուելակերպի հետ: Խնդիրը անձնական չէ, այլ գաղափարական. – դէմ դիմաց են կանգնած հակոտնեայ գաղափարներ՝ հակոտնեայ մարմնացնող կուսակցութիւններով. ուստի, նրանց միջև, այս պայմանների տակ, ո՛չ համաձայնութիւն կարող է լինել, ո՛չ էլ՝ համագործակցութիւն»[1]:

Ահմեդ Ռիզա բեյը լուռ էր և ներքին դայրույթը զսպելու ջանքեր էր թափում: Բեհաէդդին Շաքիրը և «դոկտոր» Նազրմը աճապարեցին հավաստիացնել, որ օրակարգի վերջին խնդիրներն իրենք լավ չեն ուսումնասիրել և դրանց քննարկմանը պատրաստ չեն, ուստի և ծագած թյուրիմացություններն այդ բանի արդյունք են:

Այսպես վերջացան բանակցությունները Հնչակի և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի միջև: Առաջվա պես, երկու կողմերը տարբեր բևեռներում էին՝ որպես քաղաքական հակառակորդներ:

Մեկնելուց առաջ Շաքիրը և Նազրմը խոստացան հաջորդ հանդիպմանը «աւելի պատրաստ գալ»: «Մենք բաժանուեցանք,- գրել է Սապահ-Գյուլյանը:- Էն գալն էր, որ եկան, էն բաժանուելն էր, որ բաժանուեցանք»[2]:

Հնչակյան կենտրոնը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ գալիքում որևէ համաձայնության գալու հնարավորություն այլևս չէր տեսնում:

---

[1] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 212-213:

[2] Նույն տեղում, էջ 213:

ՈՐՈՇ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1907 թ. սկզբներին մի բազմազգ կազմակերպություն էր հիմնվել Կահիրեում՝ «Օսմանյան սահմանադրական միություն» անունով, որին մասնակցում էին թուրքահպատակ տարբեր ազգերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ հայեր: Կազմակերպությունն ստեղծել էր իր թերթը՝ «Շուրա-ի օսմանիե» («Օսմանյան խորհուրդ») վերտառությամբ: Իր 1907 թ. օգոստոսյան համարներից մեկում թերթը միության նպատակը պարզել էր հետևյալ կերպ. 1) Օսմանյան կայսրության ժողովրդին մասնակից դարձնել երկրի կառավարմանը՝ սահմանադրական իշխանություն հաստատելու միջոցով, 2) Միությունն իրեն իրավունք է վերապահում այդ նպատակին հասնելու համար օգտագործել օրինական բոլոր միջոցները, 3) Միության մեջ կարող են մտնել օսմանյան բոլոր հպատակները՝ առանց ցեղի և կրոնի խտրության, 4) Միությունը պետք է ունենա իր կենտրոնական կոմիտեն, որը պետք է զբաղվի ծրագրի վերջնական խմբագրմամբ և որոշի կազմակերպության գործունեության ընդհանուր եղանակը:

Շատ չանցած, լույս տեսավ կազմակերպության ծրագրի նախնական տարբերակը չորս լեզուներով՝ թուրքերեն, ֆրանսերեն, հայերեն, արաբերեն:

Մի այլ առիթով 1907 թ. սեպտեմբերի 28-ին անդրադառնալով կազմակերպության նպատակներին, «Շուրա-ի օսմանիե» թերթը գրում էր. «Մեր նպատակը, որքան պարզ, նույնքան ազնիվ է. արագացնել սահմանադրական մի կարգի ստեղծումը, որը փրկության միակ միջոցը կարող է լինել Օսմանյան կայսրության համար»: Ասելիքն ավելի հիմնավոր դարձնելու նպատակով, թերթը շարունակում էր. «Մենք ցեղական կամ կրոնական որևէ խտրություն ընավ չենք ընդունում: Քաղաքական լեզվով արտահայտվելով՝ նշենք, որ մեզ համար գոյություն չունի ո՛չ տիրապետող ցեղ և ո՛չ էլ նվաճված ժողովուրդ: Օսմանյան կայսրության յուրաքանչյուր քաղաքացի միևնույն իրավունքներն ու միևնույն պարտականությունները պիտի ունենա

մայր հայրենիքում: Ներկա բռնակալ վարչակարգը մինչև այժմ կայսրության այլևայլ ցեղերի և կրոնական համայնքների միջև միչտ ատելություն է սերմանել: Մենք պետք է ցույց տանք բոլոր ճնչվածներին, թե որտեղ է չարիքը և նրա արմատը»: Այնուհետև թերթը գրում էր, որ Միությանն անդամագրված տարբեր ազգերի զավակները՝ մուսուլման թե քրիստոնյա, լի են վճռականությամբ տապալելու սուլթան Աբդուլ Համիդի հանցագործ վարչակարգը և մարդավայել ապրելու ճանապարհ բացելու օսմանյան հայրենիքի բոլոր քաղաքացիների համար:

Այս օրինակը եզակի չէր: Իչխան Սարահէդդինի կազմակերպության տպագիր օրգանում՝ «Թերաքքը» անունով լրագրում տպագրված մի հոդվածի հեղինակը սուր քննադատության էր ենթարկում Աբդուլ Համիդի՝ համիսլամիզմի վրա հիմնված, չուրջ քառորդ դար տևող քաղաքականությունը: Ի՞նչ է հետապնդում Աբդուլ Համիդն այդ քաղաքականությամբ,- հարցադրում էր հոդվածագիրը և ինքն էլ պատասխանում. «Հնդկաստանում, Ռուսաստանում, Աֆրիկայում, մի խօսքով՝ աշխարհի տարբեր մասերում որքան անկախ կամ հպատակ մահմեդական կառավարություններ ու ժողովուրդներ կան, բոլորին բարոյապէս կապել Կ. Պոլսի հետ եւ հարկ եղած դէպքում այդ բարոյական կապի վրայ յենուելով սպառնալ Արեւմուտքին»[1]:

Իսկ որքանո՞վ է այդ ձգտումը հիմնավորված,- կրկին հարցնում էր հոդվածի հեղինակը և պատասխանում. բացի Թուրքերից, մյուս բոլոր մուսուլմանական ժողովուրդները անգամ չնչին նշանակություն չեն տալիս մուսուլմանների կրոնական գերագույն պետի նստավայր համարվելու Կ. Պոլսի հավակնությանը: Ո՞ւմ հայտնի չէ, որ, օրինակ՝ մարոկկոցիները խալիֆ են ճանաչում իրենց սուլթանին, շիաները՝ շահին, եմենցիները՝ իմամին, սուննի արաբները՝ իրենց շերիֆներին և այսպես շարունակ: Ուրեմն՝ «մահմեդականների խալիֆայական միութիւն գոյութիւն չունի»: Դրա ցայտուն ապացույցներից մեկը «Թերաքքն» համարում էր այն, որ օրինակ՝ օսմանցի մուսուլմանների մի մա-

---

[1] Տե՛ս **«Վտակ»** (Թիֆլիս), № 6, 10 հունվարի 1908 թ.:

սը (Թուրքեր և քրդեր) ներկայում կռվի մեջ է մյուս մասի (Եմենի արաբներ) հետ: «Եթէ մինչեւ այժմ չենք կարողացել օսմանեան ընդհանուր հայրենիքում ապրող մահմեդական ժողովուրդների միջեւ համերաշխութիւն հաստատել, ապա ինչպէ՞ս կարող ենք, ուրեմն, մի ընդհանուր միութեան մէջ առնել եւ սերտ կապեր հաստատել այն ժողովուրդների հետ, որոնց գոյութեան մասին քիչ թէ շատ ծանօթ ենք միայն աշխարհագրութեան գրքերից»[1]:

Այնուհետև հոդվածագիրը հաստատում էր, որ շատ ավելի վաղ ժամանակներում օսմանցի վեհապետները բավարարվում էին «սուլթան» տիտղոսով: Նրանք հազվադեպ էին գործածում «խալիֆ» բառը: Վեզիրները և պետական խելոք անձինք գտնում էին, որ կառավարությունը պետք է հենել ոչ թե խալիֆայության, այլ՝ սուլթանության վրա՝ խույս տալու համար «խալիֆ» հորջորջվող զանազան մուսուլման իշխանների դյուրազգացության վիրավորումից: Աղոթատեղիներում և մզկիթներում անգամ օսմանյան վեհապետները հիշատակվում էին որպես սուլթան, այլ ոչ որպես խալիֆ: Որովհետև ընդհանուր համոզմունքն այն էր, որ սուլթանության ուժով կարելի է պահպանել խալիֆայության բարոյական ուժը և ոչ թե խալիֆայությամբ՝ սուլթանության գործնական ուժը:

«Թերաքքը», այնուհետև, շարունակում էր. «Երեսուն տարուց ի վեր Ելդրզի հետեւած քաղաքականութիւնը մեզ մոլորեցրեց եւ ուղղորդեց դէպի խալիֆայութիւն ու համիսլամութիւն: Հէնց այդ ժամանակից մահմեդական հպատակներ ունեցող եւրոպական պետութիւնները հանդէս եկան մեր դէմ: Այդքանից յետոյ մենք աղաղակում ենք, թէ Եւրոպան նոր խաչակրաց արշաւանք է սկսել Օսմանեան կայսրության դէմ:

Եթէ մենք անկողմնակալութեան դիրքերից նկատի ունենանք այդ քաղաքականութեան ծնած եւ ծնելիք վտանգները, ապա անկասկած կտեսնենք, որ միայն կրօնի զօրութեամբ աշխարհի 300 միլիոնանոց մուսուլմաններին մի դիւթական ոյժի միջոցով տէր դառնալու խելայեղ միտքը մեր երկրի ամբողջա-

---

[1] Տե՛ս **«Վտակ»**, № 6, 10 Հունվարի 1908 թ.:

կանութեան գաղափարի համար պատրաստում է մի անդունդ: Երբ կհասնենք այդ անդունդի եզրին, գուցէ միայն այն ժամանակ մեր խելքը մեր գլուխը կհաւաքենք»[1]:

Թուրքերից ոչ մեկը համիսլամության և համախալիֆայության քաղաքականությունը մինչ այդ այնպես տաղանդավոր կերպով չէր քննադատել, ինչպես «Թերաքքրի» աշխատակիցը:

Հիրավի, ինչպես տեսնում ենք հոդվածից, թե՛ Օսմանյան կայսրության ներսում և թե՛ առավելապես կայսրությունից դուրս ոչ թուրք մահմեդական պարագլուխների մեծ մասը ոչ միայն խալիֆի տիտղոսը չէր դիջում օսմանյան սուլթանին, այլև այդ տիտղոսի համար բացարձակ կամ խուլ կռվի մեջ էր նրա դեմ: Ավելին, նշված պարագլուխները մշտապես աղոթում էին, որ օսմանյան պետությունը որքան հնարավոր է արագ տկարանա և, ի վերջո, ոչնչանա:

Այսպիսով, 20-րդ դարի սկզբին համիսլամության քաղաքականությունը Կ. Պոլսի կառավարության համար փոխանակ ուժի աղբյուր լինելու, մուսուլման զանգվածների միջավայրում դարձել էր վեճերի, երկպառակությունների և թշնամանքի առիթ:

«Միանգամայն ակնյայտ է,- գրում էր «Մշակը»,- որ եթէ չլինէր ինտրիգների (խարդավանքների) քաղաքականութիւնը, եթէ Թուրքիան աշխատէր ներքին վերանորոգումներով, վերածնուէր՝ առանց հետապնդելու ներքին ցնորքներ, այդ դէպքում նա, որպէս մի ուժեղ եւ հետզհետէ հզօրացող պետութիւն, բնականաբար, պիտի գրաւէր իր կրօնակից պետութիւնների համակրանքն ու աջակցութիւնը: Իսկ այժմ նրա ազդեցութեան դէմ կռւում են ոչ միայն քրիստոնեայ տէրութիւններին հպատակ մահմեդական բնակչութիւն ունեցող գաղութները, այլեւ ինքնիշխան մահմեդական երկրները»[2]:

Ստեղծված նոր պայմաններում հայ-մակեդոնական ընդդիմադիր ուժին հնարավոր է, որ միանար բուն թուրքական իրականությունից սերված երիտթուրքական շարժումը: Այդ ենթադ-

---

[1] *Տե՛ս **«Վտակ»**, № 6, 10 հունվարի 1908 թ.:*

[2] ***«Մշակ»**, № 170, 8 օգոստոսի 1906 թ.:*

րությունը կարող էր իրական կերպարանք առնել այն պատճառով, որ սուլթանական կարգերի բռնի ուժով տապալմանը ձգտում էին ոչ միայն հայերն ու մակեդոնացիները, այլև երիտթուրքերը: Այստեղից էլ՝ նրանց գործողությունների համակարգման, համերաշխորեն գործելու և միասնաբար հանդես գալու բնական պահանջը:

ՈՉ ԹՈՒՐՔ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՓՈՐՁ

1905–1906 թվականներին Օսմանյան կայսրության հատկապես եվրոպական մասի ոչ թուրք քրիստոնյա ազգաբնակչության հակասուլթանական տրամադրություններն այն աստիճան էին խորացել, քաղաքական անցուդարձերն այնտեղ այնպիսի արագությամբ էին հաջորդում մեկը մյուսին, որ 1906-ի վերջավորությանն արդեն պատրաստ էր՝ համագործակցության և միության ենթահողը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ՀՅ դաշնակցությունը որոշեց համաժողովի հավաքել Բալկանների հեղափոխական կոմիտեների ներկայացուցիչներին: «Դրօշակի» խմբագրության նախաձեռնությամբ՝ այդ ուժերն անցկացրին նախապատրաստական ժողովներ և ընտրեցին պատվիրակներ:

Վերջապես, 1906 թ. դեկտեմբերի սկզբներին Ժնևում տեղի ունեցավ նախատեսված համաժողովը, որին մասնակցում էին հույն, մակեդոնացի, բուլղար, սերբ, բոսնիացի, հերցեգովինացի և հայ ժողովուրդների կոմիտեների ներկայացուցիչները:

Համաժողովը մինչ այդ (փոքր բացառություններով) միմյանց հետ առնչություն չունեցող և շատ հաճախ քաղաքականապես խորթացած գործիչների համախմբման առաջին փորձերից մեկն էր և դրանից շատ բան սպասել չէր կարելի: Այնուամենայնիվ, ժողովը միաձայն ընդունեց մի բանաձև, որն ըստ էության կոչ էր բալկանյան և փոքրասիական ազգերին: Փաստաթուղթն այսպիսի բովանդակություն ուներ. 1. Հրաժարվել ներքին պառակտումներից ու փոխադարձ թշնամական քայլերից,

որոնք միշտ ջուր են լցրել ընդհանուր թշնամու ջրաղացին, 2. Թուրքական անմարդկային վարչակարգի դեմ կռիվ մղել միացյալ ու ներդաշնակված ուժերով, 3. Շարունակել պայքարն այնքան ժամանակ, քանի դեռ իրագործված չեն Մակեդոնիայի, Հայաստանի ու Բոսնիա-Հերցեգովինայի ինքնավարությունը և բալկանյան փոքր պետությունների դաշնությունը, 4. Ամեն ինչ անել, որպեսզի արմատական փոփոխություններ և սահմանադրական կարգեր մտցվեն Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համար՝ նրանց դժոխային վիճակն արմատապես բարելավելու նպատակով:

Ժողովը նաև որոշում ընդունեց նույն ամսվա վերջին Ժնևում կազմակերպել ու հրավիրել հրապարակային խոշոր հանրահավաք և մասնակցության հրավեր ուղարկել Ֆրանսիայի երկու ականավոր գործիչներին՝ Ժան Ժորեսին և Ֆրանսիս դը Պրեսանսեին: Նախատեսվեց, որ Ժնևում կայացվելիք հավաքը պետք է չարունակություն ունենա բալկանյան այլ կենտրոններում:

Համաժողովը վերջանալուց հետո, Ժնևում հավաք կազմակերպելու համար հարկավոր պատրաստություններ սկսվեցին: Բայց կազմակերպիչ մարմինն անսպասելիորեն ստիպված եղավ դրա հրավիրումը հետաձգել 1907 թ. հունվարի վերջին, որովհետև Պրեսանսեն հիվանդ էր և կարող էր Ժնև գնալ միայն այդ ժամանակ, իսկ Ժորեսը, կարևոր գործերով զբաղված լինելով, Փարիզից հեռանալու հնարավորություն չուներ և այդ մասին հետևյալ հեռագիրն էր ուղարկել «Դրօշակին».

«Անհնար է հեռանալ Փարիզից: Սակայն փափագում եմ միացնել իմ բողոքը ձեր բողոքին՝ ընդդէմ սարսափի եւ արեան ռեժիմի, որ Կարմիր սուլթանը տարածել է Հայաստանի եւ Մակեդոնիայի վրայ»[1]:

Սակայն 1907 թ. հունվարի վերջերին նախատեսված հավաքը, մեզ համար անհայտ պատճառներով, այնպես էլ տեղի չունեցավ:

---

[1] ***«Դրօշակ»*** *№ 12 (178), դեկտեմբեր, 1906, էջ 178-179:*

Հայկական հեղափոխական ուժերը մեծ ցավ էին ապրում, երբ հակասուլթանական ուժերի միջև անհամաձայնություններ և թշնամություններ էին ծագում:

Ընդդիմադիր կոմիտեների ներկայացուցիչների ժնևի համաժողովից հետո ՀՅ դաշնակցությունը շարունակում էր իր չթուլացող ջանքերը այդ կոմիտեների հետագա մերձեցման ուղղությամբ: Համաժողովից հետո էլ Դաշնակցության ղեկավար մարմինները և մամուլի օրգանները բազմիցս առիթներ ունեցան խստորեն քննադատելու թշնամություն սերմանողներին: Նրանք մշտապես համերաշխության կոչեր էին անում:

1907 թ. սկզբներից չափազանց լարվել էին Հունաստանի և Բուլղարիայի հարաբերությունները: Պատճառը «Մակեդոնական հարցն» էր: Երկու երկրները հավակնություն ունեին դեռևս թուրքական տիրապետությունից չազատագրված Մակեդոնիայի նկատմամբ: Բուլղարիայում տեղի էին ունենում հակահունական բազմամարդ ցույցեր: Իր հերթին, հույն երիտասարդությունը խոր ատելությամբ էր տոգորվում բուլղարների հանդեպ: Հակաբուլղարական լայն քարոզչություն էր հատկապես ծավալել Փարիզում հրատարակվող «Հելլենիզմ» երկչաբաթաթերթը, որը հունական խմբակցություններից մեկի օրգանն էր:

«Դրօշակը» երկու կողմերին կչտամբում էր, գրելով, որ նրանք կատարելապես մոռանում են, որ Մակեդոնիայի, ինչպես և հույն-բուլղարական շահերը թաքնված են ոչ թե երկու ազգերի փոխադարձ ատելության և մրցակցության, այլ նրանց ներդաշնակ, համերաշխ և բարեկամական գործակցության մեջ:

Հույն-բուլղարական հարաբերությունները հատկապես պղտորում էին հույն ազգայնականները: «Դրօշակը» ցավով նշում էր, որ հույն մտավորականության և երիտասարդության «չատ շրջաններ իրենց քաղաքական դաւանանքն են դարձրել ազգայնական ատելութիւնը, որը ոչ միայն անթոյլատրելի է, այլեւ անմիտ եւ անիմաստ է բալկանեան ժողովուրդների այժմեան պայմաններում»[1]: Թերթը համոզված էր, որ, բուլղարների դեմ

---

[1] ***«Դրօշակ»*** *№ 1 (179), Հունվար, 1907, էջ 14-15:*

հանդես գալու փոխարեն, հույները պետք է հետամուտ լինեն այն մեծ ծրագրին, որի նպատակն է սուլթանների ձեռքից խլել Կ. Պոլիսը և դա նորագույն քաղաքակրթությանը հանձնել[1]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, չնայած որոշ տեղաշարժերին, սուլթանական կարգերի դեմ պայքարը դեռ ծավալուն ու գործնական կերպարանք չէր առել: Երբ ռուսական հեղափոխության տարիներին ցարիզմի դեմ համատեղ ու համերաշխ կռիվը իրեն էր քաշում Ռուսաստանի կայսրության ռուս և ոչ ռուս բոլոր ժողովուրդներին՝ սկսած Ֆինլանդիայից մինչև Կովկաս, այդ նույն ժամանակ Օսմանյան կայսրության մեջ համերաշխ կռվի գաղափարը դեռ մնում էր անհասկանալի և անմատչելի:

* * *

Զմասնակցելով բալկանյան ազգային հեղափոխական կոմիտեների՝ 1906 թ. դեկտեմբերին տեղի ունեցած համաժողովին, երիտթուրքերի պարագլուխները իրենց իսկ չարքերի քննադատությանն ենթարկվեցին:

Սաբահէդդինի «Թերաքքը» և նույնիսկ Ահմեդ Ռիզայի «Մեչվերեթ» թերթերը գրում էին, թե արտասահմանում գործող իրենց կազմակերպությունները հետ են ընկնում բուն Թուրքիայում ծավալվող հեղափոխական իրադարձություններից: Նրանք վկայակոչում էին բազմաթիվ փաստեր, որոնք ցույց էին տալիս իրենց տեսակետի ճշմարտացիությունը: «Թերաքքըն», օրինակ, ողջունում էր, որ 1907-ին Վանում հայկական և թուրքական կազմակերպությունները միասնաբար որոշում են կայացրել ահաբեկել Վանի նահանգի նախկին վալի Ալի բեյին, որն իրականացվել էր նույն թվականի սեպտեմբերի 27-ին, Բաթումում: Թերթը նաև ողջունում էր, որ թուրք և քուրդ առանձին պաշտոնյաներ ու զինվորականներ, երկրի ընդհանուր վիճակը

[1] Տե՛ս **«Դրօշակ»** № 1 (179), հունվար, 1907, էջ 15:

նկատի առնելով, միանում են հայերին: «Մեշվերեթը» ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ Թուրքիա մուտք գործող իր տպաքանակի մի մասը թուրքերի շրջանում տարածվում է հայերի ձեռքով: Բերվում էին ուրիշ օրինակներ ևս. Տարոնի Առինջ գյուղում հայերը (մշեցի Համազասպը, առինջցի Արշավիրը, Մամիկոնը և ուրիշներ) ձեռնարկել են «Հուրրիեթ» («Ազատություն») անունով թուրքերեն մի ձեռագիր թերթի հրատարակմանը, որն ուղարկվում է թուրք և քուրդ մտավորականներին ու պաշտոնյաներին: Հայերը հրատարակում ու տարածում են հայերեն և թուրքերեն հեղափոխական թռուցիկներ ու կոչեր: Այդ բոլորի հետևանքով, հատկապես, կայսրության արևելյան որոշ տեղերում նահանգների թուրք և քուրդ չոչափելի թվով պաշտոնյաների, զինվորականների, զարգացած անձանց մոտ նոր մտայնություն է ստեղծվել. նրանք հայերին արդեն նկատում են ոչ թե որպես օտարի ձեռքին մի գործիք, ինչպես համարում էին առաջ, այլ դիտում են որպես համաօսմանյան հեղափոխության մեկ անհրաժեշտ գործոն:

Բերելով այս և ուրիշ օրինակներ, «Թերաքքրն» և «Մեշվերեթը» գտնում էին, որ այդ բացթողումը (բալկանյան և հայկական ազգային կոմիտեների համաժողովին չմասնակցելը) առաջիկայում ինչ որ ձևով կարելի է շտկել[1]:

Վերջապես, ռուսական հեղափոխությունը երիտթուրք պարագլուխներին ապացուցել էր, որ փոխանակ առանձին ազգային խնդիրներ առաջադրելու, պետք է պայքարել ընդհանուր նպատակների համար, հետևապես՝ պետք է ստեղծել այնպիսի միություններ, ընկերակցություններ, կազմակերպություններ, որոնց մեջ մտնեին թուրքը և արաբը, հայը և հույնը, կայսրության մյուս ազգերի ներկայացուցիչները:

---

[1] Տե՛ս **«Վտակ»,** № 26, 20 դեկտեմբերի 1907 թ.:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Այդ ամենը հաշվի առնելով, դաշնակցականները նոր հույսեր էին փայփայում, որ Թուրք ժողովրդի գիտակցության զարգացման ընթացքը կարագանա դեպքերի բերումով և ի վերջո հնարավոր կդառնա հայ և Թուրք հեղափոխականների չահագրգիռ ու անկեղծ համագործակցությունն ընդհանուր Թշնամու՝ արդուլհամիդյան բռնապետության դեմ պայքարում: Այդ համոզմունքի հիմքն այն էր, որ երկրում գնալով բաղմապատկվում էին վիչտն ու բողոքը և այդ պատճառով դեպքերն օր օրի վրա հրամայական կերպարանք էին ստանում:

«Դրօշակը» գրում էր.

«Քաղաքական այդ նպաստաւոր տագնապի հանդէպ բոլոր դիմադիր եւ յեղափոխական տարրերը՝ Թուրք, հայ, ալբան, մակեդոն, յոյն, քուրդ, չերքէզ մի գերագոյն պարտք ունեն՝ պատրաստ լինել ծրագրով, տաքտիքով, պատրաստ՝ չարժուելու, հարուածելու...»[1]:

*Թերթն առաջարկում էր «խորհրդակցութեան կոչել բոլոր դժգոհ խմբերը՝ դիմադրական Թէ յեղափոխական, մի ընդհանուր կոնգրեսի մէջ մշակել օրուայ անյետաձգելի պահանջները, որոնք պէտք է ներկայացուեն Օսմանեան **վաղուայ** կառավարութեանն, ինչպէս եւ այն գործնական միջոցները, որոնցով պէտք է ստիպել գործադրելու այդ պահանջները»[2]:*

Նման համաժողովի հրավիրումը ՀՅ դաշնակցությունը համարում էր օրվա հրամայական պահանջ, հատկապես ելնելով Հայաստանում ստեղծված վիճակից, որտեղ դժգոհությունն ընդհանուր էր ամբողջ բաղմացեղ բնակչության չրջանում:

Ինչպես ցույց է տրված աշխատության համապատասխան տեղում, ՀՅ դաշնակցության 1907 Թ. տեղի ունեցած չորրորդ ընդհանուր ժողովը հնարավոր էր համարել առաջիկայում Օսմանյան կայսրության հակասուլթանական ուժերի միջև սերտ

---

[1] Տե՛ս **«Դրօշակ»,** № 10 (176), հոկտեմբեր, 1906, էջ 146:

[2] Նույն տեղում:

գործակցության հաստատումը: «Համերաշխութիւն Թուրքիոյ այլատարը ցեղերու հետ» բանաձևում ժողովը եկել էր այն եզրակացության, որ արդեն նպաստավոր հող է ստեղծված օսմանյան ընդդիմադիր տարրերի համերաշխ գործակցության համար: Ուստի ընդհանուր ժողովն անհրաժեշտ էր համարել սուլթանական կարգերի դեմ մղվող պայքարում գործակցել Թուրք ժողովրդի ընդդիմադիր տարրերի հետ: Այդ գործակցությունը պետք է կազմակերպվեր այնպես, որ կառավարությունը չկարողանար օգտվել հայ ժողովրդի և հայկական հեղափոխության դեմ սև ուժերի՝ մուսուլմաններին գրգռելու առիթներից:

Առաջնորդվելով այս տեսակետով, ՀՅԴ ընդհանուր ժողովը կուսակցության մարմիններին հանձնարարել էր նախապատրաստական բանակցություններ սկսել Թուրք ու մյուս ազգերի այն խմբակցությունների հետ, որոնց քաղաքական հայացքներն ու ձգտումներն ավելի մոտ են Դաշնակցության սկզբունքներին: Ավելին, բանաձևը պահանջում էր համերաշխության հողի և դաշնային սկզբունքի վրա հիմնված ծրագրով ամուր դաշնություն ստեղծել Թուրքիայի տարբեր ազգերի հեղափոխական կուսակցությունների ու տարրերի միջև, և այդ գաղափարի իրականացման համար, առաջին պատեհությամբ իսկ, նրանց մասնակցությամբ, համաժողով հրավիրել:

ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի՝ Թուրքերի հետ համերաշխություն հաստատելու մասին որոշումով ազդարարվել էր, որ անհրաժեշտ է ամեն ինչ անել նրանց համոզելու, որ Դաշնակցությունը Հայաստանը Թուրքիայից անջատելու որևէ նպատակ չունի:

Միաժամանակ, ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովը որոշել էր **պաշտոնապես մերժել** հայկական հեղափոխական կուսակցությունների ուժերը համատեղելու անհրաժեշտության մասին ՍԴՀԿ Կենտրոնական վարչության 1907 թ. մարտի 16-ի գրությունը[1]: Ժողովի որոշման հիման վրա՝ ՀՅԴ Արևելյան բյուրոն 1907 թ. հուլիսի 15-ին հնչակյան ղեկավարությանը ուղարկում

---

* Փաստաթղթի լրիվ չարադրանքը տե՛ս **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»**, հատ. Ե, Պէյրութ, 2007, էջ 349:

է պաշտոնական պատասխան, որով տեղեկացնում է, որ քննարկելով նամակը, ընդհանուր ժողովը եկել է այն եզրակացության, որ հայ հեղափոխականների համաժողովի գումարումը դեռևս «վաղաժամ» է[1]: Եվ դա բացատրվում էր նրանով, թե «հայ յեղափոխական կուսակցութիւնների կոնգրեսի հարցը լուրջ նշանակութիւն կարող է ունենալ այն դէպքում միայն», երբ Թուրքահայաստանում, բացի Դաշնակցությունից, նաև ուրիշ հեղափոխական ուժեր գոյություն ունենան[2]: Ահա՛ հնչակյան ղեկավարությանն ուղղված ՀՅԴ Արևելյան բյուրոյի պատասխանի ամբողջական չարադրանքը.

«1.– Նկատի ունենալով որ Դաշնակութեան եւ Հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ Հնչակեան տեղական մարմինները իրենց առօրեայ ընթացքով եւ յեղափոխական գործունէութեամբ վստահութիւն կը ներշնչեն Դաշնակցական տեղական մարմիններին,

2.– Նկատելով որ կուսակցական հողի վրայ տեղի ունեցած ընդհարումները իրենց ցաւալի հետեւանքներով վնասում են համերաշխութեան գործին եւ պահանջում են խաղաղեցնել միջոցների կիրառութեամբ,

3.– Ընդունելով որ յեղափոխական կուսակցութիւնների կօնգրէի հարցը լուրջ նշանակութիւն եւ գործնական արժէք կարող է ունենալ այն դէպքում միայն, երբ Երկրում բացի Դաշնակցական մարմիններից, գոյութիւն կ՚ունենան Հնչակեան եւ այլ յեղափոխական մարմիններ,

Որոշեց.

Ա.- Հայ յեղափոխական կուսակցութիւնների կօնգրէի գումարումը ներկայումս համարել վաղաժամ:

Բ.- Միջկուսակցական ատեանի առաջարկը ընդունել (համաձայն ներկայ ժողովի նախորդ որոշման եւ այլն)»[3]:

---

[1] **«Հնչակ»** (Փարիզ), № 6 հունիս, 1907, էջ 70:

[2] Նույն տեղում, էջ 71, տե՛ս նաև **«Դրօշակ»**, № 5 (183), մայիս, 1907, էջ 72:

[3] **Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890-1925, Ֆրեզնօ, 1930, էջ 129-130:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԱՆԴԱԴՐՈՒՄ ԿՈՉԵՐ

Դաշնակցության պատասխանը ծանր խոհեր էր առաջ բերել ՍԴՀԿ Կենտրոնական վարչության մեջ: Հնչակյանների համար անըմբռնելի էր, թե ինչո՞ւ Դաշնակցության բարձր ղեկավարությունը «վաղաժամ» է համարում հայկական կուսակցությունների համաժողովի գումարումը, այն դեպքում, երբ համաժողովներ գումարելու առաջարկներ է անում Թուրքերին, քրդերին, ալբանացիներին: «Եթէ Թուրքերի հետ կարելի է երկու անգամ ժողովի գալ,- գրում էր «Հնչակը»,- կարծում ենք, որ մի անգամ էլ կարելի է գալ եւ հայ կուսակցութիւնների հետ – այդտեղ երկիւղ կրելու ոչինչ չկայ»[1]:

Ականավոր հեղափոխական, հնչակյան կուսակցության ղեկավարներից Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ) դեռևս 1906 թ. սեպտեմբերին հանդես էր եկել հայկական բոլոր քաղաքական ուժերին և հոսանքներին ուղղված համերաշխության կոչով, որ առանց հապաղելու պետք է ստեղծել բոլոր ազգային կուսակցությունների սերտ միաբանություն՝ միասնական ուժերով Թուրքական բռնակալության դեմ ավելի արդյունավետ կերպով պայքարելու համար: Կոչը լույս էր տեսել «Հնչակ» Թերթի 1906 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի միացյալ համարում:

«Ընդունուած իրողութիւն եւ ճշմարտութիւն է,- գրում էր Մեծն Մուրադը,- որ քաղաքական կուսակցութիւնները ազգի մը կամ ժողովուրդի մը յառաջդիմութեան ազդակներն են եղած, բայց տխուր իրականութիւնն է, որ մեր մէջ կուսակցական անուան տակ եղած պայքարը աւելի եսական, Թշնամական եղած է, քան Թէ՝ գաղափարական, եւ, դժբախտաբար, կուսակցութիւնները (քիչ բացառութեամբ), կուսակցամոլ դառնալով՝ գործը հետզհետէ ծայրայեղութեան եւ դատապարտելի եղբայրասպանութեան հասցուցած են:

Չեմ կարող հաստատել, Թէ ըլլայ մէկը, որ բռնակալի լուծին

---

[1] ***«Հնչակ»,*** *№ 6, Հունիս, 1907, էջ 71:*

ծանրութիւնը քիչ թէ շատ զգացած ըլլայ՝ ու միութեան կամ համերաշխութեան օգուտը ժխտէ:

Զ՚ըսեմ ամէնը, այլ շատերը կը սպասեն այս կենսական հարցին յաջող ելք մը տրուելուն. սակայն պէտք է գիտնալ, որ գործը այն ժամանակ դիւրացած եւ համարեայ թէ վերջացած կ՚ըլլայ, երբ իւրաքանչիւրս իր կարգին կ՚աշխատի գործնական քայլեր առնել. այսինքն՝ ամէն մէկը իր պատկանած կուսակցութեան, գտնուած շրջանակին մէջ ջանայ մարել արդէն արծարծուած թշնամական վրէժխնդրական ու եսական կիրքերը, վերջ տալով քինախնդրութեան ու բամբասանքին:

Ամէնքս ալ անյիշաչար ըլլալով՝ պէտք է աշխատինք անբիծ ու մաքուր սրտով մօտենալ իրարու եւ եղբայրական ձեռք երկարենք փոխադարձաբար»[1]:

Այսուհետև, ճշգրիտ կանխատեսելով հայ ժողովրդին սպասող սարսափները, Մեծն Մուրադը գրում էր. «... Ոչ ոք գիտէ, թէ վաղը քաղաքական կացութիւնը ինչ խառնափնթոր վիճակ կը ստանայ եւ ինչ անսպասելի պատահարներ ու պատեհութիւններ կը ծագին ու կրնան ծագիլ ... Վաղուան ծագելիք խառնաշփոթութեանց մէջ, մեր գոյութեան սպառնացող ահեղ վտանգը կարող է ըլլալ վատ՝ քան զառաջինն եւ որուն մասին մտածելն իսկ մարդուս սոսկում կ՚ազդէ...»[2]:

Իր ազգի համար ոչ հեռու գալիքի ճակատագրական վտանգը կանխատեսող մեծ հայը կրկին հիշեցնում էր բախտորոշ պահին ամեն մի հայորդու սրբազան պարտականությունը և բոլոր հայկական քաղաքական կազմակերպությունների ու նրանց ղեկավարության պարտքը.

«Աչքի առաջ ունենալով այս բոլորը,- նշում էր Մեծն Մուրադը,- պարտք կը զգամ դիմում ընել հայ ժողովուրդին, միահամուռ յեղափոխական գործին փարելու եւ խնդրել կուսակցութեանց վարիչ մարմիններէն, որպէսզի մեր ցրուած ոյժերը ընդհանուր թշնամւոյն դէմ համերաշխեցնելու կամ միացնելու

---

[1] **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան. 1887-1962»**, հատ. Ա, Պէյրութ, 1962, էջ 299-300:

[2] Նույն տեղում, էջ 300:

գաղափարին զարկ տան եւ աշխատին իրականացնել այդ:

Եւ որպէսզի այդ ցանկալի գաղափարը օր առաջ մարմին ստանայ, կրկին ու կրկին կը խնդրեմ, որ հայ յեղափոխական կուսակցութեանց մարմինները միջոցներ ձեռք առնեն՝ կազմելու **Հայ Յեղափոխական Քոնկրէս** մը, որուն մասնակցին՝ անխտիր հայ ժողովրդեան մէջ գործող բոլոր կուսակցութեանց ներկայացուցիչները»[1]:

«Հնչակ» թերթի նույն համարում տպագրվել էր նաև կուսակցության Կենտրոնական վարչության պաշտոնական գրությունը ՀՅ դաշնակցության պատկան մարմնին, ուր ասված էր, որ Մեծն Մուրադի առաջարկը միանգամայն տեղին է ու ժամանակին: Վարչությունը գտնում էր, որ անհապաղ պետք է ստեղծել միջկուսակցական մի ատյան՝ հայության ուժերը մեկտեղելու և սպասվելիք վտանգները միահամուռ ջանքերով դիմագրավելու համար: Կարևորագույն այդ գործը կատարելուց հետո միայն կարելի կլիներ մտածել Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի համաժողով հրավիրելու մասին:

Հնչակյան Կենտրոնական վարչությունը, համագործակցություն առաջ բերելու նպատակով, գրավոր առաջարկ ներկայացրեց Դաշնակցության ղեկավարությանը՝ ՀՅԴ առաջիկա ընդհանուր ժողովում քննարկելու համար:

Ամբողջ 1906 թ. վերջավորությանը և 1907 թ. առաջին ամիսներին Հնչակի ղեկավարությունը և Հնչակյան մամուլը չէին դադարում տագնապ հնչեցնելուց և անդադրում չարունակում էին ազգային միասնության կոչեր հղել Դաշնակցությանը:

Հայ հեղափոխականների միջև համերաշխություն և այդ հողի վրա միություն ստեղծելու գաղափարի իրականացումը հայության մշտական բաղձանքը, ակնկալիքը և պահանջն է եղել:

Ի՞նչն էր իրարից բաժանում հայ հեղափոխականներին: Ամենից առաջ՝ ինչպես սկզբունքների, այնպես էլ գործելակերպի տարբերությունները: Դրանց գումարվում էին անհատական տեսակետները, եսամոլությունը, փոքրոգությունը, կուսակցա-

---

[1] **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան. 1887–1962»**, հատ. Ա, էջ 300:

մոլությունը և այլ դատապարտելի դրդապատճառներ, որոնք, սակայն, միշտ քողարկված էին լինում սկզբունքների կամ աշխարհայացքների տարբերության պատրվակի տակ:

Բոլոր ազգերի մեջ կուսակցությունների առաջացումը սկիզբ է առնում սկզբունքների և աշխարհայացքների տարբերություններից: Հենց այդ պատճառով է, որ նույն երկրում առաջանում են տարբեր կուսակցություններ՝ ազատական, պահպանողական, արմատական, ազգայնական, կոմունիստական և այլն, որոնք բոլորն ունենում են իրենց տարբեր սկզբունքները, քաղաքական դավանանքը, աշխարհայացքը:

Հենց այդպիսի հիմքի վրա էին ստեղծվել հայ հասարակության մեջ առաջացած քաղաքական ուժերն ու հոսանքները՝ արմենական, հնչակյան, դաշնակցական, վերակազմյալ հնչակյան և դեռ ուրիշ երկրորդական հատվածներ ու խմբակցություններ:

Ներելի՞ էր արդյոք, որ հայկական կուսակցությունները գժտվելով անջատվում, հեռանում էին իրարից և նույնիսկ թշնամանում, այն դեպքում, երբ անվիճելիորեն կարող էին միասին ընթանալ գոնե մի քանի հանգրվան:

ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի օրերին հնչակյան կուսակցության Կենտրոնական վարչությունը 1907 թ. մարտի 16-ի թվով, ժողովի անունով ուղարկել էր մի գրություն, ուր նշված էր, որ «հնչակեանների եւ դաշնակցականների միջեւ տեղի ունեցած մի կարգ ողբալի ընդհարումները եւ սպանութիւնները առիթ են տուել կուսակցութեանս հինգերորդ պատգամաւորական ժողովին բանակցութեան մէջ մտնելու կուսակցութեանդ Արեւմտեան բիւրոյի հետ՝ միջկուսակցական բախումների առաջն առնելու նպատակով»[1]: Եվ որպեսզի երկու կուսակցությունների միջև այլևս չառաջանան եղբայրասպանություններ և զանազան ցավալի դեպքեր, վարչությունը առաջարկում էր երկու կուսակցությունների ներկայացուցիչներից կազմել մի միջնորդ դատարան, որի մշակած կանոնական սկզբունքները կօգնեին մեկընդմիշտ վերջ տալու միջկուսակցական ընդհարումնե-

[1] **«Հնչակ»,** № 6, հունիս, 1907, էջ 69:

ին և եղբայրասպանություններին: Կենտրոնական վարչությունը կրկին չեշտում էր, թե քանի որ Թուրքական բռնապետությունը Հայկական դատի առջև ստեղծել է անասելի դժվարություններ, իսկ այդ պայմաններում շարունակվում են «մեր մէջ տիրող ... անտեղի կռիվները եւ փոխադարձ ընդհարումները», որոնք «թուլացնում, ջլատում եւ վնասում են հայ յեղափոխական գործի յաջողութեանը», ուստի «կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը ամենայն պատրաստակամութեամբ ընդունեց ընկեր Մուրատի առաջարկը», այն է՝ փոխանակ ջանքեր գործադրելու երիտթուրքերի հետ բարեկամություն հաստատելու ուղղությամբ, շատ ավելի կարևոր է «կազմել մի «Հայ յեղափոխական կոնգրես», որին մասնակցէին Տաճկահայ Դատի լուծմանը աշխատող բոլոր հայ կուսակցութիւնները»[1]:

Հայկական ազգային ուժերի համախմբման դեմ Դաշնակցության հանդես գալը համարելով «կուսակցական նեղ հաշիներից բխող քանդիչ քաղաքականութիւն», հնչակյան Կենտրոնական վարչությունը մի վերջին փորձ արեց հայկական կուսակցությունների կոնգրեսի գաղափարը լսելի դարձնելու նրան: Վարչությունը «Մեր պատասխանը» վերտառությամբ բաց նամակ հղեց ՀՅԴ Արևելյան բյուրոյին: Նշելով, որ դաշնակցական-հնչակյան հակառակությունների վերացման համար այժմ ավելի նպաստավոր պայմաններ կան, քան կային նախկինում, ՍԴՀԿ Կենտրոնական վարչությունը դա բացատրում էր նրանով, որ «առաջ հնչակեան եւ դաշնակցական տեղական մարմինները» իրարու հակառակում, իրարու թշնամանում էին, որովհետև մին սոցիալիստ էր, միւսը՝ ոչ-սոցիալիստ, բայց այժմ, «երբ Դաշնակցութիւնը հարկադրուեցաւ սոցիալիզմը անբաժան նկատել Հայկական Դատից», ուստի «համերաշխ գործունէութեան խոչընդոտ հանդիսացող ազդակներից մի մեծը վերացել է»[2]: Վարչությունը կրկին ու կրկին չեշտում էր, որ տվյալ

---

[1] ***«Հնչակ»,*** *№ 6, Հունիս, 1907, էջ 69-70, տե՛ս նաև* ***«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»****, հատ. Ե, էջ 349:*

[2] ***«Հնչակ»,*** *№ 6, Հունիս, 1907, էջ 72:*

պահին միջկուսակցական թշնամություններին վերջ տալու և ընդհանուր համերաշխություն ստեղծելու միակ ազդու և կտրուկ միջոցը հայկական համաժողովի հրավիրումն է[1]:

Չնայած բոլոր նախազգուշացումներին ու քննադատություններին, Դաշնակցությունն անդրդվելի մնաց: Հնչակի «Մեր պատասխանը» նամակը նույնպես անպատասխան թողնվեց: ՀՅԴ ղեկավարությունն այլևս լսել անգամ չէր ուզում հայկական ազգային քաղաքական ուժերի համաժողով հրավիրելու և հայության ուժերը համատեղելու մասին:

Նույնիսկ այդ պայմաններում հնչակյանները համատեղ գործակցության հույսեր էին փայփայում: Իր մի բանախոսության մեջ, վերակազմյալ հնչակյանների նշանավոր գործիչներից Միհրան Տամատյանն ասում էր.

«Գօնկրէսի առաջարկը ոմանց կողմէ մերժուեցաւ կամ «վաղաժամ» համարուեցաւ. բայց այդ պատճառ մը չէ՛ յուսահատելու. եւ եթէ հայ յեղափոխական կարեւոր ուժերը չի կարողանան մօտ ժամանակի մէջ համերաշխել կամ միանալ, գօնկրէսը կը գումարուի եւ կը բերէ մեզի վաղուց ցանկացուած համերաշխութիւնը»[2]:

Ցավոք, հայկական կուսակցությունների համաժողով չհրավիրվեց և հայ քաղաքական դաշտը առաջվա պես մնաց ցաքուցրիվ: Դաշնակցությունը զերադասեց դաշինք կնքել երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ: Նրա գործիչներն ինչպես Թուրքիայի տարածքում, այնպես էլ արտասահմանում հանդիպումներ ունեցան Թուրք և այլազգի ընդդիմադիր կազմակերպությունների ու խմբերի և, առաջին հերթին՝ երիտթուրքերի ներկայացուցիչների հետ, որոնց արդյունքում որոշ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին: Այդ հանդիպումները զուգորդվեցին երիտթուրք ղեկավարների մոտ արդեն խմորված տրամադրություններին՝ հրավիրել հակասուլթանա-

---

[1] ***«Հնչակ»,*** *№ 6, Հունիս, 1907, էջ 69. տե՛ս նաև* ***«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»****, հատ. Ե, էջ 349:*

[2] ***«Ազգ»****, № 41, 25 Հունվարի 1908 թ.:*

կան ուժերի միավորման ու համախմբման համաժողով[*]:

ՀՅ դաշնակցության՝ երիտթուրքերի հետ գործակցության քայլը համարելով արդարացված ստեղծված նոր հանգամանքներով, «Դրօշակը» գրում էր.

«Ոչ մի տարակոյս, որ լայնածաւալ կայսրութիւնը երկունքի մէջ է եւ նրա բարեյաջող ազատագրումը պահանջում է բոլոր տարրերի ջերմ ու գործուն մասնակցութիւն: Մինչեւ օրս մենակ էինք կռուի դաշտում, մեկուսացուած ու հալածուած չորս կողմերից: Զը հասկցուած, չը գնահատուած ոչ ոքից: Այժմ ստեղծուել են կռուի համար այնքան նպաստաւոր պայմաններ, այժմ այնքան բազմապատկուել են յաղթանակի չանսերը, սկիզբ է առել եւ արդէն իսկ գլուխ է բարձրացնում այն ահեղ ու արգասաւոր ոյժը, որ կոչւում է «Ըմբոստ Տարրերի Միութիւն»: ... Պէտք է յարատեւ ոյժ ներշնչել այդ միութեանը: Հայ ժողովուրդը՝ այժմ աւելի քան երբեւիցէ, վստահ ու զուարթ՝ պիտի մնայ կռուի դաշտում, պիտի միանայ իր բախտակից մահմեդականներին, եթէ չէ ուզում դաւաճանել իր կենսական շահերին եւ իր պատմական առաքելութեանը»[1]:

Համաժողովին մասնակցելու իր համաձայնությունը տալուց հետո, ՀՅ դաշնակցությունը դիմեց հնչակյան և վերակազմյալ հնչակյան կուսակցություններին՝ առաջարկելով միասին գնալ համաժողովին և խորհրդակցաբար ու միասնաբար այնտեղ ճչտել հայկական դիրքը:

1907 թ. դեկտեմբերի առաջին օրերին, բանասեր Կարապետ Բասմաջյանի միջնորդությամբ, ՀՅ դաշնակցության ներկայացուցիչ Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի) հանդիպեց հնչակ-

---

[*] *Որոշ աղբյուրներում նշված է, որ համաժողովի հրավիրման նախաձեռնությունը պատկանել է ՀՅ դաշնակցությանը և հատկապես կուսակցության ղեկավարներից, Արևմտյան բյուրոյի անդամ Խաչատուր Մալումյանին (Է. Ակնունի), որն այդ նպատակն իրականացնելու համար հանդես է բերել եռանդուն ու անվհատ ջանքեր (տե՛ս օրինակ՝* ***«Արմենիա»*** *(Մարսել), 28 մարտի 1908 թ.,* ***«Հայրենիք»*** *լրագիր (Բոստոն), № 14 (456), 4 ապրիլի, 1908 թ.),* ***Ю. А. Петросян****, Младотурецкое движение, с. 243):*

[1] ***«Դրօշակ»,*** *№ 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 164:*

յանների ղեկավարներից Ստեփան Սապահ-Գյուլյանի և Համբարձում Բոյաջյանի (Մեծն Մուրադ) հետ:

Ակնունին հայտնեց, որ Դաշնակցությունն ինքն է նախաձեռնում Թուրքիայի ընդդիմադիր ուժերի համաժողովի հրավիրումը և առաջարկեց, որպեսզի Հնչակյանները նույնպես մասնակցեն դրան: Վերջիններիս զույգ ներկայացուցիչները պատասխանեցին, որ իրենք բազմիցս հայտարարել են և այժմ էլ նույնը կրկնում են, որ ավելի նպատակահարմար է նախ հրավիրել հայկական քաղաքական կուսակցությունների համաժողով, որտեղ ընդհանուր համաձայնության գալուց հետո միայն կարելի կլինի ձեռնարկել կայսրության ընդդիմադիր ուժերի համաժողովի հրավիրումը: Ակնունին հավանություն չտվեց Հնչակյանների առաջարկին և, հենվելով ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի՝ Թուրքերի հետ համագործակցություն հաստատելու որոշման վրա, չեշտեց, որ իրենք երիտթուրքերի հետ անհապաղ համերաշխ գործակցություն պիտի հաստատեն՝ «նրանց միջոցով տանելի մի դրութիւն յառաջ բերելու համար»[1]:

Հանդիպման ավարտից հետո Հնչակի Փարիզի կենտրոնը պաշտոնական նամակ ուղարկեց Դաշնակցության ղեկավարությանը, որով նրան հիշեցնում էր Համբարձում Պոյաճյանի 1906 թ. աշնանը արած համերաշխության կոչի մասին կուսակցության Կենտրոնական վարչության դիրքորոշումը, ապա կրկին հաստատում հայկական քաղաքական կուսակցությունների ուժերը միավորելու իր պահանջը:

Հնչակյանները գտնում էին, որ երիտթուրքական շարժումն իր ծրագրերով և գաղափարաբանությամբ որևէ ընդհանրություն չունի հայկական ազատագրական շարժման և այդ շարժումը ղեկավարող կուսակցությունների հետ (թերևս բացառություն էին համարում, որ հայկական հեղափոխական կուսակցությունների և երիտթուրքերի դիրքորոշումը համընկնում էր Աբդուլ Համիդի բռնակալական վարչակազմը տապալելու հարցում): Հետևապես, խոսք չի կարող լինել երիտթուրքերի և հայ հեղափոխականների անկեղծ գործակցության մասին:

---

[1] Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, էջ 223:

*Ինչ վերաբերում էր օսմանյան ընդդիմադիր ուժերի համաժողով գումարելուն, ապա Հնչակյան Կենտրոնը կրկին վճռականապես մերժեց **տվյալ պահին** երիտթուրքերի հետ որևէ հարց քննարկել, միաժամանակ չբացառելով նրանց հետ երկխոսությունը, եթե վերջիններս հրաժարվեն հայ ժողովրդի նկատմամբ իրենց ազգայնամոլական զգացումներից:*

Հնչակյան Կենտրոնը նամակում նաև նախատում էր Դաշնակցության ղեկավարությանը, որ նա ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովում ընդունել տվեց հայկական հեղափոխական կազմակերպությունների համաժողովի գումարման անհրաժեշտության մասին հնչակյանների առաջարկը մերժող բանաձև, բայց ահա՛ այժմ սիրով ընդառաջ է գնում երիտթուրքերի հետ համաձայնության գալու առաջարկին[1]:

Օսմանյան ընդդիմադիր ուժերի համաժողովին մասնակցելու համար Դաշնակցությունը դիմեց նաև վերակազմյալ հնչակյան կազմակերպությանը: ՀՅԴ Արևմտյան բյուրոն հետևյալ հրավերն ուղարկեց այդ կազմակերպության Կենտրոնական վարչությանը.

«Օսմանեան այժմեան ըէժիմի դէմ կռուող եւ բողոքող տարրերէն մի քանիսի մէջ միտք է յղացել կազմակերպել մի ընդհանուր Կօնգրէ, որուն պիտի հրաւիրուին Թուրքիայի այլեւայլ ազգութիւնների եւ քաղաքական խմբակցութիւնների ներկայացուցիչները՝ արտայայտելու մի ընդհանուր բողոք այժմեան կարգերի դէմ եւ մշակելու մի ընդհանուր գործելակերպ՝ նոր կարգեր հաստատելու համար:

Հաւատացած որ դուք եւս կը կամենաք մասնակցել այդ նպատակով կազմած Կօնգրէին, մենք գտնում ենք նպատակայարմար նախօրօք կազմել հայ կազմակերպութիւնների եւ քաղաքական խմբերի նախապատրաստական խորհրդակցութիւն, որոշելու համար հայերիս դիրքը եւ քննելու այն առաջարկները որ կարող ենք ներկայացնել ընդհանուր Կօնգրէին»[2]:

---

[1] ***«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան 1887–1962»**, Հատ. Ա, էջ 303:*

[2] ***Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890–1925, էջ 132:*

Ըստ որում՝ ՀՅԴ Արևմտյան բյուրոն մեկ ամսվա պայմանաժամ էր դրել պատասխանի համար:

Վերակազմյալների Կենտրոնական վարչությունը մերժեց հրավերը՝ դա երիտասարդ Թուրքերի հերթական խարդախ խաղը համարելով: Կենտրոնական վարչությունում այս հարցի քննարկման ժամանակ վերակազմյալ հնչակյան գործիչները հիշեցնում էին, որ երիտթուրքերը շատ բան են արել հայոց ազգայնական զգացումները չեզոքացնելու, հայ հեղափոխականների՝ միմյանցից անջատ լինելու ձգտումները խորացնելու համար, և դա արել են հայերին իրենց կառքին լծելու համար: Ելույթ ունեցողները համակարծիք էին, որ Թուրք հեղափոխականների մի մասի հետ կարելի է ճանապարհ գնալ, բայց ոչ երբեք իթթիհադական երիտթուրքերի հետ:

«Ազգ» թերթի շուրջ համախմբված վերակազմյալներն անմիջապես ողջունեցին իրենց կազմակերպության ղեկավարության դիրքորոշումը, իսկ «Ձայն հայրենեացի» շուրջ համախմբվածները թեև համաձայնություն հայտնեցին Դաշնակցության առաջարկին, բայց միաժամանակ հայտնեցին, թե իրենց շարքերում «յարմար մարդ չկայ» ներկայանալու համաժողովին[1]:

Արխիվային մի նյութի հեղինակը անդրադառնալով հակասուլթանական ուժերի դաշինք ստեղծելու խնդրին, առաջադրում էր պատասխաններ պահանջող հարցեր. 1) Հայկական հարցը պետք է կազմի մի առանձին ամբողջություն, թե՞ Թուրքիայի ընդհանուր բարեկարգման մի մասը, 2) Դաշնակցությունը չարունակելո՞ւ է նախկինի պես ուժգնությամբ արծարծել Հայկական հարցի լուծման անհրաժեշտությունը, թե՞ Թուրքահայության բախտը բացառապես կապելու է Թուրքիայի ընդհանուր բարեկարգման հետ, 3) Արդյո՞ք հնարավոր է լինելու միանալ մուսուլման տարրի հետ և համատեղ պայքար մղել նույն նպատակների համար:

---

[1] Տե՛ս **«Արեւելք»** (Կ. Պոլիս), № 6882, 23 օգոստոսի 1908 թ.:

* Երկու և կես էջանոց նյութի սկզբնամասը բացակայում է և հեղինակի ու ամսաթվի նշում չունի:

Վերադառնալով իր բարձրացրած այս հարցերին, նյութի հեղինակը հիշեցնում է, որ վերջերս Թուրքիայի մի քանի վայրերում տեղի են ունեցել մուսուլմանների աննշան շարժումներ, որոնք կարող են նպաստավոր հանգամանք լինել Հայկական դատի համար: Բայց այդ շարժումներն այնպիսիք չեն, որ հայերի մոտ առաջ բերեն լավատեսություն, թե Թուրք տարրը կարող է իրենց համար վստահելի դաշնակից լինել և աջակցել երկրում ընդհանուր բարենորոգումներ կատարելու նրա ջանքերի հաջողությանը: Թուրք կեղեքված տարրը գուցե որոշ տեղերում միանա հային ***տնտեսական*** *առանձին պահանջներ լուծելու համար, բայց նա բոլորովին անպատրաստ է հանգելու համատեղ* ***քաղաքական*** *պայքար մղելու գաղափարին: Այնուհետև՝ Հայկական հարցը չաղկապել ընդհանուր Թուրքիայի բարեկարգման խնդրին, նշանակում է խաչ քաշել Թուրքական բռնապետության դեմ հայության հերոսական չուրջ քառորդդարյա պայքարի վրա և հեղափոխական գործն սկսել նորից: Մինչդեռ Հայկական հարցը սրբագործված է հարյուր հազարավոր նահատակների արյամբ և քաղաքական աշխարհում ձեռք է բերել իր հատուկ տեղը: Ստեղծման առաջին իսկ օրերից Դաշնակցությունը հայտարարել էր, որ ինքը պաշտպան է կանգնելու Հայկական հարցին, կռվելու է Թուրքական կառավարության և ոչ թե Թուրք ժողովրդի դեմ, որն իր կեղեքված վիճակով նույնիսկ չի տարբերվում ամենաբախտավոր հայից: Այժմ նույնպես նա կարող է լինել Թուրք աշխատավորների անկեղծ դաշնակիցը նրանց տնտեսական պայքարում, բայց երբեք չպետք է ձուլվի Թուրքական հեղափոխական կազմակերպությունների մեջ և այդպիսով քաղաքական աշխարհից վերացնի Հայկական հարցի անունը, ջնջի նրա առանձին գոյության իրավունքը: Հայկական հարցը պետք է պահպանել իր ամբողջ ծավալով, կայսրության մյուս ազգերի քաղաքական հարցերից բոլորովին անկախ[1]:*

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 5, թթ. 3–5:*

ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ԱԼԻՔ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Արդեն մի քանի ամիս էր անցել ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովից, բայց նրա ընդունած որոշումների շուրջ չարունակվում էին բուռն քննարկումները Կովկասում և մանավանդ Թուրքիայում ու արտասահմանում: Ընդհանուր ժողովի մասնավորաբար Թուրքահայությանը վերաբերվող որոշումներն ամենասուր քննադատության էին ենթարկվում: Քննադատության ալիքը նաև Դաշնակցության ներսն էր թափանցել: Դաշնակցականներից չատերը չէին համերաշխվում հայկական քաղաքական ուժերի միասնական ճակատ ստեղծելու առաջարկների նկատմամբ իրենց կուսակցության ղեկավարների կտրուկ ժխտողական վերաբերմունքի հետ:

Դժգոհ դաշնակցականները նաև անընդունելի էին համարում, որ իրենց բարձրագույն ղեկավարությունը, նկատի ունենալով միայն Կովկասի հայության ներկա կացությունը և նրա սոցիալական պահանջները, կազմակերպությանը փաթաթել է սոցիալիստական գաղափարներ, որի հետևանքով Դաշնակցությունը ազգայինից վերածվել է սոցիալիստական կուսակցության: Բայց դա միակ չարիքը չէ, ասում էին նրանք, ամենամեծ վտանգն այն է, որ այդ սոցիալիստական ուղղությունը ՀՅԴ ղեկավարությունը ստիպողական է դարձնում նաև Թուրքահայաստանի համար[1]: Վերակազմյալ հնչակյանների «Ազգ» թերթում, դժգոհ դաշնակցականները գրում էին. «Թէ Դաշնակցութեան տուած այս որոշումը որքան նպատակայարմար է Կովկասի համար՝ չենք կրնար գիտնալ մենք, որովհետեւ Կովկասի պայմանները մեզի ծանօթ չեն եւ հետեւաբար իրաւունք չենք տար մեզի ուեւէ կարծիք յայտնել այդ մասին: Կովկասցիները իրենք միայն կրնան Դաշնակցութեան ծրագիրը քննութեան ենթարկելով ընդունիլ կամ մերժել եւ մեզ՝ տաճկահայերուս համար շատ սխալ պիտի ըլլար անոնց ներքին խնդիրներուն խառնուիլ:

Գալով Տաճկահայաստանի՝ մեզ՝ բողոքող Դաշնակցական-

---

[1] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 57, թ. 2 և չրջերեսը:

ներուս համար անհնարին է հետեւիլ ընկերվարական Դաշնակցութեան, որովհետեւ չենք կրնար ընդունիլ ո՛չ իր աշխարհահայեացքը, ո՛չ իր քաղաքական-հասարակական ձգտումները եւ ո՛չ ալ զանոնք կեանքի մէջ իրականացնելու համար ընդունած գործելակերպը»[1]:

Իրենց կուսակցության քաղաքականությունից դժգոհ այսպես կոչված «բողոքող» դաշնակցականների մի որոշ մասը 1907 թ. աշնանը աստիճանաբար հեռացավ կազմակերպության շարքերից:

Այսպես, «Եգիպտոսի բողոքող դաշնակցականների մասնախումբը» 1907 թ. հոկտեմբերի 18-ին Ալեքսանդրիայից կոչ հղեց «բոլոր երկրներու դժգոհ դաշնակցականներուն», ուր ասված էր, որ սոցիալիզմի գաղափարը որդեգրած Դաշնակցությունն այլևս անկարող է արտահայտել Թուրքահայության հասարակական-քաղաքական ձգտումները: Որդեգրելով սոցիալիզմը, դրանով իսկ ՀՅԴ-ն իր ծրագրում առավելապես գերակայություն տալով տնտեսական հարցին և հենվելով դրա վրա, կանգնում է դասակարգային պայքարի սկզբունքի վրա՝ կովան դարձնելով բանվոր դասակարգը: «Մեր հարցը սակայն Տաճկահայաստանի մէջ որոշ դասակարգի մը իրաւունքներուն դատը չէ, այլ՝ ամբողջ ժողովուրդի մը ազատագրութեան գործն է,- ասված էր կոչում:- Տիրող ըէժիմի տակ այս կամ այն դասակարգը չէ որ իր իրաւունքներէն կը զրկուի, այլ ամբողջ ժողովուրդի մը բոլոր մարդկային իրաւունքները ոտնակոխ կ՚ըլլուին. ժողովուրդի մը որ քաղաքակրթական ու տնտեսական տեսակէտով դեռ սաղմնային դրութեան մէջ կը գտնուի: Ներկայ պարագաներուն մէջ Տաճկաստանի մէջ գործող ոեւէ կուսակցութիւն անխուսափելիօրէն պիտի ըլլայ ազգայնական կուսակցութիւն մը, որ ուղղութիւն պիտի տայ ժողովուրդի ազատագրական ձգտումներուն եւ առանց ոեւէ դասակարգային խտրութեան իր դրօշակին շուրջը պիտի հաւաքէ բոլոր այն տարրերը, որոնք դժգոհ տաճկական ըէժիմէն, անոր կործանումին կ՚ուզեն աշխատիլ:

---

[1] **«Ազգ»,** *№ 31, 11 նոյեմբերի 1907 թ.:*

Դաշնակցութիւնը ընդունելով ընկերվարական սկզբունքը եւ որոշ դասակարգի մը իրաւունքներուն պաշտպանութիւնը ընելով իր նպատակակէտը՝ կը դաղրի տաճկահայ ժողովուրդի ազատագրութեան գործը վարելու կոչումէն, կը դրժէ իր ծագումին եւ սնամէջ ֆրազներով (նախադասութիւններով:- Հ. Ս.) կը ճգնի պարտկել կատարուած դասալքութիւնը»[1]:

Համառոտակի բացատրելով իրենց տեսակետը, և մտածելով, որ զանազան տեղերից առանձին-առանձին հայտնված բողոքները որևէ դրական արդյունքի չեն բերի, «Եգիպտոսի բողոքող դաշնակցականների մասնախումբն» առաջարկում էր գումարել դժգոհ դաշնակցականների համաժողով, որի նպատակը պիտի լիներ՝ «օրինական ամէն միջոցներով աշխատիլ մեր բողոքները լսելի ընել եւ փոխել տալ Դաշնակցութեան ծրագրի այն մասը, որ Տաճկահայկական խնդրին կը վերաբերի: Իսկ թէ ի՞նչ պէտք է ընել երբ մեր բողոքները անլսելի մնան եւ յառաջիկայ Ընդհ. Ժողովի մէջ կրկնուին այն ապօրինութիւնները, որոնք վերջին Ընդհ. Ժողովին յատկանշանական մէկ կողմը կը ներկայացնեն, այս մասին կը հրաժարինք ոեէ կարծիք յայտնելէ, այլ կը ձգենք համաժողովին վերջնական որոշում մը տալու»[2]:

Համաժողովի համար ամենահարմար տեղը համարելով Եգիպտոսը, մասնախումբը բոլոր դժգոհ դաշնակցականներին առաջարկում էր յուրաքանչյուր շրջանից ուղարկել մեկ պատգամավոր:

Եգիպտոսի բողոքող դաշնակցականներին հետևեցին ուրիշ երկրների դաշնակցականներ նույնպես:

1907 թ. դեկտեմբերի 1 (14)-ի թվով Լեոնավայրի (Կիլիկիա) շրջանի դաշնակցականների մի խումբ նամակ հղեց՝ «ուղղեալ դաշնակցական ընկերներուն» և դրա մեկ օրինակն ուղարկեց կուսակցության Արևմտյան բյուրոյին: Այս նամակում նույնպես ասված էր, որ ազգային նպատակներով կյանքի կոչված Դաշնակցությունը, ամուր կապվելով միջազգային սոցիալիստական կազմակերպությունների հետ, հեռացել է ազգային խնդիրներից

---

[1] **«Ազգ»**, № 31, 11 նոյեմբերի 1907 թ.:

[2] Նույն տեղում:

և «ինքզինքը հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւն յայտարարելով, դրանով իսկ դասակարգային վնասակար եւ ազգակործան խտրութիւններու սկիզբ կը դնէ հայ ժողովուրդի զանազան տարրերու միջեւ, որոնց շահերը թերեւս հեռի են որոշապէս իրարմէ տարբեր եւ իրարու հակառակ ըլլալէ, այլ ընդհակառակը, մի եւ անբաժան են, հաւասարապէս վտանգուած ըլլալով բռնակալ ըէժիմի եւ թիւրք կառավարութեան այլեւս աշխարհածանօթ հայաջինջ քաղաքականութեան առաջ»[1]:

Բողոքի այս նամակի հեղինակները նույնպես առանձնակի հետևողականությամբ դատապարտում էին Հնչակի հետ համագործակցելուց հրաժարվելու իրենց կուսակցության ղեկավարության բռնած դիրքը, գրելով, որ հայկական հեղափոխական կազմակերպությունների համաժողովի հրավիրումը «կարող էր յանգիլ հայ յեղափոխական գլխաւոր կուսակցութիւններու միութեան կամ գէթ համերաշխ գործակցութեան, որու այնչափ սրտեռանդ կը փափաքի ամբողջ հայ ժողովուրդը: Յամենայն դէպս, հայ յեղափոխական կուսակցութիւններու միութեան կամ համերաշխութեան խնդիրը մեզ անհունապէս աւելի կը շահագրգռէ քան օտար ցեղերու մէջ մեզ անծանօթ ենթադրեալ կազմակերպութիւններու հետ համերաշխութիւններ»[2]:

ՀՆՉԱԿՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԴԱՇԻՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Թուրք ազգայնական տարրերի հետ համաժողով հրավիրելու ՀՅ դաշնակցության հանդես բերած նախաձեռնությունը, միաժամանակ՝ հայկական քաղաքական մյուս ուժերի հետ համագործակցելու առաջարկներից նրա հրաժարվելն առաջ էին բերել հնչակյան երկու հատվածների՝ հին Հնչակի և վերակազմյալ հնչակյան կուսակցության հույժ բացասական վերաբերմունքը: Դա, իր հերթին, նպաստավոր հող էր ստեղծել

---

[1] **«Ազգ»,** *№ 45, 22 փետրվարի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

նրանց հարաբերությունների բարելավման համար: Հեղափոխական այդ երկու կուսակցությունները համերաշխաբար ու փոխադարձ վստահությամբ ձեռք մեկնեցին միմյանց: Այդ բանն առանց բարդությունների հնարավոր եղավ, որովհետև երկու կուսակցությունները թեև աշխարհայացքով տարբեր էին, բայց գործելակերպով նման էին իրար:

1896 թվից ի վեր մշտական բախումների մեջ գտնվող այդ երկու կուսակցությունները, որոնցից մեկը (հին Հնչակը) երազում էր կերտել ազատ, ինքնավար սոցիալիստական Հայաստան, իսկ մյուսը (վերակազմյալ Հնչակյանը) լսել անգամ չէր ուզում սոցիալիզմի մասին և «մաքուր ազգային հեղափոխության» ջատագով էր, սկսել էին իրենց ուժերն ի մի բերելու գործընթաց՝ ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի՝ Թուրքական քաղաքական ուժերի հետ համերաշխություն հաստատելու մասին բանաձևն ընդունելուց անմիջապես հետո:

Գործընթացը խթանում էին երկու կուսակցությունների ղեկավար գործիչները և նրանց մամուլի օրգանները՝ Հնչակյանների «Հնչակը» և «Երիտասարդ Հայաստանը», վերակազմյալների «Ազգը» և «Ձայն հայրենեացը»:

Երկու կուսակցությունների ներկայացուցիչների միջև Փարիզում 1907 թ. հոկտեմբերից սկսած տեղի ունեցան մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց համատեղ աշխատել՝ գլուխ բերելու համար Թուրքահայաստանում գործող հայկական քաղաքական ուժերի ցանկալի համերաշխությունը: Երկու կողմերը լի էին նպատակին հասնելու համար հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկելու վճռականությամբ:

Հնչակյան կուսակցության Թուրքահայ ղեկավար դեմքերի ներկայացուցիչ Մուրադը ու Երկրի գործիչ Ժիրայր Վաչեն մի կողմից և վերակազմյալ Հնչակյան կուսակցության Կենտրոնական հանձնախմբի անդամներ դոկտ. Ավետիք Էնֆիեջյանը, Միհրան Տամատյանը, Կարապետ Գրիգորյանն ու Շավարշ Հովիվյանը մյուս կողմից համաձայնության գալով «տաճկահայ ազգափոխական գործը չահագրգռող բոլոր անհրաժեշտ եւ էական

---

[1] *Տե՛ս* ***«Հնչակ»****, № 11, նոյեմբեր, 1907, Հավելված:*

խնդիրների չուրջ»[1], 1907 թ. նոյեմբերի 24-ին Եգիպտոսում կնքեցին 17 կետ ընդգրկող «Համերաշխության դաշինք»[1]:

«Դաշինք» կնքելու առթիվ Հնչակյան կուսակցության Կենտրոնական վարչությունը «Հնչակում» հանդես եկավ հայտարարությամբ: Վարչությունը ցավով արձանագրում էր. «Հնչակեան կուսակցութեան եւ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան միջեւ տխուր եւ աղէտալի անցքեր են պատահել. այդ անցքերը նոյն իսկ սարսռեցուցիչ էին իրենց տեսակի մէջ եւ իրենց հետեւանքներով աղէտաբեր եղան Տաճկահայ դատին: Իրականութիւն է, որ երկու կուսակցութեանց միջեւ հանդիպածները իրենց չարաղէտ հետեւանքն են ունեցել յեղափոխական գործի վրան: Ջլինէին Հնչակեանութեան մէջ տեղի ունեցած բաժանումները եւ երկպառակութիւնները, այժմ Հայկական խնդիրը բոլորովին ուրիշ փուլի մէջ մտած կլինէր: Եւ հէնց այդ համոզումն ունենալու համար է, որ մենք մի բոպէ չտատանուեցանք անկեղծօրէն ձեռք մեկնելու մեր այն ընկերներին, որոնք դեռ երէկ մեր ոսոխները, մեր թշնամիներն էին: Նոյնը եղաւ եւ նրանց կողմից»[2]:

«Դաշինքը» ազդարարում էր, որ «երկու կուսակցութիւնները իրենց ուրոյն գոյութիւնը պահելով հանդերձ՝ միատեղ եւ միաժամանակ պիտի քայլեն թէ՛ ինքնապաշտպանութեան եւ թէ՛ զուտ յեղափոխական ընաւորութիւն ունեցող տեխնիքական բոլոր խնդիրներում»[3]:

«Համերաշխութեան դաշինքով»* փաստորեն վերջ էր դրվում ավելի քան տասնամյա թշնամությանը երկու կուսակցությունների միջև:

Հնչակյան և վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միջև «Համերաշխության դաշինք» կնքելու լուրն ընդհանուր

---

[1] Տե՛ս **«Հնչակ»,** № 11, նոյեմբեր, 1907, հավելված:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Մանուկ Գ. Ճիզմէճեան,** Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890–1925, էջ 130:

* «Համերաշխության դաշինքի» ամբողջական չարադրանքը տե՛ս Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6[17], թթ. 3–4:

խանդավառություն առաջ բերեց Եգիպտոսում, որը վերակազմյալ հնչակյան կուսակցության կարևորագույն հիմնակետն էր: Այս կուսակցության ներկայացուցիչներ Միհրան Տամատյանը, Վահան Թեքեյանը և Լևոն Մկրտիչյանը հանդիպում են ունենում Եգիպտոս եկած Համբարձում Պոյաճյանի (Մեծն Մուրադ) հետ: Երկու կուսակցությունների միջև հաստատված միաբան գործակցությունն ու լիակատար համերաշխությունն ամրապնդելու համար ընդունվում է մի նոր փաստաթուղթ, որը ներառում էր հետևյալ երեք կետերը.

«Ա.– Երկու կուսակցութեանց մօտաւոր ծրագրին նոյնութիւնը, որ է ազգային անկախութիւն:

Բ.– Նոյնութիւն կազմակերպական սիստեմի, այսինքն կեդրոնացում:

Գ.– Գործելակերպի նոյնութիւն, այսինքն պատրաստութիւն ընդհանուր ապստամբութեան եւ մերժում ցուցական գործունէութեան»[1]:

Եգիպտոսում ստացած խանդավառ ընդունելությունից հետո Մեծն Մուրադը մեկնում է Ամերիկա, ուր և՛ հնչակյանները, և՛ վերակազմյալ հնչակյաններն ամուր կազմակերպություններ ունեին: Այստեղ տարբեր քաղաքներում կազմակերպված համատեղ բազմաթիվ հավաքներում նա ելույթներ է ունենում, կրկին արժանանում տաք ու խանդավառ վերաբերմունքի: Ստեղծված այս համերաշխ մթնոլորտում ամերիկահայ ժողովրդի մի մեծ հատվածի մեջ կրկին արթնանում է իր հայրենիքի ազատագրության հույսը, ինչպես նաև երկու քույր կուսակցություններին ամեն տեսակ նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալու պատրաստակամություն է հայտնվում ամենուր[2]:

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»,*** *№ 31, 11 հունվարի 1908 թ.:*

[2] ***Մանուկ Գ. Ճիզմէճեան,*** *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց. 1890–1925, էջ 130:*

ԴԵՊԻ ԱՂԵՏԱԲԵՐ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Իսկ Դաշնակցության ղեկավարությունը, չնայած հայ հասարակության մեջ գործող մյուս երկու հեղափոխական կուսակցությունների և անհատ գործիչների անհամաձայնությանը, արագացրեց Իթթիհադի հետ դաշինքի մեջ մտնելու իր մտադրության իրագործումը:

Ընդամենը մի քանի չաբաթ առաջ դաշնակցականները հեղափոխական հողի վրա հայ-թուրքական համերաշխությունը անկարելի էին համարում: Այս տեսակետից համբավավոր էր Դաշնակցության օրգան «Ռազմիկ» թերթի (Բուլղարիա) տեսակետը, թե այդ համերաշխությունը կարող է իրականանալ միայն մի դեպքում՝ երբ «ձուկերը ծառը ելլեն»[1]:

Օսմանյան ընդդիմադիր ուժերի համաժողովի նախապատրաստման և նրա աշխատանքների ծրագիրը մշակելու համար ստեղծվեց հատուկ հանձնախումբ («Կազմակերպիչ բյուրո»), որի մեջ մտան «Միություն և առաջադիմությունից»՝ Ահմեդ Ռիզա բեյը և «Շուրա-ի ումմեթի» խմբագիր Սեզայի բեյը, «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» կողմից՝ իշխան Սաբահէդդինը, Ֆազիլ բեյը և դոկտ. Նիհադ բեյը, ՀՅ դաշնակցությունից՝ Ակնունին: Բոլոր հարցերի երկարատև քննարկման արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց հետևյալ գլխավոր հարցերի շուրջ. 1) Օսմանյան կայսրության պետական և քաղաքական անկախություն, 2) Սահմանադրական կառավարման ստեղծում և խորհրդարանի հրավիրում: Որոշվեց համաժողովը հրավիրել 1907 թ. դեկտեմբերի 27-ին, դարձյալ Փարիզում[2]:

Կազմակերպիչ բյուրոն հրավերներ ուղարկեց մակեդոնական, հունական, արաբական, ալբանական, քրդական, հայկական և թվով տասը այլ կուսակցությունների ու խմբերի: Թեև մինչ կազմակերպիչ բյուրոյի ստեղծումը հնչակն արդեն մերժել

---

[1] ***«Արեւելեան մամուլ»*** *(Իզմիր), № 14, 31 մարտի 1909 թ.:*

[2] ***Տե՛ս Ю. А. Петросян****, Младотурецкое движение, с. 244.*

էր մասնակցել համաժողովին, բայց նրա Կենտրոնին նույնպես հրավեր ուղարկվեց: Համաժողովին մասնակցելու պաշտոնական հրավերներ ուղարկվեցին նաև քաղաքական և հասարակական նշանավոր անհատ գործիչների, հայերից՝ Մինաս Չերազին և Արշակ Չոպանյանին:

Հնչակյան Ստ. Սապահ-Գյուլյանի վկայությամբ՝ համաժողովի բացման հենց նախօրյակին մի ցուրտ, անձրևոտ եղանակի Փարիզի Մոնպարնասի պողոտայում պատահաբար հանդիպել է Թուրքահայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկին, որը ծանր ապրումներով պատմել է հրավերի հետ կապված հանգամանքների և դա մերժելու շարժառիթների մասին: Լսենք նրան.

«-Պրն. Սապահ-Գիւլեան, ընկեր Սապահ-Գիւլեան,- լսում եմ կոկորդալիր մի ձայն, որ կանչում է: Ետ դարձայ. տեսնեմ՝ Մինաս Չերազն է, որ ոտքերը քաշկռտելով՝ աշխատում է քայլերը արագացնել՝ ինձ հասնելու համար:

- Բայց ի՞նչ է պատահել:

- Երէկ երեկոյեան քովս եկաւ ՀՅ Դաշնակցութեան ներկայացուցիչ՝ Ա. (Ակնունի:- Հ. Ս.), ըսաւ՝ որ իրենք Թուրքերուն հետ – Ահմէդ Բիզայի կուսակցութեան հետ – կոնգրէ պիտի գումարեն. եկեր էր զիս ալ համոզելու, որ մասնակցիմ: Խնդիրներու մասին տեղեկութիւն հարցուցի, ըսաւ որ իրենք որոշեր են Հայկական Խնդրէն վազ գալ եւ ամբողջ Թիւրքիայով զբաղուիլ...: Ես պատասխանեցի թէ՝ ախպա՛ր, 25-30 տարի է, որ ես Հայկական Խնդիր կը ճանչնամ, անով կը զբաղուիմ, անոր պոչէն բռներ կ'երթամ. հիմա՛, ա՛յս տարիքիս մէջ, ես ի՞նչպէս կրնամ անկէ վազ անցնիլ. իմ կեանքս անոր հետ է կապուած. կարելի՞ բան է, որ Ներսէս Վարժապետեանի, Խրիմեանի, Նար-Պէյի հետ չինած գործս քանդեմ, ուրանամ...: Մերժեցի, ըսի՝ որ չեմ կրնար...: Հարցուցի թէ ի՞նչպէս կ'ըլլայ, որ Դաշնակցութիւնը Հայկական Դատը կը լքէ, չէ՞ որ այսքան տարիներ անոր համար աշխատեր է, արիւն է թափեր...: Ինձ ի՞նչ պատասխանէ՝ լա՛ւ. - «Ժամանակին պիտի յարմարուիլ. ժամանակը այդպէս է պահանջում»: Հիմա ըսէ՛, ախպա՛ր, հոսհոսը մե՞նք ենք, թէ՞ դուք: Այսքա՛ն տարի, Հայ Յեղափոխութեան, Հայկական Խնդրի անունով խօսէ՛, գրէ՛,

համոզէ՛, թերթեր հրատարակէ՛, ցոյցեր ըրէ՛ եւ հիմա ալ ըսէ՛ որ այդ ամէնը պիտի ձգենք ու Ահմէդ Ռիզային հետ ամբողջ Թիւրքիան փրկենք. – ըսէ՛ նայիմ, Եւրոպան ի՞նչ կ՚ըսէ...»[1]:

Այնուհետեւ Զերազը, որ անցյալում միշտ ողջունել էր երիտթուրքերի հանդեպ Հնչակի անզիջում կեցվածքը, հիմա վախ ուներ, թե արդյո՞ք ժամանակի հետ, Դաշնակցության նման, Հնչակը նույնպես չի փոխի իր մարտավարությունը և չի համերաշխվի «Թուրքիան միասնաբար փրկելու» գաղափարի հետ: Եվ հետևում է նրա հարցումը Սապահ-Գյուլյանին. «Դուն ինձ ան ըսէ՝ որ ձեր կուսակցութիւնն ալ պիտի թողո՞ւ Հայկական Դատը, դուք ալ պիտի յարմարի՞ք ժամանակին...: Ախպա՛ր, աս ի՞նչ բան է, այս ազգը չէ՞ք մեղքնար...»[2]:

Մեջբերում ենք Սապահ-Գյուլյանի նույնքան ընդարձակ պատասխանը. «Պրն. Զերա՛զ. ձեզ ասում եմ բացարձակ կերպով՝ Հայկական Դատը ո՛չ ես բաց կը թողնեմ, ո՛չ էլ մեր Կեդրոնական Վարչութիւնը: Այդ դատից չի կարող ձեռք վերառնել նոյնիսկ մեր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը: Դեռ աւելին կասեմ. – ՍԴ Հնչակեանութիւնը իր ամբողջութեամբ, որպէս կուսակցութիւն, որպէս քաղաքական մի որոշ մարմին, գոյացութիւն անկարող է Հայկական Խնդիրը թողնել, որովհետեւ դրանով նա ինքնասպանութիւն գործած պիտի լինէր: Իսկ եթէ մի օր մեր կուսակցութիւնը լուծուէր, նոր մարմին կազմուէր դարձեալ մեր կուսակցութեան անունով, այն ժամանակ ես առաջինը կը լինեմ, որ իմ հրամայական պարտականութիւնս կը համարեմ այդ կուսակցութիւնը պատառոտել եւ թոյլ չտալ, որ նա հայ կեանքի մեջ գոյութիւն ունենար եւ դեր խաղար: Վստահեցէ՛ք, անկարելի է. ՍԴ Հնչակեան Կուսակցութիւնը այդ ոճիրը գործելու ընդունակութիւնը չունի, չի էլ կարող ունենալ: Նա ա՛յն է այսօր, ինչ որ էր երէկ, նոյնը կը լինի ե՛ւ վաղը»[3]:

Հարց է ծագում, թե այս իրավիճակում, երբ երիտթուրքերի

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Պատասխանատուները, Բ հրատ., էջ 217:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 218:*

[3] *Նույն տեղում, տե՛ս նաև՝* ***«Արեւելք»****, № 6882, 23 օգոստոսի 1908 թ.:*

հետ քաղաքական դաշինք ստեղծելու անհրաժեշտության մասին հայկական հասարակության մեջ նպաստավոր տեսակետ դեռ չէր ձևավորվել, ինչո՞ւ Դաշնակցությունը գնաց համաժողովի՝ այդ դաշինքը գլուխ բերելու համար:

Դաշնակցությունն այդ քայլին գնում էր հիմնականում չորս պատճառով.

***Առաջին,** ՀՅԴ-ն սկսել էր հակվել այն տեսակետին, թե Հայկական հարցը Արևմուտքը չի լուծելու, և 61-րդ հոդվածը, որի կենսագործման հետ կուսակցությունը 17 տարի շարունակ, Թուրքահայոց ազատագրության լուծումը, զինված պայքարին զուգահեռ, կապում էր (ըստ որում՝ զինված պայքարի գլխավոր նպատակներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, Եվրոպայի ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելն էր), մնալու է թղթի վրա: Իրականում՝ 61-րդ հոդվածը թղթի վրա էր մնացել լույս աշխարհ գալու պահից (1878 թ.): Հայկական ազգային հեղափոխական կուսակցությունները (առաջին հերթին՝ հին հնչակը) Թուրքահայոց ազատագրության իրենց հույսերը խարսխել էին նշված երկու գործոնների վրա: Այս քաղաքականությունը նկատելի որևէ դրական արդյունք չէր տվել և անթիվ զոհերի առիթ էր դարձել: Հիմա էլ հին հնչակը, ավելի ճիշտ՝ նրա սապահ-գյուլյանական թևը, շարունակում էր աննահանջ մնալ որդեգրած գծի վրա, իսկ Դաշնակցության շարքերում գնալով ուժեղանում էին կասկածները եվրոպական աջակցության նկատմամբ:*

***Երկրորդ,** Դաշնակցության շարքերում գնալով ուժեղանում էին կասկածները զինված պայքարի նպատակահարմարության հանդեպ: Կուսակցության առանձին ղեկավար գործիչների մոտ նույնպես խմորվում էր այն տեսակետը, որ եթե նույնիսկ բոլոր հայերը և նրանց բոլոր կուսակցությունները միանան, դարձյալ բան չեն կարող անել Թուրքիայի հզորության դեմ: «Հայութիւնը ոյժ չունի սեփական ոյժերով ազատագրուելու, թշնամին աւելի զօրեղ դուրս եկաւ քան կարծում էինք: Հետեւապէս անհրաժեշտ է համերաշխուել թուրքերի հետ եւ այդ միջոցով տանելի մի դրութիւն առաջ բերել»[1]: Ասել է թե՝ Թուրքահայությունը միայն*

---

[1] *Տե՛ս **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 223:*

իր ուժերով չի կարող հասնել ազգային ազատագրության և որ միակ ուղին կայսրության բոլոր, այդ թվում՝ Թուրք, ընդդիմադիր ուժերի համատեղ պայքարն է՝ վարչակարգի փոփոխության միջոցով վերափոխել ու դեմոկրատացնել երկրի հասարակական-քաղաքական կյանքը[*]*:*

Երրորդ, *ռուսական հեղափոխության ազդեցության տակ Թուրք ժողովրդի մոտ առաջ եկած առանձին ըմբոստությունները, որոնց երբեմն ուղղություն էին տալիս երիտթուրքական բջիջները կամ առանձին գործիչներ, մեծ հույսեր էին արթնացրել Դաշնակցության մոտ: Թվում էր, թե արդեն հնարավորություն է ստեղծվել հայկական ազգային ազատագրական շարժումը զուգորդելու Թուրքերի սոցիալական նորածագ ընդվզումների հետ: Հենց ուժերի այս երևակայական զուգորդման ու միավորման ոգևորիչ հեռանկարն էր, որ Դաշնակցությանը մղեց Թուրք «հեղափոխականների» հետ դաշինքի:*

Չորրորդ, *Դաշնակցությունն ամեն կերպ ձգտում էր մտնել Սոցիալիստական երկրորդ ինտերնացիոնալի մեջ՝ Թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարին եվրոպական սոցիալիս-*

---

[*] *Հակառակ տեսակետ ունեցողները և, առաջին հերթին, հնչակյանները, տարակուսում էին, թե «ի՞նչ զօրաւոր փաստեր եկան նրան (Դաշնակցությանը:- Հ. Ս.) համոզելու, որ իր առաջուան դիրքը սխալ էր, գծած ուղղութիւնը՝ վնասակար. արդեօք ի՞նչ կար փոխուած Թիւրքիայի մէջ. մի՞թէ հայ ազգի եւ Թուրք պետութեան, հայ տարրի եւ միւս տարրերի փոխյարաբերութիւնների մէջ այնպիսի զգալի փոփոխութիւններ էին կատարուել, որ իրենք չէին նախատեսել դեռ 1890-ին, երբ ամէն ինչ ձեւակերպում էին Հայկական Դատի եւ անջատ ուղղութեան վրայ: Ի՞նչպէս կը լինի, որ 2-3 ամիս առաջ հայ ազգը* ***ոյժ ունէր,*** *իսկ հիմա՝ ոչ...» (****Ստեփան Սապահ-Գիւլեան****, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 228-229): Հնչակյանները գտնում էին, որ չնայած անթիվ-անհամար կորուստներին, հայ ազգն իր խորության մեջ, դեռ ներկայացնում է անսպառ աղբյուր հեղափոխության համար, նրա ներքին ուժը դեռ անվթար է: Հարկավոր է միայն, որ հայկական կուսակցությունները որոշ հասկացողության գան, չջլատեն միմյանց և դիմացինին ամլության չդատապարտեն, անհաջողությունների պատճառը չփնտրեն ազգի մեջ և հակառակ կուսակցության մեջ: Ուրեմն՝ համերաշխություն և համագործակցություն, որպեսզի հնարավոր լինի ասպարեզ հանել հայ հոգու խորքերում ամբարված ամբողջությունը և շարունակել կռիվը ոսոխի դեմ:*

տական շարժման լայն աջակցությունն ստանալու նպատակով: Բայց Եվրոպացի սոցիալիստները (մարքսիստներ թե կիսա-մարքսիստներ), առանձին բացառություններով, դեմ էին դասակարգային պայքարի նկատմամբ ազգային ազատագրական պայքարին գերակայություն տալուն, ավելին, վերջինս դիտում էին որպես լուրջ խոչընդոտ շահագործվող դասակարգերի սոցիալական ազատագրության ճանապարհին: Այդ է պատճառը, որ Սոցիալիստական ինտերնացիոնալը և սոցիալիստական շարժման խոշոր շատ ներկայացուցիչներ, վրդովմունքով դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ աբդուլհամիդյան գազանությունները, միաժամանակ հանդես էին գալիս ոչ թե թուրքահայ ժողովրդի քաղաքական անկախության, այլ Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական կարգերի արմատական հեղաբեկման օգտին, որի արդյունքում սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ազատություն կստանար նաև հայ ժողովուրդը: Ելնելով այդ ընդհանուր պատկերացումից, Եվրոպացի սոցիալիստները Դաշնակցությանը մշտապես խորհուրդ էին տալիս սերտ հարաբերություններ ստեղծել աբդուլհամիդյան վարչակարգի միակ թուրք ընդդիմադիրի՝ երիտթուրքական կուսակցության հետ և սուլթանական բռնապետության դեմ ընդհանուր պայքարում ջանքերը համատեղել:

Փարիզում օսմանյան ընդդիմադիրների համաժողով հրավիրելու լուրը անակնկալ էր Եվրոպայի համար: Այնտեղ բոլորը վաղուց ընտելացել էին տխուր ու ճակատագրական այն իրողությանը, որ թուրք սուլթանը մշտնջենապես պիտի ճզմի ու հալածի հպատակ ժողովուրդներին – քրիստոնյաներին ու մուսուլմաններին, միշտ պիտի հետևի «բաժանի՛ր ու տիրի՛ր» քաղաքականությանը, անջատի և միմյանց թշնամացնի լծակից դժբախտ տարրերին և, այդպիսով, անդամալույծ անի ամեն ընդդիմադիր քաղաքական ուժ: Եվրոպան նաև վաղուց ընտելացել էր այն իրողությանը, որ «Երիտասարդ Թուրքիա» քաղաքական կազմակերպություն կոչվածը պատրանք է, որը երեսուն տարուց ի վեր թղթե չանթեր է արձակում սուլթանի դեմ՝ առանց կարողանալու իրական սպառնալիք լինել թուրք բռնակալի համար:

Այդ ամենը քաջ գիտակցելով, Եվրոպան, այնուամենայնիվ,

մի հեռավոր հույս էր կապում երիտթուրքերի հետ այն պատճառով, որ նրանք կայսրության մեջ եղած և լինելիք բոլոր պատուհասների գերագույն չարժառիթը համարում էին սուլթան Աբդուլ Համիդի բռնակալությունը:

ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի երկրորդ համաժողովը տեղի ունեցավ 1907 թ. դեկտեմբերի 27-29-ին Փարիզում՝ «մերձենալու» և «մարտական եղբայրակցություն» ստեղծելու առաջադրանքով:

Համաժողովին (կոնգրես) մասնակցում էին. 1) Երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» Օսմանյան կոմիտեն» (ԻԹԹիհադ)՝ ի դեմս դրա պաշտոնական օրգաններ «Շուրա-ի ումմեթ» և «Մեշվերեթ» թերթերի. այս կազմակերպության պատգամավորությունը գլխավորում էր Ահմեդ Ռիզան[1], 2) ՀՅ դաշնակցությունը՝ ի դեմս նրա պաշտոնական օրգան «Դրօշակի», 3) «Ապակենտրոնացման ու սահմանադրության օսմանյան միությունը» (իշխան Սաբահէդդինի կազմակերպությունը)՝ ի դեմս դրա «Թերաքքը» պաշտոնական օրգանի, 4) Եգիպտոս փախած հրեաների կոմիտեն՝ ի դեմս նրանց պաշտոնաթերթ «Լա Վերայի»[2], 5) Լոնդոնում արաբերեն և թուրքերեն լույս տեսնող «Խիլաֆեթ» թերթի խմբագրությունը, 6) Մարսելի «Արմենիա» լրագրի խմբագրությունը, 7) Դաշնակցության բալկանյան օրգան «Ռազմիկ» թերթի խմբագրությունը, 8) Դաշնակցության՝ Ամերիկայում լույս տեսնող «Հայրենիք» թերթի խմբագրությունը, 9) «Ահդի օսմանի» կոմիտեն (Եգիպտոս)*:

---

[1] **Միքայէլ Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 189-ի տողատակը:

[2] Տե՛ս **«Վտակ»,** № 7, 11 հունվարի 1908 թ.:

* Մեզ համար պարզ չէ, թե ինչի՞ց ելնելով Գուրկո-Կրյաժինը գրել է, թե կոնգրեսին մասնակցել են պատգամավորներ 13 կազմակերպություններից (Տե՛ս **В. А. Гурко-Кряжин**, История революции в Турции, Москва, 1928, с. 32):

Համաժողովին վճռականապես մերժեցին մասնակցել արաբական կոմիտեները[1]: Համաժողովին նախապես խոստացել էին մասնակցել նաև մակեդոնական ու ալբանական կոմիտեները, ինչպես նաև քրդերի առանձին ազդեցիկ ներկայացուցիչներ, որոնք վերջին պահին հրաժարվեցին ներկայանալ[2]: Հրավերին չէր արձագանքել նաև երիտթուրքերի մի մասը՝ Ալի Հեյդար Միդհատ բեյի գլխավորությամբ, որը թուրք «ազատականության» ամենահեղինակավոր ու ազդեցիկ ներկայացուցիչներից մեկն էր[3]:

Այսպիսով, համաժողովին ներկա էին թուրքական–մուսուլմանական չորս, հայկական չորս, հրեական մեկ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնց թիվը, ըստ ազգային պատկանելության հետևյալն էր. 17 թուրք, 5 հայ (որոնցից 4–ը՝ դաշնակցական, 1–ը «Արմենիա» թերթից) և հրեական նշված կոմիտեից 1–2 պատվիրակ: Կազմակերպությունների և անձերի այս համամասնությունն իսկ ակնառու ցույց է տալիս, թե հայկական հեղափոխությունը որքան ազդու նշանակություն ուներ Օսմանյան կայսրության կյանքում, որի հետ ստիպված էին լրջորեն հաշվի նստել թուրքական հեղափոխական ուժերը: Երիտթուրք պարագլուխները մեծապես գոհ էին, որ հայկական հեղափոխական ամենաազդու կուսակցության հետ հաջողվել է ի մի գալ և կայսրության հետագա ճակատագրի հետ կապված բախտորոշ խնդիրներ քննարկել:

Պատգամավորների լիազորությունները ճշտելուց և հաստատելուց հետո կազմակերպիչ բյուրոյի հանձնարարությամբ համաժողովը բացեց Սեզայի բեյը, այնուհետև, երեք նախատեսված նիստերը հերթով վարելու համար ընտրվեցին երեք նախագահներ՝ Մեհմեդ Սաբահէդդինը, Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի) և Ահմեդ Ռիզան[4]:

Նախագահներ ընտրելուց հետո, համաժողովը ձեռնարկեց

---

[1] Տե՛ս **«Ազգ»**, № 72, 12 սեպտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Լուսաբեր»** (Գահիրէ), № 472, 16 հունվարի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Ազգ»**, № 47, 7 մարտի 1908 թ.:

[4] Տե՛ս **«Վէմ»**, № 1, հունվար–փետրվար, 1934, էջ 123:

քննարկելու այն փաստաթուղթը, որը պատրաստել էր կազմկոմիտեի՝ նախօրյակին ստեղծած հատուկ հանձնաժողովը: Փաստաթղթով պատվիրակներին ներկայացվում էր սկզբունքային երկու հարց. գոյություն ունեցող բռնապետական վարչակարգի տապալում և ներկայացուցչական (օրենսդիր) մարմնի (պառլամենտի) հաստատում: Այդ նպատակներին հասնելու համար առաջարկվում էր ինչպես հեղափոխական կռվի, այնպես էլ ոչ հեղափոխական (խաղաղ) միջոցների գործադրում՝ ելնելով ստեղծվելիք որոշակի իրավիճակից:

Առաջին հայացքից առարկություններ չենթադրող փաստաթղթի շուրջ ծավալվեցին թեժ վիճաբանություններ, որոնք ամբողջ երկու օր տևեցին: Տարաձայնությունների առիթը եղավ Ահմեդ Ռիզայի առաջարկությունը՝ Աբդուլ Համիդի տապալումից հետո ճանաչել նոր սուլթանի ինչպես վեհապետական, այնպես էլ աշխարհի բոլոր մուսուլմանների խալիֆի նրա բոլոր իրավունքները: Դա առաջ բերեց բուռն դժգոհությունը համաժողովի հայ մասնակիցների, որոնք չեչտում էին, թե որևէ երաշխիք չկա, որ նոր սուլթանը հնից վատ չի լինելու, որ եթե նրա համար պահպանվելու են նույն իրավունքներն ու առանձնաշնորհումները, ապա կասկած է առաջացնում Աբդուլ Համիդին տապալելու կոչերի անկեղծությունը: Հանդիպելով հայերի անդիջում դիմադրությանը, Ահմեդ Ռիզան հայտարարեց, թե ինքը հրաժարվում է համաժողովի համանախագահի իր լիազորություններից՝ դրանք փոխանցելով Ֆազիլ բեյին: Արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ սուլթան-խալիֆի իրավունքների հարցի քննարկումը դադարեցնել և այդ մասին որևէ հիշատակություն չանել համաժողովի ընդունելիք եզրափակիչ փաստաթղթում:

Ե՛վ հայ, և՛ թուրք պատգամավորները շատ լավ գիտակցում էին, որ եթե միմյանց զիջումների չգնան, ապա համաժողովի ձախողումն անխուսափելի է: Իսկ դրանում շահագրգռված չէին ո՛չ դաշնակցականները և ո՛չ էլ երիտթուրքերը:

Թուրք պատգամավորները հենց սկզբից երկյուղ ունեին, որ համաժողովում իրենց համար ծանր խնդիրը լինելու է դաշնակցական պատգամավորների հետ համաձայնության գալը: Դա էր

պատճառը, որ նրանք հետագա բարդություններից զգուշացան: Դրա վկայություններից մեկը սուլթան-խալիֆի իրավունքների հարցը քննարկումից հանելն էր:

Իրենց հերթին, դաշնակցական պատգամավորները նույնպես նպաստում էին համագործակցության մթնոլորտի պահպանմանը: Անշուշտ, նրանք համաժողով էին գնացել ավելի ընդարձակ և հստակ պահանջներով, բայց համերաշխությունը պահպանելու ստիպողական անհրաժեշտությունը նրանց հարկադրեց չափավորել ունեցած ակնկալիքները: Նրանց համար ավելի կարևոր էր սուլթանական բռնապետության տապալման համար ուժերի ***գործնական*** *համախումբը, քան տեսաբանական վեճերը, ինչպես ասենք՝ ապագա խորհրդարանի կառուցվածքի կամ սահմանադիր ժողովի գումարման նպատակահարմարության խնդիրը և այլն:*

Մտքերի եռօրյա աշխույժ փոխանակումից և փոխադարձաբար միմյանց նպատակները ճշտելուց հետո համաժողովն ընդունեց մի շարք որոշումներ:

Համաժողովը մշակեց երկրի ներքին գործերին օտար միջամտությունները վնասակար նկատող և օսմանյան հայրենիքի ամբողջությունը հարգող մի համաձայնագիր, որի առաջարկն արել էին երիտթուրքերի զույգ պարագլուխները: Դաշնակցական պատգամավորներն առաջարկն ընդունել էին անառարկելիորեն, քանի որ իրենց կուսակցության ծրագրում ամրագրված էր օսմանյան հայրենիքի ամբողջականության պահպանման դրույթը[1]:

Որոշում ընդունվեց կայսրության տարածքում գործող ազգային հակասուլթանական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմել մի գաղտնի խառը մարմին՝ «Մնայուն կոմիտե» անունով՝ իր ներքին կանոնադրությամբ: Այդ մարմնի կազմը և գործունեությունը պետք է պահվեին հույժ գաղտնի, իսկ գաղտնիքը դուրս բերելու դեպքում հանցավորը ենթարկվելու էր ծանր պատասխանատվության: «Մնայուն կոմիտեի»

---

[1] *Տե՛ս* ***«Կոհակ»*** *(Կ. Պոլիս), № 42, 6 (19) նոյեմբերի 1911 թ.:*

առաջին խնդիրն էր լինելու համաժողովի ընդունած որոշումների կենսագործումը:

Անընդունելի համարելով հակասուլթանական ուժերի ներսում ծագած հակասությունները բռնի ուժով լուծելու դեպքերը և այդ տեսակետից օրինակ բերելով Մակեդոնիայի հունական ու բուլղարական հեղափոխական խմբերի միջև մղվող կռիվները, համաժողովը բոլոր գործուն խմբակցություններին կոչ արեց՝ վերջ տալ եղբայրասպան կռիվներին և իրենց ուժերը միատեղել չարիքների գլխավոր աղբյուրի՝ սուլթանական բռնակալության դեմ:

Դեկտեմբերի 29-ին, վերջին նիստում, համաժողովի մասնակիցները հոտնկայս հարգելով օսմանյան ժողովուրդների ազատության համար բռնակալության դեմ մղած ցավատանջ պայքարում ընկած հերոսների հիշատակը, միաժամանակ ընդունեցին որոշում, որով խորին համակրություն էին արտահայտում երկրի զնդաններում տառապող քաղբանտարկյալներին, ինչպես նաև աքսորյալներին ու քաղաքական տարագիրներին:

Համաժողովը հատուկ կարևորություն տվեց հեղափոխական չարքերի մաքրության խնդրին և որոշեց խստիվ պատժել այն անձանց, ովքեր, դավաճանելով հակասուլթանական պայքարի գործին, ծառայության կանցնեն հանցագործ վարչակարգին: Նման անձանց նկատմամբ ընդունված վճիռների գործադրությունը թողնվում էր ազգային կազմակերպություններին:

Երկրի ներսում հեղափոխական, հակակառավարական քարոզչությանն ուժգին զարկ տալու համար համաժողովը որոշեց հրատարակել թուրքերեն, հայերեն, հունարեն, բուլղարերեն, ալբաներեն, արաբերեն և քրդերեն լեզուներով մի չարք գրքույկներ և դրանք ներքին կազմակերպությունների միջոցով տարածել ժողովրդի բոլոր խավերի մեջ: Մասնավորապես որոշվեց կոչեր ուղղել գյուղացիներին, զորքին, մտավորականներին, տարբեր հարանվանություններին, պաշտոնյաներին:

Որոշվեց նաև հակասուլթանական ուժերի հաջորդ համաժողովը հրավիրել մեկ տարի հետո՝ 1908 թ. դեկտեմբերի վերջերին: «Մնայուն կոմիտեն», մասնակից կազմակերպությունների

հավանությամբ, կարող էր արագացնել հաջորդ համաժողովի գումարումը[1]:

Վերջում ընդունվեց «Հայտարարագիր», որի տակ ստորագրել էին համաժողովի մասնակից բոլոր կազմակերպությունները և թերթերի խմբագրությունները: «Հայտարարագրի» վեց կետերի մեջ ձևակերպված էին համաժողովի և նրա ստեղծած «Մնայուն կոմիտեի» նպատակները[2]:

Փաստաթղթում ասված էր, որ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների միասնական ջանքերով վաղ թե ուշ տապալվելու է երկրի բռնապետական վարչակարգը: Աբդուլ Համիդի երեսնամյա տիրապետությունն աղետալի է եղել կայսրության թե՛ քրիստոնյա և թե՛ իսլամ ժողովուրդների համար: Սուլթանը գիտակցաբար և հաջորդաբար մեկը մյուսի դեմ է հանել երկրի տարբեր ազգերին ու կրոններին, նրանց նետել փոխադարձ ոչնչացման գեհենի մեջ: Թուրք, հայ, հույն, բուլղար, վալախ, ալբանացի, արաբ, հրեա, քուրդ ժողովուրդները մինչև հատակն ըմպել են սուլթանիզմի ոճիրների դառը մրուրը, իսկ «հայկական կոտորածները հանդիսացել են բոլոր անցեալ եղեռնագործությունների պսակը»:

«Հայտարարագրում» թվարկվում էին այն ավերներն ու աղետները, որ բռնակալությունը կատարել էր երկրի տնտեսության, առևտրի, մշակույթի, կրթության բնագավառներում, դատապարտվում էին անարդար տուրքերը, գիշատիչ պաշտոնյաների հարստահարումներն ու կաշառակերությունը, որոնց պատճառով ամեն տարի մարդիկ հազարներով երկրից գաղթում էին Ամերիկա, Եվրոպա և այլուր՝ փնտրելու ապրուստի միջոցներ:

Թուրքիայի անձկությունը նվազ ողբալի չէր արտաքին քաղաքականության տեսակետով: Հանդիսավորապես և շատ անգամ խոստացված բարենորոգումների ծրագրերը տապալելով,

---

[1] **«Դրօշակ»** № 1 (189), Հունվար, 1908, էջ 4–5:

[2] Տե՛ս **«Անկախ մամուլ»** (Թիֆլիս), № 3, 5 Հունվարի 1908 թ., **«Հայրենիք»** (Բոստոն), № 4 (446), 25 Հունվարի 1908 թ., № 5 (447), 1 փետրվարի 1908 թ., **«Ազդակ»** (Կ. Պոլիս), № 18, 18 մայիսի 1909 թ.:

սուլթան Աբդուլ Համիդը հուսախաբ էր արել իր հպատակներին և նրանց մղել արդարացի չարժումների, որոնց արդյունքն եղել էր եվրոպական պետությունների բազմաթիվ միջամտությունները երկրի ներքին գործերին: «Այս կործանարար քաղաքականությունը,- չեշտված էր փաստաթղթում,- յանգեց կայսրության հողային տարածքների նուազմանը եւ, եթէ այսպէս մի որոշ ժամանակ չարունակուի, ապա ուրիշ մասեր եւս՝ Ալբանիան, Մակեդոնիան, Արաբիան, Հայաստանը կարճ միջոցի մէջ անվրէպ բաժանուելու են կայսրութիւնից»[1]:

Սուլթանի բռնակալության դեմ չարժումները թեև ընթանում էին տևական ժամանակով, բայց դրանք միմյանցից անջատ էին: Բայց այսօր, ասված էր «Հայտարարագրի» մեջ, շատ տեղերում մուսուլմանների և քրիստոնյաների համագործակցությունը ցույց է տալիս, որ կայսրության բոլոր ժողովուրդները, վերջապես, հոգնել են տառապելուց և ըմբռնել են, որ իրենց դեպի անդունդ առաջնորդողը երկրի տիրակալն է, որ կայսրության վերջնական մեծ աղետը և քայքայումը կարող է կանգնեցնել միայն թուրքական կառավարման համակարգի արմատական փոփոխությունը: Իսկ այդ փոփոխությունն անհնար է, քանի դեռ երկրի ղեկը մնում է սուլթանի և նրա խմբակի ձեռքում: «Պէտք է, ուրեմն, անյապաղ եւ բոլոր հնարաւոր միջոցներով տապալել ռեժիմը, որ այնքան աղէտների պատճառ եղաւ: Հետեւաբար պահանջում ենք. 1. Սուլթան [Աբդուլ] Համիդի գահընկէցութիւն, 2. Ներկայ ռեժիմի արմատական փոփոխութիւն, 3. Ներկայացուցչական ռեժիմի (խորհրդարան) հաստատում»[2]:

«Հայտարարագիրը» չեշտում էր, որ սուլթանի հեռացումն ամեն բարելավման առաջին, բայց ոչ լրիվ պայմանն է, հետևապես, նրա հետ պետք է նաև վերանան վարչական ու քաղաքական բռնակալությունը, ոստիկանական սարսափի և դիվանագիտական նենգամտության համակարգը, և դրանց փոխարեն պետք է հաստատվի ներկայացուցչական մի համակարգ, որի

---

[1] **«Դրօշակ»,** № 1 (189), հունվար, 1908, էջ 3:

[2] Նույն տեղում:

միջոցով կայսրության բոլոր ժողովուրդները, հավասար իրավունքներով, կարողանան արտահայտել իրենց կարիքներն ու կամքը: Այդ համակարգն ամենքի համար կապահովի խաղաղ, ներդաշնակ զարգացման հնարավորություն, արդարություն և ազատություն:

Հենց այս մեծ նպատակի համար է հրավիրվել Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի համաժողովը, ասված էր «Հայտարարագրի» մեջ: Հենց այդ նպատակին են ուղղված համաժողովի մասնակից կազմակերպությունների ջանքերը: «Մենք միանում ենք ընդհանուր պայքարի համար, միանգամայն յարգելով իւրաքանչիւր կազմակերպութեան ինքնավարութիւնը: Միանում ենք անկեղծօրէն, եղբայրօրէն եւ նախքան կռիւը սկսելը խոստանում ենք չթուլանալ եւ յայտարարում ենք սուլթանին՝ թէ մեր զէնքերը վար չենք դնի, մինչեւ Թուրքիայի համար մի նոր դարագլուխ չբանանք»[1]:

«Հայտարարագիրը» կոչ էր անում ամենքին՝ գիտության և մտքի մարդկանց, գյուղացի ու քաղաքացի աշխատավորներին, վաճառականներին ու զինվորներին, կայսրության բոլոր ազգերին՝ «դաժան ու փառահեղ պայքարում» աջակից լինել հեղափոխականներին, որոնց իր ոճիրներով ոտքի է հանել ինքը՝ արդուլհամիդյան վարչակարգը:

Հայտարարելով բռնակալության դեմ սկսված կռիվը մինչև հաղթական ավարտ չարունակելու իրենց վճռականությունը, համաժողովի մասնակիցներն այդ ծրագրային փաստաթղթում ընդունում ու հանձնարարում էին պայքարի հետևյալ միջոցները. 1. Զինված դիմադրություն կառավարության քայլերին, 2. Անդեն դիմադրություն՝ քաղաքական և տնտեսական գործադուլներ, նաև պաշտոնյաների և ոստիկանության գործադուլներ, 3. Հրաժարում հարկեր վճարելուց, 4. Քարոզչություն զորքի մեջ. հասնել այն բանին, որ զինվորները հանդես չգան ժողովրդի և հեղափոխականների դեմ, 5. Ընդհանուր ապստամբություն, 6. Մարտական այլ միջոցներ՝ պարագաների թելադրության համաձայն:

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 1 (189), Հունվար, 1908, էջ 3:*

«Հայտարարագիրը» վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Համիդեան ռեժիմը կոչնչանայ մօտալուտ ապագայում, եթէ բոլոր նրանք, որ տառապում են, ունենան, ինչպէս մենք, այն տապալելու հաստատ կամք: Այն խարխուլ պարիսպ է, որ կարելի է ուսի մի հարուածով հրել ու ձգել, որպէսզի փրկազատ կայսրութեան մէջ հեղեղուի ազատութեան եւ արդարութեան սրբազան լոյսը: Կեցցէ՛ մինչ այժմ անմիաբան ազգերի համերաշխութիւնը: Կեցցէ՛ յեղափոխական ուժերի միութիւնը[1]:

Համաժողովը փակվեց երեք նախագահների ուղերձներով. հերթով խոսեցին իշխան Սաբահէդդինը, Ակնունին և Ահմեդ Ռիզան: Սաբահէդդինի ասելիքի կենտրոնում հայ-թուրքական համերաշխության խնդիրն էր: «Տեսէ՛ք,- ասում էր նա,- արդէն ապրում ենք նոր շրջանի արշալոյսի մէջ: Հայերի եւ թուրքերի միջեւ եղած յարաբերութիւնների այնքան ըղձալի փոփոխութիւնների նշանները օրէցօր աւելի ակնառու են երեւում: Թէեւ գերեզմանները անջրպետ են երկու [ազգերի] կեանքի մէջ, բայց հայ հայրենակիցներն իրենց հին ու նոր բարեկամ թուրքերին եղբայրական աջակցութիւն են ցոյց տալիս նրանց ազատագրական մեծ պայքարում»[2]: Ակնունին իր խոսքում կանգ առավ սոցիալիստական սկզբունքների վրա, նշելով, թե սոցիալիզմն ի՞նչ օգուտներ կարող է բերել օսմանյան հայրենիքին: Ելույթի վերջում նա հայտարարեց, թե 18 ամիս չանցած, սուլթան Աբդուլ Համիդն այլևս իր գահի վրա չի լինելու և նրա տեղում հաստատված է լինելու «ամէնուս իտեալը եղող ֆետերաթիւ կառավարութիւն մը»[3]: Ահմեդ Ռիզան գլխավորապես ծանրացավ նույն կործանարար վարչակարգի դեմ կռվող բոլոր տարրերի համերաշխության անհրաժեշտության վրա՝ դա միջոց նկատելով վերջնական հաղթանակի համար[4]:

Համաժողովից հետո տեղի ունեցավ ճաչկերույթ, որը տևեց մինչև կեսգիշեր: Եղան ուղերձներ, առաջարկվեցին կենացներ:

---

[1] **«Դրօշակ»**, № 1 (189), հունվար, 1908, էջ 4:

[2] **«Հայրենիք»**, № 7 (449), 15 փետրվարի 1908 թ.:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

ելույթներ ունեցան Մալումյանը, դոկտ. Սաբրին, Նեջաթի բեյը, դոկտ. Ազմին, հայ և թուրք ուրիշ պատգամավորներ[1]:

Համաժողովը վերջացավ նրա մասնակիցներին համակած վառ հույսերով:

Բայց նույնիսկ այդ խանդավառ տրամադրությունների մթնոլորտում հայ պատգամավորների հոգում ցցված էր մնում սև կասկածը երիտթուրք պարագլուխների և հատկապես «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ղեկավար Ահմեդ Ռիզայի նկատմամբ: Համաժողովի պատգամավոր Վահան Փափազյանը հետագայում գրել է.

«Համաժողովի աւարտումէն ետք մենք իրարմէ բաժնուեցանք՝ առ երես սիրով, բայց ներքնապէս համոզուած՝ գծեցինք մեր անկախ գործերու ծրագիրը, մասնակցելով հանդերձ օսմանեան վարչաձեւի տապալման գործին եւ սահմանադրական կարգերու վերահաստատութեան»[2]:

* * *

Համաժողովի ընդունած հայտարարությունը 1908 թ. հունվարին ֆրանսերեն լույս տեսավ առանձին գրքույկով՝ "Déclaration du Congrés de Paris d'Opposition de l'Empire Ottoman" վերնագրով: Հայտարարության մի-մի օրինակ ուղարկվեց Եվրոպայի բոլոր պետությունների կառավարություններին և Կ. Պոլսի նրանց դեսպաններին, որը մեծ տպավորություն գործեց դիվանագիտական շրջանների վրա[3]: Շուտով հայտարարությունը թարգմանաբար տպագրվեց արտասահմանյան և կովկասյան թերթերում՝ լայն արձագանք գտնելով հանրության մեջ:

Հատկապես ոգևորված էին հայ ժողովրդի եվրոպացի բարեկամները:

Ֆրանսիս դը Պրեսանսեն Պիեռ Քիյառի միջոցով նամակ է ուղղում "Pro Armenia"-ի խմբագրությանը, ուր նաև ասված էր.

---

[1] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (449), 15 փետրվարի 1908 թ.:*

[2] ***«Վէմ»**, № 1, հունվար-փետրվար, 1934, էջ 123:*

[3] *Տե՛ս **«Զանգակ»** (Թիֆլիս), № 5 (447), 1 փետրվարի 1908 թ.:*

«Սիրելի՛ բարեկամս,

Շնորհաւորում եմ Օսմանեան կայսրութեան տարբեր ազգութիւնների ներկայացուցիչներին: Շնորհաւորում եմ Թուրքիային եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Աբդուլ Համիդի զոհ մեծ երկրի ազատագրման համար տեղի ունեցած երջանկաւէտ համերաշխութեան առթիւ: Սա բարոյական եւ քաղաքական մեծ քայլ է, մուսուլմանների եւ քրիստոնեաների, օսմանցիների, հայերի եւ սլավոնների ամուր միութեան հաստատման ճանապարհին, որ աղանդային եւ ցեղամոլական նախապաշարումների լիակատար սնանկացումն է ապացուցում: Աբդուլ Համիդի գահընկէցութիւնը, ներկայ ռեժիմի արմատական փոփոխութիւնը եւ ներկայացուցչական ռեժիմի հաստատումը զոհացուցիչ նուազագոյն պահանջներն են այն քաջարի ազգերի, որոնք մեռնել չեն ուզում»[1]:

Համագումարի արդիւնքները լայն արձագանք ունեցան նաև եվրոպական սոցիալիստական մամուլում: Ֆրանսիական "l'Humanité" («Յումանիտե»), "Le Progres" («Լը Պրոգրե») և այլ թերթեր տպագրեցին ընդարձակ առաջնորդողներ ու հոդվածներ: Հայտնի սոցիալիստ Ժան Լոնգեն «Յումանիտեում» նկարագրում էր իր տեսակցությունը և զրույցը Խաչատուր Մալումյանի հետ և մանրամասն չարադրում զրույցի բովանդակու-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 5 (447), 1 փետրվարի 1908 թ.: Ստեփան Սապահ-Գյուլյանը վկայում է, որ Պրեսանսեի այդ նամակը լույս տեսնելուց հետո ինքը հանդիպում է ունեցել նրա հետ և ցանկացել է իմանալ նամակը գրելու դրդապատճառները: Պրեսանսեն ասել է. «Ես ատելով ատում եմ «երիտասարդ Թուրքերին». նրանց ի՞նչ լինելը ես շատ լաւ գիտեմ: Համոզուած եմ, որ նրանցից ամէն մէկը մի մի սուլթան Համիտ է: Ահմէդ Ռիզայի ինչ տեսակ մոլեռանդ Թուրք լինելը ինձ շատ լաւ ծանօթ է: Նրանք բոլորը եւրոպատեաց, քաղաքակրթութեան թշնամի, արիւնախում մարդիկ են. ո՛չ նրանց ծերին պիտի հաւատայ, ո՛չ էլ երիտասարդին: Ես կը ցանկայի, որ օսմանեան պետութիւնը քերուէր, սրբուէր աշխարհիս երեսից, նրա հետքն անգամ չմնար: Բայց ձեր վիճակը ինձ ստիպեց քաղաքավարական մի քանի խօսքեր ասել, երբ* ***այդ մասին ինձ դիմում արեցին****...: Դուք ձեր դիրքի վրայ մնացէ՛ք, բայց դաշնակցականների դէմ էլ խիստ պայքար մի՛ մղեցէք...» (****Ստեփան Սապահ-Գիւլեան****, Պատասխանատուները, Բ հրատ., էջ 233):*

թյունը, որը հիմնականում վերաբերում էր համաժողովի որոշումներին[1]:

Այդ որոշումները ողջունեցին նաև այլ երկրների սոցիալիստները, համոզված լինելով, որ դրանք «դէպի առաջադիմութիւն եւ զարգացում կ'առաջնորդեն երկիրը»[2]:

"Русские Ведомости" («Ռուսկիե Վեդոմոստի») թերթը տպագրել էր Փարիզի իր թղթակցի հաղորդումը համաժողովի արդյունքների մասին, ուր ասված էր. «Պարսկաստանի ազատագրական շարժման յաջողութիւնները, ըստ երեւոյթին, իրենց մեծ ազդեցութիւնն են ունեցել Թուրքիայի ազատագրական շարժման վրայ: Մուսուլման եւ քրիստոնեայ ժողովուրդները միանում են սուլթանական բռնակալութեան դէմ համատեղ կռիւ մղելու համար»: Թղթակիցը հատկապես ընդգծում էր համաժողովի հրավիրման գործում Դաշնակցության և նրա պաշտոնական օրգան «Դրօշակի» ունեցած դերը: «Հայ յեղափոխական կազմակերպութիւնը,- նշված էր թղթակցության մեջ,- վերջին 5-6 տարում եռանդագին աշխատանք է տարել Թուրքիայի առաջադիմական բոլոր ոյժերին միաւորելու համար»: Կատարած այդ ծանր աշխատանքի հետևանքով «Օսմանեան կայսրութեան կեանքում մարմին է առել մի նոր գաղափար: Վերջանում է ազգային գժտութիւնների շրջանը եւ սկսում է յաղթանակել Թուրքիայի 20-ից աւելի ազգերին ավտոնոմ կապերի միջոցով միացնելու գաղափարը: Այս շեշտն էին կրում կոնգրեսի բոլոր մասնակիցների ճառերը: Այս տոնով էր խոսում իշխան Սաբահէդդինը եւ մի ծերունի ալբանացի, որ բոլորին կոչ արեց կործանել «օտոմանյան Բաստիլիան»՝ Ելդրզ քէոշկը»[3]:

Սուլթան Աբդուլ Համիդը, որ նախապես տեղեկացված էր համաժողովի հրավիրման և դրա ընթացքի մասին, այնտեղ ընդունված հայտարարագիրը և որոշումները համարեց դավաճանություն օսմանյան հայրենիքին, միաժամանակ մատնվեց

---

[1] Տե՛ս **«Վտակ»**, № 6, 10 հունվարի 1908 թ.:

[2] **«Հայրենիք»**, № 10 (452), 7 մարտի 1908 թ.:

[3] Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս **«Վտակ»**, № 7, 11 հունվարի 1908 թ.:

սարսափի՝ փաստաթղթերում իր մասին խիստ ձևակերպումներից: «Հայրենիք» (Բոստոն) թերթը հաղորդում էր.

«Նեճիպ փաշա Մելհամէ (Փարիզում Թուրքիայի դեսպանը:- Հ. Ս.) ամէն բան օրը օրին տեղեկացուցած է սուլթանին, որ իր սովորութեան հակառակ, վախէն, այս տարի Տոլմա Պախչէ ելած չէ Ղուրպան Պայրամի արարողութիւնը կատարելու, այլ՝ աւելի խորունկ որջացած է Ելտըզի մէջ:

Սուլթանը, որ Դաշնակցութեան Դ-րդ Ընդհանուր Ժողովին տուած որոշումներէն մտահոգուիլ սկսած էր, այս ժողովէն յետոյ ա՛լ աւելի կը հետամտի անոր գործունէութեան. Կովկաս, Պարսկաստան, Եգիպտոս, Պուլկարիա եւ նոյնիսկ Ամերիկա լրտեսներ խրկած է»[1]:

Թերթը նշում էր նաև, որ համաժողովի կայացրած որոշումներից սարսափահար սուլթանի հրամանով՝ «բնիկ պոլսեցի չեղող հայերը մեծ թուով իրենց գաւառները կը խրկուին»[2]:

Մինչ բուն Թուրքիայի հայութիւնը, մեծ մասամբ, անտեղյակ մնաց համաժողովի որոշումներից, Կովկասի և արտասահմանի հայկական մամուլը թանաքի հեղեղներ սպառեց՝ վերլուծելով դրա արդյունքները: Եղան թեր և դեմ բուռն վեճեր:

Դաշնակցական մամուլի օրգաններն ամեն ինչ անում էին հանրությանը համոզելու իրենց ձեռնարկած գործի ճշմարտացիության մեջ:

«Դրօշակը» գրում էր, որ կուսակցության ղեկավարության որոշումն անդառնալի է և իրենք ամեն ինչ անելու են ստեղծված «նպաստաւոր պայմաններից օգտուելու համար»[3]:

ՀՅԴ Ամերիկայի պաշտոնական օրգան «Հայրենիք» թերթը շեշտում էր.

«Թուրքերու հետ միանալ պէտք էր, եւ նոյնիսկ անհեռատեսութիւն մըն էր, որ մինչեւ հիմա իրարմէ անջատ մնացինք, որուն արդիւնքը այն եղաւ, որ Հայաստանի մէջ (Թուրքիա եւ Կովկաս) մարդկային անհամար զոհեր տուինք: Եթէ մենք այդ

---

[1] **«Հայրենիք»**, № 8 (450), 22 փետրվարի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **«Դրօշակ»**, № 11-12 (198), նոյեմբեր-դեկտեմբեր, 1908, էջ 164:

միացումը չատոնց կատարած ըլլայինք, թերեւս ոչ մէկ զոհ տայինք. ապացոյց՝ Վանի վերջին, չատ թարմ դէպքը*: ... Շատոնց պէտք էր միացած ըլլայինք մենք Թուրքերուն հետ, քանի որ մեր թշնամին մէկ էր՝ արդի կառավարական ամբողջ դրութիւնը, սուլթան Համիտը: Տրամաբանութեան հակառակ չէ՞ր առանձին թողուլ ոյժ մը, որ մեր նպատակին կը ձգտէր. պէտք չէ՞ր օգտուիլ այդ ուժէն, միանալով անոր հետ եւ աւելցնելով այդ ոյժին զօրութիւնը: Ահա՛ նոյնը կատարեցինք մենք ալ»[1]:

Թերթն օրինակ էր բերում Ֆրանսիայի և Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև դարեր տեւած թշնամությունը, որն իբր արդեն «վերջ է գտել»: Իբրև «համոզիչ օրինակ» բերվում էր նաև այն փաստը, թե «Թրանսվաալի քաջամարտիկ զօրավար Պոթթայի քոյրը այսօր կ՚ամուսնանայ անգլիացիի մը հետ»: Ահա՛ այս իրողություններն են, եզրակացնում էր թերթը, որ խոսում են հայ-թուրքական համագործակցության օգտին: «Մե՞նք ենք մնացեր ոխ պահող մինչեւ «ի միւս անգամ գալուստն Քրիստոսի»: Քիչ մը օրինակ առնենք եւրոպական ազգերէ եւ անոնց բռնած քաղաքագիտական ընթացքէն, եթէ կ՚ուզենք իբրեւ «մարդ» ապրիլ երկրիս վրայ»[2]:

Ինչպես ընթերցողը նկատում է՝ այս բացատրության կովանները չափազանց թույլ էին: Բացարձակապես տեղին չէր եվրոպական հզոր պետությունների փոխհարաբերությունների համեմատությունը Օսմանյան տերության իշխող ազգի և թուլացած ու կոտորակված հայության միջև եղած հարաբերությունների հետ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մի քանի տարի հետո եվրոպական այդ երկրները սկսելու էին կենաց ու մահու համաշխարհային պատերազմ՝ արյան գետերի մեջ քաշելով միլիոնավոր մարդկանց: Առավել ևս՝ լուրջ չէր Տրանսվաալի բուրերի գեներալ Լուիս Բոտայի քրոջ՝ անգլիացու հետ ամուսնության փաստարկը: Բայց հատկապես անընդունելին այն էր,

---

* Թերթը նկատի ուներ Վանի թուրքերի հակակառավարական ընդվզումները 1907-ին, տեղի թուրքերի և հայերի համագործակցությունը:

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (453), 14 մարտի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

որ Թերթը փաստորեն դատավճիռ էր կարդում ժողովրդի հակաթուրքական ազատագրական շարժման նախընթաց համարյա 20-ամյա հերոսական և արյունալի ոգորումներին:

Պատասխանելով հակառակորդների այն մեղադրանքին, թե Փարիզի համաժողովում դաշնակցական պատվիրակները երիտթուրքերի ճնշման տակ ընդունել են Միդհատի սահմանադրությունը, «Հայրենիքը» գրում էր.

«Միդհատի սահմանադրությունը ոչ թէ մենք, այլ իրենք՝ թուրքերն ալ չեն ընդունած: Համաժողովը բացարձակ կերպով մերժած է Միդհատեան սահմանադրութեան ընդունումը, նկատելով անոր թէ՛ անբաւականութիւնը եւ թէ՛ անընդունելի կէտերը»:

Եվ Թերթը բացատրում էր, թե համաժողովն ինչո՞ւ է մերժել Միդհատի սահմանադրությունը՝ գերադասելով բելգիականը: Այն պատճառով, որ, օրինակ, «Միդհատի սահմանադրութեան մէկ յօդուածը կը տրամադրէ որ «Սուլթանը ոչ ոքի առջեւ պատասխանատու չէ. իր անձը սուրբ է», իսկ 7-րդ յօդուածի զօրութեամբ՝ Սուլթանը ինքը պիտի անուանէ եւ պաշտօնանկ ընէ նախարարները, իր ուզած ատեն. նոյնպէս իր քէյֆին փչած ժամանակ պիտի կարենայ ժողովը բանալ կամ «լուծել, եթէ պէտք տեսնէ»: Ասիկա սահմանադրութի՞ւն է»[1]*:*

Այս բացատրությունը նույնպես խոցելի էր, եթե նկատի առնենք, որ սույն գրության տպարագրությունից ընդամենը չորս ամիս հետո տեղի էր ունենալու օսմանյան հեղափոխությունը, որի առաջին արդյունքն էր լինելու միդհատյան սահմանադրության վերահաստատումը, և Դաշնակցությունը այդ սահմանադրությունն առանց վերապահության ընդունելու էր:

Ինչ վերաբերում էր այն մեղադրանքին, թե Դաշնակցությունը «ջնջել է միջազգայնօրէն ճանաչուած մեր դատը», «Հայրենիքը», հակադարձելով, գրում էր, որ «Թէ՛ Պերլինի 61-րդ յօդուածը եւ թէ՛ Մայիս 11-ի ծրագիրը կը մնա[ն] սեղանի վրայ, ինչպէս որ էր մինչեւ հիմա: Համաժողովը գումարուած էր միայն

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 11 (453), 14 մարտի 1908 թ.:*

սա երեք կէտերու մէջ համաձայնութիւն գոյացնելու համար. ա) գահընկէցութիւն սուլթան Համիտի, բ) արմատական փոփոխութիւն ներկայ ռեժիմի, գ) հաստատում ներկայացուցչական ռեժիմի (խորհրդարան)»[1]:

Այս պատճառաբանությունը նույնպես չէր կարող գոհացնել Դաշնակցության հակառակորդներին, մանավանդ եթե նկատի ունենանք, որ օսմանյան հեղափոխությունից հետո կուսակցությունը հրապարակայնորեն հրաժարվելու էր թե՛ 61-րդ հոդվածից ու թե՛ Մայիսյան ծրագրից և ընդունելու էր «միասնական օսմանյան հայրենիքի» և «միասնական օսմանյան ազգի» տեսակետը:

Վերջապես, մերժելով հակառակորդների այն մեղադրանքը, թե Դաշնակցությունը Թուրքերի հետ ընդունել է արտաքին միջամտության ընդդիմանալու սկզբունքը, «Հայրենիքը» գրում էր. «Արտաքին միջամտութեան ընդդիմանալու որեւէ որոշում չէ տուած համաժողովը, որովհետեւ ան չէ վիճաբանած վերոյիշեալ երեք կէտերէն դուրս խնդիրներու վրայ: Ուրեմն այս մասին մեր դէմ գրուածներուն բոլորն ալ ձրի զրպարտութիւններ են, մոլորեցնելու համար անգիտակից ամբոխը»[2]:

Սակայն աշխատության հետագա շարադրանքում ընթերցողը կտեսնի, որ երիտթուրքերի իշխանության գալուց սկսած մինչև Հայկական հարցի վերաբացման նախօրյակը, այսինքն՝ մինչև 1912 թվականը, Դաշնակցությունը բազմիցս արած պաշտոնական հայտարարություններով հանդես է եկել օսմանյան ներքին գործերին արտաքին, այդ թվում՝ Ռուսաստանի միջամտությունների դեմ:

Դաշնակցական պատգամավորների մասնակցությունը համաժողովին ողջունեցին մամուլի ՀՅԴ կովկասյան օրգանները և դաշնակցականամետ թերթերը:

Ալեքսանդրապոլում լույս տեսնող «Ժայռը» գտնում էր, որ ուժերը միավորելու նպատակով Փարիզում հավաքված հեղափոխականներն ըստ էության արձանագրել են մեծ հաղթանակ

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (453), 14 մարտի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

սուլթանի նկատմամբ: «Ցանկանանք, որ այդ համերաշխութեան ոգին տարածուի Թուրքիայի բոլոր անկիւնները եւ Փարիզի համագումարի որոշումներն իրականանան կեանքի մէջ»[1]:

Թիֆլիսի «Վտակ» թերթը բարձր էր գնահատում երիտթուրքերի նկատմամբ Դաշնակցության որդեգրած իրատեսական քաղաքականությունը, գտնելով, որ Աբդուլ Համիդի գահը կարելի է կործանել միայն համատեղ ուժերով[2]:

Մի այլ առիթով նույն «Վտակը» համաժողովի հրավիրումը համարելով պատմական իրադարձություն, գրում էր. «Յամենայն դէպս, հիմք ունենք գոհ լինելու կատարուածով: Ուրախանանք, որ տասնեակ տարիների սեւ, արիւնոտ ազգամիջեան յարաբերութիւններին յաջորդում է մի նոր շրջան, լի հրապուրիչ հեռանկարներով: Ողջունե՛նք օսմանեան կուսակցութիւններին, որոնք ի վերջոյ դուրս են գալիս ծոյլ, անպտուղ մետաֆիզիկայի մառախուղից եւ բռնում են մեզ հետ միասին ազատութեան ու բանականութեան միակ ուղին: Ցանկանք յարատեւութիւն սահմանուած համերաշխութեանը եւ յուսանք, որ նա չուտ, ըստ կարելւոյն չուտ, թէօրիայից անցնի իրականին, գործնականին»[3]:

Միանգամայն հասկանալի պատճառներով՝ համաժողովի ընդունած բանաձեւերը քննադատություններից ուժգնորեն պաշտպանում էր Մկրտիչ Փորթուգալյանը:

«Թիւրիմացութիւններ» ընդհանուր խորագրի տակ Փորթուգալյանը «Արմենիայի» 1908 թ. N 41-ում և հետագա մի քանի համարներում զետեղել էր մի շարք հոդվածներ, որոնցում անհիմն ու անհեթեթ էր համարում համաժողովը թուրքահայ ժողովրդի համար կորստաբեր գտնող անձանց կարծիքները: «Արմենիայի» խմբագիրը չեշտում էր, որ իր թերթը հաճախ է քննադատել դաշնակցականների գործելակերպը, նրանցից ոմանց «ազգավնաս գործերն ու զեղումները», «բայց անկողմնակալութիւնն եւ ճշմարտութեան սէրը կը պահանջեն, որ իրենց կատարած հանրօգուտ գործերն ալ ներկայացնեմ այնպէս ինչպէս որ

---

[1] ***«Ժայռ»*** *(Ալեքսանդրապոլ), № 13, 24 հունվարի 1908 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Վտակ»,*** *№ 100, 11 մայիսի 1908 թ.:*

[3] ***«Վտակ»,*** *№ 31, 8 փետրվարի 1908 թ.:*

են: Եւ մեր սկզբունքն է՝ միշտ այդպէս վարուիլ»: Փորթուգալյանը գտնում էր, որ հայկական հասարակությունը պետք է բարձր գնահատի Դաշնակցության նախաձեռնությունը և չընդունի համաժողովի նկատմամբ քննադատությունները: Անընդունելի է, գրում էր նա, որ հնչակյանները «մինչեւ անգամ բաներ գրեցին, թէ համաժողովին մասնակցող հայերը հայ ազգութիւնն ուրացել եւ օսմանցի դարձեր են, թէ հայ պատուիրակներն այդ ժողովին մէջ դաւաճաներ են իրենց ազգին եւ թուրքերուն հետ միանալով ուզեր են սպանել Հայկական Խնդիրն որ 20 տարիներէ ի վեր իրենք արիւն թափելով յառաջ տարած են եղեր եւ այլն»[1]:

Երիտթուրքերի հետ հայկական ընդդիմադիր ուժերի համագործակցությունը ճիշտ էր համարում Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանյան)՝ թեև զգալի վերապահումներով: Նա երիտթուրքերին համարում էր «վտանգաւոր մարդիկ», որոնք ունակ են ամեն տեսակի խարդավանքների[2]:

Ռուսահայ ազատականների գերակշիռ մասը դատապարտում էր Դաշնակցություն-երիտթուրք գործակցությունը: Բայց ինչպես միշտ է լինում, հակառակ մտածողները քիչ չէին: Դրանցից էր պատմաբան Լեոն, որը գտնում էր, թե համաժողովը նոր դարագլուխ է բացում Թուրքիայի ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ[3]:

Փարիզի համաժողովը, նրա ընդունած որոշումները, երիտթուրքերի հետ կայացած համաձայնությունները, ընդհանրապես թուրք հեղափոխականների գործունեությունը գնահատելիս չափազանցությունների մեջ էր ընկնում Կովկասում ապաստանած թուրքահայ հասարակական գործիչ Տիգրան Զավենը (Զուգասրզյան), որը 1906 թ. հոկտեմբերից Թիֆլիսում հրատարակում էր «Երկրի ձայնը» շաբաթաթերթը: Թերթի էջերում նա պարբերաբար այն գաղափարն էր զարգացնում, թե համաժողովը հիմք է դրել հայ և թուրք ժողովուրդների վերածնու-

---

[1] ***«Արմենիա»**, 28 մարտի 1908 թ.:*

[2] *Տե՛ս **«Լուսաբեր»**, № 501, 28 մարտի 1908 թ.:*

[3] *Տե՛ս **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 213:*

թյանն ու եղբայրական հարաբերություններին, և, ելնելով դրանից, հայ հեղափոխական բոլոր գործիչներին կոչ էր անում՝ հետևողականորեն պաշտպանել նրա ընդունած պատմական որոշումները, իսկ Դաշնակցությանը հորդորում էր երիտթուրքերի անկեղծ բարեկամը լինել[1]:

Բայց ահա՛ նույն թերթը «Թիւրքահայի ազատագրութիւնը թիւրքահայի գործն է» վերտառությամբ առաջնորդողում գրում էր.

«Մի ժողովրդի ազատագրութիւնը՝ իրա՝ հէնց նոյն ժողովրդի գործն է:

Այն ժողովուրդը, որ անընդունակ է իր ծոցից բղխեցնելու իր սեպհական ազատութեան, իր սեպհական բաղդաւորութեան համար կռուող բանակներ, նա անկարող է ազատագրութեան, անարժա՛ն է բաղդաւորութեան:

Այն ժողովուրդը, որ անընդունակ է իր ձեռքերով փչրելու իր ստրկութեան շղթաները եւ նրանցից կռելու իր տարրական իրաւունքների ամրոցը, նա կորած է մանաւանդ ապագայ աւելի խիղախ, աւելի վճռական նուաճումների համար»[2]:

Կարճ ժամանակում երիտթուրքերի հետ Դաշնակցության ջերմագին հարաբերությունների հաստատումը զարմանք էր առաջացրել շատ-շատերի մոտ: Մարդիկ հարց էին տալիս, թե ինչպե՞ս պատահեց, որ այդ կուսակցությունը, որը ոչ շատ առաջ ուղղակի արգահատանք էր հայտնում նրանց մասին, հանկարծ կտրուկ փոխեց իր կարծիքը:

Հիրավի, դաշնակցական մամուլում մինչ այդ անհաշիվ էին երիտթուրքերին տրված բացասական որակումները:

Ահա՛, օրինակ, մի հատված «Դրօշակի» 1906 թ. № 2-ից.

««Երիտասարդ» տաճկութիւնը, օսմանեան պրոգրեսի դրօշակակիրը, չնայած իր ընդունած բարձրագոչ նշանաբաններին՝ մնաց երեսուն տարուայ իր գոյութեան ընթացքում ցեղի պէս ամուլ ու անդամալոյծ. մի կուսակցութիւն, կազմուած մտաւոր միջակութիւններից եւ բարոյական գաճաճներից, որոնք գաղա-

---

[1] Տե՛ս **«Երկրի ձայնը»**, № 3, 1908 թ. և հաջորդական թվերը:

[2] Տե՛ս նույն տեղում, № 14, 8 ապրիլի 1908 թ.:

փարական անհրաժեշտ չաղախից զուրկ լինելով, յեղափոխութեան վարդապետութիւնը հարեմներում ու սուլթանական ախոռատներում սովորելով, սիստեմատիկաբար դաւաճանեցին իրենց դատին, կաշառուեցին օգոստոսափառ Ոճրագործից...

Նրանց սիրած զբաղմունքներից մէկն է եղել՝ ամբաստանել ու արատաւորել ... հայ ու մակեդոնական ժողովուրդների ազատագրական շարժումները, ժխտել միջազգային դաշնագիրներով ընդունուած յանձնառութիւնները՝ յատկապէս հայերի ու մակեդոնացիների համար, յորդորել վերջիններիս՝ օսմանցի դառնալ եւ մտածել ընդհանուր, օսմանեան հայրենիքի ազատագրութեան մասին ... իրենց եղանակով: Սուլթանի արիւնռուչտ քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ, տաճկական եաթաղանի տակ ընկած հարիւր հազարաւոր զոհերը երբեք չեն վչտացրել «կարգի ու առաջադիմութեան ներկայացուցիչ» երիտասարդ տաճիկներին – ընդհակառակը ... Այդպէս է ահա՛ պատկերանում մեր առջեւ, իր խոշոր ու հարազատ գծերով, օսմանեան վերածնութեան «աւանգարդը»: Մեռելածին մի կուսակցութիւն, ծոյլ, անպտուղ, առանց անցեալի ու ներկայի»[1]:

Դա 1906-ին էր, բայց հիմա Դաշնակցության ղեկավարությունը միանգամայն այլ բաներ էր ասում: Գտնելով, որ Օսմանյան կայսրության մեջ զենքով ազատության հասնելն ոչ թուրք ժողովուրդների համար այլևս ժամանակավրեպ է, այդ ղեկավարությունն իր արարքը հետևյալ կերպ էր պատճառաբանում. «Եթէ բովանդակ հայութիւնը նոյնիսկ սպառազէն բանակ մը կազմէ՝ դարձեալ չի կրնար թուրք բռնապետութեան ձեռքէն խլել իր ազատութիւնը»[2]:

Ի պատասխան այդ պարտվողականության, վերակազմյալ հնչակյանների «Ազգ» թերթը գրում էր, որ «մեր անհանդուրժելի կացութենէն ազգովին դուրս գալու մի ելք կայ՝ ազգային ազատագրական արիւնոտ ճամբան»[3]:

Համաժողովին չմասնակցած հայկական կուսակցությունը-

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 2 (168), փետրվար, 1906, էջ 27:*

[2] ***«Ազգ»,*** *№ 63, 11 հուլիսի 1908 թ.:*

[3] *Նույն տեղում:*

ները, հատկապես Հնչակը անգիջում քննադատություն ծավալեցին Դաշնակցություն-երիտթուրք գործարքի դեմ:

Թուրքերի ձեռնարկած համաժողովին մասնակցելը, նրանց հետ համերաշխվելը և փաստաթղթեր ստորագրելը դավաճանություն համարելով թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարի դրոշին, հնչակյանները Դաշնակցության քննադատությունը և ամբաստանությունները կենտրոնացնում էին չորս կետերի շուրջ. 1) Նա «միացեր է մեր արիւնը խմող թուրքերին, եղբայրացել մեր մայրերի, կանանց, երեխաների, մեր երիտասարդների արիւնովը մեր երկիրը ողողող մարդակերպ հրէշների հետ», 2) Ընդունել է միդհատյան սահմանադրությունը, որը ձեռնտու չէ հայերին, 3) Ջնջել և լքել է միջազգայնորեն ճանաչված Հայ դատը, այսինքն՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը և Մայիսյան ծրագիրը, 4) Թուրքերի հետ «ընդունել է արտաքին միջամտութեան ընդդիմանալու սկզբունքը»:

«Հնչակ» և «Երիտասարդ Հայաստան» պարբերականները, դատապարտելով երիտթուրքերի հետ Դաշնակցության գործարքը, դա համարում էին բացահայտ դավաճանություն հայկական ազատամարտին, որի արյունոտ ճանապարհին հայ ժողովուրդը հարյուր հազարավոր զոհեր է տվել:

Համաժողովի ընդունած որոշումները սուր քննադատության ենթարկեցին վերակազմյալ հնչակյանները: Նրանց տպագիր օրգան «Ազգը» գրում էր, որ Դաշնակցության կատարած քայլը աղետաբեր է Հայ դատի համար, քանի որ երիտթուրքերին հաջողվել է խաբել համաժողով ուղարկած նրա պատվիրակներին և սրանց ձեռքով կուսակցությունը կապել թուրք «հեղափոխականների» կառքին, ծառայեցրել նրանց քաղաքական նպատակներին[1]: Սուրեն Պարթևյանն «Ազգում» գրում էր. «Դիրքերը փոխուած չեն վեց տարի առաջ ինչպէս այսօր: Ահմէտ Բիզա կը յայտարարէ. «Մենք կը շարունակենք կողմնակից մնալ Սահմանադրական միապետութեան եւ Օսմանի արքայատոհմին պահպանումին: Մենք չենք ընդունիր ամենեւին օտար պետութիւններու միջամտութիւնը...: Մենք վար պիտի դնենք զէնքերը

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»****, № 52, 11 ապրիլի 1908 թ.:*

անմիջապէս որ Բարլամէնթը վերահաստատուի. այնուհետեւ մենք թշնամիներու պէս պիտի վարուինք բոլոր անոնց հետ, որոնք անջատողական դրօշակը պիտի պարզէին կամ պիտի ձգտէին վտանգել կայսրութեան քաղաքական միութիւնը...»: Միջազգային դաշնագիրներու եւ յանձնառութիւններու հիման վրայ՝ հայկական մասնաւոր բարեկարգութիւններու նուազագոյն պահանջովն «արտաքին միջամտութեան» մը ձգտելու նուիրագործուած ու միակ հնարաւոր ուղղութենէն հանդիսաւորապէս հրաժարելով, Դաշնակցութիւնը ո՛չ մէկ երաշխաւորութիւն ձեռք բերած կրնայ ըլլալ տաճկահայ ճակատագրին ո՛րեւէ ձեւի տակ հաւանական բարեփոխման համար. մինչդեռ անհաւանական չէ՛ որ արդէն ահագնօրէն աղէտակոծ ճակատագիրը աւելի վտանգուած ըլլայ այսպէսով»[1]:

Մի ուրիշ առիթով «Ազգը» նշում էր. «Այս տխուր ճշմարտութիւնը ստորացումի կ'ենթարկէ հայ ժողովուրդն ընդհանրապէս, եւ հայ կուսակցականը մասնաւորաբար: Այսօրուան հայ քաոսին մէջէն՝ հայ ազգին վերջնական բնաջնջումն սպառնացող վաղուան դաւի ուրուականին գիշերային չիլ աչքերը ու ծամածուռ դէմքն է որ արդէն իսկ կ'ուրուագծուի[ն]»[2]:

Վերակազմյալների մյուս օրգանը՝ «Ձայն հայրենեացը», սիզիփոսյան զուր տքնություն էր համարում դաշնակցականների «անպատուաբեր լարախաղացութիւնը» երիտթուրքերի առջև, որոնք երբեք չեն համակերպվի հայերին անգամ ամենասահմանափակ ինքնուրույնություն տալու մտքի հետ[3]:

Դաշնակցականների բռնած գործը ոչ միայն անմիտ, այլև չափազանց վտանգավոր էր համարում Արփիար Արփիարյանը: Նա համոզված էր, որ Փարիզի համաժողովը մի սարդոստայն է, որի մեջ ընկել է Դաշնակցությունը, միամտություն էր համարում երիտթուրքերի հանդեպ այդ կուսակցության ցուցաբերած վստահությունը: Արփիարյանը չեչտում էր, որ թուրք ժողովրդի միայն չնչին մասը կարող է հավանություն տալ երիտթուրքերի

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»****, № 46, 26 փետրվարի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 47, 7 մարտի 1908 թ.:*

[3] *Տե՛ս* ***«Ձայն հայրենեաց»*** *(Պոսթոն), № 482, 19 փետրվարի 1908 թ.:*

գործողություններին, որ Թուրքերի լայն զանգվածները նրանց ամենից առաջ ընկալում են որպես օսմանյան հայրենիքի դավաճանների: Հետևապես, երիտթուրքերի հետ Դաշնակցության գործակցությունը նոր աղետներով լի է հայության համար, որին այդ նույն Թուրք զանգվածները վաղուց համարում են «դաւաճան ազգ»[1]:

Ինչ վերաբերում է «չեզոք» մամուլին, ապա նրա թերթերն իրենց էջերում զետեղում էին համաժողովի մասին թե՛ նպաստավոր և թե՛ աննպաստ, իրարամերժ հոդվածներ: Այդ տեսակետից առանձնանում էր «Արեւելքը»[2]:

Արևմտահայ շատ գործիչներ գտնում էին, որ Դաշնակցության ղեկավարությունը համարյա ամբողջապես կազմված լինելով կովկասահայերից, երբեք չճանաչեց Թուրքերին, խորամուխ չեղավ նրանց ազգային առանձնահատկությունների մեջ, և հենց դա է պատճառներից մեկը, որ խաբվեց և դաշինքի մեջ մտավ երիտթուրքերի հետ[3]: Ամենից առաջ այդպես էին մտածում ազատականները:

Փարիզի համաժողովի որոշումների լուրը զարմանքով ու հիասթափությամբ էր ընդունել Արշակ Զոպանյանը: «Անահիտում» խիստ քննադատության ենթարկելով «Թուրք-դաշնակ գործարքը», նա մանկամտություն էր համարում կարծել, թե Թուրքերը երբևիցէ կհանդուրժեն հայությանը ազատ շնչելու իրավունք տալ: Մեծ մտավորականը համաժողովի ընդունած հայտարարագիրը համարում էր թղթի կտոր, որը միայն վնասակար պատրանքներ կառաջացնի հայ զանգվածների մոտ և կթուլացնի Հայկական դատը հետապնդելու հայկական հեղափոխական կազմակերպությունների պայքարի կամքը: Նա գրում էր. «Փարիզ գումարուած Թրքо-դաշնակցական Քոնկրէն այնքան ցաւ պատճառեց ինծի ... Փարիզի վերջին Քոնկրէին մէջ սպաննուեցաւ, կամ գէթ սպանման ճամբուն մէջ դրուեցաւ բան

---

[1] Տե՛ս **«Լուսաբեր»,** № 477, 30 Հունվարի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Արեւելք»**, № 7011, 27 Հունվարի 1909 թ.:

[3] Տե՛ս **Լեւոն Զորմիսեան,** Համայնապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, էջ 489:

մը որ գեր ի վեր է ոեւէ հայ անհատէ, այն է՝ Հայկական Դատը: «Օսմանեան պետութեան ընդդիմադիր տարրերու Քոնկրէս»-ը Ժէօն-Թիւրքերու համար ընդհանրապէս եւ Ահմէտ Ռիզային համար մասնաւորապէս՝ յաղթանակ մըն է, եւ Դրօշակեան կուսակցութեան ապագայնական խաթարման վերջին դրուագը: Թրքահայ հասարակութեան քաղաքական ազատագրութիւնը ձեռք ձգելու միակ նպատակով հիմնուած այդ կուսակցութիւնը այս Քոնկրէսին մէջ ինքզինքն ի հանդէս բերաւ իբր Օսմանեան պետութիւնը վերականգնելու, Թուրք ժողովուրդին հայ արիւնով աղարտուած վարկը բարձրացնելու եւ բայա ազգութեանց պատմական ինքնուրոյնութիւններն Օսմանեան խորհրդարանի մը քուրային մէջ հալեցնելու նպաստող մարմին մը[1]: ... Արաբները, ալպանացիք եւ մակեդոնացիք մերժած են մասնակցիլ, միմիայն հայ Դրօշակեաններն են որ խորհրդակցած են Ժէօն-Թիւրքերուն հետ ու համաձայնած են՝ Ահմէտ Ռիզայի զուտ Թրքական ծրագրին վրայ»[2]:

Համաժողովում ոչ մի խոսք չէր եղել միջազգային դաշնագրերի և պայմանագրերի գործադրության մասին: Հենց դա էր, որ ուզում էր Ահմեդ Ռիզան: Դաշնակցությունը փաստորեն հրաժարելով միջազգային դաշնագրերի գործադրության գաղափարից, ուժեղացնում էր երիտթուրքերի դիրքերը, որոնց պայքարի հիմնական նպատակներից մեկը Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի մեկընդմիշտ ջնջումն էր: «Այն օրը,- գրում էր Զոպանյանը,- որ Դաշնակցութեան «հայ» ոյժերուն աջակցութեան չնորհիւ՝ Թրքական արդի ռէժիմը տապալի եւ Սահմանադրութիւն մը հաստատուի, Ժէօն-Թիւրքերը ո՛չ մէկ ազգի գոյութիւն պիտի ընդունին Տաճկաստանի մէջ բացի Օսմ. ազգէն, եւ նոյն իսկ հայ արիւնով հաստատուած այդ Սահմանադրութիւնը պիտի իբր զէնք գործածեն «Հայկական Դատը» վերջնապէս սպաննելու համար...»:

Ինչո՞ւ Դաշնակցությունը 1907-ին գնաց այդ քայլին, երբ ազատական օսմանցիների 1902 թ. Փարիզի համաժողովում նրա

---

[1] **«Անահիտ»**, № 1-4, հունվար-ապրիլ, 1908, էջ 44:

[2] Նույն տեղում, էջ 45:

գլխավոր պատգամավոր Սիսլյանը (Ավետիս Ահարոնյան:- Հ. Ս.) ասել էր, թե «երիտթուրքերի մեջ կա մեկը, որի հետ հայերը երբեք չպետք է համաձայնվեն և դա Ահմեդ Ռիզան է»:

Ահմեդ Ռիզան 1902-1907 թթ. չէր փոխվել, իր հայացքներում մնացել էր նույնը, բայց փոխվել էր Դաշնակցությունը: Տարվելով սոցիալիստական գաղափարներով, Թուրքիայի հայության ազատագրության նպատակով ստեղծված այդ կուսակցությունը, հիմա «ազգ», «ազգասիրություն», «ազգային ուրույն կյանք», «ինքնավարություն» հասկացությունները դիտում էր որպես հնոտի: Հայ, թուրք, քուրդ, բոլորն էլ մարդ են, պետք է պայքարեն ամբողջ երկրի համար, այլ ոչ թե մեկ ցեղի: Պետք է ներկա վարչակարգը տապալել և ազատության պայմաններ ստեղծել կայսրության բոլոր ժողովուրդների համար:

Ինչպես նշել ենք, երիտթուրքերի հետ դաշնակցելու Դաշնակցության երկրորդ պատճառն այն էր, որ կուսակցությունն այլևս չէր հավատում, թե եվրոպական միջամտությունը կարող է լուծել Հայկական հարցը: Այդ մոտեցումը թերևս արդարացում ուներ, բայց այդ դեպքում կուսակցությունն ինչո՞ւ հանձն չի առնում, որ նախորդ 17 տարիների իր գործունեությունը սխալ է եղել,- հարց էր տալիս Զոպանյանը: Ապա՝ «Գալով (հայկական:- Հ. Ս.) յեղափոխական կուսակցութեանց միութեան հարցին, զայն այլեւս վիժած կարելի է նկատել, յորմէ հետէ Դաշնակցութիւնը ոչ միայն մերժեց Մուրատի առաջարկը, այլ եւ Ժէօն-Թիւրքերուն հետ համաձայնելով՝ խրամատը վերջնապէս լայնցուց»[1]:

«Անահիտի» խմբագիրն այնուհետև հետևյալ խորհրդածություններն էր անում. «Ցարդ գէթ սա սփոփանքն ունէինք, թէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կ'ընդունէր որ «հայ» կը նշանակէ ժողովուրդ մը, ազատութեան, քաղաքակրթութեան ձգտող, եւ այդ ձգտումին համար խորտակուած եւ բզքտուած, ու «թուրք»՝ կը նշանակէ զինուորական ոյժով՝ իրմէ քաղաքա-

[1] **«Անահիտ»,** № 1-4, հունվար-ապրիլ, 1908, էջ 47:

կրթապէս բարձր ժողովուրդներու տէր դարձած բիրտ տարր մը, որ ջարդելէ, ամայացնելէ ուրիշ բան չէ՛ ըրած պատմութեան մէջ. ասիկա ո՛չ միայն սփոփանք մըն էր, այլ առհաւատչեայ մը մեր դատին օր մը չէ օր մը դրական յաջողման: Այդ հիմունքին վրայ է որ մեզ բախտակից ուրիշ ազգութեանց դատը կարողացած է յանգիլ յաջողման: Արդ, այս Քոնկրէն, հայ և թուրք միահամուռ յայտարարութեամբ, կը հռչակէ թէ թուրքն ու հայը հաւասարապէս կը տառապին, հաւասարապէս կը ձգտին ու կը մաքառին՝ ընդհանուր արդարութեան եւ ազատութեան ըէժիմ մը հաստատելու Տաճկաստանի մէջ: Ի՞նչ կը մնայ մեզի: Ոչի՛նչ: Թուրքը ուրեմն քանդողը, ջարդողը չէ՛ այլեւս, ինչպէս ըսին մենէ առաջ՝ յոյները, սերպերը, պուլկարները, մարոնիթները, կրետացիները (եւ այդ ըսելով՝ եւ ատոր համար պայքարելով ազատագրուեցան), այլ մեզի պէս ազատախոհ ու մարտիրոս տարր մը, միակ անձի մը՝ զոհ, եւ մեզի չափ արժանի տիեզերական համակրութեան...»[1]:

Հարկադրված ենք, դժբախտաբար, խոստովանելու, թե մեծ հայի այս բոլոր նախատեսությունները, ողջամտությունից հղացած այս մարգարեությունները լիուլի իրականացան հաշված ամիսներ հետո:

Ռուսահայ ազատականների մեծ մասը նույնպես, թեև ոչ հետևողականորեն, դատապարտում էր թուրք «հեղափոխականների» հետ Դաշնակցության կնքած դաշինքը: «Մշակը» գտնում էր, որ թուրքահայերի ազատագրությունը թուրքերի ձեռքով անհող ուտոպիա է առանց եվրոպական տերությունների ազդու միջամտության[2]: Ազատական գործիչներից մեկը թերթի մի ուրիշ համարում նշում էր. «Թէ որքա՞ն իրագործելի է ընկեր Հասոյի եւ ընկեր Հասանի հետ միասին խորտակել չար սուլթանի գահը, դա ապագան շատ շուտով կապացուցանի: Ես անձամբ դեռ չեմ հաւատում, որ քուրդ Հասոն ու թուրք Հասանը

---

[1] ***«Անահիտ»,*** *№ 1-4, հունվար-ապրիլ, 1908, էջ 47:*

[2] ***Տե՛ս «Մշակ»,*** *№ 12, 17 հունվարի 1908 թ.:*

հայ գիւղացու հետ պիտի Հայաստանում ռեֆորմներ մտցնեն մօտակայ ապագայում»[1]:

Փաստորեն, 1907 թ. դեկտեմբերի վերջից Դաշնակցությունը չատերի համար անսպասելի կտրուկ շրջադարձ կատարեց թուրքահայոց ազգային-ազատագրական պայքարից: Դաշինք կնքելով թուրք հասարակությունում գործող ամենաազդայնամոլ ու ամենառազմատենչ հակահայկական ուժի հետ, Դաշնակցությունը դրանով իսկ դուրս եկավ խաղից:

Երիտթուրք-Դաշնակցություն համաձայնությամբ ըստ էության ավարտվեց օսմանյան բռնակալության դեմ թուրքահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական փուլը: Այդ ժամանակաշրջանում Դաշնակցությունը Հայաստանի ազատագրության զոհասեղանին էր դրել իր շարքերում դաստիարակված հազարավոր քաջազուն հայորդիների կյանքը: Նրան հավատում եւ նրա կոչերի հետևից դեպի կենաց ու մահու կռվի էին գնում Հայրենիքի նվիրյալ զավակները: Նրա անվան հիշատակումն իսկ սոսկում էր առաջ բերում հայության թշնամիներից չատերի մոտ: Եվ ահա այժմ, ի զարմանս հայ հասարակության, այդ նույն կուսակցությունը մի օրից մյուսն անսպասելիորեն հայտնվում է հայ ժողովրդի դաժան ու նենգ ոսոխի՝ Իթթիհադի կողքին և կամավոր դառնում նրա կամքի հլու կատարողը: Շատ չանցած, նա ստիպված էր լինելու լուռ ու մունջ տանելու ոխերիմ թշնամու բոլոր անօրինությունները: Սկսվեց Դաշնակցության պատմության նոր՝ բացառապես Իթթիհադին ուղղված խնդրանք-պաղատանքներով հայության համար գոյության իրավունք մուրալու փուլը, որը տևեց մինչև 1915 թ.՝ Հայոց ցեղասպանության նախօրյակը: Այդ ամբողջ ժամանակաշրջանում նա ստիպված տարավ ոխերիմ թշնամու անօրինությունները: Երկփեղկվեց հայերի ազատագրական պայքարի ճակատը: Հանուն միդհատյան սահմանադրության պահպանման և «թուրքական ընդհանուր հայրենիքի բարօրության», Դաշնակցությունը հրաժարվեց չարին դիմադրելու մարտավարու-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»,*** *№ 110, 21 մայիսի 1908 թ.:*

թյունից և, դրանով իսկ, Թուրքահայության ազգային իրավունքների գաղափարը զոհվեց գոյություն չունեցող «օսմանյան միասնական ազգի» սին գաղափարին: Դրա հետևանքն եղավ Թուրքահայ ժողովրդի զգոնության բթացումը և դիմադրողականության անկումը: Մի կողմ նետվեց ժողովրդի զինման գաղափարը, ցրվեցին կուսակցության ազդեցության տակ գտնվող զինված խմբերը և, ի վերջո, Թուրքահայությունն անօգնական ու անպաշտպան հայտնվեց իթթիհադական գազանի բացված երախի առջև*:

---

* Առաջ անցնելով նշենք, որ Թուրքերն ու քրդերը 1915 թ. հայերի ցեղասպանությունը չէին կարող իրականացնել, եթե վերջիններս կազմակերպված լինեին, եթե հայ ազգին ղեկավարող ուժերը կարողանային զինել ժողովրդին, այլ ոչ թե եղած զենքերը հանձնեին Երիտթուրք-Դաշնակցություն դաշինքը կնքելուց ընդամենը կես տարի անց Թուրքիայում իշխանության գլուխ անցած Իթթիհադին: Այո՛, փոքր ազգերը ենթակա են ավելի մեծ վտանգների, քան մեծերը: Բայց ոչ մեծաթիվ ազգերը նույնպես կարող են անպարտելի լինել, եթե ի վիճակի են լինում զորահավաքի ենթարկել ուժերը և զենքով կռիվ տալ իրենց իրավունքների համար: Պարտվելու դեպքում նույնիսկ՝ այդպիսի հավաքականությունները վայելում են հակառակորդի հարգանքը և զգույշ վերաբերմունքը: Հեռու չգնանք, մեր օրերում դրա ցայտուն վկայություններից մեկը չեչեն ժողովրդի ապստամբությունն էր Ռուսաստանից անկախանալու համար: Մեկ միլիոնից էլ պակաս թիվ կազմող չեչենները մարտադաշտերում մի քանի տարի արյունալի կռիվներ մղեցին իրենցից 150 անգամ ավելի բնակչություն ունեցող Ռուսաստանի բանակների դեմ, և չնայած կռվում, ի վերջո, պարտվեցին, բայց, որպես ինքնուրույն էթնոս, մնացին անպարտելի ու հպարտ: Բայց, ցավոք, այդպես չեղավ Թուրքահայության պարագայում, որը բզկտվում էր ներքին հակասություններից: Եթե հայկական կուսակցությունները ոչ թե անզիջում հանդես գային միմյանց դեմ, տարվեին փոխադարձ սպանություններով, այլ սերտորեն համախմբվեին ժողովրդի ազատագրության գաղափարի շուրջ և մի բոունցք կազմեին, այդ դեպքում, անկասկած, հայությունն անպարտելի կլիներ: Վերջապես, 2-2.5 միլիոն Թուրքահայությունը կարող էր կռվի դաշտ հանել տասնյակ հազարավոր զինված մարդկանց, և, այդ պայմաններում, դարավոր թշնամին հազիվ թե համարձակվեր դիմել այնպիսի չտեսնված չարագործության, ինչպիսին ցեղասպանությունն էր, որի ընթացքում ոչ միայն միլիոնավոր հայ մարդիկ զրկվեցին կյանքից, այլև անարգվեցին նրանց պատմությունը, մշակույթը և ազգային ինքնությունը:

1907 թ. վերջին օրերին օսմանյան ընդդիմադիր ուժերի Փարիզի համաժողովում հիմք դրված երիտթուրքեր-Դաշնակցություն համագործակցության հարցն այսօր էլ վիճաբանության նյութ է:

Դաշնակցության արդի պատմաբաններն ու գաղափարախոսները փորձում են արդարացնել կուսակցության ղեկավարության կատարած ճակատագրական քայլը: Նրանք չեչտում են, որ տվյալ ժամանակաշրջանում Թուրքահայության համար ստեղծված անտանելի կացության պայմաններում կատարվածը հերթական մի փորձ էր նպաստելու Օսմանյան կայսրության ժողովուրդների համատեղ պայքարի կազմակերպմանը՝ հայությանը պատուհասող աբդուլհամիդյան բռնապետության տապալմանը: Միաժամանակ գտնում են, որ համաժողովի ընդունած փաստաթղթերը, տարածվելով Թուրքերի միջավայրում, նրանց մոտ առաջ էին բերել նոր տրամադրություններ (որքան էլ մակերեսային, սահմանափակ ու ժամանակավոր), որոնք որոշ չափով մեղմեցին հայ և Թուրք Թշնամությունը՝ արթնացնելով համերաշխության և համագործակցության ոգի:

Հարցի վերաբերյալ հակառակ կարծիք ունեցողներն այսօր էլ գտնում են, որ այդ տխրահռչակ գործարքը մեծ աղետներ է բերել Թուրքահայ ժողովրդի ազատագրության գործին:

*Պատմական հեռավորությունից բազմակողմանի ուսումնասիրելով օսմանյան ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովի նյութերը և համաժողովին նախորդած ու հաջորդած դեպքերը, սույն աշխատության հեղինակը հակված է ճիչտ համարելու վերջին տեսակետը: Իրենց գոյության ընթացքում ինչպես բոլոր մարդ-անհատները, այնպես էլ կառավարություններն ու կուսակցությունները Թույլ են տալիս բացթողումներ ու սխալներ: Բայց սխալվել այդ աստիճա՞ն՝ ինչպես եղավ Դաշնակցության պարագայում: Հետագա մի քանի տարիներին դա իր հետևից բերեց նորանոր խոտորումներ և աղետներ, որոնք խորացրին Թուրքահայության կյանքի անելանելիությունը: Գործած **մեծ սխալը**, հիրավի, ճակատագրական եղավ ոչ միայն իր՝ Դաշնակցության, այլև ողջ հայության համար՝ նրա պատմության օրհասական պահին: Պատահական չէ, որ այդ գործարքից ավելի*

քան չորս տարի անց, զգալով իր կատարած քայլի աղետալի լինելը, Դաշնակցությունն ստիպված եղավ խզել իր կապերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ: Բայց այդ քայլն, ավա՜ղ, արդեն ուշացած էր...

ՀԱՅԵՐԻ ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Երիտթուրքերի և դաշնակցականների 1907 թ. դեկտեմբերին Փարիզում ձեռք բերած համաձայնությունը, բնականաբար, հետագա զարգացում ստացավ: Ընդ որում՝ միմյանց նկատմամբ երկու կողմերի վերաբերմունքը համարժեք չէր, այլ՝ տարաբնույթ ու տարասեռ: Դաշնակցությունն անկեղծորեն էր փարվել դաշինքին, երիտթուրքական կուսակցությունը՝ կասկածանքով ու անվստահությամբ:

Դաշնակցության մամուլի օրգանները թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում ու արտասահմանում փորձում էին մի կողմից երիտթուրքերի և ընդհանրապես թուրքական հասարակության մեջ վստահություն սերմանել ՀՅԴ-ի և առհասարակ թուրքահայության նկատմամբ, մյուս կողմից՝ աստիճանաբար փոխել կամ գոնե մեղմել թուրքական պետության, որպես իրենց ոխերիմ թշնամու, մասին հայերի ունեցած համոզումը, որն ամրապնդվել էր վերջին երեք տասնամյակներին:

Դաշնակցության չատ գործիչներ մամուլով ու բեմերի վրայից ջանք չէին խնայում հայությանը տարհամոզելու, որ թուրքերը և թուրքական պետությունը անուղղելի ջարդարարներ չեն, և որ, ըստ էության, թուրքական տիրապետության երկար դարերի ընթացքում հայերը չեն ենթարկվել ազգային ու կրոնական հալածանքների, առավել ևս՝ զանգվածային կոտորածների, ինչպիսին ենթարկվել են կայսրության ուրիշ ժողովուրդներ: Ավելին, դաշնակցական մամուլը բացառություն և ընդհանուր կանոնից չեղում էր համարում հայության 1895-1896 թթ. սպանդը:

Բոստոնի «Հայրենիք» թերթը տպագրել էր «Թուրքիոյ կոտորածները» վերնագրով նյութը, ուր աղյուսակի միջոցով տվել

էր այդ կոտորածների պատկերը 19-րդ դարում: Դրանից երևում էր, որ ոչ Թուրք քրիստոնյա ժողովուրդներից ամենաքիչը տուժել են հայերը[1]:

Տարի	Տեղ	Ազգ	Թիվ
1822	Սամոս կղզի	հույներ	50.000
1823	Կիպրոս	հույներ	24.000
1836	Կ. Պոլիս	ենիչերիներ	25.000
1850	Մուսուլ	ասորիներ	10.000
1860	Լիբանան-Դամասկոս	մարոնիթներ	12.500
1876	Բուլղարիա	բուլղարներ	18.000
1877	Ալաշկերտ	հայեր	1.450
1879	Բայազետ	հայեր	1.600
1881	Եգիպտոս	քրիստոնյաներ	800
1892	Մուսուլ	եզդիներ	3.500

Թերթի բերած տվյալներից երևում է, որ 1822 թվից մինչև 1877 թիվը Օսմանյան կայսրության մեջ հայերի ջարդեր չեն եղել: Նույն ժամանակ կոտորածների զոհ են գնացել 74.000 հույներ, 18.000 բուլղարներ, 12.500 մարոնիթներ, 10.000 ասորիներ և այլք: Այսինքն՝ եզրակացվում էր, որ մինչև 1877 թվականը Թուրքիայում միանգամայն անվտանգ էին հայերի կյանքն ու գույքը:

Եվ միայն Սասունի 1894 թ. ապստամբությունից հետո պատկերն ամբողջովին փոխվում է և արդուլհամիդյան զուլումի հիմնական զոհերը դառնում են հայերը[2]:

Թերթն ընթերցողին բերում էր այն եզրահանգման, որ երբ կայսրության քրիստոնյա ժողովուրդները հնազանդ են եղել

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 17 (459), 25 ապրիլի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

օսմանյան իշխանություններին՝ ապրել են խաղաղության մեջ, իսկ երբ ընդվզել են նույն իշխանությունների դեմ՝ մեծապես տուժել են, մարդկային մեծ կորուստներ ունեցել:

Այդ ամենից ելնելով՝ Դաշնակցության գործիչները գտնում էին, որ այսուհետև հայերը պետք է իրենց ճակատագիրը կապեն Թուրք ժողովրդի ճակատագրի հետ, այլևս որևէ քայլ չանեն հակառակ Թուրք կառավարության:

Բայց Դաշնակցության այս նոր մարտավարությունը պաշտպանություն չէր գտնում հայ զանգվածների մոտ: Հակառակ տեսակետ ունեցողները Դաշնակցության գործիչներին հիշեցնում էին, որ ավելի քան մեկուկես տասնամյակ չարունակ իրենց կուսակցությունը հակաթուրքական պայքարի քարոզիչ ու կազմակերպիչ է եղել, իսկ այժմ անհասկանալիորեն շրջվել է տրամագծորեն հակառակ ուղղությամբ՝ ժողովրդական գիտակցության և հոգու մեջ ավերելով իր իսկ ձեռքով սերմանած պայքարի գաղափարները:

Մամուլը հիշեցնում էր, որ մինչև 1877 թ. և դրանից հետո մինչև 1896 թ. Թուրքիայում հայերի անվտանգ կյանքի մասին խեղաթյուրված տվյալները շատ հեռու են իրականությունից: «Հայրենիք» թերթի այդ հոդվածից մի քանի ամիս առաջ ՀՅ դաշնակցության հրատարակությամբ տպագրվել էր մի գրքույկ, ուր զետեղված էին եվրոպացի նշանավոր պետական, հասարակական, քաղաքական, գիտական գործիչների վկայությունները Թուրքիայի հայության պարբերաբար կոտորածների մասին: Այնտեղ տպագրված էին զայրալից կարծիքներ, որոնց հեղինակներն էին՝ Ռիչչիոթի Գարիբալդին, Ամիլկար Զիպիանին, Ժորժ Ֆավոնը, Պիեռ Քիյառը, Յուրպեն Կոհիեն, Ժան Ժորեսը, Իլզե Ֆրապանը, Էլիզե Ռըքլյուն, Էդգար Միլհոն, Պոլ Էրրերան, Անատոլ Լբռուա Պոլեոն, Զեզարե Լոմբրոզոն, Էքիլ Լորեն, Ժորժ Կլեմանսոն, Ֆրանսիս դը Պրեսանսեն, Էոժեն դը Ռոբերտին, Էմիլ Վանդերվելդեն, Կոնստան դ'Էգուրնելը: Տասնամյակներ ի վեր հայության արյունը ոթելու համար բոլոր այս հեղինակները անարգանքի սյունին էին գամում Թուրք և քուրդ բարբարոսներին: Նրանք նաև համոզված էին, որ Իթթիհադ-Դաշնակցություն անբնական դաշինքը վաղ թե ուշ փլուզվելու է, բայց մինչ

այդ հասցնելու է բաղում անդառնալի աղետների դուռ բացել հայության համար:

Փարիզի համաժողովից անցել էր ընդամենը մեկ ամիս, երբ երիտթուրքերի «Մեշվերեթ» թերթը 1908 թ. փետրվարի 1-ի համարում առաջին սպառնալիքն ուղղեց Դաշնակցության դեմ՝ հարձակում գործելով նրա ֆինանսավորած "Pro-Armenia" (Փարիզ) պարբերականի վրա: Վերջինս գրել էր, թե հայտնի որդեգրած նախկին գործելակերպը, այն է՝ հետևողական, անդիջում պայքարը սուլթանական կարգերի դեմ, Թուրքիայի պայմաններում նրանց որդեգրած մարտավարությունը միանգամայն արդարացի էին, որովհետև հիմնված էին փորձառության վրա: Ի պատասխան այս տեսակետի, «Մեշվերեթը» սպառնալից չեշտել էր, որ Փարիզի համաժողովի բոլոր մասնակիցները, որոնք համատեղ ստորագրել են այնտեղ ընդունված փաստաթղթերը, պետք է խաչ քաշեն իրենց անցյալ գործունեության վրա և եռանդով լծվեն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերի իրականացմանը[1]: Թերթն ավելորդ չէր համարում նաև հիշեցնել, որ Թուրքիայի բոլոր այլացեղ ու այլակրոն ժողովուրդների բախտն անխզելիորեն կապված է Թուրք ժողովրդի ճակատագրի հետ և որևէ մեկի մոտ չպետք է կասկած լինի, որ Թուրքերին է տրված որոշելու Օսմանյան կայսրության ապագան[2]:

Ահա՛ այսպես:

Իհարկե, հայ ժողովրդի ճակատագիրը կապված էր Թուրքերի հետ, բայց կապված էր այնքանով, որչափով որ իրական է երկու ժողովուրդների բնակությունը միևնույն երկրում: Թուրք ժողովրդի հետ գործակցությունն անխուսափելի էր, երբ խնդիրը վերաբերում էր արդարության, հավասարության և երկիրը հարստացնելու գործին: Բնակակից ժողովուրդները եղբայրներ են, բայց մինչև այն սահմանը, որ մեկը չի կաշկանդում մյուսի ազատությունն ու առաջադիմությունը:

---

[1] Տե՛ս **«Ազգ»**, № 49, 21 մարտի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԱՆԱՐԳ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արփիար Արփիարյանը հայ նոր գրականության ամենակարկառուն գործիչներից էր՝ տաղանդաշատ ու բազմարդյունք: Նրա գրչակիցներին ամենից առաջ զարմացնում էր գրողի ու հրապարակախոսի գրական բերքի առատությունը: Նրա գրչի տակից ուղղակի հորդում էր ստեղծագործական անսպառ ավյունը: Հայ պատմագրական և գեղարվեստական մշակույթի պատմության մեջ իրենց արարումների ծավալներով առանձնանում են երեք խոշոր դեմքեր՝ Ղևոնդ Ալիշանը, Երվանդ Օտյանը և Արփիար Արփիարյանը:

Արփիարյանի գրականության արժեքն, այնուամենայնիվ, ոչ թե ծավալի, այլ որակի մեջ է: Նրա քրոնիկներն իսկական գլուխգործոցներ են: Անանման հրապույր ունեն երգիծական գրվածքները, որոնք ուրույն տեղ են զբաղեցնում հայոց երգիծական գրականության մեջ: Արփիարյանական ստեղծագործությանն առանձնակի փայլ են հաղորդում «Կարմիր ժամուց» և «Ոսկի ապրնջան» մեծարժեք վեպերը: «Արփիարեան միշտ եղած է աղքատ, տերվիշի կեանքով մը ապրած, անշահախնդիր, իրեն միակ հրայրք ունենալով գրականութիւնը,- գրել է Արշակ Զոպանյանը:- Ու իր ընդարձակածաւալ ու բազմատարր արտադրութեանց մէջ՝ ազգասիրութիւնը ակնյայտնի կը տիրէ, ամէն կասկածէ ու վեհէ վեր»[1]:

Իսկ Արփիարյանի՝ իբրև անզուգական հրապարակախոսի և ազգային գործչի գործունեությունը, Արշակ Զոպանյանի բնորոշմամբ, «նորէն պատկառելի է թափուած ճիգի ընդարձակութեամբ...»[2]:

1852 թ. Սամսոնում ծնված Արփիարը, դեռ պատանի, տեղափոխվում է Կ. Պոլիս և ընդգրկվում հասարակական գործունեության մեջ: Խանդավառ ու հայրենասեր երիտասարդը մասնակցություն է ունենում բոլոր կարևոր ձեռնարկներին և չուտով

---

[1] **«Անահիտ»,** № 1-4, հունվար-ապրիլ, 1908, էջ 44:

[2] Նույն տեղում:

հայտնի է դառնում մայրաքաղաքի հայ քաղաքական կյանքում[1]:

Ընդամենը քսան տարին նոր բոլորած երիտասարդին նկատում են Մինաս Չերազն ու Մկրտիչ Փորթուգալյանը և նրան ընդգրկում ազգային կրթության խթանման համար ստեղծված «Արարատյան ընկերության» մեջ, որը որոշ ժամանակ անց միավորվում է նմանօրինակ երկու հաստատությունների հետ և ստեղծվում է հայտնի «Միացյալ ընկերությունը»: Կազմակերպության ղեկավար կազմում ընդգրկվում է նաև Արփիարյանը[2]:

Շուտով Արփիարյանը դառնում է Կ. Պոլսի 80-ական թվականների մտավորական մեծ շարժման ամենակարևոր դեմքերից մեկը, միաժամանակ հայտնի է դառնում որպես փայլուն գրիչ ունեցող հրապարակագիր, որի տաղանդի հղկման գործում վճռական դեր է խաղում 1884 թ. հիմնադրված «Արեւելք» թերթը: Սկսվում է նրա հրապարակագրական բուռն գործունեությունը, որը տևում է շուրջ 25 երկար տարիներ: Արփիարյանը «Հրազդան» և «Սկեպտիկ» ծածկանուններով հարյուրավոր հոդվածներ է տպագրում 80-90-ական թվականներին Պոլսում հրատարակվել սկսած թերթերում, իսկ կովկասահայ մամուլում հանդես է գալիս «Հայկակ» ծածկանունով՝ ռուսահայության ուշադրությունը բևեռելով ու լարված պահելով թուրքահայոց կյանքի վրա: Նա շատ էր տպագրվում հատկապես «Մշակում» և դարձել էր թերթի համբավավոր խմբագիր Գրիգոր Արծրունու սիրելին[3]:

Այդ ժամանակաշրջանում Արփիարյանը տարբեր տարիների խմբագրել է «Արեւելքը», գրական «Հայ հանդէսը», «Մասիսը», «Հայրենիքը»: Հատկապես վերջինիս ղեկը նա վարել է փայլուն կերպով. չնայած թուրքական խիստ գրաքննությանը, նա կարողանում էր թուրքահայությանը խանդավառել ապագայի լավատեսությամբ:

Նշված լրագրերում Արփիարյանը տպագրում է նաև իր գե-

---

[1] Տե՛ս **Մանուկ Գ. ՃԻԶՄԷՃԵԱՆ**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց.1890-1925, էջ 123:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս նույն տեղում:

դարվեստական ստեղծագործությունները՝ մեծապես նպաստելով ազգային գրականության վերածնության գործին:

Բայց նույնիսկ գրական-հրապարակագրական բուռն գործունեությունը չէր բավարարում Արփիարյանի անսահման եռանդին: Միայն գրչի ասպարեզը նրա համար այլևս նեղ էր հագուրդ տալու իր ազգային ձգտումներին, ուստի նա մխրճվեց քաղաքականության մեջ՝ դառնալով հնչակյան շարժումների աչքի ընկնող գործիչներից մեկը Կ. Պոլսում:

Բայց քաղաքական գործունեության առաջին իսկ քայլերը հանդիպեցին դաշնակցական-հնչակյան անզիջում հակամարտության հարվածներին: Զհանդուրժելով հայ քաղաքական կյանքում մենատիրություն հաստատելու ՀՅ դաշնակցության ձգտումը, Արփիարյանը սուր հոդվածներով սկսեց քննադատել նրա գործելակերպը: Դաշնակցականները որոշեցին մեկընդմիշտ լռեցնել նրան և 1895 թ. դեկտեմբերի 27-ին Պոլսում կատարեցին նրա առաջին ահաբեկումը[1]: Անդրադառնալով այդ դեպքին, ՀՅԴ նշանավոր գործիչներից Մալխասը (Արտաշես Հովսեփյան) գրել է. «Ու օր մը դաշնակցական տեռորիստի դաշոյնի հարուածներու տակ վիրաւոր ինկաւ արեւմտահայերու տաղանդաւոր հրապարակագիրը»[2]: Մալխասը դա արդարացի էր համարում, քանի որ, նրա ասելով, վերակազմյալ հնչակյան կուսակցության Կ. Պոլսի ղեկավար եղած ժամանակ ձերբակալվելով, Արփիարյանը բանտում, իբր, «իրեն յատուկ թուլամորթութեամբ, կաչին փրկելու համար կանգ չէր առներ այնպիսի ցուցմունքներ ընելու, որոնք հաւասար էին մատնութեան»: Թեև Մալխասը խոստովանում էր, որ «այս տոքումանի (Արփիարյանի գրավոր ցուցմունքի:- Հ. Ս.) վաւերականութեան մասին կասկածներ մինչեւ այսօր ալ գոյութիւն ունին», բայց «նոյնիսկ Արփիարեանի մօտիկ ընկերները նման խոստովանութիւն մը (հակապետական գործողությունների մասին իբր բանտում արած խոստովանությունը:- Հ. Ս.) անկարելի չեն համարեր»[3]:

---

[1] Տե՛ս **Մանուկ Գ. ՃԻԶՄԷՃԵԱՆ**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց.1890-1925, էջ 124:

[2] **Մալխաս,** Ապրումներ, հատ. Ա, Պոսթրն, 1931, էջ 78:

[3] Նույն տեղում:

Եվ եթե մարդուն ներկայացված մեղադրանքի իսկությունը լուրջ կասկածներ էր հարուցում, ապա բարոյականության ո՞ր օրենքով դաշնակցականները նրան հետապնդում էին՝ կյանքից զրկելու նպատակով, այն մարդուն, որն այնքան արժեքավոր էր հայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի համար:

Այս առաջին անգամ Արփիարյանը, բարեբախտաբար, կենդանի մնաց:

Երբ 90-ական թվականների հայկական ջարդերից հետո սուլթան Աբդուլ Համիդը շարունակում էր հայ մտավորականության հետապնդումները և բանտարկությունները, Արփիարյանը 1896 թ. անցնում է Եվրոպա, ուր ապրում է մի քանի տարի: Սկզբում նա հաստատվում է Փարիզում, ապա անցնում է Լոնդոն: Այստեղ նա հիմնադրում և խմբագրում է «Մարտ» անունով պարբերականը, որի էջերում բարձրացնում է այդ օրերի հայկական ճգնաժամից դուրս գալու հարցերը:

1890-ական թվականների կեսերին Հնչակն ապրում էր իր առաջին խոշոր ճգնաժամը: Կուսակցությունը պառակտվեց և նրա շարքերից հեռացած մի քանի ղեկավար գործիչներ, այդ թվում Ա. Արփիարյանը, 1895 թ. սկզբին Լոնդոնում հիմնադրեցին վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը, որը շուտով հրատարակեց իր պաշտոնաթերթը՝ «Նոր կեանքը»՝ խմբագիր ունենալով Արփիարյանին: Նոր կուսակցության ղեկավարների թվում լինելով ամենատաղանդավորը և տեսականորեն ամենապատրաստվածը, նա դարձավ դրա գլխավոր տեսաբանը՝ սաստիկ քննադատության ենթարկելով հին Հնչակին, հատկապես նրա «սոցիալիստական» գործունեությունը Թուրքիայում:

Այսպիսով, մեծ գրողը դարձել էր երկու հայկական ազգային-հեղափոխական կուսակցությունների՝ ՀՅ դաշնակցության և ՍԴ Հնչակյան կուսակցությունների ղեկավարների աչքի փուշը:

Հնչակյանները նույնպես, որպես Արփիարյանի հետ հաշիվներ մաքրելու միջոց, ընտրել էին սպանությունը:

Դա այն ժամանակ էր, երբ Արփիարյանը հիասթափվել էր քաղաքական գործունեությունից: Նա եկել էր այն համոզման, որ ոչ միայն Դաշնակցության ու հին Հնչակի, այլև Վերակազմ-

յալ հնչակի գործունեությունը շատ վտանգավոր է հայության համար, ուստի նրանք պարտավոր են վերաքննել իրենց անցած ուղին, դադարեցնել միմյանց դեմ պայքարը և իրենց ուժերը համատեղել թուրքահայ ժողովրդին ներկա ծանր կացությունից դուրս բերելու համար:

1901 թ. Արփիարյանը հեռացավ վերակազմյալ հնչակյան կուսակցությունից և Լոնդոնից մեկնեց Վենետիկ: Բազմաչխատ ու հոգնատանջ այդ մարդը արտասահմանում եղած բոլոր տարիներին ապրում էր չարքաշ կյանքով, ծայրահեղ աղքատության մեջ: Բարեկամներից մեկը հետագայում վերհիշել է, որ նրա ընթրիքը օրերով եղել է անչաքար թեյի մեջ թաթախած չոր հացի կտորը, որ նա ձյան թե անձրևի տակ շրջում էր թափթփուկ հին հագուստներով ու ծակծկված կոշիկներով[1]: Զնայած դրան, ծախսելով իր վերջին գումարները, նա Վենետիկում հիմնում է «Հայ հանդէս» անունով թերթը, որի կյանքը երկար չի տևում և ընդհատվում է երկրորդ մահափորձի պատճառով, որն այս անգամ կատարեցին հնչակյանները: Արփիարյանը, սակայն, այս անգամ էլ կենդանի մնաց:

Մտահոգ մեծատաղանդ գրողի ճակատագրով, Եգիպտոսի համախոհ գաղափարակիցները նրան Վենետիկից փոխադրեցին Կահիրե: Այստեղ նրա համար ստեղծվել էին աշխատանքի համեմատաբար բարենպաստ պայմաններ, շրջապատված էր հոգատար ընկերներով: Դա թույլ տվեց ամբողջովին նվիրվել իր սիրած գործին՝ հրապարակագրությանը:

Ստանձնելով «Լուսաբեր» և «Շիրակ» պարբերականների[*] խմբագրի պաշտոնը, շուրջ երեք տարի աշխատում էր օր ու գիշեր՝ չխնայելով իրեն:

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»****, № 57, 30 մայիսի 1908 թ.:*

[*] *«Շիրակ» ամսաթերթը մինչ այդ տպագրվում էր Ալեքսանդրիայում՝ Վահան Թեքեյանի և Միքայել Գյուրջյանի խմբագրությամբ, իսկ «Լուսաբերը» լույս էր տեսնում Կահիրեում՝ Վահան Քյուրքչյանի խմբագրությամբ: «Շիրակը» Կահիրե փոխադրելուց հետո երկու պարբերականների խմբագրի պաշտոնն ստանձնում է Արփիարյանը:*

Արփիարյանի սրտակից ընկեր Վահան Մալեզյանը վկայել է, որ «Հակառակ իր վտիտ մարմնին ու նուրբ ձայնին, ան քաջ էր հոգիով, բուռն եւ երբեմն յանդուգն»[1]: Իր արածի ճշմարտացիության նկատմամբ ունենալով անկոտրում հավատ, Արփիարյանը սուր գրչի ուժով, գաղափարական մարտիկի կրքով բարձրացնում էր հայկական կյանքի ամենասուր, ամենացավոտ հարցերը, երեւան հանում դաժան իրողություններ՝ վաստակելով նորանոր թշնամիներ ՀՅ դաշնակցության և ՍԴ հնչակյան կուսակցության շարքերից:

Կյանքի վերջին ամիսներին Արփիարյանը մոլեգին նվիրումով հրապարակ հանեց բազմաթիվ հոդվածներ, որոնք ընթերցողին զարմացնում էին դրանց հեղինակի մտքի խորությամբ, քաղաքական բարդ երևույթների վերլուծության և սթափ գնահատման տաղանդով: Նա ճշգրտությամբ կռահում էր դեպքերի հետագա զարգացման ընթացքը և զգուշացնում գալիք ահավոր վտանգներից:

Արփիարյանն անհաշտ դիրք բռնեց երիտթուրքեր-Դաշնակցություն գործարքի հանդեպ: Լինելով Դաշնակցության վաղեմի հակառակորդը, նա գտնում էր, որ այդ գործարքի կնքումը կուսակցության գործունեության ամենասև էջն է: Կնքած դաշինքի լուրն առնելուց հետո, ընդամենը մեկ ամսում՝ 1908 թ. հունվարի սկզբից մինչև նույն ամսվա վերջը, այսինքն՝ մինչև իր ողբերգական մահը, հրապարակագիրը Կահիրեի «Լուսաբերում», Թիֆլիսի «Մշակում», արտասահմանի ուրիշ պարբերականներում չուրջ երկու տասնյակ հոդված տպագրեց: Հոդվածների մի մասը լույս տեսավ նրա մահից հետո:

«Լուսաբերում» տպագրված հոդվածներից մեկում Արփիարյանը, ստեղծված իրադրության վերլուծության միջոցով եկել էր այն համոզման, որ չուտով «Թուրքիոյ խեղճ հայոց գլխուն մեծամեծ աղէտներ կու գան»[2]: Եթե մինչև այժմ հայերի կոտորածները մեծ մասշտաբներով տեղի են ունեցել հիմնակա-

---

[1] **Վահան Մալէզեան,** *Ճամբուս ծայրը, հատ. Բ, Փարիզ, 1955, էջ 279:*

[2] **«Լուսաբեր»** *(Գահիրէ), № 477, 30 հունվարի 1908 թ.:*

նում Թուրքահայաստանի հեռավոր գավառներում, գրում էր նա, չուտով դրանք կկատարվեն կենտրոնական քաղաքներում, այդ թվում՝ մայրաքաղաքում: «Առանց վարանելու կը սարսափինք, թէ բանտերը պիտի լեցուին հայերով, որոնք ահեղօրէն պիտի չարչարուին, նոյն իսկ երբ բանէ մը տեղեկութիւն չունենան: Սուլթան Համիտին մոլեգնոտութիւնը, վայրագութիւնը ծայրայեղութեան անլուր աստիճանին կը հասնին, երբ վտանգուածը իր անձն է»[1]:

Երիտթուրքեր-Դաշնակցություն դաշինքը համարելով կործանարար՝ Արփիար Արփիարյանն, այնուհետև, շեշտում էր. «Սուլթանը առաջուընէ շատ աւելի անգթօրէն պիտի վարուի հայոց հետ, որոնք այժմ, գոնէ մեծ քաղաքները, թեթեւ ինչ չունչ կ'առնեն: Բոնապետը երեսուն տարուան փորձառութեամբը քաջ գիտէ թէ՝ իր արենակիցները, իր կենակիցները, այսինքն՝ Թուրքերն ու մահմետականները, բացարձակօրէն անկարող ողորմելիներ են յեղափոխական ահաբեկիչ որեւէ գործ կատարելու համար, իսկ հայերն ալ առաջնակարգ վարպետի համբաւը արժանաւորապէս կը վայելեն: Ուստի, եթէ հայը Թուրքին յեղափոխական խելք սովրեցնէ կամ ի հաշիւ Թուրքին ու մահմետականին փոխադարձաբար գործէ, ինքը սուլթանը անձնապէս վախնալու հիմնաւոր շատ մը պատճառներով պէտք է տագնապի: Ուստի, հայերուն մարը լացնելու է»[2]:

Արփիարյանը հիշեցնում էր, որ վերջին 10-12 տարիներին հայկական քաղաքական ուժերը շատ առիթներ են ունեցել խորհրդակցելու Թուրքերի հետ և ամեն անգամ համոզվել են, որ նրանք հայության ոխերիմ թշնամիներն են: Նա տեղեկացնում էր ընթերցողին, որ 1907 թ., երբ Ահմեդ Ռիզա բեյը Եգիպտոս էր ժամանել, ինքը և եգիպտահայ մի քանի ուրիշ երևելիներ հանդիպելով նրա հետ, համոզվել են, որ երիտթուրքերի ծրագիրը «մեր հայկական շահերուն մահաբեր պիտի ըլլայ: Աւելի աղէտաւոր գուցէ, քան սուլթան Համիտին վարչութիւնը»[3]:

---

[1] **«Լուսաբեր»,** *№ 477, 30 հունվարի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

«Բարեկարգիչ Թուրք վարչութիւն մը աշխարհիս երեսը չի՛ կրնար գոյութիւն ունենալ»[1],- այս էր Արփիարյանի եզրակացությունը:

«Թուրքիան դո՞ւք պիտի բարեկարգէք, պարոն դաշնակցականնե՛ր»[2],- այս հեգնալից խոսքերով էր նա վերջացնում հոդվածը:

Արփիարյանի սպանությունից որոշ ժամանակ անց «Մշակը» «Լուսաբերից» արտատպել էր Արփիարյանի գրած հոդվածներից մեկը, որտեղ հեղինակը, վերլուծելով միջազգային իրադրությունը, եզրահանգել էր, որ 1908 թ. գարնանը բացառված չէ ռուս-թուրքական նոր պատերազմի հավանականությունը, որի միջոցով միայն հնարավորություն կստեղծվեր գործածության մեջ դնելու Թուրքահայաստանի բարենորոգումների ծրագիրը: Բայց, դժբախտաբար, գրում էր Արփիարյանը, երիտ-Թուրքեր-Դաշնակցություն համաձայնությունը եկել է խաչ քաշելու այդ հնարավորության վրա, քանի որ դա առաջ է բերել ռուսական կառավարական շրջանների և մամուլի շատ օրգանների զայրույթը:

Հիրավի, ռուսական ծայրահեղ հետադիմական մի քանի թերթեր անդրադարձել էին հակասուլթանական ուժերի Փարիզի համաժողովի որոշումներին, իսկ "Новое Время" («Նովոյե Վրեմյա») հանդես էր եկել իրեն հատուկ հակահայկական մեկնաբանություններով: Առաջվա նման թերթը պնդում էր, որ եթե չլիներ Ռուսաստանի նկատմամբ կովկասյան Թուրքերի հավատարմությունը, հայերն Անդրկովկասը կայսրությունից վաղուց անջատած կլինեին և սեփական թագավորություն ստեղծած: Այժմ այդ նույն հայերը մտածում են, որ Ռուսաստանը պատերազմի դեպքում իրենց ազգակիցներին կազատի Թուրքերի տիրապետությունից և հնարավորություն կստեղծի, որպեսզի սրանք միավորվեն կովկասահայերի հետ: Այդ դեպքում, գրում էր "Новое Время"-ն, ստեղծվելիք միացյալ հայկական թագավորությունը ապագայում Թուրքիայի հավատարիմ դաշնակիցը և

---

[1] **«Լուսաբեր»,** *№ 477, 30 հունվարի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

Կովկասի կողմից ռուսական ներխուժման ժամանակ Օսմանյան կայսրության սահմանների պաշտպանը կլինի: Բայց հայերը սխալվում են, որովհետև «Ռուսաստանը չի դիմի նման հիմարության»,- շեշտում էր Թերթը:

Ուստի, նման փոփոխված պայմաններում, գրում էր Արփիարյանը, «Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ մօտալուտ պատերազմի մը հաւանականութիւնը աչքերնուս առջեւն ունենանք եւ սկսինք մտածել, թէ ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի վիճակն այն ատեն, երբ մարտափողը հնչէ»[1]:

Բայց այս հարցը Դաշնակցությունը չի դրել իր առջև, երբ ստորագրել է երիտթուրքերի հետ բարեկամանալու թուղթը: «Հարցումի[ն] պատասխանը տալու համար չփոթած, խռոված պիտի մնանք ամէնքս ալ,- գրում էր Արփիարյանը:- Անոնք, որ 1877-ի պատերազմին նախապատրաստութիւններն աչքերնովնին տեսած են, անոնք գիտեն, թէ հայուն եւ թուրքին փոխադարձ յարաբերութիւնները հիմակ երեսուն տարի առաջուան վիճակէն շատ տարբեր ըլլալով, կարելի չէ մտաբերել, որ թուրքերը մեզի իրենց բարեկամը նկատելով մեզի շահիլ ուզեն եւ մեր աջակցութեանը վրայ յոյսեր դնեն: Ընդհակառակը՝ թուրքիան հայ ժողովուրդը Ռուսիոյ անձնուէրը համարելով՝ ըստ այնմ ալ մեզի իբր թշնամի պիտի համարէ: Աւելորդ է ըսել, թէ օտարին դէմ պատերազմող ժողովուրդ մը շատ հաշտ աչքով չի նայիր ներքին թշնամիներուն վրայ, որոնք արտաքիններուն նիզակակիցներն ըլլալ կը վախցուին: Ահա՛ մեծ վտանգը Հայաստանի համար»[2]:

Առաջին համաշխարհային պատերազմից յոթը տարի առաջ ճշգրտությամբ կանխատեսելով, թե ինչ կարող է պատահել թուրքահայոց հետ, եթե առաջիկայում ռուս-թուրքական պատերազմ տեղի ունենա, Ա. Արփիարյանը գրում էր.

«Ինչպէս աշխարհ համօրէն՝ նոյնպէս եւ թուրքն ալ գիտէ, թէ Թուրքիոյ պարտութեան պարագային՝ ամբողջ Հայաստանը Ռուսիոյ պիտի անցնի, որուն առջեւ Կ. Պոլսոյ ճամբան լայնար-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 54, 9 մարտի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

ձակ պիտի բացուի: Իսկ երբ Թուրքերը պարզեն յաղթութեան դրօշը, իրենց չահը՝ զուտ բառի մը պիտի մնայ, քրիստոնեայ երկրի մը տիրելու իրաւունքէն մահմետականները վերջապես զրկուած ըլլալով: Թէ՛ մէկ եւ թէ՛ միւս պարագային՝ Թուրքիան հայ ժողովուրդին խնայելու, հայ ժողովուրդը սիրաչահելու մեջ որեւէ օգուտ մը, առաւելութիւն մը չի տեսնար: Հայաստանը եւ հայ ազգը բոլորովին ոտքի տակ կրնան երթալ: Պարտուա՞ծ, թուրքը աւեր-աւերակ, հայաթափուր Հայաստան մը կը յանձնէ Ռուսիոյ: Յաղթակա՞ն, ալ ո՞վ պիտի կրնայ իր առջեւը թումբ կանգնիլ հայութիւնը իր երկրին մէջ բնաջնջելու քաղաքականութիւնը չուտով գլուխ հանել ուզած ատենը:

Ռուսեւթուրք պատերազմէն Հայաստանի համար չարագուշակ հետեւանքներէ վախնալով է որ՝ շատ մեծ ուրախութեամբ չենք դիտեր ընդհարումի մը հեռապատկերը կամ մերձապատկերը»[1]:

Իհարկե, թուրքահայոց ազգային կիսատ-պռատ իշխանութիւնները և արտասահմանյան հայկական կենտրոնները կփորձեն ինչ-որ բան անել ժողովրդին փրկելու համար, բայց դա չի հաջողվի: «Պոլիս պատրիարքարան մը ունինք,- նշում էր Արփիարյանը,- որ անչուշտ պիտի ջանայ անմիջական աղէտներուն առջեւը առնել, բայց՝ ընդունայն ջանքեր: Արտասահմանի հայերը պարտականութիւններ ունին, որոնց վրայ առ այժմ խօսելու պէտք մը չենք տեսնար: Այդ պարտականութիւններուն վրայ կարելի էր լրջօրէն խորհիլ եւ անոնց գործադրումին գիտակցօրէն յետամտիլ ազգային համաժողովի մը միջոցով: Բայց ահա՛ երկու տարիէն աւելի է, որ այդ ժողովին գումարման փափագները յայտնուած են հանրային նպաստաւոր կարծիքով մը, բայց բան մը ըրած չունինք»[2]:*

---

[1] **«Մշակ»,** *№ 54, 9 մարտի 1908 թ.:*

* *Արփիարյանը նկատի ուներ հայոց ուժերը համատեղելու և սպասվելիք աղետները միասնաբար դիմագրավելու համար Հնչակի ղեկավարության՝ Դաշնակցության առաջնորդներին բազմիցս արած առաջարկները, որոնք միշտ մերժվել էին:*

[2] **«Մշակ»,** *№ 54, 9 մարտի 1908 թ.:*

Ա. Արփիարյանն անբուժելի մոլորություն էր համարում Դաշնակցության ղեկավարության մեջ խմորված այն տեսակետը, թե, ի վերջո, թուրքահայությունը ձեռք է բերելու իր երազած ազատությունը, քանի որ, իբր, ժամանակն աշխատում է նրա օգտին՝ նկատի առնելով սուլթանական կարգերի կործանման և թուրքական հասարակության ժողովրդավարացման անխուսափելիությունը: «Մենք կը կարծենք, թէ ժամանակը մեզի հետ է, ժամանակը մեր աջակիցն է: Ո՛չ. ժամանակը դանդաղներուն հետ չէ, ժամանակը անհեռատեսներուն աջակիցը չէ: Եւ եթէ յանկարծ ամիսէ մը պատերազմի նշանը տրուի, անճրկած պիտի կենանք, հեռուէն տխուր հանդիսատեսներ մնալով հայրենիքի աղէտաւոր վիճակին:

Կարելի չէ՞ արդեօք, որ պատերազմի մը չարիքները եթէ ոչ խափանելու, գէթ չափաւորելու միջոցներուն վրայ խորհրդակցութիւններ կատարուին դոնփակ գումարումներու մէջ: Ռուսեւ-թուրք ընդհարումը այս գարնան կրնայ տեղի ունենալ կամ ոչ: Բայց եթէ այսօր չէ, վաղը ռուսը եւ թուրքը իրարու հետ պիտի բռնուին, եւ մենք այս անհոգ դանդաղկոտութեամբ, ինչպէս այսօր՝ նմանապէս վաղն ալ, միւս օրն ալ, տարիներ ետքն ալ ինքնապաշտպանութեան որեւէ միջոցէ զուրկ պիտի մնանք...»[1]:

Վահան Մալեզյանը խոր կսկիծով նշում էր. «... Կարելի չէ չհիանալ այդ անվեհեր հայուն վրայ՝ որ իր կեանքին վերջին տարիներուն՝ երկու սուրի մէջ ապրեցաւ – լռե՞լ թէ՞ գրել, քանզի լաւ գիտէր, թէ իր գրիչը պիտի փութացնէր իր մահը: Ու անկարելի էր յարգանքով եւ խանդաղատանքով չվերցնել իր արիւնալից գործը՝ որպէս բազմավաստակ գրագէտ եւ հրապարակագիր, երեսունըհինգ տարիներու անդադրում եւ անվհատ աշխատանք մը, իր ազգին համար՝ որուն սիրոյն նախամեծար սեպեց մեռնիլ քան թէ լռել»[2]:

Մեծատաղանդ գրողը, հայտնի հրապարակագիրն ու հասարակական-քաղաքական գործիչը պատերազմում իր մահվանն

---

[1] **«Մշակ»,** *№ 54, 9 մարտի 1908 թ.:*

[2] **Վահան Մալէզեան,** *Ճամբուս ծայրը, հատ. Բ, էջ 280:*

սպասող կամավորի պես վաղուց էր հաշտվել հայի գնդակի զոհ գնալու մտքի հետ: Բայց նա չէր նահանջում և գրիչը կոտրելով մի կողմ չէր նետում: Նա մինչև վերջին վայրկյանը հավատարիմ մնաց պարտաճանաչ և խիզախ հրապարակագրի իր առաքելությանը:

Այն, ինչ հնչակյան ահաբեկչին չհաջողվեց իրականացնել Վենետիկում, հնչակյան մի ուրիշ ահաբեկչի հաջողվեց Կահիրեում:

1908 թ. հունվարի 30-ի (փետրվարի 12-ի) ուշ երեկոյան, երբ Արփիարյանը միայնակ տուն էր վերադառնում, Կահիրեի Էլ-Մանաք փողոցի անկյունում նրա վրա հարձակվում է ահաբեկիչը՝ Ամերիկայից ուղարկված տիգրանակերտցի երիտասարդ Պետրոս Հյուսնյանը (իսկական անունով՝ Հովսեփ Ալիփունարյան) և ատրճանակի երեք հարվածով գետին է տապալում իր զոհին: «Հազիւ երկու վայրկեան տեւող հոգեւարքին միջոցին,- գրել է Վահան Թեքեյանը,- երբ յուսահատ կը գալարուէր հողին երեսը՝ գեղեցիկ գորշագոյն գլուխը վերջին ճիգով մը վերցնելով, իր շուրջը շտապած անծանօթին պոռացեր է.

- Հա՜յ եմ...

Եւ այս երկու վանկին մէջ՝ տուեր է հոգին...»[1]:

Նա գետին էր տապալվել՝ ափի մեջ բռնած մի կտոր չոր հաց՝ հետևյալ օրվա նախաճաշը...[2]

Արփիար Արփիարյանի սպանությամբ՝ հայ մշակույթը, մասնավորապես գրականությունը, անդառնալի կորուստ ունեցավ:

Փախչելիս ոճրագործին բռնում են մի գիշերապահ և մի դռնապան, որոնք նրան ոստիկանատուն են տանում: Իսկ ոչ հեռու, մթում գործող և եղեռնագործությանը հսկող դարանակալ մեղսակիցները, երբ տեսան, որ ամեն բան տեղի ունեցավ ծրագրվածի նման, փախան հանցանքի վայրից:

Մարդասպան երիտասարդին սովորեցրել էին, թե Արփիարյանը զանազան գրություններով հայ հասարակության մեջ երկ-

---

[1] **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, Գ տարի, Կ. Պոլիս, 1909, էջ 177:

[2] Տե՛ս, **«Ազգ»,** № 57, 30 մայիսի 1908 թ.:

պառակումներ է սերմանում, հետևապես նա համոզված էր, որ ինքը հայրենասիրական գործ է կատարել:

Անարգ ոճիրը խոր սուգի մատնեց եգիպտահայ համայնքը, որն իր զայրույթն ու ցավը արտահայտեց Կահիրեում տեղի ունեցած հսկա հանրահավաքում, ուր բանախոսեցին Միհրան Տամատյանը, դոկտ. Նազարեթ Տաղավարյանը և Գրիգոր Բեռ-զիկյանը (Շիկահեր): Հանրահավաքում ընդունված որոշումը մի պատվիրակության միջոցով պաշտոնապես ներկայացվեց Եգիպտոսի վարչապետին և բրիտանական բարձր կոմիսարին՝ եղեռնագործությունը բացահայտելու և բոլոր մեղավորներին խստորեն պատժելու խնդրանքով[1]:

Հազարավոր սգակիրների մասնակցությամբ կատարվեց անմեղ նահատակի հուղարկավորությունը: Թափորի առջևից գնում էին Պողոս Նուբար փաշան, հանգուցյալի մտերիմները, մտավորականներ, որոնց հետևում էր սգակիրների անվերջա-նալի շարքը, որը ձգվում էր Բեյն էլ-Սուրեյնի հրապարակից մինչև օպերայի հրապարակը:

Գերեզմանոցում դամբանական ասաց Եգիպտոսի թեմի առաջնորդ Մկրտիչ ծ. վրդ. Աղավնունին, ապա արտասվագին սրտազեղությամբ ելույթներ ունեցան Վահան Մալեզյանը և Վահան Թեքեյանը: Խորապես հուզված էին ներկաները, շատերը հեծկլտանքով էին մատնում իրենց սրտի խոր ցավը[2]: Զայրույթն ու մեծ ցավը խառնվել էին իրար:

Քստմնելի ոճիրը երկար ժամանակ զբաղեցրեց եգիպտական մամուլը, իսկ երկրի հանրային կարծիքը պժգանքով դատապար-տեց հրեշային եղբայրասպանությունը[3]:

Կառավարությունը լայն քննություն սկսեց, բայց չկարողա-ցավ բացահայտել սպանության կազմակերպիչներին. սրանք հասցրել էին փախչել հեռավոր Ամերիկա՝ լքելով միամիտ երի-տասարդին, որի ձեռքին իրենք էին զենք դրել:

Իր արածի համար խորապես զղջացած Պետրոս Հյուսնյանը

---

[1] **Վահան Մալէզեան,** *Ճամբուս ծայրը, հատ. Բ, էջ 275:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 277:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 274:*

դատապարտվեց մահվան և կախաղան բարձրացվեց 1908-ի հունիսին[1]:

Այդ առթիվ Վահան Մալեզյանը հրատարակեց «Միւս զոհը» վերնագրված մի հոդված, ուր չեչտում էր՝ ճիվաղային սպանության իսկական հեղինակները նրանք են, ովքեր միամիտ տղայի ձեռքն էին դրել ատրճանակը, իսկ կատարված գործողությունից հետո փախել էին դեպքի վայրից, լքել նրան, այլևս չհետաքրքրվելով Հյուսնյանի մասին: Մալեզյանը նշում էր, որ երբ խոստովանահայր քահանան մոտեցել էր կախաղանին, ահաբեկիչը ոչ միայն զղջանքի խոսքեր էր մրմնջացել, այլև անեծք էր հղել մեծարժեք հայերի արյունը ոթող ազգադավ չարագործներին, որոնք իրենց ոճրապարտ գործողություններով լրբորեն սրբապղծում էին հայկական հեղափոխությունը և սգի մատնում վիրավոր հայությանը[2]:

Արփիարյանի նենգ սպանությունը զայրույթի փոթորիկ առաջ բերեց ամենից առաջ հայ մտավորականության շրջանում, լիներ Թուրքիայում, Կովկասում, թե արտասահմանյան տարբեր երկրների հայկական գաղթօջախներում:

Թիֆլիսի «Հովիւը» գրում էր.

«Մի նոր ոճիր, նոր նենգութիւն, կատարուած մեզնից շատ հեռու երկրում – Եգիպտոսում, գալիս է կրկին ապացուցելու, որ վայրենացած են մեր բարքերը: Շնորհիւ իրերի անբնական ընթացքի, մեր հասարակական կեանքում տիրող անարխիայի եւ մանաւանդ ժողովրդի յանցաւոր անտարբերութեան՝ հասարակութեան տականքները, գլուխ բարձրացրած, շարունակում են իրենց չահատակութիւնները: Սպանում են՝ որովհետեւ հայ հարուստը դրամ չէ տալիս, սպանում են՝ որովհետեւ հայ գրագէտը – հրապարակախօսը յանդգնում է ինքնուրոյն կարծիք, սեփական համոզումն ունենալ, ազնիւ ու խիզախ կերպով պաշտպանել իր աշխարհայեացքը եւ կռուել նրան հալածող մտքի դէմ: Բռնի ուժով մեռցնում են մեր մէջ կեանքի ամենատարրական

---

[1] **Վահան Մալէզեան,** Ճամբուս ծայրը, հատ. Բ, էջ 275:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 276:

արտայայտութիւնն անգամ: Մարդկային կեանքը կորցրել է իր գինը. նրա ամբողջ արժէքը միայն մի գնդակի է հաւասար եւ հասարակութեան յանդուգն, պիտանի անդամները ընկնում են իրար յետեւից:

Մի սարսափելի ոճիր, դաւաճան գնդակ գետին է գլորել տաճկահայ յայտնի հրապարակախօս Արփիարին, այն մարդուն՝ որ իր կեանքի լաւագոյն օրերը նուիրել է ժողովրդին ծառայելու ազնիւ գործին: Ընկել է նա, որովհետեւ քաջութիւն է ունեցել շրջապատող բռնութեան միջից՝ իր խօսքը լսելի դարձնել, իր դիւթիչ գրչով մտրակել հասարակութեան ցած բնազդները չա-հագործողներին:

Նախատի՜նք ոճրագործներին:

Յարգա՜նք Արփիարի գերեզմանին»[1]:

Արփիարյանի սպանությունն անհուն ցավ էր պատճառել Արշակ Զոպանյանին: Նա վճռականապես դատապարտում էր եղեռնագործությունը և ընդհանրապես հեղափոխականների իրականացրած սպանությունները: «Արփիարեանի սպանութիւնը ամէնէն անճոռնի եւ ամէնէն զզուելի անակնկալն էր որ կրնար պատահիլ,- գրում էր նա:- ... Հայասպանութեան չարիքին վրայ որոշապէս յայտնած էի մտածումս «Անահիտ»-ի վերջին քրոնիկին մէջ: Հրէշային բան մըն է այն դիւրութիւնը որով մեր յեղափոխական կեանքին մէջ կը վճռուի ու կը գործադրուի այս կամ այն անհատին սպանութիւնը՝ «Նպատակը միջոցը կ՚արդարացնէ» անազնիւ եւ անճիշդ սկզբունքին վրայ հիմնուելով: Եթէ սպաննուած հայերը ըլլային բոլորն ալ՝ լրտեսներ, խակական մատնիչներ, ոչ ոք մտքէն պիտի անցընէր բողոքել ատոր դէմ: Բայց ո՞վ է որ պիտի հաստատէ թէ այս վերջին տասնհինգ տարուան մէջ յեղափոխական գնդակին տակ ինկած հայերը մատնիչ ու լրտես էին ամէնքն ալ: Մեծ մասամբ՝ սարսափ տարածելով յեղափոխութեան ոյժն ու վարկը բարձրացնելու նպատակով կատարուած են այդ սպանութիւնները – բարբարո՛ս

[1] **«Հովիւ»** (Թիֆլիս), № 4, 10 փետրվարի 1908, էջ 61:

յղացում, զոր ես երբէք չեմ ընդգրկած եւ որուն դէմ միշտ բողոքած եմ»[1]:

Նախընթաց ժամանակաշրջանում հայկական հեղափոխական երեք կուսակցությունների թերթերն ու գործիչները Արփիարյանին ներկայացնում էին որպես «մատնիչ»: Բայց թե ո՞ւմ էր մատնում, այնպես էլ մնացել էր անպատասխան: Զոպանյանը կսկծամորմոք նշում էր.

«Ո՞վ է Արփիարեանը սպաննողը, եւ ինչո՞ւ կատարուեցաւ այդ սպանութիւնը, չեմ գիտեր: Բայց սա որոշ է ինծի համար որ եթէ հայ ձեռք մը՝ առանց դողալու՝ կրցաւ չքացնել մարդ մը որ՝ հակառակ իր բոլոր թերութիւններուն՝ մեր նոր գրականութեան սիւներէն մէկն էր, ատիկա հնարաւոր կրցած է ըլլալ չնորհիւ այդ հազար անգամ յեղյեղուած «մատնիչ» բառին զոր հայոց յեղափոխական բոլոր կուսակցութիւնները կը նետէին այդ մարդուն գլխուն, եւ որ եթէ ոչ մէկուն կողմէն որոշապէս ապացուցուած չէր, ոչ մէկուն կողմէն ջախջախիչ ու վերջնական յստակութեամբ մը հերքուած ալ չէր»[2]:

Իր գաղափարակցի և հավատարիմ բարեկամի մահվան առաջին տարելիցի կապակցությամբ Վահան Թեքեյանը գրում էր.

«Արփիարի մէջ երկու մարդ կար. Հայրենասէրը եւ Սկեպտիկը: Առաջինը զինք սպաննեց:

Իր հայրենասիրութիւնը հայրենամոլութիւն էր գրեթէ: «Տիրացու» բառին ստեղծիչը տիրացու մըն էր՝ բառին լայնագոյն եւ լաւագոյն առումովը:

Արփիար սկեպտիկ եղած էր հակազդեցութեամբը իր «տիրացու»ութեան, որ քանի՛ տարիքը առաւ՝ չեչտուեցաւ իր մէջ, եւ նոյն համեմատութեամբ՝ իր սկեպտիկութիւնն ալ:

Իր անհատականութիւնը գտած էր Վենետիկ, Ալիշանի հայրենաբորբ չունչին տակ: Իր անհատականութիւնը որ այլապէս ինքն իր մէջ ունէր իր հանճարին միւս բոլոր տարրերը՝ ազդուե-

---

[1] ***«Անահիտ»,*** *№ 1-4, հունվար-ապրիլ, 1908, էջ 41:*

[2] *Նույն տեղում, էջ 43:*

ցաւ այդ չունչէն, ա՛լ անկէ չազատելու համար:

Սկեպտիկութիւնը Արփիարի մէջ ծնաւ՝ հայրենասիրութեան ճիրանին մէջ իր հանճարին կալանաւոր տուայտանքէն: Առանց հայրենասէր ըլլալու՝ Արփիար սկեպտիկ ալ պիտի չըլլար: Արփիարի հանճարը եթէ հայրենասիրութեան տեղ եսասիրութեամբ շարժադրուէր – ինչպէս ամէն հանճարի համար անհրաժեշտութիւն է – Արփիար պիտի ըլլար անհունօրէն աւելի մեծ, փառապանծ, պաշտուած:

Հայրենասիրութիւնն էր միայն որ պատահեցուց Արփիարը իր վախճանին...» [1]*:*

Կասկած չկա, որ մեծ գրողը կենդանի մնալու դեպքում անպայման գործուն մասնակցութիւն կունենար Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծմանը և կլիներ կազմակերպության ղեկավարներից մեկը:

Արփիար Արփիարյանի անարգ հաշվեհարդարը պատճառ դարձավ, որ մամուլում, ժողովներում, հանրահավաքներում նորից բարձրացվի հայկական քաղաքական դաշտում պարբերաբար տեղի ունեցող սպանությունների չարչրկված հարցը, քանի որ եղբայրասպանության սև արատը շարունակում էր խարաններ դնել հայկական ազգային կուսակցությունների գործունեության դժնդակ էջերի վրա:

1908 թ. մարտի 1-ին Կահիրեում կազմակերպվել էր սպանությունները դատապարտող մեծ հանրահավաք, որտեղ ելույթ ունեցողները դրանք «ազգային խայտառակություն» համարեցին: Միհրան Տամատյանն իր ելույթում դատապարտում էր Գարեգին Զիթչյանի. Մխո-Շահենի (Շահեն Սեֆերյան), Սագունու (Սաղաթել Գևորգյան), Որսորդի, Համրի, Աբիկ Ունճյանի, Թավչանջյանի և մյուս անմեղ զոհերին կյանքից զրկողներին, վերջիններին համարելով «աններելի ոճրագործներ»: Նա հասարակությանը կոչ էր անում ատելությամբ լցվելու ինչպես ահաբեկումների անմիջական գործադրողների, այնպես էլ, առաջին հերթին, դրանց պատվիրատուների նկատմամբ[2]*:*

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»,*** *№ 51, 4 ապրիլի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

Մինչև Արփիարյանի սպանությունը, Կահիրեում լույս տեսնող «Ազատ բեմ» թերթը հիշատակել էր Հայաստանի երկու մասերում և տարբեր երկրներում միայն 1907 թ. առաջին կեսին սպանված հայորդիներից մի քանիսին, որոնք կյանքից զրկվել էին բոլորովին անտեղի՝ «իսկական հայեր չլինելու» մեղադրանքով[1]:

1907 թ. փետրվարի 16-ին Կրասնովոդսկում սպանվում է «Մշակ» թերթի տեղի թղթակից Մ. Տեր-Օհանյանը՝ թերթում ՀՅԴ տեղի կազմակերպության բռնությունների մասին հոդված տպագրելու համար:

Նույն թվականի սեպտեմբերի 11-ին Բաթումում սպանվում է դաշնակցական գործիչ Սմբատ Հարությունյան-Շխյանը: Սպանողը նույնպես դաշնակցական էր, որը ենթակա էր ՀՅԴ տեղի կոմիտեին: Դեպքը մեծ հուզում էր առաջ բերել և հակակրանք առաջացրել ռուսահայ ու թուրքահայ դաշնակցականների միջև, որովհետև Սմբատը ռուսաստանցի էր, իսկ նրան սպանողը՝ թուրքահայ: Երկու օր հետո թուրքահայ դաշնակցականի մարմինն ընկած էր փողոցում՝ հոչոտված ու անճանաչելիորեն այլանդակված[2]:

1907 թ. ապրիլին դաշնակցականները Վանում սպանում են նշանավոր կրթական գործիչ Գրիգոր Աճեմյանին և ուրիշ երեք հոգու:

«Ազգ» թերթն այդ դեպքի կապակցությամբ մի ստորագրությամբ ստացել էր Վանից հղված և 1 (14) մայիսի թվագրված հետևյալ գրությունը. «Հայի անունով խօսող յեղափոխական կուսակցութիւննե՛ր, ա՛լ կը բաւեն ձեր եղբայրադաւ արարքները. թողէ՛ք մեզ մեր ցաւերուն մէջ տապակուինք, եթէ չէք կրնար կամ չէք ուզեր մեր ցաւերուն վրայ սպեղանի դնել: Թիւրքի ստեղծած վէրքեր մեզ չատ են, դուք ալ նորանոր վէրքերով մի՛ խոցէք մեր անյուսալի սիրտեր: Յուսահատած ենք մեր սովատանջ վիճակից, ճիւաղ կառավարութիւնից խամրած կեանքեր, երկրի սարսափելի տանջանքներ մեզ չատ ու չատ են: Ի՞նչ

---

[1] Տե՛ս **«Ազատ բեմ»** (Գահիրէ), № 47, 28 սեպտեմբերի 1907 թ.:

[2] Տե՛ս **«Ազգ»**, № 30, 9 նոյեմբերի 1907 թ.:

կ՚ուզէք, ինչո՞ւ կ՚աւելցնէք մեր ողբացողներու թիւ: Արդեօք կ՚արժէ՞ կուսակցական կիրքերու զոհել աչքի ինկած գիտակից անհատներ: Ուսուցիչ Պ. Գրիգոր Ահէմեանի մեղքն ի՞նչ է որ զոհ տարաք կուսակցական ազգասէրի ատրճանակով (հա՛ գիտեմ, Դաշնակցութեան չէր պատկաներ, ա՞յդ էր արդեօք իր ամբողջ մեղք), եւ առիթ տուիք թիւրք կառավարութեան միջամտելու մեր դպրոցական ներքին խնդիրներուն: Գո՞հ էք, ազգասէրնե՛ր, եւ ի՞նչ շահեցաք, ոչինչ, բացի գիտակից ժողովուրդի անարգանքից: Արդեօք կը հաւատա[՞]ք թէ սարսափով պիտի ընկճէք ժողովուրդի այն գիտակից մաս, որ իր ցաւեր ձեզանից աւելի լաւ կը տեսնայ: Ի՞նչ շահեցաք, կը հարցնեմ... Ա՞յս է ձեր փառաց պսակ, եղբայր եղբօր դէմ զինել: Արդարութեան գիտակիցնե՛ր, ճշմարտութիւն սիրողնե՛ր, բողոքեցէ՛ք ուր որ անկ է, խօսեցէ՛ք ինչ որ պէտք է, մեր վէրքեր շատ են, նորեր կրելու անկարող ենք. ա՛լ կը բաւէ»[1]:

Ժողովրդական զայրույթի ճնշման տակ՝ հին Հնչակը և Դաշնակցությունը 1907 թ. ապրիլին համաձայնության գալով, ստորագրել էին հետևյալ մխիթարական ազդը. «Յայտարարում ենք Ռուսաստանի եւ Կովկասի դաշնակցական եւ հնչակեան մարմիններին եւ ընկերներին, նաեւ բոլոր քաղաքացիներին, որ Հնչակեան Սոց. Դէմ. Կուսակցութեան Ռուս. եւ Կովկասի Պատգամաւորական Ժողովը եւ Հայ Յեղ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրօն, կազմել են իրանց միջից մի մարմին լիազօր՝ մշակել միջոցներ մի անգամ ընդմիշտ վերջ տալու միջկուսակցական անմիտ թշնամական յարաբերութիւններին եւ եղբայրասպանութիւններին:

Այդ մարմնի անմիջական գործնական քայլը կը լինի ուղարկել գաւառները իր լիազօր անդամներին եւ ներկայացուցիչներին քննելու եւ լուծելու առկախ մնացած բոլոր խնդիրները, որ պատճառ են դառնում վերոյիշեալ թշնամութիւններին:

Լիայոյս լինելով, որ այդ ընդհարումների կործանիչ եւ յեղափոխութեան շահերին միանգամայն հակառակ լինելը գիտակցում է բոլորի կողմից, կոչ ենք անում մեր բոլոր մարմիններին եւ

---

[1] **«Ազգ»**, *№ 20, 22 Հունիսի 1907 թ.:*

ընկերներին անմիջապէս դադարեցնել որեւէ թշնամական գործողութիւն եւ ամէն ջանք գործ դնել խաղաղեցնելու յուզուած մտքերը»[1]:

Երկու կուսակցությունների այդ նոր ընթացքը, եթե, իրոք, հասներ իր հանգրվանին, վչտի ու դառնության ահագին մի բեռ կվերացներ ազգային-հեղափոխական խղճմտանքի վրայից: Միաբանությունը գերագույն բարիք կլիներ ոչ միայն այդ կուսակցությունների, այլև ողջ ազգի համար: Միության ու համերաշխության գաղափարի ուժով աստիճանաբար կհաղթահարվեր ամեն խոչընդոտ, կխորտակվեր ամեն արգելք, միաբանությանը տեղի կտային չկամությունն ու ատելությունը:

Բայց լավատեսության բաղձանքները շուտով խամրեցին իրականության առջև: Երկու կուսակցությունների ազդն այնպես էլ մնաց թղթի վրա: Շարունակվեցին փոխադարձ սպառնալիքները:

Նշված ոճիրները նախընթաց ոճիրների շղթայաշարքի մի նոր օղակն էին պարզապես, որին հաջորդելու էին նոր սպանություններ: Հայկական քաղաքական դաշտում հարաբերություններ պարզելու և հաշիվներ մաքրելու հիմնական միջոցը, առաջվա պես, մնացին դավադիր գնդակը և դաշույնը:

Այն օրերին, երբ Կահիրեում գործադրվում էր Արփիարյանի սպանությունը, հենց այդ նույն ժամանակ տեղի ունեցավ մի ուրիշ եղկելի և իր հետևանքներով ավելի աղետալի իրադարձություն — այս անգամ բուն Թուրքահայաստանում՝ Վան-Վասպուրականում:

ԴՀԵՐՑԻ ԴԱՎՈՅԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայկական հեղափոխական կազմակերպությունները, հատկապես ՀՅ դաշնակցությունը, շատ տարիներ տևած տառապալից տքնությամբ կարողացել էին զանազան միջոցներով ձեռք

---

[1] **«Ազգ»**, *№ 11, 20 ապրիլի 1907 թ.:*

բերել որոշ քանակի զենք, տեղափոխել Երկիր և պահեստավորել Թուրքահայաստանի զանազան վայրերում և անհատների մոտ[1]:

Զենք ձեռք բերելը և պահեստավորելը գործի մի մասն էր միայն: Է՛լ ավելի կարևոր էր դրա պահպանությունը:

Սիմոն Վրացյանը վկայել է, որ 1907 թ. ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովից հետո «Դաշնակցութիւնն աւելի մեծ քանակութեամբ դրամ, մարդ եւ զէնք տրամադրեց Թուրքահայ ազատագրական պայքարին»[2]:

ՀՅԴ Շամի (Վասպուրականի) կենտրոնական կոմիտեն, որի տրամադրության տակ կային պահեստավորված զանազան տեսակի զենքեր, կուսակցության ղեկավար մարմիններին հղած գրություններում բազմիցս անդրադարձել էր նաև զենքի պահպանության խնդրին և հավաստիացրել, թե դա պահեստավորված է ապահով տեղերում, ուստի որևէ մտահոգություն չի առաջացնում:

Բայց Դաշնակցության չարքերում ոչ բոլորն էին, այդ լավատեսությամբ պարուրված: Դրանց թվում իր սթափ մոտեցմամբ հատկապես առանձնանում էր Անդրանիկը, որը զանազան առիթներով բազմիցս բարձրացրել էր զենքերի անվտանգ պահպանության հարցը:

Այսպես, ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի 44-րդ նիստում (1907 թ. մարտի 21) դիմելով պատգամավորներին՝ Անդրանիկն ասել էր. «Այժմ թող Ընդհանուր Ժողովը մեզ ապահովցնէ, որ Երկրում եղած զէնքը չէ անցնելու կառավարութեան ձեռքը»[3]: Հաջորդ՝ 45-րդ նիստում (մարտի 22-ի առավոտյան), նորից անդրադառնալով իրեն հուզող հարցին, նա նշել էր. «Եթէ ընկերները կ'երաշխաւորեն, որ Երկիր հասած զէնքերը եւ ոյժերն անվնաս կը մնան կառավարութեան կողմից, այս դէպքում մենք

---

[1] **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, Գ տարի, էջ 177:

[2] **Սիմոն Վրացեան,** Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Բ, տպ. «Մշակ», Պէյրութ, 1960, էջ 90:

[3] **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Գ, էջ 118:

պատրաստ ենք սպասելու, մինչեւ որ դուք յարմար գտնէք ապստամբելը»[1]: Անդրանիկը ՀՅԴ ընդհանուր ժողովից զենքի պահեստների անվտանգության երաշխիքներ էր ուզում համառորեն: 46-րդ նիստում (մարտի 22-ի երեկոյան) նա ասում է. «Խնդրում եմ իմ կարծիքն առանձնապէս արձանագրել. անհրաժեշտ է Երկրում մարմին, որը պատասխանատու լինի անձամբ, եթէ զէնքերը Երկրում հողի տակ փչանան կամ թուրքերի ձեռքն ընկնեն»: Ապա զարմանալի ճշտությամբ կանխատեսում է. «Որքան իմ փորձառութիւնս թոյլ է տալիս ինձ, ես կարծում եմ, որ կառավարութիւնը պիտի աչխատի խլել մեր զէնքերը եւ եթէ Երկրում զինուորական ոյժեր չլինեն, ինչպէս ոմանք ցանկանում են, այն ժամանակ ոչ ոք չի կարող դիմադրել եւ ապահովել զէնքերը, որոնք անպատճառ պիտի ընկնեն կառավարութեան ձեռքը»[2]:

Զբաւարարվելով բանավոր ելույթներով ու հարցապնդումներով, Անդրանիկը հետեւյալ գրավոր առաջարկն է ներկայացնում ընդհանուր ժողովին. «Թշնամիս ինձնից բարձր բռնելով ու մարդու տեղ դնելով չեմ կարող լաւատես լինել: Նկատելով, որ կառավարութիւնն ամէն բան գիտէ եւ պիտի գիտնայ ու գիտցածը պիտ բաղմապատկէ ու մեզ յանկարծակիի պիտի բերէ, նրա վրայ համոզուելով, եւ միեւնույն ժամանակ նորեկ կուսակալը մի խօսելով Բաղէշի կուսակալին [հետ] եւ լսելով նրա հրամանքներին ու դրդումներին, պիտի սկսի ընել հետեւեալը.

Խուզարկութիւններ, ձերբակալումներ եւ զէնքերի գրաւումներ: Նկատի ունենալով, որ այս բոպէիս եւ ոչ մի կռուող ու ռազմական ոյժ չունինք ներսը, առաջարկում եմ.

ա) Կազմել պատ[ասխանատու] մարմին մը Երկրի մէջ թէ՛ ինտելիգենտ եւ թէ՛ ռազմական. զէնքերի ապահովման եւ զէնքերի փճացման հողերի տակ՝ պատասխանատու է այդ մարմինը խիստ կերպով:

---

[1] **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Գ, էջ 120:

[2] Նույն տեղում, էջ 121:

բ) Պատասխանատու մարմին մը թէ՛ ռազմական եւ թէ՛ ինտելիգենտ Երկրէն դուրս, որոնք պատուոյ խօսք կու տան Երկրի պահանջներուն բաւարարութիւն տալու:

գ) Միեւնոյն ժամանակ առանց ժամանակ ու ամիսներ կորսնցնելու պատրաստութիւն տեսնել դուրսը [, որ] թէ՛ զինական, թէ՛ զինուորական ամէն մի պակասը լրիւ պատրաստէ*: Ի պահանջել հարկին, ամենաշատը տաս[ը] օրէն պատրաստ լինի գործին ձեռնար[կելու] անմիջապէս: Դրամական հարցի համար վերջը կը խօսինք:

Անդրանիկ»[1]:

Յավոք, մեծ հայդուկապետի ինչպես չատ ուրիշ, այնպես էլ «զէնքերը անպատճառ պիտի ընկնեն կառավարութեան ձեռքը» կանխատեսումն իրականացավ:

1907 թ. դեկտեմբերին ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեն** Վան-Այգեստանի իր քաղաքական կոմիտեին և շրջանային խմբերի ղեկավար նեղ շրջանակին ցուցում էր տվել՝ «ձեռնհաս ընկերների միջոցով Վան քաղաքի թաքստոցներում եղած զենքերը մաքրել, յուղել, հաշվառել և նորից պահեստավորել իրենց տեղերում»:

Կենտրոնական կոմիտեի որոշման համաձայն՝ Վահան Փափազյանի (Կոմս) ղեկավարության և հսկողության տակ ստեղծվեց 8 հոգուց բաղկացած խումբ, որը պետք է ստուգեր, մաքրեր և կարգավորեր զինապահեստները:

Խմբի անդամների միջև կատարվել էր աշխատանքի բաժանում: Կոմսը զենքերն ու զինամթերքը հաշվառողն էր, ինչպես նաև փամփուշտների թիթեղյա արկղերին ու մի քանի հրացան-

---

* Երևի՝ «լրացնելու» իմաստով:

[1] **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Դ, էջ 74:

** Այդ ժամանակ ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեի կազմում էին կովկասցիներ Սարգիս Բարսեղյանը, Արամ Մանուկյանը, Բժիշկը (Վահան Փափազյան), Նիկողայոս Պողոսյանը (Վանա Իշխան) և տեղացիներից Գեորգ Ջիթեչյանը և Ղևոնդ Մելոյանը:

ներ ամփոփող կապոցների վրա չապիկ հագցնողն ու կնքողը: Արհեստավորներ Նիկոլը, Գրիգորը և բուլղարացի Սարգիսը պետք է հաշվեին փամփուշտները, դրանք լեհիմեին և նորից լցնեին արկղերը, Ալեսի, Արմենակի և Հակոբի խնդիրն էր մաքրել փամփուշտները և հրացանների մանր մասերը, Մատթեոսը պետք է մաքրեր հրացանների խողովակները, վերջապես՝ Դավոն (Դավիթը) կոչված էր հոգալու խմբի անդամների առօրյա կարիքները[1]:

Թվարկված անձինք ընթերցողին հայտնի են աշխատության նախորդ գլուխներից, բացի Դավոյից: Ո՞վ էր սա, ինչպե՞ս էր ձեռք բերել այն վստահությունը, որ նրան մասնակից էին դարձրել այդ հույժ պատասխանատու գործին:

Դավոն 20-22 տարեկան երիտասարդ էր, որը 4-5 տարի գործում էր հեղափոխականների շարքերում: 1895 թ. հայերի կոտորածների ժամանակ նրա հայրը փախել էր Բաղեշի վիլայեթի Բշերիկ քրդաբնակ շրջանում գտնվող Դեհ կամ Դհեր գյուղից[2] և եկել էր Վան ու հաստատվել այնտեղ՝ զբաղվելով մանր առևտրով[3]: Դավոն ընտանիքում ստացել էր գոեհիկ դաստիարակություն, ուներ տարրական կրթություն: Սակայն աչքաբաց էր, ճարպիկ և մեծ հետաքրքրություն էր ցուցաբերել դեպի ընդհատակյա աշխատանքը: Հաշվի առնելով նրա վերջին հատկանիշները՝ Վանի դաշնակցական ղեկավարությունը նրան տվել էր հանձնարարություններ, որ նա կատարել էր գոհացնող պարտաճանաչությամբ: Դավոն քաղաքական դաստիարակություն էր ստացել ՀՅԴ Շամի կազմակերպության ղեկավարներից Արմենակ Շալջյանի, Թևոս Դեղդրիկյանի և Ալես Պարսամյանի գաղափարական ազդեցության տակ: Կազմակերպության այդ երեք գործիչների վրա էր դրվել վստահելի պատանիներից կուսակցական նվիրյալներ պատրաստելու գործը: Հենց Արմենակի, Թևոսի և Ալեսի երաշխավորությամբ էր Դավոն ընդունվել Դաշնակցության շարքերը: Նրանց վստահմամբ էր վերջինս սկսել

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 5 (31), մարտ, 1925, էջ 137:

[2] Տե՛ս նույն տեղում, № 7 (211), մայիս, 1940, էջ 71:

[3] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 507:

ազատ ելումուտ անել ղեկավար մարմինների մոտ և ձեռք բերել բարեհույս երիտասարդ գործչի համարում: Սակայն, այդ բոլորով հանդերձ, նա հստակ պատկերացում չուներ հեղափոխության նպատակների մասին: Դրա փոխարեն, կուսակցության ամենագաղտնի գործերի մեջ ներգրավված լինելը անչափ չփայլեցրել էր նրան:

1904 թ. Սասնո ապստամբության պարտությունից սկսած մինչև 1907-ի վերջերը, փախստական երիտասարդների խմբերը, մեծ մասամբ մշեցի, լցվել էին Վասպուրականի գյուղերը: Տեղի հայ մարմիններն ամեն կերպ աշխատում էին այդ փախստականների մի մասին Պարսկաստանի գծով հնարավորինս փոխադրել Կովկաս: Դավոն միանում է Կովկաս գնացող խմբերից մեկին: Պատճառն այն էր, որ, ըստ որոշ տեղեկությունների, նա սպանել էր մի թուրք ոստիկանի և թաքնվել: Դատարանը նրան դատապարտել էր 101 տարվա բանտարկության և ընտանիքի հասցեով ուղարկել էր իլամ (բերման հրամանագիր), միաժամանակ երկու օր ժամանակ էր տվել հանձնվելու ոստիկանությանը՝ ապացուցելու համար իր անմեղությունը: Դավոն չէր կատարել դատարանի վճիռը, և այդ պատճառով ոստիկանությունը ձերբակալել էր նրա հորը և նետել բանտ[1]:

Կովկասում մի քանի ամիս մնալուց հետո, Դավոն 1907 թ. վերջերին վերադառնում է Վան[2]:

Եվ ահա՛, չգիտես ինչու, ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեն հենց այդ անփորձ, հեղափոխական գործերի մեջ չստուգված մեկին ընդգրկել էր զինամթերքի ավելի քան 40 պահեստների պարունակությունն ու վիճակը ստուգող խմբի պատասխանատու աշխատանքի մեջ[3], և, ըստ էության, կազմակերպության լինել-չլինելու բախտը հանձնել նրան: Թե ինչո՞ւ – այդ հարցը այդպես էլ մութ մնաց բոլորի համար:

Սկսվում է զինապահեստների ստուգումը: Դրանք Վանի

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 7 (211), մայիս, 1940, էջ 72-73:*

[2] *ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 8, թ. 19:*

[3] *Տե՛ս* ***Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 78:*

Քաղաքամեջում և Այգեստանում, համարյա բոլորը, տեղավորված էին քաղաքացիների տներում: Ամեն մի զինապահեստ ուներ իր համարը և անվանումը:

Դեկտեմբերի 22-24-ին ստուգվում է զենքի՝ Կախեթ անունով ամենամեծ՝ Ա պահեստը[1]: Դեկտեմբերի 25-ին մաքրվում և կարգավորվում է Բ պահեստը, իսկ հաջորդ՝ Գ պահեստի ստուգումը և կարգի բերումը տևում են ամբողջ երեք օր: Կուսակցականներից մի քանիսը մեղադրում էին կենտրոնական կոմիտեին, թե նա անուշադրության է մատնել և բարձիթողի արել զենքի պահեստները, հատկապես Դ պահեստը, որի հետևանքով ռազմամթերքը փտել է գետնի տակ և այլն: Կոմիտեն հանձնարարել էր հատկապես մանրակրկիտ կերպով ստուգել Դ զինամթերանոցը: Ստուգումը ցույց էր տվել, որ տագնապն ու հարուցված մեղադրանքներն ավելորդ էին: Այդտեղ թե՛ զենքերը, թե՛ զինամթերքը լավ վիճակում էին: Այնուհետև ստուգվում են Ե (1907 թ. դեկտեմբերի 29-31), Զ (1908 թ. հունվարի 2-3), Է (հունվարի 4), Ը (հունվարի 5) զինապահեստները: Ծննդյան տոնի պատճառով աշխատանքները ժամանակավորապես դադարեցվում են, քանի որ պահեստներն անկարելի էր աննկատ պահել տոնի առթիվ կատարվող հաճախակի այցելությունների պատճառով: 1908 թ. հունվարի 8-ին վերսկսվում են զինապահեստների ստուգումները, զենքերի մաքրումն ու կարգավորումը: Նույն օրը խումբն աշխատում է Թ պահեստում, հունվարի 11-12-ին՝ Ժ, 13-ին՝ ԺԱ, 14-ին՝ ԺԲ պահեստներում[2]:

Ռամկավար ականավոր գործիչ Արտակ Դարբինյանը տասնամյակներ անց վկայել է, որ Վան-Վասպուրականի դաշնակցական ղեկավարները արմենականների հետ ունեցած զրույցների ժամանակ մեծ զոհունակությամբ նրանց ասում էին, թե իրենք մեծ աշխատանք են կատարել զենք ձեռք բերելու և Երկիր մտցնելու ուղղությամբ և որ թե՛ Վան քաղաքի և թե՛ գյուղերի թաքստոցներում ամբարած ունեն հազարավոր հրացաններ ու

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 7 (31), մայիս, 1925, էջ 137:*

[2] *Նույն տեղում, էջ 138-139:*

համապատասխան քանակի փամփուշտներ: Արմենականների այն հարցին, թե այդ դեպքում ինչո՞ւ նշված զենքերից բաժին չեն հանում գյուղացիներին, որոնցից ժամանակին բռնի ուժով դրամ են հավաքել զենք գնելու համար, դաշնակցականները պատասխանում էին.

«– Կու տանք, երբ գայ պատեհ ժամը. գիւղերուն մէջ ալ թաքստոցներ կան: Երբ զէնքի դիմելու ազդանշանը տրուի, հրացանները իսկոյն կոուողներուն պիտի տրուին,– կը պատասխանէին դաշնակցականները եւ կ'աւելցնէին, եթէ հիմա տանք զէնքը գիւղացիներուն ձեռքը, իրարու դէմ պիտի գործածեն, որովհետեւ տգէտ են, անասուն են մեր գիւղացիները...:

Բայց ահա՛ յանկարծ սարսռագին հով մը փչեց Վանի վրայ եւ այդ զինամթերքներու թաքստոցներուն դուռները բացաւ թուրք կառավարութեան առջեւ»[1]:

Տարիներ շարունակ անհուն տառապանքով ձեռք բերած զենքը շուտով անցնելու էր թշնամու ձեռքը[2]:

Պահեստների ստուգումը դեռ լրիվ չավարտած՝ Դավոն կենտրոնական կոմիտեին ներկայացնում է կաշառքի միջոցով իր հորն ազատելու պահանջը:

Դավոյի պահանջը կենտրոնական կոմիտեն քննում է ու հավաքաբար մերժում: Իր ելույթում Արամը պարզել էր, որ ՀՅ դաշնակցությունը սկզբունքով հակառակ է կաշառքի, ուստի

---

[1] **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947, էջ 173–174: Դաշնակցականների թվում կային անձինք, որոնք գտնում էին, որ սխալ է մեծ ջանքերով ձեռք բերած զենք-զինամթերքը պահեստավորելը և որ ավելի ճիշտ կլիներ խիստ հաշվառմամբ ու խիստ վերահսկողությամբ դրանք ժամանակավորապես հանձնել վստահելի հայ գյուղացիներին՝ պայմանով, որ հարկ եղած դեպքում, երբ ազդանշան կտրվի, դուրս գան կռվի ասպարեզ: Այդ դեպքում իշխանությունների համար գործնականում անհնարին կլիներ զենքերի բռնագրավումը: Այդպես էր արվում մի քանի երկրներում (օրինակ՝ Շվեյցարիա, որտեղ չկար կանոնավոր բանակ) և նույնիսկ Օսմանյան տերության մեջ գտնվող անհանգիստ տարածքներում (Ալբանիա, Մակեդոնիա):

[2] Տե՛ս **"Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диарбекирском вилаетах"**, Тифлис, 1909, с. 86-87.

այդ նպատակով չի կարող դրամ հատկացնել, բացի այդ՝ կազմակերպության վրա ծանրացած են ավելի մեծ հոգսեր, այն է՝ հնարավորինս նյութապես աջակցել հին ու անձնվեր փախստական ընկերների կարիքավոր ընտանիքներին: Արամը միաժամանակ Դավոյին առաջարկում է՝ ոստիկանական հետապնդումներից խուսափելու համար ժամանակավորապես անցնել արտասահման կամ միանալ չրջիկ զինված խմբերին: Արամը նաև Դավոյին վստահեցնում է, որ կենտրոնական կոմիտեն պետք եղած աշխատանքը կտանի, որպեսզի նրա հայրը, որքան կարելի է շուտ, անմեղ ճանաչվի և ազատ արձակվի[1]:

Այս հորդորներն ու թելադրանքները, սակայն, ազդեցություն չեն գործում հոռի բնավորություն ունեցող Դավոյի վրա: Ավելին, հանձին Արամի նա տեսնում է իր թշնամուն: Դավոյի վայրի բնազդների վրա խոր ազդեցություն էր գործել մի ուրիշ հանգամանք ևս: Քանի որ Դավոյին էր հանձնարարված զինապահեստներն ստուգող հանձնախմբի կարիքները հոգալու գործը, ուստի Կոմսն ամեն անգամ նրան առձեռն տալիս էր անհրաժեշտ գումար՝ պատվիրելով գնել այս կամ այն ապրանքը՝ զենք-զինամթերքի մաքրման, յուղման և փաթեթավորման համար: Հատկապես զգալի գումարներ էին ծախսվում ցինկե տուփեր ձեռք բերելու և փամփուշտները տեղավորելու համար:

Որոշ ժամանակ անց պարզ է դառնում, որ Դավոն յուրացնում է կենտրոնական կոմիտեից ստացած գումարների մի մասը, ուստի Կոմսն այլևս չի ուզում նրան կանխապես դրամ տալ: Դա պատճառ է դառնում, որ Դավոն թշնամանք տածի նաև Կոմսի նկատմամբ:

Հունվարի 16-ին, երբ խումբն ստուգում և մաքրում էր ԺԳ պահեստը, Դավոն գալիս է բոլորովին անզեն ու անհոգ: Երբ տղաները նրան նկատողություն են անում անզեն լինելու համար, նա հպարտությամբ ու հեգնանքով, նաև չարությամբ պատասխանում է. «Ոչ ոք չի համարձակվի մոտենալ ինձ: Վանում ինձ ձերբակալող չկայ»[2]:

---

[1] **«Հայրենիք»**, № 7 (211), մայիս, 1940, էջ 73:

[2] Նույն տեղում, № 7 (31), մայիս, 1925, էջ 140:

Հաջորդ չորս պահեստների (ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ) ստուգումը և կարգաբերումը կատարվում են հունվարի 17–18–ին, 19–ին, 20–21–ին և 22–ին: Խմբին չհաջողվեց չարունակել մյուս պահեստների ստուգումը, քանի որ Դավոն արդեն ոստիկանությանը հայտնել էր զինապահեստների տեղերը:

Մի հրապարակման մեջ այսպես է նկարագրված Դավոյի դավաճանությունը: Նա ներկայանում է կուսակալին և առաջարկում իրեն տալ մի զինվորական ուժ, խոստանալով մի քանի ժամում բոլոր հեղափոխականներին, իրենց ղեկավարներով հանդերձ, թևերը կապած, բերել ու չարել կուսակալի առջև, որից հետո, նույն զինվորական ուժի միջոցով, դատարկել Դաշնակցության զենքի ու զինամթերքի բոլոր գաղտնի պահեստները:

Կուսակալ Թահիր բեյը զարմանում է առաջին հայացքից որևէ վստահություն չներշնչող մեկի առաջարկության վրա, ապա, ստուգելու նպատակով, դավաճանին հրամայում է անմիջապես ցույց տալ որևէ պահեստի տեղը: Դավոն կուսակալին ասում է, թե նա իզուր է իր վրա կասկածանքով նայում, որ ինքն անկեղծորեն ուզում է ծառայել օսմանյան հայրենիքին: Կուսակալն անմիջապես կարգադրում է մի հեծյալ խումբ դնել Դավոյի տրամադրության տակ: Խմբին է միանում նաև ժանդարմերիայի հրամանատար Ահմեդ բեյը:

Դավոն խումբը նախ առաջնորդում է ս. Գրիգորի վանքը, ուր տաճարի պատերի ու գմբեթի գաղտնածածուկ պահարաններում գտնվում էին զենքի ու զինամթերքի մեծաքանակ կույտեր[1]: Իր առջև տեսնելով այդ ամենը, Ահմեդ բեյը, չկարողանալով զսպել ուրախությունը, ամուր գրկում է Դավոյին և մի քանի համբույր դրոշմում նրա ճակատին:

Կուսակալի մոտ այլևս որևէ կասկած չի մնում թուրքական իշխանությունների նկատմամբ դավաճանի հավատարմության վերաբերյալ: Նա Դավոյին ամրացնում է մի բավականին ստվար զինված ջոկատ, նրան պարգևատրում միանվագ մեծ գումարով և բարձր ամսական նշանակում[1]:

---

[1] Տե՛ս **Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան–Վասպուրականի, հատ. Բ, էջ 78, **«Յուշեր Արմենակ Եկարեանի»,** Գահիրէ, 1947, էջ 148:

Սկզբում որևէ մեկը չէր հավատում, որ հայ մարդը կարող է նման անօրինակ դավաճանության ունակ լինել: Ականատեսներից մեկը գրել է. «Մի քանի բոպէ բոլորս յանկարծակիի եկած, ապուշի դրութեան մէջ էինք. ոչ մի ձայն եւ ոչ մի ծպտուն. կարծես արիւնիս պաղել էր մեր երակների մէջ»[1]:

Հունվարի 22 լույս 23-ին, գիշերով, թուրք ոստիկանները, Դավոյի ուղեկցությամբ, մտնում են մի տան մեջ գտնվող զինապահեստը և դատարկում այն: Դրան հաջորդում են դավաճանին հայտնի մյուս պահեստները: Երբ տանտիրուհիներն սկսում էին լալ կատարվող մեծ դժբախտության հանդեպ, դավաճանը պարծանքով նրանց ասում էր. «Դեռ հալա ո՞ւր է, այնպիսի մի օյին հանիմ Դաշնակցութեան գլխին, որու նման հէչ տեսած չլինիք»: Իսկ մի ուրիշ տեղ ասել է. «Գացէ՛ք, ձեր պարոններուն* ասէք, որ մի օր էլ իրենց թեւերը կապկպած կառքերը պիտի լեցնեմ ու քարշ տամ դէպի բանտ...»[2]:

Արտասահմանից Վան հասած և՛ դրամը, և՛ զենք-զինամթերքը միայն Վասպուրականի համար չէին, այլ ընդհանրապես Երկրի կարիքների համար: Վերակազմյալների «Ազգը» գրում էր, որ դավադրությունն ու ոճիրը ուղղված են ամբողջ հայության դեմ, «տուժողը ամբողջ ժողովուրդը եղաւ»[3]: Տարիներ ի վեր գերմարդկային ճիգ ու աշխատանք էր թափվել, հարյուրավոր մատաղ կյանքեր էին զոհվել այդ զենքերը Կովկասից և Պարսկաստանից դժվարին ու արյունոտ ճանապարհներով Վան հասցնելու համար: Ուստի կարելի է պատկերացնել, թե արևմտահայ ժողովրդի ազատագրական պայքարի համար որքան մեծ դժբախտություն կլիներ, եթե Վան-Այգեստանում թաքցրած ամբողջ զենքն ու զինամթերքը թուրքական կառավարության ձեռքն անցներ:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 139-140:

* Երկրում հայերը կուսակցությունների ղեկավարներին «ընկեր» բառի տեղ «պարոն», իսկ «կուսակցություն» բառի տեղ «կազմակերպություն» էին ասում:

[3] **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 143:

[4] Տե՛ս **«Ազգ»**, № 55, 16 մայիսի 1908 թ.:

Իսկ ի՞նչ կարելի էր անել սկսված չփոթմունքի մեջ. պետք էր վճռական որոշում ընդունել:

Իրավիճակը կազմակերպության ղեկավարների առջև միանգամից դրել էր մի քանի դժվարագույն խնդիրներ. ա) փրկել զինապահեստների գոնե մի մասը, բ) ամեն կերպ խույս տալ կոտորածի վտանգից, գ) պատժել դավաճանին՝ նրան մեջտեղից վերացնելով:

Վանա Իշխանն առաջարկեց, առանց սպասելու, հարձակվել զինապահեստները գրավող Թուրք ոստիկանների ու զինվորների վրա. չմտածելով, թե հետևանքն ինչ է լինելու՝ պետք է հարձակվել, ասում էր նա[1]: Սարգիս Բարսեղյանն այդ առաջարկը համարեց արկածախնդրություն՝ գտնելով, որ նման քայլը Թուրքերին առիթ կտա, որպես հակաքայլ, առաջին հերթին մտնել հայերով լի քաղաքային շուկա, սրի քաշել հայերին և կողոպտել ունեցվածքը: Սարգիսը տվյալ պահի գլխավոր անելիքը համարում էր ոստիկանության չբռնագրաված և դեռ չհայտնաբերած զենք-զինամթերքն անհապաղ ուրիշ տեղ փոխադրելը: Այդ առաջարկն ընդունվեց:

Առանց ժամանակ կորցնելու, տղաներն անցնում են գործի և հունվարի 23-ի ընթացքում կարողանում են երկու պահեստ փոխադրել:

Հունվարի 24-ի արևածագին հայ հետախույզները հաղորդում են, որ Դավոն, երեկվանից ավելի ուժեղ ոստիկանական կազմով, վերսկսել է իր նողկալի մատնությունները: Որոշ տներում, ուր դավաճանը թեև գիտեր, որ հաստատված պահեստ կա, բայց որոշակիորեն չգիտեր, թե տան ո՛ր մասում է թաքցրած, նա ոստիկաններին ու զինվորներին հորդորում էր դաժանորեն հարցաքննել տանտերերին և որքան կարելի է չուտ իմանալ զենքերի տեղը: Վերջիններս, տանջանքների ենթարկվելով, ստիպված ցույց էին տալիս, թե տան կամ այգու ո՛ր մասում են թաքցրած զենքերը:

Այլևս սպասելն աղետավոր էր: Հարկավոր էր, ինչ գնով էլ լինի, ժամ առաջ վերացնել դավաճանին, որը նույն ժամերին

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 142:

հասցրել էր ոստիկանության միջոցով Թուրքաց Թաղ տեղափոխել իր ծնողներին:

Որոշվում է մի քանի հոգուց բաղկացած խմբով, Վանա իշխանի ղեկավարությամբ, մտնել Այգեստանում գտնվող Սահակ բեյի տունը, այնտեղ դիրք գրավել և սպասել, մինչև որ ռազմամթերքը գրաված և իր հետ տանող ոստիկանական խումբը, դավաճանի ուղեկցությամբ, գար ու անցներ տան առջևով: Պահը որսալով՝ տղաներից մեկը ռումբ էր նետելու Դավոյի վրա: Խմբին խստորեն պատվիրվել էր այնպես անել, որ ռումբը նետելուց, բացի դավաճանից, ոչ ոք չտուժի և ամեն կերպ խույս տալ Թուրք ոստիկանների ու զինվորների հետ ընդհարվելուց: Երբ դա տեղի ունենար, Սահակ բեյի տնից մոտ 400-500 քայլի վրա գտնվող Բեյլիենց տանը հավաքված ընկերները (որոնց Թվում էին նաև Կոմսը և Սարգիս Բարսեղյանը) պետք է տնից դուրս գային և սլանային ընկերներին օգնության[1]:

Բայց ռումբը նետվեց ոչ Թե դավաճանի, այլ նրան նմանվող և նրա պես հագնված մեկ զաբԹիեի վրա: «ՊայԹիւնը զօրեղ էր եւ բզկտուած դիակներու կտորներ օդը ելան,- հետագայում վերհիշել է Կոմսը:- Կը կարծէինք, Թէ Դաւօն անոնց մէջ էր: Վերէն ու վարէն որոտացին մեր հրացանները: Խուճապ ինկաւ զօրքին մէջ: Բայց փախուստի ճամփան կտրուած էր ետեւէն եւ առջեւէն: Ճիշդ այդ վայրկեանին նոր ու աւելի զարհուրելի պայԹիւն մը ցնցեց ամբողջ Այգեստանը: Մեր հրացաններու գնդակները պայԹեցուցած էին 4-5 ԹիԹեղներու մէջ եղած ուժանակը: Օգտուելով առիԹէն՝ մերինները անմիջապէս դուրս Թռան, չոքեցին փողոցին մէջ եւ անխնայ գնդակահարեցին փախուստի դիմող զինուորները: ԲազմաԹիւ բզկտուած դիակներ փռուեցան սայլերուն շուրջ եւ փողոցի երկայնքին ... Բայց Դաւօն չկար անոնց մէջ: Առաջին իսկ համազարկին՝ ան ինքզինքը նետած էր դիմացի կողմը եւ, ցատկելով պատէն, այգիներով ճողոպրած էր»[2]: Տեսնելով, որ դավաճանի փոխարեն բազմաԹիվ ուրիշներ են սպանվել, տղաները խոր ցավ զգացին, բայց արդեն ուշ էր:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 7 (31), մայիս, 1925, էջ 143:

[2] Նույն տեղում:

Երբ լսվում է ռումբի դղրդյունը, Բեյլիենց տնից բոլորը մի ակնթարթում հրացանները ձեռքներին դուրս են թափվում փողոց և վազում դեպի ռմբաձիգ խմբի կողմը: Միանալով այդ խմբին, նրանք միասին դեպի Խաչ-փողան տանող փողոցի վրա գրավում են մի քանի տներ և դիրք բռնում Թշնամու դեմ, որը դարան էր մտել դիմացի Թուրքական թաղում: Գնալով հրացանաձգությունը սաստկանում էր: Թուրքերի փոթորկալի նշանառության տակ էր հատկապես Սահակ բեյի տունը: Դավաճանը Թուրք զինվորների ու ոստիկանների շարքում կռվում էր իր երեկվա «ընկերների» դեմ[1]:

Ռումբը նետելուց հետո, երբ զոհերը դեռ ընկած էին գետնին, իսկ կենդանի մնացածները տարբեր կողմեր էին փախել, գրավված ռազմամթերքով լի սայլը մնացել էր փողոցի մեջտեղում: Հարկավոր էր տեր կանգնել ունեցվածքին, բայց դա հղի էր մահացու վտանգներով, որովհետև Թշնամու գնդակները սուլում էին չորս կողմում: Չնայած դրան, երկու արիասիրտ բուլղարահայ կտրիճներ՝ Սարգիսն ու Տիրանը (Հայրիկ), դուրս են ցատկում փողոց: Առաջինն սկսում է անտեր մնացած ապրանքը սայլից հեռացնել և անվտանգ տեղ տանել, իսկ երկրորդը, չոքած փողոցի մեջտեղում և կուրծք տված Թշնամուն, գնդակների տարափ էր տեղում նրա դիրքերի վրա, թույլ չտալով գլուխ բարձրացնել և տեսնել, թե ինչ է կատարվում ապրանքների հետ[2]:

Կռիվը տևում է ամբողջ 5-6 ժամ: Զորքից ու ոստիկանությունից սպանվում է 8-10 հոգի:

Մութը կամաց-կամաց սկսում էր թանձրանալ, երբ Թուրք խուժանը հարձակում սկսեց Սահակ բեյի տան վրա: Զանցած մի քանի րոպե, այնտեղից լսվում էր թալանչիների ոռնոցը, որոնք դատարկում էին տարաբախտ օջախը:

Այգեստանում տեղի ունեցած ռմբահարումից հետո եկած օրերն այսպես է նկարագրել Համբարձում Երամյանը.

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 143:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 143-144: Նաև՝ **«Վտակ»**, № 54, 9 մարտի 1908 թ.:

«Այս դէպքին վրայ կառավարութիւնը դադրեցուց խուզարկութիւնը եւ Պիթլիսէն, Էրզրումէն ու Մուշէն հետզհետէ 8–10 վաշտ զօրք բերել տալով՝ զինուորական խիստ պաշարումի ենթարկեց ամբողջ Այգեստանը: Պաշարման գործողութիւնը տեւեց ամբողջ երեք ամիս: Խրամներ փորուեցան բովանդակ Այգեստանի շուրջ եւ մերձակայ քանի մը բարձրութիւններու վրայ թնդանօթի մարտկոցներ զետեղուելով՝ կրակի օղակի մը մէջ պրկուեցաւ ամբողջ Վանը: Հաղորդակցութիւնը գրեթէ ամբողջովին դադրեցաւ քաղաքի եւ Այգեստանի միջև եւ բոլոր գիւղերու ու գաւառներու հետ, որոնք նոյնպէս ամենախիստ հսկողութեան տակ առնուեցան, զի գաւառներու մէջ եւս դաշնակցական բազմաթիւ խումբեր կազմակերպուած էին: Բարեբաղդաբար պաշարման գործողութեանց հրամանատարութիւնը կը վարէր բարեմիտ անձնաւորութիւն մը՝ ճէլալ փաշա որ ըստ կարելւոյն պիտի աշխատէր ժողովուրդը զերծ պահել կրակէ ու գնդակէ: Շուկաներն ու դպրոցները մինչեւ 10 Մարտ կէս բաց կէս գոց վիճակ մը ունեցած էին արդէն եւ ժողովուրդն ամբողջ, քանիերորդ անգամ լինելով, իր տունն ու տեղը ձգած ու կեղրոնացած էր հիւպատոսական թաղերը: Ամէն ոք բնազդաբար ինքնապաշտպանութեան կը պատրաստուէր՝ տանիքներու վրայ պատնէշներ կառուցանելով կամ քարերու կոյտեր դիզելով: Դաշնակցութիւնն եւս իր կողմանէ սեղմ շղթայի տակ առաւ ամբողջ ներքին թաղերը: Դիրքեր որոշուեցան եւ կազմակերպուած խումբեր մշտարթուն կը հսկէին այն անցքերուն վրայ, ուսկից թուրք խուժանը կրնար ներս սպրդիլ...»[1]:

Այդ նոյն ժամանակ ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեի որոշման համաձայն, դաշնակցականների մի քանի խմբեր զբաղված էին զենքի պահեստները մի տնից մյուսը փոխադրելով: Բայց այստեղ մի մեծ արգելք էր առաջ եկել. որևէ ընտանիք չէր ուզում իր տունը տրամադրել կենտրոնական կոմիտեին: Խմբերից մեկի անդամներից Մատթեոսը, տարիներ անց, գրել է. «Թէ ինչպէս ընդունեցին իրենց յարկի տակ միւս խմբերին տնեցինե-

---

[1] **Համբարձում Երամեան,** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 79:*

ը՝ այդ չգիտեմ: Միայն թէ, երբ մենք եկանք մեզ համար որոշ-ուած տունը, նախ, մեծ դժուարութեամբ բացին մեր առջեւ դուռը, ապա՝ մեծից սկսած մինչեւ ամենափոքրը սկսեցին ծունկերնին ծեծել, մազերնին փետտել, աղաչանք, աղերսանք, նոյնիսկ փորձ՝ ոտքերնիս խնալու, որպէսզի թողնենք իրենց տունը եւ հեռանանք մի այլ տուն...»[1]:

Հունվարի 25-ի առավոտյան Կոմսը նամակ է գրում թուրք ազատականներին, որով տեղեկություններ է պահանջում, թե ի՞նչ մտադրություն ունի կառավարությունը և ի՞նչ նպատակներ է հետապնդում խուժանը: Մտավախությունն այն էր, որ թուրքերը լայնածավալ հարձակում կսկսեն հայկական թաղերի վրա: Ստացվում է նամակի պատասխանը. «Եթէ կառավարութիւնը յաջողի ձեզ նեղը ձգել, այդ պարագային մենք պատրաստ ենք ձեզ օգնութեան գալու. այդ մասին վստահ եղէ՛ք մեզ վրայ: Իսկ եթէ խուժանը համարձակի վրայ տալ հայոց թաղերի վրայ, այդ պարագային որքան կարելի է չատ ջարդեցէ՛ք այդ աւազակներին, մենք եւս պիտի յարձակուինք անոնց վրայ...»[2]:

Երիտթուրքերն այդպես էին պատասխանել, բայց, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, նրանք որևէ քայլ չարեցին ինչ-որ ձևով կանխելու հայերի դեմ սանձազերծվելիք գազանությունները:

ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեի ղեկավարությունը կարծում էր, թե թուրքական զորքը հետևյալ առավոտ ընդհանուր հարձակման կանցնի, բայց սպասված հարձակումը տեղի չունեցավ, քանի որ իշխանություններն այդ ժամանակ Վանում բավականաչափ զորք չունեին նման քայլ կատարելու համար:

Մյուս կողմից, հայ խիզախների խոյանքը չէր կարող փրկել ընդհանուր դրությունը: Հետագա օրերին կառավարության ձեռքն անցավ ՀՅԴ Շամի կազմակերպության Այգեստանի ու Վանի ուրիշ թաղերի, հատկապես Աղվեսաձորի[3], նաև քաղաքից դուրս գտնվող մի շարք պահեստներ, և դրանց ընդհանուր թիվը

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 7 (31), մայիս, 1925, էջ 138-139:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 139:

[3] **«Ցուցեր Արմենակ Եկարեանի»**, էջ 148:

հասավ 10-ի: Թշնամին գրավեց 300 հրացան, որից 121-ը՝ Մոսին, մնացածները՝ մարթինի և բերդան, հրացանի 40 փող, 8 Մաուզեր ատրճանակ, շուրջ 600 հազար փամփուշտ, ավելի քան 200 կգ պայթուցիկ (150 տուփ), 175 կգ սպիտակ վառոդ, բավական թվով հրացանի մասեր, փամփուշտ և ռումբ լցնելու գործիքներ, դիտակներ, զանազան ուրիշ իրեր[1]:

Ցավոք, իրականություն էր դարձել ֆիդայապետ Անդրանիկ Օզանյանի մտավախությունը: Լսելով զենք-զինամթերքի կորստի մասին՝ նա դուրս էր եկել հավասարակշռությունից և երկար ժամանակ չէր կարողանում մոռացության տալ կատարվածը: Ամեն անգամ, երբ խոսք էր բացվում թուրքական իշխանության կողմից զենքերը գրավելու մասին, նա մեղավոր էր ճանաչում ոչ միայն Դավոյին, այլև ՀՅԴ Շամի կազմակերպության ղեկավարներին, որոնք անհասկանալիորեն անսահման վստահություն էին տածել դավաճանի հանդեպ, չէին կարողացել պահեստները պահպանել:

Մյուս պահեստների փրկությունը ուժերի գերագույն լարում էր պահանջում: Կոմսն իր հուշերում գրել է, որ «կարճ միջոցէն ոչ միայն մեր տղաները, այլեւ Այգեստանի կանայք եւ երեխաները թափուած էին դուրս եւ, այգիներու ճամբաներով բեռնաւորուած՝ մեր հին պահեստները կը փոխադրէին դէպի ժամանակաւոր ապահով տեղեր, փրկելու համար կորուստէ, ինչ որ հնարաւոր էր: Ժողովուրդի նման վերաբերմունքի չնորհիւ, երեսունէ աւելի պահեստներ փոխադրուեցան զանազան վայրեր՝ ժողովուրդի ձեռքով»[2]:

Հենց սկզբից կուսակալ Թահիր բեյը գրաված զենքերի թիվը դիտմամբ հանրությանը ներկայացրեց շատ չափազանցված՝

---

[1] Տե՛ս **«Վտակ»,** № 59, 15 մարտի 1908 թ., **«Հայրենիք»,** № 11 (393), նոյեմբեր, 1958, էջ 52: Գրավված զենքերի ու զինամթերքի մասին աղբյուրներում և ուսումնասիրություններում տարբեր թվեր են նշված: Օրինակ՝ Միքայել Վարանդյանը բերում է հետևյալ թվերը՝ 260 հրացան, 207 կգ ուժանակ, 300.000-ի չափ փամփուշտ (տե՛ս **«Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն»,** հատ. Բ, էջ 215-ի տողատակը): «Դրօշակի» տվյալներով՝ բռնագրավված հրացանների թիվը 300 էր (տե՛ս **«Դրօշակ»,** № 3 (191), մարտ, 1908, էջ 34):

[2] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 515:

հետապնդելով երեք նպատակ՝ Թուրքերին ու քրդերին ահաբեկել՝ հայերի դեմ նրանց է՛լ ավելի ուժգին գրգռելու համար, երկրորդ, հայկական նահանգներում նոր ջարդեր սկսելիս եվրոպական պետությունների առջև արդարանալ՝ վկայակոչելով հակակառավարական ապստամբության համար նախատեսված զենքերի մեծ քանակը, և երրորդ, Բարձր Դռանը ցույց տալ, թե Վասպուրականի կուսակալը ինչպիսի՜ անգնահատելի ծառայություն է մատուցել հայրենիքին:

Բանն այն է, որ կուսակալ Թահիր բեյը մի հասարակ մութասերիֆի պաշտոնից էր նշանակվել իր ներկա բարձր պաշտոնին, որը և խոր դժգոհություն էր առաջ բերել Թուրք չատ գործիչների մոտ: Բայց այժմ, հայերի զենքի պահեստների բռնագրավման առիթով, նա հայտնի մարդ էր դարձել երկրում, ամրապնդվել էր իր պաշտոնում և կառավարության կողմից արժանացել փաշայի տիտղոսի: Բայց դա պատճառ էր դարձել կուսակալի և կուսակալության ընդհանուր զորաց հրամանատար Ֆերիգի միջև հարաբերությունների լարման: Վերջինս դժգոհ էր, որ պահեստների բռնագրավման ուղղությամբ ամենաչատ ջանքերը գործադրել են իր զորքերը, բայց ուշադրության և պատվի է արժանացել միայն կուսակալը:

Զենքի պահեստների բռնագրավումից հետո կուսակալ փաշան Վանում խորհրդակցության կանչեց զինվորական և ոստիկանական բոլոր ղեկավարներին: Ելույթ ունենալով, նա ասաց. «Շատ, չատ վտանգաւոր կացութեան մէջ ենք. մենք մեզ չխաբենք: Անշուշտ նոյնքան, եթէ ոչ անոր տասնապատիկը պահեստներ կը գտնուին լեռներու մէջ, Իշխանի տրամադրութեան տակ, եւ այդ վտանգաւոր Արամը շրջաններն ալ զինած ու ցրած ուժեր ունի եւ մեր գլխուն փորձանք կը պատրաստէ: Ուստի չատ զգոյշ եւ արթուն պէտք է ըլլալ»[1]:

Ապա խորհրդակցության մասնակիցներին որոշակի հանձնարարություններ տալուց հետո կուսակալն իր եզրափակիչ խոսքում, այս էլ որերորդ անգամ այդ օրը, անդրադառնում է Արամին և Իշխանին, ասելով.

---

[1] **Ռուբէն**, *Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, Լոս Անճելոս, 1951, էջ 259:*

«Հոս միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թէ ինչ կ'ուզէ: Ան արժանի է փաչա կոչուելու: Արամն է: Հոն լեռներու մէջ մէկ բէյ կայ, Իշխանն է: Ասոնք են փեթակներու մայրը եւ այժմ թէ՛ քաղաքի եւ թէ՛ գիւղերու առաջնորդն են...»[1]:

1908 թ. փետրվարի 10-ին Արամը տեսակցություն է ունենում Վանի երիտթուրք ղեկավարների հետ՝ նպատակ ունենալով պարզել, թե նրանք ի՞նչ դիրք են բռնելու, եթե քաղաքի թուրքերը հարձակում սկսեն հայկական թաղերի վրա: Վերջիններս պատասխանում են, թե իրենք չեն ուզում թաքցնել, որ թուրք ամբոխը շատ է գրգռված հայերի դեմ և, ատամները կճրտացնելով, սպասում է հարմար առիթի՝ հայկական թաղերի վրա հարձակվելու, ջարդելու և կողոպտելու համար: Քաղաքի երիտթուրք ղեկավարները միաժամանակ հայտարարել էին, որ եթե խուժանը գործի անցնի, իրենք, իբր, իրենց հերթին, հարված կհասցնեն նրան:

Ինչ վերաբերում է Իշխանին, նա, ինչպես տեսանք, Դավոյի դավաճանության օրերին գտնվում էր Վանում: Առաջին պահեստները թշնամու ձեռքն ընկնելուց հետո նա անմիջապես մեկնում է Լեռնապար, կասկածելով, թե իր չրջանի զինապահեստները նույնպես կարող են վտանգված լինել: Բայց կասկածն անտեղի էր. ապահով էին բոլոր պահեստները[2]:

Լեռնապարում կուսակցության կուռ ամբողջության մեջ որևէ ճեղք չբացվեց: Շարքերից ներս որևէ կասկած ու տագնապ չկար: Ընդհակառակը, դրանք ավելի պիրկ սեղմվելով, պատնեշ դարձան վտանգների առջև: Այլ խոսքով, արհավիրքի ու մռայլ հուսահատության այդ օրերին կանգուն էր մնացել Լեռնապարը՝ իր մարտական խմբերով ու բովանդակ կազմակերպվածությամբ:

Ոչ միայն դավադիրներն ու մատնիչները, այլև կառավարական ուժերը չէին համարձակվում մոտենալ Լեռնապարի ժայռոտ բարձունքներին, ուր Իշխանն էր իշխում:

Սարսռազդու մատնության աղետը անչափ ծանր էր, կամք

---

[1] ***Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, էջ 259:*

[2] *Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (393), նոյեմբեր, 1958, էջ 52-53:*

ջլատող և բարոյալքող: Հայ հեղափոխականները, մանավանդ ժողովուրդը, չչմել էին հարվածի սաստկությունից: Խոր վիշտն ու հիասթափությունը համակել էին ամենքին: Մտատանջ էին ոչ միայն Վանի դաշնակցական ղեկավարները, այլև ազգային-ազատագրական շարժման բոլոր գործիչները՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Նրանք մտատանջ էին կատարված մեծ դավաճանության, ժողովրդի անել կացության, սպասվելիք փոթորիկների համար:

Այս ծայրահեղ վտանգավոր իրադրության մեջ, չհաշված հայ հասարակության փոքրաթիվ տականքը, բոլոր հայերն անխտիր, մտածում էին վիճակից դուրս գալու ուղղությամբ իրենց անելիքների մասին: Բոլորը պատրաստվում էին դիմադրության: «Դաշնակցական շարքերը, արմենական, հնչակեան եւ չէզոք մարտական տարրերը եղբայրացած էին եւ գրաւած բոլոր դիրքերը»[1],- նշել է Կոմսը:

Փետրվարի կեսից Վանում սկսվեցին զանգվածային ձերբակալություններ: Դավաճանի՝ իշխանություններին հանձնած ցուցակը պարունակում էր շուրջ 1000 անձի անուն[2]: Վանի ամբողջ երիտասարդությունը կասկածի տակ էր: Դավոն միաժամանակ հայտարարում էր, թե ինքը զենքերը իշխանություններին է հանձնել ժողովուրդը վերահաս կոտորածից փրկելու համար: Իրեն ժողովրդի անեծքի առջև արդարացնելու համար Դավոն նաև ջանաց ինքնագիր թռուցիկով արատներ վերագրել Վասպուրականի հեղափոխական հայ ղեկավարներին՝ նրանց մեղադրելով ինչ-ինչ գեղծումների մեջ:

Զրկվելով ղեկավար կադրերից՝ Շամի կենտրոնական կոմիտեության բովանդակ տարածքի վրա Դաշնակցության կազմակերպության շարքերն սկսեցին երերալ: Զանգվածներում ծայր առած հոգեկան փլուզումը սպառնում էր կործանել ամեն հույս ու ապագա:

Կազմակերպության հնարավոր փլուզման հեռանկարը ոգեշնչել էր դավաճանության հակված տարրերին: Իր հրեշավոր

---

[1] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 45:

[2] Տե՛ս **«Վտակ»**, № 106, 18 մայիսի 1908 թ.:

արարքով հայ մատնիչների ու դավաճանների սև տարեգրության մեջ եզակի տեղ բռնած Դավոն ուներ կողմնակիցներ ու պաշտպաններ, որոնք հրապարակ էին իջնում այլևս առանց վախենալու հեղափոխականների վրեժխնդրությունից: Դավաճանություններն ու մատնությունները գնալով հաճախակի դարձան: Քաղաքի ամեն թաղում իշխանությունը հայերից ուներ իր լրտեսները, որոնց թվում հատկապես չատ էին հայ պառավ կանայք: Միանգամայն հասկանալի էր, որ այդ մթնոլորտում անպայման պետք է նոր դավոներ, հայ ցեղի նոր վիժվածքներ ծնվեին:

Վանի հայության էֆենդիական դասը նույնիսկ համակրանքով էր վերաբերում կատարված դավաճանության: Կարծես իրականանում էր նրա վաղեմի իղձը՝ Վանը տեսնել առանց հեղափոխական ուժերի: Այս միջավայրում էր եփվել այն զրպարտությունը, թե Դավոյի դավաճանության պատճառը Արամ Մանուկյանն է: Ամբոխի չրջանում բերնից բերան սլացող նյութը գլխավորապես կազմում էր Արամին վերագրված հերյուրանքը, թե նա կենակցել է Ալես Պարսամյանի քրոջ՝ Սաթենիկի հետ և ապա իր այդ հանցանքը քողարկելու համար, մահվան սպառնալիքի տակ, Դավոյին ստիպել է ամուսնանալ նրա հետ: Եվ, իբր, իր օձիքն Արամից ազատելու համար, Դավոն դիմել է այդ սարսափելի դավաճանությանը:

Ինչ խոսք, այդ զրպարտությունը նյութվել էր Դավոյի դավաճանությունն արդարացնելու համար[1]:

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 7 (31), մայիս, 1925, էջ 140: Արամ Մանուկյանին ամբաստանելու հետ կապված պատմությունը տարբեր կերպ է ներկայացնում Արշալույս Աստվածատրյանն իր «Արամը» արժեքավոր հետազոտության մեջ, գրելով. «Դավոն, երիտասարդ եւ վստահելի կուսակցական, տեղեակ զինական պահեստներին, մտերմական կապ է ունենում կուսակցական մի ընկերոջ քրոջ հետ, որը յղիանում է եւ խոստովանում, որ Դավոյից է: Աղջկայ եղբայրը, այդ մասին իմացնելով կուսակցական պատասխանատու ընկերներից մէկին, սպառնում է սպաննել Դավոյին, եթէ կուսակցական ճանապարհով միջոց չգտնուի այդ արատը վերացնելու իր տնից: Կուսակցութեան անունից Դաւօն կանչւում է պատասխանատուութեան՝ կա՛մ անմիջապէս ամուսնանալ, կա՛մ մահուան դատապարտուիլ: Մինչ այդ՝ Դաւօն հանգստացրել էր աղջկան՝ խոս-

Եթե դավաճանն իր եղկելի արարքով անձնական վրեժ էր լուծել Արամից, ապա անհասկանալի է մնում թե ինչո՞ւ, փոխանակ սպանելու նրան, նա այդ իշխանություններին է մատնել կազմակերպության զենքն ու զինամթերքը՝ նույնիսկ չզղջալով կատարած հսկայական ավերմունքի համար:

Դավոն Վանում ապրում էր կղզիացած, դուրս չէր գալիս թուրքական թաղերից, գիշերներն անցկացնում էր զորանոցի մոտերքում՝ Ահմեդ բեյի տանը: Միայն ցերեկը, կեսօրին, պահակներով շրջապատված, իջնում էր կուսակալի տունը, ուր նորանոր զիվային ծրագրեր էին պատրաստվում: Հայերը դեռ շատ չարիքներ էին սպասում դավաճանից:

ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեն մի քանի ընկերների հանձնարարեց հետևել Դավոյի շարժումներին և, հարմար պա-

---

տանալով տատմեր գտնել: Տատմերը պահանջել էր մեծ գումար: Դաւօն զիմում է Արամին եւ խնդրում յիսուն օսմանեան ոսկի՝ իբր թէ բանտարկուած հօրը ազատելու համար (հայրը, իրօք, ինչ-որ յանցանքի համար բանտարկուած էր): Արամը, անտեղեակ Դաւոյի ստոր պատմութեան, մերժում է դրամ տալ, բայց միաժամանակ հանգստացնում է նրան՝ խոստանալով այլ միջոցով ազատել Դաւոյի բանտարկուած հօրը: Արամի մերժումով Դաւոյի ծրագիրը ջուրն է ընկնում, որով նա ատելութեամբ է լցւում դէպի Արամը: Իր յանցանքը խարուած աղջկայ դէմ քօղարկելու նպատակով, նա բամբասում է նաեւ ուրիշներին, որոնք, իբր, եղել են աղջկայ մօտ, ակնարկելով նաեւ Արամին, առանց, սակայն, անունը տալու: Նոյնը նաեւ կուսակցական քննութեան ժամանակ: Սակայն երբ վերջնականապէս համոզւում է, որ զրպարտութեամբ օձիքը անկարող է ազատել եւ աղջկայ հետ չամուսնանալու դէպքը իրեն մահ է սպառնում եւ, չկամենալով ամուսնանալ, նա փրկութիւն է փնտրում Թուրք կառավարութեան մօտ՝ մատնութեան գնով» (տե՛ս ***«Արամը»****, էջ 43-44): Հարկ է նշել, որ այդ մութ պատմությունն իր տարբեր դրսևորումներն է ունեցել արմենական, հնչակյան, ռամկավար և չեզոք մամուլի էջերում ու առանձին հրապարակումներում, որոնցում դեպքին տարբեր գնահատականներ են տրվել: Հնչակյան և ռամկավար հեղինակները կենցաղային այդ վարկածին աննախադեպ հնչեղություն են հաղորդել, Արամին մեղավոր են ճանաչել՝ նրա կուսակցությունը վարկաբեկելու համար, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին դաշնակցական մամուլը և գործիչները, գործածելով Ավետիս Նազարբեկյանի երկրորդ ամուսնության փաստը, նպատակ ունեին հարվածել ՍԴ հնչակյան կուսակցության վարկին:*

բագային, գնդակահարել: Ամբողջ օրերով հարմար դիրքերում դարան մտած՝ վանեցի ատելությամբ լի երիտասարդները սպասում էին վերացնելու չարիքը:

Բայց Վան-Վասպուրականի Թուրքական իշխանություններն իրենց ամուր պաշտպանության տակ էին առել դավաճանին՝ ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով չեզոքացնելով ոճրագործի կյանքին սպառնացող վտանգները:

Օրերն ու շաբաթներն անցնում էին, բայց դավաճանը դեռ կենդանի էր և շարունակում էր իր սև գործը: Ահա թե ինչո՛ւ ընկերների շրջանում առաջարկներ հնչեցին դավաճանին ոչնչացնելու համար փորձված ահաբեկիչ կանչել Կովկասից:

Բայց դրսից մարդ կանչելը մերժվեց, քանի որ, նախ, գործի հաջող իրականացումը պահանջում էր լավ ծանոթ լինել քաղաքի թաղերին ու փողոցներին, երկրորդ՝ Վանի երիտասարդության վրա մեծ արատ կարող էր մնալ, եթե դավաճանից վրեժ լուծելը կատարեին դրսեցիները:

Վերջապես վրա հասավ հատուցման ժամը:

1908 թ. մարտի 10-ին, երբ Խաչ-փողանի հրապարակի մոտ, Թուրքաց մեծ թաղում, ժանդարմերիայի հրամանատար Ահմեդ բեյի տան առջև Դավոն իր թիկնապահ Հաջի Հյուսնիի հետ թևթևի պտտվում էր խրոխտ ու լրբորեն, նրա վրա հարձակվում է 18-ամյա խիզախ հայորդի Տաճատ Թերլեմեզյանը և ատրճանակի հարվածով դավաճանին գետին տապալում[1]: Դավոն մահացու վերք է ստանում գլխից, իսկ ահաբեկիչը կարողանում է դեպքի վայրից փախչել: Առաջինը նրա հետևից է ընկնում Հաջի*

---

* *Համբարձում Երամյանը, վերհիշելով Տաճատ Թերլեմեզյանի աչակերտական տարիները, գրել է. «Տաճատ ի մանկութենէ մրրիկ մը ունէր կրծքին տակ. նա դեռ աչակերտ, տարի մը առաջ մեր դպրոցին մէջ արտասանած էր մրրկահաւի (albatros) վրայ չգիտեմ ո՛ր հեղինակին մէկ մրրկոտ արձակը, անոր մէջ արտացոլացնելով իր մրրկայոյզ հոգիի ամբողջ թափն ու խիզախութիւնը» (**Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 80): «Չգիտեմ ո՛ր հեղինակին մէկ մրրկոտ արձակը» հավանաբար եղել է Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը»):*

[1] ***«Յուշեր Արմենակ Եկարեանի»,*** *էջ 148:*

Հյուսնին, բայց որոշ տարածություն անցնելուց հետո, վախենալով, թե կարող է ահաբեկչից գնդակ ընդունել, դադարեցնում է հետապնդումը և հետ դառնում: Նույն բանն անում է մի զինվոր, որը նույնպես, Տաճատի սպառնալիքից ընկրկած, վերադառնում է իր տեղը[1]:

Դավոյի ահաբեկումից քիչ անց Վասպուրականի կառավարական ավագանին գալիս է դեպքի վայր՝ տեղեկանալու իշխանություններին այդքան մեծ ծառայություն մատուցած դավաճանի վիճակին:

Խաչ-փողանի հայ առևտրականները, տեղի ունեցածից սարսափած, անմիջապես փակում են խանութները: Խուճապն անպատմելի էր: Թուրք պաշտոնյաներն ու խուժանը իրենց պաշտելի Դավոյին գետին տապալած տեսնելով՝ սկսեցին վրեժ առնել անմեղ ժողովրդից: Մոլեռանդ կատաղիները կողոպտում էին պատահած հայերին, նրանցից շատերին սպանում սառը զենքերով[2]:

Նույն օրը, ուշ երեկոյան, սարսափելի բարբարոսություններ կատարվեցին հատկապես Վան-Այգեստան ճանապարհին: Հարձակվելով Քաղաքամեջից Այգեստան վերադարձող հայերի վրա, խուժանը, անձայն ու անաղմուկ, քարերով, փայտերով, կացնով ու սրով սպանեց մոտ 100 հոգու: Անգամ թուրք և քուրդ կրոնամոլ կույր կամ անդամալույծ մուրացկանները, որոնք այդ պահին ճանապարհով անցնելիս են լինում, հավատակից ոճրագործներին աղաչում-պաղատում են իրենցից ամեն մեկին գոնե մեկ գյավուր հանձնել՝ նրան գլխատելու և Մուհամմեդ մարգարեի խոստացած արքայությունը մտնելու համար: Նրանց խնդրանքն անլսելի չէր մնում: Այդ զարհուրելի ոճրագործությանը մասնակցում էին նաև թուրք կանայք և թուրք երեխաներ[3]:

Հաջորդ օրը, մարտի 11-ին, բարբարոսները շարունակեցին իրենց «քաջագործությունները», և հայերը նոր զոհեր տվեցին:

Այսպես, օրինակ, մի թուրք Սահակ Սաբոնջյանին փայտով

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (264), հունվար, 1948, էջ 92:

[2] Տե՛ս **«Հնչակ»**, № 4-5, 1908, էջ 41:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 135, 22 հունիսի 1908 թ.:

սպանել չկարողանալով՝ կնոջը պատվիրում է իր դաշույնը չուտ բերել տնից: Թրքուհին անմիջապես բերում է դաշույնը, և Սահակն ընկնում է փորոտիքը թափված: Բազմաթիվ ուրիշ հայեր նույնպես այդ օրը զոհ են գնում: Դիակներ էին ընկած բաղնիքի առջև, ս. Հակոբի և Ակրբու թաղերում, Խաչ-փողանից քաղաք տանող և Արարուց ճանապարհների վրա: Սպանվածների դիակները թուրքերը լցնում էին փոսերի մեջ կամ քարշ տալով պատերի տակ, դրանք փլցնում էին նրանց վրա[1]:

Զարագործությունների պարագլուխները ազատ շրջում էին և որևէ պատասխանատվության չէին ենթարկվում[2]:

Իսկ վիրավոր մատնիչին թուրքերը խնամում էին գուրգուրալից: Ավելին, շատ թուրքեր նրան համարում էին չեհիդ (սուրբ նահատակ): Բայց Դավոն մարտի 11-ի գիշերը խնդրում է իր մոտ կանչել տեր Հուսիկ քահանա Փեհրիզյանին, որին խոստովանում է և Աստծուց ներում խնդրում[3]: Մարտի 13-ի երեկոյան դավաճանը հոգին փչում է սաստիկ տանջանքների մեջ:

Դավոյի մահվան լուրն ավելի է կատաղեցնում թուրք խուժանին: Մարտի 13-15-ին նորից սպանվեց 39, վիրավորվեց 7, անհետ կորավ 23 հոգի[4], իսկ մարտի 23-ին իշխանությունների գրգռումով սպանվեցին ևս 60-ի չափ հայեր[5]:

Այգեստանցի 2000 հայեր ապաստանեցին Քաղաքամեջի հայոց տներում[6]: «Նոր հեռագիրները ցույց կու տան,- գրում էր «Երկրի ձայնը» թերթը,- որ Վանի ողբերգությունը ո՛չ միայն իր վախճանին մոտ չէ, այլ ընդհակառակը, մենք հանդիսատես կամ ունկնդիր պիտի ըլլանք նոր տեսարաններու»[7]: Եվ իսկապես, հայերի խոշտանգումների և սպանությունների ալիքը Վան քա-

---

[1] Տե՛ս **«Վտակ»,** № 61, 18 մարտի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Դրօշակ»,** № 5 (193), մայիս, 1908, էջ 67:

[3] Տե՛ս **Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 80:

[4] Տե՛ս **«Մշակ»,** № 135, 22 հունիսի 1908 թ.:

[5] Տե՛ս **«Դրօշակ»,** № 5 (193), մայիս, 1908, էջ 67:

[6] Տե՛ս **«Հնչակ»,** № 4-5, 1908, էջ 41:

[7] **«Երկրի ձայնը»,** № 10, 23 մարտի 1908 թ.:

դաքից դուրս գալով տարածվեց շրջակա բնակավայրերում: Ա-Դո-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) գրում էր.

«Թէ մի քանի շաբաթների ընթացքում Վան-Տօսպի, Հայոց Ձորի, Արճակի եւ Աբաղայի շատ գիւղերում որպիսի տանջանքներ եւ տանջանքների որպիսի ձեւեր գործ դրուեցին կասկածի տակ գտնուող հայերի վրայ, դժուար է նկարագրել:

Մարդկանց ծեծի տակ ուշաթափ էին դարձնում, շատերին տանջում էին, թողնելով առանց հացի ու ջրի. շատերին կախում էին գլխի վայր օդի մէջ եւ այդպէս պահում ժամով. տեղ-տեղ մերկացնում էին մարդկանց եւ երկար ժամանակ սառը ջուր լցնում վերան. եւ վերջապէս շատերի մատների եղունգների տակ փայտէ սուր փշեր էին խփում ու տանջում, ստիպելով չեղած բաներ խոստովանել, չեղած բաներ ասել»[1]:

Սպանությունները դեռ երկար կշարունակվեին, եթե չմիջամտեին Վանի ռուսական և ֆրանսիական հյուպատոսները, որոնք միասնաբար հանդես եկան սպանությունները դատապարտող հայտարարությամբ՝ ուղղված տեղի կուսակալ Թահիր փաշային: Իրենց հերթին, նշված պետությունների դեսպանները, ի պաշտպանություն հայերի, համատեղ բողոք ներկայացրին Բարձր Դռանը[2]: Վերջինս պատասխանեց դրությունը շտկելու հավաստիացումներով: Ելնելով այդ պատասխանից՝ հյուպատոսները ջանում էին հանդարտեցնել Վանի, Վասպուրականի և Տարոնի ժողովրդին, հավաստելով, թե կոտորած չի լինելու, և տեղի կառավարչությունը պարտավոր է բավականանալ միայն խուզարկություններով:

Բայց ոճրագործ իշխանություններն իրենց անելիքը լավ գիտեին:

Իսկական որս սկսվեց ՀՅԴ Շամի կազմակերպության ղեկավարների դեմ: Աչքի ընկնող գործիչների մի մասին հաջողվեց հե-

---

[1] ***Ա-Դո**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները: Ուսումնասիրութեան մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրաւական եւ տնտեսական դրութեան, Երեւան, 1912, էջ 333:*

[2] *Տե՛ս **«Վտակ»**, № 61, 18 մարտի 1908 թ.:*

ռանալ քաղաքից: Մյուսները խուզարկու աչքերից թաքնվում էին՝ մի տեղից մյուսը տեղափոխվելով: Առավել փտանգված 19 հեղափոխականներ, այդ թվում՝ Արամ Մանուկյանը, Բուլղարացի Գրիգորը (Գեոզեյան), Ղևոնդ Մելոյանը, Թևոս Դեղդրիկյանը, Դավոյի ահաբեկիչ Տաճատ Թերլեմեզյանը և ուրիշներ, նպատակահարմար են համարում իջնել ջրհոր: Դրսում մնացողները լուր են տարածում, թե նշված անձինք հեռացել են քաղաքից, և դա հասնում է իր նպատակին. իշխանությունները դադարեցնում են խուզարկությունները: Բայց պատահականությամբ թե չարամտությամբ մատնվում են ջրհորում թաքնվածները[1]: Բոլորին հանում են և հեգնանքով, հայհոյանքով ու ծեծով առաջնորդում բանտ: Խուզարկություններն ու բանտարկությունները շարունակվում են նախկին ուժգնությամբ: Քաղաքն ահ ու սարսափի օրեր է ապրում: Սպասվում է զորքի և իսլամ ամբոխի հարձակումը քաղաքի հայության վրա:

Շամի կազմակերպության ազատ մնացած ղեկավարությունը՝ Սարգիս Բարսեղյանը, Կոմսը (Վահան Փափազյան) և մյուսները այլ միջոց չունեին դրությունը քիչ թե շատ մեղմելու, բացի բողոք-սպառնալիք ուղղելուց Վանի երեք հյուպատոսներին՝ պահանջելով նրանց գործուն միջամտությունը՝ լայնածավալ հալածանքները դադարեցնելու համար: Ֆրանսերեն գրած գրավոր բողոքը վերջանում էր հետևյալ սպառնալիքով. «Վանի ինքնապաշտպանութեան տեղական մարտական ոյժերը պատրաստ են հակահարուած տալու՝ օդը հանելով կառավարական չէնքերը, զօրանոցները: Անձնապէս դուք եւս պատասխանատու պիտի համարուիք, եթէ ժամ առաջ վերջ չտրուի այս վայրենի հալածանքին»[2]:

Սպառնալիքն արդյունք ունեցավ: Իշխանությունները համաձայնում են ընդառաջել հյուպատոսների միջամտությանը, պայմանով, որ հեղափոխականները հեռանան քաղաքից:

Իսկ բանտարկված 19 գործիչների վիճակն անասելիորեն

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 527-534, **Արտակ Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 175:

[2] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 533:

ծանր էր: «Աղտոտ, խոնաւ եւ մութ զնդաններու մէջ էին՝ միջատներով, մուկերով եւ բնական աղտոտութիւններով յագեցած ... Իրիկունները կը կանչուէին հարցաքննութեան եւ անխնայ կը խոշտանգուէին: Արամն ալ հարցաքննած են եղեր. պատասխանած էր, թէ յեղափոխական է, եկած է օգնելու իր ժողովուրդին՝ բռնակալ կառավարութեան դէմ»[1]:

Վերջապես հաջողվում է մի հնարքով դուրս պրծնել բանտից, հեռանալ նաև զորքերով շրջապատված քաղաքից և չունչ առնել Տավրոսի լեռներում՝ Վանա Իշխանի իշխանության՝ Լեռնապարի սահմաններում:

Ապրիլի սկզբներին խիստ խուզարկություններ սկսվեցին նաև Մշո մեջ և ամբողջ Տարոնում: Օգտվելով հայերի համար ստեղծված ծանրագույն կացությունից՝ քրդերը նոր թափով չարունակեցին իրենց սանձարձակ վայրագությունները:

Ապրիլի 17-ին Ֆահիմ անունով հասանանցի մի քուրդ ավազակ, իր բազմաթիվ զինված ծառաներով, գիշերով մտնում է Բիթլիսի կուսակալության Բուլանուխ գավառակի Յոնջալու գյուղի ունևոր համարվող Ալո Խլղաթյանի տունը և սրի քաշում ամբողջ ընտանիքը: Զոհ են գնում Ալոն, կինը՝ Բեգոն, որդիները՝ Արմենակը (14 տարեկան) և Լևոնը (5 տարեկան), աղջիկը՝ Իֆոն (13 տարեկան), Ալոյի քենին և քեռեկալը, որոնք բախտի չարաշուք զուգադիպությամբ այնտեղ էին գտնվում որպես հյուր: Ոճիրը գործելուց հետո մարդասպանները կողոպտում են տունը և հեռանում: Ի դեպ, Ալոն նախօրյակին անցագիր էր հանել՝ ընտանիքով Ամերիկա գաղթելու՝ այլևս անտանելի դարձած բռնություններից ազատվելու համար: Հասկանալի է, որ իշխանությունը մատը մատին չխփեց ոճրագործներին բռնելու և պատժելու համար[2]:

Մայիսից Վանը պաշարյալ դրության մեջ էր: Մինչ այդ՝ Քաղաքամեջի և Այգեստանի զանազան մասերում արդեն ամրացվել էին 6000-ի չափ զինվորներ: Քաղաքի հյուսիսարևելյան

---

[1] ***Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Ա, էջ 535:*

[2] *Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 59, նաև՝ **«Վտակ»**, № 110, 24 մայիսի 1908 թ.:*

բարձունքների վրա զետեղվել էին թնդանոթներ: Օրեցօր ուժեղանում էր հայկական թաղերի խուզարկությունը: Մի քանի խոշոր զորամասեր էին տեղավորվել քաղաքից դուրս՝ արվարձաններում և ճանապարհների վրա: Նույնը կատարվում էր շրջակա գյուղերում: Այսպես, Արդամետում տեղաբաշխված էր 50 զինվոր, Ծվստանում՝ 70, Բերդակում՝ 200, Կուռապաչում՝ 140, Կուռապաչի ս. Խաչ վանքում՝ 45, Սղկայում՝ 100, Շուշանցում՝ 80, Վարագա վանքում՝ 90, ծովեզերյա Ավանց գյուղում՝ 150[1]: Գյուղերում լայնածավալ խուզարկություններ և սպանություններ էին տեղի ունենում:

Վանից Թիֆլիս ուղարկված մի նամակում կարդում ենք, որ «ամէն տեղ սարսափ ու արհաւիրք է», որ հանկարծակի ձերբակալություններ են կատարվում, անծանոթ ու անմարդաբնակ վայրերում սպանվում են հանդիպած հայերը: Իրենց կյանքը փրկելու համար երիտասարդներն ահ ու դողով թաքնվում են, բայց թուրք ոստիկաններն ամեն տեղ որոնում ու գտնում են և վերջ դնում նրանց կյանքին: Ամենուրեք հայերը սարսափի մեջ են, նրանց համար մղձավանջային օրեր են սկսվել[2]:

Ահաբեկված շատ հայ ընտանիքներ, այլ ելք չտեսնելով, փախչում էին Ռուսաստան:

Ոչ միայն հայ, այլ նաև թուրք հեղափոխականները՝ թե՛ Ահմեդ Ռիզայի երիտթուրքական կազմակերպությունը, թե՛ Սաբահէդդինի «Լիգան», զենքերի բռնագրավման հետ կապված, բաց էին թողել բազմաթիվ թռուցիկներ:

Նկարագրելով Վանի դեպքերը՝ Փարիզում հրատարակվող երիտթուրքական «Մեշվերեթ» թերթը գրում էր.

««Հանցավորներին» որոնելու պատրվակով կառավարությունը Վանում և Կարինում ձերբակալել է հարյուրավոր մարդկանց և նրանց ենթարկում է սոսկալի տանջանքների: Երկու կազմակերպությունները նողկանք հայտնելով վայրենի դատաստանին, որին զոհ են գնացել անմեղ թուրքեր ու հայեր», «Օսմանյան լիգան» («Թերաքքը») և մեր կոմիտեն («Մեշվե-

---

[1] Տե՛ս **«Վտակ»**, № 106, 18 մայիսի 1908 թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9^3, թ. 2:

րեթ») համատեղ հրատարակեցին հետևյալ պաշտոնական բողոքը.

Համաձայն եվրոպական թերթերի հաղորդումների, համիդական կառավարությունը, պատրվակ բռնելով Վանում տեղի ունեցած դեպքերը և Կարնո ժողովրդի կողմից իր մարդկային իրավունքների պաշտպանությունը, մեր հայ հայրենակիցների և Կարնո ընդվզման ղեկավարների նկատմամբ գործադրում է բռնություն, հալածանք և արյունռուչտ գործողություններ, որը դատապարտում ենք սաստկորեն ու նողկանքով»[1]:

Սակայն արտասահմանի թուրքական թերթերում տպագրված հոդվածներն ու հայտարարությունները, որոնք եղակի օրինակներով թափանցում էին Թուրքահայաստան, գործնական ներգործություն չէին ունենում այդտեղի համարյա գլխովին անգրագետ խալամ զանգվածների վրա:

Հայերի հետ բարեկամություն անող թուրքերը հարցնում էին. «Եթե հայերը համերաշխություն են քարոզում, ապա ինչո՞ւ են դիզել այդքան զենքեր»: ՀՅ դաշնակցության Շամի կենտրոնական կոմիտեն ստիպված էր հատուկ թռուցիկ բաց թողնել՝ ուղղված «Բարեկամ թուրքերին», և նրանց բացատրել, որ «զէնքերը ձեռք են բերուել ոչ թէ գործադրելու խաղաղ ժողովրդի, այլ կառավարութեան դէմ»[2]:

Վանի կուսակալ Թահիր փաշան մայիսի 3-ին հայ երևելիներին կանչեց իր մոտ՝ տուն, և Ֆերիդի հետ փորձեց նրանց համոզել, որ գնան բոլոր հեղափոխականներին բերեն իր մոտ, որոնք պետք է հանձնեին զենքերը և երդվեին, որ հրաժարվում են կառավարության դեմ պայքարից: Նա խոստացավ բոլոր զղջացողներին ներում չնորհել:

Կուսակալի հետ տեսակցությունից հետո հայ երևելիները նրա պահանջը փոխանցեցին հեղափոխականներին, որոնք, սակայն, բացեիբաց մերժեցին:

Ժողովրդի որոշ մասը, իրերի ծանր վիճակը հաշվի առնելով,

---

[1] *Տե՛ս* ***«Վտակ»*** *թերթում թարգմանարար արտատպված այդ հայտարարությունը (№ 54, 9 մարտի 1908 թ.):*

[2] ***«Վտակ»,*** *№ 57, 13 մարտի 1908 թ.:*

հեղափոխականներին հուզումնալից խնդրանքով խորհուրդ էր տալիս հանձնվել իշխանություններին կամ քաղաքից միառժամանակ հեռանալ՝ մինչև կրքերը կհանդարտվեն: Բայց հեղափոխականների պատասխանը միանշանակ էր՝ չեն հեռանա և ժողովրդին անտեր չեն թողնի:

Թահիր փաշան երկու անգամ ևս՝ մայիսի 4-ին և 5-ին, հայ երևելիներին իր մոտ կանչելով, նույն առաջարկը կրկնեց: Նորից հեղափոխականներից մերժում ստանալով՝ մայիսի 6-ին նա նոր, ավելի խիստ խուզարկություններ ձեռնարկեց:

Սհանցի Ավետիսի տնից մայիսի 8-ին հայտնաբերվեցին 15 հրացան և փամփուշտներ, թուրք խուզարկուները մայիսի 9-ին մի քանի տներից նույնպես բավական ռազմամթերք հանեցին, Նշան Թերլեմեզյանի տնից մայիսի 10-ին դուրս բերեցին չուրջ 40 հրացան՝ փամփուշտներով: Ընդհանուր առմամբ բռնագրավվեց 150 հրացան: Տներից մեկում 17 ռումբ հայտնաբերվեց[1]:

Որքան երկարում էին թուրքական ոստիկանության և ամբոխի խժդժությունները, այնքան, ցավոք, ավելանում էր հայ մատնիչների թիվը, որոնց օգնությամբ հայերի տներում հայտնաբերվում էին նորանոր զենքեր: Բայց ոչ միայն զենք:

Կոնդուրաջի ճոչ աղան և Հյուս Խերանը, որոնք Դաշնակցության անդամներ էին, ոստիկանությանը ցույց տվեցին ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեի 1904-1908 թթ. վերաբերող արխիվներից մեկը, որտեղ պահպանվող թղթերի մեջ զանազան գրություններ էին, արձանագրություններ, ռազմամթերքի հաշիվներ, ահագին թվով լուսանկարներ, կենտրոնական կոմիտեի՝ գյուղացիների ու խմբերի հետ ունեցած բոլոր թղթակցությունները՝ բաց ստորագրություններով, ծածկագրերով նամակներ, որոնց ընթերցելու թվանշաններով բանալին նույնպես անցել էր իշխանության ձեռքը, արծաթե թելերով հյուսված մի դրոշակ՝ «Մա՛հ կամ ազատությո՛ւն» վերտառությամբ և այլն[2]:

Դաշնակցության շարքերում եղած մատնիչներին ավելացել

---

[1] Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 57:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 58:

էին մի քանի արմենականներ, որոնք ոստիկանությանը մատնանշում էին իրենց կուսակցության թաքստոցներն ու աչքի ընկնող անդամներին:

Դաշնակցության բռնագրավված արխիվի թղթերի համաձայն՝ իշխանությունները նոր լայնածավալ խուզարկություններ սկսեցին նաև գյուղերում: Ավանց գյուղում հայտնաբերվեց վեց պահեստ՝ 60 հրացանով, Հայոց Ձորի մի գյուղում՝ 25, Արճակում՝ 27, Խառակոնիսում՝ 13 հրացան և այլն[1]: Շատ գյուղերում, որտեղ ոստիկանները չէին հայտնաբերում զենք-զինամթերք, գյուղացիներին ահավոր տանջանքների էին ենթարկում՝ պահանջելով զենքերի տեղը հայտնել:

Բազմաթիվ սպանություններ ու կանանց բռնաբարություններ տեղի ունեցան մասնավորապես Խաչեն գյուղում, ուր թուրք զինվորներն ու ոստիկանները ահավոր տանջանքներով ջանում էին գաղտնիքներ կորզել գյուղացիներից՝ զենքի պահեստների և հեղափոխական պատրաստությունների մասին[2]:

Դաժան ծեծի ենթարկելով Կզլրճ գյուղի 28 բնակիչների՝ ոստիկանները նրանցից վերցրել էին ստորագրություն՝ մի քանի օրում իրենց հրացանները հանձնելու պարտավորությամբ: Ոստիկանները գյուղացիներից 12-ի մատների եղունգները կտրել-հանել էին, որովհետև երդվել-պաղատել էին, թե հրացան չունեն: Շատ գյուղացիներ ավելի դաժանաբար պատժվեցին. դահիճները նրանց միզանցքի մեջ կարմրած երկաթյա ձողիկ էին խոթում: Գյուղի մյուս բոլոր տղամարդիկ ենթարկվեցին գաղանային ծեծի, որի նկարագրությունը տրված է Վանից «Հնչակին» ուղարկված մի թղթակցության մեջ: Թղթակիցը գրում էր.

«Ծեծելու սովորական ձեւն այս է. նախ սաստիկ ծեծի ազդեցութեան տակ փորի վրայ կը պառկեցնեն, յետոյ երեսը ոլորելով կռնակի վրայ կը դարձնեն, յետոյ կը սկսեն ստրոփայի ձեւով հիւսուած փայտերով ծեծը. եթէ այդ ալ օգուտ չընէ, ամորձիները մեքենայի մէջ դնելով՝ կը սեղմեն ... այնչափ,

---

[1] Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 58:

[2] Տե՛ս **Միքայէլ Վարանդեան**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 215:

[մինչեւ] որ մարդ իր չգիտցածը եւ չարածը իսկ ստիպուի խոստովանել, որպէսզի այդ տանջանքից ազատուի»[1]:

Ահա՛ մի ուրիշ օրինակ: Տավրոսի արեւելյան շղթայի Բռնաշենի բարձունքների վրա կառուցված էր ս. Ախբերիկի պատմական վանքը՝ շրջապատված 30-ից ավելի հայաբնակ գյուղերով, որոնք մեկ տասնամյակ առաջ բարգավաճ ու բազմամարդ բնակավայրեր էին, իսկ այժմ՝ ամբողջովին կործանված:

Քրդերը վերջին մի քանի տարիներին այդ վանքը յոթը անգամ ենթարկել էին կողոպուտի, որի հետեւանքով նա զրկվել էր վաղնջական հնություններից ու ճոխ հարստություններից: 1900 թ. քրդերի՝ վանք հերթական ներխուժման ժամանակ սպանվել էր վանահայր Ղազար վարդապետը, որին հաջորդած Զաքարիա վարդապետ Ավդալյանը անձնուրացաբար դեռ շարունակում էր պահպանել վանքը:

1908 թ. մայիսի 27-ի ցերեկը, բելեքցի քրդեր Մեջիդը, Նեզիրը, Ուսոն և Բեկլին նենգաբար հարձակվում են վանքի վրա, գնդակահարում Զաքարիա վանահորը, դաժանորեն ծեծում մյուս հոգևորականներին և կողոպտում դեռ մնացած եկեղեցական սպասքն ու եղած մի քանի անասունները:

Անդրադառնալով այդ դեպքին՝ «Հնչակում» տպագրված և Մուշից ստացված թղթակցության հեղինակը գրում էր.

«Անսփոփելի վշտով ու արդար կատաղութեամբ լցուած կ'ըսեմ, որ հայ տարրի գոյութիւնը այդ կողմերը ի սպառ ջնջուելու վրայ է, որովհետեւ վերոյիշեալ վանքը միութեան մի կապ, մի բոյն էր, որուն բոլորտիքը հաւաքուած կը բզզային կարգ մը թշուառացած ու արիւնարբու քիւրտերուն ստրուկ դարձած հայ գիւղեր: Հանգուցեալ վանահայրը պարտաճանաչ ու գիտակից էր ժողովուրդի ցաւերուն հանդէպ: Որչափ աւելի կը խորանայ իմ վիշտը, երբ կը մտաբերեմ թէ օր մը, տեսակցութեան մը պահուն, իրեն յորդորելէ յետոյ, որ լաւ նայի իր հօտին եւ համոզէ անոնց որ չլքեն իրենց հայրենական օճախները, երբ «ցտեսութի՛ւն, հա՛յր սուրբ» ըսի, ան տխուր նախազգացումով մը

---

[1] Տե՛ս **«Հնչակ»,** *№ 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 58:*

«վախնամ թէ ինձ վերստին չտեսնես, սիրելի՛ս. քիւրտերը վերջ պիտի տան իմ կեանքիս» ըսաւ արտասուաթոր աչքերով: Կը պաշտեմ այժմ իր յիշատակը, որովհետեւ ան գիտակցաբար զոհ ինկաւ իր պարտաճանաչութեան:

Արիւնի բնազդը անզուսպ բնաւորութիւն դարձած՝ կը թելադրէ ինծի հաղորդելու այս եւ ասոր նման ամէնօրեայ ջղացունց եղեռնագործութիւններ, որոնց մշտապէս անզօր հանդիսատես է ցաւատանջ ազգաբնակչութիւնը»[1]:

Վերին աստիճանի գրգռված՝ Վանի թուրքերը մայիսի երկրորդ կեսին ամեն օր ժողովներ էին անում՝ քննելով հայերին նորանոր պատիժների ենթարկելու խնդիրը: Այդ ժողովներից հետո, թուրք երևելիներն, իրենց ստորագրություններով, հետևյալ հեռագիրը հղեցին Կ. Պոլիս՝ սուլթան Աբդուլ Համիդին.

«Նկատելով, որ հայեր մեզ հետ այնքա՜ն թշնամաբար կը շարժուին, նկատելով, որ նոքա ուրիշ կառավարութեանց թելադրութեամբ հոս ռազմամթերք մթերած էին, հետեւաբար նոքա ամէն ատեն ալ մեզ բնաջինջ ընելու պիտի աշխատին, ուստի հաճեցէ՛ք կա՛մ հայերը գաղթեցնել, կա՛մ մեզ»[2]:

Այս հեռագրին Պոլսից պատասխան եկաւ. «Ատ ձեր գործը չէ, դուք հանդարտ կեցէ՛ք, կառավարութիւնը իր ընելիքը գիտէ»[3]:

Իսկ քաղաքն ամրացվում էր նոր զորքերով ու թնդանոթներով:

Զենքերը բռնագրավելու առաջին օրից թուրքերի ու քրդերի՝ հայերի դեմ սանձազերծած սպանությունները և նրանց զանգվածային տանջանքների ենթարկելը առաջ էին բերել բուռն բողոքներ:

Ժնև՝ «Դրօշակի» խմբագրություն էին հղվում հեռագրեր տարբեր կողմերից՝ թուրք-պարսկական սահմանագլխից, Թիֆլիսից, Բաքվից և այլ վայրերից՝ պահանջելով մեծ պետությունը-

---

[1] Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 59:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 58:

[3] Նույն տեղում:

ների ու Եվրոպայի հայասերների ուշադրությունը բևեռել Վան-Վասպուրականում Թուրքական իշխանությունների ու իսլամ խուժանի կատարած արյունալի խժդժությունների վրա: Եվրոպայում հայ գործիչները հանդիպումներ ունեցան Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարներ Ստեֆան Պիշոնի և Էդուարդ Գրեյի հետ, բրիտանական պառլամենտում հարցապնդումներ արեցին պատգամավորներ Լինչը, Թրևիլեն, անգլիական սոցիալիստների պարագլուխներից Օ'Գրանդին: Թերթերում հոդվածներով ու իրենց կառավարություններին ուղղված կոչերով հանդես եկան ֆրանսիացի հայասերներ Պիեռ Քիյառը, Վիկտոր Բերարը և ուրիշներ: Արդյունքում՝ Փարիզի ու Լոնդոնի կառավարական շրջաններից հեռագրեր հղվեցին Կ. Պոլսի դեսպաններին, որոնք, իրենց հերթին, հրահանգներ իջեցրին Վանի հյուպատոսներին:

Եվրոպացի հյուպատոսները դեռ 1908-ի հունվարից սկսած՝ իրենց եռանդուն միջամտություններով աշխատում էին ավելի մեծ աղետների առաջն առնել: Եթե նրանք այս անգամ էլ վարվեին ճիշտ այնպես, ինչպես վարվել էին 1895-1896-ի ջարդի ժամանակ, անշուշտ, զոհերի թիվը հազարների կհասներ: Բայց, բարեբախտաբար, այս անգամ հյուպատոսները գտնվեցին իրենց բարձրության վրա: Կառավարական ուժերի և իսլամ ամբոխի խժդժությունների ժամանակ նրանք արագ օգնության էին հասնում կոտորածի սպառնալիքի առջև կանգնած ահաբեկ հայերին և նրանց փրկում կատաղիների նյութած զանգվածային ջարդերից[1]:

Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը ապրիլի 16-ին Պետերբուրգ հղած հաղորդագրությամբ հայտնում էր, որ հայերի կացությունը Վանում շարունակում է շատ վտանգավոր մնալ, քանի որ մուսուլմանները նրանց սպառնում են նոր կոտորածներով[2]:

---

[1] *Տե՛ս* ***Միքայէլ Վարանդեան****, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, էջ 217:*

[2] *Տե՛ս* ***«Ախուրեան»*** *(Ալեքսանդրապոլ), № 26, 16 ապրիլի 1908 թ.:*

Ռուսաց դեսպանությունը մայիսի 7-ին Բարձր Դռան ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Վանի դեպքերի առթիվ տեղի իշխանությունների հրամանով զորքը 12 լեռնային թնդանոթներով շրջապատել է հայկական թաղը և սպառնում է ռմբակոծելով քարուքանդ անել[1]:

Վանի հայերին սպառնացող նոր կոտորածի վտանգի մասին իրենց կառավարություններին տեղեկացնում էին նաև Կ. Պոլսում Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեսպանները[2]:

Վանում տեղի ունեցած աղետից հետո Անդրանիկը Երկրի քաղաքական ուժերին կրկին կոչ էր անում խիստ գաղտնապահության և շրջահայացության:

Դավոյի դավաճանության պատճառով հայերի գլխին իջած նոր արհավիրքի պայմաններում հայ հասարակության մեջ փոփոխություններ էին տեղի ունենում զենքի նկատմամբ վերաբերմունքի մեջ: Նրանց մի մասը (ամիրաներ, պետական ծառայողներ և այլք) գտնում էր, որ զենքը հայի ձեռքում չարիք է նրա իսկ համար և որքան չուտ ազատվի նրանից, այնքան լավ: Բայց նրանք, որոնց գլխին ամենօրյա վտանգ էր կախված, հակառակն էին մտածում՝ անօրեն երկրում հայը զենքից բացի ուրիշ պաշտպան չունի:

Հայ դավաճանի եղկելի արարքի նախօրյակին նույն միտքը արտահայտել էր անգամ նուրբ ու նազուկ հոգու տեր, վաղամեռիկ բանաստեղծ Միսաք Մեծարենցը: Նա, որ իր քերթվածների նրբին տողերով երգում էր բնության գեղեցկություններն ու կնոջ համայքը, ազգային վիշտն ու ցեղի ազատագրման տեսիլքները, հանկարծ հրապարակ հանեց արյան վրեժի կոչող ազգայնական ռազմատենչ մի ստեղծագործություն՝ «Երգ» վերտառությամբ: Բանաստեղծն իր ժողովրդին զինվելու և վրեժի հրավեր էր անում:

Ահա՛ այդ գրվածքը.

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 32, 10 մայիսի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 33, 14 մայիսի 1908 թ.:

Երգ

Քո՛յր, մօտեցի՛ր կըրակին,
Ծըխէ՛ տերեւն այս բուրեան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ հոտն արեան։

Քո՛յր, մօտեցի՛ր դարակին,
Ու բե՛ր հեղուկն հընծանեան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ համն արեան։

Քո՛յր, մօտեցի՛ր ճըրագին,
Մարէ՛ զայն, թո՛ղ լուսինկան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ գոյնն արեան։

Քո՛յր, մօտեցի՛ր նըւագին,
Երգէ՛ դաշտերն ու ցորեան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը յիշեցնէ ձայնն արեան։

Քո՛յր, մօտեցո՛ւր իմ ձեռքին
Աստուածաբոցն հըրացան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը յիշեցընէ Վրէ՛ժն արեան...։

1908 Թ. ԳԱՐՆԱՆ ՍՈՎԻ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

1908 Թ. գարնանը ռուս-թուրքական նոր պատերազմի ծագման մասին խոսակցությունները չիրականացան, բայց իրականություն դարձավ այն տագնապը, որ Թուրքահայաստանի շատ գավառների հայությունը գարնանը կանգնելու է սովի առջև:

Թուրքական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով լիակատար քայքայման հասած հայ գյուղացիությունը 1908 Թ. սկզբներից սպառել էր ունեցած չնչին պարենը և գարուն էր մտել բացարձակապես սոված: Հազարավոր հայ գյուղացիներ սպասում էին բնության զարթոնքին՝ արմտիքով ու կանաչեղենով սնվելու բաղձանքով:

Խնուսից «Վտակ» թերթին ուղարկած նամակի հեղինակը գրում էր. «Սով է: Ինչե՞ր չտեսաւ այստեղի հայ գիւղացին. գոմում մալ չը մնաց, որ չծախէր, արտ ու կալուածք չը մնաց, որ սալաֆի (կանխիկ գումար:- Հ. Ս.) փոխարէն գրաւ չը դրուէր, մարդ չկայ, որ «հա՜ց, հա՜ց» չաղաղակէ...»[1]:

Դեռ 1908 Թ. հունվարի 28-ին Մշո Վարդենիս գյուղից «Մշակին» հաղորդում էին. «Աչքով կը տեսնենք մուրացիկներու հոծ բազմութիւնը, ականջով կը լսենք մանկանց հեծեծագին լացն ու աղաչանքը՝ «Մա՛յր, հաց տո՛ւր ինձ»: Մայրը աղեխարշ գետին կը տապալի. մայրական գութը կը տոչորէ անոր աղիքները, կը մարի, կը մեռնի: Քանի՞-քանի՞ անհատներ՝ երիտասարդներ եւ պատանիներ՝ մեռած են սովէն եւ մեր ձեռքով հողին աւանդած ենք: Ինչպէ՞ս անտարբեր մնանք եւ ինչպէ՞ս ապրինք, քանի որ հացագինն օրըստօրէ կը բարձրանայ: 250 տունէ բաղկացեալ գիւղի մը լոկ 6-7 լուծք կ'ելնէ, եւ այդ արդիւնքով հազարաւոր անձինք պիտի ապրին. օրական պատառ մը հացի ախը կը քաշէ ժողովուրդը. օգնեցէ՛ք մեզ, ապրելու համար մինչեւ գարուն»[2]:

Բաղեշ քաղաքից մեկ ժամ հեռավորությունից դեպի հարավ սկսվում են անվերջ անտառներ, որոնք մշտական եկամտի աղբյուր էին չքավորների համար: Սովյալների և թշվառների բազմա-

---

[1] **«Վտակ»,** № 7, 11 հունվարի 1908 Թ.:

[2] **«Մշակ»,** № 1, 4 մայիսի 1908 Թ.:

թիվ խմբեր սովոր էին այդ անտառներից փայտ հավաքել և քաղաքում ծախելով՝ օրական մի քանի դրուշ շահել: Սակայն այդ գործով զբաղվող հայերին 1908 թ. սկզբներին արգելեցին այլևս անտառ մտնել: Իսկ եթե որևէ հայ անտառ էր մտնում, քուրդ ավազակներն անխնա ծեծում էին նրան, խլում գրպանի վերջին դրուշը (եթե կար) և բռնի ստիպում իրեն ծառա լինել: «Հնչակը» գրում էր. «Առանց չափազանցութեան կարելի է ըսել, որ հարիւրաւորներու կը հասնի այդպիսիներու թիւը»[1]:

Գյուղերից ամբողջ ընտանիքներ մեկ-երկու օրով դուրս էին գալիս դաշտերը, բարձրանում լեռները, և թափառելով հավաքում էին մի քիչ կանաչեղեն կամ խավարծիլ, բերում քաղաք՝ ծախելու: Տուն վերադառնալիս, ճանապարհին, քրդերը դատարկում էին նրանց խղճուկ գրպանները՝ քաղցի դատապարտելով տանն սպասող սովատանջ մանուկներին: Իշխանություններին դիմելն ու գոհացում ստանալն անկարելի բան էր:

1908 թ. գարնանը միայն դաշտի կանաչեղենով ապրողներից շատերը նվաղելով հրաժեշտ էին տալիս կյանքին, իսկ սովյալների հիմնական մասը, կողոպտված ու բացարձակապես զուրկ ապրուստի միջոցներից, գաղթում էր հարավ՝ Դիարբեքիրի կողմերը, ուր իրենց սպասում էին թշվառությունն ու անարգանքը:

Սովն ընդգրկել էր քաղաքների հայության ներքնախավերին: Մի հայաբնակ գյուղաքաղաքից Եգիպտոսի Հայկական բարեգործական ընդհանուր միությանն ուղարկված նամակում կային հետևյալ սրտառուչ տողերը.

«Եկեղեցւոյս քահանաներէն մէկը՝ կարօտեալի մը տունը այցելութեան կ'երթայ: Ընտանիքը կը բաղկանայ եղեր 4-5 հոգիէ, որոնք նոյնիսկ չունէին օրական չորաբեկ հացը: Անչափահաս զաւակացը համար տաքցուցած են լոկ ջուր. պզտիկները երկու գաւաթ խմելէ յետոյ դեռ չկշտանալով կ'ըսեն. «Մայրի՛կ, հատ մըն ալ խմելու ըլլանք՝ արդեօք կը կշտանա՞նք»: Սոյն ցաւալի դրուագը յիշեալ քահանան արտասուալից պատմեր է իբր ականատես եւ ականջալուր...»[2]:

---

[1] Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 58-59:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1194, թ. 6:

Միայն Վանի Այգեստանում մի կտոր չոր հացի կարոտյալների թիվը 2500 էր: Դրությունը քանի գնում սոսկալի էր դառնում: Արդեն մարտ ամսին ծայր էր տվել սովամահությունը: Այդ հսկայական թվի բացարձակ մեծամասնությունը, սովոր չլինելով մուրալուն, լռիկ-մնջիկ, փակված էր խուլ անկյուններում, օրերով անոթի էր մնում և ուժասպառ լինում: Դարավոր նամուսն ու ամոթխածությունը ստիպում էին հայ ընտանիքին գերադասել մահը, քան դուրս գալ մուրալու:

Նպաստամատույց հանձնաժողովի անդամներն ստիպված էին պտտվել խուլ անկյուններում և հնար եղած չափով օգնություն հասնել թշվառներին:

Վան-Վասպուրականի դաշնակցական ղեկավար գործիչներից Մատթեոսն իր հուշերում մի սրտաճմլիկ տեսարան է նկարագրել, որին նա ականատես է եղել Կոմսի մոտ: «Յանկարծ ներս է խուժում մեր սենեակը մի տարիքաւոր կին ու գետնի վրայ փռուելով, գրկում է Կոմսի ոտքերը եւ օգնութիւն-գթութիւն խնդրում իր անօթութիւնից մեռնող զաւակների համար: Բոլորս յանկարծակիի եկած, յուզուած ենք մինչեւ արցունքներ — արցունքներ ոչ միայն խղճահարութեան, այլեւ զայրոյթի ու կատաղութեան, թէ մինչեւ ե՞րբ պէտք է շարունակուի այս դրութիւնը, երբ այնտեղ, մի քանի հարիւր քայլի վրայ, հազարաւոր չափերով ցորենն է դիզուած...»:

Հուշագիրը նկատի ուներ Վանի հայ հարուստներին, որոնք չնայած կազմակերպության բոլոր հորդորներին, որևէ օգնութիւն չէին հասցնում իրենց սովատանջ ազգակիցներին:

Մի ուրիշ անգամ, երբ Արամ Մանուկյանի մոտ սովյալների մասին խոսակցություն է լինում, Մատթեոսի և նրա միջև տեղի է ունենում հետևյալ զրույցը.

«– Պարո՛ն Արամ, ասացէ՛ք խնդրեմ, ունեւոր դասից քանի՞ տուն կը լինի Վանայ մէջ:

– Տասը ընտանիք կայ, որոնցից ամէն մէկը կէս միլիոնի հարստութիւն ունի:

– Ուրեմն անչուշտ մի հազար ընտանիք էլ կայ, որոնցից ամէն մէկը ապահով դրութեան մէջ է տնտեսապէս:

– Այո՛, կայ:

– Երբ այդպէս է, ինչո՞ւ յատկապէս մի յանձնախումբ չլինի, որը զբաղուէր միմիայն այդ ունեւոր դասից միջոցներ հայթայթելու գործով:

– Արհեստական միջոցով սովը չի վերանայ:

*– Ա՛յ քեզ տարօրինակ բան, այդ ո՛վ չգիտէ, որ արհեստական միջոցներով չեն վերանայ ժողովուրդեան թշուառութիւնները: Բայց չէ՞ որ այս բոպէիս մեռնողը ժողովուրդն է, չէ՞ որ մի հնարք է հարկաւոր գտնէ **առ ժամանակ** փրկելու նրան մահից... Հապա ի՞նչ պիտի լինի սրա վերջը»:*

«Ներկայումս թիւրքահայ յեղափոխական շարժումը անց է կացնում մի անօրինակ ճգնաժամ,– գրում էր «Երկրի ձայնը» թերթը:– Հայ ժողովրդի բոլոր խաւերը տենդոտ կերպով զբաղուած են հին արժէքների վերաքննութեամբ: Եւ ուշագրաւ երեւոյթ՝ բոլորի եզրակացութիւնը յանգում է մի կէտի. այն՝ որ չէ կարելի գործել այսուհետեւ միեւնոյն ցաւալի թեթեւամտութեամբ, միեւնոյն վտանգաւոր կարճատեսութեամբ: Թիւրքահայ ժողովուրդը – մանաւանդ նրա իրաւազուրկ, տանջուող դասակարգերը – գտնւում է օրհասական դրութեան մէջ: Սնանկ ու ոճրագործ ռէժիմի սանձարձակ հալածանքներն ու կեղեքումները, տնտեսական համատարած տագնապը, բնական ու արհեստական սովը եւ այդ սովի ճիրաններից ազատուելու համար համաճարակի բնոյթ ստացած գաղթը, թիւրքահայութիւնը դարձրել են մի անյոյս հիւանդ»[1]:

Հենց այդ հուսահատությունն էր պատճառը, որ հայ բնակչությունը փորձում էր գտնել մի այլ ելք. խոսքն օտարահպատակության (Թերքի Թեբաա) ձգտումն էր, որ անսովոր արագությամբ աճում էր: Կրոնափոխության անհրաժեշտության մասին չչուկներն ավելի ու ավելի էին տարածվում Հայաստանի խորքերում[2]:

Թուրքահայաստանում ստեղծված սոսկալի վիճակը դարձել

---

[1] ***«Երկրի ձայնը»**, № 23, 4 նոյեմբերի 1907 թ.:*

[2] *Տե՛ս **«Վտակ»**, № 7, 11 հունվարի 1908 թ.:*

էր հայ մամուլի և գրականության հերթական խնդիրը: Թերթերն ու հանդեսները տագնապ էին բարձրացնում, բայց սովյալ հայը դրանով չէր հագենում: Ստեղծված կացությունը մտահոգում էր Կ. Պոլսի հայկական իշխանություններին, Կովկասի հայկական կազմակերպություններին:

Ինչպես նշվել է վերը, Թուրքահայաստանում հունձքերի պակասությունը, թուրքերի և հատկապես քրդերի կողմից արտերի պարբերաբար հրդեհումները Մկրտիչ Ա Խրիմյանին դեռևս 1907 թ. մայիսին ստիպել էին կաթողիկոսական կոնդակով ստեղծել հանգանակիչ մասնաժողով՝ նստավայր ունենալով Թիֆլիսը:

Սկսելով իր գործունեությունը, հանգանակիչ մասնաժողովը դիմեց հայ հասարակության բոլոր խավերին՝ կոչ անելով չզլանալ իրենց լիաբուռն նպաստները հատկացնել Խրիմյան Հայրիկի անունը կրող ֆոնդին՝ Թուրքահայաստանի՝ սովից տառապող հայության ցավերը գոնե մի փոքր ամոքելու համար:

Բայց հանգանակած գումարները, որքան էլ չոչափելի լինեին, անկարող էին հաղթահարելու սովը կամ գոնե մեղմելու Թուրքահայաստանի ծով կարիքները, քանի որ հաց չունեցողները հաշվվում էին հարյուր հազարներով:

Թուրքական կառավարությունն օգնության ձեռք չէր մեկնում, որովհետև հայոց զանգվածային սովը համապատասխանում էր Հայաստանը հայաթափելու իր ծրագրին, իսկ քրդերը շարունակում էին պատուհասել սովյալ հայությանը՝ նրանից խլելով վերջին պատառը:

Հայ գյուղացին չարիքին հակառակելու այլևս ուժ չուներ: Գյուղերից քչերում նրանք հատուկենտ զենք ունեին, անկազմակերպ էին, խեղճ ու կրակ և ընդհանրապես գերադասում էին այլևս չդիմադրել չարին: Աբդուլհամիդյան երեսնամյա բռնապետության անիծյալ հալածանքը, անդադար սպանություններն ու կողոպուտները հայության մեծամասնության մեջ ծնունդ էր տվել ստորադասության բարդույթի: Դա բնորոշվում էր ստրկախտի ուրույն հոգեբանական նշանակներով, որոնք այնքան նվաստացուցիչ էին ու անպատվաբեր հայ ժողովրդի ասպետական անցյալին:

Արխիվային մի նյութում նկարագրված է ս. Կարապետի վանքին մերձակա գյուղերից մեկը եկած մի հայ խմբապետի զրույցը տեղի քահանայի և երևելիների հետ։

«– Այս գիւղը ամէնքդ ալ հա՞յ էք։

– Հրամանք ես, աղա՛. խակի ուրիշ ազգ չկայ։

– Շատ լա՛ւ. քանի՞ տնուոր էք։

– Երկու հարիւր տնուոր ենք։

– Մօտի [քիւրտ] գիւղացիները ինչպէ՞ս կ՚ապրին ձեզի հետ։

– Ախ, էդ մի՛ հարցներ, ղուրպա՛ն. ի՞նչ ասիս, որ գլխընիս չի բերին. լծկաննիս կը գողնան, ոչխարնիս կը գողնան, ցորնի, խոտի դէզերնիս կը վառեն...

– Ինչո՞ւ թոյլ կու տաք, որ այդ բաներն ընեն ձեզի։

– Ի՞նչ ընենք, թոյլ չի տանք։

– Կառավարութիւն չի կա՞յ. բողոքեցէ՛ք։

– Հազար անգամ էլ բողոքեր ենք. լսող չի կայ։

– Ուրեմն, այն ժամանակ պաշտպանեցէ՛ք դուք ձեզ եւ ձեր ստացուածքը։

– Լաւ կ՚ըսես, ամա մենք այնպէս բաներ սովրած չենք, հայու վայել չէ՛ թալնել, զարնել եւն.։ Աւետարանը հրաման կու տա՞յ այդպէս գործերու։

– Աղէկ, Աւետարանը հրաման կու տա՞յ, որ ձեր մալը գողնան եւ դուք յիմարի պէս լռէք։

– Բայց, աղա՛, Աւետարանը գրուկ է, թէ մէկ երեսիդ թէ զարկեն, զմիւսը դարձուք։

– Այդ չիտակ է, գրուկ է, բայց գրուկ չէ՛ թէ երբ ոչխարդ գողնան՝ ձայն մի՛ հաներ. գրուկ չէ՛, թէ երբ ցորենդ վառեն, աղջիկդ փախցնեն՝ ձայն մի՛ հաներ։ Ուրեմն, եթէ օր մը պատահի որ մէկը, հայ կամ քիւրտ, քեզ ապտակէ, ձայն մի՛ հաներ, որ Աւետարանի խօսքը չի կոտրես, բայց երբ գլխուդ զարնէ, դուն ալ անոր գլխուն զա՛րկ. երբ աչքդ հանէ, դուն ալ անոր աչքը հանէ՛, երբ ոչխարդ գողնայ, դուն ալ անոր կովը գողցի՛ր. ասոնց հիչ մէկին համար Աւետարանի մէջ արգելք չի կայ։ Աւետարանը մինակ ապտակի մը համար հրաման կ՚ընէ ներել, եթէ ապտակը կրկնուի, ընելիքիդ մէջ քեզ ազատ կը թողու։

– Հա՛, վուալլահ, աղան տրուստ կը խօսի,– կ՚ըսէ մէկը, որուն

չատեր կը ձայնակցին. եւ ուրիշ մը, աւելի տարիքոտ, խօսքը մէկ կողմ սմքած քահանային ուղղելով կ՚ըսէ.

– Տօ՛, տնաշէն տէրտէ՛ր, յորի՞ խակի ձէն չես հաներ. աղային ըսածը ղո՞րդ է, թէ՞ չէ:

– Ղո՛րդ է, ղուրպա՛ն, ղո՛րդ է, Աւետարանի մէջ գողերուն ձէն մի՛ հաներ գրուկ չէ:

– Օր հըմալ (այնպես:– Հ. Ս.) է, յորի՞ հէր էսօր չես ասիլ, օր գինանք, իմնանք, տնաքա՛նդ:

– Ե՞րբ հարցուցիք ու չըսի, օրհնա՛ծ...»[1]:

Այս երկխոսութիւնն ակնհայտորեն ցոյց է տալիս ոչ միայն Թուրքահայ գյուղացիներից չատերի միջնադարյան հետամնացութիւնը, այլև հայկական քաղաքական կուսակցությունների՝ նրանց շրջանում տարած աշխատանքների անբավարար արդյունավետությունը:

ՀԵՌՎԻՑ ԵԿՈՂ ՍՓՈՓԻՉ ՁԱՅՆԵՐ

Թուրքահայ սովյալների վիճակը, նրանց գլխին թափվող արհավիրքները չարունակում էին հուզել նաև հայ ժողովրդի եվրոպացի բարեկամներին, որոնք իրենց հոդվածներով, գրութիւններով ու նամակներով հուսադրում էին նրանց՝ դիմանալ ու հաղթահարել իրենց բաժին ընկած ծանր տառապանքը: Նրանք հույս էին հայտնում, որ հայ ժողովրդի չարչարանքները, նրա թափած արյունը զուր չեն անցնելու և վաղ թե ուշ նա դիմավորելու է ազատության արշալույսը:

Ահա՛ հատվածներ հայտնի հայասեր գերմանուհի Իլզե Ֆրապանի հոգեցունց նամակից, որ 1908 թ. հունիսին նա ուղարկել է Ժնև՝ «Դրօշակի» խմբագրություն: Նամակը տպագրվել է Կ. Պոլսի դաշնակցականների «Ազդակ» թերթում:

Սկզբում Իլզե Ֆրապանը Շիլլերի «Վիլհելմ Տելից» մեջբերել էր այս տողերը.

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 3, վավ. 6[35], թթ. 4–5:*

«Դժբախտ հալածվածն այս աշխարհում
Իրավունք երբեք չի ունենում,
Երբ լուծը անարգ բռնության
Այլևս դառնում է անտանելի
Ստրուկը ձեռքերն երկինք է մեկնում,
Համարձակորեն այնտեղից խլում
Հավիտենական իրավունքներն իր,
Որոնք երկնային աստղերի նման
Անշարժ, անվախճան փարած անհունին,
Տենչում են գրկել իրենց հասնողին:
Մարդկության նախկին օրերն ենք հիշում,
Երբ մարդը մարդու արյունն է ոթում:
Հիմա էլ եթե ուրիշ ճար չունենք,
Ստիպված կրկին սրին ենք դիմում,
Պաշտպանում ենք մեր հայրենի հողը,
Եվ աստվածային մեր իրավունքը»:*

Այնուհետև հետևում էր Ֆրապանի խոսքը: Նա գրում էր.

«Քնած թէ արթուն ժամանակ հալածում է ինձ դժբախտ, բռնաբարուած, եւրոպական քրիստոնեայ ազգերից անարգօրէն ու դաւաճանօրէն լքուած Հայաստանի արիւնոտ ուրուականը: Հայերի կրած տառապանքները արտայայտւում են ընդվզումի մի աղաղակով, օգնութեա՞ն ու վրէժխնդրութեա՞ն մի միայնակ կոչումով, եւ իմ բանականութիւնը չի ուզում հասկանալ, իմ սիրտը չի ուզում հաւատալ, որ այդ զարհուրելի աղաղակը ոչ մի արձագանք չի գտնում իմ հայրենիքում, որ Գերմանիան այսօր հանդիսանում է պաղ, անկենդան մի ապառաժ, որից չի կարելի ակնկալել ոչ մի կարեկցութիւն դէպի տանջուողները, ոչ մի հասկացողութիւն յուսահատ մաքառողների համար, ոչ մի ոգեւորութիւն դիւցազնաբար նահատակուողների դիմաց: Օգնու-

---

* *Բնագրից «Դրօշակի» կատարած թարգմանությունը համեմատել ենք «Վիլհելմ Տելի» ռուսերեն թարգմանության հետ և անհամապատասխանությունները չտկել:- Հեղ.:*

թեան մասին խօսք անգամ չի կարող լինել»[1]:

Գերմանուհի հայասերը նշում էր, որ այսպես կոչված քաղաքակիրթ Եվրոպան ոչ այլ ինչ է, եթե ոչ մի հսկա հնավաճառանոց, որի նպատակը մեկն է՝ ծախել ու շահել: Շուկայի այդ ժխորի մեջ երբեք չեն լսվել մարդկայնության, արդարության, ըմբոստացման ձայներ: Եվրոպան մի ծեր է, որի երակներում հոսում է դալկացած արյուն: «Իսկ դուք,- գրում էր Իլզե Ֆրապանը,- մինչեւ նախնական առասպելական ժամանակները հասնող ձեր ժողովուրդը, մեզ հետ համեմատած՝ արիւնով թարմ է, երիտասարդ: Դուք դեռ ունեք հերոսներ, դուք ունեք նահատակներ, որոնք չողչողում են աստղերի պէս մեծ ու պայծառ, ամենաարիւնոտ երկնակամարի տակ: Ամենաահռելի խժդժութիւնների ներքոյ, աշխարհիս ամենատմարդի ճնշումների տակ՝ Հայաստանի մէջ ծնունդ են առել գործեր բիբլիական կշռի ու մեծութեան: Ես ուսումնասիրել եմ հայոց տառապանքների ու նահատակութեան սոսկալի տեղեկագիրները, եւ մինչդեռ իմ սիրտը արիւնոտւում էր հանդէպ հալածուածների ու մորթուածների ճակատագրին՝ ես միաժամանակ ցնցւում էի հիացմունքից ու բերկրանքից: Մի հոյակապ դրամա էր ներկայանում իմ առջեւ: Մի կողմից՝ արիւնոուշտ, անասնական ամբարտաւանութիւն ու մոլեռանդ բարբարոսութիւն, միւս կողմից՝ անձնուրաց զոհողութիւն, երկաթէ դիմացկունութիւն մի յառաջդիմական, բարձր քաղաքակրթութեան ձգտող, մեծապէս օժտուած ազգութեան»[1]:

Ֆրապանին զարմանք ու հիացմունք են պարգևել ոչ հեռավոր անցյալում հայ մարդու խիզախությունն ու անձնազոհությունը, որոնք նա համարում էր ազգի բնատուր հատկությունը և որոնք պետք է կրկին դրսևորվեն հերոսական նոր սլացքներով: «Ես,- նշում էր նա,- տեսել եմ հայ հերոսների եւ նահատակների պատկերները – հերոսներ, որոնք չէին խոնարհւում, չէին անձնատուր լինում, որոնց չէր սարսափեցնում ո՛չ մոլեռանդութիւնը եւ ո՛չ էլ վայրագութիւնը, եւ որոնց փառահեղ

---

[1] **«Ազդակ»**, № 2, 22 դեկտեմբերի 1908 թ. (4 հունվարի 1909 թ.):

[2] Նույն տեղում:

կեանքն ու պանծալի նահատակումը վկայ են մի անընկճելի, ինքնակալ ժողովրդային ոյժի, վկայ են հայկական ցեղի անջնջելիութեան: Պատկերներ ֆիզիքական ոյժի ու արիութեան, եւ պատկերներ՝ ընտիր գեղեցկութեան: Այդ երիտասարդները իրենց գանգրաւոր մօրուքներով, սուր եւ ցայտուն դիմագծերով, լի վճռականութեամբ եւ խտացած կամեցողութեամբ, այդ պատանիները, գրեթէ տակաւին մանուկներ՝ խոշոր, նրբագեղ, կեանք ու ոգի կայծակող աչքերով...»[1]:

Գերմանուհուն գերել էր հատկապես հայ կնոջ կերպարը, որպիսին նա որեւէ տեղ չէր տեսել: «Հապա հայ կիները, այդ քաջարի, մեր եւրոպուհիներից միանգամայն տարբեր՝ չնորհալի սերունդը: Նրանք չե՞ն, որ կատարել են գործեր, որոնց պատմելու միջոցին սրտեր են բաբախում: Ոչ մի բանաստեղծ չէր կարող յղանալ աւելի զօրեղ մի բան, քան վրէժխնդրութեան այն գործը որ կատարեց մանկահասակ, աներկիւղ Եսթերը, սեփական ձեռքով դաշունազարկ անելով իր պատիւը բռնաբարող քրդական պետ՝ Շէրիֆ աղային: Յաւերժական փա՜ռք նրա անուան ու յիշատակին: Յաւերժական փառք նաեւ այն հայ կիներուն, որոնք խիզախեցին քանդել Սասունի լեռնավայրում կառուցուած զօրանոցները: ... Բայց փառքի փայլը ճառագայթում է նաեւ այն հայ կանանց վրայ, որոնք յուսահատութիւնից մահ էին փնտռում, որոնք ձեռք-ձեռքի տուած, շարան-շարան նետւում էին Եփրատի ալիքները՝ իրենց սեփական մահով մեռնելու համար եւ ոչ այն մահով, որ պատրաստում էր անողորմ, տմարդի թշնամին»[2]:

Հայ ազգին նվիրված այս ներբողը նրա դատի հետևողական պաշտպան Իլզե Ֆրապանը վերջացնում էր այս խոսքերով.

«Եւ մինչ իմ սիրտը կսկծում է այդքան ազնիւ ոչնչացուած կեանքերի, այդքան հպարտ թափուած արիւնի դիմաց՝ մի սփոփիչ միտք է փայլատակում իմ գլխում, հաստատուն մի յոյս՝ որ հայ ազգի վիճակը յուսահատական չէ, որ անկարելի է յուսա-

---

[1] **«Ազդակ»**, № 2, 22 դեկտեմբերի 1908 թ. (4 հունվարի 1909 թ.):

[2] Նույն տեղում:

հատուել մի ազգի ճակատագրից, որն ընդունակ է արտադրել այդպիսի դէմքեր:

... Հայերը իրենց սքանչելի մտաւոր յատկութիւններով եւ հազարաւոր տարիների ընթացքում հաստատած ճկունութեամբ՝ մի ժողովուրդ են, որին պատկանում է ապագան Փոքր Ասիայում:

Այդպէս լինելու է: Այդպէս պէտք է լինի: Եթէ ուրիշները թնդանօթներ ունեն, հայերը ունեն ուղեղներ. իսկ պատմութիւնը կազմւում է ոչ թէ թնդանօթներով, այլ՝ ուղեղներով: Իւրաքանչիւր մի քար զէնք է դառնում հէնց որ մի ժողովուրդ ապստամբում է իր հարստահարիչներին ոչնչացնելու համար»[1]:

Բացառիկ ազնիվ այս գերմանուհու կանխատեսումն, ավա՜ղ, իրականություն չէր դառնալու:

Հայերն ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով կարող են ազատվել Թուրք-քրդական հարստահարումից ու կոտորածներից: Այդ հարցերը մնում էին օդից կախված: Ֆրապանը միայն հետևյալ պատասխանն ուներ. եթե Թուրքը և քուրդը քաղաքակրթվեն, ապա կամավոր կհրաժարվեն այն ամոթալի կենսաձևից, որի պայմաններում ապրում են: Նրանք ի վերջո հրաժարվելու են անմարդկային բռնություններից, ուրիշներին տանջանք ու ցավ պատճառելուց, որոնք հետևանք են տգիտության ու գեղեցկությունն ըմբռնելու անկատար ընդունակությունների: Այդ ժամանակ՝ հայերն ազատ չունչ կքաշեն[2]:

Բայց որքա՞ն կտևի նրանց քաղաքակրթվելու ժամանակը: Տասնամյակնե՞ր, դարե՞ր...

Տիկին Իլզե Ֆրապանի այս նամակը հայտնի գրողի, արվեստաբանի և հրապարակախոսի կարապի վերջին ճիչերից մեկն էր՝ լեցուն թախիծով և հույսով: Շուտով, ընդամենը մի քանի ամիս անց, նա հրաժեշտ էր տալու կյանքին[3]:

---

[1] **«Ազդակ»,** № 2, 22 դեկտեմբերի 1908 թ. (4 հունվարի 1909 թ.):

[2] Նույն տեղում, տե՛ս նաև № 3, 29 դեկտեմբերի 1908 թ. (11 հունվարի 1909 թ.):

[3] Նույն տեղում, № 3, 29 դեկտեմբերի 1908 թ. (11 հունվարի 1909 թ.):

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՐԿՈՒՆՔԻ ՄԵՋ: ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՀԱԿԱՄԻԱՊԵՏԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ

1907 թ. երկրորդ կեսը բախտորոշ ժամանակաշրջաններից մեկն էր պարսկական սահմանադրական շարժման համար: Պարսիկ ժողովուրդը գտնվում էր երկու կրակի արանքում: Մի կողմից ներքին բռնակալական ռեժիմն էր, որն սպառնում էր խեղդել ազատագրական շարժումը, մյուս կողմից՝ Թուրքերի գնալով ուժեղացող ոտնձգություններն էին Պարսկաստանի նկատմամբ: Անցնելով սահմանագիծը, օսմանյան նախահարձակ զորքերը խնդիր ունեին աստիճանաբար գրավել պարսկական սահմանամերձ հողերը, գյուղերն ու քաղաքները:

1907 թ. ամռանը Պարսկաստանն ստացավ մի ուրիշ ծանր հարված ևս, որն արտահայտվեց այդ երկրի նկատմամբ անգլո-ռուսական դատավճռի տեսքով:

ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ

Միջազգային քաղաքական մեծ մարտակրկեսում կես դարուց ի վեր աշխարհն ականատես էր երկու վաղեմի ախոյանների՝ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի դաժան մրցակցությանը: Հանուն քաղաքական գերակայության նրանց հակառակությունները հատկապես անզիջում էին ասիական մայրցամաքում: Այստեղ նրանք մերթ հոչոտում էին արևելյան անկախ, բայց զարգացման ընթացքից հետ մնացած պետություններին և «ազատում» այնտեղ բռնափակված մանր ազգերին, մերթ իրենց կատաղի հակամարտությամբ նպաստում այդ պետությունների տարածքային ամբողջականության պահպանմանը՝ պինդ կռելով հպատակ ազգերի շղթաները:

– Միջին և Փոքր Ասիայում,– գրում էր Հովհ. Թումանյանը,– «աշխարհքի էս երկու հզորների չահերն ու ազդեցությունները

վաղուց են իրար դեմուդեմ եկել...»[1]: Ռուսաստանը ձգտում էր դեպի Պարսից ծոց, իսկ այնտեղից ընդամենը մի քայլ էր դեպի բրիտանական գաղութային կայսրության ամենահամեղ պատառը՝ Հնդկաստան: Իր հերթին՝ Անգլիան, որը միշտ աշխատել է Ռուսաստանի դեմ ստեղծել մի անանցանելի պատվար և նրա հզորացման ու ծավալման առաջն առնել, ջանում էր շարժվել դեպի հյուսիս, որպեսզի իր հակառակորդի հետ կռվի մեջ մտնի որքան հնարավոր է Հնդկաստանից հեռու:

Պարսկաստան-Աֆղանստան տարածաշրջանում իրենց գաղութային սահմանների ընդարձակման ընթացքում Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն արագորեն մոտենում էին ճակատագրական ընդհարման, այնպես, ինչպես կբախվեին հանդիպակաց ուղղությամբ սուրացող երկու գնացքները:

Բայց միմյանց դեմ հանդիման կանգնած երկու գերպետությունների շահերի միջև բուֆերի պես ընկած էր «Առյուծի ու Արևի երկիր» Պարսկաստանը:

Պարսից շահնշահերն ավանդաբար հակված էին դեպի Ռուսաստան, իսկ ռուս հրամանատարների ուսուցանած ու ղեկավարած կազակային բրիգադի միջոցով ցարական կառավարությունը սատար էր դաջարական արքայատոհմին: Այդ և այլ պատճառներով Թեհրանում շատ ուժեղ էր ռուսական քաղաքական ազդեցությունը: Նույնիսկ հարևան Միջին Ասիան Ռուսաստանի նվաճելուց հետո էլ պարսից շահնշահերի մոտ երկյուղ չկար Պետերբուրգի նկատմամբ:

Բայց երկու գերտերությունների հարաբերություններն աստիճանաբար փոխվում էին: Այդ հարաբերությունները հատկապես հեղաշրջեցին Մանջուրիայում Ռուսաստանի կրած կործանիչ պարտությունները և ռուսական մեծ հեղափոխությունը:

Խոցված ու հմայքից ընկած Ռուսաստանն այլևս չէր կարող տեսանելի ապագայում մտածել հեռուներում նոր նվաճումներ

---

[1] ***Հովհաննես Թումանյան***, *Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հատոր յոթերորդ, Քննադատություն և հրապարակախոսություն, 1913-1922, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1995, էջ 14:*

կատարելու մասին: Նա այլևս վտանգ չէր ներկայացնում Մեծ Բրիտանիայի ասիական տիրույթների համար: Այս պայմաններում նրա նկատմամբ Մեծ Բրիտանիայի քաղաքական մտածումների մեջ նշանակալի տեղաշարժեր ուրվագծվեցին:

Մյուս կողմից, մի ուրիշ վտանգավոր ուժ՝ Գերմանիան, ավելի ու ավելի հաստատակամ էր մտնում համաշխարհային մրցասպարեզ: Այս երկիրը դիվանագիտական հնարքներով արդեն մի շարք փայլուն գործարքներ էր կնքել Թուրքիայի սուլթանական կառավարության հետ, ձեռք բերել գերշահավետ կոնցեսիաներ, որոնց թվում առաջինը Բեռլին-Բաղդադ երկաթուղու մեծ ձեռնարկն էր: Գերմանիան արագորեն աճում էր ոչ միայն որպես առևտրաարդյունաբերական հսկա, այլև որպես վիթխարի ռազմական ուժ: Մեծ Բրիտանիայի համար հատկապես շատ վտանգավոր էր, որ Գերմանիան արդեն հասցրել էր ստեղծել ռազմական պատկառելի նավատորմ, որն սպառնում էր նրանից խլել ծովերի վրայի տիրակալությունը:

Բնական է, որ Մեծ Բրիտանիան վտանգված էր տեսնում դեպի ասիական գաղութները տանող ավանդական ծովուղիները, այդ թվում՝ իր կենսական շահերի պաշտպանության համար շատ կարևոր Պարսից ծոցը:

Գերմանիայի սրարշավ առաջադիմությունը խոչընդոտելու համար՝ ծովերի թագուհին վերջ դրեց իր «վեհապանծ մեկուսացմանը» և սկսեց դաշնակիցներ ու բարեկամներ փնտրել: Նա դաշնակցեց Ճապոնիային և համաձայնության ամուր կապեր կռեց Ֆրանսիայի հետ: Բրիտանացի քաղաքագետները դրանով չգոհացան: Մամուլն սկսեց բարձրաձայն քարոզել անգլո-ռուսական համաձայնություն կնքելու օգտին: Իր հերթին, ռուսական մամուլը սատարեց անգլո-ռուսական երկխոսությանը, քանի որ Պետերբուրգում ևս սկսել էին շատ անհանգստանալ գերմանական վտանգից: Գերմանիան գնալով ավելի ու ավելի զորեղ ներգործությամբ Բոսֆորի ափերից դուրս էր մղում ռուսական ազդեցությունը՝ կատարելապես տեր դառնալով սուլթան Աբդուլ Համիդի կամքին:

Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի շահերի համընկնումը պատմական անակնկալ առաջ բերեց: Եվ ահա՝ երկու հսկա,

մրցակից ախոյանները ձեռք մեկնեցին միմյանց՝ փորձելով բարեկամ դառնալ:

Բայց նույնիսկ ռուս-անգլիական նախկին լարված հարաբերությունների թուլացման պայմաններում բրիտանական իշխանություններն ամեն ինչ անում էին խարխլելու Ռուսաստանի ազդեցությունը Պարսկաստանում: Օգտվելով երկրում աշխուժացող սահմանադրական շարժումից, նաև նպատակ ունենալով պարսից շահին և կառավարությանը կտրել Ռուսաստանից, բրիտանացիները հատկապես օգտագործելով իրենց ավանդական դիվանագիտության հարուստ զինանոցը, կարողացան ուղղակի կապ հաստատել ժողովրդի հետ՝ եռանդուն աջակցելով նրա ազատագրական պայքարին: Դա արտակարգ բարձրացրեց Անգլիայի հեղինակությունը ոչ միայն երկրի հարավում, այլև Հյուսիսային Պարսկաստանում, դրանով իսկ 10 միլիոնանոց պարսիկ ժողովրդի մոտ ստեղծելով տպավորություն, թե Անգլիան իր հավատարիմ դաշնակիցն է: Այլ խոսքով՝ առկա էր տարօրինակ վիճակ. Ռուսաստանը պարսկական իշխանությունների պահապանն ու դաշնակիցն էր և Մեծ Բրիտանիայի մրցակիցը, իսկ վերջինս պարսիկ ժողովրդի «դաշնակիցն» էր և պարսկական իշխանությունների «հակառակորդը»:

Բայց պարսկական ազատագրական շարժման հետ Մեծ Բրիտանիայի դիվանագիտական խաղերը երկար չտևեցին: Մեծ Բրիտանիան սահմանադրական շարժման զարգացմանը սատարում էր Պարսկաստանի միայն հյուսիսային մարզերում և շարժումը ամբողջ ուժով դաժանորեն ճնշում էր Հնդկաստանին սահմանակից հարավային նահանգներում, երկյուղ ունենալով, որ ողջ Պարսկաստանում ազատագրական շարժման տարածումն անխուսափելիորեն զարկ կտար հեղափոխական շարժմանը Հնդկաստանում:

Եվ այսպես, մի կողմից Հնդկաստանի 300 միլիոնանոց բնակչության հեղափոխական շարժման աճը, մյուս կողմից Գերմանիայի հանդեպ ունեցած վախը Մեծ Բրիտանիային ստիպեցին ոչ միայն մերձենալ Ռուսաստանին, այլև նրա հետ մտնել ռազմաքաղաքական դաշինքի մեջ:

Դեռևս 1906 թ. աշնանը Ռուսաստանի արտաքին գործերի

նախարար Իզվոլսկին համաձայնություն էր տվել Պարսկաստանը ազդեցության ոլորտների բաժանելու Լոնդոնի առաջարկին[1]:

1907 թ. սկզբներից Պետերբուրգում տեղի էին ունենում անգլո-ռուսական բանակցություններ՝ արտաքին գործերի նախարարներ Ա. Նիքոլսոնի և Ա. Իզվոլսկու մակարդակով: Բանակցություններն առաջ էին գնում հաջողությամբ: Արդյունքում՝ Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի կառավարությունների լիազորած ներկայացուցիչները 1907 թ. օգոստոսի 18 (31)-ին ստորագրեցին դաշնագիր[2], որի վավերացման փոխանակությունը կատարվեց նույն թվականի սեպտեմբերի 10-ին, Պետերբուրգում:

Պարսկաստանի նկատմամբ համաձայնության գալուց հետո երկու կողմերը չարունակեցին բանակցությունները Օսմանյան կայսրության հանդեպ որդեգրվելիք քաղաքականության շուրջ:

Օգոստոսի 18 (31)-ի դաշնագիրն ստորագրվեց իբրև խաղաղությանը նպաստող համաձայնագիր, բայց դա շատ հեռու էր պետությունների խաղաղ գոյակցության ձգտող փաստաթուղթ լինելուց, քանի որ նրա շարադրանքի միջից պարզ երևում էին երկու իմպերիալիստական պետությունների իրական նպատակները[3]:

Անգլո-ռուսական դաշնագիրը պարունակում էր նաև այնպիսի կետեր, որոնք ուղղված էին Ասիայի մայրցամաքի վրա երկու պետությունների ունեցած շահերի հարցում «առաջանալիք թյուրիմացությունները վերացնելուն»:

«Թյուրիմացությունների վերացումը» Ասիայում առաջին հերթին վերաբերում էր Պարսկաստանին: Եվ դա պատահական չէր: Հենց այդ երկրին էր վիճակված առանցքային դեր խաղալ երեք մայրցամաքների հատման հանգույցում: Պարսկաստանն

---

[1] *Տե՛ս* ***М. С. Иванов,*** *Очерки истории Ирана, Госполитиздат, Москва, 1952, с. 220.*

[2] *Տե՛ս* ***Ю. В. Ключников, А. Сабанин,*** *Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Часть I, Москва, 1925, с. 333-334.*

[3] *Անգլո-ռուսական 1907 թ. համաձայնագրի մասին տե՛ս «Красный архив»-ի 1935 թ. № 2-3 (69-70)-ում զետեղված նյութում (էջ 3-39)՝ Ս. Պաչուկանիսի նախաբանով:*

էր այն երկիրը, որ առաջիկայում դառնալու էր առևտրային մեծ ճանապարհների խաչմերուկ: Հյուսիսում Պարսկաստանը 2000 վերստ երկարությամբ սահմանակցում էր Ռուսաստանին, հարավ-արևելքում սահմանակից էր 300 միլիոնանոց Հնդկաստանին, արևմտյան կողմում սահման ուներ Օսմանյան կայսրության հետ, իսկ արևելքում միայն Աֆղանստանով էր բաժանված 400 միլիոնանոց Չինաստանից: Բացի դրանից, երկրի հյուսիսը լվացվում էր Կասպից ծովով, իսկ հարավում Պարսից ծոցն էր, որը գնալով կարևորագույն նշանակություն էր ձեռք բերում միջազգային քաղաքականության մեջ և աստիճանաբար դառնում էր, ինչպես դա եղել էր քաղաքակրթության հնագույն ժամանակներում, համաշխարհային առևտրի կարևորագույն հանգույցներից մեկը: Բոլորը լավ հասկանում էին, որ ոչ հեռու ապագայում Համբուրգից դուրս եկող երկաթուղին Բեռլինով, Վիեննայով, Կոստանդնուպոլսով և Բաղդադով գալու է Պարսկաստան, և հատելով ամբողջ երկիրը՝ միանալու է Հնդկաստանում կառուցվող երկաթուղային ցանցին: Այդ դեպքում Պարսկաստանը կդառնար միջազգային գլխավոր ճանապարհի առանցքային հանգույց, որով կկտրեին-կանցնեին պետությունների և ամբողջական մայրցամաքների հսկայական ապրանքաշրջանառության ջրային ու ցամաքային մեծածավալ ու տարողունակ զարկերակները: Այդ դեպքում, երկրում կծավալվեին քաղաքական ու քաղաքակրթական այնպիսի գործընթացներ, որոնք նրան առաջ կմղեին արտակարգ արագությամբ և դա, անկասկած, իր հերթին հսկայական ազդեցություն կգործեր Աֆղանստանի, Բրիտանական Բելուջիստանի, Տիբեթի, ամբողջ Միջին Ասիայի և Հնդկաստանի ներքին զարգացման վրա:

Առանց Պարսկաստանի ժողովրդի և կառավարության կամքն ու ցանկությունը հաշվի առնելու, պայմանավորվող կողմերը նաև համաձայնության էին եկել այդ երկրում ձեռնարկել համատեղ գործողություններ՝ «միմյանց շահերը հարգելու» համար: Դա նշանակում էր, որ նրանք իրավունք էին ձեռք բերում ծրագրել, թե այսուհետև իրենցից յուրաքանչյուրն ի՞նչ ձևով և ի՞նչ չափով կարող է շահագործել Պարսկաստանը և ազդեցություն ունենալ նրա ներքին գործերի վրա: Այլ խոսքով, երկու

հզոր պետությունները բռնադատում էին անիշխանության ու քաոսի մեջ դեգերող երկրի անկախությունը: Կապկված ոտ ու ձեռքով, Պարսկաստանը մատնվում էր նրանց ողորմածությանը, որոնք հենվելով ուժեղի իրավունքի վրա, անօրինակ ցինիզմով գալիս էին երկիրը բաժանելու «ազդեցության շրջանների (գոտիների)»:

Օգոստոսի 18 (31)-ի համաձայնագրով Պարսկաստանում սահմանվում էին ազդեցության երեք գոտիներ՝ հյուսիսային, չեզոք և հարավային[1]:

Ավելի հարուստ և արդյունաբերական Հյուսիսային Պարսկաստանը (790 հազ. քառ. կմ)[2], այսինքն երկրի մեծագույն մասը մայրաքաղաք Թեհրանով, Ռեշտ, Թավրիզ, Ղազվին, Իսֆահան քաղաքներով և հեղափոխական շարժման այլ կենտրոններով, մնում էր ռուսական ազդեցության գոտու մեջ: Ահագին տարածությամբ կտրված լինելով բաց ծովերից և հաղորդակցության այլ ճանապարհներից, երկրի այդ մասը, սակայն, համեմատաբար քիչ կարևորություն էր ներկայացնում առևտրաքաղաքական տեսակետից:

Մեծ Բրիտանիայի ազդեցության շրջանն ընդգրկում էր երկրի հարավային, ծովեզերյա մասը՝ աֆղանական սահմանագլխից դեպի հարավ՝ մինչև Հնդկական օվկիանոս (այսինքն՝ 355 հազ. քառ. կմ.): Տարածքով անհամեմատ փոքր լինելով, այդ գոտին, սակայն, ռազմագիտական իմաստով շատ ավելի կարևոր էր:

Պարսկաստանն ազդեցության գոտիների բաժանելու անգլո-ռուսական համաձայնությունները ձևակերպված էին հետևյալ հինգ կետերի մեջ. 1) Անգլիան պարտավորվում էր արդյունագործական, առևտրական, երկաթուղաշինության, խճուղիների կառուցման, հեռագրի անցկացման ոչ մի կոնցեսիա չվերցնել Պարսկաստանի այն մասում, որը գտնվելու է ռուս-

---

[1] Տե՛ս **Н. А. Акимкин, М. А. Люксембург,** *Практикум по истории стран Зарубежного Востока (Индия, Иран, Турция), Госиздат "Высшая школа", Москва, 1963, с. 60.*

[2] Տե՛ս **М. С. Иванов,** *Очерки истории Ирана, с. 220.*

աֆղանական սահմանից սկսվող, Իսֆահան-Եզդ-Հակկի միջով անցնող ու Կասրե-Շիրինում վերջացող գծից դեպի հյուսիս: 2) Ռուսաստանը պարտավորվում էր նույն բանը չանել Աֆղանստանի սահմանից սկսվող, Գազիկ-Բիրջան-Քիրմանով անցնող և Բենդեր-Աբբասում վերջացող գծից դեպի հարավ: 3) Ռուսաստանն ու Անգլիան փոխադարձաբար պարտավորվում էին այդ երկու նշանակված սահմանների միջև թողնել մի տարածություն, որի վրա կոնցեսիաներ վերցնելիս երկու տերությունները պարտավորվում էին միմյանց չհակառակվել, բայց պետք է նախապես միմյանց հայտնեին, թե ո՛ր կոնցեսիան են ցանկանում վերցնել: Այլ խոսքով, այս երրորդ տարածությունը չեզոք հող էր, որ սովորաբար պետությունները, փոխադարձ համաձայնությամբ, ստեղծում էին իրենց սահմանների միջև՝ զանազան անախորժ թյուրիմացություններից զերծ մնալու նպատակով: Երկու ազդեցության գոտիների արանքում ընկած այդ ահագին տարածության մեջ էր մտնում նաև Պարսից ծոցը, որի վրա փաստորեն հաստատվում էր Անգլիայի անբաժան տիրակալությունը: Իսկ դա նշանակում էր, որ նրա հնարավոր ազդեցության տակ էր ընկնելու նաև կառուցվելիք Բեռլին-Բաղդադ-Բասրա երկաթուղին: Բասրան լինելու էր երկաթուղու՝ Պարսից ծոց դուրս եկող վերջին կետը: Այլ խոսքով, երկաթուղու բանալին ամուր փակվելու էր Անգլիայի ձեռքերում: 4) Երկու մեծ տերությունները պարտավորվում էին՝ բացի Ֆարսիստանի և Պարսից ծոցի մաքսատներից, պարսկական մյուս բոլոր մաքսատներից ստացված եկամուտներով ծածկել այն պարտքերն ու դրանց տոկոսները, որոնք շահի կառավարությունը վերցրել էր Ռուսաստանից: Ինչ վերաբերում էր Ֆարսիստանի և Պարսից ծոցի մաքսատներին, ապա դրանցից ստացված եկամուտները, ինչպես և Կասպից ծովի պարսկական ափերում ձկնորսությունից ստացված եկամուտները պիտի գնային Անգլիայից վերցրած պարտքերը ծածկելուն: 5) Այն դեպքում, եթե պարսից կառավարությունը չկարողանար կանոնավոր կերպով իր պարտքերը վճարել Ռուսաստանին կամ Անգլիային, սրանք իրենց կատարյալ իրավունք էին վերապահում, յուրաքանչյուրն իրեն պատկանող սահմաններում, վերահսկողություն հաստա-

տել այդ պարտքերն ապահովող եկամտային աղբյուրների վրա:

Թեև դիվանագիտական լեզվով սա չէր նշանակում Պարսկաստանի նվաճում ու գաղութացում, բայց երկիրն այսպես կոչված «ազդեցության շրջանների» բաժանելն ըստ էության նրա նվաճումն էր ոչ թե զենքով, այլ՝ դիվանագիտությամբ:

Անգլո-ռուսական պայմանագրով նախատեսվում էր նաև՝ 1) Չխախտել Պարսկաստանի տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը, 2) Ապահովել առևտրի ազատության սկզբունքների կիրառումը, 3) Բոլոր մեծ տերությունների առաջ պաշտպանել բաց դռների սկզբունքը, 4) Պարսկաստանի ֆինանսական բոլոր գործերը դրվում են Անգլիայի և Ռուսաստանի հսկողության տակ, 5) Սաղրազամ և նախարարներ նշանակելուց առաջ դրանց թեկնածությունները նախապես հաստատում են Պարսկաստանում Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցչությունները, որից հետո միայն հրամանագրվում են շահի կողմից, 6) Առանց Ռուսաստանի և Անգլիայի թույլտվության Պարսկաստանը չի կարող նոր փոխառություն վերցնել որևէ պետությունից, 7) Շահը պարտավոր էր անփոփոխ պահել սահմանադրությունը և ընդհանուր ներում հայտարարել: Այդ ամենի դիմաց Ռուսաստանն ու Անգլիան պարտավորություն էին ստանձնել՝ 1) Ապահովել շահի կյանքի, ինչքի և թագի անձեռնմխելիությունը, 2) Խոշոր փոխառություն անել Պարսկաստանին, 3) Շահին պաշտպանել ժողովրդի կողմից հնարավոր որևէ բռնության դեմ[1]:

Այդ լրացուցիչ կետերը պայմանագրի մեջ էին մտցվել հանգստացնելու համար Պարսկաստանի ժողովրդին, թե երկիրը Անգլիայի և Ռուսաստանի ազդեցության շրջանների բաժանելը դեռ չի նշանակում Պարսկաստանի գերիշխանության ու անկախության խախտում: Իրականում, Պարսկաստանն ընկավ պարտատեր երկու պետություններից վասալական դրության մեջ:

Իհարկե, մինչ այդ էլ Պարսկաստանն այս երկու մեծ պետությունների սուր մրցակցության թատերաբեմ էր, բայց երբեք նա

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 159:*

չէր եղել այնքան հրապուրիչ կովախնձոր մրցակիցների համար և երբեք արտաքին արշավանքի վտանգն այնքան որոշակի ու չոչափելի չէր եղել, ինչպես անգլո-ռուսական համաձայնությունից հետո:

«Պարսկաստանը՝ կապկպուած ոտքով-ձեռքով,- գրում էր «Դրօշակը»:- Առանց հարցնելու ժողովրդի կամքը, առանց մաղաչափ խնայելու նրա դարաւոր անկախութեան զգացումները,— դիւանագիտական մակեավիլիզմը, յենուած ուժերի իրաւունքի վրայ, անօրինակ ցինիզմով գալիս է բաժանելու մի երկիր ազդեցութեան շրջանների եւ դրանով հիմք է դնում՝ երկրի ապագայ կլանման... Հեռանկարը խիստ մռայլ է, վտանգալի»[1]:

Պարսկաստանի համար ստորացուցիչ այդ պայմանագիրն Անգլիան և Ռուսաստանը կնքեցին հենց այն ժամանակ, երբ երկիրը վերակենդանանալու և ինքնուրույն կյանք վարելու հսկայական ճիգեր էր թափում: Մեջլիսը և պարսից մամուլը բուռն կերպով բողոքում էին դաշնագրի դեմ՝ դա համազոր նկատելով երկրի ստրկացմանը: Ժողովուրդն իր լեղի հացը նախընտրում էր օտարի լծից՝ դրանով իսկ չեշտելով իր ազգային արժանապատվությունը:

Անգլո-ռուսական պայմանագիրը կնքվել էր առանց պարսկական մեջլիսի գիտության: Իբրև կատարված փաստ՝ պարզապես հաղորդագրություն էր տարածվել այդ մասին: Ո՛չ այդ ժամանակ և ո՛չ էլ հետագայում մեջլիսը չճանաչեց զայրացուցիչ գործարքը, իսկ ժողովուրդը տեղի ունեցածը գնահատեց որպես ծաղր ու ծանակ իր սահմանադրությանը: 1907 թ. հոկտեմբերի 8-ին պարսից մեջլիսը և մամուլը բողոքեցին համաձայնագրի դեմ՝ որպես վիրավորանք երկրի ազգային արժանապատվությանը, որպես նրա անկախությունը ոտնահարող փաստաթուղթ, բայց այդ բողոքը հաշվի առնող չեղավ:

«Դրօշակը» գրում էր. «... Պարսկաստանի դրութիւնը ոչ միայն չէ պարզուած, այլ աւելի կը կնճռուի ... Մեճլիսը ոտքին տակ հող չունի..., յեղափոխական գիտակցութիւնը, ինչքան ալ

---

[1] ***«Դրօշակ»**, № 5 (202), մայիս, 1909:*

անկեղծ եւ անձնուէր ըլլայ, անզօր է լուրջ բարդութիւններու դիմագրաւել, երբ իր կառավարութիւնը դաւաճանելով՝ արտաքին միջամտութեան մը վրայ կոթնի»[1]:

Երկրում ծայր առած խոր դժգոհության արտահայտություններից մեկն եղավ պարսից սադրազամ (նախարարապետ) Աթաբեկ Ազամի (Էմին Սոլթան) վրա կատարված ահաբեկչությունը: 1907 թ. օգոստոսի 31-ին պարսիկ հինգ արմատական հեղափոխականներ հարձակում են գործում նրա վրա: Նրանցից մեկը՝ Աբբաս աղան, ատրճանակի չորս կրակոցով սպանում է Աթաբեկ Ազամին, իսկ նրա ընկերների կրակոցներով զոհվում են մի զինվոր և մի կազակ: Փոխհրաձգության ժամանակ հարձակվողներից մեկն սպանվում է տեղում, մյուսը՝ Աբբասը, անձնասպան է լինում, իսկ երեքը կարողանում են փախչել[2]:

Հեղափոխականները սադրազամին մեղադրում էին նաև նրա համար, որ սահմանադրական բարեփոխումների խնդրում որևէ հետաքրքրություն ցույց չի տալիս, բելգիացիներին է հանձնել երկրի ամբողջ մաքսային, փոստային և ֆինանսական ոլորտները, կարծր դիրք չի բռնում Թուրքիայի նկատմամբ, որի զորքերը ներխուժել են Պարսկաստան:

Աթաբեկ Ազամի սպանությամբ իշխանությունը կորցնում էր տվյալ պահին պետական գործերում ամենաունակ գործչին: Եվ դա այն ժամանակ, գրում էին թերթերը, երբ երկիրը բոլորում էր իր պատմության տագնապալի մի շրջանը. գանձարանը դատարկ էր, տուրքերը չէին հավաքվում կամ հավաքվում էին շատ անկանոն, երկրում անիշխանություն էր, ամենուր՝ ավազակություն և անապահովություն:

Եթե շահը և նրա շրջապատը ծանր տարան Աթաբեկ Ազամի մահը, ապա ժողովուրդը «չեհիղների» և ազգային հերոսների կարգը դասեց նրա սպանողին՝ Աբբասին: Վերջինիս մահվան քառասունքին (էրբային) հազարավոր մարդիկ այցի գնացին

---

[1] ***«Դրօշակ»**, № 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 173:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 8 (185), օգոստոս, 1907, էջ 120, **«Արօր»** (Թիֆլիս), № 10, 14 սեպտեմբերի 1907 թ., **«Ազատ բեմ»** (Գահիրէ), № 47, 28 սեպտեմբերի 1907 թ.:*

նրա գերեզմանին՝ հարգելու հերոսի հիշատակը: Ազատամիտ պարսիկներից մեկը սգո հանդեսում ունեցած ելույթում դիմելով հավաքվածներին, ասաց. «Ով Իրանի զաւակներ, դուք այստեղ եկաք ողբալու ազգային հերոսի մահը, նաեւ պանծացնելու նրա մեծագործութիւնը: Այդ վեհ հոգին այլեւս մեր կողքին չէ: Նա երկրի վրայ չէ, այլ՝ երկնքում եւ այնտեղից մեզ թելադրում է, թէ ինչպէս պէտք է ազատուել բռնակալներից: Նրա գերեզմանը ձեզ աղերսում է՝ հետեւել իր օրինակին, պատուիրում է մեր ճանապարհից դէն նետել այն բոլոր խոչընդոտները, որոնք խանգարում են մեր ազգային ազատութեանը եւ երկրի առաջադիմութեանը»[1]:

Հեղափոխականի այս խոսքերը ցույց էին տալիս, թե ժողովրդի մեջ որքան մեծ ատելություն էր կուտակվել կառավարության և ընդհանրապես շահական կարգերի դեմ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՈՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Աշխատության նախորդ էջերում նշվել է, որ 1905 թ. վերջերից սկսած Պարսկաստանի ազատագրական-առաջադիմական շարժումը հանդիպում էր ոչ միայն երկրի հետադիմության, այլև ռուսական միապետության բուռն դիմադրությանը, և այդ իսկ պատճառով, շարժման մեջ ընդգրկված զանգվածների շարքերում գնալով ուժեղանում էին հակառուսական տրամադրությունները, որից օգտվում էին Պարսկաստանում շահեր ունեցող եվրոպական տերությունները և ամենից առաջ Անգլիան: Այդ տեսակետից բացառություն չկազմեց 1907 թվականը, հատկապես նրա երկրորդ կեսը:

1907 թ. մայիսին Պարսկաստանում բռնկվեց շահի եղբոր՝ արքայորդի Սալար Դովլեի գլխավորած ապստամբությունը, որի նպատակն էր գահընկեց անել Մահմեդ Ալիին և տիրանալ գահին: Կառավարական զորքերից ջարդ կրելով, շահի եղբայրը

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 174:*

փախավ Քիրմանշահ, և իր հալածողներից ազատվելու համար ապաստան գտավ տեղի անգլիական հյուպատոսությանը պատկանող շենքում: Մեջլիսը Թեհրանի բրիտանական դեսպանից պահանջեց նրան օրինական իշխանություններին հանձնել: Լոնդոնից եկած հրահանգի համաձայն՝ ապստամբության ղեկավարը հանձնվեց կառավարությանը՝ դրանով իսկ գոհացում տրվեց խորհրդարանին:

Այդպիսով, անգլիացիները մի անգամ ևս ցույց տվեցին, որ Պարսկաստանի ժողովրդական ներկայացուցչության վրա իրենք նայում են իբրև մի հաստատության, որն, արդարև, իր մեջ մարմնավորում է պետական իշխանության իրավատիրությունը: Եվ պարսիկները չնորհակալ մնացին:

Բայց պարսից սահմանադրությանն այդպես չվերաբերվեցին ռուսաց դիվանագետները: Սերտ դաշինքի մեջ լինելով շահի հետ, սրանք արհամարհանքով էին նայում պարսկական խորհրդարանի վրա՝ ցուցադրաբար բանի տեղ չդնելով նրան: Բազմաթիվ փաստերից ահա՛ մեկը:

Սալար Դովլեի անհաջող ապստամբությունից երկու ամիս հետո մեջլիսի հրամանով կալանավորվում է մի հարուստ վաճառական՝ Մելիք Թոջջարը, որը բազմաթիվ անօրինական մութ գործեր էր կատարել մի չարք ռուսահպատակ պարսկաստանցիների հետ: Թեհրան տանելիս հանցագործը ճանապարհին փախչում է պահակների ձեռքից և ապաստանում ռուսական դեսպանության Զերգենդեի ամառանոցում: Զնայած նրան հանձնելու համար մեջլիսի թափած եռանդագին ջանքերին, Ռուսաստանի դեսպանը, սակայն, պատասխանում է կտրուկ մերժումով:

Այդ դեպքից հետո մեջլիսն ու մամուլն սկսեցին բարձրաձայնել, թե տեսե՛ք՝ անգլիացիները, ներողություն խնդրելով, երկրի օրինական իշխանություններին են հանձնել շահի եղբորը, իսկ ռուսները դատական պատասխանատվությունից թաքցնում ու հովանավորում են ամբողջ Պարսկաստանում հայտնի մի խարդախի:

Դիվանագիտական կոպիտ սխալներից էր նաև այն վերջնագիրը, որ 1907 թ. ամռան վերջերին Թեհրանի ռուսաց դեսպան Հարդվիգն ուղարկել էր պարսկական խորհրդարանին: Այդ

գրության մեջ դեսպանը մեջլիսին ամբարտավան տոնով նախազգուշացնում էր «անմիջապես վերջ դնել պետական խռովություններին, որոնցից տուժում են ռուսահպատակների շահերը»: Միաժամանակ, դեսպանն իր կառավարության անունից հայտնում էր, որ հակառակ դեպքում ռուսաց զորքերը կգրավեն Պարսկաստանի հյուսիսային մասը և «ուժով վերջ կդնեն անկարգություններին»:

Ռուսական այդ վերջնագիրը բողոքի բուռն ալիք բարձրացրեց երկրում, իսկ մեջլիսում ցասկոտ ելույթներ առաջ բերեց: Դեսպանին պատասխան ուղարկվեց նույն կոպիտ ոճով: Այնտեղ նշված էր, որ Ռուսաստանն իրավունք չունի միջամտելու զերիշխան (սուվերեն) երկրի ներքին գործերին, նաև հիշեցում էր արվում, որ ռուսական հեղափոխության օրերին պարսկահպատակներից շատերը տուժեցին Կովկասում, բայց պարսկական իշխանություններն երբեք ակնարկ անգամ չարեցին ռուսաց կառավարությանը:

1907 թ. դեկտեմբերին Մահմեդ Ալի շահն անսպասելիորեն կալանավորեց կառավարության ազատամիտ նախարարներին՝ դրանով իսկ փորձ անելով վերականգնելու վաղեմի կարգերը: Ինչպես հետո պարզվեց, այդ գործողությանը շահին Թեհրանի ռուսաց դեսպանությունն էր դրդել: Լրագրային հոդվածների հեղինակները պնդում էին, որ ռուսները ոչ միայն բարոյական աջակցություն են ցույց տվել շահին, այլև նրան խոստացել են բազմաքանակ զորքերով ներխուժել երկիր, ցրել անջումենները և հետ խլել սահմանադրությունը:

Երբ շահը կալանավորեց նախարարներին, բրիտանական դեսպանը պահանջեց ամենից առաջ ազատել նախարար-նախագահ Նասեր օլ Մոլքին լոկ այն պատճառաբանությամբ, որ նա «անգլիական բարձրագույն չքանչաններից մեկի ասպետ է»: Դա դեռ քիչ համարելով, դեսպանը հայտարարեց, որ անգլիական դեսպանատան դռներն առաջվա պես բաց են մեջլիսի պատգամավորների համար և որ հարկ եղած դեպքում նրանք կարող են այնտեղ հուսալ լիակատար պաշտպանություն և կյանքի անվտանգություն: Բրիտանացիները կարողացան ազատել տալ նախարար-նախագահին, և իրենց ջանքերը լարե-

լով, նպաստում էին սահմանադրականների հաջողություններին: Նրանք հազվագյուտ ճարպկությամբ աշխատում էին օգտվել յուրաքանչյուր դիպվածից՝ երկրի բնակչության համակրանքն իրենց կողմը գրավելու համար: Դիվանագիտական հարթության վրա նրանք նորանոր հաջողություններ էին արձանագրում:

Իսկ ինչ էին անում այդ ժամանակ ռուս դիվանագետները: Նրանք լռել էին և տեղի ունեցող իրադարձություններում նրանց ձայները բոլորովին չէին լսվում: Եթե այդ լռությունը ռուս հասարակության համար անըմբռնելի էր, ապա ամեն մի պարսիկի համար՝ միանգամայն հասկանալի:

Ռուսների պահվածքը խոր դժգոհություն էր առաջ բերել: Պարսկական մամուլը («Մենելես», «Նեղայե-վաթան» և այլ թերթեր) խիստ քննադատություն էին հնչեցնում Պետերբուրգի հասցեին: Թերթերի էջեր էին բարձրանում անախորժության և վիրավորանքի զգացմունքները:

Արդեն 1907 թ. վերջերից պարսիկ գործիչների մեծ մասը թշնամաբար էր տրամադրված Ռուսաստանի հանդեպ: Թեհրանի ազգայնական անջումենների հավաքներում ճառախոսներն ատելությամբ էին արտահայտվում Ռուսաստանի, որպես պարսկական հետադիմության հենարանի, նկատմամբ, չեչտում էին, որ ռուսական կառավարության վարած քաղաքականությունն իրենց երկրին բերելու է անհամար աղետներ ու թշվառություններ:

Պարսկաստանում ռուսների վարած քաղաքականությանը կողմնակից էին մնացել միայն ծայրահեղ հետադիմական ուժերը՝ շահի գլխավորությամբ:

Պատահական չէր, որ երկրում ծավալվող գործընթացների վրա ռուսաց ազդեցությունն օրըստօրե ընկնում էր: Հատկապես, Պարսկաստանի սահմաններից ներս զորք մտցնելու սպառնալիքը վերջնականապես տապալել էր մնացորդներն այն ջերմ զգացմունքների, որպիսիք պարսիկները նախկինում տածել էին Ռուսաստանի հանդեպ:

Այսպիսով, Պարսկաստանում, ուր դեռևս ոչ շատ ժամանակ առաջ Ռուսաստանի ձայնն ամենազոր էր, ազատագրական շարժման զարգացման ընթացքում ենթարկվեց լուրջ փոփոխու-

թյունների: Շարժման զարգացման համեմատ վեր բարձրացավ Անգլիայի վարկը և ընդհակառակը՝ խախտվեցին Ռուսաստանի դիրքերը:

Դրա ամենաբնորոշ ապացույցներից մեկը Պարսկաստանում ռուսահպատակների վրա օրեցօր հաճախակի դարձող հարձակումներն էին: Գնալով լայն ծավալներ էին ստանում ռուսների բնակարանների կողոպուտը, երբեմն նաև՝ հրկիզումները: «Ռուսաց խճուղով» (Ջուլֆա-Արդաբիլ-Թավրիզ) ռուսական ապրանքները Պարսկաստան տեղափոխող մարդիկ ավելի ու ավելի հաճախ էին ենթարկվում զինված հարձակումների և կողոպուտի: Հյուպատոսական փոստն արդեն մի քանի անգամ հափշտակիչների ձեռքն էր ընկել: Ռուսական ապրանքները (չաքար, նավթ, կտավ և այլն) պարսիկ ազգայնականների քարոզչության հետևանքով բոյկոտի էին ենթարկվում: Բայց ամենանշանակալիցը ռուսաց դեսպանի կյանքի դեմ հաճախակի դարձած «պատահական» դեպքերն էին: Բանը հասավ բացահայտ մահափորձի, որը չհաջողվեց պատահական դիպվածի շնորհիվ:

Առաջներում պարսիկները ռուսներին օգնում էին որսալու ռուս-պարսկական սահմանագծի մոտերքում «գիտական ուսումնասիրություններ» կատարող անգլիական լրտեսներին, իսկ այժմ նրանք անգլիացիների վրա նայում էին իբրև իրենց բարեկամների և պատրաստ էին ընդմիշտ խզելու ամեն տեսակ կապերը Ռուսաստանի հետ:

Բայց եթե ռուսական կողմի սպառնալիքներն առայժմ մնում էին որպես լոկ հայտարարություններ, ապա գոյություն ունեցող իրական վտանգներն ունակ էին երկրի համար բացելու տևական ու անդառնալի աղետների դուռը:

Ռուսական դիվանագիտությունը, որը հայտնի էր միջազգային իրադարձությունները ժամանակին վերլուծելու և ճշգրիտ եզրահանգումներ անելու դանդաղկոտությամբ, այժմ էլ դրա նոր օրինակ էր տալիս:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՌՆԱԶԱՎԹՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Վերածնության ազատարար հոսանքի հետ Պարսկաստանի ամբողջ տարածության վրա փչում էին ավերիչ հողմեր:

Ինչպես նախորդ չարադրանքում նշվել է, Կ. Պոլսից եկած հրամանով թուրքական զորքերը 1905 թ. աշնանն անցել էին պարսկական սահմանը՝ խնդիր ունենալով Ատրպատականը և Իրանական Քուրդիստանը միացնել Օսմանյան կայսրությանը[1]:

Երկու դրացի իսլամական պետությունների ընդհարումը և մանավանդ Թուրքիայի բացարձակ մտադրությունը՝ գրավել Պարսկաստանի մի քանի սահմանակից գավառները, քաղաքական աշխարհի ամենից արտառոց, ինչպես և ամենից անըմբռնելի խնդիրներից մեկն էր:

«Հիվանդ մարդը» դեռ չարունակում էր ինքն իրեն զգալ այնքան կենդանի, որ հանդուգն քայլերով ձեռք էր զարկում նոր նվաճումների, այն էլ այն տարածքների բռնազավթման, որոնք Ռուսաստանի ազդեցության գոտի էին նկատվում:

Ռուս-անգլիական դաշնադրությունից հետո օսմանցիները, ինչպես և սպասվում էր, ոչ միայն չթողեցին պարսից հողերը, այլև 1907 թ. ամռանը չարունակեցին ավելի առաջանալ, և իրենց արյունոտ հետքերը ձգելով ամեն տեղ, գրավեցին Ուրմիայի հարավարևելյան կողմերի Աղախան Միրփանջի 26 գյուղերը[2]:

Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, որոնք որոշ չափով երաշխավոր էին Պարսկաստանի տարածքային ամբողջականությանը, միայն կեսբերան դիտողություն էին անում թուրքերին: Ամերիկայի Միացյալ Նահանգները, նկատի առնելով Ուրմիայում իր միսիոներական շահերը, Կ. Պոլսում դեսպան Լայշմանի միջոցով իր ձայնը լսելի էր դարձրել, որ Ուրմիան պետք է դուրս մնա թուրքական արշավանքից: Ի պատասխան նշված տերությունների որոշ անհանգստությանը, թուրքական իշխանություններն երդում-պատառ էին լինում, որ թեև Պարսկաստանը կես դարից

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 6, 23 հունվարի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Արօր»**, № 2, 4 սեպտեմբերի 1907 թ.:

ավելի է, ինչ «անօրինաբար նստել է» Թուրքիային պատկանող սահմանագլխային տարածքների վրա, բայց իրենք «համբերությամբ կուլ են տալիս այդ անարդարությունը» և առաջիկայում էլ ոչ մի հարձակողական նպատակ չեն ունենալու Թեհրանի նկատմամբ:

Խոսքով այսպես արտահայտվելով, Թուրքերը գործով հակառակն էին անում: Նախահարձակները 1907 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին չարունակում էին Ուրմիայով քայլ առ քայլ առաջ շարժվել՝ հայացքը հառած Ուրմիո լճին: Հոկտեմբերի կեսերին նրանք արդեն մոտեցել էին Զոլա գետին և սպառնում էին Սալմաստին: Թուրքական զորքերի թիվը Ուրմիայում արդեն հասել էր 60 հազարի:

Սահմանագծի վրա գտնվող Սալմաստ գավառը գրեթե ամեն կողմից շրջապատված էր քրդական ավազակաբարո ցեղերով և միշտ ենթակա էր եղել նրանց արշավանքներին ու ալան-թալանին: Բայց նախորդ տարիներին այդ ամենը կատարում էին պարսկահպատակ քրդական ցեղերի ոչ մեծ խմբեր, որոնք չհամարձակվելով առաջ ընթանալ դեպի գավառի կենտրոնական մասերը, բավարարվում էին սահմանագծին ավելի մոտ գտնվող լեռնային փոքր ու անպաշտպան պարսկական ու հայկական գյուղերի վրա հարձակումներ գործելով կամ, ճանապարհներին դարան մտած, կողոպտում էին խաղաղ անցորդներին[1]:

1907 թ. կեսերից քրդական արշավանքները բոլորովին տարբեր ընույթ ձեռք բերեցին: Այժմ քրդերը լավ կազմակերպված էին, գործում էին որոշակի ծրագրով, դարձել էին ավելի հանդուգն ու համարձակ: Եվ երբ օսմանյան կանոնավոր զորքերը կռիվներ սկսեցին Ատրպատականի սահմանների վրա գտնվող պարսկական գավառները գրավելու համար, Թուրքական հրամանատարությունն իր առաջխաղացման ընթացքում լայնորեն օգտվեց քրդական ավազակաբարո ցեղերի ծառայությունից: Վերջիններս միանալով իրենց նման սուննի դավանանքի Թուրքերի հետ, առանձին եռանդով ձեռնարկեցին կողոպտելու և

---

[1] *Տե՛ս* ***«Լրաբեր»*** *(Աստրախան), № 1, 27 ապրիլի 1908 թ.:*

ավերելու պարսկաբնակ և հայաբնակ գյուղերը Սոուջ-Բուլաղ, Ուղնի, Բարանդուզ և այլ գավառներում: Միաժամանակ, քրդերի առաջնորդները հայտարարում էին, թե իրենք կոչված են այդ վայրերում հաստատելու Թուրք սուլթանի գերիշխանությունը[1]:

Սալմաստի գավառի քուրդ ցեղապետերից ամենաազդեցիկը Բայազետ աղան էր, որն իր շուրջը համախմբելով նաև քրդական բազմաթիվ ցեղերի, ապստամբեց կառավարության դեմ և Թուրքերի կողմն անցավ: Շատ չուտով նա կարողացավ պարտության մատնել պարսից սարբազներին և նրանց դուրս մղել գավառի տարածքի մեծ մասից:

Սարսափահար փախչելով կռվի դաշտից, սարբազներն ահաբեկման մեջ գցեցին նաև գավառի ողջ բնակչությանը: Հետապնդելով պարսից զորքի մնացորդներին, Բայազետ աղան մտավ Մոլլալար գյուղը, որը կապալով պատկանում էր հայ կալվածատեր, ռուսահպատակ Նազարբեկովին: Առաջ չարժվելով, քրդերի ասպատակիչ խմբերը մտան հարևան հինգ գյուղեր, կատարեցին սպանություններ, կողոպտեցին ու հրդեհեցին բնակավայրերը:

Այս անորոշ կացությունը մեծ սպառնալիքներ էր պարունակում պարսկահայության համար: Հնարավոր վտանգները քննության էին առնվում կովկասահայ մամուլում, կուսակցական, հասարակական և կրոնական շրջանակներում:

Սալմաստի հայերի համար այդ ծանր պահին Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը, վախճանումից քիչ առաջ, աղերսագիր ուղարկեց Պարսկաստանի շահնշահ Մահմեդ Ալիին: Ցավով արձանագրելով, որ Պարսկաստանը ենթարկված է օտարի հարձակման, որի հետևանքով տուժում է նաև Ատրպատականի հայությունը, Վեհափառ հայրապետը գրում էր. «Վերջին օրերին որոշ չարամիտ եւ սատանայասիրտ մարդիկ ցանկացան վրդովել խաղաղութիւնը Ատրպատականի սահմաններին մահմեդականների եւ հայոց միջեւ, որոնց սէրը եւ միաբանութիւնը Ձեր հովանաւորութեամբ արժանի է գովեստի: ... Յուսով

---

[1] Տե՛ս **«Լրաբեր»**, № 1, 27 ապրիլի 1908 թ.:

ենք, որ այսուհետեւ էլ նրանք առաւել սիրով եւ խաղաղութեամբ կ'ապրեն միմեանց հետ, է՛լ առաւել, քան առաջ, ի փառս Ձեր եւ ի սփոփանք մեր վչտացեալ սրտի: Եւ թող ամաչի սատանան, ու այլեւս երբեք չյանդգնի թշնամութեան որոմը գցել դարաւոր եղբայրական ազգերի միջեւ:

Ես, առաւել քան երբեւէ, ընդգծելով Ձեզ իմ և հաւատարիմ հօտի անկեղծ զգացմունքների երախտագիտութիւնը, իմ անձնական պարտքս եմ համարում վերառաքել Բարձրեալին իմ սրտի խորքից հայցածը, որպէսզի Ձեր վրայ օրըստօրէ ուժեղացնի իւր աստուածային ողորմութիւնը եւ չնորհքը եւ անսասան պահի եւ օրըստօրէ պայծառացնի երջանկասփիւռ գահը արքայից արքայի՝ ի մեծ ցնծութիւն բազմացեղ ժողովրդի Իրանի եւ ի փառս համայն Արայական Տան»[1]:

Բայց կաթողիկոսի աղերսագիրը չէր կարող որեւէ ազդեցություն ունենալ Սալմաստում ծավալվող իրադարձությունների վրա, որովհետեւ ինքը չահնչահն իսկ անկարող էր ունեցած հնարավորություններով զսպելու թուրք-քրդական միացյալ ուժերի ավերածությունները[2]: Մանավանդ քրդական ավազակախմբերի կատարած սրածության ու կողոպուտի պայմաններում, նշված տարածքներում լիովին դադարել էին ապրանքների փոխադրությունը, հեռագրական հաղորդակցությունը և փոստի երթևեկությունը[3]:

Ծրագրած լինելով գրավել Սալմաստի գավառն ամբողջությամբ, թուրքական հրամանատարությունը գաղտնի գործակալներ ուղարկեց նաև հարեւան Զարա, Սոմա, Կոտուլ և այլ գավառամասերի քրդերի մոտ՝ նրանց ևս կազմակերպելու և Թեհրանի կառավարության դեմ հանելու համար: Այստեղ էլ հաջողվեց ազդել քրդերի վրա, գրգռել նրանց ավազակային բնազդները, նրանց կույր գործիք դարձնել թուրքերի ձեռքում:

Սուլթան Աբդուլ Համիդի և նրա քուրդ աջակիցների հան-

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 214:*

[2] *Տե՛ս* ***«Ախուրեան»****, № 77, 15 դեկտեմբերի 1907 թ.:*

[3] *Տե՛ս նույն տեղում, № 76, 12 դեկտեմբերի 1907 թ.:*

դուգն գործողությունների հետևում Գերմանիան էր, որը Թուրքիայի ձեռքով իր շահերը հետապնդելով այդ կողմերում, փորձում էր անհնարին դարձնել Պարսկաստանի մասին անգլո-ռուսական համաձայնությունների իրագործումը: Այս դեպքում Գերմանիան վարվում էր ճիշտ այնպես, ինչպես Մարոկկոյի խնդրում: Սրանով նա ձգտում էր չեչտել իր միջազգային նշանակությունը, ցույց տալ, որ առանց իր մասնակցության կայացած համաձայնություններն արժեք ունենալ չեն կարող, մանավանդ որ Պարսկաստանի նկատմամբ հաջողած քաղաքական ակտը, որին հասել են Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը, անմիջական կերպով չոչափում էր իր մերձավոր շահերը:

Պարսկաստանի վրա Թուրքական հարձակումն ուղղված էր նաև Ռուսաստանի շահերի դեմ: Հենվելով Գերմանիայի աջակցության և քաջալերության վրա՝ Կ. Պոլիսը համոզված էր, որ Պարսկաստանն անզոր կլինի դիմադրելու, իսկ Ռուսաստանը, գլուխը խառը լինելով, չի համարձակվի պատերազմ հայտարարել:

Այդ ամենի կողքին դրված էր գլխավոր նպատակը, այն է՝ տիրանալով Սալմաստ և Ուրմիա շրջանների բոլոր բնական ամրություններին, մի լայն ճեղք բացել և ճանապարհ հարթել դեպի Ատրպատական, ուր գերակայում էր Թուրք բնակչությունը, ապա չարժվել ու ավելի հեռվում գտնվող Թուրքալեզու տարածքներ գրավել[1]:

Թուրքիան որևէ ուշադրություն չէր դարձնում Ռուսաստանի հյուպատոսի պահանջների վրա: Ենթադրվում էր, որ պարսից հողերը գրավելու դրդում է Գերմանիան, որը վիրավորված անգլո-ռուսական համաձայնությունից, դրանով ուզում էր Ռուսաստանին պատերազմի մեջ քաշել[2]:

Սակայն Թուրքական կառավարությունը իր հնարավորությունները լավ չէր հաշվարկել: Մանավանդ Ռուսաստանը բնավ տրամադիր չէր կորուստներ ունենալ Պարսկաստանում: Պետեր-

---

[1] Տե՛ս **"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)"**, *под редакцией И. М. Бикермана), С.-Петербург, 1909, с. 52.*

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, *№ 76, 12 դեկտեմբերի 1907 թ.:*

բուրգը վաղուց աչք ուներ Ատրպատականի վրա. նա գրեթե ընտելացել էր այն մտքի հետ, որ այսօր չէ, վաղը այդ նահանգը, եթե ոչ իր ձեռքը, գոնե իր անմիջական տրամադրության տակ է անցնելու: Այդ դեպքում՝ Թուրքիայի դեմ կանգնած կլիներ բնական ամրությունների մի երկար գիծ: Մասամբ նույն ռազմական նպատակով Ռուսաստանը մտադիր էր Ջուլֆա հասած երկաթուղային գիծը դեպի Պարսկաստանի խորքերը չարունակել Թուրքիայի սահմանի երկայնքով՝ Ուրմիայի լճից արևմուտք ընկած տարածքներով:

Առաջխաղացումը չչարունակելու թուրքական կառավարության խոստումը խախտած համարելով, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը Կ. Պոլսին սպառնացին հակաքայլեր ձեռնարկել, իսկ Պետերբուրգը նույնիսկ սպառնաց, որ եթե թուրքական զորամասերը մոտենան Ատրպատականին, ապա Ռուսաստանն ստիպված կլինի իր զորքերով խաղի մեջ մտնել:

Հակառակ իրենց կեղծ ու չինծու սպառնալիքներին, երկու գերտերությունները որոշակի գործողություններ չէին ձեռնարկում կանգնեցնելու թուրքերի առաջխաղացումը, իսկ վերջիններս նորանոր պատճառաբանություններ էին հորինում պարսկական հողերի հետագա զավթումն արդարացնելու համար:

Թուրքական զորքերի հրամանատար միրալայ Մեհմեդ բեյը և սպայախմբի կապիտան Էմրուլլահ բեյը պաշտոնապես հայտարարեցին, թե իրենք հավատացած են, որ իրենց դեմ ունեն ոչ թե պարսկական զորքը, այլ պարսիկ և հայ ֆիդայիներ, հետևաբար իրենք եկել են ջնջելու և ցրելու հատկապես նրանց*:

Թուրքական կառավարությունը տերություններին պատասխանում էր, թե իր զորքերը մտել են Պարսկաստանի այն տարածքները, որոնք վերածված են հայ հեղափոխական կենտրոնների, թե հայերի զինված խմբերը հիմնականում այդտեղից են մտնում Օսմանյան կայսրության արևելյան նահանգները և տեղի հայերին հանում կառավարության դեմ: Թուրքերը նաև շեշտում էին, որ ոչնչացնելով Ուրմիայի հայկական «զինվորական

* Թուրքական այդ տեսակետը եվրոպական մամուլի էջեր և դիվանագիտական շրջաններ էր թափանցել:

կայանները», դրանով իսկ նպաստելու են հսկողության տակ վերցվելիք տարածքներում կայունության հաստատմանը:

Պարսկական հողերի վրա թուրքական հարձակումը այդ նույն չարժառիթով էր բացատրում Մարսելի "Sémaphore" («Սեմաֆոր») թերթը, տպագրելով Կ. Պոլսի իր թղթակցի հոդվածը: «Այս մեջադէպը հետեւանք է Հայկական հարցի,- գրում էր հոդվածագիրը[1]:- Հայերը թէպէտեւ Պարսկաստանում փոքրաթիւ են – մօտաւորապէս 70 հազար..., բայց գրաւում են մենաշնորհեալ դիրք... Սալմաստը եւ Ուրմիան նրանց գլխաւոր կայաններն են եւ յաջողութեամբ կարողանում են սահմանագլխից զէնք ու ռազմամթերք մտցնել թուրքահայ վիլայէթներ, որպէսզի նրանցով հայ գիւղացիները կարողանան իրենց պաշտպանել քրդերի եւ թուրքերի յարձակումներից... Իսկ վերջերս թուրք կառավարութիւնը լուր է առել իր տեղեկատու գործակալութիւնից, թէ Ուրմիայում հաստատուած «Հնչակեան» եւ «Դրօշակեան» կոմիտէները արշաւանք են պատրաստում Թուրքիայի դէմ... Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ թուրքերը Պարսկաստանի սահմանագլխին կանխարգելիչ միջոցներ են ձեռնարկում՝... գրաւումներ կատարելով»[2]:

Հողային գրաւումներից զատ Ելդզի չարագործը նպատակ ուներ պարսիկներին վախեցնել և թույլ չտալ, որ իսլամական երկրում ազատական ռեժիմ հաստատվի: Զէ՞ որ նա մարդկային ամեն առաջադիմության թշնամի էր: Աբդուլ Համիդը չատ լավ գիտեր, թե հարևան իսլամական երկրում սահմանադրական հաջող շարժումները որքան մեծ նշանակություն կարող են ունենալ Թուրքիայի իսլամական տարրերի վրա: Այդ իսկ տեսակետից անհրաժեշտ էր խառնակել այն արտաքին խաղաղությունը, որից օգտվելով, պարսիկ ընդդիմադիր տարրերն ուզում էին վերջացնել իրենց ներքին հաշիվները միապետության հետ: Պետք էր թուրք ժողովրդի առաջ ստորացնել պարսիկներին, որոնք իրենց ձգտումների իրականացմամբ կարող էին կենդանի

---

[1] Տե՛ս **«Երկրի ձայնը»**, № 23, 4 նոյեմբերի 1907 թ.:

[2] «Սեմաֆոր»-ի հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Երկրի ձայնը»**, № 20, 14 հոկտեմբերի 1907 թ.:

օրինակ ծառայել նրա համար՝ որոշ բարոյական հեղինակությունն ձեռք բերելով նրա աչքում:

Սուլթանական կառավարության համարձակությունն ավելանում էր նրանով, որ այդ խնդրում բուն Պարսկաստանում նա ուներ զորեղ դաշնակից-մեղսակիցներ, ինչպես նույն ինքը՝ շահ Մահմեդ Ալին իր կողմնակիցներով, պարսից ավատական իշխանների ու բարձր հոգևորականների մի մասը: Ասում էին նույնիսկ, որ Աբդուլ Համիդը հազարավոր ոսկիներ է շռայլում պարսկական սահմանադրությունը վիժեցնելու համար: Դրանով էր նաև բացատրվում այն, որ պարսկական կառավարությունը փաստորեն որևէ միջոցի չէր դիմում՝ կանգնեցնելու թուրքական ներխուժումը:

Պարսկաստանը թշնամու արշավանքը հետ մղելու կամ գոնե կասեցնելու հնարավորություն չուներ, իսկ նրա դիվանագիտությունն անզոր էր, որովհետև ուժ չուներ իր թիկունքում: Խաները, միրզաները, անողոք ու մեղկ ավատատերերը ծծել էին այդ գեղեցիկ երկրի կենսունակությունը, ջլատել նրա ուժերը՝ նրան դարձնելով փլփլված տուն, ուր քամին ներս էր խուժում ամեն կողմից: Երկրի մակաբույծ տարրերի պաշտպան շահը և նրա կառավարությունը ժողովրդի բազմաթիվ դիմումներին ամեն անգամ պատասխանում էին, թե թուրք ու պարսիկ անձանցից ստեղծվելիք սահմանագծային հանձնախումբը խաղաղ ճանապարհով ամեն ինչ կարգավորելու է: Այս պատասխանն առաջ էր բերել մեծ հուզում ժողովրդի մեջ ու մեջլիսում, խոր անվստահություն դեպի շահի բռնած դիրքը: Նույնիսկ կասկած էր առաջացել, թե ինչ-որ գաղտնի համաձայնություն կա շահի և թուրք սուլթանի միջև: Ընդհանուր համոզումն այն էր, որ շահի համար գերադասելի է զրկվել երկրի տարածքի մի մասից՝ պահպանելով իր վեհապետական իրավունքների ամբողջությունը, քան պետության տարածքային ամբողջության պահպանման գնով զրկվել այդ իրավունքների մի մասից:

ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ԽՈՐԱՑՈՒՄ ՇԱՀԻ ԵՎ ՄԵՋԼԻՍԻ ՄԻՋԵՎ

Անգլո-ռուսական համաձայնագիրը կյանքի կոչվեց այն ժամանակ, երբ Պարսկաստան խուժած Թուրքական զորքը ֆերիկ (մարշալ) Մեհմեդ Ֆազըլ փաշայի հրամանատարությամբ շտապում էր տիրանալ Ատրպատական նահանգի սահմանամերձ, ռազմագիտական կարևոր նշանակություն ունեցող նորանոր տարածքների:

Զնայած մեկը մյուսին հաջորդող դժբախտություններին՝ երկունքի մեջ գտնվող Պարսկաստանում դեռ չէր մարել հուսո ճրագը, ժողովրդի մեջ դեռ վհատում չկար: Ընդհակառակը, այդ ծանրագույն պահին, Պարսկաստանի հեղափոխականներն ավելի զորեղ շեչտերով էին ժողովրդին մղում առաջ, դեպի զոհաբերություն՝ հանուն ընդհանուր հայրենիքի: Ճակատագրական պահն ամրապնդել էր երկրի տարբեր ազգերի համերաշխությունը: Պարսկաստանը մայր էր դարձել բոլորի՝ պարսիկների ու հայերի, քրդերի ու ասորիների համար, այդ օրերին գրում էր Թիֆլիսի «Վտակը»[1]: Պարսիկները հատկապես ընդգծված եղբայրական վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ՝ նրանց հրավիրելով պաշտպան կանգնելու ընդհանուրի հայրենիքին: Մամուլը հայասիրական քարոզչություն էր մղում: Նույնիսկ հայատյաց «Հաբլ-ուլ-մեթինը» հայ ֆիդայիներին կոչ էր անում միանալու Պարսկաստանի ազատասեր եղբայրներին և համատեղ ուժերով երկրի սահմաններից դուրս չպրտել Թուրք ներխուժողներին: Պարսիկ հեղափոխականները գործուն բանակցությունների մեջ էին տեղի դաշնակցականների և հնչակյանների հետ:

Եթե պարսից սակավաթիվ զորամասերն անկարող եղան դիմադրելու երկիր ներխուժած Թուրքական զորքին, ապա Ատրպատականի հայ և պարսիկ բնակիչները բնավ տրամադիր չէին համակերպվելու զավթիչների բռնադատումներին, իրենց ազգային արժանապատվության ոտնահարմանը: Նրանք զենքի

---

[1] Տե՛ս **«Վտակ»**, № 2, 3 հունվարի 1908 թ.:

դիմեցին պաշտպանելու իրենց ինչքն ու կյանքը: Կազմակերպվեցին կամավորների խմբեր, որպեսզի օգնեն Խոյի և Մակուի խանությունների արանքում գտնվող Կարագիադին գյուղում կենտրոնացած կառավարական զորամասին:

Բայց Թշնամու դեմ առաջին ընդհարումն սպասված արդյունքը չտվեց: Թուրք սուրհանդակներն իրենց օգտին խաղի մեջ մտցրին Պարսկաստանի քրդերին: Քրդական մի աշիրեթ 1907 թ. հոկտեմբերի կեսերին իջավ սարերից և Զորավա գյուղի մոտերքում ջարդեց պարսկական կանոնավոր զորամասին և հայ ու պարսիկ կամավորներին: Պարսկական ուժերի հրամանատար Միրզա Ջաֆարը գերի ընկավ:

Կռվից հետո քրդերը կողոպտեցին հարևան և, առաջին հերթին, հայկական գյուղերը: Ավելի քան 300 պարսիկ և հայ խաղաղ գյուղացի սրի քաշվեց:

Այդ դեպքից հետո է՛լ ավելի խորացավ ժողովրդական զանգվածների դժգոհությունը: Ներխուժողների դեմ շահի ու կառավարության անզորությունն արագորեն ստվարացնում էր ընդդիմադիր սահմանադրական շարժման շարքերը:

Բայց երկիրն ինչպե՞ս կարող էր դիմադրել հարևանի լկտի ոտնձգությանը, եթե գանձատունը դատարկ էր այն աստիճան, որ շահը փող անգամ չուներ սովորականի նման ամառանոց գնալու երկրի հյուսիսում: Միակ եկամուտն ստացվում էր մաքսերից, որոնց չուրջ 60%-ը տրամադրվում էր ռուսական փոխառությունների տոկոսների մարմանը և արտասահմանցի պաշտոնյաներին ռոճիկ տալուն:

Բահարիստան կոչվող պալատում նիստեր գումարող մեջլիսը վճռական քայլի դիմեց: Պարսից շահերի ծախսերը սովորաբար կազմում էին պետական եկամտի նշանակալի մասը: Այժմ օրենսդիր մարմինը երկրի համար մշակեց և հաստատեց օրինական բյուջե, որից մինչ այդ զուրկ էր կառավարությունը: Սահմանափակելով Մահմեդ Ալի շահի իրավասությունները, մեջլիսը նրան նշանակեց ռոճիկ՝ տարեկան 100.000 ֆունտ ստերլինգ (որը կազմում էր 2,5 միլիոն ֆրանկ կամ 500.000 թուման) չափով: Բայց մեջլիսը դրանով չբավականացավ և որոշում ընդունեց թոշակից զրկել 2000 ձրիակերի: Այդ ամենի չնորհիվ

գանձարանն ունեցավ մոտ 20 միլիոն ֆրանկի խնայողություն[1]:

Շահն սկզբում կարծել էր, թե այդ գումարն իրեն տրվում է իբրև «գրպանի ծախս»: Բայց երբ իմացավ, որ ինքը պարտավոր է այդ գումարով ծածկել իր բոլոր ծախսերը, այդ թվում՝ պահել շահական հարեմը, պալատները, այգիները, խոհանոցը, ուղտերը, ջորիները և այլն, այդ ժամանակ նրա դժգոհությունն ամեն սահման անցավ: Նա հայտարարեց, որ ինքը չի ցանկանում ընդունել այդ գումարը և իր պալատը կպահի առանց մեջլիսի տված ողորմության: Բոլոր պալատականները դարձան մեջլիսի կատաղի թշնամիներ, որոնց լիակատար իրավունք տրվեց հայտնելու իրենց զայրույթը: Ավելին, շահի ջորեպանները, որոնց թիվը հարյուրների էր հասնում, սարսափահար արեցին մայրաքաղաք Թեհրանի բնակիչներին՝ սպառնալով կոտորած սարքել՝ սկսելով մեջլիսի անդամներից:

Վայնասուն բարձրացրին հանգուցյալ Նասրէդդին շահի այրիները, որոնք զրկվել էին իրենց թոշակի մի մասից: Նամակով դիմելով մեջլիսին, նրանք հիշեցնում էին, որ իրենք երբեմնի միապետի կանայք են և մեջլիսին վայել չէ այժմ, երբ արդեն սպիտակել են իրենց մազերը, զրկել ոոճիկից:

Այդ առթիվ մեջլիսում տաք վիճաբանություններ սկսվեցին: Պատգամավոր, պահպանողական Ասադոլլահ Միրզան հանդես եկավ նախկին շահի կանանց պաշտպանությամբ, ասելով, որ Եվրոպայում արքայական ընտանիքներին պատկանող կանանց հարգում-պահում են ամուսինների մահից հետո: Դրան հակառակվելով, ձախակողմյան հռետորներից մեկը՝ Աղա Սեյիդ Հասան Թաղիզադեն, ասում էր, որ հարյուր միլիոնների հասնող բյուջեներով եվրոպական պետություններում թագավորն ունենում է մի կին, իսկ չնչին բյուջե ունեցող Պարսկաստանում ժողովուրդն ստիպված է ոոճիկ տալ դյուժիններով կանանց ու նրանց բազմաթիվ սերունդներին: Մի ուրիշ պատգամավոր նշում էր, որ հարուստ իշխանազուններն իրենց բազմաթիվ խորթ մայրերին կարող են պահել իրենց հաշվին: Պատգամա-

---

[1] **«Դրօշակ»**, № 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 174:

վորներից մեկն էլ ասում էր, որ շահի այրիներն ապրելու համար կարող են ծախել իրենց թանկագին զարդեղենը, այլ ոչ թե մեջլիսից պահանջել, որ իրենց համար հարկեր վերցնի խեղճ ու կրակ թշվառներից, օրինակ՝ Քիրմանի կամ Խորասանի նահանգների գյուղացիներից:

Պետության դատարկ գանձարանի վերջին գրոշները ծախսելու շահի և նրա պալատականների անհագ ձգտումը, թուրքպարսկական սահմանագլխից ստացվող տագնապալի լուրերը, ռուս-բրիտանական համաձայնագրի՝ Պարսկաստանին վերաբերող կետերը երկրի մայրաքաղաք Թեհրանում մեծ հուզումներ առաջ բերեցին:

Զանգվածների դայրույթն արտահայտվեց շահի դեմ ուղղված հզոր ցույցերով, որոնց ամենաեռանդուն մասնակցություն էին ունենում «Իթթիհադի թալեբան» («Իմաստություն որոնողների դաշնություն»), «Դանիշմենդան» («Գիտնականների դաշնություն») և ուրիշ նշանավոր անձնություններ: «Մենք այլևս անկախ չենք, այլ՝ անգլիացիների և ռուսների ստրուկներն ենք», «Լավ է մեռնել սեփական արյան լճերի մեջ, քան ապրել ռուսական կամ անգլիական հովանավորության տակ» – այս և նման նշանախոսքեր էին կրում ցույցերի մասնակիցները:

Իրենց մանուկ սահմանադրության վրա արթուն հսկող հեղափոխականներն իբրև մեղսակից մեղադրում էին շահին, որ ջանում է տապալել ու անվանարկել մեջլիսի հեղինակությունը և վերահաստատել հին, ապերասան ռեժիմը:

Ժողովրդի մի մասն արդեն պահանջում էր գահընկեց անել շահին: Արքայական մզկիթում արտասանած ճառում իշխան Ամջադ օլ Մոլքն ասում էր. «Ով Թեհրանի ժողովուրդ, ներկայ դժբախտությունների պատճառն այն է, որ քեզ կառավարում է Մուլայի Ալի շահը: Եթե կուզես ապրել երջանիկ հայրենիքի մեջ, վա՛ր առ այս ինքնակալը եւ նրա տեղը դի՛ր մեկ ուրիշին»[1]:

Պարսիկ ժողովուրդը դժգոհ էր թուրքմեն Ղաջար ցեղին պատկանող իր արքայական ընտանիքից: Նա ուզում էր շահա-

---

[1] ***«Դրօշակ»,*** *№ 11-12 (188), նոյեմբեր-դեկտեմբեր, 1907, էջ 174:*

կան գահին զուտ պարսիկ առաջնորդ տեսնել[1]: Բայց առայժմ այդ բանը հեշտ չէր անել:

Խնդիրը բարդանում էր նրանով, որ Պարսկաստանի հեղափոխական շարժումն ընթանում էր տարերային բռնկումներով և դեպքերն իրար էին հաջորդում որպես պահի պոռթկումներ՝ թեև միմյանց հետ կապված նպատակի ընդհանրությամբ: Թիֆլիսի «Զանգակ» թերթը գրում էր.

«Պարսկական թէ՛ յեղափոխական եւ թէ՛ կոնտր-յեղափոխական ուժերին հաւասարապէս պակասում է կազմակերպւածութիւնը եւ դա անհնարին է դարձնում առաջուց պարզ հաշուել նրանց իրական համա-յարաբերութիւնը: Ոչ միայն այդ, այլ եւ առայժմ դժուարին է դարձնում մարտնչող ուժերից որեւէ մէկի գերակշռութիւնը կամ վճռական յաղթանակը, որովհետեւ ամեն մի յաջողութիւն կամ պարտութիւն դեռ եւս վերաբերում է կողմերի ցրւած, բաժանբաժան եւ ոչ համախմբւած ուժերին»[2]:

Ընդգծած դրան, դեպքերի զարգացման մեջ խոստումնալից նշաններ էին նկատվում, հեղափոխական տարրերի կազմակերպվածությունն օրավուր առաջադիմում էր: Դա նկատվում էր ոչ միայն Թավրիզի օրինակից, որտեղ բնակչությունն սկսել էր իսկական քաղաքացիական պատերազմ մղել միապետական հետադիմության դեմ, այլև հայկական թերթերի հաղորդած տեղեկություններից, որոնք ապացույց էին այն բանի, որ պարսից հեղափոխականների մեջ գնալով ամրանում էր կազմակերպված կռվի անհրաժեշտության գիտակցությունը: Հենց դա էր թռիչք, ուժ և կենսունակություն հաղորդում Պարսկաստանի հեղափոխական շարժմանը:

Պարսկաստանի տարածքներ մտած թշնամուն արժանի հակահարված չտալու իշխանությունների անկարողության հիմնական պատճառն, այնուամենայնիվ, երկրի անկայուն դրությունն էր: «Հայրենիք» ամսագիրը այսպես է բնութագրել Պարսկաստանի ներքին կյանքը 1907 թվականին. «Երկիրը կռիւի եւ սպանութեան թատերաբեմ էր: Առնող-առնողի եւ զարնող-զարնողի

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 1 (205), նոյեմբեր, 1939, էջ 131-132:*

[2] ***«Զանգակ»*** *(Թիֆլիս), № 2, 8 հուլիսի 1908 թ.:*

էր: Ոչ մի հարցում ո՛չ մէկ պատասխանատուութիւն: Ո՛վ որ տասը-քսան զինեալ մարդիկ կը հաւաքէր իր շուրջը՝ կ՚արշաւէր հեռաւոր գիւղերուն վրայ, կը թալանէր, կը վառէր եւ կը սպաննէր: Երկրին մէջ ո՛չ կանոնաւոր բանակ կար, ո՛չ կազմակերպուած ոստիկանութիւն, ո՛չ ալ ազդեցիկ ու խելացի կառավարութիւն»[1]:

Իր հերթին, Պարսկաստանի վեհապետը գահին ընդդիմադիր ուժերի դեմ վճռական քայլերի դիմեց: Նա վերջնագիր ներկայացրեց մեջլիսին և պահանջեց. 1) Բաժանել օրենսդրական և գործադիր իշխանությունը, 2) Ընդունել շահի անառարկելի իրավունքը, որ առանց հաշվի առնելու խորհրդարանի համաձայնությունը, լիազորություն ունի նշանակելու նախարար-նախագահ և նախարարներ, 3) Լուծարել անջումենները:

Մեջլիսը կտրականապես մերժեց շահի պահանջը, որին հետևեցին վերջինիս նոր հակաքայլերը: Կալանավորվեցին սահմանադրական շարժման մի շարք ղեկավարներ, այդ թվում՝ նախարար-նախագահը և մեջլիսի նախագահի երկու եղբայրները, որոնցից մեկը ներքին գործերի նախարարն էր, մյուսը՝ Շիրազի նահանգապետը: Զորքերով շրջապատվեց մեջլիսի շենքը: Թեհրանում պաշարողական դրություն հայտարարվեց: Պալատական շրջանները փորձեցին, որպես հակակշիռ հեղափոխական անջումենների, ստեղծել իրենց անջումենը՝ «Անջումեն խիդմաթ» անունով, բայց հաջողություն չունեցան: Նրանց այնպես էլ չհաջողվեց «իսկական ռուս մարդկանց» օրինակով ստեղծել «իսկական պարսիկ մարդկանց» կազմակերպություն:

Փողոցային հնարավոր անկարգություններից պաշտպանվելու համար օտարերկրյա դեսպաններն ամրացրին իրենց դեսպանատների մուտքերը և զինեցին պահակախմբերին: Գերմանիայի դեսպանը խոստացավ վտանգի դեպքում իր մոտ ապաստան տալ մեջլիսի նախագահին, որը նախկինում Բեռլինում դեսպան էր եղել: Բրիտանական դեսպանությունն իր կողմից հայտարարեց, որ պատրաստ է իր հովանավորության տակ առնելու խորհրդարանի մյուս անդամներին:

Կյանքի սովորական ընթացքը կանգ առավ: Փակվեց չու-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 1 (205), նոյեմբեր, 1939, էջ 132:

կան: Փողոցներով անցուդարձ էին անում հեծելազնդի և կազակների պահակախմբերը:

Քննության առնելով երկրի խառնակ վիճակը, մասնավորապես՝ շահի վերջնագրի հնարավոր անկանխատեսելի հետևանքները, մեջլիսը օտար պետությունների Թեհրանում հավատարմագրված ներկայացուցիչներին ուղարկեց հայտարարություն-մանիֆեստ, ուր ասված էր.

«Երբ պարսից կայսրության գործերն ընկան անյուսալի դրության մէջ, ժողովուրդը տեսաւ, որ իր միակ յոյսը սահմանադրական կառավարում հիմնելն է: Հանգուցեալ շահը երկրին չնորհեց սահմանադրութիւն, իսկ ներկայ գահակալն իր երդումով հաստատեց այն:

Բայց այն մարդիկ, որոնք բռնակալական կառավարման ձեւի ժամանակ սովորել են կեղեքել ժողովրդին, խաբեցին մեր երիտասարդ միապետին, նրան համոզելով, որ սահմանադրութիւնն է այն բոլոր արհաւիրքների պատճառը, որոնց մէջ ներկայումս յայտնուել է մեր հայրենիքը:

Ժողովուրդը երբեք ինքը չի խախտի խաղաղութիւնը, բայց նա մինչեւ իր արեան վերջին կաթիլը կպաշտպանի նուաճած այն բոլոր ազատութիւնները, որոնց դէմ դաւեր են լարում մեր կառավարության յետադէմ անդամները: Նա կկռուի իր միակ եւ վերջին յոյսի՝ սահմանադրության համար:

Սոյն մանիֆեստով պարսկական ժողովրդի ներկայացուցիչներն իրերի իսկական դրության մասին ի գիտութիւն են յայտնում օտար բոլոր պետությունների դեսպանութիւններին եւ առհասարակ Թեհրանում ապրող բոլոր օտարերկրացիներին, յայտարարում են, որ Պարսկաստանի միապետը խախտել է իր ժողովրդի հետ կնքած դաշնագիրը:

Պարսիկ ժողովուրդը դիմում է աշխարհի բոլոր ազգերին, հաւատացած լինելով, որ նրանք կարտայայտեն իրենց բարեկամական զգացմունքները Պարսկաստանի 10 միլիոն ազգաբնակչության եւ չարամիտ մարդկանց թոյլ չեն տայ ոտնատակ տալու նրա սրբազան իրաւունքները»[1]*:*

---

[1] ***«Մշակ»***, *№ 186, 19 դեկտեմբերի 1907 թ.:*

Մահմեդ Ալի շահի և մեջլիսի միջև գնալով խորացող հակասությունները և երկրում աստիճանաբար ընդլայնվող անկայունությունն անհանգստություն էին առաջացնում երկրում: Պարսկահայությունը նույնպես լավ բան չէր սպասում երկու կողմերի հավանական առճակատումից:

1907 թ. երկրորդ կեսից յուրատեսակ քաղաքական վիճակ էր ստեղծվել պարսկահայերի համար: Շահը և նրա կառավարությունը խորապես համոզված էին, որ ամեն քաղաքական վայրիվերումների ժամանակ երկրի ազգային փոքրամասնությունները՝ թուրքերը, քրդերը, ինչպես և հրեաներն ու քրիստոնյա ասորիներն ու հայերը չեն համարձակվի հանդես գալ գոյություն ունեցող կարգերի դեմ և անպայման կկանգնեն արքունիքի կողքին: Իրենց հերթին, սահմանադրականները կարծում էին, որ հայերը, որոնք հանդես էին բերում մեծ զգուշավորություն և սահմանադրական շարժմանը համարյա չէին մասնակցում, ի վերջո, իրենք նույնպես դուրս կգան չեզոք վիճակից և կմիանան իրենց:

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՄՏՆՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Գնալով թափ առնող հակաշահական շարժման մեջ ընդգրկված պարսից սահմանադրականները, լինելով անձնազոհ հայրենապաշտներ, սակայն, անփորձ էին հասարակական և հեղափոխական շարժումների մեջ, թույլ էին մարտական և զինական առումներով, ուստի կարիք ունեին փորձառու խորհրդատուների և մարտական կազմակերպությունների գործուն աջակցության:

1907 թ. ամռան վերջերից սահմանադրական շարժման ղեկավարներն իրենց հայացքն ավելի ու ավելի հաճախ էին բևեռում հայոց վրա: Պարսկահայերի մեծ մասի համակրանքը սահմանադրականների կողմն էր: «Բայց այդ համակրանքը,- գրել է Միքայել Վարանդյանը,- բաւական ատեն կը մնար մունջ, պղատոնական. հայ ժողովուրդի յեղափոխական առաջնորդները կը

*վարանէին **կողմ բռնել** ընդհանուր, արիւնոտ իրարանցումին մէջ: Վարանոտ էին, բնականաբար, Դաշնակցութեան կովկասեան մարմինները»[1]: Իրենց կենտրոնների հրահանգով, Դաշնակցության և Հնչակի տեղի կազմակերպությունները չարունակում էին հայությանը հորդորել՝ առայժմ չեզոքություն պահպանել անչեղորեն:*

Բայց 1907 թ. աշնանը ծավալվող բուռն իրադարձությունները հայկական ազգային հեղափոխական կուսակցություններին ստիպեցին վերանայել իրենց ռազմավարությունը սահմանադրական շարժման նկատմամբ:

«Օր աւուր, անցքերու գահավէժ ընթացքի մէջ, աւելի եւ աւելի կը պարզուէր, որ չէզոքութիւնը հայոց համար անիրագործելի պատրանք մըն էր համատարած քաոսին մէջ...»[2],- գրում էր Միքայել Վարանդյանը:

Որո՞նք էին հայերի մտքերում տեղի ունեցող աստիճանական բնաչրջման պատճառները. 1. Պարսկահայ գյուղացին մուսուլման տերերի ձեռքին նույնքան, եթե ոչ ավելի, հարստահարված էր ու զրկված, որքան պարսիկ և թուրք գյուղացիները: Սակավաթիվ հայ առևտրականներից մի քանիսն էին, որ զգալի կապիտալ ունեին: Միակ մխիթարականն այն էր, որ քաղաքաբնակ հայերն ունեին ժամանակի չափանիշներով բավականին բարվոք դպրոցներ, որոնցում հայ մանուկներն ու պատանիները ստանում էին ոչ միայն կայուն գիտելիքներ, այլև հայեցի դաստիարակություն, 2. Երկրի հակահեղափոխական, հակասահմանադրական ուժերի զինված ջոկատները (չահսևաններ, կարափափախներ, ղարադաղցի ձիավորներ, ավազակաբարո թափառական քրդեր) և, առաջին հերթին, միապետական բանակն իրենց հարձակումների և պատժիչ արշավանքների ժամանակ անխնա կողոպտում էին հայկական գյուղերը, ահաբեկում հայ բնակչությանը, նրան սպառնում արյունալի ջարդերով, եթե չմիանա միապետականներին և պայքար չմղի սահմանադրա-

---

[1] ***Միքայէլ Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 258:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

կանների դեմ, 3. Թուրքական զորքերի խուժումը Ուրմիա գավառից ներս, Սալմաստ քաղաքի գրավման հեռանկարը ոգեշնչել էր քուրդ ավազակաբարո տարրերին և նրանց ոտքի հանել գավառի հայոց դեմ: Վտանգվել էին այն բոլոր ճանապարհները, որոնցով Կովկասից 17 տարի չարունակ դաշնակցությունը օգնություն էր ցույց տվել և չարունակում էր ցույց տալ Վասպուրականին, Սասունին, Տարոնին՝ կազմակերպիչներով, քարոզիչներով, մարտիկներով, զենքով ու զինամթերքով: Պարսկական միապետական կառավարությունը ոչ միայն ի վիճակի չէր, այլև ցանկություն չուներ ներխուժող թուրքական զորքերին դուրս մղելու հայ հոծ բնակչություն ունեցող տարածքներից: Դրան հակառակ, մեջլիսը և սահմանադրական շարժումը, ամբողջությամբ վերցրած, վճռական էին տրամադրված թուրքական գրավման զորքերի նկատմամբ և իրենց գլխավոր նպատակներից մեկը համարում էին նրանց դեմ զինված դիմադրություն կազմակերպելը և նրանց երկրից վտարելը, 4. Սահմանադրական շարժմանը աջակցելու համար Կովկասից Պարսկաստան էին գալիս գաղափարական անձինք և միանում սահմանադրականներին:

Ստեղծված պայմաններում, հայկական ազգային հեղափոխական կուսակցությունները չէին ուզում տևականորեն դիտողի դերում մնալ: Արդեն ակնհայտ էր, որ պարսից ազատագրական շարժման հաղթանակից էր կախված երկրում օսմանյան դավերի վիժումը և հայկական ազատագրական պայքարին բերելիք հետագա նպաստը: «Ազատ Պարսկաստանը ոչ միայն բարիք մըն էր պարսկահայոց համար, այլեւ կռուան մը թրքահայ եւ կովկասահայ ժողովուրդին դատի համար»[1],- գրում էր Մ. Վարանդյանը:

Այսպես էին մտածում ՀՅ դաշնակցության պարսկահայ կազմակերպությունները, մասնավորաբար Թավրիզի (Վրեժի) կենտրոնական կոմիտեն, որն արդեն, սահմանադրականների նախաձեռնությամբ, գաղտնի հարաբերությունների մեջ էր մտել

---

[1] ***Միքայէլ Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ. հրատ., էջ 261:*

նրանց հետ։ «Պարսիկ յեղափոխականները,- նշել է Միքայել Վարանդյանը,- Թավրիզ եւ այլուր, կը դիմէին մերիններու խորհուրդներուն, վասն զի իրենք անփորձ էին, զուրկ՝ յեղափոխական աւանդութիւններէ, եւ, միւս կողմէն, մեծ համարում ու յարգանք ունէին Դաշնակցութեան նկատմամբ։ Երբեմն նոյն իսկ չափազանցուած կարծիք՝ անոր ռազմավարութեան ու ռազմական ոյժերու մասին ... Այդպիսի կարծիք կազմեր էին մանաւանդ 1905-1906-ի կովկասեան հայ-թաթարական պատերազմէն ի վեր, երբ Դաշնակցութիւնը իրօք մեծ ոյժ ու կազմակերպական հմտութիւն երեւան բերաւ ինքնապաշտպանութեան գործին մէջ»[1]։

ՀՅԴ Կովկասի մարմինները, հաշվի առնելով կուսակցության Ատրպատականի կազմակերպության՝ դեպի սահմանադրական շարժումը կողմնորոշվելու սկսված գործընթացը, կանգնել էին պարզ ու հստակ քաղաքականություն որդեգրելու հրամայականի առջև. Դաշնակցությունը պե՞տք է մասնակցի Պարսկաստանի խմորվող հեղափոխական շարժմանը, թե՞ ոչ։ Խնդիրը նուրբ էր ու ծանրակշիռ, նաև՝ շատ պատասխանատու։

Անելիքները որոշելու համար Թիֆլիսում հրավիրվեց ՀՅԴ Կովկասի շրջանային ժողով, որն ունեցավ միայն մեկ նիստ։ Ներկա էին Արշակ Վռամյանը, Սիմոն Զավարյանը, Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ), Համո Օհանջանյանը, Ջավախյանը, Ատրպատականի ներկայացուցիչը և ուրիշներ։ Արևելյան բյուրոյի կողմից հանդես եկավ Ավ. Սահակյանը և քննարկման դրեց Թուրք-պարսկական ընդհարման և այդ կապակցությամբ հայ-պարսկական հարաբերությունների հարցերը։ Միաժամանակ ներկաներին տեղեկացրեց, որ Պարսկաստան է ուղարկվել պատասխանատու ընկերներից մեկը, որը տեղում ուսումնասիրելով իրավիճակը, վերադառնալուց հետո բյուրոյին կներկայացնի համապատասխան զեկույց, որից հետո միայն կուսակցությունը կվճռի իր անելիքները։ Զեկուցողը նաև հայտնեց, որ Դաշնակցության ղեկավարությունը տարբեր տեղերից ստացել է բազ-

---

[1] ***Միքայել Վարանդեան,*** *Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 262։*

մաթիվ դիմումներ, որոնց հեղինակները Պարսկաստան անցնելու և սահմանադրական շարժմանը միանալու ցանկություն են հայտնել: Զնայած կուսակցությունը դեռ չի կայացրել վերջնական վճիռ, ասում էր նա, բայց «մէկ բան պարզ է. մենք չենք կարող թողնել մեր ժողովուրդը անտէր, անզէն, անպաշտպան վիճակում»[1]:

Ելույթ ունենալով, Ս. Զավարյանն ավելի հստակ հանդես եկավ պարսկական հեղափոխությանը հայերի մասնակցության օգտին: «Եթէ մեծ բան էլ չկարենանք անել,- ասում էր նա,- գէթ կ'ամրապնդենք մեր համերաշխութեան կապը պարսիկ յեղափոխական տարրերի հետ»[2]:

Շրջանային ժողովում ելույթ ունեցողները հաճախ էին դիմում կուսակցության չորրորդ ընդհանուր ժողովի՝ Պարսկաստանի վերաբերյալ ընդունած որոշմանը, ուր ասված էր.

«Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ թէ՛ Պարսկաստանի, թէ՛ Արեւելքի համար եւ գտնելով նրա տարածուիլն ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային, թէ՛ հայկական տեսակէտից, ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին եւ անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացմանը, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռամկավարական եւ աշխատաւորական ոգին, որը բղխում է Դաշնակցութեան ծրագրից»[3]:

Ժողովում արտահայտված տրամադրությունները դեռևս չէին նշանակում, թե Դաշնակցությունն արդեն պաշտոնապես լուծել է պարսկական հեղափոխությանն իր մասնակցության հարցը: Թեև կուսակցության ղեկավարության մեծ մասը մասնակցության կողմ էր, բայց այդ նույն մեծամասնությունը չէր կարող հաշվի չառնել այն իրողությունը, որ կուսակցության

---

[1] **Միքայէլ Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 261:

[2] Նույն տեղում, էջ 261-262:

[3] **«Դրօշակ»,** № 5 (183), մայիս, 1907, էջ 76:

չարքերում մեծ թիվ էին կազմում նրանք, ովքեր պնդում էին բացարձակ չեզոքության վրա:

Ինչպես դրան, ՀՅԴ ղեկավար մարմինները 1907 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Պարսկաստան ուղարկեցին մի քանի գաղափարական երիտասարդների, այդ թվում՝ Սոֆիայի (Բուլղարիա) սպայական վարժարանն ավարտելուց հետո Կովկաս վերադարձած երիտասարդ սպա Գարեգին Նժդեհին: Գալով Ատրպատական, նրանք համալրում էին տեղի կազմակերպության չարքերը, որում մեծ աշխատանք էին տանում նշանավոր գործիչներ Ստեփան Ստեփանյանը (Բալաջան), Մուրադ Խրիմյանը (Հակոբյան, Սեբաստացի Մուրադ), Եփրեմ Դավթյանը, Ստեփան Թադևոսյանը (Սամսոն) և ուրիշներ:

Իրերի կացությանը ծանոթանալու և ընդհանրապես երկրի պայմաններին հաղորդակից լինելու համար, Դաշնակցության վերին մարմինը Պարսկաստան է ճամփում կուսակցության երկու ներկայացուցիչների՝ Ստեփան Զորյանին (Ռոստոմ)՝ Թեհրան, Օննիկ Դերձակյանին (Արշակ Վռամյան)՝ Թավրիզ[1]:

Նշանակման վայր նախ հասնում է Վռամյանը, որտեղ հանդիպումներ է ունենում քաղաքի սահմանադրական շարժման ներկայացուցիչների հետ, որից հետո ուղևորվում է Սալմաստ և Ուրմիա, ծանոթանում Ատրպատականի քաղաքական դրությանը, նահանգի հայ համայնքների կյանքին ու քաղաքական տրամադրություններին, ապա վերադառնում Թուրքահայաստան:

Դրանից հետո ՀՅԴ Արևելյան բյուրոն Թավրիզ է ուղարկում Արտաշես Մելքումյանին՝ կացությունն ուսումնասիրելու, շարժումների բնույթը պարզելու և կուսակցության մասնակցության անհրաժեշտության դեպքում նրա չափը որոշելու համար:

Ինչպես Ա. Վռամյանը, այնպես էլ Արտ. Մելքումյանը նպաստավոր զեկույցներ են ներկայացնում կուսակցության ղեկավարությանը[2]:

Վերջապես, Շվեյցարիայում գտնվող Ռոստոմը ընկերների հետ խորհրդակցելուց հետո, մեկնում է Բաքու, իսկ 1907 թ.

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 2 (408),1960, էջ 57:

[2] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան,** Յուշեր, «Ապոլոն» հրատ., Երևան, 1995, էջ 166:

դեկտեմբերի 22-ին հասնում է Թեհրան[1]: Պարսկաստանում նա մնում է մինչև 1909 թ. ապրիլը:

Թեհրանում եղած ժամանակ Ռոստոմին հենց սկզբից ընկերակցում էր տեղի նշանավոր դաշնակցական գործիչներից Հովսեփ Միրզայանը:

Առանց ժամանակ կորցնելու Ռոստոմը մայրաքաղաքում կապեր է հաստատում պարսիկ ազատականների ներկայացուցիչների հետ, մանրամասն տեղեկանում, որ Մահմեդ Ալի շահը տևաբար դավեր է նյութում սահմանադրության դեմ՝ կազմել է տեղական սեհարյուրյակներ, հալածանքներ ու բռնություններ սկսել սահմանադրականների դեմ, բանտարկել է տալիս շարժման գործիչներին, որոնք խոշտանգվում են, տանջանքների ենթարկվում:

Թեհրանից գրած նամակով Ռոստոմը հետևյալ կերպ էր նկարագրում այնտեղ տիրող քաղաքական ծանր վիճակը. «Շահի կողմնակիցները շարունակում են գաղտնի դաւեր լարել սահմանադրութեան դէմ: Կազմուել են տեղական սեւ հարիւրեակներ, որոնք տեռորի միջոցով ձգտում են ընկճել սահմանադրականներին: Իմ գալու երկրորդ օրը տեռորի ենթարկուեց, իր տան մէջ, սահմանադրական շարժման աջակից յայտնի հարուստ արբաբ Ֆրեյդունը՝ հենց Շահի մտերիմ սենեկապետի մարդկանց ձեռքով: Մի օր անց հրացանաձգութեան ենթարկուեց արտաքին գործոց նախարարը, նոյնպէս իր տան մէջ: Սա եւս յայտնի է իբր ջերմ սահմանադրական: Նրա հայրը Մուշիր Դովլէն էր, որ սադրազամ եղած ժամանակ կարողացել էր համոզել Շահ Մոզաֆարէդդինին սահմանադրութիւնը ստորագրել: Մեջլիսի անդամները մշտական վախի մեջ էին. շատերը տանը չէին քնում. իրենց կողմից միջոցներ էին խորհում թէ՛ իրենց անձը եւ թէ՛ սահմանադրութիւնը ապահովելու համար»[2]:

Ահա՛ այս ծայրահեղ վտանգավոր իրավիճակում էր, որ Ռոստոմի ու սահմանադրականների միջև հանդիպումների արդյունքում որոշվեց պաշտոնական բանակցություններ սկսել:

---

[1] Տե՛ս **Յովսէփ Յովհաննիսեան,** Յուշեր, էջ 192:

[2] **«Ռոստոմ»**, Պէյրութ, 1979, էջ 261:

Բանակցությունները Թեհրանում սկսվում են 1907 թ. դեկտեմբերի 30-ին մի կողմից՝ Ռոստոմի ու Հովսեփ Միրզայանի, մյուս կողմից՝ պարսիկ սահմանադրականների ղեկավարության վեց ներկայացուցիչների միջև: Բանակցությունները տևում են վեց օր՝ մինչև 1908 թ. հունվարի 4-ը, որի ընթացքում տեղի է ունենում վեց նիստ (բացի 1908-ի հունվարի 1-ից):

Վեցօրյա այդ բանակցությունների ամեն նիստից հետո Ռոստոմը և Միրզայանը խորհրդակցում էին ուրիշ երեք ընկերների հետ, որոնք մինչև Ռոստոմի Թեհրան գալը Հովսեփի միջոցով հանդիպումներ էին ունեցել սահմանադրականների ներկայացուցիչների հետ: Դրանք էին՝ բժ. Տեր-Ստեփանյանը, Ալեքսան Թունյանը և Ալեք Ջալալյանը, որոնք տեղական պայմաններին և պարսիկների հոգեբանությանը լավ ծանոթ էին:

Բանակցություններին պարսկական կողմից մասնակցում էին մեջլիսի փոխնախագահ Վոսուղ Դովլեն, մեջլիսի Թավրիզյան պատգամավորներ՝ պետական խորհրդական Մոսթեշար Դովլեն, հեղափոխական անջումենների պարագլուխ Հաջի Միրզա Իբրահիմ աղան, մեջլիսի ամենաազդեցիկ ու կարող անդամներից Աղա Սեյիդ Հասան Թաղիզադեն, իրանական բուրժուազիայի ներկայացուցիչներ՝ Պարսկաստանի ամենահարուստը նկատված, երկրի դրամատան կապալառու, Թեհրանի վաճառականների կողմից պատգամավոր Հաջի Ամին օլ Զարբը, մեծահարուստ Հաջի Մոին օլ Թոջջարը, որը Հաջի Ամին օլ Զարբի հետ նկատվում էր սահմանադրականների ֆինանսական ուժը (գլխավորապես այս երկուսն էին հոգում շարժման ծախսերը):

Կազմված լինելով զանազան խավերից, այս գործիչները մեջլիսում ներկայացնում էին մի կուռ ամբողջություն, որն իր հեղինակությամբ կարողանում էր ուղած ուղղությունը տալ գործերի ընթացքին: Այս խմբի հետ էին գործում Թեհրանի ամենահեղինակավոր հոգևոր պետերը՝ Աղա Սեյիդ Աբդուլլա և Աղա Սեյիդ Մոհամմեդ մուջտեհիդները, որոնք համարվում էին*

---

* *Մուջտեհիդ – Ղուրանը մեկնաբանելու լիազորությամբ օժտված իսլամ հոգևորական:*

սահմանադրության ջերմ ջատագովներ և վայելում էին չիների սրբազան քաղաքներից Նաջաֆի հոգևոր գերագույն պետերի վստահությունը[1]:

Բանակցությունների ընթացքում քննարկվեց հարցերի բավական լայն շրջանակ. 1) Շահի հետագա դավերի դեմ սահմանադրական նորմալ զարգացման ապահովման ուղղությամբ երկու կողմերի անելիքները, 2) Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերին երկրի սահմաններից հեռացնելու խնդիրը, որի լուծման համար նախ ենթադրվում էր դիվանագիտական ճանապարհով թուլացնել թուրքերի դիրքերը, իսկ պատերազմի դեպքում՝ ձեռնարկել համատեղ միջոցներ՝ անհրաժեշտ զինվորական ուժերի պատրաստման ուղղությամբ, 3) Պարսկաստանի անկախությանը սպառնացող 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի դեմ միջոցառումները, 4) ՀՅ դաշնակցությունն ինչպիսի՞ աջակցություն կարող է ցույց տալ սահմանադրականներին, 5) Իրենք՝ պարսիկները ի՞նչ օգնություն կամ դյուրություն կարող են ցույց տալ Դաշնակցությանը[2]:

Բանակցություններն անցնում էին ջերմ ու անկեղծ մթնոլորտում. նիստերի ընթացքում լինում էին միայն թեթև վիճաբանություններ, այն էլ՝ մտքերի պարզաբանման նպատակով:

Նիստերում բարձրացված հարցերն ունեին հակաավատապետական և հակաիմպերիալիստական ուղղվածություն:

Հատկապես կարևոր էր անգլո-ռուսական համաձայնության դեմ միջոցառումների հարցը: Դա մեկ անգամ ևս ցույց էր տալիս, որ կապիտալիզմի ուղիով առաջին տարտամ քայլափոխերն անող, նոր ձևավորվող, երիտասարդ պարսկական բուրժուազիան ձգտում է հակադարձել երկրի նկատմամբ իմպերիալիստների դավադրությանը: Բանակցությունների ընթացքում պարսիկ պատգամավորները խնդիր առաջ քաշեցին, որպեսզի Դաշնակցությունը ջանքեր գործադրի իրենց երկրի վրա ռուս-անգլիական բռնաղատման դեմ տրամադրելու Պարսկաստանի

---

[1] **«Ռոստոմ»**, էջ 165:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 166:

նկատմամբ չեզոք դիրք ունեցող եվրոպական որևէ պետության: Այդ առնչությամբ նրանք ցանկություն հայտնեցին, որ Դաշնակցությունն առաջին հերթին չոչափի Ֆրանսիայի կառավարության տրամադրությունը՝ ակնկալելով նրանից փոխառություն ստանալը: Միաժամանակ, պարսիկ ազատականները գտնում էին, որ փոխառության հարցում Ֆրանսիային չահագրգռելու համար անհրաժեշտ է օգտվել այդ երկրի կառավարական շրջանների հետ լայն կապեր ունեցող և այդ պահին Եվրոպայում գտնվող Մելքոն խանի և Հովհաննես խան Մասեհյանի օժանդակությունից[1]:

Քննարկվեց Պարսկաստան-Բուլղարիա հակաթուրքական դաշինքի ստեղծման հնարավորության և այդ գործում ՀՅ դաշնակցության դերի հարցը:

Շատ կարևոր էր թուրքական ներխուժմանը հակահարված տալու հարցը, որն ուղղված էր ինչպես օսմանցի զավթիչների, այնպես էլ չահի կառավարության դավաճանական քաղաքականության դեմ: Ուստի բանակցությունների ընթացքում հիմնական հարցերից մեկը երկուստեք միմյանց աջակցելու հնարավորությունները պարզելն էր[2]:

Պարսկական կողմի ներկայացուցիչները հատկապես ուզում էին իմանալ, թե Դաշնակցությունն ինչպիսի՞ **ռազմական օգնություն** կարող է ցույց տալ սահմանադրականներին: Իր հերթին, հայկական կողմը ցանկացավ իմանալ, թե իրենք՝ պարսիկները, ինչպիսի՞ զինվորական ուժեր ունեն պատերազմի դեպքում Թուրքիայի դեմ կռվելու համար: Պարսիկները պատասխանեցին, որ իրենք չեն վստահում իրենց բանակին և ամբողջ հույսը դրել են անկանոն զորքերի, հատկապես՝ չահսևան, ղարադաղցի, լուրիստանցի և այլ տեղերի ձիավորների վրա, որ նաև հույս ունեն ապստամբեցնել Օսմանյան կայսրությունում, Բաղդադի մոտերքում բնակվող չիա ցեղերին: Հայ պատվիրակներն ասացին, որ անհնարին է անկանոն զորքերով կռվել լավ զին-

---

[1] Տե՛ս **«Ռոստոմ»**, էջ 166:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 167, 168-169:

ված ու մարզված, հմուտ հրամանատարներ ունեցող թուրքական կանոնավոր բանակի դեմ և որ ամենից առաջ անհրաժեշտ է մարտունակ բանակ ստեղծել:

Պարսիկ սահմանադրականների ներկայացուցիչները խոստանում էին.

1) Հեղափոխության հաղթանակից հետո ավելի լայնացնել այն իրավունքներն ու պարտականությունները, որ պարսկահայությունն ուներ իր ներքին, ազգային-մշակութային կյանքում, 2) Սալմաստի և շրջակա վայրերի պետական հողամասերից (խալըսե) բաժիններ հատկացնել Օսմանյան կայսրությունից Պարսկաստան փախած հայ գաղթականներին և նպաստել նրանց բնակեցմանը, 3) Ջերմ աջակցություն բերել զարկ տալու համերաշխ գործակցությանը հայ և իսլամ տարրերի միջև թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում, 4) Իրենց հավատարիմներից մեկին ուղարկել Կ. Պոլիս, որպեսզի այնտեղ գտնվող պարսիկ հեղափոխականներին կապի Դաշնակցության տեղի անդամների հետ և նպաստի նրանց միջև համագործակցության հաստատմանը, 5) Պարսկաստանի ներսում ապահովել բոլոր պայմանները՝ Դաշնակցության զինված ուժերի փոխադրության համար, 6) Ջխոչընդոտել արտասահմանից Պարսկաստան զենքի ու զինամթերքի փոխադրմանը:

Իրենց հերթին, ՀՅ դաշնակցության ներկայացուցիչները կուսակցության անունից հանձնառու դարձան. 1) Սահմանադրականների տրամադրության տակ ռազմական ղեկավարներ և հրահանգիչներ դնել, 2) Թուրքիայի հետ Պարսկաստանի պատերազմի դեպքում կուսակցության զինվորական ուժերով պարտիզանական կռիվներ մղել թուրքական բանակի թիկունքում, 3) Սահմանադրական Պարսկաստանի օգտին լայն քարոզչություն անել Եվրոպայում, 4) Ուժերը ներածին չափով նպաստել գլուխ բերելու Պարսկաստան-Բուլղարիա դաշինքն ընդհանուր թշնամու՝ Օսմանյան պետության դեմ, 5) Ջանքեր գործադրել Պարսկաստանի կողմը գրավելու ֆրանսիական կառավարության համակրանքը, ինչպես նաև այդ երկրի կառավարությունից ստանալու փոխառություն, 6) Հեղափոխության նկատմամբ բացասաբար տրամադրված Մելքոն խանին և Արչակ խան

Գորոյանին մղել չեզոք դիրքի կամ, եթե հնարավոր է, մոտեցնել սահմանադրական շարժմանը, որի ջերմ ջատագովներից էր Պարսկաստանի ամենախոշոր հայ գործիչը՝ Հովհաննես խան Մասեհյանը:

Հայկական կողմը մշտապես ընդգծում էր, որ պարսիկ ժողովուրդը վերջնականապես պետք է գտնի ինքզինքը, որ երկրի բոլոր ժողովուրդները, իսլամ թե քրիստոնյա, թև-թևի տված, ազատագրական մի բուռն շարժմամբ պարտավոր են իրենց ձեռքն առնել երկրի երերուն ճակատագիրը և մղել նրան հիմնական բարենորոգման:

Ձեռք բերված համաձայնությունների մասին բանակցությունների վերջում կազմվեց համապատասխան արձանագրություն երկու լեզվով՝ պարսկերեն և ֆրանսերեն: Համաձայնագրի մեջ ամփոփված էին 12 հոդվածներ, որոնք բաժանված էին երկու մասի՝ անմիջական գործադրելի և Թուրք-պարսկական պատերազմի դեպքում իրականացնելի: Բայց երբ եկավ փաստաթուղթն ստորագրելու պահը, բանակցությունների պարսկական կողմի պատվիրակները հրաժարվեցին ստորագրել, միաժամանակ հայտարարելով, որ սահմանադրականները ճչտորեն կկատարեն այն բոլոր պայմանավորվածությունները, որոնք ՀՅ դաշնակցության հետ բանավոր ձեռք են բերվել վեցօրյա խորհրդակցության ընթացքում:

Պարսիկ սահմանադրականների հետ վարած բանակցությունների մասին ՀՅԴ Արևմտյան բյուրոյին 1908 թ. հունվարի 10-ի թվով ուղարկած տեղեկագիր-նամակում Ռոստոմը գրում էր.

«Բանն այն է, որ բանակցողներն իբրեւ որոշ հասարակական եւ քաղաքական դիրք ունեցող անձինք՝ խոյս են տալիս ստորագրելու մի պայմանագիր, որ կնքուած է յեղափոխական կուսակցութեան ներկայացուցչի հետ: Ինչպէս երեւում է, նրանք կ'աշխատեն ստեղծել մի ուրիշ մարմին՝ նոյնպէս յեղափոխական անունով, ուրիշ անձերից բաղկացած, գուցէ եւ **ֆիկտիւ**, *որը մեզ հետ կը մտնի պաշտօնական յարաբերութեան մէջ: Իսկապէս՝ ստորագրութիւնը մեզ համար էլ ցանկալի չէր: Աչքի առաջ*

ունենալով Շամի մարմնի եւ մի քանի ընկերների տրամադրությունը, մեզ համար եւս անհրաժեշտ էր պայմանագիր չկազմել ոչ մի ստորագրությամբ, այլ համաձայնության կէտերի իրագործումը թողնել իրերի ընթացքին»[1]:*

Բանակցությունների ավարտից հետո Դաշնակցությունը ձեռնարկեց իր հանձնառությունների կատարմանը:

Կուսակցությունն ամենից առաջ աշխատանքներ տարավ արտաքին ճակատում՝ Ֆրանսիայում: Օգտվելով երկրի քաղաքական գործիչների և հատկապես խորհրդարանի՝ իր բարեկամ պատգամավորների աջակցությունից, Դաշնակցությունը մեծ ջանքեր գործադրեց Ֆրանսիայի՝ Պարսկաստանին փոխառություն տրամադրելու համար: Նա կարողացավ այդ գործի մեջ ներգրավել նաև եվրոպական մամուլի մի չարք օրգանների՝ Պարսկաստանի հանդեպ համակրանք ստեղծելու ուղղությամբ: Կուսակցությունն ինչ-որ չափով հաջողեց իր առաքելության մեջ, բայց միայն բարոյականի սահմաններում: Գործնական արդյունք չեղավ, քանի որ ֆրանսիական կառավարությունը դաշնակից էր Ռուսաստանին և բարեկամ՝ Մեծ Բրիտանիային, որոնք էլ հենց մասնատում ու գաղութացնում էին Պարսկաստանը:

Կուսակցության Արևմտյան բյուրոյի հանձնարարությամբ՝ ՀՅԴ Բուլղարիայի կենտրոնական կոմիտեն հարաբերության մեջ մտավ երկրի կառավարական շրջանների հետ՝ նպաստելու համար բուլղարա-պարսկական մերձեցմանը:

Կուսակցությունը ծրագրված ու կանոնավոր աշխատանք էր կատարում նաև ներքին ճակատում: ՀՅԴ Ատրպատականի կազմակերպության մարմինների ներկայացուցիչներն ու գործիչները երկրի տարբեր վայրերում սերտ կապեր էին հաստատում սահմանադրական շարժման ղեկավարների հետ, նրանց խորհուրդներ տալիս, գործունեության ուղեգծեր մատնանշում, երբեմն էլ զենք, ռազմամթերք և ռումբ տրամադրում՝ որոշ գոր-

---

* *Խոսքը ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեի մասին է:*

[1] ***«Ռոստոմ»**, էջ 164:*

ծողություններ կատարելու համար: Դրանից բացի, քիչ թե շատ կրթված հայ և պարսիկ երիտասարդներից կազմվում էին խմբեր, որոնք զանգվածների մեջ քարոզչական աշխատանք էին տանում սահմանադրական շարժման օգտին:

Այսպիսով, 1908 թ. նախաշեմին, Պարսկաստանի մեջլիսն իր հռչակագրով և ՀՅ դաշնակցության հետ համաձայնության եկած վերանորոգչական շարժման գործիչների խումբն իր վճռական դիրքորոշմամբ, ժողովրդի անունից ազդարարում էին նոր կարգերի համար ճակատելու իրենց կամքն ու պատրաստակամությունը: Պարսից հեղափոխականները հույս ունեին, որ Պարսկաստանի ժողովուրդը գովելի հայրենասիրությամբ և անձնվեր հարատևությունով պիտի կարողանա կտրել ու անցնել պատմական ալեկոծ հանգրվանը՝ թուրքական վարձկան ավազակախմբերին դուրս վռնդել երկրից, օտար ոտնձգություններից ու սադրանքներից պաշտպանել նրա ամբողջականությունն ու ինքնուրույնությունը, հայրենիքը դուրս բերել առաջադիմության և զարգացման ուղի:

Պայքարը դեռ առջևում էր, հեղափոխությունը հետամուտ էր իր նպատակին:

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐ ՍՈՈՒՋ-ԲՈՒԼԱՂԻ ՀԱՄԱՐ

Երբ Թեհրանում և նրա շրջակայքում քաղաքական դրությունը ծայրահեղորեն լարվել էր, այդ նույն ժամանակ նորից բորբոքվեց թուրք-պարսկական սահմանային վեճը Ատրպատականում:

1908 թ. հունվարի 3-ին 12.000 քուրդ աշիրեթ ձիավորներ ցեղապետերի առաջնորդությամբ հարձակում են գործում Իրանական Քուրդիստանի կենտրոն Սոուջ-Բուլաղի (Սովուջ-Բուլաղ) վրա, բայց հաջողություն չունենալով, չեն կարողանում մտնել քաղաք: Ատրպատականի գեներալ-նահանգապետ, հմուտ զորավար Ֆարման Ֆարմանը, լավ ուսումնասիրած լինելով քաղաքի դիրքերը, իր զորքը կենտրոնացնում է հարմար տեղերում: Պարսից զորքի քանակից երեք անգամ ավելի քրդերը

կրկին հարձակման են անցնում, բայց նորից անհաջողություն են կրում, ջախջախվում ու նահանջում[1]:

Տեղեկանալով քրդերի կրած մեծ կորուստների մասին, Ատրպատական խուժած օսմանյան զորքերի հրամանատար Ֆերիկ Մեհմեդ Ֆազըլ փաշան նամակ է ուղարկում Ֆարմանին, որով սպառնում է, որ եթե սուննիների* հետ նա չարունակի այդպես վարվել, ապա ինքն ստիպված կլինի օգնել նրանց, և խորհուրդ է տալիս թողնել Սուջ-Բուլաղը և հեռանալ Միանդոաբ: Ֆարմանը պատասխանում է. «Իսկ ես քեզ խորհուրդ եմ տալիս չխառնուել մեր ներքին գործերին եւ կարգադրութիւններ չանել մեր երկրում. մեր ապստամբ հպատակների հետ ինչպէս վարուելը մեր գործն է»[2]:

Զնայած քրդերի ունեցած անհաջողությանը (իսկ նրանք փաստորեն տնօրինում էին Սուջ-Բուլաղի ողջ շրջակայքը), ճանապարհները բռնված էին նրանց զինյալներով: Քուրդ ցեղապետ Իբրահիմ աղայի ավազակախումբը 1908 թ. հունվարի առաջին տասնօրյակում հասցրել էր հրկիզել ու ամայացնել շրջակա բոլոր արքունի գյուղերը:

Թուրք փաշան հունվարի 9-ին 6 թնդանոթով և 600 ասկյարով Ֆասվայից գալիս և կանգ է առնում Սուջ-Բուլաղից երկու մղոն հեռավորության վրա և ռմբակոծելու սպառնալիքով Ֆարմանից պահանջում է թողնել քաղաքը[3]: Միաժամանակ նա հայտարարում է, թե մինչև Ջագատ գետն ընկած ողջ տարածքները պատկանում են թուրքերին: Օգնություն չստանալով, պարսկական զորքն ստիպված թողնում է Սուջ-Բուլաղը և հունվարի 14-ին անվտանգ հասնում Միանդոաբ[4]: Թուրք-քրդական միացյալ ուժերը մտնում են քաղաք:

Մինչև Սուջ-Բուլաղը թողնելը Ֆարմանն իր մոտ է կանչում ռուսահպատակ Նազարբեկով հայ հարուստ ընտանիքի գոր-

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 26:

* Պարսկաստանի քրդերը հիմնականում սուննի մուսուլման են:

[2] **«Մշակ»**, № 47, 1 մարտի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 15, 20 հունվարի 1908 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում, № 17, 23 հունվարի 1908 թ.:

ծակատարին և նրա միջոցով այդ ընտանիքին պահ է տալիս զգալի թվով հրացաններ, ինչպես և զինամթերք՝ Սոուջ-Բուլաղը վերագրավելուց հետո դրանք իրեն վերադարձնելու պայմանով:

Ձգանկանալով ընկնել թուրքերի և քրդերի տիրապետության տակ, հայերը, թողնելով տունուտեղ, ընտանիքներով հեռացան Սոուջ-Բուլաղից: Հարյուրավոր հայ կանայք ու երեխաներ, ոտաբոբիկ և հետիոտն, իրենց գլուխն ազատելու համար, ահագին ճանապարհ կտրելով, հասան Մարաղա:

Նույն ամսվա վերջերին թուրքական զորամասերը սահմանագլխից ներս էին մտել արդեն 60 կմ և մտադիր էին ձմեռել գավառի աղքատ ժողովրդի գյուղերում՝ նրա հաշվին:

Թուրքերի՝ Ատրպատականը գրավելու դրդապատճառներից մեկը տեղի հայ հեղափոխականներին այդտեղից դուրս մղելը կամ ոչնչացնելն էր[1]: Նրանք նաև չէին հանդուրժում, որ հայերն աջակից են պարսիկներին, իսկ վերջիններս «չափից ավելի» հանդուրժող են հայերի նկատմամբ և անառարկելիորեն վստահում են նրանց:

Մեհմեդ Ֆազըլի Սոուջ-Բուլաղ մտնելու երրորդ օրը՝ 1908 թ. հունվարի 17-ին, քուրդ բեկզադեները և ցեղապետերը, ինչպես՝ Շեյխ Ալիխանը (Շուջաա Մամալիք), Մահմեդ Հուսեյն խանը (Սարդար Մուքրե) և այլ կալվածատերեր նրան ուղարկում են հետևյալ խնդրագիրը.

«Ձերդ բարձր վսեմափայլության ոտքի հողին զոհ լինենք. մեր սրտերի անհուն ուրախությունն ենք հայտնում, որ, գերեզման չմտած, բախտ ունեցանք տեսնել 30 տարուց ի վեր մեր անհամբերությամբ սպասած բաղձանքի իրագործումը: Թող Ալլահը, կտրելով մեր և մեր կրոնակիցների կյանքից, այն պարգևի մեծ մարգարեի տեղապահ և իսլամի պաշտպան, արքաների արքա սուլթան Աբդուլ Համիդին, որի աշխարհակալության համար ցերեկ և գիշեր աղոթում ենք երեսանկյալ: Ինչպես մենք երջանկություն ունեցանք այս փրկարար օրը տեսնել, մեր որդիները, մեզանից ավելի բախտավոր լինելով, անպատճառ երջան-

---

[1] *Տե՛ս* ***«Վտակ»****, № 94, 3 մայիսի 1908 թ.:*

կություն կունենան մեր արեգակնափայլ խալիֆի աշխարհակալությունը տեսնել, փառաբանել և պարծենալ նրանով բոլոր ազգությունների մեջ՝ ի փառս իսլամի: Վստահ ենք, որ դուք, խոնարհ ծառաներիդ դրության մեջ մտնելով, մեր մինչև այսօր ձեզ չներկայանալու և ձեր ոտքը չհամբուրելու համար վշտացած չեք լինի: Որովհետև մինչև ձեր գալը մենք պարսկահպատակներ էինք և պարսկական աստիճանավորներ, ոռճիկ և կենսաթոշակ էինք ստանում պարսից կառավարությունից, ուստի առ այժմ զգուշության համար որոշել ենք երեսանց մեզ չեզոք պահել՝ թեև մեր նպատակն է մինչև մեր արյան վերջին կաթիլը թափել և ձեզ հետ լինել: Բայց մենք կարող ենք միանալ ձեզ հետ միայն այն ժամանակ, երբ դուք ձեր զորքով Միանդոաբը ևս առնեք: Երեսանկյալ աղերսում ենք, որ քաջարի և աշխարհի փառք օսմանյան զորքով շուտով Միանդոաբի վրա գնաք, ջարդեք պարսից բանակը և տիրեք նրան: Մենք ևս, այս կողմից գրոհ տալով, կարող ենք պարսից բանակը երկու սրի մեջ դնել և ջարդել»:

Կարդալով այս խնդրագիրը, Մեհմեդ Ֆազըլ փաշան, Բայիզ աղայի խորհրդով, քուրդ ցեղապետերին պատասխանում է, թե Միանդոաբը առնելու գործը թողնում է իրենց՝ ցեղապետերին. եթե իրենց գրածը ճիշտ է, թող հանդես գան պարսից զորքի դեմ[1]:

Ակամայից հարց է առաջանում, թե ինչո՞ւ թուրքական կառավարությունը սահմանային այդ վեճը չէր հարուցել դրանից, ասենք, 5–10 տարի առաջ: Պատասխանը պարզ է. պարսից սահմանադրական ակտերը, երկրում ծավալվող ազատագրական շարժումը խորապես ազդում էին թուրքական միապետական վարչակարգի վրա: Մյուս կողմից, սեփական երկրի ներսում պարբերաբար տեղի ունեցող սոցիալական և հատկապես ազգային-ազատագրական ցնցումները թուրքաց կառավարությանը մղում էին դեպի արտաքին քաղաքականության կոչտացում՝ զինված ընդհարումներ և խոշոր հակամարտություն՝ դրանց վրա կենտրոնացնելով օսմանյան հասարակության ուշադրությունը: Եվ եթե հաշտությամբ վերջանար Պարսկաս-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 47, 1 մարտի 1908 թ.:*

տանի հետ ունեցած սահմանային վեճը Ատրպատականում, ապա նա վաղը, միևնույնն է, ուրիշ պատճառ էր փնտրելու՝ նոր կռիվ առաջ բերելու համար:

Այս պայմաններում, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը, որոնք կապված էին 1907 թ. օգոստոսի 18 (31)-ի դաշնագրով, նման էին երկու խենթապահների, որոնք դիվանագիտական միջոցներով ամեն կերպ աշխատում էին սանձահարել Թուրքական կառավարության անմիտ ու վտանգավոր քայլերը: Թերևս այդ քայլերն այնքան հանդուգն ու անզուսպ չէին լինի, եթե Թուրքաց կառավարության թիկունքում կանգնած չլինեին Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան: Այնպես որ, այդ արտաքին դրդիչ գործոնն ուրիշ թելադրիչ հանգամանքների հետ ավելի զորավոր էր դարձնում լայնածավալ պատերազմի հավանականությունը Օսմանյան տերության ու Պարսկաստանի միջև: Բայց Աբդուլ Համիդն, այնուամենայնիվ, երկյուղում էր այդպիսի պատերազմից, և հենց դա էր պատճառը, որ Ատրպատականի նահանգում Թուրքական զորքերի առաջխաղացումը կատարվում էր անսովոր վարանումով, քայլ առ քայլ: Սուլթանը չէր բացառում, որ իր զորքերի արագ առաջխաղացման դեպքում Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան հանդես կգան Պարսկաստանի տարածքային ամբողջականության խախտման դեմ՝ գործադրելով դրանից բխող բոլոր միջոցները:

1908 թ. փետրվարի սկզբներից Ատրպատականի դրությունն օրեցօր ավելի վտանգավոր էր դառնում: Քրդական ասպատակությունները, որոնք քրոնիկ բնույթ էին ստացել այդ դժբախտ նահանգի համար, խոստանում էին գարնան ամիսներին ավելի լայն ծավալներ ընդունել;

Սալմաստի դաշտը և չրջակա լեռները հազիվ սկսել էին ազատագրվել ձյան շերտից, երբ քրդերը ձեռնարկեցին իրենց նոր «սխրագործություններին»: Թուրքերի դրդմամբ՝ նրանք հարվածներ էին հասցնում գավառի կենտրոնական գյուղերին, որոնց մեծ մասը հայաբնակ էր: Դրա պատճառներից մեկն այն էր, որ կարծում էին, թե հայերի գյուղերում ահագին հարստություններ են դիզված[1]:

---

[1] *Տե՛ս* ***«Լրաբեր»****, № 1, 27 ապրիլի 1908 թ.:*

Հանկարծակի խուժելով Սարամերկ հայկական գյուղը, քրդերը կողոպտում են ծայրամասի տները, սպանություններ կատարում: Ուշքի գալով, հայերը կռվի են բռնվում: Թողնելով ավարի զգալի մասը և դիակներ, քրդերը փախչում են: Դրանից հետո նրանք հարձակվում են Բարանդուզի գավառի Բաբառու, Դարբառու և Սարդարութ հայ-ասորական գյուղերի վրա: 1000-ից ավելի հայ կանայք մերկ ու բոբիկ թափվում են Ուրմիա քաղաք: Տղամարդիկ, տևական դիմադրությունից հետո, երբ սպառվում է ռազմամթերքը, նահանջում են Ուրմիա՝ միանալով իրենց ընտանիքներին[1]:

Ուրմիայի տեղացի հայությունը միջոց չուներ և անզոր էր ամոքելու Սալմաստից փախած իր կողոպտված եղբայրների թշվառությունը: Ուստի Ատրպատականի տարբեր վայրերի, հատկապես Թավրիզի հայերն օգնության են չտապում, ստեղծվում են սովյալներին օգնող հանձնախմբեր, որոնց հայթայթած միջոցները հասցվում են Ուրմիա[2]:

Քրդերին խրախուսող հանգամանքներից մեկը Պարսկաստանում տիրող ամենաթողության պայմաններում Սալմաստում և հարակից գավառներում զինվորական ու քաղաքացիական իշխանության բացակայությունն էր: Այդ վայրերի պաշտպանությունը թողնված էր ժողովրդին՝ չրջապատի թշնամիներից իր անձն ու գույքը պաշտպանելու համար: Այլևս արտաքին օգնության հույս չունենալով, պարսիկ և հայ բնակչությունը եռանդով զինվում ու պատրաստվում էր ինքնապաշտպանության: Բնակչության զենքի ընդունակ մասին արգելված էր պանդխտության գնալ: Այդ ճգնաժամային օրերին հայերի ու պարսիկների հարաբերությունները ավելի ջերմ ու բարեկամական էին դարձել: Երկու կողմերն իրենց փրկությունը տեսնում էին փոխադարձ եղբայրական աջակցության մեջ:

Ամբողջ գավառում վխտում էին թուրք լրտեսները, որոնք առանձին եռանդով տեղեկություններ էին հավաքում հայերի,

---

[1] Տե՛ս **«Լրաբեր»**, № 1, 27 ապրիլի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

նրանց ունեցած ուժի և մտադրությունների մասին[1]:

Երբ Թուրքական զորքը գրավել էր Սոուջ-Բուլաղը, դրանից ոգեշնչված, Խոյի և շրջակա տարածքների քրդերը, որոնք ապատակում էին պարսկաբնակ գյուղերը, որոշեցին ուժգին մի հարվածով գրավել Խոյ քաղաքը և բոլոր պարսիկներին դուրս մղել այնտեղից:

Թուրք-պարսկական սահմանագլխի քրդական ցեղերի և պարսիկ բնակչության միջև երկար ժամանակից ի վեր շարունակվող արյունահեղ ընդհարումներին վերջ դնելու համար, Խոյի պարսիկների ներկայացուցչական մարմինը՝ անջումենը չկարողանալով ուրիշ միջոց գտնել՝ Հ3 դաշնակցությանը դիմեց՝ խնդրելով նրա աջակցությունը:

Դաշնակցության տեղի կազմակերպությունը հանձն առավ միջամտել. նա իր մարդկանց ուղարկեց քրդերի մոտ: Բանակցությունները վերջացան հաջողությամբ: Դա դրացի ժողովուրդների միջև համերաշխության գաղափարի տարած մի փոքր, ժամանակավոր հաղթանակ էր, նաև պարսիկների շրջանում հայերի, մասնավորապես Դաշնակցության ունեցած հեղինակության ապացույցը: Այլապես՝ պարսիկները պետք պիտի չունենային դիմելու հայկական հեղափոխական կազմակերպությանը: «Հայրենիք» օրաթերթը գրում էր. «Ստացուած տեղեկութիւններու համաձայն, պարսիկ ամբողջ ժողովուրդին մեջ լաւ տրամադրութիւն մը կը տիրէ դէպի «հայ ազնիւ դրացիները», որոնց կոչ կ'ընէ պարսիկ մամուլը՝ միանալ իրենց, վանելու համար ընդհանուրի թշնամին՝ պարսկական սահմաններէն»[2]:

Թուրքերը մտադիր չէին բավարարվել Ուրմիա լճից արևմուտք և հարավ ընկած պարսկական տարածքները ոտնակոխ անելով: Նրանց հեռահար նպատակը ողջ Ատրպատական նահանգի առավել խիտ թուրքալեզու բնակչություն ունեցող տարածքներում հակապարսկական ուժգին քարոզչություն մղելն էր: Նրանք հատկապես նպաստում էին զինավարժ, ռազ-

---

[1] Տե՛ս, **«Լրաբեր»**, № 1, 27 ապրիլի 1908 թ.:

[2] **«Հայրենիք»**, № 5 (447), 1 փետրվարի 1908 թ.:

մատենչ ու կիսավայրենի լեռնական չահսևան Թյուրքական ցեղերի զինմանն ու համախմբմանը՝ առաջիկա իրադարձություններում Օսմանյան կայսրության համար հինգերորդ լեգեոնի դեր կատարելու նպատակով:

Արդեն Սուլջ-Բուլաղի և Խոյի դեպքերի օրերին չահսևաններն իրենց վերաբերող մի շարք պահանջներ ներկայացրին կառավարությանը, և, պատասխանի չսպասելով, ըմբոստացան: Օսմանյան Թուրքերի դրդմամբ, նրանք այս անգամ ներկայացրին քաղաքական պահանջներ՝ ցրել անջումենները, վերացնել մեջլիսն ու սահմանադրությունը, որոնց մասին հեռավոր գաղափար անգամ չունեին: Լեռնականներն սկսեցին կողոպտել խաղաղ բնակչությանը, սպանություններ կատարել պարսկաբնակ գյուղերում: Դա այն Թուրքալեզու ցեղախումբն էր, որ քաջալերված իր «սխրագործություններով», ամիսներ հետո հարձակումներ էր գործելու սահմանագլխի վրա տեղակայված ռուսական զորամասերի վրա:

Ղարադաղի գավառը Թուրքիայի ազդեցության տակ ընկնելը Կովկասի համար հղի էր իրական վտանգով: Հաստատվելով Ղարադաղում, Թուրքերն ամուր կապեր կհաստատեին տեղի մոլեռանդ մուսուլման Թուրքալեզու ցեղերի հետ՝ նրանց իրենց ազդեցությանը ենթարկելով: Թուրքիան այդ ցեղերին կնախապատրաստեր կարևոր դերակատարության, այն է՝ Ռուսաստանի դեմ պատերազմի բռնկման դեպքում այդտեղից ներխուժել ռուսական Կովկասի Թուրքաբնակ գավառներ:

Այդ ամենը Պետերբուրգին ստիպեց եռանդուն քայլերի դիմել: Ռուսական կառավարության սպառնալիքի տակ և Կ. Պոլսում ռուսաց դեսպան Զինովևի կրկնակի ու համառ ջանքերի շնորհիվ Աբդուլ Համիդն սկսեց նահանջել: Սուլթանը Թուրքպարսկական սահմանային վեճի ծագման մեղքը բարդեց Թեհրանում Թուրքիայի դեսպան Շամսէդդինի և դեսպանատան պաշտոնյաների վրա: Նա հատուկ իրադեով պաշտոնանկ արեց դեսպանին և Բաթումում ընդհանուր հյուպատոս Ռեմզի բեյին ուղարկեց Թեհրան՝ որպես գործերի հավատարմատար: Միաժամանակ, ֆերիկ Մեհմեդ Ֆազըլ փաշայի հրամանատարության ներքո գտնվող Թուրքաց զորքերը հեռացան Սուլջ-Բու-

լաղից ու Միանդոաբից և կենտրոնացան թուրքական տարածքի սահմանագլխում:

Իր հերթին, պարսից կառավարությունը որոշ քայլերի դիմեց՝ մի քանի թուրքամետ գործիչների պաշտոնանկ անելով: Դրանցից մեկը Կ. Պոլսում պարսից դեսպան Միրզա Ռեզա խան Արեֆուդդինն էր, որին պարսիկ ժողովուրդը համարում էր իր երկիր օսմանյան զորքի ներխուժման մեղավորներից մեկը[1]:

Թուրքերի հեռանալուց հետո Ֆարման Ֆարմանն իր վաշտերով մտավ Սոուջ-Բուլաղ և այնտեղից քշեց քուրդ ցեղապետ Բայիզ աղայի հրոսակներին[2], որոնք, ճիշտ է, թուրքական զորքերի հեռանալուց հետո մի քիչ հանգստացել էին, բայց քաղաքում մնալու դեպքում կարող էին անախորժությունների պատճառ դառնալ: Ֆարման Ֆարմանի հետ Սոուջ-Բուլաղ մտավ պարսից չահզադե Իմամ Ղուլի Միրզան, որը նշանակվել էր քաղաքի ընդհանուր կառավարիչ ու դատավոր: Նրա հետ էին բազմաթիվ բեկզադեներ և խանզադեներ: Ֆարմանի հետ առաջիններից մեկը քաղաք մտավ նրա մերձավոր զինակիցներից՝ բարձրաստիճան զինվորական, հայազգի Ֆավիզ խան Սարհենգ Ենիկոլոպյանի գլխավորած 2000-անոց զորամասը[3]:

Թեև թուրքական զորքը կարծես քաշվում էր Ատրպատականից, բայց որևէ երաշխիք չկար, որ նա այդ նահանգը զավթելու նոր փորձեր չի անելու:

Ռուսաստանը մեծապես չահագրգռված էր Պարսկաստանի քաղաքական կայունությամբ, բայց կայունություն՝ միապետական կարգերով: Ստոլիպինյան վարչակարգ իր երկրում հաստատած, հեղափոխությունների ոխերիմ թշնամի ցարիզմը չէր կարողանում հաշտվել հարևան երկրում ընթացող հակամիապետական ժողովրդական շարժման հետ և սպասում էր հարմար պահի՝ Մահմեդ Ալի շահին, երկրի հակահեղափոխական ուժերին լայնածավալ աջակցություն ցույց տալով տապալելու մեջ-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 29, 6 փետրվարի 1908 թ.:*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 328, թ. 26:*

[3] *Նույն տեղում:*

լիսը և ցրելու անջումենները: Քաղաքական կայունությունը Ռուսաստանին հնարավորություն կտար վերջնականապես ամրանալու Պարսկաստանում:

Այդ ռազմավարական ծրագրի իրականացման համար, ռուսական կառավարությունը, դեռ ժողովրդական շարժումն սկսվելուց առաջ, սկզբունքային դեր էր հատկացրել դեպի Պարսկաստանի խորքերը երկաթգիծ անցկացնելու ծրագրին: Բայց շարժումն սկսվելուց հետո հետաձգվել էր դրա իրագործումը:

Երևանից եկող գիծը Ջուղայի (Ջուլֆա) մոտ արդեն հասել էր Արաքսի ափը, այսինքն՝ պարսից սահմանը[1]: Երկաթգծի շինարարությունը շարունակելու համար ռուսական կողմին մնացել էր լուծել մի քանի տեխնիկական և քաղաքական հարցեր: Երկաթգծի կառուցումը պետք է առաջ բերեր մեծ փոփոխություններ, կարելի է ասել՝ իսկական հեղաշրջում՝ հատկապես ռուս-պարսկական առևտրական գործերում:

Մինչ այդ Ռուսաստանից Պարսկաստան ներմուծվող և Պարսկաստանից Ռուսաստան արտահանվող ապրանքները մեծ մասամբ փոխադրվում էին Աստարայի վրայով: Այդ ուղիով ապրանքների տեղափոխությունը կատարվում էր շատ դանդաղ, երկու կողմերի վաճառականները չէին կարողանում իրենց դրամագլուխների շրջանառությունն արագացնել, ուստի մեծ վնասներ էին կրում: Երկաթուղու կառուցումից հետո ապրանքների տեղափոխությունը գլխավորապես կատարվելու էր Արաքսի վրայով, որն, անշուշտ, թե՛ ռուս և թե՛ իրանցի առևտրականների համար երաշխավորելու էր դրամագլուխների արագ շրջանառություն, հետևապես՝ մեծ եկամուտներ: Դրանից բացի, երկաթուղին քաղաքակրթական կարևոր դեր էր ունենալու Պարսկաստանի համար, իսկ Ռուսաստանի համար՝ ռազմագիտական խոշոր նշանակություն:

Ռուսաստանյան ափից Արաքսի վրայով երկաթգծի շարունակությունը չէր կարող սկսվել պարսից երկրում տիրող անկայուն, անկանխատեսելի, շարունակ խորացող վիճակի պատճառով:

---

[1] ***«Մշակ»**, № 46, 29 փետրվարի 1908 թ.:*

1908 թ. փետրվարի 15-ին, ցերեկը, Թեհրանում երկու ռումբի հարվածով մահափորձ կատարվեց Մահմեդ Ալի շահի դեմ, բայց նա անվնաս մնաց[1]: Ահաբեկչությունը հարուցեց բռնարարքների նոր ալիք, տեղի ունեցան լայնածավալ խուզարկություններ ու զանգվածային ձերբակալություններ[2]:

Մարտի 30-ին Թյուրքալեզու լեռնականների մի բազմաքանակ ավազակախումբ պարսկական կողմից հարձակում գործեց Լենքորանի ուղղությամբ: Անցնելով սահմանը, ավազակները փորձեցին գրավել սահմանամերձ Բելոսուարի բնակավայրը: Ռուս սահմանապահների և սահմանախախտների միջև սկսված հրացանաձգության հետևանքով սպանվեցին ուղեկալի հրամանատար Դվոյեգլազովը և չորս սահմանապահ, ուրիշ հինգ սահմանապահներ հրազենային վերքեր ստացան: Ռուսական պատժիչ արշավախմբերը Լենքորանի կողմից գործողություններ ձեռնարկեցին, մտան Պարսկաստանի տարածք և ավերեցին մի շարք գյուղեր: Ամրանալով գրված մարտահենադաշտում (плацдарм), ռուսական զորամասերն սկսեցին կամաց-կամաց առաջանալ[3]:

Պարսկաստան ռուսական զորքերի մուտքը մեծ դժգոհություն առաջ բերեց երկրում: Մեջլիսի պատգամավորները համարում էին, որ Ռուսաստանը բացարձակ հարձակման է անցել իրենց երկրի դեմ: Անջումեններում վճռական կռվի կոչեր էին արվում, առաջադիմական մամուլի օրգանները նույնպես հանդես էին գալիս ռուսական զորքերի ճանապարհը փակելու կոչերով:

Մյուս կողմից, մեջլիսում և կառավարության մեջ բողոքներ էին հնչում թուրքերի դեմ, որոնք չէին ուզում հեռանալ պարսկական հողերից:

1908 թ. մարտի վերջերին Թեհրանի կառավարությունը Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով վերջնագիր ներկայացրեց Բարձր Դռանը, որ թուրք-պարսկական սահմանը խախտած օսմանյան

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 6 (412), հունիս, 1960, էջ 72:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 39, 18 փետրվարի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 75, 4 ապրիլի 1908 թ.:

զորքի հրամանատարությունն ամեն կերպ խրախուսում է սահմանի երկու կողմերի քուրդ ցեղերին և նրանց կռվի մղում պարսից կառավարական զորքերի և խաղաղ բնակչության դեմ: Վերջնագրում ասվում էր, որ պարսկական կառավարությունը մտադիր է ռազմական գործողություններով պատժել քրդերին և կարծում է, որ Թուրքական կողմը նրանց պաշտպանելուց ձեռնպահ կմնա:

Ստանալով Թեհրանի վերջնագիրը, Բարձր Դուռը պատասխանեց, որ Թուրք զինվորական պաշտոնյաները չեն հովանավորում քուրդ ավազակներին[1]: Սուլթանի կառավարությունը նաև հավաստիացնում էր, որ շատ շուտով հրաման կարձակվի Վանում տեղակայված զորաբաժնի հրամանատարին, որով խստիվ կարգելվի պարսկական սահմանի խախտումը և քրդական շարժումներին աջակցելը: Նաև տեղեկացվում էր, որ պարսկական սահմանի վրա գտնվող Թուրքական զորքերի թիվը մեծապես կրճատվելու է[2]:

Բայց Բարձր Դռան պատասխանը խաբկանք էր, քանի որ նույն ժամանակ Տիգրանակերտում, Վանում, Բաղեշում, Կարինում և այլ տեղերում զենքի տակ էին կանչվում ռեդիֆները (պահեստի զինվորներ): Ինչպես նշվել է վերը, 1908 թ. գարնանը Թուրքիան մտադիր էր պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ, որի դեպքում, բնականաբար, հարվածի տակ էր ընկնելու նաև ռուսական ազդեցության գոտում գտնվող Ատրպատականը:

Թուրքական կառավարության այդ մտադրության և սպասվելիք զորահավաքի դեմ ցույցեր էին սկսվել նշված վայրերում: Բնակչության մեջ ահագին թվով տարածվում էին երիտթուրքերի հրատարակած թռուցիկները, որոնցով ժողովրդին բացատրվում էր, որ պատերազմը կորստաբեր է լինելու Օսմանյան կայսրության համար:

Այն բանից հետո, երբ Թուրքական կառավարությունը խոհեմ գտնվեց և այդ ժամանակ հրաժարվեց Ռուսաստանի դեմ

---

[1] Տե՛ս **«Ախուրեան»**, № 28, 26 ապրիլի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Լրաբեր»**, № 1, 27 ապրիլի 1908 թ.:

պատերազմելու մտադրությունից, կրկին լարվեց դրությունը Թուրք-պարսկական սահմանագլխին: Հակառակ Բարձր Դռան հավաստիացումներին, Թուրքական նորանոր զորամասեր ուղղություն վերցրեցին դեպի այդ սահմանագլուխը:

ՄԵՋԼԻՍՈՒՄ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԽՆԴԻՐԸ

1908 Թ. ապրիլի կեսերին Ատրպատականի նոր կառավարիչ նշանակվեց Պարսկաստանի ամենաղարգացած պետական գործիչներից Մուխբիր Սալթանեն, որը երկար տարիներ ապրել էր Եվրոպայում, տիրապետում էր գերմաներենին և ֆրանսերենին:

Գալով Թավրիզ, նոր նահանգապետը քաղաքի բնակիչների կողմից ընդունվեց չեզոքությամբ. ոմանք նրա նշանակումը հաջող էին համարում, ուրիշները գտնում էին, որ լինելով շահի մերձավորներից, նա հազիվ թե կարողանա լուրջ փոփոխություններ մտցնել նահանգի բնակիչների կյանքում, պայքարել կաշառակերության և այլ չարիքների դեմ, խաղաղ բնակիչներին պաշտպանել սնկի նման աճող ավազակախմբերի ասպատակություններից, գոնե մեղմել կողոպուտներն ու սպանությունները:

Նահանգապետ Մուխբիր Սալթանեն ապրիլի 29-ին ընդունեց հայոց թեմական առաջնորդ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանին, երկար ու սիրալիր զրույց ունեցավ նրա հետ: Զրույցի ընթացքում առաջնորդը նահանգապետի առջև բարձրացրեց հայ համայնքին հուզող մի շարք հարցեր, և, առաջին հերթին, Ատրպատականի հայկական թեմի դպրոցներին աջակցություն ցույց տալու անհրաժեշտության հարցը: Մուխբիր Սալթանեն պատրաստակամություն հայտնեց չխնայել իր աջակցությունը հատկապես Թավրիզի հայոց կենտրոնական դպրոցին[1]: Կարապետ վարդապետն այնուհետև բարձրացրեց մեջլիսում հայ պատգա-

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»,*** *№ 33, 14 մայիսի 1908 Թ.:*

մավորներ ունենալու չարչրկված խնդիրը*: Նա տեղեկացրեց, որ դեռ 1908 թ. հունվարին Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդապետյանցը պաշտոնական գրությամբ դիմել է մեջլիսի նախագահին՝ թույլատրելու պարսկահայ ժողովրդին այնտեղ ունենալու երկու պատգամավոր[1]: Բացի մեջլիսի նախագահից, նա նամակներ է ուղարկել նաև 15 ազդեցիկ պատգամավորների: Այդ դիմումի առիթով մեջլիսում մայիսի սկզբներին մտքերի փոխանակում է եղել, որի նյութերն ամբողջովին տպագրվել են «Մեջլիս» տեղեկագրում: Բայց պատգամավորները բավարարվել են այդքանով և հարցը մնացել է առկախ: Դրանից հետո էլ Բագրատ վարդապետը երկրորդ անգամ դիմել է մեջլիսին և խնդրել փութացնել խնդրի լուծումը[2]: Նահանգապետին պատմելով այդ ամենի մասին, առաջնորդը նրան խնդրեց միջամտել գործին:

Մուխբիր Սալթանեն խոստացավ հարցը բարձրացնել երկրի խորհրդարանի ղեկավարության առաջ, ինչպես նաև առաջնորդին հուսադրեց, որ ընդհանրապես ինքն իր ուշադրության կենտրոնում է պահելու հայերին, նրանց անվտանգության ապահովման հարցերը, հատկապես հոգ է տանելու նահանգի հայկական դպրոցների նկատմամբ, հովանավորելու է հայ առևտրականներին և այլն[3]:

Մենք որոշակի տվյալներ չունենք, որոնք հիմք տային պնդելու, թե Ատրպատականի նոր նահանգապետը մեջլիսում հայ պատգամավորների խնդիրը պաշտոնապես բարձրացրե՞լ է Թեհրանի առջև, բայց այն հանգամանքը, որ 1908 թ. մայիսի

---

* Դրանից մի քանի ամիս առաջ, 1907 թ. հունիսին, Թեհրանի անջումենը քննության էր առել մի օրինագիծ, որի համաձայն՝ պարսկահայերը և երկրի մյուս ոչ-իսլամ տարրերը (հրեաներ, գաբրեր՝ Զրադաշտի հետևորդներ և այլք) պետք է զրկվեին օրենքի առաջ հավասար իրավունքներ վայելելուց: Երկար վիճաբանություններից հետո, օրինագծի քննարկումը հետաձգվել էր անորոշ ժամանակով (տե՛ս **«Ախուրեան»,** № 42, 30 հունիսի 1907 թ.):

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 13, թթ. 11-ի շրջերեսը և 12:

[2] Տե՛ս **«Մշակ»,** № 121, 7 հունիսի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 102, 11 մայիսի 1908 թ.:

կեսերից հարցն սկսել էր շրջանառվել մեջլիսում, հիմք է տալիս ենթադրելու, որ այդպես էլ եղել է:

«Մշակը» Նոր Ջուղայի «Լրաբեր» թերթից արտատպել էր մի հոդված, որը նվիրված էր պարսկական խորհրդարանում այդ օրերին ծավալված քննարկումներին՝ այնտեղ հայ պատգամավոր ունենալու հարցի շուրջ:

Հարցի քննարկման ժամանակ հանդես է եկել 15 հոգի[1]:

Քննարկման ժամանակ կարծիք էր հայտնվել, որ խորհրդարանում հայերին կարելի է տալ մի պատգամավորական տեղ, բայց ընտրվելուց հետո պատգամավորը պետք է ուղարկվի գավառական անջումենն այն գավառի, ուր կա հոծ հայ բնակչություն: Ոմանք այդ առաջարկը խտրականություն էին համարում և գտնում, որ պարսկահայությունը և Պարսկաստանի հրեությունը երկրի հնագույն ազգերից են և նրանց մեկական ներկայացուցիչները մեջլիսում պետք է ունենան բոլոր պատգամավորների հետ հավասար իրավունքներ: Իսկ պատգամավոր Ասադուլլահ Միրզան գտնում էր, որ հայերի թիվը Պարսկաստանում 80-100 հազար է, ուստի նրանք կարող են նույնիսկ երկու պատգամավոր ունենալ, քանզի մեկ պատգամավորի ձայնատուների թիվը 50.000 է: Նա չեչտում էր, որ «հայ հասարակությունը վաճառականական եւ ուրիշ գործերում իր ջանքերը չի խնայել եւ պատրաստ է եղել ամէն տեսակ ծառայութիւններ մատուցել պետութեանն ու ազգութեանը»[2]:

Աղա Սեյիդ Հասան Թաղիզադեն իր ելույթում պատգամավորներին տեղեկացնում էր, որ վերջերս Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրող հայերից մեջլիսում ստացվել է մի նամակ, որով նրանք իրենց ջերմ զգացմունքներն են արտահայտում Պարսկաստանի նկատմամբ և պատրաստակամություն հայտնում, որ եթե հարկը պահանջի, իրենք 1000 հոգով, ԱՄՆ-ի զինվորական տարազով և 10 թնդանոթով կգան և անձնազոհությամբ կպաշտպանեն երկրի զանազան սահմանագլուխները: Մի՞թե այս ազգին կարելի է մերժել գոնե մեկ պատ-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 137, 25 հունիսի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

գամավոր ունենալ մեջլիսում,- հարցադրում էր Թաղիզադեն[1]:

Հաջի Սեյիդ Նասրոլլահն իր ելույթում անդրադառնալով նշված նամակին՝ ասում էր. «Այո՛, նամակի բովանդակությունն այդպիսին է, ինչպէս այստեղ ներկայացուեց: Յիրաւի, առաջարկւում է չափազանց կարեւոր աջակցութիւն: Զնայած մենք այսօր, փա՜ռք Աստծոյ, դեռ կարիք չենք զգում այդ օգնութեանը, բայց նամակը ուրախութիւն է պատճառում մեզ»[2]:

Ելույթ ունեցող համարյա բոլոր պատգամավորները համերաշխորեն առաջարկեցին խորհրդարանի հաջորդ ընտրություններից առաջ հայերին պատգամավորական մեկ տեղ հատկացնել:

Պարսկահայերը ուշի-ուշով հետևում էին զարգացող դեպքերին: Հայերի հմայքը հետզհետե ավելի էր մեծանում պարսիկ ժողովրդի մեջ: Պարսիկ հեղափոխականները համոզված էին, որ հայկական ազգային հեղափոխական երկու կազմակերպությունները՝ Հնչակն ու Դաշնակցությունն իրենց հետ են, իսկ կառավարությունն ամեն կերպ աշխատում էր բարեկամական հարաբերություններով չեզոքացնել հայերին:

Այդ վերաբերմունքն ավելի նկատելի էր գավառներում: Նույնիսկ կիսավայրենի լեռնական ցեղերը սիրալիր էին հայերի նկատմամբ:

Շահին ու կառավարությանը սատարող ցեղերն իրենց ներկայացուցիչների միջոցով հորդորում էին հատկապես Դաշնակցությանը, երբեմն էլ խնդրում, որ նա չմիանա հակակառավարական ուժերին: «Թող հայ ֆիդայիները չխառնուեն, մենք կարող ենք մեր սահմանադրականներին խելքի բերել»[3],- ասում էին շահի կողմնակիցները:

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 137, 25 հունիսի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

[3] **«Հայրենիք»**, № 6 (412), հունիս, 1960, էջ 71-72:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՈՐ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

1908 թ. մայիսի վերջերին թուրքական զորքերը, խախտելով Թուրք-պարսկական սահմանը, կրկին ներխուժեցին Ատրպատական: Զորքերի կազմում հաշվվում էր 17 գումարտակ, հեծելազորային մի խմբավորում և 10 թնդանոթ:

Սահմանն անցնելուց հետո թուրքական զորքը Ուրմիայից հյուսիս ահագին տարածություն գրավեց: Որոշ կանգառից հետո զորքը հետագա օրերին առաջ էր շարժվում դանդաղ՝ սպասելով պարսիկ կառավարության և ռուսների արձագանքին:

Պարսից կառավարությունն ուղղակի անզոր էր ընդդիմանալու թուրքական ոտնձգություններին, քանի որ նա ավելի շատ զբաղված էր երկրում ծայր առած ներքին ընդվզումները ճնշելով և մեջլիսի իրավունքները սահմանափակելու հոգսերով, ուստի արտաքին թշնամու դեմ լուրջ միջոցներ ձեռնարկելու համար չուներ ո՛չ ժամանակ և ո՛չ էլ հնարավորություններ:

Թուրքական նոր ներխուժումը Ատրպատականի հայերի համար մեծ վտանգ էր ստեղծել: Դա ամենից առաջ փորձանք էր Սալմաստի և Ուրմիայի հայ բնակչության համար, որն երկյուղի և հուսահատության օրեր էր ապրում:

Թուրքական զորամասերի առաջապահ գումարտակը հունիսի 7-ին հասավ Զեհրի Ղալա (Ճարա)՝ Սալմաստից 10-15 վերստ հեռավորության վրա: Իսկ դա նշանակում էր, որ թուրքերի հետագա առաջխաղացման ճանապարհին հիմնականում հայկական գյուղեր էին:

Լուսավորչական հայերը, ոչ առանց հիմքի, ասում էին, թե Ատրպատականի բոլոր կաթոլիկ, օրթոդոքս և բողոքական այլազգի քրիստոնյաներն ունեն բարեխոսներ ու պաշտպաններ՝ հանձինս ֆրանսիացի, ամերիկացի, բրիտանացի, ռուս հյուպատոսների ու դեսպանների, իսկ իրենք չունեն ո՛չ տեր, ո՛չ պաշտպան և ո՛չ էլ բարեխոս: «Մահմեդական օսմանցու երեսից քրիստոնյա հայը ե՞րբ, որտե՞ղ, ո՞ր դարում զուլում չի տեսել»,- ասում էին նրանք: Ճարա երթևեկող քրդերը, թուրքերը և հրեաները կես ուրախ, կես տխուր շեշտով, բայց համառ կերպով

հայերին ուղղում էին այս խոսքերը. «Խեղճ հայեր, ձեր բանը բուրդ (վատ) է»:

Հայերի մեծ անհանգստությանն ավելանում էին այն լուրերը, թե Ատրպատականը չուտով հայտարարվելու է Պարսկաստանից անկախ և մտնելու է Թուրքիայի հովանավորության տակ:

Վերջապես, հայերի հուսահատության ու զարմանքի պատճառներից մեկն այն էր, որ Պետերբուրգն իրական քայլ չէր անում խափանելու թուրքական առաջխաղացումը, դրանով իսկ սաստիկ հարված էր հասցնում ռուսական հեղինակությանն ու Ռուսաստանի անվան հմայքին, քանի որ Ատրպատականը մինչ այդ եղել էր ռուսական ազդեցության ոլորտում:

Բայց երկիր ներխուժած թուրքական զորքերին հակահարված տալու առաջին պարտականությունը պարսից պետությանը պետք է լիներ, որը սակայն անուժ էր ու անկար: Դրան ավելանում էր այն, որ Պարսկաստանում բնակվող այլազան էթնիկական խմբերի և տարբեր կրոնների պատկանող միլիոնավոր մարդկանց համար միևնույնն էր, թե ի՞նչ է կատարվում երկրի հեռավոր մի անկյունում:

Կովկասյան օկրուգի ռուսական պաշտոնական տեղեկատուի (“Известия штаба Кавказского округа”) 27-րդ և 28-րդ հատորներում լույս էր տեսել «Պարսկաստանի բնակչությունը զինվորական տեսակետից» չափազանց շահեկան և հետաքրքրական հոդվածը, որի հեղինակն էր անչափահաս գահաժառանգ Սոլթան Ահմեդի դաստիարակ Կ. Սմիրնովը: Թե՛ հոդվածագրի անձնավորությունը և թե՛ հոդվածում եղած դատողությունները, առանձնապես հայերի մասին շատ հետաքրքրական են և ավելորդ չենք համարում աշխատության ընթերցողներին ծանոթացնել հոդվածի կետերից մի մասի հետ:

Կ. Սմիրնովը գրում էր, որ պատմական մի շարք պատճառների շնորհիվ Պարսկաստանն ի հնուց անտի եղել է բազմատեսակ ցեղերի բնակավայր և այդ պատճառով էլ ներկայումս նրա մեջ անխառն արիացիներ, արաբներ կամ թաթարներ չի կարելի գտնել, համեմատաբար միայն այս կամ այն վայրը ներկայացնում է մի ցեղի ավելի նախատիպ և անխառն բնակչությունը:

Եվ որովհետև շատ վաղուց այդ բնակչությունը թողել է թափառական կյանքը և նստակյաց է դարձել, դրա համար էլ նրա ռազմական հատկությունների մի խոշոր մասը ոչնչացել է:

Պարսկաստանի բնակչությունը՝ հաշվի չառնելով քրիստոնյաներին և հրեաներին, հեղինակը երեք խոշոր խմբերի է բաժանում, որոնք և իրենց հերթին բաժանվում են բազմաթիվ մանրմունր ցեղերի: 1) Երկրի բուն տարր պարսիկները, որոնց գլխավոր բնակությունը ներկայումս կենտրոնական Պարսկաստանն է, 2) Թուրք-մոնղոլական տարրը, որը ցրված է երկրի գրեթե բոլոր մասերում և 3) Արաբական տարրը, որն ապրում է համանուն թերակղզու հանդիպակաց պարսկական կողմում: Սակայն վերոհիշյալներից դուրս են մնում, ըստ հեղինակի, բախտիարները, լուրերը և քրդերը, որոնց ո՛ր խմբին պատկանելը դեռ վերջնականապես որոշված չէ, այլ կան միայն հավանական ենթադրություններ:

Հակառակ այսպիսի բազմաթիվ ցեղերի գոյության՝ կրոնը համեմատաբար միատեսակ է: Փոքրաթիվ հրեաներից, հայերից, ասորիներից և գրաղաչտականներից բացի՝ մնացած բնակչության 3/4-ը դավանանքով շիա է, 1/4-ը՝ սյուննի:

Ըստ զբաղման՝ բնակչությունը երեք խմբի է պատկանում՝ նստակյաց, կիսաթափառական և թափառական: Ամբողջ բնակչության կեսը պատկանում է վերջին երկու տեսակին[1]:

Պարզ էր, որ այս պայմաններում չէր կարելի խոսել միասնական ժողովրդի մասին, որն ունակ լիներ ասպարեզ բերելու այնպիսի ուժեր, որոնք կարողանային երկրից վռնդել թուրք ներխուժողին: Իհարկե, դա չափազանց դժվարին գործ էր, բայց ոչ անիրականանալի, եթե պարսիկ ժողովուրդը հանդես բերեր վճռականություն և կամք, իսկ երկրի իշխանությունները՝ իմաստություն՝ խուսանավելու դիվանագիտական սարդոստայնների միջև:

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 3 (325), մարտ, 1953, էջ 69:*

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԳԱԼԻՔ ՄԵԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Երբեմնի հարյուրհազարների հասնող պարսկահայությունը 20-րդ դար էր հասել նոսրացած ու նվաղած: Չնայած դրան, նա չարունակում էր խոշոր ծառայություններ մատուցել Պարսկաստանին, պարսիկ ժողովրդի քաղաքակրթական կյանքին:

Պարսկահայությունն ամենից առաջ մեծ դեր էր կատարում Պարսկաստանի տնտեսական և հատկապես առևտրական ասպարեզներում: Հայ վաճառականների ձեռքում էր կենտրոնացված երկրի արտաքին առևտրի խոշոր մասը, նրանք են Պարսկաստանը կապել արտասահմանյան երկրների հետ:

*Հայերը մեծ եռանդ էին դրսևորում հատկապես ռուս-պարսկական **առևտրական հարաբերություններում:** Ինչպես Պարսկաստանի լայնածավալ, այնպես էլ Ռուսական կայսրության անծայրածիր չուկաներում նրանք իրենց ամուր դիրքերն ունեին: Հայ առևտրականները Ռուսաստանից Պարսկաստան էին բերում հացահատիկ, գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքներ, Պարսկաստանից Ռուսաստան տանում մետաքս, բրինձ, ծխախոտ և այլն:*

*Բայց ավելի տպավորիչ է եղել հայերի ծավալած **կրթամշակութային** գործունեությունը: Արևելյան մի շարք երկրներում և առավելապես Պարսկաստանում հայությունն իր ապրելակերպով, առաջադիմական ձգտումներով և մշակութային ձեռնարկներով կրթիչ օրինակ է հանդիսացել շրջապատի համար, եղել է քաղաքակրթության խթանիչ: Հայերն են Պարսկաստանում առաջինը հիմնել տպարան (1636 թ.) և իրականացրել առաջին գրքի տպագրությունը (Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքում), առաջինը հիմնել թատրոն, կազմակերպել կրթաբարեգործական միություններ, բացել եվրոպական տիպի դպրոցներ և այլն:*

Վերջապես, հայության լուսավոր զավակներն էին, որ պարսիկ ժողովրդի մեջ արծարծեցին ու տարածեցին ազատական սկզբունքներ ու ժողովրդավարական գաղափարներ:

Այդ ամենի չնորհիվ, Պարսկաստանի հայությունը դարեր

չարունակ ստանում էր պետության հովանավորությունը, պարսից շահերի բաղում շնորհները: Նախասահմանադրական շրջանում նույնպես՝ նա առանձնաշնորհյալ դիրքի մեջ էր և գտնվում էր կառավարության լուրջ հովանավորության ներքո: Հայերի արտոնյալ վիճակը լիովին պաշտպանված էր հատկապես Նասրէդդին և Մոզաֆֆերէդդին շահերի ժամանակ: Նրանց հրամաններով էր, որ երկրի քաղաքների հայ բնակիչները ազատվել էին հարկ վճարելուց: Կատարելապես ազատ լինելով ազգային-մշակութային, կրոնական-եկեղեցական և տնտեսական ասպարեզներում, հայերն իրենց ազգային մարմինների ղեկավարությամբ մի տեսակ ներքին ինքնավարություն էին վայելում:

Ճիշտ է, խուլ անկյուններում (օրինակ՝ Ղարադաղում) կրոնական մոլեռանդության հետևանքով հայերը երբեմն-երբեմն ենթարկվում էին զանազան խաների կողոպուտներին ու ճնշումներին, բայց պարսից արքաները միշտ պատժում էին հարստահարիչներին, իսկ թեթև հակառակություններն ու թյուրիմացությունները հարթվում էին ազդեցիկ հայերի միջամտությամբ և տեղական կառավարիչների ձեռք առած ազդու միջոցներով:

Իրենց չնորհած ապահով կյանքի համար հայերը միշտ արտահայտում էին իրենց երախտագիտական զգացմունքները Ղաջարների արքայատոհմի նկատմամբ: Նույնիսկ Մահմեդ Ալի նոր շահը, որ ի ծնե բռնատիրական ուժգին հակումներ ուներ, Թավրիզում իր գահաժառանգության ժամանակ հովանավորություն և ամեն տեսակ պաշտպանություն էր ցույց տվել հայերին: Թեև սուլթան Աբդուլ Համիդն ամեն տեսակ սադրիչ միջոցների էր դիմում համոզելու և ստիպելու Մոզաֆֆերէդդին շահին և գահաժառանգ Մահմեդ Ալիին՝ Պարսկաստանում ևս հայերի կոտորած կազմակերպել, բայց հայրը և որդին երբեք տեղի չտվեցին նրա բանսարկու թելադրություններին, և հայերը Պարսկաստանում հալածանքի և ջարդի այդպես էլ չենթարկվեցին:

Ինչպես ամեն տեղ, պարսկահայոց համայնքը նույնպես երկատված էր սոցիալ-դասակարգային տեսակետից: Մի կողմում հայ առևտրականներն ու կալվածատերերն էին՝ բարեկեցիկ կյանքով, մյուս կողմում՝ քաղաքների ներքնախավերը, թուրք, քուրդ և պարսիկ խաների ու բեկերի, հայ գյուղատերերի ու

ագարակատերերի ճնշման տակ գտնվող գյուղացիական չարքաշ զանգվածները:

Հայոց թիվը Պարսկաստանում տատանվում էր 70-80 հազարի միջև: Հայերը ցրված էին երկրի գրեթե բոլոր նահանգներում, բայց նրանց հիմնական զանգվածները գտնվում էին Թավրիզ կենտրոնով Ատրպատականի նահանգում և Իսֆահան կենտրոնով նույնանուն նահանգում (Նոր Ջուղա): Այնուհետև, ըստ հայ բնակչության թվի, գալիս էին Թեհրանը, Ռեշտը (Գիլանի նահանգ), Ղազվինը, Շիրազը, Համադանը, իսկ մնացած տեղերում հայերի թիվը չնչին էր:

Թեև Թեհրանում հայերն ապրում էին ցրիվ, բայց նրանց համայնական կյանքը բավական լավ էր կազմակերպված: Նրանք խառն ապրում էին պարսիկ հարևանների հետ, վայելում նրանց հարգանքը և, ընդհանուր առմամբ, տագնապ չունեին իրենց ապագայի համար:

Պարսկաստանի հայկական համայնքների թվում ամենահինը և բազմամարդը Ատրպատականի, հատկապես նրա կենտրոն Թավրիզի հայկական համայնքն էր:

Թավրիզահայությունն ապրում էր ուրույն ազգային կյանքով՝ ուներ իր կազմակերպությունները, եկեղեցիները, վարժարանները, մամուլը:

1908 թ. Թավրիզում կար 600-ից[1] 700[2] հայ ընտանիք, որոնք, չնչին բացառություններով, ապրում էին երկու թաղում՝ Լիլավա (Լեյլաբաղ) և Ղալա (Բերդաթաղ):

Առաջինում ապրում էին գլխավորապես արհեստավորները և հասարակության խոնարհ խավերը, մինչդեռ երկրորդում՝ ունևոր դասը՝ մեծ մասամբ առևտրականներ: Ղալայում էին գտնվում նաև հայոց առաջնորդարանը, եկեղեցին և դպրոցը: Այդ թաղում էին օտար պետությունների հյուպատոսարանները[3]: Լիլավա թաղը դաշնակցականների քաղաքական ազդեցու-

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 201, թ. 13:

[2] Տե՛ս **Անդրէ Ամուրեան**, Յեղափոխական Եփրեմի ողիսականը, տպ. «Ալիք», Թեհրան, 1972, էջ 17:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 3 (325), մարտ, 1953, էջ 69:

թյան տակ էր, իսկ Ղալան՝ հնչակյանների: Այդ իսկ պատճառով մասնակի վեճերն ու ընդհարումներն անպակաս էին այդ երկու թաղերի միջև:

Պարսկահայ նշանավոր գործիչ, ՀՅԴ Թավրիզի կազմակերպության ղեկավարներից Հայրապետ Պանիրյանը նկատում էր, որ առհասարակ Ատրպատականում և մասնավորապես Թավրիզում հայությունը միշտ գտնվել է կոտորածի վտանգի տակ: Հարևան լինելով տեղի թուրքերին և անհարմարություններ ունենալով մի թաղից մյուսն անցնելու, հին ժամանակներից պատշաճ էր համարվել, որ երկու թաղերից ամեն մեկն ունենար իր առանձին եկեղեցին, օրիորդաց ու տղայոց դպրոցները, գրադարանը և թատերասրահը:

Հայերը ցրված էին Ատրպատականի համարյա ողջ տարածքի վրա: Թավրիզից դուրս նրանց ամենամեծ հատվածները կենտրոնացած էին Ուրմիայի, Սալմաստի և Ղարադաղի գավառներում:

Թավրիզից հետո նահանգի երկրորդ կարևոր քաղաքը Ուրմիան էր, որը գտնվում էր Ուրմիայի լճից հազիվ երեք ժամվա հեռավորության վրա: Նա ուներ մոտավորապես 30000 բնակիչ, մեծ մասով պարսիկ, հետո ասորի և հրեա: Հայերի թիվը քաղաքում չնչին էր՝ մոտ 70 տուն: Ուրմիայի գավառի բնակչության ընդհանուր թիվը 100–120 հազար էր: Գյուղերում ապրում էին պարսիկներ, թուրքեր, ասորիներ և հայեր. գյուղական բնակչության մեջ հրեաներ չկային: Բովանդակ հայության թիվն այդ գավառում 8000–ից 10000 էր, որոնց մեծ մասն զբաղված էր այգեգործությամբ և հողագործությամբ[1]:

Պարսկահայությունն ուներ մի քանի կազմակերպված, որակյալ **դպրոցներ**:

Թավրիզում կար երկու նշանավոր դպրոց: Դրանցից մեկը Ղալա հայկական թաղում գործող Արամյան դպրոցն էր, որը գտնվում էր հնչակյանների ազդեցության տակ: Դա Թավ-

---

[1] Տե՛ս **«Յուշեր Արմենակ Եկարեանի»**, էջ 131:

րիզում առաջին հայկական դպրոցն էր, որը հիմնվել էր 1850-ական թվականներին՝ Սահակ եպիսկոպոս Ալթունյանի առաջնորդության օրոք: Արամյան դպրոցն անգնահատելի վաստակ ունեցավ ոչ միայն քաղաքի, այլև Ատրպատականի հայության հոգևոր-մշակութային կյանքում: 70-ական թվականների սկզբին այս դպրոցում ուսուցչական պաշտոն էր վարել վիպասան Բաֆֆին և իր գործունեությամբ մեծապես նպաստել դպրոցի առաջադիմությանը:

Թավրիզի մյուս հայտնի դպրոցը գործում էր Լիլավա թաղում և վերահսկվում էր դաշնակցականների կողմից[1]: Դա Հայկազյան-Թամարյան երկդասյան դպրոցն էր, ուր բացառապես աշխատում էին Կովկասից եկած դաշնակցական ուսուցիչներ[*]: Այդտեղ հիմնականում ուսուցչական կադրեր էին պատրաստվում Ատրպատականի հայկական դպրոցների համար[2]:

Երկար տարիներ հնչակյան Արամյան և դաշնակցական Հայկազյան-Թամարյան դպրոցներն անառողջ մրցակցության մեջ էին, որից առաջ էին գալիս անախորժ երևույթներ: Հակառակորդ երկու կուսակցությունների ներկայացուցիչները, մտնելով հոգաբարձական և ուսուցչական կազմերի մեջ, հանդես էին բերում կուսակցական անհանդուրժողականություն և հակառակություններ:

Եթե Թավրիզում և Թեհրանում դպրոցական գործը համեմատաբար բարվոք էր, ապա գավառներում խղճուկ դրության մեջ էր:

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 2 (74), դեկտեմբեր, 1928, էջ 97-98:*

[*] *Մինչև 1909 թ. Ատրպատականում միջնակարգ ուսում էր տալիս Թավրիզի Լիլավա թաղի Հայկազյան-Թամարյան դպրոցը, որը տվել էր երեք սերունդ՝ Տիգրան Ռաչմաճյանի, Նիկոլ Սարգսյանի և Կարապետ Պիոնյանի տեսչության օրոք: 1909-ի աշնանը Թավրիզում հիմնվեց Հայոց Թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցը, որտեղ ուսուցչություն էին անում մի չարք հմուտ մանկավարժներ, ինչպես նաև տարբեր տեղերից եկած քաղաքական գործիչներ: Օրինակ՝ 1910 թ. սկսած այստեղ տեսուչի պաշտոնով աշխատում էր նշանավոր դաշնակցական Հոնան Դավթյանը, որն իր չվեյցարացի կնոջ՝ Յորդանսի հետ եկել էր Ժնևից և այդտեղ մնաց մինչև 1914 թվականը:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 52-54:*

Այսպես՝ միայն Սալմաստի գավառի երեք-չորս և նրանից հետո ամենահայաշատ Ուրմիա գավառի մեկ-երկու գյուղերում կային շատ թե քիչ տանելի դպրոցներ:

Ատրպատականի այս և մյուս գավառների գյուղական դպրոցների մեծ մասը գտնվում էր անբարեկարգ, տարրական հարմարություններից զուրկ շինություններում: Ամիսներով ռոճիկ չստանալու պատճառով ուսուցիչները ծանր թշվառության մեջ էին:

Իսկ նահանգի շատ տեղերում, որտեղ հայերը ցրիվ էին ապրում, նրանց զավակներն ընդհանրապես զրկված էին ազգային կրթություն և դաստիարակություն ստանալու հնարավորությունից:

Գյուղական հայ բնակչության հիմնական զանգվածը տգետ էր, թեև բնականից հանդարտաբարո էր և կենցաղով՝ ավանդապահ: Մեծ տոկոս էին կազմում թուրքախոսները:

Իրանական Քուրդիստանի կենտրոն Սոուջ-Բուլաղի չնչին թվով հայերը՝ 10–12 թուրքախոս ընտանիքներ, չարքաշ աշխատանքով հազիվ հայթայթում էին օրվա հացը: Այս փոքր համայնքն ուներ ընդամենը մի փոքրիկ ու հասարակ շինություն, որը ծառայում էր որպես եկեղեցի: Այդ շինության բակում թաղված էր Դաման անունով մի երիտասարդ գերմանացի միսիոներ, որն սպանվել էր քրդերի ձեռքով: Սրա ծնողները պարսիկ կառավարությունից 15.000 թուման արյան գին ստանալով, գումարը կտակել էին չվեյցարական մի միսիոներական ընկերության՝ այդ կողմերում քրդերի մեջ լուսավորություն տարածելու և քրիստոնեություն քարոզելու նպատակով: Բայց նշված գումարը՝ Սոուջ-Բուլաղում ընկնելով անվստահելի մարդկանց ձեռքը չէր ծառայել իր նպատակին: Դրանից հետո հայ, ասորի և այլ քրիստոնյա մանուկների համար այդտեղ դպրոց բացելու փորձ էր արվել: Այդ նպատակով կազմակերպվել էր հանգանակություն, հավաքվել էր մի փոքր գումար, որով հնարավոր չէր եղել դպրոց բացել[1]:

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1867, թթ. 16–19 և 19-ի շրջերեսը:*

Սոուջ-Բուլաղից չուրջ 20 կմ հեռավորության վրա գտնվող Դարաչամբ գյուղում և Սուլդուզ գավառում ցրված ապրում էին 130 հայ ընտանիքներ՝ հայությունից անջատված, լիովին Թուրքախոս, Թաղված տգիտության ու խավարի մեջ և ենթակա կալվածատերերի դաժան ճնշման: Այս պայմաններում խոսք չէր կարող լինել հայ մանուկների ազգային կրթության մասին: Ելնելով դրանից, Ատրպատականի հայոց Թեմական խորհուրդը հանդես էր եկել առաջարկով՝ դրամահավաք կազմակերպել և Ուրմիայի հայ կալվածատերերի հողերի վրա կառուցել մի նոր բնակավայր՝ համեստ չինություններով, եկեղեցիով ու դպրոցով, այնտեղ հավաքել ցիրուցան հայ ընտանիքները, Թուրքախոս հայ երեխաներին հայեցի կրթություն տալ, նրանց բերել իրենց ժողովրդի գիրկը:

Այդ ծրագրի մասին Ատրպատականի Թեմական առաջնորդը Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին հղած նամակներից մեկում գրում էր. «Ուրմի գալուց յետոյ մի քանի խոշոր կալուածատէրերի հետ խօսեցայ, որոնք խոստանում են աւելի ընդարձակ հողեր տրամադրելի դարձնել, քան պէտք կը լինի Սուլդուզի եւ Դարավանքի բոլոր հայ բնակիչներին տեղաւորելու համար, եւ որովհետեւ Ուրմիի շրջանում թէ՛ տնտեսական պայմանները շատ աւելի նպաստաւոր են, թէ՛ մօտ 1000 տուն հայերի վրայ այս նոր հայերի աւելանալով՝ միմեանց ոյժ կը տան, եւ աւելի դիւրին կը լինի հոգեւոր եւ կրթական գործը առաջ տանել նոցա մէջ ... »[1]:

Դա ապագայում լուծվելիք խնդիր էր, իսկ Թուրքախոս հայ երեխաները գնալով հեռանում էին իրենց ազգային ինքնությունից:

Թավրիզահայության մտավոր-մշակութային կյանքում նկատելի դերակատարություն ունեին **գրադարանները**: Դրանցից ամենահինը 1850-ական Թվականներին, Արամյան դպրոցի հետ բացված Արամյան գրադարանն էր՝ տեղավորված նույն դպրոցի շենքում: Ունենալով գրքերի հարուստ հավաքածու, գրադարանն

---

[1] ***«Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան»***, գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան (1866-1915), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Երեւան, 2006, էջ 178:

ամբողջ կես դար չարունակ մեծ գործ էր կատարել հայ գրքի քարոզչության ուղղությամբ: Մյուս՝ Խաչատուր Աբովյանի անվան գրադարանը գործում էր Լիլավայի Հայկազյան-Թամարյան դպրոցին կից: Այս գրադարանի գրքային ֆոնդը նույնպես պատկառելի էր, որը հատկապես արժեքավորված էր Սմբատ Շահազիզի նվիրած գրքերի հարուստ հավաքածուով: Երկու գրադարաններն ունեին նաև ընթերցասրահներ, որտեղ կազմակերպվում էին դասախոսություններ ու զրույցներ:*

Պարսկահայության առաջին **պարբերականները՝** «Աստղ Արեւելեան» և «Շաւիղ» թերթերը լույս են տեսել դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին մայրաքաղաք Թեհրանում՝ Կովկասից եկած մտավորականների նախաձեռնությամբ ու ջանքերով: «Շաւիղ» թերթի ղեկավարը եղել էր հայտնի գրող Վրթանես Փափազյանը, որ այն ժամանակ Թեհրան էր անցել ուսուցչական պաշտոնով: Այս թերթերը կարճ կյանք ունեցան և դադարեցին 1896 թվականին[1]:

Թավրիզում (և ամբողջ Ատրպատականում) հայերեն թերթ հրատարակելու առաջին փորձը կատարել է թեմի առաջնորդ Եղիշե վարդապետ Մուրադյանը: 1903 թ. աշնանը նա լույս էր ընծայել «Գործ» անունով թերթը, որը, սակայն, կարճատև կյանք էր ունեցել: Հաջորդ փորձն արվել էր երկու տարի հետո, երբ Ամերիկայից եկած և 1905 թ. Ատրպատականի թեմի առաջնորդական տեղապահ նշանակված Մաշտոց վարդապետ Փափազյանը հրատարակեց «Ազդարար» անունով թերթը, որը, սակայն, միապետական իշխանությունների հարուցած դժվարությունների պատճառով բավարարվում էր լոկ հայտարարություններ տպելով: 1906 թ. Ատրպատականի թեմից Մաշտոց վարդապետի հեռանալուց հետո դադարեց թերթի հրատարակումը: Նույն թվականին թեմի առաջնորդ նշանակվեց Թրքահայ Եղնիկ արքեպիսկոպոս Ապահունին, որի օրոք սկսեց տպագրվել

---

* 1909 թ. աշնանը նշված գրադարանները միավորվել էին և տեղավորվել նորաբաց Թեմական-Կենտրոնական դպրոցի շենքում՝ Միացյալ գրադարան-ընթերցարան անվանումով, որն իր գոյությունը չարունակեց մինչև 1914 թ. մեծ պատերազմի սկիզբը:

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 49:

Դաշնակցության «Բանուոր» թերթը: 1909 թ. օգոստոսի 15-ից պարբերականը լույս տեսավ «Առաւօտ» անունով՝ որպես ՀՅԴ Ատրպատականի պաշտոնական օրգան:*

Պարսկահայության շրջանում քիչ թե շատ մտավոր մթնոլորտի առկայությունը բավարար եղավ, որպեսզի նա ասպարեզ բերի գրական սերունդներ:

1909 թ. քննության առնելով ժամանակի հայ գրական ուղղությունները, Արշակ Զոպանյանն անդրադարձել էր նաև պարսկահայ գրականության վիճակին: Նա գրում էր. «Պարսկահայք տուած են ցարդ տաղանդաւոր անհատականութիւններ, բայց, իբր հասարակութիւն, գրականութիւն մը չեն կրցած արտադրել. իրենց տուած անհատականութիւնները – ինչպէս Ռաֆֆի, եւն. – զարգացած են Պարսկաստանէն դուրս, Թիֆլիս կամ այլուր: Ատոր պատճառը անշուշտ երկրին ընդհանուր յետամնաց կացութիւնն է եղած: Այժմ սահմանադրական բեժիմ մը հաստատուած է Պարսկաստանի մէջ: Տեւակա՞ն է այդ բեժիմը, ի՞նչ պիտի ըլլայ Պարսկաստանի ապագայ քաղաքական կացութիւնը, պիտի մնա՞յ միշտ անկախ, պիտի կրնա՞յ վճռականօրէն յառաջանալ քաղաքակրթութեան ճամբուն մէջ, ոչինչ կարելի է ըսել ստոյգ: Սա նկատելի է, որ նոյն իսկ նոր բեժիմին հաստատումէն ի վեր, գրական շարժումի մը բողբոջելուն առաջին նշաններն իսկ չենք տեսներ պարսկահայոց մէջ. ռուսահայ մամուլին տժգոյն արձագանգ եղող տկար փորձեր միայն: Մաղթելու է, որ նոր Ռաֆֆի մը երեւան գայ, որ մնայ իր ծննդավայրին մէջ, հզօր շարժում մը յառաջ բերէ, տաղանդներ արթնցնէ, հիմնէ պարսկահայ գրականութիւն մը որ իր յատուկ դրոշմն ու հրապոյրը ունենայ եւ ճոխացնէ մեր ընդհանուր գրականութիւնը»[1]:

---

* *«Առաւօտի» տպագրությունը չուտով դադարեցվեց, երբ ռուսաց պատժիչ բանակը 1909 թ.-ին մուտք գործեց Թավրիզ և սկսվեցին հետապնդումները: Հետագա երկու տարիներին քաղաքում լույս տեսան նոր պարբերականներ, այդ թվում՝ հնչակյանների «Զանգ» շաբաթաթերթը (Ալեքսան Տեր-Վարդանյանի խմբագրությամբ): Թեհրանում տպագրվում էր «Արշալոյս» երկշաբաթաթերթը:*

[1] ***«Անահիտ»**, № 11-12, մարտ-ապրիլ, 1909-1910, էջ 243:*

Պարսկաստանի հայությունը ազգային հողի վրա միավորող հիմնական ուժը ***եկեղեցին*** *էր, որն օժտված էր ինքնավարությամբ՝ ի դեմս Հայ եկեղեցու գոյություն ունեցող թեմերի:*

Ինքնավարություններն իրականացնում էին թեմական առաջնորդարանները, որոնք անմիջական սերտ կապերի մեջ էին տեղական իշխանությունների հետ:

Իրենց գործունեությունը խարսխած լինելով Հայ եկեղեցու հնագույն ավանդական կանոնների վրա, պարսկահայ թեմերն անմիջականորեն ենթարկվում էին ս. Էջմիածնին, որը նույնպես դարեր շարունակ գտնվել է պարսից տիրապետության տակ: Պարսկաստանի կազմում հայոց կաթողիկոսական աթոռանիստը վայելել է ընդարձակ իրավունքներ՝ անարգել իր գերիշխանության տակ պահելով նաև արտասահմանում, այդ թվում Պարսկաստանում գտնվող եկեղեցիներն ու թեմական առաջնորդարանները:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում պարսկահայ համայնքն ընդգրկված էր երկու թեմերի մեջ: Առաջինը Թավրիզի թեմն էր, որի գոյության սկիզբը գնում է դարերի խորքը՝ 12-րդ դարը[*]*: Երկրորդը 1605-1606 թթ. Արարատյան դաշտից ու այլ վայրերից տեղափոխված և Իսֆահանի մոտ հիմնավորված հայ բնակչության հոգևոր պահանջմունքները սպասարկելու նպատակով ստեղծված Նոր Ջուղայի թեմն էր, որի անունը հետագայում փոխվեց և կոչվեց Պարսկա-Հնդկաստանի, այնուհետև՝ Իրանա-Հնդկաստանի թեմ*[**]*:*

---

[*] *Մինչև 1833 թ. Հյուսիսային Իրանի թեմը կոչվում էր Ատրպատականի թեմ, որի կենտրոնը Մակուի ս. Թադեի վանքն էր: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միավորումից հետո թեմի կենտրոն ընտրվեց Թավրիզը և թեմը պաշտոնապես կոչվեց այդ քաղաքի անունով, թեև հաճախ շարունակվում էր օգտագործվել «Ատրպատականի թեմ» անվանումը:*

[**] *Նոր Ջուղայի թեմի անվան այդ փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ հետագայում՝ 18-19-րդ դարերում պարսկահայության մի մասը տեղափոխվել էր Հնդկաստան, իսկ այնտեղից՝ Հարավարևելյան Ասիա (Բիրմա, Մալայզիա, Սումատրա, Ֆիլիպիններ, Չինաստան ևն.) ու շարունակում էր իրեն զգալ հայ ազգային հավաքականության, առաջին հերթին՝ պարսկահայության մի մաս, ամուր կառչած մնալով իր ազգային-եկեղեցական ավանդույթներին:*

Մինչև 20-րդ դարի սկիզբը պարսկահայ թեմերը միանձնյա ղեկավարում էին թեմական առաջնորդները, բայց ռուսական առաջին հեղափոխության և պարսկական սահմանադրական շարժման ազդեցության տակ եկեղեցական կարգը նույնպես բարեշրջության ենթարկվեց ու մշակվեցին թեմական կանոնադրություններ, որոնցով թեմական առաջնորդների իշխանությունը մասամբ սահմանափակվեց:

Եկեղեցական այս նոր կանոնադրությունների համաձայն՝ պարսկահայ թեմերում ընտրվում էին պատգամավորներ՝ ***թեմական պատգամավորական ժողովների*** *համար: Այդ ժողովների կազմերն ընտրվում էին չորս տարին մեկ և պարբերաբար թարմացվում էին (rotatio): Օրինակ՝ Թավրիզի թեմի ներկայացուցչական (պատգամավորական) ժողովը կազմված էր 16 անդամից, որոնցից 8-ը գավառներից էին, 6-ը՝ Թավրիզից և 2-ը՝ եկեղեցու կողմից[1]: Թեմական պատգամավորական ժողովները թեմերում դարձան յուրատեսակ գերագույն* ***օրենսդիր մարմիններ****: Սրանք, իրենց հերթին, ընտրում էին* ***թեմական խորհուրդներ****, որոնք կազմված էին լինում աչխարհիկ անձերից և հանդես էին գալիս իբրև թեմերի* ***գերագույն գործադիր մարմիններ****: Օրինակ՝ Թավրիզի թեմի պատգամավորական ժողովի ընտրած թեմական խորհուրդը բաղկացած էր 7 անդամից[2], որոնցից մեկը թեմական առաջնորդն էր: Վերջինս նաև թեմական խորհրդի նախագահն էր, որն ընտրվում էր որոշակի ժամանակաշրջանի համար: Թեմական խորհրդում ընտրված նախագահին (թեմական առաջնորդին) հաստատում էր Ամենայն հայոց կաթողիկոսը: Թեմական իշխանությունը տեղերում (նահանգներում, գավառներում, քաղաքներում) ուներ իր գործակալ-ներկայացուցիչները՝ ի դեմս քահանաների:*

Պարսկաստանի պետությունը ճանաչում էր հայոց թեմական կանոնադրությունները և չէր խառնվում թեմական պատգամավորական ժողովների, թեմական խորհուրդների և թեմա-

---

[1] *Տե՛ս* ***«Պատմա-բանասիրական հանդես»****, № 3, 1972, էջ 172:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

կալ առաջնորդների ընտրություններին:

20-րդ դարի սկզբին խղճուկ ու անկերպարան վիճակում էր պարսկահայոց եկեղեցական գործը:

Եկեղեցիների մի մասը խնամքի և անհրաժեշտ դրամական միջոցների բացակայության պատճառով երկար ժամանակ չէր նորոգվել: Պարսկահայ բոլոր համայնքներում եկեղեցու սպասավորների մեծ կարիք կար: Օրինակ՝ նույն Ուրմիայի ամբողջ վիճակում հովվություն կատարում էին մի քանի հոգևորականներ միայն: Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին ուղղած նամակում Ատրպատականի թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը գրում էր. «Ամբողջ վիճակում (Ուրմիա գավառի:- Հ. Ս.) 6 քահանաներ կան միայն, մէկը զառամեալ, երկուսին իրենց բազմապիսի զեղծումների համար ստիպուեցայ քահանայագործութիւնից դադարեցնել եւ մնացած երեք խղճուկ, հազիւ գրագէտ հասակաւոր քահանաներից իւրաքանչիւրը պէտք է 7-8 գիւղերում ցրուած ժողովրդի հոգեւոր պէտքերը հոգայ»[1]:

Եկեղեցական գործն անմխիթար վիճակում էր նաև մյուս գյուղական համայնքներում: Շրջագայելով Ղարադաղում և ծանոթանալով գավառի հայության հոգևոր կյանքին, Իզմիրլյան կաթողիկոսին հղած մի ուրիշ նամակում անդրադառնալով գավառում հոգևոր մխիթարության և եկեղեցական բարեվայելչության տեսակետից այնտեղի հայության անմխիթար կացության, Կարապետ սրբազանը գրում էր.

«Ի միջի այլ կարիքների եւ պակասութիւնների աչքի է ընկնում գրեթէ ամէն տեղ եկեղեցական անօթների, զգեստուց եւ գրքերի մեծ պակասութիւն: Բաւական է յիշել, որ Ղարադաղի 29 հայաբնակ գիւղերից միայն Խանագեահ գիւղի եկեղեցին ճաշոց գիրք ունի. միւսներից շատերը չունեն նաև ո՛չ զգեստ, ո՛չ Ժամագիրք, ո՛չ իսկ մի խաչ կամ Աւետարան Տէրունական սեղանի վերայ. եկեղեցի կոչուող այդ կիսաւեր ողորմելի շէնքերը ըստ մեծի մասի մերկ են բոլորովին, եւ քահանաները, որոնցից

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1867, թ. 18:

իրաքանչիւրը 5-7-9 գիւղ է հովւում, ստիպուած են գիւղէ գիւղ տանել իրենց հետ ե՛ւ զգեստ, ե՛ւ եկեղեցական գրքեր, ե՛ւ սեղանի վարագոյր եւն.»[1]:

Այս պայմաններում, գնալով լայն ծավալներ էին ստանում այլադաւանութիւնը և ազգային այլասերումը, որոնց գլխաւոր (թերևս՝ միակ) պատճառը օտարի գրկում քաղաքական պաշտպանութիւն գտնելու հույսն էր:

Բացի Ուրմիայից, դաւանափոխությունը բավական հետևորդներ էր գտել նաև Սալմաստի ու Խոյի գաւառներում և սպառնում էր տարածվել նաև Ատրպատականի ուրիշ շրջաններում: Ինչպես Ատրպատականի հոգևոր իշխանությունը, այնպես եւ Մայր աթոռ սուրբ Էջմիածինը տագնապած էին գնալով ծավալներ առնող երևույթից: Նրանք պարսկահայ հոտին սպառնացող այլասերմանը հակադրվելու միակ միջոցը իրավացիորեն համարում էին քահանաների թվի ավելացումը նշված վիճակներում, մի բան, որ հեշտ իրագործվելիք խնդիր չէր:

Պարսկաստանում գործում էին հայկական ազգային-հեղափոխական երկու ***կուսակցությունների՝*** *Հնչակի և Դաշնակցության կազմակերպությունները:*

ՀՅ դաշնակցության կազմակերպական կառույցը Թավրիզում ուներ հետևյալ պատկերը. այստեղ էր գտնվում կուսակցության Ատրպատականի կազմակերպությունների ղեկավար մարմինը՝ ՀՅԴ Վրեժի կենտրոնական կոմիտեն, որի գործունեությունը տարածվում էր ողջ Պարսկաստանի վրա՝ երկրի հայաբնակ բոլոր կենտրոններով – Իսֆահանից մինչև Սալմաստ և Խորասանից մինչև Բուշեհր:

Բայց հաղորդակցության անհարմարությունները, քաղաքական և վարչական միմյանցից շատ տարբեր պայմանները վաղուց ի վեր Դաշնակցության ղեկավարությանը թելադրում էին Պարսկաստանում ունենալ երկու կենտրոնական կոմիտե՝ իրենց շրջաններով: Առաջարկվում էր մեկ կենտրոնական կոմիտե ունենալ միայն Ատրպատականի համար, երկրորդ կենտրոնական կոմիտեն՝ ամբողջ արևելյան և հարավային Պարսկաստանի

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 167, թ. 74 և շրջերեսը:*

համար, թեև ՀՅԴ Գիլանի կոմիտեն պահանջում էր այդ երկրորդ կենտրոնական կոմիտեն հիմնել Ռեշտում, այսինքն՝ միայն Գիլանի նահանգի համար*:

Հիշյալ հայկական ազգային հեղափոխական երկու կուսակցությունների գործիչները, ինչպես նաև նկատելի թվով պահպանողականներ ու ազատականներ Պարսկաստանում և հատկապես Թավրիզում ու Թեհրանում տանում էին քաղաքական, մշակութային, մանկավարժական եռանդուն աշխատանք:

Թավրիզի դաշնակցական գործիչներից էին Բագրատ Հովհաննիսյանը (Զինագործ Պետրոս), Ստեփան Ստեփանյանը (Բալաջան), Հայրապետ Պանիրյանը, Վահան Զաքարյանը, Հովսեփ Միրզայանը, Երվանդ Փափազյանը, Հովսեփ Հովհաննիսյանը, Նատալիա Սահակյանը, Հարություն Ստեփանյանը, Մարտիկ Ֆեներջյանը, Արմենակ Մկրտչյանը (Զալլո) և ուրիշներ:

Հնչակյաններից առավել հայտնի էին Ալեքսան Տեր-Վարդանյանը, Ռաֆայել Մովսիսյանը, Պետրոս Մելիք-Անդրիասյանը:

Թավրիզում կային մի քանի հայ սոցիալ-դեմոկրատներ՝ Ժնևում ուսանած Տիգրան Տեր-Հակոբյանը (Դերվիշ), փոստի պաշտոնյա Վռամ Փիլոսյանը, Ղալայի դպրոցի ուսուցիչ, ճեմարանական Սեդրակ Հովհաննիսյանը և այլոք[1]:

Աշխույժ գործում էին բազմաթիվ պահպանողական գործիչներ, որոնց թվում հատկապես աչքի էին ընկնում խոշոր վաճա-

---

* Ի վերջո, կուսակցության Վառնայում գումարած ընդհանուր ժողովը (1909 թ.) երկրորդ կենտրոնական կոմիտեի նստավայր որոշեց ոչ թե Գիլանը (Ռեշտը), այլ Թեհրանը, որը թե՛ իբրև քաղաքական կենտրոն և թե՛ իր աշխարհագրական դիրքով ավելի հարմար էր արևելյան Պարսկաստանի հայության համար: Այսպիսով, 1910 թ. սկսած ՀՅԴ-ն ուներ երկու կենտրոնական կոմիտե՝ Ատրպատականի (Վրեժի) և Թեհրանի (Շահաստանի): Վերջինիս գործունեությունը տարածվում էր հետևյալ վայրերի վրա. Թեհրան և շրջակայք (մոտ 650 հայ տուն), Ղազվին, Ռեշտ, Ղարադաղ, Սուլթանապատ, Համադան, Քիրմանշահ, Խորասան (իր մի շարք հայաբնակ գաղութներով), Շիրվան, Շահրուդ, Սարգեվար, Մեշհեդ, Բենդերգեչ, Մազանդարան (Բարթրուշ ու Մեշիտմեր շրջաններով), Իսֆահան, Նոր Ջուղա (մերձակա հայաբնակ գյուղերով):

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 45:

ական Զաքարիա Նազարբեկյանը («Մշակ» թերթի խմբագիրներից Համբարձում Առաքելյանի քրոջ ամուսինը) և Արշակ խան Գորոյանը):

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ: ՄԵՋԼԻՍԻ ՑՐՈՒՄԸ

Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ անգլո-ռուսական համաձայնությունից հետո Պարսկաստանն այլևս ունակ չէր ինքնուրույն քաղաքականություն վարելու: Անղեկ ու անառագաստ նավի պես նա միայն հուսահատական ցնցումներ էր անում՝ իբրև «անկախ» պետություն ապրելով հոգեվարքի վերջին օրերը:

1908 թ. երկրորդ կեսը և 1909 թ. առաջին կեսը, ամբողջ մեկ տարի, Պարսկաստանն ընկղմված էր քաղաքացիական արյունալի պատերազմի մեջ՝ իր բոլոր ահասարսուռ հետևանքներով:

Պարսկաստանի հասարակության ընդերքում տեղի ունեցող ալեկոծումները վաղ թե ուշ գնալու էին հանգուցալուծման: Շահ Մահմեդ Ալին և մեջլիսը, որպես ոխերիմ հակառակորդներ կանգնել էին դեմ-դիմաց՝ մեկը մյուսին զիջելու որևէ նշան ցույց չտալով: Բնական է, որ նման վիճակը չէր կարող երկար տևել: Մեկի հաղթանակը լինելու էր մյուսի պարտությունը: Փոխզիջումը բացառված էր:

1908 թ. մայիսի սկզբին, ընդամենը հինգ ամիս պաշտոնավարելուց հետո, նախարար-նախագահ Նիզամ Սալթանեն հրաժարական էր տվել: Նրան փոխարինել էր ֆինանսների նախարարը: Ներքին գործերի նախարար էր նշանակվել պալատի նախարար Սոլթան Ալի խանը, արդարադատության նախարար՝ Մուավին Դովլեն – բոլորն էլ հետևողական միապետականներ:

Նոր կառավարությունը նախկինի համեմատ շատ ավելի վճռական էր տրամադրված սահմանադրական ուժերի դեմ և ավելի հանդուրժող՝ երկիր մտած ռուսական զորքերի նկատմամբ:

Ռուսաց սահմանագլխի մոտ ընկած հողերը մոտ 8 վերստ տարածության վրա ռուսական պատժիչ զորամասերը հավա-

սարեցրել էին գետնին[1]: Եվ դա կատարվում էր պարսից նոր կառավարության համաձայնությամբ ու հավանությամբ:

Երբ մեջլիսում հարցապնդում էին արել, թե ինչո՞ւ կառավարությունը չի պահանջում երկիր մտած ռուսական զորքերի հեռացումը, էյն Դովլեն պատասխանել էր, թե «առաջինը մեր անիշխանական ցեղերն են խախտել ռուս-պարսկական սահմանը և մտել ռուսական Լենքորան, որի պատճառով է, որ ռուսները պատժիչ արշավախումբ են ուղարկել: Իրենց խնդիրը կատարելուց հետո արշավախմբի զորամասերը կհեռանան երկրից»[2]:

Անջումենների և շահի միջև հակասությունները գնալով ծայրահեղ սուր կերպարանք էին առնում: Ժամ առ ժամ սպասվում էր արյունահեղ ընդհարում շահին հավատարիմ մնացած զորքերի ու մեջլիսի զորաջոկատների միջև:

Ռուսական աջակողմյան մամուլը տագնապ էր հնչեցնում, որ եթե, Աստված մի՛ արասցե, Մահմեդ Ալի շահը տապալվի և երկրի իշխանությունն ամբողջովին անցնի մեջլիսին ու անջումեններին, ապա այնժամ չափազանց կվնասվեն Ռուսաստանի շահերը այդտեղ, ուստի Ստոլիպինի կառավարությանը կոչ էր անում դիվանագիտություն չխաղալ և ռազմական մեծ ուժեր նետել պաշտպանելու պարսից շահին, ցրելու մեջլիսը, ջախջախելու անջումենները, ինչպես դա արվեց ռուսական հեղափոխության ժամանակ, երբ կառավարական ուժերը ջարդուփշուր արեցին առաջացած սովետներին:

Ռուսական հետադիմական մամուլն անվերապահորեն պարսկական մեջլիսի, անջումենների և ընդհանրապես սահմանադրական շարժման հետևողական պաշտպան, հետևապես՝ Պարսկաստանում ռուսական շահերի դեմ գործող ուժ էր համարում տեղի հայությանը: Այդ մամուլի առաջատարն առաջվա պես «Новое Время» («Նովոյե Վրեմյա») թերթն էր, նրա գլխավոր սյունը՝ մոլի հայատյաց խմբագիր Լեոնարդ Մենչիկովը:

Թերթի 1908 թ. մայիսի 29-ի համարում Մենչիկովը տպագրել էր "Прикаспийская революция" («Մերձկասպյան հեղա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 97, 6 մայիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Վտակ»**, № 126, 13 հունիսի 1908 թ.:

փոխություն») վերտառությամբ հոդվածը, որտեղ խոսում էր Պարսկաստանի դեպքերի, այդտեղ ծավալվող խռովություն-ների, անջումենների գործունեության մասին, գտնելով, որ այդ ամենը լուրջ վտանգ են ներկայացնում Ռուսաստանի համար:

Իսկ ո՞վ է Պարսկաստանում խռովությունների համար մե-ղավորը, ո՞վ է այդ երկրում գնալով ահագնացող անարխիայի բուն պատճառը: Պատասխանը գտնված էր. դա հայն էր, հայ հեղափոխականը: Մենչիկովը գրում էր.

«Միջին Արևելքում բոլոր ապստամբությունների վարակիչ թույնը պետք է համարել հայերին կամ ավելի ճիշտ՝ այն եվրո-պականացված հայ մտավորականությանը, որը հրեաների պես թշնամությամբ բորբոքված է իրենց վրա տիրապետող ազգերի նկատմամբ, ովքեր որ լինեն նրանք: Հայերն ըստ կրոնի, անկաս-կած, քրիստոնյաներ են, իսկ ըստ արյան բաղադրության՝ սերո-հրեաներ: Իրենց եբրայեցի ցեղակիցների նման ցրված լինելով ամբողջ աշխարհում, հայերը, սակայն, հիմնականում բաժան-ված են երեք տերությունների միջև: Նրանք այժմ ապստամբել են դրանցից մեկում ... Ինչպես ամեն մի կիրք, ապստամբությու-նը նույնպես բարձրանում է առանց խիստ որոշակի նպատակ-ների: Անկախությունը ապստամբների ձևական պատրվակնե-րից մեկն է, ինչպես և սոցիալիզմն ու անարխիզմը: Նպատակ դնելով թոթափելու թուրքական լուծը և չհասնելով իրենց նպա-տակին, հայերն ընդդիմացան նախ ռուսական, իսկ այժմ նաև պարսկական իշխանությունների դեմ: Քաղաքական հեղափո-խությունը նրանք միշտ և ամեն տեղ խառնում են տնտեսական, սոցիալական, կրոնական և բարոյական հեղափոխություննե-րին»[1]:*

Մենչիկովը չեշտում էր, որ եթե Պարսկաստանում սահմա-նադրական շարժումը փոխվի հեղափոխության, ապա դրա մեջ մեղավորները դարձյալ լինելու են հայերը, քանի որ Եվրոպայում սնված շատ ազատամիտ պարսիկներ հայ-հրեական մամուլի հիպնոսի տակ են գտնվում. հայերն այդտեղ հրեաների հետ լրագրեր են հրատարակում, երկուսը գործում են միասին: Հոդ-

---

* *Հավանաբար նկատի ունի «Գորչ-հրեաներ»:*

[1] ***"Новое Время"**, 29 мая 1908 г.*

վածագրի միտքն այն էր, որ դա անելանելի վիճակ է ստեղծում Պարսկաստանի ժողովրդի համար, ուստի Ռուսաստանը պարտավոր է փրկության ձեռք մեկնելու բարեկամ երկրին[1]:

Պարսկաստանում և նրա շուրջն ստեղծված ահա՛ այս արտակարգ բարդ պայմաններում վճռվում էր մեջլիսի ճակատագիրը:

Շահն իր հետադիմական պլանների համար օգնություն գտավ ոչ միայն ռուսական կառավարության, այլև պարսիկ բնակչության որոշ տարրերի մոտ, որոնք ոչ վաղուց էին կանգնել ազատական շարժման կողքին: Այսպես, շատ խոշոր հողատերեր (մուլքադարներ) և բարձրաստիճան հոգևորականներ (մուջտեհիդներ) սատարում էին սահմանադրությանը, քանի դեռ դրանում տեսնում էին լոկ որպես երկիրը օտարերկրյա լծից փրկելու միջոց: Բայց երբ առաջին մեջլիսը քվե տվեց նոր հողային օրենքին, որը մեծ հարված էր մուլքադարների տնտեսական տիրապետությանը, և ձեռնամուխ եղավ Պարսկաստանի հին հարկային ու վարչական համակարգի հիմնական բարենորոգումին, երեկվա ազատական ձևացողներից շատերն անմիջապես իրենց զենքով և ունեցվածքով անցան շահի կողմը ու սահմանադրության դեմ պայքարում հաճույքով օգտվեցին արտաքին թշնամի ռուսական ցարիզմի օգնությունից:

«Ազատականները» և պալատականները շահին խորհուրդ էին տալիս 1) Արձակել մեջլիսը, կամ եթե նոր մեջլիս է հրավիրվելու, ապա 2) հրատարակել ընտրական նոր օրենք, որով մեջլիսում կրկնակի կրճատել Թեհրանի հեղափոխականացված բնակչության ներկայացուցիչների թիվը և, ընդհակառակը, նույնքան ավելացնել «հանգիստ» գավառների պատգամավորների թիվը, 3) պետության մայրաքաղաքը Թեհրանից փոխադրել Թավրիզ՝ ավելի մոտ ռուսական սահմանին, ուր շահի անձի ապահովությունն ավելի երաշխավորված կլիներ:

Այդ բարդ ու անորոշ իրադրության մեջ՝ պարսից գահի վրա բազմած երիտասարդ շահը չէր կարողանում ճչտել իր անելիքը:

---

[1] *Տե՛ս **"Новое Время"**, 29 мая 1908 г.*

Դա պատահական չէր, քանզի նա ընդամենը հոռի կրթություն էր ստացել և կարելի է ասել՝ անուս էր, չուներ քաղաքական ճկուն միտք, կամակոր էր, ոխերիմ ու անողոք: Հենց այդ պատճառով նրան անհրաժեշտ էին կիրթ ու բանիմաց խորհրդականներ, որոնք նրան խելամիտ խորհուրդներ տային: Բայց նրա շրջապատում այդպիսիք չկային. եղածները անարժան ու շահամոլ մարդիկ էին: «Բիւզանդիոն» օրաթերթը գրում էր. «Ճիշդ է, Մէհմէտ Ալի շահի մօտ խելքը գլուխը մէկը չկար, գտնուածները մէյմէկ կերպ վչտանալով հեռացեր էին իրմէ, իր մօտ կար Էմիր Բահադրը՝ ճենք կոչուած նորտես, միջակ կարողութեամբ մարդուկ մը, որ Շահին պահապան հրեշտակն ու խաղնատարն էր. ուրիշ մի քանի հացկատակները նշանակութիւն չունէին: Եպարքոս հաճի Նասիր-էլ-Սալթանէն որ Քեմբրիջի համալսարանն աւարտած խելօք ծանրակշիռ անձ էր, վչտացաւ եւ Եւրոպա քաշուեցաւ»[1]:*

1908 թ. մայիսի վերջերից հուզումները Թեհրանում վերստին սուր կերպարանք ստացան: Մահմեդ Ալի շահը որոշեց հետ վերցնել իր հոր՝ Մոզաֆֆերէդդինի՝ ժողովրդին տված սահմանադրական իրավունքները և վերահաստատել նախկին բռնապետական ռեժիմը:

Թերթերը գրում էին, թե Մահմեդ Ալի շահն իր ադամանդյա և թանկագին այլ զարդերն արդեն ուղարկել է Թիֆլիս, միաժամանակ հրամայել պատրաստություններ տեսնել, որպեսզի արքունիքը Թեհրանից քաշվի դեպի հյուսիս՝ ռուսական սահմանին մոտիկ: Մամուլը նաև հաղորդում էր, որ շահը բանակցում է սահմանամերձ տարածքների քրդական մի քանի ցեղերի առաջնորդների հետ, որոնք պատրաստակամություն են հայտնել համապատասխան վարձատրության դիմաց ապահովելու նրա անձի պաշտպանությունը:

Իսկ ժողովրդի մեջ լուրեր էին պտտվում, թե համոզված, որ չուտով գահընկեց է լինելու, շահը թաքնվել է Թեհրանի թաղերից մեկում, բայց որևէ մեկը չգիտե նրա թաքստոցի տեղը, ու-

---

* *Խաղնադար – գանձապահ*

[1] ***«Բիւզանդիոն»*** *(Կ. Պոլիս), № 3757, փետրվարի 3 (16), 1909 թ.;*

րիչները համոզված էին, որ նա լքել է մայրաքաղաքը և այժմ պատսպարված է մոտակայքում, բայց հաստատ վճռել է փախչել արտասահման ու արդեն նույնիսկ ճանապարհ է ընկել և այլն:

Իրականում՝ Մահմեդ Ալի շահը ոչ մի տեղ չէր գնացել, ավելին, որոշ փորձեր էր անում հանգստացնելու հակառակորդ գործիչներից մի քանիսին՝ նրանց որոշ զիջումներ անելով: Միաժամանակ, միապետականներն արագորեն ռազմական պատրաստություններ էին տեսնում:

Հունիսի սկզբներին իր մոտ կանչելով մեջլիսի նախագահին, շահը նրան ասել էր. «Իմ նախորդներն իրենց գահը նվաճել են զենքի ուժով և ես պարտավոր եմ սրով պաշտպանել դա: Եթե հարկ լինի՝ անձամբ կկանգնեմ ինձ հավատարիմ բրիգադի և ինձ նվիրված զորքերի գլուխ, կգնամ կռվի՝ հաղթելու կամ մեռնելու համար»[1]:*

Շահի հրամանով՝ բանակի հրամանատարական կազմը համալրվեց հավատարիմ բարձրաստիճան զինվորականներով: Հունիսի սկզբներին պարսից կազակային զորքերի հրամանատար գնդապետ Վ. Պ. Լյախովին շահը նշանակեց նաև Թեհրանի գեներալ-նահանգապետ՝ թեև վերջինս շարունակում էր մնալ կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարության ենթակայության տակ[2]:

Քնած չէին նաև ապաղասակարգայնացված խուլիգանական տարրերը, որոնք նույնպես զինվում էին, որպեսզի սահմանադրական և միապետական ուժերի ընդհարման դեպքում, օգտվելով առիթից, հարձակվեն ու կողոպտեն խաղաղ բնակիչների տներն ու խանութները:

Մեջլիսն սկզբում տատանումների մեջ էր, դեռ հույս ուներ, որ գուցե մի կերպ կխաղաղվի ալեկոծ կյանքի ծովը և վտանգի

---

* *Խոսքը պարսկական կազակային բրիգադի մասին էր:*

[1] ***Տե՛ս М. Павлович, С. Иранский,*** *Персия в борьбе за независимость, Москва, 1925, с. 49.*

[2] *Տե՛ս Ատրպետի հոդվածը Ալեքսանդրապոլի* ***«Ախուրեան»*** *թերթի 1908 թ. № 88-ում:*

չի ենթարկվի սահմանադրությունը: Բայց այն բանից հետո, երբ միապետականներն սկսեցին եռանդուն պատրաստություններ տեսնել, անջումենները նույնպես սկսեցին զինել իրենց կողմնակիցներին՝ սահմանադրությունն ու մեջլիսը պաշտպանելու համար: Իր հերթին, վերջինս շարունակում էր բանակցություններ վարել Մահմեդ Ալի շահի հետ: Հունիսի 1-ին մեջլիսը շահին էր ներկայացրել մի հիշատակագիր՝ երկիրը քաղաքական ճգնաժամից դուրս բերելիք միջոցառումների առաջարկով: Այնտեղ նշված էր, որ պետության կառավարիչները, նախարարները, նահանգապետերը՝ առանց բացառության, իսկ մյուս պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը անկիրթ, տգետ անհատներ են, որոնք մինչև վերջ զբաղված են զանազան պաշտոններ գնելով ու վաճառելով և որոնք ավելի շատ իրենց ստամոքսը պարարտացնելու ու գրպանները լցնելու մասին են մտածում, քան տերության բարեկարգության մասին: Հիշատակագրով մեջլիսը նաև պահանջում էր պետական պաշտոններից հեռացնել շահի ամենամոտ մարդկանցից մի քանիսին, որոնք կատաղի հակասահմանադրականներ էին: Ամենից առաջ խոսքը վերաբերում էր երկու անձանց, որոնք կարճ ժամանակամիջոցում մեծ հարստություններ էին դիզել խարդախ ճանապարհներով: Դրանք էին Էմիր Բահադուր խանը և շահի երեխաների ուսուցիչ, ռուսաստանցի հրեա Շապչալ խանը: Շահը խոստացավ, բայց չկատարեց խոստումը: Նրա խորհրդով, Բահադուր խանը ապաստանեց ռուսական դեսպանատանը: Մեջլիսը մի պատվիրակություն ուղարկեց միապետի մոտ և խնդրեց կատարել տված խոստումը, բայց նա ձերբակալեց պատվիրակներին՝ Ալաա Դովլեին, հեռագրի նախարար Սարդար Մանսուրին և Ջալալ Դովլեին, որը շահի հորեղբայր Զիլլի Սոլթանի որդին էր:

Այդ ձերբակալությունը ոտքի բարձրացրեց Թեհրանը: Երկու օր հետո մեջլիսի նախագահ Մոմթազ Դովլեի և մեջլիսի մի քանի անդամների ստորագրությամբ շահին է ուղարկվում մի նոր հիշատակագիր՝ մոտավորապես նույն պահանջով: Մահմեդ Ալին նախ մեջլիսն անվանում է «թույլ ու անգործունյա մարմին», որը ոտնատակ է տալիս միասին կերած ***նեմեք բիհերամը****, ապա*

---

* *Աղն ու հացը:*

վճռական պատասխանում է. «Առանց գործածելու սուրս մտադիր չեմ կորցնել այն, ինչ սրով ձեռք են բերել պապերս»[1]:

Թեև շահի այդ պատասխանից հետո մեջլիսն այլևս չէր հավատում, թե նա երբևիցէ անկեղծ երկխոսություն կսկսի իր հետ և դա կավարտի խաղաղությամբ, բայց գալիք անակնկալների պատասխանատվությունն իր վրա չընկնելու համար ամեն կերպ խուսափում էր կտրուկ գործողություններից:

Երկու կողմերի ընդհարման վտանգն զգացվում էր վաղուց, բայց նրանցից ամեն մեկը հետաձգում էր ընդհարման ճակատագրական պահը: Թե՛ այս, թե՛ այն կողմում չկային բարձր, անառարկելի հեղինակությամբ օժտված քաղաքական գործիչներ, որոնք կարողանային պետական ղեկը վերցնել իրենց ձեռքը և ժողովրդի մեջ իրենց նկատմամբ վստահություն ներշնչելով՝ հաշտեցման եզրեր գտնեին հին ու նոր ուժերի միջև, ստեղծեին համակեցության պայմաններ շահի ու մեջլիսի համար:

Թվում էր, թե դա, իրոք, հնարավոր է, բայց կարծես մի գաղտնի ձեռք եկավ քանդելու ամեն բան: Մի օր, երբ Մահմեդ Ալին դուրս էր եկել զբոսանքի, ահաբեկիչները, կարծելով թե նա պալատում է, գահաղահլիճ ռումբ են նետում, որին զոհ է գնում մի քանի ծառայող: Այդ դեպքը եկավ է՛լ ավելի լարելու շահի և մեջլիսի հարաբերությունները: Վերադառնալով պալատ, Մահմեդ Ալին դիմում է մեջլիսին և խստորեն պահանջում երևան հանել հանցավորներին, հակառակ դեպքում սպառնալով, որ կցրի մեջլիսը և ինքն անձամբ միջոցներ կձեռնարկի գտնելու նրանց: Քննություններից և մի շարք ձերբակալություններից հետո էլ հանցավորները չգտնվեցին, ուստի շահը տրամադրվեց պատժելու հենց ըմբոստ մեջլիսին[2]:

Այդ դեպքին զումարվեցին ուրիշ հանգամանքներ: Ատրպատականի սահմանադրականները շահի դեմ սկսել էին բացահայտ քարոզչություն՝ պահանջելով գահից հրաժարում: Ընդհանրապես Մահմեդ Ալիի գահընկեցության հարցը քննարկման նյութ էր դարձել ամենուր, իսկ գահի առաջին թեկնածու էր հա-

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 323, թ. 35:

[2] Նույն տեղում, թ. 9:

մարվում նրա հորեղբայր, Շիրազի նահանգապետ Զիլլի Սոլթանը, որն արտաքուստ իրեն ցույց էր տալիս սահմանադրական և գաղտնի հարաբերություններ ուներ ընդդիմության առաջնորդների հետ: Շահն այդ մասին գիտեր և հարմար առիթի էր սպասում պատժելու նրան: Գահակալի երկրորդ թեկնածու հասարակությունը համարում էր շահի ավագ որդի, պատանի գահաժառանգ Ահմեդ Միրզային, որին հայրը միշտ պահում էր իրենից անբաժան՝ վախենալով նրա նկատմամբ ոտնձգություններից[1]:

Մինչև 1908 թ. հունիսի սկիզբը շարունակվում էին մեջլիսի և կառավարության լարված հարաբերությունները, բայց օրվա հարցը սահմանագլխում տեղի ունեցող դեպքերն էին և մեջլիսի կողմից ընտրված կառավարության անընդունակությունը վճռական քայլերով կանգնեցնելու թուրքական զորքերի առաջխաղացումը:

Երկրի անապահով վիճակը, սահմանագլխում քրդերի ոտնձգությունները, մեջլիսի և կառավարության անվճռականությունը ժողովրդի մեջ մեծ հիասթափություն էին առաջ բերել: Անսկզբունք և խակ սահմանադրական գործիչները, փոխանակ լրջորեն զբաղվելու երկրի ցավերով, ամեն կերպ բարձրացնելու սահմանադրության վարկը, ընդհակառակը, անձնական շահի զոհ դարձան:

Եվրոպական թերթերը գրում էին, որ առանց անգլո-ռուսական, գուցե նաև գերմանական միջամտության, հազիվ թե կարելի լինի Պարսկաստանը հանգստացնել: Այդ կարծիքին թեհրանում հանգել էին հակառակորդ երկու կողմերը, որոնք միաժամանակ ենթադրում էին, որ շահի կողմը կկանգնի Ռուսաստանը, ինչպես մինչ այդ կանգնել էր, իսկ սահմանադրականների կողմը՝ Անգլիան:

Երկրում կուտակված քաղաքական խնդիրները լուծելու համար կար միայն մեկ միջոց՝ ուժը: Շահը որոշեց գործադրել բռնի ուժ՝ իր ժառանգական հնադարյան պահանջներն ու իրավունքները պաշտպանելու համար: Նա սերած էր թուրքմենական

---

[1] Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ը, վավ. 323, թ. 9:

վայրագ Ղաջար ցեղից, որը մի քանի սերունդ առաջ՝ 1784 թ. գրավել էր Պարսկաստանի գահը և կառավարում էր ավելի զարգացած ու քաղաքակիրթ պարսիկներին: Մահմեդ Ալի շահը ասպարեզ բերեց ուժն ու զենքը:

Զենքի ուժով մեջլիսը ցրելու և սահմանադրությունը վերացնելու ծրագիրը մշակել էին պարսկական կազակային բրիգադի հրամանատար գնդապետ Լյախովը, Թեհրանում Ռուսաստանի դեսպան Հարդվիգը և պարսից ամենահետադիմական գործիչներից Էմիր Բահադուր Ջենգը: Ծրագիրը կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարության հավանության էր արժանացել[1]:

Նախապես կազակային զորամասի հրամանատարին և իր մյուս հավատարիմ պաշտոնյաներին կարևոր հրահանգներ տալուց և կառավարական վստահելի զորքը մայրաքաղաք կանչելուց հետո Մահմեդ Ալին հեռանում է մայրաքաղաքից դուրս գտնվող Բաղեշահ կոչվող այգի, որը գրեթե մի ամուր բերդ էր[2]:

Այդ քայլը աշխույժ խոսակցությունների առիթ է տալիս. ոմանք ասում էին, թե շահը հեռացել է այլևս Թեհրան չվերադառնալու մտադրությամբ, իսկ ուրիշները նույնիսկ պնդում էին, թե նա Պարսկաստանից արդեն փախել է և գտնվում է Եվրոպայի ճանապարհին:

Բայց Մահմեդ Ալին իր հետագա քայլերը գիտեր:

1908 թ. հունիսի 11 (24)-ի (որոշ աղբյուրներում՝ հունիսի 10 (23)-ի) առավոտյան ժամը 5-ին գնդապետ Լյախովի պարսկական կազակների զորամասը, որի կազմում կային նաև 10 ռուս հրահանգիչներ, շրջապատում է Բահարիստան պալատը (մեջլիսի շենքը) և ոչ հեռու գտնվող Սիփահսալար մզկիթը[3]:

Զորամասի հրամանատարը պահանջում է իր ձեռքը տալ Մահմեդ Ալիի մատնացույց արած պատգամավորներին, որոնց նա կասկածում էր շահի դեմ կատարված մահափորձը կազմակերպած լինելու մեջ[4]: Մեջլիսը մերժում է պահանջը[5]: Կազակնե-

---

[1] *Տե՛ս* ***М. Павлович, С. Иранский,*** *Персия в борьбе за независимость, с. 49.*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 35:*

[3] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 6 (412), հունիս, 1960, էջ 75:*

[4] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 35:*

[5] *Տե՛ս* ***«Վտակ»****, № 125, 12 հունիսի 1908 թ.:*

ը սպառնում են զենքի դիմել, բայց առաջինը զենք գործածում են սահմանադրականները (որոշ աղբյուրների համաձայն՝ առաջինը կրակ են բացել կազակները):

«Մոզաֆֆարի» անջումենի ազգային միլիցիայի մարտիկների համազարկերից սպանվում է մի քանի կազակ[1]: Սկսվում է փոխադարձ հրացանաձգություն, որը տևում է առավոտյան ժ. 9-ից 10-ը[2]: Կազակները կորցնում են 25 մարդ, վիրավորվում են 3 բարձրաստիճան զինվորականներ և 20 զինվոր[3]: Դրան հետևում է կառավարության արագ արձագանքը. օգնության է գալիս մայրաքաղաքից դուրս բանակած զորքի թնդանոթախումբը՝ շտաբս-կապիտան Պերերինոսովի հրամանատարությամբ[4]: Մահմեդ Ալի շահի հրամանով սկսվում է մեջլիսի հրետակոծումը: Առաջին երկու կրակոցն անձամբ արձակել էր Պերերինոսովը: Միաժամանակ հրետակոծվում են Թեհրանի թաղային անջումենները: Կործանվում է մեջլիսի շենքը, քարուքանդ են լինում մի քանի մասնավոր տներ, այդ թվում Զիլլի Սոլթանի պալատը, որտեղ ապաստանել էին սահմանադրականները, Սիփահսալարի հռչակավոր մզկիթը, որտեղ ապաստանել էին Թավրիզի անջումենի պատգամավորները[5], և երկու այլ մզկիթներ, իսկ զորքը փողոցներում սկսում է կողոպտել ժողովրդին[6]:

Հունիսի 11 (23)-ի ժամը 12-ին մեջլիսի պաշտպանները պարտված էին:

Մեջլիսի ավերումից հետո դիմելով գնդապետ Լյախովին, շահն ասել էր. «Դուք փրկեցիք իմ գահը»[7]: Եվ դա պատահական չէր, քանզի Թեհրանի կազակային բրիգադն իր ֆինանսական ու քաղաքական վիճակով և արտոնյալ դրությամբ հանդիսանալով Պետերբուրգի կառավարության ձեռքում հիանալի զենք՝

---

[1] Տե՛ս **«Վտակ»**, № 126, 13 հունիսի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 128, 13 հունիսի 1908 թ.:

[4] Տե՛ս **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 49.

[5] Տե՛ս **«Ախուրեան»**, № 27, 12 ապրիլի 1909 թ.:

[6] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 323, թ. 37:

[7] Տե՛ս **М. Павлович, С. Иранский**, Персия в борьбе за независимость, с. 87.

Պարսկաստան ներթափանցելու համար, միաժամանակ երկրի բռնակալական ռեժիմի և շահի գահի միակ հուսալի հենարանն էր:

Միապետության ուխտադրուժ գործողություններով պարսկական ազատագրական շարժմանը ծանր հարված հասցվեց: Պաշտոնապես վերացավ Սահմանադրությունը (Մեշրութիե)[1]:

Շահ Մահմեդ Ալին դրության տերը դարձավ:

Մեջլիսի պատգամավորներից շատերն ընկան իրենց պարտականության ճանապարհին՝ պաշտպան կանգնելով ժողովրդի սրբազան իրավունքներին: Շահի զինվորների ձեռքն ընկած բազմաթիվ ժողովրդական ներկայացուցիչներ միջնադարյան տանջանքների ենթարկվելուց հետո հրացանաղարկ եղան կամ կախաղան հանվեցին: Պատգամավորների մի մասին հաջողվեց փրկություն գտնել օտար դեսպանատներում[2]: Հատկապես շատ էին անգլիական դեսպանությունում ապաստանածները:

Մահմեդ Ալի շահի հանդգնությունն այնտեղ հասավ, որ նա կարգադրեց բրիտանական դեսպանատան առջև հատուկ պահակներ կարգել՝ բեստ նստողների հոսանքը դեպի այնտեղ արգելելու համար: Դա առաջ բերեց բրիտանական կողմի խիստ բողոքն ու սպառնալիքը: Միայն դրանից հետո դեսպանատան առաջից պահակները հանվեցին: Դեսպանատանը բեստ նստածների մի մասը, նրանց թվում՝ հայտնի հեղափոխական գործիչ, դեմոկրատական կուսակցության ղեկավար Աղա Սեյիդ Հասան Թաղիզադեն և մի շարք թերթերի խմբագիրներ անգլիական հովանավորության տակ հեռացան Պարսկաստանի սահմաններից[3]:

Մեջլիսի ջախջախումը վերջնականապես հուսահատեցրեց այն միամիտ լավատեսներին, ովքեր ենթադրում էին, թե 1907 թ. անգլո-ռուսական մերձեցումը բարերար ազդեցություն կունենա

---

[1] Տե՛ս **«Լրաբեր»**, № 12, 13 հուլիսի 1908 թ.:

[2] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թթ. 36–37:

[3] Տե՛ս **Հայրապետ Պանիրեան,** Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, Թաւրիզ, 1917, էջ 34–35:

Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականության և, մասնավորապես, բազմաչարչար Պարսկաստանի ճակատագրի վրա:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը հայոց կաթողիկոսին հղած նամակում գրում էր, թե «Պարսկաստան ներքին քաոսի մատնուեցաւ, իսկ պարսկահայերի դրութիւնը առ հասարակ վտանգաւոր կացութիւն ստացաւ»[1]:

Ժողովրդական ըմբոստության կայծերը նախորդ տարիներին մոխրաթաղ անելով՝ երկրի միապետը որևէ էական արդյունքի չէր հասել: Այդ կայծերը բռնկվել էին, և փոխանակ դրանք մեղմելու դիվանագիտությամբ, համբերատար աշխատանքով, մեջլիսի հետ համաձայնություններով, ընդհակառակը, Մահմեդ Ալի շահը, նրա խորհրդականները, ընդհանրապես երկրի հետադիմությունն անդարմանելի ոճիր գործեցին՝ խոր վիհ բացելով գահի և ժողովրդի միջև: Եվ դա այն դեպքում, երբ արտաքին թշնամին՝ օսմանյան սուլթանն իր կամարիլիայի հետ Պարսկաստանի մի կողմից չիա, մյուս կողմից թուրքախոս ու քուրդ սուննի ազգաբնակչության միջև բորբոքելով ներքին կռիվներ, հետզհետե գրավում էր պարսկական հողերը, անդամահատում երկիրը, որն այդ դժվարին ժամանակում պետք ուներ զորահավաքի ենթարկելու իր բոլոր ուժերը՝ արտաքին թշնամուն երկրից վռնդելու համար:

Ռուսաց բոլոր առաջադիմական լրագրերը միաբերան վկայում էին ու հաստատում, որ Պարսկաստանի արյունալի դեպքերը և դրանցում ռուսների խաղացած դերը ճնշող տպավորություն են թողել Եվրոպայում և հատկապես Անգլիայում: Բրիտանացու զգացմունքներին խորապես հակառակ են այնպիսի գործողությունները, ինչպիսիք են խորհրդարանի ավերումը, պատգամավորների հալածանքն ու մահապատիժը, մարդկանց մասնավոր սեփականության ոչնչացումը,- գրում էր ռուսական մամուլը և հավելում, թե չատ ցավալի է, որ այդ ամենը կատար-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 13, թ. 11:*

վում է ռուս բարձրաստիճան զինվորականի հրամանատարության ներքո:

Օտար մեծ տերությունները չէին միջամտում դեպքերին, որովհետև Մահմեդ Ալին հայտարարել էր, որ ռմբակոծելով մեջլիսը, կառավարությունը նպատակ է ունեցել ոչ թե ոչնչացնել սահմանադրական կարգը, այլ պատգամավորների այն խմբին, որը ցանկանում էր գահընկեց անել երկրի օրինական իշխանությունը:

Ճիշտ է, որ ինքը՝ մեջլիսը նույնպես մի շարք սխալներ էր գործել, որոնցից գլխավորն այն էր, որ նա այնպես էլ չդարձավ իսկական օրենսդրական մարմին, չմշակեց պետության հիմնական օրենքները, երկրին չտվեց մնայուն օրենսդրություն, դրա փոխարեն զբաղվեց զանազան վարչական մանր-մունր գործերով, այս կամ այն նահանգապետի պաշտոնանկության և այս կամ այն պետական ծառայողին խիստ պատիժներ տալու հարցերով: Այլ խոսքով՝ մեջլիսը ձգտում էր վերածվել գործադիր իշխանության: Մյուս կողմից, նա և տեղական անջումեններն իրենց կազմի մեջ ընդգրկել էին նաև այնպիսի անձանց, որոնք աշխատում էին պղտոր ջրում ձուկ որսալ, հետապնդում էին իրենց անձնական շահը, կատարում էին զանազան կեղեքումներ ու հարստահարումներ: Դրա հետևանքով՝ հասարակ ժողովրդի մի խոշոր մասը, հատկապես գյուղացիական խոնարհ խավերը, որոնք սպասում էին իրենց դառն ու աղետալի վիճակի մի փոքր ամոքում, կյանքի բարեփոխում, մասամբ հիասթափվեցին մեջլիսի և անջումենների գործունեությունից:

Անշուշտ, մեջլիսի և անջումենների գործած այդ սխալները կարելի էր վերագրել նրանց անփորձությանը, որից ազատ չէ ամեն մի նոր հաստատություն: Բայց այդ սխալները չպետք է առիթ լինեին շահի համար ռմբակոծելու մեջլիսը, քանի որ նա իր ձեռքին ուներ օրինական միջոց՝ լուծարել խորհրդարանը և նոր ընտրություններ նշանակել:

1908 թ. հունիսի 11 (24)-ի հակահեղափոխական հեղաշրջումով վերջացավ սահմանադրական շարժման առաջին շրջանը և շարժումը թևակոխեց իր բարձրագույն՝ զինված ապստամբության փուլը:

ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՅՈՒՆԱԼԻ ԽՐԱԽՃԱՆՔԸ ՄԵՋԼԻՍԸ ՅՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ոգեշնչված շահի սանձազերծած արյունալի նախճիրով, միապետականները դիմեցին ասիական բարբարոսության ամենաբիրտ միջոցների՝ իրենց քաղաքական հակառակորդներից ազատվելու համար: Մայրաքաղաք Թեհրանում և ամբողջ Պարսկաստանում ռազմական դրություն հայտարարվեց: Մեջլիսը ցրելուց առաջ Թեհրանի գեներալ-նահանգապետ կարգված գնդապետ Լյախովը նշանակվեց նաև մայրաքաղաքի պարետ՝ ամենաընդարձակ լիազորություններով: Թեհրանն ամբողջովին կազակների ձեռքում էր, որոնք խմբերով շրջում էին քաղաքում, կալանավորում կասկածելի անձանց: Զնայած առևտուրը փաստորեն կանգ էր առել և գնորդներ չկային, նրանք առևտրականներին սպառնալիքների տակ ստիպում էին բաց պահել խանութներն ու կրպակները: Անլուր տանջանքների և մահապատժի ենթարկվեցին ընդդիմադիր դաշտի գրեթե բոլոր աչքի ընկնող ներկայացուցիչները, ինչպես նաև մի քանի նշանավոր անձինք (Մալիք Մուշիկալամին, Մանգիր խան և ուրիշներ), որոնք սահմանադրականներ չլինելով հանդերձ, գահի բացահայտ հակառակորդներ էին:

Այնուհետև շահն սկսեց իշխանական կառույցներում բացահայտ սահմանադրականների ու կասկածելիների «մաքրումը» և նրանց փոխարինումն իրեն հավատարիմ մարդկանցով: Մի շարք նախարարների աշխատանքից ազատելուց հետո նա պաշտոնից արձակեց, ապա հրամայեց բանտարկել նախարարների խորհրդի նախագահ Նասեր օլ Մոլքին[1]: Շահը հատուկ ուշադրություն էր դարձնում հատկապես նահանգապետների փոփոխություններին: Նրա հրամանով Շիրազի նահանգապետի պաշտոնից հեռացվեց Զիլլի Սոլթանը, իսկ Թեհրանում ձերբակալվածների թվում էր նրա որդին՝ Ջալալ Դովլեն: Ատրպատականում նահանգապետ նշանակվեց ծայրահեղ հետադիմական հայացքներ

---

[1] Տե՛ս **«Անկախ մամուլ»**, № 6, 7 դեկտեմբերի 1908 թ.:

ունեցող էյն Դովլեն, իսկ Գիլանի նահանգապետ՝ նույնքան հետադիմական Սարդար Աֆխամը[1]:

Փակվեցին բոլոր առաջադիմական լրագրերը, խմբագրություններն ավերվեցին: Բանտեր նետվեցին ազատամիտ թերթերի 10-ի չափ խմբագիրներ[2]: Թերթերի նույնքան հրատարակիչներ հասցրին ապաստան գտնել բրիտանական դեսպանությունում[3], բայց դրանից հետո այդ դեսպանության շենքը շրջապատվեց շահի պահակախմբի կազակներով, որոնք աչալուրջ հսկում էին, որպեսզի այլևս ոչ մի «հանցագործ» չկարողանա մտնել այնտեղ, իսկ համառողները գնդակահարվում էին տեղում: Նույն բախտին էին արժանանում անօրինական զենք կրողները կամ նրանք, ովքեր չարտոնված գաղտնի ժողովների էին մասնակցում:

Շահի անակնկալ հաջողությունը սարսափ էր տարածել ոչ միայն Թեհրանում, այլև երկրով մեկ: Եթե մեկ-երկու օր առաջ Պարսկաստանի բոլոր կողմերից սպառնալիքներ էին հնչում միապետի հասցեին, ապա այժմ հպատակության ուղերձներ էին թափվում մայրաքաղաք:

Թեհրանում խաղաղություն էր, բացվել էր բազարը, արտաքուստ չարունակվում էր սովորական կյանքը: Մյուս նահանգներում աչքի ընկնող դեպքեր գրեթե տեղի չէին ունենում, սակայն հասարակ ժողովուրդը վախից ինքնաբերաբար հեռանում էր անջումեններից[4]:

Շահի պալատում անդադար տեղի էին ունենում նախարարների, մոլլաների և հասարակական գործիչների խորհրդակցություններ, որոնցում քննվում էին երկրում «հասարակական կարգը վերականգնելու» միջոցների հարցերը:

Մեջլիսն ավերելուց հետո շահը հայտարարություն տարածեց, թե 1908 թ. սեպտեմբերին տեղի կունենան մեջլիսի նոր

---

[1] Տե՛ս **Հայրապետ Պանիրեան,** Յեղափոխական շարժումները Պարսկաստանում, էջ 36:

[2] Տե՛ս **«Լրաբեր»**, № 10, 29 Հունիսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 128, 13 Հունիսի 1908 թ.:

[4] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 37:

ընտրություններ: Նա գտնում էր, որ երկրի կառավարման գործում մեծապես պետք է սահմանափակել ժողովրդի իրավունքները, և հույս էր հայտնում, որ «նոր պատգամավորներն ավելի լավ կլինեն, քան հներն էին»: Միաժամանակ միապետն իրեն մերձավոր մարդկանց հավաստիացնում էր, թե ինքը ոչ մի բանի առջև կանգ չի առնելու՝ առաջիկայում նույնպես ամեն մի անկարգություն ճնշելու համար:

Շահի նախագահությամբ տեղի ունեցած զինվորական խորհրդի նիստի ընդունած որոշման համաձայն՝ Թեհրանի համալրված ու սպառազինված բազմաքանակ զորամասը տեղափոխվեց քաղաքամերձ Կազրիկազեր, որտեղ գնաց նաև միապետը՝ մայրաքաղաքը հանձնելով կազակային բրիգադի պաշտպանությանը: Միապետը Թեհրանից հեռանում էր, որպեսզի լրացուցիչ ուժեր հավաքի գավառներում և պատրաստ լինի ոչնչացնելու «սպասվելիք անկարգությունները»[1]:

Հունիսի 13-ին Մահմեդ Ալի շահը Կազրիկազերում ընդունեց մայրաքաղաքի պատվավոր քաղաքացիների և խորհրդարանի մի քանի անվնաս մնացած անդամների պատվիրակությանը և հայտնեց, որ ինքը կարող է ներում շնորհել բոլոր մեղավորներին, մինչև անգամ անջումենականներին, եթե հակակառավարական գործողությունները դադարեցվեն: Ցավ հայտնելով ստեղծված անիշխանական դրության և դրան ի պատասխան իշխանությունների կիրառած հակաքայլերի առիթով, նա միաժամանակ չեչտում էր, որ ինքը պարտավոր է պատժել ազգի և թագի թշնամիներին, երկիրը հանել այն վիհից, որի մեջ նրան գցել են սահմանադրականները: Միապետն ամեն առիթով ընդգծում էր, որ սահմանադրություն ունենալու համար երկիրը դեռ չի հասունացել[2]:

Այդ օրերին Մահմեդ Ալի շահը ոչ թե ներքին գործերի, այլ արտաքին գործերի նախարար Էմիր Բահադուրին էր տվել «երկիրը խաղաղեցնելու» արտակարգ լիազորություններ: Հենց սկզբից սա հայտարարեց, թե այլևս նոր մեջլիսի ընտրություններ չեն լինելու, իսկ ներկա մեջլիսի գումարումը անորոշ ժամա-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 137, 25 հունիսի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

նակով հետաձգվում է, քանի որ նրա անդամների մի մասը սպանված է, մյուս մասը գտնվում է բանտում, փախուստի մեջ է կամ՝ թաքնված: Նա մշակում էր պետական հեղաշրջում կատարելու ծրագիր, որի իրագործմամբ պետք է վերացվեր սահմանադրությունը և երկրում վերականգնվեր կառավարման բռնապետական ձևը:

Շահի շրջապատի չափավոր տարրերը նրան համոզում էին չհավատալ «դիկտատոր» Բահադուրին, որի խորհրդով ծավալվելիք լայնածավալ նոր բռնարարքները կարող են կորստաբեր լինել երկրի համար:

Հակառակ այդ բոլոր նախազգուշացումներին, Բահադուրի կողմնակիցներն չտապում էին նոր օրենքներ մշակել և հաստատել այնպիսի դատական համակարգ, որոնք հնարավորություն կտային ամրապնդելու ինքնակալությունը:

Պետերբուրգն ուշի-ուշով հետևում էր դեպքերի զարգացմանը և Մահմեդ Ալի շահին ոգեշնչում էր նրան օգնելու պատրաստակամությամբ: Միապետականներին օգնելու համար 1908 թ. հունիսի 14-ին Էնզելի մտավ ռուսական «Կրասնովոդսկ» ռազմանավը, որի տախտակամածին զինվորների հետ կար մեծ ու փոքր տրամաչափի 10 թնդանոթ: Մի ուրիշ ռազմանավ՝ «Գեոք Թեփեն», տախտակամածին ունենալով զինվորական մի ջոկատ, նույն օրը մտավ Աշուրադեհի նավահանգիստ: Էնզելի իջած ռուս նավաստիներն ու զինվորները հունիսի 15-ին ցրեցին տեղի անջումենը: Նույն բանը կատարեցին Աշուրադեհ իջած նավաստիները տեղի անջումենի հետ[1]:

Դեպքերը Մահմեդ Ալի շահի դիրքերից լուսաբանելու համար Եվրոպա ուղարկվեց նրա համհարզ Համի Սալթանեն: Նա նախ եղավ Բուխարեստում, ապա մեկնեց Վիեննա, հետագա ամիսներին նույն առաքելությամբ եղավ եվրոպական ուրիշ քաղաքներում: Շահի համհարզի «լուսաբանությունները», ինչպես և սպասելի էին, շատ կողմնակալ էին: Արտահայտելով միապետի անձնական տեսակետները, նա ամեն բանում մեղադրում էր ժողովրդին ու անջումեններին:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 136, 21 հունիսի 1908 թ.:*

ՀԱԿԱՇԱՀԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Մահմեդ Ալի շահի անսպասելի և վճռական քայլերը մի պահ շշմեցրել էին ժողովրդի մարտիկներին, բայց, շատ չանցած, սահմանադրական հեղափոխական խմբերը, զանազան տեղերում դիրքեր բռնելով, սկսեցին գնդակների տարափ տեղալ փողոցներում երթևեկող զինված պարեկների վրա: Եղան սպանվածներ ու վիրավորներ այս անգամ կառավարության պաշտպաններից: Քաղաքի պատերի վրա շահի կողմնակիցների կոչերի կողքին սահմանադրականները դնում էին իրենց կոչերը, որոնցով ժողովրդին հորդորում էին զենքով պաշտպան կանգնել ձեռք բերած իրավունքներին:

Կառավարության գործ դրած հալածանքներին և գաղանություններին ի պատասխան, Թեհրանի զանազան մասերում սկսվեցին ռումբերի պայթյուններ լսվել: Այդ դեպքերն անմիջապես արձագանք գտան մի շարք գավառներում, և ժողովուրդը հուզվեց շահի դավադիր վարմունքից: Տեղի ունեցան ըմբոստության առաջին ցույցերը: Գավառներում հուզված բնակչության զգալի զանգվածներ մնում էին սահմանադրականների կողմում, որպիսի հանգամանքը տեղի անջումեններին հնարավորություն էր տալիս կամավորների խմբեր ստեղծել՝ միապետական ուժերին հակահարված տալու համար[1]:

Մարդիկ ըմբոստանում, ոտքի էին կանգնում մի վատթար ու պայմանազանց իշխանության դեմ, որ մի կողմից խոստացել, երդվել էր պահպանել սահմանադրությունը, ազատություն տալ դարերով ստրկացված, հարստահարված ժողովրդին, նրան ազատել խաների, բեկերի, ֆարրաշների ճնշումից, մյուս կողմից թնդանոթներ, զորք ու կազակներ էր հանել այդ նույն ժողովրդի դեմ, հենց որ սա հիշեցրել էր տրված խոստումների մասին:

Ավերված մեջլիսից փրկված պատգամավորների զգալի մասը և սահմանադրական շարժման նշանավոր գործիչներից ոմանք գաղթեցին Կոստանդնուպոլիս և Կովկաս: Կոստանդնու-

---

[1] *Տե՛ս* ***«Լրաբեր»****, № 10, 29 հունիսի 1908 թ.:*

պոլսում ստեղծվեց պարսկական հեղափոխական կենտրոնական կոմիտե, որն ուշադիր հետևում էր Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձություններին[1]: Նրա անդամները մղում էին լայն քարոզչություն՝ չեզոքացնելու համար մեջլիսի ջախջախումն արդարացնելուն ուղղված միապետականների ջանքերը:

Թուրքիա անցած պարսից հեղափոխականներից մեկը՝ Սեյիդ Հասան Թաղիզադեն այցելել էր Կ. Պոլսում հրատարակվող Դաշնակցության «Ազդակ» թերթի խմբագրություն և պատմել Թեհրանում տեղի ունեցածի մասին: Նա ասում էր, որ պարսից հեղափոխականները նպատակ էին դրել իրենց երկրի անմեղ ժողովրդին ազատել «բռնաւոր միապետներուն գիշատիչ ճանկերէն ... Կրնանք ըսել, թէ պարսիկները վաղուց սկսած են դէպի այդ փրկութեան, երջանկութեան ճանապարհն ընթանալ»: Ժողովրդի ատելությունն ու զայրույթը «կ'աւետէին մեզի ազատութեան այն հուրը որ ապագային պիտի բոցավառէր մեր հայրենիքին մէջ, բայց չէինք յուսար թէ ա'յսքան շուտով երեւան պիտի գար այն»[2]: Պարսիկ զրուցակիցը հավաստում էր, որ շահի տարած հաղթանակը ժամանակավոր է, քանի որ իր ժողովրդի մեծ զանգվածներ այժմ (ռուսաց:- Հ. Ս.) «սօցիալ-ռէվոլիւսիոնէռ»ներու ծրագրին կը հետեւին, այսուհետեւ ալ առ հասարակ մեր նպատակը միայն Մուհամմէտ Ալի շահին հարստահարութիւններէն և բռնակալութենէն ազատիլ չէ, այլ թերեւս բոլոր Մուհամմէտ Ալի շահերու հարստահարութիւններէն եւ բռնակալութենէն ազատիլ է – այն շահերուն, որոնք աղա, հողատէր, եւ այլն անուններով դարերէ ի վեր պարսիկ գիւղացիներու, ստրուկներու եւ աղքատներու իրենց ճակտին քրտինքովը շահած դրամը յափշտակելով հարստութեան եւ փառքի տիրացած են, հազարաւոր ընտանիքներ կործանած, հազարաւոր տուներ այրած են եւ միայն իրենց ընտանիքներուն հետ չքեղ պալատներու մէջ փառաւոր կեանք մը վարած»[3]: Անսասան

---

[1] ***Տե՛ս В. Труа,*** *Кавказские социал-демократы в Персидской революции, Париж, 1910, с. 112.*

[2] ***«Ազդակ»****, № 2, 22 դեկտեմբերի 1908 թ. (4 հունվարի 1909 թ.):*

[3] *Նույն տեղում:*

հավատ ունենալով, որ հեղափոխական շարժումը կես ճանապարհին կանգ չի առնելու, Սեյիդ Թաղիզադեն շարունակել էր, թե շահը կարծում է, որ հարստահարութիւններ ի գործ դնելով «ատով յաղթանակ պիտի ելլէ... բայց չի խորհիր թէ մենք քանի՛ բռնութիւն եւ հարստահարութիւն տեսնենք մեր դէմը, մեր հաստատակամութիւնն ու արիութիւնը նոյնքա՞ն կ՚աւելնան: Պարսիկներուն համար սահմանադրութեան եւ ազատութեան ըմբռնումը՝ տենչ մը, կամեցողութիւն մը եղած է: Այսուհետեւ բռնակալի մը վարչութեան ներքեւ չպիտի ապրին անոնք եւ չպիտի կարենան ապրիլ»[1]:

Ինչ վերաբերում է ցրված մեջլիսի՝ Թեհրանում մնացած և ընդհատակ անցած պատգամավորներին, նրանք նույնպես վճռական էին տրամադրված: Արյունալի դեպքից արդեն երեք օր անց, չճանաչելով խորհրդարանն արձակելու մասին շահի հրովարտակը, նրանք հավաքվեցին մասնավոր մի տան մեջ և մեջլիսի արտակարգ նիստ գումարեցին: Հանգամանորեն քննելով երկրում ստեղծված վիճակը, նրանք խիստ որակումներ տվեցին շահի գործողություններին: Միաձայն որոշում ընդունվեց շահից պահանջել մեկ շաբաթվա ընթացքում պատասխան տալ 1908 թ. հունիսի 3-ին մեջլիսի ներկայացրած հիշատակագրին, իսկ եթե ոչ, ապա իրենք կցրվեն գավառներով մեկ և այնտեղի անջումենների աջակցությամբ կոիվ կմղեն նրան տապալելու համար: Դա նշանակում էր, որ տվյալ պահին մեջլիսի պայքարը բացառապես ուղղվելու էր շահի անձի դեմ[2]:

Մեջլիսի ինքնավերականգնումը ցույց էր տալիս, որ շահը և ժողովուրդը չեն հաշտվելու: Տարիներով կուտակված ատելությունն այնպիսի մեծ վիհ էր բացել նրանց միջև, որ հաշտեցումն այլևս անհնարին էր խաղաղ միջոցներով:

Թերթերը գրում էին, որ ավելի խելացի կլիներ, եթե շահը գահից հրաժարեր կամովին, քանի որ այդպիսով հնարավոր կլիներ ալեկոծ փոթորիկներից մի քիչ հանդարտեցնել երկիրը:

---

[1] ***«Ազդակ»**, № 2, 22 դեկտեմբերի 1908 թ. (4 հունվարի 1909 թ.):*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 128, 13 հունիսի 1908 թ.:*

Ինչ խոսք, նման մոտեցումը սխալ էր, քանզի շարժումն ուղղված չէր միայն շահի անձի դեմ, այլ ուներ խորքային լուրջ պատճառներ:

Պարսկաստանում արմատական հեղափոխության նախապայմանները եթե ոչ ամբողջովին, գոնե մասամբ հասունացել էին ապստամբության համար: Ռուսական հեղափոխությունը զորեղ ու տևական ազդեցություն էր թողել ընթացող պարսկական շարժման վրա: Նրա օրինակն ակնառու ցույց էր տալիս, որ Ռուսաստանում սանձազերծված ստոլիպինյան հետադիմությունը հենց ցարական միապետության թուլացման արտահայտություն է: Չնայած դրան, ուշքի եկող ցարիզմը Պարսկաստանում սահմանադրական շարժումը խեղդելու գործում շարունակում էր մնալ Մահմեդ Ալի շահի եռանդուն աջակիցը[1]: Ավելի խոհուն ու հեռատես պարսիկ գործիչները համոզված էին, որ առանց սահմանադրական Ռուսաստանի ավելորդ է խոսել Պարսկաստանում սահմանադրական կարգերի հաստատման մասին, բայց նաև խորհում էին, որ երկիրը տվյալ պահին ուրիշ ճանապարհ չունի առաջ գնալու առանց շարժման հետագա խորացման, պայքարի ավելի բարձր աստիճանի՝ ապստամբության:

Հենց սկզբից հակաշահական հուզումների գլխավոր օջախներ դարձան Ատրպատականը և Բախտիարիան: Ռազմատենչ ու մեծաքանակ բախտիար ցեղը բաժանվել էր երկու մասի. մեծամասնությունը Սամսամ Սալթանեի գլխավորությամբ շահի երդվյալ հակառակորդն էր, մյուս մասը՝ նրա ջերմ պաշտպանը, նրա երկրպագուն:

Ավելի միակամ էին հյուսիսային և հյուսիսարևմտյան Պարսկաստանի հակամիապետական ուժերը, որոնք դարձան շահի և նրա կառավարության հիմնական «գլխացավանքը»: Թուրքալեզու Ատրպատականն էր հատկապես, որ հանձն առավ պարսկական հեղափոխության առաջատարի դերը: Հեղափոխական շարժման կենտրոնն արագորեն տեղափոխվում էր նահանգի կենտրոն Թավրիզ:

---

[1] *Տե՛ս* ***«Շեփոր»*** *(Բաքու), № 4, 31 օգոստոսի 1908 թ.:*

Իսկ որո՞նք էին Թավրիզի՝ հեղափոխության կենտրոն դառնալու պատճառները: Դրանք տարբեր էին, որոնցից առանձնանում էին երկուսը:

1) Մեջլիսի ջախջախումից հետո սահմանադրական ուժերը Թեհրանից հիմնականում քաշվեցին երկրի այդ մասերը, գլխավորապես Ատրպատականի և Գիլանի նահանգները՝ իրենց հետ տանելով ատելություն միապետական կարգերի նկատմամբ, շահից վրեժխնդիր լինելու և նրա իշխանությունը տապալելու վճռականություն: Պատահական չէր, որ հենց այդ վայրերում նրանց հաջողվեց ոտքի հանել հետամնաց ու թմրած ժողովրդին:

2) Պարսկաստանի հյուսիսի և հյուսիս-արևմուտքի բնակչությունը, առանձին բացառություններով, թուրքալեզու էր: Որևէ մեկի համար գաղտնիք չէր, որ Թուրքիան վաղուց ձգտում էր տեր դառնալ Պարսկաստանի այդ տարածքներին, մյուս կողմից՝ դրանց թուրք բնակիչները երազում էին միանալ «մայր հայրենիքին»: Սրանց ոգեշնչում էր այն, որ Պարսկաստան մտած թուրք զավթիչները, օգտվելով Ատրպատականում և հատկապես նրա կենտրոն Թավրիզում ստեղծված խառը վիճակից, առանց որևէ դիմադրության հանդիպելու, շարունակում էին դանդաղորեն առաջանալ նահանգի տարածքով:

Այդ օրերին Թուրքիայում կատարված հեղափոխական անցքերի և երիտթուրքերի՝ իշխանությունը վերցնելու մասին ստացված լուրերը ցնցող տպավորություն էին թողել: Երիտթուրքական կառավարությունն արդեն հայտարարել էր իր պաշտոնական տեսակետը, թե անվերապահորեն պաշտպանում է Մահմեդ Ալի շահի դեմ ուղղված հեղափոխությունը: Ընդ որում, երիտթուրքերն օգտագործում էին շահից և նրա քաղաքականությունից դժգոհ և Թուրքիայում ապաստանած պարսիկ գործիչների հայտարարություններն ու աջակցում նրանց գործնական քայլերին: Օրինակ՝ շահի կրտսեր եղբայրը, որ մեջլիսը ցրելուց հետո փախել էր Կ. Պոլիս, այնտեղից նրան ուղարկել էր մի հեռագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Ինձ բախտավոր եմ համարում, որ թուրքահպատակ եմ, այլ ոչ թե ուզուրպատորի (հափշտա-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 178, 15 օգոստոսի 1908 թ.:*

կիչ:- Հ. Ս.) ու բռնակալի հպատակ»[1]:

Կույրը միայն կարող էր չտեսնել, թե Թեհրանի դեպքերն ինչ-պիսի բուռն ոգևորություն էին առաջացրել Ատրպատականի ողջ թուրք բնակչության շրջանում: Դրանց նույնքան բուռն արձագանքում էր նաև քրդերի մեծ մասը: Սահմանադրական շարժումը, որն սկզբից ի վեր զուտ սոցիալական բնույթ ուներ և ընդգրկում էր երկրի ողջ իսլամ բնակչությունն՝ առանց ազգային և ցեղային խտրականության, այժմ, երբ այդ շարժումը աստիճանաբար վերաճում էր ապստամբության, ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ շարժման քաղաքական ուժերի՝ անջումենների շարքերում երևակվում են սահմանագծեր՝ ըստ ազգային պատկանելության:

Մի կողմից նկատվում էր բուն պարսիկ և հոծ բնակչություն ունեցող տարածքներում գործող անջումենների հակաշահական քաղաքական աշխուժության թուլացում, մյուս կողմից՝ թուրքալեզու տարածքներում գործող անջումենների՝ շահի նկատմամբ ավելի ու ավելի կոշտ դիրքորոշման որդեգրում: Նախկինում նույն կետին աներեր խփող անջումենների մի մասը հիմա իր հետագա անելիքների մասին խորհում էր ինքնուրույն:

Ավելին, պառակտումը մտել էր նույնիսկ հոգևորականության մեջ: Այսպես՝ Քերբալայի հոգևորականները վճռել էին Թուրքիայի սուլթանին դիմել հետևյալ առաջարկով. եթե Աբդուլ Համիդը երդում կտա, թե ինքը Պարսկաստանի սահմանադրական ապստամբներին զենք կտա և ընդհանրապես նրանց կպաշտպանի Մահմեդ Ալի շահի դեմ մղվող պայքարում, այդ դեպքում իրենք թուրք սուննի սուլթանին կընդունեն նաև որպես Պարսկաստանի շիաների առաջնորդ[1]:

1908 թ. ամռան կեսերից թուրքական զորքերն սկսել էին գրավել նաև «վիճելի գոտուց» դուրս ընկած առանձին վայրեր՝ զուտ պարսկալեզու տարածքներում, ընդ որում, օգոստոսի կեսերին նրանց առանձին ստորաբաժանումներ երևացին անգամ Սալմաստի և Սոմայի շրջաններում, որոնք մոտ էին կովկասյան

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 178, 15 օգոստոսի 1908 թ.:

սահմաններին: Այդ նույն ժամանակ ռուսական կառավարությունը կարծես մոռացել էր Հյուսիսային Պարսկաստանում իր ունեցած կենսական շահերի մասին[1]:

Ստեղծվել էր տարօրինակ վիճակ. Թուրքերն, իբր, հանդես էին գալիս Պարսկաստանի հեղափոխության պաշտպանությամբ և, քողարկվելով «առաջադիմական» նշանախոսքերով, զավթում էին հարևանի հողերը: Մյուս կողմից, Ռուսաստանը, որ հանդես էր գալիս Մահմեդ Ալի շահի պաշտպանությամբ, հետևապես՝ Պարսկաստանում կատարվելիք փոփոխությունների դեմ, պետք է որ նաև հանդես գար այդ երկրի տարածքային ամբողջականության խախտման դեմ: Այդպես էր հուշում պարզ տրամաբանությունը, բայց այդպես չէր վարվում ցարի կառավարությունը:

Ինչպես նշել ենք աշխատության նախորդ էջերում, Ռուսաստանն այդ ժամանակ երկյուղում և խուսափում էր Թուրքիայի հետ ընդհարվելուց, քանի որ ռուս-ճապոնական պատերազմում կրած ջախջախիչ պարտությունից հետո նրա ռազմական ուժը դեռ լիովին չէր վերականգնվել, ուստի պատրաստ չէր ռազմական նոր ընդհարման:

Պարսկաստանում գահի և ժողովրդի միջև սկսված արյունալի գուպարի հետևանքները որևէ մեկն ի վիճակի չէր գուշակել: Բայց մի բան պարզ էր. մեջլիսի ջախջախումը շատ ծանր էր նստելու Պարսկաստանի ժողովրդի վրա: Անվերջ խլրտումները, հուզումները, արյունահեղ ընդհարումները, հաղորդակցության ուղիների փակվելը, առևտրի և արդյունաբերության կաթվածահար լինելն այնպիսի կորուստներ էին առաջ բերելու երկրի համար, որոնց տրիտուրը տարիներ էր պահանջելու:

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 128, 13 Հունիսի 1908 թ.:*

ՔՐԴԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՎԵՐՆԵՐԸ

Օգտվելով երկրում ստեղծված խառնակ վիճակից, Իրանական Քուրդիստանի ցեղերը, կարճատև «հանգստությունից» հետո վերսկսեցին իրենց հարձակումները Ատրպատականի Թուրք, հայ, ասորի բնակչությամբ գյուղերի վրա՝ ասպատակելով, կողոպտելով ու ավերելով:

Հրոսակախմբերի արշավանքները սոսկալի չափեր ընդունեցին Թավրիզի շրջակայքում, իսկ բուն քաղաքում կատարյալ անիշխանություն էր տիրում: Հրոսակները սարսափ էին տարածել Ուրմիայի և Սալմաստի գավառներում, ուր բնակվում էր Ատրպատականի հայության մեծ մասը: Միայն հունիսի 10–15-ի ընթացքում նրանք գրավեցին ու կողոպտեցին 28 գյուղ, եղան սպանություններ ու առևանգումներ: Հրոսակախմբերը թիրախ էին դարձրել հատկապես հայերի և ասորիների բնակավայրերը: Վերջիններս այս անգամ հայերից նույնիսկ ավելի մեծ կորուստներ էին կրում:

1908 թ. հունիսի 7-ին Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը Ուրմիայի դեպքերի կապակցությամբ ներկայացավ Թավրիզի կառավարչապետին և խնդրեց, որ եթե կառավարությունը հնարավորություն չունի քրդական վայրագությունների առաջն առնելու, գոնե վտանգված գյուղերի բնակիչներին բաժանվեն հրացաններ՝ ինքնապաշտպանության համար: Կառավարչապետը խոստացավ հրահանգ տալ, բայց խոստումը չկատարեց:*

Նկատի առնելով, որ կողոպուտներն ու սպանությունները օրըստօրե գնալով ընդարձակ չափեր են ընդունում, իսկ կողոպտիչներն անկառավարելի են դառնում, պարսից կառավարությունը մի չարք ռազմական միջոցներ ձեռնարկեց պատժելու

---

* *Իր բանասիրական արժեքավոր հետազոտություններով հայտնի Կարապետ ծ. վարդապետ Տեր-Մկրտչյանը, 1907 թ. հոկտեմբերի 31-ին միաձայն ընտրվելով Ատրպատականի հայոց առաջնորդ (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10677, թ. 1) ջանք չէր խնայում պաշտպանելու իր հոտի անվտանգությունը: Նա այդ պաշտոնում մնաց մինչև 1912 թ. աշունը:*

համար ասպատակիչներին, բայց արդյունքները չնչին էին, և քրդերը շարունակում էին իրենց խժդժությունները[1]:

Քրիստոնյաներն այլ ելքեր էին որոնում, բայց ելք առայժմ չկար: Տվյալ պահին նրանց մնացել էր մի հույս՝ եվրոպական քրիստոնեական պետությունների միջամտությունը:

Հայոց առաջնորդ Կարապետ ծ. վարդապետն Ուրմիայի շրջանի քրիստոնյաների վիճակի մասին 1908 թ. հունիսի 9-ին գրություն ուղարկեց Թավրիզի եվրոպական հյուպատոսներին: Գրության մեջ նկարագրված էին հիշյալ գավառում միայն մեկ օրում տեղի ունեցած դեպքերը: «Համաձայն Ուրմիայից ինձ հասած քստմնելի տեղեկությունների,- գրում էր առաջնորդը,- Բարանդուզ գաւառի Բաբառու, Դարբառու եւ Սարդարութ քրիստոնեայ՝ ասորի եւ հայ խառն քրիստոնեայ բնակիչներով՝ անցեալ մայիսի 29-ին (11 յունիս ն. տ.) յարձակման են ենթարկուել քրդերի կողմից, որոնք կողոպտել են գիւղացիների ամբողջ ունեցուածքը», անպատվել ու բռնաբարել են կանանց ու աղջիկների, գործել են ուրիշ անլուր խժդժություններ: «Մօտ 700 հոգի այս թշուառ արարածներից փախուստ են տուել եւ ապաստանել Ուրմիայի հայոց եկեղեցում՝ աննկարագրելի թշուառ կացութեան մէջ: 150 հոգի անյայտացել են, 8 հոգի փախստականների աչքի առաջ սպանուել են. ոմանք իրենց նետել են գետը՝ քիւրդերի ձեռքից ազատուելու համար»[2]:

Նկարագրելով գավառի քրիստոնյաների տագնապալից դրությունը, հայոց առաջնորդը հայցում էր քրիստոնեական պետությունների շտապ օգնությունը. «Արդ, պատիւ ունեմ խոնարհաբար խնդրելու պատ. հիւպատոսարանիդ, որ հաճիք ձերդ բարեխնամ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու այս դէպքերի վրայ, որոնք կարօտ են եւ արժանի չուտափոյթ նկատողութեան, թէ ինչպէս հազարաւոր խեղճ քրիստոնեաներ, անմեղ եւ անպաշտպան, Թուրք-պարսկական սահմանագլխում, խնդիրների անբնական վիճակի անորակելի բարդութեան շնորհիւ, դատապարտուած են կորստեան: Այս կոչը միաժամանակ ներկայացրի ռուս, բրիտանական եւ Միացեալ Նահանգներու

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 84, 20 ապրիլի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 136, 24 հունիսի 1908 թ.:

կառավարութիւնների պատ. ներկայացուցիչներին, քաջայոյս, թէ միահամուռ ազնիւ ձեռնարկութեամբ բոլորի կողմից՝ գալիք մեծ վտանգի առաջը պիտի առնուի եւ թոյլ չպիտի տրուի մինչեւ երկինք աղաղակող անարդարութիւն գործելու»[1]:

Բայց Կարապետ ծայրագույն վարդապետի տագնապալի գրությունը չարժանացավ Թավրիզի եվրոպացի հյուպատոսների ուշադրությանը:

Իսկ քրդերը չարունակում էին իրենց վայրագությունները: 1908 թ. հունիսի 16-ին քուրդ ձիավորների մի ավազակախումբ հարձակում գործեց Սալմաստից ոչ հեռու գտնվող հայկական հինավուրց Դերիկ վանքի վրա: Տեղ-տեղ հայերը դիմադրություն ցույց տվեցին, բայց քրդերը գրավեցին վանքը: Կատաղած ձիավորները քուրդ խաժամուժի հետ կողոպտեցին վանքի ամբողջ ունեցած-չունեցածը: Նույնիսկ հանեցին ու տարան բոլոր սենյակների և վանքի գլխավոր մուտքի փայտյա դռները:

Ատրպատականի քրդերը նաեւ ասպատակում էին նահանգի իրենց հավատակից թուրքերի գյուղերը: Նրանք կողոպտում էին խաղաղ բնակիչներին, կատարում սպանություններ: Սրանց էին միացել Թուրքիայից՝ Վասպուրականից և Արևմտահայաստանի այլ վայրերից սահմանն անցած քրդերի բազմաթիվ ավազակախմբեր:

Թիֆլիսում լույս տեսնող «Վտակ» լրագիրը 1908 թ. № 88-ում տպագրել էր Պարսկաստանից ստացած մի նամակ, ուր ասված էր, թե Թուրքիայից Ատրպատական ներխուժած քրդական աշիրեթները, հարձակվելով այդտեղի թուրքական գյուղերի վրա, հափշտակել և Թուրքիա են քշել ոչխարների բազմաթիվ հոտեր, կողոպտել են գյուղացիներին և ավարը նույնպես անցկացրել սահմանից այն կողմ: Առանձնապես մեծ վնասներ էին կրել զուտ թուրքաբնակ Խանդուխտ, Թամար, Մինաս, Ախյամ, Գապագ-թեփե, Այյան և Սուլթան Ահմեդ գյուղերը: Նույնը վերաբերում էր նաև թուրք, հայ և ասորի բնակիչներ ունեցող Գելիզան և թուրք, հայ և քուրդ բնակիչներ ունեցող Ջևազրգ գյուղերին: Ընդ որում, ասպատակության ժամանակ այս վերջին

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 136, 24 հունիսի 1908 թ.:*

գյուղի քրդերը, միանալով իրենց ցեղակիցներին, մասնակից էին դարձել համագյուղացի Թուրք և հայ հարևանների ունեցվածքի կողոպուտին:

Մի կողմ դնելով Թուրքերի հետ իրենց հակառակությունները, հայ և ասորի երիտասարդները, կազմելով զինված խմբեր, չտապեցին օգնության հասնել իրենց հարևաններին:

«Վտակի» այդ հոդվածին ծանոթացել էին նաև Փարիզում հրատարակվող Թուրքական «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման ընկերության» (իշխան Սաբահէդդինի) օրգան «Թերաքքը» թերթի աշխատակիցները և հանդես եկել մի հոդվածով, ուր երախտագիտական ջերմ խոսքեր էին ուղղել պարսկահայերին, որոնք Թուրքական գյուղերի բնակիչներին պաշտպանել էին քրդերի հարձակումներից: Հոդվածում նշված էր.

«Քրդերը հայ գիւղերի վրայ եւս յարձակուելու հաստատ մտադրութիւն են ունեցել, բայց հայերի զինուած դիմադրութիւնը կոտրել է նրանց այդ համարձակութիւնը: Երբ հայերը տեղեկացել են, որ իրենց շրջանի Թուրք գիւղերը քրդերի կողմից յարձակման են ենթարկւում, անմիջապէս օգնութեան են շտապել եւ, Թուրքերին միացած, յարձակումը յետ են մղել: Խանդուխտ գիւղը երկու անգամ Թալանած աշիրեթից նրանք համատեղ ոյժերով յետ են խլել ոչխարի մի մասը: Այս ընդհարման ժամանակ սպանուել է չորս հոգի: Գելիզան գիւղը Թալանած աշիրեթները ինքնապաշտպանների առջեւից փախչելով, կողոպտած գոյքը ձգել են ճանապարհներին»:

Այնուհետև չեչտելով, որ այդ օգնությունը Թուրքական գյուղերին կազմակերպել է Դաշնակցությունը, «Թերաքքը»-ն շարունակել էր. «Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի հետ վերջերս դաշինք ենք կապել, չի խնայել ձեռքից եկածը: Իմանալով այդ մասին, օսմանցիութեան անունից մեր շնորհակալութիւնը Դաշնակցութեան յայտնելը համարում ենք մի անհրաժեշտ պարտականութիւն»[1]:

---

[1] «Թերաքքը» թերթի սույն հոդվածի թարգմանությունը տե՛ս **«Զանգակ»**, № 1, 6 հուլիսի 1908 թ.:

Բայց քրդերի ասպատակությունները չէին դադարում: Այդ էին վկայում հունիսի կեսերին քրդական հրոսակախմբերի կրկին խուժումը Ուրմիայի և Սալմաստի գավառներ և մի քանի հայաբնակ գյուղերում տեղի ունեցած նոր կողոպուտներն ու սպանությունները:

Ուրմիայում հայերի դեմ տեղի ունեցած բռնությունների մասին և Սալմաստի հայերին պաշտպանության տակ առնելու խնդրանքով Կարապետ ծայրագույն վարդապետը 1909 թ. հունիսի 22-ին դիմում հղեց շահ Մահմեդ Ալիին: Նա գրում էր.

«Առ Սպաս Նորին Վեհափառութեան
Արեգակնափայլ Շահնշահին Իրանի, Թեհրան

Ինչպէս որ Ուրմիայում իսլամներին սոսկալի աղէտներ պատահեցին, նոյնը եւ պատահեցաւ հայերին: Շրջակայքի անգութ քրդերը երեք հայաբնակ գիւղերի ամբողջ ունեցուածքը կողոպտել են եւ թալանել, չատերին սպանել, կանանց եւ աղջկանց անպատուել ու բռնաբարել են եւ ոմանց էլ գերի են տարել: Առ այժմ 1000-ի մօտ այդ թշուառ հպատակներից մերկ, սոված եւ արտասուաթոր Ուրմի են ապաստանել: Ինչպէս որ մեզ հաղորդում են, այս դեռ բաւական չէ, նոյն թշուառութիւնը նաեւ սպառնում է Ուրմիոյ միւս գիւղերին: Եւ քանի որ Սալմաստում գիւղերը աւելի խիտ հայ բնակչութիւն ունեն, վտանգ կայ, որ այնտեղ էլ յարձակում լինի եւ ալան-թալան պատահի: Յայտնի է, որ տիրասէր հայ հպատակները այդ աղէտներից միայն Վեհափառութեանդ արքայական տնօրինութեամբ եւ բարձր հրամաններով կարող են ազատուել եւ կողոպտիչներին՝ պատժուել, որպէս զի նոքա արքայական հովանաւորութեան ներքոյ անպաշտպան չմնալով, յենած Վեհափառութեանդ զօրեղ հովանւոյն, ընդ միշտ աղօթեն նորին կենաց եւ արեւշատութեան համար:

Առաջնորդ Թեմին Հայոց Ատրպատականի»[1]*:*

Բայց շահը որևէ որոշակի քայլ չարեց զսպելու քրդական ասպատակությունները: Հենց այստեղ նշենք, որ սահմանադրականների ու միապետականների զինված առճակատման ողջ ըն-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 10, թ. 28:*

թացքում ցեղապետերի ու աշիրեթապետերի գլխավորած քրդերը, Ռահիմ խանին ենթակա ղարադաղցի շահսևան ցեղերն ու Ատրպատականի թուրքմենները հանդիսացան միապետության ամենահավատարիմ ուժերը և սահմանադրության երդվյալ թշնամիները:

Քրդերի խժդժությունները և այն, որ վերջիններիս զսպելու համար շահի կառավարությունը գործուն միջոցներ չէր ձեռնարկում, Ատրպատականի հայերի մոտ գնալով համոզում էին ստեղծում, որ վաղ թե ուշ իրենք ստիպված են լինելու դիմել զինված ինքնապաշտպանության: Եվ որպեսզի պարզ դառնա, թե այդ ժամանակ Ատրպատականի ո՛ր գավառներում ու քաղաքներում էին հայերի վրա հարձակումներ սպասվում, թռուցիկ ցույց տանք նահանգի վարչական կառուցվածքը այդ ժամանակ և հայերի բնակության վայրերը:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

Պարսկական հեղափոխության ժամանակաշրջանում Ատրպատականի նահանգը վարչականորեն բաժանված էր 12 գավառների՝ Խոյ, Մակու, Սալմաստ, Ուրմիա, Բարանդուզ, Սուլդուզ, Սոուջ-Բուլաղ, Միանդոաբ, Մարաղա, Արդաբիլ, Ղարադաղ, Թավրիզի մերձակայք: 1) Թավրիզի մերձակա քաղաքներ և գյուղեր: Սրանց թվում հայկական բնակավայրերն էին՝ Դեհարական, Սոհրուլ, Մինավար, Մուժամբար, Ալչամուլք գյուղերը, Մարանդ և Օջուաչ գավառները, Ստեփանոս Նախավկայի վանքը իր Ստորին Դարաչամբ և Վերին Դարաչամբ գյուղերով. 2) Խոյ գավառ, որի Դիզա, Վառ, Փերա, Սեյդավար, Մուհլաղան գյուղերում և Կոթուր գավառակում կային ոչ մեծ թվով հայեր. 3) Մակու գավառն ընկած է Ատրպատականի նահանգի հյուսիսարևմտյան և Փոքր Մասիսի հարավային կողմում: Արևելքից սահմանն Արաքս գետն է, որը նրան բաժանում է Անդրկովկասից: Մակուի գավառում հայերի թիվը հասնում էր չուրջ

1500-ի (500 տուն), որոնք բնակվում էին գավառի կենտրոն Մակու գյուղաքաղաքում, Քիչմիչ-Թափա գյուղում (զուտ հայաբնակ), Ավաջուղ և Ղարեին գյուղերում (յուրաքանչյուրում 4-5 ընտանիք). 4) Սալմաստ գավառը Ատրպատականի բերրի ու մարդաշատ շրջաններից մեկն էր՝ Դիլման վարչական կենտրոնով: Քաղաքն ուներ ավելի քան 5000 բնակիչ, որոնց թվում կային 2-3 տասնյակ հայ ընտանիքներ: Գավառի ամենամեծ հայկական գյուղը Հաֆթվանն էր՝ Դիլմանից 3 կմ հեռավորության վրա: Զուտ հայաբնակ այդ գյուղում հաշվվում էր շուրջ 500 տուն: Հայ մեծ համայնքներ ունեին Սուրա և Փայաջուկ գյուղերը: Ավելի փոքր թվով հայ բնակիչներ կային Դրիչկ, Խոսրավա, Քեռհնաշրհար, Հախվերան, Ասլանիկ, Քաբիկ, Համբունավա, Դերիկ, Ուլա, Քեալուշան, Ղուլասար, Շիդան, Ղզլլջա, Զեյվաջուկ, Մահլամ, Սառնա, Սարամերկ, Հովադար, Ըռկավա, Ճարա, Ղարաբաղ, Շեյթանավա, Այուն, Վարդան խառը բնակչություն (թուրք, քուրդ) ունեցող գյուղերում. 5) Ուրմիա գավառը նույն անունը կրող լճի արևմտյան կողմում է, հյուսիսային կողմից լեռներով զատվում է Սալմաստ գավառից: Ուրմիա գավառում կար շուրջ 70 գյուղ: Բնակչության մեծ մասը թուրքեր էին, այնուհետև գալիս էին քաղդեացիները, ասորիները և լուսավորչական հայերը: Գավառի կենտրոն Ուրմիա քաղաքում ժամանակին բնակվելիս էին եղել մեծ թվով հայեր, իսկ 20-րդ դարի սկզբին նրանք այնտեղ հաշվվում էին ընդամենը 50 տնից մի փոքր ավելի: Գավառում զուտ հայաբնակ գյուղ չկար. հայերը բնակվում էին խառը բնակչություն ունեցող գյուղերում, հիմնականում ասորիների հետ, որոշ գյուղերում՝ նաև թուրքերի ու քրդերի հարևանությամբ: Այդ գյուղերն էին՝ Ջամալավա, Զարբաչ, Ռահիա, Իքի-աղաջ, Շիրաբաղ, Ղարաջալու, Սուփուրղան, Աղա, Նախչվան-Թափա, Խանբաբխան, Գեարդաբաղ, Ղզլլաչուղ, Բաղբայլու, Դիզյալա, Աղջաղալու: Քիչ թվով հայեր կային Ղարաղրզ, Ենգիջա, Խանիչան, Ղարագեոզ, Զեյնալու, Զամաքի, Իսալու, Զիչաքլու, Ղար-աղաջ, Սանգեառ, Ալղիա և այլ գյուղերում. 6) Ուրմիա քաղաքի հարավարևմտյան կողմում **Բարանդուզ գավառն** էր՝ հետևյալ հայաբնակ գյուղերով՝ Դիզա-Թափա, Սահաթլու, Բալանիչ, Թումաթար, Քիվքիա, Բաբառու,

Դարբառու, Սարդարութ, Ղասըմլու, Թազագյուղ, Թոռմալու: Այս գյուղերում հայերն ապրում էին խառը՝ հիմնականում ասորիների, գյուղերի մի մասում՝ նաև Թուրքերի ու քրդերի հետ: Մի քանի գյուղերի հայերը Թուրքախոս էին. 7) Ուրմիա լճի հարավային և հարավարևմտյան կողմում էր ընկած ***Սուլդուզ գավառը,*** *որտեղ գտնվում էին հետևյալ խառը բնակչությամբ հայաբնակ գյուղերը՝ Նուղադեյ, Գեորնավա, Քարվանսարա, Ռահդանա, Աղբեգլու, Բորանի, Մամադյար. 8)* ***Սոուջ-Բուլաղ գավառը*** *Ուրմիա լճի հարավային կողմում է, լճից հեռու, լեռներով պատած: Գավառի բնակիչները, չնչին բացառությամբ, քրդեր էին: Բնակվում էին նաև քիչ թվով Թուրքեր ու հրեաներ: Քիչ թե շատ (10-ից 30 տուն) հայեր էին ապրում երեք գյուղերում՝ Դարաշամբ, Ղզըլղոբի, Կաֆիս. 9)* ***Միանդոաբ գավառի*** *կենտրոն Միանդոաբ գյուղաքաղաքում շուրջ 200 հայ էր բնակվում: Թուրքերի և քրդերի հետ խառն հայերը բնակվում էին նաև Սոհրուլ-Թափա, Ղարավերան և Թովլա գյուղերում. 10) Միանդոաբ գավառի հարևանությամբ, Ուրմիո լճի արևելյան և հարավարևելյան կողմում, Թավրիզից հարավ* ***Մարաղա գավառն*** *էր, որի կենտրոնը կոչվում էր գավառի անունով՝ Մարաղա, ուր բնակվում էր 200-ից ավելի հայ ընտանիք: Այս գավառում հայերն ապրում էին խառն՝ Փեհրավա, Աղաջարի, Խոջամիր, Ղալաջուղ գյուղերում. 11)* ***Արդաբիլ գավառի*** *կենտրոնը վաճառաշահ Արդաբիլ քաղաքն էր, որտեղ շուրջ 1000 հայ էր ապրում. 12)* ***Ղարադաղ գավառը,*** *որը ժամանակին եղել էր հայոց Փայտակարան նահանգի մեջ, 20-րդ դարի սկզբին բաժանված էր չորս գավառամասերի՝ Դըզմար, Մեչափարա, Մընջևան ու Քեյվան: Դըզմար գավառամասում հայաբնակ գյուղեր էին Աղաղանը, Ուրգյուրին, Ղշլաղը, Սարդուն, Խանագյահը, Ղուլուդին, Շավլին, Նորաշենը, Օղան, Մեչափարա գավառամասում՝ Մզկիթը, Քլալան, Գերմանավը, Մրքիդը, Սևահողը, Քարագլուխը, Ամրադուլը, Քեյվանի գավառամասում՝ Սուրունը, Բերդիետքը, Ասրանը, Մանդավուն, Նորաշենքը, Աչրաֆը, Դուգեգդարան, Ղասումաշենը, Սղընը*[1]*:*

---

[1] *Տե՛ս* ***Նազար Յ. Գորոյեանց****, Պարսկաստանի հայերը, տպ. «Մոդեռն», Թեհրան, 1968, էջ 6, 146-218:*

ԹԱՎՐԻԶԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Դեռ 1907 թ. կեսերից չատերը կարծում էին, որ Թավրիզը յուրահատուկ տեղ է գրավելու Պարսկաստանի ազատագրական շարժման մեջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹԱՎՐԻԶՈՒՄ ՄԵՋԼԻՍԻ ՑՐՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Իր ստեղծման առաջին ամիսներից Թավրիզի անջումենն իրեն դրսևորել էր որպես հեղափոխության ամենահուսալի քաղաքական ուժերից մեկը, որը պարբերաբար առաջ էր քաշում բարենորոգման ամենահամարձակ ծրագրեր և դրանց իրականացման համար գործադրում էր հետևողական ջանքեր: Թավրիզցիները չատ լավ էին ճանաչում երիտասարդ շահին, որը պատրաստ էր արյան գնով ջնջել հոր՝ Մոզաֆֆերէդդին շահի տված սահմանադրությունը: Ահա թե ինչո՛ւ ամբողջ 1907 թ. և 1908 թ. առաջին ամիսներին Ատրպատականում, հատկապես Թավրիզում, անջումենները բազմակողմանի պատրաստություններ էին տեսնում, որպեսզի շահի մեքենայություններին չզոհեն այնքան մեծ տառապանքներով ձեռք բերած ազատությունը: Հեղափոխության մեջ Թավրիզի կշիռն այնպիսի արագությամբ էր մեծանում, որ շահն ու նրա կառավարությունը մտածում էին նախ ցրել տեղի անջումենը, որից հետո միայն վերացնել մեջլիսը և սահմանադրությունը:

Բայց այդ բանը նրանց չհաջողվեց:

Զգալով, որ Ատրպատականի ժողովուրդն իր նկատմամբ վատ է տրամադրված, Մահմեդ Ալի շահը 1907 թ. մարտին հրամայել էր Թավրիզի Արք բերդում պահեստավորված մեծաքանակ զենքերը, հսկայական զինամթերքը և թնդանոթները տեղափոխել Թեհրան[1]: Երբ տեղի անջումենը լսում է շահի այդ

---

[1] *Տե՛ս* ***«Ախուրեան»****, № 70, 1 հոկտեմբերի 1908 թ.:*

հրամանի մասին, արգելում է դրա կատարումը: Չնայած դրան, զինապահեստի պարունակությունը բեռնվում է 150 ուղտերի վրա և քարավանն ուղևորվում է դեպի մայրաքաղաք: Անջումենը որոշում է բռնագրավել բեռը: Նրա հրամանով՝ ֆիդայիները ճանապարհից հետ են դարձնում քարավանը և ողջ զենք-զինամթերքը (36 հազար հրացան, մեկուկես միլիոն փամփուշտ և այլն) դնում են քաղաքային անջումենի տրամադրության տակ: Վերջինս սկսում է ֆիդայական նոր խմբեր կազմակերպել և զինել: Քաղաքի հայոց գերեզմանատան մոտ գտնվող տափարակը անջումենը հատկացնում է խմբերին՝ զինավարժությունների համար[1]:

Զինամթերքի ու զենքերի գրավումը Թավրիզի անջումենին և Ատրպատականի անջումեններին հնարավորություն էր տվել մեծ թվով երիտասարդների զենքի տակ բերել: Սահմանադրական շարժման նախորդ տարիներին նահանգի հալածված երիտասարդությունը ուժերը ներածին չափ ձեռք էր մեկնել կոդոպտված ժողովրդին: Ամեն գյուղում ու քաղաքում գործող անջումենները կարճ ժամանակում այնպես էին զորացել, որ դրության տերն էին դարձել: Նրանք մուրաշիներին վոնդում էին գյուղերի մեծ մասից և իրենք էին վարում գյուղական գործերը, իսկ քաղաքների անջումենները հաքիմներին* բոլորովին չեզոքացրել էին և հեռացրել պաշտոններից: Նահանգի բոլոր քաղաքներում կազմակերպված ազգային միլիցիայի ջանֆիդաների խմբերը իրենց շարքերի մեջ էին առնում այն բոլոր հալածվածներին, որոնք տարիներով վչտակոծ տառապել էին անխիղճ պաշտոնակալների ձեռքին: Արդեն 1908 թ. սկզբներին միայն Թավրիզ քաղաքի անջումենի տրամադրության տակ հաշվվում էր 7–8 հազար զինյալ: Անջումեններն ու նրանց կազմակերպած ջանֆիդաների զինված ջոկատներն այնքան էին ուժեղացել, որ նահանգի միապետական իշխանությունները չէին համարձակ-

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թթ. 32, 38:

* Քաղաքների այն մեծահարուստները, որոնք կապալով վերցնում էին գավառները:

վում որևէ չափով սահմանափակել նրանց իրավունքները: Կարելի է ասել, որ այդ ժամանակ կառավարությունը Թավրիզում և ամբողջ Ատրպատականում լոկ անունով գոյություն ուներ, տիրում էր իսկական անիշխանություն: Եղած սարբազները խեղճ ու կրակ մարդիկ էին, որոնք ո՛չ ռոճիկ էին ստանում և ո՛չ էլ գիտեին, թե ում են ծառայում:

Մինչև 1907 թ. վերջը Թավրիզում ողջ իշխանությունը փաստորեն կենտրոնացված էր քաղաքային անջումենի ձեռքում: Նրանում խոշոր դեր էր խաղում Շեյխ Սալիմը, որի անունով էլ այդ անջումենին հետևողները ստացել էին շեյխ-սալիմականներ անունը:

Բայց նշված ժամանակից սկսած քաղաքում գնալով ուժեր էր հավաքում քաղաքի Դավաչի թաղում ստեղծված անջումենը: Սա անմիջականորեն ենթարկվում էր Միր Հաշիմին, որը ժամանակին եղել էր սահմանադրական շարժման աչքի ընկնող դեմքերից մեկը, բայց հետո դարձել էր շարժման հակառակորդ և կառավարության գաղտնի գործակալ:*

Թավրիզի թուրք և պարսիկ բնակչությունը փաստորեն բաժանված էր քաղաքական երկու ճամբարի՝ շեյխ-սալիմականների և միր-հաշիմականների: Առաջինները վստահություն չէին տածում կենտրոնական կառավարության նկատմամբ և ճիշտ էին համարում երկրի արտաքին թե ներքին բոլոր գործերի հանձնումը մեջլիսին: Երկրորդները կամենում էին վաստակել կենտրոնական կառավարության աջակցությունը և երկրի բոլոր գործերի ղեկավարումը թողնել գործադիր իշխանությանը[1]: Եթե

---

* *Թավրիզն ուներ 13 թաղ, որոնցից ամենամեծը 30 հազար տուն ունեցող Դավաչին էր, որն ընկած էր քաղաքի հյուսիսային կողմի Կարմիր լեռան (Էյնալ-Զեյնալ) ստորոտում և բավական ամուր դիրք ուներ: Այստեղի բնակիչներն առևտրականներ էին, կալվածատերեր, հիմնականում քաջ, կռվող մարդիկ (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թթ. 31-32): Շահին հավատարիմ մյուս թաղը Սուրխաբն էր (տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 12 (66), հոկտեմբեր, 1930, էջ 154): Սահմանադրական ուժերը հիմնականում կենտրոնացած էին Խիաբան թաղում:*

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թթ. 32-33:*

զուգահեռներ անցկացնենք, ապա ակնհայտ կդառնա, որ միր-հաչիմականները մոտավորապես ռուսական հոկտեմբերյանա-կաններն էին, իսկ չեյխ-սալիմականները՝ ռուսական կադետ-ները:

1908 թ. հունվարի առաջին օրերից դրությունը մեծապես լարվեց Թավրիզում. փակվեց չուկան, ընակչությունը բաժան-վեց երկու հակառակ բանակների: Հետևանքը եղավ բռնություն-ների սանձազերծումը, տեղի ունեցան նոր տարվա առաջին ընդհարումները, եղան սպանվածներ և վիրավորներ:

Հունվարի 5-ից 13-ը քաղաքում համեմատաբար խաղաղ էր: Այդ օրերին կենտրոնական կառավարության ղեկավար նշա-նակվեց Նիզամ Սալթանեն, նախկին ոստիկանապետ, մի ան-չնորհք ու ապիկար մարդ, որը միլիոններ էր դիզել անազնիվ ճանապարհով: Սա էլ որոշում ընդունեց վերջ դնել անջումենի գոյությանը, և այդ նպատակով Թավրիզի միապետական ուժերի ղեկավար Միր Հաչիմին կարգադրեց վճռական հարձակման անցնել քաղաքի սահմանադրական ուժերի դեմ:

Հունվարի 13-ին նոր ուժով բռնկվեց կռիվը Թավրիզում, որը շարունակվեց նաև հաջորդ օրը: Երկու կողմերից միայն սպանվածների թիվն անցնում էր 100-ից[1]:

Թավրիզում տեղի ունեցած կռիվները մեծ անհանգստու-թյուն առաջացրին ողջ Ատրպատականի հայության շրջանում: Հայերը գտնում էին, որ տվյալ ժամանակում, դեպի Ատրպատա-կանի խորքերը թուրքական ներխուժման վտանգի պայմաններ-ում, պետք է առժամանակ դադարեցնել ներքին անհամաձայ-նություններն ու կռիվները և համախմբվել միապետի կամ ան-ջումենի շուրջը և դիմել մեծ տերությունների օգնության:

Հունվարի 14-ին Թավրիզի հայոց թեմական առաջնորդ Կա-րապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը ցանկություն հայտնեց մի քանի հայ երևելիների հետ ուղղակի գնալ կռվի վայր և փորձել արգելք լինել անտեղի արյունահեղության: Բայց նկատի առնելով այդ քայլի վտանգավորությունը, հարմար դատվեց դրա փոխարեն

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 18, 24 հունվարի 1908 թ.:

նամակով դիմել թե՛ անջումենին և թե՛ քաղաքի կառավարչապետին: Անմիջապես գրվեց նամակ և առաջնորդարանի անունից երկու հոգու ձեռքով ուղարկվեց պալատ, ուր այդ պահին արքայազն իշխանը հավաքել էր անջումենի և միապետականների ներկայացուցիչներին՝ քննարկելու ստեղծված վիճակից դուրս գալու ելքը: Թավրիզից «Մշակին» ուղարկած թղթակցության մեջ ասված էր.

«Առաջնորդի այդ նամակը այնպիսի յուզիչ տպաւորութիւն էր թողել թէ՛ կառավարչապետի օգնականի եւ թէ՛ պալատում գտնուող պարսիկ հասարակութեան ներկայացուցիչների վրայ, որ չատերը զգացուել ու արտասուել էին հայերի արած այդ եղբայրական եւ հայրենասիրական քայլի առթիւ: [Այնտեղ ներկայ] արքայազն իշխանը իր բանաւոր սրտանց շնորհակալութիւնը յայտնելով առաջնորդի ներկայացուցիչներին՝ անմիջապէս գրաւոր պատասխանել էր, որ «իր մօտ այսօրուայ կայացած ժողովը հէնց հաշտութիւն առաջ բերելու առթիւ է. եթէ, Տէրը մի՛ արասցէ, ժողովը իր նպատակին չհասնի, այն ժամանակ կը դիմէ հայերի եղբայրական աջակցութեան»»[1]:

Թավրիզի հայոց թեմական առաջնորդ Կարապետ վարդապետի և տվյալ պահին պարսկահայության բացարձակ մեծամասնության տեսակետը արձագանք էր գտնում նաև կովկասահայության մեջ, հատկապես պահպանողականների շրջանում, որոնցից մեկը գրում էր. «Մեր կարծիքով, Պարսկաստանի ճակատագրի վերջնական որոշումը յանձնուած է ռուս եւ անգլիական պետութիւններին ... Ուրիշ ելք չկայ երկիրը իր նորմալ կացութեան մէջ դնելու:

... Օտար ձեռքերի հովանաւորութիւնը միայն կարող է փրկել Պարսկաստանը վերջնական կորստից. որքան չուտ, այնքան լաւ: Թեհրանի մեջլիսը եւ անջումենները այս մասին լուրջ պիտի մտածեն: Թող այլեւս չոգեւորուեն առաջադիմական կամ սահմանադրական համարուողները, որովհետեւ մօտ երկու տարուայ շարժումներն ապացուցեցին դա ... Պարսկաստանի խաղա-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 18, 24 հունվարի 1908 թ.:*

ղութիւնը եւ փրկութիւնը օտար պետութիւնների՝ Ռուսաստանի եւ Անգլիայի հովանաւորութիւնից կախում ունի, որոնց օր առաջ պիտի դիմէ պարսիկ ժողովուրդն իր մեջլիսով եւ անջումեններով: ... Որքան չուտ առաջարկուի միջամտութիւնը, այնքան պատուաւոր կլինի Պարսկաստանի համար»[1]:

Բայց պատմությունն իր օրինաչափություններն ունի: Պարսկաստանի հետադիմական և առաջադիմական ուժերի միջև տեղի ունեցող զինված առճակատումը չէր կարող վերջ գտնել առանձին անհատների կամ նույնիսկ խմբերի ցանկություններով: Հնի ու նորի կռիվը կարող էր հանգուցալուծվել միայն երկու կողմերից մեկի հաղթանակի դեպքում:

Կենտրոնական կառավարությունը, զբաղված լինելով ընթացիկ գործերով, Ատրպատականը մատնել էր անուշադրության և հենց դրանով գործել էր մեծ սխալ, որը չուտով շատ ծանր էր նստելու նրա վրա:

ԹԱՎՐԻԶԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է

Թեհրանում մեջլիսի ռմբահարումը սկիզբ դրեց սահմանադրական շարժման աննախընթաց վերելքին, որն ընդամենը օրերի ընթացքում վերաճեց հեղափոխության: Երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ՝ իր բոլոր արհավիրքներով: Շահական ռեժիմի դեմ ծավալվող զինված ապստամբության կենտրոնը հենց սկզբից դարձավ Թավրիզը, որը մայրաքաղաքից ավելի ըմբոստ դեր կատարեց:

Թնդանոթներով սահմանադրությունը ոչնչացնելու լուրը Թավրիզ հասնելուն պես քաղաքում զայրույթի փոթորիկ բարձրացավ: Այստեղի սահմանադրականների առանց այն էլ կուռ միասնությունն է՛լ ավելի ամրապնդվեց: Մարտականորեն տրամադրված քաղաքային անջումենը հայտարարեց, որ Թեհրանում տեղի ունեցածը ինքը դիտում է որպես շահի կողմից Պարսկաս-

---

[1] ***«Մշակ»***, *№ 16, 22 հունվարի 1908 թ.:*

տանի ժողովրդին նետված կովի հրավեր և որ Թավրիզը մտնում է այդ կովի մեջ:

Անջումենը քաղաքի բնակչությանը կոչ արեց անմիջապես զինվել՝ Թեհրանի դեմ գնալու համար: 1908 թ. հունիսի 11-ի երեկոյան ժողովուրդը տենդագին արագությամբ հավաքվեց Մախչի մեյդանում: Սկսվեց ցուցակագրում: Մարդիկ զինվում էին և հրամանի սպասում:

Բայց քաղաքային անջումենի կոչի դեմ հունիսի 12-ին հանդես եկավ Դավաչի թաղում ստեղծված «Իսլամիե» անջումենը, որն իրեն հայտարարեց միակ օրինական մարմինը քաղաքում[1], դրանով իսկ ձեռնոց նետելով մյուս՝ քաղաքային և թաղային անջումեններին[2]: Միր-հաշիմականները վերջիններիս հորդորում էին ցրվել ու միանալ «Իսլամիե» անջումենին: Իրենց հերթին, չեյխ-սալիմականները բնակչությանը կոչ արեցին՝ չենթարկվել միր-հաշիմականների սադրանքներին և կովի պատրաստվել միապետականների դեմ:

Քանի գնում մտքերը պղտորվում էին, դրությունը՝ լրջանում: Հունիսի 12-ին փակվեց չուկան: Քաղաքի երևելիներից մի քանիսը աշխատում էին կանխել առաջիկա ընդհարումը, բայց՝ անհաջող: Հունիսի 12 լույս 13-ի ամբողջ գիշերը սահմանադրականներն սկսեցին ամրացնել իրենց դիրքերը Խիաբան, Շեշ-Գիլան և Ամիրագրզ թաղերում: Նույն գիշերը քաղաքային անջումենը կոիվ հայտարարեց կենտրոնական կառավարությանը և քաղաքի միր-հաշիմականներին: Դա նշանակում էր, որ սպասվում է երկարատև քաղաքացիական պատերազմ՝ իր բոլոր սարսափներով:*

Ապստամբած Թավրիզի պաշտպանության գլուխն էր կանգնել ատրպատականցի Թուրք Սաթթարը: Ո՞վ էր նա: Նախկին ավազակ, մինչ այդ «կորած, անյայտ եւ առերեւոյթս սովորական մարդ մը, որ կը զբաղէր ձիու առեւտուրով կամ միջնորդու-

---

[1] *АРПФ, ф. Персидский стол, д. 926, л. 14.*

[2] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 31:*

* *Շուկայի փակումը Պարսկաստանում նշանակում էր գործադուլի հայտարարում:*

թեամբ»[1]: Նա ծնվել* ու մեծացել էր Ղարադաղում, մանր հողագործի ընտանիքում: Տարիներ չարունակ վարել է լուտիի (босяк) կյանք[2]: Որոշ ժամանակ, իբրև զինվոր, ծառայել էր Ատրպատականի կառավարչի պահակախմբում[3]: Հոր հիմնական զբաղմունքն եղել էր ոչ թե հողագործությունը, այլ՝ ավազակությունը: «Խելքի գալուց հետո հայրը դարձել էր պետական հասարակ պաշտոնյա: Պատանեկության տարիներին Սաթթարը հետևել էր հորը և մասնակցել նրա ավազակային հարձակումներին: Որոշ ժամանակ անց խուլ գավառներից մեկում նա եղել էր հասարակ մուղիր կամ այդպիսի մի բան, ապա նույն գավառում դարձել էր գյուղերից մեկի տեր Ադիլ խանի ծառա և գյուղացիներից հարկեր գանձող: Սահմանադրությունը ծնունդ առնելուց դուրս էր եկել Ադիլ խանի մոտից և մասնակցել տեղի ունեցող շարժումներին: Մտնելով Թավրիզի ջանֆիդաների ջոկատներից մեկի շարքերը, Սաթթարն իր ընկերների հետ Ղուրանի վրա ուխտել էր պաշտպան կանգնել ժողովրդի իրավունքներին և մինչև մահ կռվել սահմանադրության, ճնշվածների ազատագրության համար:

Սաթթարի անունն առաջին անգամ հայտնի դարձավ 1907 թ.

---

[1] **Միքայել Վարանդեան,** Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Բ, Բ հրատ., էջ 266:

* Սաթթարի ծննդյան որոշակի թիվը հայտնի չէ: Գրականության մեջ նշված է, որ Թավրիզի 1908 թ. պաշտպանության օրերին նա 36–37 տարեկան էր (տե՛ս **В. Шитов,** Персия под властью последних каджаров, изд. Академии наук СССР, Ленинград, 1933, с. 120): Ուրիշ աղբյուրներում խոսք է լինում 38–39 տարեկան լինելու մասին (տե՛ս, օրինակ՝ **"Иран. История и современность".** Сборник статей, с. 29): Մի ուրիշ հեղինակ նույնիսկ գտնում է, որ Սաթթարը ծնվել է 60-ական թվականների սկզբին (տե՛ս **С. П. Голубинов**, Роль энджуменов в государственной жизни современной Персии. Выдержка из доклада действительного члена Общества русских ориенталистов. Прил. I , СПб. 1910, с. 4):

[2] **З. А. Арабаджян,** Иран. Власть, реформы, революции (XIX – XX вв.), "Наука", Москва, 1991, с. 33.

[3] Տե՛ս **М. С. Иванов,** Очерки истории Ирана. Госполитиздат, Москва, 1952, с. 228, նաև՝ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 63:

գարնանը: Վերը նշվեց, որ 1907 թ. մարտի կեսերին շահի կողմնակիցները Թեհրանից տված ցուցումով փորձեցին գիշերը Թավրիզի Արքի* զինապահեստից դուրս բերել ռազմամթերքը: Եվ ահա՛ անսպասելիորեն շահի գործակալների դեմ դուրս եկավ քաղաքի ֆիդայական ջոկատներից մեկի հրամանատար Սաթթարը: Իր զինված խմբով նա հարձակվեց, խլեց ու հետ բերեց զենքն ու զինամթերքը, ապա պահեստի մոտ պահակներ կարգեց:

Այդ դեպքից հետո Թավրիզը փաստորեն հայտնվեց ապստամբի վիճակում: Առաջին անգամ սկսեցին առաջ քաշվել Մահմեդ Ալի շահի հրաժարականի պահանջներ, որոնք առաջադրում էին մուջահեդները և պաշտպանություն էին գտնում բնակչության տարբեր շերտերի մոտ:

Սաթթարը շատ սովորական մարդ էր՝ հասարակ արտաքինով: Միաժամանակ, նա շատ քաջ էր ու անվախ, զենքի սիրահար ու ամուր կամքի տեր: Նա մեծ հռչակ ձեռք բերեց հենց Թավրիզի 1908 թ. հունիսյան կռիվներում: Շուտով նրա անունը հայտնի դարձավ ոչ միայն ամբողջ Ատրպատականում, այլև ողջ Պարսկաստանում ու նրա սահմաններից դուրս, քանի որ ոչ ոք այնպես հաստատակամ չմաքառեց բռնության դեմ, ինչպես ժողովրդի կողմից «խան» տիտղոսն ստացած Սաթթարը: Նրան էր վիճակվել նշանավոր դեր խաղալ պարսկական հեղափոխության մեջ[1]: Նա դարձել էր Պարսկաստանի ժողովրդի զգալի մասի սիրելին, շատ բանաստեղծների երգերի հերոսը, քաջերի օրինակելի առաջնորդը, օրիորդների ու խանումների պաշտելին: Նրա անձնազոհ պահվածքը հիացմունք էր առաջացնում ժողովրդի լայն զանգվածների մոտ[2], որոնք նրան չնորհել էին

---

* Արք միջնաբերդը գտնվում էր քաղաքի կենտրոնում և գոյություն ուներ դեռ Հազկերտների ժամանակներից: Ամրոցն ուներ մեկուկես կիլոմետր շրջագիծ, մի քանի տասնյակ պահեստներ, սենյակներ ու թաքստոց-նկուղներ: Նրան շրջապատող պարիսպները 10 աշտարակ ունեին:

[1] Տե՛ս Սաթթար խանի, Թավրիզի, Ատրպատականի մասին Ատրպետի հոդվածաշարը՝ լույս տեսած **«Ախուրեան»** թերթի 1908 թ. № 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77 համարներում:

[2] Տե՛ս *“Красный архив”*, т. 2 (105), 1941, ОГИЗ-Госполитиздат, Москва, 1941, с. 36.

«Սարդարե Մելլի» («ժողովրդի առաջնորդ») պատվանունը[1]:

Թավրիզի ապստամբների երկրորդ խոշոր ղեկավար դեմքը Բաղր խանն էր: Նա Սաթթարի տեղակալն էր՝ նույն խառնվածքով ու մտայնությամբ: Բաղրը նույնպես խոնարհ ներքնախավի զավակ էր, արհեստով՝ որմնադիր: Ժողովուրդը նրան կոչում էր «Սալարե Մելլի» («ժողովրդի զորավար»)[2]:

Սաթթար խանի մերձավոր օգնականը այգեպան Հուսեյն Բագբանն էր[3]: Հեղափոխական ֆիդայական ջոկատների հրամանատարներն էին գյուղացի Իլդրիմը, ատաղձագործ Նաիբ-Մուհամմեդ Աղային, փամփուշտներ պատրաստելու մասնագետ Միր Աբդոլ Հասան Ֆիշանգչին և ուրիշներ[4]:

Կռիվ մղելով միր-հաշիմականների դեմ, Սաթթար խանը և նրա զինակիցները ծրագրել էին քաղաքում միապետական ուժերի դիմադրությունը կոտրելուց հետո առանց հապաղելու արշավել Թեհրանի վրա և միանալ շահի հակառակորդներին: Այդ նպատակով հայտարարվեց կամավորների նոր ցուցակագրում: Կազմակերպվում էին նաև «վրիժառուների խմբեր», որոնք երդվում էին անպատիժ չթողնել նրանց, ովքեր մեջլիսը ցրելու ժամանակ և դրանից հետո իրենց ձեռքերը թաթախել էին արյան մեջ:

1908 թ. հունիսի 14-ի վաղ առավոտյան Թավրիզում սկսվեց կատաղի կռիվ, որը մեջընդմեջ շարունակվելով տևեց մինչև հունիսի 22-ը:

Առաջին 2-3 օրերին կռվի հաջողությունը թեքվել էր միր-հաշիմականների կողմը: Սրանց հաջողության մասին լուրը տարածվելով, մերձքաղաքային գյուղերից ամեն տեսակ ասպատակիչներ թափվում են Թավրիզ: Կողոպտում են քաղաքային չուկան, Շեչ-Գիլան և Խիաբան թաղերը, որոնց բնակիչները, չուրջ 8000 հոգի, սարսափահար ապաստան են գտնում մոտակայքում՝ ռուսաց բանկի այգում և ռուսաց հյուպատոսարանի մի-

---

[1] Տե՛ս **М. С. Иванов**, Очерк истории Ирана, с. 228.

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **З. А. Арабаджян,** Иран. Власть, реформы, революции (XIX – XX вв.), с. 33.

[4] Տե՛ս **“История Ирана”**, изд. Московского университета, Москва, 1977, с. 281.

ջոցներով կերակրվում են չորս օր: Մոտավորապես նույնքան պարսիկներ քաղաքի տարբեր թաղերից իրենց կահ-կարասիով արագորեն փոխադրվում են հայկական թաղերը, որոնց բնակիչները բոլորին ապաստան են տալիս ու կերակրում օրեր շարունակ[1]:

Հունիսի 15-ից դրությունն սկսում է փոխվել, հաջողությունն ուղեկցում է սահմանադրության պաշտպաններին:

Հունիսի 16-ին Թավրիզի ռուսաց գլխավոր հյուպատոս Պոխիտոնովը դիմում է երկու կողմերին և կոչ անում հաշտության: Կնքված զինադադարը կարճ է տևում: Հունիսի 20-ին կռիվը վերսկսվում է:

Թեհրանն ամբողջովին իրեն ենթարկելուց և սահմանադրական ուժերը ցիրուցան անելուց հետո շահը վճռել էր արագորեն ծնկի բերել նաև ըմբոստ Թավրիզը:

Մինչև իրական գործողություններին անցնելը Մահմեդ Ալին և նրա կառավարությունը բուռն պատրաստություններ տեսան: Վերափոխումներ կատարվեցին նախարարների խորհրդի կազմում, որը, ինչպես նշել ենք, համալրվեց միապետությանն անմնացորդ նվիրված գործիչներով:

Ի նշան նախկին սադրազամ, իր քրոջ ամուսին Էյն Դովլեի նկատմամբ իր հատուկ վստահության, շահը նրան նշանակեց Ատրպատականի ընդհանուր նահանգապետ՝ փոխարքայի իրավունքներով: Միաժամանակ, զինվորական ուժերի հրամանատար նշանակվեց Սիփահդարը[2]:

Նույն օրերին Թեհրանում ստեղծվեց մի զորախումբ, որի մեջ ընդգրկվեցին 2000 հոգանոց պատժիչ զորամաս և պարսկական կազակային բրիգադի մեկ ջոկատ՝ բաղկացած 500 կազակներից: Իրենց զինական ուժերով սրանց պետք է աջակցեին Ռահիմ խանը (Սարդար Նուսրեթ) ու նրա որդի Բեոյյուք խանը, ինչպես նաև Մարաղայի նահանգապետ Սամադ խանը (Շուջաա Դովլե) իր զորամասով[3]: Վերջիններս արդեն հասցրել էին շրջապատել Թավրիզը:

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 40:*

[2] *Տե՛ս* ***«Հայրենիք»,*** *№ 10 (321), հոկտեմբեր, 1952, էջ 79:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

Իր նշանակման հրամանի մասին էյն Դովլեն իմացավ Արդաբիլում, ուր գտնվում էր տեղի միապետական ռազմուժի վիճակին ծանոթանալու համար: Անմիջապես նա կազմավորում է 300 ընտիր ձիավորներից կազմված մի զորամաս և մեկնում Թավրիզ: Միաժամանակ, Թեհրանից դեպի Թավրիզ է ճանապարհվում պատժիչ զորամասը՝ Նասեր Սալթանեի հրամանատարությամբ: Նրան հետևում էր կազակային բրիգադի ջոկատը: Պարսիկ կազակները Թավրիզ էին գնում չկամությամբ: Նրանցից շատերը հրաժարվեցին առաջ գնալ և բեստ նստեցին, եղան ծառայությունից փախչողներ: Բոլորի տրամադրությունը չափազանց ճնշված էր, ոմանք լալիս էին, համոզված, որ կենդանի չեն մնալու[1]:

Տեղեկանալով միապետականների պատրաստություններին և մտադրություններին, Ատրպատականի սահմանադրական ուժերն ամենից առաջ քանդում են ճանապարհների վրա գտնվող կամուրջները, որպեսզի Թեհրանից եկող զորամասն ի վիճակի չլինի նշանակված ժամկետին տեղ հասնել և որ կարևոր է՝ չկարողանա իր հետ վերցրած թնդանոթները տեղ հասցնել: Թեհրանից սպասվում էր ևս 2500 հետևակ և ձիավոր զինվորների ժամանումը:

Նախքան միապետական բանակի մոտենալը՝ Թավրիզի մոտ կատաղի կռիվներ էին մղվում: Իր սխրագործություններով ու դաժանություններով Պարսկաստանում մեծ անուն հանած դարբաղցի Ռահիմ խանը* շահի հրամանով վայրագ 1200 ձիավորների գլուխն անցած եկել էր զսպելու ապստամբած Թավրիզը**: Նրան հաջողվեց մտնել քաղաք, որտեղ միապետական-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 247, 7 նոյեմբերի 1908 թ.:

* Ռահիմ խանն իր ձեռքի տակ ուներ ավազակախմբեր, որոնց շարքերում հաշվվում էր 25 հազար մարդ: Ավազակների այդ պարագլուխը կողոպուտի միջոցով դիզել էր հսկայական հարստություն, որը գնահատվում էր 7 միլիոն ռուբլի (տե՛ս **Ampnem,** Рахим хан Сардар, Александрополь,1910, с. 40):

** Ատրպատականում բնակվող թուրքալեզու երկու ավազակաբարո ցեղերն էին դարաղցիները և շահսևանները: Երկուսն էլ կատաղի հակասահմանադրականներ էին, շահական կարգերի ջերմ պաշտպաններ (տե՛ս **«Նոր խօսք»,** (Բաքու), № 1-2, 2 նոյեմբերի 1911 թ.):

ների զինված խմբերը միացան խանի՝ կողոպուտի տենդով վառվող զորքին: Ծայրամասային թաղերը պատերազմական թատերաբեմ դարձան: Մի շարք փողոցային մարտերից և բարիկադային կռիվներից հետո սահմանադրականներին հաջողվեց քաղաքից վռնդել միապետականներին[1]: Սաթթար և Բաղր խանները հայտարարեցին, որ Թավրիզը զենքը ցած կդնի միայն այն ժամանակ, երբ կվերականգնվի սահմանադրությունը, կհրավիրվի մեջլիսը և երկրից կհեռացվեն այն օտարերկրացիները, որոնք այս կամ այն չափով մասնակից են եղել ժողովրդական ներկայացուցիչների սպանություններին[2]:

ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԹԱՎՐԻԶԻ ՎՐԱ

Արդեն 1908 թ. հունիսի 17-ին Թավրիզի մոտ կուտակված էր շահի կողմնակից չուրջ 4000 զինյալ՝ կառավարական զինյալներ ու իրենց ցեղապետերի գլխավորությամբ գավառներից եկած ձիավորներ, որոնց մեծամասնությունը կազմում էին շահի մոլի պաշտպան շահսևանները: Նախօրյակին շահի հսկայական բանակը համալրվել էր նաև հաղարավոր կիսավայրենի լեռնականներով կամ ուղղակի ավազակներով, որոնք վազել-եկել էին Պարսկաստանի տարբեր ծայրերից՝ բացառապես ավարառության համար, քանի որ շահը նախապես խոստացել էր քաղաքը գրավելուց հետո դա հանձնել կողոպտիչների խրախճանքին: Զինյալ միապետականների թիվը, ավազակախմբերի հետ միասին, հասել էր 25.000-ի[3]:

1908 թ. հունիսի 18-ի վաղ առավոտյան Թավրիզը ենթարկվեց միապետական բանակի առաջին հարձակմանը: Քաղաքի անջումենականները համոզված էին, որ պարտության դեպքում իրենք մահից փրկություն չեն ունենալու, ուստի օրհասական

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 323, թ. 41:

[2] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** Персия в борьбе за независимость, с. 72.

[3] Նույն տեղում:

կռիվ էին մղում: Եթե չահը նախօրոք ապստամբներին ներում խոստացած լիներ, կասկած չկար, որ նրանց մի մասը զենքերը հանձնելով անձնատուր կլիներ: Ապագայի նկատմամբ սարսափը Թավրիզցիներին ստիպում էր կռվել մինչև վերջին չունչը:

Օրվա երկրորդ կեսին միապետականներն ուժեղացրին ճնշումը և գրավեցին Թավրիզի մի քանի կարևոր դիրքեր: «Իսլամիե» անջումենի և պետական դրոշներ պարզած, նրանք գրավեցին սահմանադրականների դիրքերը Ալա-Ղափու թաղամասում, ապա ներխուժեցին Խիաբան մեծ թաղը և լայնածավալ կողոպուտ սկսեցին: Դա պատասխանն էր նախօրյակին սահմանադրական զինյալների՝ իրենց թաղերում կատարած կողոպուտի: Հենց այստեղ նշենք, որ Թավրիզի զինված թաղամասերն իրար դեմ հիմնականում կռիվ էին մղում թայֆայական դրդումներով: Թեև երկու կողմերի դրոշները ներկված էին հեղափոխական և հակահեղափոխական գույներով, բայց ամբոխը համարյա գաղափար չուներ, թե ինչի՞ համար է կռվում, ովքե՞ր են իր թշնամիները և ովքե՞ր՝ բարեկամները: Հունիսի 12-ին Թավրիզում ամբոխը կողոպտեց թագավորական նշանավոր մի մուջտեհիդի տունը: Դրանից մի քանի շաբաթ առաջ այդ նույն մուջտեհիդը վերադարձել էր աքսորից և նույն ամբոխը նրան ընդունել էր ամենաշքեղ խանդավառությամբ՝ քաղաք բերելով ուսերի վրա: Իսկ հիմա կողոպտում ու տակնուվրա էր անում նրա տունը[1]:

«Իսլամիեի» զինյալների կողմից սահմանադրականների Ալա-Ղափու մեծ թաղի գրավումը պատճառ դարձավ այնտեղից բնակչության մեծ մասի փախուստին: Հայաշատ Ղալա թաղում ապաստանողների թիվը հետզհետե ավելանում էր: Այս թաղում էին գտնվում հյուպատոսարաններն ու եվրոպացիների գաղութը: Աշխատելով չեզոքություն պահպանել, հյուպատոսարաններն ամեն կերպ աշխատում էին թույլ չտալ թե՛ ապստամբների և թե՛ միապետականների մուտքը իրենց շենքերից ներս: Նման դիրք էին որդեգրել հատկապես Թավրիզի ռուս հյուպատոս

---

[1] *Տե՛ս* ***«Լրաբեր»****, № 11, 6 հուլիսի 1908 թ.:*

Պոխիտոնովը և քաղաքում տեղակայված ռուսական զորամասի հրամանատար Վիտուլևիչը[1]:

Հուլիսի 9-ին Պոխիտոնովը Թավրիզից հեռագրել էր Մահմեդ Ալի շահին, որ քաղաքի հանգստությունը կախված է «Իսլամիե» անջումենի ցրումից և քաղաքից նրա անդամների հեռացումից: Հյուպատոսը չեչտել էր, որ եթե կռիվներն այսքան երկար ժամանակ շարունակվում են, դրա ամբողջ մեղքն ընկնում է «Իսլամիեի» վրա, որը որևէ կերպ չի ուզում ընդառաջ գնալ հաշտության միջնորդություններին[2]:

Հուլիսի 24-ին և 25-ին երկու կողմերից թնդանոթային և հրացանային անդադար կրակ էր տեղում: Հուլիսի 25-ի կեսօրին կառավարական զորքերը գրոհի դիմեցին: Արյունալի մարտ սկսվեց: Բոլորը կռվում էին բոլորի դեմ՝ եղբայրը՝ եղբոր, ազգականը՝ ազգականի դեմ, բարեկամը չէր խնայում բարեկամին: Միաժամանակ, տեղի էին ունենում զորակոչ, հանրահավաքներ հրավիրող փողահարումներ: Այդ ամենը միանալով խառնիխուռն գոռում-գոչումների հետ, ամբողջ քաղաքում իսկական պատերազմական տեսարան էին ստեղծել[3]:

Հատկապես ծանր էր Ամիրագրզ թաղում ծավալված կռիվը: Ապստամբ ուժերն այստեղ պարտություն կրեցին շահսևաններից ու նահանջեցին հեղափոխականների հսկողության տակ գտնվող մյուս թաղերը: Ամիրագրզն ընկավ, միապետական շահսևաններն ապստամբներից խլեցին նաև նրանց ունեցած միակ ծանր թնդանոթը:

Ամեն ինչից երևում էր, որ, մեծ կորուստներ կրելով հանդերձ, հաղթությունը, միևնույնն է, մնալու է պարսկական մանուկ հեղափոխությանը, քանի որ դրա կարճատև ալեբախումներն արդեն այնպես էին ցնցել Պարսկաստանի բավականին ընդարձակ տարածքներ, այնպիսի բեղմնավոր հող էին պատրաստել ապագայի համար, որ նա այլևս չէր պարփակվի ձեռք բերածի շրջանակներում, ընդհակառակը՝ գիտակից ուժերի շնորհիվ

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 140, 8 հունիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Զանգակ»**, № 7, 13 հուլիսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Լրաբեր»**, № 12, 13 հուլիսի 1908 թ.:

մի օր պիտի ստանար այնպիսի ծավալներ, որոնց ազատատենչ ալիքներին չէին դիմանալու բոնակալական պատնեշները:

1908 թ. հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը զինադադար էր հայտարարվել: Օգտվելով դրանից, ապստամբներն անմիջապես ձեռնարկեցին քաղաքի ամրացման աշխատանքներին: Թավրիզում ստեղծվեց օրինակելի կարգ, փողոցներում չրջում էին հեղափոխական ոստիկանության պահակախմբերը: Քաղաքի կարևոր օբյեկտները վերցված էին խիստ հսկողության տակ: Սաթթար խանի տան առջև չարված էին կառավարական զորքերից խլված թնդանոթները:

Իսկ կառավարական զորքերն ու շահսևանները հետ քաշվեցին ու բանակ դրեցին Թավրիզի մատույցներում՝ Ադարադում: Իր հերթին, Ռահիմ խանը վերադարձավ և բանակ դրեց Շահզադե-բաղ այգում, իսկ նրա առանձին ավազակախմբեր թափանցեցին քաղաքի այն թաղերը, որոնք գտնվում էին միապետականների հսկողության տակ:

Որևէ մեկը չէր կասկածում, որ առջևում է՛լ ավելի ծանր կռիվներ են սպասվում:

Մեկ շաբաթ չարունակ Թավրիզը չունչը պահած այս անգամ սպասում էր միապետական թաղերի գրոհին: Այդ տագնապալի պահին, հունիսի 26-ին, Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Կարապետ վարդապետը նամակով դիմում է մուջտեհիդ Հաջի Միրզա Հասան Աղային՝ առաջարկելով իր միջնորդությունը Թավրիզի անջումենի և միապետականների միջև՝ բանակցելու և հաշտվելու համար: Հայոց առաջնորդի այդ միջնորդությունը լավ տպավորություն է թողնում երկու կողմերի վրա, որոնք, սակայն, իրական քայլեր չեն անում հաշտվելու համար:

Քաղաքացիները երկյուղում էին, որ միապետական ուժերը, ոգևորված այդ օրերին Ատրպատական ռուսական մի նոր զորամաս մտնելու լուրով, զինադադարը չեղյալ կհայտարարեն:

Հունիսի 29-ի առավոտյան Թավրիզի ռուսաց հյուպատոսարանի և մի քանի մզկիթների պատերին սահմանադրականների ստորագրությամբ փակցվեց հայտարարություն, որով ռուսաց հյուպատոս Պոխիտոնովին կոչ էր արվում այլևս չխառնվել քաղաքի ներքին գործերին՝ նրա մինչ այդ արած միջամտու-

թյունները համարելով կողմնակալ ու վնասակար:

Իսկ պարսից շահը նույն ժամանակ զբաղված էր իր զինվորական ուժն ավելացնելու գործով ոչ միայն Թեհրանում, այլև գավառներում: Թավրիզի միապետական զորքը ևս մեծ համալրում ստացավ:

Հենվելով իրենց թվական գերազանցության վրա, միապետականները որոշեցին վճռական գործողությունների անցնել: Հունիսի 30-ին Թավրիզի քաղաքապետն սկսեց շրջել քաղաքում և սահմանադրականներին առաջարկել զենքերը հանձնել միապետական զորքին, սպառնալով հակառակ դեպքում ոմբակոծել անհնազանդ թաղերը:

Որպես պատասխան՝ Սաթթար խանի ուժերը հուլիսի 1-ին հարձակման են անցնում միապետականների գրաված թաղերի վրա: Դաժան կռիվներ են սկսվում: Միապետական ուժերին շահն օգնության է ուղարկում թնդանոթներով համալրված մի գունդ, որը, սակայն, կամովին վախճան է ունենում. հասնելով քաղաքի մատույցներին՝ գնդի զինվորները վար են գցում զենքերը, հանում համազգեստը և փախչում:

Հուլիսի 4-ին հազարավոր ամբոխը քրիստոնյաների թաղում գտնվող մզկիթում լսելով հոգևորականության հուզիչ ճառերը, ուղևորվում է դեպի Բաղեչուման՝ կառավարչապետարան, պահանջելով քաղաքից հեռացնել Ռահիմ խանին իր ձիավորներով, հակառակ դեպքում սպառնալով ջիհադ հայտարարել:

Ունկնդիր լինելով ժողովրդի պահանջին, Սաթթար խանն իր զորքով հուլիսի 5-ին, վաղ առավոտյան, վճռական հարձակման է անցնում կառավարական ուժերի դեմ: Նույն օրվա երեկոյան արդեն վերագրավված էր Թավրիզը, բացի Մուջտեհիդ թաղից, ուր կենտրոնացել էին հակառակորդի հիմնական ուժերը: Ռահիմ խանն իր հեծելազորքով բանակում է քաղաքից ոչ հեռու Սահար-դիվան այգում:

Հուլիսի 6-ին հեղափոխական թաղերի ներկայացուցիչները հավաքվում են Ղալայի մզկիթում՝ որոշելու հետագա անելիքները: Ելույթ ունենալով, մուջտեհիդներից մեկն ասում է.

«Մուսուլմաննե՛ր, դուք չարունակում էք համբերել, երբ Ղարադաղի վայրագ աւազակի՝ Ռահիմ խանի ձիաւորները գալիս

են կողոպտելու մեր կանանց ներքնաչորերը, անարգում մեր սուրբ մօրուքները, ապականում մեր օջախները»: Ամբոխը վայնասուն է բարձրացնում և խփում գլխին: Ճառախոսը նույնպես գլխին է խփում և արտասվախառը շարունակում. «Իսկ մեր հարեւան քրիստոնեայ հայերը իրենց յարկի տակ ապաստան են տալիս մեր զաւակներին, սփոփում են իրենց դիմող բոլոր մուսուլմաններին: Խաղաղութի՛ւն նրանց»: Իր այդ խոսքերից հետո նա ձեռքը պարզում է և պատուհանից ցույց է տալիս հրապարակում կանգնած մի խումբ հայերին: Ամբոխը պատասխանում է. «Աստուած միշտ Իր լոյսը պահի նրանց գլխին»[1]:

Հայերի հանդեպ պարսիկների նման վերաբերմունքը թելադրված էր նրանց անկեղծ բարեկամությամբ: Հենց դա էր հունից հանում Բաքվից և Կովկասի այլ տեղերից եկած թուրք-թաթարներին, որոնք ամեն ինչ անում էին քանդելու համար հայ-պարսկական բարեկամության կապը:

Իհարկե, պարսիկ գիտակից զանգվածի հիշողության մեջ դեռ թարմ էին մոտիկ անցյալի դեպքերը, երբ Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների ժամանակ և դրանից հետո հազարավոր թուրք-թաթարներ թափվել էին Պարսկաստան և խաղաղ պարսիկ ժողովրդին վրիժառության կրքով ամեն կերպ գրգռում էին իր դարավոր հարևան հայերի դեմ, նպատակ ունենալով կոտորած առաջ բերել: Բայց այն ժամանակ Կովկասից եկած թուրք սադրիչների խոսքը քարին դեմ առավ: Լավ ըմբռնելով նրանց չար միտքը, պարսիկները տեղի չտվեցին, և հայերի հետ ունեցած հարաբերություններն առաջվա պես մնացին բարեկամական: Սադրիչները ձեռնունայն հետ դարձան: 1905-1907 թթ. ընթացքում պարսիկների ցուցաբերած այդ աչալրջությունը և մարդասիրությունը արժանացել էին եվրոպական մամուլի բազմաթիվ ջերմ արձագանքներին:

Բայց վիճակը կարծես փոխվում էր: Այժմ նույնպես Կովկասից, հատկապես Բաքվից մեծ թվով թուրքեր էին խուժել Պարսկաստան, հատկապես Ատրպատական և կատարում էին իրենց քանդիչ սև գործը: Նրանք պարսիկներին, հատկապես նրանց

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 52:

հոգևորականներին գրգռում էին հայերի դեմ: Հոգևորականները հիմա տուրք էին տալիս նրանց ասածներին, միանում սադրիչներին: Արդյունքը լինում էր հակահայկական քարոզչությունը մզկիթներում և այլուր: Միամիտ ամբոխը հավատում էր կովկասյան թուրքերի ազդեցության տակ ընկած մոլլաներին: Կովկասից եկած թուրք «հեղափոխականները», օգտվելով երկրի անիշխանական դրությունից, պարսիկ ժողովրդին ամեն տեսակ չարիք էին հասցնում: Այդ «հեղափոխականների» մասին Թավրիզի հայ մտավորականներից մեկն իր օրագրում 1908 թ. հուլիսի 7-ին գրառել էր.

«Գուցէ մեր հայրենակիցներից չատերին տարօրինակ կամ սխալ թւայ մեր վերաբերմունքը դէպի կովկասցի թաթար-թուրքերը, քանի որ նրանք գտնում են, որ այդ եկւորները պարսիկ ժողովուրդի համար օգտակար դեր են կատարում յեղափոխութեան մէջ: Բանը հէնց նրանում է, որ սրանց յեղափոխական համարելը կատարեալ երեխայամտութիւն է: Այդ մարդիկ ոչ թէ յեղափոխականներ, այլ ուղղակի աւազակներ են կամ հէնց թաթարական բաշիբոզուկների տականքները, որոնք եկել են միամիտ պարսիկներին խաբելու եւ իրենց համար որս անելու: Փաստեր չատ ունենք եւ դրանք մենք հետզհետէ գրի կառնենք: Ըստ երեւոյթին, պարսիկների մեծ մասը չատ դժգոհ է ներկայումս Պարսկաստան թափուած կովկասցիներից, բայց առայժմ լռում է: Այդ կովկասցիները ժողովրդի աչքին թոզ փչելու համար իրենց ցոյց են տալիս չատ յանդուգն կուռողներ եւ ջերմ յեղափոխականներ: Նրանք իրենց հետ բերել են ռումբեր, որոնցով միչտ պարծենում են, բայց մինչ օրս չտեսանք դրանց ռումբի ոյժն ու զօրութիւնը: Հէնց այս օրերին նրանք որպէս պատանդի Արք են տարել երեք պատուաւոր վաճառականի եւ պահանջել «յանուն յեղափոխութեան» 1200 թուման տալ: Խեղճերը սուսուփուս վճարել են փողը եւ իրենց կաչին ազատել անխիղճ «յեղափոխական» թաթարներից: Այդպիսի դէպքեր տասնեակներով են տեղի ունեցել, խեղճ քաղաքացիք դրանց մասին գիտեն, բայց առայժմ լռում են»[1]*:*

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 52:*

Զկարողանալով պարսիկներին դրդել հայերի դեմ, Կովկասից եկած թուրք-թաթարներն իրենց թշնամական գործողություն-ների իրականացման միակ հույսը կապեցին տեղի թուրքերի հետ, նրանց ամեն կերպ գրգռելով «գյավուրների» դեմ: Ավելին, կովկասյան թուրքերը ծրագրել էին Թավրիզում հայերի կոտո-րած սարքել: Նրանց համար այդ խնդրի լուծումը բարդացել էր այն պատճառով, որ արդեն Թավրիզում էին գտնվում մի քանի դաշնակցական և հնչակյան խմբապետեր, որոնք սկսել էին զինավարժության դասեր տալ քաղաքի հայ երիտասարդներին: Վերջիններս կատարում էին նաև ինքնապաշտպանական զա-նազան պարտականություններ. լցնում էին փամփուշտներ, նո-րոգում հայերի զենքերը, ցուցակագրում հրացաններն ու զինա-մթերքը, վտանգված հայկական թաղերի առանձին բարձր տնե-րի կտուրների վրա դիրքեր էին պատրաստում, նախազգուշա-կան և նախապատրաստական այլ աշխատանքներ կատարում:

Իսկ լարվածությունը քաղաքում գնալով մեծանում էր: Հու-լիսի 8-ին ժողովրդական ուժերի պարագլուխները հավաքվում են նույն Ղալայի մզկիթում և որոշում են հարձակում գործել միապետականների գրաված Մուջտեհիդ թաղի վրա: Թաղը շրջապատվում է, ապա սկսվում է ուժգին գրոհը: Մարտիկներին նոր եռանդ ու ոգևորություն ներշնչողը Սաթթար խանն էր: «Եթէ վերջինս չլինէր,- գրում էր քաղաքի հայ գործիչներից մե-կը,- գուցէ սահմանադրականները 15 օր առաջ անձնատուր եղած լինէին: Այդ մարդը ճիշտ որ հերոսաբար կուեց ու դիմա-ցաւ»[1]: Համառ դիմադրությունից հետո հակառակորդը զենքը վար է դնում:

Բայց թշնամին մտադիր չէր ձեռք քաշել Թավրիզից: 1908 թ. հուլիսի 9-ին միապետականները մեծաքանակ ուժերով մոտե-ցան քաղաքին: Սկսվեցին սաստիկ հրացանաձգություն ու թնդանոթաձգություն հեղափոխականների և շահի կողմնակից-ների միջև: Գրոհ ձեռնարկելով՝ կառավարական ուժերին հա-ջողվում է մտնել քաղաք, վերագրավել Մուջտեհիդ թաղը և

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 63, 71, 74:

կենտրոնանալ այնտեղ: Հեղափոխականների հրամանատարներ Սաթթար խանը և Բաղր խանն իրենց զինված խմբերը տանում են թաղի վրա հարձակման, բայց միապետականները ուժգին դիմադրություն են ցույց տալիս: Երկու կողմերից յուրաքանչյուրը տասնյակ զոհեր է տալիս: Հեղափոխականների ուժերն ստիպված քաշվում են իրենց դիրքերը: Հակառակորդները սպասողական վիճակում չարունակում են համախմբել ու վերակազմավորել իրենց զինվորական չարքերը:

Հայերը տագնապում էին, որ միապետականների հաղթանակից հետո իրենք, որպես հակաչահական պայքարի աչխույժ մասնակիցներ, վրեժխնդրության զոհ կդառնան՝ ջարդերի ու կոտորածների ենթարկվելով: Այդ ենթադրությունը հիմք ուներ, քանի որ մի չարք տեղերում հակահեղափոխականները հակահայկական տրամադրություններ էին բորբոքում: Հուլիսի 2-ին Թավրիզի հայ ազգային մարմինները սպառնալից գրություն էին ստացել Հաջի Միրզա Հասան կրոնապետից: Ուրիչ վայրերում նույնպես լինում էին հանդիմանություններ և երկյուղ ազդելու փորձեր: Մակուի սարդար Իկբալ Սալթանեն և նրա զորապետերից չատերը, հատկապես հեծելազորի հրամանատար Իզո խանը երբեմն փորձում էին ահաբեկել հայերին, իսկ գահին հավակնող Սալար Դովլեն բազմիցս սպառնալիքներով լի գրություններ էր հղում Պարսկաստանի հայկական համայնքներին[1]:

Նույն օրը, հուլիսի 9-ին, երբ կառավարական զորքերը մարտավարական հաջողության էին հասել, հայոց թեմի առաջնորդը քաղաքի միապետականների ղեկավարությունից ստանում է սպառնալից նոր նամակ, ուր ասված էր, թե քաղաքի հայերն սկսել են բացահայտորեն աջակցել սահմանադրականներին՝ նրանց ռումբեր ու պայթուցիկ նյութեր մատակարարելով, ինչպես նաև նրանց օգնում են խորհուրդներով: Այդ չափազանց վտանգավոր մեղադրանքի առաջը պետք է առնվեր, ցույց տալով, որ հայերն, իրոք, չեզոք դիրքերում են: Առաջնորդը նամակով նույն օրն իսկ պատասխանում է և հավաստիացնում, որ իր

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 3 (314), մարտ, 1952, էջ 45:*

թեմը եղբայրասպան պատերազմում եղել և մնում է չեզոք, որ հայերը հազիվ մտածում են իրենց կյանքի ապահովության մասին, ուր մնաց թե ուրիշների խորհուրդներ տան: Միաժամանակ, թեմական խորհուրդը հանձնարարում է եկեղեցու սպասավորներին՝ սթափության կոչել իրենց հավատացյալներին, որպեսզի նրանք ավելորդ կասկածների որևէ առիթ չտան[1]:

Այդ լուրը տարածվում է Թավրիզահայերի շրջանում՝ խոր հուզում առաջ բերելով: Տագնապը խորանում է այն պատճառով, որ Պետերբուրգի "Новое Время" («Նովոյե Վրեմյա») թերթի հատուկ թղթակիցը նախօրյակին Թավրիզից նույն մտքով սաղրիչ հոդված էր տպագրել, ուր բերել էր նաև «որոշակի օրինակ», թե ոմն Ս.-յան սերտ հարաբերություններ ունենալով Սաթթար խանի հետ, մշտապես խորհուրդներով օգնում է նրան: «Դրությունը մռայլ է և շատ չարագուշակ: Տեսնենք սա ինչո՞վ կվերջանա»,- գրում էր Թավրիզահայերից մեկը:

Բայց ո՛չ հայոց առաջնորդի նամակը և ո՛չ էլ թեմական խորհրդի՝ Թավրիզահայերին տված պատվիրանը չէին կարող հասնել իրենց նպատակին, քանի որ վերջիններիս ցանկությանը հակառակ, ամեն օր տասնյակ, հատկապես ունևոր պարսիկներ իրենց ունեցվածքով անցնում էին հայերի թաղերը և ապաստանում նրանց տներում[2]: Դրա հետևանքով Թավրիզահայերի ուտեստն սպառվում էր արագորեն:

Հայերն, իհարկե, չէին կարող դռները փակել իրենց թաղերում պաշտպանություն փնտրող պարսիկների առջև: Դրությունն այնքան բարդ ու վտանգավոր էր, որ վերջիններս միայն կյանքի ապահովություն էին փափագում: Նրանցից որևէ մեկը վստահ չէր, որ վաղը ողջ է լինելու կամ իր ունեցվածքի տերն է մնալու:

Շատ հարուստ պարսիկներ այլևս ոչինչ չունեին և մնացել էին մի կտոր խսրի վրա: Մի կողմից՝ միապետականների կողոպուտը, մյուս կողմից այն, որ ֆիդայիներն սպառնալիքներով

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237բ, վավ. 323, թ. 70:
[2] Նույն տեղում, թթ. 71, 74:

փողեր էին կորզում, այդ ամենը պարսկաբնակ թաղերի բնակիչներին հասցրել էին կատարյալ սնանկացման:

Հուլիսի 16-ին, հայոց առաջնորդարանը «ժողովրդի անունից» ստանում է երկյուղ ներշնչող երկու նոր գրավոր դիմում՝ մեկը «Իսլամիե» անջումենի կողմից, մյուսը՝ Շուջաա Նիզամի և արյունարբու Ռահիմ խանի ստորագրություններով: Երկու դիմումներն էլ հայոց թեմակալին ազդարարում էին՝ թավրիզահայոց ղեկավարները, ապաստան տալով և հովանավորելով պետական դավաճաններ հայտարարված բազմաթիվ եռանդուն սահմանադրականների, դրանով իսկ կամավոր իրենց վրա են վերցնում գալիք դեպքերի պատասխանատվությունը, այն է՝ եթե դավադիները խուժեն հայկական թաղերը՝ դավաճաններին պատժելու համար, ապա անխուսափելիորեն հարվածի տակ են հայտնվելու նաև հայերը: Թեմակալն անմիջապես պատասխանել էր, թե 1) Հայերի տներում ապաստան գտած անձինք պարսիկ և թուրք խաղաղ վաճառականներ են, այլ ոչ թե խառնակիչներ, 2) Հայերը կատարում են հենց Ղուրանի թելադրանքը՝ պատսպարել տուժածներին ու աղքատներին, 3) Ինչպես միշտ, հիմա էլ նրանք հավատարիմ են պետությանը և ջերմեռանդորեն աղոթում են գահի ամրության համար, 4) Տարածված լուրերը լոկ չարամիտ սադրանքներ են:*

Բարեբախտաբար, հայերի ենթադրությունները չիրականացան: Հուլիսի 18-ին հայոց առաջնորդ Կարապետ վարդապետը «Իսլամիե» անջումենից ստանում է Միր Հաշիմի փոխանորդի ստորագրությամբ նամակ, ուր ասված էր, թե իրենց՝ հուլիսի 16-ին առաջնորդարան ուղարկած երկու գրավոր դիմումները թյուրըմբռնման արդյունք են և թե իրենք խորապես համոզված են, որ հայերը միշտ եղել են խելացի ու հավատարիմ հպատակներ, ուստի շահը և նրա պաշտպաններն այսուհետև նույնպես բարեհաճ կլինեն նրանց նկատմամբ[1]:

Դեպքերի մասնակիցներից մեկը վկայում էր.

---

* *Ժողովուրդ*

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թթ. 81-82:*

«Այդ օրերին, որոշ շրջանակների համար անհասկանալի էր երեւում այն բարեացակամ, եթէ չասենք, սիրալիր վերաբերմունքը, զոր ցոյց էին տալիս միապետականները հայ համայնքների հանդէպ: Մանաւանդ այն շրջաններում, որ իրենց գրաւումից առաջ ենթարկուած էին սահմանադրականների տիրապետութեան եւ աւելի քան պարզ կերպով երեւան էր եկել հայութեան գործակցութիւնը սահմանադրականներին: ... Միապետական հրամանատարները որեւէ շրջան գրաւելիս, խիստ բարեացակամ վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի հայերը: Եւ թէեւ դժգոհութիւն էին յայտնում, որ հայ մարտական խմբերը կռւում էին իրենց դէմ եւ լայն չափերով օգնում «խռովարարներին», բայց երբեք սպառնալիք չէին անում եւ խստութիւնների ու հալածանքի չէին դիմում: Բազմաթիւ փաստեր կան այդ մասին»[1]:

Հայերի դեմ հնչած սպառնալից նամակները հրամայաբար դնում էին Թավրիզի հայաբնակ թաղերի պաշտպանունակութեան ամրապնդման հարցը: Հանդես գալով որպես խաղաղութեան ջատագովներ, հայերը այդ իսկ պատճառով ամեն ինչ չէին արել ինքնապաշտպանական գործը ավարտին հասցնելու համար: Ճիշտ է, տեղի հնչակյան և դաշնակցական գործիչները պնդում էին, թե իրենք թույլ չեն տա, որպեսզի հակառակորդ մի ուժ մտնի հայոց թաղերից ներս, բայց միապետականների թաղերից հնարավոր հարձակումներից պաշտպանվելու համար միայն մի քանի ձեռնարկներ էին իրականացրել, լիովին աչքաթող անելով բավարար չափով զենք-զինամթերքի ձեռքբերումը և պահեստավորումը, տների դարպասների ու ցանկապատերի ամրացումը և այլն:

«Շատ թեթեւ անմտութեամբ ենք վերաբերւում տեղի ունեցող դէպքերին,- կարդում ենք քաղաքաբնակ մի հայի օրագրում:- Ինքնապաշտպանութեան գործը խաղալիք չէ, որ կարելի լինի վստահել ամէն մի պոռոտախօսի: Կռուելը թատերասրահում խաղալ չէ: Մեր հարուստները փակել են իրենց փողի

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 3 (314), մարտ, 1952, էջ 45-46:

քսակները: ... Մի օր այս անտարբերութեան վնասը քաշելու ենք, քանի որ քնից դեռ չենք սթափուել: Իրենց բոլոր տները պարսիկները ամրացնում են, իսկ մենք չենք էլ մտածում այդ ուղղութեամբ, այսինքն՝ մենք քնած ենք, իսկ պարսիկները՝ արթուն: Երկրում տիրող անիշխանութեան պայմաններում, երբ, ինչպէս ասում են՝ շունը տիրոջը չի ճանաչում, ամենաչնչին առիթն իսկ կարող է մեծ արհաւիրք առաջ բերել: Իհարկէ, ամէն մի հայ այդպէս է մտածում ու խորհում, բայց մտածելն ու խորհելը ոչինչ է, եթէ կենդանի գործ չկայ»[1]:

Այդ նույն օրերին Մահմեդ Ալի շահը փոփոխում է կառավարության կազմը և նոր կազմը հաստատում հուլիսի 10-ին: Նախարարների խորհրդի նախագահ է հաստատվում Ալաա Սալթանեն, որը նաև վարելու էր ներքին գործերի նախարարի պաշտոնը. արտաքին գործերի նախարար նշանակվեց Էմիր Բահադուրը, զինվորական՝ Կավասի Դովլեն, ֆինանսների՝ Մուշիր Դովլեն, արդարադատության՝ Մոհանդիս Մեմալիքը: Նոր կառավարությունն իր նախորդից շատ ավելի աջակողմյան էր:

Իր հաջորդական հրամաններով շահը նոր նշանակումներ կատարեց նաև նահանգներում ու գավառներում՝ իշխանությունն առավել հետևողական հակահեղափոխական գործիչների հանձնելով: Այսպես, հուլիսի 10-ին նա Սալմաստի, Խոյի և Մակուի միացյալ ղեկավարությունը հանձնեց Մակուի խան Իկբալ Սալթանեին, որը հայտնի էր սահմանադրական շարժման դեմ ուղղված իր բազմաթիվ գործողություններով: Նշանակում ստանալուց երկու օր անց, սրա հրամանով ձերբակալվեցին նշված գավառների ժողովրդական շարժման ղեկավարները և ենթարկվեցին խստագույն պատիժների:

Թավրիզում սպասողական վիճակն երկար չտևեց: Հուլիսի 12-ին Ռահիմ խանի ձիավոր զորքն սկսեց ավերել քաղաքի շրջակա՝ հեղափոխականներին համակրող գյուղերը, իսկ Թավրիզի՝ կառավարական ուժերի գրաված թաղերում ջարդերի ալիք սկսվեց: Բնակիչները փողոցներում սկսեցին պատնեշներ

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 73:*

բարձրացնել: Միաժամանակ ամբողջ օրը և հետագա օրերին երկու կողմերից չէր դադարում թնդանոթաձգությունը:

Ատրպատականը գալարվում ու արյունաքամ էր լինում իրար հաջորդող, չարունակական ու անհատնում բարբարոսություններից:

Պարսկաստանում գլորվող դեպքերն իրենց վրա էին գրավել աշխարհի ուշադրությունը:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-դեմոկրատական գաղափարները Պարսկաստան են թափանցել բավականին ուշ՝ ռուսական առաջին հեղափոխության սկզբներին: Դրանց ազդեցության տակ, միայն 1905 թ. կեսերին Արշավիր Զիլինգարյանի և մի քանի ուրիշ գործիչների ջանքերով Թավրիզում ստեղծվում է Պարսկաստանի առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակը: Այդ մասին առաջին հիշատակությունը գտնում ենք Հովսեփ (Իոսիֆ) Կարախանյանի՝ 1905 թ. սեպտեմբերի 15-ին Թավրիզից Ժնև՝ Գեորգի Պլեխանովին ուղարկած նամակում, ուր մասնավորապես նշվում էր. «Թավրիզում սոցիալ-դեմոկրատների կողմնակիցների մեջ ծագել է մի լավ միտք՝ ստեղծել խմբակ և զրույցների ու սիստեմատիկ ընթերցումների միջոցով իր մեջ մշակել ամբողջական սոցիալ-դեմոկրատական աշխարհայացք»[1]:

Այդպիսով, կարելի է ասել, որ Պարսկաստան սոցիալ-դեմոկրատական գաղափարներ ներմուծելու և այնտեղ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու նախաձեռնողները եղել են հայերը[2] – Արշավիր Զիլինգարյանը, Հովսեփ (Իոսիֆ) Կարախանյանը, Տիգրան Տեր-Հակոբյանը (Դերվիշ), Վասո Խաչատուրյանցը, Սեդրակ Միրզոյանը, Վռամ Փիլոսյանը,

---

[1] **«Բանբեր Հայաստանի արխիվների»** (Երևան), № 3, 1973, էջ 91-92:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 95:

Սեդրակ Ավանեսյանը, Սեդրակ Ավագյանը և ուրիշներ:

1905–1908 թթ. չարունակում էին Կովկասից Պարսկաստան անցնել առանձին սոցիալ-դեմոկրատ գործիչներ, որոնք, սակայն, որևէ էական դեր չէին խաղում, եթե չհաշվենք նրանց ծանոթությունը կովկասյան թուրք սոցիալ-դեմոկրատական կուսակցության («Իջթիմայունը ամմիուն») Թավրիզի մասնաճյուղի (խմբակի) ղեկավար Սեյիդ Հասան Թաղիզադեի և նրա մի քանի գործակիցների հետ*: Այդ ծանոթության ընթացքում նրանք պատրաստակամություն էին հայտնել միասնաբար գործել այդ կազմակերպության չարքերում, մասնակցություն ունենալ նրա կազմակերպելիք միջոցառումներին**:

Մեջլիսի ջախջախումը, ապա և Թավրիզում ծայր առած կռիվները լայն արձագանք գտան Կովկասում, ուր, ինչպես և ամբողջ Ռուսաստանում, մոլեգնում էր ստոլիպինյան ռեակցիան: Չնայած դրան, այդ ճգնաժամային պահին երկրամասի բնակչության տարբեր խավերում առաջացան պարսկական հեղափոխությանն աջակցելու տրամադրություններ:

Թեհրանի 1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո Պարսկաստանի Կովկաս փախած հեղափոխականները դիմեցին այդտեղ գործող հեղափոխական կուսակցություններին ու կազմակեր-

---

* Իրանում առաջացած սոցիալիստական հոսանքի և սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առաջացման պատմությամբ մեզանում լրջորեն զբաղվել է պատմաբան Հմայակ Մարտիրոսյանը, հանդես գալով արժեքավոր հրապարակումներով՝ տե՛ս **А. У. Мартиросян,** Большевистская газета "Звезда" об Иранской революции 1905-1911 гг. (**«Բանբեր Հայաստանի արխիվների»,** № 3, 1970, էջ 71–78), "Новые материалы о социал-демократическом движении в Иране в 1905-1911 годах" (журнал **"Народы Азии и Африки"**, № 2, Москва, 1973, с. 116-122), "Письма иранских социал-демократов Г. В. Плеханову (**«Բանբեր Հայաստանի արխիվների»** , № 3, 1973, էջ 91–114):

** Այդ հանգամանքը գնդապետ Լյախովին հիմք էր տվել չափազանցված ներկայացնելու այդտեղ նրանց թիվը: Դեռևս 1908 թ. փետրվարի 10-ին Թիֆլիս հղած իր զեկուցագրում նա նշել էր. «Պարսկաստան են քոչում բոլոր անդրկովկասյան մարտիկները» (տե՛ս **"Историк-марксист"**, № 11, Москва, 1940, с. 96):

պություններին՝ կոչ անելով աջակցել Պարսկաստանի հակաշահական շարժմանը:

Գործնականում առաջինն արձագանքեցին կովկասյան սոցիալ-դեմոկրատները, հատկապես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն, ուր տոն էին տալիս վրաց մենշևիկները:

Հետևելով իրադարձությունների զարգացմանը Պարսկաստանում, կովկասյան սոցիալ-դեմոկրատները 1908 թ. հունիսի վերջերին Թիֆլիսում «Թավրիզի պաշտպաններին աջակցելու խումբ» ստեղծեցին: Այդ խմբին գործուն մասնակցություն էին ցուցաբերում Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Ֆլորա Վարդանյանը և Կովկասում կովող ուժեր ու զենք ձեռք բերելու համար Թիֆլիս եկած, Թավրիզի Հնչակյան կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Ռաֆայել Մովսիսյանը[1]:*

Սոցիալ-դեմոկրատ բանվորների մի խումբ, չսպասելով ՌՍԴԲԿ Թիֆլիսի մարզային կոմիտեի պատասխանին, պատրաստակամություն հայտնեց մեկնելու Թավրիզ՝ քաղաքի պաշտպաններին օգնության: Ընդառաջելով բանվորների այդ ցանկությանը, մարզային կոմիտեն արագացրեց որոշման ընդունումը, համաձայն որի՝ թույլատրելի էր համարվում պարսկական գործերին միջամտելը, այնտեղ ծավալվող հեղափոխությանը ամենագործուն մասնակցություն ունենալը: Միաժամանակ, կոմիտեն տեղական կազմակերպություններին առաջարկեց հավատարիմ ու փորձված բանվորներից ջոկատներ կազմել և ուղարկել Պարսկաստան, նրանց զինելով կազմակերպության ունեցած զենքերի, ռումբերի և պայթուցիկ նյութերի մի մասով[2]:

Կոմիտեի առաջարկը կազմակերպությունները կատարեցին ճշտորեն: Սոցիալ-դեմոկրատների առաջին խումբը, բաղկացած համարյա միայն վրացիներից, 1908 թ. օգոստոսի սկզբներին Թիֆլիսից երկաթուղիով ուղևորվեց ռուս-պարսկական սահման: Հասնելով ռուսական Ջուլֆա, կամավորներն այնտեղից

---

* *Այդ ժամանակ ս.-դ. մենշևիկներն ու բոլշևիկները Կովկասում գործում էին միասնական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մեջ:*

[1] *Տե՛ս* ***«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան (1887-1962)»****, հատ. Ա, Պէյրութ, 1962, էջ 399:*

[2] *Տե՛ս "Красный архив", т. 2 (105), 1941, с. 38-39.*

լողալով գաղտնի անցան Արաքս գետը և դուրս գալով պարսկական ափ, սարերով ուղևորվեցին Թավրիզ[1]: Չնայած այդ ամբողջ տարածքը հսկում էին միապետականները, բայց նրանք հաջողությամբ հասնում են տեղ և ներկայանում Սաթթար խանին: Կովկասցի կամավորներին Թավրիզը խանդավառությամբ[2] է դիմավորում:

Վրաց սոցիալ-դեմոկրատ մենշևիկների խմբի մեջ էին Վասո Գուրիլին, Սերգոն, Լասո (Վլաս) Մգելաձեն (նույն ինքը՝ Վ. Տրիան), Թիֆլիսահայեր Մարտին Տեր-Ղուկասյանը, Սեդրակ Բանվորյանը և ուրիշներ: Հետագա օրերին Անդրկովկասից (հիմնականում Թիֆլիսից ու Բաքվից) Թավրիզ հասան ևս մի քանի սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ և այնտեղ նրանց թիվը հասավ մոտ երկու տասնյակի՝ վրացիներ, ռուսներ, հայեր, կովկասյան թաթարներ:

Նշենք նաև, որ Թիֆլիսից մենշևիկ սոցիալ-դեմոկրատների Պարսկաստան գալուց հետո, 1908 թ. օգոստոսի վերջերին Կովկասից այնտեղ եկավ նաև չուրջ 15 հոգուց կազմված սոցիալիստ-հեղափոխականների (էսէռ) մի ջոկատ:

Թավրիզցի մուջահեդների հետ անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատ մարտիկները գործուն մասնակցություն ունեցան օգոստոս-սեպտեմբերին ծավալված թեժ կռիվներին, տվեցին զգալի կորուստներ:

Մտնելով կռվի մեջ, կամավորները Թավրիզում գործի են դնում նորագույն ռումբեր, որոնց մասին քաղաքի պաշտպանները մինչ այդ հեռավոր պատկերացում ունեին: Առաջին մարտում զոհվում է մի քանի սոցիալ-դեմոկրատ, իսկ մի քանիսը գերի են ընկնում և մահվան տանջանքների ենթարկվում[3]:

Գնալով է՛լ ավելի չատ լավ զինված սոցիալ-դեմոկրատ հեղափոխականներ էին ժամանում Թավրիզ, այս անգամ արդեն հիմնականում կովկասյան մուսուլմաններ՝ գլխավորապես Բաքվից:

---

[1] Տե՛ս **М. Павлович, С. Иранский,** *Персия в борьбе за независимость, с. 110.*

[2] Տե՛ս **В. Триа,** *Кавказские социал-демократы в Персидской революции, Париж, 1910, с. 110.*

[3] Տե՛ս **Անդրէ Ամուրեան,** *Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում. 1890-1918, Թեհրան, 1950, էջ 56:*

Կովկասյան սոցիալ-դեմոկրատների գործունեությունը չէր սահմանափակվում միայն կոիվներ մղելով: Նրանց ներկայացուցիչները վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին քաղաքի անջումենի և ռազմական խորհրդի աշխատանքներին, կազմակերպում հանրահավաքներ, գրում ու տարածում թռուցիկներ, ներկա լինում օտարերկրյա հյուպատոսների հետ քաղաքի պաշտպանության ղեկավարների դիվանագիտական հանդիպումներին:

Մինչ կովկասյան սոցիալ-դեմոկրատ կամավորների գալը Պարսկաստան, ծայրահեղ տգետ, կրոնամոլ պարսիկները, ընդհանրապես վրդովված քրիստոնյա Եվրոպայի մշտական հալածանքներից, նրա գիշատիչ քաղաքականությունից, այլակրոնների ու առաջին հերթին քրիստոնյաների մեջ կատաղի թշնամու էին տեսնում: Հենց ինքը՝ ազատագրական շարժումը Պարսկաստանում, ինչպես նաև ամբողջ մուսուլմանական աշխարհում, տեղի էր ունենում «բոլոր թույլ ժողովուրդներին չահագործող, թալանող ու ճնշող» քրիստոնյա աշխարհի դեմ պայքարի նշանաբանով: Մի քանի հարյուր կովկասյան սոցիալ-դեմոկրատների գործունեությունը պարսկական ազատագրական պայքարում 1908-1911 թվականներին, նրանցից շատերի հերոսական մահը Պարսկաստանին ցույց տվեցին, որ քրիստոնյա ժողովուրդը միատարր զանգված չէ, որ այստեղ էլ կան ինչպես ճնշողներ, այնպես էլ ճնշվողներ, և դա որոշ չափով նպաստեց ժողովուրդների բարեկամության գաղափարների տարածմանը նաև հետամնաց ու մոլեռանդ մուսուլմանական շրջաններում:

Բայց ցավով նշենք, որ Կովկասից եկած սոցիալ-դեմոկրատների, ինչպես և այլ ազգության կամավորների թվում կային նաև այնպիսիք, որոնք թույլ էին տալիս անցանկալի արարքներ՝ դրամ կորզելու նպատակով խաղաղ բնակիչների ահաբեկում, նրանց ունեցած զենքի կամ ձիու առգրավում և այլն: Ընդհարումներ տեղի ունեցան քաղաքական տարբեր հայացքներ դավանող սոցիալ-դեմոկրատ և սոցիալ-հեղափոխական կամավորների միջև, որոնք վերջանում էին զենքի դիմելու սպառնալիքներով: Այդ տհաճ երևույթները նրանց հեղինակությունը գցում էին մուջահեդների շրջանում, վարկաբեկում կամավորական շարժման գաղափարը:

«Թող ժողովրդի հալը ինչ լինելու է, թող լինի, իրենց ի՞նչ: Եթէ վաղը դէպքերը փոխուին, կառավարութիւնը յաղթող հանդիսանայ, իրենք՝ խղճի հանգստութեամբ ժողովրդին երեսի վրայ ձգելով Ջուլֆայի ճանապարհը կը բռնեն եւ լիքը գրպանով չունչները Կովկաս կառնեն...»[1],- այսպես էին մտածում պարսիկ մուջահեդներից ոմանք:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԹԱՎՐԻԶԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն նշել ենք, Ատրպատականի հայոց առաջնորդ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը 1908 թ. հուլիսի 16-ին «դավադիների անունից» բոլորովին անսպասելի ստացել էր երկու նամակ – մեկը Շուջաա Նիզամի և արյունարբու Ռահիմ խանի ստորագրություններով, մյուսը՝ «Իսլամիե» անջումենից՝ ավելի խիստ ձևակերպումներով:

Նկատի առնելով, որ նշված նամակներին կարող են հաջորդել բացահայտ սադրանքները, Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդն այդ նամակների և իր պատրաստած պատասխանների համառոտ բովանդակությունը հեռագրով անմիջապես հաղորդում է Թեհրան՝ Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվատյանին և խնդրում կառավարությանը չտապ հայտնել, որպեսզի անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն հայերի նկատմամբ թշնամության առաջացումը կանխելու համար[2]: Ստանալով Կարապետ վարդապետի հեռագիրը, Սահակ արքեպիսկոպոսն անմիջապես դիմում է կառավարություն, հանդիպում ունենում բարձրաստիճան պաշտոնյաների հետ և ստանում նրանց հավաստիացումները, որ անհապաղ համապատասխան հանձնարարական կտրվի Ատրպատականի կառավարչությանը:*

---

[1] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 87:*

[2] *Տե՛ս **«Մշակ»**, № 158, 23 հուլիսի 1908 թ.:*

* *Առաջ անցնելով դեպքերի զարգացումից՝ նշենք, որ Սահակ արք. Այվատյանը, նկատի ունենալով պարսկահայության նկատմամբ որոշ իշխանա-*

Տեղեկանալով Սահակ արքեպիսկոպոսի կատարած քայլերին, Կարապետ վարդապետը հուլիսի 16-ի երեկոյան պատասխան նամակներ է ուղարկում «Իսլամիեին» և Շուջաա Նիզամին ու Ռահիմ խանին: Նամակները նույն բովանդակությունն ունեին: «Հայերը դարեր շարունակ վայելելով Իրանի վեհապետերի առանձին խնամքն ու պաշտպանութիւնը, երբեք չեն թերացել հաւատարմութեան եւ անձնուիրութեան արտայայտութիւններով երախտահատոյց լինել,- ասված էր պատասխանում:- Ներկայ սրտայոյզ եւ աղեխարշ հանգամանքներում նոյնպէս մենք չթերացանք մեր պարտականութիւնների մէջ եւ քանիցս մեր եւ մեր ժողովրդի ծառայութիւնն առաջարկեցինք թէ՛ կառավարութեանը եւ թէ՛ բարձր հոգեւորականութեանը՝ օգտակար լինելու փորձութիւնների ենթարկուած մեր սիրելի հայրենիքին ու մեր թշուառ հայրենակիցներին: Բայց, ցաւօք, մեր բոլոր դիմումները մնացել են անպատասխան: Մենք, սակայն, մասամբ մեզ մխիթարուած ենք համարում, երբ կարողանում ենք մեզ դիմող մեր թշուառ հայրենակիցների ընտանիքներին հայ թաղերում պատսպարել՝ դրանով իսկ կատարելով մեր մարդասիրական եւ հայրենասիրական պարտականութիւնները: Զէ՞ որ իսլամի մեծ մարգարէի հրամանն է չմեղանչել հիւրասիրության դէմ եւ դռները լայն բանալ ամէն մի հիւրի առաջ՝ ինչ ազգի եւ դաւանանքի էլ պատկանելիս լինի: Մեր վարմունքով մենք կատարել ենք մեր մարդասիրական պարտականութիւնը եւ ծառայել ենք հայրենիքի շահերին՝ տեղ տալով միմիայն կառավարական պաշ-

---

վորների ոչ բարյացակամ վերաբերմունքը, համառորեն ձգտում էր տեսակցել շահին՝ պարսկահայությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու համար: Ամիսներ հետո միայն դա նա նրան հաջողվում է և փոխանցում է իր մտահոգությունները: Սրբազանը հայտնում է, որ հայերը երբեմն ստիպված են եղել զենքի դիմելու՝ ավազակախմբերից պաշտպանվելու համար միայն և «Շահն ըստ երեւոյթին համոզուեր է այդ մտքին»: Մահմեդ Ալին հավաստիացնում է, թե չի կասկածում իր նկատմամբ հայոց հավատարմության մեջ ու խոստանում, որ ինքը պարտն ու պատշաճը կտնօրինի՝ հայոց մտավախությունները փարատելու համար («Բիւզանդիոն», № 3765, 13 (26) փետրվարի 1909 թ., ավելի մանրամասն՝ նույն թերթի № 3776, 26 փետրվարի (11 մարտի) 1909 թ. համարում լույս տեսած ընդարձակ թղթակցությունը):

տօնեաների, վաճառականների, արհեստաւոր դասակարգի եւ առհասարակ այն ընտանիքներին, որոնք իրենց թաղերում օր ու գիշեր տեղացող հրացանների գնդակների եւ թնդանօթների արկերի տարափի տակ ապահով չեն: Կասկածելի անձնաւորութիւններ չկան հայ թաղերում: Այդ մասին պատիւ ունեմ համոզելու ձեզ»[1]:

Հայոց առաջնորդի նամակն ստանալուն պես դավադիների պետ Միր Հաշիմի փոխանորդը նրան պատասխանում է մի սիրալիր նամակով: Նա գրում էր, թե համաձայն է նամակի բովանդակության բոլոր կետերին և գալիս է իր շնորհակալությունը հայտնելու հայերի պատվաբեր վարմունքի համար: Միաժամանակ նա խնդրում էր այսուհետև նույնպես աշխատել հայոց թաղամասերում ապաստան չտալ կասկածելի անձանց: Հայոց թեմակալը թե՛ ստացած նամակները և թե՛ իր պատասխանները ռուսերեն թարգմանելով, առանձին գրությամբ ուղարկում է Թավրիզի ռուսաց հյուպատոս Պոխիտոնովին՝ աջակցելու, որպեսզի քաղաքում հայերի դեմ ուղղված սադրիչ ոտնձգություններ տեղի չունենան: Վերջինս նամակով դիմում է Շուջաա Նիզամին և Ռահիմ խանին և հայտնում, թե ռուսաց հյուպատոսությունը ճիշտ է համարում Թավրիզի հայերի բռնած դիրքը, պաշտպանության տակ է առնում նրանց: Այդ մասին իմանալով, Կարապետ վարդապետն ասել էր. «Մենք գոհ ենք, որ յանձին պարոն Պոխիտոնովի ունենք մի արթուն բարեկամ»[2]:

Հայոց չեզոքության մասին հայոց թեմակալ առաջնորդի հավաստիացումները միապետականներին, անչուշտ, հայտնի էին դարձել Թավրիզի սահմանադրական ղեկավարությանը, ինչն առաջ էր բերել նրա բացահայտ դժգոհությունը: Ավելին, Սաթթար խանը հուլիսի 20-ին հայտարարել էր, որ մտադիր է դիմելու վճռական գործողությունների, այն է՝ Արքից հանել բոլոր թնդանոթները և ուղղել հայկական թաղամասերի եւ բոլոր քրիստոնեական հյուպատոսությունների վրա: Եթե հայերը չմիանան հեղափոխական ուժերին, նրանց թաղերը կենթարկվեն սոսկալի ռմբակոծության,- սպառնացել էր նա[3]: «Այդ գեա-

---

[1] ***«Մշակ»**, № 158, 23 հուլիսի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, № 160, 25 հուլիսի 1908 թ.:*

[3] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ր, վավ. 323, թ. 87:*

դայական յոխորտանքներին մենք վաղուց էինք սպասում»[1],- գրում էր Թավրիզահայերից մեկը:

Զնայած չեզոք մնալու մասին Ատրպատականի թեմական առաջնորդի և համայնքի մյուս ղեկավարների հավաստիացումներին ու երդումներին, Թավրիզից դուրս արդեն լուրեր էին տարածվել, թե հայերը դավաճանում են շահին: Հուլիսի 16-ին Ռահիմ խանի մարդիկ, նրա գիտությամբ թե՝ ոչ, կողոպտում են քաղաքի Շեյ-Գիլան թաղամասի բազմաթիվ խանութներ, որոնց մեծ մասը պատկանում էր հայերին: Ամբողջովին կողոպուտի մատնվեցին «Մելիք Զոհրաբյան և Գյուլմասյան ընկերության» խանութներն ու պահեստները, Ավագ խան Ավագյանի հսկայական խանութը: Կողոպտվելուց հետո խանութների ու պահեստների չինությունները կրակի տրվեցին:

Կառավարության պաշտպան բաշիբոզուկների խմբերը կողոպուտներ էին սկսել նաև ճանապարհներին՝ խլելով հայ առևտրականների, նաև օտարահպատակների ապրանքները: Կողոպտվեց նույնիսկ շահին պաշտպանող Թավրիզի ռուսաց հյուպատոսարանի փոստը:

Հայերի նկատմամբ վերաբերմունքը փոխվում էր նաև պատմական Փայտակարանում՝ Ղարադաղում:

Ղարադաղը Ատրպատականի հյուսիսային կողմի լեռնոտ գավառն էր, որը Թավրիզից մինչև Արաքսի ափերն էր տարածվում: Այդ գավառի ժողովուրդը ոչ միայն Ատրպատականին, այլև ամբողջ Պարսկաստանին ականավոր գործիչներ էր տվել: Թավրիզի նշանավոր մուջտեհիդներն ու խաները ծագումով ղարադաղցի էին, ղարադաղցի շատ պաշտոնյաներ կային Թեհրանում, նույնիսկ Քերբալայում նստած էին ղարադաղցի ականավոր և ամբողջ Պարսկաստանից գերհարգված մուջտեհիդներ[2]:

Ղարադաղում ապրող ցեղերը դարերով պահպանել էին իրենց անկախությունը, կառավարվել էին տոհմիկ իշխանների կողմից, որոնք միայն անվանական կերպով, ձևականորեն էին համարվում շահնշահի հպատակներ: Նրանք ո՛չ հարկ էին վճա-

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ը, վավ. 323, թ. 87:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 69, 27 սեպտեմբերի 1908 թ.:

րում, ո՛չ էլ ենթարկվում էին տուրքի: Ղարադաղցիների կրոնապետերն ու ցեղապետերը, հենվելով իսլամի «ժողովրդավարական» կանոնների և գավառային «անկախ» վարչության օրենքների վրա, միշտ ըմբոստանում էին շահնշահերի, նրանց միջամտության փորձերի դեմ, ցեղակիցների դաժան շահագործումը միայն իրենց վերապահելով: Նասրէդդին շահի կառավարման տարիներին հաջողվեց Ղարադաղը ենթարկել կենտրոնական իշխանությանը, բայց այդ պայմաններում ոչ միայն փոքր իսկ չթեթևացավ ժողովրդական զանգվածների դրությունը, այլև ավելի մեծ չափեր ընդունեցին բռնակալ ցեղապետերի ու խաների հարստահարումները:

Այս բռնություններն էին, որ անտանելի էին դարձրել ժողովրդի կյանքը և, ի վերջո, բորբոքել նրա արդար զայրույթը:

Ղարադաղում հայերը բնակվում էին անհիշելի ժամանակներից: 1908 թ. գավառն ուներ 29 հայաբնակ գյուղ՝ 1122 տներով և 7000 շնչով[1]: Նրանք հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և առևտրով:

Հայ ազգաբնակչության և հրոսակ խաների միջև ստեղծված վատթար հարաբերությունները, տեղի ունեցած արյունոտ ընդհարումները երկար տարիների պատմություն ունեին:

Դեռևս Նասրէդդին շահի օրոք, տխրահռչակ Ռահիմ խանի եկվոր հրոսակաբարո էյալեթը Ղարադաղ խուժելուց հետո, այնտեղի հայերի և խաների հարաբերություններն ավելի սուր բնույթ ստացան: Խաների հետ բազմաթիվ կռիվներ ունեցավ Մելիք-Ջհանյան Մելիք Սարգիսը: Քեյվանի լեռնոտ շրջանի 9 գյուղերի հայության դրությունը փոքր-ինչ բարելավելու և հրոսակների ճնշումից հնարավորինս նրան ազատ պահելու նպատակով նա կարողացել էր Թեհրանից ստանալ այդ գյուղերի սարփարաստության (վերակացության) իրավունքը, որի զորությամբ ազգակիցների գործերը՝ դատերը, տուրքերի հավաքումը և այլն սկսեցին կատարվել նրա միջոցով: Մելիք Սարգսի մահից հետո նույն իրավունքները Մոզաֆֆերէդդին շահից ձեռք էր բերել նրա որդին՝ Ջհանգիր բեկը՝ անձամբ գնալով Թեհրան:

---

[1] *Տե՛ս* ***«Հայրենիք»****, № 11 (322), նոյեմբեր, 1952, էջ 51-ի տողատակը:*

Նույնիսկ Մելիք Սարգսի և Ջհանգիր բեկի՝ սարփարաստության իրավունք ստանալուց հետո էլ շարունակվում էին անվերջ կռիվներն ու սպանությունները: Նրանց երկուսի վրա էլ մահափորձեր էին կատարվել. Ջհանգիր բեկը երկու անգամ գնդակի վերք էր ստացել և մահից հրաշքով փրկվել: Այսուամենայնիվ, նա մի կերպ կառավարել էր այդ մահալը՝ հայերին քիչ թե շատ պաշտպանելով խաների բռնություններից ու հարստահարումներից:

Ղարադաղի արյունարբու խաներին ինչ-որ չափով չեզոքացնելու համար իր ժամանակին շատ ջանք էր թափել Ատրպատականի նախկին թեմական առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարյանը, և դա որոշ չափով նրան հաջողվել էր:

Մեջլիսի ցրումից հետո Պարսկաստանում սկսված խառնաշփոթությունները Ղարադաղում նոր ասպարեզ հարթեցին Ռահիմ խանի և յուրայինների համար, որոնք գավառի անսահմանափակ իշխանությամբ տերերը դարձան: Քեյվան մահալի 9 հայաբնակ գյուղերն անտանելի ճնշումների ենթարկվեցին, վերացվեց հայ սարփարաստ ունենալու նրանց իրավունքը: Խաները ղարադաղցի հայերին նույնիսկ սպառնում էին կոտորածով, եթե նրանց կովկասյան ազգակիցները վրացիների օրինակով փորձ անեն թափանցելու Պարսկաստան և զենքով հանդես գալու երկրի միապետական կարգերի դեմ:

1908 թ. հունիսի վերջերին խաների զինված խմբերը հարձակվեցին ու գրավեցին «Թումանյան» առևտրական տանը պատկանող հայկական գյուղերը, հեռացրին դրանց ընդհանուր կառավարիչ Ալեքսան բեկին, ապա բռնագրավեցին մեծ քանակի հացահատիկ[1]:

1908 թ. առաջին կեսի վերջավորությանն սկսվեց մի պատմական շրջափուլ, որի ընթացքում հայությունը թե՛ Թուրքիայում, թե՛ Պարսկաստանում և թե՛ Ռուսական կայսրության մեջ ներքաշվեց գլխապտույտ իրադարձությունների հորձանուտի մեջ:

Ամեն ինչից երևում էր, որ Պարսկաստանի հայերին առաջիկայում մեծ փորձություններ են սպասում:

---

[1] Տե՛ս **«Շեփոր»**, № 7, 28 սեպտեմբերի 1908:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1908 թ. Հուլիսին Թուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում և իշխանությունն անցավ երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության ձեռքը: Այդ իրադարձությունը տարբեր հետևանքներ ունեցավ Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրի վրա, իսկ հայ ժողովրդի հազարամյակների պատմության մեջ բացեց ամենաողբերգական էջը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵՒՆ

19-րդ դարի 70-ական թվականների կեսերից Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միապետությունները Միջերկրական ծով իջնելու խնդիր էին դրել:

Ավստրո-գերմանական հավակնություններն ուղղված էին, առաջին հերթին, Էգեյան ծովի խոշոր նավահանգիստ Սալոնիկին: Այս նավահանգիստը գրավելով՝ ավստրո-գերմանացիները կապահովեին իրենց ուղիղ ճանապարհը ավստրիական պետության մայրաքաղաք Վիեննայից մինչև Միջերկրական ծով, իսկ այնտեղից կարելի էր սպառնալիքի տակ դնել համապատասխանաբար բրիտանական և ֆրանսիական ազդեցության գոտի Եգիպտոսն ու Սիրիան, բրիտանական գաղութային կայսրության գոհար Հնդկաստանը: Այս ծրագիրն իրականացնելու համար ավստրո-հունգարացիներն այդ նույն ժամանակ Ռուսաստանի հետ պայմանավորվել էին, որ Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթների բաժանման դեպքում Ավստրո-

Հունգարիան, որպես Բալկաններում «առավել չահագրգռված պետություն», կստանա Թուրքական երկու խոշոր նահանգ՝ Բոսնիան ու Հերցեգովինան, որոնք ընկած են Սալոնիկ տանող ճանապարհին: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ավստրո-Հունգարիան իրոք ստացավ այդ նահանգները, բայց առայժմ «ժամանակավորապես կառավարելու համար»[1]: Առաջ անցնելով ասենք, որ հետագայում, 1908 թ., օգտվելով երիտթուրքական հեղափոխությունից հետո Թուրքիայում ստեղծված անորոշ վիճակից, Ավստրո-Հունգարիան գրավեց Բոսնիան և Հերցեգովինան և դրանք կայսրության մաս հայտարարեց:

Սակայն Էգեյան ծով դուրս գալու համար պետք էր գրավել Թուրքական ևս մեկ տիրույթ՝ Մակեդոնիան, ուր ապրում էին բալկանյան տարբեր ազգեր՝ բուլղարներ, սերբեր, հույներ, Թուրքեր: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը ձգտում էր ապացուցել, որ միայն ինքն իրավունք ունի տիրելու այդ երկրին: Այդ էր պատճառը, որ Մակեդոնիայի համար մշտական պայքար էր մղվում նրանց միջև: Մեծ տերություններն իրենց չահերի համար օգտվում էին այդ տարաձայնություններից, նրանց ներքաշում առճակատումների ոլորտ՝ Բալկաններում մշտական խառնակչության վիճակ ստեղծելով:

Ավստրո-Հունգարիայի կառավարությունը 1908 թ. Աբդուլ Համիդից ստացել էր կոնցեսիա՝ դեպի Սալոնիկ երկաթգիծ կառուցելու համար, որով Մակեդոնիան փաստորեն դրվելու էր այդ տերության ազդեցության տակ:

Սակայն Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի ձգտումների առջև մեծ արգելքներ էին կանգնած: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը, 1907 թ. կնքած համաձայնագրով հզորացած՝ նպատակ դրեցին Մակեդոնիան իր երեք նավահանգիստներով անջատել Թուրքիայից, դրանով իսկ խոչընդոտել նշված երկաթգծի կառուցումը:

1908 թ. հունիսին Ռևելում Նիկոլայ II-ի և Մեծ Բրիտանիայի

---

[1] **Տե՛ս Мельник**, *Республиканская Турция, изд. "Московский рабочий", Москва-Ленинград, 1927, с. 8.*

թագավոր Էդուարդ VII-ի միջև տեղի ունեցած հանդիպման արդյունքում որոշում ընդունվեց՝ հանձնարարել իրենց զինված ուժերի շտաբներին՝ մշակել Մակեդոնիան Օսմանյան կայսրությունից օտարելու ռազմական ծրագիր: Ըստ որում՝ երկու կայսրությունները Մակեդոնիայի նկատմամբ իրենց մտադրությունն արդարացնում էին Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածը վկայակոչելով, այսինքն՝ Մակեդոնիան բարեկարգելու պատճառաբանությամբ: Մակեդոնիայի անջատումը Օսմանյան կայսրությունից ոչ միայն կհարվածեր Գերմանիայի ձգտումներին, այլև ճանապարհ կբացեր հետագայում Թուրքերին Օսմանյան կայսրության եվրոպական մասից արտաքսելու համար: Այլ խոսքով՝ վտանգը Թուրքիայի համար սուր կերպարանք էր առնում:

Հոգեբանական ճիշտ այդ բոպեին երիտասարդ Թուրքերն ահա՛ լայնածավալ գործունեություն ծավալեցին Մակեդոնիայում: Նրանք արագացրին իրենց ծրագրային նպատակների իրագործումը, այն է՝ կայսրության մեջ ստեղծել նոր վարչակարգ (ռեժիմ), որը կկարողանար արգելքներ հարուցել երկրի բաժանման վտանգի առջև ընդհանրապես և խափանել Մակեդոնիայում թուրքական տերության գործերին օտարների միջամտությունը՝ մասնավորապես: Եվ որպես օտար միջամտությունները խափանելու հնար, որպես Թուրքիայի վրա կուտակված ամպերը հեռացնելու հիմնական միջոց, երիտթուրքերն առաջին դիրք մղեցին 1876 թ. սահմանադրության վերականգնման անհրաժեշտությունը:

Երիտթուրքական գրականությունն ու զանազան թերթերը մեծ ընդունելություն էին գտնում օսմանյան բանակի սպայության ու զինվորների շրջանում: Դրանց մեջ արծարծվում էին սուլթանի արտաքին և ներքին սխալ քաղաքականությանը վերաբերող հարցեր, որոնց միջոցով դյուրընկալելի էր դառնում կայսրությունում ստեղծված իրավիճակը, այն է՝ Թուրքիան փաստորեն վերածվել է եվրոպական երկրների կիսագաղութի:

Աբդուլ Համիդի հալածանքներից հազարավոր երիտթուրքեր արտասահման էին փախել: Կայսրության սահմաններից ներս թափանցող իրենց թերթերում տպագրած հոդվածներում նրանցից շատերը օսմանյան զինվորներին պատմում էին Ֆրանսիա-

կան մեծ հեղափոխության, Ճապոնիայում տեղի ունեցած արմատական բարեփոխումների չնորհիվ Ռուսաստանի դեմ ճապոնացիների տարած հաղթանակի, Ռուսաստանի 20 միլիոն մուսուլմանների՝ պետական դումայում ունեցած ձայնի իրավունքի, Պարսկաստանում սահմանադրական շարժման, Մեծ Բրիտանիայի գաղութային ռեժիմի դեմ հնդիկ ժողովրդի պայքարի, Ասիայի զարթոնքի մասին և այլն: Բարեփոխումների անհրաժեշտության մասին հայտարարություններով երիտթուրքերը թուրքական բանակի հրամանատարների մեծ մասին թեքել էին ազատականության կողմը[1]:

Մակեդոնիայի բոլոր երեք նահանգներում զինվորների մեջ ծավալած քարոզչության ընթացքում երիտթուրք գործիչները բացատրում էին, որ եթե Կ. Պոլսի իշխանությունները թեկուզ մի քիչ խելք ունենան, ապա սուլթանին կհամոզեն չուտափույթ վերականգնել սահմանադրությունը, որը բոլորին, այդ թվում իրենց, հնարավորություն կտար աշխատելու հօգուտ պետության և խանգարելու կայսրության անդամահատմանը ձգտող ուժերին:

Քանի դեռ ուշ չէ, ազդարարում էին երիտթուրքական շարժման պարագլուխները, պետք է բուժել երկրի վերքերը, լուսավորել թուրք ազգաբնակչությանը, նրան հասարակական կյանքի կոչել և, այդպիսով, Թուրքիային վերադարձնել իր ինքնուրույն պետական գոյությունը: Ձէ՞ որ այդ բանը պահանջում է հենց իր՝ սուլթանի շահը: Բայց դա հնարավոր է այն ժամանակ միայն, եթե երկրում սահմանադրական իրավական կարգեր մտցվեն:

Ամեն օր նորանոր զորամասեր բացահայտորեն համակրանք էին արտահայտում երիտթուրքերի քարոզներին: Ստեղծվել էր մի դրություն, երբ Մակեդոնիայի թուրքական զորքերի մեծ մասը 1908 թ. հունիսի կեսերին արդեն մտափոխ էր, և միայն փոքր առիթներ էին պետք կրակը վառելու և բորբոքելու համար:

1908 թ. հունիսի 24-ին Մակեդոնիայի Մանասթիր (Բիտոլ)

---

[1] Տե՛ս **«The New York Times»**, *15 April 1909.*

քաղաքում, որը Փարիզից հետո երիտթուրքերի երկրորդ կենտրոնն էր դարձել, մի թուրք սպա ատրճանակով սպանում է իր գեներալին՝ Շեմսի փաշային և փախուստի դիմում: Ձերբակալվում են նրա գործակից սպաները, որոնցից երեքին զինվորական դատարանը դատապարտում է աքսորի, իսկ մնացած 20 հոգուն նույն դատարանը ազատում է՝ մեղադրանքի համար բավարար հիմքեր չունենալու պատճառով:

Շեմսի փաշայի սպանությունն իշխանությունները վերագրեցին երիտթուրքերի քարոզչության հաջողությանը, մյուս կողմից՝ Մակեդոնիայում տեղակայված երրորդ զորաբանակի հրամանատար Հիլմի փաշայի թուլությանը: Սուլթանի հրամանով՝ վերջինս ազատվեց պաշտոնից և նրա փոխարեն նշանակվեց Իսմայիլ փաշան:

Հունիսի 26-ին Մանասթրրի տների պատերին փակցվեցին տարբեր բովանդակության կոչեր: Դրանցից մեկով երիտթուրքերը պահանջում էին ձերբակալությունից անհապաղ ազատել Շեմսի փաշայի սպանության գործով դատապարտված սպաներին, մյուսում կայսրության կառավարման համակարգը համարվում էր երկրի համար կործանիչ և առաջարկվում էր դա վերացնել որքան հնարավոր է՝ չուտ: Երրորդ թռուցիկով երիտթուրքական ընդհատակյա կազմակերպությունը սուլթանից պահանջում էր երկրին սահմանադրություն տալ:

Երիտասարդ թուրքերի ուժգին քարոզչության հետևանքով նրանց հակասուլթանական դիրքորոշումը թափանցեց Սալոնիկ, և այստեղ նույնպես հուզումներ տեղի ունեցան: Քաղաքի զինվորական դպրոցը, որի ունկնդիրների զգալի մասը երիտթուրքական գաղափարների կրող էր, դարձավ հեղափոխական գործի խմորման կենտրոնատեղի: Քաղաքը եղավ նաև հենակետ երիտթուրքական գաղափարների հետագա ծավալման[1]:

Մակեդոնիայի Ռեսնե քաղաքում տեղակայված զորամասը հունիսի վերջերին բացահայտորեն հանդես եկավ կառավարու-

---

[1] *Տե՛ս* ***«Աւետարեր»*** *(Կ. Պոլիս), № 38, 19 սեպտեմբերի 1908 թ.:*

թյան դեմ: Շարժման գլուխ անցավ քաղաքի թուրքական կայազորի պետ, ծագումով ալբանացի Ահմեդ Նիազի բեյը[1]: Հուլիսի 3 (16)-ին խռովություն բարձրացնելով, նա անմիջապես հրապարակեց զինվորականությանը և ժողովրդին ուղղված կոչ, ուր ասված էր. «Յանուն Աստուծոյ և ճշմարտութեան՝ ապստամբութեան դրօշ կը բարձրացնեմ կառավարութեան ներկայ ըէժիմի դեմ, կը պահանջեմ սահմանադրութեան վերահաստատումը, որ տայ երկրին ապահովութիւն եւ անդորրութիւն, որոնց չնորհիւ միայն իմ երկիրը կը զօրանայ եւ կը բարգաւաճի: Կ'երդնում ոչ մէկ խտրութիւն չդնել ոչ ցեղի եւ ոչ կրօնների դէմ: Իմ դրօշակիս վրայ գրուած է «Ազատութիւն եւ ճշմարտութիւն»: Կը յուսամ որ բոլոր օսմանցիները արժանի մեծ համակրութեամբ պիտի ողջունեն այս շարժումը եւ պիտի պաշտպանեն այս իդէալը, որուն համար ուխտած ենք կռուիլ»[2]: Նիյազի բեյը փորձեց ապստամբություն առաջ բերել ամբողջ զինվորական օկրուգում, բայց հաջողություն չունենալով և պատժից խուսափելու համար՝ հեռացավ Ռեսնեից և իր համախոհների հետ քաշվեց լեռները:

Իսկ հուզումները չէին դադարում:

Հուլիսի 8-ին Սալոնիկում սերեսյան բերդապահ գնդի չորս երիտասարդ սպաներ, որոնք երիտթուրքական կուսակցության անդամ էին, սպանում են իրենց հրամանատար գնդապետին և փախուստի դիմում:

Մակեդոնիայի մի ուրիշ քաղաքում՝ Ուսկյուպում (Սկոպյե) տեղակայված հետևակային դիվիզիայի հրամանատար գեներալ Խատտի փաշան, մի գնդապետի և մի մայորի հետ, այդ օրերին անցնում է Ռեսնե և միանում երիտթուրքական խռովարարներին:

Նիյազի բեյի գործակալները, չրջագայելով ամբողջ Մակեդոնիան, բնակիչներին քարոզում էին, որ «երիտասարդ թուրքերի կուսակցության սկսած գործը սուրբ գործ է», որ իրենք

---

[1] Տե՛ս **А. Д. Новичев**, Турция. Краткая история, изд. "Наука", Москва, 1965, с. 117.

[2] **Վահան Փափազյան (Կոմս)**, Իմ յուշերը, հատ. Բ, Պէյրութ, 1952, էջ 26:

նպատակ չունեն քանդել ու արյունով ողողել երկիրը, այլ գործելու են մտածված, սառնասրտորեն: Նրանցից մեկը հավաքվածներին ասում էր. «Մենք ոչ կսպանենք և ոչ էլ կբանտարկենք Աբդուլ Համիդին, բայց նրան գահընկեց կանենք և կթողնենք, որ նա իր դիզած հարստությամբ ապրի Կ. Պոլսում՝ իբրև մի արտոնյալ քաղաքացի ... Ամբողջ զորքը մեզ հետ է, բացի թիկնազորից, որի անդամներից ավելի քան 70-ը Աբդուլ Համիդից ստացել է բարձր աստիճաններ: Մեզ հակառակ են միայն շեյխ-ուլ-իսլամը* և ուլեմաները**, որովհետև նրանք թյուրիմացաբար կարծում են, թե պետության ղեկը վերցնելուց հետո իրենց կզրկենք ամեն ինչից»[1]: Եվ որպեսզի հանգստացնեին իսլամ հոգևորականությանը, նրանք արտաբերում էին իսլամական կրոնի սպասավորների դարավոր խոսքերը՝ «Որտեղ թուրն է, այնտեղ մեր հավատքն է»[2]:

Շարժման ալիքն անցնում է Մանասթիր: Տեղի երիտթուրքական կոմիտեն վեց կետից բաղկացած մի հիշատակագիր է հանձնում պետությունների՝ քաղաքում գործող հյուպատոսներին: Հիշատակագրում նշվում էր, որ երիտթուրքական քաղաքական կազմակերպությունների պայքարի առաջին և գլխավոր նպատակը 1876 թ. սահմանադրության վերականգնումն է և դա երկրում ամբողջ ծավալով կիրառելը: Երկրորդ, սահմանադրական ռեժիմը պետք է ծառայի կայսրության բոլոր ժողովուրդների բարօրությանը՝ առանց ցեղի ու կրոնի խտրության: Երրորդ, շարժումը խաղաղ բնույթ ունենալով, հնարավորինս խուսափելու է ուժ գործադրելուց և եռանդուն միջոցներ է ձեռնարկելու դրան դիմելու միայն ամենածայրահեղ դեպքերում, այն ժամանակ, եթե անհրաժեշտ կլինի պատժել ազատության կատաղի թշնամիներին: Չորրորդ, խուսափելով անտեղի արյունահեղությունից՝ կուսակցությունը միաժամանակ տագնապում է,

---

* Օսմանյան կայսրության մուսուլմանների կրոնապետը:

** Իսլամ գիտական կրոնավորներ:

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. № 2, վավ. 37 (թերթի կտրոն):

[2] Տե՛ս «The New York Times», 15 April 1909.

որ, ինչպես նախկինում բազմիցս եղել է, այս անգամ էլ կառավարությունն ընդհարումներ առաջ կբերի մուսուլմանների և քրիստոնյաների միջև, որպեսզի պատասխանատվությունը գցի հեղափոխականների վրա: Հինգերորդ, կուսակցության Մանասթիրի բաժանմունքի ռազմական կազմակերպությունը որևէ հարձակում չի ձեռնարկի չրջակա ոչ մուսուլմանական գյուղերի վրա, ընդհակառակը՝ իր բոլոր հնարավորություններով դրանք կպաշտպանի չեթեներից և կքարոզի համերաշխություն ու եղբայրություն ժողովուրդների միջև: Վերջապես, վեցերորդ, կուսակցությունն ամեն ինչ կանի, որպեսզի իր ծրագիրը հայտնի դառնա ոչ միայն Թուրքիայի, այլև Եվրոպայի հասարակայնությանը:

Մակեդոնիայում չարժումն սպառնալի չափեր էր ընդունել, և դա զենքի ուժով ճնշելը դառնում էր ոչ իրական: Երիտթուրքերի կողմն էին արդեն անցել մակեդոնական զորքի նշանավոր զինվորական գործիչներ Էնվեր բեյը (Հիլմի փաշայի նախկին թիկնապահը), Հասան Սալահէդդին և Նուրի բեյերը: Բարձր Դուռը սրանց դիմեց հեռագրով՝ հորդորելով վերադառնալ իրենց պաշտոնատեղիները՝ խոստանալով ոչ միայն կատարյալ ներում, այլև աստիճանի բարձրացում: Սպաները, սակայն, կտրականապես մերժեցին: Շարժման գլխավոր հերոսները թաքնվում էին սարերում և այնտեղից ղեկավարում խռովարարներին: Ավելին, սարերում ապաստանածները ոչ միայն իրենց գաղափարակիցներից, այլև բանակից փախած զինվորներից ու սպաներից սկսեցին հատուկ զորք կազմակերպել: Խռովարարների կողմն էին անցնում ամբողջ գումարտակներ՝ իրենց սպաներով:

Հուլիսի 9-ի լույս 10-ի գիշերը Նիազի բեյը 5 գումարտակով և 20 թնդանոթով մտավ Մանասթիր[1]: Նրա հետ իր կողմնակիցներով գործում էր Զմյուռնիայի (Իզմիր) բանակային շտաբի նախկին պետ Սեալիդին բեյը, որն այժմ զինվորական չարժման գլխավոր ղեկավարներից էր: Զորքը կենդանի բռնեց Օսման փաշային՝ այն գլխավոր անձին, որի վրա սուլթանը պարտակա-

[1] Տե՛ս **«Դրօշակ»**, № 7 (195), հուլիս, 1908, էջ 99:

նություն էր դրել ճնշել ապստամբությունը: Նիազիի կարգադրությամբ՝ նրան հանեցին քաղաքից և ուղարկեցին Ռեսնե: Մանասթիրն երիտթուրքերի ձեռքը անցավ: Զորքը և նրան միացած մի քանի հազար ցուցարարները դուրս եկան հանրահավաքի, ուր հայտարարվեց, որ այսուհետ Մանասթիրում գործելու է 1876 թ. սահմանադրությունը: Հայտարարությունն ազդարարվեց թնդանոթաձգությամբ: Ականատես էին ոչ միայն բերդապահ զորքը, այլև Փոքր Ասիայից նոր ժամանած զորամասեր: Թեպետ վալին և պաշտոնյաները մնացին իրենց տեղերում, բայց բանտերից ազատվեց հազարից ավելի կալանավոր: Քաղաքում հասարակական կարգը չէր խախտվել, և բռնության դեպքեր չէին գրանցվել:

Նույն ժամանակ Սալոնիկը ևս անցավ ապստամբ զորքի ձեռքը:

Ամեն ինչից երևում էր, որ իշխանությունը սուլթանի ձեռքից գնում է:

Հուլիսի 10-ի առավոտյան սուլթան Աբդուլ Համիդը նախարարների խորհրդի կազմի մեջ փոփոխություններ կատարեց. մեծ վեզիր Ֆերիդ փաշան արձակվեց պաշտոնից, և նրա փոխարեն նշանակվեց Սաիդ փաշան, գլխավոր շտաբի պետ Ամեր Ռուշդի փաշան դարձավ ռազմական նախարար, իսկ Շաքիր փաշան նշանակվեց գլխավոր շտաբի պետ: Մնացած նախարարները մնացին իրենց պաշտոններում[1]: Մամուլը սուլթանի այդ քայլը համարեց զիջում երիտթուրքերին, քանի որ Սաիդ փաշան միջին գիծ պահող մարդ էր, որը կարող էր նաև միջնորդ-հաշտեցնողի դեր կատարել Ելդզդ քեոշկի, երիտթուրքերի ու եվրոպական պետությունների միջև:

Կ. Պոլսում շարունակում էին հուզումնալի տեղեկություններ ստանալ Մակեդոնիայից: Սուլթանը որոշեց ուժով ներգործել այնտեղի իրադարձությունների վրա: Մինչ այդ՝ սուլթանները կայսրության մեջ ծագած ամեն շարժում ճնշում էին զորքի միջոցով, բայց այժմ ի՞նչ կարելի էր անել, երբ ինքը՝ զորքը, չէր

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 151, 13 հուլիսի 1908 թ.:

ուզում հնազանդվել իշխանություններին և գնդակ արձակել սկսված շարժման գործիչների ու մասնակիցների դեմ: Վաշտ վաշտի հետևից չարունակում էին անցնել հեղափոխականների կողմը, և զորապետերն այլևս չէին կարողանում կարգի հրավիրել զինվորներին և սպաներին:

Շատ չանցած հայտնի դարձավ, որ նույնիսկ սուլթանի արքունիքում խաղաղ չէ. ալբանացիներից կազմված թիկնազորը հրաժարվել էր այլևս պաշտպանել Աբդուլ Համիդին: Նույն օրը ալբանացիների պարագլուխների՝ Ֆերիջովիչում տեղի ունեցող ժողովը սուլթանին հեռագիր ուղարկեց՝ պահանջելով վերականգնել միդհատյան սահմանադրությունը:

Թիկնազորի անսպասելի արարքը ճնշիչ տպավորություն գործեց սուլթանի վրա: Իրար հաջորդող լուրերից որևէ մեկը հուսադրող չէր: Լուր ստացվեց, որ օրըստօրե աճող սպառնալից անցքերի առիթով՝ Կրետե կղզու ափերում ծովակալ Ֆուլտոնի հրամանատարության տակ գտնվող բրիտանական միջերկրածովյան նավատորմի կազմից առանձնացվել է երկու հածանավ և ուղարկվել Դարդանելի ափերը՝ հրաման ունենալով հարկ եղած դեպքում մտնել նեղուց և պաշտպանել Կ. Պոլսում գտնվող բրիտանական հպատակների շահերը: Բայց դա բոլորը չէր:

Հուլիսի 10-ի կեսօրին տեղեկություն ստացվեց, թե զորապետերը խորհրդակցում են սուլթանի կրտսեր եղբայր, օրինական գահաժառանգ Ռեշադ իշխանի հետ: 1844 թ. ծնված Ռեշադը շրջապատում ուներ հեռատես ու եռանդուն, ազատամիտ ու համախոհական մարդու համարում, և այդ բոլոր հատկանիշներով նա գրավել էր շատերի համակրանքը: Բայց Աբդուլ Համիդը գահաժառանգ էր համարում իր սիրելի որդի Բուրհանէդդինին, որը գահի թեկնածուների շարքում միայն 14-րդ տեղն էր գրավում: Նա այդ ժամանակ 23 տարեկան էր, հայտնի էր ծայրահեղ հետադիմական հայացքներով և բնավորության անտանելի գծերով, որոնց պատճառով հեղինակություն չէր վայելում պետական բարձր պաշտոնյաների և զինվորականության շրջաններում: Անգամ արքունիքում որևէ մեկը չէր ուզում նրան գահաժառանգ տեսնել:

Այդքանից հետո էլ հայրը վճռել էր սպասել իրադարձու-

թյունների ելքին. եթե ապստամբների կողմից իրեն գահընկեց անելու վտանգն իրական կերպարանք ստանար, ինքը կհրաժարվեր գահից և դա կհանձներ որդուն:

Այս ճակատագրական պահին վայրկյան եղավ, երբ Աբդուլ Համիդը պատրաստ էր գահից հրաժարվելու, որպեսզի փրկի ստեղծված դրությունը, բայց Սաիդ փաշան վճռականապես հայտարարեց սուլթանին, որ այդպիսի պայմաններում ինքն անմիջապես հրաժարական կտա:

– Այդ պարագայում ի՞նչ պետք է անել,– հարցրել էր սուլթանն անվճռաբար:

– Պետք է սահմանադրություն տալ ժողովրդին,– հանգիստ պատասխանել էր մեծ վեզիրը:

Սուլթանի վրա ազդել էր նաև շեյխ-ուլ-իսլամի նախազգուշացումը՝ մուսուլման զինվորներին չարձակել մուսուլման ժողովրդի վրա:

Նախարարների խորհրդի կազմում փոփոխությունները դեռ չավարտած՝ Կ. Պոլսում լուր ստացվեց, որ Սալոնիկի կենտրոնական հրապարակում սկսվել ու շարունակվում է մի մեծ հանրահավաք: Մեկը մյուսին հաջորդած հռետորները երիտասարդ Թուրքեր էին՝ քաղաքացիներ և զինվորականներ, որոնք զանազան լեզուներով ճառեր էին արտասանում, ժողովրդին հրավիրում աջակցություն ցույց տալու երկրում սահմանադրական կարգերի հաստատման համար մղվող պայքարին: Հանրահավաքը հսկող ոստիկաններն ու ժանդարմները անտարբեր դիտում էին, թե հրապարակում ինչ է կատարվում:

Երիտթուրքերի շարժման ընդլայնման մասին նույն օրը տեղեկություններ ստացվեցին նաև Ուսկյուպից, Ֆյոփրյուլյուից, Իշտրիբից և Սերեսից: Սալոնիկի վիլայեթի Գևգելի քաղաքում իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել երիտթուրք զինվորական ավագ պաշտոնյաները, որոնք գայմագամին, վարչական խորհրդի անդամներին ու ժանդարմական վաշտի հրամանատարին կոնյակ հյուրասիրելով, ստիպել էին երդում տալ, որ հավատարիմ են մնալու իրենց ծրագրին[1]: Ուսկյուպում ապստամբած

[1] Տե՛ս **«Մշակ»,** № 151, 13 հուլիսի 1908 թ.:

Թուրքական զորքը պաշտոնանկ էր արել այնտեղ տեղակայված դիվիզիայի հրամանատարին և նրա տեղն ընտրել երիտթուրք զինվորականի, որի հրամանով զորքը գրավել էր կառավարչական բոլոր չինությունները: Կոսովոյի վալին ևս հարել էր երիտթուրքական շարժմանը: Թուրք ապստամբ զինվորներն սպանել էին սանջակներից մեկի զինվորական հրամանատարին, որը հրաժարվել էր ընդունել երիտթուրքերի համագործակցության առաջարկը: Նույն պատճառով սպանվել էր նաև Ելասսոնի գայմագամը: Սպանված Շեմսի փաշայի փեսան, որին հանձնված էր Մանասթիրի զորքի հրամանատարությունը, չկարողացավ ստանձնել իր պաշտոնը, քանի որ հեղափոխական շարժումը զորքի մեջ զարգանում էր ժամ առ ժամ[1]:

Զինվորական պահակախմբերը սպաների գլխավորությամբ պտտելով քաղաքում և շրջականներում՝ մուսուլման բնակչությանը թռուցիկներ էին բաժանում: Երիտթուրքական կոմիտեի առաջարկությամբ՝ թռուցիկները կարդում էին նաև քրիստոնյա և հրեա համայնքների ներկայացուցիչները:

Օսմանյան կայսրության երկրորդ մայրաքաղաքը համարվող Ադրիանապոլսում (Էդիրնե) տեղակայված բանակը, որը չափազանց թշնամաբար էր տրամադրված սուլթան Աբդուլ Համիդի նկատմամբ, գահից նրա անհապաղ հրաժարականը պահանջեց:

Հուլիսի 10-ի երեկոյան, եվրոպական գավառներում գտնվող զորքերի հրամանատարները համատեղ հայտարարեցին, որ իրենք կազմ ու պատրաստ սպասելու են մինչև խորհրդարանի գումարումը:

Սկսված շարժումը, բանակից հետո, արձագանք գտավ Բալկանների ոչ թուրք ժողովուրդների մոտ: Հույներն ու սերբերն աստիճանաբար միանում էին երիտթուրքերին: Օգուտ քաղելով ստեղծված պահից՝ ալբանացի պարագլուխները, հավաքվելով ժողովի, պահանջեցին պաշտոնանկ անել իրենց համար ոչ ցանկալի գայմագամներին և մութասերիֆներին: Բուլղարներն առայժմ թերահավատությամբ սպասում էին թե դեպի ո՛ւր են ծավալվելու դեպքերը:

---

[1] Տե՛ս *"Красный архив"*, т. 6 (43), Госиздат, Москва-Ленинград, 1931, с. 3-21.

Դիվանագիտական շրջաններում դեռ վաղաժամ էին համարում լուրջ նշանակություն տալ սկսված իրադարձություններին: Եվրոպական պետությունները տարբեր վերաբերմունք ունեին Մակեդոնիայի բոլոր երեք վիլայեթներում ծավալվող դեպքերի նկատմամբ: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան սուլթանին օգնելու համար սպառնում էին զորք ուղարկել ապստամբների դեմ: Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները գտնում էին, որ միջամտելու հիմք չկա, և դա պատճառաբանում էին նրանով, որ եթե Մակեդոնիայում տեղակայված Թուրքական բանակը, ժողովրդի համաձայնությամբ, փոխի կայսրության կառավարման ձևը, ապա դա բանակի, ժողովրդի և սուլթանի գործն է: Արտաքին որևէ միջամտություն կարելի կլինի արդարացնել միայն այն պարագայում, եթե ապստամբներն սկսեն կողոպտել և բռնություններ գործադրել: Ֆրանսիայի արտգործնախարարը հիշեցնում էր, որ ապստամբները բոլորովին նպատակ չունեն մակեդոնական որևէ վիլայեթ անջատել Թուրքիայից, ուստի թե՛ Ավստրո-Հունգարիան և թե՛ Գերմանիան որևէ հիմք չունեն խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Սակայն գերմանական և ավստրո-հունգարական իշխանությունները չարունակում էին մեծապես անհանգստանալ դեպքերի զարգացման անորոշությունից:

Սաիդ փաշայի առաջարկից հետո նախարարների խորհրդի նշված նիստում պառակտում առաջացավ: Պետության բարձրաստիճան պաշտոնյաների մի մասը սուլթանին խորհուրդ էր տալիս զիջումներ անել և անմիջապես հանդես գալ բարենորոգումների խոստումներով, մյուս մասն, ընդհակառակը, պնդում էր, որ ապստամբությունը պետք է խեղդել արյան մեջ:

Նախարարների խորհրդի երկրորդ (և վերջին) նիստն սկսվեց հուլիսի 10-ի ցերեկվա ժամը 3-ին: Ծավալված բուռն վիճաբանություններն ամբողջ գիշեր չարունակվեցին: Ապստամբությունը ուժով ճնշելու կողմնակիցները, ի վերջո, ստիպված էին զիջումների գնալ, քանի որ լուր հասավ, թե 2-րդ և 3-րդ զորաբանակները կայսրության եվրոպական մասից պատրաստվում են արշավել մայրաքաղաքի վրա, որը պաշտպանվելու հնարավորություն չուներ:

Նիստը ավարտին էր մոտենում առավոտյան, երբ նրա բոլոր մասնակիցները հանգեցին միատեսակ եզրակացության. քանի որ Կ. Պոլիսն արդեն կորցրել է մակեդոնական վիլայեթների վրա ունեցած իր իշխանությունը, ուստի պետք է սուլթանին խոր-հուրդ տալ երկրում բարենորոգումներ մտցնել: Թե ինչպիսի՞ արագությամբ Աբդուլ Համիդը տանուլ տվեց, կարելի է դատել նաև այն բանից, որ Մակեդոնիայի գլխավոր տեսուչ Հիլմի փա-շան, դրությունն անհուսալի գտնելով, հեռագրել էր նրան՝ խնդրելով ընդունել իր հրաժարականը: Նույնիսկ այս պայման-ներում՝ Աբդուլ Համիդը, հարձակվելով նախարարների վրա, նրանց բոլորին դավաճաններ անվանեց: Բայց նրանցից մեկը համարձակություն ունեցավ հրապարակելու հենց նոր ստացած տեղեկությունը, թե սուլթանի՝ Փոքր Ասիայից կանչած, վստա-հելի համարված զորքը, որը պետք է Մակեդոնիա գնար՝ ճնշելու ապստամբությունը, ցուցաբերում է անվճռականություն, և բացառված չէ, որ ապստամբների կողմը կանցնի: Միայն դրա-նից հետո, վերջապես, սուլթանն ընկրկեց: Վճռորոշ եղավ նաև այն լուրը, թե բանակն արդեն չարժվում է Կ. Պոլսի վրա:

Եվ տեղի ունեցավ անսպասելին:

«Հիվանդ մարդը» հանկարծ սկսեց կենդանության նշաններ ցույց տալ, փափագ հայտնել, որ կամենում է եվրոպական ազ-գերի նման ապրել:

Այդ պահը 1908 թ. (իսլամական տոմարով՝ 1324 թ.) հուլիսի 10-ի ուշ երեկոյան էր[1]:

---

[1] *Թուրքական հեղափոխության նախապատրաստման և իրականացման մասին մանրամասն տե՛ս **"Красный архив"**, т. 6 (43), 1930, с. 3-54, т. 1 (44), 1931, с. 3-39, т. 2 (45), 1931, с. 27-52:*

ՀԱՂԹԱՆԱԿ

1908 թ. հուլիսի 12 (25)-ի առավոտյան, թերթերի հասարակ լուրերի կողքին, սուլթանը հրատարակման էր հանձնել թերի ու անորոշ մի երկտող, որը ծանուցում էր, թե ինքը [Հուլիսի 11-ին] կայսերական հրաման է արձակել 1878 թ. խափանված օսմանյան խորհրդարանը նորից գումարելու մասին: Դա նաև նշանակում էր, որ վերականգնվում է 1876 թ. դեկտեմբերի 23-ին հռչակված միդհատյան սահմանադրությունը: Թեև սահմանադրությունը պաշտոնապես ոչնչացված չէր, թեև մինչ այդ դեռ հիշվում էր օրենքների մեջ, բայց իրականում մեռած էր կյանքի համար: Հետագա օրերին վերահրատարակվեցին 1876 թ. սահմանադրության շարադրանքը, այն իրադեն (կարգադրությունը), որով Աբդուլ Համիդն այդ թվականին հայտարարել էր սահմանադրությունը, և այն հրովարտակը, որ այդ ժամանակ հրատարակվել էր Միդհատ փաշայի ստորագրությամբ: Սահմանադրությունը վերականգնվում էր առանց որևէ փոփոխության:

Թերթերի էջերում հուլիսի 11-ի առավոտյան երևացած վերոհիշյալ լուրը մեկ-երկու ժամ հետո տարածվեց ժողովրդի մեջ՝ գրգռելով զանգվածների մտքերը:

Մի քանի ժամ անց մի հսկա բազմություն շարժվեց դեպի սուլթանի պալատ՝ իր հավատարմությունը հայտնելու նրան: Ժողովուրդը մնաց պալատի առջև ամբողջ գիշերը՝ կայսեր «երեսը տեսնելու փափագով»: Աբդուլ Համիդը բարեհաճեց գիշերվա ժամը 5-ին հայտնվել պատուհանի մոտ և հարցրեց ամբոխին, թե ինչո՞ւ է հավաքվել: Ամբոխը հետևյալ հայտարարությունն արեց. «Մենք միայն ու միայն Ձեր կայսերական առողջությանը փափագող ենք: Երեսուներկու տարիներից ի վեր մի քանի վատ անձինք Ձեր կայսերական դեմքը մեզ ցույց չտվին: Մեծապես ցանկանում էինք Ձեզ տեսնել: Շատ չնորհակալ ենք՝ հիմա տեսանք: Կեցցե՛ վեհ. սուլթանը, կեցցե՛ վեհ. սուլթանը»:

Սուլթանը պատասխանեց.

«Զավակնե՛ր,

Գահակալությանս սկզբից ի վեր աշխատել եմ հայրենիքիս

երջանկության ու փրկության համար: Ամենամեծ փափագս հպատակներիս երջանիկ տեսնելն է, որոնց բնավ չեմ տարբերում իմ զավակներից: Դրա արդար վկան Աստվածն է: Վստահ եղե՛ք՝ ձեր երջանկության համար ամեն բան պիտի անեմ: Սրանից հետո ձեր ապագան ապահովված է: Ձեր ստացած ազատությամբ ապրեցե՛ք եղբայրաբար: Ձեր ցույց տված հավատարմությունից ու երախտագիտությունից գոհ մնացի: Վերադարձե՛ք ձեր տները և հանգիստ եղե՛ք»[1]:

Լսելով սուլթանի այս խոսքերը՝ ամբոխն օդը թնդացրեց «կեցցե՜»-ներով և ցրվեց:

Ինչպես աշխատության համապատասխան տեղում ցույց ենք տվել, երիտթուրքական հեղափոխության նախօրյակին, շարժման ուժերը հետապնդում էին տարբեր ծրագրեր, տարբեր կերպ էին պատկերացնում գալիք հեղաշրջման նպատակներն ու խնդիրները: Այդ ուժերի միջև պարզ ու որոշակի դրսևորվել էին խոր հակասություններ, որոնք գլխավորապես արտահայտվում էին սուլթանի և սուլթանական կարգերի պահպանման կամ վերացման հարցերի շուրջ: Բայց քանի որ հեղաշրջումն անմիջականորեն իրականացրել էր երիտթուրքերի աջ թևը՝ Իթթիհադը, ապա, ըստ վերջինիս ծրագրի, Աբդուլ Համիդը պետք է մնար սուլթանական գահի վրա:

Սուլթան Աբդուլ Համիդի հուլիսի 11-ի հրամանագիրը վկայում էր, որ երիտթուրքերի շարժման գլխավոր նպատակը՝ խորհրդարանի վերստին գումարումը և սահմանադրության վերականգնումն իրագործված է, ուստի, ըստ Իթթիհադի կոմիտեի, նրան գահազրկելը միանգամայն ավելորդ էր դարձել: Իշխանության գալուց հետո Իթթիհադ կուսակցության համար օրվա ստիպողական պահանջ էր դարձել՝ երկրի բոլոր կողմերում նորանոր դիրքեր գրավել հասարակական և վարչական բնա-

---

[1] **«Արեւելք»,** № 6849, 15 հուլիսի 1908 թ.: Մի ուրիշ աղբյուրում հին Զարագործի այդ ելույթն այսպես է ներկայացված. «Իմ զավակնե՛ր, ես միշտ եղել եմ սահմանադրական: Եվ եթե սահմանադրությունն ուշացել է, դրանում մեղավոր են ինձ շրջապատող խորհրդականները...» (Տե՛ս В. А. Гурко-Кряжин, История революции в Турции, Москва, 1923, с. 32):

գավառներում, այդ դիրքերն ամրացնել ազգաբնակչության այն տարրերի ձեռքին, որոնք իրենց հասարակական-քաղաքական որպիսությամբ ընդունակ և վստահելի էին՝ հանդիսանալու Թուրքիայի նոր վարչակարգի կրողը, դարբնողն ու պաշտպանը:

Ըստ որում՝ Իթթիհադը սուլթանին գահին թողեց իր բոլոր առանձնաշնորհումներով, արտոնություններով ու անձեռնմխելիության ստորոգելիներով հանդերձ*: Բացառություն էր պալատական թիկնապահների թիվը, որը 390-ից իջեցվեց 30 հոգու[1]:

Սկզբում երիտթուրքական կոմիտեն պահանջ ուներ գահընկեց անել սուլթանին, բայց գնալով այդ հարցը դուրս եկավ դրա ծրագրից: Ինչո՞ւ գահընկեց անենք Աբդուլ Համիդին, ասում էին նրանք: Նրա համա՞ր, որ նա թշնամի է եղել սահմանադրությանը: Բայց այժմ նա կատարում է մեր **բոլոր** պահանջները: Մեր պահանջով նա պաշտոններից հեռացրեց նույնիսկ իր ամենասիրելի մարդկանց: Այդքանից հետո Աբդուլ Համիդի դեմ ուղղված գործողությունները ոչնչով պատճառաբանված ու արդարացված չեն: Իթթիհադականները նաև պատճառաբանում էին, որ իրենց կուսակցությանը համակրող կազմակերպված զորքից և միջին դասակարգից դուրս կա ժողովրդի ահագին տգետ ու մոլեռանդ մեծամասնություն, որն Աբդուլ Համիդի անձի մեջ տեսնում է կրոնապետ-խալիֆին՝ սրբին ու անձեռնա-

---

* Չնայած սուլթան Աբդուլ Համիդն ապրում էր մեկուսի և միապաղաղ կյանքով, այնուամենայնիվ, նրա պալատի պահպանման համար վիթխարի գումարներ էին ծախսվում: Ելզրզ քեոչկի պալատական անձնակազմը հաշվվում էր մի քանի հազար հոգի: Դրանց թվում կար 30 սենեկապետ, 30 գեներալ-համհարզ, 50 հերթապահ-համհարզ, 100 քարտուղար, 30 մուսահիբ (սուլթանի տխուր պահերին նրան զվարճացնող), 50 արարողապետ, 60 բժիշկ, 30 դեղագործ, խոշոր կենդանիների 50 որսորդ, թռչունների 30 որսորդ, 20 դայֆեջի (սուրճ պատրաստող և սուլթանին մատուցող), 50 գրադարանավար, 20 թարգմանիչ, 1000 սպասավոր, 400 խոհարար, 400 մատուցող, 400 երաժիշտ, դերասան, երգիչ, ակրոբատ, հարեմի 300 ներքինի-վերահսկիչ, 50 վարսավիր՝ ծառայողների համար, 50 դեկորատոր և այլն: Նշենք նաև, որ օսմանցի յուրաքանչյուր սուլթանի հարեմում կար 1000-ից մինչև 2000 կին (տե՛ս **А. В. Мезиер,** Турция, С.-Петербург, 1907, с. 64):

[1] Տե՛ս **«Աւետարեր»,** № 34, 22 օգոստոսի 1908, էջ 613:

մխելիին: Այդ մեծամասնությունն ահալից տարր է և չպետք է նրան գրգռել:

Թե ո՛ր արժանիքների համար էին երիտթուրքերը սուլթանին թողնում գահի վրա, այդ մասին մի քանի օր անց՝ հուլիսի 24-ին, Իթթիհադի կոմիտեն հանդես եկավ հայտարարությամբ, ուր ասված էր. «Օսմանեան «Առաջադիմություն և միություն» ընկերութիւնը մեր ազգին սահմանադրական վարչութիւն արժանացնելու համար չխնայեց պէտք եղած ջանքերը: Վեհ. Կայսրն ալ, գնահատելով սույն նպատակի սրբութիւնը եւ նուիրականութիւնը՝ բարեհաճեց հրամայել, որ ծանուցուի այն մասին, որ ազգն արժանացել է Սահմանադրական օրէնքին ու ազատութեանը: Կայսերական այս հրամանը մեր ամբողջ հայրենիքը երջանկութեան մի պարտէզի վերածեց, բոլոր օսմանցիներու սրտերը լեցուց ցնծութեամբ եւ բոլորին երախտապարտ ձգեց:

... Մենք կը մաղթենք, որ մեր Վեհ. Կայսեր հանդէպ ունեցած յարգանքն ու հաւատարմութիւնը անվթար մնայ»[1]:

Երիտթուրքերը գտնում էին, որ սուլթանն իր իրավասության տակ ունի այն բոլոր միջոցները, որոնցով նա կարող է միանգամայն խաղաղ կերպով վարչական հին եղանակից անցում կատարել նորին, և որ այդ ճանապարհը ամենաարժանապատիվը կլինի մի միապետի համար, որը նաև բոլոր մուսուլմանների գերագույն հոգևոր պետն է՝ խալիֆը:

Այդ տեսակետին էր ոչ միայն Իթթիհադը, այլև Աբդուլ Համիդի քրոջ որդի Սաբահէդդին իշխանը, որը 1908 թ. հուլիսի 14-ին "Matin" («Մաթեն») թերթում լույս ընծայած իր հոդվածում այդ հարցում լիովին համերաշխվել էր Ահմեդ Ռիզայի հետ:

Այսպիսով, բռնավորների առաջինն ու պարագլուխը դիվանագիտական ճարպիկ զգեստավորումով ասիական բռնակալից «ամենայն անկեղծությամբ» ստանձնել էր սահմանադրական թագավորի դեր: Զմոռանանք սակայն, որ Աբդուլ Համիդի դիմացիններն էլ ճիշտ նույնպիսի «անկեղծությամբ» ցույց էին տալիս, թե իրենք կատարյալ վստահությամբ հավատում են նրա անկեղծությանը...

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 2, վավ. 36, թ. 3:

1876 թ. սահմանադրությունը վերականգնելով՝ Աբդուլ Համիդը և Իթթիհադը միանգամից երկու նպատակի հասան. մի կողմից, նրանք երկար ժամանակով կանգնեցրին երկրում մեծ ծավալներ ընդունած սոցիալական և ազգային-ազատագրական շարժումները, մյուս կողմից՝ քաղաքական բեմի վրա քաշելով Թուրքական հասարակության ազգայնապես տրամադրված խավերին՝ նրանք փակում էին եվրոպական պետությունների՝ Թուրքական գործերին միջամտելու ճանապարհը:

Հուլիսի 12-ին և 13-ին եվրոպական վեց մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպանները ներկայացան մեծ վեզիր Սաիդ փաշային և իրենց հարգանքը մատուցեցին նրա կառավարությանը:

Թուրքական հեղափոխությունը կատարվեց համարյա անարյուն: Զոհերի թիվը չնչին էր՝ Մակեդոնիայում արձանագրվել էր ոստիկանական մի կոմիսարի և մի զայմագամի սպանությունը. Սալոնիկում, զինվորական կոմիտեի հրամանով, հրացանի էին բռնվել երեք լրտես և երկու սպա: Միայն այսքանը: Ուրիշ զոհեր չկային:

Ապստամբները ձերբակալել էին ընդամենը մի քանի բարձրաստիճան զինվորականների: Դրանց թվում էին հուլիսի 9-ին մայոր Նիազիի ձեռքով ձերբակալված Օսման փաշան, Ուսկյուպում ձերբակալված Հուսեյն Ռեմզի փաշան, որը չէր ցանկացել շարժմանը միանալ և փորձել էր հեռանալ Սալոնիկ: Ուսկյուպի դիվիզիայի հրամանատար գեներալ Հաջի փաշան իր գործընկերոջ ձերբակալությանը խոհեմաբար չէր միջամտել:

Որո՞նք էին երիտթուրքերի արագ (ընդամենը մի քանի օրում) հաղթանակի հիմնական պատճառները:

1) Երբ 19-րդ դարի 90-ական թվականներին Մակեդոնիայում և Հայաստանում սկսվել էին հակասուլթանական հուզումները, Թուրքիայի մուսուլմանների մոտ համոզմունք էր ստեղծվել, թե Եվրոպան կամենում է կայսրության Թուրքերին զոհաբերել քրիստոնյաներին: Հենց դա էր եղել հայկական կոտորածների գլխավոր պատճառներից մեկը: Նույն կարծիքը Թուրքական հեղափոխության նախօրյակին տարածված էր Մակեդոնիայի մուսուլմանների մեջ: Մակեդոնիայում քրիստոնյաների թշվառության մասին շատ էին խոսում և գրում Եվրոպայում,

մոռանալով երբեմն, որ իսլամ ներքնախավերը նույնպես արժանի են ուշադրության և նրանց տնտեսական ու քաղաքական դրությունը բնավ նախանձելի չէ: Շատ հաճախ էլ եվրոպացիները մոռանում էին, որ թուրքերը տիրապետող ժողովուրդ են և թույլ չեն տա իրենց անպատիժ կերպով վիրավորանք հասցնել՝ կայսրությունն անվանելով «հիվանդ մարդ» և այլն: Երիտթուրքական շարժումը Մակեդոնիայում լայն ծավալ ընդունեց նաև այդ հայացքների ազդեցության տակ: Դա Մակեդոնիայի թուրք բնակչության լայն շրջանների հակազդեցությունն էր եվրոպական միջամտության դեմ: Եվ շարժումը կարողացավ իր հետ տանել զորքը և պաշտոնյաներին, թուրք քաղաքաբնակներին և գյուղացիներին:

2) Շարժման սկզբում ամենալուրջ հարցերից մեկն այն էր, որ եթե մուսուլմանները զենք վերցնեն սուլթանական կարգերի դեմ, արդյո՞ք քրիստոնյաները կմիանան նրանց: Իրադարձությունների զարգացման ընթացքում վերջիններս սատար կանգնեցին մուսուլմաններին, կանգնեցին ապստամբած զորքի կողքին: Դրա պատճառն այն էր, որ Մակեդոնիայի քրիստոնյա բնակչությունն ավելի շատ ահաբեկված էր սեփական հրոսակախմբերից, քան թուրքական վարչությունից: Չետաները, որոնք ժամանակին կազմակերպվել էին թուրք ճնշողներից իրենց ազգության մարդկանց և իրենց կրոնը պաշտպանելու համար, դարձել էին ավազակախմբեր և կողոպտում էին անխտիր՝ թե՛ հավատակիցներին և թե՛ օտարներին: Իրենց աչխատանքով ապրող բուլղարները, սերբերը և հույները կաջակցեին յուրաքանչյուր ուժի, որն իրենց կազատեր ավազակախմբերի հարստահարումներից: Այդ հանգամանքով էր գերազանցապես բացատրվում, թե ինչու երիտթուրքերը մեծ համակրություն էին վայելում Մակեդոնիայի թե՛ քրիստոնյա և թե՛ իսլամ բնակչության մեջ:

3) Մակեդոնիայի մուսուլման գյուղացիները թեև ավելի քիչ էին վնասվում քրիստոնեական հրոսակախմբերից, քան քրիստոնյա բնակիչները, բայց տանջվում էին երկարատև, կամայականորեն ձգձգվող զինվորական ծառայությունից և այդ պատճառով կողմնակից էին հաչտության գնալու քրիստոնյաների հետ:

4) Շարժման գլխավոր ուժերից մեկը սպայությունն էր: Սրանց ազգային հպարտությունը մեծապես վիրավորված էր Թուրքական գործերին եվրոպացիների անընդհատ միջամտության պատճառով: Բավական էր, որ մի եվրոպացի պաշտոնյա գանգատվեր Թուրք պաշտոնյայից կամ սպայից, վերջիններս, ինչպիսի պաշտոն էլ գրված լինեին, հեշտությամբ արձակվում էին և ուղարկվում աքսոր՝ Տրիպոլիս կամ Փոքր Ասիա: Հավելենք նաև, որ եթե շարժումը քաղաքացիական լիներ, ապա, անշուշտ, կճնշվեր զորքի կողմից, ինչպես եղավ ռուսական հեղափոխության դեպքում: Բայց Թուրքական հեղափոխության առաջնորդը հենց զորքն էր: Զինվորական հեղափոխությունը ճնշելը բավական դժվար գործ է, թեպետև, ինչպես նշվեց, սուլթանն անհաջող փորձ արեց Մակեդոնիայում եղած ապստամբ զորամասերի դեմ ուղարկել փոքրասիական վիլայեթներից բերած զորքերը:

5) Սպաների և զինվորների միջև ստեղծվել էր բացառիկ համերաշխություն, հանգամանք, որի շնորհիվ ընդամենը մի քանի օրում Նիազի բեյի շուրջը հսկայական զինվորական ուժ էր համախմբվել:

6) Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ հուզումների կենտրոնատեղին ո՛չ Կ. Պոլիսը և ո՛չ էլ դրա շրջանները եղան: Ներգործական դերակատարները ճակատագրական դեպքերը ծավալեցին Մանասթիրի և Սալոնիկի շրջաններում, որտեղ եթե սպասվելու էին հակասուլթանական ելույթներ, ապա դրանք իրենց գունավորումով պետք է ընթանային բուլղարական, հունական, սերբական, այլ ոչ թե թուրքական, թեկուզև երիտթուրքերի, դրոշներով: Օսմանյան ամենաընտիր բանակները կենտրոնացված էին Թուրքիայի եվրոպական մասում, և եթե լիներ հակառակը՝ դրանց նույնիսկ մի մասը տեղակայված լիներ ամենատարբեր գաղափարների ու ձգտումների խառնարան դարձած մայրաքաղաքում, ապա բացառված չէր, որ զորքը ներքաշվեր արյունալի բախումների մեջ:

ՄԻԴՀԱՏՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես վերը նշեցինք, 1908 թ. հուլիսի 12 (25)-ին Կ. Պոլսի թերթերը տպագրեցին Միդհատյան 1876 թ. սահմանադրությունը (տե՛ս հավելված № 1) և այն հրովարտակը, որ այդ ժամանակ հրատարակվել էր Միդհատ փաշայի ստորագրությամբ:

Բացարձակ միապետական կարգը սահմանադրական միապետությամբ փոխարինելու, պետության կառավարման գործում Թուրք սուլթանի իրավունքները որոշ չափով սահմանափակելու գաղափարը 19-րդ դարի կեսերից զբաղեցրել էր Թուրք վերին հասարակության մեջ փոքր թիվ կազմող, եվրոպական կրթություն ստացած, ազատական հայացքներ ունեցող պետական գործիչների միտքը: Նրանցից էր Միդհատ փաշան:

1876 թ. մայիսի 29-ի լույս 30-ի գիշերը դավադրաբար սպանվեց սուլթան Աբդուլ Ազիզը: Դավադրությանը մասնակցել էր նաև Միդհատը, հույս ունենալով, թե գահի ժառանգորդ Մուրադը, որն իրեն ներկայացնում էր որպես եվրոպական քաղաքակրթության ջատագով, համարձակ քայլ կանի և երկրին սահմանադրություն կշնորհի: Մուրադ V անունով սուլթան հռչակված գահաժառանգը, իսկապես որ կատարում է առաջին քայլը. 1876 թ. հուլիսի 6-ին նա Միդհատին նշանակում է Պետական խորհրդի նախագահ, որը և ձեռնամուխ է լինում երկրի համար սահմանադրության նախագծի մշակմանը: Շատ չանցած, Միդհատն ստանձնում է մեծ վեզիրի պաշտոնը:

Միդհատ փաշան և նրա քաղաքական գաղափարակիցները ձեռնարկեցին օսմանյան պետության սահմանադրության ստեղծմանը: Միդհատը սահմանադրության նախագծի պատրաստման աշխատանքներին մասնակից դարձրեց Հայոց ազգային սահմանադրության ստեղծողներից մեկին՝ Գրիգոր Օտյանին, որը նրան որոշակի և արժեքավոր աջակցություն բերեց: Միդհատի և նրա խմբի անդամների գլխավոր սկզբունքն էր՝ սուլթանական կարգերը պետք է մնան անձեռնմխելի: Նախագիծը, ըստ էության, ուղղված էր նրանց դեմ, ովքեր համոզվել էին, որ սուլթանական կարգերն ամբողջովին սպառել են իրենց:

Օսմանյան կայսրության թուլացման գլխավոր պատճառը Միդհատը համարում էր ոչ թե սուլթանների բռնատիրական իշխանությունը, այլ քաղաքական և կրոնական իշխանությունները մեկ անձի մեջ կենտրոնացված լինելը: Բազմալեզու և բազմակրոն հպատակների տիրակալ սուլթանը, պետության գլուխ հանդիսանալով, միաժամանակ չի կարող լինել աշխարհի բոլոր մուսուլմանների առաջնորդը՝ խալիֆը: Երբ սուլթանը կրեց նաև խալիֆի տիտղոսը, այդ օրվանից կայսրության քրիստոնյա ժողովուրդները դադարեցին նրա նկատմամբ վստահություն տածել: Խալիֆաթը նրանց համար խորթ լինելով, նրանք, բնականաբար, չէին կարող հաշտ աչքով նայել նաև սուլթանական կարգերին: Այս է հենց իսլամ-քրիստոնյա տևական թշնամության պատճառը, որը կայսրության թուլացման գլխավոր պատճառն է նաև: Ելքն այն է, գտնում էր Միդհատը, որ սուլթանին թողնվի միայն պետության ղեկավարի պաշտոնը՝ դրան տալով աշխարհիկ նկարագիր: Այդ դեպքում կարելի կլինի իշխանության շուրջը իսլամների և քրիստոնյաների ամուր միություն ստեղծել:

Սուլթան Մուրադ V-ի օրոք իշխանությունն ըստ էության գտնվում էր մեծ վեզիրի (վարչապետի) և նրա գաղափարակիցների ձեռքում: Օգտագործելով այդ նպաստավոր վիճակը, Միդհատ փաշան և նրա գործակից Նամըկ Քեմալը վերջնական տեսքի բերեցին սահմանադրության նախագիծը: Ընդամենը յոթն ամիս իշխանության վրա մնալուց հետո սուլթանը գահազուրկ եղավ և նրան հաջորդեց Աբդուլ Համիդ II-ը: Իշխանության գլուխ անցած նոր սուլթանը, որը դեռ ամուր չէր հաստատվել գահի վրա, չհամարձակվեց հարձակվել մշակված ու վերջնական տեսքի բերված սահմանադրության նախագծի վրա, և իրեն առաջադեմ ներկայացնելու մղումով՝ հավանություն տվեց փաստաթղթին: Շատ չանցած, 1876 թ. դեկտեմբերի 23-ին, հանդիսավորությամբ հռչակվեց Օսմանյան պետության պատմության մեջ առաջին սահմանադրությունը:

Միդհատյան սահմանադրության ազդարարումն սկզբում դրական արձագանք գտավ եվրոպական սոցիալիստների մոտ, թեև սոցիալիստական մամուլի օրգանների մեծ մասը հենց

սկզբից կասկած ուներ, թե հետամնաց բռնապետական Թուրքիայի պայմաններում հնարավո՞ր է, որ նա ծառայի բուն նպատակին: Դրանք չեչտում էին, որ նման սահմանադրություն կարող են ունենալ միայն այն երկրները, որոնք իրենց հաշիվները վաղուց մաքրել են միջնադարյան ավատապետական կարգերի հետ: Սոցիալիստները գտնում էին, որ միդհատյան սահմանադրության հաջողությունը հրաշքի նման բան կլինի և որ նա ապագա ունի միայն սուլթանական կարգերի տապալման դեպքում:

Հայերը, որ միշտ ցանկացող և օժանդակող են եղել իրենց բնակակից ազգերի առաջադիմությանը, արտակարգ ուրախությամբ ողջունեցին օսմանյան սահմանադրության հաստատումը, հուսալով նրա մեջ տեսնել ամբողջ երկրի անարգել առաջխաղացումը դեպի մարդկային քաղաքակրթության բարձր նվաճումները, ինչպես նաև իրենց ազգի անվտանգ գոյության ապահովումը, ասելով. «Փա՜ռք Աստուծո, օսմանցի եղանք»:

Այդ օրերի թուրքական մամուլը լի էր խանդավառ հոդվածներով ի պատիվ օսմանյան սահմանադրության: Մի կողմ չէին քաշված նաև գրողներն ու բանաստեղծները:

Ժամանակի թուրքահայ ճանաչված բանաստեղծներից Թովմաս Թերզյանը «Մասիս» պարբերականի 1876 թ. № 1847-ում տպագրած «Առ ազատարարն» բանաստեղծության մեջ մեծարանք էր հղում թուրք վերանորոգչին.

«Միտհաթ՝ Քրօմուէլ մըտօք, հոգւով Ուոշինկթոն,
Զոր լուսատուք աշխարհիս՝ քորք երկնային՝
Ճշմարտութիւն եւ ազատութիւն Օսմանեան
Անդնդակոր գահուն պատուար կանգնեցին:
...
Տեսայ զքեզ՝ յաջդ արդարութեան չանթ՝ յահեակ
Ջահ՝ յառաջել:- Քոյին ճակտէդ ամպամած,
Շողս արձակէր յոյս:- Ի ի մրթին նրպատակ
Վերականգնման հայրենեաց՝ էր աչքդ յառած:
...

Ալեացն համար գլխով չափ վեր դու զմրրիկ
Փարատեցիր եւ զսին ուրուս, եւ բացաւ
Շունչ քո չիրմաց ըզկափարիչս ի նոր կեանս.
Նոճեաց մէջէն մահիկն անդրէն ցոլացաւ»:

Իսկ Մկրտիչ Խրիմյանը իր «Ժամանակ եւ խորհուրդ իւր» խորագրով գրքույկում գուրգուրանքով ու հափշտակությամբ տարփողում էր օսմանյան սահմանադրությամբ բացված դարաշրջանը.

«... Հասա՛ւ, հասա՛ւ այն ազատաբեր ժամանակ. քեզ աւետիս կու տամ, ժողովո՛ւրդ, լռած լեզուդ եւ փակուած բերանդ բա՛ց այսուհետեւ, խօսի՛ր եւ գրէ՛ որչափ սահմանադիր Օրէնք քեզ ազատութիւն կու տայ. խօսի՛ր երբ կը զրկուիս. խօսի՛ր դատաւորաց առաջ երբ ապիրատ ձեռք զքեզ կ՚ապտակեն. խօսի՛ր եւ իրաւունք խնդրէ՛...»[1]:

«Ո՛վ բարեգուշակ ժամանակ, դուն բարի եկար մեր աշխարհ. քեզ կ՚ակնկալէր եւ կը սպասէր Թուրքաստանի հինաւուրց Մայր՝ որ ամուլ էր եւ հրաշիւք յղացաւ. ցաւ երկունք կալաւ զինքն իբրեւ ծննդականի. երկնեց, երկնեց ու այսօր ծնաւ մեզ համար մի նոր մանուկ՝ Սահմանադրութիւն: Ցնծացէ՛ք ստրուկ ժողովուրդ, ցնծացէ՛ք, եւ ողջունեցէ՛ք այս նորածին մանուկ, եւ միանգամայն աղօթեցէ՛ք որ կայտառ մնայ, ապրի, զօրանայ եւ զարգանայ՝ ի կատարեալ հասակ»[2]: «...Ահաւասիկ այդ զարգացած Մանուկն է որ Եւրոպիոյ քաղաքակրթութիւն կը ներմուծէ մեր հին աշխարհ, հին ժողովուրդ նոր օրէնքով կը վերանորոգի եւ Օսմանեան Կայսրութեան տան ազատ գաւազան յայնժամ սահմանադրական Թագով կը փառաւորի»[3]:

Բայց Խրիմյան Հայրիկի խանդավառությունը չուտով մատնվելու էր անողորմ հուսախաբության: Ստեղծագործության առանձին հատվածներում սահմանադրության ապագայի վերա-

---

[1] *«Ժամանակ եւ խորհուրդ իւր», խորհուրդածեց **Խրիմյան Հայրիկ**, երկրորդ անփոփոխ տպագրութիւն, Թիֆլիս, 1895, էջ 18:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 21:*

բերյալ արդեն երևակվում էին կասկածանքի ու երկյուղի չեչ-տեր: Դա ակնհայտ էր հետևյալ տողերում. «Ով դուք ... որ նոր-ածին Սահմանադրութեան իբրեւ իմաստուն դայեակ կը հան-դիսանաք աշխարհի առաջ, աւագ աչքով հսկեցէ՛ք այդ մանկան վերայ, պինդ գրկեցէ՛ք եւ գուրգուրալով պատսպարեցէ՛ք զինքն որ սառնամանեաց հովէն չդողայ եւ հարաւոյ կիզիչ արեւէն չտագնապի:

Եւ գիտէ՞ք ու կը տեսնէ՞ք քաջ որ թէ՛ օտար եւ թէ՛ նոյն իսկ մեր աշխարհին մէջ դորա թշնամիներ շատ կան, որ կը շրջին ամենուրեք: Գուցէ դարան գործեն տգէտ ու խաւարագնաց մարդիկ, անտեսանելի մթութեան մէջ գողնան այդ մեր սիրա-կան մանուկ եւ կամ անդէն իւր խանձարուրին մէջ ճնշելով ու նեղելով խեղդեն: Եւ ի՞նչ կը լինի յայնժամ, գիտէ՞ք դուք, ո՜հ, յե-տինն չար քան զառաջինն...»[1]:

Նույնպիսի մտավախություն Խրիմյանը հայտնում էր գրքույ-կի առաջաբանում, գրելով. «Մարդ չէր հաւատար որ հինգ հա-րիւր տարեկան Թուրքիոյ պառաւած եւ ամուլ Մայր երկնելով, երկնելով հին աշխարհին համար նոր Մանուկ Սահմանադրու-թիւն մի ծնէր: Ծնաւ, այո՛, եւ ստրկացած ժողովուրդներ իբրեւ ազատարար կը համարին զայն. բայց տեսցուք թէ դայեակներ ի՞նչպէս պիտի պահեն զայն որ ապրի, երբ նոր վերածնած մա-նուկ Թուրքեստան կռուով ու սրով մանկակոտոր կը լինի»[2]:

Մարդկանց մտավախությունը հիմքից զուրկ չէր: Օսմանյան սահմանադրությունը, որ մի քանի խիզախ մարդկանց բարի մտքերի արգասիք էր, դրվել էր ստվար մեծամասնությամբ ան-պատրաստ հասարակության խախուտ հենարանի վրա: Պատա-հական չէր, որ սահմանադրությունը չուտով փուլ եկավ:

Երբ Աբդուլ Համիդն արդեն իրեն ամուր էր զգում գահի վրա, հարձակման անցավ սահմանադրական շարժման դեմ: Նրա հրամանով՝ 1877 թ. սկզբներից բանտեր նետվեցին կամ կայս-

---

[1] «Ժամանակ եւ խորհուրդ իւր», խորհուրդածեց **Խրիմյան Հայրիկ**, էջ 20–21:

[2] Նույն տեղում, էջ 6:

րության ասիական խորքեր աքսորվեցին շարժման սկզբնավորողներից ու մասնակիցներից շատերը: Սրանց բախտին արժանացավ նաև Միդհատ փաշան. նա զրկվեց պաշտոնից և ուղարկվեց աքսորավայր՝ Հիջազ, ուր շատ չանցած սուլթանի գաղտնի հրահանգով խեղդամահ արվեց: Լուծարելով առաջին գումարման խորհրդարանը, Աբդուլ Համիդը նաև արգելեց սահմանադրությունը: Շարժումը փակուղի մտավ:

Միդհատյան սահմանադրությունը Աբդուլ Համիդի կողմից ի չիք դառնալուց հետո, անդրադառնալով Թուրքիայում սահմանադրական շարժման պարտության պատճառներին, Կարլ Մարքսը Վիլհելմ Լիբկնեխտին գրած նամակում այդ պատճառներից կարևոր էր համարում այն, որ «Թուրքերը ժամանակին հեղափոխություն չարեցին Կոստանդնուպոլսում»[1]:

Թուրք սահմանադրականների պարտությանը հաջորդեց Թուրք բոնապետական նախորդ ռեժիմներից ավելի վայրագն ու կործանարարը՝ աբդուլհամիդյան զուլումը, որը երեսուն տարուց ավելի տևեց:

Եվ ահա միդհատյան տապալված սահմանադրությունն էր, որ օսմանյան 1908 թ. հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրը երիտթուրքերը կյանքի կոչեցին: Դա վերականգնվում էր առանց որևէ փոփոխության: Սահմանադրության վերահաստատումից հետո երիտթուրքերի կառավարությունը որպես Օսմանյան կայսրության հիմն հաստատեց Աբդուլ Հակկ Համիդի հեղինակած երաժշտությունը[2]:*

Ամբողջ մամուլը զանազան լեզուներով վերարտադրելով սահմանադրության ամբողջական բնագիրը՝ միաժամանակ, օրեր շարունակ, մեկնաբանում էր նրա չարադրանքը՝ մանրամասն վերլուծելով առանցքային հոդվածները:

Սուլթանի գործի ու անձի առավել նվիրյալ թուրք գործիչներն անմիջապես ցավ զգացին, որ սահմանադրության վերա-

---

[1] ***Կ. Մարքս** և **Ֆ. Էնգելս,** Сочинение, изд. 2-е, том 34, Политиздат., Москва, 1964, с. 247.*

* *Զչփոթել Աբդուլ Համիդի հետ:*

[2] *Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237ᵉ:*

կանգնումը տեղի է ունեցել մի փոքր ուշ, որ դա ոչ թե պիտի կապվեր երիտթուրքերի, այլ Աբդուլ Համիդի անվան հետ: Բայց նրանք սխալվում էին: Հաջորդ օրն իսկ պարզ դարձավ, որ սահմանադրությունը ժողովուրդն արդեն աներկբա կապել է սուլթանի անվան հետ՝ հենց երիտթուրքերի եռանդուն քարոզչությամբ: Սուլթանի, որպես սահմանադրության վերականգնողի, համբավը է՛լ ավելի տարածվեց ամենուր, երբ հուլիսի 16-ին, երիտթուրքերի կոմիտեի պահանջով՝ շեյխ-ուլ-իսլամը սահմանադրությանը հավատարիմ մնալու երդում վերցրեց սուլթանից:*

Իհարկե, առաջին իսկ օրից շատերը մտավախություն ունեին, թե սահմանադրությունը վերականգնելու սուլթանական իրադեն Աբդուլ Համիդի համար միայն մի միջոց է ժամանակ շահելու, ուժերը վերախմբավորելու և երկիրը նախկին քաղաքական վիճակին բերելու համար:

Հուլիսի կեսերին հրատարակած մի թռուցիկում իշխան Սաբահէդդինի կողմնակիցները հանրությանը զգոնության կոչ էին անում: «Զարմանալի ոչինչ չի լինի,- ասված էր կոչում,- եթե մի քանի ամսից հանկարծ մերկանա կեղծավոր անկեղծությունը և պարզվի, որ սուլթանի այս ամբողջ ազատասիրությունը լոկ նեղը լծված մարդու մի ճարպիկ խաղ է եղել՝ թեկուզ միջազգային արտաքին վերահաս միջամտության առաջն առնելու և, մյուս կողմից, ներքին հեղափոխական տարրերին խաբելով՝ դրանց կազմն ու մանավանդ գլխավոր գործիչներին երևան հանելու և ապա նրանց ճնշելու համար, եթե կարողանա:

Եթե կարողանա ... Այսօր դեռևս անկարող է: Հոգսը վաղվա մասին է»[1]*:*

Դա էր պատճառը, որ երիտթուրքական կոմիտեները հանդես էին գալիս հայտարարություններով ու կոչերով, որոնցով ժողովրդին բացատրում էին երկրի ներքաղաքական վիճակը և

---

* ***«Աւետարերը»*** *գրում էր. «Յուլիս 12 (25)-ի մեծ օրը օսմանեան պատմութեան մէջ յաւերժ յիշատակելի պիտի մնայ Վեհ. Սուլթանին անհամար շնորհներուն այս մեծագոյնով» (№ 31, 1 օգոստոսի 1908 թ.):*

[1] ***«Արեւելեան մամուլ»****, № 31, 29 հուլիսի 1908 թ.:*

ցույց տալիս, որ սահմանադրությունն այլընտրանք չունի:

Այսպես, Մանասթրրի երիտթուրքական կոմիտեի 1908 թ. հուլիսի 14-ի կոչում ասված էր.

«Սուլթանն ստորագրեց 1876 թվականի սահմանադրությունը մտցնելու հրովարտակը: Մենք հավատում ենք, որ այս անգամ սահմանադրությունն իրապես հաղթանակեց: Բայց մենք պետք է պատրաստ լինենք ամեն պատահարների և հանգիստ կերպով սպասենք: Եթե կառավարությունը մտադիր է խաբել երիտասարդ թուրքերի կուսակցությանը, այդ պարագայում այս վերջինը հանկարծակիի եկած չի լինի և անմիջապես քարոզչությունը կվերսկսի: Մենք պահանջում ենք համաներում, մամուլի ազատության մասին օրենք, ժողովներ գումարելու մասին օրենք, պահանջում ենք որոշակի ժամկետ նշանակել, թե ե՞րբ պետք է սկսվեն խորհրդարանական ընտրությունները:

Երբ այս բոլոր պահանջներն իրագործված կլինեն, այն ժամանակ միայն կասկածից դուրս կարելի է համարել երիտասարդ թուրքերի կուսակցության հաղթանակը»[1]:

«Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության Փարիզի կոմիտեն հուլիսի 17-ին հրապարակած հայտարարության մեջ նշում էր, որ Օսմանյան կայսրության բացարձակ միապետությունն անդառնալիորեն վերածվում է սահմանադրական միապետության, որ հենց հանուն այդ նպատակի են մոտ կես դար շարունակ պայքար մղել երիտթուրքերը: «Միայն սահմանադրական ռեժիմի և պառլամենտարիզմի վրա հիմնված իրավական պետությունն ի վիճակի կլինի վերջնական փլուզումից փրկել օսմանյան հայրենիքը: Սահմանադրությունը մեկ ժամում կարող է Թուրքիային տալ այն ամենը, ինչ նրան չտվեցին 40 տարիների ռեֆորմները»[2]: Ուստի կուսակցությունը կես ճանապարհին կանգ չի առնելու և չի նահանջելու: «Այսուհետ սահմանադրությունը մեր ապրելու կերպն է»,- ասված էր հայտարարության վերջում[3]:

---

[1] ***Х. З. Габидуллин**, Младотурецкая революция, Москва, 1936, с. 100.*

[2] ***Մատենադարան**, Կաթողիկոսական դիվան, թղթ. 227, վավ. 12, թ. 4:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

Ի՞նչ բովանդակություն ուներ երկրում քաղաքական ասպարեզի տնօրեններ դարձող երիտասարդ Թուրքերի վերականգնած միդհատյան սահմանադրությունը:

Միդհատ փաշայի սահմանադրությունը կամ հիմնական օրենքը («Գանուն-ի էսասի») բաղկացած էր 119 հոդվածից, որոնք ամփոփված էին 11 բաժիններում:

***Առաջին՝** «Օսմանյան կայսրության երկրներ» բաժնում (1-7-րդ հոդվածներ) տրված էին սահմանադրության ելակետային դրույթները, որոնք մի հիմնական միտք էին հաստատագրում՝ օսմանյան պետությունն անբաժանելի է: Առաջին հոդվածում ասված էր. «Օսմանյան կայսրությունը կազմված է արդի երկրներից, մասերից ու առանձնաչնորհյալ նահանգներից և, լինելով մեկ մարմին, որևէ ժամանակ, որևէ պատճառով ենթակա չէ անջատման»: Երկրորդ հոդվածն ազդարարում էր, թե Կ. Պոլիսը թեև պետության մայրաքաղաքն է, բայց կայսրության մյուս քաղաքների նկատմամբ չունի բացառիկ առանձնաչնորհում և մենաչնորհներ: Հաջորդ երեք հոդվածները ամրագրում էին իշխանության գլխավոր կրողի իրավունքները: Ըստ երրորդ հոդվածի՝ Օսմանյան կայսրության իշխանությունն իրենով մարմնավորում է իսլամության բարձրագույն խալիֆայությունը, և ըստ հնավանդ օրենքների՝ պատկանում է Օսմանի սերնդից ավագ արու զավակին: Սուլթանը, որպես գերագույն խալիֆ և տեր օսմանյան բոլոր հպատակների վրա, պատասխանատվության ենթակա չէ և անձեռնմխելի է. նրա առանձնաչնորհությունները նույնն են, ինչ որ ունեն Արևմուտքի սահմանադրական պետությունների ղեկավարները: Սուլթանի հպատակներն անվանվում են օսմանցիներ: Պետական կրոնը իսլամն է, օրենքով ճանաչվում են բոլոր դավանությունները: Յոթերորդ հոդվածում ամրագրված են սուլթանի նվիրական իրավունքները՝ կազմել նախարարների խորհուրդ և կամ հրաժարեցնել, աստիճաններ ու պաշտոններ շնորհել, պատվանշաններ տալ, առանձնաչնորհյալ նահանգների առանձնաչնորհության օրենքների համաձայն պաշտոնաբաշխումներ անել, դրամ կտրել, օտար տերությունների հետ դաշնագրեր կնքել, պատերազմ կամ հաշտություն հայտարարել. հրաման տալ ցամաքային և ծովային զորաց*

ուժերին, օրենքով տրված պատիժները թեթևացնել կամ ներել, ընդհանուր ժողով կազմել կամ դադարեցնել, և կամ հարկ եղած դեպքում դա ցրել՝ պատգամավորական մարմնի անդամները նորից ընտրելու պայմանով:

Երկրորդ *բաժնում (8–26-րդ հոդվածներ) ամրագրված էին կայսրության հպատակների հասարակական իրավունքները: 9-րդ հոդվածը, հստակեցնելով օսմանցի ամեն մի անհատի իրավունքների սահմանները, արձանագրում էր. «Բոլոր օսմանցիներն իրենց անձնական ազատության տերն են և ուրիշի ազատության իրավունքը բռնաբարելու իրավունք չունեն»: 10-րդ հոդվածը նվիրագործում էր անձի ազատությունը, ազդարարելով. «Անձի ազատությունը զերծ է ամեն տեսակ բռնաբարումից: Որևէ անհատ չի կարող պատժվել ուրիշ որևէ պատրվակով, բացի օրենքով նախատեսված պատժաչափով և եղանակով»: 11-րդ հոդվածում երաշխավորվում էր «այլևայլ ժողովուրդներին տրված կրոնական մենաշնորհների ըստ առաջնային գործադրությունը»: Այս հոդվածը չատ կարևոր էր Թուրքահայության համար, որն արդեն մի քանի հարյուր տարի օգտվում էր երկրի քրիստոնյա հայ համայնքին տրված դավանական իրավունքներից և 1863 թ.-ից ուներ իր ներքին կյանքը կանոնավորող Ազգային սահմանադրությունը և այլն:*

12-րդ հոդվածը վերաբերում էր մամուլին: «Մամուլը օրենքի սահմաններում ազատ է»,- ազդարարում էր հոդվածը:

15-րդ և 16-րդ հոդվածները նվիրված էին կրթության խնդիրներին: Նշված էր, թե դաստիարակության գործն ազատ է, օրենքի սահմաններում ամեն մի օսմանցի արտոնված է ընդհանուր և մասնավոր դասավանդության, բոլոր վարժարանները պետության հսկողության տակ են, անայլայլ պիտի պահպանվի տարբեր ազգերի կրոնական հավատալիքների դասավանդման եղանակը:

Այս՝ երկրորդ բաժնում, ուր խոսվում էր բոլոր օսմանցիների իրավունքների մասին, չեչտադրվում էր, որ նրանք, առանց ազգի ու կրոնի խտրության, իրավունք ունեն խնդրագրերով դիմել խորհրդարանին, մտնել պետական ծառայության, և ընդհանրապես, բոլորը հավասար են օրենքի առջև: Հարկերի ծանրության

տակ կքող քրիստոնյաների և, հատկապես, հայերի համար շատ կարևոր էր, որ ըստ սահմանադրության, բոլոր հարկերը պետք է հավասար բաժանվեին: 21-րդ հոդվածն այսպես էր արծարծում սեփականության խնդիրը. «Ամեն մարդ ըստ օրենքի իր սեփական ստացվածքի ու կալվածքների տերն է ապահովապես»: Հաջորդ հոդվածը՝ 22-րդը չարունակում էր նախորդի տրամադրությունը. «Օսմանյան երկրներում ամեն անհատի բնակարանն ու տունը անբռնաբարելի են: Օրենքով որոշված պարագաներից դուրս, որևէ պատճառով, իշխանությունը բռնի կերպով չի կարող մտնել որևէ մեկի բնակարանից կամ տնից ներս»: «Տանջանքը և ամեն տեսակ չարչարանքները բացարձակապես և խսպառ արգելված են»,- ասվում էր 26-րդ հոդվածում:

Սահմանադրության **երրորդ** բաժինը (27-38-րդ հոդվածներ) սահմանում էր նախարարների խորհրդի, նախարարությունների ու նախարարների իրավունքները, լիազորություններն ու պարտականությունները: Մեծ եպարքոսին (մեծ վեզիրին) և շեյխուլ-իսլամին սուլթանն անմիջականորեն ինքն էր նշանակում՝ իր վստահած անձերից (27-րդ հոդված): Նախարարների թեկնածությունները առաջ էր քաշում մեծ եպարքոսը, իսկ նախարարները հաստատվում էին կայսեր իրադեով կամ մերժվում նրա կողմից (28-րդ հոդված): Որպես քաղաքացիներ՝ նախարարներն ունեին նույն իրավունքները, ինչպես կայսրության մյուս բոլոր հպատակները (33-րդ հոդված): Նախարարների խորհուրդը նիստեր է գումարում մեծ վեզիրի նախագահությամբ: Յուրաքանչյուր նախարար պատասխանատու է միայն իր իրավասության ներքո գտնվող վարչության սահմաններում կատարվածների համար: Պատգամավորների ժողովը կարող է պահանջել, որ դատի ենթարկվեն նախարարները. հիմնվում է բարձրագույն դատարան՝ նախարարներին մեղադրող գործերը քննելու համար: Նախարարները կարող են ներկա լինել երկու պալատների նիստերին և խոսել այնտեղ. նրանց կարող են հարցապնդումներ անել: 35-րդ հոդվածը վերաբերում էր նախարարների և պատգամավորական ժողովի փոխհարաբերություններին, որոնք ձևակերպված էին այսպես. երբ նախարարների և պատգամավորական ժողովի միջև որևէ խնդրի չուրջ ծագի կարծիքի անհա-

մաձայնություն և նախարարները պնդեն, իսկ պատգամավորները՝ մեծամասնությամբ, մանրամասն պատճառաբանությամբ, բացարձակապես և կրկնապես մերժեն, այդ դեպքում սուլթանի բարձր իրավունքն է փոխել նախարարներին կամ պատգամավորական ժողովը ցրել՝ օրենքով նախատեսված պայմանաժամի ընթացքում դարձյալ ընտրելու պայմանով:

Երեք հոդված (39-41-րդ) ընդգրկող **չորրորդ** բաժինը սահմանում էր պետական պաշտոնյաների իրավունքներն ու պարտականությունները՝ լրացնելով երկրորդ բաժնի 18-րդ և 19-րդ հոդվածները: Ըստ այս հինգ հոդվածների տրամադրությունների՝ պետական պաշտոնի նշանակելիս պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուրի կարողությունները և ընդունակությունները, այլ ոչ թե ազգային կամ կրոնական պատկանելությունը: Բոլոր պետական պաշտոնյաները պարտավոր են իմանալ տերության պաշտոնական լեզուն՝ թուրքերենը: Պաշտոնյաներն իրենց ապօրինի գործողությունների համար պատասխանատվությունից չէին ազատվում, երբ ասում էին, թե իրենք վարվել են համաձայն իրենց իշխանություններից ստացած հրամանագրերի:

Հինգերորդ բաժինը (42-59-րդ հոդվածներ) վերնագրված էր՝ «Ընդհանուր ժողով», ուր արձանագրված է, որ դա բաղկացած է երկու՝ միմյանցից անջատ մարմիններից՝ սենատից (մեջլիս-ի աայան) և պատգամավորական ժողովից (մեջլիս-ի մերուսան): Այս երկու մարմինները գումարվում են ամեն տարի՝ բացվելով նոյեմբերի 1-ին՝ երկու պալատներին ուղղված սուլթանական բարձրագույն իրադեով (հրովարտակ): Նստաշրջանը տևում է չորս ամիս՝ մինչև հաջորդ տարվա մարտի սկիզբը և փակվում է դարձյալ բարձրագույն իրադեով: Եթե այս երկու մարմիններից մեկը նստաշրջանի հավաքվելիս չի ապահովում պատգամավորների ու սենատի անդամների՝ օրենքով նախատեսված թվաքանակը, ապա նիստ չի գումարվում: Սուլթանն իրավունք ունի ընդհանուր ժողովի գումարման համար որոշված ժամանակը երկարաձգել կամ կրճատել (43-րդ հոդված): Ընդհանուր ժողովի բացման օրը ներկա է լինում սուլթանը կամ նրա կարգադրությամբ՝ մեծ եպարքոսը (45-րդ հոդված): Նույն անձը չի կարող միաժամանակ անդամ լինել հիշյալ երկու մարմիննե-

ին (50-րդ հոդված): Հաջորդ հոդվածներով (52-55-րդ հոդվածներ) ճշտվում էին ընդհանուր ժողովի գործունեության ոլորտները: Թեև նոր օրենքի չարադրանքը կազմելը կամ արդեն ընդունված օրենքի չարադրանքը բարեփոխելը մտնում էր նախարարների խորհրդի իրավասության մեջ, բայց ընդհանուր ժողովը նույնպես իրավասու էր օրինագծեր ընդունելու և գործադրության մեջ դնելու՝ սուլթանի՝ իրադե չնորհելու դեպքում: Ժողովի աշխատանքներն ընթանում են միայն թուրքերենով:

Սահմանադրության ***վեցերորդ*** *բաժինը (60-64-րդ հոդվածներ) վերաբերվում էր սենատին: Այս բաժնում ասվում է, որ սենատի անդամների առավելագույն թիվը չպետք է անցնի պատգամավորական ժողովի անդամների մեկ երրորդ մասից: Սենատի անդամներն անվանապես նշանակվում են սուլթանի կողմից: Սենատորները պետք է պետության մեջ հայտնի անձնավորություններ լինեն, և նրանց տարիքը չպետք է 40-ից փոքր լինի: Սենատի անդամակցությունը ցկյանս է:*

Յոթերորդ *բաժինը (65-80-րդ հոդվածներ) վերնագրված էր՝ «Պատգամավորական ժողով»: Ըստ 65-րդ հոդվածի՝ պատգամավորական ժողովի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ: 50000 օսմանցի տղամարդիկ ընտրում են մեկ պատգամավոր: Պատգամավորական ժողովի անդամ չի կարող լինել կառավարական մարմիններում պաշտոն ունեցողը, իսկ եթե վերջինս ընտրվի պատգամավոր, ապա պետք է հրաժարի պաշտոնից (67-րդ հոդված): 68-րդ հոդվածով սահմանվում է, թե ով չի կարող լինել օսմանյան պառլամենտի պատգամավոր՝ ով օսմանյան հպատակ չէ, թուրքերեն չգիտե, չի լրացել 30 տարին, քաղաքական իրավունքից զրկված է և այլն: Պառլամենտի ընտրությունները տեղի են ունենում չորս տարին մեկ. յուրաքանչյուր պատգամավորի պաշտոնավարության շրջանը չորս տարի է, բայց նա կարող է վերընտրվել (69-րդ հոդված): Պատգամավորների ընդհանուր ընտրությունները տեղի են ունենում պառլամենտի առաջին գումարումից (նոյեմբեր ամսից) առնվազն չորս ամիս առաջ (70-րդ հոդված): Սուլթանի իրադեով պառլամենտը լուծարվելուց և ցրվելուց հետո պառլամենտի նոր ընտրությունները տեղի են ունենում վեց ամսից ոչ ուշ (73-րդ հոդ-*

ված): Պառլամենտը ձայների մեծամասնությամբ ընտրում է նախագահի երեք թեկնածու, ինչպես նաև նրա երկու տեղակալների 3-ական թեկնածուներ, ընդամենը 9 հոգու, որոնք ներկայացվում են սուլթանին, որը և իրադեով նրանցից հաստատում է պառլամենտի նախագահին և երկու փոխնախագահներին (77-րդ հոդված): Պառլամենտի նիստերը տեղի են ունենում հրապարակայնորեն, իսկ եթե շատ կարևոր հարցեր են ծագում, որոնք քննարկման են ներկայացվում նախարարների կամ առնվազն 15 պատգամավորների կողմից, ապա նիստերի դահլիճում մնում են միայն պառլամենտի անդամները, որոնք և ձեռնարկում են այդ հարցերի դռնփակ քննարկումը (78-րդ հոդված): Նստաշրջանի ընթացքում պատգամավորները, առանց պատգամավորական ժողովի թույլտվության, չեն կարող կալանավորման կամ դատի ենթարկվել:

Սահմանադրության ***ութերորդ*** *բաժինը վերաբերում էր դատարաններին (81-91-րդ հոդվածներ): Դատարանները հայտարարվում էին անկախ, այսինքն՝ որևէ միջամտությունից ազատ: Դատավարությունները տեղի պիտի ունենային հրապարակավ, առանձին դեպքերում՝ նաև դռնփակ: Յուրաքանչյուր անհատ կարող էր դատարանում իր իրավունքը պաշտպանել հարկ եղած օրինավոր որևէ միջոցով:*

Այդ բաժնին անմիջականորեն հաջորդում է բարձրագույն ատյանին վերաբերող՝ ***իններորդ*** *բաժինը (92-95-րդ հոդվածներ): Սահմանված էր, որ դա բաղկացած է 30 անդամից, որից 10-ը ընտրվում են սենատից, 10-ը՝ պետական խորհրդից և 10-ը վճռաբեկ ու վերաքննիչ ատյանների նախագահներից ու անդամներից: Բարձրագույն ատյանը պետք է քններ դատարանների այն վճիռները, որոնք պետության համար հույժ կարևոր նշանակություն ունեին:*

Տասներորդ *(նախավերջին) բաժինը նվիրված էր ելմտական գործերին (96-107-րդ հոդվածներ): 96-րդ հոդվածով սահմանվում էր. որևէ մեկն իրավունք չունի օսմանյան հպատակից այնպիսի տուրքեր գանձել, որոնք պետության կողմից որոշված չեն օրենքով: Պետության տարեկան բյուջեն մանրամասն քննարկվում է պառլամենտում և ընդունվում է համապատասխան որո-*

չում (98-րդ հոդված), որի գործադրությունը միայն մեկ տարվա համար է (101-րդ հոդված):

*Սահմանադրության չարադրանքն ավարտվում է **տասնմեկերորդ** բաժնով (108-119-րդ հոդվածներ), որը նվիրված էր կայսրության նահանգներին: Նահանգներում, գավառներում և գավառակներում պետք է գործեն վարչական ժողովներ, իսկ նահանգային կենտրոններում՝ տարեկան մեկ անգամ՝ ընդհանուր նահանգային ժողով (109-րդ հոդված): Նահանգների ընդհանուր ժողովների խնդիրն է՝ քննել ճանապարհաշինության, վարկավորման, արհեստագործության, վաճառականության, երկրագործության, հանրային կրթության, տուրքերի բաշխման ու գանձման և այլ հարցեր (110-րդ հոդված): 113-րդ հոդվածում արձանագրված է, որ երբ հաստատուն ապացույցներ լինեն, թե կայսրության որևէ մասում տեղի է ունենում խռովություն, կայսերական կառավարությունն իրավասություն ունի ժամանակավորապես այդտեղ հայտարարելու ռազմական դրություն, որը կնչանակի երկրի օրենքների և կանոնների կիրառման ժամանակավոր դադարում[1]:*

Վերոթվարկյալներից բացի, սահմանադրության տարբեր բաժիններում տեղ գտած համապատասխան հոդվածներով ամրագրվում էր, որ ամենքը պարտավոր են հաճախել տարրական դպրոցներ. հիմնվում էր վերահսկիչ պալատ՝ պետական ֆինանսների վրա հսկելու համար, ըստ որում՝ պալատը պարտավոր էր յուրաքանչյուր տարվա վերջին պատգամավորների ժողովին հաշիվ ներկայացնել ֆինանսների դրության մասին: Սահմանադրությունը կարող էր փոփոխության ենթարկվել միայն երկու պալատների որոշմամբ ու սուլթանի հավանությունը ստանալուց հետո և այլն:

Ահա՛ հիմնական բովանդակությունն օսմանյան սահմանադրության, որը գրված լինելով 1908 թ. հուլիսին Թուրքիայում կատարված հեղափոխությունից ավելի քան երեք տասնամյակ առաջ, ներառում էր ժամանակաշրջանի եվրոպական սահմանադ-

---

[1] *Օսմանյան սահմանադրության ամբողջական չարադրանքը տե՛ս **«Արեւելք»**, № 6847, 12 հուլիսի 1908 թ.:*

ական մտքի չատ նվաճումներ: Դա մեծապես ընդօրինակված էր հատկապես բելգիական 1831 և պրուսական 1850 թվականների սահմանադրություններից:

Սակայն թուրքական սահմանադրությունը մեծ թերություններ ուներ: Վերջին հաշվով՝ դա գրված էր ըստ օսմանյան իրականության և հիմնական մի չարք կետերում չատ տարբերվում էր նշված սահմանադրություններից: Թեև աբդուլհամիդյան անձնական բռնապետությունը խորտակված էր, բայց Միդհատի սահմանադրության վերականգնմամբ ու կիրարկմամբ բռնապետությունը, ինքնակալությունն ու աստվածապետությունը (թեոկրատիան) վերջնականապես արմատախիլ չէին արվում: Սուլթանական այդ ստորոգելիները և ընդհանրապես Աբդուլ Համիդի վեհապետական իրավունքները դեռ չարունակում էին ամրագրված մնալ սահմանադրության մեջ: Միդհատյան սահմանադրությունը չէր հանգում ժողովրդական կամքի տիրապետության: Սահմանադրության ամենամեծ արատն այն էր, որ ընդհանուր ժողովն իր երկու պալատներով ուներ միայն խորհրդակցական (consultative) նշանակություն ու զուրկ էր ուղղակի օրենսդրական (législative) գործառույթներից և իրավունքից:

Եղած թերություններով հանդերձ, օսմանյան սահմանադրությունը, առայժմ գոնե թղթի վրա, կայսրության բոլոր ազգերին ու դավանանքներին քաղաքացիական նույնանման իրավունքներ էր պարգևում: Հայն էլ հույս ուներ դառնալու օսմանյան բազմացեղ երկրի համահրավազոր քաղաքացի: Հուլիսյան հեղաշրջումից հետո, գրում էր Ռուբենը, հայի «յեղափոխական լինելը, ըմբոստութիւնը այլեւս դաւաճանութիւն չէր համարուի, իբր այդպիսին չէր հետապնդուի, ընդհակառակը՝ այդ դարձած էր բացառիկ արժանիք: Ան կը ստանար երթեւեկի, ազատ աշխատանքի ազատութիւն երկրի մէկ ծայրէն միւսը: Ան այլեւս միայն հարկատու չէր, այլ եւ քաղաքացիական ամէն իրաւունքներով օժտուած մի տարր: Ան կրնար զինուոր, ոստիկան, պաշտօնեայ ըլլալ. ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը ունէր»[1]*:*

---

[1] **«Հայրենիք»**, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 67:

Այլ խոսքով՝ ակնհայտորեն նպաստավոր պայմաններ էին ստեղծվում: Եվ եթե Թուրքիան իրապես հետևեր պետության այդ հիմնական օրենքին, ապա բնական վիթխարի պաչարներով օժտված, աշխարհագրական հիանալի դիրք ունեցող, հարուստ պատմական անցյալ և մշակութային քաղաքակրթական ամենատարբեր մակարդակի վրա գտնվող բազմաթիվ ժողովուրդներով բնակեցված երկիրը պատմական ամենասեղմ ժամանակահատվածում կարող էր հսկա քայլերով առաջադիմել:

ԱՅԼԱԶԱՆ ՈՒ ՏԱՐԱՄԵՐԺ ԶԳԱՅՈՒՄՆԵՐ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՀԱՆԴԵՊ: ՅՆԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԽՐԱԽՃԱՆՔ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Երիտթուրքական հեղաշրջման նկատմամբ վերաբերմունքը տարբեր դրսևորումներ ունեցավ կայսրության ժողովուրդների մոտ և երկրի զանազան տարածքներում:

Հեղաշրջումն ամենից շատ ընկալելի դարձավ Կ. Պոլսի բնակչության համար: Հատկապես խանդավառված էր քաղաքի՝ երիտթուրքական գաղափարների ազդեցության տակ գտնվող թուրք մտավորականությունը՝ անկախ սոցիալական վիճակից և տարիքային կազմից: Սուլթանի չփոթված շրջապատը և նախկին իշխանությունների հետ սերտորեն կապակցված թուրքերը, հեղաշրջումից ահաբեկ, սպասում էին դեպքերի՝ իրենց համար աննպաստ զարգացմանը: Քաղաքական անորոշությունն ու ապագայի նկատմամբ երկյուղը նրանց հուշում էր հանդես բերել գերագույն զգուշություն, դրսևորել առաձգական կեցվածք և փորձել նորակերպ ու անմեղապարտ երևալ: Ինչ վերաբերում է մայրաքաղաքի թուրքական լյումպենացած ներքնախավերին, ապա նրանք տեղի ունեցածի նկատմամբ կատարելապես անտարբեր էին:

Սպասվածին հակառակ՝ մայրաքաղաքում հանգստությունն ու կարգապահությունը կատարյալ էին:

Հուլիսի 11 (24)-ի սելամլըքը տեղի ունեցավ սովորականի նման: Սելամլըք գնացող և այնտեղից վերադարձող զորքերին

մարդիկ դիմավորում էին բացականչություններով՝ ի պատիվ սուլթանի: Ոչ միայն կառավարական շենքերի, այլև թուրքական լրագրերի խմբագրատների ու տպարանների վրա բարձրացվեցին դրոշներ և սուլթան Աբդուլ Համիդի նկարները: Երեկոյան տեղի ունեցավ հրավառություն:

Հուլիսի 12-ին Կ. Պոլսի բոլոր թերթերը լայնորեն լուսաբանեցին նախորդ օրվա սելամլըքը:

Հուլիսի 12 (25)-ից մայրաքաղաքում և Բոսֆորի մյուս քաղաքներում, հատկապես Կ. Պոլսի Ղալաթիա թաղամասում, արտասովոր աշխուժություն էր տիրում: Երկիրը հրճվում էր: Սկսվեցին թափորների, ցույցերի, հանրահավաքների, հոգեհանգիստների անվերջ շարքերը: Ամենուրեք հնչում էին «վաթան», «միլլեթ», «հուրրիեթ» բառերը*: Սուլթանի անունով հղվում էին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր: Շոգենավերը, զարդարված դրոշակներով, անցուդարձ էին անում պետական օրհներգների հնչյունների ուղեկցությամբ: Ամեն տեղ ցույցերին մասնակցում էին թուրքերը՝ քրիստոնյաների հետ «եղբայրանալով»: Երիտթուրքերն անընդհատ այցելում էին Պոլսի ոչ խալամ բոլոր համայնքները, մասնակցում հանդեսներին և նույնիսկ մտնում եկեղեցիներ ու քարոզում եղբայրական համերաշխություն: Աղմուկ հայտնվեց սրճարաններում, որտեղ առաջ նստում էին լռակյաց, քանի որ երկյուղալի էր խոսակցելը և մարդիկ վախենում էին մատնությունից: Շատ սրճարանների, պանդոկների, հյուրանոցների ճակատներին երևաց "Liberté" («ազատություն») բառը: Իսկ մի թուրք վաճառականի խանութի պատին փակցված պաստառի վրա կարելի էր կարդալ «Կորչի՛ ամեն հնացածը»:

---

* Արաբական այդ առօրյա բառերը 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած թուրքերենում քաղաքական նշանակություն էին ստացել: «Վաթան» բառը, որն արաբերենում նշանակում է ծննդավայր, ձեռք էր բերել «հայրենիք» իմաստը. «միլլեթ» բառը, որ արաբերենում սկզբնապես նշանակում էր «կրոնական համայնք», թուրքերենում դարձել էր «ազգի» հոմանիշ: Վերջապես, երրորդ արաբերեն բառը՝ «հուրրիեթը», որն արտահայտում էր «ազատ մարդու վիճակ», ստացել էր «քաղաքական ազատության» իմաստ (տե՛ս **В. А. Гурко-Кряжин**, *История революции в Турции*, с. 15):

Ոստիկանությունը չէր միջամտում որևէ ձեռնարկի, բայց ամեն տեղ պահպանվում էր կարգը:

Մամուլում հայտնվում էին թուրքերի գրած բազմաթիվ հոդվածներ ու բանաստեղծություններ, որոնց հեղինակները դրախտ էին կանխատեսում կայսրության բոլոր ժողովուրդների համար:

Իր մի բանաստեղծության մեջ, հայտնի բանաստեղծ Մեհմեդ Էմինը գրում էր.

Այսուհետ ազատ է ամեն օսմանցի,
Այսուհետ նա է տերը իր օջախի,
Ազատ է դավանանքը բոլորի,
Այլևս հարկ չկա ատելության ու պատերազմի:
Ետայսու չիք կեղեքում ու չարություն
Ջեն լինելու տերեր և ստրուկներ,
Թույլեր ու աղքատներ[1]:

Տեղի ունեցող քաղաքական ցույցերի, հանրահավաքների ու ժողովների ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ զանգվածաբար բոլորը «եղբայրանում» էին. թուրքերը՝ ոչ թուրքերի, մուսուլմանները՝ ոչ մուսուլմանների հետ: Ազատության այդ օրը՝ հուլիսի 12-ը չթունավորվեց ոչ մի արտակարգ միջադեպով: Թուրքերի կրքերը դյավուրների դեմ գրգռելու որևէ փորձ չեղավ: Հատկապես արաբներին և հայերին հայտարարելով եղբայրներ՝ երիտթուրքերը հույս ունեին, որ այդ ժողովուրդները կբավարարվեն հոչակված «սահմանադրական» կարգերով և կդադարեցնեն պայքարը օսմանյան պետության դեմ:

Տարբեր կրոնների ու ցեղերի պատկանող օսմանյան հավատարիմ հպատակների մի բյուրավոր բազմություն, բաղկացած զանազան խմբերից և դրոշակներ բարձրացրած, հուլիսի 13-ին Պոլսի կենտրոնից անցավ Ղալաթիայի կողմը՝ «կեցցե՛»-ների

[1] **Л. О. Алькаев,** *Очерки по истории Турецкой литературы, изд. АН СССР, Москва, 1959, с. 20.*

խլացուցիչ աղաղակներով և որոտընդոստ ծափերով: Պահականոցների և, մանավանդ, Բերայի ու Բեշիկթաշի ոստիկանությունների պաշտոնատների առջև կանգ առնելով՝ հազարավոր ամբոխը ջերմագին աղոթքներ էր հղում սուլթան Աբդուլ Համիդին: Որպես նույն ու միասնական հայրենիքի զավակներ, ցուցարարներն աննկարագրելի, նմանը չտեսնված ցնծության մեջ էին: Շատերը հուզումնալից արտասվում էին, գրկախառնվում: Ամենուրեք լսվում էին սուլթանին ուղղված բացականչություններ՝ «Փաղիշահըմ չոք յաշա»[1]:

Ամբոխի մեջ կային նաև շատ թուրք կանայք, որոնց մեծ մասը փողոց էր դուրս եկել բաց երեսով:

Կ. Պոլսի՝ ուրախությունից խենթացած ժողովուրդը, անընդունակ ըմբռնելու իրերի դրությունը, անխտիր ձայնակցում էր երիտթուրքերի ձեռնարկած բոլոր երևույթներին: Ոչ մի քննական վերաբերմունք կատարվող դեպքերի նկատմամբ: Խուռներամ ամբոխների աչխույժ, սրտալի քրքիջներն ու ոգևորիչ բացականչությունները հիշեցնում էին եվրոպական մայրաքաղաքների առույգ ու եռուն կյանքը:

Մայրաքաղաքում և Բոսֆորի մերձակա բոլոր քաղաքներում հատկապես աչխույժ էին հույները: Նրանք ցույց էին անում թուրքական դրոշներով, օդը թնդացնում կեցցեներով՝ ի պատիվ սուլթանի, որ ազատություն է չնորհել ժողովրդին: Սրճարաններում արտասանվում էին թուրքերեն և հունարեն ճառեր: Մի երեկո էլ հույն ցուցարարները ջահերով երթ կազմակերպեցին մայրաքաղաքի փողոցներով:

Ցնծություն էր ողջ Բուլղարիայում ու Մակեդոնիայում[2], Օսմանյան կայսրության չատ նահանգներում և հատկապես քաղաքներում: Տները, խանութները, հյուրանոցները զարդարված էին գույնզգույն պաստառներով՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» մակագրություններով: Անվերջ ծափահարություններ և խանդավառ ցույցեր: Ցուցարարներն

---

[1] Տե՛ս **«Արեւելք»,** № 6848, 14 հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **"История македонского народа"**, изд. "Посветно дело", Скопье (Югославия), 1975, с. 209.

ամենուրեք փողոց էին դուրս գալիս սուլթանի պատկերներով և նշանախոսքերով: Ճառեր ու ճառեր: Հռետորներն արտահայտում էին իրենց ուրախությունը կատարվածի առթիվ, պատիվ էին մատուցում հերոս երիտթուրքերին, գովեստի խոսքեր հղում նրանց հասցեին և ամբոխին խանդավառում Օսմանյան կայսրության պայծառ ապագայի հեռանկարով[1]:

Կյանքի անսպասելի ու անակնկալ փոփոխությունը, բռնության ծանր ու հեղձուցիչ մթնոլորտի հանկարծակի մաքրությունը բոլորի սիրտը լցրել էր աննկարագրելի ուրախությամբ: Արցունքի, սգի, վհատության մեջ տվայտող ժողովուրդը վերակենդանացել էր ազատության խոստումներով: Ալեզարդ ծերունիներն իսկ խանդավառությունից ինքնամոռացության մեջ էին: Երիտասարդներն իրենց կրծքերին կրում էին կարմիր ու սպիտակ ժապավեններ՝ ազատության նշանակը:

Այսպիսով, կայսրության այլազգի ժողովուրդների թուրք բռնադատիչների պարագլուխը՝ արյունարբու սուլթանը, «կերպարանափոխվել էր» և «դարձել» սահմանադրական բարեկիրթ թագավոր:

Իսկ թուրքահայությո՞ւնը՝ Օսմանյան կայսրության ամենահարստահարված ու ամենավտանգված ժողովո՞ւրդը:

Հայերի ուրախությունն անսահման էր: Նրանք հավատում էին իրենց լավ ապագային. չէ՞ որ մայր-տանջանքի ծովից է ելնում վերածնությունը:

Երիտթուրքերն առանձնապես սիրալիր էին հայերի նկատմամբ, և չէին քաշվում բացահայտորեն հայտարարություններ անել, թե հայերի ջանքերով են թուրք ժողովրդի մտքերը բացվել դեպի ազատություն: Շատ թուրքեր հայերի հետ ունեցած զրույցների ժամանակ ընդունում էին հայության հանդեպ իշխանությունների և անձամբ իրենց «թույլ տված սխալները»[2]:

Եթե թերթելու լինենք Կ. Պոլսի այն օրերի հայկական լրագրերը, ապա կտեսնենք, որ մայրաքաղաքի ողջ հայությունը, հայ

---

[1] ***Г. З. Алиев**, Турция в период правления младотурок, изд. "Наука", Москва, 1972, с. 58.*

[2] *Տե՛ս **«Զանգակ»**, № 19, 27 հուլիսի 1908 թ.:*

էֆենդիներից ու հայ մտավորականներից սկսած մինչև մշեցի **համալները**, մի քանի շաբաթ շարունակ զբաղված են եղել տոնախմբություններով ու խրախճանքներով և մանավանդ հանրահավաքներով ու ճառախոսություններով: Պոլսահայ բազմությունները Մկրտիչ Պեշիկթաշլյանի գողտրիկ բանաստեղծությունը հարմարեցնելով օրվա տրամադրություններին՝ փողոցներով չքերթ կատարելիս երգում էին.

Եղբա՜յր եմք մեք,
Պուլկար, Թիւրք, հայ, հրեայ, յոյն,
Նո՛յն երկինքին ներքեւ՝ շընչենք օդը նո՛յն,
Նո՛յն մահիկը կը ծածանի մեր վերեւ,
Նո՛յն աստղիկը կ՚ողջունէ մեզ, նո՛յն արեւ,
Եղբա՛յր եմք մեք:

Հեղաշրջման հաջորդ օրը «Սահմանադրական օրենք» խորագրով առաջնորդողում «Արեւելք» օրաթերթը հայությանը շնորհավորելով, որ սուլթանը ժողովրդին՝ «իսլամ, քրիստոնեայ եւ հրեայ, ամէնքին ալ», շնորհել է սահմանադրություն, գրում էր.

«Բարձրեալն Աստուած երկար ու բարեբաստիկ կեանք շնորհէ մեր սիրելի ու ողորմած մեծանուն Վեհապետին եւ յաւէտ անսասան պահէ Օսմ. փառապանծ Գահուն վրայ:

Այլեւս բախտաւոր պիտի ապրինք. մեր կեանքը պիտի անցընենք երջանկութեամբ, ազատութեամբ, արդարութեամբ եւ հաւասարութեամբ»[1]: Ապա թերթը շարունակում էր. «Օ՛հ, այսքան ժամանակէ ի վեր սպասուած նուիրական օրուան ոգեւորիչ, վսեմ եւ անմոռանալի առաւօտը: Օ՛հ, մեր երկրին ազատութիւն, արդարութիւն, եղբայրութիւն, կեանք եւ երջանկութիւն շնորհող նուիրական օրուան աննման յառաջաբանը: Օ՛հ, խալիֆայութեան առաջին աւետիսը, որով ամէնքս ալ Աստուծոյ առջեւ կ՚երկրպագենք, ուրախութենէ կ՚արտասուենք, մեր ծերերը, երի-

[1] **«Արեւելք»,** № 6847, 12 հուլիսի 1908 թ.:

տասարդները, կիները, տղաքը անիմանալի ուրախութեան մը, չտեսնուած երախտապարտութեան մը կ'ենթարկուին»[1]:

Հուլիսի 13-ին, ավելի քան 10 հազար ցուցարարներից բաղկացած մի հսկա բազմություն օսմանյան դրոշներ պարզած գնաց դեպի հայոց ազգային պատրիարքարան: Բազմությունը հիմնականում բաղկացած էր հայերից և հույներից, բայց կային նաև մեծ թվով հրեաներ և իսլամներ: Ցնծագին աղաղակներով բոլորը «կեցցե»-ներ էին գոչում: Տների պատուհաններից հազարավոր գլուխներ ձայնակցում էին ցուցարարների շարքերին և ծաղիկներ նետում ժողովրդի վրա: Պատրիարքարանի չորս կողմը լցված էր հայերի ստվար բազմությամբ: Ցուցարարները ցանկանում էին լսել հայոց պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանի խոսքը, բայց նա չէր եկել պատրիարքարան, ուստի նրա փոխարեն ցուցարարների առջև հանդես եկավ Երուսաղեմի պատրիարքի Կ. Պոլսի փոխանորդ Եղիշե ծ. վրդ. Զիլինգիրյանը, ասելով.

«Մեր սիրելի հայ եւ յոյն հայրենակիցներ, յարգելի Ս. Պատրիարք,

Ահա՛ կը տեսնէք, կ'իմանաք, գիտէք, թէ բոլոր օսմանցիները երեք օրէ ի վեր ազատութեան, այսինքն՝ կեանքին ամէնէն մեծ երջանկութեանը, Վեհապետին ամէնէն բարձր շնորհին արժանացան: Երեք օրէ ի վեր օսմանցիները իրենց սրտին խորերէն բղխած ուրախութիւնը եւ անսահման ցնծութիւնը կը յայտնեն պոռալով եւ ողջագուրուելով: Իսլամ, քրիստոնեայ, հրեայ ամեն ոք քաղցր երջանկութեան մը մէջ զիրար կը շնորհաւորեն: Օսմանցիները իրարմէ անջատող ամէն բան սուտ է, կեղծ է: Ազգը մէկ է, մէկ մարմին է. հավատք ու կրօնք իւրաքանչիւր անհատի վերաբերեալ բան մըն է: Բուն իսկ զմեզ մէկ կէտի վրայ միացնող նուիրական մեծ կապ մը կայ՝ այն է Օսմանցիութիւնը: Մեր արժանացած յարգելի նոր օրէնքին շնորհիւ օսմանցիներուն հաւասարութիւնը եւ ազատութիւնը ապահովուած է: Ասկէ վերջը իւրաքանչիւր օսմանցի հոգիովը, գլուխովը իր ազգին ծառայութիւն մատուցանելու պիտի աշխատի. ազգին ամենափոքր մէկ

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6847, 12 հուլիսի 1908 թ.:*

չահուն վնասող ամէն բան, ամէն իրողութիւն, իւրաքանչիւր օսմանցի իր սրտին մխուած դաշոյնի հարուած մը պիտի նկատէ: Իւրաքանչիւր օսմանցի երկրին հողը, ազգին դրօշը միեւնոյն յարգանքով պիտի համբուրէ. մէկին նուիրական կուրծքին պիտի փարի եւ միւսին քղանցքները պիտի համբուրէ: Արդէն երկու օրէ ի վեր ատոր փայլուն ապացոյցները կը տեսնենք»:

Ապա Եղիշե ծ. վրդ. Զիլինգիրյանը, դիմելով բացակա պատրիարքին, ասում է.

«Ս. Պատրիա՛րք, դուք մեր հայրենակիցներէն մէկ մասին հոգեւոր պետն էք եւ միանգամայն այս հայրենիքին յարգելի մէկ զաւակը: Այդ հանգամանքով ձեր ամէնէն նուիրական պարտականութիւնն է բոլոր մեր հայրենակիցները հրաւիրել միշտ հաւատարիմ եւ ուղղամիտ ըլլալ. նաեւ մինչեւ իրենց մահը սրտանց սիրել այս հայրենիքը որ ամէնուն օրրանը ու տունն է: Ձեզի օսմանեան ազգին անունով կը հրաւիրենք երդում ընել որ այս պարտականութիւնը կատարեալ խղճմտութեամբ ու անկեղծութեամբ կատարելու ամէն ատեն պիտի աշխատիք: Կեցցե՛ն յոյները, հայերը, հրեաները: Կեցցէ՛ օսմանցիութիւնը. կեցցէ՛ մեր Մեծ Վեհապետը»[1]:

Հազարաւոր բերաններ, ընդհատելով վարդապետի ելոյթը, «կեցցե»-ներով թնդացնում էին օդը:

Հաջորդ օրը պոլսահայ բոլոր թերթերը տպագրեցին բազմաթիւ հոդվածներ, որոնցում մեծ ոգեւորությամբ նկարագրում էին ցույցի ընթացքը: Ինչպես միշտ, իշխանությունների գովքով աչքի էր ընկնում «Արեւելքը», որը, միայն այդ օրվա համարում, տպագրել էր հոդվածներ ու նյութեր՝ «Հայրենասիրական մեծ ցոյցեր», «Ազատութեան աղաղակը», «Հայոց հսկայ թափորը կայս[երական] պալատին առջեւ», «Հայ ազգին երախտագիտական ուղերձը» և այլ վերնագրերով:

Հետագա օրերին նույնպես բազմաթիվ հանրահավաքներ ու ցույցեր եղան մայրաքաղաքի հայկական եկեղեցիներում, Բալքանի ազգային գերեզմանատանը[2]:

---

[1] **«Արեւելք»,** № 6848, 14 Հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում, № 6858, 26 Հուլիսի 1908 թ.:

Բայց ամենաբազմամարդը և փառաչուքը հուլիսի 27-ին Կ. Պոլսի հայոց ամենամեծ գերեզմանատանը՝ Շիշլիում տեղի ունեցած հոգեհանգիստ-հանրահավաքն էր:

Այդ օրը երեկոյան ժամը 6-ին Շիշլիում հավաքվել էր առնըվազն 30 հազար մարդ՝ մայրաքաղաքում 1896-ին տեղի ունեցած կոտորածի զոհերի հոգեհանգիստը կատարելու համար:

1896 թ. օգոստոսին Օսմանյան բանկի Կ. Պոլսի կենտրոնական չենքի գրավումից հետո, երբ հայ զինյալներն անվտանգ հեռացել էին մայրաքաղաքից, սուլթանն իր կատաղությունը թափել էր հասարակ ժողովրդի, մանավանդ գավառից եկած հայերի վրա: Դեպքից հետո, կառավարության նախապատրաստած զինված ամբոխը՝ երեք օր և երեք գիշեր չարունակ անխնա կոտորել էր անմեղ ու անպաշտպան հայերին: Կոտորածին զոհ էր գնացել 10 հազար մարդ[1]: Ոստիկանությունը հայերին մահվան սպառնալիքով ստիպել էր Շիշլիի գերեզմանատան պարսպի երկայնքով ընդարձակ փոսեր փորել, ուր սայլերով բերած մեռելներին ու վիրավորներին խառնիխուռն թափել էին, ապա ուրիշ սայլերով բերած կրի պարկերը դատարկել դժբախտների վրա՝ դիակների քայքայումն արագացնելու համար: Զոհվածների ու վիրավորների մի մասին մարդասպանները և ոստիկանները չպրտել էին գերեզմանատանը գտնվող ջրհորը[2]:

Եվ ահա՛, Շիշլիի գերեզմանատանը, փոսերի ու ջրհորի վրա, 12 տարի անց, 1908 թ. հուլիսի 27-ին, հավաքված տասնյակ հազարավոր հայեր կատարում էին անմեղ զոհերի հոգեհանգիստը: Ներկա էին նաև բազմաթիվ թուրքեր, եկել էին, մասնավորապես, թուրքաց բարձրագույն զինվորական վարժարանի ունկնդիրները՝ իրենց սպա դասախոսների գլխավորությամբ[3]:

Հոգեհանգստից հետո սկսվեց հանրահավաք: Սարուխանի (Առաքել Սարուխանյան) ստորագրությամբ «Մշակում» տպա-

---

[1] Տե՛ս **«Հայ ժողովրդի պատմություն»**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 272:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 188, 28 օգոստոսի 1908 թ.:

[3] Տե՛ս **А. Ф. Миллер,** Пятидесятилетие младотурецкой революции, изд. "Знание", Москва, 1958, с. 37-38, նաև՝ **«Զանգակ»,** № 27, 7 օգոստոսի 1908 թ.:

գրված հոդվածում մանրամասն նկարագրված է միջոցառման ընթացքը: Ջրհորի մոտ ճառով առաջինը հանդես էր եկել զինվորական վարժարանի թուրք ուսանողներից մեկը, որին հաջորդել էր նույն հաստատության մի սպա, ապա՝ քաղաքացիական հագուստով մի արաբ երիտասարդ: Հոդվածագիրը նշում էր.

«Ճառերը զգայուն էին. ներկաների մէջ լացի ու հեկեկանքի ձայներ էին լսւում: Բոլորն էլ ամենախիստ չեչտերով յարձակւում էին այն բռնակալական ռեժիմի վրայ, որը կատարել էր այդ գազանութիւնները: Սպաներից մէկը, ձեռքը տանելով կողքից կախած թրին, ասում էր. «Երդւում եմ այս թուրը այսուհետեւ գործածել միայն բռնութեան եւ անարդարութեան դէմ՝ ի պաշտպանութիւն մեր հայրենակիցների՝ առանց կրօնի ու ցեղի խտրութեան»»[1]:

Ելույթները հաջորդում էին մեկը մյուսին, և ժողովուրդն անընդհատ ծափահարում էր, լսվում էին «Կեցցե՜ ազատությունը», «Կեցցե՜ հավասարությունը», «Կեցցե՜ բանակը» կանչերը: Հայ երիտասարդների ձեռքերին ծածանվում էին օսմանյան դրոշներ: Ոգևորությունն անսահման էր: Գերեզմանատան մուտքի մոտ գտնվող չենքն ամբողջովին լցվել էր թուրք սպաներով, որոնք պատչգամբներից ողջույններ էին ուղարկում ժողովրդին[2]:

Այդ օրը բոլոր զինվորական դպրոցներն ու զորանոցները բաց էին ժողովրդի առջև, զինվորները և սպաները բոլորին ընդունում էին սիրով:

Շիշլիի գերեզմանատանը տեղի ունեցած միջոցառումից հետո հայ նահատակների հիշատակին վայելուչ հուշարձան կանգնեցնելու համար Կ. Պոլսում լայն հանգանակություն սկսվեց[3]:

Երկու օր հետո հայերը մայրաքաղաքում անցկացրին մի ուրիշ հանդես, որի նպատակն էր օսմանյան սահմանադրության վերահաստատման առթիվ ամբողջ հայ ազգի կողմից սուլթանին սրտագին շնորհակալություններ և մաղթանքներ հղել:

---

[1] **«Մշակ»**, № 188, 28 օգոստոսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Զանգակ»**, № 29, 9 օգոստոսի 1908 թ.:

[3] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 57, ց. 2, մաս 1, գ. 1194:

Գում-Գափուի պատրիարքանիստ ս. Աստվածածին ընդարձակ մայր եկեղեցում և նրա շրջակայքում հայերի և այլազգիների ծովածավալ բազմություն էր հավաքվել: Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Եղիշե եպս. Դուրյանը, որը փոխարինել էր պատրիարքությունից հեռացված Մաղաքիա արք. Օրմանյանին, հավաքը բացեց հետևյալ խոսքերով.

«Վեհ. սուլթանը ազատութիւն, եղբայրութիւն եւ հաւասարութիւն չնորհեց իր հպատակներին: Պէտք է չնորհակալ ըլլանք եւ օրհնենք զինքը ... Հայ ժողովուրդը, որ դարեր ի վեր պահած է օսմանեան պետութեան հանդէպ ունեցած իր անխախտ հաւատարմութիւնը, այս փառաւոր առթիւ իր ճակատը կը խոնարհեցնէ անոր փառաչուք գահին առաջ»[1]:

Պատրիարքական տեղապահի այդ խոսքերն ընդհատվում էին «Կեցցէ՛ սուլթանը», «Կեցցէ՛ ազատությունը», «Կեցցէ՛ սահմանադրությունը», «Կեցցէ՛ Դուրյան սրբազանը», «Անկցի՛ Օրմանյան» բացականչություններով:

Դուրյան սրբազանից հետո ամբիոն է բարձրանում հեծելազորաց տեղակալ Կաղրի բեյը, որը խոսքը ժողովրդին ուղղելով, ասում է.

«Պէտք է մոռանանք անցեալի տխուր յիշատակները եւ, ամէնքս եղբայրացած, ջանանք առաջ տանել երկրի բարգաւաճման գործը: Մենք բոլորս հայրենակից եղբայրներ ենք եւ պէտք է ձեռք-ձեռքի աշխատենք մեր ընդհանուր հայրենիքի համար: Օսմանեան սահմանադրութեան վերահաստատման գործում մեծ բաժին ունեն մեր հայ եղբայրները, որոնք շա՜տ արիւն թափեցին, շա՜տ նահատակներ տուեցին: Բայց սրանից յետոյ բովանդակ Թուրքիայում անդորրութիւն ու արդարութիւն պիտի տիրի: Ուրեմն, կեցցէ՛ Վեհ. սուլթանը, կեցցէ՛ սահմանադրութիւնը, կեցցէ՛ հայութիւնը, կեցցէ՛ հաւասարութիւնը»[2]:

Եղան բազմաթիվ ուրիշ ճառախոսներ, որոնք ժողովրդին հորդորում էին իրար հետ ապրել սիրով ու եղբայրությամբ,

---

[1] **«Մշակ»**, № 165, 31 հուլիսի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

երախտագիտությամբ հիշատակեցին ազատության համար պայքարած հայ գործիչների խնկելի անունները, դրվատեցին նրանց ազգասիրական եռանդն ու գործունեությունը[1]:

Շիչլիի գերեզմանատանը կազմակերպված միջոցառման առիթով անդրադառնալով Թուրք-հայկական փոխհարաբերությունների վերջին տասնամյակների պատմությանը, Պոլսում հրատարակվող "le Matin" («Մաթեն») թուրքական ֆրանսերեն թերթը գրում էր.

«Էապէս հակառակութիւն չկար մեր եւ հայերին միջեւ, որոնք բռնակալութեան կողմից ենթարկուեցին տառապանքների: Միայն թէ նախկին ռեժիմի սիւները հայոց նպատակը եւ ուղղութիւնը սխալ էին ներկայացնում իսլամ ժողովրդին, գործն այնպէս պատկերելով, թէ հայերը թագաւորութիւն են ուզում եւ այլն: Հայ յեղափոխութեան ամենադժնդակ պահերին իսկ ոչ մի հայ Պոլսում ժողովրդի դէմ յարձակում չի գործել»[2]:

Ապա, արժևորելով ազատության զոհասեղանին հայերի բերած տուրքը, «Մաթենը» նշում էր.

«Մեր կարծիքով՝ հայերն ազատութեան ռահվիրաներ են, որոնք իրենց կեանքը զոհեցին ազգի իրաւունքների համար: Նրանք իրենց օգուտը մեր վնասի մէջ չփնտրեցին: Բռնակալների կուսակիցների դէմ ապստամբեցին, բայց ժողովրդի դէմ յարձակում չգործեցին բնաւ: Նրանք ընդվզեցին միայն այն կառավարութեան դէմ, որի բռնակալ ռեժիմի տակ թուրքերը, հայերը եւ յոյները միաժամանակ եւ նոյն չափով տառապեցին: Ազատութիւն ձեռք բերելու, ազգի իրաւունքները պահպանելու համար իրենց կեանքը զոհած, մեր այժմեան ազատութիւնն ու երջանկութիւնը հողի տակից զոհունակութեամբ դիտող մեր սիրելի հայ հայրենակիցների հոգու հանգստութեան համար օսմանցիութեան անունով աղօթելը մեր սրբազան պարտքն է: Հայերն էլ, իրենց հերթին, թուրք նահատակների համար են աղօթում»[3]:

1896 թ. հայտնի եղեռնագործության համար թողություն

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 31, 1 օգոստոսի 1908 թ.:

[2] **«Մշակ»**, № 197, 7 սեպտեմբերի 1908 թ.:

[3] Նույն տեղում:

խնդրելով՝ թերթն այնուհետև չարունակում էր.

«Այո՛, «հայոց դէպք» ասած այն խիստ ցաւալի ջարդից յետոյ, երբ հայ նահատակների նուիրական մարմինները, բարձած սայլերին, լցուեցին փոսերի մէջ, մեր սիրտը պատառ-պատառ եղաւ, մեր աչքերը արցունքներից այրուեցին: Լացել ուզեցինք, բայց չկարողացանք, եւ մեր սիրտն ու հոգին թունաւորուելով, կեանքից զզուանք զգացինք: Հայերը ուզում էին սահմանադրութիւն, ուզում էին իրենց իրաւունքները պահպանել, ազատուել գերութիւնից: Մի՞թէ այդ ամէնը մենք չենք ուզում: Հետեւապէս, հայերն այսօր օսմանցիների եղբայրներն են: Հայ, թուրք, յոյն, հրեայ՝ ամէնքն էլ մէկ հայրենիքի զաւակներ են: Նախապատուութեան հարց չկայ: Միայն կրօններն են տարբեր: Ամէն ոք իր կրօնին է ծառայում եւ գնում է իր աղօթավայրը: Բայց աշխարհիկ գործերի համար մենք՝ օսմանցիներս, եղբայրներ ենք, առանց կրօնի խտրութեան՝ հայրենիքի միասիրտ, միահոգի պաշտպաններ ենք»[1]:

1896 թ. օգոստոսին զոհված անմեղ հայերի հիշատակը Շիշլիի գերեզմանատանը թուրքերի զանգվածային մասնակցութեամբ նշելուց հետո, Կ. Պոլսի հայոց ղեկավարութիւնն անհրաժեշտ համարեց կազմակերպել նաև լայնամասշտաբ մի ուրիշ հանդես՝ այս անգամ նվիրված ազատության ճանապարհին զոհված թուրք հայրենասերների հիշատակին: Միջոցառման նախաձեռնությունն ու անցկացումը ստանձնեց հայերի հենց նոր ստեղծած «Օսմանյան սահմանադրական ակումբը»[2]:

Հուլիսի 31-ի առավոտյան Բերայի հայոց ս. Երրորդություն եկեղեցում ասեղ գցելու տեղ չկար: Ահա՛ այսպես էր տեսարանը ներկայացնում «Աւետաբերը». «Խորանին առջեւ չարուած են բարձրաստիճան հայ եկեղեցականներ՝ զգեստաւորուած եւ շողշողուն գաւազաններ ի ձեռին: Դասն ալ լեցուած է եկեղեցականներով եւ բազմաթիւ դպիրներով: Եկեղեցին խոնուած է 2.000 հոգիներով, որոնց մէջ կան Օսմ. Պետութեան առեւտրական, քաղաքային ու զինուորական կեանքին մէջ կարեւորութիւն

---

[1] ***«Մշակ»**, № 197, 7 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում, № 189, 29 օգոստոսի 1908 թ.:*

ունեցող ամէն պաշտօնատան ներկայացուցիչներ: Ներկայ է Ն. Կ. Վեհափառութեան ներկայացուցիչը, նմանապէս Շէյխ իւլ Իսլամի ներկայացուցիչը: Ներկայ է թուրք սպաներու փայլուն խումբ մը եւ անոր հետ ստուար խումբ մը քաղաքային զգեստով թուրքերու եւ հայերու, որոնց անունները ծանօթ են պետութեան ամէն անկիւնը: Հոն է սիրեցեալ եւ վստահելի վարիչ Տր. Ռիզա (Թեւֆիք:- Հ. Ս.) պէյ»[1], որը մտնելով եկեղեցի, մոտեցավ ու համբուրեց եպիսկոպոսների եւ վարդապետների ձեռքերը ու ողջագուրվեց նրանց հետ[2]: «Հոն է Նազըմ փաշա, որ իր երկրին պատիւը իր կեանքէն թանկագին դաւանեցաւ»[3]: Եկել էին նաև մոտ 500 ուրիշ թուրքեր: Ներկա էին մայրաքաղաքի և օտար թերթերի բազմաթիվ թղթակիցներ[4]:

Եկեղեցի եկած թուրքերը, մինչև հոգեհանգստի սկսելը, աչխույժ զրույցի էին բռնվել հայ ծանոթների ու անծանոթների հետ:

Ժամը 10-ին եկեղեցում սկսվեցին աղոթքները, որից հետո պատրիարքական տեղապահ Եղիշե եպս. Դուրյանը մի զգայացունց ճառ ասաց: Թուրք ներկաներն անընդհատ ծափահարում էին՝ լսելով սրբազանի՝ թուրքերենի թարգմանվող ելույթը: Իսկ երբ թարգմանիչը կարդաց Դուրյանի ճառի այն մասը, որտեղ ասվում էր, թե ազատության համար մարտնչող հայ և թուրք նահատակների՝ միմյանց խառնված արյունը հավերժ իրար են կապել երկու ժողովուրդների ճակատագիրը, ամբողջ եկեղեցին թնդաց ուրախության գոչյուններից[5]: «Պատկերը տեսնելու բարեբախտութիւնն ունեցող ոչ ոք պիտի մոռնայ մինչեւ իր մահուան օրը,- գրում էր «Աւետաբերը»:- Կարծր է հարկաւ այն սիրտը որ չհալիր, չազնուանար ու չսրբուիր եղբայրական սիրոյ այս բոցավառ հրով»[6]:

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 189, 29 օգոստոսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

[4] Տե՛ս **«Մշակ»**, № 189, 29 օգոստոսի 1908 թ.:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

Եկեղեցական արարողությունը վերջանալուց հետո նրա մասնակիցները Բերայի մեծ պողոտայով դիմեցին Թաքսիմի ընդարձակ պարտեզը: Առջևից գնում էր զինվորների մի խումբ, որին հետևում էին զինվորական նվագախումբն ու հայոց Կեդրոնական վարժարանի երգչախումբը: Այնուհետև, չարքեր կազմած, գալիս էին եկեղեցական դասը, հոգեհանգստի թուրք և հայ մասնակիցները, վերջում՝ հավատացյալ ժողովուրդը: Ճանապարհին թափորին անընդհատ միանում էին հազարավոր մարդիկ: Այդ անհամար բազմությունը, ավելի քան 50.000 մարդ[1], լցրել էր Ղալաթա-սերայից մինչև Թաքսիմի պարտեզն ընկած ողջ տարածությունը: Ճանապարհի երկու կողմերում հայ վաճառականների բոլոր խանութները փակ էին՝ ի հարգանս թուրք նահատակների, բոլոր չինությունները զարդարված էին օսմանյան դրոշներով և եղբայրության կոչող հայերեն ու թուրքերեն նշանախոսքերով:

Երբ երթաչարքերը հասան Գաբրիել էֆենդի Նորատունկյանի տան առջև, կանգ առան: Նախարարների խորհրդի նոր նշանակված անդամը դուրս եկավ պատշգամբ և անընդհատ ողջույններով պատասխանում էր ժողովրդի՝ «Կեցցե՜ Նորատունկյանը» աղաղակներին:

Թաքսիմի մեծ պարտեզում արդեն սպասում էր նախապես հավաքված մի հսկա բազմություն, որին միացան հոգեհանգստի մասնակից նույնքան հսկա չարքերը: Պարտեզը չէր տեղավորում տասնյակ հազարավոր մարդկանց: Այստեղ էր եկել նաև նշանավոր Ֆուադ փաշան, որին սուլթան Աբդուլ Համիդն աքսորել էր Դամասկոս և միայն հուլիսի 30-ին էր վերադարձել աքսորավայրից: Ներկա էր նաև Թուրքիայում պարսից դեսպան Միրզա Ռեզա խանը իր թարգման Հովհաննես խան Մասեհյանի հետ: «Բոլոր պաշտօնեայ թուրքերը եւ Կ. Պոլսի բովանդակ հայութիւնը,- գրում էր ականատեսը,- խոնուեր էին իրար, իրողութիւն մը, որ առանց բացառութեան, բոլորի համար երազ մըն էր եւ, որ կարեւոր է, երկու կողմերն ալ կատարեալ անկեղծ էին»[2]:

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

[2] **«Մշակ»**, № 188, 28 օգոստոսի 1908 թ.:

Հայերը, ի հիշատակ զոհված թուրք հայրենասերների, բերել էին բազմաթիվ պսակներ՝ տարբեր մակագրություններով: ՀՅ դաշնակցության ներկայացուցիչների բերած կարմիր ժապավեններով պսակի վրա հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն գրված էր. «Քաջարի թուրք հեղափոխական ընկերներին»:

Առաջին ճառը թուրքերեն արտասանեց աքսորից նոր վերադարձած **Գրիգոր Զոհրապը**՝ «Օսմանյան սահմանադրական ակումբի» կողմից: Սկզբից մինչև վերջ նա խոսում էր օսմանյան հայրենասիրության ոգով: Ազատության զոհերին նա կոչեց ժողովուրդների եղբայրության գաղափարով դաստիարակված հերոսներ, որոնց կյանքը վառվեց աբդուլհամիդյան բռնապետության դեմ «երեսնամեայ պատերազմի մէջ»: Ճառը նախօրոք տպագրվել էր և պարտեզի մուտքի մոտ վաճառվում էր թուրք երիտասարդներին՝ ի նպաստ Նիազի և Էնվեր բեյերի անվան երկու զրահանավերի կառուցման նպատակով հանգանակության: Ի հավելումն նախապես տպագրված չարաղրանքի, Զոհրապը կոչ էր անում միանալ բանակում և ժողովրդի մեջ սկսված դրամահավաքին, որի նպատակն էր 20.000 ոսկի արժողությամբ գոհարազարդ մի սուր նվիրել Նիազի բեյին և 18.000 ոսկու արժողությամբ ականակուռ սուր՝ Էնվեր բեյին[1]: Այնուհետև հերթականությամբ հանդես եկան Նիազի բեյի եղբայր **Օսման** բեյը, բազմահմուտ և նշանավոր հրապարակագիր **Ահմեդ Շուայիբ** բեյը, պրոֆ. **Հակոբոս Հ. Ջեջիզյանը**, **Սուլեյման** բեյը (որ ելույթի ժամանակ ջանում էր զսպել արցունքները, երբ «կը խօսէր իր հայ եղբայրներուն տառապանքներուն մասին»), հազարապետ **Հակկը** բեյը (որն ասաց, թէ «զոհողութիւնն է հայրենասիրութեան միակ ապացոյցը: Ով սիրեցեալ հայ բարեկամնե՛ր, թող այս խօսքերը խոր տպաւորուին ձեր մէջ եւ զանոնք կարդացող իւրաքանչիւր անհատի օգնեն աւելի ճշմարիտ եւ աւելի լաւ հայրենասէր մը ըլլալ»), Մխիթարյան միաբանության անդամ հայր **Գաբրիել (Բյուզանդ) Մենեվիշյանը** (որ ջատագովեց հայերի զինվորագրությունը ի պաշտպանություն իրենց «օսմանյան

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

հայրենիքին»), քաջածանոթ հրապարակագիր և գրող տիկին **Զապել Ասատուր-Սիպիլը** (որը խոսեց կանանց համար սահմանադրության անգնահատելի դերի մասին, այն մասին, որ նրանք բոլորը, թուրք թե հայ, հույն թե ասորի, ողբում են ազատության զոհերի համար), **Վահան վրդ. Հակոբյանը**, որը մի պերճ կոչ հղեց բոլոր ներկաներին՝ հավերժ նվիրական պահել այդ անմոռանալի օրվա հիշատակը:

Վերջում հանդես եկած **Եղիշե Դուրյան** սրբազանը հետևյալ զգայացունց խոսքերով ազդարարեց միջոցառման ավարտը. «Յորչափ արեւները ծագին ու խոնարհին Օսմ. Պետութեան ընդարձակ տարածութեան վրայ, թող չմոռցուի թէ այս երկրի ազատութեան մարտիրոսներուն մեծ բազմութեան մէջ կարեւոր տեղ մը կը գրաւեն մեր ազնիւ իսլամ եղբայրները: Մեռան անոնք հայրենիքի համար, մեռան ազատութեան համար, մեռան ձեզի համար: Պատուեցէ՛ք անոնց յիշատակները, անոնց օրինակին հետեւեցէ՛ք, եւ եղբայրութեան այս անգին պարգեւին համար փառք տուէ՛ք Աստուծոյ»[1]:

Ինչպես այն ժամանակ վկայում էին ականատեսները, Կ. Պոլսի 1908 թ. հուլիսի 31-ի փառավոր ցույցի նմանը քաղաքը դեռ չէր տեսել: Թերթերը դա անվանեցին «Թուրքերի և հայերի եղբայրացման տոն»[2]:

Կայսրության մյուս քաղաքներում նույնպես հայերն անվերջ ուրախության ցույցեր էին անում: Իզմիրի հայությունն անեզր ցնծության մեջ էր: Քաղաքի երիտթուրքական կազմակերպությունը հատուկ պատվիրակություն էր կազմել, որի մեջ էր նաև Նիազի բեյը: Այցելելով հայոց առաջնորդարան՝ պատվիրակությունը քաղաքի իշխանությունների անունից երախտագիտություն հայտնեց իզմիրահայերին՝ հին ռեժիմի դեմ պայքարում ցուցաբերած հետևողականության համար, և ցավ հայտնեց, որ հայերն ազատության ճանապարհին այնքան մեծաթիվ զոհեր են տվել: Դիմելով առաջնորդարանի բակում խոնված ժո-

---

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 601:

[2] Մանրամասն տե՛ս **«Արեւելք»**, № 6863, 1 օգոստոսի 1908 թ.:

ղովրդին՝ Նիազի բեյն ասաց. «Նախ եւ առաջ պէտք է երախտապարտ լինել հայ ազգին, այլ ոչ թէ օսմանեան զինուորներին: Հէնց այդ ազգն է, որ ազատութեան գաղափարը ներշնչեց մեզ, դա այն ազգն է, որ մեզ առաջնորդեց դէպի Ազատութիւն: Մենք երախտապարտ ենք ձեզ»[1]:

Ինչպես տեսնում ենք, հեղաշրջումից հետո, սկզբնական շրջանում ժողովրդական զանգվածների մեջ իշխում էր այն պատկերացումը, թե սահմանադրությունը ժողովրդին նվիրել է սուլթանը, այլ ոչ թե հետևանք է նրա վրա որևէ ճնշման: Պատահական չէ, որ այդ օրերին կայսրության թերթերը լիքն էին Աբդուլ Համիդին փառաբանող հոդվածներով: Սուլթանը մարդասիրության և իմաստության խորհրդանիշ էր դառնում նաև հայ հասարակության հատկապես պահպանողական շերտերի համար:

«Օսմ[անեան] Կայսրութեան մէջ, միմիայն Ն. Կ. Վեհափառութեան մեծութեան ու իմաստութեան շնորհիւ, երկիրը առանց ոեւէ տագնապ կրելու կը մտնէ ազատութեան եւ արդարութեան դարագլուխի մը մէջ...»[2],- գրում էր «Աւետաբերը»:

Դրվատելով հեղափոխության անարյուն լինելը և դա վերագրելով սուլթանի իմաստությանը՝ «Արեւելք» թերթը ներբողում էր. «Այսօր ամէնուն աչքին առջեւ է Ռուսիոյ եւ Պարսկաստանի քաշածները՝ իրենց բնական իրաւունքները ձեռք բերելու համար: Մինչդեռ ամէն տեղ արիւն կը հոսի, օսմանեան ընդարձակածաւալ երկիրները միմիայն մեր օգոստափառ Վեհապետին մեծ իմաստութեան շնորհիւ, առանց վնասակար տագնապներէն անցնելու, կ'արժանանան արդարութեան եւ ազատութեան»[3]:

«Արեւելքին» ձայնակցելով՝ նրա «Զենիթ» խորագրով հավելվածն իր առաջնորդողում նույն ոգեշնչվածությամբ գրում էր. «Մարդկային պատմութեան մէջ չտեսնուած յաջողութեամբ մը եւ խաղաղ զարգացման ճամփով՝ շնորհիւ մեր Վեհ. Կայսեր

---

[1] **«Զանգակ»**, № 35, 16 օգոստոսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 31, 1 օգոստոսի 1908 թ.:

[3] **«Արեւելք»**, № 6863, 1 օգոստոսի 1908 թ.:

իմաստուն կարգադրութեան, ահագին շրջում մը, սահմանադրական պետութիւն մը ստեղծուեցաւ առանց արիւնահեղութեան»[1]:

Մամուլը Աբդուլ Համիդին ներբողաբանում ու փառավորում էր նաև չափածո ստեղծագործություններով:

Այսպես, հասարակական գործիչ, գրականագետ և գրող Մերուժան Պարսամյանը հեղաշրջումից ընդամենը չորս օր հետո (1908 թ. հուլիսի 15) «Արեւելք» թերթում հրատարակած «Ազատութեան արծիւը» վերտառությամբ բանաստեղծության մեջ անհուն բերկրանքով երգում էր սուլթան Աբդուլ Համիդին՝ որպես «արդարութեան արեւի»: Դիմելով սուլթանին՝ բանաստեղծության հեղինակը նրան հլու-հպատակության խոսք էր ուղղում, նաև հավաստիացնում, որ իբր «Ամէն անհատ կ'աղօթէ կեանքիդ համար յաղթապանծ»:

Գահիդ վրայ միշտ ապրէ՛, ով մեր հայրը
պանծալի,
Մեր ամէնուս գթառատ Վեհապետը
իմաստուն,
Ցողէ՛ անդուլ մեր վրայ բարիքներդ
ցանկալի,
Դո՛ւն որ աղբիւրն ես եղեր
Ցնծութեան վառ լոյսերուն:
...

Ազգիս կողմէ կու գամ ես՝ իբրեւ
քերթող՝ հնչեցնել
Ձերբազատուած տաւիղիս լարերուն
վրայ դիւրազգայ,
Երգ երգոցը Գոհութեան, Մաղթանքներու
եւ երգել՝
Յաւէտ երգել Քու փառքդ, արքաներո՛ւ
մեծ Արքայ»:

---

[1] **«Զենիթ»** (Կ. Պոլիս), 19 հուլիսի 1908 թ.:

Զարմանք է առաջացնում, թե հեղափոխության առաջին օրերին որքա՞ն սուտ ու կեղծիք, որքա՞ն հտպիտ-միմոսային ծաղրապատկերային երևույթներ առաջ եկան հայ կյանքում, որ Հակոբ Պարոնյանն իսկ չէր կարող երևակայել իր Աբիսողոմ աղաներով:

Իր հուշապատումի «Օսմանեան սահմանադրութիւնը եւ իր անդրադարձումները» հատվածում, Ռուբեն Տեր-Մինասյանը պատկերավոր նկարագրել է տեղի ունեցածը. «Պոլսի մէջ բազմացան այծամօրուքաւորները, որովհետեւ կովկասահայ յեղափոխականները ընդհանրապէս այծամօրուք կը կրէին, չատցան քամին փողփողող կարմիր կամ սեւ փողկապները, որովհետեւ յեղափոխութեան կուռք դարձած Ակնունին այդպիսին կը կրէր. չատցան ծոծրակին կամ ականջին թէքուած կակուղ գլխարկաւորները, որովհետեւ Եւրոպայէն եկած յեղափոխականները այդպիսիք կը կրէին, կամ գլխաբաց էին»[1]:

Առաջ անցնելով ասենք, որ սեպտեմբերի սկզբին սուլթանի ծննդյան տարեդարձն էր: Մայրաքաղաքը թաղվել էր հրավառության և գույնզգույն լապտերների ծովում: Զորս կողմից երաժշտություն էր լսվում: Ժողովրդի պահանջով ամեն տեղ հնչում էր «Մարսելյեզը», որին հաջորդում էին որոտընդոստ ծափահարությունները: Սուլթան Աբդուլ Համիդ և ... «Մարսելյեզ»: Ճակատագրի հեգնանք ու խաղ: «Յաչասը՛ն հուրրիեթ», «Յաչասը՛ն վաթան» բացականչությունները թնդում էին ամեն կողմից: Մի՞թե տարօրինակ չէր – սուլթան և սահմանադրություն: Ի՞նչ կապ կար և ի՞նչ նմանություն: Մի՞թե դա միևնույնը չէր, եթե ասվեր. «Կեցցէ՛ դահիճը, կեցցէ՛»: Ո՞վ էր տեսել դահճի արդարությունը:*

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում Թուրքահայաստանում:

Հայկական նահանգների տառապակոծ ու սոված հայության խրախճանքը, իհարկե, այնպիսին չէր, ինչպիսին Կ. Պոլսում կամ Իզմիրում[2], բայց այնտեղ էլ այն տպավորիչ էր: Կայսրության

---

[1] ***«Հայրենիք»**, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 71:*

* *Թուրքերեն՝ «Կեցցէ՛ ազատությունը», «Կեցցէ՛ հայրենիքը»:*

[2] *Իզմիրում խրախճանքների մասին տե՛ս **«Արեւելեան մամուլ»**, № 30, 22 հուլիսի 1908 թ.:*

հայաբնակ վայրերում տեղի ունեցող ցույցերի ու հանրահավաքների անմիջական կազմակերպիչը ՀՅ դաշնակցությունն էր:

1908 թ. № 34-ում «Աւետաբերը» տպագրել էր Ամասիայից ստացված թղթակցությունը, որի հեղինակը նկարագրում էր այն արձագանքը, որ այնտեղ ունեցել էր սահմանադրության վերահռչակումը: Ժողովուրդը հավաքվել էր կառավարչության չենքի դիմացի հրապարակում, ամենուրեք լսվում էին «Փաղիշահըմ չո՛գ յաշա» բացականչությունները, ծիծաղի և ուրախության լացի ձայներ: Պարզած էին «Ազատություն», «Արդարություն», «Հավասարություն» բառեր պարունակող ցուցապաստառներ: «Սիրտեր ուրախութեամբ լեցուն պայթելու չափ, սակայն բերաններ տակաւին խիստ չափաւորութեան մէջ, եւն.: Որը կը հաւատայ, որը կ'ապշի, որը կը ծիծաղի, իսկ շատեր տակաւին կը լռեն. եւ ահա՛ մունետիկը բարձրաձայն յայտարարեց. «Երեք օր ուրախութիւն ըրէ՛ք»»: Ա՛լ բերաններ բացուեցան «Փա՛ռք քեզ Աստուած» եւ «Փատիշահըմ չօգ եաշա» բացագանչելու մեծ եռանդով»[1]: Ամբողջ երեք օր ժողովուրդը մեծ խանդավառության մեջ էր[2]:

Հեղաշրջման մասին Վանում իմացան հենց երկրորդ օրը:

Լսելով այդ մասին՝ առաջնորդական տեղապահ տեր Մեսրոպն անմիջապես դիմեց կուսակալ Ալի Ռիզային՝ լուրը ճշտելու համար, բայց վերջինս մեծ թերահավատությամբ և տհաճությամբ ասել էր. «Ես Ստամբուլից ստացել եմ մի անիմաստ հեռագիր»[3]: Այսքանը:

Առաջին պահին Վանը մնաց նույն դրության մեջ, ինչպես առաջ էր, ավելին, քաղաքի մերձակա մի քանի շրջաններում մուսուլմանների տրամադրություններն ավելի անհանգիստ և երկյուղալի դարձան: Նրանք համառորեն չէին ուզում հավատալ հեռագրական լուրերին, քանզի իրենց մտքով անգամ չէր անցնում, թե նոր կառավարությունը կարող է որևէ գիջում անել քրիստոնյաներին, որոնց վրա նայում էին իբրև թշնամու, չէին

---

[1] ***«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 614:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] ***«Մշակ»**, № 178, 15 օգոստոսի 1908 թ.:*

համակերպվում այն մտքի հետ, թե հայն իր իրավունքներով երբևիցե կարող է հավասար լինել իրենց հետ:

Բայց չուտով Վան հասան Կ. Պոլսի թերթերը և բազմաթիվ նամակներ: Այլևս կասկած չմնաց, որ անկարելին և անհավատալին իրականություն է դարձել: Մուսուլմանները պետք է հաշտվեին իրերի նոր վիճակի հետ, իսկ քրիստոնյաները թեև ուրախացան անկեղծորեն, բայց նրանց մեջ, այնուամենայնիվ, մնում էին կասկածն ու թերահավատությունը:

Միայն օգոստոսի 1-ին առաջնորդական տեղապահ տեր Մեսրոպը ս. Նշան մայր եկեղեցում քարոզախառն ճառ ասաց: Ականատեսը գրում էր. «Հայերն այդ օրը իրենց զգում էին, վերջապէս, փոքր ինչ ազատ եւ իրենց զգացմունքները յայտնում էին անբռնադատօրէն: Թուրքերն իրենց պահում էին շատ զուսպ եւ ուրախութեան առանձին ցոյցեր չէին անում: Նրանց [մի փոքր] մասը [միայն], որ պատկանում կամ համակրում էր երիտթուրքերի կուսակցութեանը, խօսում էր համերաշխութեան եւ համաքաղաքացիութեան մասին»[1]:

Հետագա օրերին նույնպես Վանի մուսուլմանները դեռ վերապահությամբ էին վերաբերվում երիտթուրքական հեղաշրջմանը: Նրանց այդ տրամադրությունն ազդում էր քաղաքի հայ բնակչության վրա, որն անվստահությամբ էր համակվում ընթացող եղելությունների նկատմամբ, անհանգստությամբ և մտահոգությամբ էր ականատես լինում երիտթուրքական տեղի կազմակերպության՝ ժողովրդի մեջ ցրվող թռուցիկներին: Ընդհակառակը, թուրքերը, որոնք կասկածում էին նոր կառավարության նկատմամբ հայերի հավատարմությանը և նրանց վրա շարունակում էին նայել որպես անջատամոլների, չէին խորշում այդ թռուցիկներից:

Որոշ ժամանակ էլ անցավ, երբ մոտավորապես օգոստոսի վերջերից քաղաքի թուրքերի մոտ աստիճանաբար երևակվեց հանդուրժողական վերաբերմունք հայերի հանդեպ: Դրա պատճառը Կ. Պոլսից եկած նորանոր լուրերն էին, որ այնտեղ կառա-

---

[1] **«Մշակ»**, № 178, 15 օգոստոսի 1908 թ.:

վարությունը գնալով ամրապնդվում է և վճռական է մինչև վերջ հասցնելու բոլոր օսմանցիների՝ մուսուլման, քրիստոնյա, թե հրեից կրոնների մարդկանց հավասարության սկզբունքի կիրարկումը, որ ազդարարված է կայսրության բոլոր ազգերի ազատություն, հռչակված է նաև եվրոպական դեմոկրատիայի կարևորագույն սկզբունքներից մեկը՝ օրենքի առջև բոլորի հավասար իրավունքները և հավասար պատասխանատվությունը:

Այդ լուրերի տպավորության տակ, ամենօրյա զրկանքների ու տանջանքների սրտաճմլիկ գնով ապրող, անոթի, նիհար, մերկ աշխատավորն անգամ, լավագույն ապագայի դյուրիչ պատկերներով չլացած՝ սկսել էր թռիչք տալ իր երևակայությանը: Թեև հուլիսի 11 (24)-ից հետո անցած մեկ ամսում իր միջավայրն ու իր կյանքը ոչնչով չէին փոխվել, բայցևայնպես, դարեր ի վեր վիզը ճուկ գետնին գամված կացությունից ազատված հայը մի պահ սկսել էր իր դարավոր ճնշողին նայել համարձակ դեմքով ու աներկյուղ, և այդ անսովոր կացությունից նա մեծագույն բավականություն էր ստանում[1]: Ականատեսը հետագայում վերհիշում էր.

«Ամէն օր խառն թափօրներ եւ ցնծագին պարեր հրապարակներու մէջ: Անճառելի եւ սրտառուչ կերպարանափոխութիւն: Իրօք, Վանի մէջ եւս երէկուան տարտարոսը դրախտի փոխուած էր կարծես: Ելտրզի հասցէին ինչ մեղադրանքներ եւ նոյնիսկ հայհոյանքներ թուրքերու բերնէն, եւ ինչ փառաբանութիւններ հայ ազգին՝ դարաւոր հաւատարմութեան եւ անձնուիրութեան համար»[2]:

Վանի խանդավառ մթնոլորտը փոխանցվել էր Լեռնապարին, ուր տերն ու տիրականը, առաջվա պես, մնում էր Իշխանը:

Դավոյի դավաճանությունից հետո Լեռնապարում ապաստանած Շամի գործիչներից Արամը, դեռ նախքան պետական հեղաշրջումը, ծպտյալ եկել էր Վան և գործում էր խոր ընդհատակում: Հեղաշրջման լուրն առնելուն պես դուրս գալով ընդ-

---

[1] *Տե՛ս* ***«Լրաբեր»****, № 9, 22 փետրվարի 1909 թ.:*

[2] ***Համբարձում Երամեան****, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 93:*

հատակից՝ նա անմիջապես նամակ է գրում Լեռնապարում գտնվող Վահան Փափազյանին (Կոմս) և նրան հաղորդում տեղի ունեցած պատմական իրադարձության մասին: Տարիներ հետո, անդրադառնալով Արամի այդ նամակի բովանդակությանը, Վ. Փափազյանը վերհիշել է. «Նամակը, իրաւ, Արամէն էր: Կը գրէր, թէ սահմանադրութիւնը յայտարարուած է ... [եւ] կը խնդրէր աներկիւղ իջնել Վան, [քանզի] այլեւս նպատակ չկար լեռները թափառելու մէջ»[1]:

Արամի նամակն ստանալուն պես Լեռնապարից տարբեր օրերի և տարբեր ճանապարհներով Վան իջան այնտեղից հեռացած գործիչները, նաև կարճ ժամանակով՝ Իշխանը: Քաղաք եկավ նաև Ռուբենը՝ Մուշից: Նա այնտեղից ժամանել էր երիտթուրք հեղափոխական գործիչ Վեհիբ բեյի հետ, որը նույնպես սուլթանական հետապնդումներից խուսափելով, հեռացել էր Վանից: Ռուբենը հատկանշական ու հետաքրքիր դիտարկում էր արել: Ճանապարհին Վեհիբ բեյի հետ ունեցած զրույցների ժամանակ համոզվել էր, որ երիտթուրք գործիչը թունոտ ատելություն է տածում հայության հանդեպ, թեև անհաջող կերպով փորձում էր թաքցնել իր վերաբերմունքը: Դա Ռուբենի համար եղել էր կարևոր ազդակ, որը նրա մեջ հարուցել էր առաջին կասկածը կայսրության բոլոր ազգերի ու կրոնների հավասարության մասին երիտթուրքերի հռչակած սկզբունքների հանդեպ:

Ինչևէ, Վան վերադարձած և այնտեղ եղած հեղափոխականներն ի մի են հավաքվում: Նրանք փառավոր ընդունելություն են գտնում քաղաքի հայության և թուրք բնակչության մեծ մասի կողմից: Փողոցներով անցնելիս՝ թուրքերը «յաշա՜, յաշա՜» էին կանչում, նրանց չռայլ պատիվների արժանացնում:

Ռուբենը նկարագրել է Վանում տեղի ունեցած մի բազմամարդ հավաքի ընթացքը: Ներկա էին ոչ միայն հայեր, այլև մեծ թվով թուրքեր: Մասնակիցները բուռն ողջույններով դիմավորում են «եղբայրացած» հայ և թուրք հեղափոխականներին:

---

[1] ***Վահան Փափազեան***, *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 49:*

Բայց այդ եղբայրության դեմքը ներկայանում էր տարբեր երեսներով՝ հայերի մոտ՝ միամիտ պարզությամբ, թուրքերի մոտ՝ վերապահությամբ ու, առաջվա պես, իրենց գերակայության զգացումով:

Երբ Արամը ճառով հանդես է գալիս ադրբեջանական ջարդոտված թաթարերենով, Ռուբենին ծանոթ թուրք պաշտոնյաներից Մեհմեդ էֆենդին, որ ներկա էր հանրահավաքին, անդրադառնալով Արամի ելույթին, ասել էր. «Երբ Արամը ճառեց իր թաթար լեզուով, մէկը կողքիս ըսաւ. հայութիւնը անարժան է այսպիսի մարդ ունենալու, օսմանցիի արժանի է այս մարդը»[1]:

Հայը թուրքի համար նույն անարժանն էր մնացել:

Երիտթուրքական հեղաշրջման հետ ապագայի վառ հույսեր էր կապել Տարոնի և Սասունի հայությունը: Հայկական այդ երկու աշխարհների օրինակով ականատեսը գրում էր. «Ամէն օր հրապարակային ցոյցեր տեղի կ'ունենային, թուրք եւ հայ ճառախօսները կը ջատագովէին երկու ազգերու համերաշխութիւնը եւ հաւասարութիւնը»[2]: Զանգվածային հանրահավաքների ու ժողովների ժամանակ թուրքերը և հայերը գրկախառնվում էին, համբույրներ փոխանակում հայ տերտերներն ու թուրք մոլլաները: «Բազմաչարչար հայերը, մոռացության տալով իրենց բոլոր կրածները, անկեղծորեն նվիրվեցին Փոքր Ասիայում սահմանադրութեան ամրապնդմանը»[3],- դեպքերի թարմ հետքերով գրում էր երիտթուրքերի հեղափոխության պատմության ռուս հետազոտողներից մեկը: Հեղափոխությամբ խանդավառված՝ հայերն ակնկալում էին նրա բարիքներից ստանալ իրենց արդար բաժինը: Վերհիշելով այդ օրերի Տարոնի հայերի խանդավառությունը՝ ականատեսը նշել է. «...Սկզբի օրերն այնքան վառ ու խոստումնալից եղան, հռչակուած սահմանադրութենէն ակնկալութիւններն այնքան մեծ, որ հայերս

---

[1] ***Ռուբէն,*** *Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, Լոս Անճելոս, 1951, էջ 262:*

[2] ***Սարգիս*** *եւ* ***Միսաք Բդէեաններ****, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 261:*

[3] *Տե՛ս* ***"Турецкий сборник (К событиям на Ближнем Востоке)"****, с. 224.*

հաւատացինք, թէ այլեւս վերջ գտած են մեր դարաւոր տառապանքները, այսինքն թէ՝ ո՛չ Թուրքը եւ ո՛չ ալ մանաւանդ քիւրտ աւազակը ալ պիտի չհալածեն ու չկոտորեն մեզի»[1]:

Տարոնի առանձին երազողներ էլ վճռականորեն քանդելով իրականի և անիրականի սահմանը՝ հեքիաթների աշխարհն էին ընկնում:

Ռուբենն իր հուշերում գծել էր հետևյալ երևակայական զավեշտական պատկերը. «Ահա՛ Տարօնի ժողովուրդը կը տեսնէ իր համեստ Գեղամը (նկատի ուներ Գեղամ Տեր-Կարապետյանին – Մշո Գեղամ, Տատրակ:- Հ. Ս.), որ վախկոտ տատրակի նման կը ղունղունար առաջնորդարանի գրագրութեան մէջ, իբր մի հսկայ վեր կը բարձրանայ «Մեջլիս-ի Մեպուսանի» (պատգամավորական ժողով:- Հ. Ս.) սանդուխներէն՝ իր ետեւէն քարշ տալով Թոփալենց ահարկու խոջայ Իլիասը: Աւելի հեռուն իր աչքով ան կը տեսնէ, որ նախարարութեան ամենաբարձր սանդուխներէն վեր կը մագլցին հայ նախարարներ՝ Օսմանեան կայսրութիւնը ղեկավարելու համար, եւ արտաքին գործոց, հաղորդակցութեան, փոստ-հեռագրատան եւ այլ նախարարական դիրքերը կը գրաւուին հայերէ»[2]:

Թուրքահայոց ուրախությունը կիսում էին ուրիշ երկրներում ապրող հայերը, որոնք հույս ունեին, թե նոր իշխանությունների օրոք իրենց հարազատները և ազգակիցները, վերջապես, կազատվեն դարավոր բռնակալությունից, չունչ կառնեն և ձեռնամուխ կլինեն Հայաստանի վերաշինությանը:

Հուլիսի 14 (27)-ի առավոտյան, Թիֆլիսում բնակվող Թուրքահայերի մի խառն բազմություն, որին միացել էին բազմաթիվ Թիֆլիսահայեր, զինվորական նվագախմբով գնացին տեղի Թուրքական հյուպատոսարան՝ օսմանյան սահմանադրության վերականգնումը չնորհավորելու համար: Հյուպատոսը ողջունեց հավաքվածներին և հատուկ դիմելով գաղթական Թուրքահայերին, ասաց. «Ո՛վ օսմանցիներ, մեր փադիշահ Սուլթան Աբդուլ Համիդը չնորհեց ձեզ սահմանադրութիւն, այժմս էլ չկայ ոչ հայ,

---

[1] **«Պատմութիւն Պաղնատան»,** Պոսթոն, 1966, էջ 133:

[2] **«Հայրենիք»,** № 8 (271), օգոստոս, 1948, էջ 68:

ոչ յոյն եւ ոչ հրեայ, բոլորդ էլ օսմանցիներ էք, հաւասար եղբայր, հաւասար իրաւունքի տէր մուսուլմանների հետ միասին, այլեւս քրիստոնէի հարց չկայ, բոլորս էլ մի ենք – հողի եղբայր ենք: Ասացէ՛ք՝ կեցցէ՛ սահմանադրութիւնը, կեցցէ՛ ազատութիւնը, թո՛ղ Աստուած երկար կեանք չնորհի Սուլթանին... Դո՛ւք, հայե՛ր, շատ նեղութիւններ եւ տառապանքներ քաշեցիք, այժմս անցել է այդ ամէնը, մոռացէ՛ք եւ գնացէ՛ք ձեր օջաղը, այնտեղ սպասում են ձեր հարազատները. եւ երբ մտնէք ձեր հայրենիք, մի մի ափ հող վերցրէ՛ք եւ համբուրեցէ՛ք...»[1]:

Միդհատյան սահմանադրության հրատարակման լուրը, ինչպես ամեն տեղ, պարսկահայության մեջ նույնպես, մեծ արձագանք ունեցավ և անհուն բերկրանք առաջացրեց:

Նոր Ջուղայից «Մշակ» թերթին ուղարկած նամակում տեղի հայերից մեկն այսպես էր արտահայտում իր զգացմունքներն ու լավատեսական հույսերը.

«Անկեղծօրէն ողջունելով եւ չնորհաւորելով այս նշանաւոր իրադարձութիւնը բոլոր հայերի համար ընդհանրապէս եւ Թուրքահայերի համար մասնաւորապէս, յոյս ունենք, որ այսուհետեւ մեր բազմաչարչար Թուրքահայ եղբայրներն ու քոյրերը, մի կողմ թողնելով իրենց լացն ու կոծը, վիշտն ու տրտմութիւնը՝ կը սկսեն եռանդուն կերպով վերանորոգել իրենց քանդուած-աւերուած օջախները եւ կ'ապրեն իրենց հայրենիքում՝ ազատ, երջանիկ եւ ապահով»[2]:

Լոնդոնի հայերը, տոնելով սահմանադրության ներմուծումը, հանդիսավոր մաղթանք կատարեցին եկեղեցում, ուր ներկա էր Լոնդոնում Թուրքաց դեսպանը: Մաղթանքից հետո եկեղեցում հավաքված հայերի մեծ մասը գնաց օսմանյան դեսպանատուն և հավատարիմ հպատակության հավաստիքը հայտնեց սուլթանին:

Խանդավառ էին Փարիզի հայերը: Նույնիսկ Արշակ Զոպանյանը, որ օսմանյան ընդդիմադիր տարրերի Փարիզի 1907 թ. դեկտեմբերի համաժողովի ընդունած որոշումները հրապարակավ դատապարտել էր, հուլիսյան հեղաշրջումից հետո սկսեց

---

[1] ***«Հովիւ»***, *№ 28, 3 օգոստոսի 1908, էջ 443:*

[2] ***«Մշակ»***, *№ 227, 15 հոկտեմբերի 1908 թ.:*

դրվատանքով խոսել նոր վարչակարգի մասին:

Երիտթուրքերի հռչակած «սահմանադրական ազատությունների» պայմաններում հայերի չդադարող ժողովներին, հանրահավաքներին ու ցույցերին ուրիշ բազմազան ձեռնարկներ էին գումարվում:

Հրապարակ եկած թատերական խմբերը բեմեր էին հանում հայոց պատմության հին ու մաչված կուռքերը՝ օրհներգների ու «ազգային երգերի» ուղեկցությամբ: Կ. Պոլսում բեմադրվում էին բազմաթիվ «ազգային ողբերգություններ»՝ «Արշակ Բ», «Սանդուխտ կույս», «Կոռնակ», «Անկումն Արշակունի թագավորության» և գեղարվեստական որևէ արժեք չներկայացնող նման պիեսներ: Կեղծ դասական արվեստի՝ տասնամյակների վաղեմություն ունեցող այդ և նման ուրիշ ստեղծագործությունների հերոսները տրտմություն ու ողբ արտահայտող հոգոցների ու մրմունջների հետ, բեմերից հանդուգն և պոռոտախոս կոչեր ու ազգասիրական ցցուն արտահայտություններ էին անում:

Բայց սրճարաններում և այլուր առավել մեծ ավյունով թնդում էին հայոց ռազմի երգերը:

Ազգային սահմանադրություն ստանալուց հետո Կ. Պոլսի հայությունը մի առանձին ոգևորության մթնոլորտում 1860-1870-ական թվականներին հորինել էր բազմաթիվ հայրենասիրական երգեր՝ «Արիք հայկազունք», «Ի բյուր ձայնից», «Հայրենյաց սիրով վառված վեհ սրտեր», «Ո՜հ ինչ անուշ» և ուրիշներ, որոնք մայրաքաղաքից լայնորեն տարածվել էին Թուրքահայաստանի գավառներում և մուտք գործել Անդրկովկաս՝ դառնալով սովորական սիրված երգեր ողջ հայության մեջ: Այդ երգերը գրավիչ էին թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ նրբորեն մշակված եղանակներով, որոնց մեջ գերադաս տարր էին կազմում եվրոպական նվագների նմանակումները:

19-րդ դարի 70-ական թվականների երկրորդ կեսից պոլսական երգերի ազդեցությունը գնալով թուլացել էր և Թուրքահայության մեջ սկսել էին լայն տարածում գտնել կովկասահայ ժողովրդական ու աշուղական (Ջիվանի և ուրիշներ) երգերը:

Այնուհետև սկսեցին հրապարակ գալ հայդուկային երգերը՝ զանազան արտահայտություններով, որոնցում գովերգվում էին

Թուրք և քուրդ հարստահարիչների դեմ հայ հերոսների կռիվը, հայ ֆիդայու վեհությունն ու անձնուրացությունը: Տարածվել էր նաև սիրային տաղը՝ արևելյան զեղումներով,

Ազգային հարաբերությունների ոլորտում Իթթիհադի որդեգրած տեսական գաղափարներին և գործնական քաղաքականությանը տրամագծորեն հակառակ այդ բոլոր ազգասիրական դրամաները և հայրենասիրական երգերը չարժում էին Թուրքերի զայրույթը և տարակուսանք հարուցում ոչ Թուրք այլազգի մարդկանց մոտ:

Թուրք հասարակությունը ոչ միայն մչտապես հետևում էր, թե այլազգիների հավաքույթներում ու ժողովներում արդյո՞ք խոսք է ասվում սահմանադրության դեմ, արդյո՞ք որևէ մեկը կոչ է անում հեռու մնալ օսմանցիությունից և բռնել անջատողական ուղի, այլև հետամտում էր, թե իրո՞ք այլադավանները գովերգում են իրենց պատմական անցյալը, հատկապես Թուրքերի դեմ իրենց մղած կռիվները: Անջատողականություն Թվացող ամենափոքր իսկ երևույթը դիտվում էր մանրադիտակով և անմիջապես դրսևորվում ուժգին հակազդեցությամբ:

Պոլսում հրատարակվող հունական օրաթերթերից մեկը՝ «Պրո օդոսը» («Առաջադիմություն») 1908 թ. սեպտեմբերի սկզբին «Հայերը պարզում են իրենց ազգային դրոշակը» վերնագրով հոդվածում տպագրել էր մի սադրիչ լուր, որ իբր, նրանք Գում-Գափուում, մի ցերեկույթից թե դասախոսությունից հետո, հայկական դրոշակ են պարզել: Դա նշանակում էր, որ «Հայք օսմանեան սահմանադրութիւնով չեն գոհանար եւ անկախ Հայաստան կ'ուզեն»[1]:

Այդ անախորժ ու վրդովեցուցիչ լուրը չրջան առավ պոլսական բազմալեզու մամուլի մեջ:

Թուրքական պաշտոնական և մասնավոր չրջանակները հուզվեցին: «Բիւզանդիոն» թերթը, կրքերը հանգստացնելու համար, տպագրեց մի զեկուցագիր, որով հերքում էր այդ լուրի ստուգությունը:

Բայց կրքերը, փոխանակ դադարելու, նոր ծավալ ստացան:

---

[1] **«Ազգ»**, *№ 76, 10 հոկտեմբերի 1908 թ.:*

Պատճառն այն էր, որ Բերայում լույս տեսնող անգլո-ֆրանսիական հայտնի "Levant Herald" («Լևանտ հերալդ») օրաթերթը կրկին անդրադարձել էր այդ հարցին, գրելով.

«Նախորդ օրը Գում-Գափուի մէջ տեղի ունեցան տխուր միջադէպեր. մի չարք հայեր հայրենասիրական մի ցոյց սարքեցին, որի ընթացքում պարզեցին հայոց թագաւորների դրօշակն ու այլ ազգային խորհրդանշաններ: Ոստիկանութիւնը դիտողութիւններ արեց ցուցարարներին, բայց՝ ապարդիւն: Իսկոյն հասաւ ոստիկանապետը, բայց որեւէ բան անել չկարողացաւ: Այդ վերջինը դէպքի մասին տեղեկացրեց Մեծ Եպարքոսին, որը որոշեց արգելել հայերի ազգայնականութեան այս պոռթկումները»:

Այսպիսով, թերթն արդեն խոսում էր ոչ թե ենթադրաբար, այլ վճռական հաստատումով՝ դեպքերի մասին տալով նույնիսկ մանրամասնութիւններ, այն է՝ հայերը ոչ միայն դրոշակ են պարզել Գում-Գափուում, այլև նույնիսկ չեն լսել ոստիկանութեանը, երբ վերջինս նկատողություն է արել:

«Ազգի» հոդվածագիրը դայրալից գրում էր. «Այս անամօթ ստախօսները գոնէ կրնա՞ն ըսել թէ ի՞նչ տեսակ կերպաս մ'էր կամ ո՞ր գոյները կը կրէր այն զոր «Հայաստանի դրօշն» ըլլալ կարծեր են: Մի՛ գուցէ Օսմ. Միութեան եւ Յառաջդիմութեան գոյներն հեռուէն իբր Հայոց դրօշը կարծած ըլլան: Հայերն ուրիշ դրօշ չունին այսօր բայց եթէ Ազատական և Սահմանադրական Թուրքիոյ փառաւոր դրօշը: Թո՛ղ ճաթին հակասահմանադրականները, յետադիմականները, ռէաքսիոնէրները, բայց մեք ուրիշ դրօշ չունինք, եւ գիտենք խայտառակել այն սեւոգի գործիչներն որք տգէտներու ձեռքը քանի մը ղրչ. դնելով, կը գրգռեն զանոնք Թուրքերուն անհաճոյ Թուելիք ցոյցեր ընելու»[1]:

Իրողությունն, սակայն, այն էր, որ իրենց մի հավաքույթից հետո դաշնակցականները գնում են կայարան՝ ճանապարհելու իրենց ընկերներից մեկին: Ճանապարհին, իրոք, պարզում են իրենց կուսակցական դրոշակը*, այլ ոչ թե «Հայաստանի դրո-

---

[1] Տե՛ս **«Ազգ»**, № 76, 10 հոկտեմբերի 1908 թ.:

* Արդյոք հարկ կա՞ր ընկերոջը ճանապարհելիս թեթևամտորեն բարձրացնել ՀՅԴ կուսակցական (այնուամենայնիվ՝ հայկական) դրոշը և ավելորդ հոգսեր պատճառել ազգակիցներին:

չակը», ինչպես ներկայացվել էր թերթերում: Իսկ «Լևանտ հերալդի» լուրը, որ իբր, ոստիկանությունը միջամտել է, բայց հայերը չեն ենթարկվել, ծայրեիծայր չինծու էր, սուտ:

Թեև հաջորդ օրը պոլսահայ բոլոր թերթերը զայրալից հոդվածներով ցույց տվեցին նշված թերթերի հրապարակումների ստահոդ և սադրիչ լինելը և նույնիսկ դատ բաց արին «Պրո օդոսի» դեմ, որպես դիտումնավոր ապատեղեկատվության սկզբնաղբյուրի, բայց սադրիչ գործն արդեն արվել էր. Թուրքերի հոգիներում սև կասկածներ էին սողոսկել:

Դրոշակ պարզելու խնդիրը դեռ չէր կորցրել իր սուր բովանդակությունը, երբ երևան եկավ մի ուրիշ հարց՝ նույնքան անախորժ ու վտանգավոր:

Պոլսի զանազան մասերում այս կամ այն պատկերավաճառի խանութում, սովորական խանութների մի անկյունում կամ փողոցային կրպակներում սկսել էին վաճառել հայ թագավորների անճոռնի ու անճաշակ նկարներ և հայկական զինանշաններ: Վաճառվում էին ոչ միայն հայերի, այլև հույների ու հրեաների ձեռքով, որոնք իրենց շահի համար բարձրաձայն աղաղակում էին. «Էրմենի փադիշահլարըն թասվիրլերի... Էրմենի փադիշահլարըն թասվիրլերի...»:*

Կարելի է երևակայել, թե այդ հիմար ճիչերն ինչ ազդեցություն էին թողնում թուրք տգետ, անգիտակից զանգվածի վրա:

Շուտով պարզվեց, որ հայոց թագավորների նկարները և հայկական զինանշանները տպագրում են ոչ միայն հայերը, այլև հրեաները և հենց իրենք՝ հույները: Ընդամենը դրան, «Պրո օդոսը» հայ թագավորների նկարների խնդիրը նույնպես հանել էր իր էջերը:

Կ. Պոլսում ֆրանսերեն հրատարակվող "le Matin" («Մաթեն») լրագիրը մեղադրում էր մայրաքաղաքում հրատարակվող հունական թերթերից մեկին, որը գրել էր, թե հայերն ուզում են ունենալ իրենց անկախ թագավորությունը և այդ նպատակով ապստամբել են, որի պատճառով Հայաստանի կողմերում իսլամները և հայերն սկսել են միմյանց կոտորել:

---

* *«Հայ թագավորների պատկերներ, հայ թագավորների պատկերներ...»:*

Ի պատասխան այս վտանգավոր մատնագրի, «Մաթենը» գրում էր.

«Ցաւօք, կարդացինք այս խառնակիչ յօդուածը եւ վստահ ենք, որ այն հրատարակող թերթը յոյների անկեղծ թարգմանը չէ: Յոյները սահմանադրութեան հռչակումից թերեւս ամէնից աւելի գոհ մնացած օսմանցիները պիտի լինեն»:

Հետաքրքիր է, որ հեղափոխության զարգացման այդ փուլում թուրքերը Պոլսում ավելի մեծ շահագրգռություն էին հանդես բերում ոչ թուրք ազգերի միջև համերաշխություն առաջացնելու խնդրին, քան վերջիններս: «Մաթենը» շարունակում էր. «Այսօր հայերի, յոյների, թուրքերի եւ հրեաների միջեւ հակառակութեան ոգի կա՞յ: Պատասխանում ենք՝ ո՛չ: Շատ ցաւալի է, ուրեմն, որ յիշեալ յոյն թերթը օսմանցի ազգը կազմող զանազան տարրերի միջեւ թշնամություն է հրահրում: Հայերը ե՛ւ թուրքերի, ե՛ւ յոյների կողմից արժանի են յարգանքի»[1]:

ՍԹԱՓ ԶԱՅՆԵՐ ՈՒ ԶՍՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈԶԵՐ

Օսմանյան սահմանադրության վերահաստատումից բորբոքված խանդավառության և ցնծության մթնոլորտում հայերի մեջ քչերը եղան (այնուամենայնիվ՝ եղան), որ հենց սկզբից վերապահումով և մեծ զգուշությամբ էին արտահայտվում օսմանյան հեղափոխության մասին: Իմացական ստույգ կշռադատությամբ նրանք փորձում էին ըմբռնել հեղափոխության էությունն՝ իր բոլոր հանգամանքներով:

Արդյո՞ք տեսական են լինելու եղբայրական գրկախառնումները, հարցնում էր «Արեւելեան մամուլը» և կասկած հայտնում. «Եղբայրութիւն գեղեցիկ բառը իբրեւ գաղափար դեռ անստոյգ է»[2]: Իր մի ուրիշ համարում նույն թերթը հետևյալ պատկերավոր խոսքերով էր բնութագրում սահմանադրության հռչակումից

---

[1] *Թարգմանությունը տե՛ս **«Մշակ»**, № 197, 7 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] ***«Արեւելեան մամուլ»**, № 34, 19 օգոստոսի 1908 թ.:*

չատ չանցած ստեղծված վիճակը. «Ամպերը կը ցրուին բայց չեն անհետանար»[1]:

Զգաստ մտածող հայերի թիվը հատկապես մեծ էր ռուսահայության մեջ:

«Պէտք է զգոյշ լինել»,- այսպես էր վերնագրված Նոր Նախիջևանում լույս տեսնող «Մեր ձայնը» թերթի առաջնորդող հոդվածը, ուր ասված էր.

«Մենք արդէն առիթ ունեցել էինք արտայայտելու մեր թերահաւատութիւնը դէպի սուլթանի անկեղծութիւնը, կասկած ենք յայտնել, որ հազիւ թէ սահմանադրական կարգերը կարողանան իւրացուել Թուրք տհաս տարրի կողմից ... եւ, հակառակ այլ մարմինների լաւատեսական տրամադրութեան, կրկնում ենք, որ դեռ շատ վաղ է պատկերացնելու Թուրքիայի ապագան այնպիսի վառ գոյներով, ինչպէս ցանկալի էր, որ նա լինէր»[2]:

«Մշակը» պարբերաբար տպագրում էր Թուրքիայում իր թղթակիցներից ստացված նյութերը, միաժամանակ, հավատարիմ իր որդեգրած բաղմակարծության սկզբունքին, չէր մերժում իր էջերում լայնորեն տեղ տալ օսմանյան սահմանադրությամբ հիացած հեղինակների հոդվածներին: Իր հերթին, թերթն արտահայտում էր խմբագրության հստակ դիրքորոշումը երիտթուրքական հեղափոխության և օսմանյան սահմանադրության վերաբերյալ:

Թերթի 1908 թ. հուլիսի 16-ի համարում լույս տեսած հոդվածի լավատես հեղինակը երիտթուրքական հեղաշրջումը համարում էր հրաշք: «Հաւատա՞նք այս հրաշքին»,- հարց էր տալիս նա և ինքն էլ պատասխանում էր. «Պէտք է հաւատանք: Եւ ինչո՞ւ չը հաւատանք: Հաւատը յաճախ հրաշքներ է գործում: ... Հաւատանք, որ հարիւր հազարաւոր Թուրք եւ հայ անմեղ զոհերի ալ արիւնը, ցողելով դաշտերը եւ արտերը, բեղմնաւորել է հողը եւ այսօր տալիս է իր փրկարար ծիլը՝ ազատութեան եւ փրկութեան ծիլը ...»[3]:

---

[1] ***«Արեւելեան մամուլ»,*** *№ 43, 21 հոկտեմբերի 1908 թ.:*

[2] ***«Մեր ձայնը»*** *(Նոր Նախիջեւան), № 90, 3 օգոստոսի 1908 թ.:*

[3] ***«Մշակ»****, № 153, 16 հուլիսի 1908 թ.:*

Դրան և թերթում լույս տեսած նման հոդվածների հեղինակներին ի պատասխան, «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարն իր առաջնորդող հոդվածում գրում էր, որ Թիֆլիսում և Անդրկովկասի ուրիշ տեղերում գտնվող օսմանցիները՝ հայերը, հույները թե թուրքերը չափազանց մեծ ձեռնպահությամբ են արտահայտվում թուրքական սահմանադրության մասին և վստահ չեն, որ իսկապես ազատություն է սկսվում օսմանյան պետության մեջ: Նրանք ասում են. «Սպասենք սուլթանի խոստումների արդարացմանը և հետո միայն ուրախանանք և սիրտներս բացենք»: Իրոք, նշում էր թերթի խմբագիրը, «թուրքիացիների մէջ կորել է ամէն մի վստահութիւն եւ հաւատ դէպի այն խոստումները, որոնք բխում են Ելդզից: Եւ միայն իրական փաստերը եւ սահմանադրութեան իրական գործադրութիւնը կարող են մարդկանց համոզել, թէ յիրաւի հին մղձաւանջը անցել է եւ ստեղծւում են պայմաններ նոր քաղաքացիական կեանքի համար:

Ձեն վստահում Ելդզի վրայ ո՛չ Թուրքիայում ապրող ազատասիրական ոգիները, ո՛չ Եւրոպայում գտնուող «Երիտասարդ Թուրքերը»: Ո՛չ ոք»[1]:*

Իր այդ առաջնորդողում և ուրիշ առիթներով Ալ. Քալանթարը չեշտում էր, որ Աբդուլ Համիդը, նա, որին քաղաքակիրթ աշխարհը Գլադստոնի բերանով մկրտեց «Կարմիր գազան» և «Մեծ մարդասպան» մականուններով, նա, որի օրով ամբողջ երկրներ կործանվեցին, հարյուր հազարավոր մարդկանց արյունը թափվեց վտակներով, նա, այսօր, հրովարտակ է ստորագրում ու հրատարակում, հրամայում գումարել խորհրդարան, ջնջել գրաքննությունը, գաղտնի ոստիկանությունը, ներել քաղաքական հանցավորներին, որոնցով լիքն են Թուրքիայի և Արաբիայի բանտերը... Մի՞թե այս ամենը կատարյալ կատակերգություն չէ:

«Մշակի» խմբագիրը հարցեր էր տալիս. արդյո՞ք հաստատուն երաշխիքներ կան, թե երիտթուրքերը չեն շարունակելու

---

* *Նկատի ուներ իշխան Սաբահէդդինի կողմնակիցներին:*

[1] ***«Մշակ»**, № 154, 17 հուլիսի 1908 թ.:*

«Մեծ մարդասպանի» գործը: Նա կասկածի տակ էր դնում նրանց «հեղափոխությունը» և գտնում, որ հուսալի ապագայի որևէ երաշխիք առայժմ չի երևում:

Դրա հետ միասին նա այն կարծիքն էր հայտնում, որ թուրքահայությունն այլ ելք չունի, քան հաշվի նստել եղած դրության հետ, փորձել Իթթիհադի իշխանությանը հարմարվել:

«Մշակի» հարցադրումներին ու տեսակետներին լիովին համամիտ էր Մայր աթոռի ս. Էջմիածնի «Արարատ» հանդեսը, որն իր համոզմունքներին հարիր մի հոդված էր արտատպել Կ. Պոլսի հայոց պատրիարքության «Բիւզանդիոն» օրաթերթից, ուր ասված էր.

«Մենք ոչ միայն շատ հեռու ենք քաղաքականապէս հասուն եւ պատուազգաց ազգ լինելուց, այլեւ բարոյական այնպիսի արատներ ունենք, որ հետեւանք են երկարատեւ ստրկութեան եւ ստորացման: Կարդացէ՛ք Պոլսոյ հայ թերթերը եւ տեսէ՛ք ձեր մէջ նողկանքի եւ արհամարհանքի ինչպիսի՜ զգացում է զարթնում միանգամայն աւելորդ եւ զզուելի չողոքորթութեան, ստրկութեան ցոյցերի ու խօսքերի համար, որ ուղղուած են զօրաւորներին՝ Սուլթանի եւ երիտասարդ Թուրքերի հասցէին»[1]: Զայրույթով նշելով, որ «դա քաղաքականութիւն չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն», «ստրկամտութեան նոր ու այլանդակ ցոյցեր», «Բիւզանդիոնը» շարունակում էր. «Պոլսոյ հայերն այժմ իրենց օսմանցի կ՚անուանեն՝ երիտասարդ Թուրքերու ցանկութեան համեմատ»[2]: «Զգուշութիւնն ու խոհեմութիւնը չպէտք է ձեռքէ բաց թողել եւ չափազանցութիւններու մէջ իյնալ: Մեր ժողովուրդը յատկապէս պէտք է ազատ պահէ իրեն թեթեւամտութեան հոսանքներէն»[3]:

Անշուշտ, օսմանյան սահմանադրության բերելիք «ազատություններին» հենց սկզբից հավատ չէին ընծայում նաև թուրքահայ քաղաքական-հասարակական և հատկապես կրոնական առանձին գործիչներ, որոնք իրենց այտերը կասկածանքով էին

---

[1] ***«Արարատ»,*** *№ 7-8, հուլիս-օգոստոս, 1908, էջ 721:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

մեկնում Թուրքի համբույրին:

1908 թ. Այնթապից Զեյթուն էր եկել բնիկ զեյթունցի պրոֆ. Հակոբ Զեյթունցյանը (որը տարիներ հետո սպանվելու էր Դեր-Զորում): Նույն ժամանակ Զեյթուն էին եկել նաև երկու երիտթուրք սպաներ: Նրանք երեքով գյուղաքաղաքի հասարակության առջև բանախոսեցին սահմանադրության և դրանից բխող հավասարության սկզբունքների մասին, իսկ վերջում բոլորի առջև ողջագուրվեցին: Բայց թուրքական զորքերի դեմ անդադար կռիվներ մղած զեյթունցին չհավատաց «հայերին եղբայր դարձած» երիտթուրք բանախոսներին: Միջոցառումից հետո պրոֆ. Հ. Զեյթունցյանը հայրենակիցներին ասում էր, որ երիտթուրքերին չպետք է հավատալ, որ նրանք նոր դավադրություն են նախապատրաստում հայերի դեմ և ծուղակ բացում նրանց առջև[1]:

Նման զգուշացումներն առայժմ հայերից քչերի վրա էին ազդում, բայց սթափ մտածողները լավ էին հասկանում, որ ազգակիցների ցնծալի երթերն ու հանրահավաքները, սահմանադրությունը պանծացնող բոցաչունչ ճառերը միայն իրականության կեղծ արտացոլումն են: Իզմիրի «Արեւելեան մամուլը» գրում էր.

«Սահմանադրութենէն ետք ամէն ազգ իր յարմար դատած եղանակով տօնեց զայն, մեծ կամ փոքր, յարմար կամ անյարմար, յաջող կամ անյաջող ցոյցեր կազմակերպելով:

Մենք՝ հայերս մէկ-երկուքով չգոհացանք: Կարելի՞ բան էր:

Թափօր, սեղան, ծովագնացութիւն, ընդունելութիւն, դափնեպսակ եւ դեռ ինչեր:

Թափօր մը կազմակերպեցինք, որու արձագանգը աշխարհիս չորս կողմ հեռագրուեցաւ: Սեղան մը սարքեցինք որպէս զի բոլոր Իզմիրի թուրք պաշտօնէութիւնը կշտացնենք, պայմանաւ որ հիւրամեծարները ոտքի վրայ մնան:

Ասոնք չէին բաւեր, այսօր Ահմէտ Ռիզաի քոյրը կու գար՝ ծաղկեփունջ նուիրեցինք:

Վաղը Սապահէտտին իշխանը կը հասնէր՝ ծաղկեպսակ տարինք:

---

[1] Տե՛ս **Միսաք Սիսեռեան (Մ. Ուլնեցի)**, Պատմութիւն Զէյթունի (1409-1921), Լիբանան, 1996, էջ 294-295:

Միւս օր Նազըմ պէյը պիտի այցելէր՝ դափնեպսակ անցուցինք գլխէն։

... Այսպէս ուրեմն, սահմանադրութեան հռչակումէն մինչեւ այսօր եռուզեռ մ'է որ տեղի կ'ունենայ, եկեղեցական, աշխարհական ընկերներ ու ընկերուհիներ իրար կը յաջորդեն։ Իզմիր կու գան ու կ'երթան, բազմութիւն, պատգամաւորութիւն, ընդունելութիւն, խումբ-խումբ պտոյտ, հաւաքումներ, ատենաբանութիւններ կը յաջորդեն իրարու անընդհատ ու յարատեւ։ Էհ, վե՞րջը։

Ասոնք ամէնքն ալ լաւ, ըսելիք չունինք, բայց ալ համը հոտը կը փախչի, փառամոլութեան, ցուցամոլութեան գագաթնակէտը կը յանգի խնդիրը եւ շատ դէշ կ'երեւի մեր աչքէն դատ ամէն հասարակութեանց աչքին եւ նամանաւանդ թուրք տգէտ խուժանին։

Մի՛ մոռնար ո՛վ հայ ժողովուրդ, որ տգէտ, անուս եւ կրօնամոլ խուժան մը կայ մեր գլխին վրայ կանգնած՝ Տամոկլեան սուրին պէս, մի՛ մոռնար»[1]։

Մի ուրիշ թերթ, նոյնպես անդրադառնալով այդ խնդրին, զգաստութեան կոչ էր անում հայերին, նրանց դիմելով հետեւյալ խոսքերով. «Է՛հ, ալ բաւական է, ո՛վ հայեր, բաւական է որքան ժամանակ որ կ'անցնենք այս տեսակ անտեղի գործերով, լուրջ, պաղարիւն ըլլանք եւ ալ հանդիսատեսի դերը ստանձնենք, բաւ է որքան դերասանական դերին մէջ կը գտնուինք, շատ աւելի պիտի շահինք, շատ աւելի պիտի վաստկինք եթէ սկսինք լրջորէն, խելօքիկ, հանդարտ մեր գործին նայիլ, զիրար չբզքտել, իրարու շատ բարձրէն չնայիլ, իրարու մէջ հաւասարութեան եւ միաբանութեան տարրական օրէնքները յարգել եւ հեռուէն հանդիսատես ըլլալ Թուրքիոյ բարեշրջումին, առանց Թուրքին նախանձը գրգռելու, առանց օտարին ծիծաղը շարժելու, առանց մեր յոյն ազգակիցներուն ծաղրանքին առարկայ ըլլալու։

Որքան յոխորտանք՝ այնքան պիտի ուտենք մեր գլխին, որքան աշխատինք վեր բռնելու մեր վիզը՝ դայն պիտի սղոցեն, որ-

---

[1] ***«Արեւելեան մամուլ»**, № 21, 19 մայիսի 1909 թ.։*

քան ճոխ ցոյց տանք ինքզինքնիս՝ այնքան պիտի ուզեն ոտնակոխ ընել մեր ճոխութիւնը:

Ուրեմն՝ ժամ է ամփոփուելու, մեկուսանալու, աշխատելու, աղմուկի պէտք չկայ, ժխորի՝ բնա՛ւ»[1]:

Սահմանադրական խոստումներին, «Հուրրիեթ» կոչվածին հատկապես չէին վստահում հայ ազգային-ազատագրական շարժման եռանդուն մասնակիցները, մարտիկ-ֆիդայիները, որոնք անցել էին ավելի քան երկու տասնամյակների պայքարի ու տառապանքների բովով: Հայդուկներից շատերն իրենց զենքերը վար էին դնում դժկամությամբ, չուզելով: «Սահմանադրութենէն ետք,- գրել է նրանցից մեկը,- մենք՝ մեր անցեալ քսան տարիներու դառն փորձութեան տուած դասերով, բնաւ երբեք հաւատք չունէինք Թուրք կառավարութեան անկեղծութեան վրայ ...»[2]: Նա նշում էր, թե քանի որ նորահաստատ ռեժիմը դեռ տկար է, երիտթուրքական կոմիտեն պետք ունի կայսրության դժգոհ տարրերի բարյացակամութեանը և դա ունենալու համար է, որ չոյում է նրանց: Իսկ երբ վաղն Իթթիհադը պառլամենտում մեծամասնություն կկազմի, կհզորանա տնտեսապես, կամրապնդի դիվանագիտական դիրքերը, այն ժամանակ նա այլևս կարիք չի ունենա հայութեան ու նրա քաղաքական կազմակերպությունների աջակցությանը եւ կգործի այնպես, ինչպես թելադրում է իր ազգայնամոլական ծրագիրը:

Սահմանադրության հռչակման առաջին իսկ օրից նրա նկատմամբ իր անվստահությունն էր արտահայտել Երուսաղեմի դառամյալ պատրիարք Հարություն արք. Վեհապետյանը, մոլտալով իր պատկերավոր պատմական խոսքը.

«Էօթէրսէ՝ էյի տիւտիւք» (Լավ սուլիչ է, եթե ձայն հանի...)[3]:

Հայերի՝ սահման չճանաչող ոգևորության վրա օտարները զարմացած էին:

---

[1] *ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 38, թ. 3 (թերթի կտրոն, որի վրա նշված չէ պարբերականի անվանումը, հոդվածի տարեթիվը, ամիսն ու օրը):*

[2] ***Սարգիս** և **Միսաք Բդէեաններ**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 263:*

[3] ***«Վէմ»**, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 14:*

Սահմանադրության հռչակմանը հաջորդած անզուսպ ուրախությունների օրերին Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խապայանը Սիսից եկել էր Ադանա, ուր այդ միջոցին գտնվում էր նաև Մերսինի հյուպատոսներից մեկը, որն այցելություն է տալիս կաթողիկոսին, և խոսակցության ժամանակ նրանից խնդրում է ժողովրդին հորդորել, որպեսզի մի քիչ զսպի իրեն, զանգվածաբար դուրս չգա ցույցերի, որովհետև, ասել էր նա. «Ես շատ լաւ չեմ տեսներ այս փոփոխութիւնը, եւ կը վախնամ, թէ օր մը արիւնոտ տեսարաններու հանդիսատես ըլլանք»[1]:

Կարինի (Էրզրում) ռուսական գլխավոր հյուպատոս Խ. Ա. Զինովևը իր վերադասին գրում էր. «Հայերի տարվելը հռչակված ազատություններով, ավելի ու ավելի է գրգռում մուսուլմանների ատելությունը նրանց դեմ: Նույնիսկ առավել առաջադիմական երիտթուրքերի շարքերում, որոնք դեռ երեկ բացահայտորեն ազդարարում էին իրենց երախտագիտությունը հայերին՝ Թուրքիայում ազատագրական շարժման մեջ նախաձեռնություն ցուցաբերելու համար, անվստահությունը նրանց նկատմամբ աճում է ոչ թե օրերով, այլ՝ ժամերով: «Միություն և առաջադիմություն» ենթակոմիտեն հայ գործիչների նկատմամբ սահմանել է գաղտնի հսկողություն և նահանգներում իր գործակալներին հանձնարարել անհրաժեշտության դեպքում կանգ չառնել և ոչ մի եռանդուն միջոցի առջև ...»[2]:

Երբ հերթական թափորը կարմիր դրոշներով դուրս էր եկել Կ. Պոլսի փողոցներ, ռուսական դեսպանության մոտով անցնելիս, տիտղոսավոր մի տիկին, որ քառորդ դար ապրում էր քաղաքում, դիմելով շարքերին, բարձրաձայնեց. «Այս ամենը ջհուդների և մասոնների սարքածն է: Դրանից բան դուրս չի գալու... Ամեն բան մնալու է այնպես, ինչպես կա»[3]:

---

[1] **Մուշեղ եպիսկոպոս**, *Ատանայի ջարդը եւ պատասխանատուները*, Գահիրէ, 1909, էջ 36-ի տողատակը:

[2] **"Геноцид армян в Османской империи"**, Ереван, 1966, с. 167.

[3] Տե՛ս **"Новое Время"**, 12 августа 1908 г., տե՛ս նաև **"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)"**, с. 190.

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Թուրքական հեղափոխության հաղթանակը բուռն արձագանք ունեցավ Եվրոպայում:

Եվրոպական երկրների պաշտոնական և անպաշտոն մամուլի օրգանների մեծ մասը հրճվանքով էր արձագանքում հեղափոխության հաղթանակին, մյուս մասը խիստ կասկածներ էր հայտնում նրա արդյունքների վերաբերյալ, իսկ շատ թերթեր ու հանդեսներ ձեռնպահ էին կարծիք հայտնելուց:

Հեղափոխության հաղթանակի նկատմամբ հսկայական հետաքրքրություն էր առաջացել հատկապես Գերմանիայում:

Գերմանական "Die Zeit" («Ցայթ») թերթը Թուրքիայում սահմանադրության վերականգնման օրը՝ 1908 թ. հուլիսի 11 (24)-ը, համարում էր պատմական օր ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև ամբողջ Եվրոպայի համար[1]:

Մի ուրիշ գերմաներեն թերթ՝ Վիեննայի "Neue Freie Presse"-ն («Նոյե Ֆրայե պրեսսե»), ընթերցողին հիշեցնելով միդհատյան սահմանադրության պատմությունը, նկատում էր, որ սահմանադրությունը 1908-ի հուլիսին վերականգնած Սաիդ փաշան 32 տարի առաջ դրոշակակիրը եղավ այդ նույն սահմանադրության վերացման և դրա հեղինակ Միդհատ փաշայի կործանման: Եվ եթե սահմանադրության դագաղը չինողը նրան կրկին կյանքի հրավիրեց, նշանակում է՝ ուրիշ ելք չկար: Մեռած Միդհատը հարություն առավ իր ստեղծագործության մեջ և հաղթեց թե՛ սուլթանին և թե՛ իր թշնամի Սաիդին[2]:

Եվրոպական թերթերը հատկապես չեչտում էին թուրքական հեղափոխության գլխավոր առանձնահատկությունը՝ դա կատարել է բանակը: Անդրադառնալով այդ փաստին՝ Դաշնակցության «Հորիզոն» թերթը տարիներ անց գրում էր. «Ամբողջ Եւրոպան զարմանքով մատնացոյց էր անում, որ դա եզակի դէպք է յեղափոխութիւնների պատմութեան մէջ, երբ սահմա-

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 158, 23 հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս նույն տեղում:

նադրական կարգերը հաստատում են զինուորական ոյժի ստիպմամբ, առանց ժողովրդի մասնակցութեան»[1]:

Իր հերթին՝ Գերմանիայի Քեոլն քաղաքի "Kölnische Zeitung" («Քեոլնիշե ցայտունգ») թերթը նկատում էր, որ սահմանադրության վերականգնումը չի նշանակում, թե երկրում արագորեն վերականգնվելու են նաև արդարությունն ու կարգը: Ո՛չ, իհարկե, գրում էր թերթը և վկայակոչում Ռուսաստանի ու Պարսկաստանի օրինակները: «Կ. Պոլսում պէտք է հասկանան, որ միմիայն սահմանադրութիւն տալը դեռ բաւական չէ ապագայում դժգոհութիւնների եւ ապստամբութիւնների առաջն առնելու համար: Դրա համար հարկաւոր է վերացնել այն զեղծումները, որոնք զօրքը դրդեցին ապստամբութեան»[2]:

"Vossische Zeitung" («Վոսսիշե ցայտունգ») թերթը գրում էր, թե սահմանադրությունը միայն բանաձև է, որը կարիք ունի հոգևոր բովանդակության: Միայն այն բանից հետո, երբ հայտնի կդառնա ձևի բովանդակությունը, այն դեպքում միայն կարելի կլինի հասկանալ նրա նշանակությունը Թուրքաց պետության համար: Ներկա պահին սուլթանը հրովարտակ է տվել միայն ապստամբներից վախենալով[3]:

Լոնդոնի "Times"-ը («Թայմս») նշում էր, որ կայուն չի կարող լինել այն սահմանադրությունը, որը զինվորական հեղափոխության արդյունք է: Բարենորոգումներ մտցնելու ժամանակ երիտթուրքերը հազիվ թե կարողանան հույս դնել զորքի աջակցության վրա[4]:

Եվրոպացիները մատնացույց էին անում, որ անցումը միապետությունից սահմանադրական կարգերի՝ չատ քիչ պետություններում է այնպես հարթ և աննշան զոհերով տեղի ունեցել, ինչպես Թուրքիայում: Նրանք նպաստավոր նշան էին համարում այն, որ ապստամբները «ջենտլմենի պես անցկացրին հեղափոխությունը» և «մեծ խնամքով պահպանեցին հասարակական կարգը»:

---

[1] **«Հորիզոն»** (Թիֆլիս), № 132, 22 հունիսի 1912 թ.:

[2] **«Մշակ»**, № 158, 23 հուլիսի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում, № 158, 23 հուլիսի 1908 թ.:

[4] Տե՛ս նույն տեղում:

«Թայմսն» իր մի ուրիշ համարում գրում էր, թե Թուրքիայի բոլոր այլազգիները պետք է աջակից լինեն Թուրքերին, որպեսզի նրանց նոր կառավարությունը կարողանա երկրում իրականացնել նախատեսված բոլոր բարեփոխումները և բարելավել կայսրության բոլոր ժողովուրդների կյանքը: «Հայերն էլ, միւս օսմանցիների նման, փայլուն ապագայ ունեն»[1],- խորին համոզմունք էր հայտնում հոդվածագիրը:

Եվրոպական շատ թերթեր ընդգծում էին, որ սահմանադրությունը վերականգնելուց հետո հատուկ պատասխանատվություն է ընկնում Թուրքիային սահմանակից պետությունների վրա, և այդ երկրի քաղաքական ճգնաժամից օգտվելու որևէ փորձ ամբողջ Եվրոպայի դիմադրությանը պետք է հանդիպի[*]*: Թուրքիան իրավունք ունի պահանջելու, որ իրեն առայժմ հանգիստ թողնեն – սա եվրոպական շատ պետությունների արտահայտած պաշտոնական տեսակետն էր: Եվրոպացիներից շատերը գտնում էին, որ թուրքական հեղափոխությունը ամենից շատ բարիքներ է բերելու կայսրության առավել ճնշված ժողովուրդներին:*

Բեռլինից մի բարձրաստիճան դիվանագետ «Մշակի» խմբագրին գրել էր. «Թուրքիայի վերջին դէպքերն ինձ համակել են ուրախութեամբ. դրանք հայերի համար երազած բախտաւորութիւն են: Այժմ հայերին մնում է ցոյց տալ, թէ իրենք կուլտուրական ազգ են, ոչ թէ միայն ագիտատորներ, ինչպէս որ ողջ Եւրոպան այժմ այդպէս է դատում նրանց մասին: Հայերի համար բացւում է խաղաղ աշխատանքի մի նոր թուական: Կա՛մ պէտք է առաջադիմել, կա՛մ՝ ոչնչանալ: Պէտք է մարդ պատրաստել, իսկ դա այժմ կարելի է անել կրթական լուրջ ձեռնարկումներով միայն»[2]*:*

Թուրքական հեղափոխության գնահատականները շատ

---

[1] *Թարգմանությունը տե՛ս* ***«Մշակ»****, № 189, 29 օգոստոսի 1908 թ.:*

[*] *Նկատի էր առնվում Թուրքիայի ներքին գործերին ռուսական միջամտությունը, ինչպիսին տեղի էր ունենում պարսկական հեղափոխության պարագայում:*

[2] ***«Մշակ»****, № 185, 24 օգոստոսի 1908 թ.:*

տարաբնույթ էին Ռուսական կայսրության մեջ:

Ցարական ինքնակալության պաշտպան ուժերի մոտ նա, բնականաբար, առաջ էր բերել չափազանց բացասական վերաբերմունք, համենայնդեպս՝ սկզբնական շրջանում, երբ դեռ հայտնի չէր, թե երիտթուրք պարագլուխներն ի՞նչ դեր են հատկացնելու միապետ Աբդուլ Համիդին:

Արտահայտելով Ռուսաստանի առավել պահպանողական շրջանների վերաբերմունքը օսմանյան հեղափոխության նկատմամբ, "Новое Время" («Նովոյե Վրեմիա») թերթը երիտթուրքերին քննադատում էր «չափազանց ազատամտության» համար, նրանց անվանում «թուրքական կադետներ»[1]:

Միապետությունները, այդ թվում ռուսականը, իրարից տարբերվում էին քաղաքակրթությունների զարգացման աստիճանով, միապետների իրավունքները սահմանադրական ճանապարհով սահմանափակելու իրական հնարավորություններով: Բայց տվյալ ժամանակաշրջանում Ռուսաստանի ցար Նիկոլայ II Ռոմանովը քիչ բանով էր տարբերվում օսմանյան միապետ Աբդուլ Համիդ II-ից: Նրանք, ըստ էության, հոգևոր եղբայրներ էին:

Ցարական արքունիքում տագնապած էին, որ թուրքական հեղափոխությունը կարող է խթան հանդիսանալ երկրում հեղափոխական նոր բռնկումների համար, որոնք ընդամենը մեկ տարի առաջ էր հաջողվել մի կերպ մարել՝ արյան գետեր հոսեցնելով: Ռուսական հետադիմական, պահպանողական մամուլը երիտթուրքերին համեմատում էր ռուս հեղափոխականների հետ՝ երկուսին էլ արկածախնդիրներ ու անօրեն հանցագործներ համարելով:

Ռուս ազատականները ողջունում էին կատարվածը՝ գտնելով, որ թուրքական հեղափոխությունը ճանապարհ կբացի երկրի տնտեսական ու մշակութային առաջադիմության համար, միաժամանակ կնպաստի ճնշված ժողովուրդների ազգային վերածնությանը: Նրանք շատ բարձր էին գնահատում հեղափոխության հատկապես այն առանձնահատկությունը, որ նա ընթացել է խաղաղ հունով, համարյա անարյուն: Միաժամանակ,

---

[1] *"**Новое Время**", 15 июля 1908 г.*

ազատականները մտավախություն ունեին, որ երիտթուրքերը, բոլոր օսմանցիներին հավասար իրավունքներ տալու պատրվակով, կփորձեն հետևողականորեն իրականացնել Թուրք էթնոսի մեջ կայսրության այլազգի ժողովուրդների ձուլման իրենց վտանգավոր ծրագիրը:

Այդ օրերին եվրոպացիները երիտթուրքական շարժման հաղթանակը համարում էին և՛ հեղափոխություն, և՛ հեղաշրջում, ընդ որում՝ հրապարակումներում գերակշռում էր վերջին բառը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Երիտթուրքական հեղափոխությունը, բնականաբար, միանշանակ չընդունվեց հայկական հասարակության քաղաքական տարբեր ուղղությունների կողմից, ուստիև այդ հողի վրա, ինչպես և սպասելի էր, նոր առճակատումներ դրսևորվեցին:

«Սահմանադրական գարուն» ապրող երկրում այն, ինչ չէին տեսնում և չէին կարող տեսնել հեղափոխությունից խանդավառ զանգվածները, պարտավոր էին տեսնել, վերլուծել, կանխատեսել ազգի քաղաքական ուժերը. բայց, ավա՜ղ, հայ քաղաքական գործիչներից ու հոսանքներից շատերն ընդունակ չեղան այդ բանին: Ընդհանուր խանդավառության մթնոլորտում՝ ազգային-ազատագրական շարժման մի շարք կազմակերպություններ (հատկապես արաբական և հայկական), չլանալով հռչակված «սահմանադրական» կարգերից և հավատալով Թուրքերի կեղծապատիր խոստումներին, չարաչար խաբվեցին:

ՀՅ դաշնակցություն.- Աններելի, ճակատագրական անհեռատեսություն հանդես բերեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի առաջատար ուժը՝ ՀՅ դաշնակցությունը:

Հեղաշրջումից անմիջապես հետո Դաշնակցության գլխավոր պաշտոնաթերթը գրեց.

«Ժամը հնչեց, վերջապէս, ստրկացուած ժողովուրդների

համար – արդար ու անխուսափելի հատուցման ժամը: Սուլթանական բռնակալութիւնը, որ արիւնալի կօշմարի պէս նստած էր համաշխարհային խղճմտանքի վրայ, այսօր ընկած է հոգեւարքի մէջ, իր դարաւոր ոճիրների ծանրութեան տակ»[1]:

Հեղափոխության հաղթանակը կուսակցությունը համարեց նաև իր հաղթանակը, քանի որ, երիտթուրքերի հետ գտնվելով սերտ դաշինքի մեջ, իրեն համարում էր նրանց հետ եղբայրացած:

Հեղափոխությունից մի շաբաթ հետո, 1908 թ. հուլիսի 17 (30)-ին, Դաշնակցության Պոլսի Պատասխանատու մարմինը շրջաբերական-թռուցիկ հրատարակեց ու տարածեց, որտեղ մասնավորապես ասված էր. «Օսմանեան կայսրութեան մի ծայրից միւսը հնչում է ազատութեան, հաւասարութեան, եղբայրութեան կոչը: Երէկուան հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի: Մոայլ, երկչոտ դէմքերի տեղ երեւում են բերկրալից աչքեր. լռութեան փոխարէն թագաւորում է շարժումը, ատելութեան եւ քէնի աւերակների վրայ փչում է սիրոյ շունչը...

Հանրային կեանքը կերպարանափոխուած է. փողոցներում այլեւս չկայ երէկուան բռնապետութեան սոսկաբեր գործակալ գաղտնի լրտեսութիւնը: Բանտերը դատարկուած են: Ազատութեան մարտիկները, ենթակայ քաղաքական բանտարկութեան դժոխային ռեժիմի, ազատ օդումն են՝ գրկախառնուած ժողովրդի հետ, որին նրանք այնքան անձնուիրաբար ծառայեցին:

«Դէպի բանտ» գոչողները իրենք են գնում բանտերը: Արտասուք տարածողները իրենք են ողբում: Շքազարդ փաշաներն ու մինիստրները, երէկուան ամենակարող տէրերը արքունիքի, կառավարութեան եւ երկրի, սողում են յեղափոխութեան ոտքերի տակ, փախուստ տալիս ժողովրդական ցասման ճանկերից: Դերերը փոխուած են եւ սկսուած է մի աւերմունք այն բոլորի, ինչ ... չնորհիւ բռնապետական ռեժիմի, նկատւում էր անսասան, անփոփոխ, յաւիտենական իսկ»[2]:

---

[1] **«Դրօշակ»,** № 7 (195), հուլիս, 1908, էջ 104:

[2] **«Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար»,** հատ. Ա, Պէյրութ, առանց թվականի նշումի, էջ 175:

Մի ուրիշ առիթով ՀՅԴ Պոլսի Պատասխանատու մարմինը (փաստորեն՝ կենտրոնական կոմիտեն) ազդարարում էր. «Ազատութիւնը արեամբ գնեցինք: Արեամբ էլ կը պաշտպանենք, եթէ տխուր հարկը ներկայանայ: Նա մերն է: Ոչ ոք նրան ետ խլել չի կարող, որովհետեւ ոչ ոք իր կամքով չէ չնորհել: Սա պիտի լինի հանգանակը ամբողջ ազգաբնակչութեան, խորարմատ համոզումը այն բոլոր ազգերի, որոնց այսօրուան անսահման ցնծութիւնը՝ երէկուան անսահման տանջանքի արձագանքն է միայն»[1]:

Դաշնակցության պաշտոնական պատմաբան Միքայել Վարանդյանն այդ օրերին գրում էր. «1908 թուականը ոսկէ տառերով կ՚արձանագրուի համաշխարհային պատմութեան էջերում: Նոր հորիզոններ բացուեցան Ազատութեան գաղափարի առջեւ, մարդկային նոր զանգուածներ բարձրացան մրափի ու անէութեան անդունդներից եւ գրկեցին համամարդկային քաղաքակրթութեան դրօշը»[2]: Ավելին, Թուրքերի հեղափոխությունը համեմատելով Ֆրանսիական մեծ հեղափոխության հետ՝ նա, զարմանալիորեն, ինչ-որ առումով գերազանցությունը տալիս էր առաջինին, քանի որ Իթթիհադը, իբր, չի բավականացել Ֆրանսիական հեղափոխության «ազատություն», «հավասարություն» և «եղբայրություն» նշանաբաններով և այդ չարանին ավելացրել է «արդարություն» նշանաբանը[3]:

Թիֆլիսում հրատարակվող դաշնակցական «Զանգակ» թերթն իր խմբագրականում ողջունելով հեղափոխության հաղթանակը, համոզմունք էր հայտնում, որ Թուրքահայությունը վերջապես և ընդմիշտ ազատագրվել է դարավոր հալածանքներից, և առաջադիմության ուղիները բացված են հետայսու նրա առջև[4]: Նույն թերթը տպագրել էր Սիրական Տիգրանյանի՝ Թուրքական սահմանադրությանը նվիրված հոդվածը, ուր հեղինակը չեշտում էր, թե այն երկիրը, որն ընդամենը մեկ ամիս

---

[1] **«Նիւթեր ...»,** հատ. Ա, էջ 175:

[2] **Միքայէլ Վարանդեան**, Վերածնուող հայրենիքը եւ մեր դատը, Ժնեւ, 1910, էջ 91-92:

[3] Նույն տեղում, էջ 94:

[4] Տե՛ս **«Զանգակ»**, № 7, 13 հուլիսի 1908 թ.:

առաջ կողմնակի դիտողին երևում էր որպես փտած կազմվածքի մի կործանվող կույտ, այժմ հանդես է գալիս անսպառ ստեղծագործական ուժերով: «Այն արիւնով ներկուած խնդիրը,- գրում էր նա,- որը յուսահատ մղձաւանջի, ծանրագոյն մտատանջութիւնների առիթ էր ծառայում՝ ազգային գոյութեանն ու առաջադիմութեանը սրտացաւ հայերի համար, այսօր յուսատու ակնկալութիւններով լի պայծառ հեռանկարների մի ասպարէզ է դառնում: Եւ մտածմունքների այդ գեղեցիկ յեղաշրջման, ցանկալի կերպարանափոխման պատճառը մէկ հատիկ կարճ, բայց բովանդակալից դարձուածքով է ձեւաբանւում – «սահմանադրութիւնը Թիւրքիայում»»[1]:

Կ. Պոլսում հրատարակվող հայ ավետարանականների դաշնակցականամետ օրգան «Աւետարերը» գրում էր. «Յանկարծ ինքզինքնիս գտանք այնքան զարմանալի եւ յեղակարծ փոփոխութեան մը առջեւ որուն նմանը տարեգրութեանց մէջ գտնել դժուար է: «...Մեր երկիրը հին դարերու Բիւզանդիոնը չէ այլեւս, այլ՝ օսմանեան մեծ ազգին ազատ ոստանը», ուր ազատագրված մարդու վեհ կամքն այլեւս հնարավոր չէ ջախջախել, «ինչպէս հնար չէ երկնից չանթը ոտքի տակ կոխոտել»[2]:

Այս գնահատականները դաշնակցական գործիչները տալիս էին այն ժամանակ, երբ դեռ իրենց համար նույնպես պարզ չէր, թե երիտթուրքերը դեպի ո՞ւր են տանում երկիրը: «Օսմանեան յեղափոխութիւնը իրապես անակնկալի բերաւ մեզի,- խոստովանում է Վահան Փափազյանը (Կոմս):- Մեր մտքերը չէինք կրցած ի մի հաւաքել դեռ, վերլուծել եւ հետեւութիւններ հանել կամ գուշակել անոր ապագան, դէպքերու յաջորդականութիւնը եւ անոնց արտացոլումը մեր ժողովուրդի ճակատագրին վրայ»[3]:

Դաշնակցության ղեկավարներն ու մտավորականները համառորեն պնդում էին, թե «մենք բոլորս օսմանցի ենք», ուստի պետք է պայքարենք «հանուն հասարակաց հայրենիքի» ամ-

---

[1] **«Զանգակ»,** № 35, 16 օգոստոսի 1908 թ.:

[2] **«Աւետաբեր»,** № 37, 12 սեպտեմբերի 1908 թ.:

[3] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 23:

բողջականության պահպանման ու ամրապնդման: Էդուարդ Ակնունին (Խաչատուր Մալումյան), Ատոմը (Հարություն Շահ-րիկյան), Կոմսը (Վահան Փափազյան), Գարեգին Խաժակը (Գա-րեգին Զագալյան), Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան), Վարդգեսը (Հովհաննես Սերենգուլյան) և ուրիշներ հայությանը հորդորում էին՝ չքննադատել երիտթուրքական կառավարու-թյանը, ընդհանրապես հակաթուրքական որևէ արտահայտու-թյուն չանել, այլ՝ թուրքերի հետ միասնաբար լծվել ողջ կայս-րության վերելքի գործին:

Հայկական գավառների դաշնակցական գործիչներն ավելի զուսպ էին: Նրանց թվում բացառություններից մեկը Արամ Մա-նուկյանն էր, որը նույնպես բարիք էր համարում կատարված հեղափոխությունը: «Մեր մէջ,- վերհիշել է Վահան Փափազյա-նը,- երեւութապէս ամէնէն ոգեւորուածը... Արամն էր»[1]: Նա գտնում էր, որ կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում թուրքահայության համար ստեղծագործ աշխատանքի լայն հնարավորություններ են բացվում, ուստի բարենպաստ պայ-մանները պետք է կարողանալ արդյունավետ օգտագործել ի շահ սեփական ժողովրդի: Արամին լավատեսություն սնուցողը նրա համոզումն էր, թե Իթթիհադի ղեկավարներն, իբր, դրականա-պես փոխել են իրենց վերաբերմունքը հայ ժողովրդի և ՀՅ դաշ-նակցության նկատմամբ, ինչը բարենպաստ հող է ստեղծում հայ և թուրք ժողովուրդների միջև եղբայրական հարաբերու-թյուններ հաստատելու համար:

Իհարկե, պետք չէ կարծել, թե Արամը գլխակորույս նետվել էր Իթթիհադի գիրկը: Նա շատ լավ էր ըմբռնում, որ երիտթուր-քերի հետ անվերապահ հույս կապելը մոլորություն կլինի, բայց ստեղծված նոր պայմաններում պետք էր փորձել նրանցից առա-վելագույնն ստանալ: Եվ նա, որքան հնարավոր էր, հանդիպում-ներ էր ունենում թուրք գործիչների հետ, փորձում նրանց չրջա-պատ թափանցել: Վանի դաշնակցական գործիչների թվում Արամը թերևս միակն էր, որ գաղանը նորից չարթնացնելու հա-մար նրան չոյելու քաղաքականությանն էր դիմում:

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 16:*

Արամի տեսակետի պաշտպաններից Վահան Փափազյանը, անդրադառնալով այդ հարցին, հետագայում վերհիշել է. «Եկած էինք այն համոզման, թէ օսմանեան սահմանադրական շարժումը պէտք է նկատել իբրեւ դրական երեւոյթ եւ միւս ազատական տարրերու հետ գործակցաբար պաշտպանել զայն: Առ այժմ խուսափիլ մասնաւորելու որեւէ քաղաքական կամ վարչական պահանջ: Ջանալ վերացնել հին ռեժիմին քաջալերած հողային բռնագրաւումները: Պահանջ դնել զինաթափելու աւազակային եւ ասպատակ տարրերը կամ զինել խաղաղ ազգաբնակչութիւնը գիւղական միլիսներու կամ պահակախումբերու միջոցով: Ապահովել սահմանադրական օրէնքները՝ Թուրքիոյ բոլոր ազգերու իրաւունքներու հաւասարութեան սկզբունքին հիման վրայ: Ապահովել մեր գործօն մասնակցութիւնը երկրի վարչական եւ օրէնսդրական մարմիններու մէջ՝ մեր թուի համեմատութեամբ»[1]:

*Երիտթուրքերի բռնած գործերին հավատ տածող դաշնակցական գործիչները գտնում էին, որ առայժմ «պետք չեն խժդժություններ», որ Իթթիհադին նախ և առաջ պետք է **ժամանակ տալ**, որպեսզի նա կարողանա աստիճանաբար իրականացնել իր առջև կանգնած մի շարք լուրջ ու հրատապ խնդիրներ. ա) Երկրի բոլոր կողմերում և հասարակական ու վարչական բնագավառներում գրավել նորանոր դիրքեր, բ) Ամրապնդել ազգաբնակչության այն տարրերի դիրքերը, որոնք իրենց հասարակական-քաղաքական կողմնորոշմամբ ու տրամադրություններով վստահելի են իր համար և ունակ են նոր ռեժիմի կրողը, դարբնողն ու պաշտպանը հանդիսանալու, գ) Միմյանցից զատել և որոշել, որո՞նք են «սահմանադրական» և որո՞նք՝ «հակասահմանադրական» գործոններն ամբողջ Թուրքիայում ընդհանրապես և յուրաքանչյուր գավառում առանձնապես. դ) Որո՞նք են երկրում աշխատանքի ու խաղաղ կյանքի հակամետ, ազատությանն ու քաղաքակրթությանը տրամադիր տարրերը և որո՞նք՝ հետադիմության, կողոպուտի ու ավազակության,*

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 24:*

քաղաքակրթական ամեն մի ձեռնարկի կործանման պատրաստ վայրենի ներկայացուցիչները:

«Զանգակ» թերթում Ս. Տ. ստորագրությամբ հեղինակը (հավանաբար՝ Սիրական Տիգրանյան) գրում էր, թե առարկայական (օբյեկտիվ) պարագաները գալիս են զգուշացնելու, որ «երէկուայ դժոխքում այսօր մէկ անգամից դրախտներ ծաղկել չեն կարող»[1]:

Սա արտահայտությունն էր տարածված այն տեսակետի, թե տառապյալ, գրեթե ուժասպառ Թուրքահայ ժողովրդին ներկայումս սահմանադրության չնորհիվ որոշ, թեկուզ կարճատև, մի փոքր ազատ շունչ քաշելու, հանգստանալու, ուժ հավաքելու միջոց է տրվում: Գրեթե խեղդամահ վիճակի հասած ժողովրդի համար, «զինադադարի» նույնիսկ կարճատև ժամանակամիջոցն արհամարհելու բան չէ,- շարունակում էր հոդվածագիրը և ավելացնում. «Ինչ էլ որ լինի ապագայ սահմանադրութիւնը, բայց եւ այնպէս ներկայ շաբաթների ցնցումները մի մրրիկ են, որ, թէկուզ մի առ ժամանակ կը մաքրեն քաղաքական մթնոլորտը Թուրքիայի ներսում եւ հազիւ թէ սրբիչ հողմերի գործը առանց խոր հետեւանքների մնայ»[2]:

Սակայն նկատենք, որ ոչ միայն շատ ու շատ շարքային դաշնակցականներ, այլև ոչ քիչ թվով ղեկավար գործիչներ բացասական վերաբերմունք ունեին հեղափոխության և նրա վերականգնած միզհատյան սահմանադրության նկատմամբ: Դրանց թվում հատկապես ընդգծված անվստահություն ունեին Ռուբեն Տեր-Մինասյանը և Իշխանը, որոնք դոյզն անգամ հավատ չէին ընծայում թուրքական ազատագրական շարժման ղեկավարներին և նրանց խոստումներին:

Բանակի ձեռքով կատարված հեղաշրջումը Իշխանն արժեքից զուրկ էր համարում: Նա ասում էր. «Յետամնաց խառնուածքով ու կենցաղով՝ կիսավայրենի մոլեռանդ մահմետականութիւնը չի կրնար դեմոկրատիական յեղափոխութիւններու

---

[1] ***«Զանգակ»**, № 35, 16 օգոստոսի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

իմաստը եւ էութիւնը ըմբռնել, վաղ թէ ուշ յետադիմական տարրերը նորէն գլուխ պիտի բարձրացնեն եւ ջախջախեն ամէն մի յառաջդիմական քայլ: Մեր գոյութիւնը վտանգի մէջ կը մնայ միշտ, աւատական տարրերու ազդեցութիւնը շատ խորն է քանի որ անոնք մահացու թշնամի են հայութեան: Պէտք է զէնքերնիս վար չդնենք, պէտք է գաղտնիացնենք մեր կուսակցութիւնը եւ արթուն մնանք...»[1]: Իշխանի պես էին մտածում դաշնակցական շարքային զինվորներից ու խմբապետերից շատերը: Վ. Փափազյանը մեզ է փոխանցել այդ հարցի մասին նրանց հետեւյալ խորհրդածությունը. «Թիւրքին կարելի չէ վստահիլ. Թիւրքը Թիւրք է. երբ Համիտը դեռ գահի վրայ է, ի՞նչպէս կարելի է հաւատալ նոր կարգերու. չուներ կան, որ պոչը շարժելով կը մօտենան քեզի՝ յանկարծ խածնելու համար. «Մի՛ հաւատաք, Աստուծոյ սիրոյն, ամէն բան մի՛ ցուցնէք անոնց, բոլորդ երեւան մի՛ ելնէք...»[2]: Վ. Փափազյանի վկայությամբ՝ հատկապես անդրդվելի էր Շատախի առյուծ Բազիկը: «Ախ տիւք հեալա չըխրատուա՞ք, էստ անխաւատ տաճկներուն կը խաւտա՞ք. վաղը մէկ էլ պիտիանիդ տուսախ (թակարդ) կը թալեն (կը ձգեն), մեր տուն կ'աւրեն... Աստծո՛ւ սիրուն, ակախ (արթուն) կացէ՛ք. միամիտ մի՛ էլնէք»,- կը յորդորէր ան»[3]:

Հեղափոխությունից ընդամենը մի քանի օր անց Մուշի ս. Կարապետ վանքում տեղի է ունենում ՀՅԴ շրջանային ժողով՝ Դուրան-Բարձրավանդակի բազմաթիվ պատգամավորների մասնակցությամբ: Ռուբենի նախագահած ժողովը պետք է պատասխան տար մի շարք կարևոր հարցերի. 1) Նոր իշխանությունների օրոք ի՞նչ պետք է անեն հայ զինյալները, ո՞րն է լինելու նրանց դերն այսուհետև, 2) Ներկայումս ժողովրդի մեջ կազմակերպական ինչպիսի՞ աշխատանքներ պետք է տանել, ի՞նչ նոր մեթոդներով պետք է գործել, արդյո՞ք կուսակցությունն առաջվա պես պետք է ունենա ընդհատակյա գործունեություն, թե՞ ոչ, 3) Այժմ ո՞րն է Դաշնակցության նպատակը

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 18:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

երկրում, ի՞նչ հերթական խնդիրներ պետք է լուծեն նրա կազմակերպությունները մասնավորապես Դուրան-Բարձրավանդակում և Վասպուրականում, 4) Կուսակցությունն ի՞նչ վերաբերմունք պետք է ունենա Իթթիհադի գործնական ձեռնարկումների նկատմամբ[1]:

Ժողովն անցավ բուռն քննարկումների մթնոլորտում: Ընդունվեցին բանաձևեր, որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերի մեջ. ա) Հանդես գալ բոլոր նրանց դեմ, ովքեր կփորձեն վերականգնել հին ռեժիմը, բ) Համագործակցել սահմանադրական այն կուսակցությունների հետ, որոնք կընդունեն ապակենտրոնացման պահանջը, գ) Վերջ տալ ժողովրդի հանգիստը վրդովող պարտիզանական կռիվներին, բայց նախկինի պես պատրաստ լինել ամեն անակնկալների:

Ս. Կարապետ վանքում քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին Ռուբենը հանգամանորեն գրեց Վանի դաշնակցական ղեկավարությանը, բայց որևէ պատասխան չստացավ: Պատճառն այն էր, որ վերջինս, հետևելով կուսակցության ղեկավարության ցուցումներին, հավանություն չէր տվել ս. Կարապետի ժողովի բանաձևերին:

Ժողովում ընդունված արմատական բանաձևերը թեև կյանքում չիրագործվեցին, բայց ցույց տվեցին, որ երիտթուրքերի հետ միասնաբար հանդես գալու Դաշնակցության ղեկավարության որդեգրած քաղաքականությունը կազմակերպության ներսում ընդդիմախոս հոծ զանգված ունի:

Անդրանիկը, որը 1907-ին փորձ էր արել դուրս գալու Դաշնակցությունից, բայց, այնուամենայնիվ, մնացել էր նրա շարքերում, ոչ միայն չողջունեց երիտթուրքական հեղափոխությունը, այլև նրա մեջ մի ահավոր բան տեսավ: Բնականից մեծ խելքով օժտված այդ մարդը կարողացավ ժամանակին թափանցել երևույթների խորքը և տեսնել այն, ինչ ուրիշները չէին տեսնում:

Ազգային հերոսը խստորեն քննադատում էր Դաշնակցության ղեկավարությանը և այն գործնապաշտ գործիչներին,

---

[1] Տե՛ս **Ռուբէն,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, էջ 52-53:

որոնք, անակնկալի գալով երիտթուրքերի անսպասելի արագ հաղթանակից, մի օրից մյուսը արմատապես դիմափոխվել էին և անսահման խանդավառվել հայության համար իբր բացվող փայլուն հեռանկարով: Իր հասցեին երիտթուրքերի սեթևեթանքից խաբված Դաշնակցության ղեկավարությունը, ասում էր նա, ընկել է Իթթիհադի գիրկը, որից պոկվելու փորձն աներևակայելի աղետ է բերելու ոչ միայն կազմակերպությանը, այլև ողջ թուրքահայությանը:

Միանգամայն ճիշտ կռահելով իրադարձությունների հետագա ընթացքը՝ Անդրանիկն ասում էր, թե կեղծ են ազատությունների մասին երիտթուրքերի խոստումները, և որ սահմանադրությունը մի խայծ է միամիտներին խաբելու համար: Նա համոզված էր, որ երիտթուրքերն, ինչպես նախկինում սուլթանը, ամեն կերպ խուսափելու են համապատասխան օրենսդրական փաստաթղթերով կանոնավորել հայության ներքին կյանքը, որպեսզի նա ձեռք չբերի որոշակի իրավունքներ տնտեսական, վարչական, մշակութային, դատական ասպարեզներում: Պաշտպանելով իր համոզմունքները՝ Անդրանիկը հայ քաղաքական գործիչներին նախազգուշացնում էր երիտթուրքերի հետ մերձեցման վտանգավոր հետևանքներից և խորհուրդ էր տալիս իրենց պահել հեռավորության վրա: «Ոչ մէկ թուրքի չեմ կրնար հաւատալ, եթէ անիկա երկնքէն իսկ իջած ըլլայ»[1]:

Երիտթուրքական շարժման և օսմանյան հեղափոխության նկատմամբ ՀՅ դաշնակցության որդեգրած քաղաքականությունը, դաշնակցական պատմագրության և հուշագրական գրականության մեջ ինչպես անցյալում, ներկայումս նույնպես անվերապահորեն արդարացվում է: Խորհրդահայ պատմագրությունն ու սփյուռքի ռամկավար և հնչակյան պատմագիտական հրատարակությունները օսմանյան հեղափոխությանը դաշնակցականների տված դրական գնահատականները համարել են քաղաքական կարճատեսության, Թուրքիայում ծավալված իրա-

---

[1] ***Արսէն Մարմարեան,*** *Զօր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 187:*

դարձությունները ճշտորեն վերլուծելու անկարողության արդյունք: 1988 թ. ծայր առած արցախյան շարժումից և հայոց երրորդ հանրապետության ծննդից սկսած՝ Հայաստանի Հանրապետության պատմաբաններից շատերն ընկան մի այլ ծայրահեղության մեջ, և Դաշնակցության քաղաքականությունը այն ժամանակի իրադրության պայմաններում համարեցին ամենաճիշտը, նկատի առնելով որ երիտթուրքերի գաղափարները կայսրության մեջ տիրապետող սուլթանական-կղերական-ավատապետական գաղափարների համեմատ առաջադիմական էին: Ազատության, հավասարության և եղբայրության մասին երիտթուրքերի նշանախոսքերն ընկալելի և ողջունելի էին նաև հայերի համար: Արևմտահայ ժողովուրդն ազատություն էր երազում, որի համար էլ նա պայքարի էր ելել: Հայությունն ազատություն էր ուզում իբրև օսմանյան հասարակության իրավահավասար անդամ: Անկախ հայկական պետություն ունենալն օրվա խնդիր չէր, հայերը բավարարված կլինեին՝ ունենալով կյանքի ու գույքի ապահովություն: Արևմտահայերի նպատակները այս և ուրիշ մի շարք սկզբունքային հարցերում (խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, հավասարություն օրենքի առջև և այլն) համընկնում էին երիտթուրքերի հրապարակ բերած կարգախոսներին և ծրագրերին: Ի տարբերություն հայերի, օսմանյան հեղափոխությունը և սահմանադրությունը կտրականապես մերժում էր թուրքական հետադիմությունը՝ ավատապետերը, կրոնավորները, առավել ոգեմատենչ սպայությունը և այլոք: Եթե դաշնակցականները մերժեին իրենց հետ դեպի հեղափոխություն գնալու և հեղափոխությունից հետո երկիրը խորհրդարանական ճանապարհով տանելու երիտթուրքերի առաջարկները, ապա նրանք ինքնաբերաբար կհայտնվեին երկրի հետադիմական ուժերի կողքին:

Այդ է պատճառը, որ սուլթանական կարգերի տապալման նպատակով երիտթուրքերի հետ Դաշնակցության դաշինքը Հայկական հարցի եվրոպական պաշտպանների և, հատկապես, սոցիալիստական ինտերնացիոնալի ղեկավարների հավանության էր արժանացել:

Դաշնակցական նշանավոր գործիչ Կարո Սասունին նշում էր,

թե անուրանալի է, որ իր կուսակցությունը կողմնակից էր երիտթուրքերի սահմանադրական գործողություններին, բայց չի կարելի ասել, թե դաշնակցականները դարձել էին թուրքասերներ[1]:

Դա, իհարկե, այդպես է, բայց երիտթուրքերի նկատմամբ Դաշնակցության տածած անվերապահ վստահությունը և նրա հետ գործակցությունը, միմյանց «եղբայրներ» հորջորջելը հույժ բացասական հետևանքներ ունեցան: Հայերի հանդեպ Իթթիհադի հանդուրժողական վերաբերմունքը, այսինքն՝ թուրքահայոց կյանքի վրա Դաշնակցություն-երիտթուրք դաշինքի դրական ազդեցությունը տևեց ընդամենը մի քանի ամիս, որից հետո Իթթիհադը ցույց տվեց իր իսկական դեմքը: Դրանից հետո էլ Դաշնակցությունը չարունակեց եռանդուն կերպով գործակցել նրա հետ՝ տարվելով հեղափոխության արտաքին, մակերեսային կողմով, անհրաժեշտ չափով չքննելով դրա խորքային երևույթները և հնարավոր հետևանքները: Այդ ամենի պատճառով ավելի խորացավ հայկական հեղափոխական ուժերի չարքերում եղած պառակտումը, Դաշնակցությունից է՛լ ավելի խորթացան հնչակյանները, որոնք երիտթուրքերին անկասկած ավելի լավ էին ճանաչում:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն.- Երիտթուրքական հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հնչակյանները դա համարեցին վերնախավային հեղաշրջում, որը բան չի տալու ո՛չ կայսրության խոնարհ դասակարգերին և ո՛չ էլ այլացեղ ժողովուրդներին:

1908 թ. № 6-7-րդ (հունիս-հուլիս) համարներում «Հնչակը» «Սահմանադրական Թուրքիա եւ հայկական խնդիր» վերնագրով խմբագրականում գրում էր, որ Օսմանյան կայսրության կառավարման համակարգում հեղաշրջում առաջ բերելու նպատակով իշխանության եկած երիտթուրք պարագլուխների գլխավոր նպատակն է պետության մեջ բռնափակված ժողովուրդների բախտը տնօրինել իրենց քաղաքական հղացումների

---

[1] Տե՛ս **Կարօ Սասունի**, Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 194:

համաձայն: «Երիտասարդ Թուրքիայի» անունով խօսող «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կուսակցութեան տիրապետութեամբ՝ քաղաքական գործօն ասպարէզի եւ ղեկավարի դերի մէջ է մտնում Թուրք նացիոնալիզմը, իրեն հաւատամք ունենալով Միդհատեան սահմանադրութիւնը»: Ապա, խոսելով կայսրության ոչ Թուրք ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի առաջիկա հավանական քաղաքականության մասին, թերթը շարունակում էր. «Թուրք նացիոնալիզմը տիրապետող ժողովուրդներին ազատութեան այնքան պայմաններ կտայ, որքան որ իր ընդգրկած նացիոնալիստական սկզբունքների շրջանակը կներէ, այսինքն՝ բաղկացուցիչ ժողովուրդների ազգային զարգացումը պիտի մտնի այն շրջանակի մեջ, ինչ որ Թուրք նացիոնալիզմը կգծի. վերջինս նրան զարգացման այնքան պայմաններ կտայ, որքան որ կհամապատասխանի իր կլանող ոգուն, եթէ, իհարկէ, խնդիրը միայն իրեն մնալու լինի: Թուրք նացիոնալիզմի տիրապետութեամբ օսմանեան երկրի տիրապետող դասակարգն է դառնում, տակաւ առ տակաւ, բուրժուա դասակարգը. սա է որ աստիճանաբար իր ձեռքը պիտի առնի համապետական բոլոր խնդիրների վճռումը՝ իր դասակարգային շահի տեսակէտից»[1]:

Այնուհետև, անդրադառնալով հեղաշրջման և սահմանադրության նկատմամբ հայության վերաբերմունքի խնդրին, «Հնչակի» առաջնորդողը պարզ ու հստակ արտահայտում էր իր՝ այդ օրերի խանդավառությանը չհամապատասխանող կարծիքը. «Մենք, որպէս սոցիալիստներ, դէմ կլինենք «Երիտասարդ Թուրքիային», եթէ նա ցանկանայ մի ազգի, մի ցեղի տիրապետութիւնը հաստատել միւսների վրայ: Ազգային խնդիրների տեսակէտով՝ մեր դիրքը կլինի մարտնչել, ո՛ր կողմից որ հարուածը գալու լինի ... Սոցիալական, տնտեսական, քաղաքական ո՛չ մի խոչընդոտ չպէտք է լինի՝ մի ազգութեան անկաշկանդ յառաջադիմութեան եւ բարգաւաճման համար. այնպէս որ ազգութիւնների բացարձակ հաւասարութիւնը անձեռնմխելի իրաւունք պիտի լինի»[2]:

---

[1] **«Հնչակ»,** № 6–7, յունիս–յուլիս, 1908, էջ 49:

[2] Նույն տեղում:

Դա էր պատճառը, որ ինչպես երիտթուրքական մամուլը, այնպես էլ Դաշնակցության մամուլի օրգանները և գործիչները ուժգին քննադատում էին Հնչակին՝ նրան մեղադրելով հեղափոխական ուժերի շարքերում անհամերաշխություն սերմանելու մեջ: Ընդ որում նրանք հաճախ էին վկայակոչում, որ հնչակյանները դեռ մինչև հեղափոխությունը հրաժարվել են մասնակցել Թուրքիայի հակասուլթանական ընդդիմադիր ուժերի 1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած համաժողովի աշխատանքներին:

Հնչակյան ղեկավարները վճռականապես մերժում էին երկրի հեղափոխական ուժերի շարքերը տարիներ շարունակ պառակտելու իրենց դեմ հնչեցրած ամեն մեղադրանք: Նրանք մշտապես շեշտում էին, որ իրենց կուսակցությունը երբեք դեմ չի եղել և այժմ էլ դեմ չէ Օսմանյան կայսրության մեջ գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցության հաստատման՝ ընդհանուր նպատակների հասնելու համար: Եթե կուսակցությունը Փարիզի համաժողովին վերաբերվել է վերապահությամբ, ապա դրանից չի կարելի անպայման հետևություն անել, թե նա ընդհանրապես հակառակ է հայկական և թուրքական կազմակերպությունների համերաշխ գործակցության: Մի կուսակցություն, որ իր դրոշի վրա ունի «Ճնշվածնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք» կոչը, այդպիսի կազմակերպությունը չի կարող երբևիցե, առանց դավաճանած լինելու իր հիմնական սկզբունքներին, հակառակել ազգերի ներսում գործող քաղաքական կազմակերպությունների հետ գործակցելու գաղափարին[1],- գրում էր «Հնչակը»: Ընդհակառակը՝ իր քսանամյա փոթորկալից գոյության ընթացքում կուսակցությունը գրավոր ու գործնական քարոզչությամբ միշտ արծարծել է միջազգային համերաշխության գաղափարները, ջանացել է հարևան ազգությունների քաղաքական կազմակերպությունների միջև միանգամընդմիշտ վերացնել ազգայնական ատելության ու թշնամության պատնեշները և ձեռք-ձեռքի

---

[1] *Տե՛ս* ***«Հնչակ»,*** *№ 6-7, յունիս-յուլիս, 1908, էջ 54:*

տված ազատության դատի համար մաքառող այլացեղ բոլոր ընդդիմադիր կուսակցությունների հետ՝ ներդաշնակ ու համակարգված գործելակերպով կռիվ մղել ամեն տեսակ բռնության դեմ:

*Հնչակյանները նշում էին, որ վաղուց իրենց համար պարզված է, որ Իթթիհադականներն այն անձինք չեն, որ իշխանության գալով, ազատություն չնորհեն կայսրության այլազգի ժողովուրդներին, և այդ համոզմունքն արդեն ամրապնդվել է հեղափոխությունից հետո եկած առաջին իսկ օրերից: «Համիդական անձնական բռնապետությունը խորտակուած է,- կարդում ենք «Հնչակի» առաջնորդողում,- բայց Միդհատի սահմանադրութեան կիրարկութեամբ **բռնապետությունը, ինքնակալությունը** և **Թէոկրատիան** վերջնականապէս փչրուած չեն. սուլթանական այդ ստորոգելիները, վեհապետական այդ իրաւունքները դեռ շարունակում են օրինական իրաւունքներ լինել, նրանք դեռ կան զօրութենապէս (virtuellement) և Թուրք պետական հասկացողութեան, «Երիտասարդ Թուրքիա»-յի, ուզում ենք ասել, մասն են կազմում: Միդհատեան սահմանադրությունը չի բերում **ժողովրդական միահեծանութեան** տիրապետությունն՝ հակադիր սուլթանական միահեծանութեան»[1]:*

Ելնելով դրանից՝ հնչակյան ղեկավարները բացեիբաց հայտարարում էին, որ չեն կարող համերաշխվել Իթթիհադի հետ և մտադիր չեն նրան գործակից լինել:

«Իրերի նոր դրութեան առաջ մենք կանգ առնողը չենք, եւ մեր պայքարը դադարեցնող,- գրում էր «Հնչակը».- նա պիտի շարունակուի՝ բայց նոր մեթոդով, նոր տաքտիկայով, ինչ որ յարմար է եւ բխում է ներկայացած իրական պայմաններից»[2]:

Հնչակյաններն անհեթեթություն էին համարում երիտթուրքերի՝ իրենց կուսակցությանը վերագրվող մեղադրանքը թե նա անհանդուրժող հատուկ ատելությամբ է լցված թուրքերի նկատմամբ: «Հնչակը» ժխտում էր այդ զրպարտությունը, գրելով. «Կազմակերպական եւ վարչական տեսակէտով, ամբողջ

---

[1] ***«Հնչակ»**, № 6-7, յունիս-յուլիս, 1908, էջ 50:*

[2] *Նույն տեղում, էջ 54:*

Թիւրքիայի մէջ մեզ համար կայ երկու դասակարգ, առանց ցեղի, կրօնի խտրութեան – մին՝ չահագործող, միւսը՝ չահագործուող: Եւ ահա՛ չահագործուող այդ ամբողջ դասակարգը, առանց ցեղի եւ սեռի խտրութեան, մեր ընկերներն են. նրանց չահերն է, որ մենք պէտք է պաշտպանենք, նրանց դասակարգային չահն է, որով մենք պիտի առաջնորդուենք»[1]:

Հեղափոխությունից հետո հնչակյանների ամենախոշոր միջոցառումներից մեկը Բերայի սուրբ Երրորդություն ընդարձակ եկեղեցում կազմակերպած մեծ հանրահավաքն էր: Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի մասնաճյուղը հրավիրել էր դասախոսելու Ստեփան Սապահ-Գյուլյանին: Ժողովում նախագահում էր Սասունի հերոս Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան), որին բազմահազար ժողովուրդն ընդունեց բուռն և անվերջ ծափահարություններով: Սապահ-Գյուլյանը խոսեց Թուրքիայի հեղափոխության, ազգերի եղբայրության քաղաքականության և իր կուսակցության դիրքի մասին:

Հռետորը նշում էր, թե գոյություն ունի երկու Եվրոպա. 1) Կապիտալիստական, որի չահերը հակընդդեմ են օսմանյան հայրենիքի չահերին: Այդ Եվրոպան ուզում է, որ Թուրքիայում միշտ գոյություն ունենա բռնապետություն, որպեսզի կարողանա չահագործել երկիրը՝ արյունաքամ անելով նրան, 2) Բայց կա նաև ժորեսների, բեբելների Եվրոպա, որ պատրաստ է հանուն ժողովուրդների ազատության պայքար մղելու կապիտալիստական Եվրոպայի դեմ: «Մեզ թեւ ու թիկունք ունենալով այս Եւրոպան,- ասում էր Սապահ-Գյուլյանը,- մենք՝ Թուրքիայի բոլոր ժողովուրդներս, պատրաստ պիտի լինենք միահամուռ կերպով դուրս գալու բոլոր չահագործողների դէմ: Եթէ նրանց կողմից ոեւէ վտանգ սպառնայ մեր հայրենիքին, Թուրքիայի բոլոր ազգերի չահը պահանջում է՝ որպէս մի սիրտ, մի հոգի պաշտպանել երկրի անձեռնմխելիութիւնը»[2]:

Հայ հռետորներից հետո ելույթ ունեցավ Փարիզում կրթություն ստացած մի քուրդ երիտասարդ՝ քրդական կոմիտեի ան-

---

[1] **«Հնչակ»**, *№ 6-7, յունիս-յուլիս, 1908, էջ 55:*

[2] *Նույն տեղում, էջ 49-50:*

դամ Բեղիրխան բեյը: Դրվատելով հնչակյան կուսակցության գործունեությունը, նա իր խոսքը վերջացրեց այսպես. «Հնչակեան կուսակցութիւնն էր, որ այնքան ծանր զոհաբերութիւններով, երկու տասնեակ տարիների նահատակութեամբ, մեզ զգացնել տուեց ազատութեան նշանակութիւնը: Կեցցէ՛ հնչակեան կուսակցութիւնը՝ մեր յեղափոխական ուսուցիչը»[1]:

Հնչակյաններն իրենց առջև կանգնած խնդիրներից մեկը համարում էին առաջիկայում **միդհատյան սահմանադրության փոխարինումը** նոր, բուն ժողովրդական սահմանադրությամբ: Հակառակ միդհատյան սահմանադրության, որ «պարգևել է» սուլթանը, նոր սահմանադրությունը պետք է ընդունի սուլթանից ու կառավարությունից անկախ ընտրված **սահմանադիր ժողովը**: «Այդ ռամկավար սահմանադրութիւնը պիտի լինի Թուրքիայի մէջ բովանդակուող ժողովուրդների՝ բոլոր դասակարգերի մասնակցութեամբ ստացուած ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի քուէարկութեան արդիւնքից»[2]: Գործելով ինքնուրույն և իր առաքելությունը կատարելուց հետո՝ սահմանադիր ժողովը պետք է ցրվի:

Սահմանադիր ժողովի կողմից ժողովրդական սահմանադրության ընդունումից բացի, հնչակյան ղեկավարությունը կարևոր էր համարում Թուրքիայում սոցիալ-դեմոկրատական մի զորեղ կազմակերպության ստեղծումը՝ իր զանազան խմբակցություններով՝ կազմակերպված **ըստ ազգության**, այլ ոչ թե **խառն**, ինչպես Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան է: Թուրքիայում ստեղծվելիք ս.-դ. կազմակերպության խմբակցական համակարգը չատ նպաստավոր կլինի պրոլետարական գաղափարների և, մասնավորապես, սոց.-դեմոկրատական գրականության տարածման համար՝ նկատի առնելով Օսմանյան կայսրության մեջ գտնվող ժողովուրդների լեզվական ու քաղաքակրթական զարգացման մակարդակների միջև եղած հսկայական տարբերությունը: «Վարչական կազմի այս տեսակէտով է,

---

[1] **«Հնչակ»,** № 6-7, յունիս-յուլիս, 1908, էջ 49-50:

[2] **«Մշակ»,** № 208, 23 սեպտեմբերի 1908 թ.:

որ մենք մեզ անուանում ենք ազգային սոցիալ-դեմոկրատներ»,- ընդգծում էր «Հնչակը»[1]:

Ինչպես տեսնում ենք, հնչակյան կուսակցությունը նախկինի պես հանդես էր բերում աննահանջ կեցվածք թուրքական հետադիմության հանդեպ՝ երեկ աբդուլհամիդյան, այժմ երիտթուրքական: «Մինչեւ որ արմատապէս չփչրուի սուլթանականութիւնը՝ իր բոլոր արտօնութիւններով,- իր առաջնորդողում չեշտում էր «Հնչակը»,- մինչեւ որ խալիֆայութիւնը, որպէս կրօնական գաղափարի մի հաստատութիւն, բոլորովին չանջատուի պետութեան քաղաքական իրաւունքների գաղափարից, մինչեւ որ ռամկավարական լայն սահմանադրութիւն չլինի եւ երկրի գործադրական (գործադիր:- Հ. Ս.) իշխանութիւնը նրա պարզ յանձնառուն (mandataire) չլինի ...»[2]:

Հնչակյանների այս վերջին դատողությունները թերևս ընդունելի էին, իհարկե՝ վերապահումներով, բայց անընդունելի էր այն մաքսիմալիզմը, որ այդ ժամանակ նրանք դրսևորում էին Թուրքիայում սոցիալիզմի հաղթանակի համար իրենց պայքարի հարցում, այն երկրում, ուր սոցիալիզմի համար նվազագույն պայմաններ չկային:

Հայոց միշտ համակիր եղած "Vossische Zeitung" («Վոսսիշե ցայտունգ») գերմանական թերթը 1908 թ. օգոստոսի 26-ին տպագրել էր Սոֆիայում իր սեփական թղթակցի հեռագիրը, որ նա տվել էր մեկ օր առաջ՝ օգոստոսի 25-ին: Թղթակցությունը տեղեկացնում էր.

«Երէկ այստեղ եկաւ հայ յեղափոխական Սապահ-Գիւլեանը՝ հնչակեան կուսակցութեան պարագլուխներից մէկը, որը մեր հարցմանը յայտարարեց, թէ իր խումբը (հին Հնչակը:- Հ. Ս.) թէեւ Թուրքիայում տեղի ունեցած կառավարման համակարգի սկսուած փոփոխութիւնից գոհ է, բայց կանգ չի առնելու կատարուածի վրայ եւ շարունակելու է իր անընդհատ կռիւը, որպէսզի կայսրութիւնն ունենայ այնպիսի դեմոկրատական կառավարութիւն, ինչպիսինն ունի, ասենք, Բելգիան, իսկ Հայաս-

---

[1] **«Հնչակ»,** *№ 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 50:*

[2] *Նույն տեղում:*

տանն ունենայ ինքնավարութիւն, այնպիսին, ինչպիսին, օրինակ, ունեն Սամոս եւ Կրետէ կղզիները, առանց, սակայն, վնասելու պետութեան միասնականութեանը»:

Ապա, շարունակելով իր խոսքը, հնչակյան առաջնորդը նշել էր, որ իր խումբը մարքսիստական է և ձգտելու է օսմանյան պետության բոլոր պրոլետարների համար ստեղծել մի ընդհանուր կազմակերպություն, ի գլուխ ունենալով մի կենտրոնական կոմիտե, որի աթոռանիստը կլինի Կ. Պոլիսը, և որին կմասնակցեն երկրի սոցիալիստական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Այնուհետև, Թղթակցի վկայությամբ, Սապահ-Գյուլյանն ասել էր. «Մենք շատ զօրեղ ենք, մեր կազմակերպութիւնը միայն Կովկասում ունի դասակարգային շահերին գիտակից 50.000 անդամ: Մենք սկսեցինք ռուսական յեղափոխութիւնը Բաքւում 1905 թուին՝ Մոսկուայի եւ Պետերբուրգի դէպքերից 12 օր առաջ»:

Գերմանացի Թղթակցի հետ ունեցած զրույցի ընթացքում Սապահ-Գյուլյանն արտահայտել էր այն մտքերից շատերը, որոնք նա մինչ այդ հանձնել էր «Հնչակ» թերթի էջերին, ուր նաև ազդարարել էր, թե մինչև «սոցիալիզմը Հայաստանի ու ամբողջ Թուրքիայի մէջ չիրականանայ՝ մենք մեր կռուին դադար չպիտի տանք»[1]:

Այդ բոլոր վերամբարձ հայտարարությունները տեղի էին ունենում երիտթուրք գաղանի բացված երախի առջև՝ թուրքերի մեջ խտացնելով հայերի հանդեպ ատելության նորանոր չերտեր, իսկ հայ բնակչության համար ստեղծելով նորանոր վտանգներ:

Զուր չէ, որ վերը նշված «Վոսսիշե ցայտունգ»-ի խմբագրությունն իր Թղթակցի նյութին հավելել էր հետևյալ եզրափակիչ խոսքերը.

«Հայերն առայժմ առիթ ունեն ապացուցելու. արդեօք նրանք խելօ՞ք մարդիկ են, թէ՞ միայն՝ յեղափոխականներ: Մինչեւ այսօր նրանց մասին շատ խելօք եւ կչռադատ բան չենք լսել: Բաքուի օրինակով յեղափոխութեան կոչ անելը մեծ անմտու-

---

[1] ***«Հնչակ»,*** *№ 6-7, Հունիս-Հուլիս, 1908, էջ 50:*

թիւն է, որովհետեւ Բաքւում տիրող զինուորական դրութիւնը բացի անօգուտ արեան զոհերից ոչ մի բան չէ առաջացրել»[1]:

«Հայրենասիրական» գեղեցիկ ճառերի փոխարէն հարկավոր էր մտածել ժողովրդին նոր կոտորածների վտանգից հեռու պահելու մասին, հեշտ արտասանվող դատարկ խոսքը փոխարինել դժվարին, մեծ ջանքեր պահանջող կենդանի գործով: Զէ՞ որ արդէն անցել էին հերոսական պայքարի օրերը, երբ հայը դեռ քիչ թէ շատ զենք ուներ: Այժմ, երբ նա կամավոր կերպով թէ ստիպողաբար իշխանութիւններին էր հանձնում զենքը, երիտթուրքերի դեմ հոխորտանքը մոտեցնում էր գալիքի արհավիրքը:

Թուրքահայ ժողովուրդը անելանելի վիճակի էր մատնված: Հայկական ազգային հեղափոխական երկու կուսակցութիւններից մեկն եղբայրութիւն էր քարոզում երիտթուրքական կուսակցության հետ, իսկ մյուսը տրամագծորեն հակառակ ուղի էր բռնել: Նույն Իթթիհադի հետ անհաշտ թրքահայությունը չվարել-մոլորվել էր երկու ճանապարհների խաչմերուկում:

Հնչակի պայքարի մարտավարության (տակտիկայի) մի քանի կարևոր մոտեցումների (հատկապես Թուրքիայում պրոլետարիատի գոյության կամ նրա դերի, այնտեղ սոցիալիստական շարժման մասին նրա պատկերացումների) հետ կարելի է չհամաձայնել, կարելի է չընդունել նրա ղեկավարների մեծ մասի պարծենկոտ հայտարարությունները, բայց չի կարելի նրա նկատմամբ հարգանք չտածել սկզբունքայնության համար, այն բանի համար, որ ի տարբերություն Դաշնակցության, նա կարողացավ թափանցել երիտթուրքերի դասակարգային էության մեջ, տեսնել այն մահացու վտանգները, որոնք նրանք դավադրաբար նախապատրաստում էին թուրքահայության դեմ:

Զնայած երիտթուրքական հեղափոխության և սահմանադրության մասին դաշնակցականների ու հնչակյանների ունեցած իրարից շատ տարբեր տեսակետներին, այնուամենայնիվ, Իթթիհադի իշխանության հատկապես առաջին շրջանում նրանց միջև

---

[1] ***"Vossische Zeitung"*** *am 26 Augustos 1908.* ***Վերցված է «Մշակ»,*** *№ 185, 24 օգոստոսի 1908 թ. համարից:*

մի ընդհանրություն էր դրսևորվում՝ չափազանց քննադատական վերաբերմունք Ռուսաստանի նկատմամբ, այսինքն՝ այն, ինչը և անում էին երիտթուրքերը:

Ոչ այնքան իրողապես անկեղծ, որքան ցանկանալով ձևացնել, ցույց տալ, թե այդ հարցում միասնական են, հայկական ձախակողմյան քաղաքական խմբավորումները երիտթուրքերի հետ Պոլսում կազմավորել էին «Յունիոն» անունով կոմիտեն, որը հանդես էր գալիս Ռուսաստանի դեմ:

Դաշնակցականների և Հնչակյանների (հին Հնչակի) բարձրագոչ «ռուսատյաց» աղաղակներն ավելի շատ արհեստական էին, քան քաղաքական կամ ազգայնամոլական արտահայտություն: Դրանք որևէ արձագանք չէին գտնում թուրքահայ գյուղացիական զանգվածներում, որոնք, ինչպես և առաջ, շարունակում էին անկեղծ բնազդական համակրանք տածել Ռուսաստանի նկատմամբ, հավատալ նրա ազատագրական առաքելությանը: Ընդհանրապես որևէ հայի համար, լիներ ռուսահայ թե թուրքահայ, «ռուսատյացությունը» ցուցադրական էր, այլ ոչ թե խորապես գիտակցված կամ խորապես զգացական: «Ռուսատյաց» հայի մոտ դա արտահայտվում էր բացառապես քաղաքական հաշիվներով: Դա, իհարկե, պատահական չէր, քանզի Թուրքիայում և հատկապես նրա մայրաքաղաքում գտնվող ռուսահայ «ռուսատյացները» սերված լինելով ռուսական իրականությունից, ամենքն անխտիր, կրթված լինելով ռուսական լուսավորության մթնոլորտում, ռուսական հզոր գրականության և մշակույթի ազդեցության տակ, չէին ընդհատել Ռուսաստանի հետ իրենց ունեցած բազմազան կապերը: Նրանց ատելությունն ուղղված էր միայն ցարական հետադիմության, ինքնակալական կարգերի դեմ:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն.– Այս կուսակցությունը նույնպես ճչտել էր իր դիրքը օսմանյան հեղափոխության և սահմանադրության նկատմամբ:

Առաջացած լինելով Հնչակի ընդերքից՝ Վերակազմյալը, սակայն, նշված համարյա բոլոր հարցերում հանդես էր գալիս մայր կուսակցության տեսակետներին հակառակ և ընդհուպ մոտենում էր Դաշնակցության որդեգրած նոր սկզբունքներին, ավե-

լին, վերջինից առաջ էր անցել երիտթուրքերի իր ջատագովության մեջ:

Վերակազմյալների «Ազգ» թերթը գրում էր. «Մեր հայրենակիցները քաջ գիտեն, թէ մինչեւ հիմա ի՛նչ անսայթաք հաւատարմութեամբ ծառայած ենք մենք Հասարակաց Հայրենիքին եւ ի՛նչ մեծամեծ ծառայութիւններ եւ զօրաւիգն աջակցութիւններ կրնան սպասել մեզմէ Երկրին հիմնապէս՝ տնտեսապէս՝ բարոյապէս զարգացման եւ բարգաւաճմանը համար: Ուստի, ո՛չ անոնք կ՚ուզեն եւ կրնան մեզմէ բաժնուիլ եւ ո՛չ ալ մենք՝ անոնցմէ»[1]:

Վերակազմյալների Կ. Պոլսի մասնաճյուղը 1908 թ. սեպտեմբերի 12-ին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որտեղ ասված էր.

«Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը սրտագին կ՚ողջունէ Օսմանեան Սահմանադրութեան վերահաստատումը, որուն պահպանումն ու կատարելագործումը ամէնէն թանկագին գրաւականը կը նկատէ Թուրքիոյ խաղաղ վերանորոգման, անոր քաղաքական եւ ընկերային իրական հզօրացման եւ անոր այլացեղ ժողովուրդներուն բաղձալի բարգաւաճման»[2]:

Այնուհետև կուսակցությունն իր վերաբերմունքն էր ճշտում Իթթիհադի նկատմամբ, ազդարարելով.

«Վեր. Հնչ. Կուսակցութիւնը այս առթիւ իր անկեղծ խնդակցութիւնը կը յայտնէ Երիտասարդ Թուրքերուն, որոնք երէկ հրէշաւոր բռնակալութեան մը դէմ արիաբար մաքառեցան, ու այսօր Ազատութեան անյողդողդ ախոյեանը մնալ կը շարունակեն՝ անխտրական գնահատելի ոգւով»[3]:

Անդրադառնալով անցյալի իր գործունեությանը, աբդուլհամիդյան ռեժիմի դեմ իր մղած պայքարներին՝ կուսակցությունը պատրաստակամություն էր հայտնում վճռականորեն փոխելու իր գործելակերպը և պաշտոնապես հայտարարում էր, որ վերակազմյալ հնչակյան կուսակցությունը՝ Ա) Դադարեցնում է իր

---

[1] **«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:

[2] ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 38, թ. 1:

[3] Նույն տեղում:

զինյալ ապստամբության ծրագիրը, Բ) Սատար է կանգնում սահմանադրության, Գ) Անհաշտ պայքար կմղի կայսրության ներքին ու արտաքին բոլոր թշնամիների ոտնձգությունների դեմ, այն բոլոր ուժերի դեմ, որոնք կփորձեն ոչնչացնել ազատական ռեժիմը և վերականգնել նախկին անհանդուրժելի բռնակալությունը: Միաժամանակ, կուսակցությունը հանրությանը տեղեկացնում էր, որ առաջիկայում նրան կներկայացնի քաղաքական ազատությունների, վարչական դրության, ժողովրդական ներկայացուցչության, զինվորագրության և ընկերային ու տնտեսական այլ խնդիրների մասին իր մասնավոր հայացքներն ու պահանջները»[1]:

Ինչ խոսք, այդ բոլոր հարցերը Վերակազմյալը դիտարկելու էր օսմանյան հեղափոխության և Իթթիհադի մասին ունեցած իր պատկերացումների համաձայն:

Որոշ ժամանակ անց, վերակազմյալ Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի վարչությունը, ատենադպիր Վահան Թեքեյանի և ատենապետ Միսաք Սուրենյանի ստորագրությամբ, 1908 թ. սեպտեմբերի 16-ին, հետևյալ պաշտոնական հայտարարությունն արեց.

«Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վարչութիւնը՝ Կեդրոնական Յանձնախումբի, Կիլիկիոյ, Փոքր Հայքի, Ամերիկայի, Եգիպտոսի եւ Պուլկարիոյ ներկայացուցիչներուն հետ խորհրդակցաբար՝ ներկայիս կը յայտարարէ թէ՝ Ա) Թուրքիոյ մէջ սահմանադրական ռեժիմին հաստատմամբ՝ կուսակցութիւնը դադրած է իր դաւադրական-ապստամբական գործունէութենէն եւ մտած է քաղաքական գործունէութեան օրինական սահմանին մէջ՝ իբրեւ ազգային-ռամկավարական կուսակցութիւն մը, որ կը մերժէ պետական կազմէն անջատողական ամէն դիտում եւ կը ձգտի՝ օսմանեան ազատ-քաղաքացիութեան համահաւասար իրաւունքներու վայելումին մէջ՝ պահպանել եւ զարգացնել հայ ազգին պատմա-անհատական ինքնութիւնը, առանց խզելու անոր ներքին միութիւնը դասակարգային ընդդիմամարտութիւններով:

---

[1] ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 38, թ. 2:

Բ) Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը տարիէ մը ի վեր համերաշխութեան դաշինք կնքած ըլլալով՝ Թուրքիոյ ներկայ իրականութեան մէջ կը շարունակէ գործել համերաշխաբար, Երիտասարդ-Թուրք Քոմիթէներու հետ ալ խորհրդակցական յարաբերութիւններով»[1]:

Ինչ խոսք, վերակազմյալների այս անթաքույց ու ցցուն դիրքորոշման մեջ խոսում էր նաև նրանց՝ Հնչակին հակառակվելու կիրքը այն բանի համար, որ կազմակերպության թե՛ նազարբեկյանական և թե՛ սապահ-գյուլյանական թևերը նախկինի պես փարած էին սոցիալիզմի գաղափարին:

Դաշնակցության դեմ վերակազմյալների ավելի քան 12 տարվա պայքարը դադարեցվում էր:

Ազատականներ.– *Հայկական քաղաքական դաշտի այս հոսանքը փնտրտուքների մեջ էր՝ պարզելու օսմանյան հեղափոխության և նրա վերականգնած միդհատական սահմանադրության բուն էությունը, գնահատելու դրանց նշանակությունը Թուրքահայության համար:*

«Թուրքական սահմանադրութիւն» վերտառությամբ առաջնորդող հոդվածում հույժ զգուշավորությամբ արտահայտվելով օսմանյան հեղափոխության մասին, «Մշակի» գլխավոր խմբագիր Ալեքսանդր Քալանթարը նշում էր. «Այսօրուայ հեռագրերը զարմանք կը պատճառեն ընթերցողներին: Նրանք յայտնում են սահմանադրութեան հաստատման մասին Թուրքիայում՝ իբրեւ արդէն կատարուած իրողութեան մասին: Մենք այնքան շատ ենք խաբուած եղել Թուրքիայի կողմից, որ չենք հաւատում մեր կարդացած հեռագրերին, բայց յուսանք, որ բազմամեայ տառապանքներից յետոյ լոյսի մի նշոյլ է թափանցում դէպի նահատակների երկիրը»[2]:

«Թուրքիայի՝ մինչեւ այսօր տառապեալ, ճնշուած ու հարստահարուած, թշուառ հայ ժողովուրդն ի՞նչ պէտք է անի պատմական այս կարեւոր մոմենտում...»,– «Մշակում» տպագրած

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6902, 18 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] ***«Մշակ»,*** *№ 151, 13 հուլիսի 1908 թ.:*

«Մեծամեծ դէպքերի նախօրեակին» հոդվածում հարցնում էր Թերթի խմբագիրներից, ականավոր ազատական Համբարձում Առաքելյանը: Մինչև այդ հարցին պատասխանելը՝ հոդվածագիրը նշում էր, որ Թուրքահայերի նպատակն է համահավասար քաղաքացիական իրավունքներ ունենալ մուսուլմանների հետ: Նրանք իրենց ապրած երկրում ուզում են ամենքի համար արդար օրենքներ, կամենում են պահպանել իրենց լեզուն, ազգային դպրոցները, ունենալ տեղական ինքնավարություն և, վերջապես, ամենագլխավորը՝ անձի, գույքի, պատվի երաշխավորված ապահովություն՝ որպեսզի կարողանան զարգանալ տնտեսապես և առաջադիմել մտավորապես:

Վերականգնված միդհատյան սահմանադրությունը հայերին իսկապես կտա՞ մարդկային գոյության ամենատարրական իրավունքները՝ ահա՛ այս հարցն էր, որ զբաղեցնում էր բոլոր հայերին:

Նշելով, որ հայ քաղաքական գործիչներից շատ-շատերը չափազանց թերահավատ են, որ սուլթանի հրովարտակների, նրա խոստումների հետ կարելի է ինչ-որ հույսեր կապել, Համբարձում Առաքելյանն, այնուամենայնիվ, հակված էր կարծելու, որ «երիտթուրքերի հրատարակած պրոկլամացիաները, վերջապէս՝ նրանց ծրագիրը դրական խոստումներ եւ գրաւականներ են տալիս այդ մասին»[1]:

Ազատական մշակականները գտնում էին, որ ճիշտ է, երիտասարդ թուրքերի շարժումը ծայրահեղ ազգայնական է, որի ամենագլխավոր նպատակը Թուրքիայի գործերի մեջ եվրոպական միջամտության միանգամ ընդմիշտ խափանումն է, ճիշտ է, շարժումը վճռականապես մերժում է ազգային և տեղական ինքնավարության ամեն մի փորձ, բայց ստեղծված պայմաններում դրանց մասին խոսելը վաղաժամ է: Հիմա ամենակարևորը կյանքի, գույքի և պատվի ապահովության հասնելն է:

Ենթադրելով, որ միդհատյան սահմանադրությունն, այնուամենայնիվ, Թուրքիային կտա այդ կենսական պահանջները,

---

[1] ***«Մշակ»,*** *№ 158, 23 հուլիսի 1908 թ.:*

մշակականները գտնում էին, որ հայկական բոլոր կազմակերպությունները և ազգային իշխանություններն ամենից առաջ մի անհրաժեշտ և անհետաձգելի պարտականություն ունեն կատարելու, այն է՝ Թուրքիայից փախած ու աստանդական բոլոր հայերին, որոնք ցրված են Ռուսաստանում, Ամերիկայում, Եգիպտոսում, Բուլղարիայում և այլուր, վերադարձնել իրենց հայրենիք, որպեսզի նրանք կարողանան տիրանալ իրենցից խլված, լքված հողերին, արտերին, դաշտերին, տներին, վերսկսել իրենց երկրագործական զբաղմունքները, վերականգնել արդյունագործական ու առևտրական ձեռնարկությունները, վերաշինել իրենց քանդված, ավերված օջախները:

Այդ բաղձալի նպատակին հասնելու համար մշակականները գտնում էին, որ ամենից առաջ իրենց գործունեությունն արմատապես պետք է վերակառուցեն բոլոր հայկական կազմակերպություններն ու անձինք, ազգային և եկեղեցական իշխանությունները և, առաջին հերթին, հայկական հեղափոխական կուսակցությունները, որոնք անցյալի իրենց գիտակցական կամ անգիտակցական գործունեությամբ, թուրքահայ ժողովրդի գլխին մեծամեծ աղետներ բերելու բազում առիթներ են տվել արդուլհամիդյան արյունալի ռեժիմին: Նրանք «իրենց գիտակցական կամ անգիտակցական յանցանքը կարող են քաւել, եթէ նպաստեն այդ նպատակի իրագործման, որովհետեւ առանց հողի ոչ մի ժողովուրդ, ոչ մի ազգ չի կարող յարատեւել, բարգաւաճել, զարգանալ կուլտուրապէս»[1]:

Սակայն մշակականները համոզված չէին, թե հայկական ազգային հեղափոխական հնչակյան կուսակցությունը, որը երիտթուրքերի նկատմամբ բացահայտ թշնամական դիրք էր բռնել, կարող կլինի վերանայելու իր գործունեությունը: «Մշակում» տպագրած իր մի ուրիշ՝ «Զգուշացէ՛ք չափազանցութիւններից» վերտառությամբ հոդվածում, Հ. Առաքելյանն ընդգծում էր, որ բոլոր հայերը, այդ թվում՝ հնչակյանները, պիտի գոհ լինեն, եթե նոր ռեժիմը նրանց հնարավորություն տա զարգաց-

---

[1] Տե՛ս **«Մշակ»,** № 158, 23 հուլիսի 1908 թ.:

նել իրենց լեզուն, գրականությունը, դպրոցները, եթե հայերը պետության բոլոր մյուս տարրերի հետ համահավասար քաղաքական իրավունքներ ունենան, կարողանան պահպանել իրենց ներքին ինքնավարական առանձնաշնորհումները, առաջին հերթին՝ Ազգային սահմանադրությունը:

Հոդվածագիրը նշում էր, որ «դրանից աւելի եւ նոր պահանջներ դնելը ոչ միայն չափազանցութիւն կլինէր, այլեւ հայ ժողովրդի ազատագրութեան գործը կվտանգէր, որովհետեւ այդ միեւնույն[ն] է, թէ մի տուն դեռ չշինուած մենք պահանջում ենք, թէ պէտք է սկզբից նրա ներքին զարդարանքը կատարել: Ձգեցէ՛ք [նախ եւ] առաջ տան հիմքը, թողէ՛ք, որ այդ հիմքը ամրանայ, ապա մտածեցէ՛ք նրա վրայ չէնքը կառուցելու [մասին]:

Եւ այդ պատճառով մենք բոլորովին անտակտ եւ անտեղի ենք գտնում հնչակյան կուսակցութեան յայտարարութիւնը, թէ պէտք է ձգտել ձեռք բերել «ռամկավարական սահմանադրութիւն», ստեղծել «ինքնավար սոցիալիստ Հայաստան»: Եւ ասում ենք այդ յայտարարութեան հեղինակներին.

Պարոննե՛ր, զգուշացէ՛ք չափազանցութիւններից, խոյս տուէ՛ք ուտոպիական, անիրագործելի պահանջներից, մի՛ վտանգէք ազատագրութեան գործը, որովհետեւ ձեր չափազանց անիրագործելի պահանջները կարող են խրտնեցնել երիտասարդ Թուրքերի կուսակցութեանը եւ Թուրքիայի առաջադիմական տարրերը [կարող են] ռէակցիա առաջ բերել եւ ամրացնել Եւրոպայի մէջ այն կարծիքը, թէ հայերը հանգիստ եւ խաղաղ, կուլտուրական զարգացման անընդունակ տարր են»[1]:

Եվ, որպես օսմանյան հեղափոխության և միդհատյան սահմանադրության մասին ազատականների արտահայտած մտքերի ամփոփում, «Մշակը» գրում էր.

«...Որպէսզի հին, բռնապետական ռեժիմը վերջնականապէս տապալուի, որպէսզի արշալոյսը փոխուի կենարար եւ ջերմացուցիչ արեգակի, օսմանեան պետութեան բոլոր ցեղերը եւ տարրերը մի միակ պարտաւորութիւն ունեն — ամէն կերպ աշ-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 158, 23 հուլիսի 1908 թ.:*

խատել նպաստելու, որ Թուրքիայի մէջ հաստատուի տեւական սահմանադրական ռեժիմ, որ այլեւս անկարելի լինի վերադարձը դէպի աբդուլհամիդեան բռնապետութիւնը: Ուրիշ խօսքերով, պէտք է նպաստել երիտասարդ Թուրքերի կուսակցութեան՝ իրագործելու իր ծրագիրը, որ, յամենայն դէպս, բոլոր ժողովուրդներին կտայ կեանքի, գոյքի, պատուի եւ քաղաքացիական ազատ զարգացման ապահովութիւն»[1]:

Ինչպես տեսնում ենք, օսմանյան հեղափոխության գնահատման հարցում առկա էր ծայրահեղորեն տարբեր և միմյանց հակասող երկու տեսակետ, հասարակական միտքն ու տրամադրությունը տատանվում էին վարանոտ թերահավատության ու հափշտակվող դյուրահավատության միջև:

Անտարակույս, հայերը հոռետեսության չատ հիմքեր ունեին. ոչ միայն նրանց կասկածամիտ ենթակայական (subjectum) տրամադրությունները (իբրև արդյունք անցյալի դառը փորձանքների), այլև չատ որոշ ու ազդու առարկայական (objectum) պարագաները գալիս էին զգուշացնելու, որ երեկվա դժոխքը միանգամից չի կարող փոխարինվել դրախտի:

Իսկ թուրքական հեղափոխությանը և նրա վերականգնած սահմանադրությանը ինչպիսի՞ գնահատականներ էին տալիս ***սոցիալ-դեմոկրատները:***

Թուրքական հեղափոխությունը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների մոտ եթե ոչ հակասական, ապա ոչ միչտ հստակ գնահատական է ստացել: Բայց մի հարցում նրանց բոլորի՝ և՛ բոլշևիկների, և՛ մենչևիկների կարծիքը միատեսակ էր. թուրքական հեղափոխությունը թուրքական ազգայնամոլական բուրժուազիայի հաղթանակն է մի կողմից ավատապետության, մյուս կողմից՝ կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ:

1908 թ. հուլիսին, երիտթուրքական «հեղափոխության» օրերին գրած «Դյուրավառ նյութ համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում բոլշևիկների առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը փաստում էր.

---

[1] ***«Մշակ»,*** *№ 158, 23 հուլիսի 1908 թ.:*

«Թուրքիայում հաղթանակեց երիտթուրքերի ղեկավարած հեղափոխական շարժումը զորքերի մեջ: Ճիշտ է, այդ հաղթանակը կես հաղթություն կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն է, որովհետև թուրքական Նիկոլայ Երկրորդը գլուխն ազատել է առայժմ թուրքական հռչակավոր սահմանադրությունը վերականգնելու խոստումով»[1]:

Լենինի տեսակետով՝ երիտթուրքական շարժումը բուրժուական հեղափոխություն էր՝ առանց ժողովրդական լայն զանգվածների մասնակցության, զորքերի կես հաղթանակ էր, կիսատ-պռատ ու սահմանափակ շարժում:

Երիտթուրքերի վարած ներքին ու արտաքին քաղաքականության փոփոխության հետ փոխվում էին նաև սոցիալ-դեմոկրատների՝ այդ քաղաքականությանը տրվող գնահատականները. դրանք ընդհանուր առմամբ ավելի կոշտ էին դառնում:

Բոլշևիկյան "Правда" («Պրավդա») թերթը երիտթուրքական վարչակարգն անվանում էր ռազմասպայական դասակարգի բռնապետություն, իսկ նրա ազգային քաղաքականությունը՝ ամենաթունդ որակի սևհարյուրյակային[2]:

Ավելի ուշ Վ. Ի. Լենինն իր «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ երիտթուրքական շարժմանը տվել է հետևյալ գնահատականը. «Եթե օրինակի համար վերցնենք 20-րդ դարի հեղափոխությունները, ապա, հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել: Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելիորեն հանդես չի գալիս այդ հեղափոխություններից ոչ մեկի մեջ»[3]:

Լենինը նշում էր երիտթուրքական շարժման սահմանափակ, վերնախավային բնույթը, ընդգծում, որ երիտթուրքերի քաղա-

---

[1] ***Վ. Ի. Լենին**, ԵԼԺ, հատ. 17, «Հայաստան», Երևան, 1931, էջ 211:*

[2] *Տե՛ս **"Правда"**, № 76, 1912 г.*

[3] ***Վ. Ի. Լենին**, Պետություն և հեղափոխություն, «Հայաստան», Երևան, 1988, էջ 50:*

քականությունը հենց սկզբից հակաժողովրդական է եղել: Զնայած այդ բացասական գնահատականին, նա, այնուամենայնիվ, երիտթուրքական շարժման հաղթանակը համարում էր հեղափոխություն[*]*:*

Թուրքական հեղափոխության նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ հարևան Պարսկաստանը, որը նույնպես գտնվում էր հեղափոխության հորձանուտում: Այստեղ հեղափոխական ուժերն անվերապահորեն ողջունեցին Թուրքիայում սահմանադրության վերականգնումը, իսկ միապետականներն իրենց երկրում հռչակված սահմանադրության նկատմամբ լցված լինելով թշնամանքով՝ դա փոխանցում էին նաև օսմանյան սահմանադրությանը, թեև պարսից շահ Մահմեդ Ալին հուլիսի 26-ին սուլթան Աբդուլ Համիդին ուղարկել էր մի հեռագիր, որով, ուրախություն արտահայտելով Թուրքիայում սահմանադրություն հայտարարելու առթիվ, հույս էր հայտնում, որ նոր ռեժիմի բարերար պայմաններում կվերածնվի Թուրքիայի ժողովուրդը: Այդ հեռագրում, ի միջի այլոց, կար մի այսպիսի դարձվածք. «Ժողովրդական ներկայացուցիչները անպայման աւելի լաւ գիտեն երկրի կարիքները, քան մինիստրները»[1]*:*

---

[*] *Վ. Ի. Լենինը և խորհրդային պատմագրությունը 1908 թ. օսմանյան իրադարձությունները միանշանակ հեղափոխություն էին համարում, որպեսզի ցույց տան 1905–1907 թթ. ռուսական, իրոք ժողովրդական, իրոք զանգվածային հեղափոխության վիթխարի նշանակությունը նաև համաշխարհային, ավելի ճիշտ՝ միջազգային տեսակետից, հեղափոխություն, որի հզոր ալիքները խթան դարձան թուրքական և պարսկական հեղափոխությունների, ինչպես նաև Ռուսաստանի հարևան ուրիշ երկրներում ծագած սոցիալական և ազգային ընդվզումների ուժեղացման համար: Սույն աշխատության հեղինակը կարծում է, որ երկու բնութագրումները տվյալ դեպքում մեկը մյուսին չեն հակասում: Երիտթուրքերի շարժման հաղթանակը, անշուշտ, կարելի է հեղափոխություն որակել այնքանով, որքանով նա տապալեց սուլթանի անսահմանափակ իշխանությունը, հռչակեց սահմանադրություն և ազատություններ, բայց դա իր խորքում հեղաշրջում էր, քանի որ ժողովրդական լայն զանգվածները հեռու էին կանգնած իրադարձություններից:*

[1] ***«Մշակ»,*** *№ 163, 29 հուլիսի 1908 թ.:*

Անշուշտ, այս եզրակացությանը չահը հանգել էր պարսկական խորհրդարանի փորձից:

«Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում ականավոր սոցիալ-դեմոկրատ Բոգդան Կնունյանցը նշում էր, որ Ռուսաստանում շատերը հիացած են երիտթուրքերի կիսամիջոցներով ու զգուշավորությամբ, անարյուն հեղափոխությամբ, որի դերակատարները, նրանց խոսքով ասած, «հանճարեղ կերպով» տարան ազգային գործը և առանց որևէ «դասակարգային պայքարի ու պրոլետարական պահանջների» «նվաճեցին ազատություն»[1]: Ինչո՞ւ ռուս բուրժուաներն ու ազատականները կեղծավորաբար այդպիսի գովեստներ էին շռայլում երիտթուրքերի հասցեին: Իհարկե, ասում էր Կնունյանցը, ոչ թե թուրքական հեղափոխության և նրա գործիչների նկատմամբ տածած համակրանքից (ըստ էության՝ նրանցից շատերը թքել են երիտասարդ թուրքերի վրա), այլ «ռուսական հեղափոխությունն ու հատկապես նրա կրողին՝ բանվոր դասակարգին վարկաբեկելու թաքուն նպատակով»: Նրանք բոլոր կտուրներից նշավակում են «հայրենի հեղափոխականներին», որոնք իբր, նրանց խոսքերով ասած, «ոչինչ անել չկարողացան, այլ միայն Ռուսաստանը դարձրին պատժիչ ջոկատների և ռազմաղաչտային արդարադատության երկիր»[2]: Այդ նույն մտայնությամբ առաջնորդվող ռուսական իշխանությունները շարունակում էին անողոք հաշվեհարդար տեսնել հայ հեղափոխականների նկատմամբ Կովկասում և այլուր:*

Կնունյանցն այնուհետև նշում էր, որ չնայած ռուսական հեղափոխության պարտությանը և երիտթուրքական հեղափոխության հաղթանակին, հասարակական զարգացման վրա ռու-

---

* *Հոդվածն առաջին անգամ լույս է տեսել 1909 թ. մայիսին, "Бакинские вести" («Բաքինսկիե վեստի») թերթի առաջին համարում: Դա մայրենի լեզվով առաջինը հայ ընթերցողին է ներկայացրել Հովհաննես Ինճիկյանը (տե՛ս* **ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ.** *(Երևան), 1963, № 8):*

[1] **Բոգդան Կնունյանց**, *Ընտիր երկեր, «Հայաստան», հրատ., Երևան, 1978, էջ 540:*

[2] *Նույն տեղում, էջ 540-541:*

սական հեղափոխության ազդեցությունն անչափելի է. նա ունի պատմական վիթխարի նշանակություն: «Ռուսական հեղափոխությունը,- գրում էր Կնունյանցը,- չնայած իր պարտությանը, հսկայական գործ կատարեց: Նա ալեկոծեց ռուսական կյանքն ամբողջ խորությամբ: Նա նպաստեց բազմամիլիոնանոց գյուղացիության արթնացմանը, տեղից շարժեց պրոլետարիատին և դասակարգային պայքարի առաջին լուրջ դասերը տվեց նրան, բուրժուազիային մղեց քաղաքական կազմակերպման ուղին, խոշոր հողատերերին ստիպեց մոբիլիզացնել իրենց ուժերը և կանգնել իրենց արտոնությունները պառլամենտի միջոցով պաշտպանելու ուղու վրա: Այդ ամենը մեծ պլյուս է մասսաների քաղաքական դաստիարակության համար: Դեռևս չհասնելով իր անմիջական նպատակին՝ քաղաքական այնպիսի կարգի նվաճմանը, որը համապատասխանում է զարգացող բուրժուական հասարակարգի շահերին, ռուսական հեղափոխությունը, այնուամենայնիվ, վիթխարի զարկ տվեց Ռուսաստանի առաջխաղացմանը՝ նրա քաղաքական ու սոցիալական հարաբերությունների եվրոպականացման ճանապարհին»[1]:

Իսկ ի՞նչ տվեց հաղթանակած թուրքական հեղափոխությունը, որին անզուսպ գովեստներ էին շռայլում ռուսական հեղափոխության հակառակորդները: «Այն ժամանակ, երբ ռուսական հեղափոխության գործող ուժը բնակչության բազմապիսի դասակարգերն էին»[2], որոնք իրենց առջև մեծ ու բազմազան խնդիրներ էին դրել, թուրքական հեղափոխությունը, ընդհակառակը, շատ սահմանափակ ու նեղ խնդիրներ էր դրել իր առջև: Մյուս կողմից՝ նա ընթանում էր սոցիալական ավելի պարզ իրադրության մեջ: Բացի այդ, թուրքական հասարակությունը դասակարգային տեսակետից դեռևս շատ չերտավորված չէր, նրանում, Բ. Կնունյանցի արտահայտությամբ, կապիտալիզմը դեռ նոր էր բացում իր առաջին արահետները, բնակչության վիթխարի մեծամասնությունն ապրում էր բնատնտեսության պայմաններում, ամբողջ շրջաններ բնակեցված էին քոչվորնե-

---

[1] ***Բոգդան Կնունյանց***, *Ընտիր երկեր, էջ 543-544:*

[2] *Նույն տեղում, էջ 541:*

րով: Պետական կարգը տիպիկ ասիական բռնապետություն էր, որտեղ սուլթանը, նույն ինքը՝ խալիֆը, իր հպատակների կյանքի և ունեցվածքի լիիրավ տերն էր[1]:

Ի տարբերություն Ռուսաստանի, գրում էր Բ. Կնունյանցը, Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասություններն առաջանում էին ազգային հողի վրա, որոնց խորացմանը նպաստում էր սուլթանական ռեժիմը՝ մշտապես ատելություն և թշնամանք բորբոքելով կայսրության ազգերի միջև: Դա թուլացնում էր պետությունը, նրան դեպի կործանում էր տանում, որի հետ հաշտվել չէին ուզում թուրք ազգի առավել քաղաքակրթված մասի տրամադրություններն արտահայտող և երիտթուրքերի գաղափարական ազդեցության տակ գտնվող բարձրագույն պաշտոնեությունն ու սպայությունը: Սրանք էին, որ կանգնած լինելով «ազգի միակ կազմակերպված ուժի՝ զորքի գլուխ ... դարձան հեղաշրջման ակտիվ ուժ»[2]: Հեղաշրջում կատարելով՝ նրանք նպատակ ունեին «Թուրքիան ասիական բռնապետությունից վերածել եվրոպական քաղաքական ռեժիմ ունեցող երկրի, սահմանադրական երկրի, ուր զուտ քաղաքական բնույթի ռեֆորմները հեղաշրջման գլխավոր խնդիրն էին»: Երիտթուրքական հեղափոխությունը «երկիրը հասցրեց զորքի գերիշխանությանը, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է զինվորի հրամանին: Բնակչության լայն խավերը, գյուղացիները և քաղաքային մանր արհեստավորներն առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս»[3]: Ժողովրդական զանգվածներին ոչ ոք հաշվի չէր առնում, որովհետև հեղաշրջումը ոչ թե զանգվածը, այլ մի խումբ հեղափոխականներ էին կատարել:

Ի մի բերելով թուրքական հեղաշրջման մասին իր մտքերը՝ Բ. Կնունյանցը եզրակացնում էր. «Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը զարկ կտա օսմանյան ազգի զարթոնքին. սա է նրա պատմական հսկայական նշանակությունը, բայց այդ հե-

---

[1] Տե՛ս **Բոգդան Կնունյանց**, Ընտիր երկեր, էջ 542:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

դափոխությունն ինքնին դեռ բնավ չի նշանակում անցում արևելյան բռնապետությունից դեպի եվրոպական պառլամենտարիզմ»[1]:

Երիտթուրքերի հեղափոխությանը մոտավորապես նման գնահատական էր տալիս նաև այդ ժամանակ դաշնակցական, բայց հետագայում բոլշևիկ դարձած Արսեն Ամիրյանը: Իր հոդվածներից մեկում, որն առ այսօր անտիպ է և պահպանվում է արխիվում, նա գրում էր, որ հակահեղափոխական բոլոր ուժերը ողջունում են այդ հեղափոխությունը, քանի որ «Թուրք բուրժուազիան ոչ մի վախ չունի պրոլետարիատից, որը ներկայացնում է, գոնե առայժմ, մի արհամարհելի ուժ: Ինչ վերաբերում է գյուղացիությանը, նա թեև բազմամիլիոն, բայց գտնվում է այնպիսի աննպաստ պայմանների մեջ, որ անկարող է ինքնուրույն դեր կատարելու»[2]: Ա. Ամիրյանը հիմնականում թուրք գյուղացիության դիրքորոշմամբ էր բնութագրում երիտթուրքական հեղափոխությունը: «Իսկ այն նահապետական դժբախտ սոցիալ-տնտեսական պայմանները,- գրում էր նա,- որոնց մեջ գտնվում է թուրք գյուղացին, դարձնում են նրան մի անօգնական խեղճ արարած, զուրկ միանգամայն փոքր ի չատե գիտակցական կռիվ մղելու ընդունակությունից: Ճիշտ է, հարստահարությունը և հալածանքը տիրող դասակարգի կողմից համբերատար թուրք գյուղացիությանը երբեմն հասցնում են վրդովմունքի աստիճանի, բայց այդ վրդովմունքը նա միշտ մղել է ամենաթույլ դիմադրության ուղղությամբ: Անկարող լինելով գիտակցել[ու] իր դժբախտության իսկական պատճառները կամ ուժ չունենալով դիմադրել[ու] ուժեղ թշնամուն՝ տիրող դասակարգին, թուրք գյուղացիությունն իր կատաղությունը միշտ թափել է ստրուկ քրիստոնյա ազգերի վրա, որոնց վերաբերմամբ նա վայելել է տիրող ազգության արտոնությունները: Այսպիսով, թուրք գյուղացիությունը ոչ միայն ոչ մի հեղափոխական դեր չկատարեց, այլև գործիք հանդիսացավ կուլտուրապես ավելի բարձր ազգե-

---

[1] ***Բոգդան Կնունյանց***, *Ընտիր երկեր, էջ 544:*

[2] *ՀԱԱ, ֆ. 4021, ց. 1, գ. 18, թթ. 2-3:*

ին սուլթանական բոնապետության ձեռքին պահելու համար»[1]:

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկներից ոմանք երիտթուրքական շարժումն իր արտաքին կողմերով նմանեցնում էին Ռուսաստանում դեկաբրիստների շարժմանը: «Ինչպես Ռուսաստանում 1825 թ. գլխավոր գործող ուժը ինտելիգենտ զինվորականների խումբն էր,- գրում էր մենշևիկ Շ-ը,- այնպես էլ Տաճկաստանում գործի գլուխ անցան զինվորականներն ու երիտասարդ թուրքերը՝ իրենց ղեկավար ունենալով այն թուրք երիտասարդներին, որոնց զգալի մասը բարձրագույն կրթություն էր ստացել եվրոպական համալսարաններում»[2]: Ընդգծ Շ-ն ակնհայտ նմանություն էր տեսնում ռուս դեկաբրիստների և երիտթուրք պարագլուխների միջև, բայց, միաժամանակ, վերջիններիս շարժումը համարում էր ծայրահեղ ազգայնական և համաիսլամական, որը Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ իր վրա որևէ պարտավորություն չէր վերցնում[3]:

Թուրքական հեղափոխության և միդհատյան սահմանադրության մասին մոտավորապես նույն կարծիքն էին հայտնում Դաշնակցությունից հեռացած անջատականների տեսաբանները, որոնցից շատերը հետագայում մտել էին ս.-դ. շարքերը:

Բաքվում լույս տեսնող նրանց «Շեփոր» շաբաթաթերթի 1908 թ. № 10-ում «Էլվենտ» (Գագիկ Քաջբերունի) ստորագրությամբ տպագրված «Միլիտարիզմ և ժողովրդապետություն» վերտառությամբ հոդվածը նվիրված էր թուրքական հեղափոխության վերլուծությանն ու գնահատականին: Ոմանք թուրքական հուլիսյան դեպքերն անվանում են «հեղափոխություն», իսկ քաղաքագետներն ուզում են հավատացնել, թե նա ռուսական հեղափոխության արձագանքն է»,- գրում էր հոդվածի հեղինակը: Բայց արդյո՞ք իրականում այդպես է:

Հոդվածագիրը չեշտում էր, որ չի կարելի հեղափոխությունը (ինչպիսիք են Ֆրանսիական մեծ կամ 1905-1907 թթ. Ռուսական հեղափոխությունները) չփոթել իր առջև բարենորոգչական

---

[1] ՀԱԱ, ֆ. 4021, ց. 1, գ. 18, թթ. 5-6:

[2] Նույն տեղում, թ. 6:

[3] Տե՛ս նույն տեղում:

նպատակներ դրած չարժման հետ, որպիսին նաև երիտթուրքական չարժումն է և նրա հաղթանակը: Դրանք անառնչակից հասկացություններ են, որոնց նպատակները միանգամայն տարբեր են:

«Յեղափոխութիւն ասելով,- գրում էր նա,- հասկացւում է տիրապետող դասակարգի ձեռքից իշխանութեան օտարումը, ստորադիր դասակարգի յաղթական բարձրացումը մինչեւ պետութեան ընդհանուր ղեկավարութիւնը: Բարենորոգութիւն ասելով հասկացւում է տիրապետող դասակարգի իշխանութեան ամրապնդումը, ստորադիր դասակարգի հասարակական շղթաների ծանրացումը՝ պետական մեխանիզմի կատարելագործման ճանապարհով: Թիւրքիայի «եղելութիւնը» ո՞ր կարգին է պատկանում – յեղափոխո՞ւմ, թէ՞ բարենորոգում: Բաւական միամիտ պիտի լինել երկմտելու համար: Այդ ո՞ր դասակարգն է Թիւրքիայում տապալուած, այդ ո՞ր դասակարգն է նրա տեղը բռնել: Իրականութեան մէջ ո՛չ մէկն է տեղի ունեցել եւ ո՛չ միւսը, բայց բարեպաշտ մարդկանց երեւակայութեան մէջ թերեւս ռեֆորմ է, որ գալիս է պետութիւնն աւելի յուսալի ձեռքերում դնելու, ուժեղացնելու, խլելով նրա ղեկը սուլթանիզմի հին սերնդից՝ նորին տալու համար ... Այնպէս որ Թիւրքիայում տեղի է ունեցել «յեղափոխութիւն» առանց յեղաշրջման՝ բարենորոգման հեռանկարով»[1]:

ՀՆՉԱԿԻ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐԸ

Ինչպես նախորդ էջերում ցույց ենք տվել, հին ռեժիմի օրոք Հնչակը Ահմեդ Ռիզայի երիտթուրքական կուսակցության անդիջում հակառակորդն էր, վճռականորեն դատապարտում էր ծայրահեղ ազգայնական այդ թուրքական քաղաքական կազմակերպության հետ ՀՅ դաշնակցության կնքած «եղբայրական» դաշինքը, ցույց էր տալիս դրա կործանարար լինելը թուրքահայ ժողովրդի համար:

---

[1] ***«Շեփոր»,*** *№ 10, 19 հոկտեմբերի 1908 թ.:*

Բայց օսմանյան հեղափոխության հաղթանակից հետո եկած առաջին շաբաթներին տեղի ունեցավ այն, ինչն անսպասելի էր:

Արտասահմանի հնչակյան մամուլն առաջվա պես շարունակում էր անխնա քննադատել Իթթիհադին ու նրա ղեկավարությանը, իսկ կուսակցության Պոլսում հավաքված ղեկավար գործիչները հուլիսի վերջերից սկսել էին զարմանալիորեն չափազանց մեղմ արտահայտություններ անել, իսկ առանձին դեպքերում նույնիսկ հաճոյախոսել երիտթուրքերի, նրանց պարագլուխների և նույնիսկ իրենց գլխավոր թշնամի Ահմեդ Ռիզայի հասցեին:

Դրա պատճառն այն էր, որ մայրաքաղաքում ստեղծված տանելի նոր մթնոլորտը նրանց ստիպել էր տատանվել և քննարկել Իթթիհադի դեմ պայքարը շարունակելու նպատակահարմարության հարցը: Ի վերջո այդ անորոշությունից դուրս գալով, նրանք չեղվեցին իրենց ավանդական հակաիթթիհադական քաղաքական ուղեգծից և փորձեցին կրկնել Դաշնակցության ճակատագրական սխալը՝ մոտենալ Ահմեդ Ռիզայի խմբակին:

Հնչակի ղեկավարությունը օգոստոսի սկզբներից բանակցություններ սկսեց Իթթիհադի կոմիտեի հետ՝ ճշտելու համար համատեղ գործելու հնարավորության սահմանները: Երիտթուրքերը համաձայնություն հայտնեցին գործակցության՝ հետագայում դա խորացնելու հեռանկարով:

Օգոստոսի 14 (27)-ին Կ. Պոլսում կազմվեց հնչակյան մի պատգամավորություն հետևյալ կազմով. «Հնչակի» խմբագիր Ստեփան Սապահ-Գյուլյան, Համբարձում Պոյաճյան (Մեծն Մուրադ), Հարություն Ջանգյուլյան և Միհրան Տամատյան (վերակազմյալ հնչակյան):

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ պատգամավորությունը օգոստոսի 16-ին պաշտոնական այցելության գնաց «Միություն և առաջադիմություն» կոմիտեին՝ նրա կենտրոնատեղիում: Այդ հանդիպումը մանրամասն նկարագրել է վերակազմյալ հնչակյանների օրգան «Ազգ» թերթի Կ. Պոլսի թղթակիցը:

Հավաքվել էին երիտթուրքական կոմիտեի անդամները:

«Ներկայացումի արարողութիւնը յոյժ սրտաշարժ եղաւ,- նշում էր թղթակիցը:- Գոմիթէին կողմէ տոքթ. Պէհաէտտին*, հնչ. ընկերներու վաղածանօթ մը, որուն հետ Բարիզի մէջ յաճախակի յարաբերութիւններ եւ բանակցութիւններ եղած էին, ինքնաբուխ շարժումով մը, վազեց ընդ առաջ հնչ. պատգամաւորներու, որոնց հետ սրտագին ողջագուրուեցաւ»: Այնուհետեւ Բեհաէդդին Շաքիրը «մի առ մի Գոմիթէին ներկայացուց հնչ. պատգամաւորները. Սապահ-Գիւլեան՝ իբր Կեդրոնի անդամ և խմբագիր «Հնչակ»-ի, Ճանկիւլեանը իբր Գումգարուի գահրամանը**, Մուրատը և Տամատեանը իբր Սասունի վէ էրմենի իխթիլալ գահրամանլարը»***:

Իր հերթին, ինչպես նշում էր «Ազգի» թղթակիցը, «տիար Սապահ-Գիւլեան յանուն Հնչ. Կուսակցութեան շնորհաւորեց Օսմ. գոմիթէն՝ բռնապետութեան վրայ տարած իր յաղթանակին համար, որով երկիրը կ'օժտուէր գէթ սահմանափակ սահմանադրութեամբ: Որչափ որ այդ սահմանադրութիւնը իր ներկայ ձեւին մէջ շատ թերի եւ պակասաւոր ըլլայ՝ լիովին կը համապատասխանէ հնչակեան հայեացքներուն, այնուամենայնիւ բռնապետական ռեժիմը ատով տապալուած էր եւ նոր ռէժիմը հաստատուած՝ բերելով որոշ առաւելութիւններ»[1]:

Այնուհետեւ Սապահ Գյուլյանն Իթթիհադի կոմիտեին հավաստիացնում էր, որ Հնչակյան «Կուսակցութիւնը այժմէն պատրաստ է ի հարկին իր բոլոր ոյժերը տրամադրել ներկայ ռէժիմին ի պաշտպանութիւն եւ դէպի հին ռէժիմին վերադարձը ռեւէ պատահական ձգտումի ու փորձի դէմ մաքառելու համար.

---

* Առաջին աշխարհամարտի օրերին հայոց ցեղասպանությունն իրականացրած երիտթուրքական կուսակցության առավել հրեշածին գործիչներից Բեհաէդդին Շաքիրը՝ «Թեշքիլաթ-ի մախսուսեի» ղեկավարը:

** Թարգմ.՝ Գումգարուի հերոս (խոսքը Կ. Պոլսի Գում-Գափու թաղամասում հնչակյան ղեկավար գործիչներ Ռուբեն Խանազատի, Գաբրիել Կաֆյանի (Շմավոն), Հարություն Ջանգյուլյանի, Հակոբ Վարդ-Պատրիկյանի և այլոց գլխավորությամբ 1890 թ. հուլիսի 15-ին կազմակերպված հանրահայտ ցույցի հերոս հռչակված Հարություն Ջանգյուլյանի մասին է):

*** Թարգմ.՝ Սասունի և հայկական ապստամբության հերոսներ:

[1] **«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:

մէկ խօսքով՝ կուսակցութիւնը միշտ տրամադիր էր իր ջանքերը միացնել Գոմիթէի ջանքերուն եւ երկրին իրական բարօրութեանը ու յառաջդիմութեանը համար, համաձայն իր հիմնական սկզբունքներու եւ նոր դաքդիքայի»[1]:

Թղթակիցը հաղորդում էր, որ Օսմանյան կոմիտեի անդամները «եռանդագին ցնծութեամբ ընդունեցին Հնչ. Կուսակցութեան կողմէ եղած այս պաշտօնական յայտարարութիւնները»: Այնուհետև նա նշում էր, որ «Գոմիթէի կողմէ տոքթ. Պէհաէտտին, հնչակեաններու այս վաղածանօթ բարեկամը ջերմագին շնորհաւորութիւններ յայտնեց, եւ ըսաւ թէ Հնչակեան Կուսակցութեան եւ իր գործիչներու նկատմամբ մեծ էր իրենց հիացումը, յարգանքը, եւ թէ արդէն իրենք ասկէ տարբեր վերաբերմունք մը չէին կրնար սպասել իրենց Հնչ. եղբայրակիցներէն, քանի որ Հնչ. Կուսակցութիւնը երկրին մէջ եւ երկրի կարիքներէն ծնունդ առած քաղաքական մարմին մըն էր, եւ կը բաղկանար ըստ մեծի մասին ընիկ երկրացիներէն: Յայտնեց թէ ոչինչ այնքան թանկագին է Գոմիթէին համար որքան Հնչակեաններու իրական աջակցութիւնը եւ համերաշխ գործակցութիւնը:... Հետեւապէս ջերմ փափաք յայտնեց որ այսուհետեւ երկու մարմիններու մէջ յարաբերութիւնները եւ խորհրդակցութիւնները աւելի սերտանան ու յարատեւ չարունակուին»[2]:

Հասցեներ փոխանակելուց և հավատարմության փոխադարձ երդումներ տալուց հետո Հնչակյան ղեկավարները «Թուրք Գոմիթէի անդամներուն հետ երկրորդ անգամ եղբայրական ողջագուրումներէ վերջ մեկնեցան իրենց հետ տանելով քաղցր տպաւորութիւնը այն ջերմ ընդունելութեան, զոր գտած էին»[3]:

Օգոստոսի 24-ին (սեպտեմբերի 6-ին) Պոլսի Կետիկ փաշայի եկեղեցում տեղի ունեցավ Հնչակյան հրապարակային ժողով, ուր ներկա էին «Հնչակի» խմբագիր Ստ. Սապահ-Գյուլյանը, Մեծն Մուրադը, Միհրան Տամատյանը, Հարություն Ջանգյուլյանը, Հմայակ Արամյանցը, Հայկ Մինասյանը, Հակոբ Իսքենդեր-

---

[1] **«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

յանը և կուսակցության ուրիշ նշանավոր գործիչներ: Ժողովը ղեկավարող Մուրադի փայլուն ճառից հետո հիմնական զեկուցող Սապահ-Գյուլյանը ներկաներին կոչ արեց՝ օգտվել երիտթուրքերի կատարած հեղափոխության ընձեռած հնարավորություններից և անդադրում աշխատել օսմանյան հայրենիքի բարգավաճման համար[1]:

Հնչակյան ղեկավարների մի մասի՝ երիտթուրքական կոմիտեի հետ ունեցած անսպասելի պաշտոնական հանդիպումից և օգոստոսի 24-ի հրապարակային ժողովից հետո հին Հնչակի կենտրոնը դիմեց Իթթիհադի և նրա ղեկավար Ահմեդ Ռիզայի երդվյալ հակառակորդ իշխան Սաբահէդդինին (որին հնչակյանները համարում էին իրենց համախոհը) և առաջարկեց, թեև ուշացումով, ընդունել Փարիզի համաժողովի որոշումները, միաժամանակ հայտարարելով, թե Հնչակը նույնպես ինչպես և ինքը՝ իշխանը, սխալ է գործել՝ հրաժարվելով մասնակցել հիշյալ համաժողովին[2]: Սաբահէդդինը կտրականապես մերժեց Հնչակի կենտրոնի առաջարկը:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 25-ին (սեպտեմբերի 7-ին) «Բիւզանդիոն» թերթի խմբագրություն են այցելում հնչակյան գործիչներ Ստեփան Սապահ-Գյուլյանը, Համբարձում Պոյաճյանը, Հմայակ Արամյանցը և Սուրեն Թորոսյանը: Պարզելով իրենց կուսակցության առաջիկա անելիքները, նրանք իրենց կազմակերպության տվյալ պահի գործունեությունը բանաձևեցին հետևյալ կետերի մեջ. «1) Այլևս դաւադրութեան պէտք չմնաց, քանի որ Թուրքիա մտած է ազատութեան շաւղին մէջ: 2) Անկախ Հայաստանի կազմութեան խնդիր չունին այժմ: 3) Իրենք յօժարամիտ են հայ եւ թուրք ամէն կուսակցութեանց հետ գործակցութեամբ աշխատիլ երկրին վերածնութեան եւ ազգին վիճակին բարելաւութեան: 4) Ուխտեալ են թող չտալու որ հին ռէժիմը դառնայ, եւ պատրաստ են ի հարկին զէն ի ձեռին կռուիլ

---

[1] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»*** *թերթի 1908 թ. օգոստոսի 28-ի (սեպտեմբերի 10-ի) (№ 3625) «Ազգային քաղաքականութիւն» հոդվածը, որն արտացոլված է* ***«Ազգի»*** *1908 թ. № 75-ում:*

[2] *Տե՛ս* ***«Զանգակ»****, № 27, 7 օգոստոսի 1908 թ.:*

նախկին վատթար դրութեան վերահաստատման պարագային, եւ 5) Իրենց ծրագրին անբաժան մասը կը կազմէ գործակցիլ Օսմ. Սահմանադրութեան բարեփոխման ժողովրդական (տէմօքրադիք) իմաստով»[1]:

Այդ հանդիպման տպավորության տակ «Բիւզանդիոնի» խմբագրությունը հավելում էր. «Շատ ուրախ ենք տեսնելով որ թէ՛ հնչակեան եւ թէ՛ դաշնակցական կուսակցութեանց վարիչները խոհուն եւ հեռատես մարդիկ են եւ կենսական կէտերու վրայ համախոհ, համամիտ կ'երեւին ազգային կեանքին արդի վճռական ճգնաժամուն մէջ»[2]:

Այդ ամենի հետևանքով Կ. Պոլսի հայկական որոշ շրջանակներում պատրանք էր ստեղծվել, թե հայկական քաղաքական երեք կուսակցությունների՝ Հնչակի, Դաշնակցության և Վերակազմյալ Հնչակի համար արդեն առկա են համատեղ գործելու պայմաններ, քանի որ օսմանյան հեղափոխության, օսմանյան սահմանադրության և նույնիսկ Իթթիհադի ու նրա կառավարության նկատմամբ մոտավորապես նույն հայացքն ունեն: Ավելին, ոմանց թվում էր, թե այդ բարենպաստ մթնոլորտը կարող է օժանդակել բոլոր հայկական քաղաքական կազմակերպությունների միավորմանը, որի հետևանքով առաջ կգա համահայկական միաձույլ մի կուսակցություն: Դրանով վերջ կտրվեր հայկական քաղաքական դաշտում տեղի ունեցող տևական մրցակցությանն ու թշնամանքին:

Սակայն համերաշխության հաղիվ երևակված ուրվականն անմիջապես չքացավ, երբ դաշնակցական մամուլը, արտահայտելով կուսակցության ղեկավարության հստակ դիրքորոշումը, սկսեց խանդոտ հարձակումներ Հնչակի վրա՝ Իթթիհադի հետ մերձենալու նրա ուշացած փորձերի համար: Օսմանյան հեղափոխության հաղթանակի և սահմանադրական առաջին բարեփոխումների դափնին Դաշնակցությունը չէր ուզում կիսել հայ իրականության մեջ գործող որևէ մի այլ քաղաքական ուժի հետ:

---

[1] ***«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ. (արտատպված է «Բիւզանդիոնից»):*

[2] ***«Բիւզանդիոն»**, № 3626, 29 օգոստոսի (12 սեպտեմբերի) 1908 թ.:*

Ընթերցողի միտքը չծանրաբեռնելու համար բավարարվենք միայն մեկ օրինակով:

ՀՅԴ Բալկանյան շրջանի օրգան «Ռազմիկ» թերթում տպագրված «Ուշացած հնչակեանները» վերնագրով հրապարակման մեջ կարդում ենք.

«Հաւաստի աղբիւրէ կ'իմանանք թէ Հին Հնչակեան Կեդրոնը դիմումներ կ'ընէ իշխան Սապահէտտինի, ընդունելու Փարիզի Քոնկրէին որոշումները, յայտարարելով միանգամայն թէ սխալ մը գործած է ինք՝ մերժած ըլլալով մասնակցութեան նախկին հրաւէրը:

Վա՜յ, բաւական չուտ չէ՞ արդեօք այս հեւիհեւ դիմումը, երբ դեռ թաց են «ժէօն-թրքօ-դաշնակցականներու» համերաշխութեան եւ Փարիզի Քոնկրէին դէմ գրուած հայհոյութիւնները՝ չարլաթանութիւնները, երբ դեռ ականջներու մէջ չեն մարած Պուլկարիոյ բեմերէն Արամեանցներու անաթէմաները, մաքիաւէլ[ի]ական պրովոկացիաները** եւ ժէօն-թիւրքերու դէմ արտաբերուած նախատինքի ու հեգնութեան խարանները:*

Ո՞ւր մնացին հապա հնչակեաններու անկախ ու անջատուած Հայաստանի երազները, ո՞ւր մնաց հնչակեաններու ծրագիրը, ո՞ւր մնացին Օսմանեան Սահմանադրութեան դէմ փչողները:

Հնչակեան թերթերու միջոցով ժէօն-թիւրքերու, թիւրք մտաւորականութեան եւ թիւրք տարրին ուղղած այնքան նախատինքներէն ու ամենազզուելի հայհոյութիւններէն ետք՝ բաւական վեհանձնութիւն ու երես ունենալու են մարդիկ, ձեռք երկնցնելու այժմ եւ բարեկամութիւն խնդրելու:

Գոնէ մեծանձնութիւն ունենային իրենց թուքերը լղելու նախ:

*Կոմմենտարների*** կարիք չը կայ...»*[1]:

Մենք ձեռքի տակ որոշակի փաստեր չունենք, թե երիտ-

---

* *Բանադրանքները:*

** *Սադրանքները*

*** *Մեկնաբանությունների:*

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 20, վավ. 41, թ. 1:*

Թուրք-Հնչակ նոր սկսվող հարաբերությունները խափանելու համար Դաշնակցության ղեկավարությունն արդյո՞ք բանակցել է Իթթիհադի կոմիտեի հետ, թե՞ ոչ, բայց փաստ է, որ վերջինս սեպտեմբերի կեսերից այլևս խուսափում էր խոսել անգամ Հնչակի հետ գործակցելու մասին:

Այսպիսով, օսմանյան հեղափոխությունից հետո սկսված Իթթիհադ-Հնչակ հարաբերությունների ջերմացումը տևեց ընդամենը 1.5-2 ամիս: Ըստ որում՝ այդ կարճատև հարաբերությունների ընդհատման նախաձեռնությունը եկել էր Թուրքական կողմից: Բնական էր Հնչակի ղեկավարության վիրավորվածությունը: Կուսակցությունը նորից վերադարձավ երիտթուրքերի դեմ իր ավանդական կոչտ դիրքորոշմանը:

Աբդուլ Համիդի բռնապետության օրոք, երբ երիտթուրքական շարժումը դեռ իշխանության չէր եկած, Իթթիհադի դեմ պայքարը որևէ վտանգ չէր ներկայացնում Հնչակի համար: Բայց այժմ իշխանության ղեկին գտնվող այդ թուրքական կուսակցությունը, իր ձեռքում ունենալով բանակն ու ոստիկանությունը և վայելելով կայսրության ողջ հետադիմական ուժերի համակրանքը, օրեցօր վտանգավոր էր դառնում իրեն ընդդիմադիր քաղաքական ուժերի համար:

Իհարկե, Հնչակյան գործիչները հասկանում էին, որ երկրի ղեկավարման բոլոր լծակները Իթթիհադի ձեռքում են: Սապահ-Գյուլյանը տարիներ ետք գրում էր, թե օսմանյան հեղափոխությունից անմիջապես հետո «Իթթիհատը՝ տաճիկ ազգայնականությունը կացութեան լիազօր տէրն էր. նա իր ձեռքին ունէր երկրի ամբողջ իշխանութիւնը եւ մեքենան դարձնում էր ուզածին պէս ...»[1]: Ավելին, իշխանության տիրացած Իթթիհադը «հակառակորդներին, ընդդիմադիրներին, շատ առաջ գնացողներին աքսորում, գնդակահարում էր օրը ցերեկով»[2]:

Ի տարբերություն Թուրքիա եկած դաշնակցական գործիչների, որոնք այստեղ անմիջապես ընդգրկվեցին ներազգային հակասությունների մեջ և խորացրին դրանք, միաժամանակ

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Պատասխանատուները, Բ տպագրութիւն, Պէյրութ, 1974, էջ 307:*

[2] *Նույն տեղում:*

ամեն կերպ խուսափելով քննադատել երիտթուրքական իշխանություններին և Իթթիհադի կոմիտեին, հնչակյան եկվոր գործիչները հազվադեպ էին զբաղվում ներազգային խնդիրներով, փոխարենը, ողջ կրքով մամուլով և բեմերից նետվեցին Իթթիհադի դեմ, նրա հետ մտան անիմաստ ցուցադրական պայքարի մեջ՝ հավելյալ ատելության և վրեժխնդրության մղելով մոլեռանդ մուսուլմաններին և երիտթուրքերին: Նրանք հաշվի չէին առնում Իթթիհադի ծայրահեղ ազգայնամոլությունը, նրա ոճրածին բնազդները, և այն, որ Աբդուլ Համիդը դեռ հրապարակի վրա է:

Բանականությունը թելադրում էր, որ Իթթիհադի ով լինելու մասին հնչակյանների լավ իմացությունը պետք է նրանց մղեր զգուշավորության և խոհականության, որոնք, ցավոք, բացակա էին: Նրանք Իթթիհադի դեմ ամբիոններից անընդհատ հարձակումներ էին կատարում ոչ միայն Թուրքահայերի շրջանում, այլև հենց Թուրքերի միջավայրում: Եվ դա անում էին բացահայտորեն ու ցցուն կերպով: Հնչակյանների գլխավոր տեսաբան ու ղեկավար Սապահ-Գյուլյանն իրենց այդ «անվեհեր», բայց հայության համար վտանգավոր մարտավարությունը ներկայացնում էր այսպես.

«... Մենք Թուրք Ազգայնական կուսակցութիւնը չը հարուածեցինք միայն Հայ Ազգային շրջանի մէջ, դա մեզ բաւականութիւն չէր կարող տալ, եւ Իթթիհատի կատաղութեան փրփուրն էլ այնքան ուժգին չէր լիներ, եթէ խնդիրը միայն դրանով վերջացած լիներ: Մենք նրա դէմ դուրս եկանք եւ բուն Թրքական միջավայրի մէջ: Շատ տեղերում նրա տեղական ակումբների ջանքերը ո՛չ միայն ամլութեան դատապարտեցինք, այլ նրանց փակուելու էլ պատճառը մենք դարձանք՝ մեր ուժեղ պրոպականտայի շնորհիւ: Եւ դա մեզ մասնաւորապէս յաջողուեց՝ Քեամիլ փաշայի սատրազամութեան օրօք»[1]*: Նա հպարտանում էր, թե Իթթիհադին մերկացնելու, հարվածելու տեսակետից ոչինչ բաց չեն թողել եւ ո՛չ մի շրջանի մեջ:*

Հնչակյան գործիչները հայաբնակ գավառներում և այլուր,

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Պատասխանատուները, Բ տպ. էջ 326:*

ուր չատ թե քիչ հայ բնակչություն կար, չտապում էին կազմակերպել հակահիթլերական հանրահավաքներ ու բաց ժողովներ և այդ ամենը թուրքերի ու քուրդ ամբոխի, ոստիկանության ու ժանդարմերիայի աչքի առաջ: Ահավասիկ այդ կործանարար միջոցառումներից ընդամենը մեկ օրինակ՝ կրկին դիմելով իրեն՝ Սապահ-Գյուլյանին:

Մարզվանում տեղի հնչակյանների կազմակերպած հանրահավաքին մասնակցում էին ոչ միայն հայեր, այլև մեծ թվով թուրքեր և հիթլերական պաշտոնյաներ: Իր ելույթում Սապահ-Գյուլյանն ասում էր.

«Մարզուանցինե՛ր, ապրեցէ՛ք, գործեցէ՛ք, աշխատեցէ՛ք, բայց ամէն բանից առաջ ապրեցէ՛ք, գործեցէ՛ք, աշխատեցէ՛ք հայ ազգի ազատագրութեան համար: Հայաստանը՝ մեր արիւնոտ հայրենիքը, մտահան մի՛ արէք, ուր էլ որ լինիք:

Բազմութիւնը աղաղակեց, կեցցէ՜ Հայաստանը, կեցցէ՜ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը»[1]:

Իր խոսքը ճառախոսը վերջացրել էր այսպես. «Գուցէ նորից արեան գետեր ունենանք՝ մինչեւ մեր վերջնական յաղթանակը ձեռք բերելը»[2]:

Իսկ թուրքերը, հիթլերականները, ոստիկանական գործակալները թուղթն ու մատիտը ձեռքն առած, իրենց հետ ունենալով թարգմաններ, գլուխները կախ գրում էին ու գրում Սապահ-Գյուլյանի ասած խոսքերը և տեղեկագրում Կ. Պոլիս՝ ուր հարկն է[3]:

Այդ բանը ինքը՝ Սապահ-Գյուլյանն էր վկայում. «Մեր դասախօսութիւնները եւ ժողովները, սկզբից ի վեր, շարունակ, լի էին լրտեսներով, որոնք մի բառ անգամ չէին փախցնում՝ առանց պատշաճաւոր իշխանութեան հաղորդելու, ինչպէս որ ամենաստոյգ աղբիւրից մեզ հաղորդել էին»[4]:

---

[1] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Պատասխանատուները, Բ տպ., էջ 271:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Փոքր Հայքի յիշատակներ, մասն Ա, հատ. Ա, Չիկագո, 1917, էջ 95:*

[4] ***Ստեփան Սապահ-Գիւլեան,*** *Պատասխանատուները, Բ տպ., էջ 269:*

ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հեղափոխության օրերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների թիվը դեռ փոքր էր. նրանց հիմնական մասը՝ 3000 հոգի, (որից միայն 100 հոգին էր հանդիսանում գործող կուսակցական) կենտրոնացված էր Կոստանդնուպոլսում, իսկ մայրաքաղաքից դուրս կուսակցությունը ներկայացված էր ոչ մեծ թվով անձերով[1]:

Ամբողջ Թուրքիայում ազգություններն ու ցեղերը հեղափոխության առաջին օրերին չարունակում էին խնդակցել բռնատիրական ռեժիմի գերեզմանի առաջ: Իսկ երբ անցան սահմանադրական առաջին հրճվանքները, նոր կառավարությունը, սթափվելով, տեսավ, որ ինքն էլ կանգնած է նույն կոտրված տաշտակի առաջ:

Տեղի էին ունենում անբավականության ցույցեր և՛ աջից, և՛ ձախից: Հայտնի չէր՝ ո՞վ է նոր կարգերի բարեկամը, ո՞վ՝ թշնամին, որի՞ն հենվել, որի՞ հետ միանալ, և գլխավորը՝ որի՞ դեմ կռվել: Քրիստոնյա արաբները չգիտեին՝ արաբ մուսուլմաններն իրենց բարեկամնե՞րն են, թե՞ թշնամիները: Հին ռեժիմի ժամանակ թշնամիներ էին, իսկ այժմ, նոր կարգերի պայմաններո՞ւմ ...

Թուրքերի մեջ չկար մի հասարակական խավ, որին Իթթիհադը լիովին վստահեր՝ իր ծրագրերը կատարելու համար: Կառավարությունը կանգնել էր անորոշության առջև և չգիտեր ինչից սկսել: Արդյո՞ք հնարավոր էր անցյալից ժառանգած պետական անպետք մեքենայի բաղադրիչ մասերը համաչափ չարժման մեջ դնել, կենտրոնից ղեկավարել հսկայածավալ տերության տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքը: Պետական նոր կազմը, գոնե իր գործունեության առաջին չաբաթներին, կրոնական ո՞ր հարանվանությունների և, Թուրքերից բացի, ո՞ր ազգությունների վրա հիմնադրել, հաշվի առնելով նաև, որ երերուն է Թուրք էթնոսի հողը, որի կարծրության

---

[1] *Տե՛ս “Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”, с. 164.*

վրա չատ էր կասկածում նոր կառավարությունը: Իթթիհադն ըմբռնում էր, որ բազմազգ երկրում ազգայնամոլական զգացմունքները բոլոր պարագաներում հանգեցնում են անկայուն ու թույլ պետության:

Այ թե կարելի լիներ չատ արագ խառնել բոլոր ազգերն ու կրոնները և այդ անդեմ զանգվածի վրա կանգնեցնել նոր պետականության շենքը: Բայց ահա՝ մուսուլմանները, ասենք, պնդում էին շարիաթի անչեղ գործադրության վրա, իսկ քրիստոնյաները պահանջում էին անկախ դատարան, եվրոպական մշակույթ ու լուսավորություն: Ինչպե՞ս հաշտեցնել այդ ներհակ ձգտումները:

Այդ ներքին գլուխկոտրուկներին միանում էին արտաքին բարդագույն խնդիրներն իրենց բազմաճյուղ հանգույցներով: Սակայն տվյալ պահին ներքին կյանքը բնականոն հունի մեջ դնելու համար պահանջվում էին ավելի մեծ ջանքեր, քան արտաքին հարաբերությունների կանոնավորումը: Կառավարությունն իր գոյության առաջին շրջանում ներքին քաղաքականության մեջ գլխավոր վտանգը համարեց աջից եկող սպառնալիքը:

Կայսրության բազմատարր ու բազմալեզու բնակչությունն այնպիսի մարտիրոսագրություն էր կրել, այնքան էր տանջվել ու անարգվել, այնքան արյունոտվել, որ նրան նոր իշխանությունների հետ կապելու, վստահություն ներշնչելու, բոլորի մեջ միևնույն իրավահավասարության ոգին ամրապնդելու և մանավանդ հետադիմական ուժերը չեզոքացնելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից մեծ ունակություններ, հետևողականություն, անկեղծություն էին պահանջվում:

Որոշ քայլեր սահմանադրության նշած ուղիով. *– Հուլիսի 14-ին երիտթուրքերը հրատարակեցին հետևյալ պետական ծրագիրը, որի իրագործման համար նրանք նույնիսկ պատրաստ էին օգտագործելու զինված ուժերը. 1) Սահմանադրությամբ նշանակված ժամկետին գումարել պառլամենտ՝ բոլոր ազգությունների ներկայացուցիչներից, առանց կրոնի խտրության, 2) Զինվորական ծառայությունը հավասարապես պարտավորեցուցիչ համարել թե՛ մուսուլմանների, թե՛ քրիստոնյաների և թե՛ հրեաների համար, 3) Հնարավորություն ստեղծել, որպեսզի պետա-*

կան պաշտոնները վարեն թե՛ թուրքերը և թե՛ քրիստոնյաներն ու հրեաները:

Հեղափոխության հաղթանակից հետո՝ հին ռեժիմի մոլեռանդ կողմնակիցները, որոնք չէին ուզում ճանաչել սահմանադրությունը, մինչև վերջ սուլթանին հավատարիմ մնացած պետական ու զինվորական մի շարք խոշոր գործիչների գլխավորությամբ հակասահմանադրական շարժում սկսեցին: Այսպես՝ Մուսուլի և Դիարբեքիրի շրջաններում սկսված շարժման գլուխն էր անցել Դիարբեքիրի վալին, հակասահմանադրական խլրտումներ էին սկսվել 4-րդ զորաբանակում՝ հրամանատար Զեքի փաշայի գլխավորությամբ: Անկարգություններ էին տեղի ունենում Փոքր Ասիայի մի քանի քաղաքներում: Արաբները քանդել էին Հիջազի երկաթուղու առանձին հատվածներ: Էրզրումի վիլայեթում դերվիշները հավաքելով ժողովրդին՝ քարոզներ էին անում երիտթուրքերի դեմ: Անկարգություններ ծայր առան նավատորմում. նավատերերից շատերը նավաստիներին գրգռում էին, ասելով, որ, իբր, կառավարության որոշումով՝ Նիազիի և Էնվերի անունով երկու խոշոր ռազմանավերի կառուցման ծախսերը պետք է կատարվեն իրենց աշխատավարձերի կտրուկ կրճատման հաշվին:

Այդ սադրանքի հեղինակները քաջ գիտեին, որ նշված ռազմանավերի կառուցման նախաձեռնողը եղել է հենց ինքը՝ Աբդուլ Համիդը՝ իր նկատմամբ երկու երիտթուրք ղեկավարների համակրանքը շահելու համար:

Իթթիհադի կառավարությունը չէր կարող անտարբեր մնալ հին ռեժիմին հավատարիմ ուժերի գործողությունների նկատմամբ: ***Նա հեռացնում էր առանձին պաշտոնյաների և նրանց փոխարեն նորերը նշանակում:***

Բարձր պաշտոնյաների կազմում մի շարք փոփոխություններ կատարվեցին հեղափոխության հաղթանակից մի քանի օր անց՝ հուլիսի 18-ին, սուլթանի տված մի շարք հրամաններով: Հրաժարական տված կրթության նախարար Հաչիմ փաշայի պաշտոնին նշանակվեց Պետական խորհրդի օրենսդրական բաժնի անդամ Հակկը բեյը: Ադրիանուպոլսի վալի Զուվեր բեյը նշանակվեց ոստիկանության նախարար: Հրաժարական տվեց ֆինանս-

ների նախարար Զիա փաշան: 1895-1896 թթ. հայկական ընդ-հանուր կոտորածների կազմակերպիչներից՝ սուլթանի մտերիմ և Բարձր Դռան քարտուղար Իզզեթ փաշային հաջողվել էր փախչել, բայց ձերբակալվեց և բերվեց մայրաքաղաք: Սուլթանի իրադեով վերացվեց գաղտնի ոստիկանությունը: Հետագա օրե-րին Բուրսա աքսորվեցին Իզզեթ, Իսմայիլ և Քենան փաշաները:

Սակայն Կ. Պոլսի բնակչությունը բավարարված չէր այդ մասնակի փոփոխություններով: Հուլիսի 19-ին մայրաքաղաքում տեղի ունեցավ մի խոշոր հանրահավաք, որի ընթացքում ելույթ ունեցողները պահանջում էին հեռացնել անցանկալի բոլոր պաշտոնյաներին և նրանց բոլորին դատել հրապարակայնորեն: Ժողովուրդն անհամբեր սպասում էր նրանց դատաստանին, որովհետև համոզված էր, որ դրա արդյունքում դղրդալից նոր մերկացումներ կլինեն:

Թուրքական կոմիտեի տված հրահանգներով՝ հին ռեժիմի կողմնակիցները չարունակաբար ազատվում էին իրենց պաշ-տոններից:

Հուլիսի 19-ին սուլթանը հրատարակեց խաթթ-ի հումայուն, որով հաստատվում էին սահմանադրական ազատությունները և մեծ վեզիրին հանձնարարվում էր կազմել նոր դահլիճ, որի մեջ, բացի զինվորական և ծովային նախարարներից, որոնց անձամբ նշանակում էր սուլթանը, մնացածներին նշանակելու էր մեծ վեզիրը:

Հուլիսի 20-ին Աբդուլ Համիդը խաթթ-ի հումայուն տվեց **պետական քաղաքականության հիմնական ուղղությունների** մասին: Այնտեղ, նախ, հաստատագրված էր այն տեսակետը, թե «այժմ կայսրությունը հասունացել է սահմանադրական ռեժիմի համար և այսուհետև սահմանադրությունը երբեք չի խախտվի»: Ապա գալիս էին 15 հոդվածներ, որոնց մեջ հատկապես կա-ևորվում էր այն, որ սուլթանի բոլոր հպատակները վայելելու են անձնական ազատություն, ոչ ոք առանց օրինական հիմքի չի կարող քննության ենթարկվել, ձերբակալվել, բանտարկվել և պատժվել. թույլատրելի չէ արտակարգ դատարանների նշանա-կումը. յուրաքանչյուր մարդու բնակարանն անձեռնմխելի է. բոլոր հպատակները վայելում են տեղափոխության կատարյալ

ազատություն. մամուլը չի ենթարկվում կառավարության գրաքննությանը. փոստն իրավունք չունի բռնելու մասնավոր նամակներն ու լրագրերը. սահմանվում է ուսուցման ազատություն. պաշտոնյաները պարտավոր չէին հնազանդվել այնպիսի հրամանների, որոնք հակառակ են օրենքներին, և կարող են հրաժարական տալ, երբ ուզենան. մեծ վեզիրի առաջարկությունները պետք է սուլթանի հավանությունն ստանան: Ապա հրահանգ էր տրվում, թե պաշտոնյաները ինչպես պետք է տարվա սկզբին հրապարակեն իրենց եկամուտների և ծախսերի հաշիվը՝ լիակատար ծավալով: Գոյություն ունեցող օրենքները փոխելու համար անհրաժեշտ օրինագծերը պետք է ներկայացվեն առաջիկայում հրավիրվելիք պատգամավորական ժողովին: Զորքը պետք է արմատական վերակառուցման ենթարկվի[1]*:*

Մի քանի օր առաջ՝ հուլիսի 16-ին սուլթանը հրատարակել էր մի կարևոր իրադե, ըստ որի՝ Թուրքիայի բոլոր միջազգային հարաբերությունները Ելդրզ քեռչկից (սուլթանի պալատ) անցնում էին Բարձր Դռան (նախարարների խորհուրդ) ձեռքը: Այդ իրադեից հետո Բարձր Դուռը ոչ թե ձևականորեն գոյություն պիտի ունենար, այլ իրապես ղեկավարեր արտաքին հարաբերությունները և ընդհանրապես պետական գործերը:

Սուլթանական այդ իրադեի հրապարակումից անմիջապես հետո իթթիհադականներն սկսեցին մշակել ***նոր կառավարության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները:*** *Դրանցից առաջինը Եվրոպայի հետ նոր հարաբերություններ սկսելու սկզբունքն էր, որ 1908 թ. հուլիսի 16-ին Սալոնիկի Ազատության հրապարակում 15 հազար քաղաքացիների առջև ունեցած ելույթում ձևակերպել էր Էնվեր բեյը, ասելով. «Մեր երկիրը հինգ օրից ի վեր ազատություն է վայելում: Հինգ օրից ի վեր համակրություն են արտահայտում ու չնորհավորում են մեզ ո՛չ միայն հարյուր հազարավոր օսմանցիներ, այլև բովանդակ քաղաքակիրթ աշխարհը: Այս համակրությունները հատկապես*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 158, 23 հուլիսի 1908 թ.:*

ցույց են տալիս, թե ո՛ր աստիճան իրավացի էր մեր գործը, որի շնորհիվ պիտի փրկվի մեր երկիրը և պիտի առաջադիմի»: Նա հիշեցնում էր, որ նախկին ռեժիմն իրար թշնամացրել էր կայսրության ժողովուրդներին, որի հետևանքով ներքին գժտություններ էին առաջանում, և դա առիթ էր հանդիսանում երկրի ներքին գործերին եվրոպական պետությունների միջամտությանը: «Այժմ եկել է այդ միջամտությանը վերջ տալու ժամանակը: Այժմ ամենքս՝ հույն, սերբ, ռումին, հրեա և իսլամ, եղբայրներ ենք: Տերությունները ինչ որ ուզում էին իրականացած տեսնել մեր երկրի մեջ, մենք ինքներս դա արինք, առանց նրանց»[1]:

Հրաման եղավ փոխելու քրիստոնյաների և հրեաների համար վիրավորական ցուցատախտակները, փողոցների ու հրապարակների անվանումները: Օրինակ՝ օգոստոսի 19-ին պաշտոնապես փոխվեց Տրապիզոնի կենտրոնական հրապարակի՝ Գյավուր-մեյդանի (Անհավատի հրապարակ) անունը և վերանվանվեց Հուրրիեթ-մեյդանի (Ազատության հրապարակ):

Սուլթանն իրադեներ էր հրատարակում և հրամաններ արձակում ամենից առաջ ժողովրդի սիրտը գրավելու համար: Այդ նպատակով էր, որ նա պաշտոնազրկեց բոլոր խաֆիեներին (գաղտնի լրտեսներ), որոնց թիվը 5000-ից պակաս չէր: Նա հանրությանը տեղյակ պահեց նաև, որ իր անձի վրա կատարվող ծախսերը չափազանց կրճատել է. օրինակ՝ պալատի աշխատողներից արձակվեցին 800 հոգի:

Աբդուլ Համիդն իր հրամանագրերն ու իրադեները հրապարակում էր Իթթիհադի պարագլուխների համաձայնությամբ: Սուլթանը երախտագետ էր նրանց՝ իր նկատմամբ ցուցաբերած հանդուրժողականության և հովանավորության համար: Երիտթուրքերը ձգտում էին «հանուն առաջադիմության» աշխատել սուլթանի հետ միասնաբար, այսինքն՝ չէին ուզում լիովին տապալված տեսնել գոյություն ունեցող կառավարման հա-

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 83[1], թղթ. 4, վավ. 7:

մակարգը: Քանի որ այժմ, հեղափոխությունից հետո, սուլթանը գործում է իսլամի օրենքներից դուրս և սահմանադրության շրջանակներում, ասում էին նրանք, ուստի մեր նպատակն է աջակցել, որպեսզի նա պարտավորված լինի այդ օրենքները կիրառել ճշգրտությամբ: Միայն աստիճանաբար կարելի է ստեղծել ժողովրդավարական հասարակարգ, այլ ոչ թե սուլթանին պատժելու կամ նրան գահից զրկելու միջոցով[1]:

1908 թ. հուլիսի վերջին տասնօրյակի սկզբին Կ. Պոլսում իշխանությունը երիտթուրքերի Սալոնիկի կենտրոնական կոմիտեի ուղարկած պատգամավորության ձեռքին էր փաստորեն: Կոմիտեն այնքան չափավոր ու խոհեմ էր տանում գործը, որ հայ, թուրք, եվրոպացի՝ բոլորն էլ գոհ էին: Այդ օրերին սուլթանն ընդունել և իր մոտ հյուրասիրել էր Սալոնիկի կենտրոնական կոմիտեի երկու անդամների և զրույցի ժամանակ նույնիսկ հայտարարել, թե «ամբողջ ազգը» «Միություն և առաջադիմություն» ընկերության մասն է կազմում, ես էլ նրա նախագահն եմ»[2]:

Առաջիկայում տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունների համար առաջադրված թեկնածուների, իսկ դրանից հետո ընտրված պատգամավորների սիրտը չահելու նպատակով, սուլթանը խոստացավ խորհրդարանի նոր շենքի շինարարության համար իր միջոցներից մեծ հատկացումներ անել, չնայած արդեն հանձնարարել էր մակեդոնական բանակի ապստամբության պարագլուխներ Նիազի և Էնվեր բեյերի անվամբ ռազմական երկու նավերի պատրաստման համար ևս մեծ գումարներ տրամադրել[3]:

Հուլիսյան հեղաշրջման հետևանքով երկրում դառնալով դրության տերը, երիտթուրքերը ոչ միայն գահի վրա պահեցին Աբդուլ Համիդին, այլև թույլ տվեցին, որ նա նոր եպարքոս (վարչապետ) նշանակի: 1908 թ. հուլիսի 19-ի խաթթ-ի հումայունով՝ սուլթանը Մեհմեդ Քյամիլ բին Սալիհ փաշա-

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 83[1], թղթ. 4, վավ. 8:

[2] **«Արեւելք»**, № 6855, 23 հուլիսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 188, 28 օգոստոսի 1908 թ.:

յին հանձնարարեց նախարարների նոր խորհուրդ կազմել:

Եթե հուլիսի 19-ի խաթթ-ի հումայունը նախատեսում էր, որ զինվորական և ծովային նախարարները նշանակելու է սուլթանը, ապա հուլիսի 24-ին Աբդուլ Համիդը հայտարարեց, որ առաջին անգամ, առանց բացառության, բոլոր նախարարներին նշանակելու է մեծ վեզիրը. դրանով հերթական զիջումն էր արվում երիտթուրքերին: Քյամիլ փաշան մի շարք նոր նշանակումներ կատարեց, բայց նախկին նախարարներից շատերը մնացին իրենց պաշտոններում. Հասան Ֆեհմի փաշան մնում էր արդարադատության, Թևֆիք փաշան՝ արտաքին գործերի, Ռեշիդ Ակիֆ փաշան՝ ներքին, Ռեջեփ փաշան՝ զինվորական, Մեհմեդ Արիֆ փաշան՝ ծովային նախարար և այլն[1]: Հրաժարական տված, նախկին շեյխ-ուլ-իսլամը մնաց իր պաշտոնի վրա[2]:

Քյամիլ փաշայի դահլիճի մեջ մտցվեց նաև մի հույն՝ Մավրոկորդատո Էֆենդին՝ երկրագործության և լեռնային արդյունաբերության նախարարի պաշտոնով: Նոր դահլիճի մեջ մտավ նաև մի հայ պաշտոնյա՝ Գաբրիել Էֆենդի Նորատունկյանը, որը մինչ այդ վարում էր Բարձր Դռան իրավաբան-խորհրդատուի պաշտոնը, իսկ այժմ ստանում էր առևտրի և արդյունաբերության նախարարի աթոռը**: Նորատունկյանի նշանակումը ցույց

---

* Կիպրոսում 1832 թ. ծնված Քյամիլ փաշան դեռևս 1876 թ. Աբդուլ Համիդին խորհուրդ էր տվել համատարած հայկական կոտորած սկսել, որն այն ժամանակ տեղի չէր ունեցել, բայց հետագայում մեծ վեզիրի պաշտոնում սուլթանի ցուցումով ինքն էր կազմակերպել հայկական առաջին զանգվածային կոտորածները (1894-1896 թթ.): Այնուհետև, երբ հետագայում Թուրքիան գերմանական կողմնորոշում ընդունեց, Քյամիլ փաշան, որպես անվերապահ անգլիասեր, հրաժարվեց վարչապետությունից և քաշվեց ծննդավայր: Ստանալով երիտթուրքերի հավանությունը, Աբդուլ Համիդը նրան կանչեց Կիպրոսից և եպարքոս նշանակեց:

[1] Տե՛ս **«Արեւելք»,** № 6857, 25 հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»,** № 32, 8 օգոստոսի 1908 թ.:

** Նշենք, որ 1860-ական թթ. վերջերից այս նախարարության առաջին նախարարը եղել էր Գրիգոր Ադաթոնը, իսկ աբդուլհամիդյան տարիներին նախարարական պաշտոններ էին ունեցել երկու հայ՝ ելևմտական նախարար էր եղել Հակոբ փաշան, հասարակական աշխատանքների նախարար՝ Գրիգոր Օտյանը: Գաբրիել Նորատունկյանն, այդպիսով, վերջին կես դարում չորրորդ հայ նախարարն էր (տե՛ս **«Արեւելք»,** № 6857, 25 հուլիսի 1908 թ.):

էր տալիս, որ թուրքական ղեկավար շրջաններն այդ պահին հակված էին հայ տարրին ևս մասնակից անել երկրի վերաշինության գործին: Հայ նախարարը փայլուն ունակություններ էր դրսևորում: Շատ չանցած՝ նրա վրա դրվեց նաև ֆինանսները կարգի բերելու պարտականությունը: Առաջ անցնելով ասենք, որ Գ. Նորատունկյանի առաջարկով՝ ֆինանսների նախարարությունը ձեռնարկեց կայսրության ողջ դրամական համակարգի բարեփոխումը, որի հետևանքով արդեն 1908 թ. աշնանից բյուջեն մեծ խնայողություններ ունեցավ: Միայն 50 միլիոն ֆրանկի խնայողություն եղավ լրտեսների բանակը վերացնելու շնորհիվ: Ավելի ուշ՝ Նորատունկյանի շատ մոտ ընկեր, կրթության նախարար Հակկը բեյը, նրան խնդրեց արտահայտել իր տեսակետները դպրոցական գործի բարելավման ուղղությամբ: Նորատունկյանը նրան ներկայացրեց մի ծրագիր, որով դպրոցը լիովին պետք է դուրս գար կրոնների գաղափարական և վարչական ոլորտներից ու հետևեր կրթության եվրոպական համակարգին: Շատ չանցած՝ Հակկը բեյն ինքն էր սկսել քարոզել դպրոցների կատարյալ ազատության գաղափարը:

Երբ նոր դահլիճը Քյամիլ փաշայի գլխավորությամբ սուլթանին երդում էր տալիս հավատարիմ լինելու սահմանադրությանը, վերջինս ինքն էլ, հանդիսավոր ծիսակատարության ժամանակ, հրապարակավ երդվեց պահպանել սահմանադրական կարգը:

Մամուլը միաձայն ողջունեց նոր դահլիճը: Երիտթուրքերի կոմիտեն հրատարակեց մի կոչ, որով վստահություն էր հայտնում նախարարների դահլիճին և ժողովրդին կոչ էր անում հնազանդվել կառավարությանը[1]:

Նոր կառավարությունը շնորհավորանքներ էր ստանում արտասահմանյան երկրներից: Հատկապես գոհ էին Լոնդոնում, քանզի Քյամիլը հետևողական անգլիասեր էր: Էդուարդ VII թագավորը ջերմորեն ողջունեց Քյամիլ փաշայի վերադարձը մեծ քաղաքականություն, նաև հեռագրով շնորհավորեց Աբդուլ Համիդին՝ երկրում նոր ռեժիմի հաստատման կապակցությամբ, հատկապես չեշտելով, որ Քյամիլ փաշայի՝ կառավարության

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»,** № 32, 8 օգոստոսի 1908 թ.:

գլուխ անցնելը օսմանյան պետությանը բերելու է առաջադիմություն և բարգավաճում:

Երկրի ներքին կյանքի ժողովրդավարացման համար կարևոր էր որոշել, թե թուրքական և այլազգի քաղաքական ու հասարակական կազմակերպությունները նոր ռեժիմի պայմաններում **ինչպիսի՞ իրավունքներից են օգտվելու**, որո՞նք են լինելու նրանց գործունեության թույլատրելիության սահմանները, ոչ թուրքական ազգային կուսակցություններն ինչպե՞ս են կարողանալու օսմանյան հայրենիքի ընդհանուր պետական շահերը ամեն որոշակի դեպքում զուգակցել իրենց ազգային շահերին:

Ազատախոհության դրսևորումներ.- Հեղափոխությունից հետո եկած երեք-չորս ամիսներին որոշ աչխուժացում ապրեց այլազգիների թոչնած ու թառամած քաղաքական կյանքը: Կառավարության թույլտվությամբ, Կ. Պոլիսն իր դռները բացել էր դրսից ներխուժող հովերի առջև: Մարդիկ ելումուտ էին անում առանց մեծ արգելքների: Նրանք բոլորը հնարավորություն էին ստացել արտահայտելու իրենց մեջ կուտակած անկեղծ մղումները և պահանջում էին խենթության հասնող ազատություն:

Մինչև հեղափոխությունը Կ. Պոլիսը թուրքական իշխանությունների նստավայրն էր, կայսրության տնտեսական ու մշակութային խոչորագույն միջնաբերդը, նաև թուրքահայոց ազգային, մշակութային, եկեղեցական կյանքի կենտրոնը: Չնայած դրան, հայությունն այստեղ հազիվ էր կենդանության լուրջ ազդակներ տալիս:

Հեղափոխությունից հետո վիճակն արագորեն փոխվեց: Ռուսաստանում Հայ եկեղեցու կալվածքների բռնագրավումը, հայերի դեմ ծավալված հալածանքները չատ տկարացրել էին Էջմիածնի դիրքերը: Այդ խորապատկերների վրա երիտթուրքական հեղափոխության ընձեռած դյուրությունները կտրուկ բարձրացրել էին Կ. Պոլսի վարկը և հմայքը:

Նույն բանը կատարվեց հայ քաղաքական մտքի և հայկական կուսակցությունների քաղաքական գործունեության հետ: Եթե մինչև 1908 թ. հայկական հեղափոխական կազմակերպությունների աչխատանքի կենտրոնները գտնվում էին Թուրքահայաստանում և Անդրկովկասում, եթե Թիֆլիսը ռուսահայու-

թյան քաղաքական ու մշակութային կենտրոնն էր, ապա Կ. Պոլիսը հեղափոխական աշխատանքի տեսակետից համարվում էր գավառ, և նրա ազդեցությունը հայկական ազգային ազատագրական շարժման վրա չնչին էր: Բայց վիճակը կտրուկ փոխվեց 1908 թ. ամռանից սկսած: Բացի այն բանից, որ ոգի առավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, Իթթիհադի կառավարությունը հաջորդաբար օրինավոր հայտարարեց դաշնակցական, հնչակյան և արմենական կուսակցությունները, թեև վերջինս արդեն գոյություն չուներ և միայն նրա բեկորներն էին մնացել: Կազմվեցին նույնիսկ Թուրք և հայ խառն իթթիհադական կոմիտեներ՝ նոր կառավարության ամրապնդման և հեղափոխական սկզբունքների քարոզչության համար[1]: Հատկապես անկաշկանդ էր գործում ՀՅ դաշնակցությունը՝ «Պոլսոյ պատասխանատու մարմին» անվան տակ: Որոշ ժամանակ անց այս կառույցն իր գերադաս ազդեցությամբ ինչ-որ չափով ստվերի տակ առավ նույնիսկ կուսակցության Արևելյան և Արևմտյան բյուրոները, թեև սրանք վարչականորեն չարունակում էին պահել իրենց ղեկավար հանգամանքը կազմակերպության մեջ:

Նման ընթացք ունեցավ մտավորականությունը: Ստոլիպինյան հետադիմության հեղձուցիչ մթնոլորտի պատճառով Ռուսական կայսրության սահմաններից հեռացած բազմաթիվ հայ մտավորականներ հանգրվանեցին Կ. Պոլսում: Լեոն վկայում էր. «Սարսափ և հուսահատություն էր Կովկասի հայության մեջ: Իսկ սահմանից այն կողմ, Թուրքիայում, հանդարտություն և ազատություն էր: Դիրքերը փոխվել էին: Մինչև այդ Թուրքիայից հալածվածները Ռուսաստան էին փախչում, այժմ Ռուսաստանից խմբերով փախչում էին Թուրքիա և այնտեղ ապահովություն և պաշտպանություն էին գտնում: Կ. Պոլիսը լցված էր զանազան տեղերից գնացած հեղափոխականներով, ուսանողներով և այլն»[2]:

Ռուբեն Տեր-Մինասյանը գրում էր. «Դուրսէն հայ մտաւո-

---

[1] Տե՛ս **Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 93:

[2] **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 226-227:

բականներ խուժեցին Պոլիս՝ իրենց հետը բերելով նոր մտածելակերպ, նոր հասկացողութիւններ, որոնք բոլորովին հակառակ էին Պոլսոյ հայոց մտածելակերպին: Եկողներու մէջ կային ձիրքով ու պատրաստութեամբ հասուն երիտասարդներ եւ տարիքաւորներ, որոնց ձայնը հեռուէն լսած էին Պոլսոյ մէջ: Անոնց մէջ կային նաեւ ծնունդով կամ կրթութեամբ պոլսեցիներ, որոնք, սակայն, դուրսի մթնոլորտին մէջ ազատագրուած էին էֆէնտիական, ամիրայական եւ «հոսհոսական» հասկացողութիւններէն: Անոնք եկած էին խորտակելու հինը եւ տալու նորը»[1]:

Մեծ հավատ տածելով օսմանյան հեղափոխության նկատմամբ, Գր. Զոհրապն իր նամակներից մեկում գրում էր. «Պոլիս վերադարձած եմ երեք օրէ ի վեր միայն: Օսմ. սահմանադրութիւնը անխտիր կերպով վերահաստատուած է հոս, ամենակատարեալ ազատական regime-ի մը հետ ... Այս բոլորը անհաւատալի եւ ստոյգ է ... Մեր ազգին չահը կը պահանջէ որ օգտուինք ասկէ ու չի մերժենք այն ձեռքը որ մեզի կարկառ տուած է ... Ճշմարիտ եղբայրակցութիւն մը կայ ...»[2]:

Մայրաքաղաք եկան հայկական քաղաքական կազմակերպությունների բազմաթիվ հայտնի դեմքեր: Նրանցից էին տեղացի դաշնակցականներ Վռամյանը, Շանթը, Շահրիկյանը: Առաջինն իր հետ բերեց հրապարակախոսի անուրանալի ձիրքը, Շանթը՝ գրական ոլորտի իր փորձը, Շահրիկյանը՝ պատրիարքարանի ասպարեզի մեջ ունեցած հմտությունները: Մայրաքաղաքում հավաքվեցին նաև բուն Թուրքահայաստանի դաշնակցական ղեկավար ուժերը՝ Արմեն Գարոն, Վարդգեսը, Հրաչ Թիրյաքյանը, Ռուբեն Զարդարյանը, Արամ Մանուկյանը, Շավարշ Միսաքյանը, Գեղամ Բարսեղյանը, բանաստեղծներ Սիամանթոն, Վարուժանը և բազմաթիվ ուրիշներ, որոնք բերել էին իրենց գործնական աշխատանքի մեծ փորձառությունը: Պարսկաստանից, Կովկասից, Եվրոպայից եկել էին զենքի և գրչի նշանավոր գործիչներ Դումանը, Վարդանը, Խեչոն, Ռոստոմը, Զա-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 8 (283), 1949, էջ 63:*

[2] *ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. № 2175, թ. 1:*

վարյանը, Ահարոնյանը, Ակնունին, Խաժակը և ուրիշներ:

Մայրաքաղաքում էին հավաքվում նաև հնչակյան գործիչները՝ Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ), Ստեփան Սապահ-Գյուլյանը, Հարություն Ջանգյուլյանը, Մատթեոս Սարգսյանը (Փարամազ), Ռուբեն Խանազատը և ուրիշներ[1]:

Երիտթուրքերի՝ մայրաքաղաքում բոլորին դյուրություններ տալը ստեղծել էր կազդուրիչ մթնոլորտ, որը մեծապես նպաստում էր գոնե ժամանակավորապես հակասությունների մեղմացման և մակերեսին երևացող համերաշխության ստեղծմանը պոլսահայության մեջ: Ավելին, երբեմն տեղի էին ունենում «հաշտության» գործընթացներ միմյանց նկատմամբ բացահայտ թշնամանք տածող հայկական ազգային, քաղաքական երկու կազմակերպությունների՝ Հնչակի ու Դաշնակցության միջև: 1908 թ. սեպտեմբերի 11-ին իր մի ուրիշ բարեկամին գրած նամակում Գրիգոր Զոհրապը չեշտում էր, որ դաշնակցականների և հնչակյանների միավորումը «իմ ամէնէն ցանկալի փափագներէս մէկն է»[2]: Հեղափոխական պայքարից լիովին հրաժարվելը օրվա պահանջ է, եզրահանգում էր նա[3]:

Հնչակ-Դաշնակցություն մերձեցման երևույթը չափազանց դրական գնահատելով, Թիֆլիսում գտնվող Խանազատը «Երա՞զ թէ՞ իրականութիւն» հոդվածում գրում էր.

«Նկատում է եւ մի շատ ուրախալի երեւոյթ – այն է, որ «հնչակեանների» ու «դաշնակցականների» միջեւ եղած նախկին թշնամանքն ու անտագոնիզմը կարծես թէ արդէն վերացած է: Երեւի թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կուսակցութեան պատկանողները վերջապէս համոզուել են, որ իրենց ղեկավարների ստեղծած տասնեակ տարիների ամբողջ գործունէութիւնը միանգամայն սխալ հիմքերի վրայ էր դրուած եղել, հետեւապէս եւ չարժէ այդ հիմքերը պաշտպանել եւ նրանց համար միմեանց գլուխ կոտրել: «Կեցցէն երիտասարդ թուրքերը» – համերաշխ գոչում են այժմ

---

[1] Տե՛ս **«Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան. 1887-1962»**, հատ. Ա, Պէյրութ, 1962, էջ 316:

[2] ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի փոնդ, վավ. № 2175, թ. 1:

[3] Նույն տեղում:

թէ՛ հնչակեան եւ թէ՛ դաշնակցական պարզ զինուորները ու միմեանց հետ գրկախառնւում: Իսկ այնտեղ, Թուրքիայում, գրկախառնւում են ոչ միայն «հնչակեաններն» ու «դաշնակցականները», այլեւ հայն ու Թուրքը, մահմեդականն ու քրիստոնեան, որոնք աւանդաբար Թշնամիներ էին համարւում»[1]:

Սակայն Խանազատը չտապում էր. Հնչակի և Դաշնակցության միջև «սկսված» «հաշտության» գործընթացները, հազիվ երևակված, չուտով խամրելու էին, իսկ հայ և Թուրք «գրկախառնությունը» արագ անցնելու էր պատմության գիրկը:

Արդեն մեկ-երկու ամիս անց վիճակն սկսեց փոխվել: Ջիրականացան այն ակնկալությունները, Թե դրսից գալով Պոլիս, հայկական ազգային հեղափոխական կուսակցությունները, որոնք արտասահմանում միմյանց դեմ անզիջում քանդիչ պայքարներ էին մղում, վերջապես, Թուրքիայի փոփոխակող պայմաններում համատեղ ջանքերով, ազգի շահերի համար համերաշխաբար կգործեն նույն նպատակների ձգտումով: Արտասահմանում ունեցած մրցակցությունը կուսակցությունների հետ Պոլիս տեղափոխվեց և նոր բաժանումներ առաջ բերեց: Լուրջ ու հեղինակավոր անձինք փորձեցին համաձայնության եզրեր գտնել քաղաքական բոլոր ուժերի միջև, բայց դա հաջողություն չունեցավ: Որևէ արձագանք չունեցան նաև գալիք արհավիրքներին համատեղ դիմակայելու համար արտասահմանի հայկական մամուլի համերաշխության կոչերը: Հատկապես Դաշնակցությունը լսել անգամ չէր ուզում համերաշխության մասին: Կուսակցության ղեկավարների տրամադրությունների առավել ցայտուն արտահայտիչն էին նրա նշանավոր դեմքերից Ակնունու խոսքերը, որոնք նա արտաբերել էր Ղալաթիայի հայոց ազգային ժողովում, Թե «մենք չենք ուզում չփուել միւս հայկական քաղաքական ուժերի հետ», որովհետև «չենք ուզում պղտորուել»[2]:

Ի տարբերություն քաղաքական կազմակերպությունների,

---

[1] ***«Մշակ»,*** *№ 163, 29 հուլիսի 1908 Թ.:*

[2] ***Մանուկ Գ. Ճիզմէճեան,*** *Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, էջ 138:*

համազգային և տեղական հայկական հասարակական կազմակերպությունները երկար թմրանքից ու անգործությունից հետո աստիճանաբար ոտքի էին կանգնում, փորձում գործել համերաշխաբար: Եվ դրա արդյունքները նկատելի էին:

Օրինակ՝ Կ. Պոլսի հայ իմացական դասն ամեն ջանք գործ դրեց վերսկսելու նախկին Միացյալ ընկերության գործունեությունը:

Այդ ընկերությունն ստեղծվել էր երեք ընկերությունների (Արարատյան, Դպրոցասիրաց, Կիլիկյան) միավորումից, այն ժամանակ, երբ Թուրքիայում դեռ չէին սկսվել հայերի դեմ սանձազերծված հալածանքները: Նա իր առջև նպատակ էր դրել ուսում ու կրթություն տարածել Հայաստանի խորքերում և հաջողությամբ էր կատարում իր խնդիրը: Ընկերության բարգավաճմանը նպաստում էին Պոլսի հայ ամիրաները, ինչպես նաև հայ մեծատունները Կովկասից: Նրա գործունեությունը մշտապես գտնվել է կովկասահայ մամուլի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես Գրիգոր Արծրունին «Մշակի» էջերում բազմիցս հանդես էր գալիս հոդվածներով, Ռուսաստանի հայ հասարակությանը հորդորում մեծաքանակ դրամական նվիրատվություններ կատարել Միացյալ ընկերությանը, ինչը և արվում էր:

Բայց Աբդուլ Համիդի բռնակալ վարչակարգի օրոք ընկերության գործունեությունը դադարեցվել էր, որի պատճառով Թուրքահայաստանը երկար տարիների ընթացքում զրկված էր նրա բարիքներից:

Եվ ահա՛ այժմ Միացյալ ընկերությունը վերակենդանանում էր, և կառավարության թույլտվությամբ պատրաստվում էր չուտով կրկին գործունեություն ծավալել Հայաստանում: Նպատակը նույնն էր՝ Թուրքահայաստանի գավառներում բացել գյուղական ժողովրդական դպրոցներ, հաստատել ուսուցչանոցներ, դպրոցներին կից ստեղծել գյուղատնտեսական և արհեստագործական բաժանմունքներ, մի խոսքով՝ հոգ տանել հայ մատաղ սերնդի կրթության մասին՝ դպրոցական մեծ ցանցով պատելով երկիրը:

Առաջին միջոցառումներից էին նաև քաղաքական պատ-

ճառներով դատվածների՝ բանտերից ու աքսորավայրերից ազատման և զինված ուժերում բարենորոգումներ անցկացնելու մասին կառավարության ընդունած որոշումներն ու դրանց գործադրումը: Քանի որ այդ հարցերը հայության հետ առնչվում են անմիջականորեն, ուստի դրանց անդրադառնում ենք առանձին:

Քաղբանտարկյալների ներումը.– Երիտթուրքական հեղաշրջման հաջորդ օրն իսկ՝ 1908 թ. հուլիսի 12 (25)-ին, սուլթան Աբդուլ Համիդն ստիպված եղավ հրատարակել իրադե քաղաքական բանտարկյալներին ընդհանուր ներում չնորհելու, գրաքննության և գաղտնի ոստիկանության վերացման մասին[1]: Պետք է բացվեին բանտերի դռները և ազատ արձակվեին բոլոր քաղաքական բանտարկյալները՝ առանց ազգային և կրոնական խտրության, բոլոր նրանք, ովքեր պայքարել էին սուլթանական կարգերի դեմ և արգելափակվել զնդաններում:

Հուլիսի 12-ի կեսօրից հետո Կ. Պոլսում կայացավ մի բազմամարդ հանրահավաք, որին մասնակցում էին նաև մի քանի հազար թուրքեր: Հանրահավաքից հետո նրա մասնակիցները երաժշտությամբ և դրոշներով դիմեցին Բարձր Դուռը և մեծ վեզիրին ու մյուս նախարարներին հանձնեցին սուլթանի անունով գրած երախտագիտական ուղերձ:

Իրադեի հրատարակման օրն սպասվում էր, որ հենց հուլիսի 12-ի երեկոյան բոլոր քաղաքական բանտարկյալներին կտրվի ընդհանուր ներում: Բայց այդպես չեղավ: Միայն հուլիսի 15-ին Կ. Պոլսի բանտերից ազատ արձակվեցին 166 քաղբանտարկյալներ, որոնց թվում կային մի քանի հայեր: Հուլիսի 20-ին մայրաքաղաքի բանտերից արդեն ազատված էր 500-ի չափ քաղբանտարկյալ և շուրջ 1000 քրեական հանցագործ*:

Քաղբանտարկյալներին ազատելու և նրանց իրենց ընտանիքներ վերադարձնելու համար Կ. Պոլսում անցկացվեց հանգանակություն, որին մասնակցեցին տարբեր հարանվանություն-

---

[1] Տե՛ս **«Արեւելք»,** № 6847, 12 հուլիսի 1908 թ.:

* Շատ չանցած՝ բանտերից ազատված քրեական հանցագործներից շատերն, Իթթիհադի ղեկավարության պնդմամբ, նորից հայտնվեցին բանտի ճաղերի հետևում:

ների անհատներ: Օրինակ՝ հայ և թուրք քաղաքական բանտարկյալների օգտին գումարներ և նվերներ հավաքելու համար Ռիֆաթ փաշայի տիկնոջ գլխավորությամբ Գատրքեոյի արիստոկրատ թուրք տիկնայք ստեղծել էին մի հանձնախումբ: Այս մարդասեր թրքուհիները նույնիսկ ներկայացել էին սուլթան Աբդուլ Համիդին և օգնություն խնդրել: Վերջինս նրանց տրամադրել էր 500 ոսկի[1]: Նույն նպատակով, Իզմիրում Արտաշես էֆենդի Գարաֆելեկյանի նախաձեռնությամբ հավաքվել էր 3.248 դահեկան:

Բանտերից քաղբանտարկյալներին ազատելու և ազատության մեջ առաջին օրերին նրանց նվազագույն պահանջմունքները հոգալու համար հավաքված գումարները դրվում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տրամադրության տակ, ուր օգոստոսի սկզբներին արդեն հավաքվել էր 32.5 հազար դահեկան[2]:

Կայսրության բոլոր մասերում քաղաքական բանտարկյալների ազատումը համեմատաբար հարթ ընթացավ: Բացառություն էր, թերևս, Վասպուրականը: Այստեղ կուսակալի կարգադրությամբ անմիջապես ազատ էին արձակվել փոքրաթիվ բոլոր մուսուլման քաղաքական բանտարկյալները, ավելին՝ քաղաքականի անվան տակ բանտարգելությունից կաչառքներով ազատվել էին մեծ թվով քուրդ և թուրք վտանգավոր քրեական հանցագործներ: «Կեցցե՜ ազատությունը»,- գոչում էին մարդասպանները, գողերն ու կաչառակերները՝ լքելով բանտերը[3]: Օրերն անցնում էին, բայց կուսակալն ուշացնում էր բանտերից հայ քաղաքականների ազատումը[4]: Ավելին, առաջին օրերին նույնիսկ անմեղ կամ կասկածելի հայերի նոր բանտարկումներ կատարեց: Միայն այն բանից հետո, երբ քաղաքական որևէ բանտարկյալի բանտում չպահելու կտրուկ հրաման եկավ Պոլսից, կուսակալը հրաման տվեց բանտերում առժամանակ պահած՝ հայ քաղաքական բանտարկյալներին նույնպես ազատել[5]:

---

[1] Տե՛ս **«Աւետարեր»,** № 34, 22 օգոստոսի 1908, էջ 613:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)",** с. 199.

[4] Տե՛ս **«Արեւելք»,** № 6855, 23 Հուլիսի 1908 թ.:

[5] Տե՛ս **«Մշակ»,** № 177, 15 օգոստոսի 1908 թ.:

«Արձակուած են բոլոր քաղբանտարկեալները, որոնց թւում նաեւ վերջերս ձերբակալուածները»,- Թիֆլիսի «Զանգակ» թերթին հաղորդում էր Վանի նրա թղթակիցը:

Արդեն հուլիսի վերջին Արամը Վանից Լեռնապարում գտնվող Կոմսին նամակով հայտնում էր. «Բոլոր քաղաքական բանտարկեալները ազատուած են մեծ չուքով, երաժշտութեամբ եւ զինուորական պատիւներով առաջնորդուած են կուսակալի սերայը»[1]:

Ժողովուրդը՝ հայ թե թուրք, ցնծությամբ ընդունեց ազատության մեջ հայտնված հեղափոխականներին: Օրինակ՝ Արամը, որի պատիժը, ամենայն հավանականությամբ, մահն էր լինելու, իր ընկերների հետ Վանում հերոս հռչակվեց անմիջապես:

*Ոգևորվելով հայ քաղաքական բանտարկյալների ազատման փաստով, հետզհետե իրենց տներն էին վերադառնում տարիներ ի վեր լեռներում և անտառներում գտնվող **փախստականները**: Վերադառնալով, նրանք առաջին հերթին ներկայանում էին իշխանություններին:*

Բաղեշի կուսակալը Բարձր Դուռ ուղարկած տեղեկագրերից մեկում հին ռեժիմի հնացած ձևակերպումով գրել էր, թե ամեն օր լեռներից իջնում են էշքիաներ (ավազակներ) և հանձնվում ոստիկանությանը: Այդ առիթով Բոստոնի «Ազգը» գրում էր, որ փախստականները որևէ առնչություն չունեն ավազակության հետ, որ նրանք փախել են բռնության, ճնշումների, բանտարկության արհավիրքների ձեռքից և հիմա վերադառնում են վիճակը հանդարտած տեսնելով: «Եթէ աւազակներ էին անոնք, ինչո՞ւ կը դառնան հիմա»[2],- հարց էր տալիս թերթը:

*1908 թ. հուլիսի 12 (25)-ի իրադեով ներում էին ստանում նաև **աքսորյալները:***

Արդեն հաջորդ օրը, հուլիսի 13-ին, Թիֆլիսի թուրքաց հյուպատոսությունը Պետերբուրգի թուրք դեսպանից հեռագրով ստացավ մի հրահանգ, որով հայտնվում էր, թե բոլոր քաղաքա-

---

[1] ***Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 49:*

[2] ***«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:*

կան հանցավորներին ներում է չնորհված, և եթե նրանցից վերադառնալ ցանկացողներ կլինեն՝ անցագիր տալ:

Թուրքիայի տարագիրները հետզհետե Պոլիս էին ժամանում հաղթական փառքով: Մայրաքաղաքը մեծ խանդավառությամբ էր դիմավորում Աբդուլ Համիդի հալածած թուրք գործիչների վերադարձը: Հուլիսի 31-ին Կ. Պոլիս հասավ Ֆուադ փաշան, օգոստոսի 2-ին՝ Ռեջեփ փաշան, որոշ ուշացումով ժամանեցին Ահմեդ Ռիզա բեյը, ապա նաև՝ Միդհատ փաշայի որդի Ալի Հեյդար Միդհատը և ուրիշներ:

Հեղափոխության հաղթանակից հետո Աբդուլ Համիդի քրոջ որդի իշխան Մեհմեդ Սաբահէդդինը և նրա կազմակերպությունը՝ «Ապակենտրոնացման, անձնական նախաձեռնության և սահմանադրության լիգան», որը երիտթուրքական շարժման ձախակողմյան թևն էր, չէին շտապում հայրենիք վերադառնալ: Իշխանը դժգոհ էր, որ թեև օսմանյան ընդդիմադիր կուսակցությունների 1907 թ. դեկտեմբերյան համաժողովում որոշում էր ընդունվել գահընկեց անել սուլթանին, բայց հեղափոխությունից հետո դա տեղի չէր ունեցել: Նա ասում էր, որ սուլթանի նպատակն է միայն ժամանակավորապես գոհացում տալ հասարակական կարծիքին, ապա հարմար պահը ներկայանալիս՝ կրկին մտնել բռնապետի իր դերի մեջ: Սաբահէդդինը ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ Աբդուլ Համիդի կողմնակիցները թաքուն շարունակում են գործել սահմանադրության դեմ, ալբանական թիկնազորը նախկինի պես չրջապատած է Ելդզ քեռչկը և հավատարմորեն պաշտպանում է սուլթանին: Սաբահէդդինը զգուշացնում էր, որ 20 հազար հոգուց բաղկացած այդ թիկնազորը ամենամեծ վտանգն է սահմանադրության, ժողովրդի և զորքի համար: Նա չէր բացառում, որ առաջիկայում կարող է կռիվ բորբոքվել Իթթիհադի կողմնակիցների և սուլթանի հավատարիմ ուժերի միջև, որի հետևանքով կարող է կրկնվել 1877 թվականը, այսինքն՝ սահմանադրության վերացումը՝ շատ ավելի երկար ժամանակով:*

---

* *Սաբահէդդինի գլխավորած «Լիգայի» մասին տե՛ս "Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)", с. 202*

Ահա՛ նման տագնապներով էր Փարիզից մեկնել վաղուց (սկսած 1899 թ.) այնտեղ հիմնավորված Սաբահէդդին իշխանը, որը տարիներ շարունակ դեգերել էր արտասահմանյան հորիզոնների տակ՝ եռանդուն քարոզչություն մղելով սուլթանական ռեժիմի դեմ:

Իշխանն իր հետ «Պրինցեսա Մարիա» նավով Փարիզից բերում էր հոր՝ դամադ Մահմուդ փաշայի աճյունը:

Հանգուցյալը նախապես որդուն կտակել էր՝ իր չիրիմը Պոլիս չփոխադրել այնքան ժամանակ, քանի դեռ հայրենիքը հեծում է բռնության տակ:

Մայրաքաղաքից բազմաթիվ պատգամավորներ գնացին Դարդանել՝ Սաբահէդդինին ընդառաջ: Դրանց թվում էին նաև մի շարք հայկական պատվիրակություններ: ՀՅԴ Կ. Պոլսի կազմակերպության պատվիրակության մեջ էին դաշնակցականամետ նշանավոր մտավորականներ Գրիգոր Զոհրապը և բժիշկ Վահրամ Թորգոմյանը: Հայկական պատվիրակությունները իշխանին ընդառաջ էին գնում ինչպես օտարներից վարձակալած, այնպես էլ հայերին պատկանող չոգենավերով, որոնց թվում էին «Օսմանյան սահմանադրական ակումբի», վանեցիների, սամաթիացիների, մաքրիգյուղցիների չոգենավերը՝ չքեղազարդված դրոշներով ու պաստառներով[1]:

Եվ ահա՝ 30 տարին դեռ չլրացած, բայց քաղաքական խոշոր գործչի համբավ ունեցող Սաբահէդդինը օգոստոսի 21-ին ժամանեց Կ. Պոլսի նավահանգիստ: Նրան դիմավորելու համար «Պրինցեսա Մարիա» նավ էին բարձրացել կայսերազուն իշխաններ, Ֆուադ փաշան և զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան պաշտոնատարներ: Մայրաքաղաքի բնակչությունն իշխանին ընդունեց արտակարգ չուքով և հազվադեպ խանդավառությամբ:

Մեծ էր Սաբահէդդինի նկատմամբ համակրանքը թե՛ թուրքական շրջանակներում և թե՛, մանավանդ, կայսրության փոքր ազգությունների մեջ, որոնց ինքնուրույն զարգացման համոզ-

---

[1] *Տե՛ս* ***«Ազգ»****, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:*

ված կողմնակից և պաշտպան էր իշխանը: Նրա տեսակետով՝ Թուրքիան կարող էր բարգավաճել և իբրև ամբողջական պետություն զորանալ միայն այն դեպքում, եթե խարսխված լինի ապակենտրոն սկզբունքների վրա:

Նավահանգիստ ժամանելուն պես Սաբահէդդինին ներկայացան պոլսահայ նշանավոր գործիչներ՝ «Օսմանյան սահմանադրական ակումբի» ներկայացուցիչներ Հակոբ Եսայանը, Քերովբե Տամատյանը, հնչակյան կուսակցության պատվիրակներ Հարություն Ջանգյուլյանը, Ստեփան Սապահ-Գյուլյանը, Մեծն Մուրադը, վանեցի հայերին ներկայացնող խումբը՝ Ստեփան Էֆենդի Կուրտիկյանի գլխավորությամբ: Հակոբ Եսայանը Սաբահէդդինի հաղթական դարձի համար հայության անունից նրան բարի գալուստ մաղթեց: Ապա ներկայացան հնչակյանները, որոնց իշխանն ընդունեց շատ սիրալիր և, պատասխանելով նրանց բարիգալստյան խոսքերին, դիմեց Ջանգյուլյանին՝ ասելով. «Թոյլ տուէ՛ք սեղմել Ձեր սիրելի ձեռքը»[1]:

Այս հանդիպումների և ձեռքսեղմումների ժամանակ Սաբահէդդինը չնորհակալություն հայտնելով իրեն ցույց տրված պատվի համար, երբեմն չէր մոռանում չեշտել, որ ինքը իր հոր աճյունի առաջ երդվել է մինչև վերջ հավատարիմ մնալ ազատ հայրենիք կերտելու նրա դավանած գաղափարներին[2]:

Նավահանգստում տեղի ունեցած հանդիպմանը ներկա չէին ո՛չ իթթիհադականներ և ո՛չ էլ դաշնակցականներ. նրանց քաղաքական հայացքները չէին համընկնում Սաբահէդդինի հայացքներին:

Հայ աքսորյալ նշանավոր գործիչները ևս հնարավորություն ստացան երկիր վերադառնալու: Նրանցից էին Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանը, Գրիգոր Զոհրապը (որ ամիսներ ի վեր բնակվում էր Փարիզում), Մինաս Ջերազը, Հովհաննես Շահնազարը, Արշակ Զոպանյանը, Լևոն Բաչալյանը, Երվանդ Օտյանը, Ռուբեն Զարդարյանը, Մելքոն Գյուրջյանը, Լևոն Սեղբոսյանը (Շանթ),

---

[1] ***«Մշակ»,*** *№ 191, 31 օգոստոսի 1908 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Զանգակ»****, № 49, 3 սեպտեմբերի 1908 թ.:*

Դավիթ Խաչկոնցը, Գևորգ Սիմքեչյանը և շատ ուրիշներ[1]:

Հատկապես սրտառուչ էին հայոց նախկին պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանի վերադարձի տեսարանները: Ինչպես իշխան Սաբահէդդինին, այնպես էլ Իզմիրլյանին Կ. Պոլիսն ընդունեց բացառիկ ջերմությամբ՝ ինչպես ընդունում են մեծ պատերազմից հաղթական վերադարձողին[2]:

Խելագար բռնապետությունը Իզմիրլյանին Երուսաղեմ էր աքսորել իբրև ըմբոստ հեղափոխականի, թեև սա հեղափոխական չէր այդ բառի իսկական իմաստով և չէր կարող այդպիսին լինել իբրև հոգևորական: Նա ընդամենը մի պարզ բողոքող էր եղել՝ հակառակ իր դասի մարդկանց մեծ մասի սովորական թուլամորթության կամ ստորաքարշության, եղել էր տեր մի այնպիսի կամքի ու մի նկարագրի, որն Աբդուլ Համիդի բռնակալության համար աններելի հանցանք էր նկատվում: Այդքանը բավական էր, որ անսահման հպատակություն պահանջող բռնապետը նրան նայեր իբրև վտանգավոր հեղափոխականի և աքսորեր մայրաքաղաքից: Երկար տարիներ (չուրջ 12 տարի) Իզմիրլյանը տարագրված էր Երուսաղեմ և այնտեղ իր օրերն անցկացնում էր վանքում[3]:

Եվ ահա, նախկին պատրիարքն այժմ ազատ էր: Օգոստոսի 4-ին հանրային ցույցերով ուղևորվելով Երուսաղեմից, Իզմիրլյանը դուրս եկավ Միջերկրական և «Նիժեր» շոգենավով մեկնեց Կ. Պոլիս: Նրան ուղեկցում էին Մուշից Երուսաղեմ աքսորված Ներսես վարդապետ Խարախանյանը և նախկին պատրիարքին Երուսաղեմի միաբանության կողմից մինչև Պոլիս ճամփորդակից նշանակված Մեսրոպ վարդապետ Նշանյանը: Օգոստոսի 11-ին Իզմիրլյանը հասավ Իզմիր, օգոստոսի 13-ի առավոտյան՝ Չանաքկալե: Տասնյակ նավերով՝ զանազան ազգերի ներկայացուցիչներից կազմված պատգամավորություններ, այդ թվում թուրք կանանց մի մեծ պատվիրակություն, ընդառաջ էին գնացել այն նավին, որով Իզմիրլյանն էր գալիս: Հայ հասարակու-

---

[1] Տե՛ս **«Արեւելք»,** № 6847, 12 Հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **Լեո**, Անցյալից, էջ 219:

[3] Տե՛ս **«Արեւելք»,** № 6872 և № 6873, 12 և 13 օգոստոսի 1908 թ.:

թյան կողմից ՀՅ դաշնակցությանը տրամադրված նավի վրա, դաշնակցականների հետ նաև թուրքական կոմիտեների ներկայացուցիչներ էին: Վերջիններիս ստացած հանձնարարականն էր՝ նախկին պատրիարքին **պաշտոնապես** չնորհավորել՝ աքսորից վերադառնալու առթիվ[1]:

Օգոստոսի 13-ի երեկոյան չոգենավը մոտեցավ մայրաքաղաքի նավահանգստին: Հարյուր հազարանոց բազմություն էր հավաքվել նավամատույցի քարափներին[2]: Նավահանգստից մինչև պատրիարքարան ձգվող ճանապարհի երկու կողմերում հազարավոր հայեր, թուրքեր, այլազգիներ, երիտթուրք գործիչներ, զինվորներ, նավաստիներ ողջունում էին Իզմիրլյանին, նրան ընդունում որպես հանիրավի բռնադատված հերոսի:

Գում-Գափուի ս. Աստվածածին մայր եկեղեցում ընդունելությունը փառահեղ էր: Ծածանվում էին հեղափոխական դրոշներ: Իզմիրլյանը ճառ արտասանեց, չնորհակալություն հայտնեց հայ հեղափոխականներին և թուրք բանակին՝ նրանց ջանքերով ձեռք բերած հաղթանակի համար[3]:

Պոլսահայության բերանով ու գործողություններով, փաստորեն, թուրքահայ ժողովուրդն էր իր զավակին արքայական պատիվներ տալիս՝ իբրև վրեժ անարգ բռնակալից:

Այդ օրը և հետագա օրերին ինչպես հայկական, այնպես էլ թուրքական մամուլի բազմաթիվ օրգաններ ներբողներ տպագրեցին Իզմիրլյանի անձին և գործին[4]:

Հետագա օրերին ու շաբաթներին Իզմիրլյանը շարունակում էր մնալ մայրաքաղաքի հասարակայնության ուշադրության կենտրոնում: «Իզմիրլեան իր Իսկիւտարի բնակութեան մէջ կը մնար, պաշտելութեան հասած յարգանքներ կը վայելէր, ամէն կողմերէ այցելութիւններ եւ խնդակցութիւններ կը ստանար...»[5],- վկայում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը:

---

[1] Տե՛ս **«Զանգակ»,** № 35, 16 օգոստոսի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Աւետաբեր»,** № 35, 29 օգոստոսի 1908 թ.:

[3] Տե՛ս **«Զանգակ»,** № 35, 16 օգոստոսի 1908 թ.:

[4] Տե՛ս **«Արեւելք»,** № 6874, 14 օգոստոսի 1908 թ.:

[5] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001, էջ 5826:

Հայ գաղթականների մի մասի վերադարձը.- *Աբդուլհամիդյան բռնապետության հալածանքներից փրկվելու համար շատ հայորդիներ թողել էին իրենց երկիրը, տունն ու տեղը, իրենց սիրելիներին և դիմել կոստաբեր գաղթի՝ ցրվելով աշխարհի տարբեր մասերում: Ընդամենը 25-30 տարում դատարկվել ու ամայացել էին բազում հայաբնակ գավառներ, մարել էին անթիվ-անհամար օջախներ: Հայրենիքից երամներով դուրս խուժած հայորդիներն օտարության ու պանդխտության մեջ ստիպված էին տվայտել, հալումաշ լինել հայրենյաց սիրով ու կարոտով: Թե այդ տարագրությունը որքան թանկ նստեց հայությանը, թե հայրենիքից հեռացածներից քանի՞ քանիսն անհետ կորան գաղթի ճանապարհներին, նրանցից քանիսը տանջահար եղան ու մեռան բանտերում՝ որևէ մեկը չգիտեր:*

Միայն 1895-1896 թթ. կոտորածներից հետո Թուրքիայից արտասահման հեռացած հայերի թիվն անցնում էր 100.000-ից[1]: Նրանց մեծ մասը՝ 60 հազարից ավելի, անցել էր ռուսական սահմանը և հանգրվանել Բաթումում, Կարսում, Երևանում, Իգդիրում, Բաքվում, Թիֆլիսում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, հատկապես՝ Սև ծովի ափերին: Այստեղ Սուխումի-Նովոռոսիյսկ հատվածում հանգրվանել էին հիմնականում համշենցի հայեր: Պարսկաստանում ապաստան գտած թուրքահայ գաղթականները հիմնականում կենտրոնացել էին Թեհրանում, Իսֆահանում, Թավրիզում, Սալմաստում: Շատերը հեռացել էին Եգիպտոս և Լիբանան: Հազարավոր հայեր հանգրվանել էին Բուլղարիայում: Եվրոպական մյուս երկրներում հաստատված հայերի թիվն աննշան էր, բայց դրա փոխարեն, Ամերիկա մեկնածները տասնյակ հազարներով էին հաշվվում: Ամերիկա գաղթածների մեջ հատկապես մեծ թիվ էին կազմում երիտասարդները:

Վերադարձ դեպի հայրենիք – դա այն արգելված պտուղն էր եղել, որ տարիներ շարունակ իղձերի, տենչերի, բայց և մտատանջության առարկա էր պանդուխտ թուրքահայերի համար

---

[1] ***«Մշակ»****, № 156, 19 հուլիսի 1908 թ.:*

թե՛ Անդրկովկասում և թե՛ արտասահմանյան ուրիշ երկրներում:

Օսմանյան սահմանադրության վերահաստատումը կարծես հնարավորություն էր ստեղծում, որպեսզի գաղթականները վերադառնան իրենց հայրենի օջախները:

Հայրենյաց երկիրն է ամենից զորավոր հենարանը և հաստատուն կովանն ամեն ցեղի ու ազգի: Դրանից ելնելով է, որ վերակազմյալ հնչակյանների օրգանը գրում էր. «Քանի որ բարձած են այժմ արգելք եւ դժուարութիւնք, մեր առաջին հոգացողութիւնը պիտի ըլլայ այս չարեաց առաջն առնել եւ լնուլ երկիրը հայերու հոծ բազմութեամբ որով թէ՛ մէկ կողմէն մարած հայրենի օճախները կը չէննան, թէ՛ երկիրը առ հասարակ կը բարգաւաճի՝ կը հարստանայ եւ թէ՛ ժողովուրդը կ'աճի եւ կը զարգանայ»[1]:

«Հովիւ» թերթը չեչտում էր. պետք է օգտվել այդ եղակի առիթից և բոլոր միջոցների գործադրմամբ հասնել այն բանին, որպեսզի ջարդերի սարսափից ու սովից փրկվելու կամ տանը մնացած ընտանիքի անդամներին ապրուստի միջոց հայթայթելու նպատակով Թուրքահայաստանից և կայսրության տարբեր տեղերից ուրիշ երկրներ վաստակի մեկնած հայերը վերադառնան իրենց գյուղերը, «բազմացնեն հայութիւնը մայր երկրում»[2]:

Նույն թերթը իր մի ուրիշ համարում, «Վերադառնանք» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Այժմ հանգամանքները փոխուել են, հասել է ժամը եւ մենք առանց ժամանակ կորցնելու՝ պէտք է չտապենք չարան-չարան վերադառնալ մեր թշուառ, քարուքանդ եղած, սրի ու կրակի ճարակ դարձած աւերակ երկիրը:

Թո՛ղ մեզ չվհատեցնէ հայրենիքի այդ աւերակ դրութիւնն ու վիճակը, գնանք սիրով, նա քաղցր է, նա սրբազան երկիր է մեզ համար, այնտեղ են մեր սիրելիները: Այնտեղ են ապրել մեր նախնիքը – պապերը, այնտեղ են մեր սրբութիւնները, վանքերն

---

[1] **«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:

[2] **«Հովիւ»**, № 39, 19 հոկտեմբերի 1908 թ.:

ու եկեղեցիները, որոնց մէջ նրանք ուրախացել ու լացել են, այն-տեղ են մեր հարազատների չիրիմները: Հայրենիքի օդը, ջուրն ու հողը քաղցր է, նուիրական է մեզ համար, նա մեր նախնեաց քաջարի որդոց արիւնով է ներկուած:

Թո՛ղ մեզ չվհատեցնէ երբէք, երբ տեսնենք մեր Հայրենի երկրում ամէն ինչ տակն ու վրայ եղած, ամբողջ հարուստ քա-ղաքներ ու չէն գիւղեր քարուքանդ եղած, այրուած, մոխիր դար-ձած, մուխը մարած, հետքը հազիւ երեւալիս:

Իրաւ է, մենք չենք կարող սառն վերաբերուել եւ անտարբեր մնալ: Մեր սրտերից ակամայ դուրս կը թռչեն ահ ու հառա-չանք, մեր աչքերին կ'երեւան արտասուքներ, երբ մեր Հայրենի տունն ու օջախը քանդած, կալն ու մարագը աւերած կը տես-նենք, երբ մեր եկեղեցիներն ու վանքերը կողոպտած, անչքացած ու անպատուած տեսնենք ... բայց դարձեալ պէտք է արիանանք, սիրտ առնենք, թեւ տանք միմեանց եւ գարնան վերադարձած թռչունների նման մեր քանդած բները, տունն ու օջախը վերա-շինենք, նորոգենք:

Դէ՛հ, գաղթակա՛ն եղբայրներ, դէպի Հայրենի՛ք. թո՛ղ նորից ծխայ Հայրենի օջախը»[1]:

Համոզված, որ Թուրքիայից Ամերիկա գաղթած հայերը շատ շուտով վերադառնալու են իրենց Հայրենի օջախները, դաշնակ-ցության օրգան «Զանգակը» (Թիֆլիս) գրում էր.

«Եթէ ասկէ առաջ հայ գաղթականներու կարաւանը դէպի Ամերիկա կու գար շարան-շարան, հիմա ալ դէպի Հայրենիք պիտի ուղղուի: Երկրի եւ Հայրենիքի կարօտութեան ծարաւի երիտասարդները վաղը կամ միւս օր ճանապարհ կ'իյնան: Մէկ քանի հայեր արդէն ճամբայ ելած են. շատ-շատեր կան, որոնք կը պատրաստին ի մօտոյ մեկնիլ. աւելի խոշոր մասը գարնան հա-մար կը պատրաստի. կայ մաս մը ալ, որ կը սպասէ տակաւին աւելի ստոյգ եւ մանրամասն տեղեկութիւններ առնելու»[2]:

1908 թ. օգոստոսի սկզբին Նյու Յորքի թուրքական հյուպա-

---

[1] ***«Հովիւ»**, № 28, 3 օգոստոսի 1908 թ.:*

[2] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 4¹, վավ. 9 («Զանգակի» կտրոն՝ առանց ամսաթվի):*

տոս Մյունաջջի բեյը հայտարարել էր, որ ինքն ստացել է մի պաշտոնական հեռագիր, որում ասված է. «Սահմանադրութիւնը տրուելէն ետք սուլթանը, կառավարութեան խնդրանքին վրայ, ընդհանուր ներում չնորհած է Թուրքիայի բոլոր փախստական քաղաքացիներուն, առանց ցեղի կամ ազգային խտրութեան, որոնք կրնան վերադառնալ Թուրքիա»: Ելնելով դրանից, նույն հյուպատոսը մասնավոր նամակներով դիմել էր Նյու Յորքի հայկական հեղափոխական կազմակերպություններին և հորդորել Թուրքիայի դեմ ճակատ հարդարելու փոխարեն նպաստել նրա առաջադիմությանը: Մյունաջջի բեյն իր նամակներն եզրափակել էր հետևյալ կոչով. «Մոռնա՞նք անցեալի արիւնահեղութիւնները եւ սիրով ու եղբայրաբար Թուրքիայի լաւ ապագայի մասին մտածենք»[1]:

Օտարները նույնպես խորապես համոզված էին, որ սահմանադրական կարգերի պայմաններում բոլոր հայերի համատեղ ջանքերով Թուրքահայաստանը շատ շուտով ոտքի է կանգնելու: «Բազմաչարչար հայերն իրենց ապրած բոլոր սարսափները մոռացության տալով, լծվեցին Փոքր Ասիայում սահմանադրական կարգերի վերականգնմանը»[2],- 1908 թ. սեպտեմբերին գրում էր այդ ժամանակ Կ. Պոլսում գտնվող ռուս թուրքագետ Ա. Կաուֆմանը:

Նրանց մեծագույն մասը չէր կտրել իր կապերը ծննդավայրից, և թեև դժվարությամբ ու զրկանքներով, այնուամենայնիվ, կարողացել էր հարաբերություններ պահել այն օջախի հետ, որը նրան կյանք էր տվել:

Սուլթանական իրադեի մասին լուր ստացած հայ գաղթականներն առաջին պահին չէին հավատում դրա իսկությանը: Բոլորը միմյանց հարց էին տալիս. իսկապե՞ս կարող ենք առանց արգելքի, ազատորեն վերադառնալ հայրենիք, առաջվա պես հերկել ու ցանել մեր դաշտերը, մշակել ու հնձել արտերը, ազատ երթևեկել մի գյուղից մյուսը, մի քաղաքից մյուսը:

Երբ սահմանադրության վերականգնման և դրա հիման վրա

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[2], թղթ. 4[1], վավ. 13:

[2] **"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)"**, с. 224.

գաղթականների հայրենիք վերադառնալու թույլտվության մասին հայտնի եղավ Անդրկովկասում, այստեղ ապաստանած թուրքահայերին թվում էր, թե հաջորդ օրն իսկ վերացվելու են տունդարձի ճանապարհի բոլոր արգելքները: Բայց այդպես չեղավ. արդեն անցել էր բավական ժամանակ, իսկ սահմանը հատելու դյուրություններ դեռ չէին ստեղծվել:

Դրա պատճառն այն էր, որ գաղթականների վերադարձի խնդիրը հենց սկզբից մի չարք անլուծելի թնջուկներ առաջ բերեց: Օրինակ՝ նրանց մեջ կային 10-12 տարի և 2-3 տարի առաջ գաղթածներ: Ոմանք գաղթել էին ընտանիքներով, ուրիշները հարազատներին թողնելով երկրում՝ արտասահման էին անցել միայնակ: Մի մասը գնացել էր կուսակցությունների հրահանգով՝ հանձնարարականներ կատարելու: Բայց բացարձակ մեծամասնությունն այլ երկրներ էր հեռացել ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով: Քանի որ վերջիններս հիմնականում Թուրքիայի սահմանները հատել էին առանց պաշտոնական թույլտվության, այդ իսկ պատճառով փախստականներ էին համարվում: Այդ էր պատճառը, որ իրենց կանանց ու երեխաների հետ ներգաղթել ցանկացողներից շատերը մերժում էին ստանում և սահմանից վերադարձվում իրենց նոր բնակության տեղերը:

Սեպտեմբերի սկզբներին ազդարարված սուլթանական իրադեով տունդարձի ճանապարհները վերջապես բացվեցին: Հայ գաղթականներին հայրենիք վերադառնալու իրավունք տրվեց: Թուրքական կառավարությունը խոստացել էր վերադարձողներին հող տալ, տուն հատկացնել և ապրելու պիտույքներ հայթայթել: Միաժամանակ, հայրենիք վերադառնալու հետ կապված ծախսերը հոգալու համար, Բարձր Դուռը Կ. Պոլսի հայոց ազգային պատրիարքարանին 2000 օսմանյան ոսկի էր հատկացրել[1]:

1908 թ. սեպտեմբերի 8-ին Վրաստանի թեմի առաջնորդ Գարեգին արք. Սաթունյանը Վանի առաջնորդական տեղապահ

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 33:

Զավեն ծ. վրդ. Տեր-Եղիայանից ստացավ հետևյալ հեռագիրը. «Թուրքական կառավարութիւնն սկսեց Արճեշի, Ալջավազի, Աղբակի եւ այլ տեղերի հայոց գրաւած կալուածքները վերադարձնել: Փութացէ՛ք ճամփայ հանել գաղթականներին»[1]:

Նույն օրը Վանի առաջնորդական տեղապահը մի ուրիշ հեռագիր հղեց Թիֆլիս՝ Թուրքահայոց գաղթականական հանձնաժողովին, ուր ասված էր. «Կառավարութիւնը սկսել է բռնաւորների ձեռքից առնել գրաւած հողերը եւ վերադարձնել իրենց տէրերին, ուստի խնդրում են անմիջապէս ճամբայ հանել Վանի նահանգի բոլոր գաղթականներին, որպէսզի նախքան ձմեռը կարողանան հասնել իրենց տները եւ տեղաւորուել»:

Հեռագրում նշված էր նաև. բոլոր գաղթականները կարող են վստահ լինել, որ իրենց կտրվի ամեն ապահովություն՝ հայրենի երկրում ազատ ապրելու ու գործելու համար, և որ այդ հիմնական նպատակադրումով է պայմանավորված կառավարության հրամանով Հուսեյն և Էմին փաշաների ժամանումը Վան, որպեսզի օգնեն հետ առնելու հայերից բռնագրված հողերը: Տեղի կառավարությունը, այնուհետև ասված էր հեռագրում, Հուսեյն փաշայի հրամանատարությամբ մի գունդ զորք է ուղարկել Ալջավազ գրված գյուղերից քրդերին հանելու համար: Այդ տեղեկությանը Զավեն վարդապետը հավելում էր. «Արդէն Վերին Սիփան, Կոճերեր, Գիւղել, Բարկաթ, Խոռանց, Առէն, Առնչկուս, Արճրա գիւղերի մէջ ոչ մի քիւրդ չէ մնացել»[2]:

Անդրկովկասի հայկական մամուլն ամենայն մանրամասնությամբ քննության էր առնում գաղթականներին հայրենիք ճամփելու հետ կապված խնդիրները, հայ հասարակությանը հիշեցնում, որ Թիֆլիսում վաղուց ի վեր գործող Թուրքահայ գաղթականների բարեգործական կազմակերպության ուժերից վեր է ձեռնարկել ու հաջողությամբ ավարտին հասցնել սկսվող կարևորագույն աշխատանքը:

Հայրենիք վերադառնալը ոչ քիչ դժվարությունների հետ էր կապված: Գաղթականների մեջ, իհարկե, կային նյութապես

---

[1] ***«Մշակ»**, № 199, 11 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, № 208, 23 սեպտեմբերի 1908 թ.:*

ապահով մարդիկ, որոնց համար դժվար չէր իրենց ճանապարհի ծախսը հոգալ, բայց անհամեմատ մեծ էր նրանց թիվը, ովքեր իրենց բաղձանքը պետք է իրականացնեին զրկանքներով դրամ տնտեսելով կամ ուրիշներից նպաստ ստանալով: Թուրքահայերի՝ իրենց հայրենիք վերադառնալու հարցի լուծումը տվյալ պահին համարելով կովկասահայերի գլխավոր խնդիրը, մամուլն առաջարկում էր Թիֆլիսում կազմակերպել հայրենիք վերադարձողներին աջակցող հատուկ մարմին:

Այդ մարմնի ստեղծման գործի նախաձեռնությունն իր վրա վերցրեց Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը (ԿՀԲԸԽ): Կազմվեց **Հատուկ հանձնախումբ**, որի մեջ մտան ընկերության խորհրդի մի շարք անդամներ, ինչպես նաև հրավիրված ձեռնհաս անձինք:

Հանձնախմբի տրամադրության տակ անհրաժեշտ գումար դնելու համար՝ խորհուրդը տարբեր տեղերում կազմակերպում էր դրամահավաք, ինչպես նաև նրան աջակցելու նպատակով դիմում էր ազգային կազմակերպություններին: Միայն Թիֆլիսի նպաստամատույց հանձնաժողովը, խորհրդի խնդրանքով, հատուկ հանձնախմբի տրամադրության տակ դրեց 5000 ռուբլի:

Բարեգործական ընկերության խորհուրդը, Թիֆլիսից դիմելով գաղթականների գլխավոր կենտրոնավայրերում (Կարս, Երևան, Իգդիր, Բաթում) գործող իր մասնաճյուղերին, խնդրեց անհապաղ գործի անցնել և միջոցներ ձեռնարկել օրվա լուրջ պահանջին ընդառաջ գնալու համար, օգնության փութալ թուրքահայ եղբայրներին այնպիսի եռանդով ու պատասխանատվությամբ, ինչպես անում է Հատուկ հանձնախումբը:

Վերջինս իր գրասենյակում մանրամասն ցուցակագրում էր իրեն դիմող գաղթականներին և հոգում նրանց համար Թիֆլիսի թուրքական հյուպատոսությունից ձեռք բերելու անցաթղթեր, ուր վկայված էր տվյալ անձի թուրքահպատակ լինելը: Հյուպատոս Ֆեզի բեյն ամեն կերպ օգնում էր հատուկ հանձնախմբին՝ նրա ձեռնարկած գործն առաջ մղելու համար:

Հատուկ հանձնախումբը և Թիֆլիսի թուրքական հյուպատոսությունը համատեղ ճշտում էին գաղթականների մեկնելու ժամկետները: Նրանց մեծ մասը ձգտում էր որքան կարելի է

չուտ ոտք դնել հայրենի հողի վրա, բայց քիչ չէր նրանց թիվը, ովքեր երկար տարիներ գտնվելով Անդրկովկասում, ձեռք էին գարկել զանազան տնտեսական ձեռնարկումների: Ուստի այս մարդկանց համար ժամանակ էր պետք, մինչև որ կարողանային հաշվեհարդարի ենթարկել իրենց գործերը, որից հետո միայն բռնեին տունդարձի ճանապարհը:

Պետք է նկատել, որ հայրենիք վերադարձողների համար խոչընդոտներն ու ծախսերն այնքան էլ մեծ չէին: Ռուսական կայսրությունից Թուրքիա մեկնելը (հաշված Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսից մինչև ռուս-թուրքական սահմանը) մեկ անձի վրա նստում էր ընդամենը 2 ռուբլի 50 կոպեկ, իսկ մնացած ամբողջ ծախսը լրացնում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը: Եթե անձը հայրենիք էր վերադառնում ամբողջ ընտանիքով, անկախ ընտանիքի անդամների թվից, միևնույնն է՝ մուծում էր նույն 2 ռ. 50 կ. գումարը, իսկ տարբերությունը դարձյալ լրացնում էր ՀԿԲԸ խորհուրդը:

Հայրենիք գնացողներին հատուկ հանձնախումբն ուղարկում էր գնացքով, խումբ առ խումբ, իր նշանակած մարդկանց ուղեկցությամբ: Սրանք գաղթականներին հասցնում էին մինչև առաջին գլխավոր կենտրոնատեղին, որտեղ գործում էր բարեգործական ընկերության մասնաճյուղը: Նշանակված անձինք գաղթականներին առաջնորդում էին մինչև սահմանագլուխ, որտեղ նրանց ընդունում էին թուրքական կողմի պատասխանատուները և նրանց ուղարկում Թուրքահայաստանի զանազան վայրեր: Իրենց բնակավայրեր հասածները հանձնվում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից տեղերում նշանակված մարմինների խնամքին:

Հատկապես մեծ եռանդով աշխատում էր ԿՀԲԸԽ Կարսի մասնաճյուղը, որը տեղում ստեղծված հանձնախմբի հետ, միայն 1908 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հայրենիք վերադարձրեց 2800 հոգու:

Հյուսիսային Կովկասից և Սև ծովի ափերից, ինչպես նաև

---

* *Այդ կարգը տևեց մինչև 1911 թ. հոկտեմբերը:*

Եգիպտոսից, Ռումինիայից, Բուլղարիայից, Ամերիկայից թուրքահայերը հայրենիք էին վերադառնում չոգենավերով: Օրինակ՝ սեպտեմբերի 29-ին Ալեքսանդր Մանթաշյանի «Բորժոմ» չոգենավով Բաթումից երկիր ուղևորվեցին 200-ից ավելի թուրքահայեր՝ ծեր թե երիտասարդ, այր թե կին: Նույնքան գաղթականներ էլ, որոնք հավաքվել էին ծովեզերքին՝ հայրենակիցներին ճանապարհելու համար, վերջին նախապատրաստություններն արդեն տեսել էին և սպասում էին իրենց հերթին՝ վաղը կամ մյուս օրն ուրիշ նավով վերադառնալու հայրենիք[1]:

Կ. Պոլիս հասնելով՝ գաղթականները ժամանակավորապես իջևանում էին Ղալաթիայի ս. Ամենափրկիչ եկեղեցու շրջաբակում, որը հարմարեցվել էր գաղթականներին ընդունելու համար: Գաղթականներին Կ. Պոլսում ընդունելու և նրանց կարիքները ժամանակավորապես հոգալու գործը հանձնարարված էր պատրիարքական տեղապահ Եղիշե եպս. Դուրյանի հորեղբորորդուն՝ Ղևոնդ վրդ. Դուրյանին, որն իր ձեռքով բաշխում էր դրամական միջոցները:

Արտասահմանից Պոլիս հասած հայերի թիվը երեք շաբաթվա ընթացքում անցել էր 1000-ից, իսկ նրանց բաշխված գումարը 700 ոսկուց ավելի էր[2]:

Պոլսեցի գաղթականները՝ խասգյուղցի, սամաթիացի, սկյուտարցի և այլք, մեկ-երկու օրվա համար ստանում էին օրապահիկի ծախսը, մինչև որ կմեկնեին իրենց թաղերը: Բայց Պոլիս ժամանած գաղթականության մեծ մասը անհապաղ իր ծննդավայրը ճանապարհ ընկնելու փափագ էր հայտնում: Պատրիարքարանը, հարազատ օջախներ մեկնել ցանկացող յուրաքանչյուր ընտանիքին դրամական նպաստներ տալուց զատ, նրանց ուղևորությունը դյուրացնելու համար, նախապես դիմել էր չոգենավային ընկերություններին՝ խնդրելով գաղթականներին թողնել բարձրանալ նավը՝ տոմսակի կես գինը վերցնելով, և մարդիկ ընդառաջել էին: Իր հերթին, Ղալաթիայում գործող խնամակալությունը մի քանի օր Պոլսում ստիպված մնացողներին տալիս

---

[1] Տե՛ս **«Մշակ»**, № 216, 2 հոկտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 65, 12 սեպտեմբերի 1908 թ.:

էր հարկ եղած դյուրություններ, այդ թվում՝ ժամանակավոր կացարաններ: Գաղթականների մեջ կային նաև հիվանդներ, որոնց խնամքը և բուժման ծախսերը նույնպես իր վրա էր վերցրել պատրիարքարանը: Հուզիչ էր բոլոր գաղթականների ընդհանուր մտածումը, երբ մի պահ մոռանալով աբդուլհամիդյան օրերին իրենց կրած տանջանքները և կարծելով, թե օսմանյան սահմանադրությամբ իրենց համար արդեն բացվել է երջանկության դուռը, ասում էին. «Թուրքիոյ մէջ մենք մեր ցամաք հացովը ինքզինքնիս աւելի երջանիկ կը զգայինք, քան թէ պանդխտութեան մէջ մեր ուտելիք կարկանդակովը: Հոս մեր տառապանքը մեծ երջանկութիւն էր, մինչդեռ օտարութեան մէջ երեւակայած երջանկութիւնը տառապանք եղաւ»[1]:

Պարսկաստան անցած հայ փախստականներին Թուրքիայի իրենց բնակավայրերը վերադարձնելու ուղղությամբ եռանդուն աշխատանք էին կատարում պարսկահայ կազմակերպությունները ու անհատները:

«Յոյս ունենք,- գրում էր պարսկահայ գործիչներից մեկը,- որ ի սփիւռս աշխարհի ցրուած մեր պաշտելի հայրենիքի զաւակները կշտապեն մի օր առաջ վերադառնալ իրենց աւերակ դարձած, բայց սիրելի, հայրենիքը եւ այնտեղ իրենց բոլոր նիւթական, մտաւոր ու ֆիզիկական ոյժերը ի գործ կդնեն կարճ ժամանակում վերականգնելու քարուքանդ եղած ու մոռացուած հայրենիքը, հայութեան ընկած եւ ոտնակոխ եղած պատիւը, որով քաղաքակրթուած աշխարհին ցոյց տուած կլինեն, որ իրենք էլ օժտուած են ամէն տեսակ բարեմասնութիւններով եւ իրաւունք ունեն ապրելու իրենց հայրենիքում՝ մարդկային բոլոր անբռնաբարելի օրէնքներով»[2]:

Հայրենիք վերադարձողների օգտին Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդ Բագրատ վրդ. Վարդազարյանցի նախաձեռնությամբ 1908 թ. օգոստոսին Նոր Ջուղայում բացվեց հանգանակություն. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին

---

[1] **«Զանգակ»**, № 41, 24 օգոստոսի 1908 թ.:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85. թղթ. 4, թ. 3:

հավաքվեց այնքան գումար, որը բավական էր հոգալու չուրջ 1500 հոգու ճանապարհի ծախսը: Առաջնորդարանի միջոցով և տեղի դաշնակցական ու հնչակյան կազմակերպությունների ձեռնարկմամբ, Թավրիզում, Թեհրանում, Պարսկաստանի հայաբնակ մյուս բոլոր վայրերում կազմակերպվում էին դաշտահանդեսներ, անցկացվում էին վիճակախաղեր և այլ միջոցառումներ:

Եգիպտոսում կուտակվել էին մեծ թվով փախստական հայեր, որոնց համարյա բոլորը տենչում էին վերադառնալ իրենց երկիրը: Հուլիսի վերջերից նրանք միայնակ կամ խումբ-խումբ սկսեցին մեկնել Թուրքիայի իրենց բնակության վայրերը: Թշվառ վիճակում հայտնված 800-ի չափ գաղթականներ օգոստոսի կեսերին նավով Ալեքսանդրիայից ճանապարհ ընկան Կ. Պոլիս, որտեղից հայրենի բնակավայրեր վերադարձողների նավարկության ու սննդի ողջ ծախսը տրամադրում էր Պողոս Նուբար փաշան[1]:

Թուրքահայաստան էին վերադառնում նաև այնտեղից Օսմանյան կայսրության ուրիշ նահանգներ մեկնած ու հաստատված հայորդիներից չատերը: Նրանք գալիս էին խմբեր կազմած, իրենց հետ առած ծեր ու մանուկներ, հյուծված հիվանդներ, հարս ու աղջիկներ, որպես «ունեցվածք» իրենց հետ բերելով անպետք կապոցները: Գալիս էին՝ արհամարհելով արգելք ու մերժում, մոռացած կսկիծ ու դառը հալածանք: Իսկ հոգնած ծերերը մրմնջում էին. «Եթե մեռնենք, գոնե կննջենք մեր պապերի հետ, մեր հողում»:

Հայաստանի խորքերում գյուղացիներից չատերը տեղյակ չլինելով, որ իրենց համագյուղացի գաղթականները վերադառնում են, շարունակում էին լքել հարազատ վայրերը:

Թիֆլիսի թերթերից մեկը տպագրել էր Վանում իր սեփական թղթակցի գրությունը, ուր ասված էր, որ քաղաքի մերձակա գյուղերից գաղթող մի խումբ հայեր ճանապարհին հանդիպելով Կովկասից վերադարձող գաղթականների, «մնացել էին չուարած»: «Յաճախ պատահում է,- նշում էր թղթակիցը,- որ

[1] Տե՛ս **«Աւետաբեր»**, № 34, օգոստոս, 1909, էջ 613:

երկաթուղու կայարաններում միմեանց հանդիպում են երկու խմբեր՝ մէկը Կովկասից դառնալիս, իսկ միւսը Երկրից Բագու եւ Բաթում գնալիս: Երբ վերջիններին հաղորդում են Թիւրքիայի սահմանադրութեան լուրը, նրանք, որ տակաւին անտեղեակ են, «դէ՛, քելէ՛ք» ասելով յետ են դառնում ու նորից բռնում իրենց գիւղերի ճամփան...»[1]:

Վերադարձողները համերկրացիների ջերմ ընդունելութիւնն էին արժանանում: Նոյն թերթը տեղեկացնում էր. «Բայազետում երեք օր առաջ լուր է հասնում, որ 60 գաղթականներ են գալիս: Իսկոյն խանութները փակում են, մէկ-մէկի ձայն են տալիս՝ «գաղթական կու գայ, գաղթական եկաւ» ու հաց ու կապոց պատրաստած՝ չտապում են լեռ, քար, ձոր բռնում ու դիմաւորում դարիպ-դուրբաթ գաղթականին, մէկ-մէկից խլում հիւրին եւ տանում հիւրասիրութեան»[2]:

Չնայած ամեն դժվարութիւնների, 1908 թ. հայրենիք վերադարձած հայ տարագիրների թիվը հասավ 60 հազարի: Թուրքահայաստան վերադարձածների մեծ մասը Կովկասից էր: Այստեղից միայն Կարինի, Բաղեշի և Վանի նահանգներ վերադարձան չուրջ 50 հազար գաղթականներ՝ իրենց քանդված օջախները վերաշինելու: Նրանք իրենց հետ բավականաչափ դրամ և լծկաններ բերեցին[3]:

Սակայն 1908 թ. առաջին ամիսների ոգևորությունը նոյեմբեր-դեկտեմբերից աստիճանաբար սկսեց թուլանալ: Թուրքահայաստանից լուրեր էին հասնում արտասահմանի հայ գաղթօջախներ, որ երիտթուրքական կառավարությունը չի կարողանում կամ առանձին եռանդ չի ցուցաբերում իրենց օրինական տերերին վերադարձնելու քրդերի՝ հայերից խլած հողերը, ունեցվածքը, գյուղերը[4], այն հողերը, որ հայը հազարավոր տարիներ ոռոգել էր իր ճակատի քրտինքով, հերկել ու մշակել իր ձեռքերով: Հայերի հողերին տիրացած քրդերը սպառնում էին, որ

---

[1] **«Զանգակ»**, № 33, 14 օգոստոսի 1908 թ.:

[2] Նոյն տեղում:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 2, դեկտեմբեր, 1922, էջ 40:

[4] Տե՛ս **«Հորիզոն»**, № 28, 4 սեպտեմբերի 1909 թ.:

եթե կառավարությունը դրանք իրենց ձեռքից խլելու փորձ անի, ապա Հայաստանով մեկ ապստամբություն կբարձրացնեն: Այդ սպառնալիքների դիմաց հայտնված իշխանությունները հրաժարվեցին հողերն օրինական տերերին վերադարձնելու համար ձեռնարկած առաջին քայլերից:

«Բիւզանդիոն» օրաթերթի խմբագրությանը 1909 թ. հունիսի 30-ին (հուլիսի 13-ին) հղած հեռագրով Մշո հայոց առաջնորդ Ներսես վրդ. Խարախանյանը տեղեկացնում էր, որ Կովկաս գաղթած հայ գյուղացիներից շատերը ցանկություն են հայտնել վերադառնալու իրենց բնակավայրերը և ունեցած կալվածագրերի հման վրա տեր կանգնելու իրենցից խլված կալվածքներին ու հողերին, բայց Բաղեշի կուսակալությունը քրդերի հետ գործ ունենալու համարձակություն չունի[1]:

Հասկանալի բան էր, որ առանց պետության ստիպողական միջամտության քրդերը հազիվ թե իրենց տերերին վերադարձնեին այն, ինչ իրենցը չէր: Այս պայմաններում, գաղթականները մտահոգ էին, որ հայրենիքում կարող են ընկնել ավելի թշվառ դրության մեջ, քանի որ նա քայքայված է, կործանման դուռը հասած, մինչդեռ Կովկասում, Պարսկաստանում և այլուր կարողանում են գոնե աշխատանք գտնել: Հարազատ վայրեր վերադարձած գաղթականները պատրիարքարանի ընձեռած անբավարար օգնությամբ ի վիճակի չէին պահպանելու իրենց գոյությունը և հիմնավորվելու քանդված օջախներում: Կառավարության տված խոստումներն ու հատկապես Կովկասից վերադարձած հայերի նկատմամբ իրական վերաբերմունքը բնավ չէին համապատասխանում իրար:

Օսմանյան սահմանադրության հրատարակումից հետո հայրենիք վերադարձած եվրոպահայերն ու ամերիկահայերը նույնպես փորձեցին վերահաստատվել իրենց ծննդավայրերում, բայց առաջին իսկ օրերից որևէ հնարավորություն չգտան իրենց կյանքը դասավորելու:

Նախկին, աբդուլհամիդյան կարգերի ծանր օրերում համար-

---

[1] ***«Բիւզանդիոն»**, № 3867, 30 հունիսի (13 հուլիսի) 1909 թ.:*

յա անհնարին էր թե՛ երկիր մտնելը և թե՛ երկրից դուրս գալը: Բայց օսմանյան սահմանադրության վերականգնումից հետո վիճակը փոխվել էր: Նոր կարգերը մի կողմից, երկրից հեռացածներին հնարավորություն էին տալիս հայրենիք վերադառնալու, մյուս կողմից նպաստավոր պայմաններ էին ստեղծել նոր, ավելի մեծ արտագաղթ առաջ բերելու համար:

Կառավարության ազդարարած ներգաղթի իրավունքի կողքին առաջացել էր մի դժվարին խոչընդոտ ևս: Սահմանադրության համաձայն, առաջիկայում հնարավոր էր, որ զինվորական ծառայության կանչեին նաև քրիստոնյա երիտասարդներին: Զորակոչի տարիքի հայ երիտասարդները չէին ուզում ծառայել թուրքական բանակում, ուստի ձգտում էին օր առաջ լքել հայրենիքը:

Գալով իրենց ծննդավայրը և այնտեղ չկարողանալով հիմնավորվել, ներգաղթողների զգալի մասը դիմեց Կ. Պոլիս՝ աշխատանք գտնելու, համեստ օրապահիկ հայթայթելու և գյուղում մնացած իր հարազատներին օգնելու հույսով, բայց այստեղ էլ հաջողություն չունեցավ[1]: Մնում էր մի հույս՝ հայկական բարեսիրական կազմակերպությունների և հայ անհատների օգնությունը: Այս ճանապարհն էլ փակվեց, որովհետև հայկական բարեսիրական հիմնարկներն ու հայ հարուստները ստիպված էին մեծ գումարներ տրամադրել թուրքական կառավարությանը, որը ձեռնարկել էր հանգանակության միջոցով կառուցել երկու հածանավ՝ «Նիազի» և «Էնվեր» անուններով:

Հույսերը կտրած հազարավոր ներգաղթողներ կրկին բռնեցին լուսավոր աշխարհների ճանապարհները:

Հայրենիքից կրկին հեռանալը խոր ցավ էր պատճառում հայ հասարակայնությանը[2]: Կրկնակի գաղթը առիթ դարձավ, որպեսզի հայկական մամուլը, հատկապես Կովկասում, նորից խորությամբ անդրադառնա դարերի ընթացքում գաղթի՝ Հայաստան երկրին հասցրած ավերներին: Ցույց էր տրվում, որ գաղ-

---

[1] *Տե՛ս* ***«Աւետարեր»,*** *№ 38, 19 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»,*** *№ 3867, 30 հունիսի (13 հուլիսի) 1909 թ.:*

թելը միշտ դժբախտություն է եղել հայրենիքի համար, որ ո՛չ հուրը, ո՛չ սուրը և ո՛չ էլ նույնիսկ տմարդի հալածանքներն այնքան չեն վնասել ազգի հարատևմանը, որքան օտար երկնքի տակ բախտ որոնելը:

Իր մի ելույթում անդրադառնալով հայոց կործանարար գաղթին, հնչակյան Մուրադն ասում էր. «Թուրք կառավարութեան անվերջ կեղեքումներուն պատճառաւ Հայաստանը կը դատարկուի օրէ օր. հայ պանդուխտը կը կարծէ, թէ իր գաղթումը կարող է վերջ դնել իր տառապանքներուն, բայց ի զո՞ւր. հայ գաղթականը պանդխտութեան մէջ աւելի կը տառապի, կը մաշի քան իր վաթանին մէջ: Հայ գաղթումին պատճառը պէտք է փնտռել գերութեան եւ ստրկութեան մէջ. հայ տառապանքը պիտի դադրի այն օրէն, երբ հայութեան ցաւատանջ զաւակները քով-քովի գան, համերաշխութեամբ յառաջ բերուած միահամուռ ոյժերով ձեռք բերեն Հայրենիքի անկախութիւնը, մարդավայել կեանքի իրաւունքը հաստատելու Հայաստանի մէկ ծայրէն միւսը»[1]:

Զանգվածային գաղթերն են եղել պատճառը, որ Հայաստանում հայ ազգը ոչ միայն չէր բազմանում, այլև թվով գնալով փոքրանում էր: Եվ եթե այդպես չարունակվի, ինչպես եղել է աբդուլՀամիդյան տիրապետության 30 տարիներին, ապա մինչև 20-րդ դարի կեսերը Հայաստանում հայությունը, որպես ազգաբնակչություն, այլևս գոյություն չի ունենա,- գրում էր «Հովիւը»[2]: Թերթը չեշտում էր, որ այդ երևույթը «պատուաբեր չէ, այլ՝ ամօթալի եւ գարշելի...: Գաղթը հաւասար է դավաճանութեան, գաղթը ապերախտութիւն է դէպի հայրենիքը»[3]:

Բարենորոգումների սկիզբը զինված ուժերում.- Սահմանադրության տրամադրություններին համապատասխան՝ երիտթուրքական կառավարությունը ձեռնարկեց կայսերական զինված ուժերի վերակառուցման դժվարին ու երկար ժամանակ պահանջող գործին:

---

[1] **«Ազգ»**, № 37, 28 դեկտեմբերի 1907 թ.:

[2] Տե՛ս **«Հովիւ»**, № 44, 23 նոյեմբերի, 1909 թ., էջ 696:

[3] Նույն տեղում:

Իսկ ինչպիսի՞ն էր Թուրքական բանակը և դրանում ի՞նչ էին ուզում փոխել երիտթուրքերը:

Թուրքերը միշտ և ամեն բանից առաջ եղել են զինվորական ժողովուրդ, և հենց դա է եղել պատճառը, որ հեռավոր Ալթայից մի քանի հարյուր հոգով գալով Մերձավոր Արևելք և ծառայության անցնելով Բաղդադի խալիֆ ալ-Մութավաքքիլի մոտ՝ որպես նրա թիկնազոր, բազմանալով, երկու-երեք հարյուրամյակում մի սաստիկ ուժ դարձան տարածաշրջանում: Եվ ևս այդքան ժամանակ ստեղծեցին մի հզորագոր պետություն, որը սարսափ դարձավ բոլոր հարևան ժողովուրդներին ու պետություններին: Թուրքերի ստեղծած կայսրությունն ընդգրկում էր նախկին Բյուզանդական կայսրության ողջ տարածքը, համարյա ամբողջ արաբական աշխարհը, Բալկանյան թերակղզու բոլոր երկրները և սպառնալիք էր դարձել ողջ Եվրոպայի համար: Անընդհատ կռիվների, արյունալի պատերազմների բովով անցած Թուրք ցեղի անդամները ժամանակի ընթացքում սովորական կռվողից հասան մարտական բարձր հատկանիշներով օժտված զինվորի աստիճանի: Եվ Թուրք զինվորն էլ դարձավ զարմանալի նվաճումների գլխավոր դերակատարը:

Թուրքերի զինվորական մեքենայի բարձր կազմակերպվածության սկիզբը դրվել էր 13-րդ դարի առաջին կեսին՝ սուլթան Օրխան II-րդի օրոք: Այդ ժամանակից սկսած՝ նրանք ունեին զուտ էթնիկական, այսինքն՝ միայն Անատոլիայի կենտրոնական նահանգներում, ինչպես նաև ասիական ու եվրոպական ուրիշ նահանգներում անխառն ապրող Թուրք ցեղի տղամարդկանցից կազմված մնայուն բանակներ: «Զինված ազգ» – դարեր շարունակ սա է եղել Թուրքերի ավանդական սկզբունքը:

Օսմանյան բանակի ողնաշարը կազմող Թուրք տարրի քաջությունը հայտնի էր նրա կրնկի տակ ընկած ժողովուրդներին և հարևան պետություններին: Նա անհավատալի անտարբերությամբ կարող էր արհամարհել մահը: Այդ երևույթի պատճառը ոմանք համարում էին կրոնը, բայց դա սխալ կարծիք էր, քանի որ Թուրքը միևնույն քաջությունը ցուցաբերում էր թե՛ քրիստոնյաների և թե՛ կրոնակից արաբների, ալբանացիների կամ պարսիկների դեմ կռվելիս: Նաև իր տոկունությամբ նա գերա-

զանցում էր եվրոպական որևէ երկրի զինվորի՝ թերևս զիջելով միայն ռուս զինվորին: Առանց աչքի առաջ ունենալու վտանգն ու մեծ դժվարությունները՝ թուրք զինվորն անթերի կերպով կատարում էր իրեն տված նույնիսկ ամենածանր ու ամենաանմարդկային հրամաններն ու հանձնարարությունները: Թեև օսմանյան բանակի կազմում իր խիզախությամբ միշտ աչքի է ընկել նաև ալբանացի զինվորը, բայց նա չի ունեցել թուրք զինվորի ունեցած համառ տոկունությունը:

Թուրքական բանակի համալրման երկրորդ աղբյուրը հենց ալբանացիներն էին, երկրորդ վստահելի աղբյուրը՝ Սև ծովի հարավարևելյան ափերին ապրող լազերը (իսլամացած վրացիները), չորրորդը՝ սիրիացիները: Սրանք թեև օսմանյան բանակի կազմում ունեին իրենց զուտ էթնիկ զորամասերը, բայց հիմնական զանգվածներով ծառայում էին թուրք տարրից կազմված զորամասերում՝ նրա հետ ունենալով հավասար իրավունքներ ու պարտականություններ:

Խոշոր պատերազմների ժամանակ այդ բանակներին միանում էին զորակոչված ոչ թուրք մուսուլմանական օժանդակները: Բացի դրանցից՝ գոյություն ունեին թուրք ավատական իշխաններին պատկանող զինված ջոկատներ, որոնք հարկը պահանջած միջոցին հավաքվում էին որևէ տեղ:

Զինվորական ծառայությունը մուսուլմանների մենաշնորհն էր, իսկ քրիստոնյաները քաղաքական և ընկերային պատճառներով միշտ հեռու են պահվել այդ ծառայությունից: Դրա պատճառն այն էր, որ կառավարական ղեկավար շրջանները միշտ այն կարծիքին են եղել, որ քրիստոնյաները կարող են բանակը թուլացնել իրենց քարոզներով և դասալքությամբ: Բայց մուսուլմանների և քրիստոնյաների միջև ստեղծված մեծ անջրպետի հիմնական չարժառիթն էր՝ վերջիններիս հնարավորություն չտալ սովորելու զենք գործածելը: Սրանք միայն պարտավոր էին կառավարությանը զինվորական տուրք (բեղել) վճարել:

Բայց միայն քրիստոնյաները չէին, որ զերծ էին զինվորական ծառայությունից: Կ. Պոլսի ու Տրիպոլիսի մուսուլմանները նույնպես ազատված էին օսմանյան բանակին զինվոր տալուց: Այն օրից, երբ Մեհմեդ II Ֆաթիհը 1453 թ. գրավեց Կ. Պոլիսը, ընդ-

հուպ մինչև 1908 թ. այդ քաղաքը որևէ զինվոր չէր տվել: Կ. Պոլսի պարագայում այս հանգամանքը գործում էր զգացմունքային հողի վրա, իսկ Տրիպոլիսը միշտ հանգիստ էր թողնված այն նկատառումով, որ կայսրության կենտրոնից այնքան հեռու ընկած այդ նահանգի ազգաբնակչությունը դժգոհության և ըմբոստության առիթներ չունենար:

Բացառությունը դրանով չէր վերջանում: Բարձր Դուռը, իր դեմ ուղղված մեծ ու անհաղթահարելի հնարավոր դժվարություններից խուսափելու համար, զինվորագրման օրենքի պահանջներն ու տրամադրությունները չէր տարածում Ալբանիայի, Քուրդիստանի, Հիջազի և Եմենի վրա: Այդ ռազմատենչ երկրներից միայն ցանկացողները կարող էին զինվորագրվել օսմանյան բանակին: Դրանցից միայն ալբանացիներն էին զանգվածաբար զինվորագրվում, քրդերից կազմված զորաջոկատները չատ նոսր էին, իսկ արաբներից կազմված զորամասեր օսմանյան բանակում ընդհանրապես գոյություն չունեին:

Թուրքերի զինվորական կազմակերպությունը դարեր շարունակ բարձր է կանգնած եղել եվրոպական պատերազմական հաստատություններից: Մանավանդ սպառազինության մեջ Թուրքիան գերազանցում էր եվրոպական բոլոր հարևաններին, մասնավորապես թնդանոթների կրակային հզորությամբ որևէ երկիր չէր կարող համեմատվել նրա հետ, իսկ ռազմանավերը լավագույնն էին համարվում նույնիսկ ուշ միջնադարում:

18-րդ դարի սկզբներից օսմանցիների ռազմական գերազանցությունն սկսեց արագորեն անկում ապրել: Չնայած Թուրքիան երևութապես դեռ շարունակում էր պահպանել զինվորական պետության բոլոր հատկանիշները, բայց այլևս նախկին սարսափազդու հզոր տերությունը չէր: Քայքայման ընթացքը, սակայն, երկար տևեց: Երկու դարից ի վեր Թուրքերն իրենց գիտակցության մեջ ամբարած ունեին անցյալի փառքը, երբեմն-երբեմն ոգի էին առնում և նոր երկրներ նվաճելու մտքեր որոճում, բայց բուռն ցանկությունների և հնարավորությունների միջև եղած անդունդը գնալով ավելի էր խորանում, և բոլոր փորձերը ձախողանքով էին վերջանում: Ավելին, եղածը պահպանելը դառնում էր Թուրքիայի գլխավոր մտահոգությունը:

Նապոլեոնյան պատերազմները, Մեծ Բրիտանիայի ռազմածովային հզորության աննախադեպ աճը և Ռուսաստանի դեմ մղած արյունալի պատերազմների անմխիթար արդյունքները սուլթաններին ու Բարձր Դռանն ստիպեցին ձեռնարկել միջոցներ կայսրության զինված ուժերի արմատական վերակառուցման համար: Ռազմածովային ուժերը համալրվում էին ոչ միայն երկրում կառուցված նոր ռազմանավերով, այլև ավելի կատարելագործվածները ձեռք էին բերվում եվրոպական երկրներից, ամենից առաջ՝ Անգլիայից: Մեծ ուշադրություն էր դարձվում սպայակազմի պատրաստմանը. Կ. Պոլսում, Իզմիրում և Սալոնիկում զինվորական դպրոցներ բացվեցին: Նկատենք, որ 19-րդ դարի վերջին Թուրքիայի ցամաքային ուժերում մեծ թիվ էին կազմում հատկապես Ռուսաստանից ստիպողաբար այնտեղ անցած կովկասյան լեռնականները, որոնք ստացել էին «չերքեզներ» ընդհանրական անունը: Հենց սրանք էլ դարձան սուլթանական գահի հավատարիմ պաշտպանները: Դրանցից շատերը, հատկապես վայնախները (չեչեններ և ինգուշներ) շատ կարճ ժամանակում զբաղեցրին ամենաբարձր զինվորական պաշտոններ:

Սակայն այդ և ձեռնարկած ուրիշ ուշացած միջոցառումներն ի վիճակի չեղան կանգնեցնելու Օսմանյան կայսրության անկման գահավեժ ընթացքը: «Հիվանդ մարդը» օրինաչափորեն կանգնեց դարեր ի վեր կատարած իր հանցագործությունների՝ երկրներ ու ժողովուրդներ կործանելու համար անխուսափելիորեն հատուցում կատարելու հրամայականի առջև:

Իսկ ո՞րն էր թուրքահայոց դերը երկրի պաշտպանության գործում, և որո՞նք էին թուրքական բանակի հանդեպ նրա պարտականությունների սահմանները:

Ինչպես ասվեց, կայսրության քրիստոնյա ազգությունները, այդ թվում հայերը, լիովին օտարված էին բանակային ծառայությունից, բայց դրա դիմաց պարտավոր էին ծանր հարկեր վճարել:

Հայ ժողովուրդը նախքան պետականության կորուստը, իր ծոցից սերել էր քաջազուն ռազմիկների բազում հերոսական սերունդներ, որոնք հայրենի երկրի սահմանները թշնամիներից

պաշտպանելիս հանդես էին բերում առասպելական տոկունություն ու քաջություն, ռազմի դաշտում գիտակցական մահը գերադասում էին պարտությունից և հայոց զենքի փառքը հեռուներ էին հասցրել: Հայ ժողովուրդը տվել էր ռազմական արվեստի հսկաներ, ինչպիսիք էին Տիգրան Մեծը, Վարդան Մամիկոնյանը, նրա ռազմիկ զավակները խոչոր հրամանատարներ էին դարձել ուրիշ երկրներում և իրենց տաղանդով ու ջանքերով ձեռք բերել փայլուն ռազմագետների՝ պարծանքի արժանի հռչակ ու պատիվ: Իսկ հայ զինվորն ամենուր փառաբանվում էր կռիվներում ցուցաբերած հնարամտության, դիմացկունության, անվեհերության ու անընկճելի կամքի համար: Պատահական չէ, որ վաղնջական ժամանակներից օտարները ***հայ*** *ասելով հասկանում էին* ***քաջ մարդ****:*

Բայց թուրք հորդաների՝ Հայաստանը նվաճելուց և նրա պետականությունը կործանելուց հետո հայ ժողովուրդը չատ հարյուրամյակներ դժբախտություն ունեցավ մնալու թշնամու ծանր լծի տակ, իր սեփական երկրում գոյությունը մի կերպ պահպանելու որպես իրավազուրկ ու արհամարհանքի արժանի գյավուր, օրնիբուն տքնելու և հեռուներից եկած ու իր հայրենիքին տիրացած, կուլտուրական տեսակետից իրենից ցածր, գռեհիկ բնազդների տեր, ռազմատենչ ու արյունարբու մի ցեղ կերակրելու համար:

Հայը զրկվեց ոչ միայն տաք, այլև սառը զենք կրելու իրավունքից, իսկ այդ արգելքը խախտելու դեպքում ենթակա էր մահապատժի կամ ցմահ բանտարկության: Այս պայմաններում նա աստիճանաբար կորցրեց նաև զենք գործածելու հմտությունն ու արվեստը, որոնց լիուլի տիրապետում էին իր փառավոր նախնիները: Ժամանակի թավալքի մեջ նա դարձավ երկչոտ ու անարի, ձեռք բերեց վախկոտ ու մորթապաշտ տարրի ամոթալի համբավ:

Բայց իրո՞ք այդպիսին էր նա իրականում, արդյո՞ք դա դարձել էր նրա ցեղային նկարագիրը: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Բավական էր պայմանները փոքր-ինչ փոխվեին, և անմիջապես կվերականգնվեր հայ-զենք նախկին հարաբերությունը, հայը ցույց կտար, որ ինքը դարձյալ աներկյուղ ու արիասիրտ է, ավելին,

քան Թուրքը: Անդրանիկն ասում էր, որ հայն իր կեանքը պաշտպանելու մէկ միջոց միայն ունի, մէկ պաշտպան, այն էլ զէնքն է ու զինավարժությունը: Մարդ ո՛չ հերոս և ո՛չ էլ կովող է ծնվում. զենքը մարդուն կովելու ընդունակություն է տալիս և նրա մեջ դիմադրության ոգի է արթնացնում:

Եվ հայը կրկին ցույց տվեց իր կտրիճությունն ու սխրանքները: Անասելի դժվարություններով հայթայթված և մեր պատմության նորագույն շրջանի դյուցազունների՝ մարտիկ-ֆիդայիների ձեռքն ընկած առաջին հրացանների որոտն ավետեց Թուրքերի բազմադարյան բռնակալության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի սկիզբը:

Քիչ չեն եղել դեպքերը, երբ 5-10 հայ ֆիդայի, մարտի բռնվելով իրենցից թվապես տասնապատիկ ավելի Թուրք զինվորների ու քուրդ հրոսակների հետ, ժամեր շարունակ անկոտրում կովելով, ի վերջո, փախուստի են մատնել թշնամիներին:

Ահա՛ այսպիսին էր վիճակը, երբ երիտԹուրքական կառավարությունը ձեռնարկեց բանակի բարեկարգումը:

Քանի որ «հիվանդ մարդու» քայքայման մահաղեղը երկու դարուց ի վեր շրջան էր բռնել նրա երակներում, ավերել կայսրության կառավարման մեխանիզմները՝ չխնայելով նաև պետության զինվորական հաստատությունները, ուստի նոր կառավարության համար կարևոր էր նախ կատարել զինված ուժերի բազմակողմանի ուսումնասիրություն և պարզել նրա ճշգրիտ պատկերը: Այդ բանն անելը մեծ դժվարություն չէր ներկայացնում, քանի որ օսմանյան հեղաշրջումը կատարել էր ինքը՝ բանակը, ավելի ճիշտ՝ նրա սպայակազմը, որը գերազանց գիտեր երկրի զինված ուժերում տիրող վիճակը, նրա առավել խոցելի կողմերը:

Կարճատև ուսումնասիրությունները հաստատեցին այն կարծիքը, որ բանակը, մանավանդ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին, զրկվել է նախկին բարեմասնություններից, որի պատճառով դադարել է պատկառելի ախոյան լինելուց և, որպես դրա հետևանք, նրան բաժին են ընկել հզոր տերությունների արհամարհանքն ու անտարբերությունը: ԵրիտԹուրքերը այդ դառն իրողության հետ հաշտվելու տրամադիր չէին:

Ամենից առաջ փոփոխություններ մտցվեցին բանակի հրամանատարական կազմում. հեռացվեց ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարը, փոխվեցին զինվորական երեք օկրուգների պետերը, չատ դիվիզիաների ու կորպուսների հրամանատարական կազմերը: Օրինակ՝ հրաժարական տվեց չորրորդ զորաբանակի հրամանատար Զեքի փաչան և աքսորվեց Բուրսա: Ազատված տեղերը հիմնականում լրացվում էին Թուրքերով, չերքեզներով և մուսուլման վրացիներով: Իր պաչտոնից հրաժարական տված ծովակալ Ռամի փաչայի փոխարեն սուլթանի հուլիսի 14-ի հրամանով ծովային նախարար նչանակվեց փոխծովակալ Խալիֆ փաչան: Նույնի հուլիսի 18-ի հրամանով առաջին զորաբանակի հրամանատար գեներալ Ռիզա փաչան նչանակվեց հրետանու գլխավոր հրամանատար և այլն: Դեռևս երիտթուրքական հեղաչրջման նախօրյակին, 1908 թ. մարտին, զինվորական բարձրագույն պաչտոնների նչանակված մի խումբ իսլամացած վրացիներ մնացին իրենց պաչտոններում: Դրանցից էին Թուրքական հրետանային զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ, ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմին մասնակցած, հայտնի գեներալ Տատգիրիձեն, օսմանյան ցամաքային զորքերի գլխավոր չտաբի պետի տեղակալ գեներալ Բեժանաչվիլին:

Կառավարությունը ծրագրեց բանակը զինել ժամանակի առավել կատարելագործված զենքերի տեսակներով, օրախնդիր համարվեց ռազմածովային նավատորմի համար խոչոր հածանավերի ձեռքբերումը, որպիսիք այդ ժամանակ Թուրքիան չուներ:

Կենսական նչանակություն էր ստանում կայսրության ծովային մատույցների ամրապնդումը: Առաջին մտահոգությունը Դարդանելի մուտքերի ամրոցների վերանորոգումը և նորերի կառուցումն եղավ: Նույնը վերաբերում էր Իզմիրի, Ալեքսանդրեթի ծոցի և Ասիական Թուրքիայի միջերկրածովահայաց մյուս բերդերի ու ամրոցների ամրապնդմանը:

Զափազանց կարևորվեց զորքերի մեջ քարոզչական աչխատանքների լայն ծավալումը: Երիտթուրք պարագլուխները հեղաչրջման օրերին համոզվել էին, թե ինչպիսի հզոր ուժ է քա-

րոզչությունը: Զէ՞ որ իրենց տարած եռանդուն քարոզչության հետևանքով էր, որ Մակեդոնիայում տեղակայված զինվորական մասերն առաջինը ապստամբական դրոշ պարզեցին սուլթանի դեմ, դրանք էին, որ դարձան հեղաշրջման շարժիչ ուժը: Ծրագրվեց զորքերի մեջ տարվելիք քարոզչության կենտրոնում դնել. ա) Պատմության մեջ թուրք ցեղի կատարած հերոսական գործողությունների նկարագրությունները և, դրանով իսկ, զինվորների մեջ հպարտության զգացում առաջ բերել իրենց ցեղային նկարագրի հանդեպ, բ) Իսլամի, որպես ամենաառաջավոր ու զորավոր կրոնի, արժեքային համակարգի լայն բացատրությունը, զինվորական զանգվածների՝ այդ կրոնին անմնացորդ նվիրվելու անհրաժեշտությունը: Եվ դա այն դեպքում, երբ սահմանադրության համաձայն, թուրքական բանակի բոլոր զինվորները հայտարարվել էին օսմանյան հայրենիքի՝ նույն իրավունքներով օժտված զավակներ՝ անկախ իրենց կրոնական հայացքներից:

Այնուհետև, միջոցներ էին ձեռնարկվում, որպեսզի զինված ուժերը շարունակեն հավատարիմ մնալ երիտթուրքական գաղափարներին, հանդես գան որպես «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը հավատարիմ ուժ և նրա կառավարության հետևողական պաշտպան: Դա շատ կարևորվում էր այն պատճառով, որ տվյալ պահին, բացի երիտթուրքերի ազդեցության տակ ընկած բանակային զորամասերից ու նրանց սպայական կազմից, Թուրքիայում չկար ուրիշ հեղափոխական ուժ՝ հանձինս որևէ հասարակական խմբի, դասի կամ դասակարգի: Կատարված զինվորական հեղաշրջմանը հիմնականում դրդել էր այն, որ զորքը, ներառյալ սպաները, միշտ կիսաքաղց էին, գտնվում էին նյութական, բարոյական և իրավական անապահովության մեջ: Բայց զորքը հուսալի հեղափոխական ուժ չէր կարող լինել. երկրի ներքին կյանքում նա միշտ եղել և մնում էր կույր գործիք մերթ երկրի իշխանություններից դժգոհողների, մերթ հետադիմության ձեռքին: Այնինչ հայտնի է, որ միայն այն հեղափոխությունն է հաստատուն ու գնահատելի, որը կատարվում է ժողովրդական զանգվածների ձեռքով: Եվ միայն նրանք են ի վիճակի ոչ միայն հաղթություն տանելու հեղափոխության մեջ, այլև դա պահպանելու և կյանքում ամրագրելու: Զորքն ընդ-

հանրապես տարերային է լինում, բայց հատկապես այդպիսին էր Թուրքիայում, ուր հասարակությունը դեռ հստակ չերտավորված չէր, ուստիև այնտեղ միայն զորքի միջոցով կատարված հեղափոխությունը կա՛մ հետադիմական կարող էր լինել, կա՛մ լոկ դիպվածի արդյունք: Զորքը կկռվեր իրեն կերակրողի համար. երեկ կերակրողը սուլթանն էր կամ հոգևորականությունը, այժմ՝ երիտթուրքերը: Բայց եթե վաղը այդ նույն զորքը կիսաքաղց լիներ, կվռնդեր արդեն երիտթուրքերին և կգնար դարձյալ սուլթանի կողմնակիցների հետևից: Զինվորները կարող էին առաջ բերել նոր հեղաշրջում՝ այս անգամ՝ հակահեղափոխություն: Բայց դա չէր լինի հասարակական հետադիմական թե առաջադիմական հեղափոխական ուժ, որ կռվում է հանուն իր նյութական կամ այլ շահերի, այլ կլիներ լոկ մի տարերային ուժ: Դա չէր լինի հնի ու նորի միջև պայքար, այլ անընդհատ ըմբոստություն, որ կարող էր կործանել որևէ ավելի հզոր պետություն, քան Թուրքիան էր:

«Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարը տեղին էր նկատում, որ սուլթանի և Իթթիհադի՝ զորքի վրա դրած հույսերը խախուտ ու խարուսիկ են: Որքան էլ նրանք միջոցներ ձեռնարկեն դա կայուն քաղաքական ուժ դարձնելու, բայց դա կչարունակի մնալ և՛ երիտթուրքերի, և՛ հին ռեժիմի մարդկանց տրամադրության տակ: Այդ իսկ պատճառով, զորքի տարբեր մասերը, իրավիճակի ամենափոքր խսկ փոփոխության դեպքում, կարող են ընդհարվել միմյանց հետ, և հաղթությունը կարող է տատանվել այս կամ այն կողմը: Ալ. Քալանթարը գրում էր.

«Դժուար է ասել, թէ Թուրքիայի պայմաններում եւ օսմանեան դժոխքում սնուած–մեծացած զօրքը կարող է լուսաւոր քաղաքակրթական նպատակների եւ հոսանքների ջատագով հանդիսանալ երկարատեւ մաքառման մէջ: Ո՛չ, նա աւելի չուտ կթեքուի իր նախկին հրամայողների կողմը եւ, այնուհետեւ, կդառնայ մի սոսկալի կործանիչ ոյժ: Եւ եթէ մի թոյլ պարսկական կառավարութիւն, որ նոյնիսկ զօրք չունի, կարողացաւ իր աննշան վաշտերը շարժել ազատականների եւ սահմանադրականների դէմ, անկասկած՝ օսմանեան կառավարութիւնը կարող կլինի ամբողջ զօրագնդեր շարժել իր շահերի պաշտպանութեան համար:

Իսկ Եւրոպա՞ն: Մի՞թէ նա սառը հանդիսատես կլինի: Անտարակոյս: Նա չի խառնուի ներքին քաղաքացիական գործերի մէջ: Եւ միայն հարց կյարուցանէ իր վտանգուած շահերի պաշտպանութեան մասին»[1]:

Ահա՛, այդ ամենը հաշվի առնելով էր, որ «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցության ու նրա կառավարության խոր մտահոգությունը դարձավ բանակը մշտապես իրենց ազդեցության տակ պահելու հույժ կարևոր խնդիրը: Այդ նպատակով հատկապես կարևորվեց զորամասերում քաղաքական աշխատողների ինստիտուտի ստեղծումը, որը զինվորների և սպաների վրա հսկիչի դեր էր կատարելու, ակնդետ հետևելու էր նրանց քայլերին: Քաղաշխատողները մոտավորապես կատարելու էին հետագայում տարբեր երկրների բանակներում լայն տարածում ստացած կոմիսարների պարտականությունները, միաժամանակ հակահետախուզության գործառույթներ էին իրականացնելու:

Վերջապես, ելնելով սահմանադրության դրույթներից՝ երիտթուրքերը մտցրին պարտադիր զինվորական ծառայություն կայսրության զորակոչային տարիքի բոլոր տղամարդկանց համար՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից: 1908 թ. աշնանային զորակոչը, բնականաբար, տարածվեց նաև հայերի վրա: «Հայեր ալ առաջուան պէս խղճալի ու հլու չեն ըլլար»[2],- զորակոչի կառավարական հրամանին այսպես էր արձագանքել թուրքահայ գործիչներից մեկը: Հայ քաղաքական ուժերը, առաջին հերթին Դաշնակցությունը հայ երիտասարդներին կոչ էին անում մեծ աշխուժություն ցուցաբերել և ժամանակին ներկայանալ զորակոչային կետեր ու մեկնել բանակ՝ զենքին վարժ տիրապետելու համար: Եղիշե Թոփչյանն այս խոսքերն էր ուղղում հայ երիտասարդությանը. «Օսմանեան սահմանադրական կայսրութեան ամբողջութեան պաշտպանութեան համար մենք պէտք է պատրաստ ըլլանք նոյն իսկ մեր կեանքը զոհելու, ինչպէս ամէն մի ճշմարիտ օսմանցի: Քանի որ իբրեւ օսմանցի

---

[1] ***«Մշակ»,*** *№ 154, 17 հուլիսի 1908 թ.:*

[2] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 32:*

կատարեալ հաւասարութիւն կը պահանջենք, պէտք է նաեւ մասնակցինք պետութեան բոլոր հոգերուն եւ ծախքերուն՝ իբրեւ ճշմարիտ քաղաքացի: Պէտք չէ խոյս տանք այն բոլոր պարտաւորութիւններէն, զոր օսմանցիութիւնը կը դնէ մեր վրայ»[1]:

Իսկ քրդերը թշնամաբար ընդունեցին հայերին նույնպես զինվորագրելու որոշումը: «Մենք հաւանութիւն չենք տալիս հայերի եւ ընդհանրապէս գեաւուրների զինուորագրմանը: Հայերը պէտք է շարունակեն տուրք վճարել տէրութեանը՝ արեան տուրք»[2]:

Այդ պահանջը միանգամայն բնական էր, քանզի հայերին օսմանյան բանակ կանչելուց հետո նախ կարժեքազրկվեր անվանափոխված համիդիե գնդերի գոյությունը և, երկրորդ, բանակում զինվորական հմտություններ ձեռք բերած հայորդիները զորացրվելուց հետո իրենց գյուղերում հզոր ուժ կլինեին՝ զսպելու քրդերի կողոպտիչ ախորժակը:

Առանց այն էլ, չնայած հայ քաղաքական գործիչների կոչերին ու խնդրանքներին, հայ երիտասարդները որևէ ցանկություն հանդես չէին բերում ծառայելու թուրքական բանակում՝ գերադասելով ծառայելու փոխարեն **բեդել** *վճարել: Պատճառները բազմազան էին, որոնցից հատկապես կարևորվում էին երկուսը. ա) հայ երիտասարդների բացարձակ մեծամասնությունը, նոր ռեժիմի պայմաններում նույնպես, իրենը չէր համարում օսմանյան պետությունը, որի համար արժենար կռվել ու մեռնել, բ) բանակում տիրող թշվառ վիճակը (զինվորների կիսաքաղց գոյությունը, ենթակաների նկատմամբ հրամանատարների անսահման և անմարդկային կամայականությունները, անկարգապահությունը զորամասերում և այլն) չէր փոխվում: Հեղաշրջումից հետո առաջին չաբաթներին քրիստոնյաների նկատմամբ իսլամ հասարակության մեջ եղած հանդուրժողականությունը 1908-ի աշնանից սկսել էր տեղի տալ աբդուլհամիդյան ժամանակների կոպիտ և խտրական վերաբերմունքին: Եվ քանի որ բանակն ընդհանրապես հասարակության պատկերն է, և այն-*

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6356, 24 հուլիսի 1908 թ.:*

[2] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 4, վավ. 9[4], թ. 36:*

տեղ եղած արատները տեղ են գտնում զինվորականության շրջանում, ուստի զորակոչի տարիքի հայ երիտասարդները տագ-նապում էին թուրքերի կամ քրդերի հետ միևնույն զորամա-սերում ծառայելու հեռանկարից:

Հայոց զինաթափումը.– Զորակոչի հրամանը տալուց հետո կառավարությունը ձեռնամուխ եղավ խաղաղ **բնակչության մի մասի** զինաթափմանը: Նրանց ինչի՞ն է պետք զենք ունենալը, եթե բոլորը օրենքի առջև հավասար են, եթե օսմանյան բանակը դառնում է մուսուլմանների և քրիստոնյաների բանակ: Ո՞ւմ դեմ է ուզում կռվել զենք ունեցող օսմանյան քաղաքացին, եթե բո-լորն ապրում են ազատության, միության և եղբայրության երկ-րում,– հարց էին տալիս երիտթուրքերը, «բնակչության մի մաս» ասելով նկատի առնելով կայսրության ոչ թուրք տարրերին: Սահմանադրությունը փառաբանող հայերը, ցավոք, դա չատ ուշ հասկացան:

Երիտթուրքերի պարագլուխներն ազգային-ազատագրական շարժման կազմակերպություններից ու կոմիտեներից պահան-ջեցին իրենց մոտ եղած զենքերը նոր իշխանություններին հանձ-նել դեռ «եղբայրացման» առաջին իսկ օրերից:

Քրդերի և մանավանդ ալբանացիների մտքով անգամ չէր անցնում, թե կարելի է զենքերը հանձնել կառավարությանը կամ վաճառել:

Զենքը իշխանություններին հանձնելու կարգադրություններ-ը բացահայտ թշնամանքով դիմավորեցին մակեդոնացիները, բուլղարները, հույները: Ապստամբ չետնիկական ջոկատների պետերը հայտարարել էին, թե դադարեցնում են իրենց գործու-նեությունը և ինքնալուծարվում: Հույն, սերբ, բուլղար, մակեդո-նացի վոյեվոդները գալիս էին քաղաքները և հնազանդություն ու համերաշխություն էին հայտնում երիտթուրքական կոմիտե-ներին: Օրինակ՝ Մակեդոնիայում գործող սերբ չետաների պա-րագլուխները, հուլիսի 23-ին այցելելով Բելգրադում թուրք դես-պան Ֆեթհի փաշային՝ նրան հայտնում են, որ սահմանադրու-թյան վերականգնումով իրենց դերը, որպես Մակեդոնիայում սերբ բնակչության պաշտպանների, համարում են ավարտված և այդ իսկ պատճառով զինաթափ են լինում ու վերադառնում

Սերբիայի իրենց բնակավայրերը: Իրենց հերթին՝ Սալոնիկում, Մանասթիրում, Էդիրնեում և ուրիշ քաղաքներում թուրք սպաները պատիվներ էին տալիս վոյեվոդներին: Չետնիկները «եղբայրանում» էին թուրքերի հետ: Բայց, հակառակ երիտթուրքերի համառ պահանջների, «լուծարված» չետնիկական ջոկատները իշխանություններին ու երիտթուրքական կոմիտեներին ներկայանում էին առանց զենքի: Նրանք իրենց զենքերը հանձնում էին ոչ թե թուրքական պետության համապատասխան մարմիններին, այլ իրենց ազգային կոմիտեներին:

Իսկ քրդե՞րը: Սահմանադրության հռչակումից հետո երիտթուրքերը «ձեռնամուխ եղան» «համիդիե» զորքի լուծարքին: Շուտով հրաման եղավ «համիդիեները» Սիրիայում և կայսրության արաբաբնակ մյուս վայրերում վերացնելու մասին: Բայց նոր իշխանությունները բնավ ձեռք չտվեցին քրդերից կազմված «համիդիեներին»: Հայկական լեռնաշխարհը ասպատակող քրդական հեծելազորային գնդերը ոչ միայն չէին զինաթափվում, այլև գաղտնի կամ բացահայտ զենք ու զինամթերք էին ստանում իշխանություններից: Բանը վերջացավ միայն այն բանով, որ «համիդիե» գնդերը (որոնց թիվն այդ ժամանակ հասել էր 65-ի և որոնցում հավաքագրված էր 30000 հոգի), վերանվանվեցին «իթթիհադ» զորամիավորումների: Հեղափոխությունից վախեցած և Պարսկաստան փախած քուրդ աղաները և բեկերը, երիտթուրքերի առաջարկով, վերադարձան իրենց տեղերը:

Ոչ միայն «համիդիեները», այլև ընդհանրապես քուրդ զանգվածն ու նրա ղեկավարները չզինաթափվեցին: Ինչպես բազմիցս նշել ենք, վերջիններս կառավարությանը չէին հպատակվում և սահմանադրությունը չէին ճանաչում: Օրինակ՝ իշխանությունները Քեոր Հուսեյնից պահանջեցին հանձնել ունեցած հարուստ զինանոցից գոնե 1500, Սելիմ փաշայից՝ 500, Ահմեդ և Դեմիր փաշաներից՝ 600-ական հրացան: Երբ կառավարական զինվորները եկան փաշաներին «զինաթափելու», սրանք արդեն իրենց զենքերը թաղել էին գետնի տակ[1]: Զենքի սիրահար քուրդ զանգ-

[1] Տե՛ս **«Ազգ»**, № 74, 26 սեպտեմբերի 1908 թ.:

վածները նույնպես ոչ մի կտոր զինատեսակ չհանձնեցին կառավարությանը:

Իր հուշագրության մեջ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ ինքը նշանավոր երիտթուրք «հեղափոխական» Վեհիբին առաջարկել էր միասին գնալ Խվներ և զինաթափել ու պատժել քուրդ Ղասըմ բեկին, որը հայերի նկատմամբ անթիվ չարագործություններ էր կատարել: Պատժելու փոխարեն Վեհիբը Ռուբենին առաջարկել էր բեկի հետ լեզու գտնել, որից հետո, առանց վերջինիս տեղյակ պահելու, մեկնել էր Խվներ, հանդիպել ու զրուցել Ղասըմի հետ: Դրանից հետո քուրդ բեկն ավելի անհանդուրժող էր դարձել հայերի նկատմամբ և նոր փորձանքներ բերել: Ռուբենը հաղորդում է, որ երբ անցնում էին հայկական անհամեմատ կիրթ ու բարգավաճ շրջաններով, Վեհիբի աչքերը չարությունից խամրում էին, իսկ Լեռնապարով անցնելիս՝ տեսնելով, թե այնտեղ ինչ կարգ ու կանոն է ստեղծել Իշխանը, նախանձից չէր կարողանում տեղը գտնել[1]:

Ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, մակեդոնացիների, արաբների, ալբանացիների, բուլղարների, հույների զգուշավորությունը մի կողմից թելադրված էր անցյալի պատմական դառը փորձով, մյուս կողմից՝ իրենց ղեկավարների քաղաքական հեռատեսության և հաշվենկատության արդյունք էր: Իսկ քուրդ ղեկավարների մեծ մասն ընդհանրապես կարիք չուներ զգույշ լինելու, քանի որ հենց կառավարությունն էր նրան զինում:

Ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժման այն ղեկավարները, որոնք մեծ զգուշություն էին հանդես բերում, համոզված էին, որ երիտթուրքերն անպայման կխախտեն կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար իրավահավասարություն ստեղծելու մասին տված խոստումները:

Զենքը նոր իշխանություններին հանձնելու երիտթուրքերի պահանջը շատ բան էր ասում: Արդեն նույն՝ 1908 թ. ամռան վերջերից սկսած, բալկանյան ժողովուրդների ազգային-քաղա-

---

[1] Տե՛ս **Ռուբէն**, *Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. Ե, էջ 236:*

քական շրջաններում լուրջ կասկածներ էին հայտնվում հնարավոր վերափոխումների հարցերի շուրջ: Այդ շրջաններում կարծիք էր խմորվում հեղափոխության հետագա զարգացումն ուղղել երիտթուրքերի դեմ: Այլ խոսքով, նրանք այն մտքին էին, որ սահմանադրության վերականգնումով չի վերջացել պայքարը, որ դա դեռ առջևում է:

Իսկ հայե՞րը:

Հայոց պատմական փորձը թելադրում էր ոչ միայն եղած զենքերը պահել, այլև շարունակել զինել շարքերը, բազմապատկել զինական ներուժը, ինչպես անում էին մակեդոնացիներն ու ալբանացիները, նաև՝ քաղաքական գործունեության մի մասն ընդհատակ տեղափոխել:

Բայց, ցավոք, այդպես չեղավ:

Կաչկանդված Իթթիհադի հետ գործակցության պայմանավորվածություններով և հետևելով «եղբայր» երիտթուրքերի հորդորներին, դաշնակցական գործիչները դեմ չէին զենքերի հանձնմանը պետությանը: Նրանց «բացատրական աշխատանքի» հետևանքով շատ հայերի մոտ համոզում էր առաջացնել, որ իսկապես, սահմանադրական երկրում ավելորդ է անձնական զենք պահելը: Նրանք «ըլլայ ժողովներու մէջ, ըլլայ անհատապէս, բոլորին կը քարոզէին, թէ այլեւս սահմանադրութիւն է, այլեւս զէնքի ոյժով չէ, որ մենք ձեռք պիտի բերենք մեր ինքնուրոյնութիւնը, այլ ժողովրդական բոլոր խաւերուն մէջ՝ նոյնիսկ քիւրտերուն մէջ ուսմունք տարածելով է, որ մենք կը հասնինք մեր բուն նպատակին»[1]: Եվ երբ ժողովների ընթացքում այդ գործիչներին հարց էին ուղղում, թե հարկ եղած դեպքում ինչպե՞ս պետք է ինքնապաշտպանություն կազմակերպել, նրանք, առանց հապաղելու, հայտարարում էին. «Սուրի դարը անցա՛ւ, աշխատեցէ՛ք կրթութիւն տալ ժողովուրդին»[2]:

Այդ էր պատճառը, որ ինչպես վերհիշում է դեպքերի ականատեսը, «հին գործիչ ընկերներէն շատերը՝ իրենց արեան գնով

---

[1] ***Սարգիս*** *եւ* ***Միսաք Բդէեաններ****, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 263:*

[2] *Նույն տեղում, էջ 294-295:*

ձեռք բերած զէնքերը այլեւս անպէտք նկատելով, սկսան ածան գնով զանոնք ծախել Թուրքերուն եւ քիւրտերուն եւ անոնց փոխարէն՝ իրենց ունեցած գոմէշներուն, եղներուն, ոչխարներուն վրայ նորեր աւելցնել եւ այդ կողմէն մրցիլ իրարու հետ»[1]: Հայկական խմբերի ղեկավարներից շատերը հոժարակամ վար էին դնում իրենց զենքերը, նրանց օրինակին հետևում էին ենթակաները: Զենքերի հանձնումը արժանանում էր կառավարության ու տեղական իշխանությունների խրախուսանքին և բուռն գովեստներին: «Սիբերի սայիքայի հուրրիեթ» թուրքական թերթը հաճույքով արձանագրում էր, որ «Երբ Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետքը Վանայ շրջակայքը գտնուող հայ քոմիտէները լեռներէն վար իջնելով իրենց զէնքերով յանձնուեցան»[2], դրանից հետո հայերը դադարեցին որևէ մեկին վախ ներշնչել: «Միություն և առաջադիմություն» կուսակցության Վանի կենտրոնական կոմիտեն շնորհակալական նամակ էր ուղարկել ՀՅԴ Շամի (Վասպուրականի) կենտրոնական կոմիտեին՝ զենքը վար դնելու որոշում ընդունելու համար: Երիտթուրքերը հայկական կոմիտեի մոտ էին ուղարկել իրենց ներկայացուցչին՝ միասին խաղաղեցման միջոցներ մշակելու նպատակով: Այդ բոլորի համար հայերը հետագայում պետք է շատ ղղային:

Օգտագործելով դաշնակցական գործիչների քաղաքական միամտությունը, իթթիհադականներն այնքան «մոտեցան» նրանց, որ լիովին իմացան կազմակերպության ծրագրերն ու նպատակները, տեղեկացան նրա կառուցվածքին, ղեկավար կենտրոններին, զենքի կուտակման վայրերին, նույնիսկ՝ արխիվներին, իրենց ձեռքը գցեցին տեղական կազմակերպությունների ցուցակները, ճանաչեցին համարյա բոլոր ղեկավարներին: Դաշնակցականներ Զավեն և Վարդուհի Նալբանդյանները խոստովանում էին, որ իրենց կուսակցության նման ընթացքը «կաշկանդեց հայ ինքնապաշտպանութեան թեւերը» և «անպատ-

---

[1] **Սարգիս** եւ **Միսաք Բդէեաններ**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 295:

[2] Հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3863, 25 Հունիսի (8 Հուլիսի) 1909 թ.:

բաստ ժողովուրդը մատնեց նոր արհաւիրքների»[1]:

Հայկական ազատագրական շարժման գինյալներից մեկը, աններելի կարճատեսութիւն համարելով կատարվածը, միաժամանակ նշում էր. «...Կը փափագէինք, որ մեր կազմակերպութեան բոլոր գաղտնիքները չհաղորդուէին երիտասարդ Թուրքերուն, ընդհակառակն, մենք աւելի պէտք է հետամուտ ըլլայինք իմանալու անոնց գաղտնիքները: Մենք պէտք է մտահոգուէինք մեր ինքնապաշտպանութեան խնդրով, անոր համար միջոցներ խորհէինք ու զէնք ու ռազմանիւթ ձեռք բերելու մասին լրջօրէն խորհրդակցէինք»[2]:

Ոչ միայն հնչակյան գործիչները, հասարակական, քաղաքական դեմքերից շատերը, այլև դաշնակցության նշանավոր գործիչներից ոմանք անհեռատեսության գագաթ էին համարում զենքերի հանձնումը իշխանություններին:

Արշալույս Աստվածատրյանը գրում էր, որ դարձյալ Ռուբեն Տեր-Մինասյանը և Իշխանն (Նիկոլ Միքայելյան) էին, որ կտրուկ հանդես էին գալիս այդ վարմունքի դեմ: Թուրքահայ ժողովրդի փրկությունը Իշխանը տեսնում էր նրա կազմակերպվածության մեջ: Նա մշտապես չեշտում էր, որ նախ և առաջ պետք է կազմակերպված մարտական բոունցք ունենալ: Սահմանադրական կարգերը բնավ պատճառ չէր համարում մարտական խմբերի լուծարման, այսինքն՝ զինաթափման համար: Ընդհակառակը, գտնում էր, որ այդ խմբերը ոչ միայն պիտի մնան, այլև պետք է հատուկ ուշադրության արժանանան ու ամրապնդվեն, քանի որ միդհատյան սահմանադրությունն առայժմ առանձնապես փոփոխություն չի մտցրել տիրող կարգերի մեջ: «Զգոյշ լինենք սրանցից (երիտթուրքերից:- Հ. Ս.),- ասել էր Իշխանն իր մտերիմ ընկերներին,- Թուրքը միշտ էլ Թուրք կմնայ հայերիս հանդէպ: Զգո՜յշ ... եւ վար չդնենք մեր ձեռքի զէնքը»[3]:

---

[1] *Տե՛ս **Զարեւանդ**, Ի՞նչ կը ծրագրեն Թուրքերը՝ միացեալ եւ անկախ Թուրանիա, Պոսթոն, 1926, էջ 140:*

[2] ***Սարգիս** եւ **Միսաք Բդէեաններ**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, էջ 263:*

[3] ***«Հայրենիք»**, № 1 (359), Հունվար, 1956, էջ 43, նույն տեղում, № 11 (393), Նոյեմբեր, 1958, էջ 54-55:*

Մյուս կողմից՝ Դավոյի դավաճանության պատճառով նախկին ռեժիմի՝ հայ հեղափոխականներից խլած զենքն ու զինամթերքը, հեղափոխության հաղթանակից հետո էլ, շարունակում էին մնալ պետական պահեստներում: Երիտթուրք «հեղափոխականների» մտքովն անգամ չէր անցնում դրանք վերադարձնել տերերին՝ սահմանադրությունն իսկ պաշտպանելու համար:

Հայերը տեսնում էին, որ իրենք իրենց մոտ եղած զենքերն արդեն հանձնել էին կառավարությանը, իսկ իշխանությունները Թուրքահայաստանում ոչ միայն չէին զինաթափում իրենց համար տվյալ ժամանակ ամենամեծ վտանգ ներկայացնող քրդերին, այլև հավելյալ զինում էին նրանց ու Թուրք բնակչությանը: Թերթերը գրում էին, թե զենքի վաճառանոցներում այլևս զենք չի մնացել, որ նույնիսկ անարժեք երկաթի կտորները եռապատիկ գներով են վաճառվում: Առևտրական ծանր տագնապի մեջ միակ առևտուրը խոշոր ծավալներ ընդունած զենքի վաճառքն էր: Բազմաթիվ նոր պատվերներ էին ստացել բելգիական և այլ երկրների զենքի ֆաբրիկաները:

Պարզելու համար բոլոր ազգերի ու կրոնների պատկանող խաղաղ բնակիչներին զինաթափելու երիտթուրքերի ազդարարած քաղաքականության անկեղծ թե խաբուսիկ լինելը, ՀՅ դաշնակցության Վանի ղեկավարությունը ձեռնարկեց իրականացնելու մի գործողություն, որի գաղափարը պատկանում էր Ռուբեն Տեր-Մինասյանին:

Ռուբենն առաջարկել էր կառավարությունից հետո պահանջել Դավոյի դավաճանությամբ գրավված զենքերը: Նա լավ գիտեր, որ կառավարությունը մերժելու է այդ պահանջը, բայց, ըստ նրա, այդ քայլը առիթ պիտի լիներ պարզելու երիտթուրքերի արած հայտարարությունների անկեղծությունը: Նա հիշեցնում էր, որ հեղափոխությունից անմիջապես հետո մոտավորապես նույն միտքն է արտահայտել ս. Կարապետ վանքում տեղի ունեցած ՀՅԴ շրջանային ժողովն իր ընդունած որոշման մեջ, որն անմիջապես ուղարկվել է ՀՅ դաշնակցության Վասպուրականի կենտրոնական կոմիտեին, բայց որևէ պատասխան չէր ստացվել: Իր որոշման մեջ, շրջանային ժողովը հույժ կարևորել էր որքան հնարավոր է չուտ պարզել, թե իրենց հայտարարու-

թյուններում որքան անկեղծ են իշխանությունները: Այժմ Ռուբենը հույս ուներ այդ պատասխանն ստանալ Արամ Մանուկյանից: Դիմելով Արամին՝ նա ասում էր. «Արդ, երբ քեզ բանտէն կը հանեն եւ կը յայտարարեն ամէնքին, որ չնորհիւ քեզ եւ քեզպէսներուն է որ հին ռէժիմը տապալուած է, դու զինաթափ չպիտի մնաս եւ քու հաւաքած զէնքերը քեզ պիտի վերադարձուին: Սահմանադրութեան իսկ պաշտպանութեան համար: Եթէ Սահմանադրական կառավարութիւնը վստահի եւ վերադարձնէ, լաւ. եթէ չվերադարձնէ, ուրեմն անվստահելի է եւ մենք ալ տարբերութիւն չպիտի դնենք հին եւ նոր ռէժիմներու միջեւ: Եթէ համաձայն ես, ե՛լ, ես ալ քեզի հետ քու կուսակալիդ, քու Վէհիբիդ այցելութեան գնանք եւ այս պահանջն ալ դնենք: Եթէ համաձայն չես, ես անոնց ո՛չ այցելութիւն տուողն եմ եւ ո՛չ ալ մնաս բարով ըսողը: Իմ գործս լմնցած է»[1]:

Արամը, սակայն ամենայն պատասխանատվությամբ հետևում էր կուսակցության կենտրոնից ստացած հրահանգների կատարմանը: Իսկ կենտրոնն ամեն անգամ խստորեն նախազգուշացնում էր չփչացնել հարաբերությունները երիտթուրքական իշխանությունների հետ: Եթե Իթթիհադի կառավարությունը համաձայնի վերադարձնել գրաված զենքերը և ռազմամթերքը, ասում էր Ռուբենը, այդ դեպքում կարելի է վստահել նրան և շարունակել Իթթիհադի հետ Դաշնակցության գործակցությանը, իսկ եթե հրաժարվի վերադարձնել, նշանակում է՝ հայ հեղափոխականների նկատմամբ երիտթուրքերի չողոմ խոսքերը միայն հայ հեղափոխականներին մոլորեցնելու նպատակ են հետապնդում: Այդ դեպքում ինքը քաշվելու է գործից և վերադառնալու է տուն՝ Կովկաս,- ասել էր Ռուբենը Շամի կենտրոնական կոմիտեի նիստերից մեկում:

Զենքերի հարցում Ռուբենի տեսակետը լիովին պաշտպանում էր Իշխանը: ՀՅԴ Շամի կազմակերպության մյուս ղեկավարները որոշակի կարծիք չէին հայտնում, իսկ Արամը չէր բաժանում Ռուբենի ու Իշխանի հոռետեսական տրամադրու-

---

[1] **«Արամը»**, էջ 418:

թյունները և, ընդհանրապես, սահմանադրական կարգերի նկատմամբ նրանց անվստահությունը: Նա գտնում էր, որ հայ հեղափոխականների երկարատև պայքարը զուր չի անցել, որ այժմ հարկ չկա նոր կարգերի նկատմամբ թշնամական դիրք բռնելու, դրա ժամանակը չէ: «Անհերքելի է,- ասում էր Արամը,- որ զանգուածը այնքան յոգնած, տառապած է, որ երկնքի բարիք կը համարէ այս ընդմիջումը, եւ անոր խանգարողն է իր թշնամին. անհերքելի է, որ մեր հին շարքերը, ազդեցիկներն ալ դադար կ'ուզեն առնել...»[1]: Արամն այն տեսակետն ուներ, որ նոր կարգերի բացասական կողմերը պետք է փորձել չտկել Իթթիհադի հետ սերտ գործակցությամբ՝ նրա քաղաքականության հոռի կողմերի համբերատար, տևական և կառուցողական քննադատության միջոցով: Ելնելով դրանից՝ նա վճռականապես մերժում էր զենքերը հետ վերադարձնելու Ռուբենի առաջարկը, ասելով, թե «զէնքերը պահանջելը ոչ ոք չպիտի արդարացնէ»[2]:

Թեև զինաթափման կարևորագույն խնդրի շուրջ Երկրի դաշնակցական գործիչների միջև միասնություն չկար, բայց նրանց մեծամասնությունը, Արամի գլխավորությամբ, այնուամենայնիվ, պաշտպանում էր կուսակցության կենտրոնի տեսակետը՝ չբարդացնել հարաբերությունները երիտթուրքերի հետ: Բայց այդ քաղաքականության պտուղները շատ դառն էին. Թուրքահայությունն արդեն 1908 թ. վերջերին, փաստորեն, զրկվել էր իրեն պաշտպանելու հիմնական միջոցից. նրա ձեռքին մնացել էին չնչին քանակության զենք ու զինամթերք:

Այն ժամանակ, երբ հեղափոխական Դաշնակցությունը զենքերը հանձնում էր կառավարությանը, այդ նույն ժամանակ հակահեղափոխական պահպանողականները և կղերականները, որոնք երկու տասնամյակ շարունակ հանդես էին գալիս Հնչակի ու Դաշնակցության պայքարի մեթոդների դեմ, այժմ զարմացած էին տեղի ունեցածով:

Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը Սիսից Կ. Պոլսի պատրիարք

---

[1] **«Արամը»**, էջ 420:

[2] Նույն տեղում:

Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանին գրում էր. «Ղուրանի վրայ եղած երդումը դրժողներուն Սահմանադրութեան վրայ ըրած երդումին հաւատալ՝ միամտութիւն է. տարբեր բան մը պէտք է, զոր չեմք կարող կերտել: Համիտիէի և Միսիսի միջև, Ատանայէն հազիւ հինգ ժամ հեռու, անտիոքացի երիտասարդ մը, ուսանող Տարսոնի Գոլէճին, յօշոտուեցաւ: Ապագայն պայծառ չէ. մանաւանդ մեզ համար Արշալոյս և Միջօրեայ վերջալոյս են մոայլ ամպերով ծածկուած: Ժողովուրդը հացի չափ պէտք ունի ինքնապաշտպանութեան միջոցներու ... Եթէ, Աստուած մի՛ արասցէ, սուտ երդուողները խելօք չը կենան եւ ուեւէ մի տեղ հաւաքական շարժում մը ընեն, մենք անձամբ, ինքնապաշտպան խումբին կամ համայնքին գլուխը պիտի անցնինք. լաւագոյն է մի անգամ մեռնիլ, քան շարունակ մահուան արհաւիրքով ապրիլ»[1]:

Եվրոպական միջամտությամբ պարտադրված կապիտուլյացիաների (Capitulations) խնդիրը.– *Հեղափոխությունից հետո Իթթիհադն իր կառավարության ամենակարևոր խնդիրներից մեկը համարեց «կապիտուլյացիաների ռեժիմի» աստիճանական վերացումը:*

Խոսքը վերաբերվում էր այն դաշնագրերին, որոնք եվրոպական զանազան պետություններ՝ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Ռուսաստանը, Պորտուգալիան և Բելգիան, զանազան ժամանակներում կնքել էին Թուրքիայի կառավարության հետ՝ իրենց հպատակների, իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Եվրոպական պետությունները չէին կարող Թուրքիայում ապրող կամ այդտեղ առևտրական և արդյունաբերական գործեր ունեցող իրենց հպատակների ու նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության գործը թողնել թուրքական վարչական և այլ ատյաններին, որոնց համար գոյություն չունեին ո՛չ օրենք, ո՛չ արդարություն, այլ բացառապես սուլթանների, մեծ վեզիրների, շեյխ-ուլ-իսլամների կամքը և հրամանը կամ թուրքական

---

[1] *Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, թղթ. 11, վավ. 190:*

դատարաններին, որոնք ղեկավարվում էին բացառապես իսլամի սրբազան օրենքով՝ շարիաթով, որը հիմնված էր «Ղուրանի», «Հադիսների»* և «Սուննայի»** վրա:

Իսլամական կրոնն իր մեջ ներքին բաժանումներ ուներ: Իսլամի ամեն մի բաղադրիչը, հենվելով շարիաթի օրենքի վրա, իր ձևով էր մեկնաբանում նրա առանձին դրույթները: Իսկ այդ բաղադրիչները բազմազան էին:

Իսլամի երկու հանրահայտ մեծ հատվածները՝ սուննի և շիա դավանանքները, իրենց ներսում ունեին (և ունեն) զանազան հերձվածներ: Այսպես՝ սուննիները բաժանված էին հանեֆի (օսմանյան Թուրքեր), շաֆիի (եգիպտացիներ), մալեքի (Ալժիրի, Թունիսի և Տրիպոլիսի արաբներ) և հանբալի (զանազան երկրների մուսուլմաններ) դավանությունների: Շիա մահմեդականները հիմնականում պարսիկներն էին, Իրաքի հարավի և Լիբանանի հարավի արաբների մեծ մասը և Հնդկաստանի արևելյան շրջանների բնակիչների մի մասը, որոնք նույնպես բաժանված էին տարբեր հերձվածների: Թեև բոլոր մուսուլմանական հերձվածները խարսխված էին իսլամի վարդապետության ընդհանուր սկզբունքների վրա, բայց զանազանվում էին Ղուրանի մեկնաբանությամբ և տարբեր արարողություններով: Դրանք բոլորը նույնպիսի կրոնական հակակրանք էին տածում միմյանց նկատմամբ, ինչպես քրիստոնեական տարբեր դավանություններն ու հերձվածները՝ իրար հանդեպ[1]:

Այս հերձվածներից ամեն մեկն ուներ շարիաթի իր չերիները (դատարանները), որոնք նույն մեղքի համար իրարից տարբեր պատիժների էին ենթարկում մեղադրյալներին, նայած թե շարիաթի տվյալ դատը իսլամի ո՛ր հատվածի կամ հերձվածի տիրույթում էր տեղի ունենում:

Պարզ է, որ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող

---

* Մուհամմեդ մարգարեի խոսքերն ու գործերն ավանդող գրքեր:

** Առաջին չորս խալիֆների մեկնություններն ու վճիռները:

[1] Տե՛ս **Սարուխան,** Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860–1910), հատ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 99-ի տողատակը:

կամ այնտեղ ժամանակավորապես ծառայության անցած եվրոպացին եթե թույլ էր տվել որևէ հանցանք, մտքով անգամ չէր կարող անցկացնել, թե իրեն դատելու են չերիի դատարանում, շարիաթի օրենքով:

Մի երկիր, ուր չկար հաստատուն, որոշակի քաղաքացիական օրենք, ուր թագավորում էր սուլթանների ու փաշաների կամայականությունը, ուր ոչ մուսուլմանը չարունակվում էր անհավատ կամ քյաֆիր նկատվել և նրա վկայությունը չուներ հետին գռեհիկ ու կիսավայրենի մուսուլմանի վկայության ուժն ու արժեքը, անկարելի էր մի այդպիսի երկրի դատարանին թողնել քրիստոնյա եվրոպացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Եվ ահա, եվրոպական ամեն մի պետություն, որ հպատակներ և շահեր ուներ Թուրքիայում, աշխատում էր այնպիսի պայմաններ ստեղծել նրանց համար, որ նրանք չվտանգվեին և զերծ մնային Թուրքական կամայականությունից և հարստահարումից: Եվ նա կնքում էր դաշնագիր կամ կապիտուլյացիա, որի հիման վրա այդ պետության հպատակները պետք է դատվեին իրենց հյուպատոսական դատարաններում: Իսկ եթե դատը խառն էր, այսինքն՝ Թուրքահպատակի և եվրոպացու միջև էր, ապա հարցը քննվում էր օսմանյան դատարաններում, բայց անպայման եվրոպական տվյալ երկրի հյուպատոսարանի ներկայացուցչի մասնակցությամբ:

Կապիտուլյացիաների իրավունքը հաստատված էր թե՛ ավանդության և թե՛ միջազգային համաձայնագրերի վրա: Օրինակ՝ ֆրանսիացիների կապիտուլյացիաները հիմնված էին 1802 թ. Փարիզի դաշնագրի, 1878 թ. Բեռլինի դաշնագրի և 1901 թ. ֆրանքևթուրք համաձայնագրի վրա: Տեղեկանալով, որ երիտթուրքերը փորձում են ոտնձգություններ կատարել ֆրանսիացիների կապիտուլյացիաների հանդեպ, Ֆրանսիայի Ազգային ժողովի 1909 թ. ապրիլին տեղի ունեցած նիստերից մեկում արտգործնախարար Ստեֆան Պիչոնն իր ելույթում ասել էր. «Թուրքիան պարտաւոր է պահպանել ֆրանսիական հարիւրաւոր հաստատութիւնները, ապահովել այդտեղի մեր դրամատան գերակշիռ դերը, երաշխաւորել մեր առանձնաշնորհեալ դիրքը,

մեր մարդասիրական եւ քաղաքական շահերը: Վստահեցնում եմ ձեզ, որ մեր այս վճռականութեան մէջ երբեք չենք թուլանալու»[1]:

Կապիտուլյացիաները օսմանյան կառավարությունների կողմից օտարերկրյա քաղաքացիներին էին տրվում նաև այն փոխառությունների դիմաց, որ Թուրքիան ստանում էր եվրոպական տերություններից՝ թուրքական խարխուլ կայսրությունը կործանումից փրկելու համար:

Նշենք, որ եվրոպական կապիտուլյացիաների դիմաց օսմանյան հպատակները չէին վայելում նույն իրավունքները եվրոպական երկրներում, ուր դատարաններն անկախ էին ու արդար, ղեկավարվում էին որոշակի օրենքներով:

Այժմ, երբ Թուրքիայում հրատարակվել էր սահմանադրություն և նոր Թուրքիան համարում էր, որ ինքը իր ազատությամբ եվրոպական պետությունների ընտանիքի անդամ է, իր ինքնասիրության համար նա վիրավորական էր գտնում կապիտուլյացիաների հետագա գոյությունը[2]: Բարձր Դուռը պահանջում էր վերացնել այդ դաշնագրերը և օտար հպատակների համար հաստատել նույն կարգը, որ հաստատված է եվրոպական բոլոր երկրներում, այսինքն՝ որ նրանց դատավարությունները կատարվեն և քաղաքացիական ու քրեական գործերը քննվեն ու լուծվեն օսմանյան դատարաններում՝ առանց հյուպատոսական ներկայացուցիչների մասնակցության: Մի խոսքով, երիտասարդ Թուրքերի կառավարությունը պահանջում էր, որ օտարահպատակները Թուրքիայում այլևս բացառիկ իրավունքներ չվայելեն, այլ ենթարկվեն բոլոր այն օրենքներին, որոնք սահմանված են օսմանյան հպատակների համար:

Բայց եվրոպական պետությունները, նույնիսկ բարյացակամ Գերմանիան, դժվարանում էին և դեռ չէին վստահում կատարել այդ քայլը, այն է՝ ջնջել կապիտուլյացիաները: Նրանք իրավունք ունեին չվստահելու թուրքական դատարաններին, քանի որ

---

[1] **Յակոբ Յ. Թէրզեան**, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 646:

[2] Տե՛ս **«Ազգ»**, № 72, 12 սեպտեմբերի 1908 թ.:

Թուրքիան, իրեն հռչակելով սահմանադրական և խորհրդարանական երկիր, ըստ էության մնացել էր նախկին աստվածապետական պետությունը, դեռ չէր վերացել շարիաթը, որի օրենքները դեռ գործադրության մեջ էին. դեռ շեյխ-ուլ-իսլամն էր համարվում օրենքների մեկնաբանողը և դատական գերագույն ատյանը: Երկրի վարք ու բարքի, կարգերի, ազգաբնակչության հասկացողությունների և ըմբռնումների մեջ դեռ չէր ամրացել ու արմատացել սահմանադրական ռեժիմը:

Եվ, վերջապես, Թուրքիան, ինչպես ցույց էր տվել նրա ողջ պատմությունը, անակնկալների աշխարհ էր: Դեռ հարկավոր էին մի քանի տարիներ, որպեսզի կարելի լիներ վերջնականապես ասել, որ Թուրքիան որքան իրավունք ունի կոչվելու սահմանադրական և խորհրդարանական երկիր:

Այդպիսի հանգամանքներում ջնջել, վերացնել կապիտուլյացիաները՝ կնշանակեր մեծ վտանգի ենթարկել միլիոնավոր ոչ մուսուլման և օտար հպատակների իրավունքներն ու շահերը: Ուստի եվրոպական պետությունների կողմից խոհեմություն էր չչտապել և առժամանակ մերժել Թուրքիայի պահանջը:

Ի՞նչ պետք է անեին հայերը և ի՞նչ դիրք պետք է բռնեին նրանք այդ պարագայում: Պետք է մեկընդմիշտ հրաժարվեի՞ն այն իրավունքներից, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը տալիս էր իրենց, որ ամբողջ հայության համար արյան գետեր ու լճեր էր նշանակում, թե՞ երիտթուրքերից ու մեծ տերություններից պետք է խնդրեին պահպանել այդ հոդվածը, որը Եվրոպայի քաղաքական աշխարհի համար ճիշտ նույնքան գին ուներ, որքան կարող էր ունենալ մեռած տառը: Բայց նույնիսկ այդ մեռած տառն էլ Իթթիհադն ուզում էր քերել ու խպառ անհետացնել: Առայժմ հայերը ոչինչ անելու ի վիճակի չէին: Շատերն արդեն համոզվել էին, որ Հայկական հարցը այլևս չի արծարծվի այնքան ժամանակ, մինչև որ միջազգային ասպարեզում առաջ չգան նոր, սասանող դեպքեր:

Հայկական հարցն ըստ էության թողնվում էր ճակատագրի տնօրինությանը:

ՍԱԲԱՀԷԴԴԻՆԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ԸՆԴԴԵՄ ԻԹԹԻՀԱԴԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ

Կ. Պոլիս ժամանած իշխան Մեհմեդ Սաբահէդդինը հենց առաջին պահից մեծ դժվարությունների հանդիպեց: Մայրաքաղաքի համարյա բոլոր թուրքական թերթերը կարճ ժամկետում դարձել էին իթթիհադական ուղղության: Իր գաղափարները տարածելու և դրանք Իթթիհադի ծրագրերին հակադարձելու համար Սաբահէդդինը փաստորեն զրկված էր ամենաազդեցիկ միջոցից՝ մամուլից: Նման պայմաններում իր «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնություն» կուսակցության ծրագրերը ժողովրդին հասցնելու միակ միջոցը Սաբահէդդինի և նրա կուսակիցների համար մնացել էին կենդանի շփումները բնակչության տարբեր խավերի և անձնական հանդիպումները քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների հետ:

Սաբահէդդինը ոչ քիչ կողմնակիցներ ուներ թուրք մտավորականության մեջ և բանակի ցածր ու միջին սպայակազմում, որոնք, սակայն, չունենալով իշխանական լծակներ, չունեին նաև ժողովրդական լայն զանգվածների վրա ներազդելու միջոցներ:

Իթթիհադի դեմ գաղափարական քաղաքական պայքար մղելու համար Սաբահէդդինն իր հույսը կապում էր նաև ազգային, այդ թվում նաև քրիստոնյա, փոքրամասնությունների, հատկապես հույների և հայերի, մասամբ էլ բուլղարների հետ: Պատահական չէ, որ Կ. Պոլիս ժամանելուց շատ չանցած, նա այցելություն տվեց հունաց Իոակիմ III պատրիարքին, հայոց նախկին պատրիարք Իզմիրլյանին, հրեաների խախամբաշի (մեծ բարբի) Նահումին: Սրանք, իրենց հերթին, հանձին այդ թուրք առաջավոր խոշոր գործչի, տեսնում էին սեփական ազգային գործերը վարելուն եռանդուն աջակցողի, կայսրության կազմում ինքնիշխան ապրելու իրենց իղձերի արտահայտչի[1]*:*

Իշխան Սաբահէդդինը հատկապես արտակարգ ջերմ հարաբերություններ էր պահպանում հայերի հետ:

---

[1] *Տե՛ս* ***«Հովիւ»****, № 43, 16 նոյեմբերի 1909 թ., էջ 677:*

1908 թ. օգոստոսի 27-ին իշխանը, իր հետ ունենալով «Թուրքական առաջադիմական միություն» կազմակերպության մի քանի անդամների, եկավ հայոց պատրիարքարան՝ այցելություն տալով տեղապահ Եղիշե եպս. Դուրյանին: Դիմելով սրբազանին՝ նա ասաց. «... Հայ ժողովրդի կողմից իմ նկատմամբ արտայայտած համակրական զգացումները ... ինձ պարտաւորեցնում են անձամբ այստեղ յայտնել իմ շնորհակալութիւնները: Ընդհանուր Թուրքիայի համար սկսած երջանկութեան եւ բարօրութեան այս թուականը մեծ նշանակութիւն եւ կարևորութիւն ունի հայոց համար նոյնպէս, որոնց կրած զրկանքներն ու ճնշումները ծանօթ են մեզ: Բայց ազատութեան բարիքներն առիթ պիտի լինեն մոռանալու անցեալը: Հայ ժողովուրդն իր ուշիմութեամբ եւ կարողութեամբ պիտի օգտուի ազատութեան եւ արդարութեան սկզբունքներից: Բաղձալի է, որ երկրի ժողովրդի մէջ տիրող այս սէրը եւ համերաշխութիւնը լինեն տեւական՝ յօգուտ մեր սիրելի հայրենիքի, որի զարգացումն ու բարգաւաճումը մեր ամէնքիս նպատակն է»[1]*:*

Առաջին շրջանում Սաբահէդդինն ու նրա կողմնակիցներն սկսեցին բանավոր լայն քարոզչություն Կ. Պոլսում, Մակեդոնիայում, Իզմիրում, ինչպես նաև Իթթիհադի միջնաբերդում՝ Սալոնիկում: Ո՞րն էր այդ քարոզչության բովանդակությունը, որո՞նք էին Սաբահէդդինի տեսական-քաղաքական գաղափարները և հիմնակովանները:

Սաբահէդդինի և նրա կուսակցության ծրագրային գլխավոր հիմնադրույթը ***ապակենտրոնացման*** *պահանջն էր, որն ուղղակիորեն հակադրված էր Իթթիհադի և նրա կառավարության գլխավոր նպատակին՝ քաղաքական ու վարչակառավարման դաշտի ծայրահեղ* ***կենտրոնացմանը****: Առաջադրվում էր նաև* ***անհատական նախաձեռնության*** *պահանջը՝ որպես ապակենտրոնացման անմիջական հետևանք: Այդ երկու գլխավոր սկզբունքներն ամրագրված էին կուսակցության՝ «Ապակենտրոնացման, անձնական նախաձեռնության և սահմանադրության լիգա»*

---

[1] ***«Գործ»*** *(Թիֆլիս), № 3, 13 սեպտեմբերի 1908 թ.:*

պաշտոնական անվան մեջ:

Կ. Պոլիս վերադառնալուց հետո Սաբահէդդինն առաջին անգամ հանդես եկավ 1908 թ. սեպտեմբերի 3-ին, Բերայում, "Variété"(«Վարիեթե») թատրոնի դահլիճում: Ներկա էին Թուրքեր, հույներ, հայեր: Ունկնդիրների ստվար մասը բաղկացած էր զինվորականներից, պաշտոնյաներից, խմբագիրներից, գրողներից, փաստաբաններից, մի խոսքով՝ մտավորական, ազատ ասպարեզի հետևող անձերից:

Սաբահէդդինը հանդես եկավ «Անհատական նախաձեռնության և ապակենտրոնացման մասին» վերնագրով մեկժամյա բանախոսությամբ:

Նշելով, որ կա ապակենտրոնացման երկու ձև՝ ***քաղաքական*** *և* ***վարչական,*** *բանախոսը շեշտադրեց, որ իր պաշտպանած գաղափարը քաղաքական ապակենտրոնացման որևէ տարր չի պարունակում: «Կայսրության նահանգներից որևէ մեկը չի կարող ձգտել ինքնիշխանության, անջատման, անկախության»,- ասում էր նա: Սաբահէդդինը շեշտում էր, որ Օսմանյան կայսրությունը* ***մի*** *է և* ***ամբողջական****, բայց նրա զանազան մասերը, ենթարկվելով պետական ընդհանուր օրենքներին, պետք է վարեն իրենց տեղական գործերը՝ նահանգական ժողովների միջոցով: Նա պաշտպանում էր այն միտքը, որ կայսրության նահանգներն ու գավառները պետք է իրենց վարչական գործերը տնօրինեն առանց կենտրոնից հրահանգներ ու կարգադրություններ սպասելու: Բանախոսը խորին համոզմունքով ընդգծում էր, որ վարչական ապակենտրոնացումը մեծապես զարկ կտա անհատական նախաձեռնությանը և ձեռներեցությանը ամբողջ կայսրության մեջ:*

Իր խոսքում իշխանը նշում էր.

«Մեր առաջարկուող ապակենտրոնացման սիստեմը նորութիւն չէ, այն արդէն կայ մեր սահմանադրութեան մէջ: Դա ուրիշ բան չէ, եթէ ոչ Միդհատ փաշայի պատրաստած սահմանադրութեան 108-րդ յօդուածում յիշատակուած գաւառների «իրաւասութեան ընդարձակման» տրամադրութիւնը: Այդ յօդուածում ասուած էր, որ գաւառներում գոյութիւն պիտի ունենան նաեւ Ընդհանուր ժողովներ, որոնց պաշտօնը պիտի լինի գործել

աւելի ընդարձակ իրաւասութեամբ»[1]:

Ճիշտ է, որ Միդհատյան սահմանադրության մեջ կար մի այդպիսի հոդված, բայց դա բանաձևված էր ընդհանուր, տարտամ խոսքերով: Ահա թե ինչո՛ւ իշխանը գտնում էր, որ գավառների «իրավասության ընդարձակման» մասին պետք է լինեն մանրամասն օրենքներ, որոնք պիտի մշակեր խորհրդարանը: Նախորդ խորհրդարանն այդ աշխատանքը չի կատարել կամ ժամանակ չի ունեցել կատարելու, ասում էր նա, բայց հարցը մնում է բաց. նոր խորհրդարանը կկատարի՞ այդ աշխատանքը և հետո՝ ի՞նչ բովանդակություն կդնի նրա մեջ – ահա ա՛յս է գլխավորը:

Իր առաջ քաշած տեսակետը լսարանին ավելի համոզիչ դարձնելու համար Սաբահէդդինը հիշեցնում էր, որ ժամանակին զանազան նահանգներում կուսակալի պաշտոն կատարելիս Միդհատ փաշան աշխատել է իրագործել ապակենտրոնացման սկզբունքը՝ բարեկարգելով նահանգների վարչական գործերը:

Սաբահէդդինի զեկուցումը բազմիցս ընդհատվում էր ծափահարություններով:

Ոգևորությունը մեծ էր հատկապես հայերի և հույների մոտ: Նկատելի էր, որ ներկաները որոտընդոստ ծափահարում էին այն ժամանակ, երբ ճառախոսը հարձակվում էր հին ռեժիմի վրա կամ երբ հայտարարում էր, թե իր պաշտպանած սկզբունքի մեջ անջատողական որևէ ձգտում չկա՝ կտրականապես մերժում է ոչ միայն անջատվելու որևէ փորձ, այլև այդ մասին որևէ արտահայտություն:

Իսկ ծափերի մի իսկական փոթորիկ բարձրացավ, երբ իշխանն արտասանեց հետևյալ խոսքերը: «Ապակենտրոնացումը նշանակում է ոչ թե անկախություն, այլ քաղաքական միություն և մի դրոշի տակ մի մեծ ամբողջության կազմություն»[2]:

Այլ խոսքով՝ ապակենտրոնացումը Սաբահէդդինը հասկանում էր վարչական ապակենտրոնացման, այլ ոչ թե ինքնավա-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 223, 10 հոկտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

րության իմաստով, վարչական (administration) և անձնական (personel), այլ ոչ թե հողային, տարածքային (territorial) ինքնավարություն:

Սաբահէդդինի կուսակցությունը պահանջում էր օսմանյան պետությունը բաժանել 8 երկրամասերի (Փոքր Ասիա, Հայաստան, Միջագետք, Սիրիա, Արաբիա, Մակեդոնիա, Ալբանիա, Տրիպոլի), որոնք պիտի ունենային իրենց ներքին ինքնավար կյանքը, իսկ նրանց միությունը պիտի կազմեր օսմանյան պետությունը[1]:

Լինելով ապակենտրոնացման հետևողական կողմնակից՝ Սաբահէդդինը դեմ չէր, որ առանձին քրիստոնյա ազգություններ «վայելում են» որոշ «արտոնություններ», այսինքն՝ այն սահմանափակ հնարավորությունները, որոնցով քրիստոնյաներն որոշ ինքնուրույնություն ունեին իրենց կրոնական-դպրոցական գործերում: Այդ այսպես կոչված առանձին «արտոնությունները» նրանք ձեռք էին բերել տասնամյակների պայքարով ու Եվրոպայի միջամտությամբ: Բայց դրանք միայն ***իրավունքներ*** *էին, այլ ոչ թե* ***արտոնություններ****: Սաբահէդդինը հաշտ աչքով էր նայում այդ իրավունքների՝ հույների և հայերի պատրիարքների, բողոքականների ազգապետի, բուլղարների միտրոպոլիտի, ազգային վարչությունների, հետևապես և՝ հայոց Ազգային ժողովի վրա:*

Սաբահէդդինի գաղափարները, ցավոք, մուտք չգործեցին Թուրքական հասարակության լայն շերտեր, ինչպես դա տեղի ունեցավ Իթթիհադի պարագայում: «Այս հրաշալի ծրագիրը,- գրում էր Հրաչյա Աճառյանը,- որ թէ՛ հայերի եւ թէ՛ մնացեալ հպատակ ժողովուրդների իդեալն էր, դժբախտաբար չընդունուեց Թուրք ժողովրդի մեծամասնութեան կողմից: Կուսակցութիւնը սակաւաթիւ հետեւորդներ միայն ունեցաւ...»[2]:

Ռուսական "Речь" («Ռեչ») թերթի թղթակից Լ. Նեմյանովի

---

[1] *Տե՛ս* ***Հրաչեայ Աճառեան****, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 62:*

[2] *Նույն տեղում:*

այն հարցին, թե «արդեօք կողմնակիցներ չա՞տ ունէք Թուրքերի շրջանում», Սաբահէդդինն անկեղծորեն պատասխանել էր. «[Մեր] լիգան իր մէջ է ընդունում կողմնակիցներ բացառապէս մտաւորականներից, որոնք մեզ միանում են ոչ թէ յայտարարութիւններով, այլ խոր համոզմունքով: Այդ իսկ պատճառով մենք մեծ թուով կողմնակիցներ ունենալ չենք կարող»[1]:

Իթթիհադը և նրա կառավարությունը, ինչ խոսք, հիացած չէին իշխան Սաբահէդդինի ելույթներով ու հանդիպումներով, բացասական գնահատական էին տալիս դրանց: Իթթիհադի սրտովը չէր հատկապես այն, որ Սաբահէդդինը մեծ հեղինակություն և հարգանք էր վայելում ազգային փոքրամասնությունների շրջանում:

Քննադատելով ապակենտրոնացման մասին Սաբահէդդինի պահանջը, իթթիհադական գործիչներից մեկն ասում էր.

«Սաբահէդդինը գործի մարդ չէ: Նա միայն թղթի յեղափոխական է: Ինչպէս ձեզ յայտնի է, նա պահանջում է ապակենտրոնացում: Բայց կարելի՞ է արդեօք գործադրել նրա ծրագիրը Փոքր Ասիայում: Ապակենտրոնացումը հասկանալի կլինէր մի զարգացած, քաղաքակիրթ երկրում. բայց դուք գնացէ՛ք եւ իրենց մեծամասնութիւն կազմած տեղերում քրդերին յանձնեցէ՛ք երկրի վարչութեան դեկը: Նախքան ապակենտրոնացումը մենք դեռ շատ հիմնական, շատ կարեւոր փոփոխութիւններ ունենք կատարելու մեր ասիական նահանգներում: Եւ յետոյ [Թուրք] ժողովուրդն էլ սաստիկ տագնապում է այդ «ապակենտրոնացում» բառից, կարծելով, թէ դա նշանակում է անջատում, բաժանում»[2]:

Քրդերի մասին իթթիհադականների արտահայտած տեսակետը թերևս հիմք ուներ, քանի որ այդ ժողովրդի զանգվածները դեռևս գտնվում էին զարգացման շատ ցածր աստիճանի վրա, բայց բանն այն էր, որ այդ օրինակը նրանք ըստ էության տարածում էին բոլոր ազգային փոքրամասնությունների վրա:

---

[1] **«Մշակ»**, № 210, 25 սեպտեմբերի 1908 թ.:

[2] Նույն տեղում, № 216, 2 հոկտեմբերի 1908 թ.:

ԽԺԴԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ: ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ

Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հայկական միջավայրում սկսվեց մեկը մյուսի նկատմամբ ծանր մեղադրանքների հարուցումը: Կ. Պոլսի հայ հասարակությունը բաժանվեց երկու մասի: Հեղափոխությամբ առավել հրապուրվածները մեղադրում էին նախկին ռեժիմի «պաշտպաններին»:

Նկատենք, որ նույն երևույթը առկա էր նաև քրիստոնեական մյուս համայնքներում և հրեաների մոտ: Քանի որ սեփական պետականություն չունեցող, կայսրության սահմաններում բռնափակված ժողովուրդներն ազգային գերագույն իշխանություն էին համարում իրենց կրոնապետերին, որոնք անմիջական կապերի մեջ էին եղել հին ռեժիմի իշխանությունների հետ, իրենց համայնքներին հուզող կարևորագույն խնդիրների առնչությամբ մշտապես ստացել էին Բարձր Դռան, երբեմն էլ անձամբ սուլթան Աբդուլ Համիդի հավանությունը կամ մերժումը, ուստի հեղափոխությունից հետո նրանք իրենց հարանվանություններում հարված թիրախ դարձան առաջին հերթին:

Հոգևոր ղեկավարներին փոխելու ձգտումը վարակել էր տեղական կրոնական բոլոր համայնքներին: Հույները պահանջում էին Իոակիմ III պատրիարքի հրաժարականը: Հայ կաթոլիկները հանդես էին գալիս իրենց Պողոս-Պետրոս ԺԲ Սաբբաղյան պատրիարքի դեմ: Հրեաները պաշտոնազուրկ արեցին իրենց մեծ բաբիին՝ Մոչե (Մովսես) Լևիին: Իսկ հայերը, հեղափոխության հաղթանակի հաջորդ օրն իսկ, ստիպեցին հրաժարական տալ Մաղաքիա Օրմանյան պատրիարքին:

Նրա անձնական հակառակորդները գործի անցան՝ պատժելու «հին ռեժիմի մեծ կուռքին»: Թեև հուլիսի 14-ին պատրիարքն այցելել էր կառավարության նախագահներ Սաիդ, ապա Քյամիլ փաշաներին՝ նրանց չնորհավորելով սահմանադրության վերականգնման առթիվ, և Բարձր Դռան կողմից արժանացել էր հավուր պատշաճի ընդունելության, բայց դա նրան չփրկեց յուրայիններից այպանվելուց և հրաժարականի պահանջից:

Պատրիարքն սկզբում հանգիստ էր ընդունում պաշտոնաթողության պահանջը, գտնելով, որ «...կացութեան փոփոխուելովը հին կացութեան մէջ գործունեայ դեր վարողները պէտք է նոր կացութեան մէջ քաշուէին»[1]:

Օրմանյանի դեմ պայքարում միավորվել էին բոլոր հայ հեղափոխականները և, առաջին հերթին, միմյանց չհանդուրժող հայկական քաղաքական երկու խոշոր կուսակցությունների անդամները՝ Իթթիհադի պաշտպան դաշնակցականները և նույն Իթթիհադի հակառակորդ հնչակյանները, որոնք Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարքին առաջադրում էին քաղաքական և նույնիսկ քրեական բնույթի մեղադրանքներ: Դրանցից գլխավորներն էին.

Ա) Օրմանյանը միշտ լավ հարաբերությունների մեջ է եղել սուլթան Աբդուլ Համիդի հետ, ստրկամտորեն ու անթերի կատարել է հայ հեղափոխականների դեմ ուղղված նրա բոլոր դրակոնական հրամանները, դրանով իսկ մշտապես խոչընդոտել հայ ազատագրական պայքարին:

Բ) Միշտ քննադատել է սուլթանի դեմ երիտթուրքերի ծավալած գործունեությունը վերջիններիս տարագրության տարիներին: Այդ մեղադրանքով Իթթիհադի առջև ցուցադրաբար հանդես էր գալիս Դաշնակցությունը: Հնչակյանները, բնականաբար, այդ հարցում պատրիարքին մեղավոր չէին ճանաչում, քանի որ նրանք Իթթիհադի հետևողական հակառակորդներ էին: Նշենք, որ իրենք՝ իթթիհադականները, Օրմանյանից որևէ պահանջ չունեին, նրան անգամ չէին նախատում Աբդուլ Համիդի հետ ունեցած գործակցության համար:

Գ) Օրմանյանը պատրիարքարանի բյուջեից յուրացրել (կամ վատնել) է 40000 օսմանյան ոսկի: Այդ մեղադրանքն առաջ էին քաշել մի քանի երևելի ազգայիններ, և դա անմիջապես արժանացել էր հնչակյանների ու դաշնակցականների պաշտպանությանը:

Անշուշտ, Օրմանյանին ներկայացվող ***քաղաքական*** *և քրեական մեղադրանքներն արտաքնապես կարծես հիմնավորված են,*

---

[1] ***Մաղաքիա արք. Օրմանեան,*** *Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5809:*

եթե նրա գործունեությունը քննության ենք առնում զուտ հայկական հեղափոխական կուսակցությունների տեսանկյունից: Բայց խնդրին այդպես մոտենալու պարագային հաղիվ թե հնարավոր լինի լիովին բացահայտել Օրմանյանի երևույթը: Նրան «հայ ազգի դավաճան» պիտակավորելն սկզբունքորեն մերժելի էր նույնիսկ այն օրերին, քանզի իր, որպես պատրիարքի, գործունեությունը ժամանակակիցների համար անսովոր էր եղել, չէր համապատասխանել այն ավանդույթին, որ սկզբնավորել էին Կ. Պոլսի հայոց նախորդ երկու պատրիարքները՝ Խրիմյանն ու Իզմիրլյանը՝ հեղափոխական գաղափարների հետ իրենց հոգեհարազատությամբ:

Ի՞նչ գաղափարներ էր սնուցանել և իրականացրել Օրմանյան պատրիարքը, որի հետևանքով այնքան շատ հակառակորդներ էր վաստակել:

***Առաջին**, Օրմանյանը պահպանողական էր բառիս իսկական իմաստով: Նրա պահպանողականությունը թելադրված էր Արևելյան եկեղեցիների վաղ միջնադարյան ավանդապաշտական դոգմաներից, որոնցից մեծապես հեռացել էր իր ժամանակաշրջանի հայոց եկեղեցական մտածողությունը: Նա վճռականորեն դեմ էր Հայաստանյայց եկեղեցու ներսում գոյություն ունեցող ժողովրդավարությանը, որով այդ եկեղեցին տարբերվում էր քրիստոնեական մյուս եկեղեցիներից, այսինքն՝ մերժում էր ժողովրդի միջամտությունը հոգևորականության գործերին, կողմնակից էր Հայ առաքելական եկեղեցու ծայրահեղ կղերականացմանը:*

Դեռ Կ. Պոլսի պատրիարք ընտրվելուց շատ առաջ, 1886 թ. Էջմիածնում լույս ընծայած իր «Աթոռ Հայաստանեայց» վարչական դավանագրքում հանդես գալով Հայ եկեղեցու որդեգրած ընտրողական սկզբունքի դեմ, Օրմանյանն այն տեսակետն էր զարգացնում, թե ժողովուրդը չպետք է միջամտի եկեղեցու գործերին, առավել ևս՝ չպետք է լինի նրա տերն ու տնօրենը, այլ պետք է բավարարվի այնքանով, որ իրեն ղեկավարում է եկեղեցին: Հայոց եկեղեցու նվիրապետություն ասելով Օրմանյանն ընդունում և հասկանում էր միայն եկեղեցու հոգևորականությունը, բայց ոչ ամբողջը: Նա համարում էր, որ այդ հոգևորակա-

նության ստորին դասը՝ վարդապետները, քահանաները, սարկավագները, քիչ թե շատ ինքնուրույն պաշտոններ վարելու իրավունք չպիտի ունենան: Այդ իրավունքը պիտի ունենա միայն հոգևորականության բարձրաստիճան դասը՝ եպիսկոպոսները, պատրիարքները, կաթողիկոսը: «Մայր Աթոռոյ պատիւն ու ծառայութիւնը... կը պահանջեն, որ թեմական չի լինելով եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունեցող եկեղեցականներ գտնուին մեծ կաթուղիկոսին և մասնաւոր կաթուղիկոսաց եւ փոքր պատրիարքաց օգնական իբր Դրան եպիսկոպոսունք»[1],- գրում էր նա:

Իր գահակալության ամբողջ ժամանակաշրջանում Օրմանյանը փորձում էր Հայ եկեղեցու կյանքում ներդնել իր տեսակետները՝ ամեն կերպ բարձրացնել վերին հոգևորականության դերն ու նշանակությունը, նրա հեղինակությունը, որքան հնարավոր է եկեղեցու գործերից հեռու պահել դեմոսին, կծկել, սեղմել ընտրողական սկզբունքը եկեղեցու գործերում: Եվ դա նրան հաջողվում էր մանավանդ այն պատճառով, որ Աբդուլ Համիդն իր կառավարման տարիներին փաստորեն ի չիք էր դարձրել «Ազգային սահմանադրությունը հայոց»:

***Երկրորդ,** լինելով ծայրահեղ պահպանողական և ամեն տեսակ հեղափոխությունների համոզված հակառակորդ՝ Օրմանյանը նաև հույժ բացասաբար էր արտահայտվում երիտթուրքերի հեղափոխության մասին, ասելով.*

«Ես հաւատում եմ սահմանադրութեանը, բայց չեմ հաւատում ներկայ շարժման տեւողութեանը: Դա յարդի կրակ է: Աւելորդ շատ են խօսում եղբայրասիրութեան մասին: Զպէտք է սակայն մոռանալ, որ հայերը ունեն սեփական սահմանադրութիւն եւ առանձին աւանդոյթներ: Մենք կարող ենք ընդունել, որ ծառայենք օսմանեան զօրքի մէջ, բայց մեզ հարկաւոր են գրաւականներ մեր կրօնական արտօնութիւնների համար»[2]:

Ավելին, երիտթուրքական հեղաշրջումից ընդամենը հինգ օր հետո, նա հայտարարել էր, թե Իթթիհադի իշխանությունը շատ

---

[1] ***Մաղաքիա եպս. Օրմանեան,*** *Աթոռ Հայաստանեայց, Էջմիածին, 1886, էջ 76:*

[2] ***«Մշակ»,*** *№ 163, 29 հուլիսի 1908 թ.:*

ավելի վատն է լինելու, քան եղել է սուլթանի իշխանապետությունը, և հայոց Ազգային ժողովից պահանջել էր հայ ազգի անունից չնորհակալություն հայտնել Աբդուլ Համիդին, բայց Ազգային ժողովը խիստ ընդդիմացել էր նրա առաջարկին:

***Երրորդ**, մինչև Օրմանյանի աթոռակալելը Կ. Պոլսի հայ պատրիարքները հազիվ էին երևում հանդեսներում, խուսափում էին ներկա լինել ժողովրդական արարողություններին: Բայց Օրմանյանը նախագահում էր ամեն հանդեսի, երբեք չէր հրաժարվում պատարագել, հաճախ էր մասնակցում թաղումների: Լինելով վերին աստիճանի աշխատասեր՝ նա, առանց հոգնելու, իր վրա էր վերցրել պատրիարքարանի ծանր հոգսերը, անձամբ ուղղություն էր տալիս բոլոր գործերին: Պատրիարքարանից որևէ գրություն դուրս չէր գալիս, մինչև ինքը կանխավ չսրբագրեր և չստորագրեր: Անչափ եռանդուն ու գործունյա պատրիարքն իր նկատմամբ լինելով շատ պահանջկոտ՝ նույնը պահանջում էր նաև շրջապատի բարձրաստիճան հոգևորականներից, վերահսկում նրանց գործունեությունը, լծում աշխատանքի, մշտապես հորդորում կարդալ և հարստացնել գիտելիքները: Բայց վերջիններիս խորթ էր լարված աշխատանքը, երբեք իրենց նեղություն չէին տալիս, քանզի սովոր էին հանգստության և անհոգ կյանքի: Այդ ամենն առաջ էր բերել պատրիարքի նկատմամբ բարձրաստիճան կղերի խոր դժգոհությունը և բացահայտ թշնամանքը, որոնք մակերես ելան երիտթուրքերի՝ սահմանադրական «ազատություններն» ազդարարելուց անմիջապես հետո:*

***Չորրորդ**, Իզմիրլյան պատրիարքից հետո 1896 թ. ժառանգելով նրա պաշտոնը՝ Օրմանյանը փորձեց Ելդրզի և Բարձր Դռան հետ պատրիարքարանի ու անձամբ իր հարաբերությունները կառուցել նախորդներից՝ Ներսես Վարժապետյանից, Մկրտիչ Խրիմյանից և Մատթեոս Իզմիրլյանից բոլորովին տարբեր եղանակով:*

Օրմանյանի պատրիարքական ծառայությունը համընկավ թուրքահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական, բայց առավելապես ողբերգական ժամանակաշրջանին, երբ հայոց հայրենիքում արյան գետեր հոսեցին: 1894-

1896 դժոխային տարիներին սրատված ժողովուրդը հետագա տասնամյակում սոսկալի նոր աղետների ենթարկվեց: Այդպես էլ պետք է լիներ, քանզի անհամեմատելի էին իր ազատության համար կենաց ու մահի կռվի ելած փոքր ժողովրդի և նրան բռնադատող հզոր պետության ուժերը:

*Օրմանյանին նախորդած Կ. Պոլսի պատրիարքներից Խորեն արք. Աչըգյանը, որպես կանոն, հանդես չէր գալիս Թուրքահայ ժողովրդի նկատմամբ գործած անլուր բռնությունների դեմ, չէր դատապարտում իշխանությունների թողտվությունը, իսկ նրան հաջորդած Իզմիրլյան պատրիարքը, ընդհակառակը, չափից ավելի համարձակորեն մերկացնում էր հայերի նկատմամբ բարբարոսական գործողությունները, բողոքում իշխանությունների դավադիր քաղաքականության դեմ, որի պատճառով կառավարության աչքի փուշն էր դարձել: 1896 թ. նոյեմբերին նրան փոխարինած Մաղաքիա արք. Օրմանյանն իր դերը տեսավ նրանում, որ կարողանա **«երկուքէն խառը ընթացք մը գործածել**, որ է **երկու կողմերն ալ չօշափել...»**[1]: Պատրիարքական աթոռ բարձրանալու առաջին իսկ օրերից սկսած, պաշտոնավարության բոլոր տարիներին սուլթանին ու Բարձր Դռանն ուղղած նրա բոլոր դիմում-խնդրանքների նպատակն էր **հնարավոր չափի մեջ, բռնությունները մեղմացնել, սպառնացող նորանոր վտանգները հեռացնել, հարստահարությունները չափավորել, տեղի ունեցած վնասները դարմանել, և «ազգին հարուածեալ եւ վիրաւորեալ վիճակին կազդուրման միջոցներ հոգալ:** Իսկ միւս կողմէն չատ առջեւ չերթալ դիջումներու մէջ, այլ **ազգային իրաւունքներու աւանդը պաշտպանել, ազգին կացութեան բարւոքումին հետամուտ ըլլալ, եւ ազգային դատին պատկանող սկզբունքները չվտանգել:** Իսկ դիմումների ձեւին գալով այնպիսի ոճ մը գործածել, որ ըլլայ **երկու ծայրերը միանգամայն նկատի առնող, հանդարտութեամբ եւ խոհեմութեամբ գործերը վարող, հնարաւորը բացարձակին նախադասող, հարուածեալ ազգին վրայ նոր հարուածներ չհրաւիրող, մէկ խօսքով՝ լատին առաջին**

---

[1] ***Մաղաքիա արք. Օրմանեան,*** *Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5475:*

հետեւութեամբ՝ գործին ուժեղ, կերպին համեղ վարմունք մը»[1]:

Օրմանյանը համոզված էր, որ «Հայութիւնը ո՛չ թիւով, ո՛չ զօրութեամբ, ո՛չ եւ ո՛չ էլ հանճարեղ ընթացքով չէր կրցած եւ չէր ալ կրնար ազդել Օսմանեան Կայսրութեան ընթացքին եւ երկրին բախտին վրայ»[2], *ուստի պետք է ապրի ու գործի գերագույն զգուշությամբ: Աբդուլ Համիդի նկատմամբ բանեցնելով քաղցր լեզու, նա ծանրագույն պայմաններում ոչ միայն կարողացավ պահպանել Հայ եկեղեցու կառուցվածքը, այլև քայլեր արեց հնարավորինս ամրապնդելու դա: Նրա օրոք էր, որ եկեղեցական թափուր պաշտոնների նշանակվեցին բանիմաց տեղապահներ, պատրիարքական փոխանորդներ ու թեմական առաջնորդներ: Արմաշի դպրեվանքի վարդապետները, որոնք հիմնականում Օրմանյանի աշակերտներն էին, եռանդով լծվեցին Հայ եկեղեցու գոնե պահպանմանը: Նրա շնորհիվ է, որ թե՛ Պոլսում և թե՛ գավառներում նորոգվեցին եկեղեցական, կրթական, բարեգործական հաստատությունները և կառուցվեցին նորերը: Եվ այդ բոլորը աբդուլհամիդյան բռնապետական կառավարության հայամերժ քաղաքականության պայմաններում, երբ հայոց ազգը զուրկ էր օրենքի պաշտպանությունից և նշավակ կողոպուտի, սպանության և ամբողջական անապահովության:*

Հարց է առաջանում, թե ավելի քան երեք տասնամյակ տևած աբդուլհամիդյան զուլումի պայմաններում ինչպե՞ս Օրմանյանին հաջողվեց այդ ամենը: Շատերը գտնում էին, թե որքան սաստկանում է հայոց բնաջնջումի սպառնալիքը, այնքան հայի մեջ զորանում է իր ազգային դիմագիծը պահպանելու բնազդային հակազդեցությունը: Այդ կենտրոնաձիգ ճիգի առջև հայության հոգեկան կառույցը, համաձայն միջավայրի պարտադրանքի, բնականորեն ստանում է երկու կերպարանք՝ ներքին ու արտաքին:

***Արտաքին**ը դա իրավիճակին հարմարվելու, հակառակ կողմի*

---

[1] ***Մաղաքիա արք. Օրմանեան,*** *Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5475-5476:*

[2] *Նույն տեղում, էջ 5801:*

հարվածների ուժգնությունը թեթևացնելու հատկությունն է: Հայկական պահպանողական մամուլը ցույց էր տալիս, որ Օրմանյանն իր օրինակով ազգակիցներին սովորեցնում է լիովին կատարել իրենց քաղաքացիական պարտականությունները, հեռու մնալ ապօրինի քայլերից, հաճոյակատար լինել տիրող տարրի հանդեպ, քանի որ տվյալ դժբախտ ժամանակներում նրանք այլ ելք չունեն և ստիպված են իրենց իմացական, արհեստագիտական, առևտրական ընդունակությունները մեկտեղելով ապացուցել, որ իշխող տարրը չի կարող առաջընթաց ապրել առանց հայի մտքի ու աշխատասիրության: Պահպանողականները չեչտում էին, որ մինչև 19-րդ դարի 70-ական թվականները օսմանյան երկրին հայի անթերի հավատարմության շնորհիվ թուրքը լիակատար վստահություն ուներ նրա վրա, նրան նկատում էր օգտակար հարևան, հարգում որպես նախախնամական բարիք: Պատահական չէ, որ թուրքերը հայությանը համարում էին «միլլեթ-ի սադիկա» («հավատարիմ ազգ»):

Այդ ամենը, ասում էին պահպանողականները, հատկապես օրմանյանականները, Թուրքիայի հայ ժողովրդի համար երեսուն տարի առաջ անչոչափելի պատվար էր, պաշտպանական վահան՝ իր **ներքին** ազգային կյանքը շարունակելու համար: Եվ հայը հիմնականում հաջողում էր կարելիության սահմաններում պահել իր լեզուն, ցեղային հատկանիշները: Միաժամանակ, նրա մեջ արթուն էին մնում ազատության տենչը և անկախ կյանքի երազը: Օրմանյանը շրջապատին հիշեցնում էր այդ ամենի մասին և հզոր գազանի բացված երախի առջև առայժմ հեզության կոչ էր անում: Հայ պահպանողականներն ամբողջությամբ և ազատականների մեծ մասը խորապես համոզված էին, որ եթե ճակատագրական տարիներին թուրքահայերը պատրիարքական աթոռի վրա չունենային Օրմանյանի պես բազմահմուտ ու պերճախոս եկեղեցական, քննախույզ հայագետ, մեծ մտքի տեր անձնավորություն, նաև ճշմարտապես մեծ հայ, ապա նրանց վիճակը շատ ավելի վատթար կարող էր լինել:

Զգուշորեն գործելու հրամայականն էր Օրմանյանին թելադրել հաշվի առնել այդ ամենը և նախորդներից միանգամայն տարբեր գործելաոճ որդեգրել, բողոքի խիստ ձևեր չգործադրել,

պահանջները չափավորել, որևէ բանի հասնել ոչ թե սուլթանի դեմ սպառնալիքներ հղելով, այլ նրա հակահայ կրքերը հնարավորինս մեղմելու հնարքներ գտնելով՝ համակերպվել անհաղթահարելի չարիքին, համբուրել հզորազոր գազանի թաթը՝ նրան անհարկի չգրգռելու համար, թուրքական իշխանությունների վրա ներազդելու միջոցներ դարձնել բարեխոսությունն ու աղերսագրությունը:

Հինգերորդ, *Օրմանյանը հայ հեղափոխականներին միշտ զգաստության կոչ էր անում, չեչտում, որ նրանց գործունեությունը, համենայնդեպս թուրքիայում, ազգավնաս է: Նա գտնում էր, որ չմտածված նոր քայլերով չպետք է շարունակել գրգռել Աբդուլ Համիդի վայրենի բնազդները, գոնե ժամանակավորապես պետք է փորձել սահմանափակել հայոց կյանքում քանդումներ և ավերներ գործելու նրա կիրքը: Այդ գազանագուսպ ձգտումով էին թելադրված հայ հեղափոխականների համար մերժելի նրա բոլոր քայլերը:*

Վեցերորդ, *Մաղաքիա արք. Օրմանյանը քաջ գիտակցում էր, որ մոլորություն է օտար պետությունների կառավարությունների և թուրքիայում նրանց դեսպանատների դռները բախելը (ինչպես անում էին Խրիմյան պատրիարքը և ուրիշներ), զգուշանում էր Հայկական հարցի չուրջ նրանց մոտ անօգուտ աղմուկներ հարուցելուց: Նրան այդ մտքին էր բերել հայկական ջարդերի նկատմամբ եվրոպական երկրների անտարբերությունը և այն գիտակցումը, որ իր նվազ ուժերով թուրքահայությունն անկարող է զենքով լուծելու ազգային խնդիրները: Ուստի սրբազանը որդեգրեց գործունեության խաղաղ միջոցները՝ չրջահայացություն և զգոնություն:*

Արդարացրե՞ց իրեն Օրմանյանի գործելակերպը, ի՞նչ հետևանքներ ունեցավ դա:

Չնայած Օրմանյանի բոլոր ջանքերին, 1896-ից հետո սուլթանը և նրա կառավարությունը հայության հետ վարվում էին նախկինի նման: Նրանք դոյզն անգամ չհարգեցին ու չգնահատեցին պատրիարքի քաղաքականությունը: Ավելին, Աբդուլ Համիդի և նրա մերձավորների մեջ գնալով խորացավ այն տեսակետը, թե հայոց պատրիարքը և հայ ավագանին որևէ ցանկու-

թյուն չունեն ունկնդիր լինելու իրենց ազգի դժգոհության ձայներին, և հենց դա լրացուցիչ պատճառ դարձավ ավելի անկաշկանդ կերպով նորանոր պատուհասներ բերելու հայերի գլխին: Պատրիարքը, իհարկե չատ զգույշ, երբեմն տրտունջներ էր հայտնում: 1908 թ. հունիսի սկզբին, դեռ հեղափոխական խմբումների նախօրյակին, Օրմանյանը, մի պահ դուրս գալով իր համակերպվող քաղաքականության ոլորտից, մի քանի դիմումներ էր հղել Բարձր Դռանը: Օրինակ՝ հունիսի 8-ին այցելելով սադրազամին՝ նրա ուշադրությունը հրավիրել էր Վանի հայության անտանելի կացության վրա և անհամաձայնություն հայտնել քաղաքի իշխանությունների գործելակերպին: Բայց թե՛ Ելզրզում և թե՛ կառավարությունում նրա բողոքներին ուշադրություն չէին դարձնում:

Այդ ամենն, անշուշտ, անզորությունից բխող կսկիծ ու տանջանք էր առաջ բերում Օրմանյանի հոգում, բայց դա հայության համար սփոփանք չէր: Իհարկե, եթե թուրքական իշխանությունների հետ պատրիարքի համակերպչական աղերսանքները, նույնիսկ իր չափազանցություններով, հաջողած, տեղ հասած լինեին և, ի վերջո, թուրքական իշխանությունների և հայության միջև այնպիսի մի կամուրջ գցեին, որի շնորհիվ փոխվեր վերաբերմունքը վերջինիս նկատմամբ, գոնե Մայր երկրի ժողովուրդը հնարավորություն ունենար ձեռնարկելու ազատ տնտեսական ու մշակութային գործունեություն, այդ դեպքում, անտարակույս, դրական կգնահատվեր պատրիարքի քաղաքականությունը: Բայց իրողությունն այն է, որ կառավարությունը մինչև վերջ բոլորովին անտեսեց հայ ժողովրդի ամենատարրական կենսական պահանջները՝ նրան հուսահատեցնող զրկանքների ու անելանելիության մատնելով:

Հաշվի չառնելով, որ պատրիարքը չատ հաճախ իր անձը ստորացնելու գնով փորձում էր գոնե ինչ-որ չափով մեղմել թուրքական բռնակալության ավերիչ հարվածները հայության վրա և այդ դժնի պայմաններում ընձեռված հնարավորության սահմաններում նույնիսկ ծավալել ազգաշեն գործունեություն, Հնչակն ու Դաշնակցությունը նրան հանրությանն էին ներկայացնում ամեն տեսակի բացասական գծերով, նույնիսկ համա-

րում «Հայ դատի թշնամի», «համիդապսակ դավաճան»: «Հնչակ» թերթը գրում էր. «Սուլթանի արիւնռուչտ քաղաքականութեան յենակէտն էր Հայկական Դատը տապալել, բողոքող հային խեղդել իր արեան մէջ»: Այդ ուղղությամբ է, իբր, գործել սուլթանին «լիակատար համամիտ» Օրմանյանը, որը «բողոքի մի ծպտուն անգամ չբարձրացրեց», այլ «պատրիարքութիւնը դարձրեց մի հլու հնազանդ գործիք [սուլթանի ձեռքին]» և «անձնական շահու մի անսպառ աղբիւր»: Այնուհետև, «Հնչակը», չկարողանալով չափավորել իր ասելիքը, փորձում էր ընթերցողին համոզել, թե «Օրմանեանը նոյնքան դաժանօրէն կողոպտեց հայ ժողովուրդը իր կամարիլիայով, որքան որ նոյնը անում էր Ելդզը իրեններով»[1]:

Հնչակյան և դաշնակցական մամուլում պատրիարքը «եղկելի դավաճան» հռչակվեց, երբ 1905 թ. Լահեյում (Հաագա) տեղի ունեցած դեսպանախորհրդին հեռագիր հղեց, ուր հայտարարեց, թե Էջմիածնի կաթողիկոսի այնտեղ ուղարկած հայ պատվիրակներն իրավունք չունեն բարձրացնելու Թուրքահայոց հարցերը: Այդ հեռագիրը, որ թելադրված էր սրբազանի զգուշավորությունից, հայ ազգային հեղափոխականների համար առիթ դարձավ նրան ահաբեկելու: 1905 թ. ծննդյան տոնի առթիվ Կ. Պոլսի մայր եկեղեցում տեղի ունեցող հանդիսավոր արարողության ժամանակ Հակոբ Խաչիկյան անունով դաշնակցական ահաբեկիչը ատրճանակի հարվածներով գետին է տապալում Օրմանյանին: Ծանր վիրավորված պատրիարքի կյանքը հաջողվեց փրկել և նա դրանից հետո երեք տարի շարունակեց իր պատրիարքությունը: Ահաբեկիչը ձերբակալվեց և նետվեց մահապարտների բանտը, սակայն ազատ արձակվեց 1908 թ. օսմանյան հեղափոխության հաղթանակից հետո[2]:

Ահաբեկչությունն իր նպատակին չհասավ: Խստորեն քննադատելով մահափորձը՝ Մկրտիչ Փորթուգալյանը գրել էր. «Հայկական Դատի յաղթանակն այս կամ այն անձնաւորութեան

---

[1] **«Հնչակ»,** *№ 6–7, հունիս–հուլիս, 1908, էջ 56:*

[2] *Տե՛ս* **Համբարձում Երամեան,** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 470:*

սպանելու մէջ չէ, այլ՝ Հայաստանի արդի վարչական դրութիւնը փոխել կարենալու մէջ»[1]: Այդ մահափորձից տարիներ առաջ, 1899-ին, առարկելով դաշնակցականներին և նրանց հարձակումներից պաշտպանելով Օրմանյանին՝ Փորթուգալյանը չեշտում էր, թե սուլթանական դաժան վարչակարգի պայմաններում նա չի կարող ավելին անել: Եթե Օրմանյանի փոխարեն պատրիարքի աթոռին բազմած լինի մի ուրիշը, ոչինչ չի փոխվի[2]:

Կրկին անդրադառնալով հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Օրմանյանի դեմ շղթայազերծված պայքարին՝ նշենք, որ դա անզիջում ու անդառնալի ընթացք էր ընդունել[3]:

Օրմանյան պատրիարքը 1908 թ. հուլիսի 16-ին գումարել էր Հայոց ազգային **խառը** ժողովը (քաղաքական ժողով + կրոնական ժողով)՝ սահմանադրության վերահաստատման առթիվ «գոհաբանական մաղթանք» կատարելու: Բայց նրա հակառակորդները ժողովը մեղադրական ատյանի են վերածում: Առաջ են քաշվում զանազան ամբաստանություններ՝ շահագործել է կառավարությանը համակերպվելու քաղաքականությունը, չարաշահել անձնական դիրքը հօգուտ իր ընտանիքի, ազգականների ու կողմնակիցների, ոչ միայն համակերպված է եղել աբդուլհամիդյան ռեժիմին, այլև գործակցել է նրա հետ հայ ժողովրդի դեմ, Թուրքիայի անվտանգության մարմինների համար պատրիարքարանը լրտեսության բուն է դարձրել[4]: Միաժամանակ, պատրիարքարանի առջև խմբվել էր Օրմանյանի հրաժարականը պահանջող մի բազմություն, որը պատրիարքի վկայությամբ, «յիսուն հոգիէ աւելի չէր եղած»[5]: Բազմության միջից լսվում էին անեծքի աղաղակներ և սպառնալից կոչեր՝ «դատել հայ ազգի դավաճանին» և այլն: Կային նաև այնպիսիները,

---

[1] **«Արմենիա»,** 4 փետրվարի 1903 թ.:

[2] Նույն տեղում, 18 մարտի, 1899 թ.:

[3] Մանրամասն տե՛ս **«Արեւելք»,** № 6850 և № 6851, 16 և 17 հուլիսի 1908 թ.:

[4] Տե՛ս **«Օրմանեան հանրային խղճին եւ դատաստանին առջեւ»,** Կ. Պոլիս, 1913, էջ 8:

[5] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5812: Ուրիշ աղբյուրներում նշված է 200-300 հոգի:

որոնք բռնության կոչեր էին անում: Ավելորդ գլխացավանքից խուսափելու համար, ինչպես նաև չինծու մեղադրանքների ճնշման տակ, Օրմանյանը պատրաստում է մի հրաժարագիր, ուր, իր կատարած քայլի բացատրությունը տալուց բացի, հրաժեշտի խոսքեր է շարադրում: Հրաժարագիրը հանձնելով այդտեղ գտնվող Ազգային ժողովի անդամներին, նա Ղալաթիայից քաշվում է Բերայի իր տունը[1]:

Պաշտոնաթող արվեց այն գործիչը, որը Կ. Պոլսի պատրիարքարանը կառավարել էր արտակարգ ծանր ժամանակներում, շուրջ 12 տարի՝ 1896 թ. նոյեմբերի 6-ի ընտրությունից մինչև 1908 թ. հուլիսի 16-ը: Կ. Պոլսի հայոց ոչ մի պատրիարք այդքան երկար չէր պաշտոնավարել նախորդ տասնամյակներում:

Օրմանյանին ներկայացված մեղադրանքները մանրամասն ստուգելու համար Խառը ժողովը կազմեց մի հանձնախումբ, որում հիմնականում ընդգրկվեցին նրա դեմ եռանդուն հանդես եկող պատգամավորներ:

Նույն նիստում ժողովը պետք է ընտրեր պատրիարքի ժամանակավոր տեղապահ՝ համաձայն Ազգային սահմանադրության համապատասխան հոդվածի, ուր հստակ ասված էր. «Երբ պատրիարքը վախճանուելով կամ հրաժարելով եւ կամ ուրիշ ոեւէ պատճառով Աթոռը պարապ մնայ, Կրօնական եւ Քաղաքական Ժողովները մէկտեղ գալով տեղապահ մը կ'ընտրեն եւ անոր հաստատութիւնը կը խնդրեն Բարձրագոյն Դռնէն»:

Ժողովը պատրիարքի ժամանակավոր տեղապահ ընտրեց այդ միջոցին մայրաքաղաքում գտնվող՝ Իզմիրի հայոց առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Դուրյանին*:

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5843:

* Եղիշե Դուրյանը բանաստեղծ Պետրոս Դուրյանի եղբայրն էր, մոտ 50 տարեկան, հայտնի էր որպես բանաստեղծ, լեզվագետ և բանասեր: Նրան պատրիարքական փոխանորդ նշանակելը կարևոր հանգամանք էր այն առումով, որ, դրանով իսկ, միդհատյան սահմանադրության վերականգնմանը զուգահեռ, փաստորեն կյանքի էր կոչվում նաև Հայոց ազգային սահմանադրությունը, և դրա վկայությունը Խառը ժողովի վերակենդանացումն էր՝ որպես դրա առաջին ապացույց: Ինչպես որ ոչ թե ջնջված, այլ դադարեցված էր 1876 թ.

Պատրիարքական աթոռից Օրմանյանի հեռանալը ցնծությամբ ընդունեցին հնչակյանները և դաշնակցականները: «Հայկեղափոխականների ապօթեոզը (փառաբանանքը:- Հ. Ս.) խորտակուած» վերնագիրը կրող նյութում այդ փաստը «Հնչակը» «արդարութեան մեծ յաղթանակ» համարեց[1]:

Իսկ «Օրմանեանի տապալումը» վերտառությունը կրող նյութում Դաշնակցության «Դրօշակը» գրում էր.

«Զորեքշաբթի օր Ազգ. Խառն Ժողով գումարուելով՝ բուռն յարձակումներ եղան Օրմանեան պատրիարքի վրայ, որը կ'ամբաստանէին իբր թոյլ եւ ապիկար ազգային շահերը պաշտպանելուն մէջ: Օրմանեան ասոր վրայ սրահը ձգեց դուրս ելաւ: Ժողովը իսկոյն պաշտօնանկ յայտարարեց զայն եւ տեղը կարգեց Դուրեան եպիսկոպոսը:

Հեռագիրը պարզ է, Օրմանեանը վոնտեր են, եւ չարաչար կերպով: Այդ օրուայ նախատեսութիւնով երեւի, ինչպէս ցոյց կու տան Պոլսոյ հայ լրագիրները, մէջտեղ չէր երեւար ան, որ իֆթարի եւ եղոտ յուղարկաւորութիւններուն չորս ոտքով կը վազէր. իսկ այդպիսի հանդիսաւոր օրին եւ ճգնաժամուն «թաթար փաթրիքը» խոյս կու տար հանրային ուրախութեան ցոյցերէն: Արդեօք «իր վեհապետին» սո՞ւգը կը պահէր, թէ՞ Կայէնի խիղճն էր, որ կը հալածէր զինքը, որ բռնակալութեան մռայլ շուքին տակ ապահով, սանձարձակ կթեց եւ սարսափահարեց հայ արդէն հալածական ժողովուրդը եւ դաւաճանի հոգիով հալածեց բոլոր արժանաւոր անձնաւորութիւնները: Ու անամօթօրէն այդ

Թուրքական սահմանադրությունը, այնպես էլ վերացված չէր Ազգային սահմանադրությունը, այլ դադարեցված էր նրա գործունեությունը նույնպես: Դուրյան եպիսկոպոսին ընտրելով տեղապահ՝ Խառը ժողովը նոր տեղապահի հետ միջոցներ պետք է ձեռնարկեր գումարելու Ազգային պատգամավորական ժողով՝ ընտրելու Թուրքահայոց նոր պատրիարք՝ Ազգային սահմանադրության ոգուն ու տրամադրությանը համապատասխան: Տեղապահական պաշտոնի համար Եղիշե Դուրյանի ընտրությունը պատճառաբանված էր պահի տրամադրություններով. տեղապահը սահմանադրական կարգերի կողմնակից էր և ենթադրվում էր, որ իր հայացքներով նա պիտի համապատասխանի նոր ռեժիմի ուղղությանն ու ոճին:

[1] Տե՛ս **«Հնչակ»,** № 6-7, հունիս-հուլիս, 1908:

պատուհասը 12 տարի պատրիարք մնաց հակառակ իր դէմ եղած խոր եւ ծաւալուն ատելութեան ու վրիժառու գնդակներուն: Ան յոյս ունէր իր բնաղանցական չէութիւններով ու ճիզվիտ կեղծուձեւերով քնացնել հայ ժողովուրդի պարզ ու դրական մտածողութիւնը...

Այժմ՝ հայ ժողովուրդը իր արեան գնով – Յուդայի արծաթը – յղփացած այդ Դաւաճանին կու տայ նուազագոյն պատիժը՝ դուրս վռնտելով պատրիարքարանի դռներէն «անտառասուն գաղանը»»[1]:

Օրմանյանի վարկաբեկմանը ձեռնարկած պարբերականներից Իզմիրի «Արեւելեան մամուլը», որն այդ ժամանակաշրջանում ջանասիրաբար պաշտպանում էր հայ հեղափոխականներին, գրում էր. «Ազգային ցեցերուն գլխաւորը տապալեցին արդէն պոլսեցիները, եւ ի պատիւ իրենց, պէտք է ըսենք որ, Օրմանեան ասկէ արժանաւոր պատիժի մը չէր կրնար ենթարկուիլ ... Մեր պատուական հայրենակիցները չթողուցին սակայն որ ինքնին հեռանայ. խայտառակեցին զայն, ամօթահար ընելով զինքը, ժողովուրդին «եուհա» պոռալ տուին անոր համար, որովհետեւ պէ՛տք էր որ խայտառակուէր»[2]: Միաժամանակ, թերթը գտնում էր, որ չպետք է բավարարվել «ազգային գլխավոր ցեցէն» ազատվելով, այլ պետք է հեռացնել ու պատժել նաև նրա բոլոր հացկատակներին ու պնակալեզներին: «Անոնք պէ՛տք է ջախջախուին, փշրուին, ծաղր ու ծանակ ըլլան, ուրիշներու օրինակ ըլլալու եւ մա՛նաւանդ իրենց արդար վարձատրութիւնը գտնելու համար»[3]: «Ազատութեան դրօշին տակ» վերտառությամբ այս հոդվածում թերթն ապա ժողովրդին զգաստության կոչ էր անում. «Հայեր, հայեր, աչքերնիդ չորս բացէ՛ք: Զըլլայ որ ասկէ վերջ մեր նուիրական հաստատութիւններուն մէջ մատնիչներ, անբարոյականներ եւ չահախնդիրներ կեղծ ազգասէրի դիմակներ առնելով խաբեն Ձեզ, եւ նորէն սպրդին

---

[1] **«Դրօշակ»**, № 7 (195), Հուլիս,1908, էջ 107:

[2] **«Արեւելեան մամուլ»**, № 31, 29 Հուլիսի 1908, էջ 739:

[3] Նույն տեղում, էջ 740:

անոնց մէջ: Աղտոտութիւնը անոնց ոսկորներուն ծուծը անցած է, անոնք սիրտ չունին, հոգի չունին, բարոյապէս մեռած են անոնք եւ Ազգը ա՛լ կրնայ իր ձեռքով իսկ թաղել իր մեռելները, չնորհիւ Օսմ[անեան] քաջարի բանակին»[1]:

Խառը ժողովից հետո այնտեղ ընտրված հանձնախումբը հետաքննություն ձեռնարկեց և թերություններով ու ապօրինություններով լեցուն 10 կետից և 12 ենթակետերից բաղկացած տեղեկագիր կազմեց[2]: Դա ներկայացվեց Ազգային ժողովին, որը, սակայն, անաչառ քննություն չկատարեց:

Այդպիսով, Օրմանյան սրբազանը զոհ եղավ թե՛ ապերասան ամբոխավարության և թե՛ ապերախտության:

Օրմանյանի հրաժարականը միատեսակ չընդունվեց Կ. Պոլսում և այլուր: Շատերն ափսոսանքով ասում էին, թե պատրիարքական աթոռը զրկվեց նվիրյալ ու հավասարակշռված եկեղեցական գործչից, կիրթ ու բազմակողմանի զարգացած անձնավորությունից, որը կարողանում էր նավը «վարպետորեն տանել» թուրքական ալեկոծ ծովի միջով*:

Երիցս իրավացի էր Գաբրիել Նորատունկյանը, գրելով.

«Նախկին ռեժիմն իսկապէս չատ դժուար վիճակի մէջ էր դրել բոլոր հայերին, եւ այսպիսի պարագաներում Օրմանեանն արել է, ինչ հնարաւոր է՝ կացութիւնն աւելի չբարդացնելու, չվատթարացնելու համար, եւ տարակուսելի է, թէ նրա տեղը ուրիշ մէկը կարող էր աւելի օգտակար լինել այդպիսի պայմաններում: Իր բոլոր թերութիւններով հանդերձ Օրմանեանը հիմա եւս մեր բոլոր եպիսկոպոսներից բարձր է իր ուսումով, իր դիւա-

---

[1] **«Արեւելեան մամուլ»**, № 31, 29 հուլիսի 1908, էջ 740:

[2] Տե՛ս **«Օրմանեան հանրային խղճին եւ դատաստանին առջեւ»**, էջ 15-16:

* Օրմանյանի կյանքի պատրիարքական շրջանը կարոտ է լուրջ քննության ու գնահատման: Բայց առանց դրա էլ պարզ է, որ այդ խոշոր անհատականության եկեղեցական-քաղաքական գործունեությունն ուղղված է եղել իր ժողովրդի գոյապահպանմանը, նրա գլխին կախված մահացու վտանգների չեզոքացմանը, և եթե նրա ջանքերը, ըստ ամենայնի, չեն հատուցվել, ապա դրա գլխավոր պատճառները եղել են արդուլհամիդյան ոճրագործ կարգերը, թուրքական ռազմաավատապետական պետության մեջ տիրող բարքերը:

նագիտութեամբ եւ իր ազգային գործերում ունեցած հմտութեամբ»[1]:

Երբ Օրմանյանը հրաժարվեց պաշտոնից և քաշվեց իր տունը, թվում էր, թե կրքերն աստիճանաբար կհանդարտվեն, բայց հակառակը տեղի ունեցավ:

Սկզբում հակաօրմանյանականները համոզված էին, որ «ոխերիմ հակահեղափոխականի» դեմ բարձրացրած աղմուկը անառարկելիորեն հավանություն կգտնի հայ հասարակության ճնշող մեծամասնության մոտ: Բայց պատահեց հակառակը: Ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ Կովկասում ու արտասահմանում հայկական հասարակության սթափ մտածող մասը նախկին պատրիարքին թիկունք կանգնեց:

Այդ հանգամանքն ավելի գրգռեց Օրմանյանի հակառակորդներին, որոնք չէին հանգստանում, անդադար շարունակում էին բողոքները, Թուրքական իշխանություններից պահանջում էին ամենից առաջ նրան քրեական պատասխանատվության ենթարկել պատրիարքարանին պատկանած 30-40 հազար օսմանյան ոսկի գումարն իբր յուրացրած լինելու և այլ «մեղքերի» համար:

Բայց Ազգային ժողովը հապաղում էր Օրմանյանին պատասխանատվության ենթարկելու, իսկ կառավարությունն անարձագանք էր թողնում նախկին պատրիարքին պատժելու պահանջը:

Մայր աթոռ ս. Էջմիածնի «Արարատ» հանդեսը գրում էր. «Պէտք էր անպատուել նրան (Օրմանյանին:- Հ. Ս.) եւ ցոյց տալ աշխարհին միեւնոյն ժամանակ, որ մենք վեհանձնութիւնից զուրկ եւ ստրկութեան չղթաների մէջ սնուած եւ տրորուած տականքների յատկութիւններով բաւական օժտուած ենք»[2]:

Եվ ահա՛ առաջինը հրապարակ է նետվում հեղափոխական տարրերին մոտ կանգնած «Մանզումէի էֆքեար» թերթը: Նրա երկու աշխատակիցներ, անցած խուժանի գլուխ, Խառը ժողովից «հանուն ազգի» պահանջում են պաշտոնանկ հայտարարել

---

[1] ***«Մշակ»,*** *№ 191, 31 օգոստոսի 1908 թ.:*

[2] ***«Արարատ»****, № 7-8, հուլիս-օգոստոս, 1908, էջ 722:*

պատրիարքին, այլ ոչ թե հրաժարականն ընդունել իր դիմումի համաձայն: Խառը ժողովի ատենապետ Գաբրիել էֆ. Նորատունկյանը զուր փորձեց ամբոխին համոզել, ասելով, որ ըստ Ազգային սահմանադրության՝ միայն Պատգամավորական ժողովն իրավունք ունի պաշտոնանկ անելու պատրիարքին:

Նշված պարբերականը համարյա ամեն համարում զանազան ստեր էր արտաբերում պաշտոնաթող պատրիարքի մասին: Այսպես, № 2177-ում զետեղված «Օրմանեանը կ'ուզէ իր նախկին փարախը վերադառնալ» վերնագրով նյութը ազդարարում էր. «Զրոյց կը շրջի, թէ Օրմանեան նախկին եւ ապագայ գերապայծառը փափաք յայտներ է կրկին կաթոլիկներուն վերադառնալու»*:

«Մանզումէի էֆքեարի» անվայել ընթացքին էր միացել մայրաքաղաքի հայկական մյուս խոշոր օրաթերթերից՝ «Արեւելքը»: Իր անկայուն քաղաքական կողմնորոշումներով հայտնի այս պարբերականը հոսանքին համակերպվելու և պահին հարմարվելու վաղեմի ավանդույթով, հայհոյանքներով էր արտահայտվում Օրմանյանի մասին, որին ոչ չատ առաջ պաշտում էր, ստորաքարշում նրա առաջ, իր էջերը լցնում նրա կրոնաբարոյախոսական հոդվածներով:

Օրմանյանին քննադատելը մոդայիկ էր դարձել ոչ միայն Կ. Պոլսում: Այսպես, Ա. Գրիգորյան անունով հայ «հեղափոխականներից» մեկը Բոստոնում (ԱՄՆ) հապշտապ գրել էր «Փտութեան օճախը կամ Օրմանեանի պատրիարքութիւնը» պասկվիլը, որը նախ տպագրվել էր վերակազմյալների «Ազգ» թերթի 1908 թ. օգոստոսի համարներում, ապա մեկ ամիս հետո հրատարակվել առանձին գրքույկով, ուր հայոց լեզվի համարյա բոլոր հայ-

---

* Մաղաքիա Օրմանյանը երիտասարդ տարիներին հետևել էր Կաթոլիկ եկեղեցուն, բայց Ներսես Վարժապետյան պատրիարքի օրով անցել էր Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին և 30 տարի շարունակ մեծ նվիրումով ծառայում էր դրան: Զնայած դրան, Ավետիս Ահարոնյանը նույնպես պնդում էր, որ անկարելի է նրան թողնել հայկական քաղաքականության մեջ, որովհետև նա միայն 40 տարեկանում է անցել լուսավորչականության (տե՛ս **«Հովիւ»**, № 20, 8 հունիսի 1908, էջ 317):

հոյական բառերն ու ոճերը գործածելով, փորձել էր վարկաբեկել մեծ եկեղեցականին: Կատարվածն այնքան քստմնելի էր, որ անգամ նախկին պատրիարքի նկատմամբ տարիներ չարունակ թշնամական դիրք բռնած «Զանգակ» թերթը 1908 թ. № 36-ում իր աշխատակից Ն. Ա.-ի (հավանաբար՝ Նիկոլ Աղբալյան) գրչով այսպես էր բնորոշել չարանուն գրվածքը.

«Նրա (Օրմանյանի:- Հ. Ս.) ամենառխերիմ թշնամին անգամ հաղիւ կարողանայ առանց զզուանքի կարդալ այն անպատկառ գրութիւնը, որ «Փտութեան օճախ» է կոչւում: Եւ յիրաւի սա մի գրքոյկ է, որ միայն անպատուութիւն կարող է բերել մամուլին եւ գրականութեան: Առաջին երեսից մինչեւ վերջինը անամօթ գրչակի խծբծանք է եւ հայհոյանքի կոյտ Օրմանեանցի դէմ: Ի զուր կ'որոնէք փաստեր իւր հայհոյանքների մոզայիկների մէջ արծարծած զրպարտութիւնները հաստատող: Ափսո՜ս մամուլի ազատութիւն, որ սրիկայական հակում ունեցող անխիղճ մարդկանց միջոց է տալիս իրենց մտքի եւ հոգու ապականութիւնները ուրիշին հրամցնելու: Մենք խնայում ենք ընթերցողների ճաշակն ու զգացումը նմոյշներ բերելու այդ պասկվիլային աղտոտութիւնից: Բովանդակութեան կեղտը զարդարուած է եւ ծաղրանկարներով: Զզուանք եւ նողկանք կարող ենք միայն արտայայտել մամուլի եւ գրականութեան այսպիսի երեւոյթների դէմ»:

«Մանզումէի էֆքեարի» խմբագրական անձնակազմից բացի, Կ. Պոլսում Օրմանյանի վարկաբեկմանը լծվել էին նաև Գևորգ եպս. Երեցյանը և Ղևոնդ վրդ. Դուրյանը՝ իրենց կողմնակիցներով: Նշված հոգևորականներն անձնական հաշիվներ ունեին Օրմանյանի հետ, քանի որ Խառը ժողովի որոշմամբ նա քննություն էր նշանակել Երուսաղեմի վանքում նրանց կատարած դրամական գեղծումները բացահայտելու համար: Եվ ահա այժմ նրանք իրենց դառնաղի զգացումները լիովին ցուցադրելու պատեհ առիթ էին գտել: Օգտվելով ստեղծված խառնակ վիճակից, նրանք հերյուրածո լուրեր էին տարածում, թե Օրմանյանը ազգային սնդուկից յուրացնելով 30-40 հազար ոսկի, հիմա ուզում է փախչել Ռուսաստան՝ այնտեղ վայելելու կողոպտածը, թե այդ պատճառով Երուսաղեմի աքսորում գտնվող Իզմիրլյան սրբազանը հեռագրով պահանջել է միջոցներ ձեռնարկել արգե-

լելու նրա փախուստը և հաշիվ պահանջել զեղծումների համար: Վերջապես տարածվել էր ամենավտանգավոր սուտը, թե Օրմանյանը բացահայտորեն հանդես է գալիս սահմանադրության դեմ և երիտթուրք հեղափոխականների ոխերիմ թշնամին է[1]:

Ի պատասխան այդ մեղադրանքների, «Արարատը» գրում էր, որ Օրմանյանի՝ գումարների յուրացման մասին տարածված լուրն ստոր զրպարտություն է, և նա պատրաստ է հաշիվ տալու ազգային օրինական իշխանությանը, որ Իզմիրլյանը Երուսաղեմից որևէ հեռագիր չի հղել, իսկ սահմանադրության դեմ սրբազանի հանդես գալու մասին սուտը չար լեզուների մոգոնածն է: Սրանք Օրմանյանին չեն ներում, որ նա ուրիշների անլրջության օրինակով թեթևամտորեն հապշտապ չի ձեռնարկել աղմկարար հանդեսներ կազմակերպելուն, փքուն ճառեր չի ասել ամբոխի առջև, այլ համբերատարությամբ սպասել է, թե արագորեն փոփոխվող իրադարձություններում ի՞նչ դիրք է բռնելու հունաց պատրիարքարանը և թե ի՞նչ որոշում է ընդունելու Թուրքահայ ժողովրդի ներկայացուցչական մարմինը՝ Խառը ժողովը: Միայն դրանից հետո նա արտահայտելու էր հայոց պատրիարքարանի պաշտոնական տեսակետը[2]:

Բայց Օրմանյանի հակառակորդները չէին ընկրկում իրենց դեմ հնչած քննադատությունների առջև: Թեև առանց միջոցների մեջ խտրություն դնելու նրանք հասել էին իրենց գլխավոր նպատակին՝ նրա հեռացմանը պաշտոնից, բայց դրանով չէին հանգստացել: Ընդհակառակը՝ վրեժխնդրական կիրքը հակաօրմանյանականներին անկառավարելի էր դարձրել: Եվ նրանք վճռեցին դիմել ուղղակի հաշվեհարդարի: Նրանց պետք էր նախկին պատրիարքին մինչև վերջ ստորացնել:

Հուլիսի 16-ից 25-ը Օրմանյանը դուրս չէր եկել տնից և առանձնապես զբաղված էր իր պատրիարքության տարիների պաշտոնավարության մասին զեկուցագիր պատրաստելով:

---

[1] Մաղաքիա արք. Օրմանյանի դեմ ուղղված չինծու մեղադրանքների մասին տե՛ս **«Ժամանակ»** (Կ. Պոլիս) օրաթերթի 1911 թ. դեկտեմբերի 20-ի համարում:

[2] Տե՛ս **«Արարատ»**, № 7-8, հուլիս-օգոստոս, 1908, էջ 724:

Հուլիսի 25-ին սրբազանի տան դռան առջև մի փակ կառք էր սպասում, որով նա պետք է մեկներ Բարձր Դուռ՝ զեկուցագիրը հանձնելու համար: Օրմանյանի հակառակորդների դրդմամբ հանկարծ հայտնվում է մի ահագին ամբոխ և տունը վերցնում հսկողության տակ: Շուտով վրա են հասնում նորանոր բազմություններ և բռնում տան շուրջն ու մերձակա փողոցները: Ցուցարարները հարայ-հրոցով զայրալից ու վարկաբեկիչ հիշոցներ են հղում սրբազանին: Ինքը՝ Օրմանյանն այսպես է նկարագրել պահը. «Ամէն տեսակէ եւ ամէն ազգէ գործիչներ եւ ցուցարարներ, հետաքրքիրներ եւ պարապորդներ տանը շուրջը եղող փողոցներ կը լեցուին, եւ դուռին չբացուելուն վրայ պատուհաններէ մագլցելու ալ կը սկսին, աղաղակ եւ ժխորը կը շատնայ»[1]:

Արկածախնդրական ցույցը ցրելու համար, վերջապես, հայտնվում է ոստիկանությունը: Սրբազանը թուրք ոստիկանապետի ընկերակցությամբ տնից դուրս է գալիս և կառք մտնում: Նրա հետ կառք են բարձրանում ոստիկանապետն ու իր օգնականը և ուղղություն վերցնում դեպի ներքին գործերի նախարարություն: Ամբոխն ուժեղացնում է զայրույթի ձայները և աղաղակներով հետևում կառքին: «Քանի անգամներ կառքը թաւալելու եւ կազմածները խզելու փորձեր կը կրկնուին»[2],- ցավով վերհիշել է Օրմանյանը: Նախարարության չենքի մոտ ամբոխը վրա է հասնում և ոստիկանությանը պարտադրում Օրմանյանի կառքն ուղղել դեպի պատրիարքարան: Մերժում ստանալով՝ ցուցարարներից մի քանիսը ցատկում են կառքի վրա, կառապանից խլում սանձերը և հավաքվածների անասելի ժխորի ուղեկցությամբ ուղղություն վերցնում դեպի պատրիարքարան:

Այդ օրերին «Մշակի» կողմից Կ. Պոլիս գործուղված հասարակական գործիչ և լրագրող Սարուխանը (Առաքել Սարուխանյան) պարբերաբար թղթակցություններ էր ուղարկում Թերթին,

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5816:
[2] Նույն տեղում:

որի 1908 թ. 169-րդ և 170-րդ համարներում տպագրված հոդվածներում մանրամասն նկարագրել էր այդ ամոթալի, անվայել տեսարանները: «Ամէն կողմից թափւում են կառքի վրայ հասարակ դասակարգին պատկանող զանազան մարդիկ, մէկը բարձրանում է կառքի վրայ, միւսը՝ ետեւը, երրորդը մի պատուհանից է կառչում, չորրորդը՝ միւս պատուհանից եւ բռունցքները ուղղում պատուհաններից ներս դէպի նրան, որ դեռ երէկ Թուրքիայի Հայոց ամենազօր պատրիարքն էր, բայց բռունցքները հասնում են ոստիկանապետի եւ իր օգնականի թեւերին եւ ոչ իրանց բուն նպատակին»: «Մեր ձայնը» թերթը 1908 թ. № 92-ում զետեղել էր ռուսաց մի լրագրից քաղած հետեւյալ տողերը. «Պատրիարքը առարկայ եղաւ ամէն տեսակ անարգանքի ու վիրաւորանքի. ամբոխը նրան երեսնիվեր թքոտում էր եւ «մա՛հ նրան» կանչուրտում: Պատրիարքն ուշագնաց եղաւ, ու բերանից արիւն գնաց: Եւ այսպէս, կառքն անցնում է Բերան ու Ղալաթիան եւ պատրիարքարան հասնում: Ամբոխի նպատակն էր սրբազանին փակել այնտեղ, «որ չփախչի»»:

Նախկին պատրիարքը ոստիկանների ուղեկցությամբ մտնում է ներս: Շուտով գալիս են զորավար Իսմայիլ Հակկը իր երկու ընկերակիցների՝ Թալեաթ բեյի և Նեջիբ բեյի հետ, որոնք Օրմանյանին կառք նստեցնելով, փախցնում են ամբոխի հաչվեհարդարից, վերադարձնում Բերայի իր տունը և վրան պահակներ կարգում[1]:

Ի վերջո, հայկական կոմիտեների կոչով մի խումբ հայեր հուլիսի 26-ին Օրմանյանին բռնելով՝ տանում և իրենց ձեռքով հանձնում են արդարադատության նախարարությանը: Նույնիսկ այդ ամենից հետո, օգոստոսի 7-ին, նորից մի բազմամարդ ցույց տեղի ունեցավ, որի մասնակիցները իշխանություններից պահանջեցին Օրմանյանի դատավարությունն արագացնել:

Զուգահեռաբար, դաշնակցական և հնչակյան մամուլի էջերը լի էին Օրմանյանի «փախուստը կանխող» տեսարանների նկարագրություններով, որոնք ուղեկցվում էին սրբազանի գործի ու

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5816-5817:

անձի դեմ ուղղված ծայրահեղ վիրավորական արտահայտություններով: Մամուլի այդ օրգանները պահանջում էին, որ բռնակալ ռեժիմի օրոք գործած բոլոր այն հայ պաշտոնյաները, որոնք համակերպված են եղել Աբդուլ Համիդի ստեղծած դժոխքին, անմիջապես հրաժարվեն իրենց աթոռներից, «որպեսզի ժողովրդին հնարավորություն տան գործադրելու իր իրավունքը»:

Ստեղծված իրավիճակը չափազանց անհանգստացնում էր շատերին, մանավանդ որ Օրմանյանի հրաժարականին ուրիշ գործիչների հրաժարականներ հաջորդեցին:

Ալեկոծվում էր Ազգային պատգամավորական ժողովը, ուր մեկը մյուսի նկատմամբ կատարվող ամբաստանությունները գնալով նոր թափ էին առնում:

Սակայն պոլսահայության բացարձակ մեծամասնությունը պարսավում էր հակաօրմանյանական ամբոխային ցույցերը, իսկ նախկին պատրիարքի ձերբակալումը համարում անարգանք հայկական ավանդույթներին:

Դեռևս հուլիսի 18-ին հայ մեծանուն յոթ վաճառականներ, այցելելով «Արեւելք» թերթի խմբագրություն, առաջարկեցին չափավորություն դնել հայկական թերթերում եղած անվանարկիչ, անսանձ ու ապերասան հրապարակումներին, որոնք զերծ էին հանրային շահեկանությունից և զուտ անձնական, անհատական գույն ունեին[1]:

«Արեւելք» թերթի «Զենիթ» հավելվածի 1908 թ. հուլիսի 19-ի խմբագրականում նշվում էր, որ պատմական բոլոր մեծ փոփոխությունների ժամանակ լինում են չափազանցություններ, անվանարկումներ, նախատինքներ և այլն, բայց ժողովրդի բանիմաց գործիչների պարտականությունն է կրքերը չափավորել ու հանդարտեցնել:

«Զենիթը» չեշտում էր, որ այն դեպքում, երբ «կառավարությունը ազատութիւն է չնորհում նոյնիսկ քաղաքական յանցաւորներուն եւ սովորական ոճրագործներուն ու գողերուն, մենք այսօր կարծես թէ ազատութիւն ստացած ենք անձնական կիր-

---

[1] Տե՛ս **«Զենիթ»**, 19 հուլիսի 1908 թ.:

քերը գոհացնելու եւ աղտոտ հաշիւներ մաքրելու համար: Փոխանակ բոլոր օսմանցիներուս չնորհուած ազատութենէն, հաւասարութենէն եւ եղբայրութենէն օգտուելու, ... մենք մեր [անձնական] հակառակորդները նախատելով զբաղած ենք: Սեւ վարագոյր մը քաշեցէ՛ք անցեալին վրայ եւ այժմ, փոխանակ զիրար բզքտելու եւ անձնական կիրքեր գոհացնելու, լրջօրէն մտածենք ազատ եւ քաղաքակիրթ օսմանցի ժողովուրդի մը վայել խոհեմութեամբ եւ առանց ցուցամոլութեան եւ ամբոխի տրամադրութիւնները շահագործելու մեր ապագայ ծաղկման վրայ»[1]:

Ստեղծված վիճակին տագնապով անդրադառնում էին նաև ուրիշ թերթեր:

«Բիւզանդիոն» օրաթերթի խմբագրապետ Բյուզանդ Քեչյանը հուլիսի 18-ին հայ հանրությանը անձնական կրքերը զսպելու, գործնական խնդիրներով զբաղվելու և նոր վտանգների ու փորձանքների առջև դուռ չբացելու կոչ էր անում:

Վրդովված էին նույնիսկ մայրաքաղաքի այլազգիները: Սարուխանն իր նշված հոդվածում չեշտում էր, որ Կ. Պոլսի «միւս հասարակութիւնները յուզուել էին այս անվայել չափազանցութիւններից. մի յոյն բարեկամ սաստիկ զարմանք էր յայտնում ինձ հայերի այս տգեղ վարմունքի մասին: Մի լուրջ յոյն թերթ՝ «Կոստանդինօպոլիսը», ընդհանուրի զգացմունքի թարգման լինելով, հայ ժողովրդի ուշադրութիւնը հրաւիրեց այդ անտակտ վերաբերմունքի վրայ»:

Հակաօրմանյանականների վայրագությունները այպանում էին նույնիսկ թուրքերը:

Նախկին պատրիարքի դեմ թշնամական ցույցերի առթիվ հանդես եկան պոլսահայ թերթերի մեծ մասը, կովկասահայ և գաղութահայ շատ պարբերականներ: Փորթուգալյանի «Արմենիան» գրում էր.

«Ի՞նչ կը նշանակէ հայոց պատրիարք մը դատելու համար բռնել տանիլ յանձնել դատական նախարարութեան: Մենք հա-

---

[1] *Տե՛ս «Զենիթ», 19 հուլիսի 1908 թ.:*

յերս Ազգ. Երեսփոխանական Ժողով ունինք, որի իրաւասութեան կը պատկանի դատել մեր պատրիարքը: Փառք Աստուծոյ, մեր Ազգային Սահմանադրութիւնն ալ վերստացանք հիմա, որով Ազգ. Երեսփոխանական Ժողովի գումարումն ալ հիմա անկարելի չէ Օրմանեանը դատելու համար: Այսու ամենայնիւ, ազգը միշտ ունի իրեն ներկայացուցիչ մարմին մը, որու իրաւասութեան կը պատկանի իր պատրիարքի գործերը դատելու կարգադրութիւններն ընել. խումբ մը ցուցարարներ հայոց պատրիարքը Բ. Դռան դատական իշխանութեան յանձնելու եւ այդ կերպով մեր ազգային դարաւոր մէկ իրաւասութիւնը խախտելու եւ նոր վերստացուած Ազգ. Սահմանադրութիւնն ալ այսպէս իրենց ձեռքով ջնջելու ինչպէ՞ս կը յօժարին»[1]:

«Հովիւը» զայրոյթ էր արտահայտում «ամբոխավարների սխրագործութիւնների առթիւ», որոնք «Օրմանեան սրբազանի դէմ մոլեգնութեան այն աստիճանի են հասնում, որ երիտասարդ թուրքերը ստիպուած են լինում միջամտել եւ կարգի, զգաստութեան հրաւիրել: Թուրք երիտասարդներն իրանց հովանաւորութեան տակ են առնում հայ պատրիարքին: Դա մի նախատինք է հայերի համար»[2]:

Այնուհետև թերթը չեշտում էր, որ նախկին պատրիարքը, օժտված լինելով դիվանագիտական եղակի զգացողությամբ, ճարտարությամբ ու հաստատուն կամքով, «կարողացել էր քաղաքագիտական նրբութեամբ պահպանել տաճկահայերի մնացորդը սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականութեան հանդէպ»[3]:

Իր հերթին, «Արարատ» հանդեսը ցավով նշում էր, որ «երկարատեւ ստրկութեան ազդեցութիւնը, որ ստեղծել է ջենտլմենութեան զգացումից զուրկ մի սերունդ, չատ աւելի բնորոշ կերպով արտայայտւում է սրբազան Օրմանեանի դէմ եղած միանգամայն պարսաւելի, խուժանական ցոյցերով եւ լրագրա-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 50, վավ. 66/3570 («Արմենիայի» կտրոն առանց ամսաթվի):*

[2] ***«Հովիւ»,*** *№ 28, 3 օգոստոսի 1908 թ., էջ 434:*

[3] *Նույն տեղում:*

կան գարշահոտ յօդուածներով: Հայ խուժանն ու իւր պետերը իրենց բացասական եռանդով այնպիսի ծայրայեղութեան եւ անամօթ գործողութիւնների հասան, որ բոլոր օտարազգի հասարակութիւնները անխտիր պախարակեցին նրանց արարմունքը եւ երէկուայ Հայոց Պատրիարքը Երիտասարդ Թուրքերի հովանաւորութեամբ միայն պիտի ազատուէր աւելի անսպասելի դէպքերից»[1]:

Հանդէսը շարունակում էր. «Մենք չենք ուրանում, որ Օրմանեանն ունէր պակասութիւններ, բայց շատ չնչին նորա առաւելութիւնների համեմատութեամբ»[2]: «Արարատը» հիշեցնում էր, որ Օրմանյանը պատրիարքության աթոռ էր բարձրացել 1895-1896 թթ. կոտորածներից հետո և իր 12-ամյա պաշտոնը վարել ամենածանր պայմաններում՝ զգուշությամբ, խելքով և քաղաքագիտությամբ: Հենց այդ զգուշության համար արժանացել էր հեղափոխական տարրերի ատելությանը[3]:

Կառավարությունը հասկացել էր, որ հանձին Օրմանյանի իր առջև ունի բարձր արժանիքներով օժտված քաղաքագետ հոգևորական, ուստի հաշվի էր նստում նրա հետ և որոշ դեպքերում ընդառաջ էր գնում նրա խնդրանքներին: Դա թույլ էր տալիս, որ սրբազանը նվիրվի չինիչ գործունեութեան:

Այդ իրողությունը հաշվի առնելով, «Արարատը» չեշտում էր, որ «եթէ Օրմանեանի պէս խելացի եպիսկոպոս մը չունենային տաճկահայք պատրիարքական աթոռին վրայ, շատ աւելի խեղճ պիտի ըլլային»[4]: Եվ հանդեսը թվարկում էր պատրիարքական պաշտոնին եղած 12 տարիների ընթացքում նրա կատարած կարևոր գործերը՝ Թուրքահայաստանի և կայսրության հայաշատ վայրերի հոգևոր կյանքն օժտվեց տեղապահներով, պատրիարքական փոխանորդներով, առաջնորդներով. Պոլսում և գավառներում նորոգվեցին եկեղեցական, կրթական, բարե-

---

[1] **«Արարատ»**, № 7-8, հուլիս-օգոստոս, 1908, էջ 722:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 723:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 722:

[4] Նույն տեղում, № 1, հունվար, 1909, էջ 51:

գործական հաստատությունները և կառուցվեցին նորերը. բարգավաճեցին մայրաքաղաքի վարժարանները և այլն[1]:

Հիրավի, բազմահմուտ ու պերճախոս եկեղեցական, խորագիտակ հայագետ, քննախույզ մտքի տեր լինելուց զատ Օրմանյանն ամենից առաջ Մեծ Հայ էր: Բնական էր, որ այդ մեծությունը պատրիարքական աթոռից ընկնելուց հետո էլ չարունակեց իր օգտակար ղերակատարությունը հայոց կյանքից ներս:

1908 թ. դեկտեմբերի 19-ին Հայոց ազգային ժողովը ստեղծեց Օրմանյանի նկատմամբ հարուցված մեղադրանքներն ստուգող դատաքննիչ հանձնախումբ, որի մեջ մտան հինգ եկեղեցական և հինգ աշխարհական: Քննիչ մարմինն սկսեց Օրմանյանի հակառակորդների գրավոր ամբաստանագրերն ընդունել: Դրանց մեջ իրենց ծավալով առանձնանում էին ազգայիններ Արիստակես Գասպարյանի, Հովհաննես Հինդլյանի, Ղազարոս Զբլախյանի, Մաղաքիա եպս. Տերունյանի, ինչպես նաև նախկին պատրիարքի նկատմամբ ընդհանուր առմամբ չեզոք դիրքում գտնվող Եղիշե եպս. Դուրյանի ու նրա մի քանի համախոհների ստորագրած ամբաստանագրերը: Դրանք պարունակում էին հստակությունից զուրկ բազմաթիվ ընդհանուր մեղադրանքներ, ինչպես օրինակ՝ Օրմանյանն իր գործունեության մեջ հաշվի չի նստել Ազգային սահմանադրության հետ, ժամանակին չի գումարել ընդհանուր ժողովներ, անհրաժեշտ կարեկցանք չի ցուցաբերել բանտարկյալների ու աքսորականների նկատմամբ, բողոքներ չի ներկայացրել հայ բանտարկյալների սպանությունների կապակցությամբ, գործել է միահեծան՝ առանց խորհրդակցելու Ազգային կեդրոնական վարչության անդամների հետ, անտեղի դիտողություններ է արել հանդուգն խոսողներին և այլն[2]: Այնուամենայնիվ, կենտրոնում մնում էր հիմնական քրեական մեղադրանքը՝ փողերի յուրացման առասպելը:

Երկարատև ստուգումներից հետո, որոնք մեծ ընդհատում-

---

[1] Տե՛ս **Համբարձում Երամեան,** Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, էջ 471:

[2] Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5847-5851:

ներով տևեցին չորս տարի՝ 1908 թ. դեկտեմբերից մինչև 1912 թ. վերջը, քննիչ մարմինը Օրմանյանի գործունեության մեջ պախարակելի բան չգտավ և ստիպված եղավ իր գործունեությունը դադարեցնել:

ԻԶՄԻՐԼՅԱՆԸ ԿՐԿԻՆ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Օրմանյանի հրաժարականից անմիջապես հետո, պատրիարքական տեղապահ Եղիշե եպս. Դուրյանը և Ազգային պատգամավորական ժողովը, կատարելով Թուրքահայոց նոր պատրիարք ընտրելու՝ Խառը ժողովի 1908 թ. հուլիսի 16-ի որոշումը, ձեռնարկեցին ընտրության կազմակերպումը և իրականացումը:

Սակայն, նախքան նոր պատրիարքի քվեարկության իրականացումը, անհրաժեշտ էր վերաքննել և բարեփոխել Կ. Պոլսի Հայոց պատգամավորական ժողովը: Այդ հարցն առաջ էր քաշել Միքայել Նաթանյանը Իզմիրի «Դաշինք» թերթում տպագրած իր մի քանի հոդվածներում, որից հետո այս հարցն սկսվել էր արծարծվել նաև պոլսահայ լրագրերի էջերում: Առաջարկվում էր սրբագրել Թուրքահայոց Ազգային սահմանադրության մեջ գավառների հայ ժողովրդի ներկայացուցչության վերաբերյալ անարդարությունը:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Թուրքահայոց սահմանադրության, Ազգային պատգամավորական ժողովը բաղկացած էր 140 պատգամավորից, որոնց 5/8 մասը, այսինքն՝ 100 պատգամավոր, ընտրում էր Կ. Պոլիսը, իսկ մնացած ողջ Թուրքահայության շահերը ներկայացնում էր միայն 40 պատգամավոր: Եվ եթե նկատի ունենանք, որ այս 40 պատգամավորների մի մասը դարձյալ պոլսեցիներ էին լինում կամ Պոլսում ապրող գավառցիներ, ապա կտեսնենք, որ, իսկապես, Ազգային պատգամավորական ժողովը միայն Կ. Պոլսի հայության ներկայացուցիչը և շահերի արտահայտիչն էր, այլ ոչ թե Օսմանյան կայսրության ամբողջ հայ ժողովրդի:

Ահա թե ինչո՛ւ դեռ ժամանակին Գրիգոր Արծրունին քարոզում էր, որ Թուրքահայոց Ազգային պատգամավորական ժողովը պետք է փոխադրել Հայաստանի սիրտը՝ Կարին: Եվ եթե դա հնարավոր չլինի իրականացնել, գոնե պետք է աշխատել, որ նա լինի իսկապես ամբողջ ժողովրդի ներկայացուցչություն, որ Պոլիսն ունենա առ առավելն 10 պատգամավոր, իսկ մնացյալ 130-ը լինեն թեմերից:

Բայց, ինչպես նախկինում, 1908 թ. նույնպես, ինչպես Գր. Արծրունու, այնպես էլ նրա կարծիքը պաշտպանողների տեսակետը հաշվի չառնվեց:

Պոլսահայ ղեկավար ազգայինների՝ գավառի հայերի շահերն այդպես բացահայտ հաշվի չառնելու դրդապատճառներից մեկը, այլևայլ շարժառիթների թվում, առաջինների անթաքույց արհամարհանքն էր վերջիններիս նկատմամբ:

Ռուբեն Տեր-Մինասյանն ուշադրություն էր հրավիրում այն իրողության վրա, որ Թուրք կառավարողներին հաջողվել էր հայության ամբողջական մարմնի մեջ տարամերժ երկու կողմ ստեղծել:

Մի կողմում «ազգի սերուցքը», նրա մտավոր ներուժն էր, որ հավաքվել էր Կ. Պոլսում, կտրվել բուն Թուրքահայաստանից և ապրում էր ուրույն, մեկուսի և անջատ կյանքով: Ավելին, Եվրոպայի մերձությամբ ապրող պոլսահայը նույնիսկ ամոթի զգացում էր ապրում մայրաքաղաքից հեռու, ասիական խորքերում ընկած Հայաստանի աղքատ ու «հետամնաց» իր ազգակիցների համար:

Ռուբենը մեզ է փոխանցել մի քանի պոլսահայերի դատողությունները գավառահայության մասին:

«Ճանը՛մ,- կ՚ըսէր պոլսեցի հայը,- կառավարութիւնը բարեխնամ է, արդար է, անաչառ է. իսկ եթէ ճիշդ է, որ այդպէս չէ գաւառներու մէջ, ատոր յանցանքը կառավարութեանը չէ, այլ իրենց՝ գաւառացիներունը. վայրենի են, տգէտ են, աւազակ են: «Բէկլի՞կ» կ՚ուզեն կոր: Այդ չըլլալիք է: Բոչայէն փաչա կ՚ըլլա՞յ»:

«Ճանը՛մ, աշխարհը լայն է, արեւելեան նահանգներէն հազար անգամ աւելի լաւ տեղեր կան: Եթէ իրաւ նեղութեան մէջ

են իրենց այդ լեռներուն մէջ, ո՞վ է բոներ իրենց ձեռքը. Թո՛ղ Թողուն, հեռանան: Ըսէ՛ք, այս երկիրը վա՞տ է. Թո՛ղ գան հոս, հաց ու պանիրը պատրաստ է իրենց համար»:

«Ճանը՛մ, աշխարհը դմակ է, մարդը՝ դանակ. ուր դմակ կայ, հոն ալ կեցի՛ր: Փառք Աստուծոյ, ո՛չ լեզուդ կը կտրեն քու լեզուդ գործածելուդ համար, ո՛չ ալ մատներդ՝ խաչ հանելուդ համար: Աս ինչ խելք է. հեքիաթներու ետեւէն իյնալ եւ Հայաստան ըսելով գլուխը դուրս տալ: Ուրիշի ցաւը քեզի՞ է տրուած»:

«Ճանը՛մ, հէչ գառը եօթը մայր կը ծծէ՞: Քեզ[ի] ո՞վ կ՚ըսէ՝ քիթդ վեր բոնես, որ այդ հալին իյնաս...»[1]:

Պոլսի միջավայրն առաջ էր բերել հայության միանգամայն նոր տիպ ու տեսակ: Նա ծայրահեղորեն «ազգասեր» էր ու ծխասեր, կրոնասեր ու կրոնամոլ: «Տիպար մը,– նկատում է Ռուբենը,– որ ուժեղին կողմն էր եւ կ՚արհամարհէր թոյլը. չափազանց մտացի էր եւ ուսումը իբր զէնք կը գործածէր: Ճարպիկ եւ կենսուրախ էր՝ կեանքը իր վայելքներով հետապնդող: Ամէնուն հետ կը համաձայնէր, բայց իր գործը կը դիտէր: Դժուարութիւններու առջեւ կանգնող չէր, բայց անոնց շրջապատիկը կ՚անցնէր: Սեւին սեւ չէր ըսեր, այլ ընդհանրութեան ճաշակին համապատասխան կ՚որակէր...»[2]:

Նման ապրելակերպ ու վարք ունեցող պոլսահայերի մտածողությունը միանգամայն խորթ էր հայ ազգի ընդհանրական հոգեբանությանը: Միայն իրենց շահի մասին մտածող կամ միայն իրենց գլուխը պահող պոլսահայերը չափազանց վատ տպավորություն էին թողնում շրջապատի այլազգիների, մասնավորապես եվրոպացի մտավորականների և ճամփորդների վրա, որոնք, անկարող լինելով թափանցելու երևույթի պատճառների մեջ, միաժամանակ պատեհություն չէին ունեցել հաղորդակցվելու հայության ամբողջական մարմնի մյուս կողմին՝ Երկրի հայությանը, որպեսզի կարողանային միանգամայն հակառակ պատկերացում կազմել: Հայրենիքի աշխատավոր զանգ-

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 8 (283), օգոստոս, 1949, էջ 62-63:*

[2] *Նույն տեղում:*

վածները մայրաքաղաքի հայությանը, այդ թվում պոլսահայ մտավորականությանը ազգային արմատներից կտրված ու վաղուց անհարազատ դարձած տարր էին համարում: Հայերի այդ տիպը ժողովուրդը մկրտել էր «հոսհոս» անունով[1]:

Ինչևէ, Ազգային խառը ժողովն իր 1908 թ. հուլիսի 16-ի նիստում որոշում ընդունեց Ազգային սահմանադրության հիման վրա, ընտրությունների միջոցով, ընդհանուր ժողովն ամբողջովին վերակազմել: Այդ նպատակով Խառը ժողովն իր անդամներից կազմեց հանձնախումբ՝ տեղապահ Եղիշե եպս. Դուրյանի գլխավորությամբ[2]:

Հուլիսի 19-ին Ազգային պատրիարքարանը Դուրյանի ստորագրությամբ շրջաբերական ուղարկեց մայրաքաղաքի թաղական խորհուրդներին՝ հանձնարարելով Ազգային ժողովի պատգամավորական նոր ընտրություններ անցկացնել:

Նոր պատգամավորների ընտրությունից հետո Ազգային ժողովի առաջին նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 3-ին: Հոկտեմբերի 10-ին հավաքվեց երկրորդ նիստը, ուր ձևավորվեց նրա մնայուն դիվանը հետևյալ կազմով. Մինաս Ջերազ (ատենապետ), բժիշկ Վահրամ Թորգոմյան (Ա. դեր-ատենապետ), Գևորգ Էֆ. Ասլանյան (Բ. դեր-ատենապետ), Հրանտ Ասատուր (Ա. ատենադպիր), Հայկ Խոջասարյան (Բ. ատենադպիր), Հովհաննես Հինդլյան (Գ. ատենադպիր): Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ երրորդ նիստը, որը թարմացրեց վարչության կազմը, որտեղ մտան նաև երկու հեղափոխականներ՝ Հնչակից Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան), Դաշնակցությունից՝ Արշակ Վռամյանը (Օննիկ Դերձակյան):

Բոլորի համար պարզ էր, որ աքսորից Իզմիրլյանի վերադարձը՝ վերադարձ էր նաև պատրիարքական աթոռին, բայց դա պետք է կատարվեր՝ պահպանելով Ազգային սահմանադրության տառն ու ոգին:

Տվյալ պահին, երբ Թուրքիայի կառավարչական ռեժիմը փո-

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»,** № 8 (283), օգոստոս, 1949, էջ 62-63:

[2] Տե՛ս **«Արեւելք»,** № 6854, 22 հուլիսի 1908 թ.:

փոխվելու ընթացքի մեջ էր, երբ հայտարարված էր ընդհանուր պետական սահմանադրությունը, բայց դեռ հայտնի չէր, թե որքա՞ն չուտով կիրագործվեն սահմանադրական բարեփոխումները, Կ. Պոլսի հայոց պատրիարքի պաշտոնը և անձնավորությունը կարևոր նշանակություն էին ձեռք բերում կայսրության ամբողջ հայ ժողովրդի համար:

Այդ պատասխանատու պաշտոնի համար կար երկու հեղինակավոր թեկնածու՝ Մատթեոս արք. Իզմիրլյանը և Եղիշե եպս. Դուրյանը:

Բանն այն է, որ թափուր էր Էջմիածնի կաթողիկոսական գահը, և, բոլորի համոզմամբ, հենց Իզմիրլյանն էր ամենահարմար թեկնածուն: Հետևապես, Կ. Պոլսի հայոց պատրիարքի համար կարծես մնում էր միայն Դուրյանի թեկնածությունը:

Բայց պոլսահայության ճնշման տակ, Հայոց ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեցին և՛ Իզմիրլյանի, և՛ Դուրյանի թեկնածությունները: Դա նշանակում էր, որ թուրքահայության մեծ մասը երկու թեկնածու ուներ ոչ միայն Կ. Պոլսի պատրիարքության, այլև Էջմիածնի կաթողիկոսության համար: Եթե նրանցից մեկը պատրիարք լիներ ընտրվելու, ապա մյուսը Ամենայն հայոց կաթողիկոս կառաջադրվեր: Եվ եթե Էջմիածնի համագումար-ժողովում կաթողիկոս ընտրվեր Իզմիրլյանը և հաստատվեր ռուսական կառավարության կողմից, ապա պատրիարքության կհրավիրվեր Դուրյանը:

Հոկտեմբերի 22-ին Ազգային ժողովը ձեռնարկեց պատրիարքի ընտրությանը: Կազմվեց թեկնածուների հնգանուն ցանկ՝ Մատթեոս Իզմիրլյան, Եղիշե Դուրյան, Ստեփանոս Հովակիմյան, Հմայակ Դիմաքսյան և Գևորգ Երեցյան կազմով: Նույն օրը 83 ձայնով Մատթեոս արք. Իզմիրլյանը վերընտրվեց Կ. Պոլսի հայոց պատրիարք: Պատգամավորներից որևէ մեկի մոտ որևէ հակաճառում կամ երերում չէր եղել: Քվեարկության արդյունքները ցույց տվեցին, թե Իզմիրլյանն ինչպիսի անբեկանելի հեղինակություն է վայելում թուրքահայոց մեջ:

Մաղաքիա արք. Օրմանյանը Մատթեոս արք. Իզմիրլյանին բնութագրել էր որպես «վարքով անբասիր, եկեղեցականութեամբ նախանձայոյզ, դիտումով ուղղամիտ, աշխատութեամբ

անխոնջ, նպատակով աչառ» մարդ[1]: Հայոց ազգային սահմանադրությունն ընդունելուց ի վեր սա առաջին դեպքն էր, որ պատրիարքական պաշտոնից զրկված որևէ մեկը երկրորդ անգամ վերադառնում էր նույն պաշտոնին:

Հոկտեմբերի 31-ին Կ. Պոլսի մայր եկեղեցում ուխտ կատարելուց հետո Իզմիրլյանը պաշտոնապես բարձրացավ պատրիարքական աթոռի վրա: Այդպիսով Եղիշե եպս. Դուրյանի տեղապահության ժամանակամիջոցը տևեց երեքուկես ամիս՝ հուլիսի 16-ից մինչև հոկտեմբերի 31-ը:

Հայտնի է, որ Իզմիրլյանն իր առաջին պատրիարքության ժամանակ գտնվել էր հնչակյանների ուժեղ ազդեցության տակ, իսկ այս անգամ նրան մեծապես աջակցել էր Դաշնակցությունը, և նա այդ կուսակցության ներգործության տակ էր: Իսկ դա նշանակում էր, որ նա պիտի մնար Իթթիհադի հետ հաշտ գործակցելու քաղաքականության ծիրի մեջ:

Թեկուզ պատրիարքն ընտրվել էր միաձայն, բայց նրա լիազորություններն օրինական կհամարվեին միայն այն դեպքում, եթե նրա ընտրությունը, ընդունված կարգի համաձայն, վավերացվեր սուլթանի կողմից: Աբդուլ Համիդն օրինական համարեց նոր պատրիարքի ընտրությունը և հատուկ իրադեով դա հաստատեց:

Նորընտիր պատրիարք Մատթեոս արք. Իզմիրլյանը Աբդուլ Համիդի հատուկ հրավերով 1908 թ. նոյեմբերի 15-ին պատրիարքարանից, ըստ ավանդության պալատից ուղարկված հատուկ կառքերով և իր չքախմբով, ուղևորվեց Ելդըզ քեռչկ՝ ներկայանալու սուլթանին: Պատրիարքին ուղեկցում էին Եղիշե Դուրյան և Հմայակ Դիմաքսյան սրբազանները, Ազգային ժողովի Բ ատենապետ բժիշկ Վահան Թորգոմյանը, վարչության ատենապետ Ստեփան Գարայանը և պատրիարքարանի քարտուղար Գամեր Շիրինյանը[2]:

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 5827:

[2] Տե՛ս **«Գործ»**, № 58, 18 նոյեմբերի 1908 թ., № 63, 25 նոյեմբերի 1908 թ.:

Իր հրամանով 12 տարի առաջ Պոլսից աքսորված Իզմիրլյանին սուլթանն ընդունեց մեծ պատիվներով:

Պատրիարքը նախ սուլթանին շնորհակալություն հայտնեց, որ իր ընտրությունը վավերացված է կայսերական իրադեով, ապա հայտարարեց, թե ինքը պիտի ջանա օսմանյան հայրենիքի և հայ ազգի առջև իր պարտականությունները կատարել անձնվիրաբար, հուսալով, որ մշտապես աջակցություն կստանա պալատից ու կառավարությունից:

Իր հերթին սուլթանը, շնորհավորելով Իզմիրլյանին պատրիարքական պաշտոնին վերընտրվելու առթիվ, ասաց.

«Շատոնց ի վեր հայ եւ թուրք ժողովուրդների միջեւ տիրում էր անհամաձայնութեան ոգի, որից ես ինքս չափազանց ազդուած էի: Այժմ ես ինձ բարեբախտ եմ զգում, որ այդ բոլորը վերացան եւ եղբայրութիւն, արդարութիւն ու հաւասարութիւն են տիրում մեր ժողովրդի բոլոր տարրերի մէջ՝ շնորհիւ սահմանադրութեան, որի պահպանման համար մեր կողմից նոյնպէս հրապարակաւ երդում է կատարուած:

Գոհ եմ, որ դուք էլ եկեղեցու բեմից ուխտել էք այն կէտ առ կէտ գործադրելու եւ ամէն ջանք ի գործ դնելու համար:

Ես ու մինիստրներս ոչ մի օժանդակութիւն չպիտի խնայենք հայոց երջանկութեան համար. դրանում համոզուած կարող էք լինել:

Բարեւներս հաղորդեցէ՛ք բովանդակ հայ ժողովրդին»[1]:

Պալատական արարողությունից հետո պատրիարքական թափորը Ելդզից դուրս գալով՝ նույն հանդիսավորությամբ պատրիարքարան վերադարձավ: Նոյեմբերի 18-ին պատրիարք հայրը եղավ նախարարների մոտ, այցելեց մեծ վեզիրի խորհրդական Զիա բեյին, արտաքին գործերի նախարար Թևֆիք փաշային, արդարադատության նախարար Հասան Ֆեհմի փաշային և բոլորի մոտ պատշաճ ընդունելություն գտավ[2]: Նոյեմբերի 20-ին Իզմիրլյանը նույն հանդիսավորությամբ ուղևորվում է Բարձր

---

[1] **«Մշակ»,** № 265, 29 նոյեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Արեւելք»,** № 6955, 19 նոյեմբերի 1908 թ.:

Դուռ, ուր հանդիպում է ունենում մեծ վեզիր Քյամիլ փաշայի հետ[1]:

Նոր պատրիարքի ընտրությունից հետո Կ. Պոլսի հայոց ղեկավարների մոտ տրամադրություն խմորվեց իրարից բաժանել Ազգային պատգամավորական ժողովի կրոնական և քաղաքական գործերը, այսինքն՝ փաստորեն վերացնել Խառը ժողովը: Առաջարկվում էր.

Ա) Կ. Պոլսի հայոց պատրիարքին համարել Ամենայն հայոց կաթողիկոսի փոխանորդ և ընդհանուր Թուրքիայի հայոց կրոնապետ՝ նրան ենթարկելով նաև հայ կաթոլիկ և հայ բողոքական հարանվանությունները: Այդ կերպ պատրիարքը պետք է սահմանափակվեր զուտ կրոնական գործեր վարելով, որպեսզի կարողանար իր բարձր կոչմանն ավելի լավ ծառայել՝ իբրև «կրօնապետ եւ պատրիարք Թուրքիոյ հայոց»:

Բ) Քաղաքական ժողովի իրավասության ենթակա բոլոր աշխարհիկ խնդիրներն ամբողջովին հանձնել այդ ժողովի ատենապետին՝ նրան տալով «վարչապետի» տիտղոս: Ձայնատվության լայն սկզբունքով ընտրված Քաղաքական ժողովը, իր վարչապետի հետ, պետք է ներկայացներ Թուրքիայի ընդհանուր հայությունը՝ լուսավորչական, հոմեադավան, ավետարանական:

Ազգային պատգամավորական ժողովը քննեց բարձրացված հարցը և նպատակահարմար գտավ ամեն ինչ նախկինի պես թողնել:

Իզմիրլյանի պատրիարք ընտրվելով պարզվում էր նաև Էջմիածնի կաթողիկոսի ընտրության՝ Թուրքահայերի առաջին թեկնածուի հարցը, թեև առարկողներ եղան, թե Իզմիրլյանի Կ. Պոլսի պատրիարք ընտրվելուց հետո այլևս նպատակահարմար չէ նրա անունը մտցնել Էջմիածնի կաթողիկոսական թեկնածուների ցուցակի մեջ: Բայց այդ տեսակետը Թուրքահայ հասարակական կարծիքն անհիմն էր համարում: Իրականում, Թուրքահայերը չտապել էին Իզմիրլյանին ընտրել պատրիարք, որպեսզի ուժեղացնեն նրա թեկնածությունը կաթողիկոսական գահի համար:

---

[1] *Տե՛ս* ***«Արեւելք»,*** *№ 6957, 21 նոյեմբերի 1908 թ.:*

* * *

Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի վախճանումից հետո (1907 թ. հոկտեմբերի 29) անցել էր մեկ տարի և, ըստ «Պոլոժենիայի», պետք է Ամենայն հայոց նոր կաթողիկոս ընտրվեր:

Հետագա շարադրանքում մենք մանրամասնորեն կանդրադառնանք այդ կաթողիկոսական ընտրությանը: Այժմ միայն թռուցիկ նշենք, որ Կ. Պոլսի պատրիարքական գահ բարձրանալու (հոկտեմբերի 31) հաջորդ օրն իսկ (նոյեմբերի 1) Մատթեոս արք. Իզմիրլյանը էջմիածնի ընտրողական ժողովում տեղի ունեցած քվեարկության արդյունքում Ամենայն հայոց կաթողիկոս էր ընտրվել: Նրանից հետո առավել ձայներ ստացել էր Եղիշե եպս. Դուրյանը:

Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը հաղորդում էր, որ երբ Իզմիրլյանի կաթողիկոս ընտրվելու մասին էջմիածնից ուղարկված հեռագիրն ստացվել էր Կ. Պոլսում և ներկայացվել նրան, նա քնած է եղել և հարկ է եղել նրան արթնացնել: Ի պատասխան իրեն ուղղված շնորհավորանքներին, Իզմիրլյանն ասել էր.

«Շնորհակալ եմ, որ ազգը կը գնահատէ իմ աշխատութիւնս եւ կրկնակ պաշտօններ կը յանձնէ ինձ: Ես փառասիրութիւն չունիմ. հիմա Կ. Պոլսոյ պատրիարքութեան մէջ ծանր աշխատութիւններ կը տեսնեմ, զորս արդիւնաւորապէս ի գլուխ հանելու համար պէտք է ոգի ի բոին մաքառիլ: Տարի մը, երկու տարի բաւական չեն ազգին քայքայուած չէնքը քիչ-չատ վերակազմելու համար»:

Երբ նրան հարցրել էին, որ եթե ինքը հրաժարվում է էջմիածին գնալ, ապա կաթողիկոսական գահի հետ ի՞նչ պիտի լինի և մի՞թե այնտեղի անելիքները ավելի քիչ կարևոր են, քան Պոլսում կատարվելիքը, պատրիարքը պատասխանել էր.

«Ազգը խիստ խոհեմութեամբ վարուած է այս ընտրութեան պարագային մէջ, ստուարագոյն քուէն տալով Դուրեան սրբազանին, որ իմ աչակերտս է եւ սրտի ազնուութիւնով, մտքի զգացումներով ու ամէն կատարելութիւններով ճշմարտապէս իրաւունք ունի հայրապետութեան գահը բարձրանալու»:

Իսկ երբ Դուրյան սրբազանի արժանիքները չժխտող զրու-

ցակիցները նկատում են, որ Էջմիածնի կաթողիկոսի կարևոր պաշտոնը գրավելը դեռ վաղ է նրա համար, Իզմիրլյանն ասում է.

«Այդ դատաստանը սխալ է. Դուրեան սրբազան բուն իսկ կաթողիկոսութեան մարդն է. ուղղամտութիւն, արդարասիրութիւն եւ կատարեալ հմտութիւն, ասոնց երեքն ալ կը փայլին իր անձին վրայ, որ հայրապետական աթոռը բազմելով պիտի կրնայ ազգին ամէն պիտոյքները լրացնել թէ՛ իբր սրտի մարդ եւ թէ՛ իբր մտքի մարդ: Էջմիածնի վանքը ոչ միայն կարող վարիչի մը պէտք ունի, այլ նոյնքան ալ արժանաւոր վարդապետի մը, որ ազգին միակ Աթոռը լուսոյ օրրան մը դարձնէ: Դուրեան սրբազանի ո՞վ կրնայ հաւասարիլ, երբ խնդիրը աչակերտներ հասցնելու վրայ ըլլայ»[1]:

Էջմիածնի գահի վրա չնստելու իր ցանկությունը հիմնավորելու համար Իզմիրլյան սրբազանն ավելացնում է, որ առողջական տեսակետից էլ Կովկասի օդը իրեն չի գալիս:

Կ. Պոլսի թերթերում երևացած տեղեկությունները ենթադրել էին տալիս, որ Իզմիրլյան սրբազանն աշխատում էր իր փոխարեն Էջմիածնի գահին տեսնել Եղիշե եպս. Դուրյանին:

Առանց ուրանալու Դուրյան եպիսկոպոսի բոլոր գովելի և դրական հատկությունները, նրա մաքուր կյանքը, ժողովրդասիրությունը, նրա հմտությունը կրթության, լեզվագիտության և գրականության մեջ*, կովկասահայ մամուլը չեշտում էր, որ Էջմիածնի ներկա դրության մեջ հույժ անհրաժեշտ է հենց Իզմիրլյանի կաթողիկոս լինելը, և որ հարկ է ամեն կերպ նրան համոզել Էջմիածին գալու:

«Կաթողիկո՞ս, թէ՞ պատրիարք» վերտառությամբ հոդվա-

---

[1] Արտատպությունը տե՛ս **«Մշակ»**, № 263, 27 նոյեմբերի 1908 թ.:

* Եղիշե Դուրյանը գիտեր ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, թուրքերեն, հին հունարեն: Մի քանի երկասիրությունների հեղինակ էր: Երկար ժամանակ եղել է Արմաշի դպրեվանքի ուսուցիչ-տեսուչ, ապա՝ փոխ-վանահայր-վերատեսուչ: 1904-1908 թթ. գրաղեցրել է Զմյուռնիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնը:

ծում Համբարձում Առաքելյանը գրում էր.

«Այն քայքայումից եւ աւերումներից յետոյ, որ կրեց Էջմիածինը Խրիմեանի օրով, կարգապահութեան, օրինականութեան այն խախտումները, որոնք բուն են դրել Էջմիածնում, հայ հոգեւորականութեան մէջ, կաթողիկոս պէտք է լինի մեծ հեղինակություն ունեցող եւ ազդող մի եկեղեցական, իսկ ներկայումս միակ հեղինակութիւն վայելող անձն Իզմիրլեանն է»[1]:

Անդրադառնալով կաթողիկոսի պաշտոնից հրաժարվելու չպատճառաբանված հանգամանքներին՝ թերթերն ափսոսանքով նշում էին, որ եթե Իզմիրլյանը որոշել է Էջմիածին չգալ, ապա այդ մասին նա պիտի հայտներ նախապես, մինչև տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունները: Այժմ նրա հրաժարումը առիթ է տալու կատարված ընտրությունների բեկանման, ինչը կնշանակի մի տարի ևս սպասել նոր կաթողիկոս ընտրելու համար: Իսկ այդ ընթացքում ազգային-եկեղեցական գործերը կմնային քայքայված ու անկերպարան վիճակում:

Իզմիրլյանի պատրիարքությունը տևեց 1908-ի հոկտեմբերի 31-ից մինչև 1909-ի փետրվարի 10-ը: Այդ ժամանակի ընթացքում նա չհասցրեց քիչ թե շատ նկատելի գործ կատարել: Երկար համոզելուց հետո, վերջապես, նա համաձայնեց ստանձնել Ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնը՝ ընդունելով ռուսական հպատակություն:

Ինչպես վերը նշվեց, թեև Իզմիրլյան սրբազանին իրենց մարդն էին համարում հայկական հասարակության երկու հակոտնյա քաղաքական ուժերը՝ Դաշնակցությունը և Հնչակը, բայց նա ընդունելի էր ինչպես թուրքահայ, այնպես էլ ռուսահայ հասարակական-քաղաքական համարյա բոլոր հոսանքների համար: Այդ օրերին, ժողովրդի մեծ մասի գիտակցության մեջ նա անառարկելի և անփոխարինելի հեղինակություն էր՝ անցյալի իր բեղմնավոր գործունեությամբ, հալածյալի փշապսակով և անբասիր վարքուբարքով:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 264, 28 նոյեմբերի 1908 թ.:*

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1908 թ. աշնանը հայ ժողովրդի քաղաքական կյանքում տեղի ունեցավ խոշոր իրադարձություն՝ հրապարակ իջավ Թուրքահայ ռամկավար (դեմոկրատական) կուսակցությունը:

ՆԱԽԸՆԹԱՑ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Դեռևս 1905 թ., երբ ընթանում էր Ռուսական մեծ հեղափոխությունը և Ռուսաստանում առաջ եկած քաղաքական կուսակցությունների թվում ամբողջ ձայնով հրապարակ էր եկել Սահմանադրական ժողովրդավարների կուսակցությունը (կադետ) և դրան հարել էր «Մշակ» թերթն իր բազմաթիվ համախոհներով, Թուրքահայերից ոմանք սկսել էին հետաքրքրվել ռուսական այդ կուսակցության ծրագրով և աստիճանաբար հակվել էին այն մտքին, որ Թուրքահայությունը նույնպես կարիք ունի նման ծրագրով գործող մի քաղաքական կազմակերպության, թեև Թուրքիայում սահմանադրական որևէ նորմ չէր գործում:

Մինչև օսմանյան սահմանադրության հռչակումը Թուրքահայերի մեջ գործում էին քաղաքական չորս ուժեր՝ Դաշնակցությունը, Հնչակը, Վերակազմյալ Հնչակը և իրենց վերջին օրերն ապրող Արմենական կուսակցության բեկորները:

Հայկական ազատագրական շարժման խոտոր ընթացքը ցույց էր տվել, որ շարժման ղեկավարությունն ստանձնած հայկական հեղափոխական կուսակցությունները, պայքարի իրենց մեթոդներով ի վիճակի չեն եղել ճիշտ ուղի ցույց տալու ժողովրդին: Ավելին, շատ դեպքերում իրենց գործողություններով, ինչպես նաև միմյանց դեմ անզիջում ու անպատվաբեր պայքարի հետևանքով հեղափոխական կուսակցությունները բաժանբաժան են արել հայ ժողովրդի ուժերը, դրանով իսկ, իրենց կամքից ու նպատակներից անկախ, հեշտացրել հայությանը պարբե-

բաբար սպանդի ենթարկող Թուրքական բռնապետության գործը, ժողովրդին տանելով պարտությունից պարտություն:

Արդեն չատերն էին հարց տալիս. ո՞ւմ է ձեռնտու ազատության այն պայքարը, եթե դրա հետևանքով Հայաստանում հայ չի մնալու: Մի երկրում, որտեղ հավասարապես հարստահարված և տարբական իրավունքներից զրկված են հայ հարուստն ու աղքատը, մեծն ու փոքրը, արհեստավորն ու վաճառականը, գործավորն ու կղերը, բուրժուան ու պրոլետարը – այդպիսի մի երկրում արդյո՞ք հնարավոր է միաժամանակ ապստամբության կոչել ժողովրդին բռնակալ ռեժիմի դեմ և դասակարգային կռիվ արծարծել ազգի ներսում՝ Փոքր Ասիայի խորքերում գտնվող մի հետամնաց երկրում՝ Հայաստանում սոցիալիստական կարգեր հաստատելու համար: Մի՞թե դա սին երազանք չէ: Իսկ չէ՞ որ այդպիսի անհող երազների հետևանքը լինում է միայն կոտորածը, այն էլ՝ միայն հայերի կոտորածը:

Իզմիրում ունեցած իր մի բանախոսության ժամանակ, նշանավոր ազգային գործիչ Սուրեն Պարթևյանը (Սիսակ Պարտիզպանյան) նշում էր. «Մեր ազգային քաղաքականութիւնը նախ բողոքի եւ ապա ընդվզումի քաղաքականութիւնն եղաւ 30 տարիէ ի վեր: Հայ ազատագրական շարժումը ազգային աղէտներու, գալարումներու ու քայքայումներու մէջէն շարունակուեցաւ եւ պիտի շարունակուէր մինչեւ որ կա՛մ իր նպատակին հասնէր եւ կա՛մ վերջնական ջախջախումի մը յանգէր: Հայուն յաւիտենական փառքն ու պատիւը պիտի մնայ իր յեղափոխական մաքառումը Թուրք բռնակալութեան դէմ: Սակայն ամէնէն հերոսական պայքարներն ալ չեն կրնար յաջողութեամբ արդիւնաւորուիլ, եթէ արիութեան եւ զոհողութեան հետ հաչիւն ու խոհեմութիւնը չունենան իրենց իբր ազդակ: Հայ յեղափոխական շարժումը որքան ալ պատուաբեր մեր ազգին համար՝ ինք իր մէջ յաջողութիւն մը չեղաւ արդիւնքի տեսակէտով»[1]:

1908 թ. հայկական քաղաքական դաշտն անճանաչելիորեն աղավաղված էր: Սուլթանական Թուրքիայի ընդդիմադիր ուժե-

---

[1] ***«Արեւելեան մամուլ»,*** *№ 14, 31 մարտի 1909 թ., էջ 426:*

րի 1907 թ. դեկտեմբերի Փարիզի համաժողովում Ահմեդ Ռիզայի գլխավորած իթթիհադ կուսակցության հետ դաշինքի մեջ մտնելով, Դաշնակցությունը փաստորեն դարձել էր նրա կամքն անառարկելիորեն կատարող կազմակերպություն, դրանով իսկ իրեն դուրս դնելով ազատագրական պայքարի ոլորտից: Եվ դա այն կուսակցությունն էր, որը Թուրքահայաստանում ունեցել էր ամուր կազմակերպություններ ու զինված խմբեր, իսկ Անդրկովկասում 1905-1906 թթ. գլխավորել էր հայության պայքարը կովկասյան Թուրք-Թաթարական հրոսակախմբերի դեմ:

Հատկանշական է, որ երիտթուրքերի համաօսմանյան գաղափարախոսությունը որդեգրած Հայ հեղափոխական դաշնակցության ղեկավարությանը մտահոգում էին Թուրքական մամուլում հայտնված այն ակնարկները, թե կուսակցության անվան մեջ տեղ գտած «հեղափոխական» բառն արդյո՞ք չի հակասում վերականգնված օսմանյան սահմանադրությանը, չէ՞ որ դա կարելի է ընկալել որպես նոր իշխանությունը հեղափոխական ճանապարհով տապալելու ձգտում: Դաշնակցական մամուլն ստիպված էր պարզաբանել, թե «հեղափոխական» բառը ցույց է տալիս, որ կուսակցության պայքարն ուղղված է եղել սուլթան Աբդուլ Համիդի դեմ, բայց ներկայումս, սահմանադրական կարգերի պայմաններում իր բովանդակությունն ամբողջովին կորցրել է և կուսակցության անվան մեջ պահպանվում է միայն որպես ավանդույթ:

Հայկական քաղաքական դաշտի մյուս ուժը՝ Հնչակյան կուսակցությունը, նախկինի պես չարունակում էր բզկտվել ներքին հակասություններից:

Վճռականապես հանդես գալով Փարիզի 1907 թ. Իթթիհադ-Դաշնակցություն դաշինքի դեմ, Հնչակը, սակայն, մի պահ ջերմորեն ողջունեց նույն Իթթիհադի գլխավորած 1908 թ. օսմանյան հեղափոխությունը և սկսեց համագործակցության ուղիներ փնտրել դրա կոմիտեի ու կառավարության հետ:

Բայց այդ համագործակցությունն այնպես էլ չհաջողվեց և Հնչակն աստիճանաբար բռնեց երիտթուրքական շարժման մյուս կուսակցության՝ իշխան Սաբահէդդինի լիգայի կողմը: Նման

փոփոխական ու անկայուն մարտավարությունը 1908 թ. վերջերից պատճառ դարձավ կուսակցության շարքերից նրա անդամների նոր արտահոսքի: Կազմակերպությունը ներքաղաքական նոր ճգնաժամի ժամանակաշրջան թևակոխեց:

Ինչպես Դաշնակցությունը, այնպես էլ Հնչակը չարունակում էին իրենց սոցիալիստական համարել: Ընդ որում՝ Դաշնակցությունը գտնվում էր եվրոպական սոցիալիստական շարժման ազդեցության ներքո, իսկ հին Հնչակը, ավելի ստույգ՝ դրա նազարբեկյանական թևը հարել էր ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի բոլշևիկյան թևին:

Ի տարբերություն նշված երկու հայկական հեղափոխական կուսակցությունների, որոնց գաղափարախոսությունը հիմնված էր սոցիալիստական սկզբունքների վրա, երրորդ հայկական հեղափոխական կազմակերպությունը՝ վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը դավանում էր զուտ ազգային գաղափարներ՝ կտրականապես մերժելով թուրքահայ զանգվածների համար միանգամայն անհասկանալի սոցիալիստական որևէ սկզբունք: Հենց դա էր մայր կուսակցությունից՝ Հնչակից, թուրքահայ լուրջ ու բանիմաց մի շարք գործիչների հեռանալու հիմնական պատճառը:

Աշխատության նախորդ հատորներում հանգամանորեն ցույց ենք տվել, որ խորունկ տարաձայնությունները նրանց մղել էին կազմելու Հնչակի մի առանձին ճյուղ՝ վերակազմյալ Հնչակյան կուսակցություն (ՎՀԿ) անունով:

Վերակազմյալ Հնչակյանների հիմնական հատվածը հաստատվել էր Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Նույնանման մի հատված էլ կյանքի էր կոչվել Ամերիկայում[1]:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցության շարքերի արագ աճը առաջ էր բերել հին Հնչակի ռուսահայ ղեկավարների՝ Ավետիս Նազարբեկի, Ստեփան Սապահ-Գյուլյանի, Սագունու (Սաղաթել Գևորգյան), Արզումանի և այլոց հիվանդագին խանդը:

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 2, վավ. 3³⁷, թ. 1:*

Սրանք չէին հաշտվում այն իրողության հետ, որ Թուրքահայաստանում հին Հնչակի տեղական կազմակերպությունների մի մասն ամբողջ կազմով անցնում էր վերակազմյալների շարքերը: Եվ եթե այդպես շարունակվեր՝ իր հետ շատ վտանգավոր հետևանքներ կբերեր Հնչակյան առաջնորդների համար՝ նրանց մեկուսացնելով կուսակցության ղեկից: Այդ երկու հնարավոր վտանգներն էին, որ հին Հնչակի ղեկավարներին վրեժխնդրության մղեցին: Նրանց հրահանգով էր, որ կատարվեց ազատագրական շարժման անվեհեր մարտիկ Մխո-Շահենի (Շահեն Սեֆերյան) սպանությունը Փոթիում և նշանավոր հեղափոխական գործիչ, «Զայն հայրենեաց» թերթի խմբագիր Գարեգին Զիթչյանի սպանությունը Օդեսայում: Դրա պատասխանը շատ չուշացավ. Մխո-Շահենի և Գարեգինի գաղափարակիցները, դիմելով վրեժի, մահափորձ կատարեցին Նազարբեկի, Սապահ-Գյուլյանի, Տ. Թիրյաքյանի վրա և սպառնացին Սագունուն, Ա. Գրիգորյանին, Ս. Սմմիկյանին[1]:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը նույնպես վիճակված էր անցնել ներքին անհամաձայնությունների փորձությունների քավարանով: 1906 թ. ներկուսակցական պայքարի զոհ գնացին Աբիկ Ունճյանը և Վ. Թավչանջյանը: Դա պատճառ դարձավ վերակազմյալների բաժանմանը երկու թշնամի հատվածների[2]:

Նոր (վերակազմյալ) Հնչակը դեմ էր ՍԴ Հնչակյան կուսակցության ահաբեկչական գործողություններին և դա ամրագրված էր նրա ծրագիր-կանոնագրքի մեջ: Բայց ՎՀԿ երկու հատվածներից մեկի ղեկավար Ալեքսան Արզույանն (Վահե) իր սակավաթիվ համախոհներով (Երվանդ Զավուշյան, Սուրեն Սուրենյան (Ղազարոս Կտլոզյան), Հրաչ Երվանդ (Նշան Յաղուբյան), Լևոն Լարենց (Քիրիչչյան), դոկտ. Արշակ Տեր-Մարկոսյան և այլոք) վերականգնել էին նախկին Հնչակի ահաբեկ-

---

[1] Տե՛ս **Կարո Սարաֆեան**, Ակնարկ մը Արմենական կուսակցութեան պատմութեան վրայ, Պէյրութ, 1960, էջ 20:

[2] Տե՛ս նույն տեղում:

չություն կատարելու ավանդույթը և իր խմբակցությունը տանում էր ծայրահեղ հեղափոխական ուղիով:

ՎՀԿ** արզույանական հատվածը մի քանի սպանություններ կատարեց նաև 1907-ին, այդ թվում՝ Ամերիկայում, որոնց գլխավոր մեղավորը անձնապես համարում էին Ալեքսան Արզույանին: Միաժամանակ **ՎՀԿ** երկու հատվածների փոխադարձ հարձակումները սուր կերպարանք էին առել նրանց մամուլի պաշտոնական օրգաններում՝ 1907 թ. ապրիլից Բոստոնում (ԱՄՆ) Սուրեն Պարթևյանի խմբագրությամբ հրատարակվող «Ազգ» թերթում և արզույանական «Ձայն հայրենեաց»-ում»: «Ազգի» և Արզույանի անուններով՝ **ՎՀԿ**-ի երկու հակոտնյա մասերը կոչվեցին **չափավոր՝ «Ազգյան»** և **Արմատական (Արզույանական) հատվածներ:*

Եղբայրասպանություններն անտանելի մթնոլորտ էին ստեղծել վերակազմյալների շարքերում: Բացի այդ, կուսակցության մեջ առաջացել էին խոր հակասություններ տեսական հարցերի շուրջ: Քանի որ ղեկավարներից ոմանք դեռ չէին ձերբազատվել սոցիալիստական գաղափարներից, ուստի սուր վիճաբանություններ էին ծագել հատկապես այն հարցի շուրջ, թե կուսակցության համար ինչպիսի՞ կարևորություն ունի տեսությունը: Սոցիալիստական հակումներ ունեցողները գտնում էին, որ կուսակցությունը կարիք ունի գործողությունների տեսական լուրջ հիմնավորման, քանի որ տեսությունը ոչ պակաս կարևոր է գործնականից: Այդ պնդման դեմ վճռականորեն հակառակվել էր Միհրան Տամատյանը, որը ժամանակին հնչակյան կուսակցության թուրքահայ հատվածի, իսկ հետո վերակազմյալ հնչակյան կուսակցության նշանավոր ղեկավարներից էր: Նա գտնում էր, որ անվերապահորեն՝ առաջնայինը կենդանի գործն է, այլ ոչ թե տեսական ճամարտակությունը: Նա ասում էր, որ կուսակցու-

---

* *Նշենք, որ Մեծ եղեռնից հետո **ՎՀԿ** արզույանական հատվածը հրաժարվեց ահաբեկչական գործողություններ կատարելուց և ռամկավարական սկզբունքներ որդեգրեց: 1919 թ. սկսած **ՎՀԿ** այդ հատվածը վերածվեց կուսակցության՝ որդեգրելով Ազատական կուսակցություն անունը: 1921 թ. նա կազմեց ձևավորվող Ռամկավար ազատական կուսակցության երեք բաղկացուցիչներից մեկը:*

թյունը «հեռաւոր ապագային վերաբերմամբ որոշ աշխարհայեացք մը պարզելու պէտք չի զգար: Արդարեւ, մենք իտէոլոկներ չենք, այլ՝ ճնշուած, մարդկային ամենատարրական իրաւունքներէ զրկուած եւ բնաջնջման դատապարտուած ժողովուրդի մը ազատագրութեանը հետամուտ յեղափոխականներ եւ այս ինքնին բաւական մեծ, բաւական բարձր իտեալ մըն է: ... Աւելի ամուր է այն խմբակցութիւնը որ հիմնուած է ո՛չ թէ փիլիսոփայական սկզբունքներու համանմանութեան վրայ, այլ՝ համազգային շահերու միութեան եւ գործելակերպի նոյնութեան վրայ»[1]:

Ալեքսանդրիայում ունեցած իր մի բանախոսության ժամանակ Միհրան Տամատյանը նշում էր, որ հայ քաղաքական ոլորտում հակոտնյա բաժանումները հետևանք են ոչ միայն անձնական նկրտումների, այլև աշխարհայացքների և դավանած սկզբունքների տարբերության: Բայց այժմ որքա՞ն նպատակահարմար է աշխարհայացքների տարբերությունների պատճառով Թուրքահայաստանում ունենալ միմյանց դեմ մարտնչող ազգային քաղաքական կազմակերպություններ, հարց էր տալիս նա և պատասխանում. դա անընդունելի է մի ազգի համար, որը կենաց ու մահու պայքարի մեջ է հանուն ֆիզիկական գոյության պահպանման: Բանախոսն ասում էր. «Մեր ազգը քաղաքականապէս ազատ չէ, որպէսզի ներելի եւ հասկնալի ըլլար իր մէջ զանազան դաւանանքէ յեղափոխական կուսակցութիւններու գոյութիւնը: Հայ ազգը, Թուրքահայաստանի մէջ, կը մղէ իր գոյութեան կռիւը, հայութեան գոյութիւնը վտանգի մէջ է, ամենաակներեւ վտանգի մէջ, եւ ա՛յս՝ առանց դասակարգի խտրութեան: Ընդհանուր վտանգին դէմ ընդհանուր միութիւն հարկաւոր է. ալ ի՞նչ նշանակութիւն ունի թէ մենէ ոմանք սոցիալիստ են եւ ոմանք ազգայնական կամ թէ իրարմէ տարբեր դասակարգային շահեր ունինք: Նախ միանանք, ձեռք-ձեռքի տանք ու գերագոյն ճիգով մը ազատուինք մեր ամէնուս գոյութեան սպառնացող անմիջական վտանգէն, թուրք կառավարութեան դժոխքմբեր լուծէն, եւ յետոյ, ամէն մէկս կրնանք, եւ միայն այն

[1] **«Ազգ»,** № 41, 25 Հունվարի 1908 թ.:

ատեն իրաւունք կ՚ունենանք, մեր առանձին-առանձին աշխարհահայեացքները դաւանելու եւ տարածելու: Հրդեհի ժամանակ մարդ չի վիճաբանիր, այլ կը ջանայ նախ կրակը նուաճել: Ընդհանուր վտանգին առջեւ, աշխարհահայեացքներու տարբերութեան վրայ հիմնուելով, առանձին կուսակցութիւն կազմելը եւ առանձին-առանձին գործելը խոհեմութիւն չէ՛: Մեր թշնամին չի տրամաբաներ ու չի վիճաբանիր, այլ կը զարնէ. մենք ալ պէտք չէ վիճաբանինք, այլ պէտք է գործենք: Բոլոր յեղափոխականները նուազագոյն պահանջի մը, մօտաւոր նպատակի մը շուրջ համերաշխելու են, առանց նկատողութեան առնելու անոնցմէ իւրաքանչիւրին ընդհանուր աշխարհահայեացքը կամ հեռաւոր նպատակը»[1]:

Թուրքական բռնակալութեան դեմ պայքարի մարտավարական հարցերի շուրջ Տամատյանն ուրիշ լուրջ տարաձայնութիւններ ևս ուներ: Այդ ամենը նրան ստիպեցին հեռանալ վերակազմյալ հնչակյան կուսակցությունից:

Վերակազմյալներից անջատվելուց հետո Մ. Տամատյանն առաջ քաշեց նոր, թարմ գաղափարներ, որոնցից մեկն այն էր, որ հայկական ազատագրական շարժումը մեծապես տուժում է հայկական կուսակցությունների առատությունից և որ Թուրքահայաստանում պետք է գործեն միայն երկու կուսակցություններ, մեկը՝ պահպանողական կամ հակահեղափոխական, մյուսը՝ հեղափոխական:

Շատ չանցած, ՎՀԿ-ից զանգվածային արտահոսք սկսվեց: Կուսակցության շարքերը թողնում էին հատկապես արմատապես ազգայնորեն տրամադրված անդամները: Հեռացածների թվում էին Վահան Թեքեյանը, Սուրեն Պարթևյանը, Լևոն Մկրտիչյանը, Սարգիս Մալյեմեզյանը և ուրիշներ:

Վերակազմյալ հնչակյան կուսակցության շարքերից դուրս եկածների մի պատկառելի մասը առաջվա պես Եգիպտոսում էր, հատկապես Ալեքսանդրիայում:

Այդ նույն ժամանակ Եգիպտոսում եղած հին հնչակյանները

---

[1] **«Ազգ»**, *№ 41, 25 Հունվարի 1908 թ.:*

սկսել էին գնալով ուժգնացող պահանջներ հնչեցնել, այն է՝ վերականգնել հնչակյան կուսակցության միասնականությունը, որից հետո ձեռնարկել հայկական հեղափոխական բոլոր կազմակերպությունների միջև համերաշխության և միասնության (միության) ստեղծմանը: Այդ իդեալը, որ չարունակ ոգևորել էր արտասահմանի հայ հեղափոխականներին, այժմ հետապնդող գաղափար էր դառնում:

1907 թ. ամռան սկզբներին արդեն հոծ հայություն ունեցող Բուլղարիայում տեղի է ունենում մի կարևոր եղելություն: Այնտեղ գործող հին և նոր (վերակազմյալ) հնչակյան կազմակերպությունների մի խումբ հայրենասեր երիտասարդներ, դժգոհ իրենց կուսակցություններում պարբերաբար կատարվող պառակտումներից, համաձայնության էին եկել կազմելու մի նոր քաղաքական միավոր, որն ստացել էր Հեղափոխական միություն անվանումը[1]: Կազմակերպման նախաձեռնողը եղել էր հին Հնչակի նշանավոր գործիչներից Հարություն Ջանգյուլյանը[2]:

Տեղեկանալով Հեղափոխական միության ստեղծման մասին, Թավրիզի արմենականների ներկայացուցիչ Գրիգոր Բեոզիկյանը (Ներսես, Պարգև, Շիկահեր) մեկնում է Բուլղարիա և 1907 թ. օգոստոսին հանդիպելով նրա ներկայացուցիչներին, բանակցություններ է վարում այդ կազմակերպության և արմենական գործիչների միավորման հարցի չուրջ: Բանակցություններն ավարտվում են հաջողությամբ և նորաստեղծ կազմակերպությունն ստանում է **«Գաղափարակցական միություն»** անունը[3]:

Գաղափարակցական միության ստեղծումը չղթայական գործընթաց առաջ բերեց թուրքահայ քաղաքական դաշտում:

1907 թ. կեսերից իր գործունեությունը դադարեցրած Արմե-

---

[1] Տե՛ս **Արտակ Դարբինեան,** Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890-էն 1940), Փարիզ, 1947, էջ 184:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[2], թղթ. 2, վավ. 3[31], թ. 2:

[3] Տե՛ս **Տեղակալ Մ. Աւետեան**, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ յուշամատեան (1870-1920) եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 59:

նական կուսակցության մի շարք գործիչներ հիմնավորվել էին Կահիրեում և համախմբվել «Միություն» կազմակերպության մեջ:

Միաժամանակ, Ալեքսանդրիա քաղաքում էր հիմնավորվել վերակազմյալ հնչակյանների «Ազգ» թերթի գաղափարական ուղղությանը հետևող և Եգիպտոսում բնակվող վերակազմյալների ղեկավար Միհրան Տամատյանը:

Դա այն պահն էր, երբ Թուրքահայոց անագորույն վիճակը թելադրում էր գործուն միջոցներ ձեռնարկել: Տամատյանն ասում էր. «Մենք քանիցս առիթ ենք ունեցել հրապարակապէս մատնանիշելու, թէ տաճկահայ յեղափոխական գործը ինչ մեծ վնասներ է կրել – եւ դեռ շարունակում է կրել – կուսակցական անհամերաշխութեանց երեսից: Մենք չեչտել ենք թէ ինչպէս կուսակցական ծայրայեղ հակամարտութիւնները եւ իրարու տրամագծօրէն չէզոքացնող գործելակերպը յաճախ անդարմանելի վտանգների դուռ են բաց արել եւ մեծապէս խոչընդոտ հանդիսացել Յեղափոխական Գործի յառաջխաղացմանը:

Ու ստեղծուած չարիքին արմատական բուժումն բերելու համար՝ մենք ձգտած ենք Տաճկա-Հայաստանում գործող կուսակցութիւնների համերաշխութեան իրականացմանը: Այդ համերաշխութիւնը մենք կատարեալ անհրաժեշտութիւն ենք համարած եւ համարում ենք, ուստի մեզանից կախումն ունեցող ամէն հնարաւոր միջոցներ գործ ենք դրած, որպէսզի այդ ցանկալի համերաշխութիւնը իրականութիւն ստանայ՝ որքան կարելի է լայն չափերի մէջ»[1]:

Կահիրեում գործող արմենական և Ալեքսանդրիայում գործող վերակազմյալ գործիչներն այդ ընդհանուր նպատակադրումով ընդառաջ գնացին միմյանց: Տեղի ունեցան ազատագրական պայքարի հարցերին նվիրված մի շարք համատեղ քննարկումներ: Երկու կողմերն առանց դժվարության ընդհանուր լեզու էին գտնում, քանի որ երկուսն էլ Երկրի ծնունդ էին և որևէ կարևոր տարբերություն չկար նրանց հայացքների միջև[2]:

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 2, վավ. 3³⁷, թ. 1:*

[2] *Նույն տեղում:*

Սկսված այդ գործընթացը շատ շուտով իր շարունակությունն է ունենում: Եգիպտոս եկած հին Հնչակի կենտրոնի անդամ Մուրադը հանդիպում է ունենում Մ. Տամատյանի հետ:

Աշխատության նախորդ էջերում խոսք է եղել այն մասին, որ Մուրադը 1906 թ. լիբիական Տրիպոլիսի զնդանից ազատվելուց հետո կանգնել էր համերաշխություն կամ միություն ստեղծելու շարժման գլուխ և կոչով դիմել էր բոլոր հայկական ազգային կազմակերպություններին՝ ուժերը համատեղելու համար մի համաժողով գումարել: Այդ առաջարկությունը Դաշնակցությունն անմիջապես մերժել էր բավական արհամարհական ոճով: Դրանից հետո թվում էր, թե որևէ միություն կազմելու հույսը վերջնականապես թաղված է:

Եվ ահա Մուրադը և Տամատյանն սկսել էին խորհրդակցել միասնության շուրջ: Մի քանի օր տևած զրույցների արդյունքն այն է լինում, որ հին Հնչակի և «Ազգ»-յան վերակազմյալների միջև կնքվում է համերաշխության դաշինք, որը նրանց, ի վերջո, պիտի տաներ միավորման:

«Իրաւունք» թերթը 1907 թ. № 78-ում «Համերաշխութիւն» վերնագրի տակ գրում էր. «Ուրախութիւն ունինք մեր ընթերցողներուն հաղորդելու թէ՝ հին եւ Վերակազմեալ Հնչակեան հատուածներուն միջեւ համերաշխութեան պայմանները ճշդուած ու կնքուած են, լիազօրութեամբ Մուրատի եւ Տամատեանի, երկու վաղեմի անձնուէր ընկերներու: Յոյս մեծ ունինք թէ՝ Արմենական-Միութենական կազմակերպութիւնը ևս ի մօտոյ պիտի երթայ միաբանելու Հնչակեանութեան, որով դէպի վերջնական միութեան գլխաւոր պողոտան հարթուած կ'ըլլայ, եւ միայն Դաշնակցութիւնը առայժմ տարամերժօրէն դուրս կը մնայ այս եղբայրակցութենէն...»:

Համաձայնագիրը կնքելուց հետո երկու կազմակերպությունների ներկայացուցիչները որոշեցին դա հռչակել հասարակայնության ներկայությամբ:

1907 թ. նոյեմբերի 10-ին Կահիրեի հայոց լսարան-ընթերցարանը լցվել էր հայ քաղաքական ուժերի միասնությունը տենչացող ժողովրդով: Հավաքը ղեկավարում էր Հնչակյանների Կահիրեի ներկայացուցիչ Շավարշ Շիչմանյանը: Նա խոսքը տվեց

Մուրադին, որին ներկաները ողջունեցին որոտընդոստ ծափերով: Վերջիններիս թվում քիչ չէին նրանք, որոնք մտավախություն ունեին, թե ելույթ ունեցողը պաշտպանելու է իր կուսակցության դասակարգային խտրականության քաղաքականությունը: Բայց երբ Մուրադն սկսեց իր ելույթը, ներկաներն իրենց գոհունակությունն արտահայտեցին ցնծության ծափերով:

Թիֆլիսի «Երկրի ձայնը»-ն արտատպել էր Կահիրեի «Լուսաբեր» թերթի՝ հավաքին նվիրված հոդվածը, ուր նշված էր. «Ատենաբանը խօսեցաւ համեստօրէն. անհուն ժողովրդականութիւնը զինքը զգլխած չէր: Հայաստանի վիճակը պարզեց համառօտակի: Ցոյց տուաւ թէ հայ բանուորը, հայ վաճառականը, հայ երկրագործը հաւասարապէս կը տառապին, կը հարստահարուին, կը կեղեքուին: Հետեւաբար հայութիւնը ամբողջովին պէտք է համերաշխի եւ գործէ միաբանութեամբ»[1]:

Այնուհետև ելույթ է ունենում Միհրան Տամատյանը, որն անդրադառնում է Հայաստանի և հայ ազգի դժբախտ կացությանը: Նա նույնպես հայրենիքի փրկության միջոցը համարում էր հայկական քաղաքական ու հասարակական բոլոր ուժերի համերաշխ գործակցությունը, միաժամանակ կասկած էր հայտնում, թե Դաշնակցությունը բարյացակամ մոտեցում կցուցաբերի համերաշխ գործակցության գաղափարի նկատմամբ:

Ջնայած դրան,- գրում էր «Լուսաբերը»,- «համերաշխ միաբանութեան գաղափարը արդէն իրականանալ սկսած էր: Ահա՛ Արմենականները, որոնք Միութենականներուն հետ մէկ մարմնի պէս եղած, «Գաղափարակցական Միութիւն»-ը կազմած էին, որ իր կողմէն բանակցութեան մէջ էր Վերակազմեալ Հնչակեանութեան հետ: Ու Հնչակեան երկու հատուածներուն ներկայացուցիչները՝ Մուրատ եւ Տամատ, երբ ձեռք-ձեռքի տուած ժողովրդին առջեւը կը ներկայանային, միթէ Միութեան մօտալուտ յաղթանակը չէի՞ն հոչակեր»[2]:

Իր հերթին, «Երկրի ձայնը» թերթը «Լուսաբերին» ձայնակ-

---

[1] ***«Երկրի ձայնը»,*** *№ 30, 23 դեկտեմբերի 1907 թ.:*

[2] *Նույն տեղում:*

ցելով, խոր համոզմունք էր հայտնում, թե «... Ոչ միայն Տաճկահայ խնդիրը չի մեռել եւ մեռնելու որ եւ է նշան ցոյց չի տուել, այլ նա պահել է իր կենսունակութիւնը եւ երթալով՝ հետզհետէ աւելի ու աւելի յաջող կերպով պիտի մօտենայ իր լուծմանը: Ուստի – մեր եզրակացութիւնն էր – ո՛չ թէ պէտք էր ձեռնթափ լինել այդ Խնդրից, այլ պէտք էր աւելի եռանդուն կերպով Գործի կպչիլ, եւ գործել, ու միշտ գործել»[1]: Ապա՝ «Եթէ մինչեւ ցարդ մեր ջանքերը բոլորովին չը պսակուեցան, դա դեռ ցոյց չի տալիս թէ մենք սխալ ուղղութեամբ ենք քայլել եւ կամ թէ այդ մտքի իրագործումից ձեռք պիտի վեր առնել: – Ո՛չ: Մենք այդ ուղղութեամբ պիտի ընթանանք, ի՞նչ խոչընդոտների էլ որ պատահելու լինենք, որովհետեւ այդ ուղին է, որով կարող պիտի լինենք մեր բոլոր մարտական ուժերը ի մի համախմբել եւ տուած բոպէին Թուրք Բռնապետութեան դէմ քայլեցնել»[2]:

Ոգեշնչված վերակազմյալ հնչակյանների և արմենականների, ինչպես նաև հնչակյան երկու թևերի միջև սկսված միավորման լուրջ գործընթացներով, Բուլղարիայում գտնվող Գրիգոր Բեռզիկյանը 1907 թ. դեկտեմբերին մեկնում է Եգիպտոս՝ իբրև Գաղափարակցական միության լիազոր ներկայացուցիչ: Ալեքսանդրիա հասնելուն պես նա հանդիպում է Միհրան Տամատյանին:

Նոր հնչակի և հին արմենականության այդ երկու ներկայացուցիչների միջև Ալեքսանդրիայում տեղի ունեցած հանդիպումների արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց միավորել արմենականներին և «Ազգ» թերթի գաղափարներին հետևող վերակազմյալ հնչակյաններին: Նրանց պայմանավորվածության համաձայն, երկու կողմերի ուժերը միավորելու համար սկսվեցին պաշտոնական բանակցություններ, որոնց վերակազմյալ հնչակյաններից մասնակցում էր Փոքր Հայքի ներկայացուցիչ Գարեգին Մելոյանը (Ժիրայր-Վաչե, Վահե), Գաղափարակցական միության կողմից լիազորված Գրիգոր Բեռզիկյանը՝ իր երկու

---

[1] **«Երկրի ձայնը»,** № 30, 23 դեկտեմբերի 1907 թ.:

[2] Նույն տեղում:

խորհրդականներով (Միքայել Նաթանյան և Հարություն Բեյլերյան): Առանձին պատվիրակությամբ, որի կազմում էին դոկտ. Տիգրան Էնֆիեջյանը, Միհրան Տամատյանը, Կարապետ Գրիգորյանը և Շավարշ Հովիվյանը, ներկայացված էր վերակազմյալ Հնչակյան կուսակցության կենտրոնական հանձնախումբը[1]:

Նախօրյակին ստացվել էր վերակազմյալ Հնչակյանների Ամերիկայի նահանգային վարչության 1908 թ. հունվարի 1-ով թվագրված պաշտոնագիրը, որով Միհրան Տամատյանին լիազորում էր բանակցությունները վարել նաև իր անունից: Պաշտոնագրի տակ դրված էր նաև կուսակցության Կիլիկիայի շրջանակի ներկայացուցիչ Դավիթ Մելքոնյանի ստորագրությունը[2], որը նշանակում էր, թե Մ. Տամատյանը բանակցություններում ներկայացնելու է նաև Կիլիկիայի վերակազմյալներին:

Բանակցությունների ընթացքում մշակվեց ապագա կազմակերպության ծրագիրը, որի հիմնական դրույթներն էին.

1) *Հեղափոխական գործունեություն ծավալել Թուրքահայաստանում (Կարինի, Վանի, Բաղեշի, Խարբերդի, Տիգրանակերտի ու Սեբաստիայի վիլայեթներ) և Կիլիկիայում (Ադանայի վիլայեթ և Հալեպի վիլայեթի հայաբնակ մասեր):*
2) *Հայ հեղափոխական գործն առաջ մղելու համար համախմբել Թուրքահայության ազատագրության նպատակով ստեղծված բոլոր կուսակցությունների և հոսանքների ուժերը՝ կուսակցական ամեն տեսակ նկրտումներից ու հաշիվներից վեր դասելով հայության և հայրենիքի շահերը:*
3) *Զգուշանալ վաղաժամ ցույցերից և մասնավոր շարժումներից, միաժամանակ, տևական և համառ աշխատանքով հայ ժողովրդին պատրաստել ինքնապաշտպանության՝ հարկ եղած պահին դիմելով ընդհանուր ապստամբության:*

---

[1] *Տե՛ս* ***Արտակ Դարբինեան,*** *Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 187:*

[2] *Տե՛ս* ***Աւետիս Եափուճեան,*** *Համառօտ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977, էջ 32:*

4) *Ինքնապաշտպանության և ապստամբության գործը գլուխ բերելու հիմնական պայման համարել հայության բոլոր կենսունակ տարրերի համախմբումը, ելնելով այն իրողությունից, որ Թուրքահայաստանում ողջ հայ ժողովուրդը ճնշվում ու տառապում է օսմանյան բռնակալական ռեժիմի ներքո, ուստի այնտեղ գոյություն չունեն դասակարգային հակամարտ շահեր, դասային խտրականություն, որը և նպաստում է բոլոր հայերի միջև համերաշխության հաստատմանը:*

5) *Ապստամբության հաջող ելքի դեպքում Թուրքահայաստանն ազատել օսմանյան բռնակալությունից, այնտեղ հիմնել սահմանադրական կարգեր, որոնց լայն հիմքերի վրա կազմել անկախ կառավարություն:*

6) *Հանրապետական կարգեր ունեցող հայկական նոր պետության մեջ լիովին պահպանել ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները, ապահովել նրանց մշակույթների ազատ ու խաղաղ զարգացումը, մշտապես քարոզել բոլոր ցեղերի համերաշխության գաղափարը:*

7) *Մինչև այդ նպատակներին հասնելը՝ ջանք գործադրել Թուրքահայաստանում ձեռք բերելու բարենորոգումներ՝ հենվելով եվրոպական պետությունների կողմից հաստատված միջազգային դաշնագրերի վրա[1]:*

*Երկարատև բանակցությունների արդյունքում 1908 թ. սեպտեմբերի 15-ին համաձայնագիր ստորագրվեց: Կյանքի կոչվեց մի նոր կազմակերպություն, որը մկրտվեց **Միացյալ*** հայ հեղա-*

---

[1] *Տե՛ս **Արտակ Դարբինեան,** Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 187:*

* *Ինչպես տեսնում ենք, և՛ նախորդ երկու կազմակերպությունների և՛ այս նոր կազմակերպության անվանումներում անհրաժեշտաբար օգտագործված են «միություն» կամ «միացյալ» բառերը: Դա պատահական չէր, քանզի երեք կազմակերպություններն առանձին-առանձին ոչ միայն երկու կազմակերպությունների միավորման արդյունք էին, այլև, ինչպես ցույց են տալիս նրանց ընդունած պաշտոնական փաստաթղթերը, նախատեսվում էր, որ ժամանակի ընթացքում իրենց են միանալու հայկական քաղաքական դաշտի ուրիշ միավորներ:*

փոխական կազմակերպություն (ՄՀՀԿ) անունով[1]*:*

Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությանը վիճակված չէր երկար գոյություն ունենալու: Վերջնական կազմակերպական տեսք ընդունելով երիտթուրքական 1908 թ. հուլիսյան հեղափոխությունից հետո, նա ստիպված էր իր գործունեությունը հարմարեցնել փոփոխվող նոր պայմաններին: Երիտթուրքերի հռչակած «ազատություն, եղբայրություն, հավասարություն» խոստումները խանդավառել էին նաև կազմակերպության նշանավոր մտավորական ղեկավարներին և անդամներին, որոնց մի պահ թվացել էր, թե սուլթանների ստեղծած բռնապետական չղթան ընդմիշտ փշրվել է: Հրաժարվելով հայկական անկախ պետություն ստեղծելու գաղափարից, Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը ազդարարեց, թե հետայսու հայ հասարակական կյանքում բռնելու է նոր ուղղություն, Թուրքիայում պաշտոնապես գործելու է բաց և ազատորեն՝ եռանդուն կերպով հետապնդելով Թուրքահայության իրավունքներն ու շահերը: Կարճ ժամանակում մշակվեց կազմակերպության նոր ծրագիրը՝ հարմարեցված Թուրքիայի նոր իրականությանը:

Դրանից որոշ ժամանակ անց, 1908 թ. նոյեմբերին, Եգիպտոսի հայ համայնքի նշանավոր դեմքերից մեկի՝ փաստաբան և բանաստեղծ Վահան Մալեզյանի նախաձեռնությամբ Կահիրեում հրավիրվեց մի խորհրդակցություն, որին մասնակցություն բերեցին տարբեր քաղաքական ուղղության մի շարք ազգայիններ: Խորհրդակցության նպատակն էր քննարկել նոր ստեղծվելիք «Յառաջադիմասէր եւ ազատական հայոց միութեան» համար նախապատրաստված ծրագիրը, բայց հանդիպումն իրականում դուրս եկավ նախատեսված խնդրի շրջանակներից:

Խորհրդակցության ընթացքում ծագեց մի չնախատեսված հարց. օսմանյան հեղափոխության հաղթանակի և դրա վերականգնած սահմանադրության պայմաններում արդյո՞ք նպատակահարմար չէ ունենալ մի այնպիսի օրինական կազմակեր-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85*[2]*, թղթ. 2, վավ. 3*[31]*, թ. 2:*

պություն, որն օրենքի հողի վրա գործեր, բայց հստակ ու անխառն ազգային ուղղություն ունենար:

Ծավալվեցին բուռն վիճաբանություններ, հնչեցին թեր ու դեմ տեսակետներ: Խորհրդակցությանը մասնակից դաշնակցական հրավիրյալները նկատեցին, թե ՀՅ դաշնակցությունը և հնչակյանները միացած են օսմանյան երկու թուրքական կոմիտեների (Դաշնակցությունը՝ Իթթիհադի, Հնչակը՝ Ապակենտրոնացման լիգայի) հետ, ուստի հետայսու գործելու են նույն ուղղությամբ, ինչ ուղղությամբ կգործեն այդ կոմիտեները: Այս պայմաններում, նշում էին նրանք, առանձին ազգային քաղաքական կազմակերպություն ստեղծելն արմատապես կհակասի երկրում ընդհանուր և բաղձալի համերաշխության հաստատման գաղափարին: Նրանց կարծիքով՝ դաշնակցական, հնչակյան և թուրքական կոմիտեների միությունն այլևս կատարված իրողություն լինելով, ի վիճակի կլինի լիուլի պաշտպանելու օսմանյան բոլոր հպատակների իրավունքներն ու պահանջները:

Եգիպտահայ կարևոր դեմքերից և տեղի դաշնակցական կազմակերպության ղեկավարներից մեկը՝ Հ. Ասատուրյանը, խնդիրն ավելի որոշակիացնելով, ասում էր.

«Մենք յետ այսու օսմանցիներ ենք եւ մեզ չի հետաքրքրեր այլեւս այս կամ այն համայնքի մը խնդիրը: Եթէ պատահի, որ մենք համակարծիք գտնուինք որեւէ գործի մը մէջ որեւէ Մուհամեդի մը, Ալիի մը հետ, մենք անոնց հետ պիտի մնանք եւ աշխատինք, եթէ մինչեւ իսկ պէտք ըլլայ հայու դէմ մաքառելու համար...»[1]:

Խորհրդակցությունում հանդես եկած ոչ դաշնակցական գործիչներից շատերն Ասատուրյանի արտահայտած տեսակետն արտառոց համարելով, նշում էին, որ դրա ակունքը եվրոպական սոցիալիզմն է, որին հետևում են դաշնակցականներն ու հնչակյանները՝ փորձելով այդ սոցիալիզմը փոխառնել և բռնազբոսիկ ու անբնական եղանակով մտցնել Եվրոպայից միանգամայն տարբեր օսմանյան իրականության մեջ:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 273, 11 դեկտեմբերի 1908 թ.:*

Զարմանալին այն է, ասում էին նրանք, որ երիտթուրքական վերը նշված երկու կազմակերպություններն ու հայկական նշված երկու կուսակցությունները հակոտնյա են իրենց ծրագրերով, ըմբռնումներով և ավանդույթներով: Թուրքական կուսակցությունների անդամները բացարձակ ազգայնամոլներ են, մինչև իսկ համիսլամականներ, այսինքն՝ ամբողջովին հակառակ են սոցիալիզմին, որի մասին ո՛չ գաղափար ունեն և ո՛չ էլ երբևիցե ցանկություն կունենան դա տեսնել Օսմանյան կայսրության մեջ, իսկ դրանց դիմաց երկու հայկական կուսակցությունները ներկայանում են իբրև սոցիալիստներ, իսկ նրանցից մեկը՝ Հնչակը, նույնիսկ սկսել է ազգայնամոլական գաղափար համարել ազգային հայրենասիրությունը: Խորհրդակցության այն մասնակիցները, որոնք չէին բաժանում այդ տեսակետները, ասում էին. Թո՛ղ Դաշնակցությունը և Հնչակը հազար ճառ հնչեցնեն Թուրքական կուսակցությունների հետ համերաշխության մասին և հազար կոչեր անեն նրանց հետ միության մասին, բայց չեն կարող ցանկալի արդյունք տալ: Նույնիսկ բարձր քաղաքակրթություն ունեցող բազմազգ պետություններում գոյություն ունեցող հակառակություններն ու պայքարները երկար տասնամյակների ընթացքում չեն լուծվում, ինչ մնաց, թե հետամնաց Օսմանյան կայսրության մեջ եղած հակառակությունները մի հարվածով լուծում գտնեն ու տեղի տան համաշխարհային տնտեսական սկզբունքներին: Օսմանյան հասարակության գոյավիճակը բնորոշող ծայր աստիճան բարդ խնդիրների լուծումը դուրս է այս կամ այն քաղաքական խմբակցության կամ խմբակցությունների միության ցանկությունների ու հնարավորությունների սահմաններից: Ելույթ ունեցողները զայրույթով հատկապես դատապարտում էին երիտթուրքերի ծայրահեղ կենտրոնացման ծրագիրը, որի կատարմանն ըստ էության լծվել էր նաև Դաշնակցությունը՝ հաշտվելով Իթթիհադի՝ այլազգիների ինքնավարության գաղափարը ոչնչացնելու փորձերի հետ:

Եթե միդհատյան սահմանադրության հիման վրա Թուրքիան ազատական պետություն դառնար, ինչպես տարփողում էին երիտթուրքերը և ինչպես միամտորեն հավատում էին հայ ազգային հեղափոխականները, ապա բնական է, որ այնտեղ գոր-

ծող բոլոր հեղափոխական քաղաքական կազմակերպություն-ներն օրինական քաղաքական կուսակցությունների պետք է վերածվեին աստիճանաբար: Հնչակյան և դաշնակցական հեղա-փոխական կուսակցությունները, որոնք իրենց ծրագրերում ու-նեին սոցիալիստական սկզբունքներ, սահմանադրական Թուր-քիայում հավանաբար ստիպված պիտի լինեին իրար ձուլվելու: Առայժմ նրանց բաժանողը միայն կուսակցական անցյալն էր: Բայց նրանց միավորումը, միևնույնն է, տեղի էր ունենալու: Այդ դեպքում, Թուրքահայ քաղաքական դաշտի աջ թևը պետք է լրացվեր մի ոչ-հեղափոխական, դեմոկրատական պատկառելի քաղաքական ուժով: Իսկ եթե կայսրության մեջ հնարավոր լիներ կառուցել բոլոր ազգերի համերաշխ, եղբայրական միու-թյուն, եթե երկրում ստեղծվեր իսկական խորհրդարանական կյանք, այսինքն՝ պետության կարևորագույն գործերը վճռեին ժողովրդի ներկայացուցիչները, ապա ազգային կուսակցու-թյունների գոյության անհրաժեշտություն չէր լինի հեռանկա-րում, օսմանյան քաղաքացիները դուրս գալով ազգային շրջա-նակներից, իրենց աշխարհայացքային կողմնորոշումների համե-մատ կբաժանվեին ըստ համաօսմանյան քաղաքական կազմա-կերպությունների:

Բայց այդ հեռանկարը իթթիհադական Թուրքիայում մշուշ-պատ էր: Բոլոր նշաններն արդեն ցույց էին տալիս, որ երաշխիք-ներ չկան, թե երկիրը կարող է գնալ ժողովրդավարության ուղիով և կայսրության բոլոր քաղաքացիներն առանց ազգային խտրականության օգտվելու են նույն իրավունքներից ու կատա-րելու են նույն պարտականությունները: Այդ հոռետեսության օգտին էին խոսում կայսրության այլազգիների նկատմամբ Թուրքերի կողմից դարեր շարունակ իրականացրած բռնություն-ներն ու կոտորածները, նրանց ավանդական պահպանողական-նությունը, որը հեղափոխությունից հետո էլ ցույց չէր տալիս փոքր ինչ փոխվելու տրամադրություն: Իսկ դա նշանակում էր, որ Թուրքիայում այլազգիների քաղաքական կազմակերպու-թյունները չարունակելու են իրենց գործունեությունը:

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ՀՍՌԿ) ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Օսմանյան սահմանադրության հռչակումից ի վեր կայսրության զանազան ազգությունների մեջ սկսել էին ստեղծվել օրինական (լեգալ) քաղաքական կուսակցություններ՝ իրենց ծրագրերով և ուրույն նպատակներով: Այդ գործընթացից չէր կարող դուրս մնալ սահմանադրական ռեժիմի անխախտ պահպանմամբ չահագրգռված, քաղաքականապես աչխույժ Թուրքահայությունը:

Հեղափոխության հաղթանակից հետո Արմենական կուսակցությունը, փաստորեն, այլևս գոյություն չուներ, իսկ մյուս երեք հեղափոխական կուսակցությունները օրինական կազմակերպություններ էին դարձել:

Ծայրահեղական Իթթիհադի հետ Դաչնակցության սերտ գործակցությունը, հին Հնչակի մերձեցումը երիտԹուրքական մյուս Թևում գտնվող Ապակենտրոնացման լիգային, նախկինում խորապես ազգային հեղափոխական վերակազմյալ հնչակյանների չեզոք պահվածքը նոր իշխանությունների հանդեպ և նրանց աջակցելու պատրաստակամությունը առաջ էին բերել պահանջ հիմնելու մի նոր քաղաքական կազմակերպություն, որը հակակչիռ լիներ վերոնչյալ հայկական կուսակցություններին, մերժեր նրանց հեղափոխականությունը, միաժամանակ ունենար այնպիսի գաղափարախոսություն, որը խարսխված լիներ ռամկավարական (ժողովրդավարական) սկզբունքների վրա: Բայց ամենակարևորն այն էր, որ նոր կուսակցությունը պետք է գործեր օսմանյան սահմանադրության տված հնարավորությունների և իրավունքների չրջանակներում:

Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը չէր կարողանում ընդգրկել իր անդամների պես մտածող և դրսում գտնվող բազմաթիվ անհատների, որոնք գործում էին ինքնուրույն ու բաժան-բաժան, չունենալով գործողությունների միասնական ու հստակ ծրագիր: Իրավիճակը թելադրում էր ի մի բերել այդ բոլոր ուժերը:

Միհրան Տամատյանը գրում էր. «Մեր նչանաբանը պէտք է

ըլլայ – ինքնամփոփում, ներդաշնակութիւն, համերաշխութիւն եւ կարգապահութիւն: Պէտք է ունենանք աշխարհայեացք մը եւ կազմակերպութիւն մը: Պէտք է գիտակցինք թէ ո՞ւր ենք եւ ո՞ւր կ'երթանք, որպէս զի վստահաբար առնենք մեր քայլերը: Քաղաքական աշխարհայեացքի պակասը գլխաւոր պատճառներէն մէկն է մեր ազգին այսօրուան քաոսային վիճակին: Առանց որոշ աշխարհայեացքի, առանց ծրագրի, առանց սկզբունքի գործունէութիւնը չկրնար ոեւէ օգտակար ու տեւական արդիւնքի մը յանգիլ: Միւս կողմէ, աշխարհայեացք մը չկրնար կեանքի մէջ մտցուիլ, գործադրութեան դրուիլ առանց կազմակերպութեան, առանց միեւնոյն գաղափարին շուրջ համախմբուած գործիչներու եւ մշակներու ներդաշնակ, գիտակից եւ յարատեւ ջանքերուն»[1]:

Ճշտելու համար նոր կուսակցություն ստեղծելու իրենց մտադրության իրագործման հնարավորությունը, «Միացեալի» ղեկավարությունը հարցումներ արեց և խորհրդակցեց ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Հայաստանում, Կիլիկիայում և արտասահմանյան երկրներում գտնվող համախոհների, նշանավոր մտավորականների, տարբեր հեղինակավոր անձնավորությունների հետ: Ստացվեցին հավանության բազմաթիվ արձագանքներ, նաև ցանկություններ և առաջարկություններ: Եղան նաև գործի հաջողությանը կասկածողներ, որոնք գտնում էին, թե հայկական երկու խոշոր կուսակցություններն ունեն ժողովրդին գլխավորելու տասնամյակների փորձ, իսկ այժմ, օսմանյան հեղափոխության հաղթանակից հետո, փաստորեն հրաժարվել են հեղափոխական զինված պայքարից և արդեն որդեգրում են գործունեության հենց այն սկզբունքները, որոնցով մտադիր է առաջնորդվել նոր ստեղծվելիք կուսակցությունը: Նրանք միաժամանակ մատնացույց էին անում և չափազանցնում այն թերությունները, որ ընդհանրապես ունի ռամկավարությունը:

Իր «Ռամկավարութիւն» ուսումնասիրության մեջ Միհրան Տամատյանը մերժում էր այսպիսի պատճառաբանությունները:

---

[1] ***Միհրան Տամատեան**, Ռամկավարութիւն, Աղեքսանդրիա, 1910, էջ 155:*

Նա գրում էր. «Ռամկավարութիւնը ունի իր տկարութիւնները, ըստ որում մարդկային է. բայց ունի իր մեծութիւնն ալ: Պէտք է զայն ընդգրկել առանց վերապահութեան եւ առանց վախի. պէտք է զայն սիրել եւ ողջունել ուրախութեամբ, որովհետեւ անիկա՛ է որ քաղաքակրթութեան բարձրագոյն վիճակին հասած ընկերութեան մը մէջ, ամէնէն աւելի կը բազմապատկէ անհատական արժանիքները եւ բարօրութեան մեծագոյն քանակը կ՚ընձեռէ քաղաքացիներու ստուարագոյն մեծամասնութեան»[1]:

Նոր կուսակցության ստեղծման նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին Եգիպտոսում: Աշխատանքների ծանրությունը, Մալեզյանից բացի, իրենց վրա վերցրին Միհրան Տամատյանը և Հայտնի մտավորական Լևոն Մկրտիչյանը: Միաժամանակ, նոր քաղաքական կազմակերպության ստեղծումն առաջ մղելու համար ժողովներ սկսվեցին Կ. Պոլսում:

Բոլոր նախապատրաստություններից հետո Միացյալ հայ հեղափոխական կազմակերպության ղեկավարների հրավերով 1908 թ. հոկտեմբերի 4-ին Ալեքսանդրիայում գումարվում է խորհրդակցություն, որին մասնակցում են Եգիպտոսի տարբեր տեղերի վերակազմյալներ, հին հնչակյաններ և նախկին արմենականներ: Ներկայացել էին նաև քաղաքական այդ ուղղությունների մի շարք համակիրներ ու բարեկամներ:

Խորհրդակցությունում ծավալվեց մտքերի լայն փոխանակություն: Ելույթ ունեցողներն անդրադառնում էին ազատագրական շարժման տարիներին հայության կրած տառապանքներին, շարժման ղեկավար ուժերի պայքարի սխալ մարտավարության հետևանքներին, առաջարկում էին սահմանադրական կարգերի պայմաններում օգտագործել խաղաղ զարգացման բոլոր հնարավորությունները՝ ազգային նպատակներին հասնելու համար, այն է՝ ուժերը կենտրոնացնել ներքին բարեգործական, կրոնական և մշակութային խնդիրների իրագործման վրա:

Վահան Թեքեյանը գրում էր. «Իրաւ է թէ բարեշրջումները երբեմն երկար կը տեւեն, եւ այդ պատճառաւ ալ, մեզի համար

---

[1] **Միհրան Տամատեան**, *Ռամկավարութիւն, էջ 155:*

մեծագոյն ջանքը պէտք է ըլլայ **տեւել այս երկրին մէջ**, տեւել անձայն, անշշուկ, համբերատար ոգւով եւ մեր այն աւանդական քաղաքականութեան հետեւելով որով մեր նախնիքը կրցած են անցընել եւ փոխանցել ազգին գոյութիւնը այսօրուան չափ դառն վիճակներու մէջէն, քաղաքականութի՛ւն, որ ուրիշ բան չէ բայց եթէ **վարուիլ գիտնալու** քաղաքականութիւնը»[1] (ընդգծումը Վ. Թեքեյանինն է:– Հ. Ս.):

Խնդրի քննարկման արդիւնքում 1908 թ. հոկտեմբերի 26-ին ընդունվեց որոշում՝ **Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունն** այսուհետև հանդես է գալու **Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն** (Partie Constitutionnelle Démocrate Arménienne) անունով, որը հիմնականում գործելու է Վասպուրականում, իսկ Կ. Պոլսում, Խարբերդում, Եգիպտոսում, Սեբաստիայում, Տիգրանակերտում, Կիլիկիայում և Ամերիկայում ունենալու է մասնաճյուղեր[2]: Նորաստեղծ կուսակցությունը ներառեց **Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը**՝ իր «Ազգ» թերթով, **Գաղափարակցական միությունը** և նախկին Արմենական կուսակցության ղեկավար անձանցից կազմված **Միությունը**:

Կուսակցությունը հիմնադրվեց նրա ակունքներում կանգնած Վահան Մալեզյանի, Միհրան Տամատյանի, Լևոն Մկրտիչյանի, Վահան Թեքեյանի, Երվանդ Օտյանի, Միքայել Գյուրջյանի և այլոց ջանքերով:

1908 թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրիայում նորակազմ կուսակցության ծնունդը վավերացրին նրա մեջ մտած կազմակերպությունների ներկայացուցիչները. արմենականների ղեկավարներից՝ Գրիգոր Բեռզիկյանը (Շիկահեր) և Միքայել Նաթանյանը, իսկ վերակազմյալ հնչակյաններից՝ Միհրան Տամատյանը, Շավարշ Հովիվյանը և Կարապետ Գրիգորյանը:

Կուսակցության ստեղծումն ազդարարվեց հատուկ պաշտոնական հայտարարությամբ: Ըստ էության, այդ փաստաթուղթը

---

[1] **«Շիրակ»** (Կ. Պոլիս), № 14–15, 16 մայիսի 1909 թ., էջ 302:

[2] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[2], թղթ. 2, վավ. 3[37], թ. 2:

կարելի է համարել թուրքահայ կաղետական կուսակցության ծննդի հայտարարություն, որը խմբագրվել էր ամենայն բծախնդրությամբ: Զուգընթաց լարված աշխատանք տարվեց նորաստեղծ կուսակցության ծրագիրը մշակելու ուղղությամբ, որի համար հիմք ընդունվեց Միացյալ հայ հեղափոխական կուսակցության ծրագիր-կանոնագիրքը: ՀՍՌԿ-ի ծրագրի էական կետերում ըստ ամենայնի արտահայտություն էին գտել Ռուսաստանի կաղետական կուսակցության ծրագրի առանձին հոդվածների տրամադրությունները, որոնք համապատասխանում էին Թուրքիայի հայ ժողովրդի՝ տվյալ ժամանակաշրջանի ազատագրական պահանջներին:

Դեռ այն ժամանակ, 1908-ի հուլիսին, երբ հայտարարվել էր օսմանյան սահմանադրությունը, թուրքահայ առանձին անհատներ սկսել էին հետաքրքրվել ռուս կաղետների ծրագրով: Թուրքիայի զանազան կողմերից «Մշակի» խմբագրությունն ստանում էր բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում էին իրենց ուղարկել նշված ծրագիրը: Թերթի գլխավոր խմբագիր Ալեքսանդր Քալանթարն այդ առթիվ գրում էր. «Մենք գոհացրել ենք, որքան կարողացել ենք, տալով նրանց այն տպագրական բնագիրը, որ մի ժամանակ լույս էր տեսել «Մշակ» լրագրի էջերում»[1]:

Անտարակույս, Թուրքիայի պետական կյանքը շատ տարբեր էր ռուսական կյանքից, ուստի դրանցում քաղաքական ու հասարակական խնդիրների լուծումը ենթադրում էր միմյանցից տարբեր ուղիներ ու միջոցներ, բայց քաղաքական գործունեության համար հիմնական հայեցակետերը և ղեկավար սկզբունքները կարող էին բավականաչափ նման լինել երկու երկրներում:

Աշխատանքները ծրագրի վրա ավարտելուց հետո փաստաթուղթը ներկայացվել էր Իզմիրլյան պատրիարքին և Դուրյան եպիսկոպոսին, որոնք դրական կարծիք էին հայտնել նրա վերաբերյալ: Դրանից հետո միայն ծրագիրն ուղարկվել էր Կ. Պոլսի և Անդրկովկասի տարբեր ուղղության հայկական թերթերի խմբագրություններ՝ տպագրելու համար:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 273, 11 դեկտեմբերի 1908 թ.:*

Ռամկավար ղեկավարները՝ Վահան Թեքեյանը, Միհրան Տամատյանը, Սուրեն Պարթևյանը, Լևոն Փափազյանը և ուրիշներ կենտրոնացան Կ. Պոլսում՝ ժողովրդին առաջնորդելու համար «խոհականութեան, զգուշութեան եւ լրջութեան ճանապարհներէն»[1]: Պոլիսը դարձավ ՀՍՌԿ կենտրոնատեղին:

Նոր կուսակցության առաջին գործերից եղավ եգիպտահայ երկու թերթերի՝ «Լուսաբերի» (Ալեքսանդրիա) և «Արեւի» (Կահիրե) միավորումը «Լուսաբեր-Արեւ» անվան տակ, որը որպես Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության օրգան, հրատարակվում էր Կահիրեում: «Լուսաբեր-Արեւ» նոր թերթի շուրջը համախմբվեցին գնահատելի ուժեր՝ Միքայել Գյուրջյան, Վահան Մալեզյան, Լևոն Մկրտիչյան, Տիրան Քելեկյան և ուրիշներ[2]:

Այսպիսով, հրապարակ եկավ իր էությամբ դեմոկրատական մի նոր հայկական կուսակցություն, որը խնդիր էր դրել օրինական կերպով գործել օսմանյան սահմանադրության ընձեռած ազատությունների պայմաններում:

«Մշակը» գրում էր.

«Մենք միայն կարող ենք ողջունել հայ մի լեգալ քաղաքական կուսակցութեան ստեղծումը, որի կարիքը վաղուց զգացւում է: Ռուսաստանի հայերիս մէջ վաղուց դրուած է սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան հիմքը: Ինչպէս երեւում է, սթափումը Թուրքիայի հայերի մէջ աւելի շուտ է կատարուելու, քան մենք կարող էինք երեւակայել»[3]:

ՀՍՌԿ ստեղծումը և նրա ծրագրի հրատարակումը խանդավառությամբ ընդունեցին ազատական գաղափարներ դավանող թուրքահայ գործիչները: Հայկական մամուլի շատ օրգաններ ինչպես Թուրքիայում («Արեւելեան մամուլ» և ուրիշներ), այնպես էլ Կովկասում («Մշակ» և այլն) տպագրել էին հայ ռամկավարների ծրագիրը համապատասխան մեկնաբանություններ-

---

[1] Տե՛ս **«Պատմութիւն Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան. 1887-1962»**, հատ Ա., Պէյրութ, 1962, էջ 322:

[2] Տե՛ս **«Արեւելք»**, № 6996, 9 հունվարի 1909 թ.:

[3] **«Մշակ»**, № 273, 11 դեկտեմբերի 1908 թ.:

րով կամ տպագրել էին հատվածաբար: Մամուլը բարձր էր գնահատում ռամկավար գործիչների ողջամիտ կեցվածքը Թուրքահայության համար վճռորոշ ժամանակաշրջանում, միաժամանակ հույս էր հայտնում, որ ծրագրում արծարծված գաղափարները չուտով Թուրքահայության մեծ զանգվածներ կընդգրկեն:

Կուսակցության ստեղծման հաղորդագրությունը լույս տեսնելուց հետո, 1908 թ. դեկտեմբերին նրա մեջ մտնելու ցանկություն հայտնեցին Եգիպտոսի ու Կ. Պոլսի հայերից շատերը: Նրանց մեծ մասը վերակազմյալ Հնչակյաններ էին, որոնք վաղուց, սկսած 1896 թ., մերժում էին թե՛ Հնչակի (նազարբեկյանական թևի) և թե՛ հին Հնչակի (սապահգյուլյանական թևի) սոցիալիստական գաղափարները Թուրքիայում կիրառելու գործելակերպը և իրենց քաղաքական գործունեությունն ամբողջապես ծավալում էին ազգային հողի վրա: Օսմանյան հեղափոխությունից հետո, երբ վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը, Դաշնակցության կատարած քայլերի նմանությամբ, հայտարարել էր, թե պաշտպանում է Իթթիհադի կառավարությանը, նրա շարքերից մի նոր թարմ հոսք սկսվեց դեպի սահմանադրական ռամկավարների շարքերը: Նորաստեղծ կուսակցություն եկան նաև ոչ քիչ թվով հնչակյաններ, իսկ հին Հնչակի նշանավոր ղեկավարներից Հարություն Ջանգյուլյանը թեև մնացել էր իր կուսակցության մեջ, բայց մեծ եռանդով նպաստեց Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծմանն ու կայացմանը: Վերջինիս կազմը շարունակում էին լրացնել նաև այլևս գոյություն չունեցող Արմենական ազգային հեղափոխական կուսակցության նախկին ղեկավար և շարքային գործիչներ, իսկ նախկին շարքային արմենականներից շատերը մտան Դաշնակցության շարքերը: Նորաստեղծ կուսակցությունն իր շուրջը համախմբեց ու իր մեջ ձուլեց նաև չեզոք տարրեր, որոնք մինչ այդ ձեռնպահ ու մեկուսի էին մնացել քաղաքական գործունեությունից:*

---

* *Ռամկավար ազատական կուսակցության մեջ հաճախ շրջանառվում է այն տեսակետը, թե ՌԱԿ-ը Արմենական կուսակցության ուղղակի շարունակությունն է: Դրանով իսկ ռամկավար ազատականներն իրենց կուսակցության ստեղծումը ձգտում են տանել ու հասցնել մինչև 1885 թվականը, այսինքն՝ երբ*

Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցությունը չուտով համակրություն գտավ և տարածվեց շատ տեղերում: Արդեն երեք-չորս ամիս անց ՀՍՌ կուսակցության ակումբներ էին

հիմնվել էր Արմենական կուսակցությունը: Այս պնդումն անցյալ դարի 30-ական թթ. շրջանառության մեջ է դրել արմենականությունից Ռամկավար ազատական կուսակցության շարքերն անցած Միքայել Նաթանյանը, որին հետևել են Արտակ Դարբինյանը և Արմենակ Եկարյանը: Բայց նկատենք, որ նույնիսկ այս գործիչներն իրենց թույլ չեն տվել Արմենական կուսակցության պատմությունը համարել ՌԱԿ-ի պատմություն և նրա հիմնադրումը հասցնել 1885 թ.: Ինչպես վերոշարադրյալից երևաց, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) ստեղծման օրերին այդ կազմակերպության մեջ մեծամասնություն են կազմել իրենց կուսակցությունից հեռացած վերակազմյալ հնչակյանները: Թվական տեսակետից այնուհետև գալիս էին հին Հնչակից հեռացածները, հետո միայն՝ աչքի ընկած նախկին արմենական գործիչները: Ըստ որում, թեև բացակայում են ճշգրիտ թվական տվյալներ, սակայն ժամանակակիցների բազմաթիվ հուշագրական վկայությունները ցույց են տալիս, որ արմենականության կազմալուծման շրջանում կուսակցության շարքային զանգվածի մի զգալի մասը մտել է Դաշնակցության շարքերը: Բայց ո՛չ այն ժամանակ և ո՛չ էլ դրանից հետո որևէ մեկի մտքով չի անցել դրա հման վրա պնդել, թե Դաշնակցությունն արմենականության ուղղակի իրավահաջորդն է: Արմենականության շարունակություն կոչվելու ավելի մեծ հավակնություններ կարող է ունենալ Ս.-Դ. հնչակյան կուսակցությունը, քանի որ 1) Ե՛վ արմենական և՛ Ս.-Դ. հնչակյան կուսակցությունները եղել են հետևողական հեղափոխական կուսակցություններ՝ ի տարբերություն հեղափոխության անդիջում հակառակորդ ՀՍՌԿ-ՌԱԿ-ի, 2) Վերակազմյալ հնչակյան կուսակցությունից հեռացած և ՀՍՌԿ-ի մեջ մտած անձինք իրենց թվով գերակշռում էին նույն ՀՍՌԿ-ի մեջ մտած հին Հնչակից հեռացածներին և նախկին արմենականներին՝ միասին վերցրած: Հետևապես, ՀՍՌԿ-ՌԱԿ-ը, որը միշտ վճռականորեն դեմ է եղել հասարակական ցնցումների և ժողովրդի ազգային, սոցիալ-տնտեսական ու մշակութային խնդիրների լուծման հնարավորությունը տեսել է միայն բարեփոխումների ուղիներում, բնականաբար, չի կարող հեղափոխական Արմենական կուսակցության իրավահաջորդ համարվել: Ո՛չ ծրագրային պահանջներով և ո՛չ էլ գաղափարախոսական սկզբունքներով այդ երկու կուսակցությունների միջև նմանություն չկա: ՀՍՌԿ-ՌԱԿ-ը, հիրավի, մեծ ու անգնահատելի դեր է խաղացել հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության մեջ, և իրեն չպատկանողն իրեն վերագրելը, մեղմ ասած, լուրջ մոտեցում չէ: Դրանով ոչինչ չի ավելանում այդ կուսակցության հսկա վաստակին ու բարի համբավին:

գործում ինչպես Թուրքիայի, այնպես էլ արտասահմանի մի շարք հայաշատ վայրերում: Հատկապես կանոնավոր աշխատանքներ էին տարվում Կ. Պոլսում, Իզմիրում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, նաև ուրիշ քաղաքներում (Վան, Կարին) ստեղծված ակումբներում[1]:

Կազմակերպչական աշխատանքներ էին տարվում ակումբներ ստեղծելու Փարիզում, Բոստոնում և այլուր: Ընդամենը երկու-երեք տարի հետո ՀՍՌԿ-ն ուժեղ մասնաճյուղեր էր ունենալու ոչ միայն նշված տեղերում, այլև Խարբերդում, Սեբաստիայում, Տիգրանակերտում, Կիլիկիայի զանազան վայրերում, դառնալու էր զորեղ կազմակերպություն Ամերիկայի Թուրքահայկական գաղութներում:

Իր գոյության չորրորդ տարում ՀՍՌԿ-ն արդեն համազգային կազմակերպություն էր: Նա ուժ էր տալիս մամուլի այն օրգաններին, որոնք ընդունել էին սահմանադրական ռամկավար ուղղություն կամ որոնք այդ կազմակերպության գաղափարների և սկզբունքների արտահայտիչներ էին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ.- Ծրագրի մեկնակետն այն հաստատումն էր, թե կուսակցության գլխավոր նպատակը օսմանյան պետության մեջ **ժողովրդի գերիշխանության** (Souveraineté du peuple) հաստատման նպաստելն է: «Ժողովուրդ» ասելով Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը նկատի ուներ ազգի բոլոր անդամներին, քանի որ նրա նպատակը որևէ դասակարգի շահերի պաշտպանությունը չէր: Կուսակցության հիմնադիրները հավատում էին, որ ընդհանուր նպատակներ իրագործելու ճանապարհին կարող են միավորել հայ հարուստին, հայ աշխատավորին, հայ մտավորականին, այսինքն՝ բոլոր հայ մարդկանց: Ուստի «ՀՍՌ կուսակցութեան կրնայ անդամակցիլ ամէն հայ* – առանց դաւանանքի

---

[1] Օրինակ՝ Իզմիրում ՀՍՌԿ ակումբի ստեղծման գործընթացի մասին տե՛ս **«Արեւելեան մամուլ»,** № 14, 31 մարտի 1909 թ., էջ 428-429:

* **Հայ** կամ **հայություն** բառերը ծրագրում գործածված են միայն օսմանցի հայերի վերաբերմամբ:

եւ դասակարգի խտրութեան»: Ավելին, ծրագրի ուշադիր ընթերցումը բերում է այն համոզման, որ կուսակցությունը նպատակ ուներ իրենով փոխարինել բոլոր հայկական քաղաքական կազմակերպություններին՝ նրանց իր մեջ ձուլելու միջոցով: Հանդես գալով ողջ ժողովրդի անունից, ՀՍՌ կուսակցությունը դրանով իսկ տարբերվում էր հայկական սոցիալիստական քաղաքական ուժերից և հոսանքներից, որոնք հանդես էին գալիս միայն աղքատ դասակարգերի՝ բանվորների ու գյուղացիների, հասարակության կիսալումպենացած շերտերի շահերի պաշտպանությամբ:*

Ծրագրի հիմնարար դրույթներից մեկն այն էր, որ կայսրության բոլոր ազգերը պարտավոր են պահպանել օսմանյան հայրենիքի միությունն ու ամբողջությունը: Այդ վճռականությամբ է տոգորված նաև Օսմանյան կայսրության ժողովուրդը, հետևապես կուսակցության բնաբանն է՝ «Հայութիւնը՝ օսմանցիութեան հետ»:

ՀՍՌԿ-ն վճռականապես մերժում էր թուրք ազգի մեջ ոչ թուրք ազգերի ձուլումը, դա համարելով հակապատմական և անբնական պահանջ: Դրանից բխում էր հայ սահմանադրական ռամկավարների մյուս հիմնարար սկզբունքը, այն է՝ մերժել բոլոր ազգերի մեջ ազգայնամոլական ձգտումները, որոնք կարող էին խանգարել ազգությունների իրավահավասարության սկզբունքին:

Ջատագովելով օսմանյան պետության հողային ամբողջականության պահպանումը, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը միաժամանակ հանդես էր գալիս ամբողջ կայսրության մեջ վարչական ապակենտրոնացման (Décentralisation) դրության օգտին, «աստիճանաբար ընդարձակելով բոլոր համայնքներու եւ նահանգներու (հետեւաբար նաեւ հայաբնակ նահանգներու) տեղական իրաւասութիւնները»: Դա կուսակ-

---

* *Վահան Թեքեյանը գրում էր. «Եւ ինչ կ'ըլլար, ի՞նչ կ'ըլլար, Աստուած իմ, եթէ ինքնիրենը փճացող այս ազգին կուսակցութիւնները մէկ թափով բոլորը մէկ միանալու առաքինութիւնը ցոյց տային, որ ա՛տ ալ, պիտի բարձրացնէր ազգին կորովը» (**«Շիրակ»**, № 14-15, 16 մայիսի 1909 թ., էջ 300):*

ցության կարևոր քաղաքական նպատակն էր:

Այս բոլոր համաօսմանյան պահանջները նկատի առնելով, ՀՍՌ կուսակցությունն անհրաժեշտ էր համարում միդհատյան սահմանադրության վերաքննությունը և դրա համապատասխանեցումը ժամանակաշրջանի իրողություններին:

Ներկայանալով իբրև հայկական ազգային կուսակցություն, ՀՍՌԿ-ն վճռական էր կենսագործելու հետևյալ անհետաձգելի խնդիրները՝ անվթար պահպանել հայոց՝ օրենքներով հաստատված ազգային իրավունքները. վերաքննել հայոց Ազգային սահմանադրությունը և դա համաձայնեցնել ժամանակակից պահանջներին, հայոց դավանական ու եկեղեցական գործերն անջատել ազգային վարչական գործերից և ստեղծել մի ընդհանուր համազգային կրթական ու վարչական կազմակերպություն:

Ծրագրի այս ազգային նպատակներին հաջորդում է կուսակցության գործելակերպին վերաբերող հատվածը: Այստեղ հայտարարված է, որ ՀՍՌԿ-ն «կը գործէ սահմանադրական ռեժիմի տակ, իբրեւ քաղաքական օրինական կազմակերպութիւն, եւ ո՛չ իբրեւ յեղափոխական-ապստամբական գաղտնի մարմին»: Միաժամանակ ազդարարվում էր, որ հին բռնապետական ռեժիմը վերահաստատելու և ձեռք բերած սահմանադրական իրավունքները հետ խլելու կամ վտանգելու փորձերի դեմ կուսակցությունը պիտի կռվի իր բոլոր ուժերով, կիրառելով նաև բացառիկ միջոցներ: Այս համաշարադրանքում չեշտվում էր քաղաքացիական կարևոր իրավունքների հետևողական կիրարկման անհրաժեշտությունը: Մասնավորապես նկատի ունենալով քրդերի կողմից հայկական նահանգներում կատարվող չդադարող սպանությունները, ունեցվածքի կողոպուտները և այլ բռնադատումներ, ծրագիրը հատուկ չեշտում էր անձի ու բնակարանի (մոռացվել ու չարադրանքից դուրս էր մնացել «և պատվի» բառակապակցությունը:- Հ. Ս.) անբռնաբարելիությունը: Կուսակցությունը ձգտում էր, որ երաշխավորվի խղճի, պաշտամունքի, խոսքի, համախմբումների ու հավաքների ազատությունը:

«Պետական կազմ» հատվածում կուսակցությունը չեշտում

էր Օսմանյան կայսրության վեհապետի անձի անձեռնմխելիությունն ու նրա պատասխանատու չլինելը որևէ մարմնի առջև, միաժամանակ հավանություն էր տալիս միդհատյան սահմանադրությամբ սահմանված կարգին, ըստ որի՝ դահլիճը (նախարարների խորհուրդը) և առանձին-առանձին վերցրած նախարարները պատասխանատու են խորհրդարանի առջև:

Ծրագրի՝ արդարադատությանը վերաբերող մասում առաջադրվում էր դատական բարենորոգումների, մասնավորապես դատավարությունների ընթացքում տեղական գլխավոր լեզուների գործածության պահանջը:

Հանրային կրթության հատվածում խոսք էր լինում ուսուցման ազատ, նախնական կրթության ձրի ու պարտադիր լինելու մասին: Կայսրության յուրաքանչյուր ազգ պիտի հոգա նախնական կրթության մասին, իր միջոցներով բացի ու պահպանի տարրական վարժարաններ, իսկ բարձրագույն և մասնագիտական կրթությունը պետք է վերապահվի միայն պետությանը: Նախնական և երկրորդական վարժարանների ուսումնական ծրագրերը պետք է միակերպ լինեն՝ ենթակա պետական վերահսկողության:

Զինվորագրությանը վերաբերող մասում հայտարարվում էր, որ յուրաքանչյուր օսմանցի պարտավոր է իբրև զինվոր երկու տարի ծառայել տերության բանակում, ընդ որում՝ իր ծննդավայրից ոչ հեռու:

«Գավառական կազմակերպություն» հատվածում պահանջվում էր ընդլայնել նահանգային ներկայացուցչական մարմինների իրավասությունները, պաշտոնապես ճանաչել տեղական լեզուները, պաշտոնյաներին նշանակել զանազան ազգությունների թվի համեմատ:

«Տնտեսական բարենորոգումներ» վերնագրի տակ պահանջ էր առաջադրված բարեփոխել պետական տուրքերի գոյությունն ունեցող կարգը, բարելավել աշխատավորների, հատկապես գյուղացիների սոցիալ-տնտեսական և կրթական վիճակը, պետական հողերից բաշխել գյուղացիներին, պետության միջոցներով կազմակերպել գաղթականների վերադարձը, հաստատել երկրագործական բանկեր և այլն:

Վերջապես, «Քաղաքակրթիչ բացառիկ միջոցներ» հատվածում ՀՍՌ կուսակցությունը պահանջում էր վերացնել միջնադարյան ավատական աշիրեթները, թափառաշրջիկ ու վաչկատուն ցեղերին հարկադրել անցնելու նստակյացության և քաղաքակրթիչ բացառիկ միջոցներ մուծել նրանց կյանքից ներս, դինաթափել ավազակաբարո ցեղերին, ցրել ցեղային կազմակերպությունները և համիդիե գնդերը:

Վերջում խոսվում էր կուսակցության կազմակերպական սկզբունքների և ծրագրի վերաքննության կարգի մասին (ՀՍՌԿ ծրագրի շարադրանքը տե՛ս այս գրքի «Հավելված 3»-ում):

Անդրադառնանք ՀՍՌ կուսակցության ծրագրի շարադրանքում նկատվող որոշ հակասություններին:

Վերը նշեցինք, որ ծրագիրն ազդարարում էր, թե Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը հանդես է գալիս ոչ թե որպես հայ իրականության որևէ որոշակի դասակարգի, այլ ամբողջ ժողովրդի շահերի արտահայտիչ՝ հեռու մնալով «ծայրայեղ աշխարհահայեացքներէ եւ վիճելի ընկերային վարդապետութիւններէ»: Բայց, հակառակ դրա, ծրագրի մի ուրիշ հատվածում նշված է, թե ՀՍՌ կուսակցությունը «կը հանդիսանայ պաշտպան՝ տնտեսական բարենորոգումներու հետամտութեամբ առհասարակ աշխատաւորներու շահերուն...»: Այս միտքը ամրագրված է նաև մի ուրիշ ազդարարությունում, ուր ասված է, թե կուսակցությունը օսմանյան խորհրդարանից պահանջում է «գիւղացիներու եւ առհասարակ աշխատաւորներու վիճակին բարւոքում եւ զանոնք նպաստաւորող աշխատութեան օրէնքի հաստատում»: Այս վերջին երկու պահանջների ամրագրումով, ուրեմն, ՀՍՌ կուսակցությունը, առանց սոցիալիստական արմատական կամ ծայրահեղ պահանջներ առաջադրելու, մասնավոր կարևորություն էր տալիս գյուղացիական և մյուս աշխատավոր դասակարգերին:

Ծրագրում որոշ կնճիռներ կան ազգային նպատակներին վերաբերող հատվածներում: Այսպես, այնտեղ հայտարարված է, թե ՀՍՌ կուսակցության նպատակն է «հսկել հայոց օրինապէս հաստատուած ազգային իրաւունքներուն անվթար պահպանումին, իբրեւ երաշխիք՝ կրօնական ազատութեան եւ կրթական

զարգացման»: Մյուս կողմից էլ «Քաղաքային (պետք է լիներ՝ քաղաքացիական:- Հ. Ս.) իրաւունքներ» հատվածում ծրագիրը հայտարարում էր, թե կուսակցությունը պիտի պաշտպանի «հաւասարութիւն ամէն ազգութեան: Ոչ մէկ ցեղ որեւէ գերիշխանութիւն կամ առաւելութիւն չունի»: Այստեղ, անշուշտ, առկա է հասկացությունների անհամատեղելիություն: Նշված այս երկու սկզբունքները հակոտնյա են: Զէ՞ որ Թուրքահայության համար տարբեր ժամանակներում հաստատված իրավունքները (Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին սուլթանների տված առանձնաշնորհումները, կապիտուլյացիաներով սահմանված արտոնությունները, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, հայկական նահանգներում անցկացվելիք բարենորոգումների 1895 թ. մայիսյան ծրագիրը և այլն) նրա համար ունեին մասնավոր կարևորություն և արժեք, այսինքն՝ առավելություն էին, որոնց պահպանման համար չարունակում էին ջանքեր գործադրել հայկական հասարակական ու քաղաքական ուժերը: Հետևապես հայության այդ «առավելություններից» ծրագիրը պետք է ամբողջապես հրաժարվեր ըստ «քաղաքային (քաղաքացիական:- Հ. Ս.) իրաւունքներու» կամ պետք է դրանք պաշտպաներ ըստ «ազգային նպատակին»: Եվ ահա՛, ծրագրի վրա թանաքը դեռ չչորացած, այդ խնդիրը բուռն վիճաբանությունների առիթ էր տվել օսմանյան խորհրդարանում. վեճեր էին սկսվել հատկապես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի իրավունքների շուրջ:

Առարկելու առիթ է տալիս նաև այն, որ ՀՍՌ կուսակցությունը նպատակ էր դրել «աշխատիլ հայ դաւանական հասարակութեանց զուտ եկեղեցական գործերն անջատելու՝ անոնց ազգային վարչական կազմէն եւ առաջ բերելու ազգային եւ կրթական միացեալ վարչութիւն»: Ահա՛ մի խնդիր ևս, որի լուծումը չատ դժվարին էր: Այդ դժվարությունը ծագում էր պետական և գործնական կյանքի թելադրանքով: Ինչպե՞ս կարելի էր պետության՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին տված արտոնությունները պաշտպանել, եթե հայերն իրենք սկսեին խախտել դրանք՝ եկեղեցական գործերն անջատելով նրանց ազգային-վարչական կազմից: Դա կարող էր հեշտացնել Թուրքական կառավարության գործը, որը պատրիարքարանի ուժերը ջլատելու

համար ինքն էր ձգտում նրանից անջատել ազգային-վարչական գործերը: Ծրագրի այդ մասի պահանջը կարող էր կատարվել բարեփոխումների և պայքարների երկար ճանապարհին, բայց ԻԹԹիհադն այդ ճանապարհը ուղեփակել էր:

Սակայն այս դիտարկումը բնավ ստվեր չի ձգում ՀՍՌ կուսակցության ծրագրի վրա, որը կազմել էին հայ խոշոր մտավորականներ և ամփոփում էր դարի ազատական գաղափարները՝ միաժամանակ հաշվի առնելով Թուրքահայ կյանքի առանձնահատկություններն ու պահանջները:

Իհարկե, ՀՍՌԿ հիմնադիրները քաջ գիտակցում էին, որ նորաստեղծ կուսակցությունը լիակատար կայացման ճանապարհին հանդիպելու է մեծ արգելքների և, առաջին հերթին՝ հայկական հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների կողմից: Այդպես էլ եղավ. հին Հնչակի ղեկավարներն անմիջապես արտահայտեցին իրենց բացասական վերաբերմունքը, իսկ Դաշնակցությունն սկսեց մի պայքար, որը տասնամյակներ էր տևելու: ՀՍՌԿ ղեկավարները, սակայն, լի էին վճռականությամբ սկսած գործը մինչև վերջ հասցնելու համար: Արտահայտելով գաղափարակից գործընկերների տրամադրությունը, Միհրան Տամատյանը գրում էր. «... Բոլոր վտանգները և քաղաքական կեանքի յաճախադէպ յուսախաբութիւնները պէտք չէ՛ երբեք զօրեն մեր կորովը թուլացնելու եւ մեր լաւատեսութիւնը նսեմացնելու ապագային նկատմամբ. այլ ընդհակառակը՝ մեր գիտակցութիւնը, ո՛րչափ լուսաւորուած նոյնչափ գօտեպնդուած՝ պէտք է անդուլ անդադար մաքառի այդ դժուարութեանց, այդ արգելքներու եւ խոչընդոտներու դէմ, եւ մանաւանդ պէտք է կանխէ այդ վտանգները՝ դեռ չի սաղմնաւորուած կամ խեղդէ զանոնք՝ իրենց խանձարուրքին մէջ իսկ: Գործադրենք, յարատեւ ջանքով, ազգաշինութեան այս միջոցները, ու պիտի ապրինք ու վերանորոգուինք»[1]:

Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը վիճակված էր ապագայում մեծ դեր խաղալու հայ ժողովրդի կյանքում: Լինելով առաջադիմական և դեմոկրատական գաղափար-

[1] **Միհրան Տամատեան**, Ռամկավարութիւն, էջ 158:

ների արտահայտիչ՝ կուսակցությունը, միաժամանակ, ազգային և ժողովրդավարական սկզբունքների պաշտպան էր և իր գործունեությունը հիմնում էր արդարության, համոզմունքի, խղճմտանքի գաղափարների վրա:

Աշխատության հետագա շարադրանքում կտեսնենք, որ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը հայ ժողովրդի համար 1908–1914 թթ. բախտորոշ ժամանակահատվածում անհուն նվիրվածությամբ փարվել էր Թուրքահայության գոյատևման պայքարին, հսկայական ջանքեր էր գործադրում երիտթուրքական յաթաղանի սպառնալիքի տակ հայտնված իր ժողովրդին փրկելու համար:

Ինչպես ՀՍՌԿ-ն, այնպես էլ նրա անմիջական շարունակությունը հանդիսացող Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) խոշոր երևույթներ էին Թուրքահայության, ապա և*

** 1921 թ. հոկտեմբերի 1-ին՝ «ազատականներ» կոչվող վերակազմյալ հնչակյանների, սահմանադրական ռամկավարների և Հայ ժողովրդական կուսակցության միացման արդյունքում կազմվեց Ռամկավար ազատական կուսակցությունը: Զորավիգ լինելով ցեղասպանությունից փրկված և տարբեր երկրներում ցրված Թուրքահայության մնացորդներին, ՌԱԿ-ը սփյուռքում հսկայական աշխատանք ծավալեց որբահավաքի, գաղթականության տեղավորման, նրան աստիճանաբար ոտքի կանգնեցնելու ուղղությամբ: Ընդունելով հանդերձ բոլշևիզմի վարդապետությունը, համախոհ չլինելով նրա սոցիալիստական ըմբռնումներին, ՌԱԿ-ը սատար կանգնեց նորաստեղծ Խորհրդային Հայաստանին, նրա ժողովրդին:*

Ռամկավարներն ամեն կերպ աջակցում էին հայոց առաջին անկախ հանրապետության կայացմանը, արտասահմանում ծավալել էին հայրենանվեր գործունեություն նրան տնտեսական ու քաղաքական օգնություն ցույց տալու համար: ՌԱԿ-ը հին Հնչակի հետ ճանաչեց նրան հաջորդած Խորհրդային Հայաստանին: Ողջախոհություն դրսևորելով, ռամկավարները գտնում էին, որ ստեղծված աշխարհաքաղաքական բարդ ու վտանգավոր պայմաններում իրենք իրավունք չունեն չկանգնելու հայոց երկրորդ հանրապետության՝ Խորհրդային Հայաստանի կողքին: Նրանք համոզված էին, որ իր ազգային տարածքներից զրկված և ընդամենը 29.8 հազ. քառ. կմ-ի վրա գոյատևող, բնական բավարար պաշարներ չունեցող, աղքատության ու խավարի ճիրաններից հազիվ դուրս եկած Հայաստանում ինչպիսի կարգեր էլ լինեն, նա է աշխարհի ողջ հայության միակ հայրենիքը, որտեղ ապրում են իրենց եղբայրներն ու քույրերը: Դիմելով Խորհրդային Հայաստանին, Մեծ Մտավորական և Մեծ Հայ Վահան Թեքեյանն իր մի բանաստեղծության մեջ գրում էր.

սփյուռքահայության քաղաքական կյանքում: Տարբեր ժամանակներում ՀՍՌԿ-ՌԱԿ-ի ղեկավարության մեջ են եղել նշանավոր հասարակական գործիչներ, գրողներ, հրապարակախոսներ և ուրիշ փայլուն մտավորականներ՝ Վահան Թեքեյանը, Արշակ Զոպանյանը, Լևոն Բաշալյանը, Միհրան Տամատյանը, Արմենակ Եկարյանը, Սուրեն Պարթևյանը, Վահան Մալեզյանը, Արտակ Դարբինյանը և շատ ուրիշներ:

ԻԹԹԻՀԱԴԻ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Զգաստ մտածող հայերի և օտարների կանխատեսումը չուշացավ իրականանալ:

1908 թ. հուլիս-օգոստոս ամիսներին զանգվածների ոգևորությունն ու ցնծությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության սրտովը չէր: Հեղաշրջումից շատ չանցած, ի լուր ամենքի նա արտահայտեց իր չափազանց բացասական վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ:

Տարբեր ես դուն մեր երազէն,
Աւելի լաւ...

Խորհրդային Հայաստանի դեմ սփյուռքում սանձազերծված պայքարը ՌԱԿ-ը սրբապղծություն էր համարում: Պատասխանելով Հայաստանի խորհրդային կարգերի հակառակորդների պնդումներին, թե այնտեղ չկա անհատի ազատություն, որովհետև երկիրն անկախ չէ, ռամկավարները մշտապես շեշտում էին, որ թեև Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը ձևականորեն անկախ չէ, բայց օժտված է ազգային սուվերենության բոլոր ստորոգելիներով: ՌԱԿ-ը բարձր էր գնահատում Խորհրդային Հայաստանի ծաղկման ու բարգավաճման համար հայ բոլշևիկների թափած ջանքերը, արտասահմանի հայության շրջանում լայնորեն քարոզում էր Հայրենիքի աննախընթաց նվաճումները, սփյուռքահայությանը կոչ անում «Հայաստանի կառավարությանը օգնել իր վերաշինության գործին մեջ»: Սրանք են այդ կուսակցության ոչ լրիվ բնորոշիչները:

Արդեն հեղաշրջման երրորդ օրը կոմիտեի պահանջով «ընդհանուրին կը յայտարարուէր եւ կը ծանուցուէր որ երեք օրէ ի վեր չարունակուող ցոյցերուն վերջ մը տրուի»[1]:

Բայց ուրախության ցույցերն ու մաղթանքները չարունակվում էին, և Կ. Պոլսի երիտթուրքական կոմիտեն ստիպված էր նոր զգուշացում անել: Հուլիսի 24-ի իր հայտարարության մեջ նա ազդարարում էր, որ երկրի բոլոր կողմերում տասնհինգ օրից ի վեր տեղի ունեցող ցույցերը թեև օսմանյան բոլոր հպատակների կողմից կայսերական գահի հանդեպ հավատարմության զգացումների նոր վկայություն են, բայց ակնհայտ է, թե այլևս եկած է ժամանակը, որ ամեն մարդ զբաղվի իր գործով և այլևս ցույցեր չանի: Այս բանը կոմիտեն «կատարեալ անկեղծութեամբ» էր հիշեցնում բոլոր օսմանցիներին և նորից չեշտում, թե ամեն մարդ, կառավարության եւ ազգի գործերին միջամտելու փոխարեն, պետք է զբաղվի իր անձնական գործերով[2]:

Որո՞նք էին ժողովրդի ոգևորության հանդեպ երիտթուրք ղեկավարների բացասական վերաբերմունքի պատճառները: Նախ, նրանք զանգվածներին հեռու էին պահում իրենց գործերին միջամտելու գայթակղությունից, երկրորդ՝ հատկապես այլազգիների ամեն ցույց կամ հանրահավաք պարունակում էր անցյալի սովորությամբ սուլթան Աբդուլ Համիդ II-ին քննադատելու վտանգ, որը, իշխանությունը գրավելուց հետո, այլևս չէր մտնում նրանց ծրագրի մեջ:

Երիտթուրքական շարժումը, իբրև բողոք ավատապետական ինքնակալական ռեժիմի դեմ, ավարտվել էր հուլիսյան իրադարձություններով: Ինչպես նշել ենք, երիտթուրքերը լսել անգամ չէին ուզում ինքնակալության տապալման մասին: Լինելով թուրքական բուրժուազիայի և ազատական կալվածատերերի շահերի հարազատ արտահայտիչներ, նրանք լիովին բավարարված էին, որ սուլթանի հետ են իրականացնում երկրի քաղաքական կյանքի ղեկավարումը:

---

[1] **«Արեւելք»**, № 6848, 14 հուլիսի 1908 թ.:

[2] Նույն տեղում, № 6857, 25 հուլիսի 1908 թ.:

Ահա թե ինչո՛ւ հուլիսի 11 (24)-ից չատ չանցած՝ երիտթուրքերի վերնախավը չեչտակի շրջադարձ կատարեց իր բարձրագոչ նչանախոսքերից և ամեն կերպ սկսեց կծկել հեղափոխությունը և սանձել զանգվածների պաթոսը:

Երիտթուրքերի ղեկավարներից բժիչկ Նազրմն այդ կապակցությամբ ասում էր. «Երբ բորբոքվեց հեղափոխությունը և հռչակվեց սահմանադրությունը, կոմիտեն հասկացավ, որ իր հեղափոխական դերը վերջացած է, և որ այսուհետև իր գործունեության մեջ պետք է հետևի բարեշրջական (էվոլյուցիոն) և խաղաղ մեթոդին»[1]:

Ահմեդ Ռիզան ուղղակի դավաճանություն էր համարում սուլթանական կարգերի նպատակահարմարությունը կասկածի տակ դնելը, գտնելով, որ ինքնակալը պետք է ամուր նստած մնա գահի վրա: «Իմ սէրը հայրենիքի հանդէպ ինձ ստիպում է չկասկածել սուլթանի բարեխղճութեան վրայ»,- ասում էր նա այդ օրերին: Հեղափոխությունը, չեչտում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխը, լիակատար հաղթանակ է տարել և ամբողջովին կատարել իր խնդիրը՝ կորզել է սուլթանական իրադե սահմանադրության վերականգնման, պատգամավորների պալատի և առաջիկա ընտրությունների մասին: Հետևաբար, հեղափոխությունը խորացնելու ոչ մի հարկ չկա, պետք է բավարարվել ձեռք բերածով միայն: Հեղափոխության հետագա խորացումից, ասում էր Ահմեդ Ռիզան, կօգտվեն միայն օտար պետությունները և ներքին անջատողական ուժերը, որոնք երազում են կայսրությունը քայքայել:

Սեպտեմբերի կեսերից աստիճանաբար պարզվում էր, որ երիտթուրքերը վարելու են այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է լինելու միայն ու միայն Թուրք բուրժուազիայի դասակարգային շահերի պաչտպանության և Թուրքական էթնոսի գերակայության:

Իշխանության գալուց երկու ամիս անց Իթթիհադը Թուրքիայի քրիստոնյա տարրերին արդեն բացեիբաց հայտարարում

---

[1] *Տե՛ս* ***А. А. Алиев****, Революция 1908 г. в Турции (в сб. “Пробуждение Азии”, Москва, 1935, с. 44).*

էր թե՝ «որեւէ ազգայնական շարժում հակաթրքական նկատուելով, չպիտի հանդուրժենք որեւէ տարրի որ իր գոյութեան մասին անջատ իրաւունքներ ձեռք բերելու հետամտի»[1]:

Ինչպես մինչև հեղափոխությունը, այժմ նույնպես երիտթուրք ղեկավարների աչքի փուշը, նրանց համար ամենաատելին հայությունն էր: Հեղափոխությունից հետո, արտասահմանից դեռ Կ. Պոլիս չվերադարձած, նրանք չէին թաքցնում իրենց այդ զգացմունքը:

Վերակազմյալ հնչակյանների ղեկավարներից Սուրեն Պարթևյանը երիտթուրքերի Փարիզի կենտրոնավայրում 1908 թ. սեպտեմբերի 14-ին հանդիպում է ունենում Իթթիհադի պարագլուխ Ահմեդ Ռիզայի հետ և հայությանը հետաքրքրող մի շարք հարցեր ուղղում նրան: Այդ հարցազրույցից բերում ենք մի քանի ուշագրավ հատվածներ:

Անդրադառնալով օսմանյան հակասուլթանական ուժերի ներկայացուցիչների 1907 թ. դեկտեմբերի Փարիզի համաժողովին՝ Ս. Պարթևյանը Ռիզա բեյին դիմել էր.

«Կրնա՞մ հարցնել, Ռիզա պէյ, թէ այդ կոնգրէն ուղղակի կամ անուղղակի որեւէ դեր կամ ազդեցութիւն ունեցա՞ւ Թուրքիոյ ճակատագիրն յեղաշրջող վերջին դէպքերուն մէջ»:

Ահմեդ Ռիզան կտրուկ ու վճռական չեչտով պատասխանել էր. «Ո՛չ մէկ»:

Ապա խոսակցությունն այսպես էր ընթացել.

«– Բայց չէ՞ որ այդ կոնգրէին մէջ մնայուն բիւրօ մը կազմուեր էր, որ մասնակցող գլխաւոր մարմիններու կողմէ պաշտօն պիտի ունենար համերաշխ գործակցութիւնն ստեղծելու եւ շարժումը ղեկավարելու:

– Այդ մնայուն բիւրօն չկազմուեցաւ, գոյութիւն իսկ չունեցաւ»,– նույն կտրուկ չեչտով պատասխանել էր Ահմեդ Ռիզան:

«– Ուրեմն Պարիզի կոնգրէին մէջ կնքուած համերաշխութեան դաշինքը մեռեալ տա՞ռ մնաց:

– Համերաշխ գործակցութեան որեւէ քայլ չառնուեցաւ միա-

---

[1] **Մանուկ Գ. Ճիզմէճեան**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, էջ 141:

սին: Դուք ալ գիտէք, որ ամէն բան «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» կոմիտէին ջանքերովն եղաւ. միւսներն ոչ մէկ աջակցութիւն չբերին մեր ճիգին»:

Այստեղ Ս. Պարթևյանը Ռիզա բեյին հիշեցնում է, որ Նիազիի ապստամբության հաջորդ օրը, սահմանադրության հռչակումից տակավին մեկ-երկու շաբաթ առաջ, ինքը՝ Ռիզա բեյը, մի նամակով հաղորդել է կոնգրեսի անդամներին Մակեդոնիայում 3-րդ զորաբանակի ըմբոստացման մասին և իր ուրախությունը փոխանցել նրանց:

Այո՛, ասում է Ռիզա բեյը, «բայց ատիկա «համերաշխ գործակցութեան» հետ կապ չունի. այդ «գործունէութիւնը» մերը եղաւ միայն, «Օսմանեան Միութեան եւ Յառաջդիմութեան կոմիտէինը» եւ արդէն այդ նամակով մեր կոմիտէն կը դիմէր Պարիզի կոնգրէին մասնակցողներուն՝ աջակցութեան իրենց բաժինը խնդրելով մեր մղած շարժումին: Պատասխան անգամ չստացանք մեր այդ կոչին: Անոնցմէ մէկը միայն նամակ մը գրեր էր, ա՞ն ալ ըսելու համար, թէ բացարձակապէս անկարող է որեւէ աջակցութիւն բերելու մեր պայքարին»:

Պարթևյանին հետաքրքրել էր, թե Իթթիհադն արդյո՞ք մտադիր չէ կայսրության մեջ որևէ կարևոր հարց լուծելիս խորհրդակցել ոչ-թուրքական որևէ քաղաքական ուժի, այդ թվում, առաջին հերթին, Դաշնակցության հետ, որը 1907 թ. դեկտեմբերի Փարիզի համաժողովի ոգին էր, թուրքերի և երկրի մյուս ազգերի միջև սերտ համագործակցություն հաստատելու անխոնջ ջատագովը: Իթթիհադի պարագլխին նա դիմել էր հետևյալ հարցով.

«– Կ՚ուզէի գիտնալ, Ռիզա պէյ, թէ այսուհետ ի՞նչ պիտի ըլլայ Թուրքիոյ մեջ գտնուող ամէն ազգէ զանազան քօմիթէներու համերաշխ գործակցութիւնը ձեր քօմիթէին հետ, եւ թէ այս միջոցիս, Պոլիս, կա՞յ ամէն քօմիթէներէ այնպիսի խառն յանձնախումբ մը կամ մարմին մը, որ խորհրդակցութեամբ հետեւէր իրերու ընթացքին եւ համերաշխօրէն վարէր միջցեղային գործերն ու յարաբերութիւնները...»

«–Ո՛չ,– պատասխանում է Ռիզա բեյը: – Մենք այսուհետեւ հնչակիստ-դրօշակիստ չենք ճանչնար, եւ անոնց հետ խորհըր-

դակցելու պէտք չունինք, որովհետև պետութեան բաղկացուցիչ բոլոր ազգերն ալ կան մեր կուսակցութեան մէջ...»: Զրուցակցի դեմքին չեչտակի նայելով նա ավելացնում է. «Եթէ դրօշակիստներն ու հնչակիստները չարունակեն իրենց բրօբականտը, մենք պիտի յարձակինք անոնց վրայ, ու գիտցած եղէք որ **նորէն պիտի ջարդուիք** ...

– Հապա ազատութի՞ւնը, ա՞ն ի՞նչ կ՚ընէք»,– բացականչում է Պարթևյանը այդ հայտարարությունից զայրացած:

Ահմեդ Ռիզա բեյը փորձում է մեղմել իր արտաբերած դժնդակ բառերի թողած տպավորությունը, ասելով.

«– Ըսել չեմ ուզեր թէ մենք մեր հայրենակիցները պիտի ջարդենք, բայց ժողովուրդը կը ջարդէ, եթէ այդ բրօբականտը չարունակուի»[1]:

Հուլիսյան հեղափոխության լուրը Փարիզ հասնելուն պես Թուրք, մակեդոնացի, հույն, հայ և այլ քաղաքական վտարանդիներ շտապում են առաջին իսկ գնացքով վերադառնալ Պոլիս: Թուրք վտարանդիների թվում էին Ահմեդ Ռիզան՝ իր կուսակցության մի քանի գործիչներով, իշխան Սաբահէդդինի «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնության» կուսակցության ղեկավար-անդամներ, ինչպես և երիտթուրքական երրորդ քաղաքական կազմակերպության՝ «Շուրա-ի օսմանի» կուսակցության գործիչներ: Գնացքում բանավեճ է սկսվում Օսմանյան կայսրության ապագա պետական կառուցվածքի հարցի շուրջ: Ահմեդ Ռիզան չէր մասնակցում բանավեճին, քանի գնացքը դեռ անցնում էր Սերբիայով, բայց հենց մտնում են Թուրքական հողերը, նա տեղից վեր է թռչում և հայտարարում. «Եթե հայերը հարեն ապակենտրոնականությանը, մենք նրանց կջարդենք»[2]:

Այսպիսի մտայնություն ունեցող մարդիկ, Պոլիս վերադառնալով, չէին կարող փոխել իրենց վերաբերմունքը հայության հանդեպ:

---

[1] **«Մշակ»**, № 261, 25 նոյեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Հովիւ»**, № 39, 19 հոկտեմբերի 1909 թ.:

Հուսախաբությունը չուշացավ: Ոչ միայն երիտթուրքերը, այլև թուրքերն ընդհանրապես սկսեցին նորից խեթ նայել քրիստոնյաներին: Գինովությունը դեռ չէր անցել, երբ թուրք ամբոխը մայրաքաղաքի Բեշիկթաշ թաղամասում հոչոտեց Թեոդոր անունով մի հույն տղայի, որը համարձակվել էր նայել փողոցով անցնող մի թուրք կնոջ վրա[1]: Թուրքի աչքին նորից ամեն քրիստոնյա Թեոդոր էր: Անդրադառնալով այդ դեպքին Արշակ Զոպանյանն «Անահիտում» գրում էր, որ իշխանությունները մարդասպան հանցագործների նկատմամբ վարվեցին «հին-թրքական ձեւով»՝ որևէ մեկին չենթարկելով պատասխանատվության[2]:

Երիտթուրքերն արդեն բացեիբաց ազդարարում էին, թե գյավուրներն առաջվա պես իրենց կեղտոտ ձեռքերը պետք է հեռու պահեն մուսուլմանների սրբություններից և իսլամներին կոչ էին անում չխախտել իրենց կրոնի օրենքներն ու ավանդույթները:

Իթթիհադի ակումբները, որոնք, իբր կոչված էին լուսավորելու մուսուլմանների մտքերը, աստիճանաբար դարձան իսլամական կրոնի պատվարներ: Դրանցից մեկում հին Հնչակի առաջնորդներից Ստեփան Սապահ-Գյուլյանը կարդացել էր պատին փակցված հետևյալ պատգամները՝ ուղղված մուսուլման հավատացյալներին. «Օրական հինգ անգամ նամազ անելը պարտադիր է. մեղանչողը դիտողութեան եւ ծանր պատժի պիտի ենթարկուի. օրինական բոլոր ծոմապահութիւնները պիտի պահուեն: Կրօնական ծիսակատարութիւնների մէջ թերացողները մեր կուսակցութեան անդամները լինել չեն կարող: Ամէն միւսիւլման պիտի աշխատի, որ Իսլամութեան սուրբ դրօշը միշտ յաղթ ծածանի: Այս երկիրը օսմանցիների երկիրն է ... Բացի օսմանեան ազգութիւնից՝ ուրիշ ազգութիւն չը կայ»[3]:

Սահմանադրության նկատմամբ հայի անկեղծությունը ոչինչ

---

[1] Տե՛ս **«ՎԷՄ»**, № 1, հունվար-ապրիլ, 1935, էջ 14:

[2] Տե՛ս **«Անահիտ»**, № 12, ապրիլ-մայիս, 1909, էջ 44:

[3] **Ստեփան Սապահ-Գիւլեան**, Փոքր Հայքի յիշատակներ, հատ. Ա, մասն առաջին, էջ 195:

չարժեր Թուրքի համար: Նոր ռեժիմի պայմաններում ևս վերջինիս հոգեբանությունը չէր համապատասխանում հայի հոգեբանությանը: Եվ դա բնական էր: Հայի հաշվին ապրելու Թուրքի հոգեբանության մեջ դարեր ի վեր արմատացած մտայնությունն անհնար էր բեկել: Հայի համար մահացու մեղք էր արդարություն պահանջելը, քանզի Թուրքը դա դիտում էր որպես իր դեմ ուղղված լկտի ցույց: Հայ ռայայի քաղաքացիական հավասարության պահանջը հավասարակշռությունից հանում էր Թուրքին:

Օսմանյան կայսրության ժողովուրդների, առավելապես հայ ժողովրդի ոգևորության դեմ երիտԹուրքերի հանդես գալը լիովին համընկնում էր կատարված հեղաշրջման նկատմամբ քրդության ունեցած տրամադրություններին:

Երկրում ստեղծված ընդհանուր խանդավառությունից Թերևս դուրս էր մնացել միայն Քուրդիստանը: Ծայրահեղ հետամնացության մեջ գտնվող քուրդ ժողովրդական զանգվածների համար անըմբռնելի էին երիտԹուրքական հեղափոխության ազդարարած նպատակները: Ռուբեն Տեր-Մինասյանն այդ առթիվ գրել է. «Սահմանադրութիւնէն չահ ունէին միայն քիւրտ ռայա դասի զանգուածները, բայց անոնք ալ այնքան ճնչուած էին եւ այնքան յետամնաց էին, որ չէին ըմբռներ, Թէ ի՞նչ է արժէքը սահմանադրութեան: Անոնք չէին կրնար հասկնալ, Թէ սահմանադրութեան չնորհիւ կրնային ազատուիլ մի չարք չարիքներէ: Բայց իրենց գլխաւոր չարիքը ցեղապետերն էին իրենց աշիրաթներով եւ Թոռուններով, իրենց չէյխերով, իրենց համիդիէ գնդերով»[1]:

Իր արյունակից հարստահարիչներից անգԹորեն չահագործվող քուրդ ռայան նույնպես ահ ու սարսափի մեջ էր, մտածելով, Թե նոր իշխանություններն իրենց էլ պատիժների են ենԹարկելու՝ հայերի նկատմամբ կատարած ելուզակային անԹիվ-անհամար հանցագործությունների համար: Նրանցից ոմանք վախի Թելադրանքով հետզհետե մոտենում էին հայերին՝ նրանց հետ

---

[1] ***«Հայրենիք»,*** *№ 8 (271), օգոստոս, 1948, էջ 69:*

բարեկամական կապեր հաստատելու համար, միաժամանակ խոստովանում «անցյալի սխալները», ասելով. «Անցածն անցած է, մենք այժմ եղբայրներ ենք»[1]:

Ինչ վերաբերում է քուրդ աղաներին ու ցեղապետերին, որոնք տարիներ շարունակ Աբդուլ Համիդի բռնապետական ռեժիմի ջերմ պաշտպաններ էին և նրա հենարանը, նրանք հեղափոխության լուրն ընդունեցին բացահայտ մարտնչող թշնամանքով: Նրանք շատ դժգոհ էին սահմանադրությունից և շարունակում էին այս ու այն գավառամասերում իրենց շահատակությունները[2]: Այդ ավատապետերը տագնապում էին, թե նոր իշխանությունները կարող են երկրում օրինական կարգ հաստատել, որի պայմաններում անհնարին կլինի նախկինի պես ամեն ձևով հարստահարել քուրդ աշխատավորներին և շարունակել անլուր բռնությունները անպաշտպան հայերի նկատմամբ[3]: Նույն Ռուբենի վկայությամբ՝ «սահմանադրութիւնը եկած էր համարժէք մակարդակի վրայ դնելու հայութիւնը քրդութեան հետ, ինչ որ իրենց իրաւագրկումը կը համարէին, որովհետեւ անոնց համար հայը ֆլահ էր, աւելի ցած, քան իրենց ռայան — հայուն պատիւը, գոյքը իր սեփականութիւնն էր...»[4]:

Նույն իրողությունը հաստատում էր Ա-Դօ-ն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), գրելով.

«Կեղեքիչների այդ բանակը ոչ մի կերպ չէր կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ հայը կարող է իր հետ հաւասար իրաւունքներ ունենալ, դատարան դիմել, օրէնք ու արդարութիւն պահանջել, իր կալուածները յետ ուզել: Սահմանադրութիւնն այդ կեղեքիչ դասակարգի համար կեանքի եւ մահու խնդիր էր. սահմանադրութիւնով վերջ էր տրւում նրա ձրիակերութեանը, դիւրին ապրելու միջոցներին. հեշտ չէր մէկէն այդ արտօնութիւններից զրկուելը, հեշտ չէր երէկուայ կծկուած, կուչ

---

[1] **«Զանգակ»**, № 16, 25 հուլիսի 1908 թ.:

[2] Տե՛ս **Г. З. Алиев**, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, с. 113-114.

[3] Տե՛ս **«Զանգակ»**, № 44, 28 օգոստոսի 1908 թ.:

[4] **«Հայրենիք»**, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 69:

եկած հային, որի ստուերն անգամ նկատելի չէր, տեսնել դատարանի չէմքը բռնած ու կանգնած՝ այո, այդ բոլորը նրա համար կեանքի եւ մահու խնդիր էր: Նա չուզեց հաշտուել այդ բանի հետ, նա դիմեց միջոցների, դաւադրութիւն ծրագրեց սահմանադրութեան դէմ, բռնութեան նոր ձեւեր նիւթեց հայի դէմ»[1]:

Անդրադառնալով հայերի համար քրդերի ստեղծած անելանելի վիճակին, «Բիւզանդիոնը» հիշեցնում էր, որ աբդուլհամիդյան բռնապետության դեմ պայքարի ամբողջ ժամանակաշրջանում քրդությունն իր գործողություններով մշտապես խափանել է հայոց ազատագրական ջանքերը և օսմանյան հեղափոխությունից հետո էլ նույն եռանդով շարունակում է իր ոճրագործությունները: Այնուհետև թերթը ցավով նշում էր, որ նախորդ ռեժիմի պես նոր ռեժիմը նույնպես «ձեռք չի դպցներ» քուրդ ավազակաբարո աղիրեթապետերին: Սրանք շարունակում էին անխնա կեղեքել անպաշտպան հայ գիւղացիներին «որոնց մէջ կը բնակին եւ որոնց կռնակէն կ՚ապրին կը հարստանան, պատճառ դառնալով, որ արեւելեան գաւառներն հանապազ դժգոհ մնան, միշտ գրգռեալ, խռովեալ, որով ժողովուրդը չկարենայ հանդարտ սրտով աշխատիլ, արտադրել, ապրիլ, եւ հարստացնել երկիրը»[2]:

Քուրդ վերնախավի համար սահմանադրություն ասվածը հակառակ էր թե՛ իսլամական կրոնին, թե՛ գոյություն ունեցող, դարերով սրբագործված կարգին և թե՛ պետականությանը: Նրա կարծիքով՝ սահմանադրությունը Սալոնիկի դավանափոխ հրեության՝ դեոնմեների ստեղծագործությունն էր և ոչ թե երկրի առաջադիմության չահերով թելադրված արդյունք: Քուրդ երևելիների խոր համոզմամբ՝ սահմանադրություն ասվածը հայոց տիրապետությունն էր քրդերի վրա, որ հայը լինելու էր գլուխը, իսկ իրենք՝ նրա ոտքերը[3]:

Քրդերը տագնապի մեջ ընկան հատկապես սահմանադրու-

---

[1] **Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912, էջ 338-339:

[2] **«Բիւզանդիոն»**, № 3778, 28 փետրվարի (13 մարտի) 1909 թ.:

[3] Տե՛ս **«Հայրենիք»**, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 69:

թյան հռչակումից հետո եկած մեկ-երկու ամիսներին, երբ որոշ տեղերում կառավարությունն սկսել էր նրանց «նեղել»: Դա արտահայտվեց նրանով, որ զորքն առավել գաղանաբարո մի քանի քուրդ բեկերի հեռացրեց հայկական գյուղերից[1]: Ակնի, Արաբկիրի, Քեմախի, Զմշկածագի գավառներին ժամանակին մեծ վնասներ հասցրած Դերսիմի 12 քրդական ցեղեր կամավոր անձնատու եղան կառավարությանը[2]: Կ. Պոլսի «Ժամանակ» թերթին Ալաշկերտից օգոստոսի 10-ի թվով ուղարկած թղթակցության մեջ նշվում էր, որ չուրջ տասը տարի առաջ Արդուլլահ, Ալի և Ռըզկո քուրդ բեկերը եկել ու իջևանել էին հայկական Խըդրը գյուղի ծայրամասում, բայց աստիճանաբար թափանցելով գյուղ՝ հաստատվել են այնտեղ, բռնագրավել գյուղացիների հողերը, ունեցվածքը, անասունները և նրանց ճորտերի վերածել: «Բայց երկու օր առաջ,- հաղորդում էր թղթակիցը,- կառավարութիւնը յիշեալ բէկերու տներն ու քէօշկերը քար ու քանդ ըրաւ, իրենց ալ գեղէն դուրս հանեց: Յատօյի մեծ մարգը, որ Ալի բէկի կողմէն գրաւուած էր, տիրոջ վերադարձուցին»[3]:

Սահմանադրության հռչակումից հետո եկած առաջին օրերին ու շաբաթներին իշխանությունների ձեռնարկած նմանօրինակ առանձին դեպքերն իսկ խուճապ առաջացրին քուրդ աղաների ու բեկերի մոտ, որոնց մի մասը, վախենալով, որ կառավարությունն, իրոք, սկսել է հայերին պաշտպանել՝ փախավ Պարսկաստան[4]:

Զնայած որոշ դրական երևույթներին, հին ռեժիմի կաշառակեր պաշտոնյաները շարունակում էին իրենց շահատակությունները, իսկ քուրդ ավազակապետերը՝ կողոպուտը:

«Զանգակի» սեփական թղթակիցը օգոստոսի 6-ի թվով գրում էր. «Շատախի եւ Կարճկանի դրութիւնը կարելի է ասել վտանգաւոր է, որովհետեւ տեղական պաշտօնեաները միացած

---

[1] Տե՛ս **«Զանգակ»**, № 16, 25 հուլիսի 1908 թ.:

[2] **«Աւետաբեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 614:

[3] **«Ժամանակ»**, № 7, 22 սեպտեմբերի (4 հոկտեմբերի) 1908 թ.:

[4] Տե՛ս **Ազատ Համբարյան,** Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965, էջ 33:

քուրդ աղաներին (Շաքրի բեկ, Ջումա եւ այլք), ասպատակում են հայ գիւղերը, թալանում եւ սպանում մարդկանց: Առանձին տեղերում հայերը, որոնք քիչ ու միչ զենք ունէին, դիմադրում էին թալանիչներին: Դրանցից էր Շատախի Ծիծանց գյուղը, որը ենթարկվել էր 200-300 քրդերի հարձակման: Գյուղի երիտասարդներից Մտօն իր մի քանի ընկերներով երկու ընդհարում է ունենում քիւրդերի հետ: Առաջին անգամ Մտօն յաղթող է ելնում, իսկ երկրորդ անգամին, չրջապատուելով քրդերով և զինուորներով, երեք օր դիմադրելուց յետոյ, ստիպուած է լինում նահանջել, տալով երկու զոհ: Քիւրդերից երկուսը սպանում են, մէկը՝ վիրաւորում: Մտօյի հեռանալուց յետոյ քիւրդերը մտնում են Ծիծանց, սպանում 12 անմեղ մարդկանց, ապա գիւղը կողոպտելուց յետոյ հեռանում»[1]:

Օգոստոսի 29-ին «Զանգակ» թերթի սեփական թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում էր, որ Մուշի Իբրահիմ քուրդ փաշան ապստամբել է, որի հետևանքով սպանվել է 12 թուրք զինվոր: Այդ առիթով «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցության կոմիտեն հետևյալ հեռագիրն էր ուղարկել Դաշնակցության Մուշի կոմիտեին. «Բիթլիսի եւ Դիարբեքիրի աշիրէթները սահմանադրութեան յայտարարելուց յետոյ ցոյց են տալիս հակասահմանադրական տրամադրութիւններ: Լուրջ դէպքերի հաւանականութիւն կայ. խնդրում ենք միջամտել որպէս զի Մուշի միթէսարիֆի ազատ պաշտօնին նշանակուի ընդունակ եւ ազատամիտ անձն, միեւնոյն ժամանակ փոխել նաեւ միւս պաշտօնեաներին»[2]:

Մուշի դաշնակցականները զարմացած էին, որ Իթթիհադի կոմիտեն այդպիսի մեծ լիազորություններ է փոխանցել իրենց կոմիտեին: Բայց ավելի շատ զարմացել էին տեղի քուրդ առաջնորդները: Նրանք անհանգստացած էին, որ երիտթուրքերն այդպիսի մեծ վստահություն են տածել հայկական կուսակցությանը: Այդ մասին նրանք հայտնեցին Կ. Պոլսի քրդական կոմի-

---

[1] ***«Զանգակ»,*** *№ 48, 2 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, № 47, 31 օգոստոսի 1908 թ.:*

տեին, խնդրելով պարզել հարցի էությունը[1]: 1908 թ. հոկտեմբերի 8 (21)-ին Կ. Պոլսի քրդական կոմիտեն իր կենտրոնատեղի հրավիրեց ՀՅ դաշնակցության երեք ներկայացուցիչների՝ բանակցելու երկու ժողովուրդներին հետաքրքրող խնդիրների շուրջ: Քրդական կոմիտեի անդամները հետաքրքրվեցին, թե ի՞նչ է Դաշնակցության տեսակետը երկրի զարգացման հեռանկարների իմաստով: Ստանալով հանգամանալից բացատրություն, քուրդ գործիչներն այնուհետև ներկայացրին նույն հարցի վերաբերյալ իրենց պատկերացումները: Համաձայնություն կայացվեց, որ երկու ժողովուրդները պետք է լծվեն սահմանադրական կարգերի ամրապնդման գործին[2]:

Բայց եթե հայերի երազանքը սահմանադրական կարգերի ամրապնդումն էր, ապա քրդերի համար սահմանադրությունը թղթի մի կտոր էր պարզապես: Քրդական կոմիտեի խոստումը մնաց օդից կախված, քանի որ Հայաստանում շարունակվում էին քրդերի ավազակային հարձակումները հայկական գյուղերի վրա, հայերի ունեցվածքի և պատվի բռնաբարությունները, հարստահարումներն ու սպանությունները:

ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմինը 1908 թ. սեպտեմբերի վերջերին կառավարությանը ներկայացրեց մի բողոքագիր, որ Թուրքահայաստանի տեղական իշխանություններն ըստ էության որևէ միջոց չեն ձեռնարկում կանխելու համար քրդերի խժդժությունները, որի պատճառով հայ խաղաղ բնակչությունը շարունակում է բռնությունների ու հալածանքների ենթարկվել: Դաշնակցությունը նաև պահանջում էր օսմանյան մամուլի մեկական կամ երկուական թուրք, հայ, քուրդ և հույն լրագրողներից հանձնախումբ կազմել և Անատոլիա ուղարկել՝ տեղում անձամբ ստուգելու և քննելու դեպքերն ու գանգատները: ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմինը պատրաստակամություն էր հայտնում ստանձնելու հանձնախմբի անդամների ճանապարհածախսը[3]:

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատ. 85[2], թղթ. 20, վավ. 40[36], թ. 2:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **«Ժամանակ»**, № 1, 15 (28) հոկտեմբերի 1908 թ.:

Անդրադառնալով Դաշնակցության այդ բողոքագրին, երիտ-թուրքերի «Իկդամ» թերթը հոկտեմբերի 14-ին հրապարակել էր մի երկար պատասխանագիր, որով կասկածի տակ էր առնում Դաշնակցության բարձրացրած տագնապը, բայց միաժամանակ կառավարությանը հորդորում էր ընդունել նրա առաջարկը: «Ներքին գործոց նախարարության համար քնելու ժամանակը չէ,- գրում էր «Իկդամը»:- Պետք է երևան հանել թե ո՞վ է արդարը և ո՞վ՝ մեղավորը»[1]:

Բայց հանձնախումբն այնպես էլ չստեղծվեց:

Բազմազգ և այլացեղ կայսրության մեջ անկեղծ եղբայրության ստեղծման նախաձեռնությունն ամենից առաջ պետք է իշխանություններից գար: Եղբայրացման կոչերը համոզիչ կլինեին, եթե ժողովրդական տառապող զանգվածների մեջ կառավարությունը մղեր մի անդադրում և տևական մարդասիրական քարոզչություն, որի նպատակը պետք է լիներ՝ հանուն ընդհանուր շահերի խափանել օսմանյան պետության բոլոր ազգերի ներսում գոյություն ունեցող ազգայնամոլական ուժերի գործողությունները, կայսրության ազգերին համախմբել Իթթիհադի «հավասարություն» և «եղբայրություն» կարգախոսների շուրջը, համագործակցության կոչեր անել՝ համատեղ բարձրացնելու նոր, ազատական ռեժիմի չենքը:

Բայց այդպես չեղավ: Օսմանյան «ազատության» հովերը կայսրության բոլոր ազգերի մոտ այս կամ այն չափով սանձազերծեցին ազգային հատկանիշների այն հոռի կողմերը, որոնք պիտի նպաստեին ոչ թե ժողովուրդների համախմբմանը, այլ՝ հետագա խորթացմանը:

Նման ախտանիշները, զանազան երևակումներով, դրսևորվեցին նաև թուրքահայոց մեջ:

Շատ հայեր, հատկապես մայրաքաղաքում, ամեն կողմ հնչեցնում էին, թե «մենք ենք, որ մեր զոհերով նպաստել ենք Թուրքիայում ազատության հաղթանակին» կամ՝ «հենց իրենք՝ թուրքերն են խոստովանում, թե իրենց ուսուցիչները հայ հեղափոխականներն են եղել»:

---

[1] *«Իկդամի» սույն հոդվածը թարգմանաբար արտատպված է **«Ժամանակ»** օրաթերթի՝ 1908 թ. հոկտեմբերի 15 (28)-ի համարում (№ 1):*

Ճիշտ է, որ ազատության անդրանիկ օրերին Թուրք և քուրդ առանձին անձինք, այդ թվում երիտթուրք գործիչներ, հայերի հետ ունեցած մասնավոր զրույցների ընթացքում, մի քանի դեպքում՝ հավաքների ժամանակ, նրանց խոցված սրտերը սիրաչահելու համար, արել են նման արտահայտություններ, բայց արել են միայն **բանավոր**: Նրանցից գոնե մեկը **գրավոր** հետք չի թողել, թե «հայ հեղափոխականը եղել է իմ ուսուցիչը» և այլն:

Բայց երկու-երեք ամիս անց, որևէ Թուրք կամ քուրդ այլևս չէր խոստովանում, թե աբդուլհամիդյան բռնակալության դեմ հայերի ազատագրական կռիվը նպաստել է երիտթուրքական հեղափոխության հաղթանակին: Նրանք պապանձվել էին և այդ մասին այլևս որևէ խոսք չէին ասում: Եվ եթե հայերի մասին խոսք էլ լինում էր, ապա՝ զայրալից խոսք. սպառնալից տոնով հայտարարում էին, թե «հայերն արդեն զզվեցրել են մեզ», որ «մենք երբեք իրենց խոստովանություններ չենք արել, թե, իբր, հայ հեղափոխականներն են եղել մեր ուսուցիչները»: Այդպես ասելով, Թուրքերն ու քրդերն հայերին արդեն բացահայտորեն ցույց էին տալիս իրենց ատամները:

Իհարկե, վտանգը մեծ չէր լինի, եթե Թուրքահայությունը, Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների հետ, վերջնականապես և համապարփակ նվաճած լիներ իրական ազատություն, եթե երկիրն ունենար ոչ թե անվանական, այլ իսկական սահմանադրական կառավարություն, որը պատասխանատու լիներ խորհրդարանի՝ ժողովրդի ներկայացուցիչների առաջ: Բայց գործնականում այդպես չէր: Թյուրիմացաբար կարծելով, թե հեղափոխական կռվով, իրոք, արդեն ամբողջովին նվաճված է ընդհանուր ազատությունը, հայերից շատերը կարծում էին, թե «փառավոր կռվից» ու հաղթանակից հետո արդեն կարելի է խաղաղ կերպով ննջել հանգստության բարձերի վրա:

Եվ դա այն դեպքում, երբ Թուրքն ու քուրդը արթուն էին:

Հատկանշական է, որ երբ Թուրքահայ քաղաքական ու հասարակական գործիչներն անվերապահ հավատ էին տածում երիտթուրքերի հայտարարությունների և խոստումների հանդեպ, Թուրքերից շատերը զարմանք էին հայտնում, թե հայերը որքա՜ն միամիտ են: Թուրք պաշտոնյաներից մեկն իր ծանոթ

հայերին ասում էր. «Պետք չկա անտեղի և ավելորդ ցույցերի և ուրախությունների: Մենք ձեզնից լավ ենք ճանաչում մեր սուլթանին. նա ֆերմաններ է հրատարակում ձեզ ուրախացնելու համար: Եվ դուք գիտեք, թե որի՞ ուրախությունն է տևական՝ մե՞րը, թե՞ ձերը»[1]:

Պատահական չէ, որ մտամոլոր թուրքահայը եթե ուրախության պահեր էր ունենում, բայցևայնպես մի սև ամպ բոպեապես գալիս անցնում էր նրա վրայից, և կայտառ տրամադրության պահին իսկ վախը նրան կանգնեցնում էր ու պաչարում տխուր մտածումներով: Աբդուլհամիդյան հալածանքների ուրվականը, որ տարիներ շարունակ կանգնած էր եղել ամեն մի օսմանցի հայի առաջ, այնքան չչմեցրել և հուսահատեցրել էր նրան, որ նա չէր կարողանում հավատալ, թե արհավիրքի ոգին իսկապես հեռացել է և կարելի է նոր կյանքով ապրել: Մի կողմից սահմանադրություն ստանալու համար ուրախություն, մյուս կողմից՝ վախի ու սարսափի անանց զգացում: Դա պատահական չէր: Չէ՞ որ 1876 թ. կարճօրյա սահմանադրությունը 32 տարվա անլուր գազանությունների, արյան հեղեղների, աննկարագրելի սարսափների մի երկար շարք էր ծնել: Ամենաչնչին երևույթն իսկ կասկած էր առաջ բերում աչքը վախեցած ժողովրդի մեջ, թե միգուցե ջարդը նորից սկսվի:

Եվ նա չէր սխալվում: Իթթիհադի կատարած քայլերը հայության մոտ սկսել էին անվստահություն առաջ բերել սահմանադրության հանդեպ:

ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմինը 1908 թ. սեպտեմբերի 4-ի թվով շրջաբերական ուղարկեց Թուրքիայի իր կոմիտեներին, ուր ասված էր. «Մեզ[ի] հասած նամակներն ու հեռագրական տեղեկութիւնները կը մատնանշեն այն հանգամանքը թէ հայկական նահանգներու մէկ քանի վայրերուն մէջ հայ ժողովուրդը տակաւին վստահութիւն չունի նոր ըէժիմին նկատմամբ եւ կը մնայ կասկածի ու անվստահութեան ենթարկուած:

---

[1] Տե՛ս **Վեր. Յակոբ Կիւրլեքեան**, *Հայուն հրաշալի գոյատեւումը եւ յառաջդիմութիւնը անցեալի եւ ներկայի ապագայ հեռատեսիլքով, Շիքակօ, 1970, էջ 19:*

Այս վարանման պատճառները, ի միջի այլոց, այն է, որ 1) Հակառակ եղած խոստումներուն, դեռ շատ տեղեր կը շարունակեն պաշտօնավարել հին կարգերու անձնուէր գործակալներ, հարստահարիչ ու բռնաւոր պաշտօնեաներ, 2) Զանազան պաշտօնեաներ չեն դադրիր գրգռելէ մէկ ժողովուրդը միւսին դէմ, 3) Ահագին տարբերութիւն նկատելի է Պոլսոյ մէջ տիրող տրամադրութեան եւ գաւառներու իրական վիճակին մէջ. 4) Այլեւայլ պէյեր, ցեղապետներ, վալիներ ու գայմագամներ կը շարունակեն հին ձեւով խրոխտալ, սպառնալ եւ ի հարկին ծաղրել նոր կարգերը:

Ընկերնե՛ր,

Ոչպէ պէտք չէ կորսնցնել վերջ տալու այդ անհանգիստ ու ծանր կացութեան: Ուստի կը խնդրենք ջանալ, ձեր ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով հաւատք ներշնչել ժողովուրդին՝ դէպի ազատութեան յաղթանակը, բերելով այն գիտակցութեան, որ քանի բոլոր ժողովուրդները կը մնան համերաշխ ու պատրաստ պաշտպանելու իրենց իրաւունքները՝ հին բէժիմը չի կրնար գլուխ բարձրացնել եւ կը մնայ թաղուած ընդմիշտ»[1]:

Տեղական կոմիտեներն ինչպե՞ս կարող էին հավատ ներշնչել ժողովրդին, որն իր աչքով տեսնում էր, թե շուրջն ինչ է կատարվում: Իսկ նա տեսնում էր, որ գնալով ավելի ու ավելի իրական է դառնում հակահեղափոխության վտանգը: Այդ վտանգն ամենից շատ կարելի էր սպասել քրդերից Ասիայում և ալբանացիներից Եվրոպայում, այսինքն՝ Թուրքիայի ամենահետամնաց տարրերից: Քրդերի և ալբանացիների ուժը նրանց զինված լինելու մեջ էր: Նրանց այդ կողմից անվտանգ դարձնելու համար բավական էր կայսրության քրդաշատ վայրերում զինել հայերին, իսկ եվրոպական մասերում՝ մակեդոնացիներին: Եթե այդ չէր արվելու, միջոցը մնում էր կայսրության բոլոր քաղաքացիներին, առանց ազգային ու կրոնական խտրության, զինաթափ անելը: Բայց Իթթիհադի կառավարությունը շահագրգռված չէր որևէ փոփոխություն կատարելու:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 254, թ. 3:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Զնայած չդադարող հալածանքներին, աբդուլհամիդյան բռնապետության տարիներին Թուրքահայությունը մեծ ջանքերով կարողացել էր դպրոցական ուսուցման օրինակելի համակարգ ստեղծել: Հայկական դպրոցը կայսրության մեջ առանձնանում էր իր բարձր արդյունավետությամբ: «Հայոց դպրոցները տաճկականից Թուով աւելի եւ որակով բարձր էին»[1],- վկայում էր Հրաչյա Աճառյանը:

Օսմանյան հեղափոխությունից հետո հայոց կրթական գործի կազմակերպումը ցավագին խնդիրներից մեկը դարձավ: Հանրային միտքը պատրաստվել էր դպրոցական հարցին նվիրել իր ստեղծագործ կարողությունները և լավագույն ջանքերը, գտնելով, որ մինչ այդ կատարածը չատ անբավարար է:

Դպրոցական գործը բարելավելու ու զարգացնելու համար տարբեր կողմերից Կ. Պոլսի հայոց պատրիարքարան էին հասնում բարի ցանկություններ և խելացի առաջարկություններ: Բայց այդ ամենը, պատրիարքարանի կամքին հակառակ, դեմ էին առնում անհաղթահարելի արգելքների:

Հայկական ինքնավարության գաղափարը վճռականապես մերժելուն զուգընթաց, երիտթուրքական կառավարությունը ճչտում էր իր դիրքը նաև հայկական դպրոցի նկատմամբ:

Քանի որ Իթթիհադի օրակարգային հիմնական խնդիրը կայսրության ամբողջականության պահպանումը և, հետևապես, բոլոր քաղաքացիների իրավահավասարության սկզբունքի արմատավորման նպատակով երկրի բոլոր ազգերի ձուլումն էր Թուրք էթնոսի մեջ, ուստի բնական է, որ նա այդ ընթացքում պետք է վերացներ ճանապարհի գլխավոր խոչընդոտներից մեկը՝ հայկական ազգային դպրոցը:

Այլազգիների դպրոցները փակելու հարցն իշխանությունները պարզաբանում էին մամուլի էջերում, ինչպես նաև նրանց

---

[1] ***Հրաչեայ Աճառեան***, *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 67:*

քաղաքական ու կրոնական ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում:

Հույներն ու բուլղարները ոչ միայն իրենց մտքով չէին անցկացնում իրենց ազգային դպրոցները վերացնելը, այլև կառավարության առջև բարձրացրել էին դրանք պետության բյուջեից ֆինանսավորելու հարցը: Հայերն այդ մասին նույնիսկ չէին մտածում: Նրանց հոգսը իրենց իսկ միջոցներով հայկական ազգային դպրոցների պահպանումն էր:

Դեռ 1908 թ. օգոստոսի վերջերին ազգային-կրոնական բոլոր փոքրամասնություններին առաջարկել էին իրենց հաստատությունների անվանումներից վերցնել ***ազգային*** *բառը: Այդ ուղղությամբ հատկապես աղմկում էր Հուսեին Ջահիդի «Թանին» թերթը, որի էջերում խնդիրը բազմակողմանի «հիմնավորում» էր երիտթուրք «փիլիսոփա» Ռիզա Թևֆիկը: Առաջարկ-հրահանգի հիման վրա՝* ***ազգային դպրոց*** *բառակապակցությունից դուրս նետվեց «ազգային» բառը:*

Ըստ կառավարության կրթական ծրագրի, կայսրության բոլոր, այդ թվում տարրական, դպրոցներում դասավանդման լեզուն լինելու էր թուրքերենը: Լիցեյները լինելու էին ոչ թե ըստ ազգությունների՝ հունական, բուլղարական, հայկական, այլ՝ պետական, այսինքն՝ բոլորի համար, ուր գործածվելու էր միայն պետական լեզուն՝ թուրքերենը: Ազգային դպրոցներն առավելագույնը 3-4 տարվա ընթացքում պետք է լիովին վերանային և պետական ***խառը*** *դպրոցներ դառնային:*

Երիտթուրքերը գտնում էին, որ տարբեր ազգությունների երեխաներին համատեղ կրթելը բոլոր օսմանցիներին միավորող ազդու միջոց է, իսկ կայսրության 27 լեզուներով գործող ազգային դպրոցները նրանց բաժան-բաժան են անում և առանձնացնում: Միայն մի ընդհանուր պետական լեզվով կատարվող դասավանդումը կարող է կազմավորել ու ստեղծել հայրենիքի անվտանգության ու ապահովության մասին միատեսակ մտածող հայրենասեր քաղաքացիներ:

«Մշակը» ռուսական "Речь" («Ռեչ») թերթից արտատպել էր ***Կ.*** *Պոլսի իր թղթակից Լ. Նեմյանովի հարցազրույցը Ռիզա Թևֆիկի հետ: Երբ թղթակիցը վերջինիս մատնացույց էր արել*

Ավստրո-Հունգարիայի օրինակը, որտեղ դպրոցներում դասավանդումը կատարվում էր 8 լեզվով և դա ընավ չէր խանգարում երկրի ամրությանն ու ամբողջականությանը, նա պատասխանել էր, թե երիտթուրքերը մտադիր չեն Թուրքիայից Ավստրիա ստեղծել, ապա ավելացրել էր. «Բացի Թուրքերէնից, որը կայսրութեան միակ պետական լեզուն է, ուրիշ ոչ մի լեզու չենք թույլատրելու»[1]:

Նախատեսվում էր, որ սկզբնական շրջանում, երբ տեղական լեզուները պիտի բռնեին վերացման ճանապարհը, ազգային ստորին և միջնակարգ դպրոցներում դեռևս որոշ ժամանակ կարող էր պահպանվել փոքրամասնությունների լեզուների ավանդումը: Իսկ լիցեյներում, որտեղ դասավանդումը կատարվելու էր բացառապես թուրքերենով, եթե տվյալ ազգությունից հավաքվեին որոշ թվով ուսանողներ, ապա նրանց համար կարող էին ավանդել ոչ միայն իրենց՝ տեղական, լեզուները, ասենք՝ հայերեն, հունարեն և այլն, այլև ազգային գրականություն և պատմություն, բայց՝ միայն թուրքերենով:

«Մենք ձգտում ենք ընդհանուրի բարօրութեանը, ձգտում ենք միացնել ամէնքին ու նրանցից ստեղծել հզօր ժողովուրդ»[2],- ասում էր Ռիզա Թևֆիկը:

Այս հայացքները բնորոշ էին ոչ միայն երիտթուրքերին, այլև թուրքական հասարակության մեծամասնությանը: Այդպես էին մտածում լրագրողները, սպաները, մտավոր պարապմունքի տեր անձինք: Եթե ոմանք որոշ զիջումներ էին ենթադրում, դա էլ միայն ստորին դպրոցների համար: Օրինակ՝ տեսակետ կար, որ տարրական դպրոցներում կարելի է թույլատրել մայրենի լեզվի դասավանդումը, բայց միջնակարգ դպրոցի վերաբերյալ թուրքերը որևէ զիջում չէին անում: Թերևս բացառություն էին իշխան Սաբահէդդինը և նրա Լիգան, որոնք դեմ էին երիտթուրքերի դպրոցական ծրագրին:

«Մենք ոչ մի կերպ չենք ուզում ոչնչացնել միւս ազգութիւն-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 207, 21 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

ների ոչ արտօնութիւնները եւ ոչ էլ դպրոցները,- ասում էր Սաբահէդդինը:- Թող ամէն մի ազգութիւն ուսանի իր մայրենի լեզուով՝ ոչ միայն ստորին, այլեւ միջնակարգ դպրոցներում: ... Մենք մտադիր չենք միւս ազգությունների շլնքին փաթաթել թուրքերէնը: Առանց դրան էլ նրանք կամովին կսովորեն մեր լեզուն: Այդ կամաւորութիւնն աւելի եւս կամրապնդի կայսրութեան միասնութիւնը, եւ բոլոր ազգութիւնները միմեանց հետ ամուր կշաղկապուեն օսմանեան հայրենիքում»[1]:

Բայց ազգային դպրոցների մասին Սաբահէդդինի հայացքները պաշտպանություն չէին գտնում թուրքերի մոտ:

Այդքանից հետո, թուրքահայ մտավորականության որոշ շրջաններում դեռ չարունակվում էր շրջանառվել աբդուլհամիդյան զուլումի ժամանակներում մտահղացված այն գաղափարը, թե հայերը, ելնելով սեփական շահերից, պետք է իրենց ձեռքը վերցնեն նաև քրդերի ուսման և կրթության գործը, մի դեպքում՝ ապագա հայկական դպրոցներում ընդունել ու հայ երեխաների հետ կրթել քուրդ երեխաներին, մյուս դեպքում՝ հայության միջոցներով քրդերի մեջ բանալ զուտ քրդական դպրոցներ: Նրանք իրենց այդ առաջարկը հիմնավորում էին այն բանով, որ քուրդ աճող սերնդին ուսում ու կրթություն տալով, հնարավոր կլինի քաղաքակրթել նրան՝ գալիքի քրդությանը, որպեսզի նա վերջ տա կողոպուտներին ու կեղեքումներին, հարստահարումներին ու սպանություններին, որոնց միշտ ենթակա էր հայությունը:

Այդ տեսակետն ուներ լուրջ առարկողներ, որոնք գտնում էին, թե ներկա պայմաններում դա խելացի բան չէ: Նրանք նշում էին, որ նախ, նման գաղափարը պարունակում է թաքնված անմիտ ու վնասակար ազգայնամոլական ցանկություն՝ հայացնել քրդերը: Պետք է թողնել, որ նրանք իրենց լեզվով ստեղծեն իրենց գիրը, ունենան սեփական դպրոցներ, տնօրինեն իրենց մշակութային կյանքը: Հայերը, իբրև բարի դրացիներ, իբրև նույն երկրի քաղաքացիներ, միայն կարող են նյութական աջակցություն ցույց տալ իրենց բարեգործությամբ, նվերներով և այլն:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 207, 21 սեպտեմբերի 1908 թ.:*

Երբ քրդերը դպրոցներ բացելու կձեռնարկեն, այն ժամանակ կարելի է նրանց խորհուրդներ տալ, թե դպրոցական գործը ինչպես պետք է կազմակերպել: Բայց, այնուամենայնիվ, քրդերի մեջ ուսում տարածելու հոգսը առաջինը պետք է իր վրա վերցնի օսմանյան կառավարությունը:

Երկրորդ, հայերի այդպիսի քայլը կարող է կասկածներ և զանազան թյուրիմացություններ առաջ բերել Թուրքերի մեջ, որոնք կարող են խեթ աչքով նայել նման ձեռնարկներին և դրանցում հայ-քրդական միասնություն ստեղծելու ինչ-որ թաքուն քաղաքական նպատակներ տեսնել:

Հայտնի է, որ մինչև երիտթուրքական հեղափոխությունը, Թուրքահայաստանում հայկական կրթական կազմակերպությունները միշտ ընդառաջում էին այն քրդերին, որոնք հայկական դպրոցներում սովորելու ցանկություն էին հայտնում: Ժամանակին, օրինակ, Վանի կենտրոնական վարժարան էին հաճախում քաղաքի նշանավոր քուրդ անձանց որդիները՝ հատկապես հայերեն ու ֆրանսերեն սովորելու համար:

Սակայն, ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ հայերի ուժերից վեր էր քրդերի համար զուտ քրդական դպրոցներ բացելը, քանի որ հազարների էր հասնում այն խեղճ ու անտերունչ հայկական գյուղերի թիվը, որոնք կրթության միջոցներից բոլորովին զուրկ էին:

Եվ հետո: Ինչո՞ւ միայն քրդերը: Հայաստանում քրդերից զատ ապրում էին ասորիներ, եզդիներ, ղզլբաշներ, բոչաներ և այլն, որոնք նույնքան կարոտ էին ուսումի:

Հայությունն ինչպե՞ս կարող էր մտածել այլազգիների կրթական ծրագրերի մասին, երբ ինքը կանգնած էր իր կրթական համակարգի վերացման սպառնալիքի առջև, անհավասար կռիվ էր մղում գոյության համար, ճիգ էր անում մի պատառ հաց հասցնելու սիրելիներին, փրկելու ընտանիքների անարգված պատիվը: Գաղափարը որքան անիրական էր, նույնքան բազում հարցականներ առաջացնող:

ՄԱՄՈՒԼԸ

Կարելի է ասել, թե որևէ երկիր չուներ այնքան սնամեջ ու իմաստազուրկ մամուլ, ինչպիսին ուներ Թուրքիան մինչև հեղափոխությունը: Այդ մամուլին բնորոշ էին մտքի թռիչքների ու գաղափարների աղքատությունը, հասարակական հարցերի թեթև, մակերեսային արծարծումը, հանրության պահանջների նկատմամբ անհոգությունը, հաճոյատենչ ու անբովանդակ բուլվարային զրույցները:

Սուլթան Աբդուլ Համիդի բռնակալության օրոք կայսրության մեջ լույս էին տեսնում փոքր թվով թերթեր ու հանդեսներ: Կոստանդնուպոլսում թուրքերեն տպագրվում էր միայն երեք ամենօրյա թերթ: Դրանք փոքր ծավալի պարբերականներ էին՝ 5-15 հազար օրինակով: Կային նաև մի քանի շաբաթական, երկշաբաթյա և մեկամսյա հանդեսներ, որոնք շատ չնչին տարածում և նշանակություն ունեին:

Արտասահմանցիների համար մայրաքաղաքում անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն տպագրվող մի քանի թերթերից ամեն մեկի տպաքանակը հինգ հազար օրինակից չէր անցնում:

Մինչ հեղափոխությունը Թուրքիայում տպագրվում էին այլալեզու պարբերականներ: Կ. Պոլսում հունարեն լույս տեսնող պարբերականների առաջատարներն էին «Նեոս լոգոս» («Նոր խոսք») և «Դախիդրոմու» («Սուրհանդակ») թերթերը: Մայրաքաղաքում տպագրվում էին նաև բուլղարերեն, արաբերեն և այլ լեզուներով պարբերականներ:

Հայկական մամուլը Թուրքիայում սկզբնավորվել էր 19-րդ դարի 30-ական թվականներին: Այդ տարիներին Պոլսում և Զմյուռնիայում (Իզմիր) տպագրվում էր մեկական պարբերական: Հաջորդ տասնամյակում դրանց թիվը 7-ի հասավ: 1850-60-ական թվականներին տպարաններ են հիմնվում և թերթեր հրատարակվում նաև Վանում, Նիկոմեդիայում, Մուշում և Սեբաստիայում[1]:

---

[1] Տե՛ս **Վարդան Պարսամյան**, *Հայ ազատագրական շարժումների պատմությունից. ուսումնասիրություն և փաստաթղթեր, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 32:*

Աբդուլհամիդյան ժամանակաշրջանում հայկական մամուլը Թուրքիայում օսմանյան մամուլի պատկերն էր՝ իր սնամեջ էությամբ և ցցուն անբովանդակությամբ: Միայն Կ. Պոլսում լույս էին տեսնում «Հայրենիք», «Արեւելք», «Բիւզանդիոն», «Աւետաբեր», հայատառ թուրքերեն «Մանզումէի էֆքեար» և «Ճերիտէի չարգիյէ», արաբատառ թուրքերեն տպագրվող, բայց նաև հայերեն խորագրով «Մեճմուաի ախպար» թերթերը:

Որպես կանոն, մանավանդ Կ. Պոլսի հայկական թերթերում, հեղաշրջումից առաջ միայն գովեստներ ու ձոներ էին՝ ուղղված սուլթան Աբդուլ Համիդին, շողոքորթություններ հին ռեժիմին, ջերմագին խոսքեր այս կամ այն հարուստի կամ ազդեցիկ դիրք ունեցող էֆենդու մասին: Իհարկե, թերթերի էջերում երբեմն երևում էին հասարակական այս կամ այն երևույթի մասին եզովպոսյան լեզվով գրված աննշան բողոքներ, բայց այնքան երկչոտ ու երկդիմի, որ շատ անգամ նույնիսկ դժվար էր իսկական բողոքը տարբերել զուտ փաստական նկարագրությունից: Անհնար էր հայկական թերթերի էջերում սկզբունքային գաղափարական պայքար փնտրել: Պոլսահայ մամուլի համար քաղաքական բանավեճ, բառիս իսկական իմաստով, գոյություն չուներ: Եթե թերթերում երբեմն-երբեմն մեկը մյուսի վրա հարձակումներ էին լինում, պատճառը, համենայնդեպս, գաղափարական չէր: Էլ չենք խոսում այն մասին, որ գիտական վեճերը, լինեին դրանք հասարակական, դաստիարակչական, զուտ գրական կամ բարոյագիտական խնդիրների շուրջ, երբեք նրանց չէին զբաղեցնում: Եվ ինչպե՞ս կարող էին տեսական հարցերի շուրջ վեճեր լինել, երբ մամուլը, ճնշված գրաքննական զարհուրելի հարկադրանքի տակ, սկզբունքային տեսակետներ չուներ, երբ պարբերականները, իբրև ուղեցույց, որևէ արմատական գաղափարախոսություն չունեին: Թերթերը, աբդուլհամիդյան ռեժիմի ահից ստիպված, ընթերցողներին կերակրում էին առօրյա չեզոք ու անցողիկ, հիմնականում կենցաղային «նյութերով»:

Կ. Պոլսի հայկական մամուլն ուներ մի ուրիշ ցավալի կողմ ևս: Թեպետ նա հավակնում էր ողջ տաճկահայության խոհերի ու ցանկությունների արտահայտիչը լինել, բայց, չնչին բացա-

ռությունները, չատ քիչ էր զբաղվում գավառին հուզող հարցերով: Կարելի է ասել, որ պոլսահայ մամուլի հորիզոնը Բոսֆորից արևելք չէր տարածվում:

Ավելի ողբալի վիճակում էր գտնվում գավառի մամուլը: Կազմելով Օսմանյան կայսրության ծայրամասերից մեկը, զուրկ հաղորդակցության դյուրին միջոցներից, և փոստային արդյունավետ, ժամանակի պահանջներին համապատասխանող ծառայությունից, Թուրքահայաստանը ոչ միայն ի վիճակի չէր ունենալու մամուլի բավարար թվով օրգաններ, այլև ժամանակին ծանոթանալու Կ. Պոլսում տպագրվող հայկական թերթերին:

Մամուլը ենթակա էր դաժան գրաքննության: Աբդուլհամիդյան տիրող ռեժիմը, որը կապել էր մարդկանց լեզուները, կտրում էր խոսքը նրանց շուրթերին և սպանում միտքը իր ծագման սկզբին, բնական է, որ պիտի խեղդեր նաև հասարակական շարժման ու զարգացման ամենաազդեցիկ գործոններից մեկին՝ մամուլին:

Լույսընծայման համար թույլտվություն ստանալուց հետո պարբերական բոլոր հրատարակությունները ենթարկվում էին նախնական ընթերցման, և եթե դրանցից որևէ մեկը երկրորդ անգամ թույլ էր տալիս «նույնպիսի սխալ», ապա արգելվում էր որոշակի ժամկետով կամ ընդմիշտ[1]:

Աբդուլհամիդյան գրաքննությունը ոչ միայն ջնջում էր իրեն հաճելի չերևացող պատմությունները, այլև իսլամական կրոնի ու պատվիրանների՝ աննպաստ թվացող մասերը[2]:

Բացառելով «անցանկալի» հոդվածների ու նյութերի տպագրությունը, միաժամանակ կարգադրված էր պարբերաբար տեղեկություններ հաղորդել սուլթանի ամուր առողջության մասին[3]:

Խստիվ արգելված էր նյութեր տպագրել օտարերկրյա միապետների սպանության մասին: Թուրքական թերթերը ստիպ-

---

[1] Տե՛ս *“Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”*, с. 91.

[2] Տե՛ս **Ատոմ**, Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910, էջ 6:

[3] Տե՛ս *“Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”*, с. 91.

ված էին կեղծել, թե Ավստրո-Հունգարիայի կայսրուհու մահը եղել է կրծհեղձուկից, որևէ բառ չէր գրվել 1903 թ. սերբական հեղափոխության, Սերբիայի թագավորի ու թագուհու սպանության մասին: Ընթերցողն անտեղյակ էր Պարսկաստանում մեջլիսի և Ռուսաստանում պետական դումայի հրավիրումից: Երբեմն գրաքննությունը «գտնում էր» հանրահաշվական կամ քիմիական բանաձևերում «թաքնված միտքը»: Այսպես, AH=O բանաձևը Թուրք գրաքննիչին ստիպել էր մտածել, թե արդյո՞ք հեղինակը չի ցանկացել ասել, որ Աբդուլ Համիդը (Abdul Hamid) հավասար է զրոյի և ջնջել էր կասկածելի բանաձևը[1]:

Նման գրաքննության էին ենթարկվում կայսրության մեջ օտար լեզուներով լույս տեսնող թերթերը, ամսագրերն ու գրքերը, նաև այն գրքերն ու պարբերականները, որոնք երկիր էին մտնում արտասահմանից: Դրանցում տպագրված հոդվածների անցանկալի տեղերը կտրվում էին կամ, ինչպես Ռուսաստանում, ծածկվում էին գրաքննչական սև ներկերով[2]:

Գիտական և պատմական այն ստեղծագործությունները, որոնցում նույնիսկ աննշան քննադատություն կար Թուրքիայի հասցեին, չէին կարող մուտք գործել կայսրության սահմաններից ներս: Եթե նման գրքերից առանձին օրինակներ, այնուամենայնիվ, հնարավոր էր լինում անցկացնել սահմանով, ապա դա արվում էր խորամանկությունների դիմելով կամ մաքսային պաշտոնյաներին կաշառելով[3]:

Ըստ Ելդրզ քեոշկի հաստատած հատուկ ցուցակի՝ խստիվ արգելված էր տպագրել մի շարք անձնանուններ՝ Միդհատ փաշա, սուլթան Մուրադ V (որը Աբդուլ Համիդի տիրակալության ընթացքում, մինչև իր մահը՝ 1904 թ. եղել էր կալանքի տակ) և այլք, ինչպես նաև աշխարհագրական անուններ, առաջին հերթին՝ «Հայաստան» անունը[4]: «Արաբիա», «Մակեդոնիա», «Ալբանիա» պատմական անունների հիշատակումը օսմանյան

---

[1] Տե՛ս *“Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”*, с. 91.

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 90:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 91:

պետության ամբողջականության պահպանման տեսակետից վնասակար չէր դիտվում, բայց ավերված ու արյունլվա Հայաստանի պատմական անվան հիշատակումը համարվում էր չափազանց վնասակար, որովհետև այդ անվանը կցված էր Եվրոպայի առաջարկած բարենորոգումների հարցը: Զարմանալի չէ, ուրեմն, որ այդ անունը գրելը, տպագրելը, նույնիսկ արտասանելը ոճիր էր համարվում: Միաժամանակ, Թուրքերը Եվրոպայում գտել էին աչխարհագիրներ (Կիպերտ և այլոք), որոնք «Հայաստան» բառը փոխարինել էին «Քուրդիստանով», դրանով իսկ ասելով, թե այլևս պատմության ասպարեզից ջնջված է Հայաստանը[1]:

Ելդզի նչված ցուցակով արգելված էին «սահմանադրություն», «հեղափոխություն», «բռնակալություն», «հանրապետություն», «հայրենիք», «մահափորձ», «ռումբ», «դինամիտ» և այլ «վտանգավոր» բառերը:

Թուրքիայի հրապարակախոսներն ու լրագրողները, բացի գրելու չնորհքից, պետք է ունենային նաև արգելված բառերի ու մտքերի փոխարեն նորերն ստեղծելու և դրանք այլաբանորեն արտահայտելու մի առանձին հատկություն ևս: Եվ ստեղծվել էր դարձվածքների մի տարօրինակ խառնուրդ:

Այդ տեսակետից մեծ փորձ ունեին հատկապես հայ լրագրողներն ու գրահրատարակիչները: Աբդուլհամիդյան բռնակալության տասնամյակներին հայկական մամուլն ստիպված էր ամենահասարակ լուրերն իսկ հաղորդել այլաբանորեն՝ գործադրելով զգուչության ծայրահեղ միջոցներ:

Այսպես, օրինակ՝ «Հայաստանի» փոխարեն գործածվում էր «երկիր մը Անատոլիին մեջ», «հեղափոխության» փոխարեն՝ «քիչ մը անհանգստություն», «ազգային» բառի փոխարեն՝ «տոհմային», «հայրենիքի» փոխարեն՝ «բնակավայր»: Օրինակ՝ Կ. Պոլսի հայկական թերթերը փոխանակ գրելու «ազգային կրթություն», ստիպված գրում էին «տոհմային կրթություն», թերթի համապատասխան մասում «Ազգային լուրեր»-ի փոխա-

---

[1] Տե՛ս **Ատոմ**, Պետական վերանորոգութիւնն ու հողային հարցը, էջ 7:

րեն դնում էին «Պատրիարքարանի լուրեր» խորագիրը: Իսկ երբ սպանվում էր օսմանյան մի որևէ բարձրաստիճան անձ, թեկուզ արտասահմանում, մամուլն այդ մասին հաղորդում էր ժպիտ հարուցող այսպիսի բառակապակցությամբ. «Սանկ գէչ զգաց ինքը զինքը եւ յանկարծամահ եղաւ...»:

Ահա՛ այսպիսին էր մամուլի վիճակը աբդուլհամիդյան ժամանակներում՝ թշվառ, ստրկական:

Աբդուլ Համիդ II-ի բռնապետական ռեժիմի փլուզումից հետո, հեղափոխական շարժման վերելքի պայմաններում Թուրքիայի մամուլն առաջինն էր, որ իր ուսերից նետեց «զուլումի» շղթաները: 1908 թ. հուլիսի 24-ին Կ. Պոլսում տեղի ունեցավ մայրաքաղաքի թերթերի հրատարակիչների, աշխատակիցների և լրագրողների ժողով: Հավաքվածները որոշեցին այսուհետև իրենց հոդվածներն ու նյութերը չներկայացնել գրաքննչին՝ ստուգման և հաստատման համար:

Միաժամանակ, հենվելով միջհատյան սահմանադրության համապատասխան հոդվածի (№ 12) վրա՝ հեղափոխության հենց առաջին օրերին սուլթանական իրադեով ազդարարվեց մամուլի ազատություն և վերացվեց գրաքննությունը: Վերացվեցին բոլոր երեք գրաքննչական կոմիտեները, որոնք ղեկավարում էին գրքերի և ոչ քաղաքական պարբերական մամուլի գրաքննական գործերը: Մամուլի բաժանմունքի հաստիքները պակասեցին մինչև երեք-չորս մարդու, իսկ նրանց պարտականությունը համարվեց պարզապես գրանցել, թե որտեղ ինչ նոր հրատարակչություն և տպարան է հայտնվել[1]: «Կայսերական այս բարեհաճ հրամանին չնորհիւ օսմանցիք ազատութեան արժանացած մամուլ մը կ'ունենան»[2],- գրում էր «Աւետաբերը»:

Թեև ներքին գործերի նախարարության առաջին քայլերից մեկն այն եղավ, որ արգելվեց լրագրերի էջերում մեկնաբանություններ անել հրատարակված սուլթանական իրադեի վերաբերյալ, բայց մամուլի ազատության հռչակումը բավական էր,

---

[1] *Տե՛ս* ***"Проблемы истории Турции"*** *(сборник статей), изд. "Наука", Москва, 1978, с. 83.*

[2] ***«Աւետաբեր»,*** *№ 31, 1 օգոստոսի 1908 թ.:*

որ գոնե մի կարճ ժամանակ Թուրքիայում ասպարեզից ջնջվեին այն դրակոնական օրենքները, որոնք Աբդուլ Համիդի միահեծան կառավարման տարիներին խեղդում էին ազատ գրավոր խոսքը:

Գրաքննության վերացումը մեծ ոգևորություն էր ներշնչել մամուլին, որը գրում էր ամեն ինչի մասին: Իզմիրի «Արեւելեան մամուլ» թերթի խմբագիրը «Ազատութեան դրօշին տակ» վերտառությամբ հոդվածում իր մեծագույն ուրախությունն էր հայտնում՝ չեչտելով. «Հիմա այլ եւս Ազատութիւն կայ, ... ոչ թէ միայն իրաւունքի պաշտպանութեան, հապա նաեւ մամուլին, որ իրենց ըրածն իսկ չգիտցող գրաքննիչներու ձեռք խաղալիք եղած, ո՛չ կրնար զեղծումները խայտառակել, ո՛չ կրնար ճշմարտութիւնները պարզել եւ ո՛չ ալ արդարութեան կոչում ընել:

Մհ, հաւատացէ՛ք որ խմբագիրներս ամէնէն երջանիկ արարածներն ենք հիմա, որովհետեւ ինչեր ունէինք գրելու համար եւ չէինք կրնար գրել, ինչեր ունէինք խայտառակելիք եւ չէինք կրնար նոյն իսկ խայտառակուելու արժանի եղողներուն երեսը նայելու, վախնալով որ անդին ահաւոր եւ քստմնեցուցիչ անդունդ մը կայ որ կատաղի առիւծի մը պէս պիտի կրնայ կուլ տալ մեզի»[1]*:*

Բացի սուլթանի անձից, լրագրերն ազատ էին քննադատելու ամեն պաշտոնյայի, ամեն մարդու:

Այս բոլոր փոփոխությունների շնորհիվ լրագրերի տպաքանակները բարձրացան հսկայական չափերով: Զնայած դրան, հասարակությունն արագորեն սպառում էր թերթերի մինչև վերջին օրինակը: Կայսրության սահմաններից ներս մուտքն ազատ էր բոլոր և ամեն տեսակ, նույնիսկ ծայրահեղ հեղափոխական, թերթերի համար: Օրինակ՝ Փորթուգալյանի «Արմենիա» թերթը, 23 տարի արգելված մնալուց հետո, սկսեց ազատորեն մուտք գործել Թուրքիա: Վան քաղաքի նշանավոր մտավորականներից մեկը՝ Համբարձում Երամյանը, վկայում էր. «Արդէն Պոլսոյ, Կովկասի եւ արտասահմանի ուրիշ կողմերը հրատարակուած թերթերն ու պարբերականները կ՚ողողէին մեր

---

[1] ***«Արեւելեան մամուլ»,*** *№ 30, 22 հուլիսի 1908 թ.:*

հրապարակը: Միայն մեր դպրոցը 20է աւելի հայ եւ միանգամայն օտար թերթեր կը ստանար»[1]: Նույնը հաստատում էր Թիֆլիսի «Զանգակ» թերթի Վանի թղթակիցը[2]:

Մի խոսքով՝ մամուլի ազատությունը լիակատար էր: «Մամուլի ազատութիւնը կատարեալ է»[3],- իր նամակներից մեկում գրում էր Գրիգոր Զոհրապը: Ո՛չ գրաքննիչից երկյուղ կար, ո՛չ պատասխանատվության կանչվելու վախ, ո՛չ էլ մեծագումար տուգանքների սպառնալիք: Մարդիկ հարբած էին այն հնարավորություններից, որ կարող էին ասել ու գրել ցանկացածը. այնքան երկարատև էր եղել լռությունը[*]:

Նույնը Հրաչյա Աճառյանը տարիներ անց վկայում էր այսպես. «Մամուլի ազատութիւնն ամէն սահմանադրական երկրի անհրաժեշտ պայմանն է, այս կողմից, ինչպէս գիտենք, Տաճկաստանը կատարեալ խեղճ վիճակի մէջ էր: Սահմանադրութիւնը տուաւ փափագների լրացումը: Մամուլը չտեսնուած ազատութեան հասաւ: Հայերը ո՛չ միայն նորից տպագրեցին ու հազարաւոր օրինակներով տարածեցին արգելուած հայ գրականութիւնը, այլ եւ իրաւունք ունէին ազատ քննադատելու կառավարութեան ներկայ եւ անցեալ գործունէութիւնը:... Աւելորդ է ասել թէ հայ թատրոնը, հայ երգը, ժողովները նոյնպէս վայելում էին կատարեալ ազատութիւն»[4]:

Ի դեպ, սուլթանական իրադեի հրատարակումից հետո եկած առաջին օրերին, գրաքննիչները, չցանկանալով թե չկարողանալով հարմարվել ստեղծված նոր իրավիճակին, չէին ենթարկվում բարձրագույն հրամանին և շարունակում էին խմբագրու-

---

[1] ***Համբարձում Երամեան,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ, էջ 124:*

[2] ***«Զանգակ»,*** *№ 48, 2 սեպտեմբերի 1908 թ.:*

[3] *ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, վավ. 44, թ. 44:*

[*] *Իսկ այդ նույն ժամանակ հարևան Ռուսաստանում,1905-1907 թթ. հեղափոխական օրերի ժամանակավոր ազատություններից հետո, մամուլը նախկինի պես ենթարկված էր դաժան հալածանքների:*

[4] ***Հրաչեայ Աճառեան,*** *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչեւ 1915 թ.), էջ 66:*

թյուններ մտնել, բայց լրագրերի անձնակազմերն ստիպված էին ուժով արգելել նրանց մուտքն իրենց մոտ:

Իհարկե, թերթերի որոշ խմբագիրներ դեռ առաջին ամիսներին մտավախություն էին դրսևորում, որ եթե քաղաքական իրավիճակը երկրում փոխվի, գրաքննության նախկին ժամանակները գուցե նորից վրա կհասնեն: Զուր չէ, որ «Թանին» թերթում Հուսեյն Ջահիդ Էֆենդին գրում էր, թե մամուլի ազատության դեմ ձեռնարկած առաջին քայլը կնշանակի Թուրքիայի ազատության դեմ գործած առաջին ոճիրը: Որքան որ մամուլն ազատ մնա, բնավ վախ չպիտի ունենալ, թե հին ռեժիմը կրկին կվերադառնա, հայտարարում էր նա:

Առաջին հերթին թուրքական մամուլն էր, որ ոգևորությամբ ողջունեց գրաքննության և գաղտնի ոստիկանության վերացումը: Կ. Պոլսում մամուլի օրգանների մեծ մասը թուրքերեն էր: Անցման շրջանում, երբ թուրքական հասարակական օրգանները դեռ մի դժգույն պատկեր էին ներկայացնում և չափավոր ազատականությունից այն կողմ չէին անցնում, բնականաբար, դրանց մամուլն էլ չափավորության հայելին պիտի լիներ: Նոր պայմաններում այդ մամուլն իր հիմնական զանգվածով հեղափոխական գաղափարների ձայնափող էր դարձել: Թուրքական թերթերը, նույնիսկ նրանք, որոնք նախկինում Աբդուլ Համիդի նվիրյալ երկրպագուներ էին, նրա քաղաքականության գովերգուները, հիմա մի օրից մյուսը երդմնազանց էին դարձել և նոր իշխանություններին ծառայության լծվել: Նրանք զարմանալի արագությամբ իրենց մորթը ներկեցին ազատամտական, սահմանադրական ներկով և սկսեցին վաճառել նոր ապրանք, օրվա պահանջած ապրանքը:

Դե ոչինչ, եթե դա նույնիսկ բարոյական չէր: Կարևորն այն էր, որ բացվել էր թուրք լրագրողների սանձված լեզուն: Թերթերի էջերը լցված էին հոդվածներով, որոնց հեղինակները պատմում էին բռնապետության՝ բովանդակ երկրին հասցրած սրտամորմոք ավերների և վնասների մասին, միաժամանակ պարզում էին նոր կյանքի բաղձալի հեռանկարները, ընթերցողներին բացատրում հայտարարված ազատությունների, հավասարության և եղբայրության սկզբունքները, գովերգում այդ գաղափարների

հաղթանակի համար իրենց կյանքը զոհաբերած անվեհեր հերոսներին:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո առաջին ամիսներին ամեն տեսակ հրատարակչական գործունեության բուռն վերելք սկսվեց Թուրքիայում: 1876 թ. սահմանադրության վերականգնումից հետո հենց երրորդ օրը Մամուլի բաժանմունքը նոր թերթեր ու ամսագրեր տպագրելու մոտ 150 դիմում ստացավ: Սեպտեմբերի կեսերին այդպիսի դիմումների թիվը հասավ 200-ի[1], իսկ մեկ ամիս հետո՝ 250-ի[2]: Միայն Պոլսում օրաթերթերի թիվը սեպտեմբերի սկզբներին անցնում էր 20-ից[3]:

Նոր ստեղծված օրգանները երբեմն գոյատևում էին միայն մեկ ամիս կամ չաբաթ և փակվում էին միջոցների կամ փորձի բացակայության պատճառով: Ընդ որում դրան մինչև 1909 թ. միայն Կ. Պոլսում տարբեր լեզուներով լույս ընծայվեց մոտ 100 անուն նոր թերթ ու ամսագիր, այդ թվում 30-ը՝ թուրքերեն[4]:

Արագորեն աճեց պարբերական հրատարակությունների թիվը նահանգներում: 1908 թ. երկրորդ կեսին Թուրքիայի վիլայեթներում ստեղծվեց 30-ից ավելի թերթ ու ամսագիր, 1909 թ.՝ ևս մոտ 40 անուն: 1910 թ. Անատոլիայում հրատարակվում էր արդեն հարյուրից ավելի թուրքերեն, հայերեն և հունարեն թերթ ու ամսագիր: Հեղափոխությունից հետո մեկուկես տարվա ընթացքում Կ. Պոլսում, Անատոլիայում և Ռումելիայում գրանցվել է 353 անուն պարբերական[5]: Իզմիրում հրատարակվում էր ավելի քան 30 թերթ ու ամսագիր, այդ թվում 10-ը՝ թուրքերեն: Իզմիրից բացի, նահանգային մամուլի կարևոր կենտրոններ էին դարձել Կոնիան (6 թերթ), Բուրսան (4) և Տրապիզոնը (4)[6]: Բացի վիլայեթների կառավարական պաշտոնական թերթերից,

---

[1] Տե՛ս **"Проблемы истории Турции"** (сборник статей), с. 83.

[2] Տե՛ս **«Գործ»,** № 39, 26 հոկտեմբերի 1908 թ.:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **К. Юст,** Анатолийская печать, Тифлис, 1922, с. 11.

[5] Տե՛ս **"Проблемы истории Турции"** (сборник статей), с. 83.

[6] Տե՛ս նույն տեղում:

Փոքր Ասիայի և Ռումելիայի բոլոր խոշոր քաղաքներում փորձեր էին արվում կարգավորելու մասնավոր թերթերի կանոնավոր հրատարակումը:

Չնայած այդ ամենին, թե՛ Թուրքերեն և թե՛ այլալեզու հրատարակությունների թիվն ու տարածումը ամբողջ Թուրքիայում զգալիորեն զիջում էր նույնիսկ առանձին-առանձին վերցրած Հարևան Սերբիայից, Բուլղարիայից և Հունաստանից[1]:

Մայրաքաղաքում Թուրքերեն տպագրվող թերթերից ամենից առաջ աչքի էր ընկնում «Իկդամը» («Խիզախություն»), որը գտնվում էր թուրքական մամուլի ընդհանուր դաշտի ամենաաջ կողմում և շաբաթների ընթացքում դարձել էր Թուրքիայում ամենատարածված և ամենաազդեցիկ թերթը՝ տպագրվելով 50000 օրինակով[2]: «Իկդամը» ջերմորեն պաշտպանում էր կայսրության ամբողջականությունն ու օսմանյան ցեղի գերիշխանությունը, և համոզված էր, որ թուրքահպատակ մանր ազգությունները տեսանելի ապագայում պետք է ձուլվեն և կազմեն մի ամբողջություն:

«Իկդամից» դեպի ձախ (կարելի է ասել՝ կենտրոնից բավական աջ) էր թեքված «Թանինը» («Ղողանջ»), որի ղեկավարն էր Թուրք հայտնի հրապարակախոս Հուսեյն Ջահիդը: 1908-ի օգոստոսի 2-ին հիմնադրված այդ թերթը դարձավ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կենտրոնական օրգանը[3]: Նրա օրական տպաքանակը 30-40 հազար օրինակ էր կազմում[4]: Թերթը պահանջում էր նախարարությունների խիստ պատասխանատվություն և հաշվետվություն ապագա խորհրդարանի առաջ և, առհասարակ, հետևում էր «սուլթանը իշխելու է, բայց ոչ կառավարելու» սկզբունքին, այսինքն՝ սուլթանը մնալու է իբրև օսմանյան երկրի փաղիշահ, իսկ բոլոր գործերը կառավարելու են ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչները: Ազգային հարցում «Թանինը» հետևում էր «Միություն և առաջադիմություն»

---

[1] Տե՛ս *“Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”*, с. 92-93.

[2] Տե՛ս *“Проблемы истории Турции”* (сборник статей), с. 85.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս *“Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)”*, с. 40.

կոմիտեի ծրագրին, պահանջում էր բոլոր քրիստոնյա ազգությունների արտոնյալ վիճակի վերացում և իրավահավասարություն: Թերթը դեմ էր ազգային համամասնական ընտրություններին՝ չեչտելով այն միտքը, թե բոլորը օսմանյան հպատակներ են և ոչ առանձին ազգություններ, ուստի չպետք է ուրույն ազգային պահանջներ առաջ մղվեն, քանի որ ընդհանուր հայրենիքի բարօրությունից բոլորն են օգտվելու:

Թուրքերի հասկացողությամբ «ծայրահեղ ձախակողմյան» էր համարվում «Հուրրիեթ» («Ազատություն») թերթը: Մյուս թուրքական թերթերից նա մեծ մասամբ տարբերվում էր այն բանով, որ բացի քաղաքական հարցերից, մասամբ զբաղվում էր նաև սոցիալական խնդիրներով: Մասնավորապես կարևոր տեղ էր տալիս գյուղացիության վիճակին և բարենորոգչական միջոցներ էր առաջարկում գյուղացիական տնտեսությունները բարեկարգելու համար, իհարկե, շատ հեռու մնալով ագրարային արմատական վերափոխումներ կատարելու պահանջից:

«Ծայրահեղ ձախակողմյան» էր դիտվում «Մեթինը» («Ամուր») ևս, որն իր դավանանքով գրեթե չէր տարբերվում «Հուրրիեթից»:

Այդ չորս պարբերականներից բացի, Կ. Պոլսում լույս էին տեսնում ուրիշ թուրքերեն թերթեր նույնպես, ինչպես օրինակ՝ «Սաբահ» («Առավոտ»), «Իտտիֆագ» («Համաձայնություն»), «Միլլեթ» («Ազգ»), «Միզան» («Կշեռք»), «Սերվեթի ֆյունուն» («Մշակութային հարստություն») և այլն, որոնք քիչ տարածում ունեին, բացի այդ՝ ներքին բովանդակությամբ և ուղղությամբ մի առանձին արժեք չէին ներկայացնում: Թուրքական լրագրական դաշտում բուն պահպանողական կամ բուն հեղափոխական նոր թերթեր չկային[*]*:*

Սակայն բոլոր թուրքական թերթերը մի ընդհանրություն ունեին. նրանք չափավոր ազատականությունից այն կողմ չէին

---

[*] *Թուրքալեզու պարբերականներից բացի Կ. Պոլսում եվրոպական լեզուներով լույս էին տեսնում "Istanbul" («Ստամբուլ»), "Jeune Turque" («Ժեոն-թյուրք»), "La Turquie" («Լա Թյուրքի»), "Levant Herald" («Լևանտ-Հերալդ»), "Osmanischer Leut" («Օսմանիչեր լոյտ») պարբերականները:*

անցնում և ավելի կամ պակաս չափով տոգորված էին համաօսմանյան մի ազգ կազմելու տենչով: Թերևս դա էր պատճառը, որ այդ պարբերականները հենց սկզբից վերապահ վերաբերմունք ունեին այս կամ այն ոչ Թուրք ժողովրդի շրջանակներում տեղի ունեցող բողոքների, ազգային ցավերն ամոքելու պահանջների նկատմամբ:

Թուրքական մամուլում նաև որակական փոփոխություններ էին տեղի ունենում: Նա դարձել էր երկրի քաղաքական կյանքի խթանիչ ուժը: Վերածնվում և ծավալվում էր երգիծական մամուլը, որը փաստորեն վերացված էր նախորդ ռեժիմի ժամանակ: Ընդարձակվում էր գրական և գիտահանրամատչելի պարբերականների շրջանակը: Թուրքական թերթերում ու հանդեսներում աչխուժորեն քննարկվում էին սահմանադրական կառավարման, խորհրդարանական կարգի, ընտրական համակարգի, քաղաքացիների քաղաքական ու անձնական իրավունքների, նախարարների պատասխանատվության և այլ բազմազան հարցեր: Թեժ քննարկումներ էին ծավալվել նաև ժողովրդական կրթության, գրականության և արվեստի զարգացման ուղիների, կանանց ազատագրման, Թուրքերեն լեզվի և գրականության հետագա զարգացման ուղիների մասին և այլն:

Թերթերի ու ամսագրերի թվի աճը ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ նահանգներում, նրանց քաղաքական նրբերանգների ու թեմատիկ կողմնորոշումների մեծ բազմազանությունը, տպաքանակների նկատելի ավելացումը վկայում էին, որ Թուրքական պարբերական մամուլն սկսել է դիմել Թուրք բնակչության ամենալայն խավերին[1]:

Մամուլի ազատությունը չատ նպաստավոր եղավ կայսրության այլալեզու պարբերականների համար, որոնք նույնպես բուռն առաջադիմություն ապրեցին գոնե թվի տեսակետից:

Հեղափոխությունից անմիջապես հետո երևան եկած բազ-

---

[1] *Հեղափոխությունից հետո Թուրքական մամուլի հարցերի մասին տե՛ս* ***"'Тюркологический сборник",*** *1973, Москва, 1975, с. 193-203,* ***К. Юст,*** *Анатолийская печать, с. 17, 19, 20,* ***И. И. Голобородько****, Старая и новая Турция, Москва, с. 112,* ***"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)"****, с. 193:*

մալեզու թերթերը ջերմորեն ողջունեցին բռնապետության վերացումը, սահմանադրության վերականգնումը և խորհրդարանի առաջիկա հրավիրումը:

Մայրաքաղաքում լույս տեսնող ֆրանսերեն և եվրոպալեզու այլ թերթեր իրենց էջերում տպագրում էին երիտթուրքերի մասին արտասահմանյան գործիչների արտահայտած նպաստավոր կարծիքները, իրենց տեսակետներն էին արտահայտում Իթթիհադի ծրագրային նպատակների իրագործման առավել գնահատելի մեթոդներ ընտրելու համար, մտահոգված էին, որ սկսված բարեփոխումներն իրենց համար դժվար են ճանապարհ հարթում դեպի հեռու ընկած վիլայեթները և այլն: «La Turquie» («Թուրքիա») ֆրանսերեն թերթը նույնիսկ բարձրացնում էր սահմանադրության մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հարցը, որպեսզի ընտրվելիք օսմանյան խորհրդարանն ի վիճակի լինի սեփական նախաձեռնությամբ ընդունելու օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Բայց ֆրանսերեն ու անգլերեն լրագրերն ընդհանուր առմամբ ավելի զուսպ էին և կատարված իրադարձությունների ու դեպքերի մասին հիմնականում տալիս էին համառոտ տեղեկություններ՝ խուսափելով մեկնաբանություններ կամ մասնագիտական խոր վերլուծություններ կատարել:

Վերը հիշատակած «Նեոս լոդոս», «Դախիդրոմու» և հունական մյուս թերթերը անվերապահորեն կանգնել էին նոր ռեժիմի կողմը, համարյա ամեն համարում իշխանություններին հավաստիացնում էին, որ երկրի հունական համայնքն ամբողջովին լծված է Իթթիհադի ծրագրերի իրականացման գործին: Նույնը վերաբերում էր նաև մյուս ազգային համայնքներում հրատարակվող մամուլի օրգաններին:

Բնականաբար, մեզ առավելապես հետաքրքրում է հեղափոխությունից հետո թուրքահայ մամուլի վիճակը:

Մամուլի մասին սուլթանական իրադեից հետո բարձր չեչտերով սկսեցին հնչել հայ լրագրողների խանդավառ ձայները: Վերացել էր հայության մտածողությունն աքցանի մեջ առած գրաքննությունը, և հայկական գիտակցությունն այժմ հնարավորություն էր ստանում ազատորեն մչակելու և զարգացնելու

իր հայրենիքի՝ Թուրքահայաստանի հետ առնչվող բարեկեցությունն և առաջադիմության հատուկ հարցերը, որոնք մինչ այդ խստորեն արգելված թեմաներ էին: Հայ կյանքի հորիզոնում ամենուրեք սկսում էին կնճռոտ ու հուզիչ կերպարանք առնել բազում կենսական խնդիրներ, բոլորն էլ կարևոր, բոլորն էլ ստիպողական, որոնց լուսաբանումն ու մեկնաբանումը ենթադրում էին զորավոր լրջություն, խելամտություն, նաև՝ անհրաժեշտ կամք: Մասնավորապես հարկ էր ջանալ փոփոխել հասարակական կյանքի հոռի կողմերը, ժողովրդին ցույց տալ իր իսկական շահը, վար բերել նրա միամտությունն ու համբերությունը շահագործող ապազգային տարրերի դիմակները, նման անձանց հանձնել բարոյականության բարձր սկզբունքներ դավանող լուսավորյալ հայորդիների անողոք մտրակումներին[1]:

Հենց սկզբից պոլսահայ մամուլի առանձին մտահոգություններից մեկը դարձավ գրաքննության արգելած բառերի ու տերմինների և դրանց իմաստային նշանակության վերականգնումը: Թերթերի էջերում օրվա վիճաբանության նյութ դարձավ «Հայաստան» բառի գործածության խնդիրը: Ոմանք առաջարկում էին բերան չառնել այդ բառը, որ կարող էր վատ մեկնաբանությունների տեղիք տալ և չարամիտներին առիթ ծառայել՝ շահագործելու թուրք ամբոխի դյուրահավատությունը: Մութ տարրերն այդ բառը կարող էին մեկնել այն մտքով, թե հայերը կրկին անջատում են պահանջում կայսրությունից: Ուրիշներն այլ կարծիք էին հայտնում, ասելով, թե «Հայաստան» նշանակում է հայերի բնակության տեղ, և որ այդ բառը գործածել չի նշանակում անջատական ձգտումներ արտահայտել: Այնուամենայնիվ, մեկ-երկու թերթերում դեռ հուլիս-օգոստոս ամիսներին մի քանի անգամ երևաց «Հայաստան» տերմինը:

Փոփոխված իրադրության պայմաններում հայկական մամուլը փորձում էր ազատության օդը լիուլի ըմպել: Հատկապես պոլսահայ թերթերը, որոնք սովոր էին ստրկական հնազանդությամբ սողալ հին ռեժիմի ոտքերի տակ, սկսեցին երիտթուրքե-

---

[1] Տե՛ս **«Ազդակ»,** № 12, 28 փետրվարի (13 մարտի) 1909 թ.:

ին ու սուլթանին ներբողներ կարդալ հանուն ազատության ու սահմանադրության:

Հեղափոխության հաղթանակի հաջորդ օրն իսկ «Արեւելքը» անհուն երախտագիտության իր խոսքերն ավարտում էր «Աստուած երկար կեանք չնորհէ Վեհ. Սուլթանին»[1] խոսքերով, որոնք անցնում էին համարից համար: Նույն թերթը հուլիսի 26-ին ներբողում էր. «Աշխարհի բոլոր տէրութիւններն ու իշխանները ափ ի բերան, ապշահար մնացին անշուշտ, տեսնելով անօրինակ ոյժը այն մեծ Վեհապետին, որ իր երկիրը կը բռնէր ու մէկ շարժումով քանի մը դար առաջ կը քաշէր յառաջդիմութեան ճամբուն մէջ...»[2]:

Սուլթանին փառաբանելու գործում հետ չէին մնում պոլսահայ մյուս թերթերը, որոնք լույս էին տեսնում նախքան հեղափոխությունը՝ «Բիւզանդիոնը», «Աւետաբերը», «Հայրենիքը»:

«Աւետաբերը» խանդավառ էր, որ Թուրքիայի հայ ժողովուրդն ընդմիշտ երախտապարտ է «Վեհ. Սուլթան Աբդուլ Համիդ կայսրին» այն բանի համար, որ նա միշտ անսահման հոգատար է եղել իր նկատմամբ: Ի պատասխան այդ հայրական հոգատարության՝ հայությունն ամեն տեսակ անձնվեր ծառայություններ է մատուցել օսմանյան հայրենիքին: «Հայ ազգը,- գրում էր թերթը,- իր մէջէն հասցուցած է անհատներ, որոնք բացի վարչութենէն երբեմն երկրին գեղարուեստի, բժշկութեան, ելմտական, ճարտարարուեստի եւ գիտութեան ամէն ճիւղերու մէջ նշանաւոր հանդիսացած են: Գազէզի նման դէմք մը՝ երկրին փողերանոցը կանոնաւորած, Տատեանները վառօդարանը հաստատած, Պալեանները ճարտարապետութիւնը կենդանացուցած, Յակոբ փաշա երկրին ելմտական վիճակը բարեկարգած, Խօրասանճեան՝ քաղաքային բժշկութեան կանոնաւորութեան սատար եղած, Աղաթոն երկրին երկրագործական զարգացման աշխատած, Օտեան, Տատեան արտաքին յարաբերութեան մէջ դիրք գրաւած, Միհէնտիսեան մը թուրք տառերը ձուլած և դեռ

---

[1] **«Արեւելք»,** *№ 6847, 12 հուլիսի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, 26 հուլիսի 1908 թ.:*

չատեր, որոնց անունը թուել երկար պիտի ըլլայ, աշխատած են ոչ իբր վարձկաններ որ այս երկրէն կ՚ապրին, այլ իբրեւ այս երկրին ամէնէն հարազատ զաւակները, իբրեւ այս տան անդամները: Հայ ազգն այսուհետ աւելի մեծ եռանդով իր միտքն ու ջանքը կը նուիրէ օսմանեան հայրենիքին»[1]:

Կարծես խոսքն այն մարդու մասին չէր, որ ամբողջ 30 տարի այլակրոն ու այլացեղ կայսրության մեջ զոհերին գրգռում էր զոհերի դեմ, անողորմ բռունցքով խեղդում ամեն մի ընդդիմություն, որպեսզի ազգային բոլոր հավաքականություններն իրենց զգան միայնակ, հնարավորություն չունենան օգնության ձեռք մեկնելու մեկմեկու և համատեղ դուրս գալու չարիքի դեմ: Կարծես սուլթան Աբդուլ Համիդ II կոչվող այդ նույն գազանը հարյուր հազարավոր հայերի չէր հոշոտել:

«Մշակը» գրում էր. «Կատարեալ զգուանք է զգում մարդ, տեսնելով, թէ ինչպէս հայ ժողովրդի արժանապատուութիւնը, այն ժողովրդի, որի 300.000 զաւակներին սրով-թրով խողխողել է, տանջել ու նահատակել է սուլթանը, ոտնակոխ է լինում հայ ամբոխի արձակած «փաղիշահըմըզ չոք եաշա» գոչիւններով»[2]:

Պոլսահայ խմբագրապետերի անվայելուչ կեցվածքը խստորեն դատապարտում էին հնչակյան բոլոր հրատարակությունները, Դաշնակցության մամուլի առանձին օրգաններ, անկուսակցական անկախ թերթեր: Իզմիրի «Արեւելեան մամուլը» հարց էր տալիս. «Հայ պատուական անունին արժանի՞ են այդ թշուառ արարածները: Խեղճ աղբաճանճեր ... Մէջերնին կան որ, քարբերու ճարպիկութեամբ մը, անմիջապէս կը ճկին նոր ռեժիմին պայմաններուն: Նողկալի ճկունութիւն»[3]: Նույն թերթն իր մի ուրիշ համարում ցավով նշում էր. «Կրնա՞նք ըսել, որ Ազատութիւնը – այնքան ջերմագին երազուած – մեր Մամուլին նոր թռիչք, նոր կեանք, նոր հոգի պարգեւեց: Արդեօք ժողովուրդը լիովին կ՚օգտուի՞, կը կրթուի՞ արդի հայ լրագրութենէն ու կ՚ազ-

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[1], թղթ. 4, վավ. 25[31], թ. 1 (Թերթերի կտրոնների հավաքածու):*

[2] ***«Մշակ»,*** *№ 31, 1 օգոստոսի 1908 թ.:*

[3] ***«Արեւելեան մամուլ»,*** *№ 34, 19 օգոստոսի 1908 թ.:*

նուանա՞յ անոր նկարագիրը: Շատ դիւրին է այս հարցումներուն «այո՛» պատասխանել, եթէ ուզենք մենք մեզ խաբել մեր խղճին վրայ քար մը դնելով: Բայց չի՞ բաւեր որքան որ տուժեցինք ինքնախաբէութեան հետեւանքէն: Ուստի քաջ ըլլանք խոստովանելու որ, Թրքահայ մամուլը, շատ չնչին փոքրամասնութիւն մը մէկ կողմ առնելով, այսօր երեւոյթն ունի նոր տեսակի Արշակաւանի մը կամ դիցաբանութեան հոչակաւոր ախոռին (ակնարկութիւնը վերաբերում է հունական դիցաբանության մեջ Ավգեոս թագավորի ախոռին:- Հ. Ս.), որուն մաքրագործումը կը կարօտի հսկայ ջանքերու ու անվկանդ կամեցողութիւններու»[1]:

«Դրօշակը» գրում էր.

«Զափը պահպանելու առաքինութիւնը տրուած չէ Կ. Պոլսի մեր հրապարակագիրներին: Ազատ մամուլի հրատարակումն առիթ եղաւ նրանց համար՝ ստրկամտութեան նոր ու այլանդակ ցոյցեր անելու, մի կողմից՝ ազատութեան ապոթեոզ (փառաբանանք:- Հ. Ս.), միւս կողմից՝ սանձարձակ ներբողներ ազատութեան մեծագոյն դահճի հասցէին: Եւ այդ ներբողները այնքան խանդավառ են, այնքան զգացուած, որ դժուարանում ենք հաւատալ, թէ նրանք կեղծ են: Վրդովեցուցիչ է: Դա «փոթորիկ» չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն: Աւելի կոպիտ վիրաւորանք անկարելի է հասցնել այս մեր օրերում հայ ժողովրդին ու հարիւր հազարաւոր նահատակների յիշատակին: Ոչ ոք չի պահանջում այդ խմբագիրներից՝ ազատութեան օրերում արշաւանք սկսել Աբդուլ Համիդի դէմ. բայց հօ կարելի էր՝ թէկուզ յանուն վայելչութեան՝ լռութեան տալ այդ չարաչուք անունը...»[2]:

Նույն բողոքն ու տրտունջն արտաբերում էր ՍԴՀԿ կենտրոնական օրգան «Հնչակ» թերթը.

«Զը խորհող, չը մտածող ամբոխը, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, եռանդուն ցոյցեր է անում սուլթանին: Անգիտակից այդ ամբոխն է, որ բռնակալութիւնների համար պատուանդա՛ն է հանդիսանում ամէն տեղ եւ ամէն ժամանակ: «Սահմա-

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[1], թղթ. 4, վավ. 25[31], թ. 2 (Թերթերի կտրոնների հավաքածու):

[2] Նույն տեղում, թ. 3:

նադրութեան» վերահաստատումի համար սուլթան Համիդին արեւշատութիւն ցանկացող եւ կատաղօրէն ծափեր զարկող ամբոխը վաղը նոյնքան ընդունակ է նոյն այդ արեւշատութեան խօսքերը անել՝ եթէ «սահմանադրութեան» ջնջումը գայ – այդ մենք տեսած ենք անցեալի մէջ: Ոչխարային բնազդներով առաջնորդուող խաժամուժ ամբոխը չէ, որ Համիդի արժանաւորութեան եւ նրա անկեղծութեան չափանիշը պիտի տայ: Քաղաքական այդ երեխայից աւելի զգոյշ պէտք է լինել, քան նրա հրամանատարութիւններով առաջնորդուել:

Սուլթան Համիդը «սահմանադրութիւն» չի հաստատել, այլ նրան **ստիպել** են այդ անելու. ուրեմն արեւշատութիւնները, օրհներգութիւնները, մաղթանքները ընկած զոհերին եւ պայքարողներին պէտք է ուղղել»[1]:

Թուրքահայ մամուլի հին օրգանների կողքին մեկը մյուսի հետեւից հրապարակ իջան բազմաթիվ նոր՝ ամենօրյա, շաբաթօրյա, կիսամսյա պարբերականներ: Դրանցից էին՝ «Ժամանակ», «Ազդակ», «Գաղափար», «Գարուն», «Առաւօտ», «Ծիածան», «Կոհակ», «Շիրակ», «Ձայն հայրենեաց», «Նոր հոսանք», «Սասուն», «Օրագիր» և այլ թերթերը՝ համալրելով արդեն վաղուց Կ. Պոլսում տպագրվող հայ լրագրերի շարքը (տե՛ս գրքի № 6 հավելվածը):

Մամուլը մեծ դեր ուներ կատարելու հայության բուն հայրենիքում՝ Հայաստանում: Նշանավոր դաշնակցական գործիչ Գեղամ Բարսեղյանը «Մամուլը երկրի մէջ» վերնագրով հոդվածում գրում էր, որ մամուլն անմիջականորեն պետք է աջակիցը լինի երկրի վերածննդին: «Հայաստանը անհամար պէտքեր ունի,- նշում էր նա:- Ահագնադղորդ քայքայումի երկարատեւ շրջան մը բոլորելէ ետք, սուգի ու աւերակներու խորհրդանշական այդ երկիրը կը կարօտի բոլոր այն միջոցներուն՝ որոնք զինքը կարող դարձնեն նոր ու ազատ կեանքը ապրելու: Երկրի մամուլը, ըլլալով հանդերձ այդ միջոցներէն մէկը եւ ամենակարեւորը, պիտի ճանչնայ եւ ցոյց պիտի տայ միւս բոլոր միջոցները, որով-

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85[1], թղթ. 4, վավ. 25[31], թ. 4 (Թերթերի կտրոնների հավաքածու):

հետեւ առաջ ինք պիտի ճանչնայ այն վէրքերն որոնք արիւնեցին ու կ՚արիւնեն տակաւին Վաթանի կուշտը եւ որոնք զայն ուժասպառ դարձուցին: Երկրի մամուլը պիտի ըլլայ այն ապակեղրոն ոյժը որ ամէնէն աւելի գիտակ ըլլալով տեղական պայմաններուն, գործերուն, խնդիրներուն եւ ժողովուրդներու կեանքին, առիթ չպիտի տայ կեղրոնական կամ պոլսական լրագրութեան տգիտական միջամտութիւններուն»: Շարունակելով իր միտքը, հոդվածագիրը չեչտում էր. «Երկրի հայ երիտասարդութեան գործն է գլուխ կանգնիլ անոնց, հիմնելու մամուլը, ստեղծելու մամուլի կեանքն եւ ոյժը, ինչպէս եւ զարգացնելու զուտ հայ գրականութիւնը, նոր ուղիներ ցոյց տալու դժբաղդ ու չուարած ժողովուրդի մը ...»[1]:

Հիմնականում տեղական ուժերի ջանքերով մեկը մյուսի հետեւից սկսեցին լույս տեսնել հայկական թերթեր Վանում, Կարինում, Ադաբազարում, Տրապիզոնում, Սեբաստիայում, Ամասիայում, Խարբերդում և այլուր: Դա արդեն նշան էր, որ հասարակական կյանքը հասունացել է, ունի իր որոշակի պահանջները, որոնց գոհացում տալու նպատակով էլ առաջ էին եկել այդ թերթերը (մանրամասն տե՛ս գրքի № 6 հավելվածը):

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Թուրքիայի, հատկապես Կ. Պոլսի այլազգիներից ոչ մեկը հեղափոխությունից հետո այնքան չատ թերթեր ու հանդեսներ չուներ, որքան հայությունը: Դա, մեր կարծիքով, հիմնականում բացատրվում է երկու հանգամանքով. 1) Լրագրությունը հայոց մեջ ուներ հարուստ ավանդույթներ, որոնք թելադրված էին ժողովրդի մշակութային անօրինական ձգտումներով, 2) Թուրքահայոց և հատկապես պարսկահայոց մեջ առաջվա պես ուժեղ էին ներազգային հակասությունները, որոնք ամեն անգամ բորբոքվում էին կուսակցամոլությամբ: Հնչակի և Դաշնակցության անդիջում ու միմյանց նկատմամբ ատելությամբ լի թշնամանքը հյուծում էր հայ քաղաքական դաշտը և փոխադարձ ատելությունը փոխանցվում էր հայ բնակչության շերտերին: Քաջ գիտակցելով

---

[1] Մատենադարան, Արշակ Այպոյանցյանի արխիվ, մատյան 85[1], թղթ. 4, վավ. 25[31], թ. 5 (Թերթերի կտրոնների հավաքածու):

տպագրական խոսքի ուժը, քաղաքական հակոտնյա հայացքներ ունեցող հայերը միմյանց վրա հարձակումներ կատարելու ամենաազդեցիկ միջոցը համարում էին մամուլը: Թեև հակընդդեմ թերթերի ու հանդեսների բացարձակ մեծամասնությունն անկուսակցական էր, բայց դրանք բոլորանվեր ներգրավված էին ինչպես ներկուսակցական, այնպես էլ անձնական հակասությունների մեջ:

«Պոլսահայ լրագրութիւնը,- գրում էր «Ազդակը»,- իր տիրացուական կամ աշխարհիկ առաջնորդողներով, իր սնամէջ ու աննրդաշնակ բովանդակութեամբ, իր գաղափարազուրկ, անգոյն եւ հոսհոսական ոգիով, եւ վերջապէս իր թոյն համբաւաւոր թերթոններով կրնար լրագրութիւնն ըլլալ կէս-ասիացի եւ յեղակարծօրէն եւրոպականացած քաղքենիութեան մը, հայ ժողովուրդի այլասերած մէկ հատուածին, բայց երբե՛ք ամբողջ հայ ժողովուրդին»[1]:

Սուրեն Պարթևյանը Բոստոնի «Ազգի» 1908 թ. հոկտեմբերի 6-ի համարում նշում էր. «Հապա պոլսահայ մամո՞ւլը: Զորս խոշոր օրաթերթեր ունինք, որոնք ամէն բանով կը զբաղին, բացի մեր հանրային-քաղաքական կեանքին հրատապ հարցերէն ու տագնապիչ երեւոյթներէն»[2]:

Վահան Փափազյանը նկատել է. «Շատ թերթեր հրապարակ կ'ելնէին յատկապէս իրենց հին հաշիւները մաքրելու հակադիր տարրերու հետ կամ փոխադարձ ամբաստանութիւններ յարուցանելու, այս ու այն անձը վարկաբեկելու կամ պաշտպանելու դիտումներով: Թերթերէն շատերու[ն] խմբագիրները շահադիտական նպատակներով կ'օգտագործէին թերութիւնները, ունեցած կամ չունեցած յանցանքները որոշ շրջանակներու եւ անձերու»[3]:

Քիչ թե շատ ազատամիտ հովերով տարված թերթը վաղը կարող էր թեքվել և ընկնել կղերական խավարամիտ մտքերի հորձանքի մեջ: Այսօր նույն թերթը կարող էր երկինք բարձրացնել որևէ անհատի, իսկ վաղը նույն մարդուն տորել ցեխի մեջ:

---

[1] **Ազդակ»,** № 3, 29 դեկտեմբերի 1908 թ. (11 հունվարի 1909 թ.):

[2] **«Ազգ»,** № 23 (75), 3 հոկտեմբերի 1908 թ.:

[3] **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 64:

Խոսքը, իհարկե, բացառությունների մասին չէ: Դա հատկապես վերաբերում էր Կովկասից Կ. Պոլիս խուժած տասնյակներով հայ մտավորականներին, առանձնապես կուսակցական գործիչներին: Վահան Փափազյանը շարունակում էր.

«Սկիզբները, դուրսէն եկող ծանօթ եւ անծանօթ, ճշմարիտ կամ ինքզինքնին հանրային գործիչ համարող՝ օրուան մամուլին մէջ հերոսներ կամ առնուազն «հանրային մեծ գործիչներ, մեծ ազգասէրներ կամ յայտնի բանաստեղծ ու գրողներ» կը որակուէին: Եւ ամիսներով կը փառաբանուէին ու կը խնկարկուէին, վառ գոյներով կը յիշուէին անոնց կատարած կամ չկատարած գործերը: Ժամանակի ընթացքին սակայն լեզունին փոխուեցաւ. եթէ եկուորները իրենց քմայքին չծառայեցին՝ նոյն թափով ցեխին կը հաւասարեցնէին նոյն մտաւորականներուն կամ յեղափոխական գործիչներուն...: Ժահրոտ ու թունոտ հատուցման օրեր էին: Ազատ խօսքէն կ՚օգտուէին՝ վարկաբեկելու համար իրենց անձնական հակառակորդները, շատ դիւրութեամբ լրտես, «խաֆիէ», դաւաճան որակելով»[1]: «Մեր մէջ տակաւին ոեւէ գրող իր հակառակորդին վրայ կը նայի այնպէս ինչպէս իր թշնամւոյն վրայ: Այս պարագաներու տակ ինչպէ՞ս սպասել որ ազատութիւնը ցեղին մտաւորական եւ հոգեկան վերածնունդին պիտի սատարէ ու լաւագոյն ապագայ մը պիտի կերտէ, երբ ներկան է, որ կը քանդուի»[2],- գրում էր «Արեւելեան մամուլը»:

Ինչո՞ւ է այդպես, հարց էր տալիս նույն թերթը իր նախորդ մի համարում և պատասխանում. «Որովհետեւ հայը փառամոլ է, որովհետեւ եսասէր է, նախանձոտ է, ցուցամոլ է, մեծաբան է, անմիաբան է, որոշ ուղղութիւն, սկզբունք, դաւանանք չունի եւ չպիտի կրնայ ունենալ, որքան ժամանակ որ իր արիւնին հետ չրջան պիտի առնեն վերեւ յիշատակած հակումները»[3]:

Իսկ ո՞րն էր թուրքահայ մամուլի հոռի բարքերի պատճառներից հիմնականը: Դա անկողմնակալ, ազնիվ ու բուժիչ քննադատության բացակայությունն էր, հեղինակավոր քննադատնե-

---

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 65:*

[2] **«Արեւելեան մամուլ»**, *№ 27, 30 հունիս 1909 թ., էջ 634:*

[3] *Նույն տեղում, № 21, 19 մայիսի 1909 թ., էջ 581:*

րի պակասը: Առողջ, փաստերի վրա հիմնված քննադատությունը միայն կարող էր մարել աններողամտության և մոլեռանդության հրդեհները, փակել անձնական ատելության և նախանձի դռները:

Այս լուրջ խնդրով մտահոգ նույն չաբաթաթերթն իր մի ուրիշ համարում հույս էր հայտնում, թե «իրենց վրայ պատասխանատուութիւն ստանձնել ուզողներն պիտի սթափին, եսութեան զգացումներն մէկ կողմ պիտի ձգեն եւ պիտի երկարեն իրենց թեւերը ոչ միայն Թուրքիոյ այլազան ազգութիւններու, այլ նամանաւանդ իրենց ազգակիցներուն, իրենց արենակիցներուն, որոց հետ անկեղծ համերաշխութիւն մը պիտի կրնայ միմիայն փրկել հայ ազգը ապագայ անծանօթ վտանգներէ եւ փորձութիւններէ որոց համար ճշգրիտ սահման մը կարելի չէ գծել, այլ սակայն պէտք է ընդունինք թէ անոնք կրնան յանկարծակի անակնկալներու ձեւով գահավիժիլ հայոց վրայ, եւ այս տեսակ պարագաներու առջեւ եթէ իրարու փարած չըլլանք, չարաչար պիտի տուժենք, եւ անկումը ահաւոր, սահմռկող, զարհուրելի պիտի ըլլայ»[1]:

Հատկապես զարմանք է պատճառում այն երևույթը, թե Կ. Պոլսի հայկական թերթերն ինչպիսի՞ արագությամբ էին սկսել դիմափոխվել: Նախկինում ստրկական հաճոյակատարության վարժված պոլսահայ լրագրական գործիչները կարծես մոգական գավազանի մի հարվածով ծայրահեղ գաղափարների երկրպագուներ էին դարձել՝ միմյանց հետ մրցելով հանուն ազատության և սահմանադրության: Մայրաքաղաքի բոլոր հայկական թերթերի խմբագրություններն այժմ ճիգ չէին խնայում ձախակողմյան ձևանալու՝ հեղափոխականներին մերձենալու համար: Երեկվա հուշիկ, լուռումունջ պարբերականն այսօր մի առանձին խանդաղատանքով սկսել էր նկարագրել հեղափոխական գործիչների կատարած հերոսական գործերը, նրանց արտասանած ամենաարմատական ճառերը:

«Արեւելք» թերթը, որ իր ողջ գոյության ընթացքում (հրա-

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 47, 18 նոյեմբերի 1908 թ.:*

տարակվում էր 1883 թվից) որևէ տող չէր գրել հայկական հեղափոխության մասին, Թուրքական հեղափոխությունից հետո, հայկական հեղափոխության քարոզչության առումով ձեռք դարկեց քայլելու առաջին տեղերում: Թերթն ապչելու չափ դարձել էր հեղափոխական, սկսել էր խստորեն քննադատել կառավարությանը, տպագրում էր հայրենասիրական ներբողներ և այլն: Այսպես, հայ ազգային-ազատագրական չարժմանն էր նվիրված Լևոն Էսաջանյանի «Ֆրոֆրո քար» բանաստեղծությունը, որով գովերգում էր Սերոբի, Անդրանիկի, Արաբոյի, Զավուշի, Հրայրի, Գուրգենի և մյուս հերոսների սխրանքը[1]: Արդեն հուլիսի 18-ին Թերթի առաջին էջի վերևում տպագրվել էին հայ հեղափոխության ռահվիրաների՝ Խրիմյանի և Ռաֆֆու նկարները: Նույն համարից սկսած՝ «Արեւելքն» սկսեց Թերթոնով տպագրել Ռաֆֆու «Խենթը», իսկ սեպտեմբերի 1-ից՝ «Սամվելը»:

Ռաֆֆու գրվածքները մինչ այդ խստորեն արգելված էին Թուրքիայում, և հիմա, երբ հայկական Թերթերը դրանք վերատպում էին, տեղի հայերը կլանում էին մեծ ագահությամբ, քանզի արգելված պտուղը քաղցր է լինում:

Ազգայիններից մեկը՝ Ներսես քհն. Թավուկջյանը, «Արեւելքին» վրդովված գրում էր. «Ինծի համար բացատրութեան կարօտ երեւոյթը սա է. յուլիսի 11-ին յանկարծ սահմանադրութիւնը եւ ազատութիւնը հռչակուեցաւ, եւ անմիջապէս նոյն օրը մեր Պոլսոյ հրապարակագիրներուն գոյնն ու լեզուն փոխուեցաւ: Օր մը առաջ հին ռեժիմը կը պաշտէին, պատրիարքարանի օրկան ըլլալու համար մրցակցութեան կը մտնէին, օրուան պատրիարքը եօթներորդ երկինք կը բարձրացնէին, ... օր մը ետք կը տեսնենք, որ իւրաքանչիւրը մէյ մէկ յեղափոխական կը կտրին, պաշտածնին կ'այրեն ու ոտնակոխ կ'ընեն»[2]:

Հայերին նույն ոգով խելք էր սովորեցնում նաև «Արեւելքի» հավելված «Զենիթը».

---

[1] **«Արեւելք»**, № 6976, 15 դեկտեմբերի 1908 թ.:

[2] Նույն տեղում, № 6896, 10 սեպտեմբերի 1908 թ.:

«... Հայերը երբեք պայքարի առաջին գիծերուն վրայ երեւնալու պէտք չունին, անցեալի դառն փորձերը բաւական են մեզ զգոյշ պահելու համար: Մոռնանք անցեալը եւ անձնական բոլոր հաշիւները եւ զբաղինք ներկայ եւ ապագայ վերածննդեան խնդիրներով»[1],- գրում էր Թերթը, մոռանալով, որ այդ խորհրդին բնավ չի հետեւում ո՛չ ինքը և ո՛չ էլ մայր Թերթը՝ «Արեւելքը»[*]:

Մի ծայրահեղությունից մյուսը նետված պոլսահայ ուրիշ թերթեր նույնպես հետեւում էին «Արեւելքի» օրինակին և իրենց բանասիրական բաժինները լցնում էին Րաֆֆու, Պատկանյանի, Ահարոնյանի, Սիամանթոյի, ազատագրական պայքարի գաղափարներով տոգորված ուրիշ հեղինակների գրվածքներով, Թշնամու սևեռուն հայացքի տակ գովերգում էին հայկական հեղափոխությունը և նրա հերոսներին՝ միամտորեն կարծելով, թե Կ. Պոլիսը դարձել է համարյա Փարիզ:

Հայկական թերթերը եռանդով գրում էին նախկին ռեժիմի այն ներկայացուցիչների դեմ, որոնք տարիներ շարունակ ճնշել, կողոպտել էին հայերին և ահագին հարստություն դիզել: Բայց քննադատությունները որևէ նշանակություն չունեին, քանի որ նույն մարդիկ ճիշտ ժամանակին կողմնորոշվել էին, մտել Իթթիհադի շարքերը, վայելում էին նրա պաշտպանությունը, ուստի կարողացել էին պահպանել իրենց պաշտոնները: Վալիից (նահանգապետ) սկսած մինչև հետին զաբթիեն (ոստիկանը) մնացել էին իրենց տեղերում և շարունակում էին ապրել կաշառքով ու կողոպուտով: Իսկ հայկական թերթերի քննադատությունները միայն զայրույթ ու նոր թշնամանք էին առաջ բերում հայերի հանդեպ:

«Բիւզանդիոն» իր էջերում անձնատուր էր եղել վտանգավոր ուղեգծի: «Հայոց խնդիրը» վերնագիրը կրող բաժնում պարբերաբար անդրադառնում էր հայերի վերջին երեսուն տարիների

---

[1] ***«Զենիթ»**, 19 հուլիսի 1908 թ.:*

[*] *«Արեւելքի» խմբագրապետի պաշտոնը 1908 թ. աշնանը Երվանդ Սրմաքեշխանյանի (Երուխան) ստանձնելուց հետո, միանգամից փոխվեց թերթի դեմքը: Պոլսահայ մամուլի շարքում նա շուտով դարձավ ամենալուրջն ու ամենահետաքրքիրը:*

հակաթուրքական պայքարին և այդ պայքարի ընթացքում թուրքերի կատարած անթիվ ոճրագործությունների և բարբարոսությունների վերհանմանը:

«Բիզանդիոնին» հակազդելով՝ թուրքական ազգայնականության չեփորը հնչեցնող «Թանինը» հանդես եկավ բացահայտ սպառնալիքներով, որի հետևանքով հայկական թերթն ստիպված էր հոգեմաչ բանակռիվ մղել նրա հետ: Աղմուկի հետևանքն այն եղավ, որ թուրքական մամուլի մեծ տպաքանակ ունեցող մյուս օրգանը՝ կիսապաշտոնական «Իկդամը», պաշտպանելով «Թանինին», միացավ նրան և իր մի քանի համարներում տպագրեց ընդարձակ հոդվածներ՝ թուրք ընթերցողի գլխում արմատավորելով այն միտքը, թե նկարագրելով անցյալի դեպքերը, «Բիզանդիոնը» թմբուկ է զարկում՝ հայերին այս անգամ նոր իշխանությունների դեմ գրգռելու նպատակով:

Հայկական թերթերի խմբագրություններում չնորհալի լրագրողների պակաս չկար, բայց պակասում էին միտքը և լրջությունը:

Իսկ այդքանն արդեն բավական էր, որպեսզի մայրաքաղաքում և որոշ գավառներում բռնակալության մութ ուժերը, որոնք սարսափահար էին եղել և ծակեծակ մտել ազատության հռչակումով, նորից հրապարակ գան և թուրքական անգիտակից զանգվածների հոգում նորից վառեն ցեղային ու կրոնական ատելության խարույկները:

«Իկդամը» կատարել էր իր դերը. նրա հոդվածները արձագանք էին գտել հատկապես գավառական քաղաքներում: Տեսնելով երեկվա արհամարհված «ռայայի հոխորտանքները»՝ շատ թուրքեր ասում էին, որ իրենք պատրաստ են նոր արյունալի ջարդերի, «եթէ հայը համարձակուէ բարձրացնել իր անբարիշտ գլուխը»[1]: Արդեն հոկտեմբեր ամսից գավառներում, մանավանդ հայկական նահանգներում, հետադիմությունն իշխում էր իր բոլոր նենգություններով ու դավերով:

Եթե Կ. Պոլսի և գավառների հայ լրագրողների զգալի մասը

---

[1] ***«Մշակ»,*** *№ 280, 19 դեկտեմբերի 1908 թ.:*

«համարձակորեն» քննադատում էր թուրքական իրականությունը և ոխակալ Իթթիհադին, չմտածելով, թե դա ինչ հետևանքներ կարող է ունենալ հայության համար, ապա արտասահմանի հայ քաղաքական և մշակութային գործիչներից ոմանք պոլսահայ լրագրողներին ու գրողներին կոչ էին անում՝ մեծագույն զգուշություն ցուցաբերել գրիչը չարժելիս:

1908 թ. սեպտեմբերին Դանիել Վարուժանը Կ. Պոլսից Փարիզ, Արշակ Չոպանյանին ուղարկում է «Հայրենի լեռներ» բանաստեղծությունը՝ «Անահիտում» տպագրելու համար:

Բանաստեղծության հիմնական միտքն այն է, թե հայոց լեռները միշտ ապաստան, թև ու թիկունք են եղել օտար հարստահարիչների դեմ պայքարի ելած հայորդիների համար և որ ներկայումս նույնպես պիտի կատարեն նույն դերը: Քառատող 18 տուն ունեցող այս քերթվածից մեջբերենք վերջին չորսը:

Դիմելով հայրենի լեռներին, բանաստեղծն ասում էր.

Թող ձե՛զ դառնայ նոր Սերունդն, ըլլայ դրացի արեւուն.
Իրեն դըղեակ Թող ընէ իր հայրերուն օրօրանն.
Արծուի թեւերն իր վրա՛յ, իր վրա՛յ երկինքը անհուն.
Թող չանթերո՛վ զինուի ան:

Փըրկութիւնն ա՛լ ձեր մէջ է, ձեր փապերուն մէջ մըթին,
Սեպերուն վրա՛յ է՝ ուր այծն ելած վիհին կը նայի,
Հոդ ջըրվէժներն՝ որոնց քով վարդենիներ կը ծաղկին՝
Կու տան հրաւէր պայքարի:

Թող ձե՛զ դառնայ նոր Սերունդն, աստղահամար ըլլայ զօրք,
Թըշնամւոյն դէմ բերդ էք դուք, դիւցազններու՝ ապարանք.
Լոկ քաջերո՛ւն համար ձեր ժայռերը լալ, ջրողորկ,
Կ՚ըլլան գահեր ոսկեզանգ:

Եւ Թող տրոփեն վեհօրէն լոկ քաջերո՛ւն ոտքին տակ
Հըրաբուխներն ըսքօղուած, ձեր սըրտերն այդ ծրծմբաեռ.
Եւ վաղը Թող չինուին ձեր մարմարներէն ըսպիտակ
Հերոսներու արձաններ[1]:

---

[1] ***Դանիել Վարուժան***, *Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան, 1955 թ., էջ 157:*

Կարդալով «Հայրենի լեռներ» ստեղծագործությունը, Արշակ Զոպանյանը 1909 թ. հոկտեմբերի 8-ին հետևյալ պատասխանն է գրում հեղինակին.

«Սիրելի՛ Վարուժան,

Ստացայ Ձեր սիրուն նամակը, որուն համար շատ շնորհակալ եմ, եւ Ձեր գեղեցիկ բանաստեղծութիւնը: Այնպիսի պատմական բոպէի մը մէջ ենք, ուր պէտք է շատ զգոյշ ըլլանք: Այս պահուս լաւ պիտի չըլլար հրատարակել այդպիսի բանաստեղծութիւններ: Թուրք թերթերն սկսած են հետեւիլ մեր մամուլին: Կարող են ուրիշ կերպ մեկնել: Քիչ մը սպասենք: Տեսնենք ինչպէս պիտի վերջանայ ներկայ բոպէն: Դեռ յայտնի չէ: Նոյն տեսակէտով, նախընտրելի է եւ Ձեր «հայրենասիրական» քերթուածներու հատորով հրատարակումն ալ յապաղէիք. շատ հակաթուրք են անոնք (եւ ուրիշ կերպ չէին կրնար ըլլալ). բոպէն յարմար չէ անոնց հատորով երեւմանը:

Այս շատ փափուկ պահուն, մենք, հայերս վեհանձնօրէն շատ correct ըլլանք. արդէն բաւական վտանգ կայ Հայաստանի համար. մենք ոեւէ նոյնիսկ գրական պատրուակ տուած կ՚ըլլանք: Ետքը կտեսնենք թէ ինչ պէտք է ընենք:

Եթէ կարելի ըլլայ՝ ուրիշ քերթուած մը ղրկեցէք յունուարի թիւին համար:

Սիրալիր բարեւներով՝ Ձերդ

Ա. Զօպանեան»[1]*:*

Պոլսահայ մամուլի բռնած վտանգավոր ընթացքի մասին ամբողջ ձայնով խոսում էր հատկապես ռուսահայ մամուլը՝ հորդորելով չափավորել ասելիքը՝ առանց ծեքծեքումների, առանց անբնական ու չինծու արհեստականության: Քննադատելով պոլսահայ պարբերականների գործելաոճը, կովկասահայ մամուլը մտրակում էր մի կողմից նրանց քաղաքական տհասու-

---

* *Ա. Զոպանյանը նկատի ուներ Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» հատորը, որը լույս տեսավ 1909 թ. Պոլսում:*

[1] ***Արշակ Զոպանյան,*** *Նամականի, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1980, էջ 97-98:*

թյունն ու անսկզբունքայնությունը, մյուս կողմից իշխանությունների հասցեին ուղղված ավելորդ, վտանգավոր հոխորտանքները:

Թիֆլիսի «Հովիւը» գրում էր. «Օ՜, սոսկալի է պոլսահայ մամուլը: Ամէն օր կարելի էր կարդալ **Մանզումէի, Ժամանակի** եւ **Արեւելքի** էջերում հայհոյանք այն «փաղիշահի» հասցէին, որ դեռ գահի վրայ նստած էր եւ խալիֆ էր ճանաչուած եւ որին դեռ երէկ «չօք եաշա» էին գոռում: Միեւնոյն այդ ազատասէր եւ արմատական հայ լրագիրները, ինչպէս նաեւ այդ լրագիրներում ամէն օր սպառնալիք էր հրատարակւում սահմանադրական կառավարութեան եւ Երիտասարդ Թիւրքերի Կոմիտէի հասցէին՝ թէ «ստիպուած պիտի լինինք դիմել մեր հին սիրական սիստեմին...»՝ եթէ այս չանէք կամ այն չանէք»[1]:

«Մշակ» թերթի 1908 թ. օգոստոսի 21-ի համարում (№ 182) տպագրած իր հոդվածում, հնչակյան կուսակցությունից հեռացած Ռուբեն Խանազատը խիստ քննադատության էր ենթարկում պոլսահայ թերթերին, որոնք մի կողմից չարունակում էին «կեցցէ՜»-ների աղաղակներ արձակել երեկվա մարդասպան սուլթան Աբդուլ Համիդի հասցեին, մյուս կողմից քաղաքական խակ գործողություններ էին կատարում:

Բաֆֆու համարյա բոլոր գրվածքները, նշում էր Խանազատը, համակված են ազգային անկախության և «ազատ Հայաստան» ձեռք բերելու գաղափարներով, որոնք հակառակ են Իթթիհադի և նրան ենթակա կառավարության քաղաքականությանը: «Խենթի» և «Ջալալէդդինի» նման գրվածքներով հայ սերունդներին կերակրելը ոչ միայն չի կարող նպաստել Օսմանյան կայսրության ազգերի եղբայրության և համերաշխության երիտթուրքական ձևական թե գիտակցված նշանախոսքերի իրականացմանը, այլև, ճիշտ հակառակը, կնպաստի իրարից նրանց հետագա խորթացմանը: Հայ զանգվածները նորից կչարունակեն ատելություն տածել նախկինում իրենց անհաշիվ դառնություններ պատճառած չրջապատող այլացեղ տարրերի

---

[1] **«Հովիւ»**, № 14, 26 ապրիլի 1909 թ.:

նկատմամբ, երազել ցնորքներ, ինչի հետևանքով Թուրք և քուրդ մարդասպաններն առաջ կտանեն հայերին անճիտելու գազանային արարքները:

Հոդվածագիրը նշում էր, որ, ճիշտ է, մամուլի համար Թուրքիայում այժմ ստեղծված են ազատ գործելու պայմաններ (թեև ոչ ոք չգիտեր, թե որքան կտևի այդ ազատությունը), բայց դա ազգային ու ժողովրդական շահերի պաշտպան հանդիսացողի և հասարակական կարծիքը ղեկավարողի հավակնություն ունեցող պարոն խմբագիրներին իրավունք չի տալիս, որ նրանք իրենց թերթերի տպաքանակը հաջողությամբ սպառելու և շատ դրամ շահելու նպատակով, ընդառաջ գնան անգիտակից զանգվածների պահանջին և ներկա պահին Թուրքահայության համար վտանգ ներկայացնող գրվածքներով կերակրեն նրանց: Դա ոչ միայն անմտություն և անտակտություն է, այլև դավաճանություն այն մեծ գործին, որը, վերջապես գլուխ է բերվել երկար ու տանջալից տարիների աշխատանքով, և որին ամուր, հաստատուն հիմքերի վրա դնելու համար դեռ շատ տարիների խոհուն ու մեծ աչալրջություն պահանջող աշխատանք է հարկավոր:

Խանազատը համոզված էր, որ սահմանադրական երիտթուրքերն ամեն կերպ աշխատում են իրենց ազգակիցներին մոռացնել տալ վերջին 30 տարիներին հայերի հետ ունեցած արյունալի հարաբերությունները, իսկ հայ խմբագիրներն իրենց բանասիրական գրվածքներով աշխատում են անցյալը վառ պահել ազգակիցների հիշողության մեջ: Նա գրում էր. «Այդ կարգի գրուածքներով չի կարելի երբեք ազգերի եղբայրութեան սկզբունքը հաստատ եւ իրական հողի վրայ դնել: Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն այդ կարգի գրուածքները չարտատպել ու չտարածել ժողովրդի մէջ, այլ, եթէ միայն հնարաւոր է, բոլորովին վերցնել շրջանառութիւնից, պահպանելով դրանք իբրեւ տխուր անցեալի պատմական դոկումենտներ: Այդ են պահանջում հայ ժողովրդի, Թուրքիայում ապրող ազգերի եղբայրութեան եւ վերածնուած սահմանադրական Թուրքիայի շահերը»[1]:

---

[1] ***«Մշակ»,*** *№ 182, 21 օգոստոսի 1908 թ.:*

Այսօր դժվար է համաձայնել Ռուբեն Խանազատի մեկ դար առաջ գրած հոդվածի մի չարք դրույթներին, որոնք անչուշտ, երիտթուրքական չարժման բուն էությունը սխալ ըմբռնելու հետևանք էին, այնպես, ինչպես և այդ հարցում սխալ էր կողմնորոշվել Դաշնակցությունը: Այդտեղից բխում էր նրա համոզումը, որ իբր, երիտթուրքերը ճիգ են թափում, որպեսզի թուրքերը մոռանան հայ-թուրքական թշնամությունը, թե պետք է վերացնել հայ ազատագրական պայքարին վերաբերող «պատմական դոկումենտները» և այլն: Այդ «դոկումենտները», իհարկե, անթույլատրելի էր ցցել երիտթուրքերի խանդոտ ու վրիժառու աչքերի առջև, ինչպես անում էին պոլսահայ թերթերը, բայց դրանք ընդհանրապես հանել ասպարեզից, նախ անհնար էր, հետո նաև՝ անթույլատրելի մոլորություն: Բայց հոդվածագրի հիմնական տագնապն արդարացված էր այն իմաստով, որ պոլսահայ թերթերի անզգույշ, ոչ չրջահայաց գործելակերպն Իթթիհադի համար առիթներ էր ստեղծում մերձավոր ապագայում հակահայկական նոր ոճիրներ իրականացնելու համար:

Իհարկե, այդ «անզգույշ», «ոչ չրջահայաց» գործելակերպը միանգամայն բնական կլիներ, եթե թուրքական հասարակությունը, իրոք, կանգնած լիներ մարդկայնանալու ուղու վրա, եթե երկրի նոր կառավարողները քիչ թե չատ լայնախոհություն ու ազատամտություն հանդես բերեին: Մի աչխարհագրական անվան գործածությունը, մի վեպի տպագրությունը, որ կարող էր միայն պատմական հետաքրքրություն ներկայացնել, այնքան անմեղ բաներ էին սահմանադրական ռեժիմի տեսակետից, որ նորմալ պայմաններում դրանց վրա որևէ մեկն ուչադրություն չէր դարձնի: Բայց դիմացը ոխակալ Իթթիհադն էր՝ իր անեզր ազգայնամոլությամբ: Հայկական լրագրերը, ի տես սպասվող վտանգի, աստիճանաբար զգաստացան և արդեն 1909 թ. սեպտեմբեր-հոկտեմբերից սկսեցին է՛լ ավելի ուժգին փառաբանել օսմանցիությունը: «Արեւելք» լրագիրը ծայրահեղ փափկանկատությամբ ինքնակամ կերպով դադարեցրեց Ռաֆֆու «Խենթի» տպագրությունը, գտնելով, որ վեպը վիրավորական կարող է լինել հայերի հետ նոր «եղբայրացած» թուրքերի կամ, ավելի ճիչտ՝ քրդերի համար:

Հայոց անցյալը փառաբանելուց և Թուրքերի անցյալը քննադատելուց հետ կանգնեցին Թուրքահայ մամուլի բոլոր օրգանները:

Թուրքահայ մամուլի այս հեղհեղուկ, գաղափարազուրկ վիճակը՝ մի օր մի բան ասելը, մյուս օրը հակառակը պնդելը, շատերին մղում էր այն մտքին, որ Թուրքահայերի մոտ բազմակարծությունը սխալ է հասկացված. հայկական թերթերի մեծամասնությունը տոգորված է հայ ազգի անձնական հակառակորդներին վարկաբեկելու և նույնիսկ տապալելու մոլուցքով, այլ ոչ թե մտահոգ է ազգային-հասարակական շահերի պաշտպանությամբ: Այս պայմաններում միտք էր ծագել ունենալ անձնական ու կուսակցական պատվամոլությունից վեր կանգնած մի պարբերական, որի շուրջը համախմբված լինեին քաղաքական տարբեր հայացքներ դավանող լրագրական կարող ուժեր և որն ունակ լիներ ամենայն լրջախոհությամբ և իր առաքելության խոր գիտակցությամբ ուղղություն տալու Թուրքահայոց քաղաքական, հասարակական և մշակութային կյանքին: Վահան Թեքեյանը գրում էր. «Խառն ի խուռն ահա՛ կը նետեմ պահանջքներս, որոնք պահանջքներն են հայութեան ստուար եւ գիտակից մասին – ի՞նչ կ'ըլլար եթէ անմիջապէս ձեռնարկուէր, իբրեւ նախաքայլ եւ իբրեւ նուազագոյն զոհողութեան կարօտ գործ մը, հիմնարկութեանը հայերէն թերթի մը, որ մէկ մարդու մը շահուն չծառայէր, այլ՝ ազգին, որ իսկոյն սկսէր հակազդել միւսներուն, անոնց գործած չարիքը սրբագրէր, զանոնք կործանէր քիչ ատենէն»[1]:

Ինչպես բռնապետական ամեն մի ռեժիմ, Իթթիհադի իշխանությունը նույնպես (որն աստիճանաբար աբդուլհամիդյան բռնապետական հատկանիշներ էր ձեռք բերում), իրեն քննադատող մամուլի ազատությունը չէր կարող հանդուրժել:

Սեպտեմբերի վերջերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության Սալոնիկի կենտրոնը հետևյալ ցուցումը տվեց Կ. Պոլսի Թուրքական, հայկական և հունական մամուլին անխտիր:

---

[1] ***«Շիրակ»**, № 14-15, 16 մայիսի 1909, էջ 300:*

«Առաջին եւ վերջին անգամ ըլլալով կ՚ազդարարուի, որ թերթերը անխոհեմաբար Օսմանեան Միութիւնը վտանգող, զանազան ազգերու զգացումները վիրաւորող եւ զանազան ասպարէզներու մէջ գտնուող անձերուն արժանապատուութեանը դիպչող յօդուածներ երբէ՛ք չի հրատարակեն, ինչպէս նաեւ երբէ՛ք չի խօսին Եգիպտոսի, Պօսն[ի]այի եւ առանձնաչնորհեալ նահանգներու վրայ: Հակառակ պարագային, թէ՛ գրողը եւ թէ՛ գրել տուողը ***Հայրենիքի դաւաճան պիտի նկատուի*** *(ընդգծումը մերն է:- Հ. Ս.)»*[1]*:*

Մամուլի ազատության դեմ սա առաջին լուրջ ոտնձգությունն էր, որի համար Պոլսի բազմալեզու մամուլը բողոքի ձայն բարձրացրեց:

«Արեւելքի» խմբագիր Երվանդ Սրմաքեշխանլյանն իր թերթում տպագրած զայրալից հոդվածում գրում էր. «Այս ազդարարագրին ոճն ու ոգին այնքան յստակ են, որ հարկ իսկ չկայ երկար բարակ զայն վերլուծել հոս: Հին ըէժիմի գրաքննութեան հոտը կու գայ անոր բոնաւոր ու սպառնական տողերուն մէջէն: Եւ մենք որ կ՚ուրախանայինք թէ գրաքննութիւնը խպա՛ռ ջնջուած է Թուրքիոյ մէջ... Ուրեմն ազատութեան եւ հաւասարութեան քոմիթէն կը սպառնայ ազատ մամուլին, ուեւէ պատրուակով, ուեւէ նպատակի համար: Ուրեմն մամուլը ազատ չէ, ինչպէս կը կարծէինք»[2]*: Հոդվածագիրը համոզված էր, որ «ցորչափ մամուլը ազատ մնայ՝ բնաւ վախնալու չէ թէ հին ըէժիմը կրնայ վերադառնալ: Բայց երբ սկսին մամուլին շարժելու ազատութիւնը սահմանափակել, այն ատեն կրնանք ըսել, թէ միահեծան բռնապետութիւնը ետ դարձած է»*[3]*:*

Զարմանալու ոչինչ չկար. Իթթիհադի կոմիտեի՝ մամուլին հղած սպառնալիքը բխում էր մենատիրական ձգտումների բուն էությունից:

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 35, վավ. 65⁷⁴, թ. 1:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, թ. 2:*

Օսմանյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո երիտթուրքերի առջև ցցվեց կայսրության պետական չինարարության հարցը. Թուրքիան պետք է ունենա խիստ կենտրոնացված պետական կարգե՞ր, թե՞ դաշնակցային սկզբունքի վրա խարսխված ապակենտրոն կառուցվածք:

1876 թ. ի վեր Օսմանյան կայսրության մի քանի մասերը՝ Բոսնիան, Հերցեգովինան և Կրետե կղզին փաստորեն անջատվել էին, իսկ Բուլղարիան դադարել էր բոլորովին վասալական երկիր լինելուց և այսօր թե վաղն ունենալու էր լիակատար անկախություն: Թեև Կրետական հարցը կարող էր վճռված համարվել, բայց որևէ կասկած չկար, թե առաջիկայում հրավիրվելիք օսմանյան խորհրդարանը չի համաձայնելու նրա միացմանը Հունաստանին, ինչին ձգտում էր կղզու հույն բնակչությունը:

Ինչ վերաբերում էր Մակեդոնական հարցին, դա թեև մնում էր չլուծված, բայց օրակարգային խնդիր էր: Անորոշ էր նաև Թուրքիայից ազատագրված Բոսնիայի և Հերցեգովինայի ապագան այն առումով, որ Ավստրո-Հունգարիան ամեն ինչ անում էր դրանք իրեն միացնելու համար:

Եվրոպական թերթերը սխալմամբ գրում էին, որ իրենք՝ երիտթուրքերը, շատ ուրախ կլինեն, եթե մինչև օսմանյան խորհրդարանի գումարումը եվրոպական դիվանագիտությունը կարողանա վերջնականապես լուծել Բոսնիա-Հերցեգովինայի, Բուլղարիայի վասալության, Արևելյան Ռումելիայի, Կրետեի և Եգիպտոսի հարցերը, որովհետև այդ տարածքներն արդեն իրոզապես կորած էին Թուրքիայի համար:

Դրանցից բացի, Բեռլինի դաշնագրի ստեղծած մի քանի հարցեր, որոնք վերաբերում էին Մակեդոնիային, Ալբանիային, Հայաստանին, շարունակում էին օդից կախված մնալ:

Եթե վերը նշված դժվարին խնդիրները լուծելու համար տերություններին անհրաժեշտ էր տևական ժամանակ, ապա ապակենտրոնացման, կայսրության ոչ թուրք խոշոր ազգություններին ինքնավարություն տալու թե չտալու հարցը Իթթիհադը համարում էր պետության ներքին գործը՝ միաժամանակ

հրատապ լուծում պահանջող խնդիր:

Սահմանադրության վերահաստատման օրն իսկ, հուլիսի 11-ին, Ահմեդ Ռիզայի «Մեչվերեթ» թերթը հրատարակել էր հոդված-բողոք օսմանցիների ներքին գործերին մեծ պետությունների հնարավոր ամեն միջամտության դեմ: Բողոքում ասված էր, որ երիտասարդ թուրքերի ծրագիրը բացառում է առանձին ազգություններին կամ ժողովուրդներին որևէ ձևի ինքնավարություն տալու գաղափարը:

Ոչ թուրք ժողովուրդներին ինքնավարություն տալու հարցը մերժված էր ոչ միայն Իթթիհադի ծրագրում, այլև վերականգնված միդհատյան սահմանադրության մեջ, որի հենց առաջին հոդվածն ազդարարում էր, թե Օսմանյան կայսրությունը բաղկացած է ներկայումս իրեն պատկանող երկրներից և տիրապետություններից, ինչպես և արտոնյալ նահանգներից, որ նա կազմում է մի անբաժանելի ամբողջություն, և նրա որևէ մասը չի կարող անջատվել նրանից որևէ ձևով կամ պատրվակով:

Իթթիհադը պահանջում էր ընդհանուր բարենորոգումներ ամբողջ Օսմանյան կայսրության, այլ ոչ թե նրա առանձին մասերի համար: Նա հայտարարում էր, որ սահմանադրության վերականգնումից հետո կայսրության բոլոր ազգերն իրավահավասար են, բոլոր կրոնների մարդիկ մի ընդհանուր հայրենիքի քաղաքացիներ են, հետևապես, այդ քաղաքացիներին ազգային հատկանիշով բաժանելու փորձերը ժամանակավրեպ են: Զկան թուրքեր, հույներ, քրդեր, հայեր և այլն, այլ կա միասնական օսմանյան ժողովուրդ՝ մեծազոր փադիշահի գայիսոնի իշխանության ներքո:

Ահմեդ Ռիզան հայտարարում էր, թե բոլոր ազգերն ազատ ինքնորոշվելու, իսկ օտարների միջամտության դեպքում՝ նաև պաշտպանվելու անկապտելի իրավունք ունեն: Բայց ինքնորոշում ասելով նա հասկանում էր միայն տվյալ ազգային տարածքում տեղական իշխանությունների իրավունքների, հատկապես գավառային պաշտոնյաների իրավասությունների ընդլայնում, ուրիշ ոչինչ:

Մեծ վեզիր Քյամիլ փաշան ֆրանսերեն լույս տեսնող «Մաթեն» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում ասել էր.

«Իմ ամենամեծ ցանկութիւնը, իմ ամենաթանկագին իղձը, որ ամէն օր ծագում է իմ մէջ, այն է, որ տեսնեմ ***Արեւելեան հարցը*** *անհետացած ընդմիշտ՝ ոչ միայն լրագրերի էջերից, այլեւ, մանաւանդ, եւրոպական պետական անձանց հոգսերից»*[1]*:*

Հրապարակ հանված այդ խնդիրը կյանքի ու մահվան նշանակություն էր ստանում Թուրքիայում ապրող մի քանի ազգությունների համար: Դա լինել թե չլինելու հարց էր, որի առջև կանգնել էին հայը, հույնը, մակեդոնացին, բուլղարը, մի խոսքով՝ այն բոլոր ազգությունները, որոնք իրենց ներքին կյանքը կանոնավորող ինքնուրույն մարմիններ ունեին:

Կ. Պոլսի մամուլը եռանդուն պայքարի մեջ էր: Վիճաբանությունները, քննադատությունները վաղուց վերին աստիճանի լուրջ կերպարանք էին ստացել: Ազգային ինքնորոշում, ազգային առանձնաշնորհումներ և դրանց դեմ՝ ձուլում, օսմանցիություն՝ ահա՛ այն գլխավոր դիրքերը, որոնց շուրջը բորբոքված էր պայքարը մամուլի էջերում և ամենուր:

Հայկական թերթերը նշում էին, որ նույնիսկ ամենազարգացած երկրներում, որտեղ տարբեր ազգեր կան, ինքնավարությունը անխուսափելի անհրաժեշտություն է դառնում: Նշվում էր, որ օրինակ, Անգլիան ինքնավարություն է տվել Իռլանդիային, Ավստրո-Հունգարիայում շատ ազգեր ունեն ուրույն առանձնաշնորհումներ, Շվեյցարիայում տարասեռ ժողովուրդներն ունեն իրենց ինքնավարությունները՝ կենտրոնական իշխանության հովանու ներքո: Հետևապես, նույն ճանապարհով պիտի գնա նաև Օսմանյան կայսրությունը, որի տիրապետության տակ գտնվող, ասենք, Մակեդոնիայում բուլղարները դնում են իրենց բացորոշ պայմանները: Իրենց կարգին, նույնն են անում արաբներն ու հույները՝ օսմանյան սահմանադրական կառավարությունից ինքնավարություն պահանջելով իրենց ցեղային ուրույն զարգացումն ապահովելու համար՝ առանց անջատման փափագի և այլն:

Առաջ քաշելով Հայաստանի ինքնավարության հարցը՝ հայ

---

[1] ***«Մշակ»****, № 289, 30 դեկտեմբերի 1908 թ.:*

գործիչները հիշեցնում էին, որ մինչև սուլթան Աբդուլ Մեջիդի հոր՝ սուլթան Մահմուդ II-ի սկսած վարչական փոփոխությունները, այսինքն՝ մինչև 19-րդ դարի սկիզբը, կայսրության տարածքները կոչվում էին այն ժողովրդի անունով, որոնք եղել էին նրանց պատմական հայրենիքները: Այսպես, Եվրոպական Թուրքիայում կային Բոսնիա (բոշնակների բնակած երկիր), Բուլղարիստան (բուլղարների երկիր), իսկ Ասիական Թուրքիայում կային Արաբիստան, Լազիստան, Քուրդիստան և Էրմենիստան:

Վերջինիս անունն արդեն ցույց էր տալիս, որ դա Էրմենիների՝ հայերի երկիրն է: Նշված տարածքներից ամեն մեկն ընդարձակ նահանգ (էյալեթ) էր, որը կառավարվում էր մի ընդհանուր կառավարչի կողմից: Եվ ահա, Մահմուդ II-ի օրոք էր, որ ջնջվեցին այդ պատմական անունները: Ընդարձակածավալ նահանգները բաժան-բաժան արվեցին և փոքր տարածքներով վիլայեթներ (նահանգներ) ստեղծվեցին: Այս փոփոխության արդյունքում Էրմենիստանը բաժանվեց 4 վիլայեթի՝ Վան, Դիարբեքիր, Էրզրում և Խարփութ:

Իրենց հերթին, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու նրա պարագլխի առաջադրած գաղափարներն ու պահանջները լայնորեն քարոզում էին համարյա բոլոր թուրքական թերթերը:

Հուլիսի 14-ին «Սաբահ» թերթը գրում էր, որ պետությունները պետք է հրաժարվեն Օսմանյան կայսրության տարբեր տարածքներում բարենորոգչական գործունեություն իրականացնելու մարմաջից, որովհետև թուրքական սահմանադրությունն առանց օտարների միջամտության էլ բարենորոգումներ է նախատեսում կայսրության մեջ, բայց ոչ թե առանձին ժողովուրդների, այլ բոլոր ժողովուրդների համար: Ոչ մեկին, հատկապես հայերին ու մակեդոնացիներին, դրսից թելադրված որևէ բարենորոգում պետք չէ: Ուստի «անընդունելի է նաև, երբ կայսրության տարբեր հողերն անվանվում են ոչ թուրքական անունով»:

«Թանին» թերթը, որ Իթթիհադ կոմիտեի հայացքների եռանդուն արտահայտիչն էր, նախորդ թուրքական կառավարությունների կողմից կայսրության քրիստոնյաներին (հայեր,

հույներ, մակեդոնացիներ) տրված արտոնությունները համարում էր սխալ, իսկ վերջիններիս ինքնավարական ձգտումները՝ անօրեն: Թերթը նկատի առնելով Մակեդոնիան, գրում էր.

«Մենք չենք ընդունում որեւէ ինքնավարութիւն, որեւէ «թագաւորութիւն թագաւորութեան մէջ» կամ «երկրորդ Բուլղարիա»՝ Բալկանեան թերակղզու վրայ: Մենք ապակենտրոնացումն ընդունում ենք միայն որոշ սահմաններում: Մենք հնարաւոր ենք համարում հրաւիրել ներկայացուցչական ժողովներ տեղական գործերի քննութեան համար, այն էլ՝ գեներալ-նահանգապետի նախագահութեամբ, եւ ուրիշ ոչինչ: Միւս ազատութիւնները բոլոր հպատակները պիտի վայելեն հաւասարապէս»[1]:

Ինչո՞ւ թե՛ նախկին և թե՛ նոր թուրքական իշխանություններն այդքան մեծ ատելությամբ էին լցված Բեռլինի դաշնագրի նկատմամբ: Ճիշտ է, որ այդ դաշնագրի հետևանքով Բուլղարիան անկախություն էր ստացել, իսկ Ավստրո-Հունգարիան թուրքական երկու նահանգ էր կլանել: Բայց դաշնագրի՝ հայերին վերաբերող 61-րդ հոդվածը չէր կարող սպառնալիք լինել թուրքական պետության համար, որովհետև դրանով տերությունները միանգամայն անմեղ ու անվտանգ առաջարկ էին արել՝ բարեկարգել քրդերի հարստահարումներին ենթարկված հայաբնակ մարզերը, նրա կառավարությանը պարտավորեցրել էին այդ մարզերում առանց ձգձգումների իրականացնել միջոցառումներ տեղի հայ բնակչության անտանելի դրությունը բարվոքելու համար, ինչպես նաև արգելք դնել հայերի նկատմամբ չերքեզների ու քրդերի կողմից կատարվող խժդժությունների վրա: Դաշնագիրը Բարձր Դռանը հանձնարարել էր պարբերաբար տերություններին հաղորդել այն միջոցառումների մասին, որոնք կիրառվելու էին 61-րդ հոդվածի պահանջների կատարման ուղղությամբ:

Նույնիսկ ոչինչ չասող այդ հոդվածը, որ վաղուց մեռած տառ էր դաշնագրի չարադրանքում, աչքի փուշ էր երիտթուրքերի համար, որովհետև դեռ թողնում էր կեղծ տպավորություն, թե

---

[1] *Թարգմանությունը տե՛ս* ***«Մշակ»****, № 184, 23 օգոստոսի 1908 թ.:*

հայոց հարցը պաշտպաններ ունի Եվրոպայում: Իթթիհադը, որ իր իշխանության ուժով ուղղակի կարող էր ջնջված համարել 61-րդ հոդվածը, փորձում էր այնպիսի տպավորություն ստեղծել, թե դա վերացնելու համար ինքը բոնի գործողությունների չի դիմի և կսպասի, մինչև որ հայերն իրենք հայտարարեն, թե կամովին հրաժարվում են նրանից, որովհետև խոչընդոտ է օսմանյան բոլոր հպատակների հավասարության սկզբունքը որդեգրած նոր Թուրքերի քաղաքականությանը:

Անդրադառնալով երիտթուրքերի 61-րդ հոդվածը վերացնելուն ուղղված մարտավարությանը՝ Լեոն գրում էր. «Կարծես դա էր ամենամեծ խոչընդոտը, կարծես Թուրքիայի ժողովուրդների երջանկութիւնն անհնարին կլինէր, եթէ 61-րդ յօդուածը չարունակէր ապրել դիւանագիտական փոշիների մէջ»[1]:

Իթթիհադի և Թուրքական մամուլի օրգանների պահանջին հետևեց կառավարության պաշտոնական որոշումը:

1908 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի կառավարությունը հայտարարեց, որ այսուհետև ավարտված է եվրոպական տերությունների միջամտությունը Մակեդոնիայում, քանի որ սահմանադրությունն այդ միջամտությունն ավելորդ է դարձրել: Թեև հայտարարության մեջ հիշատակված էր միայն Մակեդոնիան, բայց բոլորին պարզ էր, որ ընդհանուր սկզբունքի գործադրումից չէր կարող դուրս մնալ նաև Հայաստանը: Իսկ դա կնշանակեր, որ ջուրն են ընկնելու թե՛ Բեռլինի, թե՛ Կրետեի դաշնագրերով և թե՛ մայիսյան ծրագրով հայերին խոստացած բարենորոգումները, ապահովությունները, նրանց ձեռք բերած քիչ թե շատ միջազգային իրավունքները:

Բեռլինի 1878 թ. կոնգրեսից հետո Մակեդոնիայում և Հայաստանում բարենորոգումների խնդիրը միջազգայնացվել էր, այսինքն՝ արդեն 30 տարուց ի վեր գտնվում էր եվրոպական տերությունների դիվանագիտական հետաքրքրությունների շրջանակներում: Այդ ամբողջ ժամանակահատվածում եվրոպական պետությունները Թուրքիայից, նրա սուլթանից պահանջում էին

---

[1] ***«Սուրհանդակ»*** *(Կ. Պոլիս), № 30, 15 նոյեմբերի 1909 թ.:*

Հայաստանում իրականացնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումները: Թուրքահայ ժողովուրդը սուլթանից ուներ շատ համեստ պահանջներ՝ իրեն կյանքի ու գույքի ապահովություն տալ, միջոց ու հնարավորություն տալ խաղաղորեն զարգանալու տնտեսապես ու կուլտուրապես, անկաշկանդ գործող ազգային դպրոցներ, գիր ու գրականություն ունենալ: Նա կայսրությունից անջատվելու որևէ նպատակ չուներ, ամենաչատը ձգտել էր մշակութային և տեղական վարչական ինքնավարություն ձեռք բերել՝ պահպանելու իր ազգային հոգևոր, մտավոր ու բարոյական «անկախությունը»: Սա էր եղել Թուրքահայության առավելագույն բաղձանքը:

Ճիշտ է, հայերի մեջ եղել են անհատներ ու առանձին խմբակներ, որոնք առաջադրում էին Հայաստանի անկախության հարցը, բայց նրանք միշտ աննշան փոքրամասնություն են կազմել: Հնչակյաններն իրենց երկրորդ ծրագրում մտցրել էին մի կետ անկախության պահանջով, բայց չուտով հրաժարվել էին դրանից:

Ահա՛ հայության նույնիսկ այս ամենաչափավոր ու խոնարհ ցանկությունների նկատմամբ սուլթանը խուլ էր մնացել: Նա ոչ միայն չկատարեց Հայաստանում բարենորոգումներ կատարելու Եվրոպայի պահանջը, այլև ծրագրեց ու իրականացրեց հայերի լայնատարած կոտորած՝ այդ միջոցով ոչնչացնելու համար 61-րդ հոդվածը: Թեև սուլթանը չկարողացավ հայերին բոլորովին բնաջնջել, բայց ի զորու եղավ Հայաստանը տնտեսապես ու բարոյապես քայքայել և երկիրը ամայի դարձնել:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո նույնպես՝ Թուրքահայերը որևէ անջատողական ձգտում չարտահայտեցին: Եվ եթե Թուրքիայում խորհրդարանական կյանք սկսվեր ու սահմանադրությամբ խոստացված բարիքներն իրագործվեին, հասկանալի է, որ այդ դեպքում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը ինքնըստինքյան ավելորդ կդառնար ու կվերանար:

Թող Հայաստանում, հայաբնակ նահանգներում հաստատվեն կարգ ու խաղաղություն, թող հայերն այլևս չնկատվեն իբրև ռայա, թող օրենքի առաջ նրանք հավասար լինեն մուսուլմանների հետ, թող նրանք ազատորեն պարապեն երկրագործու-

թյամբ, առևտրով, արդյունաբերությամբ, թող քրդերն այլևս նրանց չհարստահարեն ու չկողոպտեն ... և նրանք կլինեն օսմանյան ամենալավ քաղաքացիներ, այլևս չեն դիմի այս ու այն եվրոպական պետության միջամտությանը: Բայց բանն այն է, որ երիտթուրքերի խոստացած բարեփոխումները մնում էին թղթի վրա, Հայաստանի խորքերում քուրդն ու թուրքը առաջվա պես կեղեքում էին հային: Բնական է, որ այդ պայմաններում հայերն ստիպված են լինելու նորից վկայակոչել Բեռլինի դաշնագիրը և փրկության հույսով աչքերը հառած պահել եվրոպական մեծ տերություններին, թեև անցած երեք տասնամյակներին դրանցից գործնական որևէ աջակցություն չէին ստացել:

Եվ ահա՛ հուլիսի 15-ի կառավարական հայտարարությամբ՝ իթթիհադականները Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը խլում էին տերությունների ձեռքից: Այդ հայտարարությունից հետո կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների համար ինքնավարության գաղափարը լոկ երազ էր դառնում: «Հայկական հարցը» վերացված, ջնջված պետք էր համարել, քանի որ նա այլևս գոյության իրավունք (raison d'être) չէր ունենալու դաշնագիրն ստորագրած եվրոպական մեծ պետությունների համար՝ Իթթիհադի կողմից Թուրքիայի ներքին գործերին սրանց միջամտելու իրավունքից զրկելու համար:

Նախկինում, երբ «գյավուրները» փորձում էին «գլուխ բարձրացնել» և «բարենորոգումներ» պահանջել, օսմանցի կառավարողները, հարցը ժամանակավորապես հետաձգելու համար, գտնում էին դրանք արյան ճապաղիքների մեջ խեղդող գործակիցներ՝ Լիբանանում՝ մոլեռանդ դրուզներին, Մակեդոնիայում՝ կիսավայրենի ալբանացիներին (արնավուտներին), Հայաստանում՝ արյունռուչտ քրդերին: Հիմա երիտթուրքերը գործակիցների կարիք չէին զգում՝ բարենորոգումների հարցերի լուծումը ժամանակավորապես հետաձգելու համար: Սահմանադրության առկայությամբ՝ նրանք հարցը մեկընդմիշտ լուծված էին համարում:

Կառավարության հուլիսի 15-ի հայտարարությունն անսպասելի տպավորություն էր թողել բոլոր քրիստոնյաների վրա, որովհետև նոր ռեժիմը, դեռ չիրագործած ոչ մի սահմանա-

դրական սկզբունք, դեռ չկատարած ոչ մի ընդհանուր բարենորոգում, չտապում էր ջնջել եղած հին արտոնություններն ու ակտերը, որոնց հիման վրա ոչ մուսուլման տարրերը, գոնե տնտեսապես, ինչ-որ չափով ապահովագրված էին հին ռեժիմի բռնություններից:

«Ներկայումս ամենակարևոր հարցերից մեկը Թուրքիայում այն է, թե ինչ վիճակի մեջ կընկնեն այժմ Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգերը և ինչ պետք է անեն նրանք»[1],- գրում էր ռուսական թերթերից մեկը:

Չնայած տարբեր տեղերից եկող դժգոհություններին, որ պատրիարքարանը կարևորագույն այդ հարցում երկչոտ դիրքի մեջ է, բայց սա այլևս գրավոր պաշտոնական բողոք չէր ներկայացնում Բարձր Դռանը:

Ոմն Կարապետ Հակոբյան պատրիարք Իզմիրլյանին Լոնդոնից գրած 5 նոյեմբեր 1908 թվակիր նամակում մատնանշում էր, որ անգլիական թերթերում երևացել են հաղորդագրություններ, թե Թուրքիայում սահմանադրություն հռչակելուց հետո շատ քիչ ժամանակ է անցել, բայց Իթթիհադի կառավարությունն արդեն լուրջ ջանքեր է գործադրում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը վերացնելու ուղղությամբ: Նամակագիրը պատրիարքին առաջարկում էր հարկ եղած ջանքերը գործադրել, որպեսզի երիտթուրքերը չկարողանան այդ կարևորագույն պարտամուրհակը հայությունից խլել: Կ. Հակոբյանը նաև տեղեկացնում էր, որ այդ խնդրով ինքը երկու նամակով դիմել է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության քարտուղար (արտգործնախարար:- Հ. Ս.) սըր Էդուարդ Գրեյին և խնդրել, որպեսզի Լոնդոնն անտարբեր չմնա 61-րդ հոդվածը վերացնելու ուղղությամբ Բարձր Դռան ձեռնարկելիք հետագա քայլերի նկատմամբ[2]:

Չնայած Իթթիհադի կառավարության հուլիսի 15-ի՝ Թուրքահայության համար հույժ աննպաստ հայտարարությանը, հայկական քաղաքական ու հասարակական ուժերը դա միատեսակ չընդունեցին:

---

[1] **"Биржевые Ведомости"** (СПб), 11 августа 1908 г.

[2] Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 11, վավ. 164:

Հնչակյանները կտրականապես դեմ էին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը վերացնելու ձգտումներին: Կուսակցությունը բացահայտորեն դատապարտեց կառավարության հիշյալ հայտարարությունը:

«Հնչակ» թերթը հիշեցնում էր, որ Իթթիհադը հենց սկզբից է հակառակ եղել ազգային և տեղական որևէ ինքնավարության, իսկ այժմ նրա գլխավոր նպատակը կայսրության տարբեր ու այլազան բոլոր տարրերին Թուրքերի մեջ ձուլելն է, և, այդ տեսակետից, նրա ծրագրին հարելը հավասարազոր է ոչնչացման բոլոր այն իրավունքների, որ հայ ժողովուրդը Թուրքիայում ձեռք է բերել միջազգային ակտերի հիման վրա: Ուստի հայերի սրբազան պարտականությունն է կենդանի և կանգուն պահել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, առաջվա պես պայքարել Հայաստանի ինքնավարության համար[1]:

Հնչակյանները գտնում էին, որ Օսմանյան կայսրության ամբողջականության ու զորության բանալին այդ կայսրությունը կազմող ցեղերին և ազգություններին գոհացում տալու միջոցով ձեռք բերված չահակցական-դաշնակցային անկեղծ ջանքերի մեջ է: Ուստի Թուրք հայրենակիցներին պետք է հասկացնել, որ մենք հետայսու օսմանցի ենք, բայց միաժամանակ և հայ, որ ընդունել ենք կայսրության ամբողջականության սկզբունքը՝ պետությունը կազմող ժողովուրդների, այլ ոչ թե անհատների միաբանության պայմանով:

Մերժելով բացարձակ կենտրոնացումը՝ «Հնչակը» չեշտում էր, որ Հայաստանում ապրող բոլոր ժողովուրդները, առանց ցեղի և կրոնի խտրության, իրենց տեղական գործերի տնօրինողները պիտի լինեն, իսկ դա հնարավոր կլինի միայն ու միայն ինքնավարության պայմաններում[2]: Թերթը համոզված էր, որ համապետական խնդիրների նկատմամբ լոկ ***խորհրդակցական պարտականություն*** *ունեցող կառույցը, ինչպիսին կլինի առաջիկայում հրավիրվելիք օսմանյան խորհրդարանը, չի կարող բավարարություն տալ Թուրքիայի ճնչված ժողովուրդներին, այդ*

---

[1] *Տե՛ս* ***«Հնչակ»****, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 50:*

[2] *Նույն տեղում:*

թվում նաև հայությանը: Ահա թե ինչո՛ւ ընդհանուր Թուրքիան պետք է ունենա **օրենսդրական իրավունքով** օժտված խորհրդարան, որը լինի ժողովրդական միահեծան ներկայացուցչություն: Իսկ դա կարող է լինել, եթե սուլթանի ողորմածությամբ երկրին «չնորհված» միդհատյան սահմանադրությունը փոխարինվի հիրավի ժողովրդական սահմանադրությամբ, որը կմշակվի ու կհռչակվի Թուրքիայի բոլոր ժողովուրդների և դասակարգերի՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ ընտրված սահմանադիր ժողովի կողմից[1]: «Մինչեւ որ արմատապէս չփչրուի սուլթանականութիւնը՝ իր բոլոր արտօնութիւններով, մինչեւ որ խալիֆայութիւնը, որպէս կրօնական գաղափարի մի հաստատութիւն, բոլորովին չանջատուի պետութեան քաղաքական իրաւունքների գաղափարից, մինչեւ որ ռամկավարական լայն սահմանադրութիւն չլինի եւ երկրի գործադրական (գործադիր:- Հ. Ս.) իշխանութիւնը նրա պարզ յանձնառուն (mandataire) չլինի եւ սոցիալիզմը Հայաստանի ու ամբողջ Թուրքիայի մէջ չիրականանայ – մենք մեր կռուին դադար չպիտի տանք»[2],- բոլորին ի լուր հայտարարում էր «Հնչակը»՝ ավելացնելով. «Մեր պայքարի հեռահար նպատակը կլինի սոցիալիզմի տիրապետութիւնը Հայաստանի եւ ամբողջ Թուրքիայի մէջ»[3]:

1908 թ. օգոստոսին ունեցած իր ելույթներից մեկում Ստեփան Սապահ-Գյուլյանը նշել էր. «Իւրաքանչիւր ազգ ունենալով իր ներքին ինքնավարութիւնը, ոչ միայն չի ունենայ անջատման ձգտում, այլեւ իր բոլոր ոյժերով հետամուտ կլինի ընդհանուր հայրենիքի բարօրութեան եւ երջանկութեան»[4]:

Ինչ վերաբերում է վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը, ապա նա, ինչպես ասացինք, այլևս առաջնություն չէր տալիս 61-րդ հոդվածին: 1908 թ. սեպտեմբերի պաշտոնական հայտարարությամբ (Գ կետ) կուսակցությունն ազդարարում էր, որ կողմնակից լինելով Օսմանյան կայսրության ամբողջա-

---

[1] Տե՛ս **«Հնչակ»**, № 6-7, հունիս-հուլիս, 1908, էջ 50:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] **«Մշակ»**, № 208, 23 սեպտեմբերի 1908 թ.:

կանության պահպանման և չունենալով անջատողական որևէ ձգտում ու նպատակ՝ Թուրքահայ ժողովրդին դիտում է որպես «Օթոման միութեան» անբաժան տարր, միաժամանակ հանդես է գալիս հայ ցեղը այլևայլ հոսանքների մեջ լուծելու դեմ, որպեսզի նա կարողանա կատարել իր պատմական դերը Թուրքիայի ընդհանուր քաղաքականության զարգացման մեջ[1]:

Վերակազմյալ հնչակյանների պես, ՀՅ դաշնակցությունը ևս բավարարված էր երիտթուրքերի խոստացած «ազատություններով» և չէր դնում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ուժի մեջ թողնելու պահանջը:

Իհարկե, Դաշնակցության համար պահը հոգեբանորեն առավել ծանր էր: Ամբողջ 18 տարի նա պայքարել էր Թուրքահայաստանում բարենորոգումներ իրականացնելու համար: Այդ պայքարի ճանապարհին հայությունը տվել էր հարյուր հազարավոր զոհեր, հսկայական կորուստներ էր ունեցել նաև ինքը՝ կուսակցությունը: Ընդամենը ամիսների ընթացքում նա կերպարանափոխվել էր, մի ծայրաբևեռից անցել մյուս ծայրաբևեռ և, ստիպված, երբեմն միայն թույլ դժգոհություններ էր արտահայտում հայկական բարենորոգումների մերժման Իթթիհադի քաղաքականությանը, որի մշակմանը, ըստ էության, նա 1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության հակասուլթանական ուժերի համաժողովում մասնակցություն էր ունեցել:

Ցանկությունը իրականության տեղ դնելով՝ Դաշնակցության նշանավոր տեսաբան Եղիշե Թոփչյանը «Արեւելքում» լույս ընծայած «Օսմանցի հայ ենք, եղբայրնե՛ր» վերնագրով հոդվածում գրում էր.

«Ազատութեան հսկայ հոսանքը քշեց տարաւ խտրականութեան ոգին: Հայ, Թուրք, յոյն, հրեայ, քիւրտ եւ այլն ամէնը հաւասար իրաւունքներ վայելող եղբայրներ են: Իսլամը, քրիստոնեան, մովսիսականը օրէնքի առջեւ հաւասար են եւ որեւէ խնդիր չունին: Մէկ խօսքով, Օսմանեան կայսրութեան բոլոր բնա-

---

[1] *Տե՛ս* ***«Արեւելք»,*** *№ 6901, 17 սեպտեմբերի 1908 թ.:*

կիչները, առանց ազգի եւ կրօնի խտրութեան՝ հաւասար իրաւունքներ վայելող եղբայրներ են: Բնականաբար Սահմանադրութեան սկզբունքը ամէն տեղ, ամէն երկրի մէջ հաւասարութեան այս իրաւունքը կ'ապահովէ տէրութեան մը բոլոր հպատակներուն: Ո՛չ մէկ հայ միտքէն կ'անցընէ այժմ օսմանցիութենէ տարբեր գաղափարներ. բաժանման սկզբունքը կամ «Անկախ Հայաստան» մը կազմելու գաղափարը ամէնքս ալ բացարձակապէս կը դատապարտենք: Ամէն հայ կ'ուզէ օսմանցի մնալ: Մենք կատարելապէս համամիտ ենք օսմանեան կոմիտէի հաւասարութեան ու եղբայրակցութեան գաղափարին եւ արդէն մեր ուզածն ալ կեանքի եւ գոյքի կատարեալ ապահովութիւնն էր: Սահմանադրութիւնը չնորհեց մեզ այս ապահովութիւնը: Այժմ պէտք է աչալուրջ գտնուինք եւ մեզ չնորհուած Սահմանադրական Օրէնքին գործադրութեան վրայ հսկենք աչալրջօրէն: Հայոց անկախութեան ձգտում չունենալը բացարձակ իրողութիւն մըն է. այս մասին տարակուսիլն իսկ աւելորդ է. բոլոր օսմանցիները մեր եղբայրներն են: Այս մասին կասկածիլն իսկ անտեղի է»[1]*:*

Բայց բոլոր դաշնակցականները չէին, որ նման տեսակետն ընդունում էին: ՀՅԴ որոշ կազմակերպութիւններ դեմ էին օսմանցիութեան երիտթուրքական ըմբռնմանը: Իթթիհադի կենտրոնացման պահանջին նրանք հակադրում էին պետութեան վարչական ապակենտրոնացման սկզբունքը:

Ինչպես վերն արդեն նշել ենք, սահմանադրության հայտարարումից քիչ ժամանակ անց ս. Կարապետի վանքում Ռուբեն Տեր-Մինասյանի գլխավորությամբ տեղի ունեցած ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կազմակերպության ներկայացուցիչների ժողովը քննարկել էր նաև թուրքական պետության որդեգրելիք վարչական սկզբունքի հարցը և նախկինի պես ապակենտրոնացման պահանջը համարել դաշնակցականների նպատակը: Ըստ որում՝ ապակենտրոնացման տակ շրջանային ժողովը նկատի ուներ հետևյալը. ա) Քանի որ կայսրության բաղկացուցիչ ոչ

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6856, 24 Հուլիսի 1908 թ.:*

Թուրք տարրերի մի մասը անջատողական ձգտումներ ունի, մյուսները համակիր են դաշնության, այսինքն՝ ապակենտրոնացման, և քանի որ երիտթուրքական հեղափոխական կուսակցություններից մեկը՝ Ահրարը (Ազատական կուսակցություն), նույնպես դեմ չէ դաշնային սկզբունքին, ուրեմն՝ Դաշնակցությունը միասին պիտի լինի սահմանադրական այն տարրերի հետ, որոնք կընդունեն ապակենտրոնացումը: Ապակենտրոնացման դեպքում, ինքնավար Թուրքահայաստանի մեծ մասի վրա կտարածվի հայերի վարչական իշխանությունը, այնտեղ կգործեն հայկական ոստիկանությունը, դատարանները, մշակութային հաստատությունները, այդ իշխանությունից կախված կլինեն հողային հարցերի կարգադրությունը, ներգաղթի և արտագաղթի գործընթացը: Այնժամ ավելի դյուրին կդառնա հայ-քրդական և հայ-թուրքական համագործակցությունը ինքնավար Հայաստանում: Այդ դեպքում, Թուրքահայաստանի բազմազգ բնակչությունը կախված չի լինի ո՛չ կենտրոնական իշխանության ողորմածությունից և ո՛չ էլ օտար ուժերի բարյացակամությունից կամ չարակամությունից, բ) Ապակենտրոնացման պայմաններում, հայերը կարող էին ձեռք մեկնել օսմանյան պետության մեջ եղած բոլոր տարրերին և թուրքական կուսակցություններին, բայց կժխտեին օտար պետությունների վրա հենվելու սկզբունքը, գ) Առանց ապակենտրոնացման պահանջի գործադրման՝ որևէ բարենորոգում չի կարող իրագործվել՝ եթե նույնիսկ կենտրոնական իշխանությունը ցանկանա դա[1]:

Ահա սրանք էին ս. Կարապետի վանքում տեղի ունեցած ժողովի՝ ապակենտրոնացման մասին ընդունած որոշումները, որոնք, ըստ էության, արտահայտում էին ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կազմակերպության անդամների տրամադրությունները, բայց որոնք, ինչպես վերը նշեցինք, մերժեցին կուսակցության ղեկավար մարմինները: Գլխավոր պատճառն այն էր, որ կենտրոնացված պետության հետևողական ախոյան՝ կառավարող իթթիհադ կուսակցությունը վճռականապես դեմ էր

---

[1] Տե՛ս **«Հայրենիք»**, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 75-76:

ապակենտրոնացմանը, իսկ Դաշնակցությունն Իթթիհադի քաղաքական դաշնակիցն էր:

Ս. Կարապետի վանքում տեղի ունեցած ժողովի որոշման մեխը ինքնավարության խնդիրն էր: Ռուբենն ասում էր.

«Ինձ համար բնաւ հետաքրքիր չէ՝ Հասա՞ն է թէ՞ Հիւսէինը պետութեան ղեկավարը: Մենք զէնք վերցուցինք, կռուեցանք յանուն անոր, որ իւրաքանչիւր օսմանեան ժողովուրդ, անկախ իր թուէն [ու] որակէն, իր տան մէջ ազատ լինի, իր տան մէջ իրաւունք ունենայ իր ապահովութեան, տնտեսութեան եւ վարչութեան մասին մտածելու, գործելու: Ազատ այս ժողովուրդների ներդաշնակութեան մէջ է խաղաղութեան հաւաստիքը, ան կախուած չպիտի լինի միայն բարեխնամ կառավարութեան, այլեւ իւրաքանչիւրի կամքէն: Այս բոլորը ուրեմն մոռնա՞նք»[1]:

Ռուբենը ցավով էր նշում, որ «մեր շարքերէն կը մտածեն. «Մեր ի՞նչ գործն է համապետական յեղափոխութիւնը, բոլոր ազգերու կրօններու ազատութիւնը, ամէն մէկը թող իր գլխի մասին մտածէ». կամ՝ «Հեզ լինինք, եղածէն օգտուինք, մինչեւ տեսնենք ո՞ւր կ'երթայ այս յեղափոխութիւնը»[2]:

Իթթիհադի կառավարության հուլիսի 15-ի հայտարարությունը հայ ազատականները նախ ընդունեցին զգուշավորությամբ, ապա որոշ տարբերություններով հանդերձ, համարեցին տեղին:

«Մշակը» գրում էր, որ միանգամայն ճիշտ են նրանք, ովքեր գտնում են, թե դեռ ժամանակը չէ երիտթուրքերի քննադատությամբ զբաղվելու: «Հայերը, ինչպէս եւ Թուրքիայի միւս քաղաքացիները,- նշում էր թերթը,- ինչ ազգութեան եւ կրօնի որ պատկանեն, պէտք է աշխատեն, ձեռք-ձեռքի տան, որ արդարեւ, իսկական սահմանադրական ռեժիմ հաստատուի, որ սուլթանը այս անգամ էլ չը խաբէ, բայց միեւնոյն ժամանակ պէտք է հայերը հեռատեսութեամբ գործեն, որպէսզի անյաջողութեան դէպքում, քաւութեան նոխազը դարձեալ իրենք չդառնան, ինչպէս ենք այժմ[3]:

---

[1] **«Արամը»,** էջ 419:

[2] Նույն տեղում, էջ 419-420:

[3] **«Մշակ»,** № 153, 16 հուլիսի 1908 թ.:

Թերթի խմբագիրներից Համբարձում Առաքելյանը «Մշակում» հարցադրում էր, թե կարելի՞ է արդյոք, բարենորոգումների իրական գործածությունը չտեսած, հավատալով Իթթիհադի՝ լոկ թղթի վրա արած խոստումներին, նրա անկեղծ հավաստիացումներին, «մեր ձեռքով ոչնչացնենք, ջնջենք մի իրաւունք, որը ձեռք է բերուած մեծամեծ զոհողութիւններով»[1]:

Իր հարցադրմանը բացասական պատասխան տալով՝ հոդվածագիրը, սակայն, գտնում էր, որ իրագործվելիք բարենորոգումների համար գլխավոր վտանգը մնում են հին ռեժիմի ուժերը, որոնց «արմատապէս մաքրելու» համար, իբր մեծ ջանքեր են գործադրում երիտթուրքերը: Հին, հետադիմական տարրերն ամեն կերպ փորձում են «անհամաձայնութիւն առաջ բերել նոր ռեժիմի ղեկավարների եւ քրիստոնեայ ազգերի միջեւ», հետևաբար, «կը զգանք անհրաժեշտութիւնը՝ աշխատել ամէն կերպ երիտասարդ թուրքերի հետ»[2]:

Այդ նկատառումներից ելնելով՝ հոդվածագիրը նշում էր, որ «մենք աննպատակայարմար եւ այժմ անտեղի կը նկատենք որեւէ պահանջ հայերի, բուլղարների կամ մակեդոնացիների կողմից՝ տեղական ինքնավարութեան կամ աւտոնոմիայի մասին: Այդ պահանջները միայն ապագայի հարցեր են, երբ սահմանադրական ռեժիմը վերջնականապէս կհաստատուի»[3]:

Առաջ չքաշելով ինքնավարության պահանջը, շարունակում էր Համբարձում Առաքելյանը, դրա փոխարեն՝ հայերը, հույները, բուլղարները, կայսրության բոլոր հարստահարված ազգերը կարող են և պարտավոր են ձգտել, որպեսզի երիտթուրքերը նրանց համար ստեղծեն ապրելու ապահով պայմաններ, որպեսզի նրանք երկյուղ չկրեն, թե երբևիցէ իրենց կյանքին, գույքին, պատվին, անհատական ազատությանը որևէ վտանգ չսպառնա: Բայց դրա համար անհրաժեշտ է անհատական բարենորոգման ենթարկել տեղական վարչությունը և դատավարությունը, իսկ որովհետև դրանց բարենորոգումն անկարելի է առանց երկրի

---

[1] ***«Մշակ»,*** *№ 228, 16 հոկտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, № 178, 15 օգոստոսի 1908 թ.:*

[3] *Նույն տեղում:*

ֆինանսական վիճակը կարգի բերելու, ուստի պետք է արմատապես բարենորոգել նաև ֆինանսական համակարգը: Այդ բոլոր գործերում հայերը, բուլղարները, հույները պետք է ամուր կանգնեն նոր ռեժիմի կողքին[1],- իր Թուրքահայ ազգակիցներին համոզված հորդորում էր հոդվածագիրը:

Արշակ Զոպանյանը «Անահիտ» հանդեսի հավելվածում տպագրել էր երիտթուրքեր-Թուրքահայություն սպասվող փոխհարաբերություններին նվիրված հոդված, որը տվյալ պահին մի ամբողջ ծրագիր էր ազատականների համար: Հոդվածից մի ընդարձակ հատված «Մշակն» արտատպել էր: Զոպանյանը գրում էր.

«Հայը երբեք չպէտք է դադրի իր ցեղային աւանդութեանց հաւատարիմ մնալէ: Ու Թուրքերը ամենամեծ սխալ մը պիտի գործէին՝ եթէ օր մը ձգտէին ձուլել օսմանեան պետութեան ոչ Թուրք ցեղերը: Այդ տեսակ ապագայ կարելիութեան մը վախը մին է եղած գլխաւոր պատճառներէն, որոնք այսքան երկար ատեն արգիլեցին հայ յեղափոխականներուն համաձայնութիւնը երիտասարդ Թուրքերուն հետ: Հայը, մին կազմելով պետութեան բաղկացուցիչ տարրերէն, օսմանցի է օրէնքի առջեւ, եւ օսմանցիութեան բոլոր իրաւունքները պէտք է ունենայ եւ բոլոր պարտականութիւնները պէտք է կատարէ, բայց եւ հայ է իր արիւնով, խառնուածքով, պատմական աւանդութիւններով, հայ է իր հոգեբանական անջնջելի իրականութեան մէջ: Այդ երկուութեան պահպանումը, հայուն, ինչպէս արաբին, ալպանացիին կամ մակեդոնացւոյն, ասորիին կամ Թուրքիոյ յոյնին համար, ոչ մէկ վտանգ կը ներկայացնէ պետութեան ամբողջական գօրացման դէմ, քանի որ այդ բոլոր ցեղերը ազատական օսմանեան պետութեան մը կցուած ըլլալուն մէջ իրենց մասնաւոր շահերուն իսկ պահպանման երաշխիքը պիտի գտնեն»[2]:

Թափանցելով երիտթուրքերի ըմբռնմամբ օսմանցիության սկզբունքի խորքային շերտերը՝ Զոպանյանը շարունակում էր.

---

[1] ***«Մշակ»,*** *№ 178, 15 օգոստոսի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում, № 201, 13 սեպտեմբերի 1908 թ.:*

«Մէկ քանի թուրքեր, այս վերջին օրերուն արտասանած ճառերուն մէջ ըսեր են յաճախ՝ «Ա՛լ հայ, յոյն, թուրք չկայ, ամէնքս ալ օսմանցի ենք». ասիկա կը հասկնամ թուրքի մը կողմէն ըսուած եւ կ՚ընդունիմ ալ, եթէ ատիկա ըսել կ՚ուզէ թէ այլեւս թուրքի եւ ռայայի անհաւասարութիւնները օրէնքի առջեւ վերացուած են եւ թէ այժմ օսմանեան պետութեան բոլոր բնակիչները հաւասար իրաւունքներ ու պարտականութիւններ պիտի ունենան: Բայց այն հայերը, որ այդ «ա՛լ հայ չկայ, օսմանցի ենք» աղաղակը կը յեղյեղեն իրենց ճառերուն մէջ կամ «Հայաստան» բառը գործածելու կարելիութիւնը կը ճգնին փաստել, կ՚ապշեցնեն զիս»[1]:

Զոպանյանն արտառոց էր համարում օսմանցիության մեջ ոչ թուրք ժողովուրդներին կենսաբանորեն ձուլելու Իթթիհադի ցանկությունը, իսկ կայսրության ազգային տարածքները անվանափոխելու նրա ձգտումը համարում էր անհեթեթություն: Նա գրում էր. «Հայաստան աշխարհագրական եւ պատմական անունն է այն երկրին, ուր մեր հայրերը մեր ցեղը կազմեցին. ուրիշ անուն կարելի չէ տալ այդ երկրին. նոյնիսկ «ձուլուած» Ֆրանսային մեջ, Բրբթաները, Նորմանտի, Փրովանս և այլ անունները միշտ պահպանուած են: Ու հայը, օսմանցի ըլլալով, հայ ըլլալէ չի դադրիր: Հայ անունին համար 300000 հոգի զոհուելէ յետոյ, հայ մը շատ տգեղ բան մը կ՚ընէ «ա՛լ հայ չկայ» ըսելով»[2]:

Երիտթուրքերի մտավախությունը շարունակվում էր թելադրվել նրանց այն տագնապով, թե ոչ թուրք ազգերից առավել խոչորները ձգտում են կայսրությունից անջատվել: Ահմեդ Ռիզան ասում էր, թե կայսրության այլազգիները երբեք չեն ապրստամբել Պոլսում լավագույն կառավարություն հաստատելու համար, այլ նրանց շարժումների նպատակն է եղել պետությունից անջատումը: Նրանք ձգտել են բաժանման, այլ ոչ թե բարեկարգման: Երիտթուրք Վեհիբի բերանով իթթիհադականները

---

[1] **«Մշակ»,** № 201, 13 սեպտեմբերի 1908 թ.:

[2] Նույն տեղում:

հայ գործիչներին ասում էին. «Հայերդ մշակել էք ձեր շրջաններուն մէջ ստեղծել Զուիցերիա մը, իսկ քիւրտերը՝ մէյ-մէկ «տերեպէյութիւն»»[1]: Զոպանյանը հայերի դեպքում ժխտում էր այդ ցանկությունն ու հնարավորությունը, միաժամանակ նշում, որ հայկական հասարակության մեջ այդ բանին միայն առանձին քաղաքական խմբավորումներ են ձգտում: Նա գրում էր.

«Իսկապէս անջատողական ձգտում հայոց ստուար մեծամասնութեան մէջ՝ գոյութիւն չէ ունեցած. սակաւաթիւ են եղած այն հայերը, որ զուտ Հայկական Տուն մը վերականգնել երազեցին. ու երէկուան քառասային կացութեան մէջ, երբ ստրկութիւնը, տառապանքը կը խեղդէին Թուրքիայի բոլոր ցեղերը եւ ամէնէն աւելի՝ հայերը, երբ ազատութեան անձկակարօտ ու բռնութեան հանդուրժելու անկարող սրտերը բոլոր հորիզոններուն վրայ խաւար, չփոթութիւն, անստուգութիւն, յուսախաբութիւն միայն կը տեսնէին, կարելի՞ էր, նոյնիսկ ներելի՞ էր, որ գէթ ափ մը հայեր այդ դիւցազնական երազը չունենային»[2]:

Այո՛, այդ «ափ մը հայերը», իրոք, այլևս ի վիճակի չլինելով տանելու իրենց ժողովրդի ծանր վիճակը՝ ըմբոստացել են, նույնիսկ զենք վերցրել: Բայց հայ ժողովրդական զանգվածը միշտ ցանկացել է միայն ունենալ մի արդար ու քաղաքակիրթ ռեժիմ, իսկ հայ հեղափոխականները, ստվար մեծամասնությամբ, պայքարել են հիմնելու համար Հայաստանի նահանգների մեջ վարչականապես մի ինքնավար կարգ՝ միշտ օսմանյան պետությանը կապված: Իրողությունը դա է: Հայկական խնդիրն սկզբից ի վեր ծագել է քրդերի երեսից, այսինքն՝ շարունակաբար հայերը կեղեքելու և հարստահարելու նրանց ելուզակային ունակության երեսից: Տասնյակ տարիներ քրդերի հարստահարությունների դեմ բողոքներ, գանգատներ, աղերսանքներ ու աղաղակներ բարձրացան, բայց հին ռեժիմի օրոք դրանք անլսելի մնացին, ընդհանրապես անտես առնվեցին: Այդ էր պատճառը, որ հայերը, ճարահատ ու հուսաբեկ, Հայկական խնդիրը հարուցեցին:

---

[1] **«Արամը»,** *էջ 418:*

[2] **«Մշակ»,** *№ 201, 13 սեպտեմբերի 1908 թ.:*

Այսօր, երբ վերահաստատվել է սահմանադրությունը, անջատողական ձգտումները կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների մոտ նվազագույնի են հասել: Բայց այդ ժողովուրդները, «անոնք մանաւանդ, որ պատմական անցեալ մը, ինքնուրոյն քաղաքակրթութիւն մը ունէին, պարտաւոր են աշխատիլ, որ իրենց այդ յատուկ քաղաքակրթութեան պահպանումը եւ զարգացումը մշտապէս ապահովուին նոր ռեժիմի հիմունքը կազմելիք օրէնսդրութիւնովն իսկ»[1]:

Այդ ժողովուրդներից ամենահներից մեկը հայությունն է իր անցեալի փառավոր պատմությամբ և քաղաքակրթական հարուստ արժեքներով: Հանուն օսմանյան հայրենիքի՝ նա ոչ միայն պատրաստ է գնալու ամեն զոհողության, այլև բոլոր հիմքերն ունի իր նկատմամբ արժանապատիվ վերաբերմունք պահանջելու այդ հայրենիքից: «Հայը, որ երեք-չորս հազար տարուան անցեալ մը ունի իր ետեւ,- ընդգծում էր Ա. Զոպանյանը,- պարտաւոր է՝ այս գեղեցիկ ու մեծ բոպէին՝ երբ պետութեան ապագայ կեանքը ծրագրուելու վրայ է՝ բերելով հանդերձ այդ ընդհանուր վերազինութեան համար իր բոլորանուէր անկեղծ աջակցութիւնը, հոգ տանիլ նաեւ, որ իր ցեղային արժանապատուութիւնը, դիրքն ու ապագան յարգուին եւ ապահովուին»[2]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի ինքնավարության հարցում հայկական քաղաքական ուժերն ու հոսանքները, բացառությամբ պաշտոնական Դաշնակցության և Վերակազմյալ Հնչակի, միակամ էին: Նրանք պահանջում էին ինքնավար ապրելու երաշխիքներ և հանդես էին գալիս կառավարման ծայրահեղ կենտրոնացման դեմ: Նրանց համար որոշ էր ու ակնհայտ, որ ապակենտրոնացման սկզբունքը մերժելը, հակառակ նույնիսկ բարի կամեցողության, ծանր վտանգների դուռ կբանար՝ ուժեղացնելով հակաօսմանյան տրամադրությունները երկրում: Եթե թուրք հայրենակիցներն այս պարզ ճշմարտությունը չէին ըմբռնում, պետք էր փորձել նրանց հասկացնել, գլխի գցել, որ

---

[1] ***«Մշակ»,*** *№ 201, 13 սեպտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

հայերն իրենց այս պահանջներով շատ ավելի հավատարիմ կլինեն Օսմանյան կայսրությանը, քան երիտթուրքերի կենտրոնացման ծրագրերի իրականացման դեպքում: «Անոնց պէտք է սորվեցնել,- կարդում ենք Վանից Կ. Պոլիս գրած մի նամակում,- թէ հայը հպատակ ցեղերուն մէջ ամէնէն հարազատ օսմանցին է: Նոյն իսկ ազատամիտ երիտասարդ թուրքին մէջ այդ ճշմարտութիւնը գիտցողները շատ քիչ են: Քանի որ թուրքին մեծամասնութիւնը դմեզ չէ ճանչցած, Գամառ-Քաթիպան թող հնչեցնէ այս խօսքերը.

«Թո՛ւրք, լաւ պահպանէ՛ դու հայոց ազգին,

Նա քարէ պատ է քեզ, ո՛չ թշնամին»»:

Սակայն ոչ միայն քրիստոնյա, այլև կայսրության բոլոր ժողովուրդներին, առանց ազգի ու կրոնի խտրության, ազատություն պարգևելու երիտթուրքերի կեղծավոր հայտարարությունները խոր տպավորություն էին թողնում եվրոպացիների վրա և ապակողմնորոշում նրանց: Եվրոպայում գնալով ավելի ու ավելի հաճախ էին ձայներ լսվում, թե Թուրքիայի առանձին քրիստոնյա ազգերին ինքնավարություն տալու գաղափարը այլևս ժամանակավրեպ է և չի համապատասխանում երկրի ընդհանուր զարգացման տրամաբանությանն ու նպատակներին: Դա ամենից առաջ վերաբերում էր Մակեդոնական և Հայկական հարցերին: Գերմանիայի Քեոլն քաղաքում լույս տեսնող "Kölnische Zeitung" («Քեոլնիչե ցայտունգ») թերթը գրում էր. «Պետութիւնները պէտք է հասկանան, որ նրանց քաղաքականութիւնը մինչեւ այժմ սխալ է եղել: Երիտթուրքերի ապստամբութիւնը նախազգուշացում է Եւրոպայի համար, որ չի կարելի անտեսել [թուրքերի] ազգային զգացմունքները եւ որ այդպիսի քաղաքականութիւնը նշանակում է խաղալ կրակի հետ»[1]:

Եվրոպան սկսել էր ըմբռնումով մոտենալ երիտթուրքերի այն պահանջին, թե տերություններն իրենց պետք է հանգիստ թողնեն, որպեսզի հնարավորություն ունենան առանց չտապելու լուծել առկախ մնացած Մակեդոնական և Հայկական հարցե-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 176, 13 օգոստոսի 1908 թ.:*

ը՝ նոր ռեժիմի ազգային քաղաքականության համաչարադրանքում:

1896 թ. մայիսյան բարենորոգումների տապալումից հետո եվրոպական դիվանագիտությունն այլևս չէր զբաղվում Հայկական հարցով, հայության անագորույն վիճակը նրա հոգսերի առարկան չէր ամենևին: Իսկ դա նշանակում էր, որ Բեռլինի դաշնագրի՝ Մակեդոնիային և Հայաստանին վերաբերող 23-րդ և 61-րդ հոդվածների վերաքննությունը և դրանք դիվանագիտական հոգսերի ոլորտից դուրս բերելը հերթական հարց էր դարձել: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունը գտնում էր, որ այլևս ավելորդ է միջամտել Թուրքիայի ներքին գործերին: Այդ մասին նրա արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ ասված էր, որ եթե անցյալում իրենք առիթ են ունեցել ճնշում գործ դնելու անբարեկարգ Թուրքիայի վրա, որպեսզի պաշտպանեն հայերին քրդերից կամ մակեդոնացիներին մուսուլման կեղեքիչներից, ապա դա նրանք արել են մարդասիրական զգացմունքից դրդված: Բայց այն լոպեից, երբ Երիտասարդ Թուրքիան հայտարարեց իր ազնիվ ու տանելի ծրագիրը, ֆրանսիացիների ամբողջ գործն այսուհետև կլինի ուշադրությամբ հետևել այդ ծրագրի իրագործմանը:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Օսմանյան սահմանադրության վերականգնման և կայսրության բոլոր ազգերին միատեսակ իրավունքներ տալու խոստումներին, բնականաբար, պետք է հետևեր հայերի ունեցած Ազգային սահմանադրության նկատմամբ երիտթուրքերի դիրքորոշման հստակեցումը:

Արդեն 1908 թ. աշնանը երիտթուրքերը բարձրացրին հայոց Ազգային սահմանադրության լինել-չլինելու հարցը, քանի որ այդ սահմանադրությունը նրանց համար աչքի փուշ էր:

Տասնամյակներ շարունակ, նախքան օսմանյան հեղափոխությունը և դրանից հետո նույնպես, «Ազգային սահմանադ-

րութիւն հայոց»-ը Թուրքահայերի ազգային-եկեղեցական կյանքը կանոնավորող հիմնական փաստաթուղթն էր: Ուստի արժե ընթերցողին թռուցիկ կերպով ծանոթացնել դրա ստեղծման նախընթաց պայմանների և ծագման պատմությանը, ինչպես նաև համառոտ հայացք ձգել սահմանադրության հիմնական բովանդակության վրա, որպեսզի պարզ դառնա, թե ինչո՛ւ երիտթուրքական կառավարությունն ամեն ինչ անում էր դա չեղյալ հայտարարելու, հետևապես վերացնելու նաև Թուրքահայոց ազգային իշխանությունները:

Ընդհանրապես արևելյան պետություններում դարեր շարունակ, որպես հպատակ ժողովուրդների ներկայացուցիչներ, իշխանությունների առջև հանդես էին գալիս նրանց կրոնական պետերը: Վերջիններս իրենց ձեռքում էին կենտրոնացնում եկեղեցական, նաև, որոշ չափով, քաղաքական իշխանությունը: Այդ իրավունքները քաղաքական ինքնուրույնությունը կորցրած հպատակ ժողովուրդներին օտար նվաճողների տված «առանձնաշնորհումների» փչրանքներ էին:

Օսմանցիները, տիրելով Հայաստանի մեծագույն մասին, նրա բնիկ բնակիչներին՝ հայերին, իբրև քրիստոնյաների, գյավուր (անհավատ) հռչակեցին: Նրանք, ինչպես և կայսրության բոլոր քրիստոնյաները, Թուրքերի և մյուս մուսուլմանների հետ համեմատած, անիրավահավասար, ոչ լիարժեք տարրեր էին:

Արտոնյալ դիրք տալով իսլամ ժողովուրդներին՝ Թուրք սուլթանները, միաժամանակ, խստիվ կարգաբերում էին կայսրության քաղաքականապես իրավազուրկ քրիստոնյաների ներքին կյանքը:

Սուլթան Մեհմեդ II-ը 200 հազարանոց բանակով 1453 Թ. մայիսի 29-ին գրոհով գրավեց Կոստանդնուպոլիսը և վերացրեց Բյուզանդական կայսրությունը:

Շատ ժողովուրդների բախտի անիվը չրջած այդ պատմական հաղթանակի համար Մեհմեդ II-ն ստացավ «Ֆաթիհ» (հաղթական, նվաճող) տիտղոսը: Նվաճված Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը նա դարձրեց իր տերության վարչական ու տնտեսական կենտրոնը՝ նրան տալով Ստամբուլ (Իսլամ պոլիս՝ իսլամների քաղաք) անունը: Միաժամանակ սուլ-

թանը հանդուրժողականություն հանդես բերեց այլազգիների հանդեպ, որի արտահայտությունը եղավ պետության այլակրոն համայնքներին կրոնակենցաղային ու վարչական ինքնավարություն տալը: Ամենից առաջ այդպես եղավ հույների հետ, որոնց պատրիարքությունը սուլթան Մեհմեդ II-ը պահպանեց՝ դրան հավելելով «տիեզերական» տիտղոսը: Երկրորդը սիրաչահվեցին հրեաները, որոնք ստացան նույնանման պարգև՝ ռաբունապետություն: Հույներն ու հրեաներն ունեին մի քանի կետից բաղկացած իրենց ներքին կանոնական «օրենքները», կարողանում էին առավել արդյունավետ կերպով օգտագործել իրենց ընձեռված հնարավորությունները:

Հերթը հասավ հայերին: Ֆաթիհ սուլթան Մեհմեդը 1461 թ. հիմնեց Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը (Էրմենի փաթրիկլիկի): Բուրսայի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը նշանակվեց «պատրիկ» հայոց (Էրմենի միլլեթի) վրա[1]:

1461 թ. ի վեր օսմանյան հպատակ բոլոր հայերը, ներառյալ կաթոլիկներն ու ավետարանականները, ենթակա էին **Էրմենի փաթրիկխանեին** (հայոց պատրիարքարան), մինչև որ 19-րդ դարում տարադավան հայերն ունեցան իրենց առանձին համայնքային կազմակերպված կյանքը: Հետզհետե որոշ դիրք ստացան նաև կայսրության մյուս կրոնական համայնքները:

Կրոնական ինքնավարությունները կազմակերպվեցին ու գործում էին մայրաքաղաքում՝ պետական մարմինների անմիջական հսկողության տակ:

Քրիստոնյա և հրեա հոգևորականները հայտնվեցին համեմատաբար տանելի դրության մեջ: Իրենց էթնիկական միջավայրում նրանց հանձնարարվեց կրոնական և մշակութային կյանքի ղեկավարությունը: Հոգևորականությունը նաև իրավունք ստացավ իրականացնելու դատական որոշ գործառույթներ, հարկեր նշանակել, եկամուտ ստանալ կալվածքներից և այլն:

Ինչպես ցույց է տվել պատմական փորձը, եկեղեցական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրած հոգևոր դասը միշտ տենչացել է միահեծան իշխանության, հետևապես երբեք չի

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 11, 24 սեպտեմբերի 1908 թ.:

հրաժարվել իրեն տրված իրավունքներից, միաժամանակ՝ առավելագույնին է ձգտել: Այդ ընդհանուր կանոնից բացառություն չեն եղել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքները, որոնք միշտ ձգտել են իշխող լինել իրենց ազգի վրա, ոչ միայն եկեղեցական, այլև ազգային-աշխարհիկ գործերը տնօրինել իրենց ցանկության ու հասկացողության համեմատ, թեև դարեր շարունակ մի քանիսն են միայն իբրև նվիրյալ ու անձնուրաց գործիչներ արժանի եղել պատրիարքական աթոռին: Մեծ մասը պատմության մեջ մնացել է փառատենչությամբ և դավադիր գործեր կազմակերպելու ու կատարելու ընդունակությամբ, որպես խաղալիք պետական պաշտոնյաների և հայ մեծահարուստների ձեռքին:

Դեռ 18-րդ դարի վերջերին ծագել էր երկրում բարեփոխումներ կատարելու խնդիրը, որը 19-րդ դարի 30-ական թվականների սկզբներից քաղաքական անհետաձգելի պահանջ էր դարձել: Թուրքիայի կառավարողներն արդեն գիտակցում էին, որ կայսրության ամբողջականությունը կարելի է պահպանել միայն մուսուլմանների ու քրիստոնյաների միջև նոր հարաբերություններ հաստատելով:

Կյանքը թելադրում էր բարենորոգել նաև Հայ եկեղեցու կառավարման համակարգը և, առաջին հերթին, պատրիարքարանի գործունեությունը:

Ժամանակի ընթացքում պատրիարքներն ստիպված են եղել հետզհետե տեղի տալ, և ազգային գործերը տնօրինելիս խորհրդակցության կանչել հայ արտոնյալ ունևոր դասի՝ ամիրայության՝ գիտակցական որոշակի մակարդակ ունեցող ներկայացուցիչներին:

Ամիրայական դասը բաղկացած էր սեղանավորներից, մեծ վաճառականներից և պետական պաշտոնյաներից, որոնք իշխում էին հայության ազգային, հասարակական, մասամբ նաև կրոնական գործերի վրա: Այդ դասը Թուրքահայոց գործերում դրության տերն էր երկար ժամանակ: Ազգի մեջ չկար մի այնպիսի ուժ, որը կարողանար նրա ինքնիշխանության դեմ հանդես գալ: Դրամատեր ամիրաները պետության բարձր պաշտոնեության պաշտպանությունն էին վայելում:

Բայց ժամանակն անցնում էր, և փոխվում էին պայմանները

թե՛ ընդհանուր օսմանյան և թե՛ հայկական կյանքում:

1839 թ. սուլթանական գահ է բարձրանում Աբդուլ Մեջիդը: Բրիտանական կառավարության թելադրանքով՝ նույն թվականի նոյեմբերի 9-ին նա ազդարարում է մի կայսերական հրովարտակ՝ ***Նվիրական հրովարտակ*** *կամ* ***Գյուլխանեի խաթթ-ի շերիֆ*** *անվամբ*[*]*, որի ներշնչողը և կազմողներից մեկը Լոնդոնում նախկին դեսպան, մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ Ալի փաշան էր: Հրովարտակը փաստորեն ազդարարում էր կառավարման արևելյան բռնապետական ձևերից հրաժարվելու և եվրոպական ձևերին անցնելու մասին:*

Սուլթանը հայտարարում էր, թե ինքն իր բոլոր հպատակներին, առանց ազգի ու կրոնի խտրության, համարում է հավասար իրավունքներով օժտված քաղաքացիներ, նրանց բոլորին տալիս է կյանքի ու գույքի ապահովություն: Նա նաև խոստանում էր վերջ դնել աշխարհիկ և հոգևոր մեծ ու փոքր ինքնիշխանների կամայականություններին[1]*:*

Սուլթան Աբդուլ Մեջիդի 1839 թ. ***Նվիրական հրովարտակը*** *Օսմանյան կայսրության մեջ բարենորոգումների առաջին փորձն էր: Դարեր շարունակ իսլամական կրոնին ապավինած մուսուլմանները և «անհավատ» քրիստոնյա փոքրամասնությունը, որոնք շատ սահմանազատված էին իրարից, այժմ, ըստ հրովարտակի գաղափարի, պիտի մոտենային իրար:*

Գյուլխանեի խաթթ-ի շերիֆով Թուրքիայում սկսվեց մի ժա-

---

[*] *Գյուլհանե (Վարդատուն) անունն էր Կ. Պոլսի այն քեռչկի (պալատի), որի պարտեզում 1839 թ. նոյեմբերի 3-ին Մուստաֆա Ռեշիդ Ալի փաշան հռչակեց խաթթ-ի շերիֆը:* ***Խաթթ*** *(արաբ.) – բառացի նշանակում է գիր, ձեռագիր: Երբ խոսքը սուլթանի ձեռագրի մասին էր՝ սովորաբար ավելացնում էին շերիֆ (նվիրական) կամ հումայուն (արքունի) բառերը:* ***Խաթթ-ի շերիֆ*** *կամ* ***խաթթ-ի հումայուն*** *նշանակում է* ***սուլթանական հրովարտակ****:*

[1] ***Տե՛ս Դ. Т. Розен,*** *История Турции от победы и реформы в 1826 году, СПб, 1872, ч. 2, с. 19,* ***А. Убичин*** *и* ***П. де Куртейл****, Современное состояние Оттоманской империи (статистика, правление, администрация, финансы, армия, общины немусульманские и пр.), СПб, 1877, с. 203-207,* ***"Турецкий сборник (к событиям на Ближнем Востоке)",*** *СПб, 1909, с. 73-76,* ***Ф. Шабанов****, Государственный строй и правовая система Турции в период Танзимата, Баку, 1967, с. 42-50.*

*մանակաշրջան, որն ստացավ **Թանզիմաթ*** անունը:*

Գյուլխանեի հրովարտակից հետո քրիստոնյաները, մասնավորապես հայերը, սկսեցին էլ ավելի կարևոր դեր խաղալ Օսմանյան կայսրության ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական կյանքում, գիտության ու մշակույթի բնագավառներում, պետության վարչական գործերում: Հայերի դրսևորած վարչակառավարչական բարձր ունակությունների վկայությունն էր այն, որ նրանցից շատերը պատասխանատու պաշտոններ էին վարում և ամենայն բարեխղճությամբ ու նվիրումով կատարում իրենց ծառայողական պարտականությունները: Հայերը բոլոր մարզերում հավատարմորեն ծառայում էին Թուրքական պետությանը և իշխանություններից ստացել էին «միլլեթ-ի սադիկա» («հավատարիմ ազգ») անունը[1]: Գերմանացի ֆելդմարշալ Հելմուտ Կարլ Մոլթքեն դրա համար հայերին նույնիսկ անվանել է «քրիստոնյա Թուրքեր»:

Խաթթ-ի շերիֆով տրված որոշ ազատությունների պայմաններում գլուխ էր բարձրացնում երկար ժամանակ իրավազուրկ մնացած Կ. Պոլսի հայ ժողովրդական տարրը՝ դեմոսը, որը մեծ մասամբ բաղկացած էր էսնաֆներից (արհեստավորներից), որոնց թիվն այդ ժամանակ արդեն բավական մեծ էր մայրաքաղաքում: Դեմոսի մեջ առաջացած խլրտումները և բարձրացող խուլ բողոքներն ուղղված էին ամիրայության համիշխանության դեմ[2]:

Եվ սկսվում է իր տեսակի մեջ յուրօրինակ դասակարգային պայքար մի կողմից ամիրաների և եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաների, մյուս կողմից դեմոկրատ լուսավորյալ մտավորականների, արհեստավորական (էսնաֆ) դասի, գավառի գիտակից գյուղացիության և եկեղեցականների՝ փոքրամասնություն կազմող թևի միջև՝ հիմնականում ոչ թե տնտեսական-սոցիալական, որքան ազգային մշակութային-կրթական ասպարե-

---

* ***Թանզիմաթ*** *անունն առաջացել է արաբերեն* ***Թանզիմ*** *բառից, որը նշանակում է* ***կարգավորում:***

[1] *Տե՛ս* ***Ж. Кейзер****, Европа и новая Турция, Госиздат, Москва, 1925, с. 64.*

[2] *Տե՛ս* ***«Գործ»****, № 11, 24 սեպտեմբերի 1908 թ.:*

զում: Վերջիններս պահանջում էին բարեկարգել հայոց պատրիարքարանը՝ դա օժտելով սահմանադրությամբ, և այդ իսկ պատճառով կոչվում էին «սահմանադրականներ»: Դրան հակառակ՝ կղերա-ամիրայական դասը դեմ էր որևէ փոփոխության, ուստի ստացել էր «հակասահմանադրականներ» անունը:

Կ. Պոլսի հայ կղերի ուղեղում շարժում նկատվեց այն բանից հետո, երբ Ռուսաստանի ցար Նիկոլայ I-ի 1836 թ. մարտի 11-ի հրովարտակով կյանք մտավ ռուսահայոց կրոնակենցաղային և կրթալուսավորական իրավասություններն ու պարտականությունները սահմանող կանոնադրությունը՝ «Պոլոժենիա»-ն (“Положение”):

Կայսրության մեջ հայերն առաջիններից մեկն էին, որ ուժ տվեցին Թանզիմաթյան բարենորոգումներին, ցույց տվեցին, թե ինչպես պետք է դեմոկրատացնել, բարեփոխել վարչակառավարական համակարգը՝ աչքի առաջ ունենալով եվրոպականը:

Եվրոպական կրթություն ստացած հայ նոր սերունդն արդեն 19-րդ դարի 40-ական թվականներին հանդես եկավ Կ. Պոլսի հայ համայնքի և հայոց պատրիարքարանի գործերը ժողովրդավարական հիմքերի վրա դնելու պահանջով: Ուսումնառած երիտասարդները մի շարժում ծավալեցին, որի նպատակն էր հասարակությանը մասնակից դարձնել ազգային բոլոր կարևոր գործերին, ինչպես նաև սահմանափակել պատրիարքի բացարձակ իշխանությունը, թուլացնել ազդեցությունը Պոլսի հայ ամիրաների, որոնք համայնքի կյանքում որևէ փոփոխություն մտցնել չէին ցանկանում:

Հենվելով եվրոպական ժողովրդավարական սկզբունքների վրա և ելնելով 1839 թ. խաթթ-ի շերիֆի ընձեռած հնարավորությունից՝ Պոլսի հայ նոր սերունդը մեծ եռանդով ու ջանքերով հասավ այն բանին, որ պատրիարքարանի գործերի համար կազմվեցին հատուկ ժողովներ (հանձնաժողովներ), որոնց անդամներն ընտրվում էին առանց դասակարգային խտրության: Առաջին հանձնաժողովը՝ ելմտականը կազմվեց 1841 թ.: Նույն թվականին կազմվեց նաև երկրորդ հանձնաժողովը՝ կրթական-դպրոցական գործը ղեկավարելու և կանոնակարգելու համար: Դա բաղկացած էր 30 անդամներից, ըստ որում՝ 30 տեղից 14-ը

հատկացված էր էսնաֆներին: Միաժամանակ, ամիրաներին արգելվեց միջամտել ազգային գործերին: Երկար դիմադրությունից հետո ամիրաներն ստիպված էին հաշտվել կատարվածի հետ: Չնայած դրան, ազգային գործերի տերն ու տնօրենը շարունակում էր մնալ պատրիարքը, որովհետև հոգաբարձությունը դեռ չէր կազմակերպված որպես համայնքի կողմից լիազորված իրավազոր մարմին, այլ գործում էր պատրիարքի անմիջական վերահսկողությամբ:

Վիճակը որոշ չափով փոխվեց, երբ Կ. Պոլսի պատրիարքական աթոռին նստեց Մատթեոս արք. Զուխաջյանը: Ազգային գործերը վարելու համար, նրա օրոք, 1847-ին, պատրիարքարանին առընթեր գործող ընդհանուր վարչության համար հիմնվում է Թուրքահայ առաջին ժողովրդական մարմինը՝ **Հայոց գերագույն ժողովը**: Պատրիարքի նախագահությամբ գործող այս մարմինը բաղկացած էր երկու ժողովներից, որոնցից մեկը կոչված էր զբաղվելու քաղաքական, իսկ մյուսը՝ կրոնական հարցերով:

Քաղաքական գործերը կարգավորող ժողովը, որը բաղկացած էր 20 աշխարհականներից, ստացավ **Քաղաքական ժողով** անունը: Այս մարմնի անդամների թվում էին մտավորականներ, ամիրաներ, վաճառականներ, նաև արհեստավորներ: Կրոնական հարցերը տնօրինող ժողովը կոչվեց **Կրոնական կամ հոգևոր ժողով**՝ իր 14 հոգևորական անդամներով: Քաղաքական և կրոնական երկու ժողովները երբ միասին նիստ էին գումարում, կազմում էին «Խառը ժողով», որը Թուրքահայոց գերագույն ժողովն էր: Գաղտնի քվեարկությամբ նա ընտրում էր Թուրքահայության քաղաքական և հոգևոր առաջնորդ՝ պատրիարք: «Խառը ժողովի» նիստերին նախագահում էր պատրիարքը, իսկ նրա բացակայության ժամանակ նրան փոխարինում էր Քաղաքական ժողովի (այլ ոչ թե Կրոնական ժողովի) ատենապետը:

Այդպիսով, հիշյալ երկու ժողովներով սկիզբ դրվեց Թուրքահայոց գործերի սահմանադրական կարգավորմանը: Դրանց միջոցով սահմանափակվում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքների միապետական իշխանությունը: Մյուս կողմից, այդ ժողովները սահմանափակում էին ամիրաների արտոնյալ տիրապետությունը:

Այդ ամենը նշանակում էր, որ առաջին հերթին բուն պոլսահայությունն էր հնարավորություն ստացել հանդես գալու իր տրորված իրավունքների պաշտպանությամբ:

Ավելի ուշ՝ 1853 թ., ստեղծվեց ուսումնական խորհուրդ:

Հանձնաժողովներ և խորհուրդներ կազմելուց հետո, բնականաբար, առաջ եկավ դրանց փոխադարձ իրավասությունները ճշտելու, այսինքն՝ կանոնադրություն ունենալու պահանջը:

Սակայն Թուրքահայոց գործերի սահմանադրական կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքների հակառակորդները քնած չէին: Պատրիարքները, թաքուն թե բացահայտ, փափագում էին վերականգնել իրենց ինքնակամ ու անվերահսկելի գործունեությունը, իսկ ամիրաները անպատվություն էին համարում միևնույն ժողովում աթոռակից լինել հասարակ էսնաֆների հետ[1]: Դրան ավելանում էր այն, որ դեռևս գծված չէին հիշյալ երկու ժողովներից յուրաքանչյուրի իրավասության սահմանները, հստակեցված չէին նրանց պարտականություններն ու իրավունքները, որի պատճառով Հոգևոր ժողովը երբեմն փորձում էր Քաղաքական ժողովին թելադրել: Զկար նաև յուրաքանչյուր ժողովի համար հատուկ ձևակերպումներ ունեցող կանոնադրություն: Ընդունած որոշումների գործադրության համար ժողովներն անհրաժեշտ լծակներ չունեին: Այդ թերիները դուռը բաց էին պահում ներքին չփոթմունքի ու խռովությունների համար:

Հայոց գերագույն ժողովի ստեղծումը և նրա առաջին տարիների գործունեությունն համընկան Օսմանյան կայսրության մեջ բռնափակված ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական խմորումներին, որոնք օրըստօրե ծավալվում էին: Սուլթանական կառավարությունը մտահոգ էր, որ իր ճանկերից ազատագրված Հունաստանը կարող է օրինակ դառնալ ազատություն տենչող մյուս, հատկապես քրիստոնյա, ժողովուրդների համար:

Այլազգիների ազատագրական ոգորումները մարելու հա-

---

[1] *Տե՛ս* ***«Գործ»****, № 12, 25 սեպտեմբերի 1908 թ.:*

մար, սուլթանական կառավարությունն ստիպված էր մի շարք կանխարգելիչ միջոցների դիմել: Դրանցից մեկն այն էր, որ Բարձր Դուռը, 1854 թ. օգոստոսի 25-ի հրովարտակի համաձայն, հույն, բուլղար և թուրքահայ հանրություններին արտոնեց՝ իրենց ներքին ազգային գործերը բարեկարգելու համար մի քանի (14-16) կետից կազմված կանոնագրեր մշակել ու դրանք իր հաստատմանը ներկայացնել:

Թուրքերի «հավատարիմ ազգ» (միլլեթ-ի սադիկա) հորջորջած հայության ղեկավարությունն ստանձնած Կ. Պոլսի համայնքի ընտրախավը կառավարության այդ քայլն ընկալեց որպես ազգին մի բացառիկ առանձնաշնորհման ընծայաբերում: Ենթադրվում էր նաև, որ թուրքահայոց ազգային ու եկեղեցական ներքին կյանքը կարգավորող կանոնագիրը, վերջապես, կփակի Հայոց գերագույն ժողովում պարբերաբար ծագող շփոթմունքների ու խռովությունների դուռը:

Պոլսահայ առաջադիմական գործիչները, առանց ժամանակ կորցնելու, կազմեցին մի հանձնախումբ, որի մեջ մտան աշխարհիկ և հոգևոր նշանավոր դեմքեր, որոնցից ոմանք իրենց ուսումն ու կրթությունն ստացել էին Կ. Պոլսում՝ Սկյուտարի հայոց ճեմարանում, Ղալաթա-սերայի պետական լիցեյում, Մխիթարյանների Փարիզի և Վենետիկի վարժարաններում, Գաբրիել վրդ. Այվազովսկու Փարիզի «Արևելյան դպրոցում», ուրիշ առաջնակարգ ուսումնական հաստատություններում, հաղորդակցվել ժամանակաշրջանի քաղաքագիտական և իրավագիտական առաջավոր դպրոցներին և պայծառ հետք թողել թուրքահայ ժողովրդի ազգային-մշակութային առաջադիմության ասպարեզում: Հանձնախմբում ընդգրկվել էին պոլսահայ համայնքի երիտասարդ, լուսավորյալ գործիչներ՝ բժ. Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, բժ. Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Գրիգոր Աղաթոնը, Նիկողայոս Պալյանը, Հակոբ Կրճիկյանը, Մ. Մինասը, Մ. Ալթուն-Տյուրին, Ա. Հյունքյարպեյենտյանը, հետագայում՝ Գալուստ Կոստանդյանը, Կարապետ Ութուջյանը և ուրիշներ: Վճռական դերակատարությունն ունեին առաջին հինգ գործիչները:

Հանձնախմբի առջև խնդիր դրվեց՝ պատրաստել թուրքա-

հայերի ներքին կյանքը կանոնավորող կանոնագիր՝ Բարձր Դռանը ներկայացնելու համար:

Պոլսահայ լուսավոր մտավորականները գործի անցան պատասխանատվության բարձր զգացումով և մեծ խանդավառությամբ: Դա պատահական չէր: Զկարողանալով ազդել համայն պետության ճակատագրի վրա՝ նրանք ուրիշ հնար չգտան պետական գործերին անմասնակից, մենիշխանական ու կամայական կյանքի ծանրության տակ գալարվող ազգայինների առաջադիմությանը նպաստելու, նրանց միտումներին ու հակումներին նվազագույն գոհացում տալու, քան ստեղծելու նրանց կյանքը քիչ թե չատ կանոնավորող մի փաստաթուղթ[1]*:*

Երեք պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու փոքրիկ Սարդինիայի զինվորական և Ավստրիայի բարոյական աջակցությամբ Թուրքիան Ղրիմի պատերազմում խուսափել էր պարտությունից: Որպես փոխհատուցում, դաշնակիցներն օսմանյան կառավարությունից պահանջել էին երկրում սկսել նոր, ընդհանուր բարենորոգումներ և դրան զուգահեռ առանձին արտոնություններ շնորհել քրիստոնյա հպատակներին:

1856 թ. փետրվարի 18-ին սուլթան Աբդուլ Մեջիդը հռչակեց ***Արքունի հրովարտակ*** *կամ* ***խաթթ-ի հումայուն*** *անունն ստացած հրովարտակը:*

Խաթթ-ի հումայունը Գյուլխանեի խաթթ-ի չերիֆից հետո երկրորդ կարևոր հրովարտակն էր, որի նախագիծը կազմել և սուլթանին էր ներկայացրել մեծ վեզիր Ֆուադ փաշան: Այս հրովարտակը հիմնականում կրկնում ու լրացնում էր Գյուլխանեի խաթթ-ի չերիֆը:

Խաթթ-ի հումայունը կարևոր նշանակություն ունեցավ քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի համար: Այդ հրովարտակի տրամադրություններից ելնելով՝ եվրոպական պետություններն անընդհատ ճնշում էին գործադրում Թուրքիայի վրա՝ ի նպաստ նրա քրիստոնյա բնակիչների: Այդ նույն հրովարտակն է եղել

---

[1] *Տե՛ս* ***Վահան Զարդարեան,*** *Յիշատակարան (1512-1933), հատ. Ա, թիւ 1-10, Գահիրէ, 1933, էջ 15,* ***Աղդէ քհնյ. Փայլակեան,*** *Եկեղեցական պատմութիւն հայոց, Փարիզ, 1942, էջ 288:*

Հայոց Ազգային սահմանադրության և, առհասարակ, պատրիարքարանների ստացած առանձնաշնորհումների հիմնաքարը:

Սուլթան Աբդուլ Մեջիդի բարենորոգումները արմատական վերափոխումներ չէին, այլ՝ երկչոտ փորձեր ինչ-որ կերպ կարգ ու կանոն հաստատելու երկրում, կարգավորելու ավատապետական հարաբերությունները և դրանով իսկ ամրապնդելու գոյություն ունեցող կարգերը:

Զնայած Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի կեսերին շարունակում էր մնալ մի ծայրահեղ հետամնաց պետություն, բայց Թանզիմաթը, այնուամենայնիվ, ամբողջությամբ առած, որոշ դրական հետք թողեց կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, մասնավորապես նպաստելով երկրում սահմանադրական գաղափարների աստիճանական տարածմանը:

Աբդուլ Մեջիդի խաթթ-ի հումայունը նոր լիցք հաղորդեց թուրքահայերի ներքին կյանքը կանոնավորելու համար կանոնագիր կազմող պոլսահայ մտավորական գործիչներին: Թեև սուլթանի հրովարտակը հրապարակվեց այն ժամանակ, երբ նրանք արդեն ավարտել էին իրենց գործը կանոնագրի վրա, բայց հետագա ամիսներին շարունակեցին դա սրբագրել՝ ելնելով Արքունի հրովարտակի ոգուց ու առաջադրանքներից: Նրանք էին՝ Նիկողայոս Զորյանը, Նահապետ Ռուսինյանը, Ստեփան Ոսկանյանը (Ոսկան), Հարություն Սվաճյանը, Մատթեոս Մամուրյանը, Գալուստ Կոստանդյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Հովսեփ Շիշմանյանը (Մերենց), Գրիգոր Զիլինգիրյանը, Արմենակ Հայկունին (Համբարձում Ջիզմեջյան) և ուրիշներ: Նրանց մեծ մասը կրթություն էր ստացել Արևմտյան Եվրոպայում, հատկապես Փարիզում, մոտիկից ծանոթացել տեղի հասարակական ու քաղաքական կարգերին ու մշակույթին[1]:

Երկար ու լարված աշխատանքով ստեղծված կանոնագրքի շարադրանքը 1857 թ. մարտի 22-ին ներկայացվեց Հայոց ազգային գերագույն ժողովի քննարկմանը[2]: Կանոնագրի շարադրան-

---

[1] *Տե՛ս* ***Վարդան Պարսամյան****, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 33:*

[2] *Տե՛ս* ***Մաղաքիա արք. Օրմանեան****, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 4626:*

քի պատրաստումը և նրա քննարկումը տևել էին ամբողջ չորս տարի: Քննարկման ընթացքում հայ նշանավոր ճարտարապետների գերդաստանի կրտսեր ներկայացուցիչ Նիկողայոս Պայլանը և Նահապետ Ռուսինյանն առաջարկեցին կանոնագիրը կոչել սահմանադրություն:

Ազգային սահմանադրության նախագիծը ոչ միայն սահմանափակում էր Թուրքահայոց կյանքում Կ. Պոլսի հայոց պատրիարքի չափից ավելի մեծ իրավունքները, այլև մայրաքաղաքի կղերա-ամիրայական հետադիմական դասին փաստորեն զրկում էր ազգային-եկեղեցական գործերում ունեցած մենաշնորհից: Հենց դա էր պատճառը, որ վերջինս կատաղի պայքար էր սկսել սահմանադրության նախագծի և նրա կերտիչների դեմ, որը տարիներ տևեց: Այդ անզիջում պայքարը գլխավորում էր Թուրքահայ հետադիմության պարագլուխ Հովհաննես Զամուռճյանը (Տերոյենց): Նրա «Երեւակ» թերթի համարները լի էին սահմանադրության դեմ ուղղված կատաղի հարձակումներով:

Անդրադառնալով Թուրքահայոց սահմանադրության շուրջ ծավալված պայքարին, Միքայել Նալբանդյանը, որը որոշ ժամանակ մնացել էր Կ. Պոլսում, ոգևորված էր սահմանադրության ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքներով և արդյունքը բնութագրում էր որպես մեծ նվաճում:

Մի քանի տարի անց գրած «Ազգային թշուառութիւն» հոդվածում Նալբանդյանը գրում էր. «Ծանր և համբաշարժ էր ազգային լուսավորության ընթացքը Տաճկաստանի մեջ և այդ ընթացքն ևս անհիմն և սայթաքելի, հայտնի է, թե այն թշվառ հանգամանաց մեջ ուրիշ կերպ չէր ևս կարող լինել: Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ոհ քաշելով եկան գնացին, շատ իրավունք ոտնակոխ եղան, շատ գանձեր հափշտակվեցան, շատ տուներ քարուքանդ եղան, մինչև որ սորանից մի քանի տարի առաջ «Սահմանադրություն» բառը մեր ազգայինք արտասանեցին:

Սահմանադրություն, կրկնեց հարստահարված և կիսաչունչ ժողովուրդը. Սահմանադրություն, լսվեցավ եգիպտական բուրգերից մինչև Վարագա սարը, Սահմանադրություն, աղաղակեցին և հրճվեցան կենդանի երիտասարդները...

Սահմանը դրվեցավ: «Կեցցե՜ Սահմանադրություն»:

Տակավին լսվում էր այս խոսքը հազարավոր բազմության բերանից», երբ «յուրյանց խավարային որջերից» դուրս սողացին ազգի արյունով, յուրյանց քիթ ու պոռնկը ներկած բռնակալները և աղաղակեցին՝ «Ի՞նչ ասել է Սահմանադրություն, տերության մեջ տերություն կանգնեցնե՞լ», **«ազգը սալթ անհավատ ընել... տերության դեմ ապստամբեցնել»**: «Ազգի դավաճանների համար ամեն հնար սուրբ էր և չուն կարելի էր մատաղ առնել, միայն թե Սահմանադրությունը կործանվեր»[1]:

Սահմանադրության նախագծի չուրջ ծավալված պայքարում ծնունդ էր առնում ապագա հայ ազգային կյանքի քաղաքական հակասությունների նախատիպը: Միքայել Նալբանդյանը նկատում էր. «Երևեցան կուսակցությունք, Սահմանադրության պաշտպանք և թշնամիք, հառաջընթացք և հետընթացք, **լուսավորյալք և խավարյալք**»[2]:

Կ. Պոլսում ծավալված պայքարի եռանդուն մասնակիցներ էին արևմտահայ դեմոկրատներ Հարություն Սվաճյանն իր «Մեղուով», Կարապետ Փանոսյանն իր «Միւնատի»-ով, Զմյուռնիայի ժողովրդավարների օրգան «Ծաղիկը»: Հեռվից (Մոսկվայից) սահմանադրականներին աջակցություն էր ցույց տալիս Ստեփանոս Նազարյանցի «Հիւսիսափայլը»:

Սահմանադրականների և հակասահմանադրականների երկարատև պայքարն ավարտվեց առաջինների հաղթանակով: Սահմանադրության նախագծի տևական քննարկումներից հետո Կ. Պոլսի հայոց ազգային գերագույն ժողովը, վերջապես, հավանություն տվեց փաստաթղթին, հաստատեց դա և որոշեց ներկայացնել հանրության դատին:

Փաստաթղթի նախագծի հանրային քննարկման ժամանակ կրքերը կրկին բորբոքվեցին: Սահմանադրության հակառակորդներն առաջ բերեցին նոր իրարանցում դա խափանելու համար, բայց այս անգամ էլ պարտություն կրեցին: Սահմանադրու-

---

[1] **Միքայել Նալբանդյան,** Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1940, էջ 103-104:

[2] Նույն տեղում, էջ 104:

թյունը մշակողների ջանքերով 1860 թ. մայիսի 24-ին գումարվեց մտավորականության, բարձրաստիճան եկեղեցականների, ամիրայության և էսնաֆության ներկայացուցիչների ընդհանուր ժողով, որը պետք է վավերացներ շարադրանքը՝ իր 150 հոդվածներով: Ժողովը բացեց նորընտիր պատրիարք Սարգիս արք. Գույումջյանը, որը խոստացավ ամեն միջոց ձեռնարկել սահմանադրությունը կյանքում կիրառելու համար: Այնուհետև սահմանադրության շարադրանքն ընթերցվեց կետ առ կետ, որից հետո որոշվեց. քանի դեռ սահմանադրության համաձայն տեղի չեն ունեցել երեսփոխանների ընտրություններ և նրանց միջոցով չեն ձևավորվել Քաղաքական և Կրոնական ժողովները, ուստի կազմել այդպիսի ժամանակավոր ժողովներ, որոնք կգործեն մինչև նոր ընտրությունները:

Այսպես ծնունդ առավ և սկսեց գործել Թուրքահայոց սահմանադրությունը*: Այդ օրերի մի տեղեկագրում կարդում ենք.

«Մեր ազգը այս երկրին ժողովրդոց մէջ այն միակ ազգն է, որ իր ազգային ներքին գործոց վարչութեան համար սահմանադրութիւն մը ունի, որի շրջանակն որչափ որ անձուկ ըլլայ, անոր բարիքը սկսած ենք վայելել, թէեւ անոր տրամադրութեանց գործադրութեան մէջ ակամայ թերութիւններ կը նշմարուին տակաւին»[1]:

Սահմանադրությունը լույս աշխարհ եկավ ավելի քան քսանամյա (1841 թ. սկսած) տանջալից ու հոգեմաշ մաքառումների արդյունքում: Պայքարի եղանակները եղան բազմազան ու տարաբնույթ. բանակռիվ ու բանավեճ, քայլարշավներ, բազմահազարանոց ցույցեր, մակույկներով երթեր, դեմոկրատական հայկական մամուլի էջերում անդրկուլիսյան սադրանքների մերկացումներ, թերթերի փակման դեմ բողոքի ցույցեր, ձերբակա-

---

* 1860 թ. Ազգային սահմանադրությունը Հայոց ազգային գերագույն ժողովի կողմից հրատարակվելուց հետո նույն թվականին ամբողջովին թարգմանվեց ֆրանսերեն և հաջորդ տարի, 1861-ին, լույս տեսավ Փարիզում հրատարակվող "Revue de l'Orient, de l'Algérie et des Colonies" ամսագրում:

[1] **Սարուխան**, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հատ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 133:

լություններ և բանտարկյալների ազատ արձակման համար բողոքներ, վարժարանների փակում և դրանց վերաբացման համար մղված բուռն պայքարներ և նույնիսկ պատրիարքարանի շենքի վրա հարձակումներ ու ժողովասրահի քանդում[1]:

Ազգային սահմանադրության հիման վրա 1860 թ. օգոստոսի 25-ին Կ. Պոլսում գումարվեց Ազգային ընդհանուր ժողով[2], որին մասնակցում էին 120 ընտրված պատգամավորներ և նրանց այսպես կոչված անդամակիցները, այսինքն՝ ազգային, պետական, կրթական, հոգևոր, լրագրության բնագավառների նշանավոր գործիչները, որոնք ընտրված պատգամավորներ չէին:

Ազգային սահմանադրությունը որպեսզի ուժ ստանար և գործածության մեջ դրվեր, պետք է հաստատվեր կառավարության կողմից: 1862 թ. ապրիլին դա ներկայացվում է Բարձր Դռան հաստատմանը: Սահմանադրությունը մշակող հանձնախումբը դրա շարադրանքի հետ Բարձր Դռանն է ներկայացնում նաև մի հայտագիր, որով երախտագիտություն է հայտնվում «կայսերական տէրութեանը»՝ «սահմանադրություն մը պատրաստել» թույլ տալու համար[3]:

Բայց կառավարությունը երկար ժամանակ անուշադրության էր մատնել սահմանադրության հաստատումը: Հարկ եղան ազդեցիկ հայերի միջամտություններն ու երկար բանակցություններ Բարձր Դռան հետ:

Երկար ձգձգումներից հետո, վերջապես, 1863 թ. մարտի 17-ին, թուրքական կառավարությունը հատուկ ֆերմանով վավերացրեց և արտոնեց վերաքննված ու փոփոխված սահմանադրությունը[4]: Նույն օրը Բարձր Դուռը դա ուղարկեց հայոց*

---

[1] *Տե՛ս* ***«Արարատ»*** *բացառիկ (Պէյրութ), 1 հունվարի 2003 թ., էջ 55:*

[2] *Տե՛ս* ***Մաղաքիա արք. Օրմանեան****, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 4634:*

[3] *Տե՛ս* ***«Ազգային սահմանադրութիւն հայոց»****, Կ. Պոլիս, 1908, էջ 5-6:*

* *Վերաքննված սահմանադրությունը ժամանակին թարգմանվել է ֆրանսերեն, ինչպես նաև լույս է տեսել Հենրի Լինչի նշանավոր "Armenia" («Արմենիա») աշխատության մեջ (տե՛ս* ***H. Lynch****, Armenia, vol. II, London, 1901):*

[4] *Տե՛ս* ***Մաղաքիա արք. Օրմանեան****, Ազգապատում, Գ հատ., Բ հրատ., էջ 4685:*

պատրիարքարան՝ ի գործադրություն՝ իբրև **պետական օրենք**[*]:

Վերաքննված սահմանադրությունը Ազգային ընդհանուր ժողովն ընդունեց 1863-ի մարտի 20-ին և միաձայն որոշեց, որ «ազգին կողմէ չնորհակալութեան ուղերձ մը գրուի եւ ղրկուի առ Բ. Դուռն»: Որոշումն անմիջապես կատարվեց[1]:

Սահմանադրության 1860 թ. չարադրանքի մեջ Բարձր Դուռը կատարել էր մի չարք փոփոխություններ, որոնք, սակայն, չէին փոխել փաստաթղթի բնույթը և հոդվածների բովանդակությունը: Ավելին, փաստաթուղթը ավելի կուռ ու ամփոփ էր դարձել: Կատարված փոփոխություններից նշենք մի քանիսը:

1860 թ. հայերեն օրինակում փաստաթուղթը կոչվում էր «Ազգային սահմանադրություն հայոց», իսկ 1863-ի թուրքերեն տարբերակն անվանվեց «Հայ միլլեթի կանոնադրություն» («Նիզամնամէի միլլեթի էրմենեան»): «Սահմանադրություն» բառի գործածությանը ինքը՝ թուրքական կառավարությունը, դեմ չէր, միայն թե դա չօգտագործվեր պաշտոնական թղթերում[2]:

Ֆրանսիացի միջազգայնագետ-իրավագետ Ռոլեն Ժակմենը դրան տվել է իր բացատրությունը, գրելով.

«Ես հակուած եմ կարծելու, թէ այս խաբուսիկ եւ բարձրագոչ անունը պարզ սխալմունքի արդիւնք չէ: Թուրք կառավարութիւնը, ընդունելով այս «սահմանադրութիւնը»՝ հաւատարիմ է մնացել իր սիստեմին, որ է փառաւոր էթիքեթներ (etiquette) դնել տափակ տուփերի վրայ»[3]:

Սահմանադրության 1860 թ. տարբերակի «ազգային պատգամավոր» հայերեն բառակապակցությունը համապատասխանում է թուրքերեն «միլլեթ մեբուսի» բառակապակցությանը, բայց թուրքերեն տարբերակում (1863 թ.) գործածված են «միլ-

---

[*] Ազգային սահմանադրության (1863) թուրքերեն թարգմանությունը թուրքական կառավարության համար ուներ բնագրի ուժ, հրատարակվել էր օսմանյան Քաղաքացիական օրենսգրքի մեջ և նրա մասն էր կազմում:

[1] **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 28:

[2] Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 4625, **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 253-254:

[3] **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 253-254:

լեթ վեքիլի» (ազգի փոխանորդ) կամ «մեջլիսի ումումի ազասը» (ընդհանուր ժողովի անդամ) ձևերը[1]:

***Սահմանադրության** նախնական (1860 թ.) տարբերակում նախատեսված էր 150 հոդված, Ազգային ժողովի պատգամավորների թիվը՝ 220, ժողովի նիստերին կարող էին մասնակցել ազգային պատգամավորների անդամակիցներ: Նշված էր, որ Ընդհանուր ժողովը տեղի է ունենում կանոնավորապես, ամեն տարվա մարտ ամսին, իսկ արտակարգ պայմաններում կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:*

***Վերաքննված** սահմանադրության մեջ հոդվածների թիվը պակասեցվել էր և հասցվել 99-ի: Ազգային ժողովի պատգամավորների թիվը 220-ից իջեցվել էր 140-ի, ժողովին մասնակցող անդամակիցների թիվը չպիտի անցներ 180 հոգուց (քանի որ այնպես էր պատահում, որ ժողովի նիստերին մասնակցում էին ընտրված պատգամավորներից երկու-երեք անգամ ավելի անդամակիցներ): Նախատեսված էր սովորական ընդհանուր ժողովը գումարել երկու տարին մեկ անգամ՝ երկու ամիս տևողությամբ, իսկ արտակարգ նիստեր գումարելու համար ամեն անգամ նախօրոք պետք է տեղյակ պահվեր Բարձր Դռանը, որի հավանությունն ստանալուց հետո միայն կարելի էր հրավիրել նիստերը[*]:*

Այնուհետև՝ եթե 1860 թ. սահմանադրության մեջ պատրիարքի մասին հոդված չկար, ապա վերաքննվածում նախատեսվում էր, որ ընտրվող պատրիարքը պետք է նախապես արժանանա կառավարության վստահությանը, լինի օսմանյան հպատակ գոնե իր հորից սկսած և լինի 35 տարեկանից ոչ պակաս[2]:

---

[1] Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 4684-4685, նաև՝ **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 18:

[*] Սակայն, որպես կանոն, Բարձր Դռան այս պահանջը չէր կատարվում: Ազգային ժողովը նիստեր էր գումարում համարյա անընդհատ, առաջվա նման դրանց չարունակում էին մասնակցել նախատեսվածից երկու-երեք անգամ ավելի անդամակիցներ: Կառավարությունը չտեսնելու էր տալիս վերաքննված սահմանադրության համապատասխան հոդվածների այդ խախտումները:

[2] Տե՛ս **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 25-27:

Վերաքննված սահմանադրությունը նախորդ տարբերակից առանձնանում էր նաև ուրիշ, ոչ էական, փոփոխություններով:

Քանի որ մեզանում ընթերցողներից շատերը տեղյակ չեն Ազգային սահմանադրության բովանդակությանը, ուստի մենք նպատակահարմար գտանք համառոտ կերպով ներկայացնել փաստաթուղթը՝ հիմնականում պահպանելով հոդվածների շարադրանքն այնպես, ինչպես կա սահմանադրության շարադրանքում՝ խուսափելով ավելորդ մեկնաբանություններից:

«Ազգային սահմանադրութիւն հայոցը», բաղկացած է ներածական մուտքից և 99 հոդվածներից, որոնք ամփոփված են հինգ՝ Ա, Բ, Գ, Դ, Ե գլուխներում[1]:

Ներածականում տրված են Ազգային սահմանադրության սկզբունքները, որոնք շարադրված են հինգ կետերում (հոդվածներում):

Առաջին կետը սահմանում էր, որ ազգն, ամբողջությամբ վերցրած, և նրա անդամներն առանձին-առանձին, կազմում են մի միասնություն, քանի որ ամեն հայ անհատ պարտավորություններ է կրում ազգի հանդեպ, ազգն էլ, իր հերթին, պարտավորություններ ունի յուրաքանչյուր անհատի նկատմամբ: Բացի պարտավորություններից, ամեն անհատ նաև իրավունքներ ունի՝ տրված ազգից և ազգի մյուս անհատներից: Հետևապես՝ ազգն ու ազգայինները փոխադարձ պարտավորություններով կապված են միմյանց հետ: Այնպես որ՝ մեկի պարտավորությունը մյուսի իրավունքն է:

Ներածականի երկրորդ կետով սահմանվում էին ազգի անդամների պարտականությունները ամբողջական ազգի հան-

---

[1] *«Ազգային սահմանադրութիւն հայոցը» տե՛ս* ***«Արեւելք»*** *օրաթերթի 1908 թ. հուլիսի 15-ի (№ 6849) և հուլիսի 17-ի (№ 6851) թվերում,* ***«Ազգային սահմանադրութիւն հայոց»,*** *Կ. Պոլիս, 1908 թ. և այլն: Մենք աշխատել ենք մի շարք հրատարակությունների հետ՝* ***«Ազգային սահմանադրութիւն հայոց»****, Կ. Պոլիս, 1860, տպ. Միհէնտիսեան.* ***«Ազգային սահմանադրութիւն հայոց»****, Կ. Պոլիս, 1860, տպ. Ռ. Յ. Քիւրքճեան.* ***«Ազգային սահմանադրութիւն հայոց (Նիզամնամէի միլլեթի էրմէնեան)»****, Կ. Պոլիս, 1914, հրատ. «Արծիւ» ժողովրդական գրավաճառանոցի:*

դեպ, այն է՝ յուրաքանչյուրն իր կարողության չափով մասնակցում է ազգի պետքերից բխող ծախքերին, հոժարակամ հանձնառու է ազգին մատուցելիք ծառայություններին և սիրով հնազանդվում է նրա առաջադրած պատվերներին: Այս ամենից բխում էր, որ «ազգայնոց այս պարտաւորութիւնքը Ազգին իրաւունքն են»:

Հաջորդ կետով ամրագրված էին ազգի պարտականություններն անհատների նկատմամբ, այն է՝ հոգալ ազգայինների բարոյական, մտավոր և նյութական պահանջմունքները, ծավալել մատաղ սերնդի կրթության գործը՝ աղջիկ թե տղա հավասարապես, խնամք տանել կարոտյալների նկատմամբ, արդարասիրությամբ խաղաղեցնել ազգի անդամների միջև ծագած վեճերը և այլն: Իբրև այս կետից բխող եզրակացություն, նշված է. «Ազգին այս պարտաւորութիւնքը ազգայնոց իրաւունքն են»:

Չորրորդ կետով սահմանվում էր, որ ազգը փոխանորդաբար ներկայացնողը և ազգ-անհատ փոխադարձ պարտավորությունների կանոնավոր կատարմանը հսկող իշխանությունն ընտրովի **Ազգային վարչությունն** է, որին և հանձնված է Թուրքիայի հայոց ներքին գործերի տնօրինությունը՝ օսմանյան տերության հատուկ արտոնությամբ ու Հայոց ազգային սահմանադրությամբ:

Ներածության հինգերորդ կետով ազդարարված էր, որ վարչությունը ազգային լինելու համար պարտադրաբար պետք է լինի ներկայացուցչական-պատգամավորական:

Ներածությունն ամբողջանում է այն հաստատումով, որ պատգամավորական վարչության հիմքը **իրավունքների** ու **պարտականությունների** արդար սկզբունքն է, որի ուժը կայանում է «ձայն բազմացի» մեջ, որը և **օրինավորության** սկզբունքն է:

Ներածությանը հաջորդած Ա գլուխը (1-84-րդ հոդվածներ) նվիրված էր Ազգային վարչության առանցքը կազմող «Ազգային կեդրոնական վարչութեան»: Սա գործադիր մարմին էր, որին ենթակա էին Քաղաքական և Կրոնական ժողովները, ավելի ճիշտ՝ Քաղաքական և Կրոնական ժողովները կազմում էին Ազգային կեդրոնական վարչությունը, որը պատրիարքի հետ պետք

է գործադրեր այն բոլոր օրենքները, որոնք հաստատում էր Ազգային ժողովը: Կեդրոնական վարչության գործունեության ուղղությունները սահմանող առաջին 16 հոդվածները վերաբերում էին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի ընտրությանը և հրաժարականին, նրա պաշտոնին ու պարտականություններին, պատրիարքական դիվանատան գործունեությանը:

Առաջին հոդվածում արձանագրված է, որ պատրիարք ընտրվող անձը պետք է լինի եպիսկոպոսաց դասից, արժանացած լինի ինչպես տերության, այնպես էլ ամբողջ ազգի վստահությանն ու հարգանքին, ունենա պատրիարքական պաշտոնին վայել հատկություններ ու արժանապատվություն, գոնե իր հորից սկսած՝ լինի օսմանյան հպատակ և լրացրած լինի կյանքի երեսունհինգ տարին: Երբ պատրիարքը վախճանվի կամ հրաժարվի և կամ ուրիշ որևէ պատճառով պատրիարքական աթոռը թափուր մնա, այնժամ Կրոնական և Քաղաքական ժողովները մեկտեղ գալով, ընտրում են պատրիարքական տեղապահ և, դիմելով Բարձր Դռանը, խնդրում են հաստատել իրենց որոշումը: Տեղապահը ժամանակավորապես վարում է պատրիարքարանի գործերը, միաժամանակ ձեռնարկում պատրիարքի ընտրության կազմակերպումը, որի գործընթացն անցնում է հետևյալ փուլերով.

Ամենից առաջ տեղապահը կազմում է Օսմանյան կայսրության հպատակ և այնտեղ ապրող բոլոր հայ եպիսկոպոսների ցուցակը և ներկայացնում Կրոնական ժողովին: Այս ժողովն, իր հերթին հրավիրում է եկեղեցական համագումար-ժողով, որը գաղտնի քվեարկությամբ պատրաստում է «ընտրելեաց ցուցակ»՝ հետևյալ կերպ. համագումարի յուրաքանչյուր անդամ թղթի վրա գրում է այն բոլոր եպիսկոպոսների անունները, որոնք, իր կարծիքով, արժանի են պատրիարք լինելու: Այնուհետև արժանի նկատված բոլոր անունները քվեների չատության կարգով առնվում են մի ցուցակի մեջ, որը տեղապահի միջոցով ներկայացվում է Քաղաքական ժողովին: Սա, ցուցակում ընդգրկված անձանց թեկնածություններն ըստ արժանիքների քննելուց հետո, ամենից ավելի արժանավորներից փակ, գաղտնի քվեարկությամբ և քվեների առավելությամբ ընտրում է հինգ

հոգու և ցուցակը ներկայացնում Ընդհանուր ժողովին: Ինչպես այդ ցուցակը, այնպես էլ եկեղեցական համագումար-ժողովի պատրաստած առաջին ցուցակը կախվում են Ազգային ընդհանուր ժողովի սրահում: Ծանոթանալով այս երկու ցուցակներին և Կրոնական ու Քաղաքական ժողովների կարծիքներին, Ընդհանուր ժողովն ընտրում է պատրիարք՝ գաղտնի քվեարկությամբ և քվեների բացարձակ առավելությամբ (2-րդ հոդված): Ընտրությունը կատարելուց հետո պատրաստվում է տեղեկագիր, որը տեղապահի միջոցով մատուցվում է Բարձր Դռանը: Պատրիարքը հաստատվում է ըստ վաղեմի սովորության՝ կայսերական հրամանով (3-րդ հոդված): Այդ հրամանն ստանալուն պես Ընդհանուր ժողովը մի քանի անձերից կազմված պատգամավորության միջոցով հրավիրագիր է ուղարկում պատրիարք ընտրված անձին (եթե նա Կ. Պոլսում է), կամ ուղարկում է պաշտոնական հրավեր (եթե Կ. Պոլսից դուրս է): Նորընտիր պատրիարքը, ստանալով հրավիրագիրը, գալիս է պատրիարքարան և Մայր եկեղեցում հավաքված Ընդհանուր ժողովի առջև հանդիսավոր ուխտ է անում, ասելով. «Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ազգային Ժողովոյս՝ հրապարակաւ կ'ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան եւ Ազգիս, եւ ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»: Այդ պահին անմիջապես դադարում է տեղապահի պաշտոնը, և նորընտիր պատրիարքը, Բարձր Դռան հրավերով, ներկայանում է սուլթանին, որը և պաշտոնական կերպով հաստատում է նրա ընտրությունը (4-րդ հոդված):

Պատրիարքի պարտականություններն են՝ հետևել Ազգային սահմանադրության և առանձին-առանձին դրա բոլոր հոդվածների ճշտությամբ գործադրությանը: Իր հասցեով ստացված գործերը պատրիարքը հանձնում է այն ժողովին, որին վերաբերում են դրանք (8-րդ հոդված): Եթե որևէ եկեղեցական, վարժապետ, եկեղեցու, վանքի, դպրոցի կամ հիվանդանոցի գործակալ չի հետևում Սահմանադրության սկզբունքներին, պատրիարքը նրան պաշտոնից հանելու առաջարկ է անում Կեդրոնական վարչության համապատասխան ժողովին, խորհրդին կամ հոգաբարձությանը (10-րդ հոդված): Պատրիարքն իրա-

վունք չունի ինքը լուծարելու կամ փոխելու Կրոնական և Քաղաքական ժողովներն ու դրանց խորհուրդները: Բայց երբ տեսնի, որ դրանցից մեկը գործում է Սահմանադրության հակառակ, ապա առաջին անգամ բացատրություն է պահանջում տվյալ ժողովի կամ խորհրդի ատենապետից: Եթե չարունակվի նույն ապօրինի ընթացքը, պատրիարքը երկրորդ զգուշացումն է անում, երրորդ անգամ կարող է դիմել Ընդհանուր ժողովին՝ լուծարելու տվյալ Կրոնական կամ Քաղաքական ժողովը, ուրիշ դեպքում՝ միայն դրանց խորհուրդները (11-րդ հոդված):

Սահմանադրության 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները վերաբերում էին պատրիարքի հրաժարականի խնդրին: Եթե պատրիարքը չարժվում կամ վարվում է Սահմանադրության տրամադրություններին հակառակ, ընկնում է ամբաստանության տակ (5-րդ հոդված): Պատրիարքին մեղադրելու իրավունք ունեն միայն Ընդհանուր ժողովը և Կրոնական ու Քաղաքական ժողովները: Մեղադրող կամ բողոքող ժողովը, Բարձր Դռան կարգադրությունն առնելով, պատրիարքին խնդրում է գումարել Ընդհանուր ժողով: Եթե պատրիարքը դեմ է լինում այդ առաջարկին, ժողովն այդ մասին երկրորդ բողոքագրով տեղեկացնում է Բարձր Դռանը: Կրկին կատարված բողոքից հետո և այդ բողոքի համեմատ՝ Բարձր Դուռը հանձնարարում է հրավիրել Ընդհանուր ժողով՝ Կ. Պոլսում գտնվող եպիսկոպոսներից երիցագույնի նախագահությամբ: Նիստի հավաքվելով՝ Ընդհանուր ժողովն իր միջից ընտրում է տասը հոգուց բաղկացած քննիչ հանձնաժողով, որի հինգ անդամները եկեղեցականներ պիտի լինեն, մյուս հինգը՝ աշխարհականներ, ընդ որում՝ այդ տասը քննիչների կազմի մեջ չպիտի լինի ամբաստանող և բողոքող անձանցից որևէ մեկը: Եղած մեղադրանքներն ու բողոքները քննելուց հետո քննիչ հանձնաժողովը տեղեկագիր է ներկայացնում Ընդհանուր ժողովին, որը և խնդիրը որոշում է գաղտնի քվեարկությամբ: Այս որոշման տակ ստորագրում են դրան կողմ քվե տված մի քանի ժողովականներ: Կրոնական և Քաղաքական ժողովների ատենապետները Ընդհանուր ժողովը նախագահած եպիսկոպոսի հետ գնալով պատրիարքի մոտ՝ նրան են ներկայացնում Ընդհանուր ժողովի որոշումը: Պատրիարքը, իմանալով

Ազգի որոշակի կամքի արտահայտության մասին, պարտավոր է հրաժարական տալ: Իսկ եթե նա մերժում է հրաժարականի որոշումը, ապա Ընդհանուր ժողովը դիմում է Բարձր Դռանը՝ պատրիարքին անհապաղ պաշտոնից զրկելու խնդրանքով (6-րդ հոդված): Հրաժարական տված պատրիարքն անցնում է վիճակավոր եպիսկոպոսների կարգը (7-րդ հոդված):

Պատրիարքարանում հաստատվում էր դիվանատուն, որն ուներ երեք գրասենյակ. Ա) Թղթակցության գրասենյակ, որը պետք է զբաղվեր պատրիարքարանից ուղարկվող և պատրիարքարան եկած գրություններով, Բ) Արձանագրությունների գրասենյակ, որի խնդիրը Ազգային ժողովների և Խորհուրդների թղթերը կարգավորելն էր, Գ) Ազգահամարի գրասենյակ, որն զբաղվելու էր ազգայինների ծննդյան, ամուսնության և վախճանման վերաբերյալ արձանագրություններով: Այս վերջին գրասենյակից պետք է տրվեին ազգայինների թե՛ ճանապարհորդության և թե՛ ուրիշ անձնական գործառնությունների համար պետք եղող վավերաթղթերը, նաև՝ ծննդյան, ամուսնության և մահվան վկայականները (13-րդ հոդված): Դիվանատունն ունենում է դիվանապետ, որին ընտրում է Քաղաքական ժողովը և պատասխանատու է դիվանատան բոլոր գործառույթների համար, նաև կատարում է Ընդհանուր ժողովի ատենադպրությունը: Դիվանապետը պարտավոր է ամեն տարի թե՛ Կ. Պոլսում և թե՛ մայրաքաղաքից դուրս ծնված, ամուսնացած և վախճանած ազգայինների տոմարների օրինակները բերել տալ պատրիարքարան և արձանագրել տալ Դիվանատան ազգահամարի գրասենյակում: Դիվանապետը հայերենի քաջահմուտ պիտի լիներ, միաժամանակ վարժ տիրապետեր թուրքերենին և ֆրանսերենին (14-րդ հոդված): Դիվանատունն ուներ հայերենին լավ տիրապետող և իրենց պաշտոնում հմուտ բավական թվով դիվանադպիրներ: Ամեն մի դիվանադպիր ըստ իր պաշտոնի պատասխանատու է այն ժողովին կամ խորհրդին, որին վերաբերվում է իր գործունեության բնույթով, իսկ բոլորը ենթակա են դիվանապետին (15-րդ հոդված): Ազգահամարի գրասենյակից տրված որևէ թուղթ կամ վկայագիր վավերական չի կարող լինել, եթե դրա վրա չկային պատրիարքի կնիքը և դիվանապետի

ստորագրությունը (16-րդ հոդված):

Սահմանադրության 17-23-րդ հոդվածները վերաբերում էին Երուսաղեմի պատրիարքի ընտրության և պաշտոնավարության հարցերին: Երուսաղեմի պատրիարքը ս. Հակոբա Աթոռի ցկյանս գահակալն է, միաժամանակ՝ հայոց ազգին պատկանող, Երուսաղեմում գտնվող ուխտատեղերի տնօրենն ու ս. Հակոբա վանքի միաբանության նախագահը (17-րդ հոդված): Երուսաղեմի պատրիարքը նույնպես ընտրվում է Կ. Պոլսի Ազգային Ընդհանուր ժողովի կողմից՝ ս. Հակոբա վանքի միաբանության անդամների կազմից (20-21-րդ հոդվածներ): Նա պետք է 35-ից բարձր տարիք ունենար և ի ծնե Օսմանյան տերության հպատակ լիներ (22-րդ հոդված): Երուսաղեմի պատրիարքի դեմ կարող են ամբաստանությամբ հանդես գալ ս. Հակոբա վանքի միաբանությունը, Կ. Պոլսի Կրոնական և Քաղաքական ժողովները: Նման պարագայում խնդիրը քննում է Ազգային Ընդհանուր ժողովը, և եթե հաստատվում են առաջադրված մեղադրանքները, ապա պատրիարքը պարտավոր է հրաժարական տալ (19-րդ հոդված):

Ա գլխի 24-84-րդ հոդվածները նվիրված էին ***Ազգային Ընդհանուր ժողովին*** *(Կրոնական ժողով + Քաղաքական ժողով): Այս հոդվածներում մանրամասն սահմանված էին Ընդհանուր ժողովի, որպես օրենսդիր մարմնի, կազմության եղանակը, իրավասությունների ու պարտականությունների սահմանները, եկեղեցական և աշխարհական պատգամավորների ընտրության կարգը և այլն:*

Ազգային Ընդհանուր ժողովը բաղկացած էր 140 պատգամավորից, որոնց 1/7 մասը, այսինքն՝ 20-ը, Կոստանդնուպոլսում բնակվող եկեղեցականներից ընտրված պատգամավորներ էին, 2/7 մասը կամ 40-ը՝ գավառներից ընտրված ազգային պատգամավորներ, 4/7 մասը, այսինքն՝ 80-ը, Կոստանդնուպոլսի թաղերից ընտրված պատգամավորներ (57-րդ հոդված):

Ընդհանուր ժողով գումարելուց գոնե վեց օր առաջ պատրիարքարանը պետք է հրավերներ ուղարկեր ժողովի անդամներին: Ընդհանուր ժողովը կարող էր կայանալ միայն այն դեպքում, եթե ներկա էին պատգամավորների կեսից ավելին՝ գոնե

71 հոգի (59-րդ հոդված): Ընդհանուր ժողովը գումարվում էր ամեն երկու տարին մեկ անգամ՝ ապրիլ ամսվա վերջերին և տևում էր երկու ամիս: Նրա աշխատանքներին, բացի պատգամավորներից, խորհրդակցական ձայնով մասնակցելու էին հրավիրվում նաև պետական աշքի ընկնող պաշտոններ ունեցող ազգայիններ, Կ. Պոլսի ոչ պատգամավոր հանրահայտ հոգևորականներ, մտավորականության ներկայացուցիչներ՝ գրողներ, ուսուցիչներ, բժիշկներ, լրագրողներ՝ Ընդհանուր ժողովի մասնակիցների թիվը հասցնելով մինչև 400-ի:

Ընդհանուր ժողովը հիմնականում քննարկում էր անցած ժամանակաշրջանի Քաղաքական և Կրոնական ժողովների հաշվետվությունները, Ազգային վարչության ներկայացրած եկամուտների ու ծախսերի տեղեկագրերը: Նա կարող էր նաև արտակարգ նիստեր ունենալ նախապես պատրիարքարանի կողմից Բարձր Դռանը իմաց տալուց և համաձայնություն ստանալուց հետո: Նրա արտահերթ հրավիրման առիթ կարող էին ծառայել Էջմիածնի կաթողիկոսական ընտրություններին Թուրքահայության մասնակցության խնդիրը, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքների, Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսների ընտրությունները (61-րդ հոդված) և այլն:

Ազգային Ընդհանուր ժողովը նաև ընտրում է Կրոնական ժողով և Քաղաքական ժողով:

Կրոնական ժողովը (24-35-րդ հոդվածներ և 63-64-րդ հոդվածներ) բաղկացած է 14 գործող եկեղեցականներից, որոնց տարիքը պետք է բարձր լիներ երեսուն տարեկանից և ձեռնադրված պետք է լինեին առնվազն հինգ տարի առաջ (24-րդ հոդված):

Ազգային Ընդհանուր ժողովի բացման նախօրեին պատրիարքի հրավերով տեղի է ունենում Կ. Պոլսում գտնվող բոլոր եկեղեցականների համագումար-ժողով, որն ընտրում է Կրոնական ժողովի անդամների թվի եռապատիկը և ընտրյալներին ներկայացնում Ազգային Ընդհանուր ժողովին: Վերջինս նրանց միջից փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում է Կրոնական ժողովի 14 անդամներին: Պատրիարքը հատուկ տեղեկագրով Բարձր Դռանն է ներկայացնում Կրոնական ժողովի ընտրված

անդամների ցուցակը, որը հաստատվում է կայսերական հրամանով (25-րդ հոդված):

Կրոնական ժողովը երկու տարին մեկ, ապրիլի վերջին ամբողջ կազմով լուծարվում է և մայիսի սկզբին նորոգվում նոր ընտրությունների միջոցով: Ըստ որում՝ Կրոնական ժողովի նախկին անդամները վերընտրվել կարող են երկու տարի հետո միայն, այսինքն՝ հաջորդ ընտրությունների ժամանակ (26-րդ հոդված):

Կրոնական ժողովն իրականացնում է ազգային-կրոնական գործերի ընդհանուր ղեկավարությունը: Նրա պարտականություններն են՝ եկեղեցիների բարեկարգության հսկելը, Հայաստանյայց եկեղեցու դավանությունն ու ավանդույթներն անխախտ պահելը, եկեղեցականների վիճակի բարելավումը, ազգին արժանավոր ու բանիմաց վարդապետներ ու քահանաներ հասցնելու համար ազգային վարժարանների աշխատանքների վրա հսկողություն սահմանելը, ազգի մեջ առաջացած կրոնական վեճերը քննելն ու լուծելը (28-րդ հոդված): Կրոնական ժողովում ամեն տեսակ ընտրություն տեղի է ունենում փակ, գաղտնի քվեարկությամբ:

Ազգային Ընդհանուր ժողովի ընտրած մյուս ժողովը ***Քաղաքական ժողովն*** *է:*

Քաղաքական ժողովը (36-56-րդ հոդվածներ) բաղկացած է ազգային գործերին և տերության օրենքներին տեղյակ 20 աշխարհականներից (36-րդ հոդված), որոնք ընտրվում են Ընդհանուր ժողովում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ և քվեների բացարձակ առավելությամբ, որից հետո պատրիարքի կողմից ներկայացվում են Բարձր Դռանը և հաստատվում կայսերական հրամանով (37-րդ հոդված):

Այս ժողովը երկու տարին մեկ, ապրիլի վերջին, ամբողջ կազմով լուծարվում է և մայիսի սկզբին նորոգվում նոր ընտրությամբ: Ժողովի անդամները, երկու տարի անցնելուց հետո, նորից կարող են ընտրվել: Ու թեև նրանք առաջիկա երկու տարում Քաղաքական ժողովում չեն կարող տեղ ունենալ, բայց կարող են ուրիշ որևէ ազգային պաշտոն ստանձնել (38-րդ հոդված):

Քաղաքական ժողովի պարտականությունը ազգային-քա-

ղաքական գործերը վարելն է: Ժողովի հիմնական խնդիրներն են՝ ազգի բարեկեցությանը և առաջադիմությանը նպաստելը, իր ենթակայության տակ գտնվող խորհուրդների ազգօգուտ առաջարկություններն ուշադրությամբ քննելը և դրանք ընդունելուց հետո կյանքում կենսագործելը (41-րդ հոդված):

Քաղաքական ժողովն ունի իր կազմած 4 տեսուչ խորհուրդները[*]*: Դրանք են՝ ուսումնական, տնտեսական, դատաստանական և վանօրէից, ինչպես նաև երեք հոգաբարձություն՝ ելմտական, կտակների, հիվանդանոցի:*

Ուսումնական խորհուրդը *բաղկացած է 7 աշխարհականներից: Այդ խորհրդի պաշտոնն է՝ հայոց ազգի դաստիարակության և կրթության ընդհանուր տեսչությունը, ազգային վարժարանների բարեկարգությանը հսկելը, թե՛ տղաների և թե՛ աղջիկների վարժարաններին կատարվելիք նվիրատվությունները խրախուսելը, ուսուցիչների նյութական դրությունը բարելավելու և նոր, հմուտ հերթափոխ պատրաստելու միջոցներ ձեռնարկելը: Ուսումնական խորհուրդը վկայական է տալիս ազգային վարժարանների ուսումը լրացրած աշակերտներին, որոշում, թե ի՞նչ դասագրքերով պետք է վարել ուսուցումը, կազմակերպում է տարեկան քննությունները: Դպրոցներում կրոնական առարկաների ուսուցման բարելավման խնդիրներով Ուսումնական խորհուրդը դիմում է Կրոնական ժողովին, քանի որ այդ ժողովն է որոշում կրոնական գիտելիքների ծավալները, ընտրում դասագրքերը, նշանակում կրոնի դասատուներին, կազմակերպում կրոնական առարկաներից քննություններ և տալիս վկայականներ (45-րդ հոդված):*

Տնտեսական խորհուրդը *բաղկացած է տնտեսագետ աշխարհականներից՝ ընտրված Քաղաքական ժողովի կողմից, քվեների առավելությամբ: Այդ խորհրդի պարտականությունն է՝ իրականացնել ընդհանուր տեսչություն Կ. Պոլսում գտնվող ազգային բոլոր հաստատությունների և նրանց կալվածքների*

---

[*] *Տեսուչ խորհուրդներն այսօրվա արտահայտությամբ հանձնաժողովներն են:*

նկատմամբ, անխոնջ կերպով հսկել և հոգ տանել նույն հաստատությունների բարեկարգմանը: Տնտեսական խորհուրդը պետք է հոգ տանի, որ ամեն մի ազգային կալվածք օրինական կալվածագիր ունենա: Ազգային որևէ կալվածքի գնումն ու վաճառումը չի կարող տեղի ունենալ առանց Տնտեսական խորհրդի գիտության, Քաղաքական ժողովի հավանության և պատրիարքի կնիքով հաստատման: Կ. Պոլսում և շրջակա վայրերում որևէ չինարարություն կամ վերանորոգում չի կարելի ձեռնարկել՝ առանց Տնտեսական խորհրդի գիտության և Քաղաքական ժողովի համաձայնության (46-րդ հոդված):

Դատաստանական խորհուրդը բաղկացած է 40 տարեկանը լրացրած, ամուսնացած 8 իրավագետից, որոնցից 4-ը պիտի լինեին եկեղեցական և 4-ը՝ աշխարհական: Դատաստանական խորհրդի նախագահը պատրիարքի փոխանորդն է, իսկ խորհրդի բոլոր անդամներին ընտրում է Խառը ժողովը: Դատաստանական խորհրդի պաշտոնն է՝ լուծել ընտանեկան վեճերը, քննել և որոշել Բարձր Դռան կողմից պատրիարքարան փոխանցված դատերը: Եթե Դատաստանական խորհրդում որոշված դատի դեմ դատապարտյալը բողոքարկի, ապա խնդիրը վերստին քննվում է Կրոնական, Քաղաքական և կամ Խառը ժողովներից մեկում՝ նայած թե հարցը դրանցից որի՞ն էր վերաբերում (44-րդ հոդված):

Վանօրէից խորհուրդը (48-րդ հոդված) բաղկացած է 7 անձից, որոնց Քաղաքական ժողովն ընտրում է քվեների առավելությամբ: Այս խորհրդի պաշտոնն ու պարտականությունն է՝ հսկել յուրաքանչյուր վանքի կանոնադրության գործադրությանը, ստուգել վանքերի եկամուտներն ու հասույթները, քննել ու կանոնավորել ծախսերը: Յուրաքանչյուր վանքի վանահայր ընտրվում է իր միաբանության կողմից, ապա Վանօրէից խորհրդի միջոցով ներկայացվում Կեդրոնական վարչության Խառը ժողովի հավանությանը և պատրիարքի հաստատմանը: Վանահայր ընտրվող անձը պետք է լրացրած լինի 35 տարին և լինի օսմանյան քաղաքացի վարդապետերից: Բոլոր վանքերը պարտավոր են ազգի բարոյական զարգացմանը ծառայել: Ամեն վանք, իր կարողության չափով, պետք է ձգտի ունենալ

ընծայարան, թանգարան, տպարան, հիվանդանոց և դրանց նման ուրիշ ազգօգուտ հաստատություններ: Այդ ամենի վրա Վանօրէից խորհուրդը իրականացնում է իր վերահսկողությունը:

Ելմտական հոգաբարձությունը *կազմված է 7 հաշվագետ անձերից, որոնց Քաղաքական ժողովն ընտրում է քվեների առավելությամբ: Այս հոգաբարձության պարտականությունը Ազգային Կեդրոնական վարչության բյուջեի վրա վերահսկելն է: Բյուջեի մուտքը գոյանում է ազգային ընդհանուր տուրքից, Կ. Պոլսի պատրիարքական դիվանատան հասույթից, ազգի անվամբ եղած կտակներից ու նվերներից: Բյուջեի ելքն է՝ պատրիարքարանի և դիվանատան սովորական ծախսերը, Կեդրոնական վարչության ենթակա հաստատություններին և կարոտյալ թաղերին տրվելիք նպաստները, ուրիշ պատահական ծախսեր: Ելմտական հոգաբարձությունը որոշված ժամկետներին բյուջեի մուտքի և ելքի վերաբերյալ հաշվետվություններ է ներկայացնում Քաղաքական ժողովին (49-րդ հոդված):*

Կտակների հոգաբարձությունն *ունի 7 անդամ, որոնցից 3-ը եկեղեցական, 4-ը՝ աշխարհական: Նրանց ընտրում է Խառը ժողովը՝ քվեների առավելությամբ: Այս հոգաբարձության պաշտոնը ազգային կտակների տնօրինությունն է, պարտականությունը՝ կտակների՝ օրինավոր կերպով և կտակարարների կամքին համեմատ, գործադրությանը հսկելը: Հոգաբարձության կանոնադրությունը պատրաստում է Խառը ժողովը և հաստատում է Ընդհանուր ժողովը: Կտակների հոգաբարձությունն իր գործունեության մասին որոշված ժամկետներում հաշվետվություն է ներկայացնում Տնտեսական խորհրդին, որը դա ստուգելով ու վավերացնելով, իր հերթին դրա մասին հաղորդում է Քաղաքական ժողովին (50-րդ հոդված):*

Հիվանդանոցի հոգաբարձությունը *բաղկացած է 9 հոգուց, որոնց ընտրում է Քաղաքական ժողովը՝ քվեների առավելությամբ, և որոնցից երկուսը պիտի լինեին վկայված բժիշկներ: Այդ հոգաբարձության պաշտոնն է՝ Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցի (ս. Փրկիչ) բնականոն գործունեության ապահովումը, նրա կալվածքների ու եկամուտների ճիշտ հաշվառումը և*

բյուջեի ծախսումներին հետևելը:

Ազգային հիվանդանոցի հոգաբարձությունն զբաղվում է նաև ուրիշ չորս կարևոր ոլորտներով. աղքատ հիվանդների դարմանում, ծեր ու տկար աղքատների պատսպարում, հոգեկան հիվանդների խնամում, որբ և անտեր երեխաների հավաքում, խնամում և դաստիարակում: Հոգաբարձությունը հիվանդանոցի տնտեսական գործունեության մասին որոշված ժամկետում հաշվետվություն է ներկայացնում Տնտեսական խորհրդին, իսկ դաստիարակության մասին՝ Ուսումնական խորհրդին (51-րդ հոդված):

Ազգային Ընդհանուր ժողովի ընտրած Կրոնական ժողովը և Քաղաքական ժողովը միանալով՝ կազմում են Խառը ժողով՝ պատրիարքի նախագահությամբ:

Խառը ժողովը քննության է առնում այն խնդիրները, որոնք վեր են Կրոնական ժողովի և Քաղաքական ժողովի իրավասություններից, քննում է Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքական թեկնածուների արժանիքները և իր կարծիքը ներկայացնում Ազգային Ընդհանուր ժողովին, իրականացնում է վերահսկողության գործառույթ և այլն: Կրկնենք վերը նշվածը. ըստ Սահմանադրության՝ Խառը ժողովն էր կազմում Ազգային կեդրոնական վարչությունը՝ բաղկացած 29 անդամից, բայց գործնականում այդ վարչությունը կազմում է ոչ թե Խառը ժողովը, այլ Քաղաքական ժողովը: Վարչությունն ունի իր ատենապետը (ինչպես կոչում էին Թուրքահայերը), որը և իրողապես տնօրինում է ազգային աշխարհիկ գործերը:

Խառը ժողովում քննվող որևէ հարցի մասին որոշում կայացնելու համար երկու ժողովները դա պետք է առանձին-առանձին քվեարկեին: Եթե երկու ժողովների անդամների մեծ մասը միևնույն որոշումն ընդունի, ապա խնդիրը համարվում է լուծված, իսկ երբ ժողովների որոշումները տարբեր լինեին, խնդրի որոշումը թողնվում է Ընդհանուր ժողովին: Խառը ժողովի գումարումը օրինական է համարվում, եթե նիստին ներկա է երկու ժողովների անդամների մեծ մասը (88-րդ հոդված):

Ինչպես տեսնում ենք, ազգային վարչության բաղկացուցիչ մասերն էին Ազգային ընդհանուր ժողովը, Կրոնական, Քաղա-

քական և Խառը ժողովները, որոնց իրավասությունները, իրավունքներն ու պարտականությունները խստիվ սահմանազատված էին: Ազգային ընդհանուր ժողովն օրենսդիր մարմին էր, Կրոնական ժողովը՝ գաղափարական, Քաղաքական ժողովն իր խորհուրդներով ու հոգաբարձություններով՝ գործադիր մարմին, Խառը ժողովը՝ յուրատեսակ վերահսկիչ մարմին:

Թե՛ օրենսդիր և թե՛ գործադիր մարմիններում ընդգրկված բոլոր պատգամավորները «անվարձ ու անթոշակ» աշխատողներ էին: Գործադիր մարմինների պատգամավորները հավաքվում էին չաբաթական մեկ անգամ, և մի քանի ժամերի ընթացքում քննարկում էին երկու և կես միլիոնից ավելի Թուրքահայության առաջ ծառացած բարդ ու կնճռոտ, կենսական բազմաթիվ խնդիրներ:

Բոլոր ժողովների (Ազգային Ընդհանուր, Կրոնական, Քաղաքական, Խառը ժողովներ) նախագահը Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Կ. Պոլսի հայոց պատրիարքն էր, որը վարում էր նաև դրանց գործադիր իշխանությունը (1-ին հոդված):

Ամեն ժողով և խորհուրդ ուներ իր ատենական դիվանը՝ բաղկացած ատենապետից և նրա փոխանորդներից, բոլորն էլ ընտրված նույն ժողովի կամ խորհրդի անդամներից: Ատենական դիվանը նորոգվում էր ամեն տարի՝ անդամների վերընտրությամբ (85-րդ հոդված):

Քաղաքական ժողովի ընտրած խորհուրդներից ու հոգաբարձություններից զատ ընտրվում էին նաև Թաղական խորհուրդներ, որոնք, ելնելով տեղի պայմաններից, ունեին 5-12 անդամ:

Թաղական խորհրդի պաշտոնն էր՝ թաղի ժողովրդի ազգային գործերի կառավարումը, եկեղեցու և դպրատան հոգաբարձությունը, աղքատների խնամակալությունը, ազգայինների միջև պատահած վեճերի քննությունն ու հարթումը: Այդ խորհրդի պարտականությունների մեջ էին մտնում թաղի եկեղեցու խնամքը, թաղի երկսեռ պատանիների համար դպրոցներ բացելը, կարոտյալ ընտանիքներին օգնություն ցույց տալը (52-րդ հոդված): Թաղական խորհուրդն իր տրամադրության տակ ուներ բյուջե, որը գոյանում էր թաղի ժողովրդի տված տուրքից,

եկեղեցու և դպրատան կալվածքների եկամուտներից, եկեղեցու հասույթներից, կտակներից և նվերներից: Բյուջեից արված ելքն էր՝ թաղի եկեղեցու և դպրատների ծախսերը, աղքատներին տրվող օգնությունը (53-րդ հոդված): Յուրաքանչյուր թաղական խորհուրդ ընտրվում էր իր թաղի ժողովրդի կողմից: Ամեն հայազգի անհատ, որ լրացրած էր 25 տարին և, ըստ Սահմանադրության 67-րդ հոդվածի՝ դատարանով զրկված չէր ընտրվելու իրավունքից, կարող էր մասնակցել թաղական խորհրդի անդամների ընտրությանը (55-րդ հոդված): Թաղական խորհուրդների պարտականություններն ու իրավունքները, դրանց գործունեության սահմանները ճշտող կանոնադրությունը ստեղծում էին Ազգային Կեդրոնական վարչության Կրոնական և Քաղաքական ժողովները: Թաղական խորհրդի անդամների պաշտոնը տևում էր չորս տարի. հինգերորդ տարվա սկզբին խորհրդի կազմը նորոգվում էր՝ վերընտրության միջոցով (56-րդ հոդված): Թաղական խորհուրդների ընտրական կարգը սահմանված էր Սահմանադրության 72-84-րդ հոդվածներով:

Ազգային Կեդրոնական վարչության բոլոր չորս ժողովների, Քաղաքական ժողովի խորհուրդների ու հոգաբարձությունների, թաղական խորհուրդների աշխարհիկ պատգամավորներ ընտրվելու իրավունքից զրկված էին չորս կատեգորիայի անձինք. Ա) Քրեական հանցանքներով դատապարտվածները, որոնք, ըստ պետության պատժական օրենքների, համարվում էին քաղաքականապես մեռած, Բ) Ազգային տնտեսական գործերում իրենց պաշտոնը նենգորեն չահագործած և ազգային ժողովներից մեկի կողմից դատապարտված անձինք, Գ) Տերության դատարաններին վճռով նախազգուշական պատիժ կրողները, որոնց պատժի պայմանաժամը դեռ լրացած չէր, Դ) Հոգեկան խանգարում ունեցողները, որոնց կատարյալ առողջացած լինելը չէր հաստատված բժշկական քննությամբ:

Ազգային սահմանադրության Բ գլուխը նվիրված էր ժողով-*

---

* *Այս գլխի հոդվածներին չենք անդրադառնում, քանի որ հարմար ենք համարել դրանց բովանդակությունը տալ Ա գլխի տարբեր հատվածների համապատասխան մասերում:*

ների ու խորհուրդների ընդհանուր կանոններին (85–89–րդ հոդվածներ), Գ գլուխը՝ ազգային տուրքին (90–93–րդ հոդվածներ): 90–րդ հոդվածում նշված էր, որ ամեն չափահաս և վաստակի ու շահի տեր հայ անհատ պարտավոր է մասնակից լինել ազգային ծախսերին: Ազգային տուրքը տարեկան էր և մուծվում էր յուրաքանչյուր անհատի կարողության համեմատ (90–րդ հոդված): Ազգային տուրքը երկու տեսակ էր. մեկը՝ ընդհանուր, որ հատկացվում էր ընդհանուր ծախսերին և հավաքվում էր պատրիարքարանի կողմից՝ ազգային կենտրոնական բյուջեի համար, մյուսը՝ մասնավոր, որ հատկացվում էր յուրաքանչյուր թաղի մասնավոր ծախսերին և հավաքվում էր թաղական խորհուրդների կողմից՝ թաղական բյուջեի համար (91–րդ հոդված):

*Սահմանադրության Դ գլուխը վերաբերում էր **Ազգային գավառական վարչությանը** (94–98–րդ հոդվածներ):*

Ըստ 94–րդ հոդվածի՝ թեմական առաջնորդը միաժամանակ համարվում էր Գավառական ժողովի նախագահ, իրականացնում էր նաև գործադիր իշխանությունը թեմի սահմաններում: Նրա հիմնական պարտականություններից մեկը Ազգային սահմանադրության գործադրությանը հետևելն ու հսկելն էր: Առաջնորդը պետք է բնակվեր գավառի գլխավոր քաղաքում, ուր պիտի գտնվեր նաև առաջնորդարանը, որտեղ էլ գումարվում էին Գավառական ժողովները (95–րդ հոդված): Ինչպես Կ. Պոլսում, գավառներում նույնպես ամեն թաղ պիտի ունենար թաղական խորհուրդ, թաղական բյուջե և թաղական դիվանատուն: Նմանապես, առաջնորդարանիստ քաղաքում հաստատվում էին Կրոնական և Քաղաքական ժողովներ, վերջինս իր տրամադրության տակ ունենում էր գավառային բյուջե: Առաջնորդարանում նաև հաստատվում էր գավառային դիվանատուն, ուր հավաքվում էին առաջնորդական վիճակի բոլոր հայ բնակիչներին վերաբերող տվյալներ՝ գավառական ընդհանուր մարդահամար կազմելու համար (96–րդ հոդված): Առաջնորդի ընտրությունն իր ձևով կատարվում էր պատրիարքի ընտրության նման, բայց Գավառային ընդհանուր ժողովում, որից հետո ընտրության արդյունքների մասին տեղեկագիրը տեղի Խառը ժողովի միջոցով ուղարկվում էր Կ. Պոլսի պատրիարքին, իսկ վերջինս դա ներկայացնում

էր Ազգային Կեդրոնական վարչության Խառը ժողովի հաստատմանը: Դրանից հետո պատրիարքն այդ մասին հաղորդում էր Բարձր Դռանը, որի պաշտոնական հրամանագրից հետո միայն առաջնորդը նստում էր իր աթոռին (96-րդ հոդված): Գավառական ժողովների գործողությունները նման էին Ազգային Կեդրոնական վարչության ժողովների աշխատանքներին, բայց Գավառական ժողովների անդամների թիվը հաստատուն չէր, այլ սահմանվում էր յուրաքանչյուր գավառի բնակչության թվի համեմատ (98-րդ հոդված):

Ազգային սահմանադրության վերջին գլուխը՝ Ե-րդը, վերնագրված էր «Վերաքննութիւն Սահմանադրութեան» և բաղկացած էր միայն մի հոդվածից (99-րդ հոդված), որը նաև Սահմանադրության վերջին հոդվածն էր: «Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքները անփոփոխելի են,- չեչտված էր հոդվածում: - Բայց երբ փորձառութեամբ՝ ինչ-ինչ տրամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր դատուի, Ընդհանուր Ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը՝ Վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմէ, Կրօնական եւ Քաղաքական Ժողովներէն երեքական անդամ, չորս տեսուչ խորհուրդներէն* երկուական անդամ, եւ ասոնցմէ զատ Ընդհանուր Ժողովոյ մէջէն կամ դրսէն վեց հոգի, ընդամէնը 20 անդամ ընտրելով: Այս Յանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւնները, որ Ընդհանուր Ժողովը վաւերացնելէն ետքը, Բարձրագոյն Դրան կը ներկայացուին, եւ Կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին»:

Ընդհանուր գծերով այսպիսիք են «Ազգային սահմանադրութիւն հայոցի» բովանդակությունն ու իմաստը**:

Ազգային սահմանադրությունը միայն թուրքահայ առաքելականների ներքին կյանքը կանոնավորող և համակարգող կանոնագիր էր: Հայ ազգի ներսում փոքրամասնություն կազմող կրոնական մյուս հատվածների՝ կաթոլիկ և ավետարանական

---

* Խոսքը վերաբերում էր Քաղաքական ժողովի ընտրած չորս խորհուրդներին:

** «Ազգային սահմանադրութիւն հայոցի» ամբողջական չարադրանքը տե՛ս այս գրքի «Հավելված 2-ում»:

հայերի վրա դա չէր տարածվում: Սեփական գործերը կառավարելու համար նրանք ունեին իրենց ուրույն ու հստակ ներքին կազմակերպվածությունը: Օսմանյան կայսրության մեջ հայ կաթոլիկ համայնքը (էրմենի կաթոլիկ միլլեթ) ճանաչում էր ստացել 1831 թ. (տարիներ անց նա նույնպես ունեցավ առանձին սահմանադրություն՝ թեև ավելի սահմանափակ իրավունքներով), իսկ ավետարանական (բողոքական) համայնքը (փորտիստան միլլեթ)՝ 1846-ին:*

*Հայ և օտար հետազոտողների բացարձակ մեծամասնությունը Ազգային սահմանադրությունը տասնամյակներ շարունակ ներկայացրել է որպես մի հասարակ կանոնագիր, որպես Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներքին կյանքը կանոնավորող մի սովորական փաստաթուղթ**: Այդպես մտածողների կարծի-*

---

* *Փորտիստան միլլեթը միավորում էր Օսմանյան կայսրության բոլոր ավետարանականներին՝ անկախ նրանց ազգությունից:*

** *Նրանք վկայակոչում էին պատրիարքարանի կողմից առաջին անգամ (1863 թ.) հայատառ թուրքերեն և հայերեն հրատարակված փաստաթուղթը: Թուրքերեն բնագրի ճակատամասում գրված է «Նիզամնամէի միլլեթի էրմենեան» («Հայ ազգի կանոնադրություն»), իսկ հայերեն տարբերակում՝ «Ազգային սահմանադրութիւն հայոց»: Հայերեն թարգմանությունը չի համապատասխանում թուրքերեն բնագրին: Փաստաթղթի համառոտագրությունը, որ տեղ էր գտել պետական օրենսգրքերի ժողովածուի 2-րդ հատորի մեջ, որևէ վերտառություն չի կրում և նշված են միայն գլուխների բաժանումները: Նույն հատորի վերջում տեղադրված ցանկում նշված է՝ «Հայոց պատրիարքարանի կանոնադրութիւնը» (տե՛ս* ***Ատոմ,*** *Ազգային սահմանադրութիւնը. գծեր մեր մշակոյթի պատմութենէն, պատմական եւ քննադատական ուսումնասիրութիւն, Կ. Պոլիս, 1914, էջ 7-8): Այսպիսով, Թուրքաց պետության համար այս* ***օրենքը*** *կամ կանոնադրությունը հայոց պատրիարքարանի, առավելագույնը՝ Օսմանյան կայսրության հպատակ հայ ազգի կանոնադրություն էր: Չնայած դա հիմնված էր սահմանադրական սկզբունքների վրա, բայց* ***հիմնական օրենք*** *չէր: Այդ ամենն, ինչ խոսք, ճիշտ է, բայց ճիշտ է նաև այն, որ թուրքական կառավարությունը երբեք դեմ չեղավ, որ հայերն իրենց կանոնադրությունը համարեն սահմանադրություն: Նկատենք նաև որ թեև հետագա տարիներին թուրքահայ ժողովուրդը ենթարկվեց արյունալի արհավիրքների, բայց պետական օրենքով հաստատված Հայոց ազգային սահմանադրությունը ամենևին հետ չվերցվեց, չջնջվեց նույնիսկ արդուլհամիդյան բռնակալության շրջանում: Դա վերացվեց միայն 1916 թ. և վերականգնվեց Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից քիչ անց՝ 1919 թ.:*

քով՝ այդ կանոնագիրը հղացողները և կազմողները միամիտ երազողներ են եղել, որոնք կարծել են, թե հնարավոր է օրինավոր կյանքով ապրել մի օրինազուրկ պետության մեջ, հաջողությամբ զարգանալ ու քաղաքակրթվել, երբ չուրջը տիրում են վայրագ բարքերով անկիրթ ցեղեր, որ կարելի է առաջադիմել սուլթանների տված իրավունքների փչրանքներով՝ առանց ունենալու իրական հնարավորություններ և հատկապես ուժ՝ գոնե սեփական կյանքը պաշտպանելու համար:

Սահմանադրությունից իր խոր դժգոհությունը Գրիգոր Արծրունին այսպես է արտահայտել. «...Սահմանադրութիւնը անզօր է պաշտպանել հայերին՝ տէրութեան կամայականութեան եւ բարբարոսութեան դէմ, անզօր է պաշտպանել թիւրքիաբնակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնաբարելի մարդկային իրաւունքը ... Հային կողոպտում են, հարստահարում են, չարչարում են, ծեծում են, անպատուում են. ո՞ւր է սահմանադրութիւնը, որ պէտք է պաշտպանէր նրան»[1]:

Ռոլեն Ժակմենը հայոց սահմանադրությունը համարում էր «Հայ համայնքի կանոնադրություն», որի նպատակն ուրիշ բան չէ, եթե ոչ կազմակերպումը կիսով չափ աշխարհական և կիսով չափ կրոնական մի հասարակության, որի իրավունքները դադարում են ճիշտ այնտեղ, որտեղ սկսվում են մի իսկական պետության իրավունքները: «Այնտեղ կայ ամէն ինչ, բացի մի յօդուածից, որի վրա յենուելով հայը կարողանար արգելել, որ քուրդը չխլի նրա ոչխարները, բէյը չանպատուի նրա աղջկան եւ չաւերի նրա տունը, որ հարկահաւաքը երկու-երեք անգամ չպահանջի նրանից միեւնոյն հարկը»: Մի խոսքով՝ այնտեղ ամեն ինչ կա, բացի այնպիսի կարգադրությունից, որի վրա հենվելով հնարավոր լիներ պաշտպանել սեփական կյանքն ու գույքը՝ ընդդեմ թուրքական կառավարության կամայականության: «Սահմանադրութիւնը, ի վերջոյ, կախում ունի միմիայն Բարձր Դռան բարի կամքից»[2],- եզրակացնում էր Ժակմենը:

Եվրոպացի ուրիշ ուսումնասիրողներ Հայոց ազգային սահ-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 45, 25 նոյեմբերի (7 դեկտեմբերի) 1876 թ.:*

[2] ***Սարուխան,*** *Հայկական խնդիրն..., էջ 18:*

մանադրությունը համարում էին **կրոնա-կենցաղային ինքնավարությունը** կարգավորող փաստաթուղթ կամ **անձնական իրավունքների համակարգի** (Regime de Statut Personnel) երաշխավոր:

Իհարկե, չի կարելի չհամաձայնել Ազգային սահմանադրությանը տրված նման գնահատականների մի մասի հետ, թեև դրանց հեղինակներից շատերը, այդ թվում նաև Ռոլեն Ժակմենը, աչքաթող չեն արել այն օգտակար դերը, որ նա ունեցել է Թուրքահայոց կյանքում:

Հիրավի, հայոց Ազգային սահմանադրությունը շատ պակասավոր էր: Նախ՝ դա փաստորեն քիչ թե շատ արդյունավետ գործում էր միայն Կ. Պոլսում և մեծ դժվարությամբ, կիսատպռատ էր կիրառվում բուն երկրում՝ Հայաստանում: Այդ երևույթի պատճառների թվում, անշուշտ, խոչոր դեր էին կատարել այն ձախորդ հանգամանքները, որոնց մեջ ապրում էր Թուրքիայի հայությունը: Սարսափելի արհավիրքները, որոնք թափվեցին Թուրքիայի հայության գլխին, չէին կարող բեղմնավոր անդաստաններ բացել Հայաստանի հայերի առջև: Այդ արհավիրքները մեռցնում էին կյանքը, փակում դեպի առաջադիմական շարժում տանող ուղիները: Մյուս կողմից՝ Կ. Պոլսի հայությունը չէր հասկանում գավառի իր եղբորը, չէր ապրում նրա ցավերով ու հոգսերով, թեև չէին պակասում գեղեցիկ ճառերն ու փքուն ճոռոմաբանությունները, լրագրական ձոներն ու դրվատումները:

Սահմանադրության մյուս մեծ պակասությունը հիմնական չարիքի դեմ նրա անուժ լինելն էր: Նա ի զորու չէր ապահովելու հայի բնականոն կյանքը, երաշխավորելու նրա պատվի ու գույքի անձեռնմխելիությունը, և դա հատկապես նրա հայրենի երկրում՝ Թուրքահայաստանում: Թուրքն ու քուրդը մնում էին դարձյալ իշխող և արտոնյալ, հայը դարձյալ ճորտ էր և իրավազուրկ: Հենց միայն այդ հանգամանքը ի չիք էր դարձնում սահմանադրության ընձեռած առավելությունների մեծ մասը: Այլ խոսքով՝ **Ազգային սահմանադրությունը զուրկ էր քաղաքական-պետական իրավունակությունից:**

Բայց դա բնավ չի նշանակում, թե կարելի է լիովին աչքաթող անել այն օգտակար դերը, որ սահմանադրությունն ունեցել է Թուրքահայոց կյանքում:

Ամենայն իրավունքով կարելի է ասել, որ Ազգային սահմանադրությունը հայ ժողովրդի արևմտյան հատվածի ներքին կյանքը կարգավորելուն ուղղված գործուն միջոց էր:

*Չի կարելի անտեսել, որ Թուրքիայի հայոց ազգային, հասարակական, կրոնական և նույնիսկ քաղաքական կյանքը 1860 թ. հետո, ընդհուպ մինչև 1915 թ., պտտվում էր այս սահմանադրության չուրջը**: *Հայ ժողովուրդը կայսրության մեջ առաջինը և մինչև 19-րդ դարի 70-ական թվականների սկիզբը միակն էր, որն ինչ-որ չափով ներքին սահմանադրական կյանքով ապրելու իրավունք էր ստացել՝ հիմքում ժողովրդավարական սկզբունքներ ունենալով***: *Դա սահմանադրության լուսավոր կողմերից մեկն էր: Բայց նա ուներ նաև ստվերոտ չատ կողմեր (օրինակ՝ Պոլսի հայությունը**** *տալիս էր ավելի չատ պատգամավոր, քան կայսրության ողջ հայությունը և այլն): Այդ ամենով հանդերձ,*

---

* *Այսօր նույնպես, ինչպես մեկուկես դար առաջ, թուրքահայերի և առհասարակ սփյուռքահայերի ներքին ազգային (մասնակիորեն) և կրոնական (լիովին) կյանքը կազմակերպվել է Ազգային սահմանադրության հիմքի վրա: Եթե մինչև 1915 թ. այդ սահմանադրությունը որքան ազգային էր, նույնքան և օսմանյան պետական օրենք էր, ներկայումս, հասկանալի պատճառով, նա զուտ ազգային կանոնակարգ է:*

** *Հայ ազգության սահմանադրությունից առաջ Թուրքիայում սահմանադրություններ (կանոնադրություններ) ունեին նաև կայսրության երկու ուրիշ ազգեր՝ հույները և բուլղարները, բայց նրանց սահմանադրությունները հենված չէին ժողովրդավարական սկզբունքների վրա: Օրինակ՝ դրանք չունեին մնայուն և ղեկավար ընդհանուր ժողովներ, առանձին գործող քաղաքական ժողով, աշխարհական խորհուրդների ճյուղեր և այլ բարեմասնություններ, որ ուներ հայոց սահմանադրությունը (տե՛ս* ***Մաղաքիա արք. Օրմանեան,*** *Ազգապատում, հատ. Գ, Բ հրատ., էջ 4690):*

*** *Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով՝ 1860 թ. մայրաքաղաքում բնակվում էր 85000 հայ, որից 70000-ը բնիկ պոլսեցի էր կամ Պոլսում հաստատված, իսկ 15 հազարը գավառացի պանդուխտներ էին (****Սարուխան,*** *Հայկական խնդիրն..., էջ 23): Վարդան Պարսամյանի տվյալներով՝ այդ նույն ժամանակ Կ. Պոլսի հայերի թիվն ավելի քան 200 հազար էր, ինչը ավելի հավանական է (տե՛ս* ***Վարդան Պարսամյան,*** *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 33): Ուրիշ հեղինակներ տարբեր թվեր են նշում:*

հայոց Ազգային սահմանադրությունը ազգի քաղաքական հասունության կարևոր վկայագիրն էր:

Հայոց Ազգային սահմանադրությունը նման չէր տվյալ ժամանակաշրջանում առաջավոր երկրներում գործող սահմանադրություններից և ոչ մեկին, այլ հիմնված էր դարերով հայերի վայելած ինչ-ինչ առանձնաչնորհումների վրա և գալիս էր դրանք ավելի սահմանորոշելու, ավելի ժողովրդականացնելու: Նրանում ճշտորեն սահմանված էին յուրաքանչյուր հայի պարտականություններն ու իրավունքները «առ ազգը» և ընդհակառակը: Ըստ սահմանադրության՝ ազգային-եկեղեցական, դպրոցական, կալվածական, դատաստանական բոլոր գործերը, որոնք առաջ պատկանում էին պատրիարքի բացարձակ իրավասությանը, նրանից վերցվում էին: Ազգային գործերի ղեկավարությունը մի անձից՝ պատրիարքից անցնում էր մի ազգային օրինավոր վարչության իրավասությանը: «Ազգը ներկայացնող» պատրիարքը մի ընտրված նախագահ էր՝ պատասխանատու Ազգային ժողովի առջև: Իսկական նախագահը պատգամավորներից մեկն էր «ատենապետ» կոչումով, որը և տնօրինում էր ազգային-եկեղեցական բոլոր գործերի ղեկավարությունը:

Ինչպիսի հանգամանքներում էլ գտնվում էր երկիրը, որքան էլ սեղմված լիներ Ազգային սահմանադրությունը, այնուամենայնիվ, նա թուրքահայերին որոշ ինքնավարություն էր տալիս: Բացի քաղաքական խնդիրներից՝ ուրիշ գրեթե բոլոր ազգային գործերը հայերը տնօրինում էին ինքնուրույն:

Հայոց ազգային ժողովը զարգացած քաղաքակիրթ երկրների պատգամավորական ժողովների (խորհրդարան, պառլամենտ) դերն էր կատարում: Բյուջեի նախահաշիվը քվեարկվում էր, պաշտոնյաներն ընտրվում էին, պատգամավորների համաձայնությամբ տուրքեր էին գանձվում, հսկողություն և քննություն էին նշանակվում:

Անշուշտ, կանոնադրություն-սահմանադրությունն ուներ ոչ քիչ թերություններ. նա կատարելապես չէր արտահայտում ժողովրդական ներկայացուցչությունը, չէր դրված ժողովրդավարական լայն հիմքերի վրա: Բայց այդ թերությունները կարելի էր ուղղել՝ նրա շարադրանքում լրացումներ կատարել, հետզհե-

տե կատարելագործել վարչական մեխանիզմը, անկատար հոդ-վածները նորերով փոխել:

Հարկ է նաև նկատի առնել, որ փաստաթուղթն ստեղծվել և կյանքի էր կոչվել այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունն ինքը դեռ չուներ սահմանադրություն (հիմնական օրենք), և Թուրք իրավաբանական միտքը չարիաթի կանոններից այն կողմ չէր անցել: Մինչ Թուրքը դեռ չուներ ազգային պետության գի-տակցությունը և հայրենիքի գաղափարը, հայն արդեն արթնա-ցել էր իբրև ազգ, և «սահմանադրությունը» ազգային գիտակ-ցության մի տիպիկ արտահայտություն էր: Սահմանադրություն չուներ նաև հարևան Ռուսական կայսրությունը: Այստեղ խոր-հելու շատ բան կա. նկատենք, որ Թուրքահայոց սահմանադրու-թյունը ստեղծվել էր ռուս-թուրքական 1877 թ. պատերազմն սկսելուց և Բեռլինի կոնգրեսից (1878 թ.) առաջ, երբ դեռ հրա-պարակ չէր եկել Հայկական հարցը և չէր վերսկսվել հայոց ազատագրական կռիվը:

Ինչ վերաբերում է հայոց սահմանադրության ուսումնասի-րողների՝ փաստաթղթի հեղինակներին տված «միամիտ երա-զողներ» գնահատականին, վերապահումներով տեղին համա-րելով այդ գնահատականը, միաժամանակ հարկ է նկատի առ-նել, որ Թուրքահայ ժողովրդի լուսավոր զավակները հոգեպես տառապում էին օսմանյան բիրտ իրականության մեջ տոչորվող իրենց ազգի համար և փայփայում էին նորմալ հասարակարգում մարդավայել ապրելու և գործելու հեռավոր երազը: Այն անձկա-լի իրավակարգը, որ Թուրքահայությունը տենչում էր տեսնել ողջ կայսրության մեջ, անիրականանալի գաղափար էր: Այդ բանը քաջ գիտակցելով՝ նա փորձում էր երազած կարգերի նմանակը մարմնավորել գոնե ազգային ներքին կյանքում՝ իր լուսավոր զավակների ջանքերով:

Գործածության մեջ դնելուց հետո եկած երկար տարիների ընթացքում Ազգային սահմանադրությունն անհերքելի օգուտ-ներ բերեց Թուրքիայի բովանդակ հայությանը: Այդ օգուտներից ամենամեծը նրան իրավական կարգին, այսինքն՝ օրենքներին և օրինապահությանը վարժեցնելն էր: Իրավամբ կարելի է ասել, որ Օսմանյան կայսրության ոչ մի ժողովուրդ, այդ թվում պե-

տականակազմ թուրք ժողովուրդը, այնքան պատրաստ չէր իրավական կյանքով ապրելու, որքան Ազգային սահմանադրության բովով անցած թուրքահայ ժողովուրդը:

Սահմանադրությունը բերեց ոչ պակաս կարևոր ուրիշ օգուտներ ևս: Նա «ուժգին մղում տուեց հայ մտաւոր վերածնութեան ... Նա փնտրեց հայ ազգի փրկութիւնը դպրոցի, եկեղեցու, վանքերի, մամուլի, թատրոնի մէջ» (Միքայել Վարանդյան): Հատկապես անգնահատելի նշանակություն ունեցավ սահմանադրության այն սկզբունքը, որը թելադրում էր **ձրիաբար** ընդհանուր կրթություն տալ հայ երկու սեռի երեխաներին՝ առանց դասակարգային և հասարակական դիրքի խտրության[1]: Ինչպես «Պոլոժենիա»-ն, այնպես էլ թուրքահայոց սահմանադրությունը, լինելով հայության եկեղեցական կյանքը կանոնավորող կանոնակարգեր, միաժամանակ հանդիսացան ազգային-կրթական առաջադիմության խարիսխներ: «Ուստի հասկանալի է, թէ ինչո՛ւ հայ մտաւորականութիւնը երկար ժամանակ կառչած էր նրանց պաշտպանութեան գործին, անգամ այն ժամանակ, երբ մեր հրապարակախօսութեան մէջ լուծուած էր ազգայնութեան խնդիրը եւ դա բաժանուած էր դաւանանքից: Հայ մտաւորականութիւնը, **տուեալ պայմաններում**, ընդունում էր նրանց անհրաժեշտութիւնը, պայքար էր մղում նրանց համար՝ յանուն հայկական մշակութային-կրթական հաստատութեանց»[2]: Եվ այդ բոլորը նպաստեցին հայոց ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: «Այժմ նա աւելի դժուարութեամբ պիտի տանէր այն հարստահարութիւնները, թիւրքքրդական սպանիչ ռէժիմը, որի մէջ դրուած էր նա»[3]:

Իր գոյության շուրջ հինգ տասնամյակներին չատ անգամ է Ազգային սահմանադրությունը գրոհներ կրել ինչպես ներսից, այնպես էլ դրսից:

Սահմանադրությունից մշտապես դժգոհ էին մնում հոգևոր պետերը՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքները, Աղթամարի

---

[1] Տե՛ս **Գառնիկ Գիւզալեան,** Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Փարիզ, 1927, էջ 101:

[2] Նույն տեղում, էջ 102:

[3] Նույն տեղում:

և Կիլիկիո կաթողիկոսները, թեմական առաջնորդները: Կղերականները չէին հաշտվում այն մտքի հետ, որ սահմանադրությունը փակել է իրենց կամայականությունների ճանապարհները, զրկել անսահմանափակ իշխանությունից: Պատահական չէ, որ չկարողանալով հաղթահարել այդ արգելքները, իրենց էությամբ հակասահմանադրական պատրիարքները, ի վերջո, ստիպված տեղի էին տալիս և նույնիսկ հրաժարվում գահից: Այդպես էր արել Գևորգ արք. Քերեստեջյան պատրիարքը (1866–1882 թթ.՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ), հրաժարվել էր նույնիսկ Սարգիս արք. Գույումջյան պատրիարքը, որի պաշտոնավարության ժամանակ էր ընդունվել սահմանադրությունը՝ իր իսկ համաձայնությամբ և եռանդուն աջակցությամբ. հակասահմանադրական արարք կատարելու համար Հայոց ազգային ժողովը նրան ստիպել էր հրաժարական տալ:

Սահմանադրությունը տարբեր տարիների ենթարկվում էր նաև իշխանությունների հարձակումներին, բայց դրանք մշտական դարձան, երբ 1876 թ. սուլթանական գահի վրա նստեց Աբդուլ Համիդ II-ը:

Վկայակոչելով կայսրության ուրիշ ժողովուրդների (հատկապես հույների), ղեկավար շրջաններից եկած բողոքները, որ իրենք չունեն իրենց ներքին կյանքը կանոնակարգող այնպիսի գործուն կանոնագիր, ինչպիսին ունեն հայերը, սուլթան Աբդուլ Համիդը ոչ թե գնաց նրանց ցանկությունները բավարարելու, այլ հայոց սահմանադրությունը վերացնելու ճանապարհով:

Ազգային պատգամավորական ժողովի փոքրիչատե կանոնավոր վերջին նիստը գումարվեց 1894 թ., երբ դեռ հայկական կոտորածները չէին սկսվել:

Պատրիարքարանին կից ս. Աստվածածին մայր եկեղեցում գումարված այդ ժողովի (որի ատենադպիրն էր Գաբրիել Նորատունկյանը) պատգամավորներից ոմանք դեռևս համարձակվեցին բարձրացնել այս կամ այն ազգային հարցը և բացատրություններ պահանջել այդ ժամանակ պատրիարքական տեղապահ Հմայակ եպս. Դիմաքսյանից:

Այդ ժողովում էր, որ Թուրքիայի պատրիարք ընտրվեց Մատթեոս արք. Իզմիրլյանը:

1894-ից հետո, երբ սկսվեցին կոտորածները, անկարելի դարձան վարչության գործունեությունը և պատրիարքի պաշտոնավարումը: Որպես հեղափոխական շարժմանը համակիր՝ Իզմիրլյանն աքսորվեց Երուսաղեմ: Ազգային ժողովի աշխատանքը փակվեց, քանի որ ազգը հայտնվել էր բնաջնջման սպառնալիքի առջև:

Այդ արյունամած օրերին էր, որ Կ. Պոլսի հայության բոլոր խավերի երևելի ներկայացուցիչները, արտաքին գործերի նախարարի օգնական Արթին փաշա Տատյանի գլխավորությամբ, խոնարհ հպատակության զգացումներով լի մի աղերսագիր ներկայացրին սուլթանին, որից հետո միայն նրա զայրույթը մի փոքր իջավ, և Տատյանին հաջողվեց իրավունք ստանալ գումարելու նոր Ազգային ժողով՝ պատրիարքի և պաշտոնական վարչական մարմինների նոր ընտրություն կատարելու համար:

Պատգամավորական նոր ժողովը հրավիրվեց 1896 թ. նոյեմբերի 8-ին, ուր պատրիարք ընտրվեց Մաղաքիա եպս. Օրմանյանը: Ընտրվեցին Քաղաքական ժողովի նոր անդամներ, որոնց մեծ մասը կառավարական բարձր պաշտոնյաներ էին՝ սկսած նույն ինքը Արթին փաշա Տատյանից:

Բայց սուլթանը դեռ բավարարված չէր: Նա պահանջում էր վերաքննել այդքան երկար ժամանակ գործող սահմանադրությունը, որը կնչանակեր սահմանափակել իր նախորդների՝ հայերին տված առանձնաշնորհումները: Աբդուլ Համիդը չէր կարողանում հանդուրժել, որ հայերը շարունակեն սահմանադրական օրենքներով կառավարել իրենց ներքին կյանքը, մասնավորապես՝ ազգային-կրթական և կրոնական գործերը, և դա այն ժամանակ, երբ ինքն ավելի քան քսան տարի առաջ էր տապալել օսմանյան պետական սահմանադրությունը: Ուստի նա Օրմանյան պատրիարքից և Քաղաքական ժողովի ատենապետ ընտրված Արթին փաշա Տատյանից պահանջեց հնարավորինս մեծ հապավումներ անել սահմանադրական կանոնագրի մեջ, որպեսզի դա ընկալվի որպես պարզ ***պատրիարքական օրենք****:*

Մաղաքիա արք. Օրմանյանը չէր կարող հակառակվել սուլթանի պահանջին, և այդ պահանջը կատարելու համար ստեղծեց «վերաքննիչ հանձնաժողով», որը, գործի անցնելով, Ազգային

սահմանադրության չարադրանքում կրճատեց մի չարք հոդվածներ, ինչպես նաև փաստաթուղթը վերանվանեց «Պատրիարքական օրէնք»:

Ի պատիվ Օրմանյան պատրիարքի, պետք է ասել, որ նա, այս կամ այն պատրվակով, կարողացավ սահմանադրության չարադրանքի վերաքննության սուլթանական պահանջը մեռած տառ թողնել: Սահմանադրությունը մնաց գրեթե անփոփոխ, և դա Օրմանյանի ծառայություններից մեկն էր: Միակ զիջումն եղավ այն, որ Ազգային ժողովի գումարումը հետաձգվեց անորոշ ժամանակով, և «սահմանադրություն» բառն արտաքսվեց հայկական թերթերի էջերից ու պաշտոնական թղթերից[1]: Չնայած դրան, նրա բոլոր հոդվածները, գոնե ըստ էության, չարունակում էին իրենց ուժը պահել:

Սակայն, որքան էլ հայերը ջանք էին թափում պահպանելու իրենց Ազգային սահմանադրությունը, հեռանկարի տեսակետից դա ապարդյուն էր: Մի՞թե հնարավոր էր չարունակել օրինական կյանքով ապրել մի անօրեն երկրում: Արմատապես սխալ էր պոլսահայ այն մտավորականների տեսակետը, թե բազմազգ բռնակալական կայսրության մեջ, դոյզն անգամ ի վիճակի չլինելով միջամտելու ընդհանուր պետության կյանքին, կարելի կլինի հոգալ իրենց ժողովրդի հոգսերը, միայնակ փոխել ազգային դառնատխուր գոյության ընդհանուր պատկերը:

Այս վիճակը տևեց մինչև 1908 թ. օսմանյան հեղափոխությունը, երբ երիտթուրքերի ջանքերով ստեղծված նոր կացությունն եղավ «աւելի չար, քան զառաջինն»:

* * *

Ազատության հովերի հետ, որոնք Թուրքիային «նոր իրավակարգ» էին բերել, թուրքահայության համար ծագել էին նոր խնդիրներ. 1) Պե՞տք էր պահպանել Ազգային սահմանադրությունը, թե՞ պետք էր հրաժարվել նրանից, քանի որ երիտթուրք

[1] Տե՛ս **«Արարատ»**, № 1, հունվար, 1908, էջ 49–52:

պարագլուխները հայտարարել էին, թե «նոր իրավակարգը» հիմնված է ազատության և հավասարության վրա, 2) Սահմանադրությունը, եթե մնալու է, պե՞տք է անփոփոխ պահել, թե՞ հարկ է որոշ փոփոխությունների ենթարկել, 3) Եթե սահմանադրությունը չարունակի իր գոյությունը, ապա ի՞նչ հարաբերությունների մեջ պետք է լինի օսմանյան (միդհատյան) սահմանադրության հետ:

Այս հարցերի պատասխաններն առաջինը փորձում էր տալ Իթթիհադը: Կ. Պոլսի Թուրքական թերթերում պարբերաբար քննարկվում էին հայոց, հունաց, հրեից ազգային կանոնագիր-սահմանադրությունների հետ կապված հարցեր, որոնք ավարտվում էին նույն եզրահանգումով. եթե Թուրքիան ունի պետական սահմանադրություն, որը կարգավորում է երկրի բոլոր քաղաքացիների փոխհարաբերությունները՝ առանց ազգի ու կրոնի խտրության, եթե նրանց բոլորի հայրենիքը Օսմանյան կայսրությունն է, ապա միանգամայն անբացատրելի է մնում հայոց և մյուս ազգային կանոնագիր-սահմանադրությունների գոյության իմաստը:

Որքան էլ երիտթուրքական կառավարությունը բազմազան միջոցներ ձեռնարկեց, սակայն ի վիճակի չեղավ վերացնելու հայոց Ազգային սահմանադրությունը: Այդ բանը նրան հաջողվեց մի քանի տարի հետո՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Հայոց Մեծ եղեռնի ժամանակ, ոչնչացնելով կամ արտաքսելով միլիոնավոր հայերի ու զավթելով հազարամյակների պատմություն ունեցող նրանց հայրենիքը, Թուրքերը վերացրին նաև Սիսի ու Աղթամարի կաթողիկոսությունները, բոլոր առաջնորդարանները, հրդեհի մատնեցին կամ քարուքանդ արեցին եկեղեցիներն ու վանքերը, իսկ Կ. Պոլսի պատրիարքարանը զրկվեց բոլոր աշխարհիկ գործառույթներից՝ վերածվելով մի անդամալույծ պարզ ընկերակցության: Այդ ամենն իրենց արտահայտությունը գտան Թուրքական կառավարության կողմից 1916 թ. հուլիսի 19-ին հրատարակված «Էրմենի կաթոլիկոսլուղու վե փաթրիկլիկի նիզամնամեսի» վերտառությամբ հրամանագրում, որով պաշտոնապես տապանաքար դրվեց կայսրության մեջ Հայ եկեղեցու կառույցի և Ազգային սահմանադրու-

թյան վրա: Բայց թուրքերի համար ինչ-որ բան դեռ պակասում էր, և այդ պակասը երիտթուրքական կառավարությունը լրացրեց հաջորդ տարում՝ 1917 թ. հոկտեմբերի 2-ին հրատարակելով «Հուգուգը այիլե գարարնամեսի» անունով օրենսգիրքը և նոր դատաստանագիրքը՝ «Ուսուլը մուհաքեմաթը չերիյե» վերնագրով: Դրանցով ազդարարվում էր, որ կայսրության բոլոր հպատակները, անկախ կրոնից ու ազգությունից, հետայսու ենթակա են օսմանյան պետական քաղաքացիական օրենսդրությանը: Դա նշանակում էր, որ թուրքերը կրկին հաստատում էին, թե ընդմիշտ պատմության գիրկն են անցել սուլթան Մեհմեդ II Ֆաթիհի՝ 1461 թ. հայերին տված «էրմենի փաթրիկխանեն» և 1863 թ. մարտի 17-ին սուլթան Աբդուլ Ազիզի հաստատած* Ազգային սահմանադրությունը[1]: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ երիտթուրքական կառավարությունը թողել էր ասպարեզը, իսկ քեմալական շարժումը դեռ խանձարուրի մեջ էր, դաշնակիցների կարգած սուլթանական նոր կառավարությունը (Ստամբուլի) 1919 թ. վերահաստատեց Ազգային սահմանադրությունը (ըստ էության՝ միայն Կ. Պոլսի հայության համար): Բայց այդ վերահաստատումը կարճ կյանք ունեցավ: Լոզանի կոնֆերանսի 1923 թ. դաշնագրի 42-47-րդ հոդվածներով Թուրքիան պարտավորություն ստանձնեց հարգել իր հայ, հույն և հրեա փոքրամասնությունների իրավունքներն ու սովորությունները: Սակայն երաշխավորված այդ պարտավորությունները մնացին օդից կախված, քանի որ քեմալական խորհրդարանը՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը 1926 թ. մարտի 20-ին հաստատեց երկրի քաղաքացիական օրենսգիրքը, որով վերջ էր տրվում ազգային բոլոր փոքրամասնությունների կրոնա-կենցաղային ինքնավարությանը և անձնական իրավունքների համակարգին[2]:

Կայսրության տարածքում ուժը կորցրած Ազգային սահմա-

---

* Ինչպես վերը նշվեց, Ազգային սահմանադրության առաջին տարբերակը հաստատել էր սուլթան Աբդուլ Մեջիդը 1860 թ.:

[1] Տե՛ս **«Արարատ»** բացառիկ, 1 հունվարի 2003 թ. էջ 55:

[2] Տե՛ս նույն տեղում:

նադրությունը գոյության նոր շրջան ապրեց, երբ Մեծ եղեռնից հետո հայության բեկորները ապաստան գտան աշխարհի տարբեր ծագերում, և կազմավորվեց հայկական սփյուռքը՝ իր աշխարհիկ ու կրոնական բազմաբնույթ կառույցներով:

Թուրքական յաթաղանից փրկված հայերը հիմնականում ապաստան գտան Օսմանյան կայսրությունից անջատված Մերձավոր ու Միջին Արևելքի արաբական երկրներում, ինչպես նաև Պարսկաստանում: Հայ ժողովուրդը երախտապարտ է արաբ և պարսիկ մուսուլման ժողովուրդներին, որոնք նրա պատմության ամենաողբերգական օրերին օգնության ձեռք մեկնեցին մահվան երախից փրկված հարյուր հազարավոր մարդկանց: Հայ ժողովրդի ներկա և գալիք սերունդներն իրենց ազգային հիշողության մեջ հավերժ կպահպանեն մարդասիրական մեծ արարքը Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Իրաքի, Պաղեստինի, Հորդանանի արաբ ժողովրդի, որն իր մի պատառ հացը կիսեց դժբախտության մեջ հայտնված հայության հետ, հնարավորություններ ստեղծեց, որպեսզի նա ծածկ ունենա գլխին, իր ապրուստը վաստակի սեփական աշխատանքով: Հայերն աստիճանաբար հաստատվեցին նաև Հունաստանում, Կիպրոսում, Ռումինիայում, Բուլղարիայում, Ֆրանսիայում, Ամերիկաներում և այլուր: Ժամանակի ընթացքում նրանք դարձան իրավահավասար քաղաքացիներ ասպնջական երկրներում:

Ամենամեծ ու ամենաանկաշկանդ ազատությունը հայերն ստացան Լիբանանում, ուր բարենպաստ հող գտավ նաև «Ազգային սահմանադրություն հայոցը»՝ նոր պայմաններում կիրարկելու համար: Դրան մեծապես նպաստեց ֆրանսիական հովանավորության հաստատումը Լիբանանի վրա: Ֆրանսիայի ստանձնած հոգատարությունը (mandate) հնարավորություն էր տալիս եվրոպական, հատկապես ֆրանսիական առավել մարդասիրական, ժողովրդավարական արժեքները լայնորեն ներմուծելու երկիր: Այստեղի բազմահամայնքային համակարգի հանդուրժողականության պայմաններում հայերը ևս հետամուտ եղան օգուտ քաղելու այդ արժեքներից: Լիբանանահայ գործիչների տարած հետևողական լարված աշխատանքի արդյունքում Լիբանանի ֆրանսիական բարձր կոմիսարը 1936 թ. մարտի 13-ի

իր հրովարտակի առաջին հոդվածի մեջ (ուր թվարկված էին երկրի հիմնական կրոնական համայնքները), մտցրել էր նաև «հայ Գրիգորյան-օրթոդոքս» և «հայ կաթոլիկ» բառակապակցությունները, դրանով իսկ հայ համայնքը ընդունվել էր որպես Լիբանանի գլխավոր, իրավահավասար համայնքներից մեկը: Հետագայում, 1938 թ. նոյեմբերի 18-ի իրավական ակտով, հիշյալ հրամանագրի առաջին հոդվածում տեղ գտավ նաև բողոքական (protestant) համայնքը, որի մեջ երկրի մյուս ավետարանականների հետ մտնում էին նաև հայ ավետարանականները: Հայ երեք՝ առաքելական, կաթոլիկ և ավետարանական հարանվանություններին տված իրավունքները Լիբանանում օրենսդրորեն ամրագրվեցին՝ նկատի առնելով այն, որ Օսմանյան կայսրության հայ համայնքը, մինչև Մեծ եղեռնը, սուլթան Աբդուլ Ազիզի 1863 թ. մարտի 17-ի ֆերմանով ունեցել է «պատմական ներքին կառավարաձև», այսինքն՝ անձնական իրավունքների կարգավիճակ (status personel), որը հայտնի ողբերգական դեպքերի հետևանքով դարձել էր կարգազրկված տարագիր համայնք[1]: Երկրի հասարակական-քաղաքական կյանքում հայության հետագա ինտեգրման չնորհիվ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Լիբանանն արդեն ձեռք էր բերել անկախություն, նրա խորհրդարանը 1951 թ. ապրիլի 2-ին ընդունեց օրենք, որի համաձայն՝ լիբանանահայ երեք հարանվանությունների վայելած կրոնա-կենցաղային ու վարչական ինքնավարության ճանաչումը տարածվեց նաև քաղաքական ոլորտի վրա: Ելնելով թվաքանակից՝ կրոնական մյուս համայնքներին վերապահված քվոտաների համամասնությամբ, հայությունը խորհրդարանում պատգամավորական աթոռներ ստացավ: Նույն օրենքով կյանք առավ նաև 1863 թ. Ազգային սահմանադրությունը, որի հիմքի վրա կազմվեց «Լիբանանի հայոց անձնական իրավունքը» օրենսգիրքը, ինչպես նաև գոյության կոչվեց «Դատավարության կանոնը», որն ստեղծվել էր Ազգային սահմանադրության 41-րդ հոդվածի հիման վրա, ուր արձանա-

---

[1] *Տե՛ս* ***«Արարատ»*** *բացառիկ, 1 հունվարի 2003 թ., էջ 55:*

գրված է, որ Ազգային Ընդհանուր պատգամավորական ժողովի Կեդրոնական վարչության Քաղաքական ժողովի «Դատաստանական Խորհրդոյ պաշտօնն է ընտանեկան վէճերը լուծել, եւ Բ. Դրան կողմէն պատրիարքարան յանձնուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել եւ որոշել: Երբ պատահի այնպիսի դատ մը զոր Դատաստանական Խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ըստ պահանջման խնդրոյն՝ կա՛մ Կրօնական կա՛մ Քաղաքական և կա՛մ Խառը Ժողովոյն յանձնուելուն հարկաւորութիւնը կը ցուցանէ: Եթէ Դատաստանական Խորհրդոյ մէջ որոշուած դատի մը դէմ բողոքէ դատապարտեալը, խնդիրը վերստին կը քննուի յիշեալ ժողովներէն մէկուն մէջ, որուն որ կը վերաբերի»[1]: Ե՛վ «Օրենսգիրքը», և՛ «Կանոնը» պետական օրենքի ուժ ստացան 1952 թ. հոկտեմբերի 11-ից սկսած: Հայոց Ազգային սահմանադրությանը նվիրված իր արժեքավոր հոդվածում լիբանանահայ իրավագետ Գասպար Տերտերյանը գրում է. «Լիբանանի բազմահամայնքային համակարգը, որ փոքրամասնական համայնքներու համընկերակցութիւն մըն է (Régime Consociatif), մեծ չեղում մըն է պետութեան գերիշխանութեան անբաժանելիութեան եւ անփոխանցելիութեան (indivisible, inaliénable) սկզբունքներէն եւ եզակի կարգավիճակ մը կը պարգեւէ լիբանանահայութեան: Այս կարգավիճակը ծանօթ չէ Արեւմուտքին, ուր Եկեղեցին անջատուած է պետութենէն, եւ ուր եկեղեցիները պարզապէս պաշտամունքային ընկերակցութիւններ են (association cultuelle) եւ չունին կրօնա-կենցաղային, վարչական ու կրթական ինքնավարութիւն...»[2]:

«Ազգային սահմանադրություն հայոցը» որպես հայ ժողովրդի դեպի առաջադիմություն ավանդական ձգտումների արտահայտություն, այսօր նույնպես հաջողությամբ ծառայում է նրա սփյուռքահայ հատվածի ներազգային կյանքի կանոնավորմանն ու կազմակերպմանը:

---

[1] **«Ազգային սահմանադրութիւն հայոց»**, Կ. Պոլիս, 1914, էջ 26-27:

[2] **«Արարատ»** բացառիկ, 1 հունվարի 2003 թ., էջ 55-56:

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Ինչպես ցույց ենք տվել վերը, 1876 թ. դեկտեմբերի 23-ին Կ. Պոլսում հանդիսավորապես հռչակվել էր Թուրքիայի պատմության մեջ առաջին սահմանադրությունը, որն ստացել էր «միդհատյան» անվանումը՝ իր չարադրանքը պատրաստողի՝ Միդհատ փաշայի անունով:

Սահմանադրությունն ընդունելուց հետո պետք է ընդունվեր նաև ընտրական օրենք, որի հիման վրա անցկացվեին խորհրդարանի պատգամավորների ընտրություններ: Բայց դա երկար ժամանակ էր պահանջում, ուստի առաջին օսմանյան խորհրդարանի պատգամավորներն ընտրվեցին ոչ թե ժողովրդի, այլ տեղական վարչական ժողովների կողմից: Ըստ էության՝ դրանք նշանակված պատգամավորներ էին:

Խորհրդարանի բացումը տեղի ունեցավ 1877 թ. մարտի 19-ին՝ սուլթանի պալատում՝ մեծ հանդիսավորությամբ: Բացի սենատի անդամներից և պատգամավորներից, ներկա էին նաև բոլոր նախարարները, դեսպանական կորպուսի անդամները, պետական բարձրաստիճան պաշտոնյաները, քրիստոնյա պատրիարքները:

Խորհրդարանն անձամբ բացեց սուլթան Աբդուլ Համիդը, որից հետո նրա անունից գահական ողջույնի ճառ ասվեց, որը խոստումներ էր պարունակում՝ բոլոր պայմաններն ստեղծել սահմանադրության նպատակների անթերի գործադրության համար: Բացման ժամանակ պատգամավորների ընդհանուր թիվը 86 էր[1], որից 38-ը՝ քրիստոնյա: Այդ ընդհանուր թվում հա-*

---

[1] Տե՛ս **Սարուխան,** *Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հատ. Ա, էջ 337-339:*

* *Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ օսմանյան առաջին խորհրդարանի պատգամավորների թիվը 119 էր, որից 71-ը՝ մուսուլման և 48-ը՝ ոչ մուսուլման (տե՛ս* ***Ю. А. Петросян****, Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.), с. 96):*

յերն ունեին 12 պատգամավոր (3-ը՝ Կ. Պոլսից, 9-ը՝ գավառներից): Դա նշանակում էր, որ պատգամավորների ընդհանուր թվում հայ պատգամավորները կազմում էին չուրջ 14 տոկոս, իսկ քրիստոնյա պատգամավորների թվում՝ ավելի քան 31 տոկոսը: Եթե դրան ավելացնենք, որ խորհրդարանի երկու փոխնախագահներից մեկն ընտրվեց Կ. Պոլսի հայության ներկայացուցիչներից Հովհաննես Այլահվերդին[1], ապա պարզ կդառնա, թե քաղաքական ինչպիսի կշիռ ուներ հայությունը կայսրության մեջ:

1877 թ. ամռանը հրավիրվեց թուրքական առաջին պառլամենտի առաջին նիստը: Պատգամավորների թվում կային թուրքեր, հայեր, հույներ, հրեաներ, բուլղարներ, սերբեր, բոսնիացիներ, արաբներ և քրդեր: Պառլամենտի կազմում չկար պետական ոչ մի պաշտոնյա, որովհետև, սահմանադրության համաձայն, պետական ծառայության մեջ գտնվողները չէին կարող խորհրդարանի անդամ ընտրվել: Ներկայացուցչական օրենսդիր ժողովը քննարկեց և ընդունեց մի շարք կարևոր օրինագծեր: Պատգամավորները համարձակորեն քննադատության կրակի տակ առան սուլթանին և արքունիքը:

Նույն թվականի վերջավորությանն անցկացվեցին խորհրդարանի պատգամավորների նոր ընտրություններ: Քանի որ ընտրական օրենքը կառավարությունը դարձյալ չէր ընդունել, պատգամավորների ընտրությունները կատարվեցին նախկինի պես՝ ժամանակավոր կանոնների համաձայն:

Այս անգամ պառլամենտում ընտրվեց 107 պատգամավոր, որից մուսուլման էին 60-ը, ոչ մուսուլման՝ 47-ը: Հայերն այս անգամ էլ մեծ թվով ներկայացվեցին խորհրդարանում՝ 13 հոգի: Տոկոսային առումով՝ հայ պատգամավորները կազմում էին խորհրդարանի պատգամավորների ընդհանուր թվի 12.1 տոկոսը, ոչ մուսուլման պատգամավորների ավելի քան 36 տոկոսը[2]:*

---

[1] Տե՛ս **Սարուխան,** Հայկական խնդիրն..., էջ 179-180:

* Մեկ այլ աղբյուրում՝ 113 պատգամավոր, որից 46-ը՝ մուսուլման և 49-ը՝ ոչ մուսուլման (տե՛ս **Ю. А. Петросян,** *Младотурецкое движение..., с. 97*):

[2] Տե՛ս **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 337-339:

Խորհրդարանի երկու փոխնախագահներից մեկը դարձյալ ընտրվել էր հայ, այս անգամ էլ առաջին խորհրդարանի փոխնախագահ Հովհաննես Ալլահվերդին[1]: Այս երկրորդ գումարման խորհրդարանի սոցիալական և էթնիկական կազմը մոտավորապես այնպիսին էր, ինչպիսին առաջին գումարման խորհրդարանի կազմը, ուստի նույնքան «անհանգիստ» կարող էր լինել, ինչպես առաջինը:

1878 թ. փետրվարի 13-ին բացվեց երկրորդ գումարման խորհրդարանի առաջին և վերջին նիստը: Հաջորդ օրը՝ փետրվարի 14-ին, սուլթանի հրամանով օրենսդիր մարմինը ցրվում է անորոշ ժամանակով, չհասցնելով նույնիսկ քննարկել պետական բյուջեն:

1908 թ. հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Բարձր Դուռը ձեռնարկեց պատգամավորական երրորդ (հեղափոխությունից հետո առաջին) ժողովի ընտրությունների կազմակերպումը: «Կայսերական բարեհաճ հրամանին չնորհիւ օսմանցիք երեսփոխանական ժողով մը կ'ունենան»,[2]- ուրախությամբ նշում էր «Արեւելքը»: Խորհրդարանը պետք է բացվեր 1908 թ. նոյեմբերի սկզբին՝ ինչպես պահանջում էր սահմանադրության 43-րդ հոդվածը:

Գումարվելիք օսմանյան խորհրդարանը պետք է լուծեր Թուրքիայի ապագայի խնդիրը՝ վերջնականապես գույն տալով սահմանադրությանը և իրական դարձնելով նրա գոյությունը:

1908 թ. հուլիսի կեսերին Փարիզում, «Մեշվերեթ» թերթում հրատարակվեց իթթիհադ կուսակցության հայտարարությունը, որում օսմանյան խորհրդարանի հրավիրման կապակցությամբ առաջադրվում էին մի շարք պահանջներ. 1) Խորհրդարանի անդամներին ընտրելու են ժողովրդական պատգամավորները, 2) Ստեղծվելիք սենատի մի մասը նշանակելու է սուլթանը, իսկ մնացած անդամներին ընտրելու է հասարակությունը, 3) Բոլոր դավանանքներին պատկանողները պետք է ընտրությունների

---

[1] Տե՛ս **Սարուխան**, Հայկական խնդիրն..., էջ 339:

[2] Տե՛ս **«Արեւելք»**, № 6855, 23 հուլիսի, № 6856, 24 հուլիսի, № 6863, 1 օգոստոսի 1908 թ.:

գնան հավասար իրավունքներով, 4) Ընդունել սուլթանին գահ-ընկեց անելու առաջարկը և դա գործադրել այն դեպքում, եթե նա խորհրդարանին չհնազանդվելու փորձ անի:

«Մեշվերեթի» խմբագիր Ահմեդ Ռիզան, տպագրելով Իթթիհադի այդ պահանջները, ավելացնում էր, որ սուլթանը չի կարող չհնազանդվել նշված պայմաններին, քանի որ ամբողջ զորքը գտնվում է երիտթուրքերի ազդեցության տակ:

«Մեշվերեթում» հրապարակված հայտարարությունն ամբողջությամբ կամ հատվածաբար արտատպվել էր եվրոպական և ռուսական մամուլում:

Ռուսական ծայրահեղ ազգայնամոլական շրջանների ձայնափող *"Новое Время"* (**«Նովոյե Վրեմյա»**) թերթը ճիշտ էր համարում ցարական կառավարության՝ Թուրքիայում սահմանադրական շարժումը կանգնեցնելուն նպաստելը, բայց զգալով, որ դա այլևս անհնարին է, գտնում էր, որ գոնե պետք է ստեղծել այնպիսի խորհրդարան, որը չընկնի երիտթուրքերի ազդեցության տակ, քանի որ սրանք «արդեն հայտարարել են ազգերի հավասար իրավունքների» մասին: Թերթի կարծիքով՝ եթե երկրում հանդես չգա «թուրքական կադետներին» զսպող որևէ ուժ, ապա երբ գումարվի խորհրդարանը, կուսակցությունների և ազգությունների միջև կատաղի կռիվ կսկսվի, իսկ հայտնի է, որ նրանցից շատերի համար Թուրքիայի քայքայումը նույնիսկ ցանկալի է: Բացի թուրքերից՝ խորհրդարանի մեջ հավանորեն կմտնեն նաև հայեր, բուլղարներ, հույներ, արաբներ, կուցովալախներ, ալբանացիներ, սերբեր, հրեաներ, նույնիսկ գնչուներ: Դա *"Новое Время"*-ի կարծիքով, կարող է մեծ աղետ լինել, ուստի Ռուսաստանը փաղիշահին պետք է բարեկամաբար խորհուրդ տա: Եվ ահա ինչպես.

«Եթե Թուրքիային խորհրդարան է պետք, թող դա լինի ազգային-թուրքական, առանց որևէ հայկական «կոլոնների» և հունական խմբերի, և թող դա ընտրվի երկրի լավագույն, գործունյա թուրք մարդկանցից: Ո՛չ խուժանը, ո՛չ հեղափոխականները, ո՛չ մանր մտավորականությունը, ո՛չ օտարազգիները չպետք է ներկայացուցչություն ունենան խորհրդարանում: Այդ նյութը (թվարկված հասարակական շերտերը:- Հ. Ս.), ըստ իր

բնության, ոչ թե կառավարող է, այլ՝ կառավարվող»[1]:

Դեռևս 1908 թ. հուլիսի երրորդ տասնօրյակում մայրաքաղաքի և կայսրության մյուս վայրերի թերթերը տպագրել էին օսմանյան խորհրդարանի պատգամավորների ընտրության՝ Իթթիհադի ներկայացրած և սուլթանի հաստատած կանոնագիրը՝ բաղկացած չորս մասից և 83 հոդվածներից:

Կանոնագիրը կտրականապես արգելում էր խորհրդարանի անդամ ընտրել այն անձանց, որոնք չէին տիրապետում պետական լեզվին՝ թուրքերենին: Պատգամավոր կարող էր ընտրվել միայն օսմանյան քաղաքացին:

Երիտթուրքերը կանգնած էին լրջագույն փորձությունների առջև: Մի կողմից նրանք պետք է ճակատեին թուրքական հասարակության ներսում եղած հակաիթթիհադական ուժերի դեմ, որոնք ձգտում էին մեծամասնություն կազմել պատգամավորական ժողովում, մյուս կողմից՝ չեզոքացնեին կայսրության ոչ թուրք ժողովուրդներից եկող վտանգը՝ նրանց ներկայացուցիչների թիվը խորհրդարանում նվազագույնի հասցնելով:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում բազմասեռ ու տարասեռ ժողովուրդներից կազմված բոլոր պետական կազմավորումներն ունեցել են ծանր ճգնաժամեր: Ահա թե ինչո՛ւ այդ պետությունների պետական անձերի հոգածության գլխավոր առարկան հանդիսացել է այն, թե ի՞նչ օրենքներով ու հաստատություններով պետք է կառավարել բազմացեղ պետությունները, որպեսզի ներքին խաղաղություն ստեղծվի և պետական միությունը չվտանգվի:

19-րդ դարի վերջում եվրոպական բազմազգ գլխավոր երկրներից էր մնացել Ավստրո-Հունգարիան, որի կայսրերը եկել էին այն համոզման, որ պետությունը կարող է փրկվել, եթե այնտեղ ստեղծվեն միանման օրենսդրական հաստատություններ և համանման վարչական կանոններ: Կազմվեցին սահմանադրական նոր օրենքներ: Դա, անշուշտ, առաջընթաց մեծ քայլ էր կայսրության ներքին խաղաղության պահպանման տեսակետից, բայց ոչ բավարար քայլ, քանզի հաշվի չէին առնված տե-

---

[1] ***«Новое Время»***, *15 июля 1908 г.*

ղական պայմանները և ազգությունների պատմական իրավունքները, ինչպես, ասենք, դա արվել էր հարևան Շվեյցարիայում: Անհրաժեշտ էր կայսրության այլազան ժողովուրդներին տալ ոչ թե միատեսակ ու միօրինակ, այլ տեղական պահանջներին համապատասխանող հաստատություններ, որպեսզի յուրաքանչյուր ազգություն իրավունք և միջոց ունենար պահպանելու իր անհատականությունը:

19-րդ դարի կեսերից սկսած Ավստրիային, այնուամենայնիվ, հաջողվել էր մի քանի տասնամյակ (մինչև 1918 թ.) խուսափել փլուզումից, չնորհիվ վարչական բարեփոխումների: Դրանց միջոցով կյանքի կոչվեցին տեղական օրենսդրական ժողովներ (Landtag), ուր տվյալ տարածքի ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչները հայտնի չափով ինքնավար կերպով տնօրինում էին տեղական օրենսդրական և վարչական գործերը: Իսկ երկրի բոլոր մասերից ուղարկված ներկայացուցիչների ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հավասար քվեարկությամբ ընտրվում էր ընդհանուր պատգամավորական ժողով (Reichsrat), որը ներկայացնում էր պետական ամբողջությունը:

Եվ եթե խորթափանց լինեին թուրք պետական այրերը և երիտթուրք պարագլուխները, պետք է գնային այդ ուղիով, այլ ոչ թե կարճամտորեն երկրի հեռանկարը կապեին ազգերի ձուլման միջոցով միասեռ բնակչություն ստեղծելու գաղափարի հետ, իսկ եթե դա չհաջողվեր՝ կայսրության այլազգիների ընդհանուր կոտորածի և ամբողջական կրոնափոխության հետ:

Պառլամենտի պատգամավորական տեղերի համար թեկնածուների առաջադրման ժամանակ և ընդհանրապես ամբողջ նախընտրական շրջանում իթթիհադ կոմիտեն կատաղի պայքարի մեջ էր թուրքական հասարակության ծոցում նոր ծնունդ առած, բայց դեռ չամրապնդված քաղաքական կուսակցությունների ու խմբակցությունների հետ: Նա անհաչտ արհամարհանքով էր վերաբերում նորածագ «Ֆեդաքյարանը միլլեթին» («Ազգի նվիրյալներ»), բայց հատկապես անողոք ատելություն էր դրսևորում իշխան Սաբահէդդինի գլխավորած «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնության» կուսակցության (Լիգայի) հանդեպ՝ համարյա ոչնչացնելով նրան:

Ազատության առաջին օրերին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հայտարարել էր, թե ամուր դաշինքի մեջ է Սաբահէդդինի կուսակցության հետ, և երկուսով գործելու են ձեռք-ձեռքի տված: Բայց, չատ չանցած, իթթիհադականները մամուլի և բանավոր քարոզչության միջոցով սկսեցին այնպիսի ուժգին և նենգ պայքար մղել Սաբահէդդինի և նրա Լիգայի դեմ, որ սուլթանի քրոջորդին, վերջ ի վերջո, ըստ էության հրաժեշտ տվեց քաղաքական կյանքին՝ զզված ու դառնացած:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության քարոզիչները նույնիսկ լուրեր էին տարածում, թե Սաբահէդդինն ապակենտրոնացում է պահանջում, որպեսզի մի օր «հայոց իշխան» դառնա: Վերջինս հարկադրված էր «Իկդամ» թերթում բողոքելու և ժխտելու մեղադրանքը:

Ամենազոր Իթթիհադը գավառներում հալածում, ձերբակալում ու բանտարկում էր այն քարոզիչներին, որոնք նախընտրական շրջանում ջատագովում էին Լիգայի առաջադրած թեկնածուներին: Մի խոսքով, «Միություն և առաջադիմությունը» հենց սկզբից, եթե կարելի է այսպես ասել՝ դարձել էր «սահմանադրական բռնակալ»: Իթթիհադականների այս վարմունքը թուրք գիտակից փոքրամասնության շրջանում մեծ զայրույթ ու դժգոհություն էր առաջ բերել:

Պատգամավորական ընտրություններից համարյա երկու ամիս առաջ մայրաքաղաքում կազմակերպվեց մի նոր կուսակցություն՝ «Ահրար ֆբրկասը» («Ազատական խմբակցություն») անունով: Իր ծրագրային դրույթներով՝ այս նորածագ կուսակցությունը մոտ էր Սաբահէդդինի «Ապակենտրոնացման» կուսակցությանը, և հենց դա էր պատճառը, որ վերջինիս շարքերից չատերը, այդ թվում՝ աչքի ընկնող գործիչներ անցան «Ահրար» նորաստեղծ կուսակցության մեջ: Կուսակցությանը գաղտնի պաշտպան կանգնեց նաև մեծ վեզիր Քյամիլ փաշան:

Բայց «Ահրար ֆբրկասըն» դեռևս կարևոր ուժ չէր ներկայացնում: Նա հրապարակ էր իջել ընտրական պայքար մղելու Իթթիհադի դեմ՝ խորհրդարանում մոտ 100 տեղ ունենալու ակնկալիքով: Բայց այդ բանը նրան չհաջողվեց:

Նախընտրական շրջանի սկզբին Կ. Պոլսում ստեղծված

«Սահմանադրական հայ մարմինը», որը մայրաքաղաքից «Ահ-բարի» ցուցակով պատգամավորության թեկնածուներ էր առաջադրել Գրիգոր Զոհրապին և Պետրոս Հալաջյանին, չատ չանցած ստիպված փոխեց իր որոշումը, բլոկ կազմեց Իթթիհադի հետ և այդ թեկնածուները դեպի ընտրություններ գնացին Իթթիհադի ցուցակով:

Պոլսահայ թերթերը հայությանը կոչ էին անում պատրաստվել ամենաեռանդուն մասնակցություն ունենալու խորհրդարանական ընտրություններին և այդ ընթացքում հանդես գալու որպես օսմանյան տերության օրինապահ քաղաքացիներ, ինչպես եղել են միչտ:

«Արեւելքը» գրում էր. «... Կայսրի հաւատարիմ հպատակները պէտք է կատարեալ վստահութիւն եւ հաւատք ունենան այդ չնորհին, որ Ն[որին] Վեհափառութեան բարեացակամութեանը փայլուն եւ բացարձակ մէկ ապացոյցն է: ... Աստուած մի՛ արասցէ, եթէ կայս[երական] հաճութեան հակառակ ամենափոքր արարք մը իսկ տեղի ունենայ, [որը] երկրին ու տէրութեան համար անդարմանելի վնաս պիտի պատճառէ: Նման արարքը ազգասիրութեան բոլորովին անհամապատասխան է, ինչ որ պէտք է միչտ աչքի առաջ ունենալ»[1]:

Երիտթուրքական կոմիտեները նախընտրական չրջանում մեծ երկյուղի մեջ էին այն պատճառով, թե իրենց կհաջողվի՞ արդյոք ապագա խորհրդարանում հաչտեցնել զանազան ազգային խմբակցությունները: Այդ երկյուղը գլխավորապես ծագում էր Թուրքիայի հույների վարմունքի պատճառով: Նրանք իրենց համար պահանջում էին այնպիսի արտոնություններ, որոնք օսմանյան սահմանադրության ոգուն պարզապես հակասում էին:

Նչենք, որ կայսրության քաղաքակիրթ ազգերի թվում հույներն առաջնակարգ տեղ էին զբաղեցնում: Թե՛ մչակութային կյանքով և թե՛ թվապես նրանք հայերից ավելի զորեղ էին, նախկին ռեժիմի օրոք բավական չատ արտոնություններ և

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6848, 14 հուլիսի 1908 թ.:*

առանձնաշնորհումներ էին վայելում: Ամենից առաջ՝ եկեղեցական կատարյալ ինքնավարություն ունեին: Պոլսի հունաց պատրիարքարանը ձեռք էր բերել լայն իրավունքներ նաև քաղաքացիական գործառույթների մեջ: Ժառանգական վեճերը, հողային վեճերի մի քանի տեսակներ, մի շարք ուրիշ քաղաքացիական հարցեր ենթակա էին ոչ թե թուրքական դատական ատյաններին, այլ՝ հունաց պատրիարքարանի իրավասությանը:

Հույներն առանձին իրավունքներ ու արտոնություններ էին վայելում մանավանդ դպրոցական գործում: Օգտվելով այդ իրավունքներից՝ նրանք Պոլսում, Իզմիրում և այլ հունաբնակ վայրերում հիմնել էին առաջնակարգ լիցեյներ (գիմնազիա), որոնցում ուսումն ամբողջովին կատարվում էր մայրենի լեզվով, իսկ իրենց զավակներին, բարձրագույն կրթության տալու համար, ուղարկում էին Աթենք:

Հին ռեժիմի օրոք հույներն առհասարակ լավ էին ապրում, այն դեպքում, երբ մյուս ազգերը, հատկապես հայերը, ենթակա էին սոսկալի հալածանքների: Պատճառը թերևս այն էր, որ, այնուամենայնիվ, Պոլսում, Իզմիրում կամ Սալոնիկում ապրող ամեն մի չափահաս թուրքի ենթագիտակցության մեջ մշտապես ներկա էր այն միտքը, որ ինքը նստած է հույներից բռնազավթված հողերի վրա:

Իրենց արտոնյալ վիճակը հույներին հեռու էր պահում բռնապետական ռեժիմի դեմ պայքարից. նրանք գրեթե մասնակցություն չէին ունենում հեղափոխական շարժմանը, որի ամբողջ ծանրությունն ընկած էր ուրիշ ազգերի վրա:

Բնական է, որ երբ հեղափոխության հաղթանակից հետո երիտթուրքերը կտրուկ պահանջ էին դրել, թե Օսմանյան կայսրության ազգերից ոչ մեկը չպետք է հատուկ արտոնություններ վայելի և որ բոլորը պետք է ունենան միևնույն հավասար իրավունքներն ու պարտականությունները, հույներն այդ պահանջին հակազդեցին մեծ դժգոհությամբ: Կ. Պոլսի հունաց պատրիարքարանն ու Ազգային ժողովը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ արտահայտեցին իրենց բուռն անհամաձայնությունը հույների արտոնությունները վերացնելու կառավարության մտադրության նկատմամբ, միաժամանակ առաջ

քաշեցին իրենց հակապահանջները, որոնք, ըստ էության, հակասում էին Իթթիհադի քաղաքականությանը: Այդ պահանջներն էին. 1) Պահպանել բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որոնք հույներին չնորհել էին սուլթանները՝ սկսած Մեհմեդ II Ֆաթիհից մինչև 1856 թ. խաթթ-ի հումայունը և 1876 թ. միդհատյան սահմանադրությունը, հաստատուն հովանի լինել հունաց պատրիարքարանին և հունաց սահմանադրությանը, 2) Թե՛ տարրական և թե՛ միջնակարգ հունական դպրոցները պետք է լինեն բացառապես ազգային և պահպանվեն պետական միջոցներով, 3) Խորհրդարանում, նախարարություններում, վարչություններում բոլոր ազգերը պետք է ներկայացված լինեն համամասնական սկզբունքով, որպեսզի ամեն ազգ ներկայացուցիչներ ունենա կառավարման օղակներում՝ իր թվի համեմատ: Հույներին պետք է պաշտոններ տրվեն նույն համամասնությամբ, 4) Հույների՝ տեղի բնակչության մեծամասնությունը կազմած վայրերում, հունաց լեզուն ճանաչել պաշտոնական լեզու՝ թուրքերենի հետ համահավասար:

Հույների այդ պահանջներն այնքան մեծ էին, որ, բնականաբար, գրգռում էին թուրքերի դժգոհությունը, որոնք այդ թելադրանքների մեջ պետության միության խախտում էին տեսնում: Կարելի է ասել, որ այդ պահանջները նույնքան ծայրահեղ էին ու չափազանցված, որքան երիտասարդ թուրքերի ձգտումը՝ վերացնելու բոլոր քրիստոնյաների ունեցած առանձնաշնորհները:

Պատահական չէր, որ գնալով մեծ ծավալ ընդունեցին հույն-երիտթուրքական հակասությունները: Բանն այն է, որ նոր վարչակազմը օսմանյան հպատակ հույների թիվը հաշվել էր 1430000, ինչը մեծ լարում էր առաջ բերել հույն-թուրքական հարաբերություններում: Հույները պնդում էին, թե կայսրության մեջ իրենց թիվը 6,5 միլիոն է: Բերվում էին օրինակներ, որ ասենք, Իզմիրի 400000 բնակչությունից 300 հազարը հույներ են՝ չխոսելով արդեն Սալոնիկի, Պոլսի, Պոնտոսի միլիոնավոր հույների մասին: Վեճի էությունն այն էր, թե թուրքական խորհրդարանում քանի՞ հույն պատգամավոր պիտի լիներ: Օսմանյան ընտրական օրենքով՝ ամեն մի պատգամավորական թեկնածու խորհրդարան պետք է մտներ 50000 տղամարդ-ընտրողի ձայ-

նով: Ըստ երիտթուրքերի՝ հույները, խորհրդարանում պիտի ունենային 23, իսկ ըստ իրենց՝ հույների՝ առնվազն 65 պատգամավոր: Եվ խնդրի չուրջ կրքերը գնալով բորբոքվում էին: Բանը հասավ նրան, որ Կ. Պոլսի հունական «ընտրական կոմիտեն» իշխանությունների կողմից ընտրությունները անարդարացի կազմակերպելու պատրվակով հրաժարական տվեց ամբողջ կազմով և հանդես եկավ հայտարարությամբ, թե «անհնարին է որևէ համաձայնության գալ երիտթուրքերի հետ»:

Լարվածություն առաջացավ նաև հույների և հայերի միջև: Հույները ճիշտ էին համարում կառավարության կողմից հայերի երկու անգամից ավել նվազեցրած թիվը, ավելին, գտնում էին, որ իրենք խորհրդարանում այնքան պատգամավոր պետք է ունենան, որքան կայսրության բոլոր քրիստոնյա ազգերը՝ միասին վերցրած: Հույների հայտարարության մեջ պարզ ու որոշակի ձևակերպված էր պահանջը. քանի որ մենք կազմում ենք Օսմանյան կայսրության ազգաբնակչության հինգերորդ մասը, ուստի և, թուրքերից հետո, պետք է ունենանք ամենաշատ թվով ներկայացուցիչներ խորհրդարանում[1]:

Հույների այդ մեծ հավակնություններն, իհարկե, անարդար էին, և պատահական չէ, որ Պոլսի հայկական թերթերը սաստիկ հարձակումներ էին գործում նրանց վրա, ծաղրում նրանց նկրտումներն ու ջանքը: Դա երկար սպասեցնել չտվեց. հունալեզու թերթերը պատասխան կծու հոդվածներով ավելի էին լարում մթնոլորտը:

Հույն-հայկական բորբոքված հակասությունները կողմերից ոչ մեկին օգուտ չբերելով՝ ջուր էին լցնում Իթթիհադի ջրաղացին: Անհրաժեշտ էր երկուստեք վերջ տալ փոխադարձ դիմադարձմանը: Նախաձեռնությունը վերցրին հայերը: Հայոց պատրիարքական տեղապահ Եղիշե Դուրյանի կողմից մի պատգամավորություն գնաց հունաց պատրիարքի մոտ և առաջարկեց ընտրությունների գնալ միասնական ցուցակով: Դա նշանակում էր միավորվել և ընդդիմադիր ճակատ կազմել: Հույն պատ-

---

[1] ***«Մշակ»,*** *№ 194, 4 սեպտեմբերի 1908 թ.:*

րիարքն ընդունեց հայոց առաջարկը: Նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ երկու պատրիարքարանների ներկայացուցիչները հավաքվեն և համատեղ ընտրական պայքարի միասնական ծրագիր մշակեն: Բայց, չանցած մեկ շաբաթ, հունական կողմը նախնական պայմանավորվածությունից հրաժարվեց:

Երիտթուրքական կոմիտեները առաջին մեկ-երկու ամիսներին վախ ունեին, որ կայսրության մյուս ազգերը նույնպես կհետևեն հույների և բուլղարների օրինակին ու նույնանման պահանջներ կներկայացնեն: Վախը մեծ էր հատկապես երկրի բազմաքանակ արաբներից, որոնք հաշտ չէին թուրքերի հետ և եթե կարողանային խորհրդարան անցկացնել մեծ թվով պատգամավորներ ու այնտեղ թուրքերին թվապես գերակշռող պատգամավորական խմբակցություն կազմել, այդ դեպքում փոքրամասնություն կազմող թուրք պատգամավորները չէին կարող վերահսկել իրավիճակը երկրում, իսկ արաբները հանդես կգային թելադրողի դերում: Նման հնարավոր հեռանկարի մասին պարզորոշ բարձրաձայնում էին տարագրության մեջ գտնվող արաբ հակաթուրք գործիչները, որոնք նաև պահանջում էին խորհրդարանում թուրքերենին հավասար գործածական լեզու համարել արաբերենը:

Ինչպես և սպասելի էր, Իթթիհադի ղեկավարությունը կտրականապես մերժեց հույների պահանջը՝ երկրի համար կործանարար գտնելով խորհրդարանի պատգամավորների ընտրությունն ըստ ազգությունների: Երիտթուրքերի կարծիքն այն էր, որ խորհրդարան պետք է մտնեն այն մարդիկ, որոնք արտահայտելու են ոչ թե առանձին ազգերի, այլ օսմանյան միասնական ազգի շահերը: Կոմիտեն կրկին ու կրկին հայտարարում էր, որ օսմանյան պետության մեջ չկան հայեր, բուլղարներ, արաբներ և այլն, այլ կա մեկ ու միացյալ երկիր՝ իր «հայրենասեր օսմանցի բնակչությամբ»:

Թեև հույների պահանջն անարդարացի էր, բայց շատ հայ գործիչներ գտնում էին, որ Թուրքիայի պայմաններում ավելի վտանգավոր է երիտթուրքերի առաջարկած տարբերակը: Նրանք ասում էին, որ եթե խորհրդարանում ներկայացված

պատգամավորներն առանձին-առանձին չպիտի ներկայացնեն իրենց ազգությունները, ապա դրա անխուսափելի հետևանքը կլիներ այն, որ երկրի մանր ազգությունները, ինչպես, օրինակ, ասորիները և նույնիսկ հայերը, այնտեղ չէին ունենա ազգային շահերի պաշտպաններ կամ կունենային աննշան թվով: Պատգամավորների ճնշող մեծամասնությունը բաղկացած կլիներ թուրքերից, որոնք ամբողջ պետության բախտը կտնօրինեին ըստ իրենց հայեցողության, այսինքն՝ ըստ իրենց աշխարհըմբռնման, կրոնական ու քաղաքական հակումների ևն.:

Չնայած դրան, հայերը, հատկապես մայրաքաղաքում, հակված էին պաշտպանելու Իթթիհադի ազատամիտ սկզբունքը՝ ընդդեմ հույների նեղ-ազգայնական տեսակետի: Պոլսահայ թերթերը գրում էին, թե հույները մոռանում են, որ միասնական օսմանյան ազգի գաղափարը կարող է գոյություն ունենալ միայն վերացական տեսության մեջ, բայց ոչ երբեք գործնականում: Հայ գործիչները համոզված էին, որ «պետության մեջ չկան ազգություններ, այլ կան քաղաքացիներ» երիտթուրքական սկզբունքը, գոնե փոքրիշատե մոտիկ ապագայի համար, անիրագործելի ուտոպիա է: Ըստ նրանց՝ մի երկիր, որ բաղկացած է լեզվով, կրոնով, մշակույթով, պատմությամբ, աշխարհայացքով, ծագումով ու սովորություններով միմյանցից բոլորովին տարբեր բազմաթիվ ազգերից՝ անհնարին է վերափոխել այնպիսի մի երջանիկ Արկադիայի, ուր բոլոր ազգերը կապրեն իբրև եղբայրներ ու բոլորն էլ կբարգավաճեն օսմանյան կարմիր դրոշի հովանու ներքո:*

Ուրեմն, անհրաժեշտ էր միջին ճանապարհ գտնել, գործն այնպես կազմակերպել, որ ամենքը տանելի կացություն ունենան: Եթե թուրքահայ գործիչները որոշել էին տվյալ դեպքում սատար կանգնել Թուրքիայի բարեփոխման հոգսն իրենց վրա առած երիտթուրքերին, դա չէր նշանակում, թե հայերը պետք է

---

* *Արկադիա (հուն. Arkadia) - Անտիկ Հունաստանի Պելեպոնեսի միջին մասը, որտեղ հիմնականում հովիվներ ու որսորդներ էին բնակվում: Հովվերգական պոեզիայում Արկադիան ներկայացվում է որպես «երջանիկ հովիվների» «երջանիկ երկիր»:*

հրաժարվեին իրենց ազգային իրավունքներից, մինչ այդ ձեռք բերած արտոնություններից, այլևս չհամարվեին հայեր, այլ դառնային օսմանցիներ: Եվ հենց այդպես էլ մտածում էին բոլոր հայերը:

Հակառակ հույների, բուլղարների և արաբների, թուրքերի հետ համերաշխ էին հայերը, ալբանացիները և սերբերը, որոնք պահանջում էին խստորեն հետևել ընտրական կանոնագրի սկզբունքներին: Դա նշանակում էր, որ խորհրդարանի պատգամավորական խմբակցությունները պետք է ստեղծվեին ոչ թե ազգային, էթնիկ սկզբունքով, որի հետևանքով միմյանց ձեռքից կփորձեին խլել առաջնության դափնին, այլ՝ պատգամավորների քաղաքական կողմնորոշման սկզբունքով, որը բոլորին հնարավորություն կտար աշխատել հօգուտ ընդհանուր պետության:

Տեսնելով, որ իրենց առաջարկները համառ դիմադրության են հանդիպում ոչ միայն երիտթուրքական կառավարության, այլև հայերի ու բալկանյան մյուս քրիստոնյա հավաքականությունների կողմից, հույների ազգային իշխանությունները վերջիններիս առաջարկեցին խորհրդարանի ընտրություններին գնալ ընդհանուր բլոկով: Բայց այդ գաղափարն արձագանք չգտավ: Եվ դա բնական էր:

Բանն այն է, որ թուրքական բռնակալությունը երկար դարերի ընթացքում այնպես էր բաժան-բաժան արել և իրարից խորթացրել հպատակ ազգերին ու տարբեր դավանանքներին, որ անհնարին էր դարձել նրանց տարբեր ձգտումներն ինչ-որ խնդրի շուրջ համատեղելը:

Օրինակ՝ եթե բալկանյան քրիստոնյաները՝ սերբերը, բուլղարները, մակեդոնացիները, հույները, իրենց ամբողջության մեջ ատելությամբ էին լցված թուրքական իշխանությունների նկատմամբ, ապա առանձին-առանձին՝ խորթացած էին իրարից և համերաշխության ուղղությամբ որևէ քայլ չէին անում: Ավելին, բալկանյան բոլոր քրիստոնյա տարրերը, գտնվելով թուրքերի լծի տակ, մեկը մյուսի նկատմամբ տարածքային լուրջ պահանջներ ունեին: Թուրքիայի հույները երազում էին Աթենքի իշխանության տակ տեսնել ամբողջ Բալկանյան թերակղզին: Այդպիսի իդձ էին փայփայում սերբերն ու բուլղարները իրենց

համար: Եվ յուրաքանչյուրն իր նպատակին հասնելու համար չետաների խմբերով արյունահեղ բախումներ էր ունենում:

Թուրքահայությունը, իբրև օսմանյան պետության բաղկացուցիչ տարրերից մեկը, որն անմիջականորեն չահագրգռված էր խորհրդարանի հրավիրմամբ, պետք է մտածեր, թե ի՞նչ եղանակով է մասնակցելու ընտրություններին, ի՞նչ միջոցներ է գործադրելու, որ ծառայելով պետության ընդհանուր չահերին, միաժամանակ կարողանար ապահովել ազգային չահերի անվթար պաչտպանությունը: Իզմիրի «Արեւելեան մամուլը» գրում էր.

«Յառաջիկային ընտրութիւններ պիտի ըլլան ամէն տեղ, եւ օրինաւոր ընտրութիւններ, Սահմանադրական օրէնքին համեմատ: Այդ ընտրութիւնները արժանաւոր անձերու վրայ կատարելու համար, այժմէն ամէն նախապատրաստութիւն ունենալ ամէն ազգասէր հայու պարտականութիւնն է, եւ վա՜յ անոր որ իր քուէն պիտի տայ չարագործին, փառասէրին, չահախնդիրին, անբարոյականին եւ լրտեսին: Պատասխանատուութիւնը ահաւոր է արդարեւ, ահա թէ ինչո՛ւ համար այժմէն հրաւէր կը կարդամ հայրենակիցներուս՝ վերջին ծայր չրջահայեցութեամբ եւ զգուչութեամբ չարժիլ ընտրութեան օրերուն»[1]: Իսկ դա նչանակում էր ամենից առաջ պարզել, թե ո՞ւմ է պատկանում ազգի անունից խոսելու իրավունքը, ովքե՞ր են լինելու հայության օրինավոր ներկայացուցիչները խորհրդարանում:

Խնդիրը դժվար լուծելի էր, քանի որ հայ ժողովուրդը տվյալ պահին Թուրքիայում օրինական ներկայացուցչություն փաստորեն չուներ: Կ. Պոլսի Ազգային պատգամավորական ժողովը, ինչպես արդեն ասվել է, երեսնամյա ամլությունից հետո նոր էր մտնում կազմակերպական հունի մեջ: Անգործության դատապարտված լինելու պատճառով չէր գործում նաև Խառը ժողովը: Գուցե հենց դա էր գլխավոր պատճառը, որ ազգային գլխավոր հարցերը երկու տասնամյակ տնօրինում էին անօրինական քաղաքական կուսակցությունները, որոնք որևէ մանդատ և իրավական լիազորություն չունեին խոսելու հայ ազգի անունից,

---

[1] **«Արեւելեան մամուլ»,** № 31, 29 հուլիսի 1908 թ.:

պաշտպանելու նրա շահերը և իրավունքները՝ իբրև նրա ներկայացուցիչներ: Նույնիսկ ՀՅ դաշնակցության ներկայացուցիչները խոստովանում էին, որ հանուն հայ ժողովրդի վճիռ և որոշում տալու իրավասու է միայն Ազգային պատգամավորական ժողովը, հետևապես ներկայումս Կ. Պոլսի հայ հասարակական և ազգային-քաղաքական գործիչների առաջին և գլխավոր պարտականությունը պետք է լինի արագացնել դրա գումարումը:

ՀՅ դաշնակցությունը, որ Փարիզի համաժողովով համերաշխություն և աջակցություն էր խոստացել երիտթուրքերին, որոշեց խորհրդարանի ընտրությունների առթիվ ծանր խնդիրներ չստեղծել Իթթիհադի համար, բայց միաժամանակ բացահայտ կերպով ներկայացնել իր տեսակետները առաջիկա խորհրդարանի և երկրի ապագայի մասին:

1908 թ. սեպտեմբերի 1-ին կուսակցության Արևելյան բյուրոն հրատարակեց նախընտրական և խորհրդարանական գործունեության համար նախատեսված իր շրջաբերական–պլատֆորմը[1], ուր խորհրդարանի առաջին նստաշրջանում քննարկվելիք հարցերի համար, որպես հիմք, առաջադրվել էին հետևյալ հիմնական սկզբունքները.

Օսմանյան կենտրոնական կառավարությունը, հիմնված ժողովրդական ներկայացուցչության համակարգի վրա, վարում է պետության ընդհանուր գործերը – արտաքին քաղաքականություն, զորք, դրամ, մաքս, երկաթուղի, փոստ-հեռագիր և այլն – տեղական մյուս գործառույթները թողնելով մյուս շրջաններին:

Մյուս կողմից՝ Օսմանյան կայսրության նման բազմալեզու և բազմազգ պետության քաղաքական լավագույն կազմը դաշնային, ապակենտրոն ձևն է, երբ աշխարհագրական-տնտեսական-ազգագրական ուրույն դիմագիծ ունեցող բոլոր շրջանները ներքին-վարչական-օրենսդրական ինքնավարություն կվայելեն: Դա, իր հերթին, առավել ևս ներդաշնակորեն կուժեղացնի ու կամրապնդի պետական ողջ կառուցվածքը:

Անցնելով վիլայեթների իրավունքների հարցին՝ ՀՅ դաշնակ-

---

[1] Տե՛ս **«Ազգ»**, № 72, 12 սեպտեմբերի 1908 թ.:

ցությունը պահանջում էր, որպեսզի դրանք տեղական գործերը վարելու մեջ լայն ինքնավարություն վայելեն, իսկ ազգային և կրոնական համայնքները համայնական գործերում անհրաժեշտ իրավունքներ ունենան: Վիլայեթներին, կազաներին, տեղական համայնքներին և քաղաքային վարչություններին պետք է վերապահվեին ճանապարհները, ժողովրդական առողջապահությունը, կրթական գործը, ջրաբաշխումը, տեղական ոստիկանությունը, տեխնիկական, գյուղատնտեսական ու այլ գիտելիքների տարածումը և այլն: Վիլայեթների եկամուտների մի որոշ մասը (20–25 տոկոսը) պետք է ծախսվեր տեղական կարիքների համար՝ իրավասու մարմինների միջոցով: Բացի վալիներից, մութասերիֆներից, խթինաֆի մյուդդայի ումումիներից (վերաքննիչ դատարանների դատախազներից) և ռեյիսներից (գյուղապետերից), տեղական մնացած բոլոր պաշտոնյաները պետք է ընտրվեին համապատասխան խորհուրդների կողմից: Վիլայեթների սահմանները որոշելու ժամանակ, հակառակ հին ռեժիմի գործադրած սկզբունքին, պետք է նկատի առնվեին ազգաբնակչության տեղական և մշակութային առանձնահատկությունները՝ ըստ կարելիության միաձույլ համախմբումներ կազմելու համար:

Կայսրության անբաժան մասը կազմող Թուրքահայաստանը պետք է ինքը վարի իր տեղական գործերը՝ հիմնված ապակենտրոնացման սկզբունքի վրա, որից հավասարապես պետք է օգտվեն նաև երկրի մյուս ազգերը:

Խորհրդարանական, դատաստանական և տեղական վարչական բոլոր մարմինները պետք է ընտրվեն ընդհանուր, հավասար, գաղտնի և համեմատական ձայնատվության սկզբունքով: Այս սկզբունքը պետք է գործադրվի բոլոր ազգերի և կրոնների համար հավասարապես: Բոլոր ազգերի և կրոնական համայնքների իրավունքները հավասար են, նրանց ներկայացուցիչները տեղական և պետական կենտրոնական մարմիններում պաշտոնավարելու իրավունք պետք է ունենան՝ համամասնական սկզբունքով:

Կուսակցությունն անհրաժեշտ էր գտնում վերաքննության ենթարկել սահմանադրությունը և նրանում ամրագրել պետու-

թյան ապակենտրոնացման սկզբունքը, խորհրդարանի առջև նախարարների դահլիճի պատասխանատվությունը, գահակալի երդումը՝ սահմանադրությունը անխախտ պահելու մասին, Վերին ժողովի (Մեջլիս-ի ասյան՝ սենատ) վերացումը:

Դաշնակցությունը չափազանց կարևորում էր քաղաքական ազատությունների խնդիրը և պահանջում խոսքի, մամուլի, խղճի, ժողովների ու գործադուլների ազատության անխախտ պահպանում, անձի, բնակարանի, նամակագրության անձեռնմխելիություն, տեղափոխության ազատություն, ներքին անցագրերի վերացում:

Փաստաթղթում առանձնահատուկ ուշադրություն էր դարձրած դպրոցի և լեզվի հարցերին: Պահանջներն էին՝ ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական ուսուցում. կրթական-մշակութային գործունեության կատարյալ ազատություն, բոլոր տեսակի դպրոցների իրավասության հավասարություն, ազգային դպրոցներում դասավանդումը մայրենի լեզվով, ազգային դպրոցներում պետական լեզվի ուսուցումը՝ չորրորդ տարուց սկսած, Թուրքական դպրոցներում տեղական լեզուների դասավանդումը նույնպես պարտադիր՝ չորրորդ տարուց: Մշակութային-դպրոցական նպատակներին հատկացված բյուջեն բաժանել առանձին ազգությունների միջև՝ համաձայն ազգաբնակչության թվի: Պետական լեզուն պարտադիր է բոլոր պաշտոնյաների համար, որոնք պետք է իմանան նաև տեղական ազգաբնակչության լեզուն:

Առաջ էր քաշված նաև դատարանների վերակազմության և ձրի դատավարության, պետության բոլոր ազգությունների համար զինվորագրության հավասարության, պետական պաշտոնյաների թվի նվազեցման, հողային հարցի կարգավորման, հարկային համակարգի կատարելագործման, աշխատանքի օրենսդրական կարգավորման, կանանց ու երեխաների գիշերային աշխատանքի վերացման և այլ պահանջներ[1]:

Ինչպես տեսնում ենք, երկրում քիչ թե շատ ազատության

---

[1] *Տե՛ս* ***«Արեւելք»****, № 6897, 11 սեպտեմբերի 1908 թ.:*

պայմաններում Դաշնակցությունն առաջադրում էր այնպիսի արմատական խնդիրներ (այդ թվում ապակենտրոնացման խնդիրը), որոնց էությունը միանգամայն խորթ էր Իթթիհադի ծրագրային նպատակներին և «մահու չափ թշնամի էր Ահմէտ Ռիզայի «Օսմ. Միութեան եւ Յառաջդիմութեան» կուսակցութեանը»[1]: Դաշնակցության ծրագրային փաստաթուղթն ավելի համահունչ էր իշխան Սաբահէդդինի առաջադրած սկզբունքներին: Կարելի է ասել, որ այդ պլատֆորմը կտրուկ չեղում էր Փարիզի 1907 թ. դեկտեմբերյան համաժողովի որոշումներից և Իթթիհադի քաղաքական գաղափարներից, որոնց Դաշնակցությունը քաջատեղյակ էր: Այդ չեղումը վերջինը եղավ: Իրադարձությունների զարգացումը 1908 թ. սեպտեմբերի կեսերից արմատական փոփոխություններ մտցրեց կուսակցության պահանջների մեջ, և նա մեկը մյուսի հետևից զիջումների գնաց երիտթուրքական կոմիտեի և կառավարության ահագնացող ճնշումների տակ:

1908 թ. հոկտեմբերի կեսերին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, իր հերթին, կազմել էր մի հանձնախումբ, որը պետք է զբաղվեր խորհրդարանի հայ անդամների ընտրության, նրանց բռնելիք ընթացքի և այլ հանգամանքներով: Հանձնախումբն ընդունել էր մի հանձնարարական, ըստ որի՝ խորհրդարանում ընտրվող հայ պատգամավորները պիտի ունենային հետևյալ արժանիքները. «1) Սիրտ ունենալ, այսինքն՝ ունենալ լաւ նկարագիր, եւ ըլլալ պարկեշտ մարդ, 2) Ուղեղ ունենալ՝ խորհելու եւ լաւ դատելու համար իրերն ու մարդիկը, 3) Հմտութիւն ունենալ ազգային եւ վարչական գործերու մէջ, 4) Խօսելու եւ իր կարծիքները յայտնելու կարողութիւն ունենալ»[2]:

Սիրտ, ուղեղ, հմտություն – ահա՛ սրանք էին պատրիարքարանի հայցապահանջները պատգամավորական թեկնածուներից: Պատահական չէ, որ հանձնարարականը խիստ քննադատության ենթարկվեց բանիմաց քաղաքական գործիչների կող-

---

[1] **«Ազգ»**, № 72, 12 սեպտեմբերի 1908 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»**, № 231, 19 հոկտեմբերի 1908 թ.:

մից, որոնք նշում էին, թե լավ նկարագիր ունենալը, պարկեշտ մարդ լինելը, «խելք ունենալը», ունակ և զարգացած լինելը լավ են, ողջունելի են, բայց այդ արժանիքները կարող է ունենալ և՛ ազատականը, և՛ պահպանողականը: Այդ հատկանիշները դրոշակներ չեն, այսինքն՝ ծրագրեր, դավանանքներ, սկզբունքներ, համոզմունքներ չեն: Այդ արժանիքները միայն հաշվի առնելով և վկայակոչելով չի կարելի գիտակցված ընտրությունների գնալ: Պետք է ընտրել այնպիսի անձանց, որոնք ունակ լինեն խորհրդարան հասցնել իրենց ընտրողներին հուզող խնդիրները, նրանց ցավերն ու պահանջները[1]:

Եթե հույները պահանջում էին առաջիկա խորհրդարանում ունենալ այնքան տեղ, որքան կուսակցային կայսրության բոլոր քրիստոնյաները միասին վերցրած, ապա քանի՞ խորհրդարանական տեղի էին հավակնում հայերը: Այդ հարցը մեծապես զբաղեցնում էր պոլսահայ քաղաքական շրջաններին, մամուլին, պատրիարքարանին, բայց ոչ պակաս՝ նաև Թուրքահայ հասարակությանը:

*Ինչպես վերը նշվեց, օրենքով յուրաքանչյուր 50000 արական սեռի բնակիչները կարող էին տալ խորհրդարանի մեկ պատգամավոր: Ուրեմն, եթե ընդունենք, որ ինչպես ցույց էր տվել հայոց պատրիարքարանը, 1908 թ. Թուրքիայում կար նվազագույնը 2,5 միլիոն հայ**, *որի կեսը արական սեռի էր, այսինքն՝ 1.250.000-ից մի քիչ ավել կամ պակաս, ապա Թուրքահայերն իրավունք ու-*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 231, 19 հոկտեմբերի 1908 թ.:*

* *Թուրքիայում հայ ազգաբնակչության թվաքանակի մասին կան զանազան, երբեմն միմյանցից զգալիորեն տարբեր, տվյալներ: Դեռևս 1854 թվականին Կարլ Մարքսը «Պատերազմի հայտարարումը: Արևելյան հարցի ծագման պատմության չուրջը» հոդվածում նշել է, որ Օսմանյան կայսրության մեջ կա 2.400.000 հայ (Տե՛ս* ***Կ. Маркс*** *и* ***Ф. Энгельс****, Сочинения, изд. второе, т. 10, с. 171): Այլ աղբյուրներ ավելի ուշ նշում են 2,5-3,5 միլիոն թիվը: Եվրոպական աղբյուրները ավելի պակաս թիվ էին նշում: Օրինակ՝ ըստ Ռոլեն Ժակմենի, Լինչի, Վիտալ Քինեի, Վամպերիի, Զուպանի՝ հայերի թիվը հաշվվում էր 1,5 միլիոն: Կարծում ենք 3 միլիոն թիվն ավելի ճիշտ է (այդ մասին մանրամասն տես՝* ***Ազատ Համբարյան****,* ***Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), էջ 43-47:***

նեին պահանջելու, որպեսզի խորհրդարանում իրենք ունենային առնվազն 22 պատգամավոր:

Հենվելով աբդուլհամիդյան ժամանակներում «անցկացված» մարդահամարների, ինչպես նաև տարբեր ժամանակներում եվրոպական որոշ հեղինակների ներկայացրած տվյալների վրա, Իթթիհադը կայսրության հայերի թիվը հնարավորինս ցածր էր ցույց տալիս:

Բայց թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում ենթադրյալ թվերը իրականություն կդառնային միայն այն դեպքում, եթե ընտրությունները կատարվեին ըստ ազգությունների կամ, այլ խոսքով, եթե պետության ամբողջ տարածքը բաժանված լիներ ազգային ընտրական կուրիաների, ինչպես այդ կատարվում էր, ասենք, Ավստրո-Հունգարիայում Ռայխսրատի ընտրությունների ժամանակ: Բայց Իթթիհադը շրջանների (օկրուգների) գծումը կատարել էր աղաղակող անարդարություններով: Նա այնպես էր բաժանել ընտրական շրջանները, որ հայաբնակ գավառները խառնվել էին իսլամ բնակչություն ունեցող գավառներին, որի հետևանքով՝ երբ ընտրական շրջանների բնակչության կեսից մի փոքր ավելին մուսուլմանական էր դառնում՝ պատգամավորները ձայների առավելությամբ ընտրվում էին թուրքերից կամ քրդերից[1]: Այսինքն՝ հայ պատգամավորների թիվը կախված էր ոչ միայն թուրքահայության թվից, այլ այն հանգամանքից, թե տվյալ կազայում կամ սանջակում հայ բնակչությունն ինչպիսի՞ տարածում ուներ նույն տարածքի ուրիշ ազգերի բնակիչների համեմատ, այսինքն՝ մեծամասնությո՞ւն էր կազմում, թե՞ փոքրամասնություն:

Իհարկե, այդ տեսակետից իրավիճակը հայության համար նպաստավոր չէր, քանի որ հայ տարրը շատ ցրված էր ընդարձակ տարածությունների վրա և շատ քիչ սանջակներում էր համեմատական մեծամասնություն կազմում: Այնպես որ, հայերը երբեք չէին կարող իրենց իրական թվի համապատասխան պատգամավորներ ունենալ խորհրդարանում:

---

[1] *Տե՛ս* ***Հրաչեայ Աճառեան,*** *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 65:*

Հայերը պահանջեցին, որ ընտրության գործը կայսրության յուրաքանչյուր ազգի հանձնվի: Եթե հայերին հասնում էր 20 աթոռ, ապա նրանք իրենք պետք է իրենց մեջ կազմեին ընտրական չրջաններ և իրենց ուզած անձերից ընտրեին 20 պատգամավոր:

Այդ հարցով հետաքրքրված Հրաչյա Աճառյանը գրում էր. «Երիտասարդ Թուրքերը սարսափեցան այս մտքից, որովհետեւ եթէ ազգային ընտրութեան դրութիւնը ընդունէին, Օսմանեան պարլամէնտում Թուրք երեսփոխանների թիւը փոքրամասնութիւն պիտի կազմէր: Յոյները, հայերը եւ բուլղարները միանալով արաբների հետ՝ պիտի կազմէին բացարձակ մեծամասնութիւն եւ ամբողջ երկրի կառավարութիւնը իրենց ձեռքը պիտի առնէին: Այս պատճառով ընտրական դրութեան այս ձեւը երբե՛ք չընդունուեց...»[1]:

Ավելին, ոմանք այն կարծիքին էին, որ եթե ընտրությունները չկատարվեն ազգային հողի վրա, այլ տեղի ունենան խառը սկզբունքով, ապա հայերը, նույնիսկ այն տեղերում, որտեղ մեծամասնություն են կազմում, իրենց անկախ քվեներով երբեք չեն կարողանա անգամ մեկ պատգամավոր խորհրդարան անցկացնել:

Իթթիհադը հենց դրան էլ ձգտում էր:

Ինչպես նախորդ (1877 թ.), այս խորհրդարանի ընտրությունների նախապատրաստությունը նույնպես ամբողջովին կատարվում էր կառավարության միջամտությամբ, նրա անմիջական ազդեցության տակ: Իթթիհադը մի այնպիսի խորհրդարան էր ուզում, որը լիներ լուռ ու մունջ, դառնար կառավարության սուսիկ կամակատարը:

Ահա թե ինչո՛ւ Թուրքական կենտրոնական ազդեցիկ լրագրերից մինչև գավառական վերջին թերթուկը պահանջում էին միատարր խորհրդարան, այսինքն՝ կուսակցական կամ ազգային տարբեր խմբակցություններից ու հոսանքներից զերծ մի մարմին, որը երևի թե չտարբերվեր Իթթիհադի համագումարներից:

---

[1] *Տե՛ս* ***Հրաչեայ Աճառեան,*** *Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 65:*

Այդ նպատակի կենսագործումը հեշտանում էր այն բանով, որ Իթթիհադը, փաստորեն, լուրջ ընդդիմություն չուներ: Հնարավոր հալածանքների սանձազերծման վախն ամենքին հեռացրել էր հրապարակից:

Նշենք, որ Ասիական Թուրքիայում կային ընդդիմադիր ազդեցիկ արաբներ, բայց նրանք մասամբ ստացել էին իրենց պահանջների բավարարումը, իսկ տակավին դժգոհ արաբ զանգվածներն անզոր էին որևէ իրական ուժ ներկայացնելու: Ասորիներն ու քրդերը ընտրությունների մասին անգամ չէին մտածում: Մնում էին հույները, որոնք երբեք հայերի հետ չէին միաբանվում:

Այսպիսով, հայերն առանձին էին մնում իրենց դարավոր ախոյանի՝ Թուրք կառավարության դեմ-հանդիման:

Շատ տեղերում հայերը, խրատված անցյալի դառը փորձից, մտքով անգամ չէին անցկացնում հայ թեկնածու առաջադրել, առավել ևս՝ հաջողացնել նրա ընտրությունը: Հնարավոր էր, որ կառավարության հրամանով, մուսուլմանները պատգամավոր ընտրեին որևէ հայի, բայց այդ դեպքում նա պետք է հլու հպատակ լիներ Իթթիհադին, այսինքն՝ լիներ Թուրքերի, քան հայերի պատգամավորը:

Ահա՛ նման պայմաններում Թուրքական պետական շրջանակներն ամեն անգամ անմիջապես արձագանքում էին ըստ իրենց թվի խորհրդարանում հայերին պատգամավորական տեղեր հատկացնելու Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և պոլսահայ մամուլի բարձրացրած պահանջին և կտրականապես դեմ էին արտահայտում ամենափոքր իսկ զիջումներ անելու հնարավորությանը, պատճառաբանելով, թե ազգային հողի վրա ընտրություններ կատարելը կործանարար է «օսմանյան հայրենիքի բաղկացուցիչ տարրերի միության սկզբունքին»:

Մյուս կողմից, շատ հայերի կարծիքով, մի քանի աթոռի համար չարժեր այդքան մեծ խնդիր մեջտեղ հանել: Օսմանյան խորհրդարանում 20 թե ավելի կամ պակաս ունենալիք աթոռների թվով չէր, որ հայ ժողովրդի կացությունը պիտի բարեփոխվի, ասում էին նրանք: Կարևորը ամբողջ կայսրության մեջ բարեփոխումների իրականացումն է, բայց դա էլ կասկածելի է: Այդ

տեսակետը բխում էր այն համոզմունքից, թե ո՛չ կառավարությունն է ցանկանում բարենորոգումներ իրականացնել և ո՛չ էլ օսմանյան խորհրդարանն ընդունակ կլինի որևէ ազդեցություն գործել Բարձր Դռան քաղաքականության վրա, ուստի չարժե այդպիսի անհուսալի մարմնի կազմում մի քանի աթոռ ունենալու համար ահագին խնդիրներ հարուցել, մանավանդ այնպիսի մի ժամանակ, երբ բոլոր ուժերը եվրոպական հսկողության իրականացմանը պետք է նվիրել:

Հատուկ խորաթափանցություն չէր պահանջվում տեսնելու, թե հայերի համար որքան դժվար էր վճիռ կայացնելը: Եթե նրանք հրաժարվեին իրենց պահանջից, մեծ կորուստ կունենային, բայց, մյուս կողմից, եթե բռնեին բացահայտ պայքարի ուղին, դա նրանց կտաներ դեպի մութ ու անորոշ բավիղներ, քանի որ հայությունը չուներ այն ուժը, որով կարողանար զգացնել տալ իր պահանջների արդարացիությունը:

Քանի որ մինչև օսմանյան խորհրդարանի ընտրությունը քիչ ժամանակ էր մնացել, այդ պատճառով անհնար էր լուծել Կ. Պոլսի Ազգային պատգամավորական ժողովի հետ կապված հարցերը, ուստի հայ պատգամավորների թեկնածուների առաջադրումն ըստ էության հիմնականում պիտի կատարեին կուսակցությունները:

ՀՅԴ Շամի (Վասպուրական) կենտրոնական կոմիտեն առաջադրեց Վահան Փափազյանի (Կոմս) թեկնածությունը, բայց նա հրաժարվեց տալ իր համաձայնությունը այն պատճառաբանությամբ, թե խառնվածքով ինքը «բացարձակապես անհամապատասխան է» նման պաշտոնի համար, բացի այդ, Թուրքերեն չգիտի: Խորհրդարանի ամենահարմար թեկնածու համարելով Արամ Մանուկյանին (Սարգիս Հովհաննիսյան)՝ Կոմսը վերջինիս խորհուրդ տվեց առաջադրվել: Կենտրոնական կոմիտեն դիմեց Արամին՝ ստանալու նրա համաձայնությունը, բայց նա նույնպես մերժեց առաջարկը, պատճառաբանելով, թե օսմանյան քաղաքացի չէ և իր թեկնածությունը դնելու իրավունք չունի: Բայց ինչպես իրավացիորեն նկատել է Արշալույս Աստվածատրյանը, դա ձևական պատճառաբանություն էր: Նա չէր ցանկանում մարդկանց հետ տարվող ամենօրյա կենդանի աշխատանքից

հրաժարվել և դա փոխարինել հանգիստ աշխատանքով և, այդ-պիսով, պակաս օգտակար լինել ժողովրդին[1]:

Արամի մերժումը ցավով ընդունած Վահան Փափազյանը հետագայում գրել է.

«Այդ պարտականութեան մարդը Արամը կրնար լինել: Ինչո՞ւ չընդունեց: Զէ՞ որ իր խառնուածքով, աննկուն, համարձակ ու անկաշկանդ՝ յամառ պայքարող մրն էր, որ իր թերի լեզուով իսկ կրնար խորհրդարանի բեմէն որոտալ բոցավառ խօսքեր՝ ուղղուած պետութեան վարիչներուն, ներկայացուցչական աթոռներու վրայ բազմած թուրք «երեւելիներուն», որոնցմէ շատերու ձեռքերը հաւանաբար մաքուր չէին հայերու արիւնէն ու արցունքէն»[2]:

Դաշնակցության ղեկավարությունը որոշել էր օսմանյան խորհրդարանում իբրև պատգամավոր առաջադրել նաև Անդրանիկին: Երբ սկսվեց ընտրության նախապատրաստությունը, Դաշնակցության ղեկավարներից Սիմոն Զավարյանը Կ. Պոլսից նամակ է ուղարկում Վառնա, Պարույրին (Անդրանիկի ծածկանունը) և նրան խորհուրդ է տալիս իր թեկնածությունն առաջադրել մեջլիսի անդամ ընտրվելու համար: Զավարյանը նամակով հայտնում էր, որ մեջլիսում Անդրանիկին իբրև իրենց ներկայացուցիչ են ուզում տեսնել Մուշի և Սասունի հայերը: Անդրանիկը Զավարյանի նամակին հավանաբար չի պատասխանում, և հետևում է վերջինիս երկրորդ նամակը: Այս անգամ Անդրանիկը ուղարկում է հետևյալ պատասխանը.

«Սիրելի՛ ընկեր. նամակներդ ստացած եմ եւ զարմանքով կարդացած: Ես ո՞ւր, օսմանեան փառամենթին անդամ ըլլալը ո՞ւր:

Այդ ոճրագործներու ոհմակները, որոնք հոդ նստած են, ես անոնց չեմ հաւատար եւ երկրորդ՝ որ իմ գործս չէ հոդ գալ եւ այդ աթոռին վրայ նստիլ: Ես կը փափաքիմ որ օր մը պատուով մեռնիմ: Ո՛չ այդ աթոռը, ո՛չ այդ պաշտօնը եւ ո՛չ ալ յիսուն օսմանեան ոսկի ամսականը կ՚ուզեմ: Զիս հանգիստ ձգեցէ՛ք իմ

---

[1] Տե՛ս **«Արամը»**, էջ 65:

[2] Նույն տեղում, էջ 64–65:

պուլկարական համեստ հիւղակիս մէջ:

Ես կը նախընտրեմ հոս ճակտիս քրտինքով եւ բազուկիս ոյժով ցորեն, գարի, լուբիա եւ գետնախնձոր ցանել եւ մշակել ու ապրիլ, քան գալ եւ փառամենթի անդամ ըլլալ:

Բոլոր ընկերներուս բարեւ,

Ձերդ՝ Պարոյր»[1]*:*

Անդրանիկին օսմանյան խորհրդարանի անդամ ընտրելու առաջարկները շարունակվում էին: Կ. Պոլսի ընկերները նրան հորդորում են գալ մայրաքաղաք՝ հույս ունենալով նրան համոզել: Վերջապես, հերոսը մեկ շաբաթով գալիս է Պոլիս: Ընկերները պնդում են ընդունել իրենց առաջարկը, բայց նա պատասխանում է.

«Ես ձեզ[ի] գուշակութիւն մը կ՚ուզեմ ընել եւ կ՚ուզեմ որ լսէք: Եթէ այս յեղափոխական կարծուած թուրքերը օր մը ձեզ չկախեցին, ես մարդ չեմ: ***Օր պիտի գայ որ այս յեղափոխականներն ալ պիտի դառնան սուլթան Համիտի պէս գազան մը եւ բոլորիդ ալ պիտի յօշոտեն»*** *(ընդգծումը մերն է:– Հ. Ս.)*[2]*:*

Օսմանյան խորհրդարանի անդամ ընտրված Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո) հետագայում վերհիշել է, որ Պոլսում եղած ժամանակ դաշնակցականների մի ուրիշ հավաքույթի ժամանակ, որին ինքը ներկա է եղել, խոսք է եղել, որ հեղափոխության հաղթանակով անպայման բարելավվելու է թուրքահայության վիճակը: Անդրանիկը հակառակ կարծիքն է հայտնել, ասելով. «Մեծ թակարդ մը կայ, զգոյշ եղէ՛ք, եւ այն երիտասարդներն ալ, որ զինուոր տուիք, այդ պատրուակի տակ պիտի կոտորուին ամէնքն ալ»: Այս խոսքերից հետո, նշում է Արմեն Գարոն, Էդուարդ Ակնունին (Խաչատուր Մալումյան) դառնում է Անդրանիկին և ասում. «Անդրանիկ ջա՛ն, ի՞նչ յոռետես ես, քիչ մըն ալ լաւատես եղի՛ր, այլեւս ոչ մէկ հայու քիթը

---

[1] ***«Զօր. Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914–1917»,*** *Պոսթրն, 1924, էջ 142–143:*

[2] ***Արսէն Մարմարեան,*** *Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 188:*

պիտի արիւնի»: Հոռետես անվանվելուց հետո, Անդրանիկը դառնում է Ակնունուն և ասում. «Այսքան երկար խօսելէ վերջ, երբ տակաւին համոզուած չէք խօսքերուս, խերը տեսնէք ձեր Էնվերին ալ, ձեր Թալէաթին ալ»: Նա «ոտքի ելլելով «մնաք բարի» ըսաւ եւ հեռացաւ: Այս խօսքերէն հազիւ քառասուն օր անցած էր, երբ երիտասարդ Թուրքերը Ատանան կոտորեցին: Ադանայի կոտորածին Անդրանիկ Եգիպտոսէն այսպէս գրած էր Ակնունիին. «Ահա՛ իմ յոռետեսութիւնս եւ ձեր լաւատեսութիւնը, երբ ժամանակը գայ՝ ձեր Թալէաթն ու Էնվերը ձեզ ալ պիտի կոտորեն»[1]: Նույնը նշում է նաև Մալխասը՝ ասելով, որ 1908 թ. դեպքերից հետո դաշնակցականներն ամեն տեղ հայտարարում էին. «Զմոռնանք ըսելու, որ Թուրքիա արդէն սահմանադրական երկիր մըն էր, ու մենք՝ եղ ու մեղր Թուրքերուն հետ...»[2]:

Հերոսը հեռանում է Կ. Պոլսից՝ այլևս այնտեղ ոտք չդնելու մտադրությամբ:

Թե՛ ընտրողների ցուցակները պատրաստելու ժամանակ և Թե՛ ընտրությունների ընթացքում Թուրքական իշխանությունները զանազան միջոցներ էին ձեռնարկում, որպեսզի որքան հնարավոր է չատ ոչ մուսուլմաններ զրկվեն իրենց օրինական ընտրական իրավունքից:

Հայերը Կ. Պոլսում կարողացան գոնե երկու պատգամավոր անցկացնել, իսկ գավառներում նրանց համար անտանելի կացություն էր ստեղծվել: Իրար հետևից գավառներից Կ. Պոլիս էին հասնում հայերի աղաղակները. «Սահմանադրությունը չի բուժում մեր վերքերը: ... Թուրք ընտրողները ձայն չեն տալիս մեր Թեկնածուներին»: Դրա ակնհայտ ապացույցներից էին Տրապիզոնի և Բաբերդի ընտրությունները: Այդ երկու տեղերում երիտԹուրքերի կոմիտեն ջերմ խոստումներ էր տվել, Թե առաջադրելու և պաշտպանելու է հայ Թեկնածուների, բայց միաժամանակ տեղի իշխանություններին հրահանգել էր նախընտրական աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի բոլոր մուսուլմանները ձայն տան Թուրք Թեկնածուներին, և այդպես

---

[1] **Արսէն Մարմարեան,** Զօր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 170:

[2] **Մալխաս**, Ապրումներ, **«Հայրենիք»,** № 2, դեկտեմբեր, 1926, էջ 139:

էլ եղել էր[1]: Իթթիհադականները բոլոր ջանքերը գործադրում էին, որպեսզի Վանից անպայման պատգամավոր ընտրվի որևէ թուրք, և այդ նպատակով քաղաքի թուրքերի շրջանում մեծ աշխատանք էին ծավալել: Վանի թուրքերը կա՛մ պաշտոնական անձեր էին, կա՛մ խառնիճաղանջ մի տարր՝ բաղկացած պարտիզպաններից, մսագործներից, գոհ մաքրողներից և մասամբ՝ առևտրականներից: Առհասարակ, թուրքերն սկսեցին Վանում նշանակություն ստանալ և տեղեր գրավել 1895-1896 թթ. հայկական կոտորածներից հետո: Այդ ժամանակից սկսած՝ նրանք աստիճանաբար բռնում էին հայերի տեղը: Թեև հայերն առաջվա պես քաղաքում մեծամասնություն էին, բայց թուրքերն այնքան էին բազմացել, որ այժմ հավակնում էին պատգամավորական տեղի, այն էլ՝ հայ թեկնածուին բոլոր հնարքներով ընտրապայքարից դուրս մղելու միջոցով:

Հսկայական դժվարություններ հաղթահարելու գնով Կ. Պոլսից դուրս՝ Կոզանի (Սիսի) շրջանից առաջին հայ պատգամավոր ընտրվեց հնչակյան Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ): Վան-Վասպուրականի հայերն, այնուամենայնիվ, կարողացան խորհրդարան ուղարկել ՀՅԴ Շամի կենտրոնական կոմիտեի անդամ Գեղամ Տեր-Կարապետյանին (Տատրակ), ինչպես նաև երկար համոզելուց հետո իր համաձայնությունը տված Վահան Փափազյանին:

Ընտրությունը տեղի ունեցավ անիրավորեն ոչ միայն հայերի, այլև ընդհանրապես կայսրության բոլոր ոչ մուսուլման տարրերի համար:

Օսմանյան խորհրդարանը, սահմանադրության համաձայն, բաղկացած էր 266 պատգամավորից*, որոնցից թուրքեր՝ 130, քրդեր, արաբներ, մուսուլման ալբանացիներ՝ միասին վերցրած՝ 80: Հույները, բուլղարները, սերբերը, հայերը և հրեաները, որոնք միասին կազմում էին կայսրության բնակչության 1/4 մասը,

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 50, 8 նոյեմբերի 1908 թ.:

* Մի այլ աղբյուրի համաձայն՝ 230 պատգամավոր (տե՛ս **А. Д. Новичев**, Турция. Краткая история, с. 120):

ունեին 28 պատգամավոր: Մակեդոնիայից ընտրվել էր 26 պատգամավոր, որոնցից 18-ը Թուրքեր կամ Թուրքացած դեռնմներ (հավատափոխ հրեաներ) էին, այն դեպքում, երբ այդ երկրի բնակչության չուրջ 50 տոկոսը կազմող բուլղարները պատգամավորական 4 տեղ ունեին: Ավելին, նշված քրիստոնյա և հրեա ազգերի պատգամավորների զգալի մասը, լինելով Իթթիհադի անդամ, միացել էր վերջինիս:

Հայազգի պատգամավորների թիվը 10 էր՝ Գրիգոր Զոհրապ, Պետրոս Հալաջյան, Ստեփան Սպարթալը, Հակոբ Պապիկյան, Համբարձում Պոյաճյան (Մեծն Մուրադ), Գարեգին Փաստրմաճյան (Արմեն Գարո), Հովհաննես Սերենգուլյան (Վարդգես), Գեղամ Տեր-Կարապետյան (Տատրակ), բժիշկ Նազարեթ Տաղավարյան, Վահան Փափազյան (Կոմս)[1]:

Ըստ մասնագիտության և զբաղմունքի՝ խորհրդարանում մեծամասնություն էին կազմում կալվածատերերը, ապա գալիս էին իսլամ հոգևորականները, փաստաբանները, դատաստանական պաշտոնյաները, վաճառականները: «Ժողովրդական ներկայացուցչության» այդ մարմինը բաղկացած էր հիմնականում վարչական գործին բացարձակապես անծանոթ, քաղաքականապես տհաս անհատներից, որոնք անընդունակ էին ինքնուրույն, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու քննարկվող հարցերի նկատմամբ, ուստի կուրորեն պաշտպանում էին կառավարության ներկայացրած համարյա բոլոր օրինագծերը, որոնց զգալի մասն իր բնույթով հակաժողովրդական էր: Պետական կյանքը հեղաբեկելու կոչված պատգամավորները բավարար համարձակություն չունեին հանդես գալու ինքնուրույն նախաձեռնություններով կամ մերժելու կառավարության՝ քննության ներկայացրած օրենքների ամենաանկատար նախագծերը:

Երբ մոտենում էին խորհրդարանի գումարման օրերը, իթթիհադի կոմիտեն իր պաշտոնական օրգան «Շուրա-ի ումմեթ» և անպաշտոն օրգան «Թանին» պարբերականների միջոցով կա-

---

[1] **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 125:*

տաղի արշավանք սկսեց մեծ վեզիր Քյամիլ փաշայի դեմ, թե նա 4-5 ամսվա սահմանադրական կառավարման ընթացքում ցույց չի տվել որևէ շոշափելի դրական գործունեություն, աշխատել է նախկին միապետական ոճով, բռնանում է նախարարների իրավասությանը, կաշկանդում նրանց գործելու ազատությունը և այլն: Իրականում, հետադիմական և հայատյաց այդ վարչապետի դեմ սկսված հարձակումների իսկական պատճառն այն էր, որ նա մի քանի ոչ-իթթիհադական անձանց պաշտոնների էր նշանակել: Նկատի էր առնվում նաև այն հանգամանքը, որ Քյամիլի որդի Սաիդ բեյը հետևողական հակաիթթիհադական էր[1]: Կոմիտեն նպատակ ուներ վարչապետի պաշտոնում դնել Հուսեյն Հիլմի փաշային՝ Մակեդոնիայի բարեկարգության նախկին ընդհանուր վերահսկչին, իսկ այդ ժամանակ՝ ներքին գործերի նախարարին: Նախատեսված էր Հիլմի փաշայի ղեկավարության տակ նախարարական պաշտոնների կոչել միայն իթթիհադականներին, որոնց թվում՝ «Թանին» թերթի խմբագրապետ Հուսեյն Ջահիդին: Իթթիհադական թերթերի հարձակումները վարչապետի վրա նաև յուրատեսակ նախազգուշացում էին շուտով բացվելիք խորհրդարանին, որպեսզի նա իրեն իրավունք չվերապահի լուծելու որևէ կարևոր խնդիր՝ առանց իթթիհադի կոմիտեի գիտության ու հավանության:

Օսմանյան խորհրդարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1908 թ. նոյեմբերի 4-ին*, ցերեկվա ժամը 1-ին[2]: Օսմանյան մայրաքաղաքը տոնի մեջ էր: Բոլոր թաղերը, բոլոր բնակարաններն ու հանրային հաստատությունները, խրճիթներից մինչև ապարանքները դրոշազարդված կամ գորգազարդված էին:

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 95:

* Այլ աղբյուրներում՝ նոյեմբերի 2-ին (տե՛ս օրինակ՝ **А. Д. Новичев**, Турция. Краткая история, с. 120):

[2] Տե՛ս **«Արարատ»**, № 12, դեկտեմբեր, 1908, էջ 1149-1150, ավելի մանրամասն տե՛ս **«Գործ»**, № 72, 6 դեկտեմբերի 1908 թ.: Նոր բացված օսմանյան պատգամավորական ժողովը (մեջլիս-ի մերուսանը) հայտարարվեց երկրորդ գումարման մեջլիս՝ որպես ուղղակի շարունակություն Աբդուլ Համիդ II-ի՝ 1877 թվականին ցրած առաջին մեջլիսի:

Տասնյակ հազարավոր մարդիկ խոնվել էին փողոցներում և հրապարակներում: Որոտում էին թնդանոթները:

Խորհրդարանի բացմանը ժամանեց սուլթան Աբդուլ Համիդը: Նրա ավագ քարտուղար Մեհմեդ Ջևադ բեյը (հետագայում՝ Ադանայի նահանգապետ և հայոց 1909 թ. ապրիլյան ջարդերի գլխավոր կազմակերպիչներից) կարդաց գահակալական ճառ, ուր ասվում էր. «... Երեսուն տարի առաջ ես [երկրին] սահմանադրութիւն պարգեւեցի, բայց ինծի խորհուրդ տուին անոր կիրառումը դադրեցնել, նկատի առնելով, որ ժողովուրդը պատրաստ չէ ապրելու սահմանադրական կարգերու պայմաններուն մէջ: Այժմ համոզուելով, որ ան արդէն բաւականաչափ պատրաստ է, ուստի վերականգնեցի սահմանադրութիւնը, զոր այսուհետ կը գործէ անխափան»[1]:

Սուլթանի ներկայութիւնը և ելույթը խորհրդարանում կրկին գալիս էին ապացուցելու, որ երկրում ոչինչ չի փոխվելու: Շավարշ Միսաքյանը «Ազդակում» գրում էր. «Անշուշտ շատ բան կարելի չէ սպասել այնպիսի խորհրդարանէ մը, որ գրեթէ անմռունչ, չըսելու համար որդիական ակնածանքով. կ'ունկնդրէր Ապտիւլ Համիտի հոչակաւոր Գահաճառին: Այդ պատմական նախատինքը, զոր սուլթանը յարմար դատեց, խորհրդարանի բացման հանդիսաւոր օրուան մէջ, նետել ազգի ներկայացուցիչներուն երեսին, աւելորդ անգամ մըն ալ կու գայ հաստատել[ու] թէ արմատացած խառնուածքները – մանաւանդ տարիներու որոշ շրջանէ մը վերջը – դժուար կրնան բարեփոխուիլ, թէ իրերու ճնշումին տակ արտասանուած խօսքեր, տրուած հաւաստիքներ ա՛նքան արժէք ունին, ո՛րքան մօտաւոր սպառնալիքէն ահաբեկ կալանաւորի մը խոստովանութիւնները...»[2]:

Սուլթանի մեկնումից մեկ ժամ անց, փոքր ընդմիջումից հետո, սկսվեց խորհրդարանի առաջին նիստը, որը նախագահում էր պատգամավորներից ավագագույնը՝ Նեջի էֆենդին:

Գործեց նաև սուլթանի նշանակած ծերակույտը (սենատը)՝

---

[1] **«Արեւելք»**, № 6969, 5 դեկտեմբերի 1908 թ.:

[2] **«Ազդակ»**, № 1, 16 (29) դեկտեմբերի 1908 թ.:

40 սենատորներով, որոնց ազգային կազմն էր՝ 4 հույն, 1 բուլ-
գար, 1 ռումին, 1 հրեա, մնացածները՝ թուրք: Սկզբում երիտ-
թուրքերը հայերին խոստացել էին ծերակույտում տալ չորս տեղ
(երկու հայ առաքելական, երկու հայ կաթոլիկ): Ելնելով դրանից,
պատրիարքը մեծ վեզիրին էր ներկայացրել Աբրահամ փաշա
Երամյանի, Գաբրիել էֆ. Նորատունկյանի, Հովհաննես փաշա
Սագըզի և Բելգրադում դեսպան Ազարյան էֆենդու թեկնածու-
թյունները, բայց Ֆյամիլ փաշան պատասխանել էր, թե արդեն
ուշ է և բոլոր տեղերը լրացված են[1]: Այդպիսով, ծերակույտ որևէ
հայ չմտավ:

Խորհրդարանում մեծամասնություն կազմող իթթիհադա-
կան խմբակցությունը ղեկավարում էր Իթտի խանը: Խորհրդա-
րանի նախագահի պաշտոնի համար նա էլ առաջ քաշեց Իթթի-
հադի պարագլուխ, «Մեշվերեթ» թերթի խմբագիր Ահմեդ Ռի-
զայի թեկնածությունը, որը և դեկտեմբերի 10-ին ընտրվեց ձայ-
ների բացարձակ մեծամասնությամբ:

Հայ պատգամավորներից շատերը չարդարացրին ընտրող-
ների վստահությունն ու հույսերը: Նրանցից հինգը համալսա-
րանավարտ էր, բայց մյուսների մտավոր կարողությունները
շատ ցածր էին և չգիտեին, թե ո՛րն է իրենց անելիքը այս
խորհրդարանում: Չնայած 1908 թ. հուլիսին հրապարակված օս-
մանյան խորհրդարանի պատգամավորների ընտրության կանո-
նագրի համաձայն խստիվ արգելված էր պատգամավոր ընտրել
պետական լեզվին չտիրապետողներին, բայց հայերը խախտե-
ցին այդ պայմանը: «Մեր եւ քրիստոնեայ միւս երեսփոխաններու
դժբախտութիւնը պետական լեզուի անծանօթութիւնն էր,- գրել
է Վ. Փափազյանը:- Այդ պատճառով լուռ ու մունջ ունկնդրի դե-
րի մէջ էինք, առանց նոյն իսկ հասկնալու մոլլաներու արաբա-
խառն եւ «գիտուններու» խօսած տաղտկալի ճառերու բովան-
դակութիւնը»[2]: Նրանք տարիներով ելույթ չէին ունենում, իսկ
Վ. Փափազյանն ու Գ. Տեր-Կարապետյանը նույնիսկ նիստերի

---

[1] Տե՛ս **«Արարատ»,** № 12, դեկտեմբեր, 1908, էջ 1150:

[2] **Վահան Փափազեան,** Իմ յուշերը, հատ. Բ, էջ 125:

ընդմիջումների ընթացքում չէին կարողանում բառ անգամ փոխանակել ոչ հայ պատգամավորների հետ: Թուրքերեն չիմանալու պատճառով հայ պատգամավորների մեծամասնությունը չէր ընդգրկված խորհրդարանական հանձնաժողովներում, չէր մասնակցում որևէ օրենքի նախագծի կազմմանը:

Պատահական չէր, որ հայերն սկսել էին դժգոհել խորհրդարանի իրենց պատգամավորներից՝ անկարողության համար: «Մշակը» արտատպել էր «Ժամանակ» օրաթերթում լույս տեսած, Հալեպից ստացած մի նամակ, ուր նաև ասված էր. «Մի՞թէ նուազ դատապարտելի է, բացի Զօհրապէ, միւս հայ երեսփոխաններու զաքարիական պապանձումը: Ի՞նչ ընել. գացին խորհրդարան աթո՞ռ զարդարելու»[1]:

Հիրավի, երջանիկ բացառություն էր Գրիգոր Զոհրապը, որն իր վրա էր վերցրել հայկական պատգամավորության համարյա ողջ պարտականությունները և պատասխանատվությունը: Նա էր հայկական ցավերի մասին բանախոսողը, ամբիոնից ճառողն ու հակաճառողը, հայերի դեմ ելույթ ունեցողներին տեղից միջամտողը: Զոհրապը փայլուն տիրապետում էր թուրքերենին ու ֆրանսերենին, ուներ հզոր տրամաբանություն և վիթխարի գիտելիքներ: Նա համարձակ ազդեցություն ուներ չրջապատի վրա: Ռուբենը միանգամայն իրավացի էր Զոհրապին տված իր գնահատականում, գրելով, որ նա «ոչ միայն իբրեւ գրող, այլեւ իբրեւ հասարակական գործիչ հսկայ մըն էր, որուն առջեւ օսմանեան խորհրդարանը իրեն կը նկատէր աչակերտ: Զօհրապ անվիճելի հեղինակութիւն էր նոյնպէս խորհրդարանէն դուրս ողջ օսմանեան մտաւորականութեան համար, մանաւանդ որ Թուրքիոյ յառաջադէմ տարրերը իր աչակերտներն էին եղած»[2]:

Ընայած իթթիհադական պատգամավորների բացարձակ թվային գերակշռությանը, այնուամենայնիվ, երիտասարդ թուրքերին վիճակված էր խորհրդարանում գործ ունենալ բավականաչափ զորեղ ընդդիմության հետ: Իշխան Սաբահէդդինը, որ

---

[1] ***«Մշակ»,*** *№ 36, 20 փետրվարի 1909 թ.:*

[2] ***«Հայրենիք»,*** *№ 8 (283), 1949, էջ 64:*

բոլորովին բաժանվել էր երիտթուրքերի կոմիտեից, կազմել էր ավտոնոմիստների իր խմբակցությունը: Նրան միացել էին զանազան գույնի ազատականներ՝ թվով 40 հոգի: Նրանց մեջ կային հույներ, սիրիացիներ (քրիստոնյա արաբներ) և մի քանի մուսուլման արաբներ: Այդ խմբակցության մեջ որևէ հայ չկար:

Բայց որքան էլ զորեղ ու համախումբ լիներ ընդդիմությունը, չէր կարող խորհրդարանում եղանակ ստեղծել, քանի որ այնտեղ իթթիհադականները բացարձակ մեծամասնություն էին կազմում: Խորհրդարանի առաջին իսկ նիստերի ընթացքը ցույց տվեց, որ նա Իթթիհադի գրպանում է գտնվում և կառավարության բացարձակ կամքն է կատարում:

Իր ավելորդ զգուշավորությամբ հայտնի «Արեւելք» թերթը նույնիսկ տպագրեց «Սկզբնաւորութիւն խորհրդարանական բռնակալութեան» վերնագրով մի հոդված, ուր ասված էր, որ կոթնելով իր թվական առավելությանը՝ խորհրդարանի մեծամասնությունն առաջին իսկ քայլերից խեղդում է փոքրամասնության ձայնը, ոտնակոխում նրա իրավունքները:

***Խորհրդարանում հայ պատգամավորներն առաջին լուրջ հարվածն ստացան**, երբ 1908 թ. դեկտեմբերի 11-ի նիստում դրված էր Շապին-Գարահիսարից պատգամավոր ընտրված Մուստաֆա անունով մեկի լիազորությունների հաստատումը: Պատգամավոր Գրիգոր Զոհրապը, ելույթ ունենալով, անհերքելի փաստերով ցույց տվեց այդ անձնավորության նողկալի անցյալը: Այդ հայակեր հրեշը կատարել էր սահմռկեցուցիչ հանցանքներ, անձամբ պատճառ դարձել բազմաթիվ հայ ընտանիքների կործանման, իր ավազակախմբով ավերել էր չրջակա մի քանի հայկական գյուղերը, տնազուրկ դարձրել հարյուրավոր մարդկանց:*

Զնայած Զոհրապի բուռն բողոքին, խորհրդարանի իսլամ մեծամասնությունը միահամուռ համերաշխությամբ հաստատեց թուրք եղեռնագործի պատգամավորական մանդատը:

Դա չատ բան էր նշանակում՝ այն, որ խորհրդարանը, արդարացնելով Մուստաֆա անունով հրեշին, հայերին հասկացնել էր տալիս, որ թեկուզ ամենաեղկելի թուրքի դեմ հայի առաջադրած ամեն մեղադրանք, ինչպես նախկինում, այժմ նույնպես

որևէ արդյունքի չի կարող հասցնել: Մյուս կողմից, հայերին հասցված այդ ապտակն արդարացված ու անպարտ լինելու ահազանգ էր անարգել ոճիրներ գործած բոլոր քուրդ և թուրք եղեռնագործներին, ավազակներին, հարստահարիչներին:

«Արեւելքը» գրում էր.

«Այսքան բացայայտ խտրութիւն, այսքան ակներեւ անարդարութիւն բռնապետութեան ամէնէն խիստ չրջանին մէջ անգամ հազիւ կը տեսնուէր. զի ընդհանրապէս բռնապետական կառավարութեան սովորութիւնն էր արտաքին ձեւերը փրկել եւ, օրինակի համար, համանման պարագայի մը մէջ կեղծ դատավարութեամբ մը ամբաստանեալը անպարտ արձակել: Իսկ խորհրդարանին մեծամասնութիւնը այդպիսի ձեւերու պէտք անգամ չտեսաւ, իր ջախջախիչ մեծամասնութեամբ ... խեղդեց հրաբորբոք բողոքները, ինչպէս բռնապետ մը որ կը գոչէ՝ «Իմ քէֆը այդպէս կ'ուզէ»»[1]:

Ի՞նչ պետք է լիներ հայերի վիճակը, երբ այսպիսին էր երկրի խորհրդարանը: Թերթը շարունակում էր.

«Մեզ հայերուս կը մնայ մտածել թէ ի՞նչ պիտի ընենք, երբ օսմ[անեան] խորհրդարանէն ալ իրաւունք ու արդարութիւն չգտնենք, ինչպէս չէինք գտեր նախկին բռնապետական կառավարութենէն»[2]:

Վերակազմյալ հնչակյան գործիչներից Լևոն Լարենցը «Ձայն հայրենեաց» թերթում գրում էր, որ օսմանյան խորհրդարանի մեծամասնությունը պիտի կարողանար հայերին շատ հեշտությամբ սեղմումների ենթարկել: «Հին օրերու կամայական անարդարութիւններուն տեղ «սահմանադրական բռնակալութիւն» մը կրնայ հաստատուիլ, զմեզ տակաւ իրաւազրկելու համար, համիսլամական չողչողուն հեռապատկերին իրականացմանը սիրոյն: Ի՞նչ պիտի ընէինք այն ատեն: Որովհետեւ այլեւս յեղափոխական պահանջներէ հրաժարած պիտի ըլլանք, որովհետեւ այն ատեն մեր դաշնագրական իրաւունքներն ալ կորսըն-

---

[1] **«Արեւելք»,** *№ 6977, 15 դեկտեմբերի 1908 թ.:*

[2] *Նույն տեղում:*

ցուցած պիտի համարուինք, հայերուն ուրիշ բան չպիտի մնար ընելիք, եթէ ոչ՝ խլեակի մը նման տարուիլ Օսմ. Խորհրդարանի քաղաքական զօրաւորագոյն հոսանքէն, եւ կամ, շատ-շատ, քանի մը բողոքի ճառեր պիտի խօսինք, կամ մեր մէկ երեսփոխանը հարցապնդում մը ընելով տեղը պիտի նստի, կամ պիտի նստեցուի»[1]:

Մի քանի օր անց, հայ և Թուրք պատգամավորների միջև լուրջ տարաձայնութիւններ ծագեցին օսմանյան հպատակների ***անձնագրերում ազգությունը նշելու*** *հարցի շուրջ:*

Ազգերի ձուլման գաղափարով առաջնորդվող իթթիհադական պատգամավորների՝ խորհրդարանի քննարկմանը ներկայացրած օրենքի նախագծում նախատեսվում էր ոչ իսլամ և ոչ Թուրք օսմանյան քաղաքացիների անձնագրերում նրանց անվան դիմաց ազգային պատկանելությունը չնշել: Այդ դրույթի դեմ ելույթ ունեցան Վարդգեսն ու Համբարձում Պոյաճյանը:

Հակադրվելով նախագծին՝ Վարդգեսն ասում էր, որ կառավարությունը պետք է առաջնորդվի եվրոպական բազմազգ երկրներում ձեռք բերված փորձով:

Օրինակ՝ երբ Ավստրո-Հունգարիայում և Մեծ Բրիտանիայում մարդահամար է լինում, հաշվառման թղթերի վրա նշում են ոչ միայն քաղաքական հպատակությունը կամ քաղաքացիությունը, այլև կրոնը, կրոնական ո՛ր հարանվանության պատկանելը, ինչպես և ազգությունը: Ավստրո-Հունգարիայում արձանագրվում է ազգությունը՝ գերմանացի, սերբ, խորվաթ, լեհ և այլն: Բրիտանական արձանագրական թղթում գրվում էր՝ անգլիացի, իռլանդացի, կանադացի և այլն, դավանական պատկանելությունը՝ բողոքական, կաթոլիկ և այլն: Եվ եթե այդ սկզբունքները Մեծ Բրիտանիայում և Ավստրո-Հունգարիայում հակառակ չեն պետական միության, ապա Թուրքիայում նույնպես դրանք հակառակ չեն լինի: «Ես կրնամ կրօն չունենալ, բայց հայ ըլլալէ չեմ դադրիր»,- խորհրդարանի ամբիոնից ազդարարել էր Վարդգեսը:

Պոյաճյանն, իր հերթին, ամբիոնից ասում էր, թե խորհրդա-

---

[1] ***«Ձայն հայրենեաց»*** *(Կ. Պոլիս), Նոր շրջան, № 3, 6 նոյեմբերի 1908 թ.:*

բանը պիտի հաշվի առնի «այստեղ հնչած տեսակէտը» (նկատի ուներ Վարդգեսի ելույթը:- Հ. Ս.): «Հայ մը խլամ ալ կրնայ ըլլալ, բայց դարձեալ հայ է»,- շեշտել էր նա, ապա ավելացրել. «Օսմանեան պետութեան մէջ ձուլուելու չենք, այլ անոր մէկ օգտակար մասը կազմելու ենք: Խոհական թուրքը եւ գիտակից հայը համահաւասար ա՛յս համոզումը գոյացուցած են, որ թուրքը հայուն եւ հայը թուրքին ձեռք-ձեռքի տուած կրնան ապրիլ. ասկից դուրս պէտք չէ ուրիշ ճշմարտութիւն փնտրել ցնորական բանաձեւերու մէջ»:

Անձնագրերի մեջ ազգությունը նշելու անհրաժեշտության մասին հայ պատգամավորների առաջարկը պաշտպանեցին հույների պատգամավորական խմբակցությունը և բուլղար պատգամավորներ, բայց դա արդյունք չտվեց: Ահմեդ Ռիզան և ելույթ ունեցող ուրիշ թուրք պատգամավորներ վճռականապես մերժում էին հայ պատգամավորների փաստարկներն ու պահանջը, նրանց մեղադրում օսմանյան համերաշխությունը խախտելու փորձերի մեջ:

Այն ժամանակ, երբ խորհրդարանը դեռ գումարված չէր, հայերը կարծում էին, թե կառավարության հակահայկական առանձին քայլերն արդյունք են փոխանցման շրջանի դժվարություններին, և մխիթարվում էին՝ մտածելով, թե խորհրդարանի գումարումով ամեն բան կարգի կգա: Իրականությունը, սակայն, գալիս էր ուրիշ բան հաստատելու. շարունակվելու է հայերի հանդեպ նախկին ռեժիմի քաղաքականությունը՝ հալածանք, զրկանք ու բռնություն:

Անդրադառնալով օսմանյան խորհրդարանի մեկամսյա գործունեությանը, Շավարշ Միսաքյանը գրում էր. «Այսպէս կամ այնպէս, հիմա ունինք Օսմ. խորհրդարան մը ուր բուռ մը սրտցաւ, գիտակից, յեղափոխական երեսփոխաններու հետ կողք-կողքի կը գտնուին լեգէոն մը մարդիկ՝ մութ հակումներով, մութ իմացականութեամբ եւ բթացած զգացողութեամբ... Թուրքիոյ սահմանադրական առաջին վարչութիւնը, իր կորովազուրկ, անընդունակ, չբսելու համար նենգաժէտ կազմակերպութեամբ թոյլ տուաւ որ գայլերը ոռնան նորէն, ու զսպուած ախորժակները սրուին դարձեալ: Այդ վարչութիւնը անարգ ներողամտու-

թեամբ մը հանդուրժեց, երբ երէկի իշխանաւորները անորակելի լրբութեամբ մը կը սպառնային ընդոտնել նոր կարգերը»[1]:

Հայ պատգամաւորները գնալով համոզւում էին, որ իրենք չեն կարողանալու ազգօգուտ որևէ դեր կատարել օսմանյան խորհրդարանում:

Բոլոր այն երեք պետութիւնները, որոնց միջև բաժանված էր Հայաստանը և ուր ապրում էին հայեր, քաղաքական հեղաշրջումների հետևանքով արդեն ունեին իրենց խորհրդարանները, որոնց ստեղծման համար արյուն էին թափել նաև հայեր: Բայց ի՞նչ շահեց հայութիւնը քաղաքական այդ հեղաշրջումներից. պատգամաւորի մի երկու տեղ ռուսաց պետական դումայում, մեկ տեղ պարսից մեջլիսում և մի քանի տեղ թուրքաց մեջլիսում: Այդ երեք պետութիւնների բյուրոկրատական կառավարութիւնները և դրանց սպասարկող կուսակցութիւնները շատ էլ հակառակ չէին, որ հայ ազգը շարունակի ենթարկվել հալածանքների ու տնտեսական կողոպտման: Իսկ որքա՜ն ողբերգական էր հայ պատգամաւորների դերը նշված խորհրդարաններում. երբ նրանք որևէ ազգային պահանջ էին առաջադրում՝ նրանց հայհոյում էին, իսկ երբ լռում էին՝ ծաղրի էին արժանանում:

Իսկ ի՞նչ ընթացք պիտի բռնեին հայերը օսմանյան խորհրդարանի արդեն երևակվող հակահայկական քաղաքականութիւյան հանդեպ: Այդ հարցի պատասխանը պիտի տային Ազգային պատրիարքարանը, Ազգային պատգամաւորական ժողովը և հայկական քաղաքական կուսակցութիւնները:

Բայց մի բան, այնուամենայնիվ, շատերի համար արդեն պարզ էր դարձել. օսմանյան հեղափոխութիւնից հետո վերականգնված թուրքական պառլամենտը, որը շատ հեռու է ներկայացուցչական իրավական մարմին լինելուց, փաստորեն ըստ էութիյան երկրի ամենաագրեսիվ, ամենաչովեն քաղաքական ուժի՝ Իթթիհադի պարզ կամակատարն էր:

---

[1] **«Ազդակ»,** № 1, 16 (29) դեկտեմբերի 1908 թ.:

ՀԱՅՈՑ ԶԻՆՎՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Ինչպես արդեն ասվել է, երիտթուրքական հեղափոխությունից հետո, միդհատյան սահմանադրության համաձայն, բարձրացել էր քրիստոնյաների և հրեաների զինվորագրության հարցը:

Նախորդ դարերում կայսրության քրիստոնյաները և հրեաները զրկված էին զենք կրելու իրավունքից: Մինչդեռ Թուրքն ու քուրդը կարող էին կրել ցանկացած զենք, քրիստոնյաները, մանավանդ հայերը, հասարակ դանակ անգամ կրելու իրավունք չունեին, չէին կարող ծառայել պետության բանակում: Դա շատ աղետալի հետևանքներ էր ունեցել հայկական կյանքից ներս. մասնավորապես դրան էին վերագրվում հայկական ջարդերի մեծ ծավալները՝ որպես հետևանք հայերի մեջ ռազմական ոգու թուլացման[1]:

Բանակ չգնալու համար քրիստոնյաները պետությանը հնչյուն դրամով վճարում էին զինվորական տուրք՝ այսպես կոչված բեդել-ի էսկերիե:*

Թուրք տիրապետողները «գյավուրներին» չէին կանչում զինվորական ծառայության, քանզի վախենում էին, որ նրանք զենքն իրենց դեմ կուղղեն: Տիրողներն ասում էին, թե իրենք կարող են քրիստոնյաներին կոտորել, բայց դա մեծահոգաբար չեն անում, նրանց բաշխում են կյանքը, բայց չթափված արյան փոխարեն նրանցից հարկ են վերցնում՝ արյան գին, գլխագին կամ խարաջ:

Զինվորական ծառայությունից ազատվելն արժեր տարեկան 52 դահեկան կամ չորս ռուբլի, որը գյուղացու ընտանիքի համար շատ մեծ գումար էր:

Բեդել-ի էսկերիեն մինչև 1785 թ. գանձվում էր 15 տարեկա-

---

[1] *Տե՛ս* ***Հրաչեայ Աճառեան****, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 65-66:*

* ***Բեդել-ի էսկերիե*** *բառակապակցությունը արաբերեն է և նշանակում է* ***զինվորության փոխարեն****: Նախկինում զինվորական տուրքը կոչվում էր* ***խարաջ*** *կամ* ***ղան-փարասի՝ արյան տուրք****:*

նից մինչև 55 տարեկանը, բայց այդ թվականից տուրքն սկսվեց գանձվել քրիստոնյա արուի ծնած օրից մինչև մահը[1]:

Թուրքահայերի զինվորագրության խնդրի արծարծումը և նրա լայն քննարկումը նոր չէին: Դեռ 19-րդ դարի 70-ական թվականներին այդ մտադրությունը ծագել էր թուրքական իշխանությունների մոտ, որը թե՛ օտար և թե՛ տեղական հայկական մամուլում թեր ու դեմ գրությունների առիթ տվեց: Բայց, չատ չանցած, թուրքական կառավարությունը հրաժարվեց իր մտադրությունից:

Այդ ժամանակ հայերին զինվորագրելու պահանջը հետևողականորեն պաչտպանում էր «Մեղու Հայաստանի» լրագիրը: Պարբերականի այդ կեցվածքը խմբագրությունը պատճառաբանում էր նրանով, որ հայ ընտանիքները, միասին վերցրած, պետությանը պարտավոր են տարեկան վճարել մի քանի միլիոն դահեկան (ղուրուչ) զինվորական հարկ, բայց այդ դրամը չկա: Թեև հայերի տնտեսությունները բնական բերքերով հարուստ են, պատճառաբանում էր Թերթը, բայց դրանք դրամ չեն դառնում, որովհետև վաճառքի համար ճանապարհներ չկան: Այդ պատճառով, դրամ ձեռք բերելու և զինվորական հարկը վճարելու համար, ամեն տարի հազարավոր թուրքահայ երիտասարդներ ստիպված գաղթում են Կ. Պոլիս և Կովկասի քաղաքներ, ուր զբաղվում են ամեն տեսակ ծանր աչխատանքներով: Նրանց հեռանալով՝ հայրենիքում նվազում են ամուսնություններն ու ծնունդները, օրեցօր պակասում է հայերի թիվը: Հետևապես, զինվորական հարկից ազատվելը, ըստ «Մեղու Հայաստանի» Թերթի, փրկություն կարող էր լինել հայ ընտանիքների բացարձակ մեծամասնության համար:

Հայերի զինվորագրության օգտին Թերթը բերում էր մի ուրիչ պատճառաբանություն ևս. հայերը բանակին տարեկան կարող են 6-7 հազար զինվոր տալ, որոնք զորացրվելուց հետո իրենց գյուղերի հմուտ պաչտպաններ կդառնան: Այդ հաչվարկով, 10-20 տարի հետո, Թուրքահայաստանում կլինի զինվորական գործին տիրապետած 100 հազար հայ զինվոր: Դա մի ան-

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»,** № 20, 26 օգոստոսի 1909 թ.:

դիմադրելի ուժ կլինի հայության համար գլխավոր աղետներ հանդիսացող քրդական հարձակումների ու հարստահարումների դեմ:

Ի հակադրություն «Մեղու Հայաստանի»-ի, «Մշակը» դեմ էր թուրքահայերի զինվորագրությանը: Թերթի հիմնական պատճառաբանությունն այն էր, որ գալիքում Թուրքիայի դեմ պատերազմողները լինելու են քրիստոնյա պետություններ, ներառյալ՝ Ռուսաստանը, հետևապես հայ զինվորները ստիպված են լինելու կռվել հավատակիցների, այդ թվում՝ ռուսների դեմ և զոհվել մուսուլմանների շահերի համար, ինչն անընդունելի է[1]:

Քրիստոնյաների և հրեաների զինվորագրության հարցը օրակարգից հանվեց սուլթանական գահին Աբդուլ Համիդի բազմելուց հետո: Եվ ահա՛, ավելի քան երեսուն տարի անց, այդ հարցը կրկին դրվեց սեղանին:

1908 թ. սեպտեմբերին երիտթուրքերի կոմիտեն ընդունեց մի կանոնադրություն ոչ իսլամների զինվորագրության մասին, ուր ասված էր, թե զինվորական ծառայությունը թե՛ իսլամների և թե՛ ոչ իսլամների համար լինելու է պարտադիր և տևելու է 25 տարի, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի օրոք: Այդ ժամկետից 3 տարին զինվորն անցկացնելու է կանոնավոր բանակում (նիզամիե), 6 տարին լինելու է բանակի պահեստային (իհթիյաթ), 9 տարին՝ պահեստային-փոխարինող (ռեդիֆ) և 7 տարին՝ երկրապահ (մուսթահֆըզ): Մոտավորապես այդպիսի տևողությամբ և հաջորդականությամբ պետք է ծառայեին նաև ծովայինները[2]: Այդպիսով, սահմանադրության չնորհիվ, բեղել-ի էսկերիե տուրքը վերացվում էր և բոլոր քրիստոնյաներն ու հրեաները պարտավոր էին գնալ զինվորական ծառայության:

Հայոց ղեկավարները, նաև հեղափոխական կուսակցություններն առաջիններից էին, որ ընդհանուր զինվորագրությանը հավանություն տվեցին: Դա նաև զինակոչի ենթակա երիտասարդների ծնողների մի փոքր մասի, հատկապես ծայրահեղ աղքատ ընտանիքներ կերակրողների սրտովն էր, նրանց,

---

[1] Տե՛ս **«Հովիւ»**, № 32, 30 օգոստոսի 1909 թ., էջ 498-499:

[2] Տե՛ս **«Հայուն տարեցոյցը»**, Կ. Պոլիս, 1913, էջ 37:

ովքեր զինվորական տուրքը չէին կարողանում վճարել:

Դաշնակցություն կուսակցության նշանավոր գործիչ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վահան Փափազյանը վկայում է, որ զինվորագրության օրենքի հայ պաշտպանները ղեկավարվում էին այն նկատառումով, որ Թուրքահայությունը օսմանյան բանակի կազմում կունենար հայկական ազգային զորամասեր «եւ այդ հանգամանքը նպաստաւոր ազդեցութիւն պիտի թողուր Թիւրք ժողովուրդին վրայ – չպիտի յանդգնէին գէշ աչքով նայելու հայերուն, իսկ հակառակ պարագային՝ մտածումը ունէինք, թէ նեղ վայրկեաններուն զինուած եւ մարզուած ոյժերու տէր կը դառնայինք... Այս նպատակով էր, որ կը պնդէինք, թէ խաղաղ ատեն զինուորագրուած հայ տարրերու զինուորական ծառայութիւնը իրենց երկրի կամ մօտակայ վայրերու մէջ պիտի կատարուի»[1]:

Ծնողների մեծամասնությունը, այդ թվում նույնիսկ չքավորների գերակշիռ մասը դեմ էին իրենց զավակների զինվորագրությանը: Նրանք, վկայում է Վահան Փափազյանը, «չէին կրնար հաշտուիլ այն մտքին հետ, որ իրենց զաւակները Թուրք բանակին մէջ պիտի մտնէին, ապրէին աղտոտ եւ քրիստոնէատեաց Անատոլուի Թիւրքերուն հետ կողք-կողքի, ուտէին միեւնոյն ամանէն եւ պառկէին անոնց հետ: Եւ ատոր համար կը նախընտրէին ծախծխել իրենց ոչխար-տաւարը, արմտիքը, նոյն իսկ իրենց հողերը՝ վճարելու համար «պէտէլը» (50 ոսկի) եւ փրկուիլ այդ անհանդուրժելի ծառայութենէն»[2]:

Հաշվի առնելով Թուրքահայության մեծ մասի տրամադրությունները, միաժամանակ ելնելով իրենց ազգային խնդիրների առանձնահատկություններից, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և հայկական կուսակցությունները կառավարությունից պահանջեցին Թուրքահայաստանում զինաթափ անել քրդերին կամ պետական պահեստներից այդ տարածքի հայերին էլ զենք տալ:

Երիտթուրքական կոմիտեի մշակած կանոնադրությունն անմիջապես գործածության մեջ չդրվեց՝ սպասելով օսմանյան

---

[1] ***Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 130-131:*

[2] *Նույն տեղում:*

խորհրդարանի հրավիրմանը: Խորհրդարանի բացումից հետո, այլ կարևոր հարցերի հետ, անմիջապես օրակարգ մտավ նաև քրիստոնյաների զինվորագրության հարցը՝ որպես ամենահրատապներից մեկը: Պատրիարքարանի միջոցով հայերը խորհրդարան ներկայացրին մի շարք առաջարկներ, հուսալով, որ դրանք հաշվի կառնվեն զինվորագրության օրենքը մշակելիս: Առաջարկ-պահանջներից մի քանիսը տպագրված են «Բիւզանդիոն» օրաթերթի 1908 թ. դեկտեմբերի 26-ի համարում, որոնցից կարևոր էին. 1) Բանակում ծագած կրոնական վեճերը, ցեղի ու կրոնի դեմ ուղղված հարձակումները, նախատինքները պետք է վճռականապես դատապարտվեն, 2) Զինվորական ծառայության ժամկետն իջեցնել մինչև երկու տարի, ինչպես կա, ասենք՝ Ֆրանսիայում:

Իր հերթին, ռուսահայ մամուլը, հետևելով թուրքահայ մամուլի օրինակին, Կ. Պոլսի պատրիարքարանին առաջարկում էր խորհրդարանի քննությանը ներկայացնել թուրքաց բանակում հայ եկեղեցականներին ծառայության վերցնելու հարցը: Նրանք, անշուշտ, պիտի ծառայեին ոչ իբրև զինվոր, այլ իբրև աղոթասաց, ինչպես բանակում ծառայող թուրք իմամները[1]:

Արդարադատության նախարարությունը, որը կազմել էր խորհրդարանում ընդունվելիք քրիստոնյաների զինվորագրման օրենքի նախագիծը, գրավոր հարցում արեց հայոց պատրիարքարանին՝ պարզելու համար, թե նա որոշակիորեն ո՞ր կարգի հայ եկեղեցականներին է նպատակահարմար գտնում արտոնել ծառայելու բանակում: Նախարարության այդ գրությունը բավական ժամանակ մնաց պատրիարքարանում՝ առանց պատասխան ուղարկելու: Պատճառն այն էր, որ դեռ հայտնի չէր, թե խորհրդարանականներն ի՞նչ վերաբերմունք կունենան քրիստոնյաների զինվորագրության հարցի նկատմամբ[2]:

Ինչպես սկզբունքային համարյա բոլոր, այնպես էլ զինվորագրության հարցում իրարից շատ տարբեր էին թուրքական

---

[1] Տե՛ս **«Արարատ»,** № 12, դեկտեմբեր, 1908, էջ 1150, **«Հովիւ»,** № 43, 4 նոյեմբերի 1913 թ., էջ 673-674:

[2] Տե՛ս **«Արարատ»,** № 12, դեկտեմբեր, 1908, էջ 1150:

երկու հիմնական կուսակցությունների՝ Իթթիհադի և Ահրարի մոտեցումներն ու տեսակետները: Նրանց միջև եղած խոր հակասությունները ցայտուն դրսևորվել էին դեռևս 1908 թ. աշնանը, երբ Իթթիհադի կոմիտեն մեծ վեզիր Քյամիլ փաշային մեղադրել էր հակասահմանադրական հայացքներ ունեցող երկու նոր նախարար նշանակելու համար: Գրիգոր Զոհրապը ահրարների հետ բուռն կերպով պաշտպանել էր Քյամիլ փաշային[1]:

Վարչապետի շուրջ ծավալված պայքարը հանգուցալուծվեց 1908-ի վերջավորությանը: Դեկտեմբերի 31-ին Իթթիհադականները խորհրդարանում ձեռնարկեցին Քյամիլ փաշային պաշտոնանկ անելուն: Պատգամավորների ժողովը 8-ի դեմ 108 ձայնով անվստահություն հայտնեց նրան, որն, ստիպված, անմիջապես հրաժարական տվեց՝ տեղը զիջելով Հուսեյն Հիլմի փաշային[2]: Դրանով ուժեղացավ գերմանական ազդեցությունը կառավարության վրա[*]:*

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 84, 2 ապրիլի 1909 թ.:*

[2] *Տե՛ս* ***Ա.-Դօ,*** *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, Երևան, 1917, էջ 36-37:*

[*] *Անգլիասեր Քյամիլ փաշայի անկումը ողջունեցին Իթթիհադականներն ու նրանց համակիրները: Ազատականների (ահրարականներ) համար, դա, ընդհակառակը մեծ հարված էր, որն արտահայտվում էր ինչպես խորհրդարանում (ուր նրանք ունեին 50 պատգամավորական տեղ) ունեցած ելույթներում, այնպես էլ մամուլի իրենց օրգանների («Իկդամ», «Յենի գազեթա», «Սերբեսթի» և այլն) էջերում: Քյամիլ փաշայի անկումն առաջ բերեց անգլիական կառավարության և մամուլի բուռն դժգոհությունն ու զայրույթը, բայց հետո նկատելով, որ դա կարող է գործը փչացնել, այսինքն՝ թուլացնել անգլիական ազդեցությունը Կ. Պոլսի վրա, նախընտրեցին լռել և վերապահ դիրք բռնեցին, քանի որ Իթթիհադի մամուլի օրգաններ «Թանինը» և «Շուրա-ի ումմեթը» իրենց հերթին սկսել էին գանգատվել, թե Թուրքիայի հետ անգլիացիների բարեկամությունը, ինչպես երևում է, պայմանավորված է առանձին անձերի, տվյալ դեպքում՝ Քյամիլ փաշայի նկատմամբ իրենց վերաբերմունքով: Միաժամանակ, ինչպես նոր վարչապետ Հիլմի փաշան, նույնպես և Իթթիհադի վերոհիշյալ թերթերը Անգլիային վստահեցնում էին, որ Թուրքիան չի չեղվի իր ավանդական արտաքին քաղաքական կողմնորոշումներից և Անգլիայի ջերմ բարեկամը կմնա առաջվա պես: Արդ, այդպիսի հավաստիացումներից հետո Անգլիան չէր կարող չարունակել թուրքական կառավարության մեջ կատարված փոփոխության նկատմամբ իր բացասական վերաբերմունքը՝ առանց վնասելու իր շահերին:*

Մեծ վեզիր Հիլմի փաշան կառավարության մեջ ոչ մեծ փոփոխություններ կատարեց: Մասնավորապես փոխվեց արտգործնախարարը: Այն բանից հետո, երբ Լոնդոնում դեսպան Ռիֆաթ փաշան հրաժարվեց ստանձնել արտգործնախարարի պաշտոնը՝ Հիլմի փաշային առաջարկվեց առժամաբար վարել գործերը, բայց սա նույնպես մերժեց: Այնժամ Գաբրիել էֆ. Նորատունկյանը պատրաստակամություն հայտնեց ղեկավարելու արտգործնախարարությունը՝ մինչև նոր նախարարի նշանակումը[1]: Առևտրի և հասարակական աշխատանքների նախարար Նորատունկյանն այժմ ստանձնելով արտաքին գործերի նախարարի պաշտոնը, պահում էր նաև արդարադատության նախարարի դիրքը: Այսպիսով, Նորատունկյանը միանգամից ուներ երեք նախարարությունների ղեկավարի պաշտոններ[2]:

Հիլմի փաշայի կառավարությունը մշակեց օրենքի մի նախագիծ, որը նախատեսում էր կայսրության ոչ իսլամների զինվորագրումը հետաձգել մեկ տարով և դա սկսել կիրառել 1910 թվականից: Իսկ դա նշանակում էր, որ նախկինի պես 1909 թ. նույնպես զինվորական ծառայության փոխարեն քրիստոնյաներից և հրեաներից գանձվելու էր զինվորական տուրք (բեդել-ի էսկերիե)՝ պետական բյուջեում 30 միլիոն օսմանյան ոսկու բացը փակելու համար:

Օրինագիծը կոպիտ կերպով խախտում էր օսմանյան սահմանադրությունը, որը հռչակել էր հավատքից ու ազգությունից անկախ, կայսրության բոլոր արու քաղաքացիների՝ բանակում ծառայելու իրավունքը, որը նաև բոլոր արու օսմանցիների քաղաքացիական պարտականությունն էր:

Եթե բալկանյան քրիստոնյաների և հրեաների համար նման օրենքի ընդունումը նույնիսկ ձեռնտու էր, քանի որ նրանց տնտեսական վիճակը տանելի էր, ապա Հայաստանի սովատանջ հայերի համար դա բառիս իսկական իմաստով աղետ կլիներ, քանի որ նրանցից վերջին պատառ հացը կխլվեր:

Բանն այն է, որ 1908–1909-ի ձմեռն իր հետ Թուրքահայաս-

---

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»,** № 3757, 3 (16) փետրվարի 1909 թ.:

[2] Տե՛ս **«Մշակ»,** № 49, 7 մարտի 1908 թ.:

տան սոսկալի սով էր բերել: Հայաստանի հարյուր հազարավոր հայ գյուղացիներ բառացիորեն զրկված էին հացից: Այս պայմաններում, նույնիսկ նրանք, ովքեր ընդամենը երկու-երեք ամիս առաջ դեմ էին իրենց որդիներին բանակ ուղարկելուն, այժմ իրենք էին իշխանություններին դիմում արագացնելու հայ երիտասարդների զինվորագրումը: Հիմա հայ գյուղացին ոչ միայն որևէ հնարավորություն չուներ զինվորական տուրքը վճարելու, այլև՝ ընտանիքի անդամներին սովից փրկելու: Ծնողները մտածում էին, որ բանակ գնալով՝ իրենց չափահաս արու զավակները գոնե ուտելիք կունենան:

Երկար քաշքշուկներից հետո, վերջապես, 1909 թ. հունվարի վերջերին կառավարությունը խորհրդարանին ներկայացրեց քրիստոնյաների և հրեաների զինվորագրման օրենքի նախագիծը, որի բուռն քննարկումն ընդհատումներով ընթացավ համարյա ամբողջ փետրվար ամսին:

Պատգամավորական ժողովի մեծամասնությունը՝ Իթթիհադի խմբակցությունը և «ազատական» պատգամավորները միակամ կողմ էին «բեղել-ի էսկերիե»-ի գանձմանը, գտնելով, որ դա պետական բյուջեի եկամտի մեջ առաջվա պես կարևոր տեղ կգրավի: Դրանից բացի, նրանք վստահություն չունեին, թե ոչ իսլամները բանակում նվիրվածությամբ կկատարեն իրենց զինվորական պարտքը: Ընդհակառակը, համոզված էին, որ քրիստոնյա տարրը, զինվոր դառնալով և խառնվելով թուրք զինվորների հետ, մեծապես կնվազեցնի բանակի ռազմունակությունը, իսկ ռազմական գործողությունների ժամանակ կարող է վտանգավոր ուժի վերածվել: Ունենալով այդ մտավախությունը, իսլամ պատգամավորները պնդում էին, որ ոչ իսլամ զինակոչիկներին հենց սկզբից պետք է ցրվել զանազան վայրերի զորաբաժինների մեջ: Այդ պնդումը միանգամայն հասկանալի էր՝ թելադրված էր նրանց բացահայտ երկյուղով[1]:

Խորհրդարանում օրինագծի քննարկման ժամանակ հայ պատգամավորները դա համարեցին ծրագրված ոտնձգություն

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան,** *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 132:*

սահմանադրության նկատմամբ, նշելով, որ բյուջեի բացը փակելու պատճառաբանությունը մեծ հարված է հեղափոխության սկզբունքներին, որ նյութական չահ ապահովելու համար իշխանությունները բացահայտ կերպով զոհում են ազգերի միության գաղափարը: Նրանք առաջարկում էին զարգացած երկրների, օրինակ՝ ամերիկյան պառլամենտարիզմի, օրինակով ստեղծել բարձր իրավազորությամբ օժտված մի գերագույն մարմին (սահմանադրական դատարան), որն իրավասություն ունենար քննելու կառավարության գործողությունները, և եթե պարզեր, որ նրա ընդունած այս կամ այն որոշումը չի համապատասխանում երկրի սահմանադրությանը՝ արգելեր դրա գործադրությունը: «Նման գերագոյն մարմինը պէտք է ըլլայ սահմանադրութեան պահապանը»[1],- նշում էր պատգամավոր Պետրոս Հալաջյանը: Հայ պատգամավորներն իրենց ելույթներում նկարագրում էին Հայաստանի քրիստոնյա բնակչության անհատակ ցավերը, չեշտում, որ զինվորական տուրքի կիրարկումը նրան անխուսափելիորեն կանգնեցնելու է սովամահության առաջ:

Պ. Հալաջյանի ելույթից հետո հանդես եկավ նորանշանակ վարչապետ Հիլմի փաշան, և խղճի կատարյալ անդորրությամբ հայտարարեց, թե սովի որևէ սպառնալիք չկա հայաբնակ նահանգներում: Վարչապետի այդ ելույթի կապակցությամբ «Ազդակը» գրում էր, որ այդ հայտարարությունը շատ հեռու է իրականությունից: «Ահա՛ բովանդակ Հայաստանը քաղցէն հիւծուած, կմախքացած՝ նուաղուն ճիչեր կ՚արձակէ, ահա՛ մանուկներ սովամահ կ՚իյնան եւ կտրիճ տղամարդեր կը հիւծին՝ սակայն այդ բոլորը դեռ բաւական չեն ապացուցանելու համար, թէ սով կայ, քանի որ ոչ մէկ կուսակալ, ոչ իսկ գայմագամ մը բարեհաճեցաւ հաստատել առաջնորդարաններու կամ մասնաւորներու հաղորդած իրողութիւնները: Հիլմի փաշան փաստեր, ապացոյցներ կը պահանջէ, առանց անդրադառնալու թէ հին ունակութիւնները չուտով չեն մոռցուիր, թէ բոլոր անոնք որ գաւառներու ճակատագիրը կը վարեն, որ իր հրահանգները պիտի գործադրեն, կը մնան չաղուած այն միեւնոյն բնորոշ, իսկ եւ

[1] **«Արեւելք»**, № 7057, 23 մարտի 1909 թ.:

իսկ Թրքական խառնուածքով եւ հոգերանութեամբ զորս ունէին երէկ...»[1]:

Մինչ խորհրդարանում վիճաբանությունները չարունակվում էին, հայերը Պոլսում և ուրիշ հայաշատ քաղաքներում հայրենասիրական ցույցեր էին անում և պատրաստակամություն հայտնում կատարելու իրենց օսմանցիական պարտքը, գործով ապացուցելու իրենց հայրենասիրությունը, զինվոր գնալու և երբ հարկ լինի՝ իրենց արյունը թափելու հանուն ընդհանուր հայրենիքի[2]:

ՀՅ դաշնակցության նախաձեռնությամբ 1909 թ. մարտի 22-ին Կ. Պոլսում, Բերայի ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցավ մեծ հանրահավաք՝ բողոքելու համար Բարձր Դռան՝ խորհրդարանին ներկայացրած օրինագծի դեմ՝ ի նպաստ հայերի զինվորագրության: Հանրահավաքը նախագահում էր Կ. Պոլսից խորհրդարանի պատգամավոր ընտրված Գրիգոր Զոհրապը, որը հավաքույթը բացեց հետևյալ խոսքերով.

«Այս տեսակ հաւաքոյթներու նախագահողները իրաւունք չունին երկար-բարակ խօսելու: Սակայն բացատրեմ երկու խօսքով այսօրուան միթինկին նպատակը:

Օսմանեան հայրենիքին բոլոր ազգաբնակութիւնները եղբօր պէս ապրիլ սորվելու համար նախ եղբօր պէս մեռնիլ գիտնալու են: Այն բարեբաստիկ օրը, երբ կառավարութիւնը բոլոր ազգաբնակութիւններէ կազմուած բանակ մը արտաքին թշնամիներու դէմ դէպի սահմանագլուխ պիտի ղրկէ, ահա՛ այն օրը, պարոնե՛ր, այս տէրութիւնը արտաքին որեւէ միջամտութենէ եւ յարձակումէ չպիտի վախնայ: Զինուորական տուրքի խնդիրը, տուրք մը առնելը կամ տալը չէ, այլ՝ ցեղերու հաւասարութեան վերաբերող կենսական խնդիր մըն է: Ոչ-իսլամներուն՝ այս երկրին տիրող պետութեան մասնակցութիւնը կ՚ընդունուի: Բայց այդ մասնակցութիւնը ճշմարիտ ըլլալու համար, պէտք է նախապէս այդ երկրին պաշտպանութեան գործին մէջ անոր մասնակցութիւնը որոշուի: Հիւսէին Հիլմի փաշայի դահլիճը այս տեսակ

---

[1] **«Ազդակ»,** *№ 6, 17 (30) հունվարի 1909 թ.:*

[2] *Տե՛ս* **«Հովիւ»,** *№ 43, 4 նոյեմբերի 1912 թ.:*

բարձր նպատակ մը չկարողացաւ հասկնալ եւ այս իրողութիւնը հաստատուեցաւ անով, որ, Երեսս[փոխանական] Ժողովին օրինագիծ մը ներկայացուց զինուորական տուրքին հաւաքման համար: Այս դահլիճին բոլոր մտածումը սկիզբէն ի վեր պիւռոքրասին է: Այս տեսակ գծուծ ու փոքր օրէնքներով կարելի չէ օսմանեան հայրենիքին ապագան ապահովել»[1]:

Ապա խոսք առնելով, խորհրդարանում Կ. Պոլսից ընտրված պատգամավոր Պետրոս Հալաջյանը, նշելով օրինագծի անօրինական, հակասահմանադրական լինելը, գտնում էր, որ «ոչ իսլամներէն զինուորական տուրք կարենալ առնելու համար պէտք է սահմանադրութիւնը ըստ այնմ բարեփոխել: Հայրենիքի կենսական խնդիրներու մասին հանրային կարծիքին պիտի դիմենք, անոր աջակցութիւնը խնդրելով: ... Ոչ-իսլամ ազգերը տեսակ մը ստորադաս դիրքի մատնող զինուորական տուրքի գանձումին դէմ կը բողոքենք խստիւ»[2]:

Վանից ընտրված պատգամավոր Վահան Փափազյանը (Կոմս) իր խոսքում կանգ առավ Հայաստանին տանջող ցավերի վրա: Մի՞թե անմարդկային չէ, ասում էր նա, որ այդ դժբախտ երկրի հացի կարոտ բնակիչներից ուզում են դեռ զինվորական տուրք հավաքել՝ բյուջեի բացը փակելու համար: Պատգամավորը չէր կասկածում, որ կառավարությունն օրինագիծը մեջտեղ է բերել հենց քանդելու համար սահմանադրության հիմքերը, ուստի «անոր դէմ ազգովին պիտի բողոքենք»[3]:

Կրկին ամբիոն բարձրանալով՝ Գր. Զոհրապը կարդաց հանրահավաքին ներկայացվող որոշմնագիրը, որը կազմվել էր ՀՅ դաշնակցության նախաձեռնությամբ: Այնտեղ ասված էր. 1) Սահմանադրական ռեժիմի պայմաններում քաղաքացիական հավասարության հիմնական պահանջներից մեկը օսմանյան հայրենիքի բոլոր տարրերի զինվորագրումն է, 2) Հայ ժողովուրդն անկեղծ ու բուռն փափագ ունի անձնվիրաբար ծառայելու ընդհանուր հայրենիքին՝ իբրև զինվոր-քաղաքացի, 3) Հայ

---

[1] **«Արեւելք»**, № 7057, 23 մարտի 1909 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

բնակչության տնտեսական խպառ քայքայման հետևանքով նա այլևս ի վիճակի չէ վճարելու զինվորական տուրքը, 4) Օսմանյան երկրի բոլոր քաղաքական կուսակցությունները ամիսներ առաջ նախնական համաձայնությամբ արտահայտվել են օսմանյան բոլոր ազգերի զինվորական ծառայության օգտին:

Նկատի առնելով, որ կառավարությունը ոչ միայն հետաձգել է քրիստոնյաների զինվորագրությունը, այլև առաջիկայում զինվորական տուրք հավաքելու համար օրինագիծ է ներկայացրել խորհրդարանին, Գր. Զոհրապը հանրահավաքի մասնակիցներին առաջարկեց ընդունել որոշման հետևյալ կետերը. Ա) Դիմել օսմանյան խորհրդարանին և քաղաքական բոլոր կուսակցություններին՝ համաձայն օսմանյան սահմանադրության հոչակած ազգերի իրավահավասարության սկզբունքի, հարգել հայ ժողովրդի զինվորագրման անհետաձգելի իրավունքը, Բ) Խնդրել խորհրդարանին՝ մերժել կառավարության ներկայացրած օրինագիծը և դրա փոխարեն, որքան հնարավոր է չուտ, ընդունել քրիստոնյա տարրերի զինվորագրման օրենք, այլապես հապաղումը կարող է խոր դժգոհություններ առաջ բերել օսմանյան հայրենիքի բնակչության մի մասի մեջ, Գ) Հայ ժողովուրդն իր ներկա սովյալ վիճակով ի զորու չէ վճարելու ծանր տուրքը և պիտի պնդի իր սրբազան իրավունքի վրա, այն է՝ ծառայել հայրենիքին սեփական անձով ու արյունով, այլ ոչ թե անարդար ու հակասահմանադրական դրամական փոխհատուցմամբ, իրավունք, որ միաժամանակ պիտի ծառայի իսլամ և քրիստոնյա տարրերի անկեղծ ու բեղմնավոր մերձեցմանը:

Հանրահավաքը բանաձևն ընդունելուց հետո բեմ բարձրացավ Խաչատուր Մալումյանը և իրեն հատուկ խանդավառ պերճախոսությամբ խոսեց հայոց զինվորագրման անհրաժեշտության մասին, հատկապես չեշտելով, թե բացարձակապես սուտ են այն հերյուրված զրույցները, որ իբր, հայերն անջատողական ցանկություններ ունեն: «Մենք այլևս զինուոր տալ կ՚ուզենք՝ կռուելու համար օսմանեան հայրենիքին համար,- ասում էր նա:- Եւ ասոր ապացոյցը չէ՞ միթէ այն խանդավառ ընդունելութիւնը, որ կ՚ընէ Թուրքահայը զինուորագրման հարցին»: Եվ որպեսզի իշխանությունների մոտ կասկած չառաջանա,

թե այս հանրահավաքը հրավիրելով՝ Դաշնակցությունը չեղվում է Իթթիհադի հետ ունեցած դաշինքի սկզբունքներից, միաժամանակ չեչտած լինելով, թե իր կուսակցությունը «ազատ» և «դեմոկրատական» Թուրքիան մեծապես գերադասում է բռնապետական Ռուսաստանից, Մալումյանն իր խոսքին հավելեց. «Մինչդեռ երբ 1887-ին Ռուսիոյ մէջ հայերն ալ սկսան բանակին մեջ առնուիլ, հայ գիւղացին աւելի սուգի օր մը կը նկատէ այն օրը, երբ իր զաւակը կամ հայրը կամ ամուսինը դէպի բանակը կը մեկնէր: Հոս տարբե՛ր են երեւոյթները եւ ասիկա ապացոյց է այն անկեղծ փափաքին, որ հայ ազգը՝ Սահմանադրութեան հռչակումով կը տածէ օսմ. հայրենիքին հանդէպ»[1]:

Այդ օրը, մարտի 22-ին, հայոց զինվորագրության հարցին նվիրված մեծ հանրահավաք տեղի ունեցավ նաև Մաքրիգյուղի «Տատյան» վարժարանում, ուր բանախոսություններով հանդես եկան դաշնակցական գործիչներ Հարություն Շահրիկյանը (Ատոմ) և խորհրդարանի պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ)[2]: Նույն օրվա բողոքի երրորդ հանրահավաքը հրավիրվեց Ռոդոսթոյում՝ դարձյալ զինվորագրության խնդրի կապակցությամբ: Տեղի եկեղեցում և հարակից տարածքում ավելի քան 2000 մարդ էր հավաքվել: Հանրահավաքում հայտարարվեց, որ հայերի փափագն է զուրկ չմնալ զինվորական պարտականությունը կատարելուց, և կառավարությանը խնդրանք հղվեց հարգել նրանց այդ բնական իրավունքը: Ընդունած բանաձևում ասված էր. «Մեր բոլոր ընկերներու անունով կը խնդրենք, որ այս տարիէն սկսեալ, իսլամ հայրենակիցներու հետ, առանց բացառութեան, մեզ ալ օսմանեան զինուորական ասպարէզը ընդունելու համար օրէնք մը սահմանուի ու գործադրուի: Իսկ զինուորական տուրքին բաշխման ու գանձման դէմ բուռն կերպով կը բողոքենք»[3]:

Բայց բողոքը լսող չկար: Թուրքերն օսմանյան բանակը իբրև իրենց ցեղի հպարտության աղբյուր էին դիտում: Բանակն էր

---

[1] **«Արեւելք»,** № 7057, 23 մարտի 1909 թ.:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

նրանց ուժը: Քրիստոնյաների զինվորագրումով կտապալվեր նրանց դարավոր նախապաշարումը՝ պատճառ դառնալով հոգեբանական բարդույթների, իսկ քրիստոնյաները չոչափելիորեն իրենց կղզային երկրի հավասար քաղաքացիներ: Այդ հեռանկարը բնավ ընդունելի չէր ինչպես հին ռեժիմի, այնպես էլ Իթթիհադի համար:

Մինչ հայ պատգամավորները հանրահավաքներում ճառեր էին հնչեցնում, խորհրդարանում շարունակվում էին բուռն վիճաբանությունները, որոնք ցույց էին տալիս, թե օրինագծի ընդունումը կարող է խափանվել: Այդ իսկ պատճառով, Իթթիհադը որոշեց քայքայել քրիստոնյա պատգամավորների միակամությունը, և այդ նպատակով գաղտնի աշխատանք տարավ հույն պատգամավորների հետ: Վերջիններս փոխեցին իրենց դիրքորոշումը և մեկ օրից մյուսը «բեղելի» կողմնակիցներ դարձան: Նրանք խոստացան միաձայն քվե տալ Հիլմի փաշայի դահլիճի ներկայացրած օրինագծին:

Համոզվելով, որ օրինագծի ընդունումն անխուսափելի է, հայ պատգամավորներն, ստիպված, միացան մեծամասնությանը: Օրինագիծն օրենքի ուժ ստացավ միաձայն քվերարկությամբ: Դեմ էր արտահայտվել միայն հնչակյան Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան)[1]:

ԿԱՏԱՐՅԱԼ ՀԻԱՍԹԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Քյամիլ փաշայի անկումից հետո թուրքական քաղաքական դաշտում կատաղի, ուղղակի մահացու պայքար սկսվեց Իթթիհադ և Ահրար (Ազատական) կուսակցությունների միջև:

Թե այդ կուսակցությունների պայքարն ինչպիսի ծայրահեղ թշնամության էր հասել, կարելի է պատկերացնել հետևյալից: «Սերբեսթի» թերթի արտոնատեր-ղեկավար Մելանդադե Ռիֆաթ բեյը Կ. Պոլսի ժողովարաններից մեկում կարդացած դասախոսության ժամանակ Իթթիհադի քննադատության մեջ

---

[1] Տե՛ս **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը*, հատ. Բ, էջ 132:

այնքան էր առաջ գնացել, որ արտասանել էր այս խոսքերը. ««Իթթիհատ վէ Թերաքքը» կուսակցութիւն կոչուածի ղեկավարները, որոնք կը նստին Շէրէֆ (արաբ.՝ պատիվ:– Հ. Ս.) փողոցը (կուսակցության կենտրոնատեղին Կ. Պոլսում:– Հ. Ս.), իսկական խըրսըզներ (ավազակներ:– Հ. Ս.) են, որոնցմէ երբեք պէտք չէ վախնալ: Եթէ անոնք իսկապէս քաջ են, թող հրապարակ գան: Ահա՛ կանգնած եմ կուրծքս բաց. թող գան ու զարնեն»[1]:

Սակայն Իթթիհադի դեմ պայքարի առաջապահը նույն «Սերբեսթի» թերթի գլխավոր խմբագիր Հասան Ֆեհմի բեյն էր՝ երիտթուրքերի անգիջում ու մոլեռանդ հակառակորդը: Նա ամենաչնչին առիթը բաց չէր թողնում վարկաբեկելու ու տկարացնելու հակառակորդին: Իթթիհադը չներեց նրան. նա 1909 թ. մարտի 25-ին սպանվեց[2] ահաբեկչի գնդակով*:

Ահա՛ թե ինչպիսի սրության էր հասել միջկուսակցական պայքարը թուրքերի մոտ 1909 թ. սկզբներին: Կուսակցությունները ոչ թե համախմբված էին համոզմունքների, ընդհանուր գաղափարների շուրջ, այլ՝ նշանավոր անձերի, գործիչների շուրջ և նրանց ցուցումով էին գործում:

Հասան Ֆեհմիի սպանության լուրն առնելով, Կ. Պոլսի մի շարք բարձրագույն դպրոցների (բժշկական, իրավաբանական և այլն) հարյուրավոր ուսանողներ, թողնելով դասալսումները, դիմեցին Բարձր Դուռ և նրա դիմաց բողոքի ցույց արեցին՝ Հիլմի փաշայից պահանջելով միջոցներ ձեռնարկել անհապաղ ձերբակալելու և խստորեն պատժելու ոճրի հեղինակներին[3]: Այդ ցույցը երիտթուրքերի դեմ ուղղված առաջին լուրջ բողոքն էր:

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 3757, 3 (16) փետրվարի 1909 թ.:

[2] **«Ազդակ»**, № 17, 11 (24) ապրիլի 1909 թ., էջ 260–261:

* Նկատենք, որ այդ ահաբեկումը բացառիկ դեպքերից մեկն էր: Թուրքական կուսակցությունների՝ միմյանց դեմ պայքարի ընթացքում, նույնիսկ դրանց կազմավորման այդ վաղ շրջանում, կողմերից որևէ մեկը չէր դիմում այնպիսի ծայրահեղ միջոցի, ինչպիսին սպանությունն է, որն այնքան ընդունված էր, ավա՜ղ, հայկական ազգային կուսակցությունների փոխհարաբերություններում:

[3] Տե՛ս **«Մշակ»**, № 67, 3 ապրիլի 1909 թ.:

Թուրքահայությունը 1909 թվական էր թեւակոխում հեղափոխության առաջին ամիսների ոգեւորությունից ամբողջովին ձերբազատված: Միդհատյան սահմանադրության վերականգնումից անցել էր չուրջ 6 ամիս և հիմա ինքը կարող էր հանրագումարի բերել իր ձեռքբերումներն ու կորուստները և դրանք համադրելու միջոցով հասկանալ երիտթուրքերի հռչակած «ազատությունների» արժեքը:

Խոստացած ազատությունները ազդարարելուց հետո պիտի գար իրական գործը՝ այն է կերտել մի նվիրական պետություն կայսրության բոլոր ազգությունների համար: Բայց ինչո՞ւ էր տագնապն այդքան փութով սողոսկել հայերի սիրտը, որոնք հապճեպ տոնել էին իրենց ազատագրությունը պատմության մեջ եղած ամենաեղկելի բռնապետություններից մեկի ճանկերից: Իր անկման նախօրեին՝ օսմանյան երկիրը քաղաքակրթության առաջընթացից հարյուրամյակներով հետ մնացած մի խավար տարտարոս էր, որը գտնվում էր իր կրնկի տակ ապրող ժողովուրդների մչտական անեծքի տակ:

Թուրքական պետությունն անկումից վեր բարձրացնելու և «մեռած մարդուն» կենդանության չունչ հաղորդելու համար պետք էր բոլոր ուժերը համախմբել, բոլոր կարող ձեռքերը գործի լծել և բազմազգ բնակչության միահամուռ, համերաշխ ջանքերով երկիրը դուրս բերել ծանրագույն վիճակից:

«Արեւելքը» գրում էր.

«Կարծես Օսմանեան երկիրը այլեւս ոչ մէկ տէր չունի կամ հին տէրերու եւ կարգադրիչներու ձեռքին է անոր բաղդն ու կեանքի ղեկը:

... Կատարուած յեղաշրջումին չը հետեւեցաւ դրական եւ ստեղծագործական այն մեծ աշխատանքը, որը միայն թէ՛ իսկապէս, թէ՛ իրապէս կրնար ուժեղացնել եւ այդպիսով դիմացիններուն յարգել տալ Օսմանեան պետութիւնը: Ընդհակառակը, երկրի ներքին քաղաքական եւ քաղաքացիական-հասարակական բոլոր յարաբերութիւնները մնացին անորոշ, տարտամ վիճակի մէջ: Իսկ պետութեան ներսը, խուլ, մոռցուած անկիւններուն մէջ, որտեղ վէրքերը ծանր ու խորունկ՝ ամէնէն չուտափոյթ եւ ամէնէն արմատական բուժման էին կարօտ, իրերը

մնացին իրենց նախկին վիճակի մէջ, ինչպէս օրինակ, Անատոլուի մէջ»[1]:

Արդեն պարզ էր նաև, որ երիտասարդ Թուրքերը լիովին իրենց ձեռքն էին առել ազգային հարցը իրենց ուզած ձևով արմատապես լուծելու գործը: Դեռ ոչինչ չարած երկրի բարեկարգության համար, կիսատ ու անկատար ձգելով ներքին կառուցողական աշխատանքը՝ նրանք բարձրացրել էին հարցեր, որոնք չէին կարող հեշտությամբ լուծել և որոնք փոխադարձ անվստահություն, երկպառակություններ ու թշնամություն էին առաջացնում:

Երկրում լիակատար ազատություն էին ստացել ամենահետադիմական տարրերն ու կազմակերպությունները: Թուրք ազգայնամոլներն ամենուր տարածում էին ատելության բացիլներ «չափն անցկացրած» այլազգիների նկատմամբ, թափորներ կազմելով ցույցերի դուրս էին գալիս, և երկրի տնտեսական ծանր վիճակի պատասխանատուն նրանց համարում:

«Արեւելեան մամուլը» գրում էր.

«Որքա՜ն միամիտ կ՚ըլլան մարդիկ եւ մանաւանդ որքա՜ն միամիտ է հայը:

Կը կարծէինք թէ ազատութեան օրերուն հետ խաղաղութիւն պիտի տիրէր, համերաշխութեան անուշ հով մը պիտի փչէր մեր տառապած հոգիներուն վրայ, անդորրութեան բարիքները պիտի վայելէին մեր ցաւատանջ սրտերը, եղբայրութեան հմայքոտ հեռապատկերը իրականութիւն պիտի դտնէր մեզի համար եւ անոր վերացական գաղափարը գործնականապէս պիտի ապացուցուէր օսմանեան հողին վրայ գոյութիւն ունենալու իրաւունք վայելող ամենազգի ժողովուրդներու ձեռքով»[2]:

Աբդուլհամիդյան զուլումի տարիներին Թուրքերը, իբրև տիրապետող ցեղ, իրենց ձեռքում էին պահում հայկական նահանգների բոլոր ղեկավար դիրքերը՝ իբրև պաշտոնյա, դատավոր և մանավանդ իբրև կեղեքող աղա, բեյ, զյուղատեր, մեծ կալվածատեր, աշար հավաքող: Երբ հաղթեց երիտթուրքական հեղա-

---

[1] **«Արեւելք»,** № 6914, 2 հոկտեմբերի 1908 թ.:

[2] **«Արեւելեան մամուլ»,** № 47, 18 նոյեմբերի 1908 թ.:

փոխությունը, այդ ողջ մակաբույծ դանգվածը սահմանադրության մեջ իր մահը տեսավ: Տեսավ ոչ թե երիտթուրքերի հանդեպ ունեցած ահից, այլ այն մտավախությունից, թե հայերը սահմանադրության ուժով հավասարություն և ազատություն են ձեռք բերելու, հետևաբար դադարելու են իրենց համար չահագործման ու չահատակությունների օբյեկտ լինելուց:

Ելնելով դրանից՝ թուրքերը, քրդերի պես, Հայաստանում պետք է լինեին հակասահմանադրական, և իրենց ողջ հնարավորությունները տրամադրեին այն ուժերին, որոնք կաչխատեին հին ռեժիմը հետ բերել: Բայց քանի որ այդ խնդրի իրականացումն անհնար էր իրենց ուժերով, ուստի, մնալով հակասահմանադրական, նրանք սկսեցին սահմանադրական ձևանալ և խումբ առ խումբ մտան Իթթիհադի չարքերն ու ջանացին նրա միջոցով իրենց դիրքերը պահել սահմանադրական դրոշի տակ: Եվ նրանք հաջողեցին: Աստիճանաբար համոզվելով, որ սահմանադրությունն իրենց համար որևէ վտանգ չի ներկայացնում, նրանք սահմանադրության հասցեին այլևս որևէ բացասական խոսք չէին ասում:

Այդ միջոցով հայկական նահանգների ամբողջ իշխանությունն, առաջվա պես մնաց հին ռեժիմի մարդկանց ձեռքում, որոնք, դառնալով հեղափոխության և սահմանադրության «հուսալի ու հավատարիմ պաշտպաններ»՝ շարունակեցին հարստություններ ավելացնել իրենց արդեն ունեցածի վրա:

Ռուբենն իր հուշերում գրում է, որ Բաղեշի նահանգում թահսիլդար (հարկահավաք) Դիդոյի Ռաշիդը, որ հայ կանանց չարչարելու համար կարգադրում էր նրանց վարտիքների մեջ կատու գցել, դարձավ Իթթիհադի տեղի վարչության նախագահը, Խոջա Իլիասը, որ ժողովրդին կեղեքում էր սալաֆդարությամբ (վաչխառությամբ), նախ դարձավ Սուլուխի գյուղատեր, ապա, իբրև իթթիհադի կոմիտեի անդամ, ընտրվեց օսմանյան խորհրդարանի անդամ: Զենքի ուժով բազմաթիվ հայկական գյուղերի տիրացած Ֆարամազը, մտնելով Իթթիհադի մեջ, դարձավ նրա եռանդուն գործիչներից մեկը: Նույն կերպ վարվեցին թուրք հարստահարիչ Հաջի Մուսան և հին ռեժիմի բազմաթիվ ուրիշ երկրպագուներ: Սրանք բոլորը, Ռուբենի պատկերավոր

խոսքերով, կարողացան «Թուչել յեղափոխութեան անսանձ ձիու քամակը եւ իրենց ցանկացած ուղղութեամբ քշեցին անոր բերած սահմանադրութիւնը»[1]:

«Զկայ աւելի զարհուրելիօրէն սնամէջ բան մը,- գրում էր «Արեւելեան մամուլը»,- քան այսօրուան Օսմանեան Սահմանադրութիւնը, իր բոլոր ուռուցիկ ու ծիծաղելի խանդավառումներով, իր բոլոր անկարելի յուսադրութիւններով, իր բոլոր կամակոր լաւատեսութիւններով: Տխրօրէն զաւեշտական էր ան, առաջին օրէն իսկ, այն կեղծաւոր, երկերես, չողոքորթ դիմածռումներուն մէջ՝ որով կը հռչակէր եղբայրութեան, արդարութեան, հաւասարութեան մեծաղղորդ սկզբունքները: Բովանդակ Թուրքիան, ահագին ինքնախաբութեամբ մը թունաւոր գինովութեան տուաւ ինքզինքին: Բայց բոլոր համբոյրները, բոլոր գիրկընդխառնումները, որք առաջին օրէն տեղի ունեցան, զզուելիօրէն կեղծ էին, անդարմանելիօրէն չողոքորթ էին»[2]:

Ամենքին պարզ էր, որ սուլթանական պնակալեզներով, հարեմական կարգերով, շեյխ-ուլ-իսլամի ֆեթվաներով և ուլեմաների ցուցումներով, ինչպես և զինվորականների դավադրություններով ու փչացած պաշտոնյաների կեղեքումներով չի կարելի մի երկիր այնպես կառավարել, որ նա դուրս գա իր հարաճուն քայքայման վիճակից:

Թեև օսմանյան սահմանադրության 19-րդ հոդվածն ազդարարում էր, թե «բոլոր օսմանցիներն ընդունվում են պաշտոնների՝ իրենց ընդունակության, արժանիքի և հաջողությունների համեմատ», բայց սահմանադրության և ազատության հռչակումից ամիսներ անց Հայաստանի գավառներում որևէ հայ որևէ պաշտոն չէր ստացել, հայկական ոչ մի բնակավայրում իրական որևէ միջոց չէր ձեռնարկվել՝ նրա անմեղ ու զրկյալ բնակիչների իրավունքները վերահաստատելու և մարդավայել ապրելու դյուրություններ ստեղծելու համար:

Ծայրահեղության էր հասնում ***մուսուլմանական կրոնական մոլեռանդությունը:*** *Անչարժ ճահճի հատակից նոր ուժով բարձ-*

---

[1] ***«Հայրենիք»****, № 8 (271), օգոստոս, 1948, էջ 68:*

[2] ***«Արեւելեան մամուլ»,*** *№ 49, 2 դեկտեմբերի 1908 թ.:*

բանում էր բազմաղարյան տգիտության ու վայրենի մոլեռանդության մրուրը: Մզկիթներում շեյխերն սկսել էին ավելի հաճախ քարոզներ կարդալ Հուրրիեթի դեմ, ասելով, թե ազատությունն կոչվածը ոչնչացնում է մուսուլմանի հավատը դեպի Ալլահը, թուլացնում ընտանեկան կապերը, քարուքանդ անում դարերով ձևավորված հասարակական հարաբերությունները:

Հուրրիեթն իբրև համազգային դժբախտություն ներկայացնելով ամբոխին՝ մոլեռանդ շեյխերը հայրենիքի թշնամիներ էին համարում նույնիսկ իթթիհադականներին, ասելով, թե նրանք են երկիր ներմուծել այդ չարիքը, չնայած այն բանին, որ երիտթուրքերը պաշտպան էին կանգնած իսլամին, նրա միջնադարյան բոլոր ավանդույթներին, իսկ նրանց պարագլուխ Ահմեդ Ռիզան 1909 թ. սկզբին հրատարակած իր մի գրքույկում շեշտում էր, թե «կինը պիղծ էակ է» և արդարացնում էր այդ մասին Ղուրանի տրամադրությունները: Ավելին, այդ «հեղափոխականը» միանգամայն ճիշտ էր համարում հարեմական դրությունը և բազմակնությունը, վերջինս դիտելով որպես «մարդկային էության պահանջին բոլորովին համապատասխան»: Եվ այդ տողերը գրում էր մի մարդ, որի մայրը ավստրիացի քրիստոնյա էր...

Ծածանելով կրոնական դրոշը և երիտթուրքերին հակառակորդներ հռչակելով՝ մուսուլմանական «ընտրանին» պահանջում էր ամբողջ ծավալով վերականգնել և գործադրել կրոնական օրենքը՝ շարիաթը:

Շարիաթը սահմանադրական օրենքով փոխարինելու համար երիտթուրքերին չներող մուսուլման կղերը գնալով ավելի ու ավելի ուժգին ճնշում էր գործադրում ինչպես խորհրդարանի, այնպես էլ կառավարության վրա՝ պահանջելով շարիաթի վերականգնումը: Իշխանական վերնախավը երկչոտաբար նորանոր զիջումներով էր պատասխանում մուսուլմական բարձրաստիճան կղերի և ընդհանրապես իսլամ նշանավոր հավատացյալների պահանջին:

Վահան Փափազյանն իր հուշերում բերել է այսպիսի օրինակ.

«Հիլմի փաշայի սատրազամութեան առաջին օրը, երբ նախարարութեան ծրագիրը կը կարդար բեմէն, որուն մէջ ժո-

ղովրդավար ոգիով երկրի բարեփոխութեան պէտքը կը չեշտէր, Պոլսոյ երեսփոխան Մոլլա Մուսթաֆա Ասքմը դայրոյթով ընդմիջեց սատրազամին՝ գոռալով. «Մենք Եւրոպայէն կրնանք առնել միայն ինչ որ կը համապատասխանէ չէրիի...»: Այն օրուընէ արդէն ստեղծուած էր չէրիաթական կազմակերպութիւնը: Խեղճ Հիլմի փաշան չփոթած կմկմաց՝ «Ես ալ նոյնը ըսի, այսինքն թէ Եւրոպայէն կ՚առնենք ինչ որ օգտակար է մեր երկրի օրէնքներուն»»[1]:

Իսկ թե ինչ էր նշանակում շարիաթի վերականգնումը, հայտնի էր բոլորին:

Շարիաթի համաձայն, օրինակ, մուսուլմանին հպատակ քրիստոնյան, դեռ արաբական նվաճումներից սկսած, միշտ գտնվել է «հաղթողի ողորմածության ներքո»: Առաջվա պես, 20-րդ դարասկզբին մուսուլմանները քրիստոնյաների մեջ անարգ էակների և թշնամիների էին տեսնում: Սիրիացի քրիստոնյաների հպատակության կանոններում ասված էր. «Չհագնվել արաբների նման, չխոսել արաբական լեզվով, չնստել լավ թամբած ձիերի վրա, այլ նստել միայն ջորիներ և էշեր՝ հասարակ թամբով, չհնչեցնել զանգեր, փողոցներով չանցնել թափորով...»: Այդ կանոններից մեկում նաև նշված էր, որ առանց մուսուլման իշխանության թույլտվության՝ չի կարելի հողին հանձնել քրիստոնյա մեռելին, իսկ այդ թույլտվությունը տրվում էր ամենավիրավորական ձևերով ու որակումներով:

Շարիաթի այդ օրենքնե՞րը պիտի վերականգնվեին: Այո՛, առանց փոփոխության – ա՛յս էին պահանջում ամեն աստիճանի իսլամ կղերականները:

Պարզ էր, թե ինչ հետևանքների կարող էր հասցնել շարիաթի վերականգնումը և անչեղ գործադրությունը, որոնց վրա պնդում էր հետադիմական հոգևորականությունը: Քրիստոնյաների համար դա օրինականացված անիրավություն կլիներ: Իհարկե, մուսուլման կրոնավորները ոչ ամեն տեղ հնար ունեին գործադրելու կրոնական անհանդուրժողականության սկզբունք-

---

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 117:*

ները, անհնար էր նման հարաբերություններ ստեղծել արդեն սահմանադրական հռչակված երկրում, վերահաստատել մի կրոնական խմբի միահեծան իշխանությունը մնացած կրոնական դավանանքների վրա: Բայց, այնուամենայնիվ, դրան հասնելու ձգտումը մեծ էր:

Տեղի ունեցող համախմբումներից ու ցույցերից հետո սոֆթաների և մոլլաների խմբերը, հաճախ բաժանվելով թափորից, զանազան հակասահմանադրական բացականչություններով և «Մենք անտեր ենք, մենք անհովիվ ոչխարներ ենք» աղաղակներով ելդրզ քեռչկ էին դիմում: Այդպիսի քայլարշավներից մեկը տեղի ունեցավ 1909 թ. փետրվարի վերջին, երբ, կանաչ ու կարմիր դրոշներ պարզած սոֆթաներն ու մոլլաները, իրենց հետևից տանելով մի քանի հազար մոլեռանդ հավատացյալների, խմբվեցին սուլթանի պալատի առջև: Նրանք զանազան բացականչություններով Աբդուլ Համիդից խնդրում էին «նայել մեր երեսին»: Վերջապես, երկար աղաչանքներից հետո, պալատի պատուհանին երևաց սուլթանը: Ամբոխի ներկայացուցիչ խոջան, դիմելով նրան, խնդրեց միջոցներ ձեռնարկել վերջ տալու Ղուրանին հակառակ տեղի ունեցող մի շարք երևույթներին՝ փակել «ազատական կլուբները» (ակումբները), արգելել կանանց բաց երեսով փողոցներ դուրս գալը և այլն:

Ահմեդ Ռիզան և Իթթիհադի կառավարությունը 1909-ի հունվարից, հենվելով միդհատյան սահմանադրության 3-րդ և 4-րդ հոդվածների վրա, սկսել էին բարձրաձայնել սահմանադրությունից 8-րդ հոդվածը հանելու անհրաժեշտության մասին: Իսկ այդ հոդվածն ազդարարում էր, թե «Օսմանյան կայսրության բոլոր հպատակները, առանց ազգային, կրոնական և այլ խտրության, օսմանցի են կոչվում»: Իթթիհադն իր չկամության սլաքը ուղղում էր ոչ միայն ազգային ինքնության և առանձնահատկությունների, այլև ոչ իսլամական կրոնների դեմ: Իսլամը, որպես պետական կրոն, աստիճանաբար պետք է իրենով փոխարիներ կայսրության մեջ գտնվող մնացած բոլոր կրոնները:

Հայերը և մյուս քրիստոնյաներն իրենց հարց էին տալիս. սահմանադրության հռչակումից հետո արդյո՞ք օսմանյան պետության չահերի դեմ ուղղված որևէ արարք են թույլ տվել: Հայ

գործիչներից մեկը վչտացած գրում էր.

«Կը հարցնենք մեր խլամ եղբայրներուն. Սահմանադրութեան հռչակումէն ի վեր օսմանցի քրիստոնեաները երբեք թերացա՞ն իրենց ուխտին, իրենց խոստումներուն մէջ. եղբայրադրժութեան մէ՛կ պարագայ մը կրնա՞ն ցոյց տալ, որ ամօթով ծածկէ որեւէ քրիստոնեայի դէմքը: Զե՛նք դադրիր աղաղակելէ թէ վար դրուած են յեղափոխական բոլոր զէնքերը, հակակառավարական ամէն շարժում դադրած է ընդմիշտ, եւ ուրիշ փափաք չունինք եթէ ոչ խաղաղօրէն ապրիլ, զարգանալ, յառաջանալ Օսմ. Սահմանադրութեան դրօշին տակ:

Ասոր ի պատասխան ի՞նչ կը տեսնանք. Թուրքը նորէն **կեավո՛ւռ** կը պոռայ երեսնուս»[1]:

Նոր ստեղծված Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության հիմնադիրներից Վահան Մալեզյանը հույս էր հայտնում, որ Թուրքիայի կառավարությունը, կայսրության բոլոր ժողովուրդները, վերջապես, պետք է ըմբռնեն այն տարրական միտքը, թե այլ է պետությունը և այլ՝ եկեղեցին: Պետությունը, որ վարում է մի տարածքում բնակվող բոլոր ազգերի, ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու մշակութային գործերը, պիտի հեռու լինի կրոնական-եկեղեցական գործերից. դավանաբանական հարցերը որևէ դեր չպիտի խաղան պետության ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Կրոնը, եկեղեցին մարդկանց հոգու, սրտի գործն է, որոնք, միասին առած, կոչվում են խիղճ: Ու այդ խիղճն **անբռնաբարելի** է: Նրա համար չպիտի լինեն կանոններ, օրենքներ՝ վերևից կամ որևէ մի տեղից տրված. նա ինքնաբուխ է և կատարելապես ազատ պետք է լինի: Պատահական չէ, չարունակում էր դատողություններ անել Մալեզյանը, որ զարգացած երկրները (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա և այլն), չկարողանալով տանել քաղաքակրոնական պետական կարգերը, ժամանակին ստիպված են եղել պետությունը բաժանել եկեղեցուց[2]:

---

[1] Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85³, թղթ. 49, վավ. 2965, թ. 2 (թերթի կտրոն):

[2] Մատենադարան, Մատթեոս Իզմիրլյանի արխիվ, մատյան 34, թղթ. 11, վավ. 198:

Հայկական նահանգների գլխավոր աղետը, հայության հիմնական պատուհասը չարունակում էր մնալ ավատատիրական ***քրդությունը:***

«Բիւզանդիոնը» գրում էր, որ տարեկան մոտ 10 հազար հոգի զոհ է գնում Թուրքիայի արևելյան նահանգներում տեղի ունեցող անկարգություններին[1]: Հավանական է, որ այդ զոհերի մեծ մասը քրդերի ձեռքի գործն էր:

Քուրդ ավազակապետերը, որոնք օսմանյան հեղափոխությունից սարսափահար փախել էին կամ ահաբեկ սպասում էին, թե ե՞րբ իրենց վրա պիտի ծանրանա արդարության ու քավության պատժիչ ձեռքը, 1909 թ. սկզբներից նոր ոգի էին առել:

Ռուբենը հիշում է մի պահ, երբ երիտթուրքերի աչքի ընկնող գործիչներից մեկի՝ Վեհիբ բեյի հետ Տարոնում այցելել էր քրդական գյուղերից մեկը:

«Վեհիբը,- գրում էր Ռուբենը,- իր սովորության համաձայն, ինձ համբուրելով կը ցուցադրէր խուժանին եւ ցեղապետին, ասելով.

- Առանց ֆիդայիների, առանց անոնց թափած արիւնին, չպիտի ստանայինք այս երջանիկ օրերը:

Խուժանը կը ծափահարէր իր «Եաշա՛» կանչերով, իսկ բէկերը եւ ցեղապետերը խորամանկ եւ խորհրդաւոր կը դիտէին»[2]:

Հենց բեկերն ու ցեղապետերն էին, որ տեղի ունեցող իրադարձություններից բան չհասկացող քուրդ տգետ ամբոխին «հասկացնում» էին, որ սահմանադրությունը մի հարկադրական խաղ է պետության համար, որ դա եկած է դրսի պետությունների հարկադրանքով՝ հայերի ցանկություններին բավարարություն տալու համար:

Եվ բռնակալության ծառաները, մի պահ ընկրկած ու ահաբեկ, նկատելով, որ արդարության ձեռքը չի հարվածելու իրենց, լսելով, որ մայրաքաղաքում նույնիսկ հնչում են իրենց համար փրկարար չեփորները, ոգի առնելով, չտապեցին անձնատուր

---

[1] *Տե՛ս* ***«Բիւզանդիոն»,*** *№ 3, 22 ապրիլի (5 մայիսի) 1909 թ.:*

[2] ***«Հայրենիք»,*** *№ 8 (271), օգոստոս, 1948, էջ 68:*

լինել նախկին անարգ արհեստին՝ վառել ամբոխի ցեղային ու կրոնական կրքերը և իրագործել իրենց պաշտպան «նոր» ռեժիմի նույնքան մարդատյաց մտադրությունները: Եվ քուրդ զանգվածներն ավելի մեծ եռանդով ու կրքով շարունակեցին իրենց չահատակությունները, սպանությունները, առևանգումներն ու կողոպուտները[1]:

Երիտթուրքերը գործունեության լայն հրապարակ էին տվել այն բոլոր նշանավոր քրդերին, որոնք հայտնի էին անցյալում հայերի հանդեպ իրենց գործած արյունռուչտ արարքներով: Նրանք աքսորից վերադարձրին հայտնի հայակեր Մուսա բեկին, իթթիհադ կոմիտեի անդամ ընդունեցին 1907-ին հայ ֆիդայիներ Սեյդոյին, Ջնդոյին և Զավենին սպանած Ղասըմ բեկին, բանտերից ազատեցին քրեական ծանր հանցանքներ կատարած հարյուրավոր քուրդ հայասպանների:

1909 թ. փետրվարի 21 ամսաթիվը կրող արխիվային մի փաստաթղթում կարդում ենք.

«Գաւառները կը շարունակեն արիւնոտ թղթակցութիւններով ողողել Պոլսոյ հայ խմբագրատունները:

Հայաստանի չորս անկիւններէն «Սահմանադրութիւն չի կայ, Սահմանադրութիւնը չի գործադրուիր» կը պոռան: Քիւրտ աշիրէթները, Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն ի վեր, արտասովոր զարկ մը տուած են իրենց հարստահարութիւններուն եւ ասպատակութիւններուն: Եղբայրութեան եւ հաւասարութեան գաղափարը զայրացուցած, մոլեգնացուցած է այս բիրտ ու վայրի ոհմակները, որոնք մարդկային որեւէ լեզու չեն հասկնար, բայց որոնք անշուշտ շատ լաւ կը հասկնան զէնքի եւ թնդանօթի լեզուն՝ զգաստանալու, իրենց որջերուն մէջ կծկտելու համար»[2]:

1909 թ. մարտի 12 թվակիր արխիվային մի ուրիշ նյութնամակում նկարագրված է հայերի նկատմամբ քրդերի անմարդկային վերաբերմունքի հետևյալ պատկերը.

«Միշտ թշուառ ու միշտ հարստահարուած Կարկառ լեռնա-

---

[1] Տե՛ս **«Գործ»**, № 34, 21 հոկտեմբերի 1909 թ.:

[2] ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 1856, թ. 12:

գաւառակը նորից սարսափների մէջ է քրդերի ձեռքին: Այս գաւառակի հարեւանութեամբ՝ Խիզան գաւառի Կեցան կոչուող ստորամասում է բնակւում շեյխ Սաիդ Ալին՝ նախկին համբաւաւոր հայակեր շեյխ Մահմուտ Ջալալէդդինի որդին: Սահմանադրութիւնը արգելք չդրեց Սաիդ Ալու առջեւ, եւ նա նախկին վայրագութեամբ շարունակում է չարիքներ տեղալ հայ գիւղերի գլխին՝ ասպատակներ սփռելով Խիզան, Սպարկերտ, Կարկառ, Կեցան, Կարճկան եւ այլ գաւառամասերում»[1]: Նյութի հեղինակն այնուհետեւ նշում էր, որ «սահմանադրութիւնն, անշուշտ, դուր չի գալիս այդ հին գայլին», որն ուղղակի ասում է, թե ինչպե՞ս իր պես մարդը, որ գնդակներից անգամ չի վախենում, հավասար պիտի լինի մի հայ կռոյի: Մի՞թե արդարությունն այդպես է լինում: «Այդպիսի անարդար արդարութիւնը շեյխ Սաիդ-Ալին երբեք չի ճանաչի»,- հայտարարում էր նա»[2]:

Այս նկարագրությանը կցված են (հավանաբար նամակը ստացողի) հետեւյալ խոսքերը. «Արդեօք ազատութեան լոյսը պիտի թափանցի՞ այս խաւար վայրերում – բնաւ հաւատալի չէ: Սաիդ Ալին ու նմանները միշտ նույն գիշատիչ կեղեքողներն են, անաչխատ, հանգիստ կեանքի սովորած, որոնք կարծում են, թէ հայը ստեղծուել է իրենց ծառայելու»[3]:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեին Խնուսից ուղարկած բաց նամակում հայերը նկարագրում էին իրենց անտանելի կացությունը.

«Մեր դրութիւնը քրիթիքական է,- ասվում էր բողոքագրում,- քիւրտ ցեղապետներու մէջ խլրտում կայ. Սահմանադրութեան գէշ աչքով կը նային եւ շարունակ խորհրդակցութեան մէջ են: Կասկածը մեր մէջ անդիմադրելի է, արհաւիրքը՝ մեծ: ... Կոտորածէ կը վախնանք!!!

... Հասան[ան]ցի վայրագ աշիրէթին մէջ կը գտնուինք. շրջապատուած ենք արիւնռուշտ մարդակեր Թաճ[էտ]տինով, Ռիզայով, Ֆաթեհով, Ռաշիտով եւ Ֆէյզուլլահով եւ ասոնց նման հա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 2, գ. 1856, թ. 13 (թերթի կտրոն):

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, թ. 15:

ըիւրէ աւելի ցեղապետ արիւնարբու աւազակներով: Քսան տարի առաջ ասոնք մէյ մէկ հիւղակի մէջ կը բնակէին, զուրկ նիւթական միջոցներէ, առանց կալուածի ու առանց ապրուստի», իսկ հիմա ուռճացել են հայերից խլածով: Միայն Ռիզան, ասված էր բողոքագրում, «տէր է հիմա Խանօղլի, Խլիճլու, Խասմի, Վերին Խճես, Վարին Խճես, Յոխճեն, Այնախոճա, Թունտրա, Վերի Կեալին եւ Դերիք գիւղերուն. ունի 300-ի չափ բարբարոս զինեալներ: Հազարէ աւելի մարդ սպաննած, բիւրաւոր աղջիկներու եւ հարսերու պատիւը բռնաբարած է...: Ֆէյզուլլահն աւելի վատթար, Թաճ[էտ]տինն ա՛լ աւելի վատ եւ միւսներն ասոնցմէ աւելի՛ դժոխային»[1]:

Ապա՝

«Ո՞ւր են մեր չէն գիւղերը, ի՞նչ եղան մեր անասունները, չարժական եւ անշարժ կալուածները: Բոլոր այս աղէտներուն, դժբախտութեանց պատճառ եղողն ու ընողը քիւրտ պէյերու եւ աղաներու կործանարար ձեռքը եղաւ»[2]:

Խնուսցիները աղաչում էին զինաթափ անել քրդերին, հայկական գյուղերից հեռացնել ցեղապետերին, ագարակները վերադարձնել տերերին և փոխհատուցում տալ վնասվածներին:

Խնուսի հայերը մի ուրիշ հանրագրություն-բողոքագիր էին ուղարկել «Միություն և առաջադիմություն» կոմիտեին, պատճենը՝ ՀՅ դաշնակցությանը, որը վերջանում էր հետևյալ խոսքերով.

«Օգնութիւն, օգնութիւն: Տուէ՛ք, մեզ ալ տուէ՛ք ազատութիւն եւ հաւասարութիւն, մենք ալ հայրենիքի զաւակներն ենք, կը թողո՞ւք, որ մենք մնանք գերի ու թշուառ»[3]:

«Էլի նոյն հին երգը. էլի հարստահարութիւն, զուլում: Հապա ո՞ւր են ազատութիւն, արդարութիւն, հաւասարութիւն՝ այդ ոսկեզօծեալ դեղահատները: Իրաւունք չունի՞ գեղջուկը ըսելու, որ

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 36, վավ. 65²⁴, թ. 2 (թերթի կտրոն):*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, թղթ. 39, վավ. 65⁹⁵⁶, թ. 3 (թերթի կտրոն):*

ատոնք սուտ խօսքեր են, աչքակապութիւն»[1], - «Մշակին» ուղարկված թղթակցության մեջ գրում էին Վանից:

Իսկ «Արեւելք» թերթում տպագրված, Տարոնից ստացված նամակի հեղինակը գրում էր.

«Ալ ասկէ վերջ, երբ ազատութեան նոր շրջան մը կը սկսի մեզի համար, յոյս ունինք թէ չնորհիւ Սահմանադրական ռեժիմին, Տարօնոյ աշխարհը տակաւ ազատուելով ներքին թուրք եւ քիւրտ պէյերու, աղաներու եւ ցեղապետներու երկաթէ լուծէն, պիտի թեւակոխէ քաղաքակրթութեան շաւիղին մէջ եւ իր բնական հարստութիւններու շահագործումովն Օսմանեան կայսրութեան մէկ գոհարը պիտի դառնայ»[2]:

Քրդական հարստահարումների մասին բողոքները, աղերսանքներն ու պահանջները հայաբնակ գավառներից Կ. Պոլիս էին թափվում անընդհատ հոսանքով: Պատրիարքարանը հեռագրեր ու խնդրագրեր էր ստանում, իսկ հայկական թերթերը հատուկ բաժիններ ունեին, որտեղ մեկիկ-մեկիկ արձանագրվում էին հարստահարումների ցավալի փաստերը: Հետևապես դուր էր ՀՅ դաշնակցության Կ. Պոլսի պատասխանատու մարմինն իր հերթական շրջաբերական-նամակում կուսակցական կազմակերպություններին հանձնարարում. «... 8) Պրոպագանտ ընել քիւրտերու մէջ, ամէն կարելի միջոցներով, հասկցնելու համար անոնց՝ սահմանադրական կարգերու հանրաչահ նպատակը եւ մեծ օգուտները»[3]:

Ակնհայտ է, որ Հայաստանի հայոց խնդիրը խաղաղորեն գոհացուցիչ լուծում չէր կարող գտնել, մինչև որ քրդերի ելուզակային և ավազակաբարո արարքների առաջը չառնվեր միանգամ ընդմիշտ, այսինքն՝ մինչև որ չհաստատվեր այնպիսի անխախտ դրություն, որի պայմաններում քրդերը հասկանային և ըմբռնեին, որ այլևս անհնարին է հային կողոպտել, կեղեքել ու հարստահարել և անպատիժ մնալ:

---

[1] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 39, վավ. 65[956], թ. 5 (թերթի կտրոն):*

[2] *Նույն տեղում, թ. 7 (թերթի կտրոն):*

[3] *ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 354, թ. 2:*

Առանց դրա՝ հայկական գավառներում տեղի ունեցող հարստահարումներին վերջ տալն անհնար էր: Հայկական խնդիրը ծնունդ չէր առել Կ. Պոլսի, Իզմիրի և ընդհանրապես Հայաստանից դուրս բնակվող հայերի կացությունից, քանի որ նրանց գլխի վերև քուրդ չկար: Հիմա էլ, սահմանադրական կառավարության օրոք, եթե նույնիսկ Հայաստանից դուրս ապրող հայերը հանգիստ ու անդորրություն գտնեին, դարձյալ հայոց խնդիրը չէր լուծվի: Առաջին հերթին անհրաժեշտ էր, որ հենց Հայաստանի հայերն ունենային կյանքի, գույքի, պատվի ապահովության անբռնաբարելի իրավունք:

Միանգամայն իրավացի էին այն հայ գործիչները, որոնք գտնում էին, որ քրդերի հարստահարմանը վերջ դնելու դարմանը կարծածի չափ անհնար չէ: Դրան հավատացողները գտնում էին, որ պետք է համբերությամբ սպասել, մինչև որ քիչ թե շատ քաղաքակրթվեն: Մատթեոս արք. Իզմիրլյանն աքսորից վերադառնալուց հետո, դեռ 1908 թ. օգոստոսին ասել էր. «Թուրքահայերին մեծ անհանգստութիւն են պատճառում քրդերը: Դա մի վայրենի ցեղ է: Թէեւ նրանում էլ կան սահմանադրական ոգով տոգորուած մարդիկ, բայց եւ այնպէս հարկաւոր է համբերութիւն ունենալ ու սպասել, մինչեւ որ բոլոր քրդերը կարողանան գնահատել նոր կազմի (Իթթիհադի իշխանության:– Հ. Ս.) բարքերը»[1]:

Քուրդ ցեղը դարեր ի վեր ապրում էր ավատապետական դրության մեջ, ունենալով իր ցեղապետերը: Քուրդ ռայան հնազանդված էր նրանց: Արդ, ինչպես ցույց է տրված սույն աշխատության համապատասխան էջերում, բավական էր սանձել ցեղապետերին, որպեսզի սանձվեին նաև մնացածները: Մանավանդ իրողություն էր, որ այդ մնացածներն իրենց ցեղապետերերի ձեռքին ավելի չատ ակամա գործիք էին, քան կամավոր արբանյակներ: Ավելին, նույնիսկ քիչ չէին այնպիսիները, որոնք մինչև վերջ զզված իրենց տերերից, փափագում էին նրանց ծառայելու պարտադրանքից ազատվել:

---

[1] ***«Մշակ»***, *№ 217, 3 հոկտեմբերի 1908 թ.:*

Ինչպես իր տեղում նշել ենք, քուրդ ցեղը շատ սուր բնազդ ունի՝ շատ շուտ կռահում է օրվա տրամադրությունները: Ուստի Հուրրիեթի օրերին եթե տեսներ, որ կուսակալը կամ կառավարիչը, կամ մի խոսքով՝ կառավարությունը դեմ է հարստահարիչ արարքների, ըստ այդմ կփոխեր իր գործողությունների ընթացքը: Իսկ երբ քուրդը նշմարում էր իշխանությունների հակառակ տրամադրությունը, ապա հետևում էր հենց այդ ուղղությանը: Այդ էր պատճառը, որ Հայաստանում մի տեղ հայերի հարստահարումները անտանելի չափեր էին ընդունում, մի ուրիշ տեղ՝ քիչ, իսկ առանձին դեպքերում հայը նույնիսկ ազատ էր քրդի բռնություններից: Քրդերի տրամադրությունները մակընթացության ու տեղատվության նման բարձրանում և իջնում էին՝ կուսակալների և կառավարիչների տրամադրությունների ու հոգեկան վիճակի համեմատ[1]:

Սահմանադրությունից հետո նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ցեղապետերին սանձելու և քուրդ տարրը հանդարտ պահելու համար: Բայց Իթթիհադը ոչ միայն չէր մտածում այդ հնարավորությունն իրականություն դարձնելու մասին, այլև անում էր ամեն ինչ լիովին սանձազերծելու քրդերի ավերիչ բնազդները: Հենց դա էր գլխավոր պատճառը, որ Հայաստանում շարունակվում էին քրդական սոսկալի հարստահարումները:

Իթթիհադի գնալով ուժեղացող հակահայկական քաղաքականության անմիջական հետևանքն էին Հայաստանում շարունակվող **տնտեսական փլուզումն ու տևական սովը**:

Ամեն կողմ նույն ողբալի տեսարաններն էին, բայց աղետը ահռելի էր մանավանդ Մշո, Սասունի, Վանի, Զեյթունի, Հաճընի, Ալբիստանի, Զմշկածագի, Խնուսի, Տիվրիկի և Ակնի գյուղերում:

«...Այսօրուան օրս հայ ժողովուրդը գաւառներուն մէջ իր անօթութիւնը կը պոռայ մեր երեսին»[2],- գրում էր «Արեւելեան մամուլը»:

Տուն-տեղ լքելով՝ մարդիկ փախչում էին: Զմռան խստաշունչ եղանակին դեռատի աղջիկներ և մանկամարդ կանայք, մանկիկ-

---

[1] Տե՛ս **«Արեւելք»**, № 6894, 8 սեպտեմբերի 1908 թ.:

[2] **«Արեւելեան մամուլ»**, № 52, 22 դեկտեմբերի 1908 թ.:

ներին իրենց գիրկն առած, հազիվ ծածկելով իրենց մերկութիւնը, թափառում էին լեռ ու ձոր՝ որևէ ուտելիք գտնելու համար: Մարտյան ձնհալից հետո տեղ-տեղ երևացող կանաչի արմատները նրանց հիմնական սնունդն էին:

Ահա՛ մի քանի հատվածներ Հայաստանի տարբեր վայրերից Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում ստացված նամակներից.

Երզնկայի առաջնորդ Երվանդ վրդ. Փերտահճյանը գրում էր. «Վիճակիս մէջ սովը այս տարի ալ կը շարունակէ իւր աւերիչ ընթացքը: Աղքատ ժողովուրդը երեք տարիէ ի վեր կը ծախէ իւր կահ կարասիք եւ իւր տունը ալ բան մը չէ մնացած: Մարդիկ ո՛չ ուտելիք ունին եւ ո՛չ ցանելիք: Ասոնք ամիսէ մը սովամահ, կորուսելու վտանգին ենթարկուած պիտի ըլլան»[1]:

Կյուրինից տեղեկացնում էին. «Քաղաքիս թշուառ կարօտեալները դժնդակ ձմրան եւ տիրող անողոք սղութեան հանդէպ սարսուռ կը զգան, քանի որ մահուան ուրուականը ցցուած է անոնց առջեւ»[2]:

Մալաթիայից հայտնում էին. «Սրտաճմլիկ տեսարանները կը բազմապատկուին: Անօթի ու չքաւոր թշուառները առաջնորդարան կը դիմեն, բայց սա անկարող է որեւէ բան ընել»[3]:

Ակնից.- Ակնի առաջնորդական փոխանորդ Պետրոս քահանա Գասյանը տագնապ էր բարձրացնում, թե «առաջնորդարանս դուռը ափ առնող հարիւրաւոր սոված, հիւանդ, լքուած թշուառներու շատէն քիչ դարման մը փութացնել չհաճիր, զուրկ ըլլալով տեղական որեւէ միջոցէ: Ամէն ժամ ականատես ենք սիրտ բզքտող տեսարաններու...»[4]:

Զեյթունի առաջնորդական տեղապահ Վաղարշակ վրդ. Արշակունին տեղեկացնում էր, որ ավանում 506 հոգի սովից ուժասպառ անկողին են ընկել: Նրանց բոլորին դանդաղ մահ է սպառնում: «Սովը սարսափելի է. ոտքի վրայ գտնուողներու աղաղակներուն սիրտ չի դիմանար»[5]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 14:

[2] Նույն տեղում, թ. 14-ի շրջերեսը:

[3] Նույն տեղում, թ. 15:

[4] Նույն տեղում, թ. 15 և շրջերեսը:

[5] Նույն տեղում, թ. 15-ի շրջերեսը:

Սեբաստիայից. *– «Ժողովուրդը օրերով նօթի անցը[ինել ստիպուած է: Մարդիկ խումբ-խումբ դրացի գիւղեր սկսած են թափառիլ: Ճանապարհներուն ցուրտէն սառողներ ու մոլորողներ գտնուած են: Եթէ ուեւէ օգնութիւն չհասնի՝ անօթութիւնէ մեռնողներ շատ պիտի ըլլան եւ մնացողներուն ձեռքն ալ չպիտի մնայ ո՛չ արտ, ո՛չ տուն, ո՛չ կալ»*[1]*:*

Տիվրիկից. *– «Անօգնական թշուառներ, անպատսպար սովեալներ ու հիւանդներ լեցուն են»*[2]*:*

Լաթաքիայից. *– «Ժողովուրդը նպաստի խոստումներէն հրապուրուելով լատինականութեան (կաթոլիկության:– Հ. Ս.) դիմել որոշած է իր խեղճութեան պատճառաւ»*[3]*:*

Կ. Պոլիս արցունքախառն նամակներ էին հասնում Մշո դաշտից: Նրանցից մեկում ասված էր. «Առաջնորդարանի դրան առջեւ հազարաւոր աղքատներ «Տէ՛ր հայր, անօթի մեռանք» աղեխարշ ձայներ կը բարձրացնեն»»[4]*:*

Մշո առաջնորդարանից Կ. Պոլսի պատրիարքարան ուղարկված մի աղերսագրում կարդում ենք. «Մտէ՛ք պահ մը սա աւերակ երկրին մէջ. տեսէ՛ք ազատութիւն վայելելու բան մը կա՞յ թէ՞ ոչ: Լրագիրներ ազատութիւն կը պոռան, ամէն կողմէ հրճուական ձայներ կը լսուին, բայց այստեղ անօթութիւնը իբրեւ կերակուր է եւ մերկութիւնը՝ իբրեւ չապիկ...»[5]*:*

«Անօթութիւնը իբրեւ կերակուր եւ մերկութիւնը իբրեւ չապիկ» – թշվառության այս անհուն ու արտասվահեղձ բառերը Հայաստանի ողբալի վիճակի խորհրդանշանն էին: Ո՞ր հայի սիրտը չէր ճմլի թշվառության այդ աղիողորմ կոծը, որ հարյուր հազարավոր դողդոջուն ու կծկված չրթունքներ աղաղակում էին Հայաստանում:

Համատարած սովից տանջվող թուրքահայ գյուղացիության նորանոր զանգվածներ, հատկապես Խարբերդից, Բաղեշից, Մու-

---

[1] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1202, թ. 15-ի շրջերեսը:*

[2] *Նույն տեղում, թ. 16:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85², թղթ. 44, վավ. 65²²⁶⁴, թ. 2:*

[5] *Նույն տեղում, թ. 8:*

չից, Վանից, Կարինից, գաղթում էին Կ. Պոլիս, Կովկաս, Եգիպտոս, Կիպրոս և այլուր՝ մինչև հեռավոր Ամերիկաներ:

Թուրքահայոց սովյալներին չուտափույթ օգնելու նպատակով դեռ Կ. Պոլսի պատրիարքական աթոռին գտնվող, ընտրյալ կաթողիկոս Մատթեոս արք. Իզմիրլյանը 1908 թ. վերջավորությանը հանդես էր եկել Թուրքիայի և արտասահմանի հայությանն ուղղված կոչով, ուր ասված էր, թե Հայաստանի զանազան գավառներում և Կիլիկիայի այլևայլ կողմերում ժողովրդական կարիքները հասել են ծայրագույն աստիճանի և համատարած սովն սկսել է նախճիրներ գործել ընկճված ու ջախջախված ժողովրդի մեջ, մանավանդ ձմռան սաստկաչունչ եղանակին: Ամեն օր Կ. Պոլիս են հասնում սովյալ բազմությունների օգնության աղաղակները, ողբագին կոծերը, սարսռեցուցիչ լուրերը, որոնք հարյուրավոր ու հազարավոր կյանքերի կորուստն են գուժում:

Պատրիարքը տեղյակ էր պահում, որ թեպետ ազգային պատրիարքարանը նպաստից հանձնաժողովի խողովակով ամեն միջոց ձեռք է առել մի դարման անելու ու թեև ողորմասեր ժողովուրդն անտարբեր չէ աղետի նկատմամբ և սիրահոժար կերպով իր նպաստն է բերում օգնության գործին, բայց արածը բավական չէ մեղմելու ահավոր աղետի չարիքը, որը մեծ թվով կյանքերի գոյությանն է սպառնում: Ընտրյալ Ամենայն հայոց կաթողիկոսն ահազանգում էր. «Իբրեւ հայր հասարակաց կը փութամ պարզել կացութիւնը մեր բարեպաշտ ժողովրդեան, եւ այս կոչը կ՚ուղղեմ անոր ամէն դասակարգի անդամոց անխտիր, խնդրելով, որ ամէն ոք՝ վաճառական թէ խանութպան, արհեստաւոր թէ մշակ՝ իր զգացմանց ու կարողութեան չափով բերէ ընծայէ մեզ իր ձեռնտուութիւնը՝ իր օգնութեան լուման, որ սահմանուած է կեանքեր խլելու թշուառութեան ու մահուան ճիրաններէն եւ դիմագրաւ կենալու մեծ աղէտին»:

Մատթեոս Իզմիրլյանը չէր կորցնում հավատը, որ իր կոչը հասնելու է նպատակին: «Յուսալից եմք,- գրում էր նա,- որ մեր սիրեցեալ եւ պատուական ժողովուրդը՝ որ ի Տաճկաստան, ի Ռուսիա, ի Հնդիկս, ի Պարսկաստան, յԱմերիկա եւ յԵւրոպա եւ յայլուր, կշռելով աղէտին մեծութիւնը, անոր անդարմանելի հե-

տեւանքները եւ մեր վրայ ծանրացող պարտականութիւնը՝ յօժարական սիրով պիտի պատասխանէ մեր կոչին եւ գործնապէս ցոյց տայ այն գորովալից սէրն ու համակրանքը, զորս կ՚ընծայէ մեծապէս առ ի տառապեալ եւ օրհասական համարիւն եղբայրներն եւ առ ազգն համօրէն»[1]:

Իզմիրլեանի կոչը լայն արձագանք գտաւ առաջին հերթին արտասահմանում, հատկապես Ամերիկայի ու Եգիպտոսի հայկական գաղութներում:

Թուրքահայոց տառապանքը մեղմելու նպատակով ռուսահայոց շրջանում անցկացված նախորդ հանգանակութիւններից դժգոհ Համբարձում Առաքելյանը «Մշակում» տագնապ էր հնչեցնում.

«Մի՞թէ Իզմիրլեանի հայրապետական աղեխարշ կոչը եւս արձագանք չպիտի գտնէր հայերի սրտերում,- հարցնում էր «Մշակը» և իր հերթին սրտառուչ կոչ հղում. «Թող շարժուեն Թիֆլիսը, Բաքուն, հայ գաղութները՝ Նոր Նախիջեւանի, Մոսկուայի, Աստրախանի. թո՛ղ եռանդուն ոյժերը հանգանակութեան գործի գլուխ անցնեն եւ կոպեկներ, ռուբլիներ տեղացնեն Հանգանակիչ Մասնաժողովին, որ սա եւս յանուն Ռուսաստանի բովանդակ հայութեան կարողանայ արժանավայել կերպով պատասխանել Իզմիրլեան պատրիարքի կոչին:

Շտապեցէ՛ք կուշտեր. ձեր եղբայրները այնտեղ՝ Հայաստանում, Զէյթունում սովից մեռնում են, տանջւում սովալլուկ:

Շտապեցէ՛ք, սթափուեցէ՛ք մի րոպէ ձեր առօրեայ հոգսերից, թա՛փ տուէք ձեր զգացմունքները, բացէ՛ք ձեր կարեկից սրտերը»»[2]:

Այսպիսի պարագաներում, Ալեքսանդր Մելիք-Ազարյանի նախագահութեամբ դեռևս 1907 թ. Թիֆլիսում ստեղծված հանգանակիչ մասնախումբը, որն Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի կոնդակով հաստատված և ամբողջ Ռուսական կայսրության մեջ միակ պաշտոնապես ճանաչված ու վավերացված հանգանակիչ մարմինն էր, բարոյական սեպուհ

---

[1] ***«Արարատ»,*** *№ 12, դեկտեմբեր, 1908, էջ 1146-1147:*

[2] ***«Մշակ»****, № 276, 14 դեկտեմբերի 1908 թ.:*

պարտականությամբ, կոչ ուղղեց Ռուսաց կայսրության հայկական գաղութներին՝ փութալ եղբայրական ու մարդասիրական օգնությամբ, գոնե ժամանակավորապես, ամոքելու Հայաստանի թշվառ, տառապյալ ու սովատանջ ժողովրդի ցավերը, մինչև որ նա կկարողանա բարվոքել իր քայքայված տնտեսական դրությունը[1]:

Ամենուրեք՝ թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում, կազմակերպվեցին հանգանակություններ, բայց հավաքված միջոցները, որքան էլ զգալի էին, չէին կարող բալասան լինել թուրքահայության ծով վերքերին:

Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը քննելով ողջ Հայաստանում թևածող սովի հարցը, կազմեց մի պատգամավորություն, որը ժողովի ընդունած բանաձևով պետք է ներկայանար մեծ վեզիրին, բողոքեր ստեղծված վիճակից և պահանջեր անտանելի դրությունից դուրս գալու համար միջոցներ ձեռնարկել: Բանաձևը հասավ Բարձր Դուռ, բայց այնպես էլ մնաց անպատասխան:

Դա պատահական չէր, քանի որ Իթթիհադն արդեն հստակորեն որոշել էր հայության նկատմամբ ձեռնարկվելիք իր հետագա քայլերը: Նրան այլևս պետք չէր գառան մորթի հագնել:

Այս պայմաններում, Դաշնակցությունը քննադատության էր ենթարկվում հայկական հասարակության տարբեր կողմերից. ինչո՞ւ Դաշնակցությունը ուժ տվեց երիտթուրքերի կուսակցությանը, ինչո՞ւ Եվրոպայում աջակցում էր նրան՝ ստեղծելու կապեր ու ծանոթություններ, ինչո՞ւ նպաստեց նրանց ընդհատակյա գործունեությանը երկրում, ինչո՞ւ, վերջապես, պատսպարեց Թալեաթին և նրա ընկերներին Աբդուլ Համիդի հալածանքների օրերին, ինչու ստույգ մահից ազատեց նրանց, ովքեր հիմա պատուհաս են դարձել հայոց գլխին:

Այս ամենը մեծապես անհանգստացնում էր նույնիսկ Դաշնակցության ոչ քիչ թվով նշանավոր գործիչների, ինչպիսիք էին, օրինակ, Ռուբեն Տեր-Մինասյանը կամ Վանա Իշխանը: Նրանք և նրանց պես մտածող դաշնակցականները հենց սկզբից ձգտում

---

[1] ***«Մշակ»***, *№ 261, 25 նոյեմբերի 1908 թ.:*

էին պարզել, թե ովքե՞ր են Թուրքիայի նոր իշխանավորները, ի՞նչ նպատակներ են հետապնդում, որո՞նք են երիտթուրքական «հեղափոխության» էությունն ու բնույթը, հայությունն ի՞նչ սպասելիքներ կարող է ունենալ այդ «հեղափոխությունից»:

Երիտթուրքական հեղաշրջման արդյունքներին անդրադառնալով՝ Ռուբենը համոզված ասում էր, որ հենց սկզբից հայերի խենթառատ ոգևորությունը և փայփայած ցնորական երազները որևէ հիմք չունեին, ուստի շատ չուտով դրանք տեղի տվեցին հիասթափության և, ի վերջո, հօդս ցնդեցին: Նա հարց էր տալիս. «Մի՞թե մեր տառապալից պայքարի նպատակն այս է եղել»: Եվ նա իր առաջադրած հարցին պատասխանում էր. հին կարգերը բացարձակ չարիք էին, և հայ հեղափոխականները դրանց դեմ կռվում էին խորապես համոզված իրենց պայքարի ճշմարտացիության մեջ: Բայց «հին ռէժիմին գոնէ գիտէինք՝ ո՛րն է չարիքը, ո՛րը բարիքը եւ հանգիստ կը մեռնէինք: Սահմանադրութիւն եղաւ, բարիքն ու չարիքը իրար խառնուան եւ քալաճոչ* եղաւ. ո՛չ բարիքն է յայտնի, ո՛չ չարիքը. չունը՝ գաւազանն առած հովիւ է դառած. հովիւը գաւազանը ձգած՝ չուն է դառած»[1]: Մի այլ առիթով նա ասում էր. «Գիտենք, որ անոնք (իթթիհադականները:- Հ. Ս.) աղբ են, չարիք են, այս ալ նոյնն է (համեմատած աբդուլհամիդյան կարգերի հետ:- Հ. Ս.), բայց մեղրով օծուած: Խաբկանքի մեջ ենք: Այս բոլորը կ՚ըսեմ անոր համար, որ եկած է լաւ առիթը՝ պատռելու կեղծիքի քօղը, սահմանադրութեան ի՞նչ լինելը հասկանալու»[2]:

Այո՛, բան չէր փոխվել:

«Արեւելքի» խմբագրապետ Երվանդ Սրմաքեշխանլյանը «Հորիզոնը կը մռայլի» հոդվածում գրում էր, որ հեղաշրջումից հետո եկած 6-7 ամիսներին հայությունը շարունակ օրորվում էր երկրում համերաշխություն ստեղծելու երազներով, բայց «համերաշխութիւնը ո՞վ է հասկցողը. տաճի՞կը՝ ջարդելու, կոտորե-

---

* Վանեցիների կերակրատեսակ՝ պատրաստված բանջարեղենի զանազան տեսակներից:

[1] **«Արամը»**, էջ 417:

[2] Նույն տեղում:

լու, թափելու վարժուած տաճի՞կը, թէ՞ թալանի ու սպանութեան վարժուած քիւրտը»[1]:

1908 թ. հուլիսյան երիտթուրքական հեղափոխությունը, ջերմորեն ողջունած Արշակ Չոպանյանը հիմա, 1909 թ. գարնանը, խորին անհուսությամբ գրում էր.

«Խանդավառութիւնը զոր ունեցանք Սահմանադրութեան շնորհիւ երջանիկ օրերու ակնկալութեամբ, պսակուեցաւ չարաչար յուսախաբութեամբ, որ միշտ մեր բաժինն է, որչափ ատեն որ ամէն խօսքի խաբուելու միամտութիւնը ունենանք: Պէտք է դիտել, թէ այժմ նոյն իսկ բողոքելու իրաւունքը կը զլանան մեզի եւ կ'ուզեն որ անտրտունջ կրենք ամէն հարուած, որքան որ ալ անիկա անհանդուրժելի ըլլայ»[2]:

Վայրենի տրամադրությունը միայն իսլամ տգետ խուժանին չէր համակել, այլև «լուսամիտ» իսլամ դասակարգին, համարյա ամբողջ թուրքական մամուլին:

Թուրքական մամո՞ւլ: Նա էր բուն վերքը: Այնտեղ էր բո՛ւն մոլեռանդությունը, բո՛ւն իսկական հնոցը ատելության, օտարատյացության: Բացառությամբ Կ. Պոլսում լույս տեսնող ուղղամիտ ու ճշմարտացի «Ստամբուլ» թերթի, թուրքական մամուլի բոլոր օրգանները, հատկապես մայրաքաղաքի «Իկդամը», և «Paris Journal»-ը, Իզմիրի «Քեոյլի» («Գյուղացի») թերթը թշնամական հարձակումներ էին գործում հայության վրա, թուրքական հասարակությանը գրգռում նրա դեմ:

Անդրադառնալով երիտթուրքերի հեղափոխությունից հետո եկած առաջին չաբաթների «հիմարական խանդավառությանը», «անփոփոխ տղայամտությանը», «թուրքերի դյուրազգացության» պայմաններում նրանց «փափկանկատության բացակայությանը», ռամկավար գործիչ Միքայել Նաթանյանը նկատում էր. «Թիւրքիոյ ազատութեան այս կարճ շրջանին մէջ մեր պարզած տեսարանը, ինչպէս անկէ առաջ արտասահմանի մէջ գործող մեր երիտասարդութեան ինկած վիճակը՝ անգամ մըն ալ

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 6999, 13 հունվարի 1908 թ.:*

[2] *Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի արխիվ, մատյան 85³, թղթ. 49, վավ. 3139, թ. 1:*

ցոյց կու տան, որ հակառակ մենք մեզի ընծայած բարձր յատկութիւններու, դեռ շատ խակ ենք, զուրկ քաղաքական իմաստութենէ եւ քաղաքացիական առաքինութիւններէ, սկսեալ մեր Ազգ. պատրիարքարանէն մինչեւ մեր հասարակ ժողովուրդը, ամենակարող գործիչներէն մինչեւ ամենախոնարհ... զինուորը: Եւ մեծերն ու ղեկավարները՝ ամէնէն աւելի»[1]:

Ժողովրդի «խակ լինելու», նրա միամտության համար Նաթանյանը մեղադրում էր մտավորականությանը, որն ինքն էլ ցնծության մեջ ընկած լինելով, ի վիճակի չէր եղել ժամանակին ազգակիցներին բացատրելու, որ անհրաժեշտ է համբերությամբ սպասել, թե իրականում ի՞նչ է սահմանադրությունը և ի՞նչ արժեք ունեն երիտթուրք պարագլուխների խոստումները: Շարունակելով իր խորհրդածությունները, նա գրում էր.

«Ինչպէ՞ս մարդեցինք մեր բնիկ, դեռ երէկ բռնապետութեան երկաթահիւս ցանցին տակ կքող, անբանացած, տգէտ եւ ոչխարի միտքով – եւ միսով ալ, աւա՜ղ – հասարակութիւնը, որուն աչքը – հապա ուղե՞ղը – տարիներու, ըսէք դարերու՝ ստրկական թանձր մութին մէջ վարժուած, յանկարծական՝ թէպէտ դեռ անուանական՝ ազատութեան մը ծակծկիչ լոյսէն կուրնալով, ուրախութենէն խելացնոր, կայտռել, ցատկել եւ թռիլ կ'ուզէր, առանց իր տկար, թմրած եւ չղթաներէն վիրաւոր ոտքերուն թուլութիւնը նկատի առնելու, առանց քայլերուն առջեւ դեռ չի գոցուած վիհերը եւ քթին դէմ ցցուած սուր արգելքները մտաբերելու»[2]:

Իր հերթին, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության նշանավոր առաջնորդներից Վահան Թեքեյանը ժողովրդին քաղցր հեքիաթներով քնացնելու, նրա զգոնությունը բթացնելու հիմնական պատասխանատուներ էր համարում հայկական ազգային հեղափոխական երկու կուսակցություններին: Փոխանակ իրենց շուրջը տեղի ունեցող գործընթացները խորապես վերլուծելու և լրջախոհ եզրահանգումներ կատարելու, նրանք ի վիճա-

---

[1] ***«Շիրակ»**, № 21, 27 հունիսի 1909, էջ 449:*

[2] *Նույն տեղում, էջ 450: Մեջբերված հատվածի իմաստային անհարթությունը բնագրային է:*

կի չեղան վեր բարձրանալու օսմանյան սահմանադրության հռչակած, բայց իրականում գոյություն չունեցող «ազատությունների» փայլից կուրացած ամբոխի մակարդակից: Անմիտ ու անպտուղ լավատեսության մեջ մխրճվելով նրանք տեղին թե անտեղի չեփորում էին սահմանադրությունը, ցուցահանդեսի պես Իթթիհադի առջև բացում իրենց ներքին կյանքը, միամտորեն հրապարակ հանում արածն ու չարածը, ունեցածն ու չունեցածը, մոռանալով, որ իրենք քաղաքական կազմակերպություններ են՝ կոչված անվտանգ ուղիներ ցույց տալու նախկինում աբդուլհամիդյան բռնապետության տակ ճզմված և այժմ երիտթուրքական «ազատության» մեջ չվարած տարաբախտ ժողովրդին[1]:

1909 թ. հունվարի կեսերից իթթիհադական իշխանություններն ուժեղացրին ճնշումները հայկական ազգային կուսակցությունների վրա՝ մի քանի աչքի ընկնող գործիչների ձերբակալելով: Բանը հասավ նրան, որ երիտթուրքերը ձերբակալություններ սկսեցին նաև իրենց դաշնակից հայտարարված Դաշնակցության շարքերում: Դաշնակցականների ձերբակալություններ եղան ոչ միայն Պոլսում, այլև գավառներում:

Օրինակ՝ հունվարի 19-ին Տրապիզոնում ձերբակալվեց դաշնակցական Զուլալը: Կ. Պոլսի «Ժամանակը» գրում էր, որ «ոստիկանութիւնը բռնի ուժով անոր վրայ խուզարկութիւն կատարելով երեւան հանեց Դաշնակցութեան պաշտօնական վկայականը, նամակներ եւն.»[2]: Զուլալը քաղաքի գլխավոր բանտը նետվեց: Թերթը տեղեկացնում էր. «Հարցաքննութեան ժամանակ ոստիկանութիւնը ծանրացած է բանտարկեալի գործակիցներուն բացայայտելու խնդրին վրայ: Իշխանութիւնն այժմ կը փնտրէ դաշնակցական գործիչներ Սիւնիին եւ Մալխասին. երաժշտագէտ Սիւնի ստիպուած եղաւ իր տալիք կօնցերթը յետաձգել»[3]: Պարբերականը նաև տեղեկացնում էր, թե որոշ ժամանակից ի վեր իշխանություններն սկսել են «հետամուտ ըլլալ

---

[1] Տե՛ս **«Շիրակ»**, № 21, 27 հունիսի 1909, էջ 450:

[2] **«Ժամանակ»**, № 90, 30 հունվարի 1909 թ.:

[3] Նույն տեղում:

դաշնակցական յայտնի գործիչներուն», լրտեսում են «անոնց քայլերը եւ անոնց մասին կը հաւաքեն տեղեկութիւն»[1]:

Այս պայմաններում, 1909 թ. գարնանը նորից բարձրացավ հայկական ազգային չորս կուսակցությունների միավորման և մեկ միասնական ուժեղ կուսակցություն ստեղծելու հարցը: Առողջ բանականությունը թելադրում էր, որ հենց դա է ազգային ինքնապաշտպանության, այսինքն՝ տվյալ պահին ազգի ֆիզիկական գոյության պահպանման հրամայականը, որն ամենից առաջ ենթադրում էր գոնե առժամապես նրանց մեջ խլացնել կատաղի հակառակության, միմյանց բզկտելու ոգին:

Գաղափարը կարծես սկսում էր ուրվագծվել և ընդգրկել կուսակցությունների մտավորական շերտերի որոշ մասին: Բերենք մի օրինակ միայն: Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության հիմնադիրներից Վահան Մալեզյանն իր բարեկամներից մեկին 1909 թ. մարտի 15 (28)-ին գրած նամակում ուրախությամբ հաղորդում էր, որ հին Հնչակի Փոքր Հայքի շրջանի մասնաճյուղի ղեկավարությունը կոչ-խնդրանքով դիմել է կուսակցության կենտրոնին՝ նեցուկ կանգնել հայկական կուսակցությունների միավորման խնդրին[2]:

Տրամագծորեն հակառակ գաղափարախոսություններ ունեցող կուսակցությունները միավորելու ջանքերը չէին կարող դրական արդյունքի չհասցնել: Դրանում համոզված հայ քաղաքական գործիչները, այդ թվում նորաստեղծ ՀՍՌԿ հիմնադիրները միանգամայն տրամաբանական էին համարում միավորումը գոնե երկու հայկական հեղափոխական կուսակցությունների՝ Հնչակի ու Դաշնակցության, որոնց դավանած գաղափարներն առանձին կողմերով նույնիսկ նույնանում էին:

Նշված երկու կուսակցությունների միավորմանն ուղղված նախաձեռնությունները հատկապես գալիս էին Հնչակյան տեղական կազմակերպություններից: Օրինակ՝ 1909 թ. մարտի վերջերին Մալաթիայի Հնչակյան կազմակերպությունը Ժիրայր,

---

[1] **«Ժամանակ»,** № 90, 30 Հունվարի 1909 թ.:

[2] ԳԱԹ, Վահան Մալեզյանի ֆոնդ, թղթ. 340, թ. 9:

Շավարշ և Գուրգեն ստորագրություններով հրավեր ուղարկեց Արևմտահայաստանի բոլոր հնչակյաններին՝ եռանդուն ջանքեր գործադրել ՀՅ դաշնակցության հետ միավորելու և երկու կուսակցությունների կչիռները համատեղելու համար: Բայց այս կոչը նույնպես արձագանք չգտավ Դաշնակցության կողմից[1]:

1909 թ. առաջին երեք ամիսները ժամանակի այն հատվածն էր, երբ Իթթիհադը թուրքահայությանը ցցուն ցույց տվեց իր ժանիքները: Դրանք փտած չէին, ինչպես սուլթան Աբդուլ Համիդինը, այլ ամուր էին, սուր:

Հայությունը կատարյալ հիասթափություն էր ապրում. մոայլված էր նրա կյանքի հորիզոնը, հեղափոխության առաջին օրերի մանկական ուրախությունը թրջված էր արցունքի կաթիլներով, փչրված էին թևածող խանդավառ հույսերը: «Ի՞նչ է լինելու վաղը» հարցի պատասխանը որևէ մեկը չգիտեր:

ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Հուլիսյան խաղաղ, անարյուն հեղափոխությունից հետո եկած ութ ամիսների ընթացքում Թուրքիայի և արտասահմանի բոլոր ուշիմ հրապարակագիրները հանրությանը զգուշացնում և միաբանորեն պնդում էին, որ Օսմանյան կայսրությունում խմորվելու դեռ շատ նյութ կա, քանի որ երկրում տեղի ունեցող «առաջադիմական» գործընթացները շատ մակերեսային լինելով, մուսուլման զանգվածների մեջ բնավ չեն թափանցել: Նրանք համոզված էին, որ քանզի տեղի ունեցած զինվորական ապստամբությունը հենված չի եղել ժողովրդական լայն զանգվածների վրա, ուստի նրանից ծնունդ առած իշխանության ծավալած գործունեությունը շատ վտանգավոր է երկրի առաջընթացի հեռանկարների տեսակետից:

1909 թ. սկզբներից երիտթուրքերի իշխանության դեմ այն-

---

[1] *Տե՛ս* ***«Գարուն»*** *(Կ. Պոլիս), № 16, 4 (17) ապրիլի 1909 թ.:*

քան էր աճել դժգոհությունը, որ չատերը մոտալուտ զինված ելույթներ էին գուշակում:

Իշխանության համար տվյալ ժամանակահատվածում իրական վտանգ էին ներկայացնում երկու ուժեր՝ աբդուլհամիդյան տապալված նախկին բռնապետության կողմնակիցները և Իթթիհադի հետ սուր ընդդիմության մեջ գտնվող Ազատական (Ահրար) կուսակցությունը:

Օսմանյան հեղափոխությունից և միդհատյան սահմանադրության վերահաստատումից անցել էր արդեն մի քանի ամիս, բայց հին օրերի սարսափները չարունակվում էին, թեև ոչ նախկին ծավալներով: Քրիստոնյաների, ի մասնավորի հայերի դեմ տեղի էին ունենում բացահայտ թշնամական ցույցեր, հայկական գավառներում դրությունը նախկինի պես անտանելի էր մնում: Ոգեշնչված դրանից՝ քրդերը կրկին սկսեցին հայերի սպանությունները, արնավուտները (ալբանացիները) կոտորում էին սերբերին, հույն, բուլղար և սերբ հայդուկները մարտի էին ելել բաժան-բաժան անելու Մակեդոնիան:

Արդեն 1909 թ. փետրվարին իրենց թաքստոցներից դուրս էին եկած տապալված նախկին իշխանությունների պարագլուխները, հեղափոխության հետ չհաշտված մուսուլման կղերը, սոֆթաները (աստվածաբանության ուսանողներ), ծառայությունից հեռացած պաշտոնյաները, զորքից արձակված սպաները: Սրանք չէին քաշվում հայտարարություններ անել, թե երիտթուրքերը երկիրը տանում են անծանոթ ու վտանգավոր ուղիներով, ուստի նրանց ճանապարհը պետք է փակել և հին ռեժիմը վերականգնել:

Այդ ամենից պարզ էր դառնում, որ Կարմիր գազանը մեռած չէ, այլ քնած է ձևանում: Նա առերես չարունակում էր իրեն նոր կարգերի կողմնակից համարել, բայց ներքուստ մեքենայություններ էր լարում սահմանադրությունը տապալելու համար:

Նոր իշխանությունների հակառակորդ մյուս ուժը Ահրար կուսակցությունն էր, որն անհաշտ թշնամության մեջ էր Իթթիհադ վե Թերաքքը (Միություն և առաջադիմություն) կուսակցության հետ: Ահրարը, իբրև Իթթիհադի հակառակորդ, կազմվել էր սահմանադրության հռչակումից հետո և անմիջապես իր

հաստատուն տեղն էր նվաճել երկրի քաղաքական կյանքում: Նրանից առաջ, ինչպես ցույց ենք տվել վերը, Իթթիհադի դեմ պայքարող հիմնական ուժը Սաբահէդդինի Ապակենտրոնացման և անձնական նախաձեռնության կուսակցությունն էր, որը սակայն, չկարողացավ դիմանալ իթթիհադ կուսակցության հետ մրցակցությանը և արագորեն անցավ քաղաքական դաշտի վերջին շարքերը: Այնպես որ հակասահմանադրական հեղաշրջմանը նախորդող 4-5 ամիսներին Իթթիհադի միակ իրական քաղաքական հակառակորդը Ահրարն էր, որի կազմում մեծ թվով արաբներ, հայեր, ալբանացիներ կային:

Իթթիհադականների նկատմամբ ատելությունը հող էր ստեղծել միապետականների և ահրարականների անբնական համագործակցության համար:

Աբդուլ Համիդի համախոհներն ուժգին քարոզչություն սկսեցին Կ. Պոլսի զինվորական մասերի և բնակչության շրջանում: Հետաղիմականների կազմակերպած «Մուսուլմանական լիգան» 1909 թ. մարտի վերջերին Այա-Սոֆիա մզկիթի հրապարակում կազմակերպեց մեծ հանրահավաք, որի ընթացքում սոֆթաները երիտթուրքական կառավարությունը տապալելու կոչեր էին հնչեցնում[1]:

Թեև սուլթան Աբդուլ Համիդը քաջ գիտակցում էր, որ գահակալի իր միանձնյա բռնակալության վերահաստատման մտահղացումը հղի է իր համար մեծ վտանգներով, բայց գնաց բախտախնդրության, քանզի մտածում էր, որ երկրում իր կողմնակիցների թիվը պակաս չէ երիտթուրքերի կողմնակիցներից: Այդ տեսակետից նա չէր սխալվում, քանի որ, ինչպես վերն ասվեց, Փոքր Ասիայում հին կարգերն ունեին մեծ թվով կողմնակիցներ, որոնք ձգտում էին ամեն ինչ անփոփոխ թողնել: Դրանք նախկին պաշտոնյաներ էին՝ զրկված կաշառք ստանալու հնարավորությունից, կալվածատերեր, որոնք մտածում էին չլինի թե գլուխ բարձրացնի հլու-հնազանդ ռայան, ավազակաբարո քրդեր, որոնք վախ ունեին, թե նոր իշխանությունները հանկարծ կարող են իրենց պատժել հայերին անարգել կողոպտելու, ստո-

---

[1] Տե՛ս **"Краткая история Турции"**, *Госиздат политической литературы, Москва, 1948, с. 129.*

բացնելու, սպանելու և անպատիժ մնալու համար, չարիաթն ամբողջ ծավալով վերականգնելու համար պայքարի ելած կրոնամոլներ, ինչպես և օսմանյան հասարակության առավել հետամնաց ուրիշ շերտեր:

Հույժ գաղտնի և ամենայն մանրակրկիտությամբ նախապատրաստված հեղաշրջումն անմիջականորեն ղեկավարում էր Աբդուլ Համիդը: Հետադիմության և ոճիրների որջը՝ Ելդիզը, օր ու գիշեր գործում էր տենդագին: Սուլթանի ապավենն էին կրոնավորները, խավարամիտ զինվորներն ու հին պաշտոնյաները: Մշտապես պալատում էին սուլթանի ամենասիրելի որդի՝ թունդ հետադիմական Բուրհանէդդինը, գլխավոր ներքինին, պալատի անձնակազմի ղեկավարը, հին ռեժիմի լրտեսապետերը: Աբդուլ Համիդն ամիսներ շարունակ, հատկապես վերջին չորս ամիսներին, իր ունեցած անձնական գումարներից մեծ ծախսեր էր կատարում բանակը կաշառելու համար: Այնտեղ իր ազդեցությունն ուժեղացնելու գործում նրան մեծապես օժանդակում էին ընդդիմադիր թերթերը, որոնք անդադար գրում էին, թե երիտթուրքերը խաբում են բանակին, քանի որ վատ մուսուլմաններ են: Այդ ամենի հետևանքով սուլթանին հաջողվել էր մայրաքաղաքում իր շուրջը համախմբել կրոնավորները, խավարամիտ զինվորներն ու պատկառելի ուժ ներկայացնող զորք՝ բավական թվով թնդանոթներով[1]: Բացի այդ, իրեն առավել խելահեղորեն նվիրված մարդկանցից նա ստեղծել էր 1500 հոգանոց հրացանավոր գունդ, որի միջոցով հույս ուներ խռովության օրերին չեզոքացնել հնարավոր ժողովրդական ընդդիմությունը մայրաքաղաքում, ինչպես նաև ջարդ ու ավեր սփռել երկրի այլևայլ մասերում:

Ծրագիրը կազմելիս Աբդուլ Համիդը նախատեսել էր նաև հրեշավոր ոճրագործություն: Հեղաշրջման գործողությունը պետք է սկսվեր մայրաքաղաքի կառավարական մի շարք հաստատությունների ռմբակոծումով, որի մեղքն անմիջապես գցվելու էր հայերի վրա և կատարվելու էր նրանց ընդհանուր կոտորած: Այդ նպատակով կազմվել էին հատուկ ջոկատներ, ինչպես

---

[1] *Տե՛ս* ***«The New York Times»****, 26 April 1909.*

նաև համապատասխան հրահանգներ էին տրվել Բերայի և Ղալաթիայի մեծ չինությունների իսլամ դոնապաններին և ուրիշ վստահելի ծառայողների:

Հին Թուրքերի ծրագրած ապստամբությունը գավառներում ուղղված չէր լինելու երիտթուրքերի դեմ, այլ միայն «նրանց դաշնակից» հայերի: Վերջիններս պետք է խողխողվեին սահմանադրությամբ «իրենց տրված ազատության» առթիվ արտահայտած ուրախության ու ոգևորության համար:

1909 մարտի 31-ի (նոր տոմարով՝ ապրիլի 13-ի) վաղ առավոտյան Կ. Պոլսում հակահեղեղական զինվորական խռովություն բռնկվեց: Մայրաքաղաքի զանազան զորամասերում զինվորները հարձակվեցին սպաների վրա, սպանեցին Իթթիհադի ջերմ կողմնակից մի քանիսին, մյուսների ձեռքն ու ոտքը կապելուց հետո հրացաններն առած դուրս եկան փողոցներ: Քիչ անց՝ նրանց միացավ բերդապահ զորքի մեծ մասը: Ապստամբների թիվն անցավ 5000-ից:

Ապստամբների մի մասը հավաքվեց ձիարշավարանի հրապարակում և, ինչպես ժամանակին անում էին ենիչերիները, սուլթանի մոտ ուղարկեցին մի պատգամավորություն, որը ներկայանալով նրան, պահանջեց կառավարության հրաժարականը, պատգամավորական ժողովի նախագահ Ահմեդ Ռիզա բեյի, մեծ վեզիր Հուսեյն Հիլմի փաշայի և զինվորական նախարար Ալի Ռիզայի անհապաղ պաշտոնաթողությունը, առավել ակնառու երիտթուրք ղեկավար գործիչների վտարումը, ինչպես նաև խորհրդարանի ընդունած, չարիաթին հակասող նոր օրենքների վերացումը: Միաժամանակ, երկու գումարտակ իրենց հակահեղեղական սպաների առաջնորդությամբ չրջապատեց օսմանյան խորհրդարանի շենքը:

Բարձր Դուռը խոր տագնապի էր մատնվել և անդամալույծ էր եղել: Նախարարներն անընդհատ խորհրդակցում էին ելք գտնելու համար: Երիտթուրք ղեկավարները, անակնկալի գալով, այս ու այն կողմ փախան՝ գլուխները կորցրած: Նրանց մեծ մասը ապաստան գտավ անգլիացիների ու ամերիկացիների տներում: Աբդուլհամիդականներն այդ տներն առան լրտեսների և խռովարար զինվորների հսկողության տակ: Մեծ վեզիրը և

երիտթուրքերի մյուս նախարարները, ինչպես նաև պատգամավորների պալատի նախագահն ստիպված եղան հրաժարական տալ: Խռովարարներն ավերեցին երիտթուրքական թերթերի խմբագրությունները, երիտթուրքական կազմակերպությունների շենքերը, երիտթուրք նշանավոր գործիչների բնակարանները: Սպանվեցին Իթթիհադի ղեկավարներից մի քանիսը, նախարարներ, խմբագիրներ, մեջլիսի պատգամավորներ: Սուլթանը վճռական էր արյունահեղելու իր շրջակայքը, «պատժելու» բոլոր հակառակորդներին: «Ես կկործանեմ Թուրքիան և ինձ: Ես թող լինեմ սուլթաններից վերջինը»[1],- ասում էր նա:

Աղմկող զորքերի հրացանաձգության ժխորի տակ խորհրդարանը հրապարակեց ժողովրդին ուղղված մի կոչ, որով իր համաձայնությունն էր հայտնում ապստամբների դրած պահանջներին, իսկ սուլթան Աբդուլ Համիդը ներում չնորհելով վերջիններին, միաժամանակ ընդունեց Իթթիհադի կառավարության հրաժարականն ամբողջ կազմով՝ Հիլմի փաշայի գլխավորությամբ[2]: Մայրաքաղաքն ապստամբների ձեռքն անցավ[3]: Բացի մայրաքաղաքից, սուլթանի ձեռքին էին նաև Բոսֆորի երկու ափերն ու Էդիրնեն (Ադրիանուպոլիսը)՝ իրենց բազմաքանակ զորքերով:

Ապրիլի 1-ի կեսօրին խորհրդարանի ալբանացիների խմբակցության ղեկավար Իսմայիլ Քեմալն ընտրվեց պատգամավորների պալատի նախագահ: Սուլթանի հանձնարարությամբ՝ նույն օրվա երեկոյան Իթթիհադի կառավարության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշան կազմեց նոր կառավարություն՝ հետևյալ կազմով. վարչապետ Թևֆիկ փաշա, զինվորական նախարար՝ Էդհեմ փաշա, արդարադատության՝ Հասան Ֆեհմի փաշա, ֆինանսների՝ Նուրի բեյ, ծովային՝ Էմին փաշա, կրթության՝ Աբդուլ Ռահման բեյ, երկրագործության, հանքերի

---

[1] **«The New York Times»**, 26 April 1909.

[2] Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Տաճկահայոց հարցի պատմութիւնը (սկզբից մինչև 1915 թ.), էջ 56:

[3] Տե՛ս **Ա-Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականներին, էջ 37-38:

և անտառների նախարար՝ Մավրոկորտադո, վակըֆների նախարար՝ Համադա փաշա, արտաքին գործերի նախարար՝ Ռիֆաթ փաշա, Պետական խորհրդի նախագահ՝ Զիհնի փաշա*: Շեյխ-ուլ-իսլամը, առևտրի ու արդյունաբերության նախարարները մնում էին հները՝ Մեհմեդ Զիաէդդին էֆենդի, Գաբրիել էֆենդի Նորատունկյան: Ներքին գործերի նախարարի պաշտոնը ժամանակավորապես տրվեց նախարարի օգնական Ադիլ բեյին[1]:

Նոր կառավարության հրամանով՝ ձերբակալվեցին նշանավոր իթթիհադականներ Էնվեր բեյը՝ իբրև Բեռլինի գործակալ, նախկին զինվորական նախարար Ալի Ռիզան, զորաբանակի հրամանատար Մուխթար փաշան և ուրիշներ: Միաժամանակ, կառավարությունը պատրաստվում էր հրատարակել հրովարտակ, որի համաձայն արձակվելու էր երիտթուրքական կոմիտեն, որպեսզի այլևս չկարողանար խառնվել պետական գործերին:

Զինվորական ապստամբությունը 1908 թ. հուլիսին առանց արյան Թուրքիային բերել էր սահմանադրություն, բայց ահա՛ ութամսյա մխացող կրակը 1909-ի մարտի վերջին օրը արտաբերում էր զինվորական մի ուրիշ ապստամբություն, որն ընդամենը մեկ օրում ի չիք դարձնելով սահմանադրությունը, նույն երկրին վերադարձնում էր բռնակալությունը:

Ապրիլի 1-ին լույս չտեսան «Թանին», «Շուրա-ի ումմեթ», «Սաբահ», «Թյուրքիե» թերթերը: Առավոտից՝ մայրաքաղաքի տարբեր մասերում անընդհատ տեղի էին ունենում զինվորների հանրահավաքներ, անդադար բացականչություններ էին հնչում ի պատիվ սուլթան Աբդուլ Համիդի և շարիաթի: Որոշ տեղերում՝ հավաքված ապստամբ զինվորներին ոսկու կտորներ էին բաժանում: Երբ նրանց հարցնում էին, թե որտեղի՞ց են դրանք, հետևում էր «Մեր պապիկն է տվել» պատասխանը[2]:

---

* Բուրսայի նախկին կուսակալ, ապա կայսերական պալատի առաջին քարտուղար, հետո արտգործնախարար (տե՛ս **«Աւետարեր»**, № 34, 22 օգոստոսի 1908 թ., էջ 613):

[1] Տե՛ս **«Բիւզանդիոն»**, № 3803, 2 (15) ապրիլի 1909 թ., **«Արեւելեան մամուլ»**, № 15, 7 ապրիլի 1909, նաև՝ **А. Ф. Миллер**, Оттоманская империя (султанская Турция), Москва, 1946, с. 32.

[2] Տե՛ս **«The New York Times»**, 29 April 1909.

Զնայած մտքերի խառնաշփոթությանը, քրիստոնյաները, չնչին բացառություններով, չմասնակցեցին հետադիմական հեղաշրջմանը: Հայերը, հույները և հրեաներն անմասն եղան խռովությանը, և իրենց բարոյական ու նյութական բոլոր շահերով շարունակում էին կապված մնալ օսմանյան սահմանադրական-ազատական գաղափարներին:

Երբ Իթթիհադի ղեկավարները, կառավարության անդամներից շատերը, խորհրդարանի պատգամավորների մեծ մասը գտնվում էին փախուստի մեջ կամ մայրաքաղաքում անցել էին ընդհատակ, այդ նույն ժամանակ Իթթիհադի կառավարությանը Կ. Պոլսում հավատարիմ մնացած զորքը, Սալոնիկի հրացանաձիգների և հեծելազորի մի մասը, թնդանոթաձիգները և ձերբակալությունից խույս տված սպաներն ի մի գալով և ժողովելով ուժերը, պատրաստվեցին դիմադրություն կազմակերպել խռովարարներին:

Երկուստեք սկսվեցին հրացանաձգություններ, որոնք բնակչության մեջ անկարգությունների տեղիք տվին: Այդ ընթացքում սպանվեցին մի նախարար և սիրիացի դրուզ պատգամավոր Էմիր Արսլանը, որին սխալմամբ շփոթել էին «Թանինի» խմբագիր Հուսեյն Ջահիդի հետ: Վիրավորվել էր ծովային նախարարը: 1909 թ. մարտի 31-ին 100-ից ավելի մարդ սպանվեց:

Այդ ծանր պահին շեյխ-ուլ-իսլամ Մեհմեդ Զիաէդդին էֆենդին բանակցություններ սկսեց ապստամբների հետ՝ փորձելով կանխել սկսված քաղաքացիական կռվի տարածումը մայրաքաղաքից դուրս, բայց արդյունքի չհասավ: Խռովարարները որևէ զիջման չէին գնում, քանի որ սուլթան Աբդուլ Համիդը դրության տեր էր դարձել: Գահին լիարժեք վերադառնալուց անմիջապես հետո նա դաժան հաշվեհարդար տեսավ իր քաղաքական հակառակորդների հետ: Ձերբակալվեցին նախկին վարչապետ Քյամիլ փաշան, իթթիհադ կուսակցության պարագլուխները և բազմաթիվ անդամներ, Պետական խորհրդի անդամ Մուխթար փաշան: Զինվորականներից բացի ձերբակալվեց 600 քաղաքացիական անձ:

Կ. Պոլսում սուլթանի տարած հաղթանակի լուրն անմիջապես արձագանքեց կայսրության տարբեր տարածքներում: Լսե-

լով այդ մասին, հին կարգերի ջատագովները չցանկացան հետ մնալ և գործի անցան: Օգտվելով մայրաքաղաքի խառնակ վիճակից, նրանք ձեռնամուխ եղան գավառներում կռվի ու կոտորածի խարույկներ վառելուն: «Նյու Յորք Թայմսի» թղթակիցը Կ. Պոլսից գրում էր. «Անկարգություններն այստեղ շարունակվում են, և իրավիճակի լրջությունը մեծանում է՝ կապված նահանգներից եկող նորությունների հետ: Մեղինայում և Դրուզների երկրում ապստամբություններ են ծագել: Քրդերը պատերազմի արահետին են Թուրքական Հայաստանի Դիարբեքիրում: Ապստամբություն է տեղի ունենում Արաբիայում, անկարգություններ են նախապատրաստվում Մակեդոնիայում, ինչը խորապես պայմանավորված է այստեղի դեպքերի հետ»[1]: Ամբոխն այս ու այն տեղ, ամենից առաջ՝ Ադանայի և Հալեպի նահանգներում սկսեց հարձակումներ գործել ազատության երազներով օրորվող անգեն հայ ազգաբնակչության վրա*:

Իսկ աբդուլհամիդյան խռովության նկատմամբ ի՞նչ դիրք էր բռնել հայ քաղաքական միտքը:

Բացառությամբ «Բիւզանդիոն» թերթի, որը խռովության սկզբից մինչև վերջ հավատարիմ էր մնացել Իթթիհադին, Կ. Պոլսի հայկական թերթերը խռովության առաջին և երկրորդ օրերին չփոթության մեջ էին ու չէին կարողանում կողմնորոշվել հետաղիմական շարժման գնահատականի հարցում:

Դա բնական էր, քանզի տասնամյակներ շարունակ հալածված, օրենքից փաստորեն դուրս գտնվող Թուրքահայը հնարավորություն չէր ունեցել զբաղվելու քաղաքական խնդիրներով, իսկ նրա ազգային կազմակերպությունները, որոնք տարիներ շարունակ գործում էին ընդհատակում, իրենց զինանոցում ունեցել էին միայն ցույցերի, ըմբոստ ձեռնարկների և ժողովրդական մասնակի բռնկումների միջոցներ, ուստի անկարող էին եղել պատրաստել քաղաքականապես հասուն ազգայինների մի սերունդ:

---

[1] «The New York Times», 29 April 1909.

* Հայերի՝ նշված երկու նահանգներում տեղի ունեցած զանգվածային կոտորածներին մանրամասն անդրադառնալու ենք աշխատության հաջորդ գրքում:

Տեղի ունեցած հեղաշրջումը ջերմորեն ողջունեց «Արեւելքը», որին ձայնակցեցին «Ժամանակը» և ուրիշ հայկական թերթեր: Մամուլի այդ օրգանները փառաբանում էին խռովությունը, «չարիաթ» աղաղակող զորամասերի «քաջասրտությունն ու կարգապահությունը», միաժամանակ հավաստիացնում էին, որ տեղի ունեցող շարժումն ազատական է, իսկ Ահրար կուսակցության հաղթանակն անխուսափելի է:

«Արեւելքի» խմբագիր, լրագրական աշխատանքի մեծ փորձ ունեցող Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան), չըմբռնելով տեղի ունեցող շարժման էությունն ու նպատակները, թերթի ապրիլի 1-ի համարում (№ 7062) ողջունում էր միապետականներին և դեպքերը նկարագրում հետևյալ վերնագրերը կրող հոդվածներում ու նյութերում. «Պատմական շարժում», «Իթթիհադը թավալ գլոր», «Թուրքիան նոր շրջանի մը մէջ կը մտնէ», «Օսմանեան բանակը կարգապահ եւ գործունեայ», «Հիլմի փաշայի դահլիճին տապալումը», «Վերջ Ահմէտ Ռիզայի եւ Հիւսէյն Ճահիտի բռնակալութեան», «Շարիաթին գործադրութիւնը» և այլն:

Ինչ վերաբերում է հայկական քաղաքական կուսակցություններին, ապա սկզբում նրանց չփոթմունքը լիակատար էր: ՀՅ դաշնակցության և Հնչակի Կ. Պոլսի կազմակերպությունները առաջին մեկ-երկու օրերին խուճապի մեջ էին ու չէին կողմնորոշվում, թե ո՞րն է իրենց առաջնահերթ անելիքը: Պետական հեղաշրջման ժամանակ հայ գործիչներն իրենց բռնած դիրքով ու գործունեությամբ ցույց տվեցին կատարյալ տհասություն՝ պատմական խոշոր դեպքերին դեմ-հանդիման:

Հետադիմական շարժման հենց սկզբից սխալ դիրք էր բռնել նաև օսմանյան խորհրդարանի հայ անդամների մեծ մասը՝ Գրիգոր Զոհրապի գլխավորությամբ: Իթթիհադի նկատմամբ տածած ատելության պայմաններում նա գնաց ծայրահեղ քայլի՝ միանալով թուրքական ընդդիմադիր ուժերի, առաջին հերթին՝ Ահրար կուսակցության պատգամավորներին, նրանց հետ պայքարի դուրս եկավ խորհրդարանում մեծամասնություն կազմող իթթիհադական պատգամավորների դեմ[1]:

---

[1] ***«Շիրակ»,*** *№ 13, 8 մայիսի 1909 թ., էջ 312:*

Ռամկավարների օրգան «Շիրակ» (Կ. Պոլիս) շաբաթաթերթը գրում էր. «Զատկի Երեքշաբթին Պոլսոյ մէջ պատահած յետադիմական շարժումը մեզմէ շատերուն սիրտերը տղայական ուրախութեամբ մը ուռեցուց, զի մեր սովորական տիրացութեամբ իսկոյն եւեթ անոր մէջ ողջունեցինք Միութիւն եւ Յառաջդիմութիւն Գօմիթէին ջախջախումը եւ Ահրարեանց իբրեւ թէ տարած յաղթանակը՝ այն զէվզէկ կուսակցամոլութեամբ եւ այն չըլլալիք սանձակորոյս ազատասիրութեամբ, որ մեր ժողովուրդին յատուկ է: Ու ծափեցինք անկարգապահ զինուորները, որոնք Ազգին Խորհրդարանը պաշարեցին, մեր հայ բարեպաշտ խաթուններուն ձեռամբ ուտեստ, ծխախոտ բաժնեցինք անոնց, ծափեցինք սօֆթաներն ալ, որոնք Շէրիաթ կը գոռային, ու պուտիկ մը իսկ քաղաքական հասունութիւն չունեցանք կռահելու, գուշակելու սեւ ձեռքը Սուլթան Համիտին...»[1]:

Երբ սուլթանը Պոլսում արդեն հաղթել էր, ինչպես վերը նշվեց, իթթիհադ կոմիտեի անդամները, նաև խորհրդարանի պատգամավորների մեծ մասը փախան մայրաքաղաքից: Խորհրդարանում մնաց փոքրամասնությունը՝ ապակենտրոնացման և ոչ թուրք ազգությունների ինքնավարության տեսակետի պաշտպան ահրարականները, պահպանողականները և հայ պատգամավորները, թվով մոտ 60 հոգի:

Այս պայմաններում, ապստամբության երրորդ օրը, գումարվում է խորհրդարանի նիստ: Աբդուլ Համիդն սպասում էր՝ չհամարձակվելով մինչև վերջ հասցնելու իր սադայելական խաղը՝ ցրել խորհրդարանը և ջնջված հայտարարել սահմանադրությունը: Զէր համարձակվում երկու պատճառով. 1) Արդեն խռովության երրորդ օրն սկսել էին խարխլվել ապստամբների շարքերը, 2) Ուշքի գալով, երիտթուրքերի պարագլուխները ձեռնարկել էին հակահարձակման կազմակերպմանը: Հենց այդ երկու պատճառներն արգելք հանդիսացան, որ Կ. Պոլսում Բարդուղիմեոսյան գիշերներ տեղի չունեցան:

Ապստամբությանը միացած ահրարականներն ու իշխան Սաբահէդդինի կողմնակիցները տեսնելով, որ իրենց առաջ բերած

---

[1] **«Շիրակ»,** № 13, 8 մայիսի 1909 թ., էջ 312:

հեղաշրջումից օգտվել են միայն սուլթանն ու երկրի ողջ հետադիմությունը, սարսափելով դրա հետևանքներից, խղեցին կապերը խռովարարների հետ, սկսեցին ընկրկել ու նահանջել, միաժամանակ, նրանք կոչ արեցին երկրի բոլոր ազատական տարրերին՝ միանալ և միահամուռ ուժերով պաշտպանել սահմանադրությունը:

Բայց իրավիճակը պահանջում էր ավելի լայն ընդգրկումով միավորել մայրաքաղաքի հակամիապետական բոլոր քաղաքական ուժերը և նրանց ջանքերը սահմանադրության փրկությանն ուղղել: Կարճատև խորհրդակցություններից հետո, համարյա բոլոր կուսակցությունները միանալով ստեղծեցին հայրենիքի փրկության «Օսմանյան միությունը», որի մեջ մտան, երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեն, ահրարականները, ՀՅ դաշնակցության կոմիտեն, հունական քաղաքական լիգան, Դեմոկրատական կուսակցությունը, ալբանական, քրդական, չերքեզական, բուլղարական և այլ կենտրոնական ակումբները, նաև «Միզան» («Կշեռք»), «Սաբահ» («Առավոտ»), «Իկդամ» («Նախաձեռնություն» կամ «Խիզախություն»), «Ենի գազեթա» («Նոր թերթ»), «Թերջուման» («Թարգման»), «Օսմանլը» («Օսմանցի») և «Սերբեսթի» («Ազատություն») լրագրերը[1]:

«Միության» մասնակիցները պարտավորվեցին դադարեցնել կուսակցական երկպառակությունները, աջակցել երկրի զարգացմանը, պաշտպանել սահմանադրությունը, խորհրդարանը, խղճի ու խոսքի ազատությունը: «Միությունը» իբրև գործադիր մարմին ընտրեց խորհուրդ, որի մեջ մտան երկուական պատգամավոր յուրաքանչյուր կուսակցությունից ու կոմիտեից, մեկական պատգամավոր ակումբներից և չորս պատգամավոր՝ մամուլից:

Խորհուրդը կոչված էր մշտական հարաբերություններ ունենալ խորհրդարանի հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լուրջ միջոցներ ձեռնարկել երկրում և, առաջին հերթին, Կ. Պոլսում հանգստությունը, կարգն ու կանոնը պահպանելու: Խոր-

---

[1] *Տե՛ս* ***«Մշակ»****, № 70, 7 ապրիլի 1909 թ.:*

հուրդը կարող էր մասնախմբեր ուղարկել տարբեր նահանգներ՝ նշված խնդիրները կատարելու համար:

Այն համերաշխությունը, որ այդ օրերին ստեղծվեց Թուրքիայում գործող կուսակցությունների միջև, ցույց էր տալիս, որ հին ռեժիմի սարսափն այնքան ուժեղ էր այդ ճակատագրական պահին, դեռ բոլորի հիշողության մեջ այնքան թարմ էին ոչ վաղ անցյալի մղձավանջային պատկերները, որ ամեն ոք, ամեն կուսակցություն պատրաստ էր ամեն փոխադարձ զիջումներն անելու, միայն թե վերացվեր հին դժոխքի ուրվականը:

Կ. Պոլսում կատարվող եղելություններն ունեին խոշորագույն նշանակություն ոչ միայն Թուրքիայի ժողովուրդների համար, այլև եվրոպական խաղաղության համար: Ընդհանուր կարծիքն այն էր, որ ճգնաժամի բարեհաջող լուծումը, երիտասարդ Թուրքերի վերադարձը և վերահաստատումը կատարվեին Թուրքիայի ժողովուրդներին ծայրագույն պատահարներից և կորստաբեր արհավիրքներից զերծ պահելով՝ միևնույն ժամանակ ապահովելով եվրոպական խաղաղությունն անակնկալ փորձություններից:

Ինչպես նշվեց, Աբդուլ Համիդը չհամարձակվեց չեղյալ հայտարարել սահմանադրությունը և ցրել խորհրդարանը, որովհետև Իթթիհադն սկսել էր համախմբել իր ուժերը՝ արշավելու մայրաքաղաքի վրա և ճնշելու խռովությունը:

Երիտթուրքերի ձեռքին էին գտնվում Ջաթալջայի ամրությունները, չխոսելով արդեն Սալոնիկի և Մակեդոնիայի մասին: Հենց այս վայրերում էին նրանց զորքերը բռունցք ստեղծել Պոլիսը վերագրավելու համար: Այդ զորքերն արդեն գրավել էին Եվրոպա տանող երկաթգիծը և գնացքների շարժակազմերը:

Այդ օրերին ռուսական սևծովյան նավատորմը մոտեցել էր Բոսֆորին, բրիտանական նավատորմը կայանել էր Դարդանելի մոտ, իսկ բուլղարական բանակը պատրաստ սպասում էր Եվրոպայի հրահանգին՝ մտնելու Կ. Պոլիս[1]:

Երիտթուրքերին հավատարիմ զորամասերը հիմնականում

---

[1] Տե՛ս «The New York Times», 29 April 1909:

տեղակայված էին Մակեդոնիայում: Եվ նրանք էին երիտթուրքերի միակ հույսը. եթե այդ զորամասերն էլ անցած լինեին սուլթանի կողմը, ապա ամեն ինչ վերջացած կարելի էր համարել:

Այստեղ էր երկրորդ բազմաքանակ զորաբանակը Մահմուդ Շևքեթ փաշայի հրամանատարությամբ (այդ բանակի չտարի պետն էր երիտասարդ սպա Մուստաֆա Քեմալը՝ հետագայում Քեմալ Աթաթուրք)[1]: Կ. Պոլսից Սալոնիկ փախած Իթթիհադի պարագլուխների եռանդուն ջանքերով, այդ զորաբանակին միացան բուլղարական և հունական չետաները, որոնք վճռել էին երիտթուրքերի հետ մինչև վերջ կռվել հանուն սահմանադրության և ազատության: Երիտթուրքերին հավատարիմ մնացած զորքերին համախմբելու և Պոլսի վրա արշավելու նախապատրաստությունները Շևքեթ փաշայի հետ հավասարապես կատարում էր Նիազի բեյը:

Իթթիհադի կոմիտեն Աբդուլ Համիդին գահընկեց էր հայտարարել: Ամեն րոպե կարող էին ամենալուրջ բարդություններ, քաղաքացիական արյունալի բախումներ առաջ գալ: Դրանցից խուսափելու համար երկուստեք բանակցություններ սկսվեցին:

Ապրիլի 2-ի երեկոյան խորհրդարանի նիստ գումարվեց: Պատգամավորներից ոմանք պահանջեցին Ահմեդ Ռիզային վերստին կանչել պաշտոնի, բայց այդ առաջարկը մերժվեց: Նույն նիստում Գրիգոր Զոհրապն ընտրվեց փոխնախագահ: Քանի որ օրենսդիր մարմնի նախագահ Ահմեդ Ռիզան բարիկադի մյուս կողմում էր, իսկ նորընտիր նախագահը՝ անձեռնհաս, ուստի նախագահի պաշտոնը փաստորեն վարում էր Զոհրապը:

Օրենսդրական մարմինը գրեթե բան չէր անում և զբաղված էր սահմանադրականների և հակասահմանադրականների՝ գավառներից ստացված հեռագրերի ընթերցմամբ[2]:

Ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար խորհրդարանի չեզոք ու պահպանողական տարրերը նպատակահարմար գտան մի պատվիրակություն ուղարկել Զաթալջա և երիտթուրքերի կողմն անցած զորքերին հորդորել, որպեսզի հրաժար-

---

[1] Տե՛ս **А. Ф. Миллер**, Оттоманская империя (султанская Турция), с. 33.

[2] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 110:

վեն եղբայրասպան կռվից, մայրաքաղաք չմտնեն, այլ իրենց բանակած տեղերը վերադառնան: Հայ պատգամավորների պնդմամբ՝ պատվիրակության կազմում ընդգրկվեց նաև Վարդգեսը: Պատվիրակությունը պետք է բանակի ղեկավարությանը համոզեր, թե «եղածը ոչինչ բան է, մասնակի շարժում էր, որ վերջացաւ»[1]:

Հայկական պատգամավորական խումբն իր ներկայացուցչին պատվիրակության մեջ մտցրեց հատկապես նրա համար, որ դեռ մարտի 31-ից առաջ Աբդուլ Համիդը ծրագրել էր հայերի նոր կոտորած սարքել, և, դրա համար, նրա կարգադրությամբ, Պոլսում սեհարյուրյակայիններին ռումբեր ու զենք էին բաժանել արդեն: Պատվիրակության մեջ Վարդգեսի ներկայությունը Աբդուլ Համիդի և նրա շրջապատի մոտ կարող էր տպավորություն ստեղծել, թե հայերը բացասաբար են տրամադրված երիտթուրքերի հանդեպ, հետևապես, դեմ չեն, որ սուլթանը մնա իշխանության գլուխ: Բարեբախտաբար, հայերի կոտորած չեղավ ոչ թե այդ պատճառով, այլ որովհետև երկրորդ զորաբանակի հրամանատարությունը, նշանակություն չտալով պատգամավորական ժողովի, հետևապես նաև Վարդգեսի միջնորդությանը, եռանդուն շարունակում էր նախապատրաստվել Կ. Պոլսի վրա հարձակվելու համար:

Զաթալջա մեկնած պատվիրակությունը լավ ընդունելություն գտավ երկրորդ զորաբանակի սպայակույտից, բայց նրա առաքելությունը հաջողություն չունեցավ: Պատվիրակության միջնորդությունը դիտվեց որպես սուլթանին պաշտպանության տակ առնելու փորձ[2]: Կտրականապես մերժվեց բանակը Պոլիս չմտցնելու խնդրանքը: Միաժամանակ, օսմանյան երկրորդ զորաբանակի հրամանատարությունը պահանջեց, որ խորհրդարանի՝ Կ. Պոլսում թաքնված կամ փախուստի մեջ գտնվող պատգամավորները (որոնց մեծ մասն իթթիհադական էր), ինչպես և «գործող» պատգամավորական ժողովի ողջ կազմը հավաքվեն Սան-Ստեֆանոյում:

---

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը, հատ. Բ, էջ 111:*

[2] *Տե՛ս* ***«Մշակ»***, *№ 84, 2 ապրիլի 1909 թ.:*

Պատվիրակությունը Պոլիս վերադառնալուց հետո, «գործող» պատգամավորական ժողովի համարյա բոլոր անդամները տարբեր ճանապարհներով խմբվեցին Սան-Ստեֆանոյում, ուր օրենսդիր մարմնի նիստ տեղի ունեցավ: Քննարկելով ստեղծված իրավիճակը, պատգամավորական ժողովը որոշում ընդունեց ժողովի նախագահի աթոռին վերադարձնել Ահմեդ Ռիզային: Որպեսզի խորհրդարանն ամբողջական տեսք ստանար՝ Սան-Ստեֆանո կանչվեց նաև ծերակույտի (սենատի) նախագահ, քրդական ծագումով Քյուչյուկ Սաիդ փաշան[1]:

Իր հերթին, Իթթիհադի Սալոնիկի կոմիտեն բանակցություններ սկսեց Թևֆիկ փաշայի նոր կառավարության հետ՝ իշխանությունն առանց դիմադրության վերադարձնելու համար: Բանակցությունների ընթացքում կոմիտեն առաջ քաշեց հետևյալ պահանջները. ապահովել սահմանադրության լիակատար գործադրությունը, մայրաքաղաքից հեռացնել խռովարար զորքերը, իշխանության կանչել նախկին կառավարությանը, իրեն հանձնել ապստամբության գլխավոր դրդիչներին: Ինչպես և սպասելի էր, Աբդուլ Համիդը կտրականապես մերժեց կատարել այդ պահանջներից գոնե մեկը: Ուրեմն ելքը միակն էր՝ սուլթանի բռնի տապալումը զինվորական միջամտությամբ:

Այս խառնակ վիճակում՝ թուրքահայ քաղաքական միտքը դեռ տարուբերումների մեջ էր: Դաշնակցականամետ թերթերը հիմնականում հանդես էին գալիս իրադարձությունները պարզ նկարագրողի դերում: Ռամկավար, հնչակյան և չեզոք մամուլի օրգանները, որոնք մարտի 31-ին սկսած հեղաշրջումից հետո եկած մեկ-երկու օրերին չէին կարողացել խորամուխ լինել իրադարձությունների բուն էության մեջ, ապրիլի 2-ից չփոթմունքին արագորեն վերջ տվեցին և դա քաղաքական հաշվարկներով ու հստակ դիրքորոշմամբ փոխարինեցին:

«Արեւելքը», որ 1909 թ. ապրիլի 1-ին ողջունել էր սուլթանի և նրա կողմնակիցների խռովությունը Իթթիհադի իշխանապետությունը տապալելու համար, ապրիլի 3-ից սկսած հակահե-

---

[1] **Վահան Փափազեան**, *Իմ յուշերը*, հատ. Բ, էջ 111-112:

դափոխական շարժման բուն էութեան մէջ թափանցած և նրա նպատակներն ու ձգտումները վերջնականապէս իր համար պարզած նոյն թերթը խռովութիւնը համարում էր անցյալի սև ուժերի գրոհ օսմանյան սահմանադրության դեմ: Թերթի խմբագիր Երուխանը հայերին կոչ էր անում՝ չխաբվել, զի սկսված շարժումը հետադիմական դավադրություն է: «Ցնցումին պատճառած առաջին ապչութիւնը պէտք է փարատել որքան հնարաւոր է չուտ»[1],- գրում էր նա: Ըստ նրա՝ այլևս որևէ մեկը չի տարակուսում, թե ովքեր են հեղաշրջման փորձ անողները: Բռնապետության նախկին շահատակները, որոնք ինն ամսից ի վեր խլուրդների պես ծածկված էին խորշերում, սողացել ու դուրս են եկել իրենց բներից, սկսել են սլքլտալ Պոլսի փողոցներում՝ կարիճային դեմքերը շողացնելով գեհենական հրճվանքով[2]:

Երուխանը նշում էր, թե Աբդուլ Համիդի թշնամիների ամբողջ հույսը զինվորական այն հրամանատարներն են, որոնք մինչև վերջ հավատարիմ են սահմանադրությանը: Նրանց թվում թերթի խմբագրապետն առանձնացնում էր Նիազի բեյին՝ նրա կատարած գործը բնութագրելով այսպես.

«Նիազի պէյ, հերոսներուն այս հերոսը, արդէն իսկ անմահացած, իր վերջին շարժումովը արժանի եղաւ դասուելու օսմ[անեան] պատմութեան մեծագոյն դէմքերուն քով ..., քանի որ նա թերեւս վերջնականապէս ճզմելով գլուխը օձին, որ ինը ամիս անխլիրտ մնալէ յետոյ ահա՛ նորէն վեր բարձրացած էր խածնելու եւ թունաւորելու համար նորէն ամբողջ երկրի մը երջանկութիւնը»[3]:

Դիմելով հետադիմությունը զսպելու համար կռվի ելած երիտթուրքական զորքերին, Երուխանը կոչ էր անում.

«Զարկէ՛ք, ո՛վ քաջարի զինուորներ, զարկէ՛ք ձեր տապարները այդ անիծակուռ պատուանդանին ու կործանեցէ՛ք զայն: Մեր հայրենիքին փրկութիւնը վերջնականապէս անոր փլատակներուն վրայ է որ պիտի կանգնուի: Ոչի՛նչ պէտք է մնայ բռնա-

---

[1] ***«Արեւելք»***, *№ 7067, 7 ապրիլի 1909 թ.:*

[2] *Տե՛ս նույն տեղում:*

[3] *Տե՛ս նույն տեղում:*

պետութենէն ու անոր խորհրդանշանէն ... Հայրենիքը անդորրութեան եւ բարգաւաճումի կարօտ է: Այս խաղերը կը վնասեն ատոր: Զարկէ՛ք մէկ անգամէն ու վերջացուցէ՛ք: Մինչեւ ե՞րբ անապահով պիտի ըլլանք Սահմանադրութեան տեւականութեան մասին: ... Օսմ. Հայրենիքին բոլոր զաւակները, իսլամ եւ ոչ իսլամ, արմունկ-արմունկի, սիրտ-սիրտի պիտի վազեն հասարակաց թշնամիին՝ բռնապետութեան դէմ, որ դեռ ողջ է, որ դեռ ահա՛ կը փորձէ հարիւր հազարաւոր դիակներու վրայէն ակռաներով խլուած ազատութիւնը մէկ հարուածով ջախջախել»[1]:

Ի տարբերություն հայկական մամուլի օրգանների, օսմանյան խորհրդարանի հայ անդամների մեծ մասը դարձի եկավ բավականին ուշ՝ միայն Աբդուլ Համիդի անկման նախօրյակին:

Ինչ վերաբերում է հայկական հեղափոխական կուսակցություններին՝ ՀՅ Դաշնակցությանը, Հին Հնչակին ու Վերակազմյալ Հնչակին, ապա նրանք հեղաշրջումից 4-5 օր հետո միայն կարողացան դուրս գալ ցնցակաթվածից և իրենց կազմակերպություններին հրահանգներ տալ պաշտպան կանգնելու Կ. Պոլսից արտաքսված երիտթուրքական կոմիտեին: Հայ հեղափոխականները գումարներ և նվերներ պատրաստեցին՝ սուլթանական պալատն առաջինը գրավող երիտթուրքական զորամասի սպաներին ու զինվորներին հանձնելու համար: Ավելին, հայկական կոմիտեների կոչերով՝ հավաքագրվեցին կամավորներ, որոնք մտան երիտթուրքական գլխավոր զինված ուժերի՝ Նիազի բեյի հրամանատարության տակ գտնվող երկրորդ (մակեդոնական) զորաբանակի և երրորդ զորաբանակի մեջ, որոնց երկուսի էլ հենակետը Զաթալջան էր: Դրանից բացի, Դաշնակցության և Հնչակի կոմիտեները Պոլսում իրենց անդամներին ռումբերով զինեցին և ատրճանակներ ու հրացաններ բաժանեցին՝ կոտորած սկսվելու դեպքում մայրաքաղաքի հայ խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար:

Այստեղից հետևում էր, որ մինչև մակեդոնական զորքերի կողմից Կ. Պոլսի գրավումը՝ հայկական կուսակցությունները

---

[1] ***«Արեւելք»,*** *№ 7067, 7 ապրիլի 1909 թ.:*

երիտթուրքերի համար հուսալի էին: Նաև հետևում էր, որ թեև այդ կուսակցությունների ցուցակներով ընտրված հայ պատգամավորների մի մասն ահրարների կողմն էր անցել, բայց հատկապես նրանք, ովքեր ընտրվել էին երիտթուրքական կոմիտեի ցուցակներով, հավատարիմ էին մնացել սահմանադրականությանը, հետևապես՝ դարձյալ հուսալի էին Իթթիհադի համար:

Շատերը զարմացած էին, որ ազատագրական պայքարի երկար ճանապարհ անցած նշված կուսակցություններն այդպես հեշտությամբ փոխում էին իրենց տեսակետերը երկրում տեղի ունեցող խոշորագույն իրադարձությունների նկատմամբ: Ռամկավարների պաշտոնաթերթ «Շիրակը» գրում էր.

«Ահա՛ լուր առինք թէ մակեդոնական բանակը Պոլսոյ վրայ պիտի քալէ: Այս անգամ ալ մէկ ծայրայեղութենէն ցատկեցինք դէպի միւսը: «Կէցցէ՛ Ազատարար Բանակը», «Անկցի՛ն սօֆթաները», «Անկցի՛ն ըմբոստ զինուորները» ...: Ցնծութիւննիս այս անգամ այն աստիճան յառաջ տարինք, որ «հայ յեղափոխականներ» տիկիններ խրկեցին Սան Սթէֆանօ՝ մետաքսահիւս դրօշակներ մատուցանելու մակեդոնական բանակին, եւ ուրիշ «յեղափոխականներ» ալ՝ առջիններէն վար չի մնալու «գովելի» մրցակցութեամբ՝ բախլավա, ծխախոտ ու օշարակ բաժնեցին բանակի զինուորներուն»[1]:

Ճշգրիտ վերլուծություններ կատարելու և ժողովրդին մի ճանապարհ ցույց տալու հայկական քաղաքական ուժերի անկարողությունն իսկական խառնաշփոթ էր առաջ բերել: «Ո՞ւմ հետ լինել» հարցը շարունակում էր թևածել հայերի գլուխներում: Բայց ինչո՞ւ անպայման «ո՞ւմ հետ», ինչո՞ւ ոչ անմասնակից ու մեկուսի: Զէ՞ որ արդեն պարզ էր դարձել, որ երիտթուրքերն Աբդուլ Համիդի նման ոսոխներ են հայության համար: «Արեւելեան մամուլը» շեշտում էր.

«Ամեն պարագայի տակ հայ ժողովուրդը պէտք է բոլորովին չէզոք եւ հանդիսատեսի դիրքն պահէ այս կուսակցական խառնաշփոթութեանց եւ ընդհարումներու մէջ եւ ուշադիր հետեւե-

---

[1] **«Շիրակ»,** № 13, 8 մայիսի 1909, էջ 313:

լով անցած ու դարձած դէպքերուն՝ սպասէ անոնց վերջաբանին, առանց այս կամ այն կողմին յարելու»[1]:

Անդրադառնալով նոյն խնդրին, Լևոն Մկրտիչյանը «Այլասերում» վերտառությամբ հոդվածում գրում էր.

«Երբ աչքի առջեւ ունենանք անցեալ Յուլիս ամսէն ի վեր Թրքահայ եւ ի մասնաւորի պոլսահայ ժողովուրդին հոգեկան վիճակը՝ անխուսափելիօրէն սա՛ տխուր եզրակացութեան կը յանգինք թէ, որքան ալ իբրեւ անհատ լաւ յատկութիւններ ու որոշ կարողութիւններ ունեցած ըլլանք, իբրեւ համայնք սակայն ո՛եւէ դրական արժանիք ներկայացնելէ չատ հեռու ենք: Ձգենք մեր պատմութեան սկիզբէն մինչեւ վերջին ժամանակներս երկար ու ձիգ դարերու ապտակիչ, չարատանջ փորձառութիւնը, բայց նոյն ինքն սա հուսկ յետին տասնհինգ տարիներու մարտիրոսացումի արիւնազանգ փորձառութիւնն ալ տակաւին խելքերնիս գլուխնիս չէ բերած: Ափսո՜ս: Գոգցես մեզի համար ճակատագրուած ըլլար սկիզբէն մինչեւ վերջը պեխաւոր երախաներ մնալ քաղաքական կեանքի մէջ, որոնց անօգուտ է ցաւը, պատիժը, դասը, խորհուրդը, որոնք նոյն յանցանքը, նոյն սխալը պիտի գործեն այսօ՛ր ալ, վա՛ղն ալ, չարունա՛կ: Հայ կեանքի այս իրականութիւնը դիւրաւ պիտի բացատրէ անչուշտ այն ամէն դժբաղդութիւնները որոնց ազգովին ենթարկուած ենք պարբերաբար՝ մեզ չրջապատող ցեղերուն եւ մեր վրայ տիրող պետութեանց կողմէ»[2]:

Լ. Մկրտիչյանը ցավ էր հայտնում, որ հայկական քաղաքական ուժերը և ընդհանրապես հայ մարդը չեն կարողանում իրենց գործողությունները ծավալել փոփոխվող իրավիճակներին համեմատ, ուստի դա է գլխավոր պատճառներից մեկը, որ նրանք ի վիճակի չեն լինում կայուն տեսակետ մշակելու հասարակական այս կամ այն երևույթի նկատմամբ: «Ի նկատի ունեցէք, թէ մենք սովոր ենք պոռալ, կանչել այն ժամանակ երբ լռել հարկաւոր է, ու գրեթէ լեզունիս կը պապանձի ամէն անգամ որ անհրաժեշտ է բողոքել ազդուապէս: Յաճախ դժգոհու-

---

[1] ***«Արեւելեան մամուլ»**, № 15, 7 ապրիլի 1909 թ.:*

[2] ***«Շիրակ»**, № 13, 8 մայիսի 1909 թ., էջ 311:*

թեան երեմիականներ կ'եղերերգենք առանց բանաւոր պատճառի, իսկ ուրախութեան ցոյցերով կը հրճուինք այնպիսի՛ պարագաներու մէջ՝ երբ հասարակ ողջմտութիւնը եւ տարրական արժանապատուութեան զգացումը կը հրամայէին մեզի վերապահ սգաւորներ միայն հանդիսանալ ...:

Սա՛ վերջին ամիսը Թուրքիոյ մէջ իրարու յաջորդող պատմական մեծ, ու սեւ ալ, դէպքերուն առթիւ բռնած ընթացքնիս գոգցես է՞ն ցայտուն ապացոյցն է մեր վերոյիշեալ ցեղային թերութիւններուն»[1]:

Խռովության առաջին օրերին Կ. Պոլսում հաղթանակ տարած սուլթանը կարողացել էր ոտքի կանգնեցնել մայրաքաղաքի համարյա բոլոր զորամասերը, բոլոր զինվորական դպրոցներն ու կայանները և կռվի պատրաստվել: Բայց ձեռքերը ծալած չէին նաև երիտթուրքերը: Սահմանադրական բանակները վճռական էին ու միակամ՝ աբդուլհամիդյան խռովությունը ճնշելու գործում:

Սահմանադրական ուժերը, ընդհանուր հրամանատար Մահմուդ Շևքեթ փաշայի հրամանատարությամբ, ապրիլի 8-ին հակահարձակման անցան մայրաքաղաքի վրա: Դեպի Պոլիս ճանապարհ ընկավ նաև Սալոնիկի բանակը: Երիտթուրքերի 40 հազարանոց բանակում զգալի թիվ էին կազմում թուրք, հույն, բուլղար, մակեդոնացի, հայ և մանավանդ ալբանացի կամավորները[2]:

Մահմուդ Շևքեթ փաշայի առաջին հրամանով կտրվեց կապը մայրաքաղաքի ու Եվրոպական Թուրքիայի միջև: Դրանով իսկ նաև կասեցվեց օսմանյան բանկի սալոնիկյան բաժանմունքի կողմից սուլթանի համար նախորոշված դրամական գումարների փոխանցումը[3]:

Սուլթանի կողմնակից բոլոր զինվորական մասերը և հաստատություններն սկսեցին ուժգին դիմադրություն ցույց տալ:

---

[1] **«Շիրակ»**, № 13, 8 մայիսի 1909 թ., էջ 311:

[2] Տե՛ս **А. Ф. Миллер**, Краткая история Турции, с. 129.

[3] Տե՛ս **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 110-ի տողատակը:

Բացառություն էր միայն Փանկալթիի զինվորական ուսումնարանը, որը միացավ Շևքեթ փաշայի զորքերին:

Բայց մայրաքաղաքից դուրս դիմադրությունը կարճատև եղավ: Տալով մարդկային զգալի կորուստներ, միապետական զորքերը նահանջեցին դեպի մայրաքաղաք: Այդ ընթացքում զանգվածային փախուստ սկսվեց զորամասերից: Հենց առաջին տեղեկությունից, որ մակեդոնական բանակը մոտենում է Կ. Պոլսին, մայրաքաղաքում անասելի խուճապ առաջ եկավ Աբդուլ Համիդի կողմնակիցների մոտ: Իսկ մակեդոնական բանակն արդեն մայրաքաղաքի արվարձաններում փողոցային մարտեր էր մղում: Սալոնիկից առաջ չարժվող բանակի հրամանատարը հեռագրել էր Կ. Պոլսի օտարերկրյա դեսպանություններին՝ երկյուղ չկրել, միաժամանակ հորդոր էր հղված սուլթանական կառավարությանը չճանաչել[1]:

Երկրորդ զորաբանակի կազմում կռվում էին մոտ 550 հայ կամավորներ, որոնց հավաքագրել էր դաշնակցական գործիչ Գասպար Իփեկյանը: Հայ կամավորների խումբը հատկապես կարևոր դեր խաղաց Սելիմիե զորանոցի ապստամբ զինվորների զսպման գործում[2]:

Շրջապատման գիծը հետզհետե սեղմվում էր Կ. Պոլսի շուրջը: Ապրիլի 11-ին անձնատուր եղան Ելդըզի պարիսպներից դուրս գտնվող երկու զորանոցների զորքերը՝ իրենց 17 թնդանոթներով, ապա առանց դիմադրության հանձնվեց Սելիմիե զորանոցը: Ապրիլի 12-ի օրվա ընթացքում երիտթուրքական կոմիտեի զորքերը վերագրավեցին մայրաքաղաքը: Միակ կետը մնում էր Ելդըզը, ուր բռնակալն էր՝ 4000 հոգի հաշվող և ալբանացիներից կազմված անձնական թիկնազորով[3]: Կարճատև քաղաքացիական կռվում երկու կողմերի կորուստների թիվը հաշվվում էր 2000 մարդ:

Աբդուլ Համիդը Ելդըզի պալատում զարհուրանքի էր մատնված: Վերահաս ու անխուսափելի վտանգի երկյուղից աստիճա-

---

[1] Տե՛ս «The New York Times», 29 April 1909.

[2] Տե՛ս Վահան Փափազեան, Իմ յուշերը, հատ. Բ, էջ 110:

[3] Տե՛ս «The New York Times», 29 April 1909.

նաբար դասալիք էին լինում ոչ միայն սուլթանի պաշտպան զորքերը, այլև նրա ամենահավատարիմ ծառաներն անգամ: Սուլթանի ներքինիապետեր Նազիր և Ջաֆար աղաները փորձել էին փախչել, բայց պալատի հրացանակիրները ձերբակալել էին նրանց: Սուլթանը թքել էր նրանց երեսին և անիծել, որ դասալիք են լինում, երբ ինքը դեռ ողջ է: Հեռանում էին նույնիսկ հարեմի կանայք: Այդ օրը ձերբակալվեցին Ելդրզի պալատը պաշտպանող հրացանակիրներ և սպաներ, ընդհանուր թվով մոտ 100 մարդ: Ձերբակալվածների մեջ էր սուլթանի հրացանակիրների պետ (թյուֆենկջիբաշի) Թահիր փաշան, որը մարտի 31-ի հոգին էր: Բռնվեցին ու բանտ ուղարկվեցին նաև բազմաթիվ նշանավոր ու աննշան լրտեսներ: Հալածանք սկսվեց այն հոգևորականների դեմ, որոնք խռովության սկզբում մեծապես աջակցել էին սուլթանին: Ոստիկանությունից հեռացվեցին մեծ թվով պաշտոնյաներ:

Ապրիլի 12-ի երեկոյան Մահմուդ Շևքեթ փաշան մայրաքաղաքն իր շրջաններով հայտարարեց պաշարման դրության մեջ: Ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը Ելդրզի շուրջը զետեղվեցին մեծ թվով թնդանոթներ: Լսելով այդ մասին՝ սուլթանը փրկության ամեն հույս կորցրեց: Արքունիքի անդամները, տեսնելով անելանելի կացությունը, անխուսափելի կորստից փրկվելու համար, ընկան նրա ոտքերը և արտասվաթոր պաղատանքով խնդրեցին հանձնվելու հրաման տալ հավատարիմ մնացած սակավաթիվ զորամասերին: Երկար վարանումներից հետո, վերջապես, ապրիլի 14-ի առավոտյան Աբդուլ Համիդն իր վստահելի ուժերին կարգադրեց դադարեցնել դիմադրությունը և անձնատուր լինել: Երիտթուրքական մի զորամաս մտավ Ելդրզի պալատ, ձերբակալեց սուլթանին և նրան առանձնացրեց մի սենյակում: Մնացած պալատականներն ուղարկվեցին Ղալաթա-սերայ՝ Բերայի ոստիկանություն:

Աբդուլ Համիդի վերջին ճիգերը խորտակվեցին և դավը վիժեց: Մեծ ոճրագործին չօգնեցին ո՛չ կրոնը, ո՛չ չարիաթը և ո՛չ էլ երկրի ներքին գործերին եվրոպական միջամտություն առաջ բերելու փորձերը:

Բռնակալից պետք էր սպասել, որ մայրաքաղաքի բոլոր կա-

յազորները երիտթուրքական զորքերի դեմ կռվի դրդելուց հետո ինքն էլ կպայքարի մինչև վերջին չունչը, կգերադասի թաղվել իր պալատի փլատակների տակ, քան՝ հանձնվել: Բայց այդպես չեղավ: Գահընկեցությունից հետո առաջին խոսքերը պարզապես ողբալի էին. դրանք ցույց էին տալիս, որ այդ մարդուկը զուրկ է անգամ մի հասարակ ոճրագործի վեհանձնությունից ու հպարտությունից:

Թուրքիայի խորհրդարանը (պատգամավորների պալատը և սենատը), որ Կ. Պոլսում սուլթանի հաղթանակից հետո իր հիմնական կազմով փոխադրվել էր Սան-Ստեֆանո, որպեսզի առանց արդուլհամիդականների ճնշումների կարողանար աշխատել, ապրիլի 13-ի առավոտյան վերադարձավ մայրաքաղաք և նիստ գումարեց: Քննության դրվեց սուլթանի գահընկեցության հարցը: Բայց քանի որ Աբդուլ Համիդը դեռ անձնատուր չէր եղել, ուստի հարցը փոխադրվեց հաջորդ օրվա նիստին: Պատգամավորներն սպասում էին նրա անձնատվությանը, որ ուր որ է տեղի պիտի ունենար[1]:

Ապրիլի 14 (27)-ի առավոտյան խորհրդարանը վերսկսեց աշխատանքը և քննարկեց սուլթանի հանդեպ վերաբերմունքի հարցը: Նիստին ներկա էին շեյխ-ուլ-իսլամ Մեհմեդ Զիաէդդին էֆենդին և գլխավոր ուլեման:

Շեյխ-ուլ-իսլամը հատուկ հայտարարությամբ Աբդուլ Համիդին մեղադրանք ուղղեց երեք կետով. 1) Վատնել է երկրի հարստությունը, 2) Խախտել է շարիաթի օրենքները, 3) Կազմակերպել է արյունալի ջարդեր: Տվյալ պահին առկա է երկու ընտրանք՝ ներել կամ գահընկեց անել Աբդուլ Համիդին: Ներումն անհնար է, ասում էր կրոնապետը, որովհետև նա երդվել էր ծառայել սահմանադրությանը, բայց դրժել է խոստումը: «Աբդուլ Համիդը պետք է հեռանա, սա՛ է բարձրագույն կրոնական մարմնի որոշումը»,- եզրափակեց կրոնապետ Մեհմեդ Զիաէդդին էֆենդին: Նա և գլխավոր ուլեման հենց այդտեղ կազմեցին համապատասխան ֆեթվա, որտեղ թվարկված էին Աբդուլ Համիդի

---

[1] ***«The New York Times»****, 29 April 1909.*

հանցանքները՝ հազարավոր հպատակների սպանությունները և ժողովրդին դավաճանելու մեղքերը: Վերջում եզրակացություն էր արված, որ նա անարժան գահակալ է եղել: Ֆեթվան ներկայացվեց խորհրդարանին, որը կարճատև քննարկումից հետո բուռն ծափահարություններով ընդունեց հետևյալ որոշումը. «Սենատը և պատգամավորների պալատը լսելով ֆեթվան և քննելով ձեռքի տակ եղած ապացույցները, որոշեցին. «Գահընկեց համարել Աբդուլ Համիդին իբր սուլթան և խալիֆ: Գահի օրինական ժառանգ Ռեշադին ճանաչել սուլթան և խալիֆ»: Ժողովը մեկ ձայն անգամ չտվեց այն մարդու օգտին, ով երեսուն տարի իրեն անվանում էր «Աստծո ստվերը երկրի վրա»:

Այսպիսով Աբդուլ Համիդը՝ երեկվա ամենակարող բռնակալը, մի հասարակ մահկանացու դարձավ: Այդ աշխարհաղողորդ բռնապետը, որի չուրջը ֆանտաստիկ առասպելների մի այլանդակ պսակ էր հյուսվել, և որի համար ասվում էր, թե նա ներոնական գռեհիկ չարագործության հանճար է, իր դերը վերջացրեց որպես մի ողորմելի էակ: Քաղաքական հորիզոնից չքացավ նա, ով ամբողջ 33 տարի դարձել էր օսմանյան լայնածավալ պետության չար ոգին, նրա քայքայիչն ու կործանարարը, ով իր հպատակների արյունը հոսեցնել էր տվել վտակներով, ով մարդկային նախճիրների պատճառով ստացել էր «Մեծ մարդասպան», «Կարմիր սուլթան» անվանումները:

Սուլթան հռչակված արքայազն Ռեշադը Աբդուլ Համիդի փոքր եղբայրն էր[1]:

Թուրքիայում գահը ժառանգում էր ոչ թե սուլթանի ավագ որդին, այլ թագավորական տոհմի ավագը, ուստի գահի օրինական ժառանգը արքայազն Ռեշադն էր: Ինքը Աբդուլ Համիդն ուզում էր իրեն հաջորդ ունենալ իր սիրած որդի Բուրհանէդդինին, որը նրան միշտ ուղեկցում էր սելամլըքի արարողությանը և նման այլ հանդիսությունների, իսկ արքայազն Ռեշադին փաստորեն պահում էր բանտարկության մեջ Դոլմա-Բախչեի պալատում՝ սուլթանի ծառաների ու լրտեսների մշտական հսկողու-

---

[1] Տե՛ս **А. Ф. Миллер**, Оттоманская империя (султанская Турция), с. 33.

թյան տակ*: 1908 թ. օգոստոսին, երիտթուրքերի պնդումներից հետո, սուլթան Աբդուլ Համիդը ունկնդրություն էր չնորհել Ռեշադին: Նրան թույլատրվել էր համբուրել Աբդուլ Համիդի ձեռքը, ինչը նշանակում էր, թե սուլթանը նրան ճանաչում է գահաժառանգ: Բայց այդ դեպքին հաջորդեցին Ռեշադի դեմ կատարված մի շարք անհաջող մահափորձեր: Դոլմա-Բախչեում երեսնամյա փաստացի բանտարկությունը նրան կատարյալ ավերակ էր դարձրել: Նույնիսկ երիտթուրքական թերթերը, որոնք ամեն կերպ ջանում էին գովաբանել նոր փադիշահին, չկարողացան ցույց տալ նրա որևէ արժանիք, բացառությամբ այն բանի, որ գահակալման տոնակատարության ժամանակ նա «ինքը, առանց ուրիշի օգնության և բավական առույգ բարձրացավ գահի աստիճաններով»[1]:

Խորհրդարանն ընտրեց երկու պատգամավորություն՝ ընդունված որոշման մասին տեղեկացնելու Աբդուլ Համիդին և Ռեշադին:

Առաջին պատգամավորության մեջ մտան սենատորներ Արիֆ Հիքմեթ փաշան, հայազգի Արամ էֆենդի Երամյանը**,

---

* Հին ժամանակներում անցանկալի գահաժառանգների դեմ սուլթաններն ընտրում էին ամենահեշտ միջոցը. գահի վրա նստելուց հետո նոր սուլթանը ֆիզիկապես վերացնում էր նրանցից անցանկալիներին: Բայց 19-րդ դարի սկզբներից մշակվել էին ավելի նուրբ, թեև նույնքան կատարյալ միջոցներ: Գահին հավակնորդ արքայազնին մի առանձին պալատ էր հատկացվում: Նա որևէ գործ չէր ստանձնում, ապրում էր աշխարհից բոլորովին կտրված: Բայց փադիշահը հոգ էր տանում, որպեսզի արքայազնի բանտարգելումը հաճելի լինի. սա միշտ ուներ լավագույն խոհարարներ, նրա պալատի ներքնահարկում պահվում էին (հակառակ Ղուրանի) ֆրանսիական նուրբ գինիներ և այլ խմիչքներ, նրա հարեմը միշտ նորացվում էր գեղեցիկ աղջիկներով, հատկապես չերքեզուհիներով: Բավական էր ակամայից պարապ մի քանի տարվա նման կյանքը, որպեսզի գահի հավակնորդը դառնար մի ողորմելի արարած, որը ոչ միայն անպետք էր դառնում իշխելու, այլև դառնում խելացի կյանք վարելու: Այդպես էր եղել նաև Ռեշադի հետ Դոլմա-Բախչեի պալատում:

[1] **А. Ф. Миллер**, Оттоманская империя (султанская Турция), с. 131.

** Արամ Երամյանը հայ կաթոլիկների Ազգային երեսփոխանական ժողովի նախագահն էր: Նա այդ օրերին նշանակվել էր սենատոր՝ սուլթանի անձնական դանձապահ Հովհաննես փաշա Սագըզի փոխարեն, որը հրաժարվել էր հիվանդության և ծերության պատճառով:

պատգամավորներ Ռեշադ փաշան և սալոնիկցի հրեա Էմմանուել Կարասոն: Նրանք անմիջապես դիմեցին Ելդրզ և Աբդուլ Համիդի ներկայությամբ կարդացին խորհրդարանի որոշումը: Աբդուլ Համիդը զարմանք հայտնեց, որ «ժողովուրդն իր նկատմամբ անողոք է գտնվել, մինչդեռ ինքը նրան սիրում էր հայրական սիրով»: Ապա հայտնեց, որ պատրաստ է հնազանդվելու:

Շատ չանցած՝ Ելդրզ գնաց մի պատվիրակություն ևս, այս անգամ կառավարության լիազորությամբ և հազարապետ Էսադ փաշայի գլխավորությամբ, որի եղբորը սպանել էին բռնապետի հրամանով: Զինվորական կարճ բարևից հետո Էսադը դիմում է Աբդուլ Համիդին, և նրանց միջև տեղի է ունենում հետևյալ խոսակցությունը.

«–Ազգը գահընկեց արեց քեզ համաձայն [խորհրդարանի ընդունած] մի ֆեթվայի:

– Կաղեր (ճակատագիր:– Հ. Ս.). երևի սա է իմ բախտը»,– գոչում է Աբդուլ Համիդը, ապա ծանր մտորումների մեջ ընկնելով՝ հարցնում է.

«– Իսկ իմ կյա՞նքը»:

Հետևում է Էսադ փաշայի պատասխանը.

«– Ազգը երաշխավորում է քո կյանքը:

– Իհարկե, այդպես կասեք այժմ ... Բայց հետո՞ ... Ես խնայեցի իմ եղբոր (Մուրադ V-ի:– Հ. Ս.) կյանքը և թույլ տվեցի, որ 32 տարի ապրի:

– Վախենալու ոչինչ չունեք»,– միջամտում է պատվիրակության մի ուրիշ անդամ:

Քիչ հանդարտված Աբդուլ Համիդը հարցնում է.

«– Իսկ որտե՞ղ պիտի բնակվեմ:

– Մեր գալու նպատակը միայն քո գահընկեցությունը հայտնելն է, իսկ քո բնակվելու տեղի մասին մենք բան չգիտենք»,– լինում է Էսադ փաշայի պատասխանը:

Նույն րոպեին բարձրանում են խուլ ու զսպված հեծեծանքներ. լաց էր լինում Աբդուլ Համիդի կողքին կանգնած կրտսեր որդիներից մեկը՝ իշխան Աբդուլ Ռահիմը: Աբդուլ Համիդը նույնպես փղձկում է և շարունակում.

«– Ես կցանկանայի ընակվել Զրաղանի պալատում. բայց որովհետև չենք կարող համաձայնվել [ապրել] իշխան Սալահէդդինի** հետ, պետք է, որ նա փոխադրվի մի այլ տեղ...»[1]:*

Երբ պատգամավորությունը պատրաստվում էր մեկնել, գահընկեց Աբդուլ Համիդը լացակումած խնդրում է իրեն տրամադրել մի երկու ծառա, որովհետև իր բոլոր ծառաները հեռացել են կամ կալանավորվել:

Խոստանալով խնդրանքը տեղ հասցնել՝ պատվիրակությունը հեռանում է:

Այսպիսով, ամեն բան կորցրած արյունակզակ գազանը դողում էր միայն մի բանի՝ իր կյանքի վրա: Մահվան ուրվականն ամբողջովին ի հայտ էր բերել նրա երկչոտ ոգին: Եվ այդ վեհերոտ ու փոքրոգի մարդուն էին չատ գրիչներ տասնամյակներ ներկայացնում որպես ուժեղ, աննկուն, անպարտելի մի մեծություն...

«Արեւելքը» վերջին պահին ընթերցողներին հայտնում էր. «Թերթս մամուլը դրուած պահուն անհուն ուրախութեամբ կ'իմանանք, թէ մեծ մարդասպանը՝ Ապտիւլ Համիտ վար առնուած է օսմանեան հարստութեան այն փառապանծ գահէն, զոր այս հասարակ ոճրագործը արատաւորեց եւ անպատուեց երեսուներեք տարի»[2]:

Երկրորդ պատգամավորության մեջ էին սենատորներ Մուխթար փաշան և Իսմայիլ Հակկին, պատգամավորներ Տալարը և Արիստիդին: Դոլմա-Բախչեում ներկայանալով Ռեշադին, պատգամավորները հայտնեցին, որ նա Օսմանյան տերության սուլթան է ընտրվել: Ռեշադն ուրախություն հայտնեց և անմիջապես մեկնեց Ելդզի պալատ, ուր տեղի ունեցավ նրա գահակալության պաշտոնական հանդեսը:

---

* *Զրաղանը ծովափին գտնվող այն հռչակավոր ապարանքն էր, ուր բանտարկված ապրել էր, իբրև խելագար, գահընկեց արված սուլթան Մուրադ V-ը՝ Աբդուլ Համիդի երեց եղբայրը:*

** *Իշխան Սալահէդդինը սուլթան Մուրադ V-ի որդին էր, որ հոր մահից հետո զրաղեցնում էր Զրաղանի ապարանքը:*

[1] ***«Մշակ»**, № 96, 9 մայիսի 1909 թ.:*

[2] ***«Արեւելք»**, № 7074, 15 ապրիլի 1909 թ.:*

Կոստանդնուպոլսում պատմական պահ էր: Շեփորն ազդարարեց նոր սուլթանի ժամանումը Ելդրզ: Երկրորդ զորաբանակի հրամանատար Մահմուդ Շևքեթ փաշան իր սպայակազմով հայտնվեց չինության բակում: Նրանց հետևեցին սենատի նախագահ Սաիդ փաշան, պատգամավորական ժողովի նախագահ Ահմեդ Ռիզան և շեյխ-ուլ-իսլամը: Նրանք բարձրացան մարմարյա աստիճաններով: Այդ պահին նվագախումբն սկսեց նվագել ոչ թե աբդուլհամիդյան, այլ ազատության հիմնը:

Շատ չանցած, բակում հայտնվեց մի կառք, որից դուրս եկավ փոքրահասակ ու ամրակազմ Ռեշադը: Հավաքվածները նրան ջերմորեն ողջունեցին: Ռեշադը մտավ կարևոր սրահներից մեկը՝ չքեղ ու զարդարված: Սկսվեց նրա երդման արարողությունը, որը վարում էր շեյխ-ուլ-իսլամ Մեհմեդ Զիաէդդին Էֆենդին: Երբ նախարարների դահլիճը, սենատն ու պատգամավորների ժողովը հայտնեցին իրենց հպատակությունը նոր սուլթանին, Ռեշադին կնքեցին «Մեհմեդ» անունով՝ նրա անունն առնչելու համար Կ. Պոլիսը բյուզանդացիներից գրաված սուլթան Մեհմեդ II Ֆաթիհի հետ: Այնուհետև տեղի ունեցավ հրավառություն, բոլոր կողմերից լսվում էին «երկար կյանք փաղիշահին» բացականչությունները: Մեհմեդ V-ը դուրս եկավ պալատից և քայլեց փողոցներով՝ ստանալով զինվորականության և քաղաքացիների ողջույնները[1]:

Թուրքիայի պատմության մեջ գահընկեց սուլթաններից շատերը ոչնչացվում էին այս կամ այն միջոցով: Բայց երիտթուրքերն այնքան «մարդասեր» գտնվեցին, որ տասնամյակներ շարունակ իրենց հալածող ու ոչնչացնող, դեռ երեկ ուխտադրուժ ու երդմնազանց սուլթանի կյանքին ձեռք չտվեցին, այլ բավականացան նրան մայրաքաղաքից հեռացնելով միայն: Երիտթուրքերի նման «մարդասիրությունը» բացատրվում էր այն բանով, որ նրանք, ոչ առանց հիմքի, Աբդուլ Համիդին իրենց ուսուցիչն էին համարում: Օսմանյան ռազմաավատապետական պետության այս արյունարբու սուլթանը հայկական զանգվա-

[1] Տե՛ս «The New York Times», 29 April 1909.

ծային կոտորածների սկիզբը դնելով, պատմականորեն կատարում էր Թուրքական ազգային նորածագ Թույլ բուրժուազիայի կուսակցության՝ «Իթթիհադ վե Թերաքքի» գործը: Ուսուցչի նկատմամբ, որքան էլ նա դաժան եղած լինի, աշակերտն իրավունք չունի երախտամոռություն ցուցաբերելու: Երիտթուրքերը պիտի իրագործեին նրա տված դասը և այն էլ ինչպե՞ս...

Արյունարբու «Կարմիր սուլթանի» նկատմամբ ցուցաբերած «ջենտլմենական վերաբերմունքին» Իթթիհադը փոխհատուցեց նրանով, որ խռովության ճնշելուն հաջորդած օրերին նրա հետևորդներից 2000 հոգու մահապատժի ենթարկեց[1]:

Խորհրդարանը որոշել էր գահընկեց Աբդուլ Համիդին աքսորել Սալոնիկ՝ նրա տեղափոխման պարտականությունը դնելով Կոսովոյի կուսակալ Հուսեյն փաշայի վրա: Վերջինս գերմանական թերթերից մեկին տվել էր հարցազրույց, որը թարգմանաբար տպագրվեց «Բիւզանդիոնում»: Հուսեյն փաշան պատմել էր.

«Ապրիլի 14-ին, ոստիկան զօրաց գնդապետ Ղալիպ պէյի եւ հազարապետ Ֆէթհի պէյի հետ Ելտրզ գացի:,,, Մօտենալով յարգանօք բարեւեցի (սուլթան Աբդուլ Համիդին:- Հ. Ս.): Շատ տխուր ու ընկճուած էր: «Կը յուսամ որ, ըսի, պաշտօնս նկատողութեան պիտի առնուի Ձեր Վեհափառութեան կողմէ:

Ազգին եւ բանակին հրամանով ձեր կեանքին վրայ վիճաբանելու եկայ: Ձեր կեանքը կը շահագրգռէ թէ՛ ժողովուրդն եւ թէ՛ ձեր գերդաստանը: Ամէն բանէ առաջ, ազգը չ'ուզէր ձեզի դէմ բռնութիւն բանեցնել՝ այս պատճառաւ ձեր հետ բարեացակամութեամբ վարուելու պաշտօն ունիմ: Կ'երդնում, որ վախնալու բան մը չունիք, Ձեր կեանքը երաշխաւորուած է: Ձեր նախորդներուն պատմութիւնը գիտէք: Ձեր Մուրատ եղբօրը տխուր վախճանը կը յիշէք տակաւին, վախճան մը, որ ազգին համար ալ դժնդակ եղաւ: Որոշումն անդառնալի է, երկու սուլթան միեւնոյն տեղը չեն կրնար մնալ. թէ՛ ազգին եւ թէ՛ Ձեր շահն ասիկա կը պահանջէ»:

---

[1] Տե՛ս «The New York Times», 29 July 1909.

Ապտ-իւլ-Համիտ պատասխանեց. «Կը հասկնամ ինչ որ կ'ուզէք»։- «Ձեզ Սելանիկ պիտի տանիմ» պատասխանեցի։ Ապտ-իւլ-Համիտ սարսափեցաւ եւ ըսաւ. «Ինչո՞ւ Սելանիկ կը տանիք զիս։ Տարիքոտ ու հիւանդոտ եմ, կ'ուզեմ Պոլիս մնալ եւ բնակիլ Զրաղանի պալատը, ուր ծնայ եւ ուր Մուրատ մեռաւ։ Կարգն իմս է եւ տեղն ալ յարմար է։ Կամ թէ ազատ ձգեցէք որ Եւրոպա երթամ»։ Ամէն ջանք ըրի որ համակերպի, բայց Ապտ-իւլ-Համիտ մարեցաւ, կիներն անոր վրայ խոյացան, ջուր բերին եւ դառնօրէն կու լային։ Վերջնականապէս ընդունեց եւ մեկնելու պատրաստուեցաւ։ Զրահապատ ինքնաշարժ կառքով առջեւէն կ'երթայի։ Ապտ-իւլ-Համիտ պզտիկ երեք սնտուկ առաւ հետը, յայտնի չէր թէ ի՞նչ կար անոնց մէջ։ Կայարանին մէջ Ապտ-իւլ-Համիտ ընկճուած երեւոյթ մը ունէր, մինչդեռ կիներն ու տղաքն ուրախ էին, որ կը ճամբորդէին։ Յետոյ Ելտրզի մէջ կատարուած խուզարկութեանց միջոցին գտնուեցան կարեւոր գումարներ, հազարաւոր վեցհարուածեաններ, որոնց ամէնքն ալ լեցուն էին եւ իւրաքանչիւրը 100 ոսկի կ'արժէր։ Ամէն տեղ, սեղաններուն, բազմոցներուն, անկողիններուն վրայ զէնք կար։ Ապտ-իւլ-Համիտ գիշերազգեստ չունէր, բայց հազարաւոր փողկապ ունէր, ամէն ձեւէ եւ ամէն գոյնէ»[1]։

Ապրիլի 14-ի լոյս 15-ի կեսգիշերին Աբդուլ Համիդն իր կանանցից 11-ի և ներքինիների հետ, հատուկ գնացքով, մի քանի զինվորների ուղեկցությամբ ուղարկվեց մակեդոնական բանակի հրամանատարության նստավայր Սալոնիկ, ուր պիտի ապրեր «Ալադին» հայտնի ամառանոցային պալատում*։

«Ալադինում» գտնված առաջին իսկ օրերից Աբդուլ Համիդն ընկել էր անբուժելի հոգեկան ջղաձգությունների մեջ[2]։ Նա համարյա չէր քնում, հարձակվում էր իրեն շրջապատողների վրա, իր նախկին նվիրյալներին էր պահանջում։ Սալոնիկ գալուց

---

[1] **«Բիւզանդիոն»**, № 3850, 10 (23) հունիսի 1909 թ.։

* Բալկանյան պատերազմի (1912 թ.) ժամանակ երիտթուրքերը Աբդուլ Համիդին Սալոնիկից բերեցին Կ. Պոլիս, որտեղ նա մահացավ բնական մահով, 1918 թվականին։

[2] Տե՛ս **«Ախուրեան»**, № 9, 4 փետրվարի 1910 թ.։

մեկ շաբաթ էլ չէր անցել, բայց նախկին միապետը հյուծվել ու անճանաչելիորեն փոխվել էր և, ոչ ոքի չունենալով իր շուրջը, պալատում մնացել էր միայնակ[1]:

Նոր գահակալին անմիջապես սկսեցին չնորհավորել եվրոպական մեծ պետությունների կառավարությունները: Դա ցույց էր տալիս, որ Թուրքիայում գահակալի փոփոխությունը որևէ արտաքին բարդություն առաջ չի բերի:

Իսկ նոր սուլթան Մեհմեդ V-ն, որ հանկարծակիի եկած, չգիտեր իր անելիքները, անընդհատ իր երախտագիտությունն էր մրմնջում Իթթիհադի հասցեին և նրան ողջություն մաղթում:

Հենց այդպիսի կամազուրկ սուլթան էր պետք երիտթուրքերին: Այժմ Իթթիհադը որոշեց պետության կառավարումն ամբողջությամբ վերցնել իր ձեռքը:

Աբդուլ Համիդի անկումից հետո պետք է կազմվեր նոր կառավարություն, որի ղեկավարի ամենահավանական թեկնածուն խորհրդարանի նախագահ Ահմեդ Ռիզան էր: Բայց Թևֆիկ փաշայի հրաժարականից հետո նոր կառավարության կազմելը հանձնարարվեց նախկին վարչապետ Հուսեյն Հիլմի փաշային, որն առաջարկեց հետևյալ ցուցակը. ներքին գործերի նախարար՝ պատգամավորների պալատի փոխնախագահ Թալեաթ, արտգործնախարար՝ Ռիֆաթ փաշա, ֆինանսների՝ պատգամավոր Ջավիդ, ռազմական՝ երկրորդ զորաբանակի հրամանատար Սալիհ փաշա, ծովային՝ Ռիզա փաշա, արդարադատության՝ Հասան Ֆեհմի փաշա, առևտրի և հասարակական աշխատանքների՝ Գաբրիել Էֆ. Նորատունկյան, գյուղատնտեսության՝ Մավրոկորտադո, վակըֆների՝ Մահմուդ Էքրեմ բեյ, շեյխ-ուլ-իսլամ՝ Մեհմեդ Զիաէդդին Էֆենդի[2]: Հետագա մի քանի օրերին նախարարների խորհրդի կազմը համալրվեց նոր անդամներով. դրանցից էր Իթթիհադի նշանավոր գործիչ Ադիլ բեյը:

Ապրիլի 15-ի առավոտյան մունետիկը և հեռագրերի ցրված պատճեններն ավետեցին բռնապետի գահընկեցությունը և Մեհմեդ (Մուհամմեդ) V-ի գահակալությունը: Տգետ թուրք և

---

[1] Տե՛ս **«Հորիզոն»**, № 43, 24 փետրվարի 1910 թ.:

[2] Տե՛ս **«New York Times»**, 26 April 1909.

քուրդ խուժանը, հուսախաբ ու վերին աստիճանի ընկճված, ցրվեց գանազան կողմերի վրա[1]: Իսկ գահից Աբդուլ Համիդին գրկելու լուրը ցնծության ալիք առաջ բերեց մայրաքաղաքում: Կայարանում, փողոցներում ու պարտեզներում ասեղ գցելու տեղ չկար: Մարդիկ փոթորկից հետո վերադտնում էին իրենց, չնորհավորում միմյանց: Հայերը դարձյալ անթաքույց հրճվանք էին ապրում, երիտթուրքերին երախտագիտական խոսքեր էին ուղղում, միաժամանակ պատրաստակամություն հայտնում իրենց ուժերի համեմատ նրանց աջակցություն ցույց տալ:

Ահա՛ կայարանի մոտ խռնված բազմության առջև ճառով հանդես էր գալիս Պոլիս մտած առաջապահ զորամասի հրամանատար Ղալիբ բեյը, որին սրտագին ողջունում էին հանրահավաքին մասնակցող բազմաթիվ հայեր: Նրանց չարքում էր Կարմիր խաչի հայ կանանց պատվիրակությունը, որը հրամանատարին ծաղկեփունջ նվիրելու ցանկություն էր հայտնել: Ղալիբ բեյը կայարանի մուտքի մոտ ընդունում է կանանց պատվիրակությանը, չնորհակալություն հայտնում իր «հայ քույրերին» և նրանց բախտավորություն ցանկանում: Թուրք սպայի և հայ կանանց չուրջը հետզհետե հավաքվում է հոծ բազմություն: Լսվում են «Քա՛հր օլսուն խայինլեր» («Կորչե՛ն դավաճանները»), «Յաշասը՛ն հուրրիեթ օրդուսու» («Կեցցե՛ ազատության բանակը») և նման այլ բացականչություններ: Ղալիբ բեյը, դիմելով բազմությանը, ասում է. «Մենք ամենևին չենք ցանկանում, որ արյունահեղություն լինի, և չնորհակալություն հայտնելով մեր հայ քույրերին, հույս ունենք, որ նրանց ծառայությանը պետք չենք ունենա»[2]:

Ղալիբ բեյը նոր էր վերջացրել ելույթը, երբ միջահասակ, բարեձև ու կրակոտ մի երիտասարդ սպա, ճեղքելով բազմությունը, մոտեցավ հայ կանանց, և սեղմելով նրանց ձեռքը, ջերմորեն չնորհակալություն հայտնեց: Ամբոխի միջից մեկը հանկարծ արձակեց ինքնաբուխ ու անզուսպ ճիչ. «Յաշասը՛ն Էնվեր բեյ...»: Հանկարծակիի եկած բազմությունն անմիջապես արձա-

---

[1] *Տե՛ս* ***«Արեւելեան մամուլ»****, № 16, 14 ապրիլի 1909 թ.:*

[2] ***«Մշակ»****, № 90, 1 մայիսի 1909 թ.:*

գանքեց բուռն աղաղակներով: Զէ՞ որ հավաքվածների կողքին էր օսմանյան հեղափոխության հերոսներից մեկը, որը 1908 թ. լքելով Բեռլինում զինվորական կցորդի իր պաշտոնը, հայտնվել էր Մակեդոնիայում և Նիազի բեյի հետ կռիվ էր սկսել սահմանադրության վերականգնման համար: Հեղափոխության սկզբից ի վեր նրա անունը Նիազի բեյի անվան կողքից չէր իջնում թուրքական թերթերի էջերից: Այո՛, իրական Էնվեր բեյն էր իրենց կողքին: Ականատեսը պատմում է.

«Ու սկսեցին, ի նշան երախտագիտութեան, համբուրել նրա ձեռքը, ճակատը, ոմանք՝ նոյնիսկ ոտքերը: Խեղճ երիտասարդն այլեւս հնարաւորութիւն չունեցաւ շարունակելու եւ վերջացնելու հայ կանանց ուղղուած չնորհակալական խօսքերը: Նա այնքան նեղուեց երախտագիտութեան անդիմադրելի ցոյցերից, որ ժանդարմները ստիպուած եղան նրան օգնութեան փութալ՝ ազատելու համար բազմութեան, այդ թւում հայերի բազմութեան երկրպագու պաշարումից»[1]:

Էնվերի ճակատը համբուրող հայերն իրենց իմանային, թե այդ համակրելի սպան մի քանի տարի հետո դառնալու է իրենց ցեղի ոխերիմ թշնամին և գազանային անզուսպ կրքով հոշոտելու է նրա մարմինը:

Այն ժամանակ, երբ Կ. Պոլիսը տոնում էր Աբդուլ Համիդի գահընկեցությունը և նոր սուլթանի գահակալությունն ու սահմանադրական ռեժիմի հաղթանակը, Փոքր Ասիայում զարմանալի արագությամբ խմորվում էին վտանգավոր նոր անցքեր, որոնք ուղղված էին կրկին իշխանության եկած երիտթուրքերի դեմ և, միաժամանակ, կոչված էին նոր պատուհասներ բերելու քրիստոնյաների գլխին:

Երիտթուրքերից շատերն ստիպված էին Փոքր Ասիայից փախչել այնպես, ինչպես անհաջող աբդուլհամիդյան հեղաշրջման հեղինակները՝ Կ. Պոլսից: Փոքրասիական շատ քաղաքներում, հեղաշրջման գաղափարին հավատարիմ մնացած և հետադիմության ազդեցության տակ գտնվող զինվորները նույնիսկ սկսել էին կողոպտել երիտթուրք գործիչների տները:

---

[1] **«Մշակ»**, № 90, 1 մայիսի 1909 թ.:

Եթե Փոքր Ասիայի միատարր մուսուլման բնակչություն ունեցող վիլայեթներում, սանջակներում, կազաներում հրահրված այդ նոր շարժումն ուղղված էր սահմանադրական կարգի դեմ, ապա հայաբնակ վիլայեթներում՝ բացառապես հայերի դեմ: Այդ տեսակետից վիճակը տիպիկ էր նախ և առաջ Վասպուրականում:

Թեև ուշացումով, Վանի վիլայեթի թուրքերն ու քրդերը սկսեցին շարժվել: Տեղի իսլամ խուժանը, որ միշտ ջարդի ու կողոպուտի երազներ ուներ, համոզված էր, որ եկել է պատեհ ժամը, և արյուն ոթելու պատրաստություն էր տեսնում:

Վանի կուսակալ Ֆերիդ փաշան իր երկդիմի ընթացքով սկսեց քաջալերել խուժանի վայրենի բնազդները և վիլայեթում տեղակայված զորքերի մեջ հետադիմական շարժում առաջ բերել: Այդ չարագուշակ ընթացքն անպայման աղետալի հետևանքներ կունենար, եթե տեղի զինվորականության ղեկավարությունը և, մանավանդ, հրամանատար Յավեր փաշան ամեն կերպ չաշխատեին չարիքի առաջն առնել:

Այնուամենայնիվ, ապրիլի 12-ին, զորքի մի մասի ըմբոստություն և ցույց տեղի ունեցան: Վան քաղաքի Այգեստանում գտնվող զորամասը երեկոյան կողմ սվինավոր հրացաններով դուրս եկավ զորանոցներից և դիմեց դեպի քաղաք՝ «Փաղիշահըմ չո՛ք յաշա» գոչելով: Ճանապարհին զինվորները քաղաքից վերադարձող և կառքեր նստած հայերին իջեցրին և «Հայն ո՞վ է, որ կառք նստի» գոռգոռոցներով ծեծեցին նրանց:

Իրեն միացնելով նվագախումբը՝ զորքը հասնում է քաղաքի կենտրոն, ուր զինվորներն սկսում են բացականչել. «Մենք չարիաթ ենք ուզում»: Այդ պահին հասնում են Յավեր փաշան և ուրիշ սպաներ, ինչպես նաև քաղաքի մուֆթին, որոնք կարողանում են հանդարտեցնել զինվորների չեղված մտքերը և նրանց վերադարձնել իրենց տեղերը:

Կուսակալ Ֆերիդ փաշան, որ ամբաստանվել էր զորքի ցույցին նպաստելու համար, ստիպված հրաժարական տվեց և մեկնեց: Յավեր փաշան նշանակվեց նաև կուսակալի փոխանորդ:

Ապրիլի 13-ին, կիրակի օրը, դաշնակցություն կուսակցու-

թյան Վան քաղաքի կոմիտեի նախաձեռնությամբ, Նորաչեն անվանյալ եկեղեցու գերեզմանատանը տեղի ունեցավ մեծ հանրահավաք, ուր ելույթ ունեցան Իշխանը, Արամը և Վռամյանը: Նրանք չեշտեցին ինքնապաշտպանության անհրաժեշտությունը, և սահմանադրությունը պաշտպանելու համար ժողովրդին կոչ արեցին՝ կանգ չառնել որևէ զոհողության առջև: Հանրահավաքի վերջում հայկական կուսակցությունների տեղի ներկայացուցիչներից կազմվեց մի խառը հանձնաժողով, որը երկու փաստաթուղթ պատրաստեց: Առաջին փաստաթուղթը նույն օրը հեռագրով ուղարկվեց Կ. Պոլսի կառավարությանն ու մեջլիսին, որով հայտնվում էր, թե Վանի հայությունը պատրաստ է զոհվելու սահմանադրության պաշտպանության համար: Երկրորդ փաստաթղթով՝ հանրահավաքի մասնակիցները դիմում էին տեղի կառավարչությանը և զենք պահանջում հայ կամավորների համար, որոնք կպահպանեին քաղաքի անդորրությունը: Յավեր փաշան պատասխանեց, որ Ազատարար բանակն արդեն Պոլիս է մտել, Վանում վիճակը կայուն է և հայ կամավորներին զենք կտրվի միայն այն դեպքում, եթե դրա կարիքն զգացվի:

Երբ մայրաքաղաքում և նրա մատույցներում թուրքերը կռիվ էին սկսել միմյանց դեմ, նույն ժամանակ այդ ցեղի մարդիկ հեռավոր Կիլիկիայում հայերի լայնածավալ կոտորածներ էին սկսել:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 1.- Օսմանյան կայսրությունը, որը բաղկացած է իր այժմյան սեփականությունը հանդիսացող երկրներից և առանձնաշնորհյալ գավառներից, անբաժանելի ամբողջություն է, և որևէ մեկը որևէ պատճառով չի կարող երբևէ անջատվել նրանից:

Հոդ. 2.- Օսմանյան կայսրության մայրաքաղաքը Կոստանդնուպոլիսն է, որը կայսրության մյուս քաղաքներից որևէ բացառիկ արտոնություն կամ առանձնաշնորհություն չունի:

Հոդ. 3.- Օսմանյան վեհապետությունը, որը վեհապետի անձով ամբողջացնում է իսլամության գերագույն խալիֆայությունը, պատկանում է Օսմանի ազգատոհմի ավագագույն թագաժառանգին՝ հնագույն կանոնների համաձայն:

Հոդ. 4.- Վեհափառ սուլթանը՝ որպես գերագույն խալիֆա, իսլամ կրոնի պաշտպանն է և բացարձակապես բոլոր օսմանցիների վեհապետն ու առաջնորդը:

Հոդ. 5.- Վեհափառ սուլթանը պատասխանատվությունից ազատ է: Նրա անձը սուրբ է:

Հոդ. 6.- Օսմանյան կայսերական գերդաստանի անդամների ազատությունը, անձնական անշարժ և շարժական գույքը, ցկյանս հատկացված թոշակը բոլորեքյան երաշխավորության մեջ են:

Հոդ. 7.- Վեհափառ սուլթանի վեհապետական իրավունքների մեջ են մտնում հետևյալ գործառույթները. նախարարներ է նշանակում և պաշտոնաթող անում, աստիճաններ, պաշտոններ և պատվոնշաններ է տալիս, առանձնաշնորհյալ գավառների իշխաններին է հաստատում հրովարտակի միջոցով՝ վերջիններիս շնորհելով որոշակի արտոնություններ, դրամ է հատում, աղոթքի ժամանակ մզկիթների մեջ նրա անունն է հնչեցվում, պետությունների հետ պայմանագրեր է կնքում, ցամաքային և ծովային զորքերին հրամաններ է արձակում, ռազմական տեղաշարժերն է որոշում, Շարիաթի և օրենքի պահանջները գործադրել է տալիս, հասարակային վարչության վերաբերյալ կանոններ է հաստատում, ոճրադատ ատյանների վճռած պատիժները ներում է

կամ թեթևացնում, Ընդհանուր ժողովն է (Պատգամավորական ժողովի և Ծերակույտի ընդհանուր ժողով) գումարում կամ ցրում, ու եթե անհրաժեշտ է համարում, լուծարում է Պատգամավորական ժողովը՝ վերստին ընտրել տալու պայմանով:

ՕՍՄԱՆՅՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդ. 8.- Օսմանյան կայսրության բոլոր հպատակները առանց խտրականության կոչվում են օսմանցի, ինչ էլ որ լինի նրանց դավանած կրոնը:

Օսմանցի լինելը հաստատվում կամ վերանում է օրենքի որոշած հանգամանքներում:

Հոդ. 9.- Բոլոր օսմանցիներն ունեն անհատական ազատություն՝ պայմանով, որ ուրիշի ազատությանը վնաս չհասցնեն:

Հոդ. 10.- Բացարձակապես անբռնաբարելի է անհատական ազատությունը: Ո՛չ ոք որևէ պատրվակով, օրենքի որոշած հանգամանքներից ու սահմանած ձևերից դուրս, որևէ պատիժ չպիտի կրի:

Հոդ. 11.- Պետության կրոնը իսլամն է. պետությունը, պահպանելով հանդերձ այս սկզբունքը, պաշտպանում է կայսրության մեջ ճանաչված բոլոր կրոնների ազատ գործունեությունը և հաստատուն է պահում զանազան հանրույթներին չնորհված կրոնական արտոնություններն ա՛յն պայմանով, որ չվնասվեն բարեկարգությունը և բարի վարքը:

Հոդ. 12.- Մամուլն ազատ է օրենքի գծած սահմանների մեջ:

Հոդ. 13.- Օսմանցիները կարող են առևտրային, արհեստակցական և երկրագործական ընկերություններ կազմել օրենքի և կանոնադրությունների որոշած սահմանների մեջ:

Հոդ. 14.- Օսմանյան ազգության վերաբերյալ մեկ կամ մի քանի անձեր իրավունք ունեն խնդրագիր ներկայացնելու իրավասու իշխանություններին՝ ի վնաս իրենց կամ հանրային շահի գործված օրինազանցությունների և կանոնազանցությունների համար. կարող են նաև բողոք արտահայտող խնդրագիր ներկայացնել Օսմանյան ընդհանուր ժողովին՝ պետության պաշտոնյաների գործունեությունից գանգատվելու համար:

Հոդ. 15.- Ուսումն ազատ է: Յուրաքանչյուր օսմանցի կարող է

հասարակական կամ մասնավոր ուսումնարան բացել օրենքին համաձայն վարվելու պայմանով:

Հոդ. 16.– Բոլոր վարժարանները պետության հսկողության տակ են: Բոլոր օսմանցիներին տրված ուսումը կանոնակարգելու և միասնականացնելու համար ուղիներ պետք է մտածվեն, սակայն զանազան հանրույթների կրոնական ուսումն անձեռնմխելի է:

Հոդ. 17.– Բոլոր օսմանցիները հավասար են օրենքի առջև: Երկրի հանդեպ նրանք ունեն միևնույն իրավունքներն ու պարտականությունները՝ բացի կրոնին և դավանանքին վերաբերող հանգամանքներից:

Հոդ. 18.– Պետության պաշտոններում ծառայության անցնելու համար օսմանյան հպատակները պետք է տիրապետեն պետության պաշտոնական լեզվին՝ թուրքերենին:

Հոդ. 19.– Բոլոր օսմանցիները պաշտոն են ստանձնում իրենց ընդունակություններին, արժանիքներին և հաջողություններին համապատասխան:

Հոդ. 20.– Հատուկ օրենքի կիրառությանը համապատասխան՝ տուրքերի բաշխումն ու գանձումը կատարվում են՝ յուրաքանչյուր անհատի կարողության համաձայն:

Հոդ. 21.– Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր մարդու սեփականությունն անձեռնմխելի է:

Կարելի է գրավել անհատական սեփականությունը միայն այն ժամանակ, երբ հանրային շահն է պահանջում, սակայն պայմանով, որ իրական արժեքը կանխիկ վճարվի:

Հոդ. 22.– Օսմանյան երկրների մեջ յուրաքանչյուր մարդու բնակարանն անձեռնմխելի է: Օրենքի որոշած հանգամանքներից բացի՝ իշխանությունը որևէ մեկի տուն բռնությամբ մտնելու իրավունք չունի:

Հոդ. 23.– Դատավարության համար հաստատվելիք օրենքին համապատասխան՝ որևէ պարագայում չի կարելի ստիպել ինչ-որ մեկին, որ իրեն վերաբերող և իրավասու դատարանից բացի՝ դիմի մեկ ուրիշ ատյանի ևս:

Հոդ. 24.– Գույքերի գրավումը, պարտքի փոխարեն աշխատանքն ու տուգանքն արգելված են: Սակայն պատերազմի ժամանակ օրինականորեն կատարված հանգանակություններն ու այլ պարագաները բացառություն են:

Հոդ. 25.– Որևէ օրենքով հիմնավորված չլինելու դեպքում չի կա-

ելի որևէ մեկից փող վերցնել՝ տուրքի կամ մեկ այլ երևույթի անվամբ:

Հոդ. 26.- Զարչարանքը և ամեն տեսակ այլ կարգի տանջանքները բացարձակապես արգելված են:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Հոդ. 27.- Վեհափառ սուլթանը մեծ եպարքոսի և շեյխ-ուլ-իսլամի պաշտոնները հանձնում է իր բարձր վստահությանն արժանացած անձերի: Մյուս նախարարներն անվանվում են իրադեով:

Հոդ. 28.- Նախարարների խորհուրդը գումարվում է մեծ եպարքոսի նախագահությամբ: Նախարարների խորհրդի իրավասության մեջ են մտնում պետության բոլոր՝ ներքին և արտաքին կարևոր գործերը: Վերջինիս որոշումները վեհափառ սուլթանի հավանությանը ներկայացնելուց հետո կայսերական իրադեի համաձայն իրագործվում են:

Հոդ. 29.- Յուրաքանչյուր նախարար իր իրավասությունների շրջանակում իր պաշտոնին վերաբերող գործերն է կատարում: Իսկ այդ շրջանակից դուրս եկող գործերի համար մեծ եպարքոսի խորհուրդն է հարցնում: Դրանք իրականացնելու համար մեծ եպարքոսը զանազան հանձնարարություններ է տալիս Նախարարների խորհրդին և հետո կայսերական հաճությանը ներկայացնում դրանք, և կամ եթե անհրաժեշտություն չկա, ինքն անձամբ է որոշում կամ միայն վեհափառ սուլթանի հավանությանը ներկայացնում: Այդ գործերի տեսակն ու չափը պետք է որոշվեն մասնավոր կանոնադրությամբ:

Հոդ. 30.- Նախարարները պատասխանատու են իրենց իրավասությանը վերաբերող խնդիրների և գործերի համար:

Հոդ. 31.- Եթե Պատգամավորական ժողովի անդամներից մեկը կամ շատերը ցանկանում են նախարարի դեմ բողոքել վերջինիս պատասխանատվության պատճառով և այնպիսի գործերի առիթով, որոնք Ժողովն իրավունք ունի քննելու, բողոքագիրը պետք է տրվի Ժողովի նախագահին, որը դա երեք օրվա ընթացքում ուղարկում է այն դիվանը, որ, Ժողովի ներքին կանոնադրության համաձայն, իրավասու է բողոքը քննելու և որոշելու, թե հարկ կա՞ արդյոք դա Ժողովի քննարկմանը ներկայացնելու: Դիվանի որոշումը կայացվում է քվեների առավելությամբ՝ մեղադրվող նախարարի բացատրություններն ստանա-

լուց հետո: Եթե դիվանը հարմար է կարծում բողոքը Պատգամավորական ժողովին ներկայացնել, այդ որոշումը հաստատող տեղեկագիրն ընթերցվում է հրապարակային նիստի ընթացքում, և Ժողովը մեղադրված նախարարի – որ պետք է հրավիրվի ներկա գտնվելու – կամ նրան փոխարինողի բացատրությունները լսելուց հետո ներկա գտնվող պատգամավորների երկու երրորդի բացարձակ մեծամասնությամբ քվեարկում է տեղեկագրի եզրակացություններին: Եթե այդ եզրակացություններն ընդունվում են, մեղադրվող նախարարին քննադատող ուղերձ է հղվում մեծ եպարքոսին, ով վեհափառ սուլթանի հավանությանն է ներկայացնում դրանք, և նախարարը կայսերական իրադեով կանգնում է Բարձրագույն ատյանի առջև:

Հոդ. 32.– Նախարարների դատման կարգը պետք է որոշվի մասնավոր օրենքով:

Հոդ. 33.– Նախարարների և անհատների միջև չկա որևէ տարբերություն այն դատերի ժամանակ, որոնք տեղի են ունենում նախարարական գործունեությունից չբխող արարքների համար: Այդպիսի դատերն իրականացնում է սովորական դատարանը:

Հոդ. 34.– Այն նախարարը, ում դատի ենթարկվելն որոշվել է Բարձրագույն ատյանի ամբաստանիչ ճյուղի կողմից, պաշտոնից հեռացվում է այնքան ժամանակով, մինչև որ նա անպարտ է ճանաչվում:

Հոդ. 35.– Եթե Պատգամավորական ժողովը պատճառաբանված կերպով մերժում է մի որևէ օրինագիծ նախարարների պնդումին հակառակ, վեհափառ սուլթանն իր վեհապետական իրավունքով հրամայում է, որ նախարարները փոխվեն, կամ Ժողովն ազատ արձակվի՝ օրենքի որոշած ժամկետի ընթացքում պատգամավորական նոր ընտրություն անցկացնելու պայմանով:

Հոդ. 36.– Ստիպողական հանգամանքների պայմաններում եթե Ընդհանուր ժողովը չի գումարվել, նախարարությունը կարող է միջոցներ ձեռք առնել պետությունը վտանգից պահպանելու կամ ընդհանուր անդորրությունը ապահովելու համար: Այդ միջոցները կայսերական իրադեով վավերացնելուց հետո առժամանակ օրենքի ուժ ունեն, եթե Սահմանադրությանը հակառակ չեն: Հիշյալ միջոցները պետք է Ընդհանուր ժողովին ներկայացվեն անմիջապես, երբ նա գումարվի:

Հոդ. 37.– Յուրաքանչյուր նախարար իրավունք ունի Ծերակույտին (սենատ) և Պատգամավորական ժողովին ներկա լինելու կամ իր գերատեսչության բարձրագույն պաշտոնյաներից մեկին փոխարինա-

բար ուղարկելու: Նախարարը նաև իրավունք ունի խոսք ուղղող որևէ պատգամավորից առաջ լսված լինելու:

Հոդ. 38.- Երբ քվեների առավելությամբ տրված որոշումին առնչվող նախարար է հրավիրվում Պատգամավորական ժողովին բացատրություններ տալու, նախարարը պարտավոր է իրեն ուղղված հարցմանը պատասխանել անձամբ կամ իր գերատեսչության բարձրագույն պաշտոնյաներից մեկի միջոցով: Սակայն նախարարը նաև իրավունք ունի իր պատասխանը հետաձգելու՝ իր վրա վերցնելով դրա պատասխանատվությունը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Հոդ. 39.- Պետական զանազան պաշտոնյաների նշանակումը կատարվում է արժանիքների և կարողությունների պայմանները որոշող կանոնադրության համապատասխան: Այդ պայմաններին համապատասխանող պաշտոնյան չի կարող պաշտոնանկ արվել կամ փոխվել, եթե նրա պաշտոնանկությունն արդարացնող բավականաչափ փաստեր չկան, եթե ինքն անձամբ հրաժարական չի տվել, կամ մանավանդ, եթե կառավարությունը նրա պաշտոնանկությունն անհրաժեշտ չի համարել: Այն պաշտոնատարները, որոնք բարվոք ծառայության և պարկեշտության օրինակ են, ինչպես նաև նրանք, ում պաշտոնից հեռանալը կառավարությունն անհրաժեշտ է համարում, առանձին կանոնադրությամբ որոշվող օրենքներին համապատասխան, պաշտոնի բարձրացման կամ հանգստյան թոշակի և կամ պաշտոնից հեռացման թոշակի իրավունք ունեն:

Հոդ. 40.- Բոլոր պաշտոնատարների պարտականությունները պետք է սահմանվեն հատուկ կանոնադրությամբ: Ամեն պաշտոնյա իր պարտականությունների չրջանակում է պատասխանատու:

Հոդ. 41.- Ամեն պաշտոնյա պարտավոր է հարգելու իր վերադասին, բայց օրենքի նախանչած սահմաններից դուրս պարտավոր չէ կատարելու նրա հրամանները: Նույնիսկ վերադասին հնազանդվելով օրինազանցություն արած պաշտոնյան պատասխանատվությունից չի ազատվում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հոդ. 42.- Ընդհանուր ժողովը բաղկացած է երկու ժողովներից՝ Ավագների ժողովից կամ Ծերակույտից և Պատգամավորական ժողովից:

Հոդ. 43.- Ամեն տարի այս երկու ժողովները գումարվում են նոյեմբերի սկզբին և փակվում հաջորդ տարվա մարտի մեկին: Թե՛ բացումը և թե՛ փակումը տեղի են ունենում կայսերական իրադեով: Երկու ժողովներից և ոչ մեկը չի կարող մյուսի գումարման ժամանակաշրջանից դուրս նիստ կայացնել:

Հոդ. 44.- Վեհափառ սուլթանը կարող է անհրաժեշտության դեպքում երկարացնել կամ կարճացնել ժողովների նստաշրջանի տևողությունը:

Հոդ. 45.- Բացման արարողությունը կատարում է կա՛մ վեհափառ սուլթանը, կա՛մ, փոխանորդաբար, մեծ եպարքոսը՝ նախարարների և երկու ժողովների անդամների ներկայությամբ: Կայսերական ճառը չոչափում է կայսրության անցյալ տարվա ներքին կացությունն ու արտաքին հարաբերությունների վիճակը և հաջորդ տարվա համար անհրաժեշտ համարված կարգադրություններն է ուրվագծում:

Հոդ. 46.- Ընդհանուր ժողովի բոլոր անդամները երդվում են հավատարիմ մնալ վեհափառ սուլթանին, հայրենիքին և սահմանադրությանը: Նորընտիր անդամների երդումը կատարվում է Ժողովի բացման ժամանակ՝ մեծ եպարքոսի առջև, իսկ բացմանը ներկա չեղածներինը՝ Ժողովի նախագահի և անդամների առջև:

Հոդ. 47.- Ընդհանուր ժողովի անդամներն իրենց կարծիքը հայտնելու կամ քվեն տալու կատարյալ ազատություն ունեն. որևէ մեկը նրանց չի կարող հրահանգներով և կամ խոստումներով սահմանափակել, ոչ էլ սպառնալիքների տակ գործել տալ: Նույնպես չի կարող դատի կամ պատասխանատվության ենթարկվել Ժողովում իր կարծիքը հայտնելու համար, եթե չի մեղանչել Ժողովի ներքին կանոնադրության հանդեպ: Այս վերջին հանգամանքի դեպքում նրա վրա տարածվում են կանոնադրության պահանջները:

Հոդ. 48.- Երբ Ընդհանուր ժողովի անդամներից մեկն իր անդամակցած ժողովի բացարձակ մեծամասնության՝ երկու երրորդ մասի կողմից մեղադրվում է դավաճանության, Սահմանադրության խախտման կամ կաշառակերության մեջ, և կամ երբ օրենքով դատապարտ-

վում է բանտարկության կամ աքսորի, զրկվում է իր անդամությունից: Դատապարտումն ու պատժի գործադրումը վերաբերում են իրավասու ատյանին:

Հոդ. 49.- Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր անդամ պարտավոր է իր քվեն անձամբ տալ. նա նաև իրավունք ունի քվեարկության ժամանակ ձեռնպահ մնալու:

Հոդ. 50.- Չի կարելի միաժամանակ երկու Ժողովների անդամ լինել:

Հոդ. 51.- Մինչև որ Ժողովի անդամների կեսից ավելին ներկա չի լինում, Ժողովներից որևէ մեկը չի կարող նիստ գումարել: Յուրաքանչյուր որոշում ընդունվում է քվեների բացարձակ մեծամասնությամբ՝ բացի այն դեպքից, երբ քվեների երկու երրորդն է պահանջվում: Երբ քվեները հավասար են, նախագահի քվեն երկու ձայն է համարվում:

Հոդ. 52.- Անձնական գործերի համար Ժողովներից մեկին կամ մյուսին տրված խնդրագիրը մերժվում է այն ժամանակ, երբ պարզվում է, որ խնդրատուն դրանից առաջ չի դիմել իրավասու ատյանին և կամ այն իշխանությանը, որից ուղղակի կախում ունի այդ ատյանը:

Հոդ. 53.- Օրենքի հաստատման կամ փոփոխության առաջարկը վերաբերում է նախարարներին: Ներակայտի անդամներն ու պատգամավորներն էլ, սակայն, կարող են իրենց իրավասության սահմաններում նույն առաջարկներն անել: Այս վերջին դեպքում առաջարկը մեծ եպարքոսը ներկայացնում է վեհափառ սուլթանին, որը եթե հարմար է գտնում, իրադեով հանձնում է Պետական խորհրդին, որպեսզի իրավասու ատյաններից ստացված բացատրությունների և ցուցումների համաձայն՝ պատրաստվի առաջարկված օրենքի նախագիծը:

Հոդ. 54.- Պետական խորհրդի պատրաստած նախագիծը նախ Պատգամավորների ժողովում է քննարկվում ու քվեարկվում և հետո՝ Ներակայտի ժողովում: Օրինագիծը կիրառության փուլ է մտնում այն ժամանակ, երբ երկու Ժողովների կողմից ընդունվում է և կայսերական իրադեով վավերացվում: Երկու Ժողովներից մեկի կողմից վերջնականապես մերժված օրինագիծը չի կարող նույն ժողովում նույն նստաշրջանի ընթացքում կրկին քննարկման ներկայացվել:

Հոդ. 55.- Օրինագիծը ընդունված է համարվում միայն այն ժամանակ, երբ երկու Ժողովները դա քվեարկում են ձայների մեծամասնությամբ հոդված առ հոդված և հետո՝ ամբողջությամբ:

Հոդ. 56.- Բացի նախարարներից և նրանց տեղակալներից, ինչպես նաև՝ պաշտոնապես հրավիրված պաշտոնատարներից՝ որևէ մեկը չի կարող Ժողովներից որևէ մեկի սրահը մտնել, եթե նույնիսկ իր և կամ հասարակության կողմից խնդրագիր կամ զեկուցում ներկայացնելու համար է եկել:

Հոդ. 57.- Ժողովների խորհրդակցություններն ու քննարկումները կատարվում են թուրքերեն լեզվով: Օրինագծերը տպագրվում և անդամներին են բաժանվում մինչ քննարկման օրը:

Հոդ. 58.- Քվեարկությունը կատարվում է կա՛մ անունների կանչմամբ, կա՛մ ձեռքերի բարձրացմամբ, կա՛մ գաղտնի: Գաղտնի քվեարկությունը կատարվում է Ժողովի անդամների մեծամասնության պահանջով:

Հոդ. 59.- Յուրաքանչյուր Ժողով կառավարվում է իր նախագահի միջոցով և ներքին կանոնադրության համաձայն:

ԾԵՐԱԿՈՒՅՏ (ՍԵՆԱՏ)

Հոդ. 60.- Ծերակույտի նախագահն ու անդամները կանչվում են ուղղակի վեհափառ սուլթանի կողմից: Ծերակույտի անդամների թիվը Պատգամավորական ժողովի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելի չի կարող լինել:

Հոդ. 61.- Ծերակույտի անդամ ընտրվելու համար պետք է գործերով հասարակական վստահությանը արժանացած կամ պետությանը կարևոր ծառայություններ մատուցած լինել: Պետք է առնվազն երեսուն տարեկան լինել:

Հոդ. 62.- Ծերակույտի անդամները նշանակվում են ցկյանս: Ծերակույտի անդամությունը կարող է չնորհվել այն անպաշտոն մարդկանց, որոնք մինչ այդ ունեցել են նախարարի, կուսակալի, զորաբանակի հրամանատարի, զինվորական դատավորի, առաջին և երկրորդ կարգի դեսպանի, պատրիարքի, բաբունապետի պաշտոնները, ինչպես նաև նրանց, ովքեր ծովային և ցամաքային զորքերի «ֆերիկ» (մարշալ) են և կամ բավարարում են առհասարակ պահանջված բոլոր պայմանները: Ծերակույտի անդամները, երբ իրենց խնդրանքով այլ պաշտոնի են անցնում, լիովին դադարեցնում են իրենց անդամությունը Ժողովին:

Հոդ. 63.- Ներակույտի անդամներն ամսական ստանում են 10.000 դրուշ թոշակ: Եթե Ներակույտի անդամը ուրիշ պատճառով դանձարանից թոշակ է ստանում, և եթե այդ թոշակը 10.000-ից պակաս է, ապա դա լրացվում է, իսկ եթե հավասար է կամ ավելի, ապա նա չարունակում է դա ստանալ:

Հոդ. 64.- Ներակույտը քննում է օրինագծերը և ֆինանսական նախահաշիվը, որոնք նրան ուղարկում է Պատգամավորական ժողովը: Եթե Ներակույտը օրինագիծը քննելիս նրանում նկատում է վեհափառ սուլթանի վեհապետական իրավունքներին, սահմանադրությանը, երկրի տարածքային ամբողջականությանը, ներքին անվտանգությանը, հայրենիքի պաշտպանությանը և բարոյականությանը դեմ երանգներ, պատճառաբանված քվեով վերջնականապես մերժում կամ իր դիտողությունների հետ վերադարձնում է Պատգամավորական ժողովին՝ խնդրելով, որ մատնանշված ձևով փոփոխվի կամ չափավորվի: Ներակույտի քվեարկած օրինագիծն ուղարկվում է մեծ եպարքոսին: Ներակույտն իրեն ներկայացված խնդրագրերը քննելուց հետո իր հավանության արժանացածներն իր դիտողություններով ուղարկում է մեծ եպարքոսին:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հոդ. 65.- Պատգամավորների թիվը որոշվում է հետևյալ կերպ. օսմանյան հպատակ արական սեռի 50.000 ներկայացուցիչ մեկ պատգամավոր է ընտրում:

Հոդ. 66.- Ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ: Ընտրության եղանակը որոշվում է առանձին օրենքով:

Հոդ. 67.- Բացի նախարարներից՝ պետական պաշտոնյաները պատգամավոր չեն կարող լինել: Յուրաքանչյուր պաշտոնյա պատգամավոր ընտրվելուց հետո ազատ է դա ընդունելու կամ մերժելու. ընդունելու դեպքում պետք է հրաժարի իր պաշտոնից:

Հոդ. 68.- Պատգամավոր չեն կարող ընտրվել.

ա. Օտարահպատակները:

բ. Գոյություն ունեցող առանձին օրենքի համաձայն՝ այլ ծառայության մեջ լինելով առանձին արտոնություններ ունեցող անձինք:

գ. Թուրքերեն չիմացող անձինք:

դ. Երեսուն տարին դեռևս չլրացած անձինք:

ե. Որևէ մեկի մոտ ընտրության ժամանակ օգնական եղողները:

զ. Մնանկացած և իրենց վարկը չվերադարձրած անձինք:

է. Իրենց վատ անցյալով հասարակության աչքում արատավորված անհատները:

ը. Դատավճռով արգելքի տակ գտնվող անձինք՝ մինչև արգելքի հանվելը:

թ. Իրենց քաղաքացիական իրավունքներից զրկված անձինք:

ժ. Օտարահպատակ դառնալու հայց ներկայացրած անձինք:

Առաջին ընտրությունից չորս տարի հետո պատգամավորության պայմաններից պետք է լինի թուրքերեն կարդալ, և որքան հնարավոր է, գրել իմանալը:

Հոդ. 69.- Պատգամավորական ընդհանուր ընտրությունները տեղի են ունենում չորս տարին մեկ անգամ: Յուրաքանչյուր պատգամավորի պաշտոնը տևում է միայն չորս տարի, բայց միևնույն ժամանակ՝ նա վերընտրելի է:

Հոդ. 70.- Ընդհանուր ընտրությունները պետք է սկսվեն նոյեմբերի 1-ից գոնե չորս ամիս առաջ: Ժողովը պետք է բացվի նոյեմբերի 1-ին:

Հոդ. 71.- Յուրաքանչյուր պատգամավոր ներկայացնում է ոչ միայն իրեն ընտրած ընտրազանգվածը, այլև բոլոր օսմանցիներին:

Հոդ. 72.- Ընտրողները պարտավոր են իրենց պատգամավորին ընտրել իրենց գավառից:

Հոդ. 73.- Երբ Ժողովը կայսերական իրադեով լուծարվում է, ընտրությունները պետք է տեղի ունենան այնպիսի ժամանակ, որ ամենաուշը վեց ամսից նոր Ժողովը գումարվի:

Հոդ. 74.- Պատգամավորը իր՝ ընտրյալի կոչումը կորցնում է մահվան, դատավճռով արգելման, երկար բացակայության, դատապարտության կամ պետական պաշտոնի անցնելու պարագայում. նրան փոխարինողի ընտրությունը կատարվում է ընտրական օրենքի համաձայն և այնպիսի ժամանակահատվածում, որ նորընտիր պատգամավորը հնարավորություն ունենա իր պաշտոնին անցնել առնվազն մինչև Ժողովի հաջորդ նստաշրջանը:

Հոդ. 75.- Պատգամավորին փոխարինողի պաշտոնը տևում է մինչև առաջիկա ընդհանուր ընտրությունները:

Հոդ. 76.- Պետական գանձարանից յուրաքանչյուր պատգամավոր

պետք է տարեկան 20.000 դրուշ ստանա: Պատգամավորների՝ Կ. Պոլիս ուղևորվելու ճանապարհածախսը նույնպես վճարվում է գանձարանից և այն հաշվով, ինչ հաշվով ճանապարհածախս է տրվում պետության քաղաքացիական այն բոլոր սովորական պաշտոնյաներին, ովքեր 5.000 դրուշ ամսաթոշակ են ստանում:

Հոդ. 77.- Պատգամավորական ժողովի նախագահին ու երկու փոխնախագահներին ընտրում է վեհափառ սուլթանը՝ թեկնածուների՝ իններ հոգուց բաղկացած ցանկից, որոնց առաջադրում է Ժողովը քվեների մեծամասնությամբ: Այս իններ ընտրյալներից երեքը առաջին նախագահության, երեքը՝ երկրորդ նախագահության, և երեքն էլ երրորդ նախագահության համար են: Նախագահն ու երկու փոխնախագահներն իրադեով են անվանվում:

Հոդ. 78.- Պատգամավորական ժողովի նիստերն ունեն հրապարակային բնույթ: Այս Ժողովը կարող է դռնփակ նիստ անել, եթե նախարարները, նախագահը կամ տասնհինգ պատգամավորներ են առաջարկում և Ժողովը քվեարկությամբ հավանություն է տալիս առաջարկին:

Հոդ. 79.- Պատգամավորը, բացի այն դեպքից, երբ հանցանք գործած տեղում չի բռնվում, չի կարող ձերբակալվել կամ դատի ենթարկվել, մինչև որ Ժողովը քվեարկությամբ դա չի հաստատում:

Հոդ. 80.- Պատգամավորական ժողովը քննարկում է օրինագծերը, պետական ֆինանսների և սահմանադրության վերաբերյալ դիտողությունները, որոնք ընդունում է, բարեփոխում կամ մերժում: Նախարարների հետ համաձայնության գալով՝ նա քննում է և քվեարկում պետության ընդհանուր ծախսերի գումարը, դրանք ծածկելու համար որոշված տուրքերի չափը և բաշխման եղանակը:

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 81.- Հատուկ օրենքով անվանված և բերաթ-ով հաստատված դատավորները չեն կարող պաշտոնանկ արվել, բայց իրենք կարող են հրաժարվել: Դատավորների պաշտոնի բարձրացումը, տեղափոխությունը, հանգստի ուղարկելը, դատավճռի պատճառով պաշտոնանկությունը պետք է կատարվեն հիշյալ օրենքի պահանջներին համաձայն: Նույն օրենքը սահմանում է նաև դատավորներից կամ դա-

տական պաշտոնյաներից պահանջվող անհրաժեշտ հատկանիշները:

Հոդ. 82.- Դատավարական բոլոր նիստերը հրապարակային են: Դատավճիռները կարելի է հրատարակության տալ: Դռնփակ նիստ տեղի է ունենում միայն օրենքով սահմանված առանձին դեպքերում:

Հոդ. 83.- Յուրաքանչյուր անհատ իր իրավունքների պաշտպանության համար կարող է գործադրել բոլոր օրինական միջոցները:

Հոդ. 84.- Դատարանը չի կարող որևէ պատճառաբանությամբ մերժել իր իրավասության վերաբերյալ դատը, ոչ էլ քննությունն սկսելուց հետո դատը դադարեցնել կամ հետաձգել, քանի դեռ դատախազը կամ բողոքող կողմը դատից չի հրաժարվել: Այդ դեպքում կառավարությունը չարունակում է դատական գործողությունները, եթե դատը պատժական նկարագիր ունի:

Հոդ. 85.- Յուրաքանչյուր դատ իրականանում է իրավասու դատարանում: Անհատների և պետության միջև ծագած դատերը ևս տեղի են ունենում սովորական դատարաններում:

Հոդ. 86.- Դատարաններն ամեն տեսակ միջամտություններից ազատ են:

Հոդ. 87.- Շարիաթին վերաբերող գործերը քննվում են Շարիաթի դատարաններում, քաղաքացիական դատերը՝ քաղաքացիական դատարաններում:

Հոդ. 88.- Զանազան դատարանների պարտականությունները, նրանց իրավասության աստիճանները և դատավորների աշխատավարձերը որոշվում են օրենքով:

Հոդ. 89.- Առանձին գործեր քննելու համար, սովորական դատարաններից բացի, որևէ պատճառով արտակարգ դատարաններ և հանձնախմբեր չեն կարող հաստատվել: Սակայն օրենքով սահմանված ձևերով կարելի է իրավաբաններ (թահքիմ) կամ պատվիրակ-դատավորներ (մյութեելլի) նշանակել:

Հոդ. 90.- Դատավորը չի կարող իր պաշտոնին զուգահեռ հանրային այլ՝ վարձատրվող պաշտոն վարել:

Հոդ. 91.- Քրեական դատերի ժամանակ հասարակության իրավունքը պաշտպանելու համար նշանակվում են ընդհանուր դատախազներ: Նրանց պաշտոնների սահմանները և պաշտոնական դասակարգությունը որոշվում են օրենքով:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՏՅԱՆ

Հոդ. 92.- Բարձրագույն ատյանը բաղկացած է երեսուն անդամներից, որոնցից տասն ընտրվում են Ծերակույտի անդամներից, տասը՝ Պետական խորհրդից և տասն էլ՝ Վճռաբեկ ու Վերաքննիչ դատարանների նախագահներից ու անդամներից: Բոլոր անդամները որոշվում են վիճակ գցելով: Բարձրագույն ատյանը գումարվում է կայսերական իրաղեով, հարկ եղած դեպքում՝ Ծերակույտի խորհրդարանում: Նրա իրավասությունն է նախարարներին, Վճռաբեկ ատյանի նախագահներին ու անդամներին, ինչպես նաև ծանր դավաճանության մեջ կամ պետական անվտանգության դեմ գործելու մեջ մեղադրվող բոլոր անձանց դատելը:

Հոդ. 93.- Բարձրագույն ատյանը բաղկացած է երկու մասից՝ Ամբաստանիչ և Վճռատու: Առաջինը, վիճակ գցելով, կազմվում է ինը հոգուց, որոնցից երեքը Ծերակույտի, երեքը՝ Պետական խորհրդի և երեքն էլ՝ Վճռաբեկ ու Վերաքննիչ դատարանների անդամներ են:

Հոդ. 94.- Ամբաստանիչ ատյանն իր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում է մեղադրական գործը Վճռատու ատյանին ներկայացնել: Ամբաստանիչի անդամները Վճռատուի խորհրդակցություններին չեն կարող մասնակցել:

Հոդ. 95.- Վճռատու ատյանը բաղկացած է քսանմեկ անդամից, որոնցից յոթը Ծերակույտի, յոթը՝ Պետական խորհրդի, և յոթն էլ՝ Վճռաբեկ ու Վերաքննիչ դատարանների անդամներ են: Վճռատու ատյանն իր վճիռները կայացնում է հաստատված օրենքների համաձայն և իր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ: Նրա վճիռներն անփոփոխ են ու անջնջելի:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հոդ. 96.- Պետական որևէ տուրք չի կարող որոշվել, բաշխվել և հավաքվել առանց օրենքի:

Հոդ. 97.- Բյուջեն պետական ֆինանսների նախահաշիվը որոշող օրենքն է: Պետական տուրքերի որոշումը, բաշխումը և հավաքումը կատարվում են միայն այդ օրենքով:

Հոդ. 98.- Ընդհանուր ժողովը հոդված առ հոդված քննում է

բյուջեն և քվեարկում: Ֆինանսների մանրամասն կետերը և բյուջեի հարակից ցուցակները բաժանվում են մասերի, գլուխների և հոդվածների՝ կանոնադրությամբ որոշված եղանակի համաձայն: Այդ ցուցակները քվեարկվում են գլուխ առ գլուխ:

Հոդ. 99.- Բյուջեի նախագիծը ներկայացվում է Պատգամավորական ժողովի բացումից անմիջապես հետո, որպեսզի հաստատվի և կիրառվի ֆինանսական տարվա սկզբից:

Հոդ. 100.- Բյուջեով նախատեսված ծախսերից բացի՝ որևէ այլ ծախս չի կարող կատարվել՝ առանց հատուկ օրենքի:

Հոդ. 101.- Արտակարգ հանգամանքների դեպքում, եթե անհրաժեշտություն կա, նախարարները կարող են Ընդհանուր ժողովի բացակայության ժամանակ, կայսերական իրաղեով պետք եղած դրամական միջոցները հայթայթելով, բյուջեից դուրս ծախս կատարել, սակայն պայմանով, որ գումարվելուն պես՝ Ընդհանուր ժողովն օրինագծով այդ քայլը հավանության արժանացնի:

Հոդ. 102.- Բյուջեն քվեարկվում է միայն մեկ տարվա համար և միայն այդ տարվա համար օրենքի ուժ ունի: Սակայն երբ բացառիկ հանգամանքների պատճառով Պատգամավորական ժողովը լուծարվում է նախքան բյուջեի քվեարկվելը, նախարարները կարող են կայսերական իրաղեով նախորդ տարվա բյուջեն կիրառել մինչև Ժողովի առաջիկա գումարումը: Այդ առժամանակյա բյուջեի կիրառությունը չի կարող մեկ տարուց ավելի տևել:

Հոդ. 103.- Բյուջեի վերջնական կարգադրության օրենքը նույն տարվա հասույթներից և ծախսերից գոյացած մուտքերի և ելքերի գումարներն է նշանակում: Նա իր ձևով ու բաժանումներով հար և նման է բյուջեին:

Հոդ. 104.- Վերջնական կարգադրության օրինագիծը Ընդհանուր ժողովին է ներկայացվում նույն տարվա ավարտից գոնե մինչև չորս տարի ժամկետով:

Հոդ. 105.- Հաշվակալ ատյան է հաստատվում, որի իրավասությունն է գանձարանի հաշվակալների գործողությունները, ինչպես նաև այլևայլ պաշտոնյաների տարեկան հաշիվները քննելը: Հիշյալ ատյանը պետք է ամեն տարի իր աշխատանքների արդյունքը առանձին տեղեկագրով ներկայացնի Պատգամավորների ժողովին, իսկ ամեն եռամսյակի վերջում էլ պետական ֆինանսների մասին պետք է մեծ եպարքոսի միջոցով տեղեկագիր ներկայացնի վեհափառ սուլթանին:

Հոդ. 106.- Հաշվակալ ատյանը պետք է կազմված լինի 12 անփոփոխ անդամներից, որոնք կայսերական իրադեով պետք է նշանակվեն: Այդ անդամներից որևէ մեկը չի կարող պաշտոնանկ արվել, քանի դեռ Պատգամավորների ժողովը ձայների մեծամասնությամբ և պատճառաբանված առաջարկությամբ դա չի որոշել:

Հոդ. 107.- Պետք է որոշվեն առանձին օրենքով Հաշվակալ ատյանի անդամներից պահանջված հատկությունները, նրանց իրավունքների և պարտականությունների մանրամասնությունները, հրաժարման, փոփոխման, պաշտոնի բարձրացման և իրավասությունների՝ աշխատավարձի պահպանմամբ դադարեցման վերաբերյալ հանգամանքները, ինչպես նաև ատյանի դիվանների կազմությունը:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 108.- Գավառների վարչական ձևը հիմնված է ապակենտրոնացման սկզբունքի վրա: Վարչական այդ ձևի մանրամասնությունները պետք է որոշվեն առանձին օրենքով:

Հոդ. 109.- Գավառների, նահանգների և նրանց վարչական խորհուրդների ընտրության ձևը, ինչպես նաև ամեն տարի նահանգային քաղաքների մեջ գումարվող Ընդհանուր խորհուրդների ընտրությունը ամենայն մանրամասնությամբ պետք է որոշվեն առանձին օրենքով:

Հոդ. 110.- Նույն օրենքով պետք է նաև որոշվեն նահանգային Ընդհանուր խորհուրդների իրավասությունները, որոնք են.

ա. Իրավունք՝ հասարակական շահն արծարծող խնդիրների վերաբերյալ կայացնելու ժողով և որոշում, ինչպես օրինակ՝ հաղորդակցության ճանապարհների շինություն, գյուղացիական փոխատու բանկերի հիմնում, արհեստների, վաճառականության և երկրագործության զարգացում, ընդհանուր կրթության ծավալում և այլն:

բ. Իրավունք՝ բողոքելու իրավասու իշխանության՝ տուրքերի բաշխման ու հավաքման, ինչպես նաև այլ խնդիրների մեջ ապօրինի գործողությունների և դեպքերի համար՝ փոխհատուցում և արդարություն ստանալու նպատակով:

Հոդ. 111.- Գավառներում (կազա) տարաբնույթ հասարակությունների վերաբերյալ պետք է լինի խորհուրդ, որի իրավասությունը

պետք է լինի հսկել հետևյալների վրա.

ա. Բարեգործական հիմնարկությունների կամ նրանց անշարժ գույքի եկամուտների օգտագործումը, որոնց կիրառության բուն նպատակը որոշված է հիմնադիրների հատուկ հանձնարարագրով կամ ավանդույթով:

բ. Ողորմության կամ բարեգործության համար կտակված կամ նվիրված գումարների կամ գույքերի կիրառությունը:

գ. Որբերի դրամական միջոցների օգտագործումը՝ հաստատված հատուկ օրենքների համաձայն:

Յուրաքանչյուր խորհուրդ պետք է կազմվի իր ներկայացնելիք հասարակության ընտրյալ անդամներից՝ հաստատված հատուկ կանոնների համաձայն:

Այդ խորհուրդները պետք է կախում ունենան տեղական իշխանություններից և նահանգային Ընդհանուր խորհուրդներից:

Հոդ. 112.- Քաղաքային կամ թաղային գործերը Կ. Պոլսում և գավառներում իրականացնում են ժողովրդի ընտրած Քաղաքային խորհուրդները: Այդ խորհուրդների կազմությունը, իրավասությունն ու ընտրության եղանակը պետք է որոշվեն հատուկ օրենքով:

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդ. 113.- Երբ պետության որևէ հատվածում խռովության հայտարարման վերաբերյալ որևէ դեպք կամ նշան ի հայտ գա, կայսերական կառավարությունն իրավունք ունի այդ հատվածը պաշարման վիճակի մեջ դնելու: Պաշարման վիճակի հետևանքով՝ քաղաքացիական օրենքի կիրառությունը ժամանակավորապես դադարեցվում է: Պաշարման վիճակի մեջ գտնվող տեղերի ղեկավարման եղանակը պետք է որոշվի հատուկ օրենքով: Միայն վեհափառ սուլթանն իշխանություն ունի պետության տարածքից արտաքսելու այն անձանց, ովքեր, ոստիկանության ներկայացրած արժանահավատ տեղեկությունների համաձայն, վնասաբեր են ճանաչվում պետական անվտանգության համար:

Հոդ. 114.- Նախնական կրթությունը պարտադիր է յուրաքանչյուր օսմանցու համար: Գործադրության հանգամանքները որոշվում են հատուկ օրենքով:

Հոդ. 115.- Սահմանադրության որևէ դրույթ չի կարող դադարեցվել կամ անգործադրելի մնալ որևէ պատճառով:

Հոդ. 116.- Սահմանադրության որևէ դրույթ կարող է փոփոխության ենթարկվել միայն հետևյալ պայմաններում.

Փոփոխության որևէ առաջարկ՝ արված թե՛ նախարարների կողմից և թե՛ երկու Ժողովների մեկնումեկի կողմից, նախ պետք է Պատգամավորների ժողովի քննությանն ու հաստատմանը ներկայացվի: Եթե այս Ժողովի անդամների երկու երրորդն ընդունում է առաջարկը, ապա դա ուղարկվում է Ծերակույտին: Եթե Ծերակույտն էլ ձայների նույն մեծամասնությամբ ընդունում է առաջարկը, ապա դա ներկայացվում է վեհափառ սուլթանի վավերացմանը, և կայսերական իրադեով հաստատվելուց հետո օրենքի ուժ է ստանում: Սահմանադրության այն դրույթը, որը փոփոխելու վերաբերյալ առաջարկ է արված, օրենքի ուժ ունի այնքան ժամանակ, քանի դեռ նոր առաջարկը երկու Ժողովների կողմից չի ընդունվել և կայսերական իրադեով չի վավերացվել:

Հոդ. 117.- Օրենքի որևէ կետի վերաբերյալ մեկնաբանություն ստանալու համար, եթե այդ օրենքը դատական է, պետք է դիմել Վճռաբեկ ատյանին, եթե վարչական-քաղաքական է՝ Պետական խորհրդին, եթե Սահմանադրության դրույթներին է վերաբերում՝ Ծերակույտին:

Հոդ. 118.- Այժմ կիրառության մեջ եղած յուրաքանչյուր օրենք, կանոն, սովորույթ, պետք է շարունակի գոյություն ունենալ, գործադրվել, մինչև որ չի դադարեցվել նոր օրենքով կամ կանոնադրությամբ:

Հոդ. 119.- Ընդհանուր ժողովի վերաբերյալ 1293 թվականի Շևալի 10-ին (1876 16/28) թվագրված հրահանգի կիրառությունը պետք է դադարեցվի առաջին նստաշրջանից հետո:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Ա.

Ազգին ամէն մէկ անհատն առ ազգը պարտաւորութիւններ ունի. ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն եւ ազգն՝ անհատներէն:

Ուստի ազգն ու ազգայինը փոխադարձ պարտեօք կապուած են իրարու հետ, անանկ որ մէկին պարտաւորութիւնքը միւսին իրաւունքն են:

Բ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրն իր կարողութեան չափովը, ազգին խնդրած ծառայութեանցը յօժարակամ յանձնառու ըլլալ, եւ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ:

Ազգայնոց այս պարտաւորութիւնքը ազգին իրաւունքն են:

Գ.

Ազգին պարտականութիւնն է՝ ազգայնոց բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը՝ ամէն աստիճանի թէ՛ մանչ եւ թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնքը պայծառ պահել, հասոյթներն օրինաւոր կերպով աւելցնել եւ ծախքերն իմաստութեամբ տնտեսել, ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել եւ ապագան անդորրել, կարօտելոց խնամք տանիլ հայրաբար, ազգայնոց

մէջ ծագած վէճերն արդարասիրութեամբ խաղաղել, եւ վերջապէս՝ ազգային յառաջդիմութեան անձնանուէր աշխատիլ:

Ազգին այս պարտաւորութիւնքը ազգայնոց իրաւունքն են:

Դ.

Զազգը փոխանորդաբար ներկայացնող, եւ այս փոխադարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուչ ու մատակարար կարգեալ իշխանութիւնը ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ կը կոչուի, որուն յանձնուած է Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ, եւ Սահմանադրութեան միջոցաւ, Թուրքիոյ հայոց ներքին գործերու տնօրէնութիւնը:

Ե.

Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ըլլայ:

Զ.

Երեսփոխանական Վարչութեան հիմը՝ ԻՐԱՒԱՆՑ ու ՊԱՐՏԵԱՑ սկզբունքն է, որ **արդարութեան** սկզբունքն է, իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ **օրինաւորութեան** սկզբունքն է:

ԳԼՈՒԽ Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա.- ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Ընտրութիւն եւ հրաժարում

Յօդ. 1.- Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը բոլոր ազգային ժողովոց նախագահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, եւ մասնաւոր պարագաներու մէջ՝ տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է:

Ուստի պէտք է որ պատրիարք ընտրուելու անձը՝ ընդհանուր ազգին վստահութեան ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատ-

րիարքական Աթոռին վայելուչ ամէն յատկութիւններն ու արժանաւորութիւնը ունենայ, եւ ի վաղուց անտի պատրիարքութեան յատկացեալ եպիսկոպոսաց դասէն ըլլայ, միանգամայն տէրութեան կատարեալ վստահութեանն արժանաւոր, եւ գոնէ իր հօրմէն սկսեալ՝ օսմանեան հպատակ, եւ երեսունըհինգ տարին լրացուցած ըլլայ:

Յօդ. 2.– Երբ՝ պատրիարքը վախճանելով կամ հրաժարելով եւ կամ ուրիշ որեւէ պատճառաւ Աթոռը պարապ մնայ, Կրօնական եւ Քաղաքական ժողովները մէկտեղ գալով տեղապահ մը կ'ընտրեն, եւ անոր հաստատութիւնը կը խնդրեն Բարձրագոյն Դռնէն:

Ընդհանուր ժողովը կ'ընտրէ զպատրիարք. բայց Կրօնական եւ Քաղաքական ժողովներն իրաւունք ունին ներկայացման ցուցակով մը ընտրելեաց արժանաւորութեան աստիճանի վրայ կարծիք տալու:

Պատրիարքի ընտրութիւնը հետեւեալ կերպիւ կ'ըլլայ.

Նախ եւ առաջ՝ տեղապահը օսմանեան հողին վրայ գտնուող բոլոր եպիսկոպոսաց ցանկը կը չինէ, եւ իւրաքանչիւրին անուանը առջեւ՝ ըստ առաջին յօդուածոյ ընտրելութեան համար պահանջուած հանգամանքը նշանակելով, Կրօնական ժողովոյն կը ներկայացնէ զայն:

Այս ժողովն ալ եկեղեցական համագումար ժողով հրաւիրելով, ընտրելեաց ցուցակ մը կը պատրաստէ գաղտնի քուէարկութեամբ, այսինքն իւրաքանչիւր անդամ՝ թղթոյ մը վրայ կը գրէ այն ամէն եպիսկոպոսաց անունները՝ զորս կրօնական մասին անընդունելի չհամարիր: Ետքը՝ քուէհամարն ըլլալով, այն անունները յատուկ ցուցակի մը մէջ կ'առնուին քուէից չատութեան կարգաւ:

*Տեղապահը յիշեալ կերպիւ պատրաստուած ցուցակը Քաղաքական ժողովոյն կը ներկայացնէ: Ան ալ՝ նշանակուած անձանց ըստ քաղաքականին արժանաւորութիւնը քննելէն ետքը, ամէնէն աւելի արժանաւորներէն **հինգ ընտրելի** կը զատէ քուէից առաւելութեամբ եւ ասոնց **ցուցակը** Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնէ:*

Միանգամայն եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած առաջին ցուցակն ալ Ազգային Ընդհանուր ժողովոյն սրահին մէջ կախուած կ'ըլլայ: Ընդհանուր ժողովը այս երկու ցուցակներէն՝ ընտրելեաց թէ՛ կրօնական եւ թէ՛ քաղաքական որպիսութեանց վրայ երկու ձեռնհաս ժողովներուն կարծիքն իմանալով, կ'ընտրէ զպատրիարք՝ գաղտնի քուէարկութեամբ եւ բացարձակ առաւելութեամբ քուէից:

Ընդհանուր ժողովը կրնայ Քաղաքական ժողովոյն ներկայացուցած ցուցակէն դուրս անձի մը վրայ ալ քուէ տալ. բայց պէտք է որ այն

անձին անունը նշանակուած ըլլայ եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած ցուցակին մէջ, վասն զի այս եկեղեցական ցուցակէն դուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ:

Եթէ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողաց անունները տեղապահին կողմէն Ընդհանուր ժողովոյ անդամներուն կը ծանուցուին եւ երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ՚ըլլայ: Այս երկրորդ քուէարկութեան ատեն ազգային երեսփոխաններէն անոնք որ չկրնան ներկայ գտնուիլ, կարող են իրենց քուէները ստորագրեալ եւ կնքեալ նամակաւ առ ժողովն ուղարկել կա՛մ տեղապահին եւ կա՛մ Ընդհանուր ժողովոյ ատենապետին ուղղելով զայն:

Քուէները յատուկ քուէտուփի մը մէջ դրուելէն ետքը՝ քուէհամարը կ՚ըլլայ Ընդհանուր ժողովոյ դիւանին ձեռօք եւ սոյն ժողովոյ մէջէն ընտրուած չորս եկեղեցական եւ չորս աշխարհական քննիչներու ներկայութեան:

Եթէ պատահի որ երկրորդ անգամ քուէարկութեան մէջ երկու անձանց հաւասար քուէ ելնէ, այն ատեն երկուքէն մէկը վիճակաւ կ՚ընտրուի:

Յօդ. 3.- Ընտրութիւնը կատարուելէն ետքը տեղեկագիր մը կը չինուի՝ զոր բոլոր բազմականք կը ստորագրեն. եւ տեղապահի միջնորդութեամբ Բարձրագոյն Դրան կը մատուցուի. եւ պատրիարքը կը հաստատուի ըստ վաղեմի սովորութեան՝ կայսերական հրամանին համեմատ:

Յօդ. 4.- Ընդհանուր ժողովը հրաւիրանաց գիր կ՚ուղարկէ պատրիարք ընտրուած անձին քանի մը անձանց ձեռօք՝ եթէ Կ. Պոլսոյ մէջ է, եւ յատուկ հրաւիրակաւ, եթէ Կ. Պոլսէն դուրս տեղ է: Նորընտիր պատրիարքը՝ այս հրաւիրանաց գիրը առնելով, պատրիարքարան կու գայ եւ մայր եկեղեցւոյ մէջ Ընդհանուր ժողովոյ առջեւ հանդիսաւոր ուխտ կ՚ընէ սոյն օրինակ. «Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ազգային ժողովոյս՝ հրապարակաւ ուխտեմ՝ հաւատարիմ մնալ Տէրութեան եւ Ազգիս, եւ ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»: Անմիջապէս՝ տեղապահին պաշտօնը կը դադրի, եւ նորընտիր պատրիարքը Բարձրագոյն Դրան հրաւէրին վրայ՝ ուղղակի օգոստափառ կայսեր կը ներկայանայ, պաշտօնական կերպիւ իր պաշտօնը կը հաստատուի, եւ Բարձրագոյն Դուռը երթալով՝ կը ծանուցուի:

Յօդ. 5.- Եթէ պատրիարքը Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ չարժի կամ վարուի, ամբաստանութեան տակ կ՚ընկնի:

Յօդ. 6.- Պատրիարքին վրայ ամբաստանութիւն ընելու միայն Ընդհանուր ժողովը, Կրօնական ու Քաղաքական ժողովներն իրաւունք ունին:

Ամբաստանող կամ բողոքող ժողովը, Բարձրագոյն Դռնէն հրաման առնելով, պատրիարքէն կը խնդրէ, որ Ընդհանուր ժողով գումարէ:

Եթէ պատրիարքը ասոր դէմ կենայ, եղելութիւնը կրկին անգամ Բարձրագոյն Դրան իմաց կը տրուի, որ այն ատեն, բողոքին համեմատ, Կ. Պոլսոյ մէջ գտնուող եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբ Ընդհանուր ժողով գումարելու հրաման կու տայ:

Ընդհանուր ժողովը իր մէջէն հինգ եկեղեցական եւ հինգ աշխարհական ընտրելով, տասն հոգիէ բաղկացեալ քննիչ յանձնաժողով մը կը կարգէ, բայց պէտք է որ այս քննիչներուն մէջ՝ ամբաստանող կամ բողոքող անձանցմէ մարդ չգտնուի: Քննիչ յանձնաժողովը եղած ամբաստանութիւնները քննելէն ետքը՝ տեղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովոյն, որ կ՚որոշէ խնդիրը գաղտնի քուէարկութեամբ: Այս որոշումը պարունակող թուղթը պէտք է ստորագրուած ըլլայ որոշման կողմը քուէ տուող ժողովականներէն. եւ եթէ անով պատրիարքին հրաժարուիլը վճռուած է, երկու ժողովոց ատենապետները նախագահ եպիսկոպոսին հետ պատրիարքին երթալով, յիշեալ թուղթը անոր կը ներկայացնեն, որ այն ժամանակ ազգին որոշ կամքը իմանալով՝ հրաժարականը տալու պարտաւորեալ է: Իսկ եթէ չուզէ տալ, Բարձրագոյն Դրան իմաց կը տրուի, որ պաշտօնէն կը ձգէ զպատրիարք:

Յօդ. 7.- Հրաժարեալ պատրիարքը վիճակաւոր եպիսկոպոսաց կարգը կ՚անցնի եւ անոր վրայ ըստ կանոնի պէտք եղածը կը տնօրինուի Խառն ժողովոյ կողմէն:

Պաշտօն եւ պարտաւորութիւնք

Յօդ. 8.- Պատրիարքին պարտաւորութիւնքն են Սահմանադրութեան սկզբանց համեմատ վարուիլ եւ անոր ամէն կէտերուն ճշդիւ գործադրութեանը ուշի ուշով հսկել:

Պատրիարքը իրեն եկած գործերը ո՛ր ժողովոյ կը վերաբերի նէ՝

այն ժողովոյն կը յանձնէ: Քննութեան եւ որոշման համար ժողովոց մէջ որոշուած գործոց վրայ Պատրիարքին **թուղթերներ**ը եւ կամ ուրիշ պաշտօնական գրութիւնները վաւերական եւ գործադրելի չե՞ն կրնար ըլլալ եթէ որոշող ժողովոյն կողմէն ալ կնքեալ եւ ստորագրեալ չըլլան: Իսկ երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ տնօրինութեանը համար կարելի չըլլայ մինչեւ ժողովոյն գումարման օրը սպասել եւ կամ արտաքոյ կարգի ժողով գումարել, պատրիարքը կրնայ պէտք եղածը ինքնին տնօրինել, իր վրայ առնելով պատասխանատուութիւնը, բայց պարտաւորեալ է եղելութիւնը արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ. եւ ո՛ր ժողովոյն կը վերաբերի նէ՝ անոր յաջորդ նիստին ներկայացնել վաւերացման համար:

Յօդ. 9.– Պատրիարքը իր բացակայութեանը ատեն Ազգային ժողովներու մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չստորագրած, կարող է անոնց վրայ իր դիտողութիւններն յայտնելով, խնդիրը կրկին քննութեան յանձնել: Իսկ այս վերաքննութենէն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թուղթերը ստորագրել, եթէ տրուած որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չգտնէ:

Յօդ. 10.– Պատրիարքը կրնայ Սահմանադրութեան սկզբանցը համեմատ չվարուող եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրոցի եւ կամ հիւանդանոցի գործակալ մը պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս ժողովոյն կամ խորհրդոյն:

Յօդ. 11.– Պատրիարքը իրաւունք չունի ինքնին լուծել եւ փոխել Կրօնական եւ Քաղաքական ժողովները եւ անոնց վերաբերեալ խորհուրդները: Բայց երբ տեսնէ թէ անոնցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ ընթացքի մէջ է, առաջին անգամին բացատրութիւն կ՚ուզէ ա՛յն ժողովոյն կամ խորհրդոյն ատենապետէն, երկրորդին՝ իմաց կու տայ անոր ապօրինաւոր ընթացքը եւ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ զայն, իսկ երրորդին՝ Ընդհանուր ժողովոյն կը դիմէ, եթէ ամբաստանելին Ազգային ժողովներէն մէկն է, կամ՝ Քաղաք. ժողովոյն կը դիմէ, եթէ խորհուրդներէն մէկն է, եւ պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ ժողովոյն կամ խորհրդոյն լուծումը կ՚առաջարկէ:

Յօդ. 12.– Պատրիարքը ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական ունենալով, ինք կը տեսնէ պատրիարքարանին ներքին ծախքը:

Բ.- ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ

Յօդ. 13.- Պատրիարքարանի մէջ դիւանատուն մը պիտի հաստատուի պէտք եղած ազգային դրութեանց յատկացեալ:

Այս դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի:

Ա. Թղթակցութեան գրասենեակ, որ պատրիարքարանէն ուղարկուած եւ պատրիարքարան եկած գրութիւններով կը զբաղի:

Բ. Արձանագրութեան գրասենեակ, որ Ազգային ժողովոց եւ խորհրդոց վերաբերեալ թուղթերը կարգաւորելով կը զբաղի:

Գ. Ազգահամարի գրասենեակ, որ ազգայնոց քաղաքական վիճակագրութեանը, այսինքն՝ ծննդեան, ամուսնութեան եւ վախճանման վերաբերեալ արձանագրութեամբ կը զբաղի:

Այս վերջին գրասենեակէն կը տրուին ազգայնոց թէ՛ ճանապարհորդութեան համար եւ թէ՛ ուրիշ անձնական գործառնութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաեւ ծննդեան, ամուսնութեան, վախճանման վկայագրերը:

Յօդ. 14.- Պատրիարքական դիւանատունը պիտի ունենայ դիւանապետ մը, որ պատասխանատու է դիւանատան բոլոր գործառնութեանց: Քաղաքական ժողովը կ՚ընտրէ եւ պատրիարքը կ՚անուանէ զայն: Դիւանապետը կ՚ընէ նաեւ Ընդհանուր ժողովոյն դիւանադպրութիւնը:

Դիւանապետը պարտաւորեալ է ամէն տարի՝ թէ՛ Կոստանդնուպոլսոյ մէջ եւ թէ՛ դուրսերը ծնած, ամուսնացած եւ վախճանած ազգայնոց տոմարներուն օրինակները բերել տալ եւ պատրիարքարանի դիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ: Դիւանապետը հայերէն լեզուի քաջ հմուտ եւ տաճկերէնի ու գաղղիերէնի ալ վարժ անձ մը պիտի ըլլայ:

Յօդ. 15.- Դիւանատունը բաւական թուով դիւանադպիրներ պիտի ունենայ: Ասոնք ալ հայերէն լեզուն քաջ գիտնալու են, եւ ամէն մէկը իր պաշտօնին կատարեալ հմտութիւն ունենալու է: Ամէն մէկ դիւանադպիր ըստ իւր պաշտօնի պատասխանատու է այն ժողովոյն կամ խորհրդոյն որուն կը վերաբերի: Ամէնը մէկէն պատասխանատու են դիւանապետին:

Յօդ. 16.- Ազգահամարի գրասենեակէն տրուած որեւէ թուղթ եւ վկայագիր վաւերացեալ պէտք է ըլլայ պատրիարքական կնիքով եւ դիւանապետին ստորագրութեամբ:

Գ.- ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Յօդ. 17.- Երուսաղէմի պատրիարքը Ս. Յակոբայ Աթոռոյն ցկեանս գահակալն է, միանգամայն հայոց, ազգին սեպհական Երուսաղէմ գտնուած ուխտատեղիներուն տնօրէնն ու Ս. Յակոբայ վանուց միաբանութեան նախագահն է:

Իր պարտաւորութիւնն է Ս. Երուսաղէմի վանուց կանոնագրին տրամադրութեանց համեմատ վարուիլ, եւ անոր բարւոք գործադրութեանը հսկել:

Յօդ. 18.- ԵԹԷ Ս. Երուսաղէմի պատրիարքը Սուրբ Երուսաղէմի վանուց կանոնագրին հակառակ վարուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

Յօդ. 19.- Պատրիարքին վրայ ամբաստանութիւն կրնայ ըլլալ կա՛մ յիշեալ Միաբանութեան կողմէն եւ կա՛մ՝ Կոստանդնուպոլսոյ Կրօնական եւ Քաղաքական ժողովոց կողմէն:

Այսպիսի պարագայի մէջ՝ Ազգային Ընդհանուր ժողով կը գումարուի: Եւ եթէ եղած ամբաստանութիւնը քննուելով հիմնաւոր ըլլալը ստուգուի, Ընդհանուր ժողովը՝ վեցերորդ յօդուածին մէջ Կոստանդնուպոլսոյ պատրիարքին վերաբերեալ տրամադրութեանց համեմատ՝ ըստ պահանջման իրաց, կը պարտաւորէ զայն հեռանալ Պատրիարքական Աթոռէն, եւ անոր պաշտօնը կը յանձնէ տեղապահի մը՝ զոր Ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Միաբանութեան մէջէն:

Յօդ. 20.- Երբ Ս. Երուսաղէմի պատրիարքը վախճանի, միաբանութիւնը իր մէջէն տեղապահ մը կ'ընտրէ, եւ Ազգային ժողովները կը հաստատեն զայն:

Յօդ. 21.- Ս. Երուսաղէմի պատրիարքը Կոստանդնուպոլսոյ Ազգային ժողովներուն կողմէն կ'ընտրուի: Բայց Միաբանութիւնը. իրաւունք ունի իր կարծիքը յայտնելու ընտրելեաց արժանաւորութեան աստիճանին վրայ՝ ***ներկայացման ցուցակաւ մը****: Պատրիարքին վախճանելէն անմիջապէս ետքը՝ յիշեալ տեղապահը Միաբանից Ընդհանուր ժողով կը գումարէ: Այս ժողովը անուանց ցուցակ մը կը պատրաստէ՝ Կոստանդնուպոլսոյ եկեղեցական համագումար ժողովոյն ըրած կերպիւն. բայց պէտք է որ միաբանութեան ներկայացնելիք այս ցուցակը գո՛նէ եօթն ընտրելեաց անուն պարունակէ: Այս ցուցակը միաբանութեան կողմէն ստորագրեալ յայտագրով Կոստանդնուպոլսոյ պատրիարքարանը կ'ուղարկուի:*

Յօդ. 22.- Ս. Երուսաղէմի պատրիարք ընտրուելու անձը գոնէ երեսուն եւ հինգ տարին լրացուցած եւ ի ծնէ Օսմանեան Տէրութեան հպատակ, Միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլայ. միանգամայն Միաբանութենէն զատուած մէկը պէտք չէ ըլլայ:

Միաբանութենէ զատուած չեն համարուիր այն անձինքը, որ պատրիարքարանի ժողովոց կողմէն ազգային պաշտօնի մէջ գործածուած են՝ Երուսաղէմի պատրիարքին հաւանութեամբ:

Յօդ. 23.- Կրօնական եւ Քաղաքական ժողովները Խառն ժողով կազմելով, վերոյիշեալ ցուցակին մէջ յիշատակուած անձանց արժանիքը կը քննեն եւ երեք ընտրելի որոշելով անունները Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնեն: Միաբանութեան կողմէն եկած ցուցակն ալ Ընդհանուր ժողովոյ սրահին մէջ կախուած կ'ըլլայ:

Ընդհանուր ժողովը ընտրելեաց վրայօք թէ՛ Միաբանութեան եւ թէ՛ Ազգային երկու ժողովոց կարծիքը իմանալով, անոնց մէջէն կրօնից, ուսման եւ բարի վարուց նկատմամբ ամէնէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը կ'ընտրէ գաղտնի քուէարկութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ:

Ընդհանուր ժողովոյ մէջ՝ Միաբանութեան կողմէն ներկայացուած ցուցակէն դուրս անձի վրայ քուէարկութիւն չկրնար ըլլալ:

Դ.- ԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 24.- Կրօնական ժողովը կը բաղկանայ տասն եւ չորս բանիբուն եկեղեցականներէ, որոնք գոնէ երեսուն տարին լրացուցած եւ գէթ հինգ տարիէ ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան:

Յօդ. 25.- Եկեղեցական համագումար ժողովը գաղտնի քուէարկութեամբ Ազգային Կրօնական ժողովոյ անդամոց թուոյն եռապատիկը կ'ընտրէ եւ ընտրելեաց անունները ստորագրեալ յայտագրով Ազգային Ընդհանուր ժողովոյն կը ներկայացնէ:

Ընդհանուր ժողովն ալ անոնց մէջէն գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Կրօնական ժողովոյ անդամները: Տեղեկագիրը պատրիարքին կողմէն Բարձրագոյն Դրան կը ներկայացուի եւ Կրօնական ժողովոյ այսպէս ընտրուած անդամները կայսերական հրամանաւ կը հաստատուին:

Յօդ. 26.- Կրօնական ժողովը երկու տարին անգամ մը Ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի եւ Մայիսի սկիզբը կը նորոգուի: Այս ժողովոյ

անդամները անմիջապէս վերընտրելի չեն, բայց երկու տարի ետքը կրնան նորէն ընտրուիլ:

Յօդ. 27.- Երբ Կրօնական ժողովոյ անդամներէն հրաժարական տուող եւ կամ ուրիշ պատճառաւ պակսողներուն թիւը երեքի հասնի, անոնց տեղ ուրիշներ կ'ընտրուին Ընդհանուր ժողովով: Բայց մինչեւ որ այս ընտրութիւնն ըլլայ, Կրօնական ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը փնտռուի:

Յօդ. 28.- Կրօնական ժողովոյ պաշտօնն է ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնքն են՝ ազգին մէջ կրօնական զգացումը զարգացունել, Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, եկեղեցեաց եւ եկեղեցականաց ներկայ վիճակը լաւցնելու եւ ապագան անդորրելու եւ ապահովցնելու միջոցները ձեռք բերելու հոգ տանիլ, ազգային վարժարանաց երբեմն-երբեմն այցելութիւն ընելով՝ քրիստոնէական վարդապետութեան ուսուցման վրայ հսկողութիւն ընել, արժանաւոր եւ բանիբուն վարդապետներ եւ քահանաներ հասցնել, եւ ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննելով՝ Եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել:

Յօդ. 29.- Կրօնական ժողովը երբ չկարենայ ինքնին լուծել զուտ կրօնական կարեւոր խնդիր մը, Եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ Կոստանդնուպոլիս գտնուող եպիսկոպոսները, եկեղեցեաց քարոզիչ վարդապետները, աւագերէցներն ու աթոռակալները, եւ եթէ հարկ ըլլայ՝ նաեւ շրջակայ գաւառաց առաջնորդները հրաւիրելով: Եթէ Եկեղեցական համագումար ժողովն ալ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր դատէ, այն ժամանակ՝ Ընդհանրական Կաթողիկոսին կը դիմէ ստորագրեալ տեղեկագրով:

Յօդ. 30.- Կրօնական ժողովոյ ամէն տեսակ տեղեկագիրները միշտ անդամոց մեծագոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի ըլլան:

Յօդ. 31.- Թէ՛ Կոստանդնուպոլսոյ եւ թէ՛ գաւառներու մէջ՝ վարդապետի ձեռնադրութեան համար պէտք եղած հրամանը Ազգային Կրօնական ժողովոյ կողմէն կը տրուի: Իսկ քահանայի ձեռնադրութեան համար՝ եթէ Պոլսոյ մէջ է՝ նոյն Կրօնական ժողովէն, եւ եթէ գաւառներու մէջ է՝ տեղւոյն Կրօնական ժողովէն կը տրուի:

Յօդ. 32.- Մինչեւ որ եկեղեցւոյ մը քահանաներն ու Թաղական Խորհուրդը նոր քահանայ ձեռնադրել տալու կարեւորութիւնը չտեսնեն եւ ստորագրեալ տեղեկագրով Կրօնական ժողովոյ խնդիր չընեն, ձեռնադրութեան հրաման չտրուիր:

Յօդ. 33.- Կրօնական ժողովը կ'ընտրէ Կոստանդնուպոլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները եւ պատրիարքը կ'անուանէ զանոնք:

Յօդ. 34.- Կրօնական ժողովոյ մէջ ամէն տեսակ ընտրութիւն գաղտնի քուէարկութեամբ կ'ըլլայ:

Յօդ. 35.- Կրօնական ժողովը կանոնագիր մը պէտք է չինէ եկեղեցականաց ներկայ վիճակին բարելաւութեան եւ ապագային անդորրութեանը համար, որպէսզի իրենց հոգեւորական պաշտօնները կարենան ձրի կատարել:

Ե.- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 36.- Քաղաքական ժողովը կը բաղկանայ ազգային գործոց եւ տէրութեան օրինաց տեղեակ քսան աշխարհականներէ:

Յօդ. 37.- Քաղաքական ժողովոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Ընդհանուր ժողովոյ մէջ կ'ընտրուին, եւ տեղեկագիրը պատրիարքի կողմէն Բարձրագոյն Դրան մատուցուելով՝ կայսերական հրամանաւ կը հաստատուին:

Յօդ. 38.- Քաղաքական ժողովը երկու տարին անգամ մը Ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի եւ Մայիսի սկիզբը կը նորոգուի:

Այս ժողովոյ անդամները երկու տարի անցնելէն ետքը նորէն կրնան ընտրուիլ: Եւ թէպէտ առջի երկու տարին Քաղաքական ժողովոյ համար վերընտրելի չեն, բայց ուրիշ որեւէ ազգային պաշտօնի մէջ կրնան գործածուիլ:

Յօդ. 39.- Եթէ Քաղաքական ժողովոյ անդամներէն մէկը, առանց բանաւոր պատճառ իմացնելու գրով, երեք անգամ իրարու վրայ ներկայ չգտնուի, նոյն Ժողովոյ ատենապետի կողմէն անոր նամակ գրուելով՝ չգալուն պատճառը կը հարցուի: Եթէ պատասխան չառնուի, երկրորդ գրութեամբ իմաց կը տրուի իրեն, որ եթէ յաջորդ նիստին ալ ներկայ չգտնուի, իբրեւ հրաժարեալ պիտի համարուի, եւ եթէ դարձեալ չներկայանայ, հրաժարականը տուած պիտի սեպուի:

Յօդ. 40.- Երբ Քաղաքական ժողովոյ հրաժարական տուող կամ ուրիշ պատճառաւ պակսող անդամոց թիւը երեքի հասնի, անոնց տեղ ուրիշ անդամներ կ'ընտրուին Ընդհանուր ժողովով: Բայց մինչեւ որ այս

ընտրութիւնն ըլլայ՝ Քաղաքական ժողովոյ մէջ բոլոր անդամոց մեծագոյն մասը կը փնտռուի:

Յօդ. 41.- Քաղաքական ժողովոյ պաշտօնն է ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են ազգին բարեկարգութեան ու յառաջդիմութեան մտադրութիւն եւ փոյթ ունենալ, իր տեսչութեան տակ գտնուող խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել, եւ անոնց կարեւորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արգելքները բառնալու ջանք ընել:

Յօդ. 42.- Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը ո՛ր խորհրդոյ վերաբերեալ ըլլան՝ քննուելու համար ա՛յն խորհրդոյն կը յանձնէ, եւ մինչեւ որ անոր կարծիքը չառնու՝ չկրնար գործադրութեան ձեռնարկել: Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ուրիշ տնօրինութիւն չկրնար ընել նոյն նիւթին վրայ եւ կը պարտաւորի դարձեալ նոյն խորհրդոյն յանձնել գործը: Քաղաքական ժողովը չի կրնար նաեւ փոխել կամ լուծել ազգային խորհուրդներէն մէկը, քանի որ չտեսնէ զայն Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ ընթացքի մէջ: Բայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ընթացքի մէջ, առաջին անգամին՝ բացատրութիւն կ՚ուզէ նոյն խորհրդոյ ատենապետէն, երկրորդ անգամին՝ անոր գրով ազդարարութիւններ ընելով՝ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ, իսկ երրորդին՝ անդամները կը փոխէ, միայն թէ այս մասին ունեցած պատճառները պիտի բացատրէ Ընդհանուր ժողովոյ ներկայացնելու պարտաւոր երկամեայ տեղեկագրին մէջ:

Յօդ. 43.- Քաղաքական ժողովը երբ իրեն եկած քաղաքական գործերէն կարեւոր խնդրոյ մը լուծումը իր ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովոյն կը դիմէ:

Զ.- ՔԱՂԱՔ. ԺՈՂՈՎՈՅ ԿՈՂՄԷՆ ԿԱԶՄՈՒԱԾ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 44.- Ուսումնական, տնտեսական եւ դատաստանական գործոց եւ վանօրէից ***տեսչութեան*** *համար չորս խորհուրդ,* ***մատակարարութեան*** *պաշտօնով՝ երեք հոգաբարձութիւն պիտի հաստատուի Քաղաքական ժողովոյ կողմէն: Այս խորհրդոց եւ հոգաբարձութեանց ան-*

դամները երկու տարի պաշտօն կը վարեն այն պայմանաւ, որ ամէն տարեգլուխ կիսով չափ նորոգուին:

Դատաստանական Խորհրդոյ նախագահը Կ. Պոլսոյ պատրիարքի փոխանորդն է:

1.- Ուսումնական Խորհուրդ

Յօդ. 45.- Ուսումնական Խորհուրդը եօթն ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

Ուսումնական Խորհրդոյն պաշտօնն է հայոց ազգին դաստիարակութեան եւ կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնքն են ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, թէ՛ մանչ եւ թէ՛ աղջիկ տղայոց դաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաստատուած ընկերութիւններուն խրախոյս տալ եւ ձեռնտու ըլլալ, դպրատանց դաստիարակներուն կացութիւնը լաւցնելու եւ ապագան անդորրելու խնամ տանիլ, ազգին մէջ յաջողակ եւ քաջահմուտ դասատուներ հասցնելու եւ դպրոցական դասագիրքեր պատրաստելու ջանք եւ փոյթ ունենալ:

Ուսումնական Խորհուրդը ազգային վարժարանաց մէջ ուսմունքնին լրացնող աշակերտաց վկայական կու տայ, ուսմանց դասագիրքերը կ՚որոշէ եւ տարեկան քննութիւնները կը կատարէ:

Իսկ կրօնական ուսմանց համար Կրօնական ժողովին կը դիմէ, վասն զի այս ժողովը կ՚որոշէ կրօնական գիտութեանց դասագիրքերը եւ դասատուները, քննութիւնները կ՚ընէ եւ վկայականը կու տայ:

2.- Տնտեսական Խորհուրդ

Յօդ. 46.- Տնտեսական Խորհուրդը կը բաղկանայ եօթն տնտեսագէտ աշխարհականներէ, զորս Քաղաքական ժողովը կ՚ընտրէ քուէից առաւելութեամբ:

Տնտեսական Խորհրդոյն պաշտօնն է Կ. Պոլսոյ մէջ գտնուած ազգային բոլոր հաստատութեանց եւ անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնն է նոյն հաստատութեանց բարեկարգութեանը անխոնջ հսկել եւ հոգ տանիլ:

Տնտեսական Խորհուրդը պէտք է հոգ տանի, որ ամէն ազգային կալուած օրինաւոր կալուածագիր ունենայ: Թէ՛ Կ. Պոլսոյ եւ թէ՛ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ ստացուածոց կալուածագրերուն օրինակները՝ Տնտեսական Խորհրդոյ ձեռօք ժողվուելով՝

պատրիարքարանի դիւանատան մէջ պիտի պահուին:

Ազգային ո՛րեւէ կալուածոյ գնումն ու վաճառումը չկրնար տեղի ունենալ առանց Տնտեսական Խորհրդոյ գիտութեան, Քաղաքական ժողովոյ հաճութեան եւ պատրիարքի կնքով հաստատութեան:

Այս տրամադրութեանց ուժովը՝ եկեղեցիներու **միութեվելիութիւն** ըսուած բանը վերցուած է հայոց ազգին համար:

Կ. Պոլսոյ եւ շրջակայից մէջ՝ ազգային որեւէ շինութեանց կամ վերանորոգութեանց չկրնար ձեռնարկուիլ առանց գիտութեան Տնտեսական Խորհրդոյ եւ հաճութեան Քաղաքական ժողովոյ:

Տնտեսական Խորհուրդը ազգային Ելեւմտից, Կտակաց եւ Հիւանդանոցի Հոգաբարձութիւններուն, նաեւ Թաղական Խորհուրդներուն մատակարարութեանը վրայ հսկողութիւն պիտի ընէ, եւ ասոնց ամէն մէկէն որոշեալ ժամանակներ պահանջելով, Քաղաքական ժողովոյն պիտի հաղորդէ:

Տնտեսական Խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ՝ յետագայ տարւոյ մէջ ըլլալիք հասոյթն ու ծախքը Ելեւմտից Հոգաբարձութենէն ստուգելով, հաշուեկշիռը պիտի պատրաստէ եւ Քաղաքական ժողովոյն ներկայացնէ:

3.- Դատաստանական Խորհուրդ

Յօդ. 47.- Դատաստանական Խորհուրդը կը բաղկանայ ութ իրաւագէտ եւ ամուսնացեալ եւ քառասուն տարին լրացուցած անձերէ, որոնց չորսը եկեղեցական եւ չորսը աշխարհական պիտի ըլլան:

Դատաստանական Խորհրդոյ նախագահը պատրիարքի փոխանորդն է, եւ անդամներուն բոլորն ալ Խառն ժողովոյ կողմէն կ՚ընտրուին՝ քուէից առաւելութեամբ:

Դատաստանական Խորհրդոյ պաշտօնն է ընտանեկան վէճերը լուծել եւ Բ. Դրան կողմէն պատրիարքարան յանձնուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել եւ որոշել:

Երբ պատահի այնպիսի դատ մը զոր Դատաստանական Խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ըստ պահանջման խնդրոյն՝ կա՛մ Կրօնական, կա՛մ Քաղաքական եւ կա՛մ Խառն ժողովոյն յանձնուելուն հարկաւորութիւնը կը ցուցնէ:

Եթէ Դատաստանական Խորհրդոյ մէջ որոշուած դատի մը դէմ բողոքէ դատապարտեալը, խնդիրը վերստին կը քննուի յիշեալ ժողովներէն մէկուն մէջ՝ որո՛ւն որ կը վերաբերի:

4.- Վանօրէից Խորհուրդ

Յօդ. 48.- Վանքերն ազգային սեպհական ստացուածք ըլլալով, ազգին կը վերաբերի անոնց մատակարարութեան հասոյթից ու ծախուց ընդհանուր տեսչութեան եւ քննութեան իրաւունքը:

Ըստ որում՝ հարկաւոր է, որ ամէն վանք իրեն համար յատուկ կանոններ ունենայ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովները Խառն ժողով կազմելով, իւրաքանչիւր վանքի միաբանութեան, նաեւ Վանօրէից Խորհուրդին կարծիքն առնելէ ետքը, պէտք եղած կանոնադրութիւնը կը պատրաստեն եւ Ազգային Ընդհանուր ժողովոյ հաստատել կու տան:

Սոյն կանոնադրութեանց հիմնական սկզբունքն են.

Ա. Իւրաքանչիւր վանքի մասնաւոր մատակարարութիւնը իր միաբանութեան կը վերաբերի: Իսկ ամէնուն վրայ ընդհանուր տեսչութիւն ընելու իրաւունքը Կեդրոնական Վարչութեան կը վերաբերի, որ կը գործադրէ Վանօրէից Խորհրդին ձեռօք:

Բ. Իւրաքանչիւր վանքի վանահայրը իր միաբանութեան կողմէն կ'ընտրուի եւ Կեդրոնական Վարչութեան Խառն ժողովոյ հաւանութեամբը պատրիարքի ձեռօք կը հաստատուի:

Վանահայր ըլլալու անձը պէտք է, որ երեսունուհինգ տարին լրացուցած եւ Օսմանեան Տէրութեան հպատակ վարդապետներէն ըլլայ:

Գ. Բոլոր վանքերը ազգին բարոյական զարգացմանը ծառայելու պարտաւոր են. ուստի ամէն մէկը իր կարողութեան չափով ունենալու է ընծայարան, թանգարան, տպարան, հիւանդանոց եւ ասոնց պէս ուրիշ ազգօգուտ հաստատութիւններ:

Վանօրէից Խորհուրդը կը բաղկանայ եօթն անձերէ, զոր Քաղաքական ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ:

Վանօրէից Խորհուրդին պաշտօնն ու պարտաւորութիւնն է իւրաքանչիւր վանքի կանոնաց գործադրութեանը հսկել եւ վերատեսչութիւն ընել, եկամուտներն ու հասոյթները ստուգել եւ ծախքերը քննել ու կանոնաւորել:

Վանօրէից Խորհուրդը կ'ընտրէ վանականներուն մէջէն իւրաքանչիւր վանքի մատակարարութեան պաշտօնին համար պէտք եղած անձինքը: Ասոնք վանահօր նախագահութեամբ եւ իրենց վանքին յատկացեալ կանոններուն համաձայն վանքը տնտեսելով, որոշ ժամանակներ հաշուեհամար կու տան Խորհուրդին:

5.- Ելեւմտից Հոգաբարձութիւն

Յօդ. 49.- Ելեւմտից Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն հաշուագէտ անձինքէ, զոր Քաղաքական ժողովը կ՚ընտրէ քուէից առաւելութեամբ:

Ելեւմտից Հոգաբարձութեան պաշտօնն է ազգային կեդրոնական սնտուկին տնտեսութիւնն ու համարակալութիւնը:

Այս սնտուկին մուտքն են՝ ազգային ընդհանուր տուրք, Կոստանդնուպոլսոյ պատրիարքական դիւանատան հասոյթք եւ առանց մասնաւոր տեղ մը որոշելու ազգին անուանը եղած կտակք կամ նուէրք: Ելքն են՝ պատրիարքարանի եւ դիւանատան սովորական ծախք, Կեդրոնական Վարչութեան ձեռքը եղած ազգային հաստատութեանց եւ կարօտեալ թաղերու տրուելիք նպաստք եւ զանազան ուրիշ պատահական ծախք:

Ելեւմտից Հոգաբարձութիւնը կը հաւաքէ ամէն այս հասոյթները եւ իր ձեռօք կ՚ըլլան յիշեալ ծախքերը, միշտ Տնտեսական Խորհուրդին գիտութեամբը եւ Քաղաքական ժողովոյ հաւանութեամբը:

Ելեւմտից Հոգաբարձութիւնը պարտաւոր է իր տնտեսութեան յանձնուած ազգային սնտուկին հաշիւը տոմարակալութեան կանոնաւ կարգադրել եւ որոշեալ ժամանակներ հաշուեցուցակ ներկայացնել Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով եւ վաւերացնելով՝ կը հաղորդէ Քաղաքական ժողովոյն:

6.- Կտակաց Հոգաբարձութիւն

Յօդ. 50.- Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն անձինքէ, որոց երեքը եկեղեցական եւ չորսը աշխարհական՝ Խառն ժողովով կ՚ընտրուին քուէից առաւելութեամբ:

Կտակաց Հոգաբարձութեան պաշտօնն է ազգային կտակաց տնօրէնութիւնը: Իր պարտաւորութիւնն է կտակաց օրինաւոր կերպիւ եւ կտակարարին նպատակին եւ դիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել:

Կտակաց Հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնադրութիւնը Խառն ժողովը պիտի պատրաստէ Կտակաց Հոգաբարձութեան եւ Տնտեսական Խորհուրդին կարծիքն առնելով, եւ Ընդհանուր ժողովը պիտի հաստատէ:

Կտակաց Հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պաշտօնին վերաբերեալ հաշիւները պիտի ներկայացնէ Տնտեսական Խորհուր-

դին, որ ստուգելով եւ վաւերացնելով՝ պիտի հաղորդէ Քաղաքական ժողովոյն:

7.- Հիւանդանոցի Հոգաբարձութիւն

Յօդ. 51.- Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ ինն անձինքէ, զոր Քաղաքական ժողովը կ՚ընտրէ քուէից առաւելութեամբ: Ասոնց երկուքը վկայեալ բժիշկ պիտի ըլլան:

Հիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնն է Ազգային Հիւանդանոցը եւ անոր սեպհական կալուածներն ու եկամուտները տնտեսել, եւ անոնց հասոյթովն ու ազգային սնտուկին նպաստիւը մատակարարել զայն:

Այս հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մէկը՝ աղքատիկ հիւանդները դարմանելու, երկրորդը՝ ծեր ու անկար աղքատները պատսպարելու, երրորդը՝ խելագարները խնամելու, եւ չորրորդը՝ որբ եւ անտէրունջ տղաքը դաստիարակելու պիտի յատկանան:

Այս չէնքին կարգադրութիւնն ու տնտեսութիւնը բժշկական եւ առողջապահիկ կանոնաց համեմատ պիտի տնօրինուին:

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը այս հաստատութեան տնտեսութեան մասին՝ Տնտեսական Խորհուրդին, եւ դաստիարակութեան մասին՝ Ուսումնական Խորհուրդին պատասխանատու է, եւ սոյն Խորհրդոց որոշեալ ժամանակներ պիտի տայ իր գործողութեանց վրայ:

Է.- ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԲ

Յօդ. 52.- Թաղական Խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն՝ հինգէն մինչեւ տասներկու անդամներէ:

Թաղական Խորհուրդին պաշտօնն է Թաղին ժողովրդեան ազգային գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյ եւ դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը եւ ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են Թաղին եկեղեցւոյ պայծառութեանը խնամ տանիլ, Թաղին մէջ թէ՛ աղջիկ եւ թէ՛ մանչ տղայոց դաստիարակութեան համար դպրատուններ հաստատելու ջանք ընել եւ Թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտուութիւն ընել:

Յօդ. 53.- Ամէն թաղ մէյ մէկ սնտուկ պիտի ունենայ՝ Թաղական Խորհուրդին տնօրէնութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են թաղին ժողովրդեան կողմէ տրուած թաղական տուրքը, եկեղեցւոյ եւ դպրատան կալուածոց եկամուտները, եկեղեցւոյն հասոյթները, կտակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուէրները եւլն.: Ելքն են՝ թաղին եկեղեցւոյն եւ դպրատանց ծախքն ու աղքատաց տրուելիք օգնութիւնները:

Ամէն Թաղական Խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց եւ վախճանմանց արձանագրութիւնը պիտի ընէ կանոնաւոր կերպով՝ մասնաւոր տոմարի մը մէջ:

Յօդ. 54.- Թաղական Խորհուրդները իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ Տեսուչ Խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին, այսինքն՝ դպրատանց համար՝ Ուսումնական Խորհուրդին հետ, տնտեսական եւ դրամական գործոց համար՝ Տնտեսական Խորհուրդին հետ, դատի վերաբերեալ գործոց համար՝ Դատաստանական Խորհուրդին հետ: Եւ ասոնց ամէն մէկին որոշեալ ժամանակներ համար պիտի տան իւրաքանչիւրին վերաբերեալ գործոց վրայ:

Յօդ. 55.- Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կ'ընտրուի:

Ամէն ազգային անհատ, որ քսան եւ հինգ տարին լրացուցած է եւ ըստ 67րդ յօդուածոյ Սահմանադրութեան՝ ընտրողութեան իրաւունքէն դատաստանապէս զրկուած չէ, իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան Թաղական Խորհրդոյ անդամոց:

Յօդ. 56.- Թաղական Խորհրդոց պարտաւորութիւնն ու ընթացքը սահմանելու համար պէտք եղած կանոնադրութիւնը Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն ձեռօք պիտի չինուի:

Թաղական Խորհրդոց անդամներուն պաշտօնը չորս տարի կը տեւէ. հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին, եւ անմիջապէս վերընտրելի են:

Ը.- ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Կազմութիւն եւ պարտաւորութիւնք

Յօդ. 57.- Ազգային Ընդհանուր ժողովը հարիւր քառասուն երեսփոխաններէ կը բաղկանայ, որոնց՝

Ա. Մէկ եօթներորդ մասը, այսինքն քսանը, եկեղեցական երեսփոխանք են, զոր Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող եկեղեցականք կ՚ընտրեն:

Բ. Երկու եօթներորդ մասը, այսինքն քառասունը, գաւառներէն գալիք ազգային երեսփոխանք են:

Գ. Չորս եօթներորդ մասը, այսինքն ութսունը, Կոստանդնուպոլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանք են:

Յօդ. 58.- Կրօնական եւ Քաղաքական ժողովոց անդամները Ընդհանուր ժողովին ներկայ կը գտնուին, բայց եթէ երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր ժողովին մէջ քուէ չունին:

Յօդ. 59.- Ընդհանուր ժողովը նիստ չկրնար ընել մինչեւ որ անդամոց մեծագոյն մասը, այսինքն գոնէ եօթանասունումէկ հոգի ներկայ չ՚ըլլայ:

Յօդ. 60.- Ընդհանուր ժողովին պաշտօնն է.- պատրիարքը, կաթողիկոսը եւ ազգին գլխաւոր պաշտօնատարները եւ Կրօնական ու Քաղաքական ժողովոց անդամները ընտրել, Ազգային ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել, սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել եւ վճռել եւ Ազգային Սահմանադրութիւնն անխախտ պահել:

Յօդ. 61.- Ընդհանուր ժողովը կը գումարուի՝

Ա. Ըստ վաղեմի սովորութեան ամէն երկու տարին անգամ մը՝ Ապրիլ ամսոյ վերջերը, Ազգային Վարչութեան երկամեայ ընթացքին տեղեկագիրը մտիկ ընելու եւ ելմտական պաշտօնակալաց ձեռօք ժողվուած եւ ծախս եղած գումարներուն ընդհանուր հաշիւը տեսնելու եւ քննելու, Կրօնական եւ Քաղաքական ժողովոց բոլոր անդամները փոխելով՝ ուրիշներ ընտրելու եւ յետագայ երկու տարուան մէջ ազգային տուրքը ի՞նչպէս տնօրինուելիքը սահմանելու համար:

Սոյն երկ-տարեկան ժողովը սկսած օրէն մինչեւ երկու ամիս տեւելով իր նիստերը կը վերջացնէ:

Ընդհանուր ժողովոյ այս նիստերուն մէջ՝ միանգամայն Ազգային

Վարչութեան ժողովներուն անդամ գտնուող երեսփոխանները ամէն խնդրոյ վրայ կրնան խօսիլ, բայց տուրքի եւ ընտրութեան խնդիրներէն զատ՝ ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար քուէ տալ:

Բ. Կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար:

Գ. Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքները ընտրելու համար:

Դ. Կրօնական եւ Քաղաքական ժողովոց մէջ, կամ պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութիւնը բառնալու համար: Սոյն պարագայից մէջ՝ անհամաձայնութեան ենթակայ եղող կողմերը Ընդհանուր ժողովոյ մէջ խօսք միայն ունին եւ ո՛չ քուէ:

Ե. Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար:

Եւ վերջապէս այնպիսի խնդիրներու համար որոց վրայ որոշում տալը Ընդհանուր ժողովոյն կը վերաբերի:

Սակայն այս տեսակ արտաքոյ կարգի նիստերուն տեղի ունենալէն առաջ՝ Ընդհանուր ժողովոյ գումարման պատճառը պատրիարքարանի կողմէն Բարձրագոյն Դրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը կ՚առնուի.

Յօդ. 62.- Պատրիարքը կը գումարէ Ընդհանուր ժողովը Կրօնական եւ Քաղաքական ժողովոց մէկուն համահաճութեամբը եւ կամ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ Կրօնական եւ Քաղաքական ժողովոց մէկուն համահաճութեամբը եւ կամ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ անդամոց մեծագոյն մասին խնդրանօքը: Միայն թէ այս կերպ արտագոյ կարգի ժողով գումարելէն առաջ՝ գումարման պատճառը Բարձրագոյն Դրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը առնել հարկ է:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Յօդ. 63.- Կոստանդնուպոլսոյ մէջ գտնուող բոլոր եկեղեցականք՝ պատրիարքի հրաւիրանօք՝ Ապրիլ ամսոյ վերջը որոշեալ տեղ մը կը գումարուին, եւ գաղտնի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգ. Ընդհանուր ժողովոյ եկեղեցական անդամները կ'ընտրեն թէ՛ եպիսկոպոսներէն, թէ՛ վարդապետներէն եւ թէ՛ քահանաներէն, բայց պէտք է որ ընտրելիք՝ դուրսերը պաշտօն չունենան, եւ հասակաւ երեսուն տարին լրացուցած, եւ գոնէ հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլան, եւ որ եւ է դատաստանի տակ չգտնուին:

Յօդ. 64.- Եկեղեցական երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ. եւ երկու տարին անգամ մը՝ հինգերորդ մասը փոխուելով կը նորոգուի: Այս հինգերորդ մասն առաջին ութ տարիներու մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի եւ հանուի, եւ թէ՛ վիճակաւ ելած եւ թէ՛ տասնամեայ պաշտօնը լրացուցած անդամները անմիջապէս վերընտրելի են:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱՑ

Ա.- Ընտրողութեան եւ ընտրելութեան պայմանք

Յօդ. 65.- Ընտրողական իրաւանց հիմն կը բռնուին ազգային տուրքը եւ անձնական արժանիքը:

Ազգային տուրքը ընտրողութեան իրաւունք տալու համար, պէտք է որ ընտրողը տարին գոնէ եօթանասուն ու հինգ դուրուշ ընդհանուր տուրք վճարէ:

Ընտրողութեան անձնական արժանեօք իրաւունք ունեցողներն են՝ արքունի դիւաններուն եւ Տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գտնուողներ, վկայեալ բժիշկները, օգտակար գրքերու հեղինակները, դպրատանց ուսուցիչները եւ ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք:

Յօդ. 66.- Ընտրողութեան իրաւունք ունին քսան եւ հինգ տարին լրացուցած անձինք, սակայն ընտրողք հարկ է որ Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլան:

Յօդ. 67.- Ընտրելու իրաւունքէն դատաստանապէս զրկեալ են հետեւեալ չորս դաս անձինքը.

Ա. Քրէական յանցանօք դատապարտեալները, որոնք ըստ պատ-

ժական օրինաց Տէրութեան՝ քաղաքականապէս մեռեալ կը համարուին:

Բ. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած եւ Ազգ. ժողովներէն մէկուն կողմէն դատապարտուած անձինք, որոց համար ազգային գործերու մէջ չգործածուիլը վճռուած ըլլայ դատող ժողովին կողմէն:

Գ. Տէրութեան դատարաններուն կողմէն զգաստացուցիչ պատիժ կրողները, որոց պատժոյն պայմանաժամը դեռ լրացած չէ:

Դ. Խելագարութեան պատճառաւ անբաւական դատեալները, որոց կատարելապէս առողջացեալ ըլլալը օրինաւոր կերպիւ հաստատուած չըլլայ:

Յօդ. 68.- Ընտրելի են ազգին այն ամէն անհատները, որոնք երեսուն տարին լրացուցած ըլլալով, Օսմանեան հպատակ, Տէրութեան օրինացը տեղեակ եւ ազգային գործոց հմուտ են եւ ընտրողութեան իրաւունքէն ըստ 67րդ յօդուածոյ զրկուած չեն:

Բայց Կոստանդնուպոլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք ութսուն երեսփոխանաց գոնէ եօթը՝ աստիճանաւոր անձինք ըլլալու են:

Բ.- Եղանակ ընտրութեան

Յօդ. 69.- Կոստանդնուպոլսոյ թաղերէն եւ գաւառներէն ընտրուելիք երեսփոխանաց **բաշխման ցուցակը** չինելու համար, ամէն երկու տարի Փետրուար ամսոյ սկիզբը՝ Ազգ. Կրօնական եւ Քաղաքական ժողովները, Տեսուչ Խորհրդոց ատենապետներուն հետ մէկտեղուելով Համախորհուրդ ժողով կը կազմեն, եւ պատրիարքական դիւանատան ընդհանուր ազգահամարին նայելով, ամէն մէկ թաղին ու գաւառին կողմէն քանի՛ երեսփոխան ընտրուելիքը կ՚որոշեն, Պոլսոյ թաղերուն համար՝ ընտրողաց թիւը, եւ գաւառներուն համար՝ բնակչաց թիւը հիմն բռնելով: Եւ այս կերպով չինուած ցուցակին համեմատ՝ իւրաքանչիւր թաղի եւ գաւառի տալու երեսփոխանաց թիւը պատրիարքի ձեռօք անոնց կը ծանուցանեն:

Երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ եւ երկու տարին անգամ մը՝ թէ՛ Կոստանդնուպոլսոյ թաղերէն եւ թէ՛ գաւառներէն ընտրուած ազգային երեսփոխաններուն հինգերորդ մասը կը փոխուի եւ կը նորոգուի: Այս հինգերորդ մասին ընտրութիւնը պիտի կատարուի ամէն երկու տարին անգամ մը թէ՛ թաղերուն եւ թէ՛ գաւառներուն կողմէն, մէջերնին փոփոխակի կարգ պահելով:

Այս փոփոխակի կարգը առաջին ութ տարիներուն մէջ վիճակաւ պիտի որոշուի, սա՛ պայմանաւ, որ եթէ թաղի մը ընտրողները եւ կամ գաւառի մը բնակչաց թիւը աւելցած կամ պակսած է, այն թաղին կամ գաւառին տալու երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պիտի աւելնայ կամ պակսի:

Վախճանեալ կամ հրաժարեալ երեսփոխանաց տեղ ընտրուելիք անձինքն ալ՝ ամէն տարի տարեգլխէն երկու ամիս առաջ պէտք է ընտրուին:

Թաղական երեսփոխանները Կ. Պոլսոյ թաղերուն բնակչաց կողմէն պիտի ընտրուին: Իսկ գաւառական երեսփոխանները իւրաքանչիւր գաւառի Ընդհանուր ժողովոյ կողմէն պիտի ընտրուին:

Յօդ. 70.- Թէ՛ Պոլսոյ թաղերէն եւ թէ՛ գաւառներէն ուղուած երեսփոխանները հարկ չէ, որ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան. բաւական է, որ Կոստանդնուպոլսոյ մէջ բնակին, իրենց ներկայացուցած թաղին կամ գաւառին ազգային գործոցը հմուտ ըլլան, եւ ազգասիրութեամբ, ուղղութեամբ եւ արդարախոհութեամբ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան:

Ազգային երեսփոխանները ո՛չ թէ զիրենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը համարուին Ընդհանուր ժողովոյ մէջ, այլ ազգին երեսփոխաններն են՝ համազօր իշխանութեամբ:

Յօդ. 71.- Երկու տարին անգամ մը Պոլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք երեսփոխանաց հինգերորդ մասին համար՝ պատրիարքը Փետրուար ամսոյ մէջ ընտրող թաղերուն ամէն մէկուն կը ծանուցանէ քանի՛ երեսփոխան ընտրելիքը՝ ընտրողութեան եւ ընտրելութեան պայմաններն ալ յիշեցնելով:

Այս ծանուցման վրայ՝ Թաղական Խորհուրդները երեսփոխանաց ընտրութեանը կը ձեռնարկեն: Բայց ընտրական գործողութեանց համար թաղին քարոզիչը կամ անոր չգտնուած ժամանակը՝ աւագերէցը նախագահութիւն կ՚ընէ, եւ թաղին բնակիչներէն երեքէն մինչեւ վեց պատուաւոր անձինք Թաղական Խորհուրդին վրայ կ՚աւելցուին:

Այս կերպով կազմուած ընտրողական ժողովներուն ամէն մէկը իր թաղին մէջ ընտրողութեան իրաւունք ունեցողներն ստուգելով, այրուբէնի կարգաւ ընտրողաց ցանկ մը կը պատրաստէ եւ ութ օր բաց մնալու պայմանաւ Թաղական խորհրդարանին մէջ կախել կու տայ:

Ընտրողական ժողովը ընտրելեաց որոշումը դիւրացնելու համար՝ ուղուած երեսփոխաններուն թիւէն եռապատիկ աւելի ընտրելեաց

ցուցակ մըն ալ կը պատրաստէ եւ ան ալ կախել կու տայ խորհրդարանին մէջ: Սակայն ընտրողք ամենեւին պարտաւորեալ չեն ընտրելեաց ցուցակին հետեւելու:

Գաւառներուն մէջ ալ՝ գաւառական Ընդհանուր ժողովոց անդամները միեւնոյն կերպով կ՚ընտրուին:

Գ.- Քուէարկութիւն

Յօդ. 72.- Ընտրողաց ցանկին բացուելէն շաբաթ մը ետքը՝ կիւրակէ առաւօտ, ժամերգութեան աւարտմանէն ետքը, Թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կը սկսուի սապէս.

Թաղական Խորհրդոյ նախագահը՝ ***ընտրողաց ցանկը*** *ձեռքն առած, կարգաւ կը կանչէ ընտրողները, որք ընտրողաց ցանկին մէջ իրենց անուան առջեւ ստորագրելէն վերջը, քանի՛ երեսփոխան ուզուած է նէ՝ այնքան անձանց անուն թուղթի մը վրայ կը գրեն վերէն ի վար կարգաւ, եւ ամէն մէկ անուան առջեւ մականուն, բնակութիւն եւ արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծալլեն, եւ յատկապէս պատրաստուած քուէատուփին մէջ կը ձգեն: Իսկ եթէ ընտրողք պատճառաւ իւիք չը կրնան գալ խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը քուէնին կ՚ուղարկեն:*

Յօդ. 73.- Քուէարկութիւնը գաղտնի է, ուստի պէտք է որ քուէարկուք առանձին գրեն իրենց քուէաթուղթը, որպէս զի ուրիշ մը չկրնայ տեսնել գրած անունները:

Յօդ. 74.- Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմննայ: Ընտրողներէն ո՛վ որ իր քուէն նոյն օրը չներկայացնէ, ետքը բողոքելու իրաւունք չունի:

Յօդ. 75.- Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի մէջ քուէ տալ:

Յօդ. 76.- Ընտրութեան մասին միացեալ թաղերը եւ թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, ընտրողները մէկտեղ ժողվուելով քուէարկութիւն կ՚ընեն: Իսկ եթէ իրարմէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւր թաղ կամ թեմ զատ քուէարկութիւն կ՚ընէ, եւ ետքը երկու կողման քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն:

Յօդ. 77.- Քուէարկութիւնը կատարուելէն ետքը նոյն օրը մի եւ նոյն նիստի մէջ՝ Թաղական Խորհուրդին առջեւ քուէտուփը կը բացուի. եւ այս բանիս համար որոշուած քննիչները քուէներն համրելով, քուէարկուաց թուոյն հետ կը բաղդատեն:

Եթէ տարբերութիւն գտնուի եւ Թաղական Խորհուրդը խարդախութեան կասկած ունենայ, մինչեւ առաջիկայ կիրակի՝ միւս օր մը նորէն քուէարկութիւն ընել կ՚որոշուի:

Նմանապէս՝ եթէ ուղղուած երեսփոխանաց թիւը առաջին անգամին չլցուի, մնացածին համար երկրորդ անգամ քուէարկութիւն կ՚ըլլայ միւս օր մը:

Յօդ. 78.– Եթէ պատահի որ քուէարկուներէն մէկը պէտք եղածէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր քուէաթուղթին մէջ, նոյն թիւէն վերջը եկած անուններն անընդունելի են. նմանապէս անվաւեր կը համարուին այն քուէաթուղթերը՝ որոնց մէջ գտնուած անունները վերէն ի վար կարգաւ գրուած չեն:

Յօդ. 79.– Քուէարկուաց թուոյն կէսէն աւելի քուէ ստացողներուն մէջէն առաւելագոյն քուէ ստացող անձինք երեսփոխան ընտրուած են: Եթէ երկու անձանց հաւասար քուէ տրուած ըլլայ, երիցագոյնը ընտրեալ է:

Յօդ. 80.– Եթէ առաջին անգամ քուէարկութեամբ առաւելութիւն չստացուի, Թաղական Խորհուրդը կը ծանուցանէ առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց անունները, եւ երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կ՚ըլլայ:

Յօդ. 81.– Ամէն Թաղական Խորհուրդ իր թաղէն ընտրուած երեսփոխանաց անունները պատրիարքին կը ներկայացնէ մասնաւոր տեղեկագրով մը, որուն մէջ պէտք է ճշդիւ նշանակուած ըլլան ընտրեալներուն անունը, մականունը, բնակութիւնը, արհեստը եւ քուէարկութեան բոլոր պարագաները:

Պատրիարքը այս տեղեկագրերը կը ներկայացնէ Քաղաքական ժողովին, որ զանոնք քննելով՝ կը ստուգէ երեսփոխանաց ընտրելութեան պայմանները:

Այսպէս ստուգուելէն ետքը, պատրիարքը պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ երեսփոխանաց ամէն մէկուն ըստ օրինի ընտրութիւնը, եւ կը հրաւիրէ զանոնք Ընդհանուր ժողովոյ ատեան կազմել որոշեալ օր մը:

Յօդ. 82.– Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրը մտիկ ընելով, եղած ընտրութիւնները եւ երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւերացնէ, որով Ընդհանուր ժողովը ըստ օրինի կազմուած կ՚ըլլայ:

Ընդհանուր ժողով կրնայ գումարուիլ, երբ Կոստանդնուպոլսոյ

երեսփոխանաց մեծագոյն մասը ընտրուած ըլլայ, առանց սպասելու գաւառական երեսփոխանաց ընտրութեան վախճանին, որոնց լուրը մէկ կողմէն Կոստանդնուպոլիս հասնելու վրայ կ՚ըլլայ:

Յօդ. 83.- Եթէ մէկը քանի մը թաղերու կամ գաւառներու կողմէն ընտրուած ըլլայ, ինք կ՚որոշէ ո՛ր թաղին կամ ո՛ր գաւառին երեսփոխանութիւնն ընդունիլը, եւ եթէ ինք չուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակաւ կ՚որոշէ:

Յօդ. 84.- Երեսփոխանաց անուան ցուցակը Ընդհանուր ժողովոյ սրահին մէջ կախուած պիտի մնայ՝ այբուբէնի կարգաւ չինուած, եւ իւրաքանչիւր անուան առջեւ պիտի նշանակուի հրաժարում, վախճանում եւ այլ ինչ որ պատահի: Այս ցուցակը երկու տարին անգամ մը պիտի նորոգուի:

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ

Յօդ. 85.- Ամէն ժողով եւ խորհուրդ պիտի ունենայ ատենական դիւան մը, որ կը բաղկանայ մէկ ատենապետէ մը, մէկ ատենադպրէ եւ երբեմն նաեւ ատենապետի եւ ատենադպրի փոխանորդներէ: Ասոնց ամէնն ալ հարկաւ ժողովոյ անդամներէն պիտի ըլլան:

Ատենական դիւանը տարին անգամ մը կը նորոգուի, եւ անդամներն անմիջապէս վերընտրելի են:

Յօդ. 86.- Առանց մեծագոյն մասի ներկայութեան՝ ատեան չի կրնար կազմուիլ:

Յօդ. 87.- Խնդիր մը լաւ քննուելէն եւ անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը հասկցուելէն վերջը, քուէի կը դրուի եւ ձայնից առաւելութեամբ որոշում կը տրուի: Երբ ձայնից հաւասարութիւն պատահի, եթէ նախագահը ներկայ է՝ անոր կարծեաց կողմը կը հակի որոշումը, եթէ ո՛չ՝ ատենապետին կողմը:

Յօդ. 88.- Խառն ժողովոյ մէջ քննուած որեւէ խնդրոյ որոշում տրուելու համար, պէտք է որ երկու ժողովները զատ քուէարկութիւն ընեն: Երբ երկուքին ալ մեծագոյն մասը միեւնոյն որոշումն ըրած ըլլայ, խնդիրը լուծուած է, իսկ եթէ որոշումնին տարբեր ըլլայ, կարծեաց անհամաձայնութիւն կը համարուի եւ հետեւաբար խնդրոյն որոշումը Ընդհանուր ժողովին կը ձգուի:

Խառն ժողովը օրինաւորապէս գումարուած համարուելու համար պէտք է որ ժողովոց երկուքին ալ մեծագոյն մասը ներկայ գտնուին:

Յօդ. 89.- Ընդհանուր ժողով գումարուելէն գոնէ վեց օր առաջ պէտք է, որ պատրիարքարանի կողմէն հրաւիրանաց գրեր ուղարկուին անդամներուն:

ԳԼՈՒԽ Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

Յօդ. 90.- Ամէն ազգային անհատ, որ չափահաս է եւ վաստակի ու շահու տէր, պարտական է տրօք մասնակից ըլլալ ազգային ծախուց:

Այս տուրքը տարեկան է, եւ բաշխման հիմը կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը:

Յօդ. 91.- Ազգային տուրքը երկու տեսակ է. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է եւ կը հաւաքուի պատրիարքարանին կողմէն, ազգ. կեդրոնական սնտուկին համար, եւ միւսը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր Թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է եւ կը հաւաքուի Թաղական Խորհրդոյ կողմէն, Թաղական սնտուկներուն համար:

Յօդ. 92.- Կոստանդնուպոլսոյ մէջ ընդհանուր տուրքի բաշխման եւ հաւաքման եղանակը Քաղաքական ժողովին մէջ կ'որոշուի եւ Ընդհանուր ժողովով կը հաստատուի: Իսկ մասնաւոր տուրքը ամէն Թաղ իր խորհրդոյ մէջ կ'որոշէ եւ կը հաստատէ:

Սոյնպէս կը տնօրինուին նաեւ գաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու Թաղական մասնաւոր տուրքը:

Յօդ. 93.- Գաւառներուն կողմէն Ազգային Պատրիարքարանի սնտուկին տրուելու մինչեւ ցարդ սովորութիւն եղած տուրքին բաշխման եւ հաւաքման եղանակը Ընդհանուր ժողովը պիտի որոշէ եւ Բարձրագոյն Դրան հաճութեամբը պիտի գործադրուի:

ԳԼՈՒԽ Դ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 94.– Առաջնորդը գաւառական ժողովոց նախագահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել:

Յօդ. 95.– Առաջնորդը չպիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով՝ պաշտօնին տեղէն հեռանալ, այլ գաւառին գլխաւոր քաղաքին մէջ Ազգային Առաջնորդարանը պիտի բնակի, ուր կը գումարուին եւ Գաւառական ժողովները:

Երբ Առաջնորդ մը միանգամայն եւ վանահայր ըլլայ, եթէ վանքը մէկ օրուան ճամբայ հեռի է առաջնորդանիստ քաղաքէն՝ կրնայ երկու պաշտօնն ալ մէկտեղ վարել, երբեմն–երբեմն վանքին այցելութիւն ընելով: Բայց եթէ հեռաւորութիւնը օրուան մը ճանապարհէ աւելի ըլլայ, պէտք է, որ վանքին մէջ իրեն փոխանորդ կարգելով, ինք քաղաքը բնակի: Սակայն հարկ եղած ժամանակը իր վիճակին ամէն կողմը այցելութեան կրնայ երթալ:

Յօդ. 96.– Կոստանդնուպոլսոյ մէջ եղածին նման՝ գաւառներուն մէջ ալ ամէն թաղ պիտի ունենայ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ մը, ԹԱՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ մը եւ ԹԱՂԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ մը:

Նմանապէս առաջնորդանիստ քաղաքին մէջ պիտի հաստատուին ԿՐՕՆԱԿԱՆ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎներ, եւ Քաղաքական ժողովին տնօրէնութեան տակ՝ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ մը:

Նաեւ առաջնորդարանին մէջ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ մը հաստատուելով, առաջնորդական վիճակին բոլոր ժողովրդոց թաղական ազգահամարի տումարները հոն պիտի ժողուին եւ ***Գաւառական ընդհանուր ազգահամար*** *պիտի կազմուի:*

Յօդ. 97.– Առաջնորդի ընտրութիւնը նոյն եւ նման պատրիարքի ընտրութեան, Գաւառական Ընդհանուր ժողովով կ՚ըլլայ եւ ընտրութեան տեղեկագիրը տեղւոյն Խառն ժողովոյն միջոցաւ պատրիարքին կ՚ուղարկուի: Պատրիարքը Կեդրոնական Վարչութեան Խառն ժողովոյ համահաճութեամբը կ՚անուանէ զԱռաջնորդը, եւ Բարձրագոյն Դրան իմաց տալով՝ պաշտօնական հրամանագիրը կ՚ընդունի:

Յօդ. 98.- Գաւառական ժողովները Կեդրոնական Վարչութեան ժողովներուն վերաբերեալ տրամադրութեանց համեմատ պիտի կազմուին, եւ պաշտօններին ու պարտաւորութիւններին նոյն եւ նման են:

Բայց Գաւառական ժողովներուն անդամոց թիւը՝ իւրաքանչիւր վիճակի համար միանգամ պիտի սահմանուի, ամէն մէկ գաւառի բնակչաց թուոյն համեմատութեամբ:

Մինչեւ որ ազգային տուրքը գաւառներուն մէջ օրինաւոր կերպիւ հաստատուի, Տէրութեան առաջին եւ երկրորդ եւ երրորդ աստիճանի տուրք տուող անձինք միայն պիտի ընտրեն Գաւառական Ընդհանուր ժողովոց անդամները: Եւ այս ժողովներուն կազմութեան կերպը, իւրաքանչիւր վիճակի բնակչաց թուոյն նայելով, Կեդրոնական Վարչութիւնը պիտի որոշէ, Առաջնորդաց հետ խորհրդակցելով:

ԳԼՈՒԽ Ե.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 99.- Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անփոփոխելի են: Բայց երբ փորձառութեամբ՝ ինչ ինչ տրամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր դատուի, Ընդհանուր ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութենէն հինգ տարի ետքը՝ Վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազմէ, Կրօնական եւ Քաղաքական ժողովներէն երեքական անդամ, չորս Տեսուչ Խորհուրդներէն երկերկու անդամ, եւ ասոնցմէ զատ Ընդհանուր ժողովոյ մէջէն կամ դրսէն վեց հոգի, ընդամէնը քսան անդամ ընտրելով: Այս յանձնաժողովը կը սահմանէ հարկաւոր դատուած փոփոխութիւնները, որ Ընդհանուր ժողովը վաւերացնելէն ետքը, Բարձրագոյն Դրան կը ներկայացուին եւ կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին:

ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ – ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Հայ Սահմանադրական – Ռամկավար Կուսակցութիւնը, հաստատուած ռամկավարական յայտնի սկզբունքներու վրայ, ամէն կառավարութեան իբրեւ հիմ կը նկատէ ***Ժողովուրդի Գերիշխանութիւնը*** *(Souveraineté du Peuple):*

Կ՚ընդունի անհատներու ազատութեան եւ հաւասարութեան յարակից՝ ազգութիւններու ինքնուրոյնութիւն եւ հաւասարութիւն:

Կը դաւանի թէ՝ Օսմանեան Պետութեան բաղկացուցիչ տարբեր ազգութիւնները – իբրեւ օսմանեան քաղաքացիներու որոշ համախմբումներ, իբրեւ առանձին միութիւններ կամ պատմական անհատականութիւններ – հաստատ պահելով հանդերձ Օսմանեան Հայրենիքին միութիւնը եւ ամբողջութիւնը, պարտին ո՛չ միայն պահպանել, այլ եւ երաշխաւորուած տեսնել իրենց ազգային գոյութիւնը՝ համահաւասար իրաւունքներու վրայ կոթնած:

Կը մերժէ, հետեւաբար, օսմանեան ազգութիւններուն թէ՛ միաձուլումի եւ թէ՛ անջատողութեան ոգին, ինչպէս նաեւ ազգայնամոլ եւ այլամերժ որեւէ ձգտում:

*Իր ազգային բնաբանն է – **Հայութիւնը* Օսմանցիութեան հետ:***

Կը ներկայանայ, մասնաւորապէս հայկական ներքին կեանքին մէջ, իբրեւ ազգային կուսակցութիւն, համախմբելով իր չուրջ Հայութեան բոլոր գիտակից եւ կենսունակ տարրերը՝ առանց դաւանական եւ դասակարգային խտրութեան, եւ ընդգրկելով Հայ ազգային, քա-

---

* *Հայ կամ Հայութիւն բառերը գործածուած են ներկայ ծրագրին մէջ միայն Օսմանցի Հայերու վերաբերմամբ:*

դաքական, ընկերային, մտաւորական եւ տնտեսական զարգացման վերաբերեալ բոլոր երեւոյթները:

Կը կանգնի կեանքի իրականութեան պահանջներու վրայ, մնալով հեռու եւ անկախ՝ ընկերային վիճելի վարդապետութիւններէ:

Կ'որդեգրէ, գործնականին մէջ, Դրամագլուխի, Աշխատութեան եւ Տաղանդի կամաւոր ընկերակցութեան (Association volontaire du capital, du travail et du talent) սկզբունքը:

Կը հանդիսանայ պաշտպան՝ տնտեսական բարենորոգումներու հետամտութեամբ՝ առհասարակ աշխատաւորներու շահերուն, ինչպէս քաջալերող՝ դրամագլուխի արդիւնաբերութեան, գոհացնելու համար երկրին արդի անմիջական պէտքերը՝ առանց չեղելու ռամկավարական հիմնական սկզբունքներէն:

ՆՊԱՏԱԿ

Հ. Ս. Ռ. Կուսակցութիւնը, հաւատարիմ վերոյիշեալ սկզբունքներուն եւ հետամուտ անոնց յաղթանակին, հետեւեալ կերպով կ'ամփոփէ իր նպատակը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Ա.- Ջեռք բերել Օսմանեան Սահմանադրութեան լայն իմաստով վերաքննութիւնը եւ վերածել ան Ռամկավարական Սահմանադրութեան մը:

Բ.- Ապահովել – իբրեւ երաշխաւորութիւն Օսմանեան Պետութեան քաղաքական անկախութեան եւ հողային ամբողջութեանը – զուտ վարչային ապակեդրոնացումի (Décentralisation) դրութիւնը, աստիճանաբար ընդարձակելով բոլոր համայնքներու եւ նահանգներու (հետեւաբար նաեւ հայաբնակ նահանգներու) տեղական իրաւասութիւնները:

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ

Ա.- Հսկել Հայոց օրինապէս հաստատուած ազգային իրաւունքներուն անվթար պահպանումին, իբրեւ երաշխիք՝ կրօնական ազատութեան եւ կրթական զարգացման:

Բ.- Համաձայնեցնել Ազգային Սահմանադրութիւնը վերաքննութեամբ ժամանակակից պահանջներու:

Գ.- Աշխատիլ հայ դաւանական հասարակութեանց զուտ եկեղեցական գործերը անջատելու անոնց ազգային վարչական կազմէն եւ առաջ բերելու ազգային եւ կրթական միացեալ վարչութիւն:

Դ.- Պահպանել եւ ժողովրդականացնել հայ լեզուն, պատմութիւնը եւ գրականութիւնը, եւ ապահովել ազգային յիշատակարաններու անեղծ պահպանումը:

ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Ա.- Հ. Ս. Ռ. Կուսակցութիւնը կը գործէ սահմանադրական ըէժիմի տակ, իբրեւ քաղաքական օրինական կազմակերպութիւն եւ ո՛չ իբրեւ յեղափոխական-ապստամբական գաղտնի մարմին:

Բ.- Իր գործունէութեան եւ բրոբականտի միջոցներն են – մամուլ (լրագիր եւ ուրիշ հրատարակութիւններ), ազգային եւ ընդհանուր հրապարակային գումարումներ եւ հրապարակախօսութիւններ, ընտրական եւ խորհրդարանական պայքար, ժողովրդային զգացման խաղաղ արտայայտումներ եւն.:

Գ.- Հին բռնապետական ըէժիմը վերահաստատելու եւ ընդհանրապէս անգամ մը ձեռք բերուած սահմանադրական իրաւունքները ետ խլելու կամ վտանգելու որեւէ փորձի դէմ Կուսակցութիւնը պիտի կռուի իր բոլոր ոյժով եւ գործելակերպով, ինչպէս նաեւ, ի հարկին, բացառիկ միջոցներու կիրառութեամբ:

Դ.- Կուսակցութիւնը պիտի ուսումնասիրէ եւ հետազօտէ ընդհանրապէս Օսմանեան Հայրենիքի եւ մասնաւորապէս Հայ ժողովուրդի կեանքի պայմանները եւ անմիջական պահանջները, որոնց պիտի համաձայնեցնէ իր գործունէութիւնը՝ աստիճանական յառաջխաղացութեամբ:

Ե.- Պիտի ջանայ Օսմանեան բաղկացուցիչ ազգութիւններու հետ մշակել եղբայրակցութեան ոգին, եւ իր ծրագրին սահմանին մէջ՝ համերաշխաբար գործակցիլ անոնց քաղաքական կուսակցութեանց հետ:

ՅԱՏԱԿԱԳԻԾ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Ս. Ռ. Կուսակցութիւնը կ'ընդունի, իբրեւ Օսմանեան Սահմանադրութեան երաշխաւորութիւն, հետեւեալ անվերաքննելի եւ անբռնաբարելի սկզբունքները:

Ա.- Քաղաքային Իրաւունքներ (Droits Civils).- Հաւասարութիւն եւ Ազատութիւն:

Բ.- Քաղաքական Իրաւունքներ (Droits Politiques).- Ժողովուրդի գերիշխանութիւն եւ ձայնին գերակշռութիւն:

Գ.- Պետական Կազմ.- Խորհրդարանի օրէնսդիր իշխանութիւն եւ նախարարութեան պատասխանատուութիւն:

Դ.- Սահմանադրական Ըէժիմ.- Սահմանադրութեան մասնակի կամ ամբողջովին դադարումը, ինչպէս նաեւ Սահմանադրական Օրէնքին ամբողջական վերաքննութիւնը բացարձակապէս անկարելի է:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

Ա. Հաւասարութիւն

1) Հաւասարութիւն ամէն անհատի՝ Պետութեան եւ Օրէնքի առջեւ:

2) Հաւասարութիւն ամէն ազգութեան: Ոչ մէկ ցեղ որեւէ՛ գերիշխանութիւն կամ առաւելութիւն չունի:

3) Քաղաքական իրաւունքները իրենց հակակշիռ ունին քաղաքացիական պարտականութեանց կատարումը (տուրք, զինուորութիւն, օրէնքի հնազանդութիւն): Այդ պարտքերը չի կատարող համայնքները կը կառավարուին առժամեայ եւ բացառիկ օրէնքներով:

4) Բոլոր օսմանեան քաղաքացիներն անխտիր, իրենց արժանիքին եւ ընդունակութեան համաձայն, պիտի կրնան պաշտօնի ընդունուիլ կառավարական բոլոր ճիւղերուն մէջ: (Ստորադաս պաշտօններու բաշխում մրցումի դրութեամբ):

Բ. Ազատութիւն

1) Ազատութիւն ամէն անհատի՝ օրէնքի եւ հաւասարութեան սահմանին մէջ:

2) Անձեռնմխելիութիւն անձի, եւ անբռնաբարելիութիւն՝ բնակարանի, նամակագրութեան եւ սեփականութեան: Բացառութիւն՝ հանրօգուտ չինութեանց համար արդար հատուցումի փոխարէն սեփականազրկումը (Expropriation):

3) Ազատութիւն խիղճի, պաշտամունքի եւ ուսուցումի:

4) Ազատութիւն խօսքի, մամուլի, հաւաքումի եւ ընկերակցութեան: (Անդառնալի ջնջում գրաքննութեան: Հաւաքումները առանց զէնքի):

5. Ազատութիւն աշխատութեան, առեւտուրի եւ տեղափոխութեան: (Ջնջում ներքին անցագրի):

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

1) Օսմանեան Պետութեան Վեհապետը կը կոչուի «Կայսր Օսմանցիներու»:

2) Վեհապետին անձին անձեռնմխելիութիւնը եւ անպատասխանատուութիւնը երաշխաւորուած են Սահմանադրութեամբ:

3) Կայսրը կ'երդնու յարգել Սահմանադրութիւնը եւ Օսմանեան ժողովուրդին օրէնքները, պահպանել օսմանեան անկախութիւնը եւ հողային ամբողջութիւնը:

4) Կայսերական հրովարտակը, որ ժողովուրդին որոշման վաւերագիրն է, պարտի յետստորագրուիլ ձեռնհաս նախարարին կողմէ՝ որ ատով պատասխանատու կը կանգնի:

5) Օրէնսդրական իշխանութիւնք կը պատկանի հաւաքաբար Կայսեր եւ Խորհրդարանին (Երեսփոխանական ժողով եւ Ծերակոյտ), իսկ նախաձեռնութիւնը՝ անջատաբար իւրաքանչիւրին, ինչպէս նաեւ Նախարարական Դահլիճին:

6) Կայսրը եւ Նախարարութիւնը կը ներկայացնեն գործադիր իշխանութիւնը:

7) Նախարարական առանձին եւ հաւաքական համերաշխ պատասխանատուութիւն՝ Խորհրդարանին առջեւ: (Դահլիճը պարտի Երեսփոխանական Ժողովին մեծամասնութիւնը վայելել):

8) Նախարարական Դահլիճը իւրաքանչիւր տարուան ելմտացոյցը (Budget) կը հրատարակէ՝ Խորհրդարանին վաւերացումը ստանալէ վերջ:

9) Խորհրդարանի անբռնաբարելիությունը (Inviolabilité Parlementaire) հաստատուած է՝ անդամներուն իրենց պաշտօնին բերմունքով վայելած անպատասխանատուութեան սկզբունքին վրայ:

10) Երեսփոխանական Ժողովին անդամներու թիւը կ՚որոշուի 25.000 օսմանեան արու քաղաքացիի փոխարէն մէկ անդամի համեմատութեամբ: Անդամները կ՚ընտրուին ընդհանուր, հաւասար, գաղտնի եւ ուղղակի քուէարկութեամբ (Suffrage Universel): Միեւնոյն նահանգին բոլոր Ընտրողական Շրջանակները նահանգին ամբողջ երեսփոխանները միանգամայն կ՚ընտրեն: 21 տարին լրացուցած եւ քաղաքական իրաւունքներէ չի զրկուած ամէն օսմանցի այր ընտրող է իր բնակավայրին մէջ, իսկ 30 տարին լրացուցած՝ ընտրելի է իր բնակավայրէն, ինչպէս նաեւ տարբեր շրջանակներէ:

11) Նախարարութեան դիմումին վրայ՝ Վեհապետը կրնայ լուծել Երեսփոխանական Ժողովը, պայմանով որ մինչեւ երեք ամիս նոր ընտրութեանց կատարումը հրամայող հրովարտակը միանգամայն հրատարակուի: Միեւնոյն պատճառին համար՝ Երեսփոխանական Ժողովը մէկ անգամ միայն կրնայ լուծուիլ:

12) Ծերակոյտի անդամներուն թիւը Երեսփոխանական Ժողովին անդամներուն թիւին մէկ երրորդին հաւասար է: Ծերակուտականները (40 տարին լրացուցած ըլլալու պայմանաւ)՝ Բ. կարգի քուէարկութեամբ՝ Նահանգային Ընդհանուր ժողովներու կողմէ կ՚ընտրուին ինը տարուան ժամանակամիջոցի համար: Ծերակոյտի անդամներուն մէկ երրորդը երեք տարին անգամ մը կը վերանորոգուի. առաջին երկու անգամին համար՝ դաղարեալները կ՚որոշուին վիճակով:

13) Իւրաքանչիւր նահանգ կանխաւ կ՚որոշէ տեղական զանազան ազգութեանց պատկանող խորհրդարանական անդամներու թիւը, հիմ բռնելով անոնց իւրաքանչիւրին բնակչական համեմատութիւնը:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

1) Դատաստանական իշխանութիւնը անկախ է վարչական իշխանութենէն:

2) Դատաստանական դրութեան հիմնական բարեկարգում, մասնաւորապէս՝

Ա) Նոր դատաւորները կ՚ընտրուին վկայեալ իրաւագէտներէ:

Բ) Իրաւագիտութեան վկայական ունեցող դատաւորներու պաշտօնը մշտնջենաւոր է (օրէնքի սահմանին մէջ):

Գ) Հաստատում հաշտարար, մանրադատ (Sommaire), ըէֆէրէ եւ ժիւրիի դատարաններու: Վերջինը՝ հասարակ ոճիրներու, քաղաքական ու մամուլի դատերու յատուկ:

Դ) Կարօտ դատարարներու (Justiciable)՝ դատաստանական օգնութիւն (Assistance Judiciaire):

Ե) Անուանում տեղական լեզուներու ծանօթ կառավարական թարգմաններու՝ դատարաններու մօտ:

Զ) Դատական յայտարարութիւնները տեղական գլխաւոր լեզուներով եւս:

3) Օրէնքներու կատարելագործում, մասնաւորապէս՝

Ա) Ջնջում՝ քաղաքային իրաւունքներէ զրկումի, տանջանքի, ինչքերու գրաւումի եւ օտար երկիր արտաքսումի (օսմանեան քաղաքացիներու):

Բ) Արգիլում մուրացկանութեան եւ դատարկաշրջութեան:

Գ) Օրինագրում՝ կտակի, ժառանգութեան եւ վագրֆի:

Դ) Ձերբակալութիւն՝ օրինական պատճառի համար միայն, առանց ընդհանուր դատախազի հրամանագրի՝ 24 ժամէն աւելի չի տեւելու պայմանով:

Ե) Բանտային բարենորոգում՝ խցկային (cellulair) դրութեան եւ բանտարկեալներու աշխատութեան կազմաւորումով:

Զ) Հատուցում վնասներու (Dommages-intérêts) անխտրեմաբար կամ գիտակցօրէն եւ ուղղակի կամ անուղղակի տեղի ունեցած, ըլլա՛յ անհատին կամ անհատականութեան, ըլլա՛յ կառավարութեան կողմէ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1) Ուսուցումը ազատ է, ամէն Օսմանցի իր ծախքով կրնայ վարժարաններ բանալ:

2) Նախնական կրթութիւնը ձրի եւ պարտաւորիչ [է]:

3) Իւրաքանչիւր ազգութիւն իրաւունք ունի վարելու իր նախնական վարժարանները՝ Պետութեան կրթական պիւտճէէն ստանալով իր համեմատական ծախսաբաժինը:

4) Պետութեան լեզուն (թուրքերէն) պարտաւորիչ է ծխական նա-

խակրթարաններու մէջ՝ տարրական դասընթացքէն վերջ:

5) Ծխական վարժարան չի գտնուած տեղեր՝ պետական նախակրթարաններու մէջ՝ թուրքերէնէն զատ, տեղական գլխաւորագոյն լեզուներու եւս աւանդում:

6) Կրթական բրօկրամի միաձեւութիւն եւ կառավարական վերին հսկողութիւն՝ պետական եւ ծխական նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններուն մէջ:

7) Կառավարական բրօկրամէն դուրս կը մնայ՝ իւրաքանչիւր ազգութեան յատուկ մայրենի լեզուի, կրօնագիտութեան, ազգային պատմութեան եւ գրականութեան ազատ ուսուցումը եւ ծաղկումը:

8) Պետութիւնը կը ստանձնէ բարձրագոյն եւ մասնագիտական կրթութիւնը: Պետական այդ կարգի հաստատութիւնները բաց են անխտիր ամէն անհատի համար:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1) Ամէն օսմանեան քաղաքացի ենթակայ է զինուորագրութեան:

2) Զինուորական ծառայութիւնը երկու տարի [է]:

3) Խաղաղութեան ժամանակ զօրքերը նախընտրապէս իրենց բնակավայրին մօտ ծառայեցնել:

4) Բարւոքում զօրքերու կենցաղի պայմաններուն:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԱԶՄ

1) Վարչային, ընտրական, կրթական եւ տնտեսական պահանջներու համաձայն՝ նահանգային նորագոյն բաժանում եւ սահմանագծում, համայնքներու մէջ համացեղ տարրերու միաձոյլ խմբակցութիւնը հիմ բռնելով:

2) Վարչային ապակեդրոնացումի հիման վրայ՝ նահանգային իրաւասութեանց ընդարձակում: Իւրաքանչիւր նահանգ, ինչպէս եւ համայնք, ինք կը վարէ տեղական գործերը:

3) Նահանգներու ընդհանուր ժողովները, ինչպէս նաեւ տեղային միւս ժողովները, կ՚ընտրուին ժողովուրդին կողմէ. իրենց նիստերը հրապարակային են եւ անդամները կը ստանան չափաւոր վարձք:

4) Նահանգներու հասոյթներու կանխորոշ մէկ մասը՝ նահանգային ընդհանուր ժողովներէն հաստատուած եւ հրապարակուած պիտճէին համաձայն՝ պիտի յատկացուի զուտ տեղական պէտքերու:

5) Պաշտօնական յայտարարութիւնները՝ պետական լեզուին հետ միանգամայն՝ տեղական գլխաւոր լեզուներով եւս:

6) Ոստիկաններու եւ հարկահաւաքներու ընտրութիւնը կը կատարուի տեղական զանազան ազգութիւններու ծոցէն՝ ասոնց իւրաքանչիւրին թիւին համեմատութեամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

1) Խորհրդարանը միայն կրնայ հաստատել կամ բարեփոխել պետական տուրքերը:

2) Հարկային դրութեան հիմնական բարեփոխում: Աստիճանաբար հաստատում յառաջատուական (Progressif) սիստէմի, նպաստաւորելու համար քիչ շահ կամ քիչ եկամուտ ունեցող հարկատուները:

3) Տասանորդը մինչեւ տասը տարի թախմինի դրութեամբ գանձելի, եւ յետոյ հաստատում գատասթրոյի:

4) Հարկավարձներու (միլթէզիմ) դրութեան բացարձակ ջնջում:

5) Շնորհում յետամնաց տուրքերու՝ նախկին ըէժիմի օրով հարբստահարուած եւ կարօտութեան մատնուած վայրերու մասնայատուկ:

6) Գիւղացիներու եւ առհասարակ աշխատաւորներու վիճակին բարւոքում եւ զանոնք նպաստաւորող աշխատութեան օրէնքի հաստատում:

7) Աժան եւ մատչելի վարկերու հաստատում:

8) Հողագործներու ապրուստի բաւական հող մատակարարել դիւրամատչելի պայմաններով:

9) Պետական հողերու բաւարար բաշխում՝ մասնաւորապէս վերջին բռնապետութեան երեսէն փճացած գիւղացիներուն:

10) Նախկին ըէժիմին պատճառաւ գաղթած գիւղացիները եւ աշխատաւորները պետական ծախքով վերադարձնել իրենց բնակավայրերը:

11) Նոր գաղթականութեանց տեղաւորումը կ'ենթարկուի տեղական ժողովներու որոշումին:

12) Յետադարձում իր նախատիրոջ՝ նախկին ըէժիմին օրով որեւէ՛

կերպով գրաւուած եւ յափշտակուած կալուածներու, տեղական քննիչ յանձնաժողովներու միջոցաւ:

13) Բացարձակ ջնջում պետական եւ համայնական տարապարհակ աշխատանքներու:

14) Տեղական Անանուն Ընկերութեանց եւ Երկրագործական Դրամատուներու յատուկ օրէնքներու կազմութիւն՝ դիւրացնելու համար այդպիսի հանրօգուտ ձեռնարկները:

15) Ջնջում մենաշնորհի եւ աստիճանական պետականացում հին մենաշնորհներու:

ՔԱՂԱՔԱԿՐԹԻՉ ԲԱՑԱՌԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ

Երկրին մշտական խաղաղութիւնը եւ դրացի ժողովուրդներուն եղբայրակցութիւնը ապահովելու համար, անհրաժեշտ է հետեւեալ բացառիկ միջոցներու անմիջական կիրառումը՝ որ կը լրացնէ քաղաքակրթութեան հրամայողական պահանջն իսկ:

1) Ջնջել աշիրէթի գրութիւնը եւ պէյերը ու աղաները օրէնքին հպատակցնել:

2) Ջնջել թափառաշրջիկ եւ վաչկատուն ցեղերու ապօրէն եւ վտանգաւոր դրութիւնը եւ վարժեցնել անոնք հաստատուն բնակութեան եւ պարկեշտ աշխատութեան:

3) Ջնջել համիտիէ զօրագունդները:

4) Ջնջել պէյերու եւ աղաներու աւատական իրաւունքները եւ կամայական հարկահանութիւնները:

5) Զինաթափ ընել թափառաշրջիկ եւ առհասարակ ասպատակող ցեղերը. եւ մինչեւ կատարեալ զինաթափութիւն՝ ոեւէ՛ գինով պաշտպանել դրացի խաղաղ ժողովուրդները եւ արտօնել ասոնք ինքնապաշտպանութեան համար զէնք գործածելու:

6) Կառավարել այդպիսի ցեղերը բացառիկ օրէնքներով եւ միջոցներով, մինչեւ որ օրինապահութեան շաւիղին մէջ մտնելով՝ կատարեն իրենց քաղաքացիական պարտականութիւնները:

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ – ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1) Հ. Ս. Ռ. Կուսակցութեան կրնայ անդամակցիլ ամէն հայ՝ առանց դաւանանքի եւ դասակարգի խտրութեան:

2) Իւրաքանչիւր անդամ կը ստորագրէ մասնաւոր տոմարի մը մէջ՝ խոստանալով հաւատարիմ մնալ Կուսակցութեան ծրագրին եւ օգտակար ըլլալ անոր նպատակին՝ նիւթական եւ բարոյական աջակցութեամբ:

3) Հ. Ս. Ռ. Կուսակցութեան կեդրոնն է Կ. Պոլիս:

4) Կուսակցութիւնը կ'ունենայ հայրենիքի եւ արտասահմանի հայաբնակ վայրերու մէջ ակումբներ:

Կ. Պոլիսի Կեդրոնական Ակումբը կը զբաղի ընդհանուր բրօբականտով եւ կը ներշնչէ իր խորհուրդներն ու թելադրութիւնները բոլոր տեղական ակումբներուն:

5) Տեղական ակումբները պարտաւոր են իրենց գործառնութեանց եւ տեղական հանգամանքներու մասին պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել Կեդրոնական Ակումբին՝ իրենց դիւանին միջոցաւ:

6) Տեղական ակումբները իրենց շրջանակին մէջ ինքնավար են եւ կը մատակարարուին տեղական միջոցներով:

7) Իւրաքանչիւր ակումբ ինք կը պատրաստէ իր Ներքին Կազմական Կանոնագիրը եւ կը հաղորդէ Կեդրոնական Ակումբին:

8) Ընդհանուր Ժողովը կը բաղկանայ ակումբներու պատգամաւորներէն եւ կը գումարուի երկու տարին անգամ մը, իսկ արտասովոր կերպով՝ Կեդրոնական Ակումբներու պահանջին վրայ:

9) Ընդհանուր Ժողովը Կուսակցութեան օրէնսդիր եւ համարառու մարմինն է:

Կուսակցութեան գործելակերպի ընդհանուր գիծերը կը նախասահմանուին Ընդհանուր Ժողովի[ն] կողմէ՝ իւրաքանչիւր ժամանակաշրջանի համար:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ ԾՐԱԳՐԻ

Ներկայ Ծրագիրը՝ իր հիմնական սկզբունքները անփոփոխ մնալու պայմանով՝ վերաքննելի է Ընդհանուր Ժողովին մէջ:

ՕՍՄԱՆՅԱՆ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 1.- Հայրենիքի և ազգի փրկությանն ու երջանկությանը ձգտող օսմանցի հայրենասերները հիմնում են «Միություն և առաջադիմություն» անունով օսմանյան քաղաքական մշտատև մի կուսակցություն:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդ. 2.- Զարգացնել ազգային այն ընտիր բարքերը, որոնք հանդիսանում են ամեն ինչի հաջողության գրավականը. աշխատել ծավալել և ընդհանրացնել օսմանյան երկրներում ուսումն ու գիտությունը, ինչպես նաև արդի քաղաքակրթության նվաճումները՝ հարմարեցնելով դրանք ժողովրդական սովորույթներին և տեղական պահանջներին:

Հոդ. 3.- Խրախուսել ու մղել օսմանցիներին, որպեսզի միահամուռ ջանքերով աշխատեն օսմանյան զանազան հանրույթների և ժողովուրդների միջև ստեղծել մի անկեղծ միություն՝ հիմնված հայրենասիրության և մարդասիրության զգացմունքների վրա՝ հօգուտ հայրենիքի զարգացման և բարձրացման:

Հոդ. 4.- Պահպանելով օսմանյան քաղաքական անկախությունն ու երկրի ամբողջությունը՝ աշխատել վերականգնել ու հարատև պահել նրա նախկին ուժն ու մեծությունը:

Հոդ. 5.- Աշխատել պահպանել ազգային իրավունքներն ու հարստությունները. ներկա կամայական ու բռնակալական ռեժիմը փոխարինել սահմանադրական արդար կարգերով՝ պայմանով, սակայն, որ խալիֆայի և սուլթանի գահի վրա մնա օսմանյան արքայական ընտանիքը. իրականացնել ընդհանուր բարենորոգումներ՝ համաձայն 1876 թվականի սահմանադրության դրույթների:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Հոդ. 6.- Կազմակերպության անդամ կարող են դառնալ բոլոր օսմանցիները՝ առանց ազգային կամ կրոնական խտրության, տղամարդ, թե կին: Անդամները պետք է լինեն խելահաս, մաքուր վարքի և անցյալի տեր:

Հոդ. 7.- Նախքան կազմակերպության մեջ մտնելը՝ յուրաքանչյուր անդամ պետք է կրոնով և պատվով երդվի, որ ընդունում է կուսակցության կանոնադրությունը և հպատակվում է նրա պահանջներին: Կանոնադրության դեմ մեղանչողները արտաքսվում են կուսակցությունից:

ՄԱՄՆԱՃՅՈՒՂԵՐ

Հոդ. 8.- Կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է աշխատի հնարավոր բոլոր տեղերում հիմնել մասնաճյուղեր և ղեկավար մարմիններ՝ գերադասությունը տալով տեղացիներին: Ամեն մասնաճյուղ կրում է իր տեղի անունը:

Հոդ. 9.- Կուսակցության հիմնական կանոնադրությունն ընդունող ամեն մի մասնաճյուղ պաշտոնապես ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ իր ներքին կանոնադրությունը ներկայացնում է կենտրոնական մարմնին և վավերացում ստանում:

Հոդ. 10.- Մասնաճյուղերն ազատ են իրենց ներքին և տեղական վարչական գործերում բայց պարտավոր են անհապաղ զեկուցել կենտրոնին այն բոլոր կարևոր գործերի մասին, որոնք վերաբերում են ամբողջ կուսակցությանը, և ստանալ նրա կարծիքը:

Հոդ. 11.- Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կենտրոնական մարմին ուղարկել իր հասույթների առնվազն կեսը: Մնացած մասով նա պետք է կառավարի իր մասնաճյուղին վերաբերող գործերը:

Հոդ. 12.- Յուրաքանչյուր մասնաճյուղ, երբ ունենում է այնքան բյուջե, որ կարողանում է կառավարել իր ներքին գործերը, եթե կարևոր է համարում, կարող է կենտրոնական մարմնի համար ընտրել և ուղարկել իր անդամներից մեկին՝ այն պայմանով, սակայն, որ ինքն ապահովի նրա ապրուստը և ուրիշ ծախսերը:

Հոդ. 13.- Մասնաճյուղերն իրենց պատգամավորին կենտրոն ու-

դարկելուց առաջ պարտավոր են նրա մասին մանրամասն հաղորդել կենտրոնին և ստանալ վերջինիս կարծիքը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հոդ. 14.- Կազմվում է մի կենտրոնական մարմին, որը բոլոր մասնաճյուղերի համար դառնում է կենտրոն, և որին դիմում են բոլոր մասնաճյուղերը: Այդ կենտրոնական վարչությունն է կառավարելու կուսակցության բոլոր գործերը:

Հոդ. 15.- Կենտրոնական մարմինը կազմվում է մասնաճյուղերի ընտրած պատգամավորներից:

Ծանոթ. - Երկրի մասնաճյուղերի պատգամավորների թիվը հինգից պակաս լինելու դեպքում այդ թիվը լրացվում է մասնաճյուղերի և կուսակցության՝ օտար պետություններում գտնվող անդամների ընտրած պատգամավորներով:

Հոդ. 16.- Կենտրոնական մարմինն իրավունք ունի ձայների 3/4-ով չընդունել կամ հեռացնել իր այն պատգամավորին, որը վնասակար է ընդհանուր գործի համար:

Հոդ. 17.- Կենտրոնական մարմնի անդամները միայն մի տարով են ընտրվում: Յուրաքանչյուր տարի նոր ընտրություններ են լինում դեկտեմբերի 23-ին, որը ազգային տոն է:

Ծանոթ.- Այն անդամները, որոնք լրացրել են իրենց պատգամավորական պայմանաժամը, կարող են վերընտրվել: Իսկ իրենց ժամանակը չլրացած հեռացողների փոխարեն ընտրվում են նոր պատգամավորներ՝ վերոհիշյալ եղանակով:

Հոդ. 18.- Կենտրոնական մարմնի անդամներն իրենց առաջին նիստում պարտավոր են երդվել և ապա անցնել աշխատանքի: Երդման շարադրանքը կցված է սույն կանոնադրությանը:

Հոդ. 19.- Կենտրոնական մարմինը պարտավոր է ամսական առնվազն երկու նիստ գումարել: Ձայների բացարձակ առավելությամբ՝ նիստերի քանակը կարելի է այդ ժամանակամիջոցում կրճատել կամ ավելացնել: Կենտրոնական մարմնից հեռացված են համարվում այն անդամները, որոնք առանց հարգելի պատճառի անընդմեջ բացակայում են չորս նիստից կամ մեջընդմեջ՝ տասը նիստից:

Հոդ. 20.- Կենտրոնական մարմինը հարմար համարելու դեպքում

կարող է իր ուզած պայմաններով մի նախագահ ընտրել: Կուսակցության նախագահը կարող է ազատորեն գործել, միայն պարտավոր է հիմնական կանոնադրությունից չշեղվել և միշտ իր գործերի համար պատասխանատու լինել կենտրոնական մարմնի առաջ:

Հոդ. 21.- Եթե կենտրոնական մարմնի անդամների կեսը բացակայում է՝ նիստ չի կարելի գումարել: Այն բոլոր նիստերում, որոնց չեն մասնակցում անդամների 3/4-ը, որոշումներն ընդունվում են բացարձակ մեծամասնությամբ: Երբ ձայները հավասար են, նախագահինը երկու ձայն է հաշվվում:

Հոդ. 22.- Փոքրամասնությունը պարտավոր է կա՛մ ընդունել և գործադրել մեծամասնության որոշումը և կա՛մ հրաժարական տալ:

Հոդ. 23.- Կենտրոնական մարմինը կառավարում է կուսակցության բոլոր գործերը: Անդամները, գործը հեշտացնելու նպատակով, պաշտոնները կարող են բաժանել իրենց մեջ: Սակայն համենայնդեպս, վերին իրավասությունն ու պատասխանատվությունն ընկնում են կենտրոնական մարմնի վրա:

Հոդ. 24.- Կենտրոնական մարմնի անդամները մասնաճյուղերի որոշումներին չեն ենթարկվում: Նրանք անկախ են իրենց որոշումներում: Սակայն կարող են մասնաճյուղերին զեկուցել այն գործերի մասին, որոնց հրապարակումը կենտրոնական մարմինը չի արգելում: Իսկ այն պատգամավորները, որոնք որևէ խնդրի առիթով հարկավոր են համարում իրենց պատկանած մասնաճյուղի կարծիքն ունենալ, կարող են հարաբերության մեջ մտնելու համար պայմանաժամ ստանալ, եթե երբևէ ապացուցելու են, որ այդ կարծիքը որոշված ժամանակին է հասել: Կենտրոնական մարմինը պետք է պարզապես հաղորդի մասնաճյուղերին այն կարևոր դեպքերը, որոնք գաղտնիքի բնույթ չեն կրում:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 25.- Կուսակցության բոլոր անդամները պարտավոր են իրենց կարողության չափով՝ փողով, մարմնով, խոսքով, թե գործով, աշխատել իրագործելու կուսակցության նպատակները:

Հոդ. 26.- Մեր հայրենիքում լավ բարքերը զորացնելու, արդարադատությունը հիմնավորելու և քաղաքական ազատության գաղափարը տարածելու համար, մեր կուսակցությունն ամենաազդու և ամենա-

ապահով միջոցն է համարում ուսման և գիտության ծավալումը. դրա համար էլ կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է աշխատի երկրում դպրոցներ, գրադարաններ և տպարաններ հիմնել, լրագրեր, հանդեսներ և գրքեր հրատարակել, ինչպես նաև գոյություն ունեցող դպրոցներում աշխատանքի ընդունել կուսակցության անդամներին՝ իբրև ուսուցիչ: Ապահովվածները պետք է իրենց զավակներին ուղարկեն Եվրոպա՝ ուսանելու, իսկ չապահովվածները պետք է դրդեն, խրախուսեն ապահովվածներին՝ այդ անելու համար: Վերջապես, կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է աշխատի իր կարողության չափով տարածել և ժողովրդականացնել գիտությունը և այդ կերպ վերացնել տգիտությունն ու բռնակալությունը:

Հոդ. 27.- Կուսակցության բոլոր անդամները պետք է աշխատեն գիտակից դարձնել իրենց հայրենակիցներին և կուսակցության անդամ դառնալու հրավիրել նրանց:

Հոդ. 28.- Կուսակցության անդամները պարտավոր են, որքան հնարավոր է, օգնելու և պաշտպանելու միմյանց. կուսակցության այն անդամները, որոնք կառավարությունը ներկայացնող պաշտոնյաներ են, պարտավոր են բարի օրինակ հանդիսանալու ուրիշների համար իրենց վարքուբարքով, մանավանդ իրենց ուղղամտությամբ, և ուսումնասիրելով վարչական թերություններն ու դրանց լուծումները՝ պարտավոր են դրանք հաղորդելու կուսակցությանը:

Կուսակցության բոլոր անդամների պարտականությունն է նույնպես աշխատել այն ուղղությամբ, որ հետզհետե առաջանան և ազդեցություն ձեռք բերեն այն պաշտոնյաները, որոնց կարողություններն ու հայրենասիրությունը փորձված են, և ընդհակառակը, ընկնեն և իրենց ազդեցությունը կորցնեն վատ պաշտոնյաները:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 29.- Մասնաճյուղերը պարտավոր են գործել համաձայն հիմնական կանոնադրության, իրագործել կենտրոնի որոշումները, կառավարել իրենց գործերը և ջանալ տարածել և ժողովրդականացնել կուսակցության նպատակները: Նրանք պարտավոր են աշխատելու անդամների ավելացման և բազմացման, նրանց պաշտպանության համար, ինչպես նաև իրենց տեղերում ուսումն ու գիտությունը ծավալելու համար ամեն միջոց գործադրելու:

ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 30.- Կենտրոնական մարմինը պարտավոր է աշխատել, համաձայն հիմնական կանոնադրության՝ իրագործելու կուսակցության նպատակները, առաջ տանելու և ղեկավարելու ամբողջ կուսակցությունը, բազմացնելու մասնաճյուղերը և ամեն միջոց գործադրելու, որպեսզի ուսումն ու գիտությունը տարածվեն և ժողովրդականանան: Նա պետք է ամեն ջանք գործադրի ոչնչացնելու համար ներկայիս բռնակալ կառավարությունը և հայրենիքից դուրս էլ պաշտպանելու օսմանյան շահերը:

Կենտրոնական մարմինը պետք է օգնի և աջակցի բոլոր կուսակցություններին և մինչև անգամ կառավարությանը, եթե նրանք հետամուտ են լինում իրենց նպատակների իրագործմանը:

Հոդ. 31.- Կենտրոնն է ղեկավարում կուսակցության օրգաններին և նրա գաղափարները տարածող հրատարակություններին:

Կենտրոնը դրանց միջոցով պետք է արթնացնի ժողովրդին, կառավարությանը ներկայացնի այն հայտարարությունները, որոնք անհրաժեշտ են, և նրանցից պատշաճ, հարմար համարածները պետք է հրատարակի:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդ. 32.- Յուրաքանչյուր անդամ պարտավոր է նպաստելու կուսակցությանը ֆինանսապես՝ իր պատկանած մասնաճյուղի որոշած անդամավճարով: Այդ վճարը, համենայն դեպս, պետք է առնվազն հավասար լինի կուսակցության օրգանի բաժանորդագնին:

Հոդ. 33.- Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կենտրոն ուղարկելու առնվազն կեսն իր հասույթների, որոնք կազմվում են կանոնավոր և մասնավոր նպաստներից: Իսկ մնացած կեսով նա պետք է վարի մասնաճյուղի գործերը:

Հոդ. 34.- Կենտրոնը, բացի մասնաճյուղերի նպաստներից, ընդունում է և ստանում նաև այլ մասնավոր օժանդակություններ:

Հոդ. 35.- Կուսակցության հասույթները գործադրվում են գիտությունը տարածելու, կուսակցության ձեռնարկներն իրագործելու և, անհրաժեշտության դեպքում, մասնաճյուղերին նպաստելու համար:

Նա պետք է օգնի նաև այն ընտանիքներին, որոնց անդամները զոհվել են կուսակցության համար, ինչպես նաև փորձի ազատել վտանգի մեջ հայտնվածներին: Բացի այդ, կենտրոնն իր փողերը ծախսում է նաև կուսակցությանն օգտակար ձեռնարկների վրա:

Հոդ. 36.- Կենտրոնն ու մասնաճյուղերը պարտավոր են ունենալու ֆինանսական հաշիվների կանոնավոր մատյաններ, իսկ գանձված գումարի համար՝ տալու անդորրագրեր:

Հոդ. 37.- Կենտրոնը պարտավոր է տարեկան մեկ անգամ ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու մասնաճյուղերին և արտասահմանում գտնվող կենտրոնական մարմնի ընտրությանը ու մասնակցող անդամներին:

Հոդ. 38.- Մասնաճյուղերը պարտավոր են վեց ամիսը մեկ անգամ իրենց ֆինանսական հաշվեկշիռը ներկայացնելու կենտրոնին:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Հոդ. 39.- Այն անհամաձայնությունները, որոնք կարող են ծագել մի կողմից կենտրոնի և մյուս կողմից՝ մեկ կամ մի քանի մասնաճյուղերի միջև կամ թե մասնաճյուղի և նրա պատգամավորի միջև, լուծվում են մեկ վճռով և կամ երկու կողմից հավասար քանակությամբ ընտրվելիք վճիռներով:

Հոդ. 40.- Կուսակցության պատասխանատու անդամներին դատում է կենտրոնական մարմինը:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄ

Հոդ. 41.- Երբ կենտրոնական մարմնի անդամների 3/4 մեծամասնության կարծիքով անհրաժեշտ է համարվում ուղղելու և փոփոխելու կանոնադրությունը, այն ժամանակ կենտրոնը խմբագրում է մի տեղեկագիր, որը համարվում է օրինական, երբ ընդունվում է մասնաճյուղերի (և կամ կենտրոնի ընտրությանը մասնակցող և օտար երկրներում ապրող անդամների) մեծամասնության կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԱՐԲԵՐԱԿԸ

«Երդվում եմ կրոնով և պատվով, որ քանի դեռ հարատևում է սուլթան Աբդուլ Համիդի կամայական, բռնակալ իշխանությունը, քանի դեռ չեն կիրառվում օսմանյան սահմանադրության դրույթները, ես չպիտի ծառայեմ օսմանյան կառավարությանը, միշտ հավատարիմ ու իրականացնող պետք է լինեմ կուսակցության նպատակներին, չպետք է հրապարակեմ կուսակցության գաղտնիքները և անմիջապես կուսակցությանը պետք է հանձնեմ այն նպաստները, որոնք ուղարկվում են նրա անունով»:

Կուսակցության օրգաններն են դեռևս համարվում «Շուրա-ի ումմեթը» և «Մեչվերեթը»:

«ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հոդ. 1.- Քաղաքական այն բարենորոգումները, որոնք պետք է գործադրվեն օսմանյան երկրներում, պետք է հիմնված լինեն վարչական «ապակենտրոնացման և լայն ինքնավարության» համակարգի վրա՝ առանց դասակարգերի և հպատակների խտրության:

Այդ ապակենտրոնացումն ու լայն ինքնավարությունը պետք է հենվեն ընտրության այն եղանակի վրա, որ ցույց է տալիս 1876-ին հրատարակված Սահմանադրության 108-րդ հոդվածը: Իսկ այդ Սահմանադրությունը պետք է ենթարկվի անհրաժեշտ բարեփոխումների՝ համաձայն բազմաթիվ դեպքերի և հանգամանքների:

Հոդ. 2.- Ընտրությամբ կազմված քաղաքային վարչությունները, գավառական ժողովները, քաղաքային խորհուրդները իրավունք ունեն մասնակցելու և միջամտելու գավառային և նահանգային գործերի կառավարմանը:

Ընդհանուր ժողովը, որ կազմվում է գաղտնի քվեարկությամբ ընտրված անդամներից և մշտական փոխանդամներից (այս վերջիններին թիվը անդամների մեկ հինգերորդից ավելին չպետք է լինի), պետք է բացարձակ և լայն իրավասություն ունենա նահանգի ֆինանսական գործերում, ինչպես նաև օրենսդրական և կառավարման գործողություններում ու խնդիրներում:

Ընդհանուր ժողովի նիստերը պետք է բաց լինեն. նա ձայնի իրավունք ունի ոչ միայն իր իրավասության մեջ գտնվող հարցերում, այլև տուրքերի բաշխման ու գանձման խնդիրներում: Նա տեղական կարիքների բավարարման պետք է հատկացնի տուրքերից գոյացած գումարի այն մասը, որն անհրաժեշտ է համարվում նահանգային և կենտրոնական իշխանությունների փոխադարձ համաձայնությամբ:

Հոդ. 3.- Որպեսզի մի կողմից նահանգների՝ միմյանց միջև եղած հարաբերությունները հաստատուն պահպանվեն և զարգանան, իսկ

մյուս կողմից կենտրոնական կառավարության և բոլոր նահանգների միջև միությունն ու կապը ուժեղանան, 1876-ի Սահմանադրությունը պետք է հիմնվի վերոհիշյալ պայմանների վրա: Իսկ մայրաքաղաքում պետք է բացվի մի ներկայացուցչական ժողով (խորհրդարան), որը պետք է կազմված լինի նահանգային ընդհանուր ժողովների կողմից ընտրված պատգամավորներից:

Հոդ. 4.- Պետք է միջոցներ ձեռք առնել՝ վերջ տալու համար տարբեր ժողովուրդների միջև եղած խտրականություններին և նրանց միջև ծագող վեճերին ու կռիվներին, ինչպես նաև, ապահովելու համար բոլոր ազգերի իրավունքը՝ ընտրել նահանգային տարաբնույթ ժողովների անդամներ կամ պատգամավորներ՝ իրենց ազգաբնակչության թվի համաձայն:

Հոդ. 5.- Ամենքը, առանց ազգային խտրության, պետք է վայելեն միևնույն իրավունքներն ու արտոնությունները, ինչպես նաև պետք է ծանրաբեռնված լինեն միևնույն պարտականություններով: Ամեն հպատակի առաջ պետք է բաց լինեն, առհասարակ, ոչ միայն բոլոր բարձրագույն դպրոցները, այլև զինվորական վարժարանները:

Հոդ. 6.- Երկրի անդորրությունն ու կարգապահությունը պետք է ապահովվեն ոստիկանական (ժանդարմական) մարմնի միջոցով, որի անդամները պետք է ընտրվեն ազգաբնակչության տարբեր հատվածներից՝ համաձայն նրանց թվի: Իսկ որոշ ժամանակով պետք է հրավիրվեն օտար մարզիչներ ու սպաներ՝ ոստիկանական այդ մարմնի կրթության համար:

Հոդ. 7.- Նահանգապետերը (վալի), գավառապետերը (մյութեսարիֆ), ֆինանսների գծով պետական կառավարիչները (դեֆթերդար), արքունական գանձարանի (դեֆթերը խականի) կառավարիչները, Նախնական և Վերաքննիչ ատյանների նախագահներն ու ընդհանուր դատախազները նշանակվում են կենտրոնական վարչության կողմից: Իսկ քաղաքացիական և դատական այլ պաշտոնյաներին պետք է ընտրի նահանգապետը՝ երկրի ազգաբնակչության տարաբնույթ տարրերից՝ համաձայն նրանց թվային առավելության:

Հոդ. 8.- Ոստիկանական կազմը պետք է քաղաքացիական իշխանությանն ենթարկվի:

Հոդ. 9.- Բոլոր տուրքերը պետք է բարեփոխվեն և նրանց գանձման համար պետք է մի պարզ ու բնական եղանակ հիմնվի: Անչարժ

գույքը պետք է օգտվի վարկի և ապահովության ընձեռած բարիքներից: Դրա համար պետք է փոխվեն ներկայումս գոյություն ունեցող գույքային օրենքներն ու կանոնները, և պետությանը կամ սեփականատերերին պետք է վերադարձվեն այն գույքն ու ունեցվածքը, որ ապօրինի կերպով գրավել էր ներկա վեհապետը վերջին երեսուն տարվա ընթացքում: Ապա պետք է սահմանել որոշակի տուրք՝ արքայական գանձարանի համար:

Հոդ. 10.- Միջազգային դաշնագրերի տրամադրությունները պետք է որևէ ոտնձգությունից զերծ լինեն:

ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

I

ՊՈԼՍԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ, ՈՐՈՆՔ ԼՈՒՅՍ ԷԻՆ ՏԵՄՆՈՒՄ ՆԱԽՔԱՆ 1908 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

Աւետաբեր *– Կրոնական, ուսումնական, ընտանեկան և քաղաքական չաբաթաթերթ, հրատարակվում էր 1855 Թ. հունվարի 3-ից: Արտոնատեր՝ Ջ. Ք. Գրին: 1907 Թ. հուլիսի 1-ից սկսած տնօրեն-խմբագիրն էր Հերբերտ Ալենը: Խմբագիրներն էին Հ. Բարնըմը, Հ. Գրիգորյանը, Նշան Գոնտայանը, Սերովբե Վարժապետյանը և Ս. Հարությունյանը: Թերթը հրատարակվում էր հայերեն և հայատառ թուրքերեն: Թուրքիայի բողոքական հայերի օրգանն էր:*

Մանզումէի էֆքեար *– Ազատական անկախ օրգան: Հիմնադրել է Կարապետ Փանոսյանը: Լույս էր տեսնում առավոտյան: Սկսել է տպագրվել 1866 Թ. փետրվարի 2-ից: Առաջին համարից սկսած մինչև 1896 Թ. թերթը հրատարակվում էր զանազան ծավալներով և խմբագրվում էր իր հիմնադիրների կողմից: 1909 Թ. ապրիլի 11-ից լրագրի նոր արտոնատերը Հովհաննես Գայսերյանն էր, որ դա վերածեց ամենօրյա այգաթերթի՝ Միսաք Գոչունյանի (Քասիմ) և Երվանդ Անդրեասյանի խմբագրությամբ: Թերթի 1909 Թ. հուլիսի 27-ի համարում զետեղվել էր քննադատական հոդված Հաճընի կացության մասին, որն առիթ դարձավ, որպեսզի պարբերականը վնասակար ու գրգռիչ նկատվի և փակվի 1909 Թ. օգոստոսի 1-ից:*

Մէճմուաի ախպար *– Հայատառ թուրքերեն լրագիր: Սկսեց հրատարակվել 1884 Թ. հունիսի 25-ին, չորեքշաբթի և շաբաթ օրերը: Արտոնատեր-խմբագրապետն էր Հովհաննես Թոլայանը: Թերթը կաթոլիկ հայերի օրգանն էր:*

Ճերիտէի շարգիյէ – Քաղաքական, գրական երեկոյան լրագիր: Լեզուն հայատառ թուրքերեն էր: Առաջին համարը լույս է տեսել 1885 թ. հունիսի 1-ին՝ արտոնատիրությամբ Տիգրան Ջիվելեգյանի, որի մահից (1907 թ. փետրվարի 14) երեք ամիս հետո՝ մայիսի 24-ին, թերթի պատասխանատու տնօրեն է ճանաչվում Հակոբ Վարժապետյանը, իսկ արտոնատեր՝ Հակոբ Տ. Ջիվիլեգյանը: Խմբագիրներն էին Հակոբ Վարժապետյանը, Աբիկ Մուբահյաջյանը և Օննիկ Բաքըրջյանը:

Հայրենիք – Այգաթերթ, օրաթերթ: Հրապարակ է եկել 1891 թ. հուլիսի 13-ին: Խմբագիրն էր Արփիար Արփիարյանը (Հրազդան), ավագ խմբագիրը՝ Լևոն Բաշալյանը, գլխավոր աշխատակիցը՝ Արշակ Զոպանյանը: Շուրջ 13 տարի տպագրվելուց հետո թերթը դադարել էր լույս տեսնելուց և միայն 1909 թ. հուլիսի 6-ից սկսել էր վերահրատարակվել որպես առավոտյան օրաթերթ: Արտոնատեր-խմբագրապետն էր Հովհաննես Շահնազարը, խմբագիրները՝ Վահան Թեքեյանը (Վեթո), Երվանդ Օտյանը (Երօտ), Հովհաննես Գազանջյանը և ուրիշներ:

Բիւզանդիոն – Ամենօրյա երեկոյան օրաթերթ: Սկսել է հրատարակվել 1896 թ. նոյեմբերի 4-ից, արտոնատեր-տնօրեն-խմբագրապետ՝ Բյուզանդ Քեչյան: Խմբագիրներ՝ Պարույր և Աշոտ Բ. Քեչյան, Արշակ Ալպոյաճյան ու Վաղարշակ Գալփաքջյան:

Արեւելք – Երեկոյան օրաթերթ, հիմնված 1884 թ. հունվարի 2-ին Ս. Տամատյանի կողմից: Կարճ դադարից հետո 1898 թ. հուլիսից փոխանցվել է Զարեհ Յուսուֆյանին, իսկ 1906 թ. նոյեմբերին՝ Գրիգոր Պոյաճյանին: Մինչև 1908 թ. օսմանյան հեղափոխությունը թերթի խմբագիրներից են եղել Հակոբ Թոփչյանը, որից հետո՝ Երվանդ Սրմաքեշխանլյանը (Երուխան): Խմբագրակազմում են եղել նաև Մելքոն Գյուրջյանը, Հարություն Սանդալճյանը, Զարեհ Նեմցեն: 1909 թ. սեպտեմբերի 21-ին տնօրենությունը դադարեցրել է թերթի հրատարակումը:

II
ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍՆՈՂ ԹԵՐԹԵՐ, ՈՐՈՆՔ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՄԻ ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ԻՐԵՆՑ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱԴԱՐԵԼ ԷԻՆ ՏՊԱԳՐՎԵԼ

Սուրհանդակ *– Այգաթերթ, նախ բանաստեղծ Հրանտ Նազարյանցի ու Տիգրան Արփիարյանի, ապա Տիգրան Զավենի խմբագրությամբ: Տարբեր ժամանակներում խմբագրակազմի մեջ էին Ռուբեն Սևակը, Ենովք Արմենը, Համբարձում Համբարձումյանը, Ս. Ակնունին:*

Ծաղիկ *– Երգիծաթերթ, Բանագող Լոռեցյանի (Գրիգոր Թորոսյան), Գրիգոր Համբիկյանի և Երվանդ Օտյանի խմբագրությամբ:*

Բիւրակն *– Վաճառականական շաբաթաթերթ, Սիմոն Զեմլեքջյանի և Արտաշես Գալփաքջյանի:*

Առեւտուր *– Վաճառականական շաբաթաթերթ, Սիմոն Զեմլեքջյանի և Արտաշես Գալփաքջյանի (սկսել է հրատարակվել 1908 թ. օգոստոսից, բայց շատ չուտ դադարել է տպագրվել):*

Հանրագիտակ *– Արմեն Լուսինյանի (տպագրությունը դադարեցվել է Սահմանադրության հռչակումից քիչ առաջ):*

Փունջ *– Սիմոնիկ Ալաջաջյանի (դադարել է տպագրվել Սահմանադրության հռչակման նախօրեին):*

Լոյս *– Հրատարակիչ՝ Վահան վրդ. Պարտիզակցու (Տեր-Մինասյան) (դադարել է տպագրվել Սահմանադրության հռչակումից քիչ առաջ):*

III
1908 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՀՐԱՊԱՐԱԿ ԵԿԱԾ ՊՈԼՍԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ

Կավռոչ *– Հիմնված 1908 թ. հուլիսի 19-ին, արտոնատեր-խմբագրապետ՝ Երվանդ Թոլայան (Կավռոչ), պատասխանատու-տնօրեն՝ Գրիգոր Համբիկյան (Ռաուլ Բոնչոն): Ազգային, քաղաքական ամենօրյա երգիծաթերթ էր: Նախատեսված էր կանանց համար:*

Ժամանակ *– Առավոտյան ազգային, քաղաքական և գրական պատկերազարդ օրաթերթ: Հիմնվել է 1908 թ. հոկտեմբերի 28-ին:*

Արտոնատեր-խմբագրապետ Միսաք՝ Գոչունյան (Քասիմ), տնօրեն՝ նրա եղբայր Սարգիս Գոչունյան: Խմբագիրներ՝ Արտաշես Գալփաքջյան, Սիմոն Զեոմլեքջյան (Ժիրայր Շիրակացի), Համբարձում Համբարձումյան, Արմենակ Տեր-Հակոբյան:

Զայն Հայրենեաց *– Քաղաքական և գրական շաբաթաթերթ, սկսել է հրատարակվել 1908 թ. հոկտեմբերի 23-ին: Արտոնատեր՝ Երվանդ Զավուշյան, խմբագրապետ՝ Լևոն Լարենց (Լևոն Քիրիշչյան): Աշխատակիցներ՝ Ալփասլան, Տ. Անտոնյան, Ալեքսան Արզուման, Ա. Գնունի, Ներսես վրդ. Դանիելյան, Միքայել Նաթանյան, Միհրան Սվազլը և ուրիշներ: Վերակազմյալ հնչակյանների օրգանն էր:*

Ազդակ *– Գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթ, սկսվել է հրատարակվել 1908 թ. դեկտեմբերի 16-ին: Արտոնատեր՝ Ալեքսան Միսաքյան, խմբագիրներ՝ Շավարշ Միսաքյան, Գեղամ Բարսեղյան և Վահրամ Թաթուլ (երեքն էլ դաշնակցական):*

Գարուն *– Ազգային, քաղաքական և գրական անկախ լրագիր: Հրատարակվել է 1909 թ. հունվարի 10-ից, շաբաթ օրերին: Արտոնատեր՝ Հովնան Փալագաչյան, խմբագիր՝ Ենովք Արմեն, հետո՝ Վաղարշակ Գալփաքջեան: 1911 թ. հրատարակությունը դադարել է:*

Խարազան *– Ծաղրաթերթ, որը լույս է տեսել 1909 թ. փետրվարի 1-ից նախ Արամ Անտոնյանի, հետո՝ Երվանդ Օտյանի, ապա՝ Գրիգոր Թորոսյանի խմբագրությամբ: 9 համար լույս տեսնելուց հետո հրատարակումը դադարել է:*

Շիրակ *– Գրական և քաղաքական հանդես: Նախապես հրատարակվել է Եգիպտոսում: 1909 թ. փետրվարի 7-ին սկսել է հրատարակվել Կ. Պոլսում: Հիմնադիրներն էին Միքայել Գյուրջյանը և Վահան Թեքեյանը, խմբագրապետ՝ վերջինս: Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության օրգանն էր, որի շուրջը հավաքված էին փայլուն մտավորականներ:*

Սասուն *– Գրական, բանասիրական, մանկավարժական և քաղաքական պատկերազարդ ամսաթերթ: Հրատարակվում էր 1909 թ. մարտի 1-ից: Արտոնատեր-խմբագրապետն էր Տիգրան Սյուրմելյանը (որը 1908-ին, սահմանադրության հռչակումից հետո, «Հայրենիքի քնար» շաբաթաթերթի հրատարակիչն էր): 1910 թ. դադարեցվել է տպագրությունը:*

Նոր հոսանք *– Հասարակական, քաղաքական, տնտեսական և գրական շաբաթաթերթ: Նշանաբանն էր՝ «Բոլոր երկրների գործա-*

ւորներ, միացէ՛ք»: Սկսվել է հրատարակվել 1909 թ. մարտի 28-ին: Արտոնատերն էր Եսալեմը (Գարեգին Կոզիկյան): Խմբագիրներն էին՝ Եսալեմը և Հրանտ Արծվիկը (Հրանտ Նազարյան): Հնչակյան ուղղություն ուներ և դադարեց հրատարակվել 1910 թ.:

Կիկո *– Ազգային, քաղաքական երգիծաթերթ, սկսել է հրատարակվել 1909 թ. ապրիլի 1-ին: Արտոնատեր-խմբագրապետ՝ Գրիգոր Թորոսյան: Նախ հրատարակվում էր «Կավոչի» հետ օր ընդ մեջ, իսկ կառավարության կողմից մի քանի դադարումներ կրելուց հետո վերաբացվել էր 1909 թ. հուլիսի 31-ին: Լույս էր տեսնում շաբաթական չորս օր, իսկ շաբաթվա երկու օրն էլ տպագրվում էր մյուս երգիծաթերթ «Խարազանը»: Այս վերջինիս և «Լիլայի» հրատարակումը դադարելուց հետո որպես երգիծաթերթ հրապարակի վրա մնաց միայն «Կիկոն»՝ որպես օրաթերթ: «Առաւօտ» թերթի հրապարակ գալուց հետո, Գ. Թորոսյանը դադարեցրել է «Կիկո»-ի տպագրությունը (1909 թ. վերջ) և իր երգիծական ստեղծագործությունները շարունակել է լույս ընծայել «Առաւօտ» օրաթերթում:*

Կոհակ *– Գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային շաբաթաթերթ: Հրատարակվում էր 1909 թ. մայիսի 30-ից: Արտոնատեր՝ Հմայակ Արամյանց, խմբագիրներ՝ Հմայակ Արամյանց, Գրիգոր Եղիկյան (Վասակունի): Հին հնչակյանների օրգանն էր:*

Միածան *– Կիրակնօրյա թերթ: Հրատարակվել է 1909 թ. հունիսի 2-ից; Արտոնատեր-խմբագրապետ՝ Ավետիս Սուրենյան:*

Ազատամարտ *– Առավոտյան շաբաթաթերթ, ՀՅ դաշնակցության օրգան, հիմնված 1909 թ. հունիսի 10-ին, արտոնատեր-խմբագրապետ՝ Ռուբեն Զարդարյան, խմբագիրներ՝ Գեղամ Բարսեղյան, Տիգրան Զավեն, Գասպար Իփեկյան, Բարթող Զորյան (Ժիրայր), աշխատակիցներ՝ Խաչատուր Մալումյան (Է. Ակնունի), Հարություն Շահրիկյան (Ատոմ), Ատոմ Յարճանյան (Սիամանթո) և այլք:*

Բազին *– Գրական հավելված «Ազատամարտ» շաբաթաթերթի (1911 թ. վերջերից): Խմբագրում էին Լիպարիտ և Հրանտ Նազարյանները՝ Ռուբեն Զարդարյանի և Լևոն Շանթի մասնակցությամբ:*

Լիլա *– Ազգային, քաղաքական երգիծաթերթ: Նախատեսված էր նաև կանանց համար: Սկսել է հրատարակվել 1909 թ. հունիսի 26-ին, շաբաթը երեք անգամ, «Կավոչի» հետ օր ընդ մեջ: Արտոնատեր-խմբագրապետ՝ Վահան Փափազյան (Լիլա): Լույս է տեսել միայն մի քանի համար:*

Օրագիր *– Քաղաքական և գրական թերթ, լույս էր ընծայվում առավոտյան: Սկսել է տպագրվել 1909 թ. օգոստոսի 15-ին: Արտոնատերն էր Գառնիկ Թուղլաջյանը, խմբագիրներն էին ինքը՝ արտոնատերը, Երվանդ Անդրեասյանը և Հակոբ Տեր-Հակոբյանը: Թերթը վերածվեց կիրակնօրյայի 1909 թ. սեպտեմբերի 14-ին, ապա կարճ ժամանակ անց դադարեց տպագրվել:*

Գաղափար *– Երեկոյան օրաթերթ: Սկսել է հրատարակվել 1909 թ. օգոստոսի 20-ին: Արտոնատեր՝ Սմբատ Բյուրատ, խմբագիր՝ Վահան Թոչիկյան:*

Առաւօտ *– Առավոտյան ազգային օրաթերթ: Սկսել է հրատարակվել 1909 թ. սեպտեմբերի 26-ին: Արտոնատեր՝ Միսաք Սուրենյան (վերակազմյալ հնչակյան գործիչ): Խմբագրապետն էր Երվանդ Անդրեասյանը:*

IV

1908 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ Կ. ՊՈԼՍՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՈՒ ԿԱՐՃԱՏԵՎ ԿՅԱՆՔ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Զիկզակ *– Երգիծաթերթ Վահան Փափազյանի*

Ֆրու Ֆրու *– Երգիծաթերթ Վահան Փափազյանի*

Հայրենիքի քնար *– Գրական չաբաթաթերթ Տիգրան Սյուրմելյանի*

Պայքար *– Օրաթերթ Պետրոս Քյուրդյանի (Պետիկ)*

Փիւնիկ *– Շաբաթաթերթ Սմբատ Բյուրատի*

Կիլիկիա *– Առողջապահական թերթ Մանուել Ութուջյանի: Հրատարակվել է մեկ համար:*

Աւարայր *– Սկյուտարի համանուն դպրոցական ակումբի թերթ: Հրատարակվել է մեկ համար:*

Ձայն կրթութեան *– Կրթական հանդես Ա. Շահնազարի: Հրատարակվել է մեկ համար:*

Օգգապազ *– Հայևթուրք պատկերազարդ երգիծաթերթ Արամ Անտոնյանի:*

Նէճաթը միլլէթ *– Հայևթուրք չաբաթաթերթ Ա. Մատթեոսյանի:*

Սահմանադրությունից անմիջապես հետո լույս տեսան Գրիգոր Զոհրապի ***Նոր օրը****, Տիգրան Զավենի* ***Երկրի ձայնը****, Հարություն Հազարապետյանի* ***Արաքսը****, Պետիկի* ***Գարտաշլրգը:*** *Մեկ-երկու համար*

*տպագրվելուց հետո դրանք փակվեցին: Ըստ որում՝ **Երկրի ձայնը**-ի տպագրությունը տեղափոխվեց Թիֆլիս:*

V
Կ. ՊՈԼՍԻՑ ԴՈՒՐՍ ՏՊԱԳՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԵՐԹԵՐ

*Ինչպես արդուլհամիդյան շրջանում, այնպես էլ սահմանադրության օրերին Իզմիրում լույս էր տեսնում **Արեւելեան մամուլ** թերթը, որը մեծ դեր է խաղացել ոչ միայն իզմիրահայության, այլև ողջ Թուրքահայության կյանքում: Թերթի արտոնատերն էր Հրանտ Մամուրյանը:*

*Նույն Իզմիրում տպագրվում էր ռամկավարների **Դաշինք** թերթը, որի խմբագիրն էր Սուրեն Պարթևյանը:*

Վան քաղաքում լույս էին տեսնում.

*Դաշնակցության **Աշխատանք** թերթը, որի հոդվածներն ու նյութերը իրենց որակով ու մշակման մակարդակով չէին զիջում **Ազատամարտ**ին կամ **Բիւզանդիոն**ին,*

*Ռամկավարների օրգան **Վան-Տոսպը**, որի գլխավոր խմբագիրը Հովհաննես Ավագյանն էր,*

*Հայ ավետարանականների **Լոյս** ամսաթերթը,*

*Խարբերդում տպագրվում էր **Եփրատ** կիսամյա հանդեսը:*

*Աղանայում լույս էր տեսնում **Բաբաղան** պարբերականը (նախքան կիլիկիահայոց աղետը):*

*Ամասիա քաղաքում տպագրվում էր հնչակյան **Ամասիա** թերթը:*

*Աղաբաղարում լույս էր տեսնում ՀՅԴ տեղի կոմիտեի օրգան **Բութանիա** թերթը:*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ա-Դօ (բուն անունով՝ Տեր-Մարտիրոսյան Հովհաննես) 314, 758, 759, 919, 959

Աբբաս աղա (Աթաբեկ Ադամի ահաբեկիչ) 347

Աբդուլ Ազիզ (օսմանյան սուլթան) 504, 872, 874

Աբդուլ Հակկ Համիդ (օսմանյան կայսրության նոր հիմնի երաժշտության հեղինակ) 509

Աբդուլ Համիդ II (օսմանյան սուլթան) (Ապտիլ Համիտ, Ապտ-իլ-Համիտ, Կարմիր գաղան, Կարմիր սուլթան, Համիդ, Համիտ, Մեծ մարդասպան, Ոճրագործ) 78, 87, 116, 132, 133, 135, 137-139, 146, 148-150, 162, 168-170, 174, 180, 184, 188, 191, 195, 202, 206, 210, 220, 236, 237, 239, 242-245, 247, 248, 250, 252, 253, 256, 265, 267, 273, 276, 318, 322, 330, 339, 356, 359, 360, 383, 385, 388, 401, 437, 484-487, 489-501, 503, 505, 508-511, 519-521, 523-530, 533- 535, 537-539, 545, 546, 552-554, 559, 560, 562, 570, 572, 577, 579, 580, 584, 587, 588, 590, 592, 605, 606, 610, 611-616, 622-624, 626, 629, 631, 634, 640, 643, 645, 651-654, 656, 677, 678, 680-683, 685, 687, 688, 692, 699, 701, 709, 710, 717, 751, 752, 758, 759, 764, 765, 767, 770, 772-778, 780, 787-790, 800, 803, 810, 811, 815, 819, 861, 868, 869, 876-880, 882, 883, 896, 901, 905, 906, 916, 930, 935, 948, 949, 952, 954-962, 964-972, 974-987, 1058, 1061, 1064, 1068

Աբդուլ Մեջիդ (օսմանյան սուլթան) 808, 830, 836, 837, 872

Աբդուլ Ռահիմ (իշխան, Աբդուլ Համիդ II-ի որդիներից) 980

Աբդուլ Ռահման բեյ (կրթության նախարար) 959

Աբդուլ Ռահման բեկ (քուրդ ցեղապետ) 138-140

Աբդուլլա Աղա Սեյիդ (մուջտեհիդ Թեհրանում) 375

Աբդուլլահ բեկ (քուրդ ավատապետ Ալաչկերտի շրջանում) 760

Աբեղյան Արտաշես (երիտդաշնակցական, հայագետ) 38

Աբիսողոմ աղա (Հակոբ Պարոնյանի գրական կերպարներից) 539

Աբովյան Խաչատուր 407

Աբրահամ (ասորի բժիշկ) 119

Աբրահամ (կեղծանունը՝ Շեֆ) (գործակատար, էսէռ) 43

Ագրիպպասյան Հովհաննես (նահատակ ֆիդայի) 135

Ադիլ բեյ (իթթիհադական երևելի գործիչ, ներքին գործերի նախարարի օգնական) 960, 985

Ադիլ խան (գյուղատեր Ատրպատականում) 454

Ազարյան Էֆենդի (Օսմանյան կայսրության դեսպանը Սերբիայում) 907

Ազմի (դոկտոր, երիտթուրք գործիչ) 246
Ազուրի Նեջիբ բեյ (արաբ ազգայնական գործիչ) 124
Աթաբեկ Ազամ (Էմին Սոլթան) (Պարսկաստանի նախարարապետ) 347
Աթաբեկյան Լևոն (դաշնակցական, ապա՝ Էսէռ գործիչ) 37–39, 42, 43
Աթաբեկյան Հովսեփ (Երկրորդ պետական դումայի կադետ պատգամավոր Կարսի մարզից) 5
Աթաթուրք Մուստաֆա Քեմալ 967
Ալաա Դովլե (Պարսկաստանի պետական գործիչ) 420
Ալաա Սալթանե (Պարսկաստանի պետական գործիչ) 471
Ալադինա Միսաք 155
Ալաջաջյան Սիմոնիկ (Կ. Պոլսի «Փունջ» թերթի հրատարակիչ) 1064
Ալեն Հերբերտ (Կ. Պոլսի «Աւետարեր» թերթի տնօրեն-խմբագիր) 1062
Ալեքսան բեկ («Թումանյան» առևտրական տան ընդհանուր կառավարիչ Ատրպատականում) 482
Ալթուն-Տյուրի Մ. (հասարակական գործիչ Կ. Պոլսում) 835
Ալթունյան Սահակ եպիսկոպոս 404
Ալի (պայմանական մուսուլմանի անուն) 731
Ալի (Թուրք գրող, 19-րդ դարի երկրորդ կես) 166, 167
Ալի բեկ (հայդարանցի քուրդ ցեղապետ Ալաշկերտի շրջանում) 152, 760
Ալի բեյ (Վանի նահանգապետ) 208
Ալի Հեյդար Միդհատ բեյ (Միդհատ փաշայի որդին) 178, 238, 626
Ալի Ռիզա (Վանի կուսակալ) 540
Ալի Ռիզա (զինվորական նախարար) 958, 960
Ալի Ֆախրի (երիտթուրք գործիչ) 178
Ալիէ Կասո (քուրդ մարտիկ) 156
Ալիէ Մահմուտ (քուրդ մարտիկ) 156
Ալիխանյան Արտաշես (Էսէռ գործիչ) 43
Ալիխանով-Ավարսկի Մաքսուդ (Ռուսաստանի բանակի գեներալ) 28, 29
Ալիչան Ղևոնդ (մխիթարյան վարդապետ) 270, 285
Ալիփունարյան Հովսեփ (տե՛ս Հյուսնյան Պետրոս)
Ալլահվերդի Հովհաննես (օսմանյան առաջին խորհրդարանի փոխնախագահ) 877, 878
Ալպոյաճյան Արշակ 101, 129–131, 136, 153, 154, 163, 223, 229, 317, 332, 489, 500, 604, 613, 614, 633–635, 640, 655, 656, 701, 718, 723, 724, 730, 737, 762, 788–791, 804, 936, 940, 941, 945, 950, 1063
Ալփասլան (բուն անունով՝ Փանոսյան Ալեքսանդր) (գրող, հրապարակագիր Կ. Պոլսում) 1065
Ախունդ (դազի, իսլամ հոգևորական Թիֆլիսում) 57
Ակնունի Էդուարդ (տե՛ս Մալումյան Խաչատուր)
Ակնունի Ս. (Կ. Պոլսի «Սուրհանդակ» օրաթերթի խմբագրակազմի անդամ) 1064
Ահարոնյան Ավետիս (կեղծանունը՝ Սիսլյան) 178, 179, 182, 189, 261, 620, 694, 796
Ահմեդ բեյ (Վանի ժանդարմերիայի հրամանատար) 298, 310, 311
Ահմեդ փաշա (քուրդ ավազակապետ) 658

Ահմեդ Լութֆուլլահ (իշխան, Աբդուլ Համիդ II-ի քրոջ որդիներից) 174, 178
Ահմեդ Միրզա (տե՛ս Սոլթան Ահմեդ Միրզա)
Ահմեդ Նիազի բեյ (իթթիհադական զինվորական գործիչ) 488, 490, 491, 501, 503, 535–537, 610, 613, 614, 644, 754, 967, 970, 971, 987
Ահմեդ Շուայիբ բեյ (հրապարակագիր Կ. Պոլսում) 535
Ահմեդ Ռիզա բեյ (Իթթիհադի պարագլուխ, օսմանյան խորհրդարանի նախագահ) 166, 167, 169, 173, 174, 177–179, 182–184, 186–190, 194, 200, 208, 231–233, 237–239, 245–247, 257, 260, 261, 276, 317, 500, 555, 598, 599, 602, 626, 717, 752–755, 806, 822, 879, 894, 907, 912, 933, 935, 958, 963, 967, 969, 982, 985
Ահմեդ Սաիբ (իթթիհադական պատմաբան) 183
Ահմեդ Ֆազիլ բեյ (Սաբահէդդինի կուսակից) 183, 231, 239
Ահմէդ Ռիզա (տե՛ս Ահմեդ Ռիզա բեյ)
Ահմէտ Ռիզա (տե՛ս Ահմեդ Ռիզա բեյ)
Աղաթոն Գրիգոր (արևմտահայ զարթոնքի գործիչ) 615, 787, 835
Աղամայան Մկրտիչ (տե՛ս Սարհատ)
Աղաջանյան Համբարձում (կեղծանունները՝ Ավագյան Կարապետ, Կարո) (աստրախանցի, Խանասորի արշավանքի մասնակից) 47, 48, 109–111
Աղաջանյան Սենիկ (Սենեքերիմ) (դաշնակցական ահաբեկիչ) 47, 109, 110
Աղավնունի Մկրտիչ ծայրագույն վարդապետ 282
Աղբայան Նիկոլ 695
Աղբյուր Սերոբ (Սերոբ, Սերոբ փաշա, բուն անունով՝ Վարդանյան Սերոբ) 156, 157, 795
Աճառյան Հրաչյա 675, 767, 779, 896, 897, 914, 959
Աճեմյան Գրիգոր (ուսուցիչ, եղբայրասպանության զոհ Վանում) 287, 288
Աճեմյան (Աճեմով) Մովսես (Երկրորդ պետական դումայի պատգամավոր) 5, 71
Ամեր Ռուշդի փաշա (գլխավոր շտաբի պետ, ապա՝ ռազմական նախարար) 491
Ամիրյան Արսեն 40, 596
Ամուրյան Անդրե (բուն անունով՝ Տեր-Օհանյան Անդրե) 402, 475
Ամջադ օլ Մոլք (իշխան Պարսկաստանում) 364
Այլֆտոն (ոստիկանական գործակալ Թիֆլիսում) 74
Այվազովսկի Գաբրիել վարդապետ 835
Այվատյան Սահակ արքեպիսկոպոս 477, 478
Անդրանիկ (տե՛ս Օզանյան Անդրանիկ)
Անդրեասյան Երվանդ (Կ. Պոլսի «Առաւօտ», «Մանդումէի էֆքեար» և «Օրագիր» թերթերի խմբագիր) 1062, 1067
Անտոնյան Արամ (խմբագիր, հրատարակիչ) 1065, 1067
Անտոնյան Տ. (Կ. Պոլսի «Ձայն հայրենեաց» թերթի աշխատակից) 1065
Աչըդյան Խորեն արքեպիսկոպոս 682
Ապահունի Եղնիկ արքեպիսկոպոս 407
Ապտ-իլ-Համիտ (տե՛ս Աբդուլ Համիդ II)

Ապտիլ Համիտ (տե՛ս Արդուլ Համիդ II)
Առաքելյան Համբարձում (Թիֆլիսի «Մշակ» թերթի խմբագիր) 54, 69, 414, 587, 588, 714, 820, 947
Ասադոլլահ Միրզա (Պարսկաստանի մեջլիսի պատգամավոր) 363, 395
Ասատուր Զապել (կեղծանունը՝ Սիպիլ) 536
Ասատուր Հրանտ 707
Ասատուրյան Հ. (դաշնակցական գործիչ Եգիպտոսում) 731
Ասլանյան Գևորգ Էֆենդի (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 707
Աստվածատրյան Արշալույս (դաշնակցական գործիչ) 309, 662, 899
Ավագ (Շոշ գյուղացի, Թուրք կրոնավորի ահաբեկիչ) 33
Ավագյան Ավագ խան (խանութի տեր Թավրիզում) 480
Ավագյան Կարապետ (տե՛ս Աղաջանյան Համբարձում)
Ավագյան Հովհաննես («Վան-Տոսպ» թերթի գլխավոր խմբագիր) 1069
Ավագյան Սեդրակ (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 473
Ավանեսյան Սեդրակ (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 473
Ավգեոս Թագավոր (հունական դիցաբանության մեջ) 789
Ավդալյան Զաքարիա վարդապետ 321
Ավետիս (Սհան գյուղացի) 319
Ավո (հեղափոխական գործիչ) 145
Ավրանա Արամ (բուն անունով՝ Խաբախանյան Արամ) 175
Ատոմ (տե՛ս Շահրիկյան Հարություն)
Ատրպետ (բուն անունով՝ Մուրահյանյան Սարգիս) 419, 455, 458
Արարո (բուն անունով՝ Մխիթարյան Ստեփանոս) 135, 156, 795
Արամյանց Հմայակ (հնչակյան գործիչ, խմբագիր, դավաճան) 601, 602, 604, 1066
Արամյանց Միքայել (հայ բարեգործ Թիֆլիսում) 75
Արասխանյան Ավետիք (Թիֆլիսի «Մուրճ» ամսագրի խմբագիր) 54
Արզուման (հնչակյան ռուսահայ ղեկավար) 718
Արզումանյան Մակիչ Վ. (խորհրդահայ պատմաբան) 13
Արզույան Ալեքսան (կեղծանունը՝ Վահե) (վերակազմյալ հնչակյան պարագլուխ) 719, 720, 1065
Արիստիդի (օսմանյան խորհրդարանի հույն անդամ) 981
Արիֆ Հիքմեթ փաշա (Օսմանյան կայսրության սենատի անդամ) 979
Արծվիկ Հրանտ (տե՛ս Նազարյան(ց) Հրանտ)
Արծրունի Գրիգոր (Թիֆլիսի «Մշակի» հիմնադիր և խմբագիր) 271, 622, 705, 862
Արկերյան Արշակ (պետական դումայի պատվիրակ, բոլշևիկ) 69, 70
Արղության Հովսեփ (դաշնակցական ֆիդայի) 118
Արղության Սոֆիա (իշխանուհի) 54
Արմեն Գարո (բուն անունով՝ Փաստերմաջյան Գարեգին) (դաշնակցական գործիչ) 567, 619, 901, 904
Արմեն(յան) Ենովք (գրող և խմբագիր Կ. Պոլսում) 1064, 1065
Արշակ Բ (Արշակունի) (հայոց թագավոր) 546
Արշակունի Վաղարշակ վարդապետ 944
Արշակունիներ (արքայատոհմ հայաս-

տանում) 547
Արշավիր (Առինջ գյուղացի, Թուրքերեն ձեռագիր թերթի թողարկիչ) 209
Արսլան (դուրզի էմիր, օսմանյան խորհրդարանի սպանված անդամ) 961
Արփիարյան Արփիար (կեղծանուններից՝ Հայկակ, Հրազդան, Սկեպտիկ) 258, 270–287, 289, 1063
Արփիարյան Տիգրան (Կ. Պոլսի «Սուրհանդակ» օրաթերթի խմբագիր) 1064
Աւետեան Մ. (Տեղակալ) 723

Բ

Բաբախանյան Առաքել (տե՛ս Լեո)
Բազազ-Աղաջանյան Գրիգոր (էսէռ գործիչ, «Անիւ» թերթի խմբագիր) 43
Բազիկ (չատախցի հայ փիդայի) 570
Բալաջան (բուն անունով՝ Ստեփանյան Ստեփան) (դաշնակցական գործիչ) 373, 413
Բախչինյան Հայկ (ախալցխացի դաշնակցական ահաբեկիչ) 47, 109, 110
Բաղր խան (հակամիապետական ըմբոստության առաջնորդներից Թավրիզում) 456, 459, 467
Բայազետ աղա (քուրդ ցեղապետ Սալմաստում) 355
Բայիզ աղա (քուրդ երևելի Ատրպատականում) 384, 389
Բաչայան Լեոն (գրող, խմբագիր, հասարակական գործիչ) 628, 750, 1063
Բաուեր (Ռուսաստանի բանակի զորավար) 85
Բանվորյան Սեդրակ (Թիֆլիսահայ կամավոր Թավրիզում) 475
Բասմաջյան Կարապետ (բանասեր) 219
Բարնըմ Հ. (Կ. Պոլսի «Աւետարեր» թերթի խմբագիր) 1062
Բարսեղյան Գեղամ (դաշնակցական գործիչ, Կ. Պոլսի «Ազդակ» թերթի խմբագիր) 619, 790, 1065, 1066
Բարսեղյան Սարգիս (բուն անունով՝ Օգարաչյան Պողոս, մյուս կեղծանունը՝ Շամիլ) (դաշնակցական գործիչ) 292, 300, 301, 315
Բաքըրջյան Օննիկ (Կ. Պոլսի «Ճերիտէի չարգիյէ» թերթի խմբագիր) 1063
Բդէեան Միսաք 544, 557, 660–662
Բդէեան Սարգիս 544, 557, 660–662
Բեբել Ավգուստ (գերմանացի սոցիալիստ պարագլուխ) 578
Բեդիրխան բեկ (քուրդ ապստամբ ցեղապետ) 118, 138, 139
Բեդիրխան բեյ (Կ. Պոլսի քրդական կոմիտեի անդամ) 579
Բեժանաչվիլի (գեներալ, օսմանյան ցամաքային զորքերի գլխավոր շտաբի պետի տեղակալ) 652
Բեկլի (բելեքցի քուրդ ոճրագործ) 321
Բեհաէդդին Շաքիր (իթթիհադական պարագլուխ, հայոց դահճապետերից) 183, 188, 189, 200, 600, 601
Բեյլերյան Հարություն (ռամկավար գործիչ) 728
Բեյլի (վանեցի հայ) 301, 302
Բեռզիկյան Գրիգոր (կեղծանունները՝ Ներսես, Շիկահեր, Պարգև) (արմենական գործիչ) 282, 723, 727, 737
Բեռյուք խան (Ղարադաղի Ռահիմ խանի որդին) 457

Բերար Վիկտոր (ֆրանսիացի հայասեր գործիչ) 323
Բերբերյան Ռուբեն (տնտեսագետ) 72
Բժիշկ (տե՛ս նաև Փափազյան Վահան) 292
Բյուրատ Սմբատ (բուն անունով՝ Տեր-Ղազարյան Սմբատ) (գրող, խմբագիր) 1067
Բորբինսկի (պետական դումայի խավարամոլ պատգամավոր) 7
Բոդրով Պյոտր (ձերբակալված ռուս երիտասարդ) 48, 110
Բոկով (պետական դումայի պատվիրակ, բոլշևիկ) 69
Բոնապարտ Նապոլեոն 649
Բոնչոն Ռաուլ (տե՛ս Համբիկյան Գրիգոր)
Բոտա Լուիս (գեներալ, Տրանսվաալ) 250
Բուլղարացի Գրիգոր (բուն անունով՝ Գեոզեյան Գրիգոր) (դաշնակցական գործիչ Վանում) 315
Բուրհանէդդին (իշխան, Արդուլ Համիդ II-ի ավագ որդին) 492, 957, 978

Գ

Գազանջյան Հովհաննես (Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի խմբագիր) 1063
Գազէզ Յարութիւն (Արթին) (պոլսահայ ամիրա, բարեգործ) 787
Գալփաքջյան Արտաշես (Կ. Պոլսի «Բիւրակն» թերթի հրատարակիչ, «Ժամանակ» օրաթերթի խմբագիր) 1064, 1065
Գալփաքջյան Վաղարշակ (Կ. Պոլսի «Բիւզանդիոն» և «Գարուն» թերթերի խմբագիր) 1063, 1065
Գամառ-Քաթիպա (տե՛ս նաև Պատկանյան Ռափայել) 825
Գայսերյան Հովհաննես (Կ. Պոլսի «Մանգումէի էֆքեար» թերթի արտոնատեր) 1062
Գասյան Պետրոս քահանա (Ակնում) 944
Գասպարյան Արիստակես (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 703
Գարայան Ստեփան (Ազգ. վարչության ատենապետ) 709
Գարաֆելեկյան Արտաշես էֆենդի (հասարակական գործիչ Իզմիրում) 624
Գարիբալդի Ռիչչիոթի 268
Գեգեչկորի Եվգենի (վրացի մենշևիկ պարագլուխ) 76
Գեոզեյան Գրիգոր (տե՛ս Բուլղարացի Գրիգոր)
Գիդիս Մուսիրիս (հույն հակաարդուլ-համիդական գործիչ) 178, 179
Գիւզալեան Գառնիկ (տե՛ս Գյուզալյան Գառնիկ)
Գիւլխանդանեան Աբրահամ (դաշնակցական գործիչ) 37
Գլագոլև (գեներալ, հրեաների ջարդարար Օդեսայում) 8
Գլադստոն Վիլյամ 553
Գլերով (գեներալ, ռուսական 20-րդ դիվիզիայի հրամանատար) 28, 29
Գյուզալյան Գառնիկ 126, 128, 867
Գյուլմասյան (ընկերության փայատեր Թավրիզում) 480
Գյուրջյան Մելքոն (գրող, խմբագիր) 628, 1063
Գյուրջյան Միքայել (գրող, խմբագիր) 274, 737, 739, 1065
Գնունի Ա(բամ) (բուն անունով՝ Տեր-Գասպարյան Ռուբեն) (Կ. Պոլսի

«Զայն հայրենեաց» թերթի աշխատակից) 1065
Գոլիցին Գրիգորի (իշխան, Կովկասի փոխարքա) 53, 54, 75, 77, 88, 98, 102, 114
Գոլոբորոդկո Նիկոլայ Նիկոլաևիչ (ռուս պատմաբան) 163, 784
Գոլոչյան Վարդան (նահատակ փիդայի) 135
Գոլովին Ֆ. Ա. (Երկրորդ պետական դումայի նախագահ) 5, 7
Գոնտայան Նշան (Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի խմբագիր) 1062
Գոչունյան Միսաք (կեղծանունը՝ Քասիմ) («Ժամանակ» օրաթերթի հիմնադիր և խմբագիր) 1062, 1065
Գոչունյան Սարգիս («Ժամանակ» օրաթերթի տնօրեն) 1065
Գորկի Մաքսիմ (բուն անունով՝ Պեշկով Ալեքսեյ Մաքսիմովիչ) (ռուս գրող) 311
Գորոյան Արշակ խան (պարսկահայ պետական գործիչ) 378, 414
Գորոյեանց Նազար Յ. 446
Գույումջյան Սարգիս արքեպիսկոպոս 840, 868
Գուչկով Ալեքսանդր Իվանովիչ (Երրորդ պետական դումայի նախագահ) 71
Գուր (գերմանացի մատնիչ Ելենենդորֆում) 31
Գուրգեն (դաշնակցական հայդուկ, բուն անունով՝ Մայյան Բաղդասար) 795
Գուրգեն (հնչակյան գործիչ Մալաթիայում) 954
Գուրիլի Վասո (վրացի մենշևիկ Թավրիզում) 475
Գուրկո-Կրյաժին Վ. Ա. (ռուսաստանցի պատմաբան) 237, 498, 521
Գրգո (Շենիկի Գրգո) (հայ հայդուկ) 135
Գրե (ասորի հայդուկ հայկական ֆիդայական խմբերում) 119
Գրեյ Էդուարդ սըր (Մեծ Բրիտանիայի արտգործնախարար) 323, 813
Գրիգոր (վանեցի դաշնակցական արհեստավոր) 293
Գրիգոր Ա Պարթև (Լուսավորիչ Հայոց) 63, 64, 298
Գրիգորյան Ա. (վերակազմյալ հնչակյան գործիչ) 694, 719
Գրիգորյան Ասլան (տե՛ս Հովհաննիսյան Ասլան)
Գրիգորյան Կարապետ (վերակազմյալ հնչակյան, ապա ռամկավար գործիչ) 228, 728, 737
Գրիգորյան Հ. (Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի խմբագիր) 1062
Գրին Ջ. Ք. (Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի արտոնատեր) 1062
Գևորգ Դ Քերեսթեջյան Կոստանդնուպոլսեցի (տե՛ս նաև Քերեսթեջյան Գևորգ արքեպիսկոպոս) 64
Գևորգ Ե Սուրենյանց (տե՛ս նաև Սուրենյանց Գևորգ արքեպիսկոպոս) 120
Գևորգ Զավուշ (բուն անունով՝ Ղազարյան Գևորգ) (հայդուկապետ) 135, 146, 156, 159, 160, 175, 795
Գևորգյան Մարտիրոս (տե՛ս Սարգսյան Մարտիրոս)
Գևորգյան Սաղաթել (տե՛ս Սագունի)

Դ

Դաման (Ատրպատականում սպանված գերմանացի միսիոներ) 405
Դանիելյան Ներսես վարդապետ 1065
Դաշնակցական Խեչո 36, 619

Դավթյան Եփրեմ (տե՛ս Եփրեմ խան)
Դավթյան Հոնան (դաշնակցական գործիչ) 118, 404
Դավթյան Յորդանս (Հոնան Դավթյանի տիկինը) 404
Դավո (Դհերցի Դավո) (մատնիչ) 289, 293, 294, 296–301, 305, 307–313, 315, 324, 542, 663
Դավրիչ (Ջիբրանցի քուրդ ցեղապետ) 151
Դարբինյան Արտակ (արմենական, ապա՝ ռամկավար ղեկավար) 295, 296, 315, 723, 728, 729, 741, 750
Դարբինյան Ռուբեն (բուն անունով՝ Զիլինգարյան Արտաշես) 38, 43
Դաւо (տե՛ս Դավո)
Դեղդրիկյան Թեոս (կեղծանունը՝ Թորգոմ) (վանեցի դաշնակցական գործիչ) 293, 315
Դեմիր փաշա (քուրդ ավազակապետ) 658
Դերձակյան Օննիկ (տե՛ս Վռամյան Արշակ)
Դերսիմի Քեռի (բուն անունով՝ Շիշմանյան Ռուբեն) 145, 147
Դերվիշ (տե՛ս Տեր-Հակոբյան Տիգրան)
Դիդոյի Ռաշիդ (վայրենաբարո հարկահավաք Բաղեշի նահանգում) 931
Դիմաքսյան Հմայակ եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) 708, 709, 868
Դոբուժինսկայա Մարիա (ձերբակալված ռուս երիտասարդուհի) 48, 111
Դուման (տե՛ս Նիկոլ Դուման)
Դումբաձե (վրացի, Յալթայի պարետ) 48
Դուրյան Եղիշե եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) 530, 533, 536, 639, 672, 689, 690, 703, 704, 707–709, 712, 713, 738, 886
Դուրյան Ղևոնդ վարդապետ 639, 695
Դուրյան Պետրոս (վաղամեռիկ բանաստեղծ) 689
Դվոյեգլազով (ռուսական ուղեկալի հրամանատար) 391
Դրո (բուն անունով՝ Կանայան Դրաստամատ) (հայդուկ, դաշնակցական ահաբեկիչ) 28

Ե

Եափուճեան Աւետիս (ռամկավար գործիչ, խմբագիր, պատմաբան) 728
Եկարյան Արմենակ (արմենական, ապա՝ ռամկավար գործիչ) 298, 304, 311, 403, 741, 750
Եղիկյան Գրիգոր (կեղծանունը՝ Վասակունի) (Կ. Պոլսի «Կոհակ» թերթի խմբագիր) 1066
Ենիկոլոպյան Ֆավիզ խան Սարհենգ (պարսկական զորքերի հայազգի հրամանատար) 389
Եսալեմ (տե՛ս Կոզիկյան Գարեգին)
Եսայան Հակոբ («Օսմանյան սահմանադրական ակումբի» ներկայացուցիչ) 628
Եսթեր (հերոս հայ պարմանուհի) 335
Երամյան Աբրահամ փաշա 907
Երամյան Արամ Էֆենդի (Օսմանյան կայսրության սենատի անդամ) 979
Երամյան Համբարձում (բազմավաստակ մանկավարժ) 55, 294, 298, 302, 303, 311, 313, 542, 618, 687, 703, 778, 779
Երեմիա եպիսկոպոս (Մայր աթոռի միաբան, 19-րդ դարի վերջ – 20-րդ

դարի սկիզբ) 65
Երեցյան Գևորգ եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) 695, 708
Երուխան (տե՛ս Սրմաքեշխանյան Երվանդ)
Երօտ (տե՛ս Օտյան Երվանդ)
Եփրեմ խան (բուն անունով՝ Դավթյան Եփրեմ) (դաշնակցական, պարսկական հեղափոխության ղեկավարներից) 373, 402

Զ

Զամիսլովսկի (պետական դումայի սևհարյուրյակային պատգամավոր) 70
Զավարյան Սիմոն (ՀՅԴ-ի հիմնադիրներից) 69, 371, 372, 619, 900
Զավեն (քրդերի դավադրությամբ սպանված վանեցի փիդայի) 160, 161, 938
Զավեն Տիգրան (բուն անունը՝ Զուգասբդյան Տիգրան) (խմբագիր) 54, 254, 1064, 1066, 1067
Զավրյան (Զավրիև) Հակոբ (բժիշկ, դաշնակցական գործիչ) 45
Զարդարյան Ռուբեն (գրող, խմբագիր) 619, 628, 1066
Զարդարեան Վահան 836
Զարմայր (տե՛ս Տեր-Սահակյան Տիգրան)
Զարևանդ (բուն անունով՝ Նալբանդյան Զավեն) 661, 662
Զաքարյան Վահան (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Զեյթունցյան Հակոբ (պրոֆեսոր) 555
Զեյնալ աղա (դմլիկ քրդական ցեղի ցեղապետ Տարոնում) 152
Զեյնալ բեկ (խորժմկցի քուրդ ցեղապետ) 151
Զեքի (գնդապետ, Սարահէդդինի կուսակից) 183
Զեքի փաշա (օսմանյան չորրորդ դորբանակի հրամանատար) 610, 652
Զիա բեյ (մեծ վեզիրի խորհրդական) 710
Զիա փաշա (ֆինանսների նախարար) 611
Զիլլի Սոլթան (Ղաջար) (Մահմեդ Ալի շահի հորեղբայրը) 420, 422, 424, 428
Զիհնի փաշա (Պետական խորհրդի նախագահ) 960
Զինագործ Պետրոս (տե՛ս Հովհաննիսյան Բագրատ)
Զինովև (Ռուսաստանի դեսպանը Օսմանյան կայսրությունում) 388
Զինովև Խ. Ա. (Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը Կարինում) 558
Զոհրաբյան Մելիք (ընկերության փայատեր Թավրիզում) 480
Զոհրապ Գրիգոր 535, 619, 620, 627, 628, 779, 883, 904, 908, 909, 919, 923–925, 963, 967, 1067
Զորյան Բարթող (կեղծանունը՝ Ժիրայր) (Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթի խմբագիր) 1066
Զորյան Նիկողայոս (արևմտահայ գարթոնքի գործիչ) 837
Զորյան Ստեփան (տե՛ս Ռոստոմ)
Զուլալ (դաշնակցական գործիչ Տրապիզոնում) 952
Զուվեր բեյ (Ադրիանապոլսի վալի, ապա՝ ոստիկանության նախարար) 610
Զուրաբյան Արշակ (մենշևիկ Թիֆլիսում, Երրորդ պետական դումայի պատգամավոր) 5
Զրադաշտ 394

Զօհրապ (տե՛ս Զոհրապ Գրիգոր)

Է

Դ'Էգուրնել Կոնստան 268
Էդհեմ փաշա (զինվորական նախարար) 959
Էդուարդ VII (Վինդսոր) 51, 485, 616
Էլիավա Շալվա (վրացի բոլշևիկ գործիչ) 90
Էլվենտ (տե՛ս Քաջբերունի Գագիկ)
Էմին փաշա (Վանում) 636
Էմին փաշա (ծովային նախարար) 959
Էմին Սոլթան (տե՛ս Աթաբեկ Ադամ)
Էմիր Բահադրը ճենք (տե՛ս Էմիր Բահադուր խան Ջենկ)
Էմիր Բահադուր խան Ջենկ (Պարսկաստանի պետական գործիչ) 418, 420, 423, 430, 431, 471
Էմրուլլահ բեյ (Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերի կապիտան) 358
Էյն Դովլե (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 415, 429, 457, 458
Էնվեր բեյ (ապա՝ փաշա) (իթթիհադական զինվորական գործիչ, հայոց դահճապետերից) 490, 535, 610, 612, 614, 644, 902, 960, 986, 987
Էնֆիեջյան Ավետիք (դոկտոր, վերակազմյալ հնչակյան) 228
Էնֆիեջյան Տիգրան (դոկտոր, ռամկավար գործիչ) 728
Էսադ փաշա (հազարապետ) 980
Էսաջանյան Լևոն (պոլսահայ բանաստեղծ) 795
Էրրերա Պոլ 268

Ը

Ընծայր (տե՛ս Նալբանդյան Գևորգ ծայրագույն վարդապետ)
Ըոզա (քուրդ մարտիկ) 156

Թ

Թադեոս առաքյալ (Հիսուսի աշակերտներից) 151, 409
Թադևոսյան Լևոն (կեղծանունները՝ Զոփուոյան Ռ., Պապաչա) (դաշնակցական գործիչ) 111
Թադևոսյան Ստեփան (կեղծանունը՝ Սամսոն) (դաշնակցական գործիչ) 373
Թաթուլ Վահրամ (բուն անունով՝ Գարագաշյան Վահրամ) (Կ. Պոլսի «Ազդակ» թերթի խմբագիր) 1065
Թալեաթ բեյ (տե՛ս Մեհմեդ Թալեաթ բեյ)
Թահիր բեյ (ապա՝ փաշա, Վանի կուսակալ) 298, 305, 306, 314, 318, 319
Թահիր փաշա (Աբդուլ Համիդ II-ի հրացանակիրների պետ) 976
Թաղիզադե Հասան Աղա Սեյիդ (Պարսկաստանի մեջլիսի անդամ) 363, 375, 395, 396, 425, 433, 434, 473
Թաճ[էտ]տին (տե՛ս Թաջէդդին բեկ)
Թամամչև (Թամամչյան) Ավետիք (հայ բարեգործ Թիֆլիսում) 75
Թաջէդդին բեկ (քուրդ մարդակեր) 134, 939, 940
Թավշանջյան Վ. (եղբայրասպանության զոհ) 286, 719
Թավուկջյան Ներսես քահանա 795
Թեոդոր (թուրքերի սպանած հույն երիտասարդ Կ. Պոլսում) 756

Թերզյան Թովմաս (թուրքահայ բանաստեղծ) 506
Թերլեմեզյան Նշան (վանեցի) 319
Թերլեմեզյան Տաճատ (դավաճան Դավոյի ահաբեկիչ) 311, 312, 315
Թեքեյան Վահան (կեղծանուններից՝ Վեթո) 230, 274, 281, 282, 285, 585, 722, 736, 737, 739, 743, 750, 803, 951, 1063, 1065
Թէոդիկ (բուն անունով՝ Լաբջինջյան Թեոդոս) 281, 290
Թէրզեան Յակոբ Յ. 669
Թիրյաքյան Հրաչ (դաշնակցական գործիչ) 619
Թիրյաքյան Տ. (հնչակյան գործիչ) 719
Թյունի (տե՛ս Լազարյան Հովհաննես)
Թոլայան Երվանդ (կեղծանունը՝ Կավոռչ) (Կ. Պոլսի «Կավռոչ» երգիծաթերթի արտոնատեր-խմբագրապետ) 1064
Թոլայան Հովհաննես (Կ. Պոլսի «Մէճմուայի ախպար» թերթի արտոնատեր-խմբագրապետ) 1062
Թոչիկյան Վահան (Կ. Պոլսի «Գաղափար» թերթի խմբագիր) 1068
Թորգոմյան Վահրամ (բժիշկ, պոլսահայ հասարակական գործիչ) 627, 707, 709
Թորոս (Մայր աթոռի խոհարար) 66
Թորոսյան Գրիգոր (կեղծանունը՝ Լոությունյան Բանագող) (Կ. Պոլսի երգիծաթերթերի խմբագիր) 1064-1066
Թորոսյան Սուրեն (հնչակյան գործիչ) 602
Թուղլաջյան Գառնիկ (Կ. Պոլսի «Օրագիր» թերթի արտոնատեր) 1067
Թումանյան (առևտրական տան սեփականատեր(եր) Ատրպատականում) 482
Թումանյան Հովհաննես 337, 338
Թունյան Ալեքսան (դաշնակցական գործիչ Պարսկաստանում) 375
Թոփալենց Իլիաս (հավանաբար Վանում) (տե՛ս Խոջա Իլիաս)
Թոփչյան Եղիշե (դաշնակցական գործիչ) 45, 176, 655, 816
Թոփչյան Հակոբ (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի խմբագիր) 1063
Թրևիլե (Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի պատգամավոր) 323
Թևֆիք փաշա (արտաքին գործերի նախարար, ապա՝ մեծ վեզիր) 615, 710, 959, 969, 985

Ժ

Ժակմեն Ռոլեն (միջազգայնագետ-իրավագետ) 842, 862, 863, 895
Ժիրայր (տե՛ս Զորյան Բարթող)
Ժիրայր (հնչակյան գործիչ Մալաթիայում) 953
Ժիրայր-Վաչե (տե՛ս Մելոյան Գարեգին)
Ժորդանիա Նոյ (վրացի մենշևիկ պարագլուխ) 76
Ժորես Ժան (ֆրանսիացի սոցիալիստ պարագլուխ) 113, 206, 268, 578

Ի

Իբն Բաթթութա (Աբու Աբդալլահ Մուհամմեդ իբն Աբդալլահ ալ-Լաուաթի ալ-Թանժի, միջնադարյան արաբ ճանապարհորդ) 154
Իբրահիմ աղա (քուրդ ցեղապետ Ատրպատականում) 382
Իբրահիմ փաշա (քուրդ, Մուշում) 761
Իբրահիմ փաշա (քուրդ իշխան) 155

Իբրահիմ Թեմո (երիտթուրք գործիչ) 178
Իզզեթ փաշա (Բարձր Դռան քարտուղար) 611
Իզմիրլյան Մատթեոս արքեպիսկոպոս (տե՛ս Մատթեոս Բ Իզմիրլյան)
Իզո խան (Մակուի խան Իկբալ Սալթանեի եղբայրը, քուրդ) 467
Իզվոլսկի Ալեքսանդր Պետրովիչ (Ռուսաստանի արտգործնախարար) 53, 341
Իթտի խան (օսմանյան խորհրդարանում իթթիհադական խմբակցության ղեկավար) 907
Իլդրիմ (ֆիդայական ջոկատների հրամանատար Ատրպատականում) 456
Իկբալ Սալթանե (Մակուի խան, քուրդ) 467, 471
Իմամ Ղուլի Միրզա (շահզադե) 389
Ինճիկյան Հովհաննես (խորհրդահայ արևելագետ) 593
Իշխան (Վանա Իշխան, բուն անունով՝ Պողոսյան Նիկողայոս) 117, 292, 300, 301, 306, 307, 316, 542, 543, 569, 570, 659, 662, 664, 948, 989
Իշխանյան Բախչի (սոցիալ-դեմոկրատ պարագլուխ) 17
Իոակիմ III (Կ. Պոլսի հունաց պատրիարք) 671, 677
Իսահակյան Ավետիք (մեծ բանաստեղծ, Վարպետ) 60
Իսմայիլ փաշա (օսմանյան երրորդ զորաբանակի հրամանատար, աքսորական Բուրսայում) 487, 611
Իսմայիլ Հակկը բեյ (երիտթուրք գործիչ) 178
Իսմայիլ Հակկը փաշա (զորավար, սենատոր) 698, 981
Իսմայիլ Քեմալ (երիտթուրք գործիչ, Սարահէդդինի կուսակից) 178, 183
Իսմայիլ Քեմալ (օսմանյան խորհրդարանի ալբանացիների խմբակցության ղեկավար) 959
Իսքենդերյան Հակոբ (հնչակյան գործիչ) 601
Իփեկյան Գասպար (դաշնակցական գործիչ, Կ. Պոլսի «Ազատամարտ» թերթի խմբագիր) 975, 1066

Լ

Լադոմիրսկի (պետական դումայի սևհարյուրյակային պատգամավոր) 70
Լազարյան Հովհաննես (կեղծանունը՝ Թյունի) (էսէռ գործիչ) 43
Լազարյաններ (հայազգի իշխանական տոհմ Ռուսաստանում) 75
Լազարև (Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ) 56
Լայչման (ԱՄՆ դեսպանը Կ. Պոլսում) 353
Լարենց Լևոն (բուն անունով՝ Քիրիչյան Լևոն) (վերակազմյալ հնչակյան գործիչ, «Ձայն հայրենեաց» թերթի խմբագրապետ) 719, 910, 1065
Լենին Վլադիմիր Իլյիչ (բուն անունով՝ Ուլյանով Վլադիմիր Իլյիչ) 12, 590-592
Լեո (բուն անունով՝ Բարախանյան Առաքել) (պատմաբան) 99, 254, 618, 629, 810
Լրոուա Պոլեո Անատոլ 268
Լիբկնեխտ Վիլհելմ (գերմանացի սոցիալիստ գործիչ) 509
Լիդա (հավանաբար՝ Աղաջանյան Համբարձումի սիրած աղջիկը) 111
Լիլա (տե՛ս Փափազյան Վահան)

Լինչ Հենրի Ֆինիս Բլոս (Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի անդամ) 323, 841, 895
Լյախով Վ. Պ. (պարսկական կազակային զորքերի հրամանատար) 419, 423, 424, 428, 473
Լոզինա-Լոզինսկի (Թիֆլիսի նահանգապետ) 11, 80
Լոմբրոզո Զեզարե (իտալացի հայասեր պրոֆեսոր, հումանիստ) 268
Լոնգե Ժան (ֆրանսիացի սոցիալիստ պարագլուխ) 247
Լորե Էքիլ (ֆրանսիացի հայասեր գործիչ) 268
Լուսավորիչ Հայոց (տե՛ս Գրիգոր Ա Պարթև)
Լուսինյան Արմեն (Կ. Պոլսի «Հանրագիտակ» թերթի հրատարակիչ) 1064
Լոությունյան Բանագող (տե՛ս Թորոսյան Գրիգոր)
Լևի Մոչե (Մովսես) (Թուրքիայի հրեաների մեծ ռաբբի) 677

Խ

Խաժակ (տե՛ս Խաժակ Գարեգին)
Խաժակ Գարեգին (բուն անունով՝ Զագայյան Գարեգին) 567, 620
Խալիլ Ղանեմ (երիտթուրք գործիչ) 178
Խալիֆ փաշա (փոխ-ծովակալ, ծովային նախարար) 652
Խանազատ Ռուբեն (ՍԴՀԿ-ի հիմնադիրներից) 600, 620, 621, 800–802
Խանասորի Վարդան (Վարդան, բուն անունով՝ Մեհրաբյան Սարգիս) 619
Խաչատուրյանց Վասո (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 472
Խաչիկյան Հակոբ (Օրմանյան պատրիարքի դաշնակցական ահաբեկիչ) 687
Խաչկոնց Դավիթ (պոլսահայ մտավորական) 629
Խապայան Ներսես եպիսկոպոս 57
Խատիսյան (Խատիսով) Ալեքսանդր (Թիֆլիսի քաղաքագլուխ, դաշնակցական գործիչ) 9, 10, 29, 44, 57, 68, 88, 89, 106
Խատիսյան Կոստանդին (հասարակական գործիչ Բաքվում, գործարանատեր) 13
Խատտի փաշա (հետևակային դիվիզիայի հրամանատար Ուսկյուպում) 488
Խարախանյան Ներսես վարդապետ (ապա՝ եպիսկոպոս) 145, 629, 643
«Խենթը» (տե՛ս Տեր-Պողոսյան Սամսոն)
Խեչո (կոփեցի, միհրանական, եղբայրասպանության զոհ Արմավիրում) 47
Խեչո (տե՛ս Դաշնակցական Խեչո)
Խլղաթյան Ալո (նահատակ) 316
Խլղաթյան Արմենակ (նահատակ) 316
Խլղաթյան Բեգո (նահատակ) 316
Խլղաթյան Իֆո (նահատակ պարմանուհի) 316
Խլղաթյան Լևոն (նահատակ երեխա) 316
Խնուսցի Հրաչյա (քրդերի համար «Այբբենարանի» հեղինակ) 153
Խոմյակով Նիկոլայ Ալեքսանդրովիչ (Երրորդ պետական դումայի նախագահ) 71
Խոջա Իլիաս (վաչխառու, Սուլուխի գյուղապետ) 545, 931
Խոջա Կադրի (երիտթուրք գործիչ) 178

Խոջասարյան Հայկ (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 707
Խոռխոռունի Վասակ (Էսէռ գործիչ) 43
Խրիմյան Հայրիկ (Հայոց Հայրիկ, Մկրտիչ Ա Խրիմյան) 36, 49–64, 66, 123, 126, 128, 131, 232, 330, 355, 507, 508, 679, 681, 685, 712, 714, 795, 947
Խրիմյան Մուրադ (տե՛ս Սեբաստացի Մուրադ)
Խօրասանճեան Միքայէլ (արքունի բժիշկ Կ. Պոլսում) 787

Ծ

Ծերեթելի Ակակի (վրացի մենշևիկ պարագլուխ) 90
Ծերենց (բուն անունով՝ Շիշմանյան Հովսեփ) (բժիշկ, վիպագիր) 837

Կ

Կաղրի բեյ (Հեծելազորաց տեղակալ Կ. Պոլսում) 530
Կամո (բուն անունով՝ Տեր-Պետրոսյան Սիմոն) 15, 16, 90
Կայետանովիչ Դեմոնովիչ Անտոն (Երրորդ պետական դումայի հայազգի պատգամավոր Քիչինյովից) 71
Կայէն (առաջին մարդասպանը) 690
Կայծակ Առաքել (բուն անունով՝ Արաքյան Տիգրան) (դաշնակցական ֆիդայի) 145
Կանայան Դրաստամատ (տե՛ս Դրո)
Կաուֆման Ա. (ռուս թուրքագետ) 634
Կավասի Դովլե (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 471
Կավոռչ (տե՛ս Թոլայան Երվանդ)
Կարախանյան Հովսեփ (Իոսիֆ) (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 472
Կարապետ (Հովհաննես Մկրտիչ) 146, 331, 570, 571, 663, 817–819
Կարասո Էմմանուել (հրեա, օսմանյան խորհրդարանի անդամ) 980
Կարմիր սուլթան (տե՛ս Աբդուլ Համիդ II)
Կարո (տե՛ս Աղաջանյան Համբարձում)
Կաֆյան Գաբրիել (կեղծանունը՝ Շմավոն) (ՍԴՀԿի հիմնադիրներից) 54, 600
Կիպերտ (քարտեզագիր) 194, 776
Կիւրլեքեան Յակոբ վերապատուելի 765
Կլանիկ դը (կոմս) 163, 164
Կլեմանսո Ժորժ (ֆրանսիացի պետական գործիչ) 268
Կնունյանց Բոգդան (բոլշևիկ գործիչ) 593–596
Կոզիկյան Գարեգին (կեղծանունը՝ Եսալեմ) (գրող, հրապարակագիր) 1066
Կոլեսնիկովա Նադեժդա Նիկոլաևնա (բոլշևիկ գործիչ) 12, 14
Կոկե (ջիբրանցի քուրդ ցեղապետ) 151
Կոհիե Յուրպեն 268
Կոմիտաս վարդապետ (Սողոմոնյան) 65
Կոմս (տե՛ս Փափազյան Վահան)
Կոնդուրաջի ճոչ աղա (վանեցի դաշնակցական) 319
Կոնտ Օգյուստ (գերմանացի փիլիսոփա) 169
Կոռնակ (Սյունի՞, հայ իշխան Արշակունիների ժամանակաշրջանում) 547

Կոստանդյան Գալուստ (արևմտահայ զարթոնքի գործիչ) 835, 837
Կուկունյան Սարգիս (հայկական ազատագրական շարժման գործիչ) 115
Կուրտիկյան Ստեփան Էֆենդի (վանեցի) 628
Կոփ Մահմեդ (հայդարանցի քուրդ ցեղապետ) 151
Կտլոզյան Ղազարոս (կեղծանունը՝ Սուրենյան Սուրեն) 719
Կրճիկյան Հակոբ փաշա (պետական և հասարակական գործիչ Կ. Պոլսում) 787, 835

Հ

Հազարապետյան Հարություն (Կ. Պոլսի «Արաքս» պարբերականի հրատարակիչ) 1067
Հազկերտներ (Սասանյան հարստության արքաներ) 455
Հալաջյան Պետրոս (օսմանյան խորհրդարանի իթթիհադական անդամ, նախարար) 883, 904, 922, 924
Հակկել (Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ) 56
Հակկը բեյ (հազարապետ Կ. Պոլսում) 535
Հակկը բեյ (կրթության նախարար) 610, 616
Հակոբ (վանեցի դաշնակցական) 293
Հակոբ փաշա (եկեմտական նախարար) 615
Հակոբ Տեառնեղբայր (Հիսուսի աշակերտներից) 850, 1018
Հակոբյան (տե՛ս Սեբաստացի Մուրադ)
Հակոբյան Կարապետ (լոնդոնաբնակ) 813
Հակոբյան Վահան վարդապետ 536
Համադա փաշա (վակըֆների նախարար) 960
Համազասպ (մշեցի, թուրքերեն ձեռագիր թերթի թողարկիչ) 209
Համազասպյան Համազասպ վարդապետ 65
Համբարձումյան Համբարձում (Կ. Պոլսի «Սուրհանդակ» օրաթերթի խմբագրակազմի անդամ, «Ժամանակ» օրաթերթի խմբագիր) 1064, 1065
Համբարյան Ազատ (պատմաբան) 760, 895
Համբիկյան Գրիգոր (կեղծանունը՝ Բոնչոն Ռաուլ) («Ծաղիկ» երգիծաթերթի խմբագիր, «Կավռոչ» երգիծաթերթի պատասխանատու տնօրեն) 1064
Համի (եղբայրասպանության զոհ հայ) 286
Համի Սալթանե (Մահմեդ Ալի շահի համհարզ) 431
Համիտ (տե՛ս Արդուլ Համիդ II)
Հայկակ (տե՛ս Արփիարյան Արփիար)
Հայկունի Արմենակ (բուն անունով՝ Ջիզմեջյան Համբարձում) 837
Հայոց Հայրիկ (տե՛ս Խրիմյան Հայրիկ)
Հայր Աբրահամ (տե՛ս Սահակյան Ավետիք)
Հայր Հայրենյաց (տե՛ս Ներսես Ա Պարթև)
Հայրիկ (տե՛ս Տիրան)
Հաչիմ փաշա (կրթության նախարար) 610
Հաջի փաշա (Ուսկյուպի դիվիզիայի հրամանատար) 501
Հաջի Ամին օլ Զարբ (Պարսկաստանի պետական դրամատան կապալառու) 375

Հաջի Հյուսնի (դավաճան Դավոյի թիկնապահ) 311
Հաջի Միրզա Իբրահիմ աղա (Պարսկաստանում հեղափոխական անջումենների ղեկավար) 375
Հաջի Միրզա Հասան Աղա (մուջտեհիդ Թավրիզում) 462, 467
Հաջի Մոին օլ Թոջջար (մեծ վաճառական Թեհրանում) 375
Հաջի Մուսա (Թուրք հարստահարիչ) 931
Հաջի Սեյիդ Նասրոլլահ (մեջլիսի պատգամավոր) 396
Հաջիե Ջնդի (քուրդ գրող և գրականագետ Խորհրդային Հայաստանում) 129
Հասան (պայմանական մուսուլմանի անուն) 819
Հասան (պայմանական Թուրքի անուն) 262
Հասան Սալահէդդին բեյ (Աբդուլ Համիդ II-ի դեմ ըմբոստացած զինվորական գործիչ) 490
Հասան Ֆեհմի բեյ (Կ. Պոլսի «Սերբեսթի» թերթի գլխավոր խմբագիր) 928
Հասան Ֆեհմի փաշա (արդարադատության նախարար) 615, 710, 959, 985
Հասանո (քուրդ դավադիր մարտիկ հայկական ֆիդայական խմբերում) 159, 160
Հասո (պայմանական քրդի անուն) 262
Հարդվիգ (Ռուսաստանի դեսպանը Պարսկաստանում) 349, 423
Հարությունյան Գարեգին (տե՛ս Ունանյան Կարապետ)
Հարությունյան-Շեյան Սմբատ (դաշնակցական գործիչ, եղբայրասպանության զոհ) 287
Հարությունյան Ս. (Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի խմբագիր) 1062
Հարությունյան Սամսոն (հասարակական-քաղաքական գործիչ Թիֆլիսում) 49, 50, 54
Հրսե (քուրդ դավադիր մարտիկ հայկական ֆիդայական խմբերում) 159–161
Հիլմի փաշա (օսմանյան երրորդ զորաբանակի հրամանատար, ապա՝ բանակի գլխավոր տեսուչ) 487, 490, 496
Հիլմի փաշա (մեծ վեզիր) (տե՛ս Հուսեյն Հիլմի փաշա)
Հինդլյան Հովհաննես (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 703, 707
Հիսուս Քրիստոս 59, 250
Հիսէին (պայմանական մուսուլմանի անուն) 819
Հիսէին Հիլմի փաշա (տե՛ս Հուսեյն Հիլմի փաշա)
Հյունքյարպեյենտյան Ա. (հասարակական գործիչ Կ. Պոլսում) 835
Հյուս Խերան (դաշնակցական, Վանում) 319
Հյուսնյան Պետրոս (բուն անունով՝ Ալիփունարյան Հովսեփ) (Ա. Արփիարյանի հնչակյան ահաբեկիչ) 281–283
Հովակիմ եպիսկոպոս (Բուրսայի առաջնորդ, Կ. Պոլսի հայոց առաջին պատրիարք) 828
Հովակիմյան Ստեփանոս արքեպիսկոպոս 708
Հովիվյան Շավարշ (վերակազմյալ հնչակյան գործիչ) 228, 728, 737
Հովհաննիսյան Ասլան կեղծանունը՝ Գրիգորյան Ասլան) (զանգեզուր-

ցի, դաշնակցական ահաբեկիչ) 47, 109, 110
Հովհաննիսյան Բագրատ (կեղծանունը՝ Զինագործ Պետրոս) (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Հովհաննիսյան Հովսեփ (կեղծանունը՝ Յ. Էլմար) (դաշնակցական գործիչ Պարսկաստանում) 373, 374, 413
Հովհաննիսյան Մատթեոս (տե՛ս Մատթեոս)
Հովհաննիսյան Սեդրակ (սոցիալ-դեմոկրատ գործիչ Թավրիզում) 413
Հովսեփյան Արտաշես (տե՛ս Մալխաս)
Հովսեփյանց Գարեգին վարդապետ (հետագայում՝ Գարեգին Ա Մեծի Տանն Կիլիկիո) 65
Հունո (հայ հայդուկ) 135
Հուսեյն փաշա (Վանում) 636
Հուսեյն փաշա (Կոսովոյի կուսակալ) 983
Հուսեյն Բագրան (Սաթթար խանի օգնական) 456
Հուսեյն Թոսուն (Թուրք բանաստեղծ, Սաբահէդդինի կուսակից) 183
Հուսեյն Հիլմի փաշա (մեծ վեզիր) 905, 919, 920, 922, 923, 927, 928, 933, 934, 958, 959, 963, 985
Հուսեյն Ջահիդ էֆենդի (իթթիհադական գործիչ) 768, 780, 782, 905, 961, 963
Հուսեյն Ռեմզի փաշա (ապստամբների ձերբակալած զորահրամանատար Ուսկյուպում) 501
Հուսեյն Սիրետ բեյ (երիտթուրք գործիչ) 179
Հրազդան (տե՛ս Արփիարյան Արփիար)
Հրայր Դժոխք (բուն անունով՝ Ղազարյան Արմենակ) (հայդուկապետ) 135, 146, 795
Հրաչ Երվանդ (բուն անունով՝ Յաղուբյան Նշան) (ռամկավար գործիչ) 719

Ղ

Ղազար վարդապետ (ս. Ախբերիկի վանահայր) 321
Ղազարյան Արմենակ (տե՛ս Հրայր Դժոխք)
Ղալիբ բեյ (ոստիկան զորաց գնդապետ Կ. Պոլսում) 983, 986
Ղալիպ պէյ (տե՛ս Ղալիբ բեյ)
Ղասըմ բեկ (քուրդ ցեղապետ Խութում) 151, 157–161, 659, 938

Ճ

Ճանկիլեան (տե՛ս Ջանգյուլյան Հարություն)
Ճէլալ փաշա (Վանի պաշարման զորքերի հրամանատար) 303
Ճիզմէճեան Մանուկ Գ. 212, 221, 229, 230, 271, 272, 621, 753

Մ

Մ. Ուլնեցի (տե՛ս Սիսեոյան Միսաք)
Մալեզյան Վահան (ռամկավար գործիչ) 275, 280, 282, 283, 730, 736, 737, 739, 750, 936, 953
Մալիք Մուչիկալամին (հակամիապետական գործիչ Պարսկաստանում) 428
Մալխաս (Ավագուտ գյուղացի) 160
Մալխաս (բուն անունով՝ Հովսեփյան Արտաշես) (դաշնակցական գործիչ) 147–150, 272, 902, 952
Մայյան Բաղդասար (տե՛ս Գուրգեն)

Մայլեմեդյան Սարգիս (վերակազմյալ հնչակյան գործիչ) 722
Մալումյան Խաչատուր (կեղծանունը՝ Ակնունի Էդուարդ) (դաշնակցական գործիչ) 99, 100, 219, 220, 231, 232, 238, 245–247, 539, 567, 620, 621, 901, 902, 925, 926, 1066
Մակար Ա Թեղուտցի 64
Մակդոնալդ Ռամզեյ (Մեծ Բրիտանիայի Աշխատավորական կուսակցության առաջնորդ) 77
Մահմեդ (սպանված սեիդ՝ իսլամ կրոնավոր Արցախում) 33
Մահմեդ Ալի շահ (Ղաջար) 51, 55, 87, 340, 348, 350, 355, 360, 362, 364, 368, 374, 389, 391, 401, 414, 415, 418–421, 423–438, 443, 447, 449–451, 455, 457, 459–461, 463, 466, 469, 471, 478, 480, 592, 593
Մահմեդ Հուսեյն խան (Սարդար Մուքրե) (քուրդ ցեղապետ Ատրպատականում) 383
Մահմուդ I (օսմանյան սուլթան) 131
Մահմուդ II (օսմանյան սուլթան) 808
Մահմուդ փաշա (Աբդուլ Համիդ II-ի քրոջ ամուսինը) 174, 178, 179, 627
Մահմուդ Էքրեմ բեյ (վակըֆների նախարար) 985
Մահմուդ Շևքեթ փաշա (օսմանյան երկրորդ զորաբանակի հրամանատար) 967, 974–976, 982
Մահմուտ Ջալալէդդին (քուրդ ավազակապետ Արևմտահայաստանում) 939
Մամիկոն (Առինջ գյուղացի, Թուրքերեն ձեռագիր Թերթի թողարկիչ) 209
Մամիկոնյան Վարդան (Ավարայրի ճակատամարտի նահատակ) 650
Մամուրյան Հրանտ (Իզմիրի «Արեւելեան մամուլ» թերթի արտոնատեր) 1068
Մամուրյան Մատթեոս (հրապարակագիր, հասարակական գործիչ) 837
Մանգիր խան (հակամիապետական գործիչ Պարսկաստանում) 428
Մանթաչյան(ց) (Մանթաչև) Ալեքսանդր (մեծ բարեգործ) 87, 639
Մանուկյան Արամ (բուն անունով՝ Հովհաննիսյան Սարգիս) (դաշնակցական գործիչ) 45, 175, 292, 296, 297, 306, 307, 309, 310, 315, 316, 328, 542–544, 567, 568, 619, 625, 664, 665, 819, 823, 899, 900, 949, 989
Մաուզեր Պաուլ և Վիլհելմ եղբայրներ (հրացանի հնարիչներ) 94, 156, 305
Մասեհյան Հովհաննես խան (պարսկահայ պետական գործիչ, թարգմանիչ) 377, 379, 534
(ալ-)Մասուդի (Աբուլ Հասան Ալի իբն ալ-Հուսեյն, արաբ պատմագիր) 154
Մավրոկորտադո (Օսմանյան կայսրության հույն նախարար) 615, 960, 985
Մատթեոս (բուն անունով՝ Հովհաննիսյան Մատթեոս) (դաշնակցական գործիչ Վանում) 144, 293, 303, 328
Մատթեոս Բ Իզմիրլյան 61, 120, 406, 411, 628–630, 666, 671, 679, 681, 682, 695, 696, 704, 707–714, 738, 813, 868, 869, 936, 942, 946, 947
Մատթեոսյան Ա. (Կ. Պոլսի «Նէճաթը միլլէթ» չարաթաթերթի հրատարակիչ) 1067
Մար Շիմոն (նեստորական ասորինե-

րի պատրիարքների ընդհանուր անունը) 117, 120
Մարիամ Աստվածածին (Հիսուսի մայրը) 56, 441, 530, 630, 687, 868
Մարկոս (տե՛ս Շերո)
Մարկով 2-րդ (պետական դումայի սեհարյուրյակային պատգամավոր) 7, 70
Մարմարեան Արսէն 572, 901, 902
Մարտիրոսյան Հայկանուշ (հանգանակիչ հանձնախմբի անդամ Թիֆլիսում) 54
Մարտիրոսյան Հմայակ (պատմաբան) 473
Մարքս Կարլ 509, 895
Մգելաձե Լասո (Վլաս) (կեղծանունը՝ Տրիա Վ.) (մենշևիկ կամավոր Թավրիզում) 433, 475
Մելիք Թոջջար (պարսիկ հարուստ վաճառական) 349
Մելիք-Ազարյան Ալեքսանդր (հասարակական գործիչ Թիֆլիսում) 54, 947
Մելիք-Անդրիասյան Պետրոս (հնչակյան գործիչ Թավրիզում) 413
Մելիք-Շահնազարյան Գևորգ (էսէռ գործիչ) 43
Մելիք-Ջհանյան Մելիք Սարգիս (Քեյվանի գավառակի վերակացու) 481, 482
Մելիք-Ջհանյան Ջհանգիր բեկ (Քեյվանի գավառակի վերակացու) 481, 482
Մելհամէ Նեճիպ փաշա (Օսմանյան կայսրության դեսպանը Ֆրանսիայում) 249
Մելոյան Գարեգին (կեղծանունները՝ Ժիրայր-Վաչե, Վահե) (հնչակյան գործիչ) 228, 727
Մելոյան Ղևոնդ (դաշնակցական գործիչ Վանում) 292, 315
Մելքոն խան (Գրիգորյան-Մելքումյան) (պարսկահայ պետական գործիչ) 377, 378
Մելքոնյան Դավիթ (վերակազմյալ հնչակյանների Կիլիկիայի ներկայացուցիչ) 728
Մելքումյան Արտաշես (դաշնակցական գործիչ) 373
Մեծարենց (Մեծատուրյան) Միսաք (վաղամեռիկ բանաստեղծ) 324
Մեծն Մուրադ (տե՛ս Պոյաճյան Համբարձում)
Մեհմեդ II Ֆաթիհ (օսմանյան սուլթան) 647, 827, 828, 872, 885, 982
Մեհմեդ V Ռեշադ (օսմանյան սուլթան) (տե՛ս նաև Ռեշադ) 978, 982, 985
Մեհմեդ բեյ (միրալայ, Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերի հրամանատար) 358
Մեհմեդ էֆենդի (թուրք պաշտոնյա Վանում) 544
Մեհմեդ էֆենդի (կրոնափոխ թուրք ոստիկանապետ Մուշում) 175, 176
Մեհմեդ Արիֆ փաշա (ծովային նախարար) 615
Մեհմեդ Դալտի (հասանանցի քուրդ ցեղապետ) 151
Մեհմեդ Զիաէդդին էֆենդի (շեյխ-ուլ-իսլամ) 960, 977, 982, 985
Մեհմեդ Էմին (թուրք բանաստեղծ) 522
Մեհմեդ Թալեաթ բեյ (օսմանյան խորհրդարանի փոխնախագահ, ապա՝ ներքին գործերի նախարար, հայոց դահճապետերից) 698, 902, 948, 985
Մեհմեդ Ջևադ բեյ (Աբդուլ Համիդ II-ի ավագ քարտուղար, ապա՝

Ադանայի նահանգապետ) 906
Մեհմեդ Սաբահէդդին (իշխան, Աբդուլ Համիդ II-ի քրոջ որդին) 174, 178–181, 183–185, 202, 208, 231, 237, 238, 245, 248, 317, 442, 500, 510, 553, 555, 602, 604, 626–629, 671–676, 717, 755, 769, 770, 881, 882, 894, 904, 908, 956, 964
Մեհմեդ Սըդըխ (Շամստինանի քուրդ ցեղապետ, շեյխ Ուբայդուլլահի որդին) 147–150
Մեհմեդ Քյամիլ բին Սալիհ փաշա (տե՛ս Քյամիլ փաշա)
Մեհմեդ Ֆազըլ փաշա (ֆերիկ, Պարսկաստան ներխուժած Թուրքական զորքերի ընդհանուր հրամանատար) 361, 382–384, 388
Մենեվիշյան Գաբրիել (Բյուզանդ) (մխիթարյան վարդապետ) 535
Մենշիկով Լեոնիդ (Պետերբուրգի «Նովոյե Վրեմյա» թերթի խմբագիր) 75, 78, 79, 91, 415, 416
Մեջիդ (բելեքցի քուրդ ոճրագործ) 321
Մէհմէտ Ալի շահ (տե՛ս Մահմեդ Ալի շահ)
Մըստո (քուրդ դավադիր մարտիկ հայկական ֆիդայական խմբերում) 159
Միդհատ փաշա (օսմանյան սահմանադրության հեղինակը) 166, 167, 170, 174, 178–181, 191, 195, 196, 251, 257, 263, 492, 497, 504–506, 509, 512, 519, 546, 559, 569, 575, 577, 579, 586, 587, 589, 597, 626, 662, 673, 674, 689, 732, 744, 745, 775, 777, 806, 815, 871, 876, 885, 914, 929, 935, 955
Միլասլի Մուրադ (Սաբահէդդինի կուսակից) 183
Միլհո Էդգար 268
Մինախորյան Վահան (էսէռ գործիչ) 43
Մինաս Մ. (հասարակական գործիչ Կ. Պոլսում) 835
Մինասյան Հայկ (հնչակյան գործիչ) 601
Միսաքյան Ալեքսան (Կ. Պոլսի «Ազդակ» թերթի արտոնատեր) 1065
Միսաքյան Շավարշ (հրապարակագիր, հասարակական գործիչ) 619, 906, 912, 1065
Միր Աբդոլ Հասան Ֆիշանդչի (զինագործ Թավրիզում) 456
Միր Հաշիմ (Թավրիզի Դավաչի թաղի անջումենի ղեկավար) 449, 450, 453, 456, 469, 479
Միրզա բեկ (քուրդ ցեղապետ Խութում) 134, 159
Միրզա Ջաֆար (պարսից զորքերի գերի ընկած հրամանատար) 362
Միրզա Ռեզա խան Արեֆուդդին (Պարսկաստանի դեսպանը Թուրքիայում) 389, 534
Միրզայան Հովսեփ (դաշնակցական գործիչ) 374, 375, 413
Միրզոյան Սեդրակ (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 472
Միրզոյան Գրիգոր (կեղծանունը՝ Սյունի Գրիգոր) (երաժշտագետ, դաշնակցական գործիչ) 38, 952
Միցկևիչ (Կովկասի փոխարքայի օգնական) 57
Միւհէնտիսեան Յովհաննէս (տպարանատէր եւ գրատեսակների հնարիչ Կ. Պոլսում) 787, 844
Միքայելյան Քրիստափոր (ՀՅԴ-ի հիմնադիրներից, «Դրօշակ» ամսաթերթի խմբագիր) 86, 129, 140–145
Մխիթար (Սեբաստացի) (աբբահայր,

Մխիթարյան միաբանության հիմնադիր) 535, 835
Մխիթարյաններ (հայ կաթոլիկ միաբանություն) 535, 835
Մխիթարյան Ստեփանոս եպիսկոպոս 482
Մխո-Շահեն (բուն անունով՝ Սեֆերյան Շահեն) (վերակազմյալ հնչակյան գործիչ, եղբայրասպանության զոհ) 286, 719
Մկրտիչ Ա Խրիմյան (տե՛ս Խրիմյան Հայրիկ)
Մկրտիչյան Լևոն (վերակազմյալ հնչակյան, ապա՝ ռամկավար գործիչ) 230, 722, 736, 737, 739, 973
Մկրտչյան Արմենակ (կեղծանունը՝ Զալլո) (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Մհո Շաքրոյե (Մհոյան Շաքրո) (քուրդ պատմաբան-ակադեմիկոս Խորհրդային Հայաստանում) 129
Մհոյան Շաքրո (տե՛ս Մհո Շաքրոյե)
Մյունաջջի բեյ (օսմանյան հյուպատոսը Նյու Յորքում) 634
Մոզաֆֆերէդդին շահ (Ղաջար) 374, 401, 418, 447, 481
Մոլթքե Հելմուտ Կարլ Բեռնհարտ (կոմս, գեներալ-ֆելդմարշալ, ռազմական տեսաբան) 831
Մոլլա Իդրիս (քուրդ ցեղապետ) 126
Մոլլա Մուսթաֆա Ասրմ (օսմանյան խորհրդարանի անդամ Կ. Պոլսից) 934
Մոհամմեդ Աղա Սեյիդ (մուջտեհիդ Թեհրանում) 375
Մոհանդիս Մեմալիք (արդարադատության նախարար Պարսկաստանում) 471
Մոմթազ Դովլե (Պարսկաստանի մեջլիսի նախագահ) 420
Մոսթեշար Դովլե (Պարսկաստանի պետական գործիչ) 375
Մոսին Սերգեյ Իվանովիչ (հրացանի հնարիչ) 305
Մովսես Խորենացի 59
Մովսիսյան Ռաֆայել (հնչակյան գործիչ) 413, 474
Մորդովցև (պետական դումայի պատվիրակ, բոլշևիկ) 69
Մուավին Դովլե (Պարսկաստանի պետական գործիչ) 414
Մուրահյանյան Աբիկ (Կ. Պոլսի «ճերիտէի չարգիյէ» թերթի խմբագիր) 1063
ալ-Մութավաքքիլ (աբբասյան խալիֆ) 646
Մուլայի Ալի շահ (տե՛ս Մահմեդ Ալի շահ)
Մուխբիր Սալթանե (Պարսկաստանի պետական գործիչ) 393, 394
Մուխթար փաշա (Պետական խորհրդի անդամ) 961, 981
Մուխթար փաշա (զորաբանակի հրամանատար) 960
Մուհամեդ (պայմանական մուսուլմանի անուն) 731
Մուհամմեդ (իբն Աբդալլահ) (իսլամի հիմնադիր) 312, 383, 478, 667
Մուհամմեդզադե (կրթյալ մուսուլման Թիֆլիսում) 57
Մուհամմէտ Ալի շահ (տե՛ս Մահմեդ Ալի շահ)
Մուչեղ (կոփեցի, խմբապետ) 46
Մուչեղ եպիսկոպոս (տե՛ս Սերոբյան Մուչեղ եպիսկոպոս)
Մուչիր Դովլե (Պարսկաստանի պետական գործիչ) 374, 471
Մուսա բեկ (քուրդ ոճրագործ) 134, 159, 938
Մուստաֆա (օսմանյան խորհրդարա-

նի հայասպան պատգամավոր Շապին-Գարահիսարից) 909
Մուստաֆա բեկ (հայդարանցի քուրդ ցեղապետ) 151
Մուստաֆա Ռեշիդ փաշա (մեծ վեզիր) 830
Մուստաֆա Քեմալ (Աթաթուրք) 967
Մուրադ V (օսմանյան սուլթան) (տե՛ս նաև Մուրադ՝ գահաժառանգ) 504, 505, 775, 980, 981, 983, 984
Մուրադ (տե՛ս Պոյաճյան Համբարձում)
Մուրադ (օսմանյան գահաժառանգ) (տե՛ս նաև Մուրադ V) 504
Մուրադ բեյ (Թուրք պատմաբան Փարիզում, 19-րդ դարի վերջ) 166
Մուրադյան Եղիշե վարդապետ 407
Մուրատ (տե՛ս Պոյաճյան Համբարձում)
Մուրզաև Մելքոն (Երրորդ պետական դումայի հայազգի պատգամավոր Ղրիմից) 71
Մուքուրիկ Թաթոս (Մայր աթոռի աշխատող) 66
Մռավյան Ասքանազ (երիտդաշնակցական, ապա՝ բոլշևիկ գործիչ, Խորհրդային Հայաստանի պետական գործիչ) 69
Մտո (Շատախի շրջանի Ծիծանց հայ գյուղացի երիտասարդ) 761
Մևանզադե Ռիֆաթ (Կ. Պոլսի «Սերբեսթի» թերթի արտոնատեր) 927

Յ

Յ. Էլմար (տե՛ս Հովհաննիսյան Հովսեփ)
Յակո (կարսեցի հայ հայդուկ, նահատակված Սուլուխի կռվում) 146
Յակոբ փաշա (տե՛ս Կրճիկյան Հակոբ փաշա)
Յաղուբյան Նչան (տե՛ս Հրաչ Երվանդ)
Յավեր փաշա (զորքերի հրամանատար Վանում) 988, 989
Յատո (Ալաշկերտի շրջանի Խրդբր գյուղից) 760
Յարճանյան Ատոմ (տե՛ս Սիամանթո)
Յացկևիչ (գեներալ, Երևանի ժամանակավոր գեներալ-նահանգապետ) 80
Յովհաննիսեան Յովսէփ (տե՛ս Հովհաննիսյան Հովսեփ)
Յուդա (Հիսուսի աշակերտներից, մատնիչ) 691
Յուսուֆյան Զարեհ (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի արտոնատեր) 1063

Ն

Ն. Ա. (հավանաբար՝ Աղբալյան Նիկոլ) 695
Նադիր աղա (Աբդուլ Համիդ II-ի ներքինապետ) 976
Նազարբեկ(յան) Ավետիս (ՍԴՀԿ-ի հիմնադիրներից) 310, 586, 718, 719, 740
Նազարբեկյան Զաքարիա (խոշոր վաճառական Թավրիզում, պահպանողական) 414
Նազարբեկով (ռուսահպատակ հայ կալվածատեր Ատրպատականում) 355, 382
Նազարյան (տիկին, խմբապետ Միհրանի քույրը) 48
Նազարյան Գասպար (խմբապետ Միհրանի քրոջ որդին, եղբայրա-

սպանության զոհ Յալթայում) 48, 109, 110
Նազարյան Լիպարիտ (Կ. Պոլսի «Բագին» գրական պարբերականի խմբագիր) 1066
Նազարյան(ց) Հրանտ (կեղծանունը՝ Արծվիկ Հրանտ) (բանաստեղծ, «Սուրհանդակ» օրաթերթի խմբագիր) 1064, 1066
Նազարյանց Ստեփանոս (հասարակական գործիչ, Մոսկվայի «Հիսուսափայլ» պարբերականի հիմնադիր և խմբագիր) 839
Նազարյան Ստեփանոս (էսէռ գործիչ) 43
Նազըմ բեյ (բժիշկ, իթթիհադական պարագլուխ) 178, 183, 189, 193, 194, 196, 198, 200, 556, 752
Նազըմ փաշա (Կ. Պոլսում) 533
Նաթանյան Միքայել (ռամկավար գործիչ) 704, 728, 737, 741, 950, 951, 1065
Նաիբ-Մուհամմեդ Աղաի (ֆիդայական ջոկատների հրամանատար Ատրպատականում) 456
Նալբանդյան Գևորգ ծայրագույն վարդապետ (կեղծանունը՝ Ընծայր) (ս. Թադեի վանքի վանահայր) 151
Նալբանդյան Զավեն (տե՛ս Զարևանդ)
Նալբանդյան Միքայել (գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ) 838, 839
Նալբանդյան Վարդուհի 661
Նահում (Թուրքիայի հրեաների մեծ բարբի) 671
Նամըկ Քեմալ (Միդհատ փաշայի գործակից) 505
Նասեր Սալթանե (Պարսկաստանի պետական գործիչ) 418, 458
Նասեր օլ Մոլք (Պարսկաստանի պետական գործիչ) 350, 428
Նասիր-էլ-Սալթանէ (տե՛ս Նասեր Սալթանե)
Նասրէդդին շահ (Ղաջար) 363, 401, 481
Նար-Պէյ Խորէն արքեպիսկոպոս 232
Նեգիր (բելեքցի քուրդ ոճրագործ) 321
Նեմյանով Լ. (ռուսական «Ռեչ» թերթի թղթակիցը Կ. Պոլսում) 675, 768
Նեմցև(յան) Զարեհ (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի խմբագրակազմի անդամ) 1063
Նեջաթի բեյ (երիտթուրք գործիչ) 246
Նեջի էֆենդի (օսմանյան խորհրդարանի ավագագույն անդամ) 906
Նեջիբ բեյ (Կ. Պոլսում) 698
Ներսես (տե՛ս Բեռզիկյան Գրիգոր)
Ներսես Ա Պարթև (Մեծն Ներսես, Հայր Հայրենյաց) 63
Ներսես Ե Աշտարակեցի (Պաշտպան Հայրենյաց) 56, 63
Նժդեհ Գարեգին (բուն անունով՝ Տեր-Հարությունյան Գարեգին) 373
Նիազի բեյ (տե՛ս Ահմեդ Նիազի բեյ)
Նիզամ Սալթանե (Պարսկաստանի պետական գործիչ) 414, 450
Նիթրա (տե՛ս Շահրիկյան Հարություն)
Նիկոլ (վանեցի դաշնակցական արհեստավոր) 293
Նիկոլ Դուման (բուն անունով՝ Տեր-Հովհաննիսյան Նիկողայոս) (անվանի հայդուկ) 46, 47, 109, 118, 619
Նիկոլայ I (Ռոմանով) 832
Նիկոլայ II (Ռոմանով) 35, 51, 52, 67, 73, 87, 90, 92, 95-100, 103, 484, 562, 591

Նիհադ բեյ (տե՛ս Նիհադ Ռեչադ)
Նիհադ Ռեչադ (դոկտոր, Սաբահէդդինի կուսակից) 183, 231
Նիքոլսոն Ա. (Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար) 341
Նշանյան Մեսրոպ վարդապետ 629
Նորատունկյան Գաբրիել էֆենդի (օսմանյան պետական գործիչ) 534, 615, 616, 692, 694, 868, 907, 920, 960, 985
Նորեան Ա. (բուն անունով՝ Միքայելյան Արսեն) 125
Նուբար(յան) Պողոս փաշա (ՀԲԸՄ-ի հիմնադիր, ազգային գործիչ) 282, 641
Նուրի բեյ (Աբդուլ Համիդի դեմ ըմբոստացած զինվորական գործիչ) 490
Նուրի բեյ (ֆինանսների նախարար) 959

Շ

Շալջյան Արմենակ (դաշնակցական գործիչ Վանում) 293
Շահազիզ Սմբատ (գրող) 407
Շահնազար Ա. (Կ. Պոլսի «Ձայն կրթութեան» հանդեսի հրատարակիչ) 1067
Շահնազար(յան) Հովհաննես (Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթի արտոնատեր-խմբագրապետ) 628, 1063
Շահումյան Ստեփան (բոլշևիկ ղեկավար գործիչ) 12–15, 69, 70, 90
Շահպազեան Յակոբ 142, 144, 157
Շահրիկյան Հարություն (կեղծանունները՝ Ատոմ, Նիթրա) (դաշնակցական գործիչ) 38, 45, 111, 141, 567, 619, 774, 776, 861, 926, 1066
Շամսէդդին (Օսմանյան կայսրության դեսպանը Պարսկաստանում) 388
Շանթ Լևոն (բուն անունով՝ Սեղբոսյան Լևոն) (գրող, դաշնակցական գործիչ) 619, 628, 1066
Շապչալ խան (ռուսաստանցի հրեա պարսից արքունիքում) 420
Շավարշ (հնչակյան գործիչ Մալաթիայում) 954
Շատիլով (գեներալ, Կովկասի փոխարքայի օգնական) 57
Շարաֆ բեկ (քրդական մազրիկ ցեղի ցեղապետ) 152
Շաքիր փաշա (քուրդ ցեղապետ Ատրպատականում) 152
Շաքիր փաշա (օսմանյան գլխավոր շտաբի պետ) 491
Շաքրի բեկ (քուրդ աղա Շատախի և Կարճկանի շրջանում) 761
Շեմսի փաշա (Թուրք զինվորի սպանած գեներալ Մանասթրում) 486, 494
Շեյխ Ալիխան (Շուջաա Մամալիք) (քուրդ ցեղապետ Պարսկաստանում) 383
Շեյխ Սալիմ (Թավրիզի անջումենի ղեկավար) 449, 453
Շերո (բուն անունով՝ Մարկոս) (ասորի հայդուկ հայկական ֆիդայական խմբերում) 119
Շեֆ (տե՛ս Աբրահամ)
Շէրիֆ աղա (քուրդ ոճրագործ ցեղապետ) 335
Շիլլեր Յոհան Քրիստոֆ Ֆրիդրիխ (գերմանացի բանաստեղծ) 332
Շիկահեր (Գրիգոր) (տե՛ս Բեռզիկյան Գրիգոր)
Շիչլովա Նինա (ձերբակալված ռուս երիտասարդուհի) 48, 111
Շիշմանյան Հովսեփ (տե՛ս Ծերենց)
Շիշմանյան Շավարշ (հնչակյան գործիչ Եգիպտոսում) 725

Շիշմանյան Ռուբեն (տե՛ս Դերսիմի Քեռի)
Շիրակացի Ժիրայր (տե՛ս Զեմլեքջյան Սիմոն)
Շիրինյան Գամեր (Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի քարտուղար) 709
Շմավոն (բուն անունով՝ Հովսեփյան Շմավոն) (հայ հեղափոխական գործիչ) 145
Շմավոն (տե՛ս Կաֆյան Գաբրիել)
Շուլգին (պետական դումայի խավարամոլ պատգամավոր) 7
Շուջաա Դովլե (Սամադ խան) (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 457
Շուջաա Մամալիք (տե՛ս Շեյխ Ալի-խան)
Շուջաա Նիզամ (Մարանդի նահանգապետ) 469, 477–479

Ո

Ոճրագործ (տե՛ս Աբդուլ Համիդ II)
Ոսկան(յան) Ստեփան (արևմտահայ զարթոնքի գործիչ) 837
Որսորդ (եղբայրասպանության զոհ) 286
Ուբայդուլլահ (չեյխ, քուրդ ցեղապետ) 133, 147
Ութուջյան Կարապետ (խմբագիր և հասարակական գործիչ) 835
Ութուջյան Մանուել (Կ. Պոլսի «Կիլիկիա» թերթի հրատարակիչ) 1067
Ունանյան Կարապետ (կեղծանունը՝ Հարությունյան Գարեգին) (նախիջևանցի դաշնակցական ահաբեկիչ) 47, 109–111
Ունճյան Աբիկ (եղբայրասպանության զոհ Կ. Պոլսում) 286, 719
Ուռչինկթոն (տե՛ս Վաշինգտոն Ջորջ)
Ուսո (բելեքցի քուրդ ոճրագործ) 321

Զ

Զագալյան Գարեգին (տե՛ս Խաժակ Գարեգին)
Զալլո (տե՛ս Մկրտչյան Արմենակ)
Զամուռճյան Հովհաննես (տե՛ս Տերոյենց Հովհաննես)
Զավուչյան Երվանդ (վերակազմյալ հնչակյան գործիչ, «Ձայն հայրենեաց» թերթի արտոնատեր) 719, 10665
Զարթո (ասորի հայդուկ հայկական ֆիդայական խմբերում) 119
Զարուխչյան Մարտիրոս (դաշնակցական ահաբեկիչ) 28
Զբլախյան Ղազարոս (Ազգ. երեսփոխանական ժողովի անդամ) 703
Զելեպան Անդրանիկ 158
Զեմլեքջյան Սիմոն (կեղծանունը՝ Շիրակացի Ժիրայր) («Բիւրակն» թերթի հրատարակիչ, «Ժամանակ» օրաթերթի խմբագիր) 1064, 1065
Զեսլով Գրիգորի (կաբարդինյան գնդի սպանված ռուս զինվոր) 29
Զերազ Մինաս (հասարակական գործիչ) 232, 233, 271, 628, 707
Զիթեչյան Գևորգ (դաշնակցական գործիչ Վանում) 292
Զիթչյան Գարեգին (վերակազմյալ հնչակյան գործիչ, եղբայրասպանության զոհ) 286, 719
Զիլինգարյան Արշավիր (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 472
Զիլինգարյան Արտաշես (տե՛ս Դարբինյան Ռուբեն)
Զիլինգիրյան Գրիգոր (արևմտահայ զարթոնքի գործիչ) 837
Զիլինգիրյան Եղիշե ծայրագույն վարդապետ (Երուսաղեմի պատրիար-

քի Կ. Պոլսի փոխանորդ) 526, 527
Զիպիանի Ամիլկար 268
Զխեիձե Նիկոլայ (վրացի մենշևիկ պարագլուխ) 76
Զխենկելի Ակակի (վրացի մենշևիկ պարագլուխ) 76
Զոպանյան Արշակ (գրող, խմբագիր, հասարակական գործիչ) 64, 232, 259–261, 270, 284, 285, 408, 546, 628, 750, 756, 798, 799, 821–824, 950, 1063
Զորմիսեան Լեւոն 168, 187, 259
Զուգասբզյան Տիգրան (տե՛ս Զավեն Տիգրան)
Զուխաջյան Մատթեոս արքեպիսկոպոս (Կ. Պոլսի պատրիարք, ապա՝ Մատթեոս Ա Ամենայն հայոց կաթողիկոս) 833
Զուպան 895
Զոփուոյան Ռ. (տե՛ս Թադևոսյան Լևոն)

Պ

Պալեաններ (արքունի ճարտարապետների տոհմ Կ. Պոլսում) 787, 838
Պալյան Նիկողայոս (արևմտահայ գարթոնքի գործիչ) 835, 838
Պանիրյան Հայրապետ (դաշնակցական գործիչ Թավրիզում) 403, 413, 425, 429
Պաչուկանիս Ս. (ռուսաստանցի հեղինակ) 341
Պաշտպան Հայրենյաց (տե՛ս Ներսես Ե Աշտարակեցի)
Պապաչա (տե՛ս Թադևոսյան Լևոն)
Պապիկյան Հակոբ (օսմանյան խորհրդարանի իթթիհադական անդամ) 904
Պասկևիչ-Երևանսկի Իվան Ֆեոդորովիչ (կոմս, գեներալ-ֆելդմարշալ) 91
Պատկանյան Ռափայել (բանաստեղծ, հասարակական գործիչ) (տե՛ս նաև Գամառ-Քաթիպա) 796
Պարգև (տե՛ս Բեռզիկյան Գրիգոր)
Պարթևյան Սուրեն (բուն անունով՝ Պարտիզպանյան Սիսակ) (հրապարակագիր, ռամկավար գործիչ) 257, 716, 720, 722, 739, 750, 753–755, 792, 1068
Պարոնյան Հակոբ (մեծ երգիծագիր Կ. Պոլսում) 539
Պարույր (տե՛ս Օզանյան Անդրանիկ)
Պարսամյան Ալես (դաշնակցական գործիչ Վանում) 293, 309
Պարսամյան Մերուժան (գրող և հասարակական գործիչ Կ. Պոլսում) 538
Պարսամյան Սաթենիկ (Պարսամյան Ալեսի քույրը) 309
Պարսամյան Վարդան (խորհրդահայ պատմաբան) 772, 837, 864
Պարտիզակցի Վահան վարդապետ (բուն անունով՝ Տեր-Մինասյան Վահան վարդապետ) 1064
Պարտիզպանյան Սիսակ (տե՛ս Պարթևյան Սուրեն)
Պեչիկթաշլյան Մկրտիչ (բանաստեղծ, ազգային գործիչ) 525, 837
Պետերսոն (Կովկասի փոխարքայի դիվանատան կառավարիչ) 57
Պետիկ (տե՛ս Քյուրդյան Պետրոս)
Պերերինոսով (ռուս չտաբս-կապիտան Թեհրանում) 424
Պէհաէտտին (տոքթ.) (տե՛ս Բեհաէդդին Շաքիր բեյ)
Պիչոն Ստեֆան (Ֆրանսիայի արտգործնախարար) 323, 668

Պիոնյան Կարապետ (Հայկազյան-Թամարյան դպրոցի տնօրեն) 404
Պլատոն (հույն փիլիսոփա) 60
Պլեխանով Գեորգի (ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխներից) 472, 473
Պոթթա (տե՛ս Բոտա Լուիս)
Պոլիցին (գեներալ, Ռուսաստանի գլխավոր շտաբի պետ) 98
Պոխիտոնով (Ռուսաստանի գլխավոր հյուպատոսը Թավրիզում) 457, 461, 462, 479
Պողոս-Պետրոս ԺԲ Սարբաղյան (պատրիարք կաթոլիկ հայոց) 677
Պողոսյան Նիկողայոս (տե՛ս Իշխան)
Պոյաճյան Գրիգոր (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի արտոնատեր) 1063
Պոյաճյան Համբարձում (կեղծանունը՝ Մուրադ կամ Մեծն Մուրադ) (հնչակյան գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 135, 189, 190, 213-215, 217, 220, 228, 230, 261, 578, 599-602, 620, 628, 645, 707, 725, 726, 903, 904, 911, 927
Պոպովյան Հարութիւն ավագ քահանա 66
Պուրիչկևիչ (պետական դումայի սեւհարյուրակային պատգամավոր) 7, 70
Պրեսանսե Ֆրանսիս դը (ֆրանսիացի հասարակական և քաղաքական գործիչ) 113, 206, 246, 247, 268
Պօղոս (Մայր աթոռի այգեպան) 66

Ջ

Ջազո բեկ (քուրդ) 134
Ջալալ Դովլե (Ղաջար) (Մահմեդ Ալի շահի հորեղբորորդին) 420, 428
Ջալալյան Ալեք (դաշնակցական գործիչ Պարսկաստանում) 375
Ջահանգիր աղա (եզդի առաջնորդ Արևելյան Հայաստանում) 123
Ջանգյուլյան Հարութիւն (հնչակյան գործիչ) 599-601, 620, 628, 723, 740
Ջասրմե Ջալիլ (քուրդ գրող Խորհրդային Հայաստանում) 129
Ջավախյան (դաշնակցական գործիչ) 371
Ջավիդ (հրեա, օսմանյան խորհրդարանի անդամ, ապա՝ ֆինանսների նախարար) 985
Ջափարիձե Պրոկոֆի (կեղծանունը՝ Ալյոշա) (բոլշևիկ գործիչ) 14, 76, 90
Ջաֆար աղա (Աբդուլ Համիդ II-ի ներքինապետ) 976
Ջեմալ (թուրք գրող, 19-րդ դարի երկրորդ կես) 166, 167
Ջեջիզյան Հակոբոս Հ. (պրոֆեսոր) 535
Ջիզմեջյան Համբարձում (տե՛ս Հայկունի Արմենակ)
Ջիվանի (բուն անունով՝ Լևոնյան Սերոբ) (անվանի աչուղ) 547
Ջիվելեգյան Հակոբ Տ. (հայկական մամուլի հրատարակիչ Կ. Պոլսում) 1063
Ջիվելեգյան Տիգրան (հայկական մամուլի հրատարակիչ Կ. Պոլսում) 1063
Ջնդո (քրդերի դավադրության զոհ հայ ֆիդայի) 160, 161, 938
Ջումա (քուրդ աղա Շատախի և Կարճկանի շրջանում) 761

Ռ

Ռահիմ խան (Սարդար Նուսրեթ) (զարադաղցի ավագակապետ) 444, 457, 458, 462, 463, 469, 471, 477–482

Ռամի փաշա (ծովակալ, ծովային նախարար) 652

Ռամիչվիլի Նոյ (վրացի մենշևիկ պարագլուխ) 89, 90

Ռաշիտ (քուրդ ավազակապետ) 939

Ռաշմաճյան Տիգրան (մանկավարժ) 404

Ռեմզի բեյ (Թուրքիայի ընդհանուր հյուպատոսը Բաթումում) 388

Ռեշադ (օսմանյան գահաժառանգ, ապա՝ Մեհմեդ V Ռեշադ) (տե՛ս նաև Մեհմեդ V Ռեշադ) 492, 978, 979, 981, 982

Ռեշադ փաշա (օսմանյան խորհրդարանի անդամ) 980

Ռեշիդ (Թուրք գրող, 1830-ական թթ.) 165–167

Ռեշիդ Ակիֆ փաշա (ներքին գործերի նախարար) 615

Ռեջեփ փաշա (զինվորական նախարար) 615, 626

Ռըզկո (ռոչկանցի քուրդ ցեղապետ Ալաչկերտի շրջանում) 151, 760

Ռըքյյու Էլիզե 268

Ռժևսկի (գեներալ, Երևանի գեներալ-նահանգապետ) 80

Ռիզա (քուրդ ավատապետ) 939, 940

Ռիզա փաշա (օսմանյան առաջին զորաբանակի հրամանատար) 652

Ռիզա Թևֆիք բեյ (բժիշկ, իթթիհադական գործիչ) 533, 768, 769

Ռիֆաթ (դոկտոր, Սաբահէդդինի կուսակից) 183

Ռիֆաթ փաշա (արտաքին գործերի նախարար) 624, 960, 985

Ռիֆաթ փաշա (Օսմանյան կայսրության դեսպանը Լոնդոնում) 920

Ռոբերտի դը Էոժեն 268

Ռոմանով Նիկոլայ Նիկոլաևիչ (մեծ իշխան, Կովկասի փոխարքա) 102

Ռոստոմ (բուն անունով՝ Զորյան Ստեփան) (ՀՅԴ հիմնադիրներից) 373–377, 379, 380, 619

Ռուսինյան Նահապետ (արևմտահայ զարթոնքի առաջատարներից) 835, 837, 838

Ս

«Ս.» (քուրդ մտավորական) 137

Ս.-յան (ենթադրյալ հայ Թավրիզում) 468

Սաբահէդդին (տե՛ս Մեհմեդ Սաբահէդդին)

Սաբոնջյան Սահակ (նահատակ Վանում) 312, 313

Սաբրի (դոկտոր, Սաբահէդդինի կուսակից) 183, 246

Սագըզ Հովհաննես փաշա (Աբդուլ Համիդ II-ի անձնական դանձապահ) 907, 979

Սագունի (բուն անունով՝ Գևորգյան Սաղաթել) (եղբայրասպանության զոհ) 286, 718, 719

Սաթթար խան (հեղափոխության ղեկավարը Թավրիզում) 453–456, 459, 462, 463, 466–468, 475, 479

Սաթունյան Գարեգին արքեպիսկոպոս 57, 635

Սաիդ բեյ (մեծ վեզիր Քյամիլ փաշայի որդին) 905

Սաիդ փաշա (մեծ վեզիր, ապա՝ սենատի նախագահ) 491, 493, 495, 501, 559, 677, 982

Սաիդ Ալի (քուրդ ավատապետ շեյխ Ջալալէդդինի որդին) 939
Սաիդ Մահիր (իթթիհադական գործիչ) 183
Սալահէդդին (իշխան, սուլթան Մուրադ V-ի որդին) 981
Սալար Դովլե (Ղաջար) (Մահմեդ Ալի շահի եղբայրը) 348, 349, 467
Սալիհ փաշա (օսմանյան երկրորդ զորաբանակի հրամանատար, ապա՝ ռազմական նախարար) 985
Սահակ (ասորի հայդուկ հայկական ֆիդայական խմբերում) 119
Սահակ Բ Խապայան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո 558, 665
Սահակ բեյ (Երևելի հայ Վանում) 301, 302
Սահակյան Ավետիք (կեղծանունը՝ Հայր Աբրահամ) (դաշնակցական գործիչ) 371
Սահակյան Նատալիա (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Սաղաթելյան Հովհաննես (Երկրորդ և Երրորդ պետական դումաների պատգամավոր, դաշնակցական գործիչ) 5, 69, 70
Սամադ խան (տե՛ս Շուջաա Դովլե)
Սամիփաշազադե Սեզայի բեյ (իթթիհադական գործիչ) 183, 231, 238
Սամսամ Սալթանե (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 435
Սամսոն (տե՛ս Թադևոսյան Ստեփան)
Սամվել (Մամիկոնյան) (հայրասպան) 795
Սայդո (քրդերի դավադրության գոհ հայ ֆիդայի) 160, 161
Սանդալջյան Հարություն (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի խմբագրակազմի անդամ) 1063
Սանդուխտ կույս (Սանատրուկ արքայի դուստր) 547
Սապահ-Գյուլյան Ստեփան (հնչակյան գործիչ, գաղափարախոս) 166, 171, 179, 180, 182, 187–191, 193–200, 220, 232–235, 247, 578, 580, 581, 586, 599–602, 605–607, 620, 628, 718, 719, 740, 756, 815
Սապահէտտին (տե՛ս Մեհմեդ Սաբահէդդին)
Սասունի Կարո (դաշնակցական գործիչ) 129, 136, 573, 574
Սատասի (հույն հակաարդուլհամիդական գործիչ) 179
Սարաջյան Հովսեփ արքեպիսկոպոս 58
Սարաֆեան Կարօ 719
Սարաֆով Բորիս (մակեդոնացի հեղափոխականների պարագլուխ) 116
Սարգիս (հռոմայեցի զորավար) 65
Սարգիս (բուլղարահայ դաշնակցական արհեստավոր Վանում) 293, 302
Սարգիս եպիսկոպոս (Մայր աթոռի միաբան, 19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ) 65
Սարգսյան Մատթեոս (տե՛ս Փարամազ)
Սարգսյան Մարտիրոս (կեղծանունը՝ Գևորգյան Մարտիրոս) (դաշնակցական ահաբեկիչ) 47, 109–111
Սարգսյան Նիկոլ (Հայկազյան-Թամարյան դպրոցի տնօրեն) 404
Սարդար Աֆխամ (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 429
Սարդար Մանսուր (Պարսկաստանի պետական և զինվորական գործիչ) 420

Սարդար Մուքրե (տե՛ս Մահմեդ Հուսեյն խան)
Սարդար Նուսրեթ (տե՛ս Ռահիմ խան)
Սարհատ (բուն անունով՝ Ադամայան Մկրտիչ) (դաշնակցական գործիչ) 36
Սարուխան (տե՛ս Սարուխանյան Առաքել)
Սարուխանյան Առաքել (կեղծանունը՝ Սարուխան) (գրող, պատմաբան, հասարակական գործիչ) 54, 528, 667, 697, 700, 840, 842, 843, 862, 864, 876–878
Սեալդին բեյ (Իզմիրի բանակային շտաբի նախկին պետ) 490
Սեբաստացի Մուրադ (կեղծանունը՝ Հակոբյան, բուն անունով՝ Խրիմյան Մուրադ) (նշանավոր հայդուկ) 156, 373
Սեզայի բեյ (տե՛ս Սամիփաշազադե Սեզայի բեյ)
Սելիմ փաշա (քուրդ ավազակապետ) 658
Սելիմ I Ահեղ (օսմանյան սուլթան) 126
Սեյդո (քրդերի դավադրության զոհ հայ ֆիդայի) 160, 161, 938
Սենեքերիմ Թագավոր (Արծրունի) 56
Սերգո (վրացի մենշևիկ Թավրիզում) 475
Սերենգյուլյան Հովհաննես (տե՛ս Վարդգես)
Սերոբ փաշա (տե՛ս Աղբյուր Սերոբ)
Սերոբյան Մուշեղ եպիսկոպոս 558
Սերվիչեն (բուն անունով՝ Վիչենյան Սերովբե) (բժիշկ, հասարակական գործիչ) 835
Սեֆերյան Շահեն (տե՛ս Մխո-Շահեն)
Սիամանթո (բուն անունով՝ Յարճանյան Ատոմ) (բանաստեղծ) 619, 796, 1066
Սիլվիյան Արմենակ (դաշնակցական ահաբեկիչ) 47, 109, 110
Սիմոնիկ (Մայր աթոռի տնտեսավար) 66
Սիմքեչյան Գևորգ (պոլսահայ մտավորական) 629
Սիպիլ (տե՛ս Ասատուր Զապել)
Սիսեոյան Միսաք (կեղծանունը՝ Մ. Ուլնեցի) 555
Սիսլյան (տե՛ս Ահարոնյան Ավետիս)
Սիւնի Գրիգոր (տե՛ս Միրզոյան Գրիգոր)
Սիփահդար (պետական և զինվորական գործիչ Պարսկաստանում) 457
Սկեպտիկ (տե՛ս Արփիարյան Արփիար)
Սմբատյան Մեսրոպ արքեպիսկոպոս 56
Սմիրնով Կ. (Սոլթան Ահմեդ Միրզայի դաստիարակ) 398
Սմմիկյան Ս. (հնչակյան գործիչ) 719
Սյուրմելյան Տիգրան (Կ. Պոլսի «Սասուն» ամսաթերթի արտոնատեր-խմբագրապետ) 1065, 1067
Սոլթան Ալի խան (պալատի, ապա՝ ներքին գործերի նախարար Պարսկաստանում) 414
Սոլթան Ահմեդ Միրզա (Ղաջար) (Մահմեդ Ալի շահի ավագ որդին) 398, 422
Սոլովյով (ոստիկանական գործակալ Թիֆլիսում) 74
Սոկրատ (հույն փիլիսոփա) 59
Սոսե Մայրիկ (բուն անունով՝ Վարդանյան Սոսե) (հայ ֆիդայի կին, Աղբյուր Սերոբի տիկինը) 156
Սուլեյման բեյ (Կ. Պոլսում) 535

Սուրենյան Ավետիս (Կ. Պոլսի «Մխիթարեան» թերթի արտոնատեր-խմբագրապետ) 1066
Սուրենյան Միսաք (վերակազմյալ հնչակյան գործիչ, Կ. Պոլսի «Առաւօտ» օրաթերթի արտոնատեր) 585, 1067
Սուրենյան Սուրեն (տե՛ս Կտլոզյան Ղազարոս)
Սուրենյանց Գևորգ արքեպիսկոպոս (տե՛ս նաև Գևորգ Ե Սուրենյանց) 55, 56
Սպանդարյան Սպանդար (բոլշևիկ գործիչ) 14
Սպարթալը Ստեփան (օսմանյան խորհրդարանի անդամ) 904
Սվազլը Միհրան (վերակազմյալ հնչակյան գործիչ) 1065
Սվաճյան Հարութիւն (Կ. Պոլսի «Մեղու» հանդեսի հիմնադիր և խմբագիր, արևմտահայ գարթոնքի գործիչ) 130, 837, 839
Ստալին (բուն անունը՝ Ջուղաշվիլի Իոսիֆ Վիսսարիոնովիչ) 14
Ստարոսելսկի (Քութայիսի նահանգապետ) 79
Ստեփանյան Խորեն (Էսէռ գործիչ) 43
Ստեփանյան Կարապետ (բժիշկ, հասարակական գործիչ Թիֆլիսում) 54
Ստեփանյան Հայկ (Էսէռ գործիչ) 43
Ստեփանյան Հարութիւն (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Ստեփանյան Ստեփան (Էսէռ գործիչ) 43
Ստեփանյան Ստեփան (տե՛ս Բալաջան)
Ստեփանոս Նախավկա (առաջին սարկավագը) 444
Ստոլիպին Պյոտր Արկադևիչ (Ռուսաստանի վարչապետ) 4, 7, 8, 10, 11, 20, 23, 29, 30, 67, 73-75, 80-83, 85-87, 99-105, 107, 109, 110, 112, 389, 415, 435, 473, 618
Սրմաքեչխանյան Երվանդ (կեղծանունը՝ Երուխան) 254, 796, 804, 949, 963, 970, 1063
Սրվանձտյանց Համազասպ (դաշնակցական ֆիդայի) 36
Սևակ Ռուբեն (բուն անունով՝ Զիլինգիրյան Ռուբեն) բանաստեղծ 1064

Վ

Վահան-Կորյուն վարդապետ (Մայր աթոռի սրճեփ) 66
Վահե (տե՛ս Մելոյան Գարեգին)
Վահե (տե՛ս Արզույան Ալեքսան)
Վամպերի Արմինիուս (հունգարացի արևելագետ) 895
Վանա Իշխան (տե՛ս Իշխան)
Վանդերվելդե Էմիլ (բելգիացի սոցիալիստ պարագլուխ) 268
Վաշինգտոն Ջորջ (ԱՄՆ-ի առաջին նախագահը) 506
Վաչե (տե՛ս Մելոյան Գարեգին)
Վասակունի (տե՛ս Եղիկյան Գրիգոր)
Վասիլ (դաղախեցի, միհրանական, եղբայրասպանության զոհ Թիֆլիսում) 47
Վարանդյան Միքայել (բուն անունով՝ Հովհաննիսյան Միքայել) (ՀՅ Դաշնակցության պատմաբան և տեսաբան) 30, 77, 133, 237, 305, 320, 323, 368-372, 454, 565
Վարդ-Պատրիկյան Հակոբ (հնչակյան գործիչ) 600
Վարդազարյանց Բագրատ վարդապետ 394, 640
Վարդան (տե՛ս Խանասորի Վարդան)

Վարդան վարդապետ (բուն անունով՝ Հակոբյան Հեսու) (Մշո ս. Կարապետի վանքի վանահայր) 146
Վարդանյան Սերոբ (տե՛ս Աղբյուր Սերոբ)
Վարդանյան Ֆլորա (հնչակյան գործիչ) 474
Վարդապետյան (միհրանական, եղբայրասպանության զոհ Արմավիրում) 47
Վարդգես (բուն անունով՝ Սերենգյուլյան Հովհաննես) դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ 567, 619, 904, 909, 911, 912, 968
Վարդերեսյան Գաբրիել (տե՛ս Քեչիչյան Միհրան)
Վարժապետյան Հակոբ (Կ. Պոլսի «Ճերիտէի չարգիյէ» թերթի խմբագիր և պատասխանատու տնօրեն) 1063
Վարժապետյան Ներսես արքեպիսկոպոս 232, 681, 694
Վարժապետյան Սերոբե (Կ. Պոլսի «Աւետաբեր» թերթի խմբագիր) 1062
Վարուժան Դանիել (բուն անունով՝ Զպուքքյարյան Դանիել) (բանաստեղծ) 619, 798, 799
Վեթո (տե՛ս Թեքեյան Վահան)
Վելիչկո (Թիֆլիսի «Կավկազ» թերթի խմբագիր) 81
Վեհապետյան Հարություն արքեպիսկոպոս 557
Վեհիբ բեյ (երիտթուրք գործիչ Վանում) 543, 659, 664, 822, 937
Վէհիբ (տե՛ս Վեհիբ բեյ)
Վերմիշյան Քրիստափոր (հասարակական գործիչ Թիֆլիսում) 54
Վիչենյան Սերոբե (տե՛ս Սերվիչեն)
Վիտուլևիչ (ռուսական զորամասի հրամանատար Թավրիզում) 461
Վոսուղ Դովլե (Պարսկաստանի պետական գործիչ) 375
Վորոնցով-Դաշկով Իլարիոն Իվանովիչ (կոմս, գեներալ-ադյուտանտ, Կովկասի փոխարքա) 11, 54, 57, 73–75, 78–86, 88–90, 92–98, 100–109, 112
Վորոնցովա-Դաշկովա Ելիզավետա Անդրեևնա (կոմսուհի, Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի տիկինը) 57, 74, 81
Վռամյան Արշակ (բուն անունով՝ Դերձակյան Օննիկ) (դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 371, 373, 619, 707, 989
Վրացյան Սիմոն (դաշնակցական գործիչ) 290

Տ

Տալար (օսմանյան խորհրդարանի անդամ) 981
Տաղավարյան Նազարեթ (բժիշկ, ռամկավար գործիչ) 282, 904
Տամատ (տե՛ս Տամատյան Միհրան)
Տամատյան Միհրան (հայդուկ, հնչակյան, վերակազմյալ հնչակյան, ապա՝ ռամկավար գործիչ) 135, 218, 228, 230, 282, 286, 599, 601, 720–722, 724–728, 734–737, 739, 748, 750
Տամատյան Ս. (Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի հիմնադիր) 1063
Տամատյան Քերովբե («Օսմանյան սահմանադրական ակումբի» ներկայացուցիչ) 628
Տատգիրիձե (գեներալ, Թուրքական

հրետանային զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ) 652
Տատեան Յարութիւն (Արթին) փաշա (Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի օգնական) 787, 869
Տատեաններ (ամիրաների տոհմ Կ. Պոլսում) 787
Տատրակ (տե՛ս Տեր-Կարապետյան Գեղամ)
Տել Վիլհելմ (Շվեյցարիայի ազգային հերոսը) 332, 333
Տեր Մեսրոպ (Վանի առաջնորդական փոխանորդ) 540, 541
Տեր-Ավետիքյան Ստեփան (Երկրորդ պետական դումայի պատգամավոր) 5
Տեր-Եղիայան Զավեն ծայրագույն վարդապետ 123, 635
Տեր-Կարապետյան Գեղամ (կեղծանունները՝ Մչո Գեղամ, Տատրակ) (դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 70, 141, 545, 903, 904, 907, 926
Տեր-Հակոբյան Արմենակ (Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի խմբագիր) 1065
Տեր-Հակոբյան Հակոբ (Կ. Պոլսի «Օրագիր» թերթի խմբագիր) 1067
Տեր-Հակոբյան Տիգրան (կեղծանունը՝ Դերվիշ) (սոցիալ-դեմոկրատ գործիչ Թավրիզում) 413, 472
Տեր-Ղուկասյան Մարտին (Թիֆլիսահայ կամավոր Թավրիզում) 475
Տեր-Մարկոսյան Արշակ (դոկտոր, վերակազմյալ հնչակյան գործիչ) 719
Տեր-Մարտիրոսյան Հովհաննես (տե՛ս Ա-Դօ)
Տեր-Մինասյան Ռուբեն (բուն անունով՝ Տեր-Մինասյան Մինաս) (դաշնակցական գործիչ) 115, 123, 141, 152, 154, 155, 175, 176, 306, 307, 519, 539, 543-545, 569-571, 618, 659, 662-665, 705, 706, 757, 758, 817, 819, 908, 931, 937, 948, 949
Տեր-Մինասյան Վահան վարդապետ (տե՛ս Պարտիզակցի Վահան վարդապետ)
Տեր-Մկրտչյան Կարապետ ծայրագույն վարդապետ (ապա՝ եպիսկոպոս) 66, 393, 406, 411, 426, 439-441, 443, 450, 462, 467-469, 477-480
Տեր-Պետրոսյան Սիմոն (տե՛ս Կամո)
Տեր-Պողոսյան Սամսոն (Ռաֆֆու «Խենթը») 795, 800, 802
Տեր-Սահակյան Տիգրան (կեղծանունը՝ Զարմայր) (նախկին դաշնակցական ահաբեկիչ) 43
Տեր-Սարգսյան Արմենակ (Էսէռ գործիչ) 43
Տեր-Ստեփանյան (բժիշկ, դաշնակցական գործիչ Պարսկաստանում) 375
Տեր-Վարդանյան Ալեքսան (հնչակյան գործիչ Թավրիզում) 408, 413
Տեր-Օհանյան Մ. («Մշակ» թերթի Կրասնովոդսկի թղթակից, եղբայրասպանության զոհ) 287
Տերոյենց Հովհաննես (Զամուռճյան Հովհաննես) (Կ. Պոլսի պահպանողականների ղեկավար, «Երեւակ» թերթի հրատարակիչ) 838
Տերունյան Մաղաքիա եպիսկոպոս 703
Տերտերյան Գասպար (լիբանանահայ իրավագետ) 875
Տէր-Մկրտիչեան Երուանդ 56, 58
Տէր-Մկրտչեան Կարապետ եպիսկոպոս (տե՛ս Տեր-Մկրտչյան Կարա-

պետ ծայրագույն վարդապետ)
Տիգրան (Իչխանի զինակիցներից) 117
Տիգրան Բ Մեծ (Արտաշիսյան) 650
Տիգրանյան Մկրտիչ եպիսկոպոս 130, 131
Տիգրանյան Սիրական (Երկրորդ պետական դումայի պատգամավոր, դաշնակցական գործիչ) 5, 565, 569
Տիզենհաուզեն (կոմս, Երևանի գեներալ-նահանգապետ) 56
Տիխոմիրով Լև (պետական դումայի խավարամոլ պատգամավոր) 7
Տիմոշկին (պետական դումայի սևհարյուրյակային պատգամավոր) 70
Տիրան (կեղծանունը՝ Հայրիկ) (բուլդարահայ դաշնակցական Վանում) 302
Տրիա Վ. (տե՛ս Մգելաձե Լասո)
Տրոնով (պետական դումայի պատվիրակ, բոլշևիկ) 69

Ր

Ռաֆֆի (բուն անունով՝ Մելիք-Հակոբյան Հակոբ) (հայ մեծ վիպագիր) 404, 408, 795, 796, 800, 802
Ռիզա Թևֆիք պէյ (տե՛ս Ռիզա Թևֆիք բեյ)

Ց

Ցիս (Կովկասի ոստիկանապետ) 36

Փ

Փալագաչյան Հովնան (Կ. Պոլսի «Գարուն» թերթի արտոնատեր) 1065
Փայլակեան Աղդէ քահանայ 836
Փանոսյան Կարապետ (Կ. Պոլսի «Մանզումէի էֆքեար» թերթի խմբագիր և հասարակական գործիչ) 839, 1062
Փաստրմաջյան Գարեգին (տե՛ս Արմեն Գարո)
Փարամազ (բուն անունով՝ Սարգսյան Մատթեոս) (հնչակյան պարագլուխ) 620
Փարսադանյան Անահիտ (դաշնակցական ահաբեկիչ) 47, 109, 110
Փափազյան Երվանդ (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Փափազյան Լևոն (ռամկավար գործիչ) 739
Փափազյան Մաչտոց վարդապետ 407
Փափազյան Վահան (կեղծանունները՝ Բժիշկ, Կոմս, Լիլա) (դաշնակցական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ) 117, 133, 134, 145, 150–152, 175, 178, 246, 292, 293, 297, 301, 304, 305, 308, 315, 316, 328, 488, 543, 566–568, 570, 625, 793, 899, 900, 903, 904, 905, 907, 917, 921, 924, 927, 933, 934, 967–969, 974, 975, 1066, 1067
Փափազյան Վրթանես (գրող) 407
Փեհրիզյան Հուսիկ քահանա (Վանում) 313
Փերտահճյան Երվանդ վարդապետ 944
Փիլոսյան Վռամ (սոցիալ-դեմոկրատ գործիչ) 413, 472
Փոլատեան Անդրանիկ Լ. 61
Փորթուգալյան Մկրտիչ (Մարսելի «Արմենիա» թերթի հիմնադիր և խմբագիր) 253, 254, 271, 687, 688, 700, 778

Ք

Քալանթար(յան) Ալեքսանդր (Թիֆլիսի «Մշակ» օրաթերթի խմբագրապետ) 54, 61, 62, 553, 586, 654, 738
Քաջբերունի Գագիկ (կեղծանունը՝ Էլվենտ) (ՀՅԴ-ից հեռացած գործիչ) 597
Քասիմ (տե՛ս Գոչունյան Միսաք)
Քեամիլ փաշա (տե՛ս Քյամիլ փաշա)
Քելեկյան Տիրան (ռամկավար գործիչ) 739
Քենան փաշա (աքսորական Բուրսայում) 611
Քեչիչյան Միհրան (կեղծանունը՝ Վարդերեսյան Գաբրիել) (խմբապետ, միհրանական հոսանքի ղեկավար) 44–48, 109
Քեոսե բինբաշի (Մուշում թուրքական զորքերի հրամանատար) 175
Քեոր Հուսեյն (քուրդ ավազակապետ) 658
Քեչյան Աշոտ Բ. (Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթի խմբագիր) 1063
Քեչյան Բյուզանդ (Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթի արտոնատեր-խմբագրապետ) 700, 1063
Քեչյան Պարույր (Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթի խմբագիր) 1063
Քերեսթեջյան Գևորգ արքեպիսկոպոս (ապա՝ Գևորգ Դ Ամենայն հայոց կաթողիկոս) 868
Քիյառ Պիեռ (ֆրանսիացի հասարակական գործիչ) 246, 268, 323, 346
Քինե Վիտալ (ֆրանսիացի հայասեր գործիչ) 895
Քիրիչյան Լևոն (տե՛ս Լարենց Լևոն)
Քիւրքճեան Ռ. Յ. (տպարանատեր Կ. Պոլսում) 844
Քյամիլ փաշա (մեծ վեզիր) 606, 614–616, 677, 711, 806, 882, 905, 907, 919, 927, 961
Քյուչյուկ Սաիդ փաշա (սենատի նախագահ) 969
Քյուրդյան Պետրոս (կեղծանունը՝ Պետիկ) (Կ. Պոլսի «Գարտաշլըգ» և «Պայքար» թերթերի հրատարակիչ) 1067
Քյուրքչյան Վահան (Կահիրեի «Լուսաբեր» թերթի խմբագիր) 274
Քոչար Մերի (խորհրդահայ թուրքագետ) 167, 187
Քոչոև (ասորի, Գողթնի ինքնապաշտպանության ղեկավարներից) 122
Քրոմուէլ (Կրոմվել) Օլիվեր (Անգլիայի պետական գործիչ) 506

Օ

Օ'Գրանդի (բրիտանացի սոցիալիստ պարագլուխ) 323
Օգանյան Անդրանիկ (Անդրանիկ, կեղծանունը՝ Պարույր) (մեծ հայդուկապետ, ազգային հերոս, գեներալ) 122, 156, 158, 159, 164, 176, 290–292, 305, 324, 571, 572, 651, 723, 795, 900–902
Օկսանին (Պետերբուրգի «Զեմշչինա» թերթի խմբագիր) 80
Օհանջանյան Համո (Համազասպ) (բժիշկ, դաշնակցական գործիչ) 371
Օպոչինին Վ. (հրապարակագիր) 90, 91
Օսման I (սուլթան, Օսմանյան պետության հիմնադիր) 257, 512, 993
Օսման բեյ (իթթիհադական գործիչ Նիազի բեյի եղբայրը) 535
Օսման փաշա (Աբդուլ Համիդ II-ին հավատարիմ զորահրամանատար) 490, 501

Օտյան Գրիգոր (արևմտահայ դարթոնքի գործիչ) 505, 615, 787, 835
Օտյան Երվանդ (կեղծանունը՝ Երօտ) (հրապարակագիր, անվանի երգիծաբան) 270, 628, 737, 1063–1065
Օրխան II (օսմանյան սուլթան) 646
Օրմանյան Մաղաքիա եպիսկոպոս (ապա՝ արքեպիսկոպոս) 51, 56, 59, 526, 527, 530, 630, 677–699, 701–704, 708, 709, 837, 841–843, 864, 869, 870

Ֆ

Ֆազիլ բեյ (տե՛ս Ահմեդ Ֆազիլ բեյ)
Ֆաթիհ (քուրդ ավատապետ) 939
Ֆաթհի (ալմանցի քուրդ ցեղապետ) 151
Ֆահիմ (հասանանցի քուրդ ավազակ) 316
Ֆավոն Ժորժ (Ժնևի Արմատական կուսակցության պարագլուխ) 268
Ֆարամազ (հայկական գյուղերի բռնատեր) 931
Ֆարման Ֆարման (պարսիկ զորահրամանատար) 381, 382, 389
Ֆեթհի բեյ (հազարապետ Կ. Պոլսում) 983
Ֆեթհի փաշա (Օսմանյան կայսրության դեսպանը Սերբիայում) 657
Ֆեներջյան Մարտիկ (դաշնակցական գործիչ Թավրիզում) 413
Ֆերիդ (Վանում թուրքական զորքերի հրամանատար) 306, 318
Ֆերիդ փաշա (մեծ վեզիր) 491
Ֆերիդ փաշա (Վանի կուսակալ) 988
Ֆէթհի պէյ (հազարապետ) 983
Ֆէյզուլլահ (քուրդ ավատապետ) 939, 940
Ֆուադ (թուրք գրող, 19-րդ դարի երկրորդ կես) 166, 167
Ֆուադ փաշա (Աբդուլ Համիդ II-ի աքսորած) 534, 626, 627
Ֆուադ փաշա (մեծ վեզիր սուլթան Աբդուլ Մեջիդի ժամանակաշրջանում) 836
Ֆուլտոն (ծովակալ, Միջերկրական ծովում բրիտանական նավատորմի հրամանատար) 492
Ֆրադուիս (հույն հակաաբդուլհամիդական գործիչ) 178
Ֆրանգյան Երվանդ 59, 60, 63
Ֆրապան Իլգե (հայասեր գերմանուհի) 268, 332–336
Ֆրեյդուն (պարսիկ հակամիապետական մեծահարուստ Թեհրանում, Մուշիր Դովլեի որդին) 374
Ֆեզի բեյ (օսմանյան հյուպատոսը Թիֆլիսում) 637

Акимкин Н. А. (ռուսաստանցի պատմաբան) 343
Алиев А. А. (խորհրդային պատմաբան) 752
Алиев Г. З. (խորհրդային պատմաբան) 524, 758
Алькаев Л. О. (խորհրդային պատմաբան) 522
Арабаджян З. А. (խորհրդահայ պատմաբան) 454, 456
Атрпет (տե՛ս Ատրպետ)
Бикерман И. М. (ռուսաստանցի պատմաբան) 357, 544
Габидуллин Х. З. (խորհրդային

պատմաբան) 511
Голобородько Н. Н. (տե՛ս Գոլոբոբոդկո Նիկոլայ Նիկոլաևիչ)
Голубинов С. П. 454
Гурко-Кряжин В. А. (տե՛ս Գուրկո-Կրյաժին Վ. Ա.)

Зеленский С. П. (ռուս ժողովրդագետ) 121

Иванов М. С. (ռուս պատմաբան) 341, 343, 454, 456
Иранский С. (ռուս պատմաբան) 419, 423, 424, 459, 475

Каджары (արքայատոհմ Պարսկաստանում) 454
Кейзер Ж. (Թուրքագետ) 831
Ключников Ю. В. (ռուս պատմաբան) 341
Колесникова Н. Н. (տե՛ս Կոլեսնիկովա Նադեժդա Նիկոլաևնա)
Кочар Мери (տե՛ս Քոչար Մերի)
Куртейл П. де (Թուրքագետ) 830

Люксембург М. А. (ռուսաստանցի պատմաբան) 343

Мар-Юханна И. И. (ասորի պատմաբան) 118
Маркс Карл (տե՛ս Մարքս Կարլ)
Мартиросян А. У. (տե՛ս Մարտիրոսյան Հմայակ)
Матвеев (Бар Батай) К. П. (ասորի պատմաբան) 118
Мезиер А. В. (ռուսաստանցի պատմաբան) 499
Мельник (ռուսաստանցի պատմաբան) 484
Миллер Анатолий Филиппович (ռուս հրեա պատմաբան) 167, 528, 960, 967, 974, 978, 979

Новичев А. Д. (ռուսաստանցի պատմաբան) 488, 903, 905

Павлович М. (ռուսաստանցի պատմաբան) 419, 423, 424, 459, 475
Петросян Юрий Ашотович (պատմաբան) 167, 169, 174, 178, 179, 219, 231, 876, 877
Плеханов Г. В. (տե՛ս Պլեխանով Գեորգի)

Рахим хан Сардар (տե՛ս Ռահիմ խան)
Розен Д. Т. (ռուսաստանցի պատմաբան) 830

С. (մենչևիկ գործիչ) 597
Сабанин А. (ռուսաստանցի պատմաբան) 341
Самойлов Ф. И. (ռուս հեղինակ) 68

Триа В. (տե՛ս Մգելաձե Լասո)

Убичин А. (ռուս Թուրքագետ) 830

Черменский Е. Д. (ռուս պատմաբան) 21

Шабанов Ф. (խորհրդային Թուրքագետ) 830
Шитов В. (ռուս պատմաբան) 454

Эйвазов П. (ասորի պատմաբան) 120
Энгельс Фридрих (գերմանացի փիլիսոփա, մարքսիզմի հիմնադիրներից) 509

Юст К. (Անատոլիայի մամուլի մասնագետ) 781, 784

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբաղա (գավառակ Վանի նահանգում) 141, 314
Ադա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ադաբադ (Թավրիզի մերձակայքում) 462
Ադաբազար 791, 1068
Ադանա 558, 666, 728, 902, 906, 962, 989, 1068
Ադրիանապոլիս (տե՛ս նաև Էդիրնե) 494, 610, 959
Ազատության Հրապարակ (Սալոնիկում) 612
Աթենք 884, 889
Ալա-Ղափու (Թաղամաս Թավրիզում) 460
«Ալադին» պալատ (Սալոնիկում) 984
Ալական լեռ 151
Ալահի (գյուղ Գողթնում) 122
Ալաչկերտ 134, 135, 267, 760
Ալավերդի 16
Ալբանիա 243, 296, 648, 675, 775, 805
Ալբիստան 943
Ալեքսանդրապոլ 5, 28, 46, 252, 253, 323, 419, 458
Ալեքսանդրեթի ծոց 652
Ալեքսանդրիա 55, 225, 274, 641, 687, 718, 721, 722, 724, 727, 735-737, 739, 742
Ալթայ 646
Ալժիր (տե՛ս նաև Algérie) 667
Ալղիա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ալչամուլք (հայկական գյուղ Թավրիզի մերձակայքում) 444
Ալջավազ (գավառակ Վասպուրականում) 636
Ախալցխա 5, 46
Ախալքալաք 5
Ախյամ (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Ախուրեան գետ 323, 324, 353, 356, 357, 392-394, 419, 424, 447, 455, 480, 639, 984
Ակն 760, 943, 944
Ակրբու թաղ (Վանում) 313
Աղաբադ (Թավրիզի մերձակայքում) 462
Աղախան Միրփանջ (չրջան Ուրմիայի գավառում) 353
Աղաղան (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Աղաջարի (գյուղ Մարաղայի գավառում) 446
Աղբակ (գավառ) 636
Աղբեգլու (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Աղեքսանդրիա (տե՛ս Ալեքսանդրիա)
Աղթամար 851, 867, 871
Աղջաղալու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Աղվեսաձոր (թաղ Վանում) 304
Ամասիա 540, 791, 1068
Ամերիկա (տե՛ս նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 230, 237, 242, 249, 281, 282, 316, 407, 585, 588, 631, 633, 639, 718, 720, 728, 737, 742, 946, 947
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (տե՛ս նաև Ամերիկա) 353, 395, 440, 694, 720, 936

Ամերիկաներ (տե՛ս նաև Ամերիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 873, 946
Ամիրագրդ (Թաղ Թավրիզում) 453, 461
Ամրաղուլ (գյուղ Ղարաղաղի գավառում) 446
Այա-Սոֆիա մզկիթ 956
Այգեստան (Վան) 292, 295, 299, 301–305, 312, 316, 328, 988
Այյան (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Այնախոճա (գյուղ Արևմտահայաստանում) 940
Այնթապ 555
Այուն (գյուղ Սալմաստի գավառում) 445
Անատոլիա 193, 646, 762, 776, 781, 784, 917, 930
Անատոլու (տե՛ս Անատոլիա)
Անգլիա (տե՛ս նաև Մեծ Բրիտանիա) 250, 338, 340, 343–346, 348, 352, 422, 426, 452, 649, 666, 807, 836, 919, 936
Անդի (գավառամաս Դաղստանում) 84
Անդրկասպյան երկրներ 171
Անդրկովկաս 5, 9, 11, 14, 18, 27, 29, 31, 32, 41, 42, 68, 70, 92, 95, 98–100, 108, 114, 121, 122, 277, 444, 464, 475, 547, 553, 617, 632, 635, 636, 638, 717, 738
Աչուրադեհ (Նավահանգիստ Պարսկաստանում՝ Կասպից ծովի ափին) 431
Աչրաֆ (գյուղ Ղարաղաղի գավառում) 446
«Ապառաժ» (տե՛ս Արցախ, Ղարաբաղ)
Առաջավոր Ասիա 119
Առէն (գյուղ Վասպուրականում) 636
Առինջ (գյուղ Տարոնում) 209
Առնչկուս (գյուղ Վասպուրականում) 636
Ասիա 341, 473, 486, 752, 766
Ասիական Թուրքիա 652, 808, 898
Ասլանիկ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Ասորեստան 117
Աստարա 390
Աստրախան 89, 354, 947
Ասրան (գյուղ Ղարաղաղի գավառում) 446
Ավազուտ (գյուղ Մշո դաշտում) 160
Ավանց (գյուղ Վանա լճի ափին) 317, 320
Ավաջուղ (գյուղ Մակուի գավառում) 445
Ավարսկ (գավառամաս Դաղստանում) 84
Ավգյան ախոռներ (Հունական դիցաբանության մեջ) 789
Ավստրիա (տե՛ս նաև Ավստրո-Հունգարիա) 836, 881
Ավստրո-Հունգարիա (տե՛ս նաև Ավստրիա) 57, 385, 483, 484, 495, 666, 775, 805, 807, 809, 880, 881, 896, 911
Ատանա (տե՛ս Ադանա)
Ատրպատական 66, 119, 147, 152, 353–355, 357, 358, 361, 371, 373, 380–383, 385–387, 389, 392–394, 397, 398, 402–409, 411–413, 421, 426, 428, 435–437, 439, 441, 443–445, 447–450, 452, 454, 455, 457, 458, 462, 464, 472, 477, 478, 480, 482
Արաբիա 194, 243, 553, 675, 775, 808, 962
Արաբիստան (տե՛ս Արաբիա)

Արաբկիր 760
Արամյան գրադարան (Թավրիզում) 406
Արամյան դպրոց (Թավրիզում) 403, 404, 406
Արարատ 56, 58, 64, 65, 124, 271, 554, 622, 693, 696, 701, 702, 841, 870, 872, 874, 875, 905, 907, 918, 947
Արարատյան դաշտ 409
Արարուց (գյուղ Վասպուրականում) 313
Արաքս գետ 390, 444, 475, 480, 1067
Արդաբիլ (գավառ և քաղաք Ատրպատականում) 352, 444, 446, 458
Արդամետ (գյուղ Վանի գավառում) 317
Արդոնք (հայկական գյուղ Տարոնում) 160
Արզնի (գյուղ Կոտայքի մարզում) 121
Արկադիա (չրջան Հունաստանում) 888
Արճակ (գյուղախումբ Վասպուրականում) 314, 320
Արճեշ (գավառ Վանի նահանգում) 636
Արճրա (գյուղ Վասպուրականում) 636
Արմաչի դպրեվանք 683, 713
Արմավիր (քաղաք Հյուսիսային Կովկասում) 47, 48, 104
Արմենիա (տե՛ս նաև Հայաստան) 219, 237, 238, 253, 254, 688, 700, 701, 778, 841
Արչակաւան 789
Արցախ (տե՛ս նաև Ղարաբաղ) 33
Արք (Թավրիզի միջնաբերդը) 447, 455, 465, 479
«Արևելյան» դպրոց (Փարիզում) 835
Արևելյան Հայաստան 120, 409
Արևելյան Ռումելիա (տե՛ս նաև Ռումելիա) 805
Արևելք (տե՛ս նաև Լևանտ, Orient) 372, 840
Արևմուտք 202, 234, 512, 875
Արևմտահայաստան (Արևմտյան Հայաստան, Երկիր, Թուրքահայաստան, Թուրքական Հայաստան, Մայր երկիր, Վաթան, Տաճկահայաստան, Տաճկա-Հայաստան) (տե՛ս նաև Հայաստան) 3, 27, 54, 92, 93, 114, 117, 118, 128, 132, 140, 142, 145, 163, 164, 167, 212, 224, 225, 228, 254, 255, 276, 277, 289-292, 295, 299, 313, 318, 324, 326, 329, 330, 359, 373, 441, 539, 547, 584, 617, 619, 622, 632, 634, 635, 638, 641, 642, 663, 665, 686, 702, 705, 706, 717, 719, 721, 722, 724, 726, 728, 729, 760, 762, 771, 774, 786, 791, 816, 818, 863, 892, 895, 915, 917, 920, 954, 962, 1067, 1068
Արևմտյան Եվրոպա 16, 837
Աւարայր 1067
Աւետեաց երկիր (տե՛ս նաև Պաղեստին) 58
Աֆղանստան 338, 342, 344
Աֆրիկա 202, 473

Բ

Բաբառու (գյուղ Բարանդուզի գավառում) 386, 440, 445
Բաբերդ 902
Բագու (տե՛ս Բաքու)
Բաթում 121, 208, 287, 388, 631, 637, 639, 642
Բալախանի 13
Բալանիչ (գյուղ Բարանդուզի գավառում) 446
Բալբքլը (հայոց գերեզմանատան վայր Կ. Պոլսում) 527

Բալկաններ (Բալկանյան թերակղզի) 187, 193, 205, 484, 494, 604, 646, 659, 809, 889
Բալու 126
Բախտիարիա (շրջան Պարսկաստանում) 435
Բահարիստան (Պարսկաստանի մեջլիսի պալատը) 362, 423
Բաղբայլու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Բաղդադ 339, 342, 344, 377, 646
Բաղեչ (տե՛ս նաև Բիթլիս) 126, 291, 293, 326, 392, 625, 642, 643, 728, 931, 945
Բաղեչահ (այգի Թեհրանի մերձակայքում) 423
Բաղեչուման (Թավրիզի կառավարչապետարան) 463
Բայազետ 151, 267, 642
Բայիլովի բանտ (Բաքվում) 70
Բաչգալա (գավառ) 149
Բասեն 134
Բաստիլ(իա) (բանտ Փարիզում) 186, 248
Բասրա 344
Բարանդուզ (գավառ) 355, 387, 440, 444, 445
Բարթրուչ (շրջան Մազանդարանում) 413
Բարիզ (տե՛ս Փարիզ)
Բարկաթ (գյուղ Վասպուրականում) 636
Բաքու (տե՛ս նաև «Ոսկանապատ») 12–14, 17, 34, 36, 38–41, 43, 46, 68–70, 104, 111, 114, 121, 322, 373, 435, 458, 464, 475, 581, 582, 593, 597, 631, 642, 830, 947
Բելգիա 57, 580, 666
Բելգրադ 657, 907
Բելոսուար (Ռուսաստան–Պարսկաստան սահմանի մերձակայքում) 391
Բեյբուտովսկայա փողոց (Ալեքսանդրապոլում) 28
Բեյն էլ-Սուրեյն հրապարակ (Կահիրեում) 282
Բեյրութ 126, 141, 158, 168, 175, 179, 187, 211, 214, 292, 374, 474, 488, 564, 574, 605, 620, 719, 739, 841
Բենդեր-Աբբաս (նավահանգիստ Պարսից ծոցում) 344
Բենդերգեչ (քաղաք Պարսկաստանում) 413
Բեշիկթաչ (թաղամաս Կ. Պոլսում) 523, 756
Բեռլին 63, 93, 132, 180, 181, 190, 251, 257, 260, 339, 342, 344, 366, 485, 561, 668, 670, 747, 805, 809–814, 816, 826, 866, 960, 987
Բեսարաբիա 65
Բերա (թաղամաս Կ. Պոլսում) 522, 532, 534, 549, 578, 673, 689, 698, 923, 958, 976
Բերդաթաղ (տե՛ս Ղալա)
Բերդակ (գյուղ Վասպուրականում) 317
Բերդիետք (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Բերլին (տե՛ս Բեռլին)
Բերկրի 126
Բիթլիս (տե՛ս նաև Բաղեչ) 128, 162, 296, 303, 314, 316, 759, 761
Բիստ (գյուղ Գողթնում) 122
Բիտոլ (տե՛ս նաև Մանասթիր) 486
Բիրմա 409
Բիրջան (Պարսկաստանում) 344
Բիւզանդիոն 418, 478, 548, 554, 566, 602, 603, 643, 644, 662, 700, 759, 773, 787, 796, 797, 918, 920, 928, 937, 960, 962, 983, 984, 1063, 1068

Բիւրակն (տե՛ս նաև Բյուրակնյան լեռներ) 1064
Բյուզանդական կայսրություն (տե՛ս նաև Բյուզանդիա) 646, 827
Բյուզանդիա (տե՛ս նաև Բյուզանդական կայսրություն) 827
Բյուրակնյան լեռներ (տե՛ս նաև Բիւրակն) 126
Բչերիկ (գավառ) 293
Բոհթան 138
Բոսնիա 206, 484, 804, 805, 808
Բոստոն 9, 55, 56, 99, 117, 125, 134, 219, 242, 249, 266, 272, 545, 625, 662, 694, 720, 742, 792, 901
Բոսֆոր 339, 521, 523, 774, 959, 966
Բորանի (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Բորժոմ (առողջարան Վրաստանում) 639
Բորչալու 5
Բութանիա 1068
Բուլանուխ 135, 175, 316
Բուլղարիա 99, 171, 207, 231, 249, 267, 373, 377, 378, 380, 523, 585, 588, 604, 631, 639, 723, 727, 782, 805, 808, 809, 873
Բուլղարիստան (տե՛ս Բուլղարիա)
Բուխարեստ 431
Բուչեհր 412
Բուրսա 611, 652, 781, 828, 960
Բոնաչեն (լեռներ Տավրոսյան լեռնաշղթայում՝ Տուրուբերանում) 321
Բրբթաները (չրջան Ֆրանսիայում) 822
Բրիտանական Բելուջիստան 342

Գ

Գաղիկ (Պարսկաստանում) 344
Գահիրէ (տե՛ս Կահիրե)
Գանձակ (տե՛ս նաև Ելիզավետպոլ) 5, 9, 31–33, 69, 104
Գապագ-Թեփե (թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Գատրքեոյ (թաղամաս Կ. Պոլսում) 624
Գեարդաբաղ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Գելիզան (գյուղ Ատրպատականում) 441, 442
Գեորնավա (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Գերմանավ (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Գերմանիա 97, 250, 333, 339, 340, 357, 366, 385, 483–485, 495, 559, 560, 666, 669, 825
Գիլան (նահանգ Պարսկաստանում) 402, 413, 429, 436
Գիւզել (գյուղ Վասպուրականում) 636
Գյավուր-մեյդան (հրապարակ Տրապիզոնում) 613
Գյոլ (գյուղ Արարատյան դաշտում) 121
Գյուլխանե (պալատ Կ. Պոլսում) 830, 831, 836
Գողթն (գավառ) 122
Գորի (գավառ Վրաստանում) 85
Գորիս 5
Գում-Գափու (թաղամաս Կ. Պոլսում) 56, 530, 548, 549, 600, 630
Գումգաբու (տե՛ս Գում-Գափու)
Գուրիա (Վրաստանում) 28
Գևգելի (քաղաք Սալոնիկի վիլայեթում) 493
Գևորգյան հոգևոր ճեմարան (ս. Էջմիածնում) 62, 64, 66, 120

Դ

Դաղստան 83, 84
Դամասկոս 184, 267, 534

Դավաչի (թաղ Թավրիզում) 449, 453
Դարաչամբ (գյուղ Սոուջ-Բուլաղի գավառում, տե՛ս նաև Դարավանք, Ստորին Դարաչամբ և Վերին Դարաչամբ) 406, 446
Դարավանք (տե՛ս նաև Դարաչամբ) 406
Դարբառու (գյուղ Բարանդուզի գավառում) 386, 440, 446
Դարդանել (տե՛ս նաև Զանաքկալե) 492, 627, 652, 966
ԴԵՀ (տե՛ս ԴՀԵՐ)
ԴԵՀարական (հայկական բնակավայր Թավրիզի մերձակայքում) 444
Դեր-Զոր 555
Դերեքեոյ (գյուղ Ղրիմում) 48
Դերիկ (գյուղ Սալմաստի գավառում) 441, 445
Դերիկի վանք (տե՛ս ս. Աստվածամոր վանք)
Դերիք (գյուղ Արևմտահայաստանում) 940
Դերսիմ 126, 145, 147, 760
Դըզմար (գավառամաս Ղարադաղի գավառում) 446
Դիար-Տիսուր (ասորաբնակ գավառ) 117
Դիարբեքիր (տե՛ս նաև Տիգրանակերտ) 126, 128, 130, 134, 155, 162, 296, 327, 610, 761, 808, 962
Դիզյալա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Դիզա (գյուղ Խոյի գավառում) 444
Դիզա-Թափա (գյուղ Բարանդուզի գավառում) 445
Դիլման (Սալմաստ գավառի կենտրոն) 445
ԴՀԵՐ (ԴԵՀ, գյուղ Բչերիկի գավառում) 293
Դմիտրով (գյուղ Արարատյան դաշտում) 120, 121
Դոլմա-Բախչե (պալատ Կ. Պոլսում) 249, 978, 979, 981
Դոնի Ռոստով (տե՛ս Ռոստով)
Դուգեգդարա (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Դուդարի 134
Դուրան-Բարձրավանդակ (տե՛ս նաև Մուշ, Տարոն և Սասուն) 141, 146, 150, 151, 159, 175, 570, 571, 817, 818
Դրիչկ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Դրուզների երկիր 962

Ե

Եգիպտոս 139, 149, 167, 184, 187, 225, 226, 229, 230, 237, 249, 267, 274, 276, 282, 283, 327, 483, 585, 588, 631, 639, 641, 718, 722, 724, 725, 727, 730, 735-737, 740, 804, 805, 873, 902, 946, 947, 1065
Եզդ (քաղաք Պարսկաստանում) 344
Ելասսոն 494
Ելդրզ 203, 248, 249, 359, 491, 499, 542, 553, 612, 626, 681, 686, 687, 709, 710, 775, 776, 935, 957, 975, 976, 980-984
Ելենենդորֆ (գերմանաբնակ գաղութ-գյուղ Ելիզավետպոլի նահանգում) 31
Ելիզավետպոլ (տե՛ս նաև Գանձակ) 68-70
Ելտրզ (տե՛ս Ելդրզ)
Եկատերինոդար 36
Եմեն 115, 203, 648
Ենգիջա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Եվրոպա 122, 124, 132, 148, 149, 166,

174, 177, 185, 187, 203, 233, 234, 236, 242, 246, 273, 323, 334, 363, 377, 378, 393, 416, 418, 423, 426, 431, 476, 490, 501, 507, 539, 553, 559, 561, 578, 589, 612, 619, 646, 655, 670, 675, 705, 731, 766, 776, 810, 811, 825, 831, 934, 946, 948, 966, 984, 1055
Եվրոպական Թուրքիա 116, 808, 974
Եվրոպական Ռուսաստան 98
Երզնկա 944
Երկիր (տե՛ս Արևմտահայաստան)
Երուսաղեմ 124, 526, 557, 629, 695, 696, 850, 851, 856, 867, 869, 1018, 1019, 1030
Երևան 5, 12, 13, 16, 38, 43, 46, 52, 56, 58, 68–70, 80, 104, 158, 167, 314, 338, 373, 390, 406, 472, 528, 558, 591, 593, 631, 637, 759, 760, 772, 798, 799, 839, 919
Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ 58
Երևանյան հրապարակ (Թիֆլիսում) 16
Եւրոպա (տե՛ս Եվրոպա)
Եփրատ 335, 1068

Զ

Զանգեզուր 5
Զեյթուն 555, 943, 944, 947
Զեյնալու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Զեյվաջուկ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Զերգենդե (գյուղ Թեհրանի մերձակայքում) 349
Զէյթուն (տե՛ս Զեյթուն)
Զիլան 134
Զմյուռնիա (տե՛ս նաև Իզմիր) 490, 713, 772, 839
Զոլա գետ 354
Զորավա (գյուղ Խոյի գավառում) 362
Զուիցերիա (տե՛ս նաև Շվեյցարիա) 822

Է

Էգեյան ծով 483, 484
Էդիրնե (տե՛ս նաև Ադրիանապոլիս) 116, 494, 658, 959
Էյնալ-Զեյնալ (Կարմիր լեռ, լեռ Թավրիզի մոտ) 449
Էնզելի (նավահանգիստ Պարսկաստանում՝ Կասպից ծովի ափին) 431
Էջմիածին (ս. Էջմիածին) 5, 24, 36, 49–51, 56, 61–66, 120, 123, 124, 409, 412, 554, 617, 630, 679, 680, 687, 693, 708, 711–714, 851
Էրզրում (տե՛ս նաև Կարին) 87, 94, 99, 303, 314, 558, 610, 759, 808
Էրմենիստան (տե՛ս նաև Հայաստան) 808

Ը

Ըռկավա (գյուղ Սալմաստի գավառում) 445

Թ

Թազագյուղ (գյուղ Բարանդուզի գավառում) 446
Թամար (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Թավրիզ 147, 343, 352, 365, 370, 371, 373, 386, 393, 401–404, 407–410, 412, 413, 417, 424, 425, 435, 436, 439–441, 444, 446–463, 465–468, 470–475, 479, 480, 631, 641, 723

Թավրիզի հայոց Թեմական-Կենտրոնական դպրոց 393, 404, 407
Թափա գյուղ (Բայազետ քաղաքի մոտ) 151
Թաքսիմ (պարտեզ Կ. Պոլսում) 534
Թեհրան 30, 175, 338, 343, 349–351, 354, 356, 363, 364, 366, 367, 373–375, 381, 388, 391, 392, 394, 402, 404, 407, 408, 413, 417–420, 422–424, 428–430, 432–434, 436, 437, 446, 447, 451–453, 455–458, 463, 473, 475, 477, 480, 481, 631, 641
Թերեք գետ 84
Թիւրքիա (տե՛ս Թուրքիա)
Թիֆլիս 5, 9, 13, 15–17, 28, 32, 36, 39, 42, 43, 46, 47, 50, 53, 57, 61, 65, 68, 74, 76, 80, 81, 88, 89, 93, 99, 103, 104, 118, 120, 121, 128, 162, 202, 242, 246, 253, 254, 275, 283, 284, 296, 317, 322, 330, 347, 361, 365, 371, 408, 418, 441, 473–475, 507, 545, 553, 560, 565, 617, 618, 625, 626, 631, 633, 636–638, 641, 667, 672, 726, 779, 781, 800, 840, 947, 1068
Թոմալու (գյուղ Բարանդուզի գավառում) 446
Թովլա (գյուղ Միանդոաբի գավառում) 446
Թումաթար (գյուղ Բարանդուզի գավառում) 445
Թունիս 667
Թունտրա (գյուղ Արևմտահայաստանում) 940
Թուրանիա 662
Թուրքական Հայաստան (տե՛ս Արևմտահայաստան)
Թուրքահայաստան (տե՛ս Արևմտահայաստան)
Թուրքաստան (տե՛ս Թուրքիա)
Թուրքաց Հայաստան (տե՛ս Արևմտահայաստան
Թուրքեստան (տե՛ս Թուրքիա)
Թուրքիա (Թուրքական պետություն, Թուրքաստան, Թուրքեստան, Թիւրքիա, Տաճկաստան, Օսմանյան Թուրքիա, Օսմանյան կայսրություն, Օսմանյան հայրենիք, Օսմանյան պետություն, Օսմանյան տերություն) 3, 10, 30, 52, 53, 77, 84, 87, 90, 92–101, 112, 113, 115–122, 126, 132, 133, 138, 162, 163, 165–174, 177, 180–186, 190–199, 201, 203–206, 208–211, 215, 218–225, 231–238, 240, 242–250, 252–254, 256, 258–262, 264–269, 273, 275, 277–279, 283, 296, 298, 339, 341–343, 347, 353, 354, 357–359, 377, 378, 385, 388, 392, 398, 433, 436–438, 441, 482–490, 494, 495, 498, 499, 501–503, 505–509, 511–514, 518–524, 527, 530, 532, 534–537, 539, 542, 543, 545, 549, 552, 553, 556–561, 563, 564, 566–569, 572–593, 595, 597, 598, 602, 605, 608, 609, 611–613, 615–619, 621, 622, 624, 626–628, 631–635, 638, 640–642, 646, 648, 649, 651–659, 666–673, 675, 677, 683–685, 688, 698, 702, 704, 707, 708, 710, 711, 715, 716, 730, 732–734, 738–740, 742, 743, 745, 752–755, 757, 758, 763–770, 772–782, 784–788, 791, 794, 795, 800, 801, 804–808, 810–832, 834, 836–838, 840, 845–847, 850, 852, 858, 861–864, 866, 868, 870–874, 876–880, 883–892, 895–898, 902, 903, 905, 908, 911, 912, 914, 916, 919, 920, 923–926, 929, 932, 935–937, 941, 946, 949, 950,

954, 956, 959–961, 963, 966, 967, 971, 974, 977–979, 981, 982, 985, 993, 994, 999, 1002, 1012–1014, 1019, 1021, 1025, 1031, 1032, 1039–1042, 1044, 1062
Թուրքմենչայ (գյուղ Թավրիզ-Թեհրան ճանապարհին) 91, 120
Թրանսվաալ (տե՛ս Տրանսվաալ)

Ժ

Ժիգալովկա (ավան Իրկուտսկի մերձակայքում) 36
Ժնև 5, 138, 139, 143, 205–207, 322, 332, 404, 413, 472, 565

Ի

Իգդիր 631, 637
Իզմիր (տե՛ս նաև Զմյուռնիա) 183, 231, 490, 536, 539, 555, 556, 624, 629, 649, 652, 672, 689, 691, 704, 716, 742, 772, 778, 781, 788, 884, 885, 890, 942, 950, 1068
Իշտրիբ 493
Իռլանդիա 807
Իսալու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Իսկիւտար (տե՛ս Սկյուտար)
Իսպանիա 666
Իսֆահան 343, 344, 403, 409, 412, 413, 631
Իտալիա 57, 666
Իրան (տե՛ս Պարսկաստան)
Իրանական Քուրդիստան 353, 381, 405, 439
Իրաք 117, 122, 667, 873
Իրկուտսկ 36
Իքի-աղաջ (գյուղ Ուրմիայի գավառում) 445

Լ

Լազիստան 808
Լաթաքիա 945
Լա-Հեյ (տե՛ս Հաագա)
Լեհաստան 9, 11, 68
Լեյլաբաղ (տե՛ս Լիլավա)
Լենքորան 391, 415
Լեոնալիբանան 118
Լեոնապար (Վանա լճի հարավային ափին) 117, 307, 316, 542, 543, 625, 659
«Լեոնավայր» (տե՛ս նաև Կիլիկիա) 226
Լիբանան 117, 267, 555, 631, 667, 812, 873–875
Լիլավա (Լեյլաբաղ, հայաբնակ թաղ Թավրիզում) 402, 404, 407
Լոզան 872
Լոնդոն 77, 237, 273, 274, 323, 341, 349, 546, 560, 616, 813, 830, 841, 920
Լոս Անճելոս (տե՛ս Լոս Անջելոս)
Լոս Անջելոս 306, 544
Լևանտ (տե՛ս նաև Արևելք, Orient) 549, 550, 783

Խ

Խանագյահ (գյուղ Ղարադաղի գավառում) 411, 446
Խանասոր 47, 152, 157
Խանբաբախան (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Խանդուխտ (թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441, 442
Խանիչան (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Խանօղլի (գյուղ Արևմտահայաստանում) 940

Խաչ-փողան (Վանում) 302, 311-313
Խաչատուր Աբովյանի անվան գրադարան (Թավրիզում) 407
Խաչեն (գյուղ Վասպուրականում) 320
Խառակոնիս (գյուղ Վասպուրականում) 320
Խասմի (գյուղ Արևմտահայաստանում) 940
Խարաբալար (գյուղ) 135
Խարբերդ (տե՛ս նաև Խարփութ) 728, 737, 742, 791, 945, 1068
Խարս (Ղարս, գյուղ Մշո դաշտում) 155, 160
Խարփութ (տե՛ս նաև Խարբերդ) 808
Խրդրը (հայկական գյուղ Ալաշկերտի շրջանում) 760
Խիաբան (թաղ Թավրիզում) 449, 453, 456, 460
Խիզան (գավառ) 126, 138, 939
Խլիճլու (գյուղ Արևմտահայաստանում) 940
Խնուս 134, 175, 326, 939, 940, 943
Խոյ 362, 387, 388, 412, 444, 471
Խոչաբ (գյուղախումբ Վանի գավառում) 126, 148
Խոջամիր (գյուղ Մարաղայի գավառում) 446
Խոռանց (գյուղ Վասպուրականում) 636
Խոսրավա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Խորասան (շրջան Պարսկաստանի հյուսիս-արևելքում) 365, 412, 413
Խորհրդային Հայաստան (ՀՍՍՀ) 58, 122, 129, 528, 593, 749, 750, 760
Խութ (Խույթ) (գավառ) 151, 159
Խվներ (գյուղ Տարոնում) 156-158, 659

Ծ

Ծաղկանց լեռներ 151
Ծիծանց (գյուղ Շատախի շրջանում) 761
Ծվստան (գյուղ Վասպուրականում) 317

Կ

Կ. Պոլիս (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Կազրիկազեր (Թեհրանի մերձակայքում) 430
Կահիրե 60, 139, 163, 184, 187, 201, 238, 274, 275, 281, 282, 286, 287, 289, 298, 347, 544, 558, 724-726, 728, 730, 739, 742, 836
Կահիրեի հայոց լսարան-ընթերցարան 725
Կախեթ (շրջան Վրաստանում) 295
Կաղզվան 5
Կասպից ծով 342, 344
Կաստեմունի 185
Կասրե-Շիրին (ավան Պարսկաստանում) 344
Կարազիաղին (գյուղ Ատրպատականում) 362
Կարին (տե՛ս նաև Էրզրում) 153, 184, 185, 317, 318, 392, 558, 642, 705, 728, 742, 791, 946
Կարկառ (լեռնագավառակ) 938, 939
Կարճկան (Խիզան գավառի մաս) 760, 939
Կարմիր լեռ (տե՛ս Էյնալ-Զեյնալ)
Կարս 5, 16, 46, 87, 99, 631, 637, 638
«Կաֆե Լիլա» (սրճարան Փարիզում) 191
Կաֆիս (գյուղ Սոուջ-Բուլաղի գավառում) 446
Կեդրոնական վարժարան (Կ. Պոլսում) 534

Կետիկ փաչա (թաղամաս Կ. Պոլսում) 601
Կեցան (Խիզան գավառի ստորամաս) 939
Կղլըճ (գյուղ Վասպուրականում) 320
Կիլիկիա (տե՛ս նաև «Լեռնավայր») 163, 194, 195, 226, 558, 585, 622, 665, 669, 728, 735, 737, 742, 851, 868, 946, 989, 1067
Կիպրոս 191, 267, 615, 873, 946
Կյուրին 944
Կոզակ (գյուղ Բուլանուխի գավառակում) 135
Կոզան (Սիսի շրջանում, Կիլիկիա) 903
Կոթուր (գավառակ Խոյի գավառում) 444
Կոճերեր (գյուղ Վասպուրականում) 636
Կոնիա 781
Կոսովո 494, 983
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս, մայրաքաղաք, Պոլիս) (տե՛ս նաև Ստամբուլ) 53, 56, 57, 61, 62, 114, 123, 130, 136, 141, 142, 153, 168, 195, 202, 204, 208, 222, 240, 242, 246, 267, 270–272, 276, 278, 279, 281, 322–324, 330, 332, 342, 353, 357–359, 378, 388, 389, 391, 418, 432, 433, 436, 486, 487, 489, 491–493, 496, 501, 503, 504, 509, 512, 520–524, 526, 528–534, 536, 538, 539, 541, 547, 548, 550, 551, 554, 558, 560, 564–566, 572, 578, 581, 583–585, 599–601, 603, 607, 608, 611, 614, 617–624, 626, 627, 629, 634, 635, 638, 639, 641, 644, 647–649, 665, 669, 671–673, 677, 679, 681–683, 687–690, 692–697, 700, 702, 704–713, 736–740, 742, 747, 751, 753–755, 760–762, 765–768, 772–774, 776–778, 780, 781, 783–785, 789–791, 794–799, 803, 804, 807, 810, 822, 825, 827–833, 835, 838, 839, 841, 844, 846–851, 853–857, 859, 861, 863, 864, 867, 869, 871, 872, 875–877, 880, 882–886, 888, 890, 891, 894, 898–903, 905, 911, 915–919, 923, 924, 927, 928, 934, 937, 938, 941, 942, 944–946, 948, 950, 952, 954, 956–972, 974–977, 982, 984, 986, 987, 989, 993, 1004, 1009, 1012, 1014, 1015, 1017, 1018, 1020, 1021, 1023, 1024, 1026, 1029–1033, 1035–1038, 1050, 1060, 1065, 1067, 1068
Կովկաս 4, 9, 18, 20, 21, 29, 30, 32, 33, 35–37, 42, 45, 47, 48, 50, 53, 54, 68, 73–76, 78–86, 88, 90–92, 94–107, 112, 117, 118, 120, 121, 123, 135, 147, 171, 208, 224, 243, 249, 254, 266, 278, 283, 288, 294, 299, 311, 330, 350, 370, 371, 373, 378, 388, 398, 404, 407, 432, 433, 464–466, 473–477, 581, 593, 618, 619, 622, 637, 638, 641–644, 664, 693, 713, 739, 778, 793, 901, 915, 946
Կովկասյան Հայաստան 3
Կովնտուկ (գյուղ Խնուսի շրջանում) 135
Կոտուլ (գավառամաս Սալմաստի գավառում) 356
Կուռապաշ (գյուղ Վասպուրականում) 317
Կրասնովոդսկ 287, 431
Կրետե 171, 492, 581, 805, 810, 814

Հ

Հաագա (Լա-Հեյ) 51, 52, 687
Հալեպ 728, 908, 962

Հախվերան (գյուղ Սալմաստի գավառում) 445
Հակկ (Պարսկաստանում) 344
Հաճրն 943, 1062
Համադան 402, 413
Համբունավա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Համբուրգ 342
Համիտիէ (ավան Կիլիկիայում) 666
Հայաստան (տե՛ս նաև Արմենիա, Արևմտահայաստան, Էրմենիստան, Armenia) 13, 15, 16, 43, 78, 86, 87, 112–114, 121–128, 131, 133–135, 161, 162, 181, 187, 191–195, 199, 206, 207, 210, 211, 228, 243, 249, 257, 263, 278, 279, 287, 313, 329, 330, 333, 334, 472, 473, 501, 545, 548–550, 580, 581, 589, 591, 593, 602, 604, 607, 622, 641, 643–645, 650, 675, 679, 680, 688, 705, 706, 716, 726, 735, 749, 750, 762, 771, 775, 776, 786, 790, 799, 800, 805, 807, 810–812, 814, 815, 817, 818, 822–824, 826, 827, 852, 863, 913, 915, 916, 920–922, 924, 931, 932, 938, 941–948, 1011, 1020
Հայաստանի Հանրապետություն 122, 129, 338, 573
Հայկազյան-Թամարյան դպրոց (Թավրիզում) 404, 407
Հայկական բարձրավանդակ 126, 658
Հայկական լեռնաշխարհ (տե՛ս Հայկական բարձրավանդակ)
Հայոց ձոր (գավառ Վասպուրականում) 314, 320
Հարավարևելյան Ասիա 409
Հաքյարի (գավառ Վանի նահանգում) 118, 126, 147
Հաֆթվան (հայկական գյուղ Սալմաստի գավառում) 445
Հելիոպոլիս (Կահիրեի արվարձաններից) 187
Հեռավոր Արևելք 95
Հերկերտ (գյուղ Մշո դաշտում) 134
Հերցեգովինա 206, 484, 805
Հիջազ (չրջան Արաբիայի արևմուտքում) 509, 610, 648
Հյուսիսային Իրան (տե՛ս Հյուսիսային Պարսկաստան)
Հյուսիսային Կովկաս 36, 47, 104, 631, 638
Հյուսիսային Միջագետք 126
Հյուսիսային Պարսկաստան 340, 343, 409, 438
(ի) Հնդիկս (տե՛ս Հնդկաստան)
Հնդկական օվկիանոս 343
Հնդկաստան 122, 171, 202, 338, 340, 342, 343, 394, 409, 477, 483, 640, 667, 946
Հոլանդիա 57
Հովադար (գյուղ Սալմաստի գավառում) 445
Հորդանան 873
Հունաստան 207, 782, 805, 834, 873, 888
Հուրրիեթ-մեյդան (հրապարակ Տրապիզոնում) 613
ՀՍՍՀ (տե՛ս Խորհրդային Հայաստան)
Հրազդան 271

Ղ

Ղազախ 5
Ղազվին 343, 402, 413
Ղալա (Բերդաթաղ, հայաբնակ թաղ Թավրիզում) 402, 403, 413, 460, 463, 466
Ղալայի մզկիթ 463, 466
Ղալաթա-սերայ (թաղամաս Կ. Պոլսում) (տե՛ս նաև Ղալաթիա) 534, 835, 976

Ղալաթա-սերայի պետական լիցեյ 835
Ղալաթիա (թաղամաս Կ. Պոլսում) (տե՛ս նաև Ղալաթա-սերայ) 521, 522, 621, 639, 689, 698, 958
Ղալաջուղ (գյուղ Մարաղայի գավառում) 446
Ղամարլու 43
Ղասրմլու (գյուղ Բարանդուզի գավառում) 446
Ղասումաչեն (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Ղար-աղաջ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ղարաբաղ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Ղարաբաղ (տե՛ս նաև Արցախ) 33
Ղարագեոզ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ղարադաղ (գավառ Ատրպատականում) 388, 401, 403, 411, 444, 446, 454, 463, 480-482
Ղարաղան (գավառ Պարսկաստանում՝ Համադան և Ղազվին քաղաքների միջև) 413
Ղարաղըզ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ղարաչորան (գյուղ Խնուսի շրջանում) 134
Ղարաջալու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ղարավերան (գյուղ Միանդոաբի գավառում) 446
Ղարեին (գյուղ Մակուի գավառում) 445
Ղարս (գյուղ Մշո դաշտում, տե՛ս Խարս)
Ղափան 16
Ղզըլաղաջ (գյուղ Մշո դաշտում) 134
Ղզըլ-աշուղ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ղզըլղոբի (գյուղ Սոուջ-Բուլաղի գավառում) 446
Ղզըլջա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Ղչլաղ (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Ղուլասար (գյուղ Սալմաստի գավառում) 445
Ղուլուդի (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Ղրիմ 71, 110, 631, 836

Ճ

Ճապոնիա 97, 339, 486
Ճարա (Ջեհրի դալա) (գյուղ Սալմաստի գավառում) 397, 445

Մ

Մազանդարան (նահանգ Պարսկաստանում) 413
Մալաթիա 944, 953
Մալայդիա 409
Մախչի մեյդան (հրապարակ Թավրիզում) 453
Մակեդոնիա 99, 116, 206, 207, 241, 243, 296, 484-488, 490, 491, 495, 496, 501-503, 523, 653, 657, 672, 675, 754, 775, 805, 807, 809, 810, 812, 826, 904, 905, 955, 962, 966, 967, 987
Մակու (գավառ և գյուղաքաղաք Ատրպատականում) 362, 409, 444, 445, 467, 471
Մահլամ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Մամադյար (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Մանագկերտ 135
Մանասթիր (Բիտոլ) (քաղաք Մակե-

դոնիայում) 486, 487, 489–491, 494, 503, 511, 658
(Էլ–)Մանաք (փողոց Կահիրեում) 281
Մանդավու (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Մանջուրիա 338
Մասանդրյան զբոսայգի (Սևաստոպոլում) 110
Մասիս 271, 506
Մարաղա (գավառ և գյուղաքաղաք Ատրպատականում) 383, 444, 446, 457
Մարանդ (գավառ Ատրպատականում) 444
Մարզվան 607
Մարոկկո 357
Մարսել 219, 237, 359
Մաքրիգյուղ (Թաղամաս Կ. Պոլսում) 926
Մեդինա (քաղաք Արաբիայում) 962
Մեծ Բրիտանիա (տե՛ս նաև Անգլիա) 51, 56, 77, 323, 324, 337–341, 343, 353, 357–359, 380, 385, 484, 486, 495, 649, 813, 911
Մեչափարա (գավառամաս Ղարադաղի գավառում) 446
Մեչիտմեր (չրջան Մազանդարանում) 413
Մեշհեդ (քաղաք Պարսկաստանում) 413
Մեսրոպավան (գյուղ Գողթնում) 122
Մերձավոր Արևելք 117, 544, 558, 608, 624, 626, 634, 646, 774, 775, 782, 784, 830, 873
Մերձբալթյան նահանգ 105
Մերձվիսլայան նահանգ 105
Մերսին (նավահանգիստ Կիլիկիայում) 558
Մզկիթ (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Մընջևան (գավառամաս Ղարադաղի գավառում) 446
Միանդոաբ (գավառ և գյուղաքաղաք Ատրպատականում) 389, 444, 446
Միացեալ Նահանգներ (տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Միացյալ գրադարան-ընթերցարան (Թավրիզում) 407
Մինաս (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Մինավար (հայկական բնակավայր Թավրիզի մերձակայքում) 444
Միջագետք 194, 675
Միջերկրական ծով 114, 483, 629
Միջին Ասիա 68, 337, 338, 342
Միջին Արևելք 357, 416, 544, 873
Միսիս (ավան Կիլիկիայում) 666
Մոդրգան 160
Մոլլալար (գյուղ Սալմաստում) 355
Մոնպարնաս պողոտա (Փարիզում) 232
Մոսկվա 4, 21, 39, 68, 84, 118, 139, 163, 167, 237, 341, 343, 419, 454–456, 473, 484, 488, 494, 498, 509, 511, 522, 524, 528, 581, 752, 758, 777, 784, 831, 839, 947, 956, 960
Մուժամբար (հայկական գյուղ Ղարադաղի գավառում) 444
Մուհլաղան (գյուղ Խոյի գավառում) 444
Մուչ (տե՛ս նաև Դուրան-Բարձրավանդակ) 126, 131, 134, 135, 160, 175, 303, 316, 321, 326, 543, 570, 629, 643, 761, 772, 900, 943, 945
Մուջտեհիդ (Թաղ Թավրիզում) 463, 466
Մուսուլ 149, 267, 610
Մուրադյան վարժարան (Փարիզում) 835
Մրքիդ (գյուղ Ղարադաղի գավառում) 446

Յ

Յալթա 48, 109
Յոնջալու (գյուղ Բուլանուխի գավառակում) 316
Յոխճեն (գյուղ Արևմտահայաստանում) 940

Ն

Նախիջևան 46
Նախչվան-Թափա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Նաջաֆ (քաղաք Իրաքում) 376
Ներբովթ լեռ (տե՛ս Նեմրութ լեռ)
Նեմրութ լեռ 156
Ներքին Ղույլասար (տե՛ս Դմիտրով)
Նիժեր 629
Նիկոմեդիա 772
Նինվե 117
Նիւ Եորք (տե՛ս Նյու Յորք)
Նյու Յորք 58, 61, 162, 486, 489, 633, 634, 956, 957, 959, 960, 962, 966, 975, 977, 982, 983, 985
Նովոռոսիյսկ 631
Նոր Բայազետ 5
Նոր Նախիջևան 5, 71, 552, 675, 947
Նոր Ջուղա 395, 400, 402, 409, 413, 546, 640
Նորաչեն (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Նորաչեն եկեղեցի (Վանում) 989
Նորաչենք (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Նորմանտի (չրջան Ֆրանսիայում) 822
Նորտուզ (գավառակ Վանի նահանգում) 149
Նուղադեյ (գյուղ Սուլդուզի գավառում) 446

Շ

«Շահաստան» (տե՛ս Թեհրան)
Շահզադե-բաղ (այգի Թավրիզում) 462
Շահրուդ (քաղաք Խորասանում) 413
«Շամ» (տե՛ս նաև Վասպուրական) 290, 292–294, 303–305, 308, 310, 314, 315, 318, 319, 380, 542, 661, 664, 899, 903
Շամզդինան (տե՛ս Շամստինան)
Շամստինան (Շամզդինան, Շեմտինան) 147–149
Շապին-Գարահիսար 909
Շավլի (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Շատախ 570, 760, 761
Շեմտինան (տե՛ս Շամստինան)
Շեյթանավա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Շենիկ (գյուղ Սասունում) 135, 155
Շեչ-Գիլան (թաղ Թավրիզում) 453, 456, 480
Շէրէֆ փողոց (Կ. Պոլսում) 928
Շիդան (գյուղ Սալմաստի գավառում) 445
Շիչլի (հայոց գերեզմանատուն Կ. Պոլսում) 528, 529, 531, 532
Շիրաբաղ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Շիրազ 366, 402, 422, 428
Շիրակ 274, 737, 743, 790, 803, 951, 952, 963, 964, 972–974, 1065
Շիրվան 413
Շիրվանչեխ (գյուղ Մանազկերտի գավառակում) 135
Շիքակո (տե՛ս Չիկագո)
Շոչ (գյուղ Արցախում) 33
Շուչանց (գյուղ Վասպուրականում) 317

Շուշի 5, 39, 110
Շվեյցարիա (տե՛ս նաև Զուիցերիա) 296, 373, 807, 881

Ո

«Ոսկանապատ» (տե՛ս նաև Բաքու) 28
Ոստան 126
Ուլա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Ուկրաինա 11
Ուղնի (գավառ Ատրպատականում) 355
Ուսկյուպ (տե՛ս նաև Սկոպյե) 488, 493, 501
Ուրգյուրի (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Ուրմի (տե՛ս Ուրմիա)
Ուրմիա (քաղաք, գավառ, լիճ Ատրպատականում) 118, 353, 354, 357–359, 370, 373, 386, 387, 397, 403, 405, 406, 411, 412, 439, 440, 443–446

Զ

Զաթալջա (Կ. Պոլսի մերձակայքում) 966–968, 971
Զամաքի (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Զանաքկալե (տե՛ս նաև Դարդանել) 629
Զարա (գավառամաս Սալմաստում) 356
Զարբաչ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Զարսանջակ 126
Զեհրի դալա (տե՛ս Ճարա)
Զեչնիա 84
Զիկագո 58, 607, 765
Զինաստան 342, 409
Զիչաքլու (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Զմչկածագ 760, 943
Զուխսուր (չրջան Մշո դաշտում) 134, 160, 161
Զրաղանի պալատ (Կ. Պոլսում) 981, 984

Պ

Պալքաններ (տե՛ս Բալկաններ)
Պաղեստին (տե՛ս նաև Ավետյաց երկիր) 873
Պաղնատուն (գավառ Արևմտահայաստանում) 545
Պարիզ (տե՛ս Փարիզ)
Պարսից ծոց 154, 338, 339, 342, 344
Պարսկահայաստան 3
Պարսկահայք (տե՛ս Պարսկահայաստան)
Պարսկաստան (Իրան) 3, 10, 30, 37, 51, 87, 91, 117, 118, 120–122, 126, 147, 163, 185, 194, 248, 249, 294, 299, 337, 338, 340–343, 345–353, 355–367, 370–382, 384–386, 389–391, 393–395, 398–402, 408–410, 412–417, 419, 422–426, 428, 429, 433, 435–438, 441, 443, 446, 447, 451–456, 458, 459, 461, 464, 465, 467, 472,–478, 480, 482, 486, 537, 560, 592, 619, 631, 640, 641, 643, 658, 760, 775, 873, 946
Պելոպոնես (չրջան Հունաստանում) 888
Պետերբուրգ (տե՛ս Սանկտ-Պետերբուրգ)
Պերլին (տե՛ս Բեռլին)
Պերմ (գյուղ Սասունում) 134

Պէյրութ (տե՛ս Բեյրութ)
Պիթլիս (տե՛ս Բաղեշ, Բիթլիս)
Պյատիգորսկ 47
Պոլիս (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Պոնտոս 115, 885
Պոսթրն (տե՛ս Բոստոն)
Պոսթոն (տե՛ս Բոստոն)
Պորտուգալիա 666
Պուլկարիա (տե՛ս Բուլղարիա)
Պոլիս (տե՛ս Կոստանդնուպոլիս)
Պոսն[ի]ա (տե՛ս Բոսնիա)

Ջ

Ջաղատ գետ (Ատրպատականում) 382
Ջամալավա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ջեղիրե 138
Ջուլամերիկ (ասորաբնակ գավառ) 117
Ջուլֆա (ռուսական և պարսկական, տե՛ս նաև Ջուղա) 352, 358, 390, 474, 477
Ջուղա (տե՛ս նաև Ջուլֆա) 390
Ջևազրգ (գյուղ Ատրպատականում) 441

Ռ

Ռահդանա (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Ռահիա (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Ռափայելյան վարժարան (Վենետիկում) 835
Ռեչտ 343, 402, 413
Ռեսնե (քաղաք Մակեդոնիայում) 487, 488, 491
Ռոդոսթո 926
Ռոստով (Դոնի Ռոստով) 5, 71, 114
Ռումելիա (տե՛ս նաև Արևելյան Ռումելիա) 781, 782
Ռումինիա 639, 873
Ռուսական կայսրություն (տե՛ս Ռուսաստան)
Ռուսաստան (Ռուսական կայսրություն, ռուսական պետություն, Ռուսիա) 3, 4, 7–11, 15, 20, 21, 29, 30, 33, 40, 46, 47, 51, 53, 56, 66, 67, 72–79, 81, 82, 87, 91–94, 96–100, 102, 103, 105–107, 109, 120, 121, 181, 185, 194, 202, 208, 252, 264, 277–279, 288, 317, 337–342, 344–346, 349–353, 357, 358, 380, 385, 388–392, 398, 400, 409, 415–417, 422, 423, 426, 435, 438, 452, 473, 482–484, 486, 537, 559, 560, 562, 579, 583, 588, 590, 592–595, 597, 617, 618, 622, 638, 649, 658, 666, 695, 715, 738, 739, 775, 779, 832, 866, 879, 916, 926, 946–948
Ռուսիա (տե՛ս Ռուսաստան)
Ռևել 484

Ս

Սաբզեվար (քաղաք Խորասանում) 413
Սալմաստ (գավառ Ատրպատականում) 354–357, 359, 370, 373, 378, 385, 386, 397, 403, 405, 412, 437, 439, 441, 443–445, 471, 631
Սալոնիկ 184, 483, 484, 487, 488, 491, 493, 501, 503, 612, 614, 649, 658, 672, 759, 803, 884, 885, 961, 966, 967, 969, 974, 975, 983, 984
Սահաթլու (գյուղ Բարանդուզի գավառում) 445
Սահար-դիվան (այգի Թավրիզի մեր-

ձակայքում) 463
Սամոս կղզի 267, 581
Սամսոն 94, 270
Սան-Ստեֆանո (Կ. Պոլսի մերձակայքում) 190, 968, 969, 72, 977
Սան Սթէֆանօ (տե՛ս Սան-Ստեֆանո)
Սանգեառ (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Սանկտ-Պետերբուրգ (տե՛ս նաև Ленинград) 32, 53, 73-76, 79, 80, 82, 85, 90-93, 96, 99, 100, 103, 323, 338, 339, 341, 351, 357, 358, 388, 398, 424, 431, 454, 468, 499, 544, 581, 591, 625, 813, 830
Սառնա (գյուղ Սալմաստի գավառում) 445
Սասուն (տե՛ս նաև Դուրան-Բարձրավանդակ) 126, 134-136, 146, 160, 267, 294, 335, 370, 544, 578, 600, 790, 900, 943, 1065
Սարամերկ (գյուղ Սալմաստի գավառում) 386, 445
Սարատով 7
Սարդարապատ 123
Սարդարութ (գյուղ Բարանդուզի գավառում) 386, 440, 446
Սարդինիա 836
Սարդու (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Սեբաստիա 94, 728, 737, 742, 772, 791, 945
Սելանիկ (տե՛ս Սալոնիկ)
Սելիմիե զորանոց (Կ. Պոլսում) 975
Սեյդավար (գյուղ Խոյի գավառում) 444
Սերբիա 658, 755, 775, 782
Սերես 493
Սիբիր 9, 43, 111
Սինջար լեռ 122, 123, 138
Սիս 558, 665, 871, 903
Սիրիա 117, 163, 194, 483, 658, 675, 873
Սկյուտար (Թաղամաս Կ. Պոլսում) 630, 835, 1067
Սկյուտարի հայոց ճեմարան 835
Սկոպյե (տե՛ս նաև Ուսկյուպ) 488, 523
Սիփահսալար մզկիթ (Թեհրանում) 423, 424
Սղբն (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Սղկա (գյուղ Վասպուրականում) 317
Սոհրուլ (հայկական բնակավայր Թավրիզի մերձակայքում) 444
Սոհրուլ-թափա (գյուղ Միանդոաբի գավառում) 446
Սոմա (գավառամաս Սալմաստում) 356, 437
Սոուջ-Բուլաղ (գավառ և գյուղաքաղաք Ատրպատականում) 355, 381-383, 387-389, 405, 406, 444, 446
Սովուջ-Բուլաղ (տե՛ս Սոուջ-Բուլաղ)
Սուլդուզ (գավառ Ատրպատականում) 406, 444, 446
Սուլթան Ահմեդ (Թուրքաբնակ գյուղ Ատրպատականում) 441
Սուլթանապատ 413
Սուլուխ (գյուղ Մշո դաշտում) 146, 155, 931
Սուխումի 631
Սումատրա 409
Սուրա (գյուղ Սալմաստի գավառում) 445
ս. Ախբերիկի վանք (Տուրուբերանում) 321
ս. Ամենափրկիչ եկեղեցի (Ղալաթիա, Կ. Պոլիս) 639
ս. Ամենափրկիչ վանք (Նոր Ջուղայում) 400
ս. Աստվածածին մայր եկեղեցի (Գում-

Գափու, Կ. Պոլիս) 56, 530, 630, 687, 847, 868, 1014
ս. Աստվածամոր վանք (Դերիկի վանք, Սալմաստի գավառ) 441
ս. Գրիգորի վանք (Վանի շրջանում) 298
ս. Երրորդություն եկեղեցի (Բերա, Կ. Պոլիս) 532, 578, 923
ս. Թադեի վանք (Ատրպատականում) 151, 409
ս. Խաչ վանք (Կուռապաշ գյուղ, Վասպուրական) 317
ս. Կարապետի վանք (Մուշում) 146, 331, 570, 571, 663, 817–819
ս. Հակոբի Թաղ (Վանում) 313
ս. Հակոբյանց վանք (Երուսաղեմում) 695, 850, 1018
ս. Նշան մայր եկեղեցի (Վանում) 541
ս. Սարգիս վանք (Թիֆլիսում) 65
ս. Ստեփանոս Նախավկայի վանք (Ատրպատականում) 444
ս. Փրկիչ ազգային հիվանդանոց (Կ. Պոլսում) 855, 856, 1027
Սուրխաբ (Թաղ Թավրիզում) 449
Սուրմալու (գավառ) 5
Սուրուն (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Սուփուրղան (գյուղ Ուրմիայի գավառում) 445
Սոֆիա 373, 580
Սպարկերտ (Խիզան գավառի մաս) 939
Ստամբուլ (տե՛ս նաև Կոստանդնուպոլիս) 540, 783, 827, 872, 950
Ստորին Դարաշամբ (գյուղ Ատրպատականում) (տե՛ս նաև Դարաշամբ, Դարավանք) 444
Սև ծով 631, 638, 647
Սևահող (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Սևաստոպոլ 109–111

Վ

Վաթան (տե՛ս Արևմտահայաստան)
Վան (տե՛ս նաև Տոսպ) 55, 57, 59, 94, 119, 128, 133, 147, 162, 208, 250, 287, 289, 292–299, 303, 304, 306–318, 320, 322–324, 328, 392, 540–543, 567, 571, 618, 625, 635, 636, 641, 642, 661, 663, 686, 687, 703, 728, 742, 759, 771, 772, 778, 779, 791, 808, 825, 903, 924, 941, 943, 946, 948, 988, 989, 1068
Վանքի մայր եկեղեցի (Թիֆլիսում) 57
Վառ (գյուղ Խոյի գավառում) 444
Վառնա 413, 900
Վասպուրական (տե՛ս նաև «Շամ») 55, 56, 58, 117, 118, 123, 134, 135, 142, 147, 150–152, 175, 289, 290, 294, 295, 298, 299, 303, 306, 308, 311–314, 323, 328, 370, 380, 441, 542, 571, 618, 624, 661, 663, 687, 703, 737, 779, 899, 903, 919, 959, 988
Վարագ (վանք, լեռ) 55, 56, 58, 317, 838
Վարագա ժառանգավորաց վարժարան 58
Վարդան (գյուղ Սալմաստի գավառում) 445
Վարդենիս (գյուղ Մշո դաշտում) 326
«Վարիեթե» թատրոն (Բերա, Կ. Պոլիս) 673
Վարին Խճես (գյուղ Արևմտահայաստանում) 940
Վարշավա 110
Վեղի-Բասար 43
Վենետիկ 274, 281, 285, 835
Վերան-Շեհեր (քաղաք Արևմտա-

Հայաստանում) 155
Վերի Կեալին (գյուղ Արևմտահայաստանում) 940
Վերին Դարաչամբ (գյուղ Ատրպատականում) (տե՛ս նաև Դարաչամբ, Դարավանք) 444
Վերին Դվին (գյուղ Արարատյան դաշտում) 121
Վերին Խճես (գյուղ Արևմտահայաստանում) 940
Վերին Հայոց ձոր 148
Վերին Սիփան (գյուղ Վասպուրականում) 636
Վիեննա 176, 192, 342, 431, 483, 559
Վրաստան 28, 76, 85, 635
«Վրեժ» (տե՛ս նաև Թավրիզ) 147, 370, 412

Կ

Տալվորիկ (գյուղ Սասունում) 155
Տաճկա-Հայաստան (տե՛ս Արևմտահայաստան)
Տաճկահայաստան (տե՛ս Արևմտահայաստան)
Տավրիկյան պալատ (Սանկտ-Պետերբուրգում) 6, 7
Տավրոսի (Տավրոսյան) լեռներ 163, 316, 321
«Տատյան» վարժարան (Մաքրիգյուղ, Կ. Պոլիս) 926
Տարոն (տե՛ս նաև Դուրան-Բարձրավանդակ) 58, 123, 134, 135, 151, 152, 157, 159–161, 175, 176, 209, 314, 316, 370, 544, 545, 557, 660–662, 937, 941
Տարսոն 666
Տարսոնի կոլեջ 666
Տիբեթ 342
Տիգրանակերտ (տե՛ս նաև Դիարբեքիր) 122–124, 126, 392, 728, 737, 742
Տիվրիկ 943, 945
Տոլմա Պախչէ (տե՛ս Դոլմա-Բախչէ)
Տոսպ (Տօսպ) (տե՛ս նաև Վան) 314, 1068
Տրանսվաալ 250
Տրապիզոն 184, 185, 613, 781, 791, 902, 952
Տրիպոլի(ս) (քաղաք և շրջան Լիբիայում) 189, 503, 647, 648, 667, 675, 725

Ց

Ցալկիի (Ծալկայի) շրջան (Վրաստանում) 68

Փ

Փայաջուկ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Փայտակարան 446, 480
Փանկալթի (Թաղամաս Կ. Պոլսում) 975
Փանկալթիի զինվորական ուսումնարան 975
Փարիզ 37, 64, 90, 124, 166, 167, 174, 178, 183–185, 188, 189, 191, 206, 207, 212, 220, 228, 231, 232, 236, 237, 248, 249, 251–254, 258–260, 265, 266, 269, 273, 275, 277, 296, 317, 323, 433, 442, 475, 487, 511, 546, 576, 578, 600, 602, 604, 627, 628, 668, 717, 723, 742, 753–755, 796, 798, 816, 835–837, 840, 867, 878, 891, 894, 950
Փեթար (գյուղ Մուշի մերձակայքում) 161
Փեհրավա (գյուղ Մարաղայի գավառում) 446
Փերա (գյուղ Խոյի գավառում) 444

Փոթի 719
Փոքր Ասիա 336, 337, 491, 496, 503, 544, 610, 634, 675, 676, 716, 782, 956, 987, 988
Փոքր Հայք 585, 607, 727, 756, 953
Փոքր Մասիս 444
Փոքր Շահրիար (ասորաբնակ գյուղ) 121
Փրովանս (չրջան Ֆրանսիայում) 822

Ք

Քաբիկ (գյուղ Սալմաստի գավառում) 445
Քաղաքամեջ (Թաղամաս Վանում) 295, 312, 313, 316
Քարվանսարա (գյուղ Սուլդուզի գավառում) 446
Քարագլուխ (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Քեալուչան (գյուղ Սալմաստի գավառում) 445
Քեմախ 760
Քեմբրիջ 418
Քեյվան (գավառամաս Ղարադաղի գավառում) 446, 481, 482
Քեոլն (քաղաք Գերմանիայում) 560, 825
Քեոհնաչըհար (գյուղ Սալմաստի գավառում) 445
Քերբալա (քաղաք Իրաքում) 437, 480
Քիչինյով 71
Քիչմիշ-Թափա (գյուղ Մակուի գավառում) 445
Քիվքիա (գյուղ Բարանդուզի գավառում) 445
Քիրման 344, 364
Քիրմանշահ 349, 413
Քլալա (գյուղ Ղարադաղի գավառում) 446
Քյոփրյուլյու 493
Քութայխ 28, 79
Քուրդիստան 130, 131, 138, 139, 149, 150, 163, 648, 757, 776, 808
Քուրտխթան (տե՛ս Քուրդիստան)

Օ

Օդեսա 8, 9, 719
Օղա (Ողան, գյուղ Ղարադաղի գավառում) 446
Օպերայի հրապարակ (Կահիրեում) 282
Օջուաչ (գավառ Ատրպատականում) 444
Օսմանյան Թուրքիա (տե՛ս Թուրքիա)
Օսմանյան կայսրություն (տե՛ս Թուրքիա)
Օսմանյան պետություն (տե՛ս Թուրքիա)
Օսմանյան տերություն (տե՛ս Թուրքիա)
Օրյոլ (քաղաք Ռուսաստանում) 111
Օրյոլի բանտ 111

Ֆ

Ֆասվա (Ատրպատականում) 382
Ֆարսիստան (չրջան Պարսկաստանում) 344
Ֆերրիջովիչ (Ալբանիայում) 492
Ֆիլիպիններ 409
Ֆինլանդիա 8, 208
Ֆրանսա (տե՛ս Ֆրանսիա)
Ֆրանսիա 57, 174, 206, 250, 323, 324, 339, 377, 380, 485, 495, 666, 668, 822, 826, 836, 873, 918, 936
Ֆրեզնո 212

Азия (տե՛ս Ասիա)
Александрополь (տե՛ս Ալեքսանդրապոլ)
Африка (տե՛ս Աֆրիկա)

Баку (տե՛ս Բաքու)
Битлис (տե՛ս Բաղեշ, Բիթլիս)
Ближний Восток (տե՛ս Միջին Արևելք)

Ван (տե՛ս Վան)

Диарбекир (տե՛ս Դիարբեքիր)

Европа (տե՛ս Եվրոպա)
Ереван (տե՛ս Երևան)

Закавказья (տե՛ս Անդրկովկաս)
Зарубежний Восток 343

Индия (տե՛ս Հնդկաստան)
Иран (տե՛ս Պարսկաստան)

Кавказ (տե՛ս Կովկաս)
Койлассар (տե՛ս Դմիտրով)

Ленинград (տե՛ս նաև Սանկտ-Պետերբուրգ) 21, 84, 454, 484, 494

Москва (տե՛ս Մոսկվա)

Оттоманская империя (տե՛ս Թուրքիա)

Париж (տե՛ս Փարիզ)
Персия (տե՛ս Պարսկաստան)

Россия (տե՛ս Ռուսաստան)

С.-Петербург (տե՛ս Սանկտ-Պետերբուրգ)
Скопье (տե՛ս Սկոպյե)
СССР 454, 522

Тифлис (տե՛ս Թիֆլիս)
Турция (տե՛ս Թուրքիա)

Югославия 523

Algèrie (տե՛ս նաև Ալժիր) 840
Armenia (տե՛ս նաև Հայաստան) 246, 269, 841

Caire (տե՛ս Կահիրե)

Empire Ottoman (տե՛ս Թուրքիա)

Istanbul (տե՛ս Ստամբուլ)

Levant (տե՛ս Լևանտ)
London (տե՛ս Լոնդոն)

New York (տե՛ս Նյու Յորք)

Paris (տե՛ս Փարիզ)

Orient (տե՛ս նաև Արևելք, Լևանտ) 840

Turquie (տե՛ս Թուրքիա)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
Նոր զարգացումներ հայության կենսատարածքում 3

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ
Օսմանյան հեղափոխությունը և հայերը 483

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 991

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ. 1069

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 1106

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ԳԻՐՔ

III

Ստորագրված է տպագրության՝ 15.08.2009 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. մամուլ, տպագր. 70.5 մամուլ = պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 53:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

1128